Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Սերեբ
465

Переплетная
Г. В.
Кузнецова
въ Астрахани

II 4/28



ԵՒՍԵԲԻՈՍԻ ԿԵՍԱՐԱՑԻՈՑ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ՍԵՐՈՎԲ
465
Վ Ր.
3

ԵՒՍԵԲԻՈՍԻ ԿԵՍԱՐԱՑԻՈՅ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԾԵՂԵԱԼ ՅԱՄՈՐԻՈՑՆ Ի ՀԱՑ

Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐՈՅ

ՎԱՐԺԱԲԱՆԵԱԼ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՄԲ

Ի ՅՈՑՆ ԲՆԱԳՐԷՆ

Ի ՁԵՌՆ

Հ. ԱԲՐԱՀԱՄ Վ. ՃԱՐԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

523

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐՈՍ

1877

465_2009

(4106
41)

Кр467

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ի Հարս Եկեղեցւոյ ոչ միայն սրբութիւն և առաքինութիւն է՝ որ յարդարէ զնոսա ախոյեանս կրօնիցս Աչմարտութեան, այլ և գիտութիւն և խնամտութիւն. զի սորօք վերջնովքս բազում՝ այն է զի զպարտութիւն խոստովանիցէ հեթանոսականն ամբարտաւան Ճոռոմաբանութիւն, և օրինակօք սրբութեան և առաքինութեան պապանձեալ կարկեր։ Այլ գուն ուրեք է տեսանել յընթացս պատմութեան աշխարհիս երկոքումբք միանգամայն ձրիւք Հոխացեալս, որոց առաքինութիւն ընդաբոյս և խնամտութիւն Հանճարոյ աստուածատուր ՚ի միասին խառնեալ՝ յարուցեալ իւրեն զչքնաղն զայն արարած, որ ՚ի զարմացումն անշուշտ կրթիցէ զաշխարհ։ Եթէ էր երբեք տեսանել այսպիսիս ոմանց վերաբերեալս ՚ի խոպանութենէ ազնուատոհմ և ՚ի միայնարանաց, այլ շատք ևս անդստին ՚ի հեթանոսակրօն պաշտամանց դարձեալ ՚ի քրիստոնէութիւն զնոյն ուսումն վարեին Հանգոյն Հարցն իւ-

բեանց, և ՚ի նոցին քուրայս հալոցայց ընտրեալ և ու-
սեալ՝ լինէին ախոյեանք Քրիստոնէութեան. Ոյի և
նոյն ինքն անաստուած կրօնիցն պաշտօնեայք՝ ոչ ինչ
կասկածէին առնուլ յիւրեանց դպրոցս մանկունս
Քրիստոնէից, և հրահանգել զնոսա. զի ահա ամե-
նայն ուրեք երևին քրիստոնեայք Աղեքսանդրիա և
Յունգեսիա և այլուր, արք անուանիք կրկին տեսակօք
իմաստից՝ քրիստոսականօքս և արտաքնովքն։

Այլ ոչ ամենեքեան սոքա զնոյն օրինակ գիտու-
թեան բերէին յինքեանս. զի էր՝ որոյ կէտնպատակի էր ուսա-
նել միայն զքրիստոսական կրօնիցս սահման, և էր՝ որ
հանդերձեալէր ՚ի պայքար իմաստասիրութեան մըտնել
ընդ նոսին իակ ընդ հեթանոսաց վարդապետս. և ա-
սոյս չէր շատ զաւետարանականն առնուլ յինքն վար-
դապետութիւն, այլ և արտաքնոյն իմաստասիրու-
թեան և աստուածաբանութեան լինել հասու, և
խելամուտ սկսպիս գրութեանց նոցա և աղանդոց
լինել, թէ ուստի առեալ իցեն սկիզբն։ Ջայս ուսուին
տեսանելիքն լուսով և յեկեղեցւոջ Քրիստոսի, ուր ծանօթ
էին բազմաց և համբաւական և պղատոնական կարծիք
ամենայն, և նոցին թիւր և մնոտի դրութիւնք։ Եւ
ահա այս դպրոց էր՝ ուր ուսան բազմագունիք ՚ի Հարց
եկեղեցւոյ, յորոց կէաք թիւրեալ ՚ի սուրբ շաւղայն՝
ոչ ևս կացին մնացին ՚ի թիւս Հարց, այլ կցկցան սը-
տայօդ վարդապետութեամբն եղէն Հարք և գտակք
մեղաւ աղանդոց, և հերձան ՚ի մարմնոյն Քրիստոսի, և
որպէս ասէ ոմն ՚ի յեանց՝ եղէն երբ և որդն փտու-
թեան. իսկ այլք Հաստատեալ յանշարժ վէմն կրօնիցն՝
կացին ախոյեանք հաւատոցս բանիւք և գրովք։ Այլ
քանզի և նոքա մարդք էին իբրև զմեզ գգածեալ մար-

ձեով և ախտիւք, ոչ միապէս կացին անդեղեւուն յիւրեանց հիման վերայ. է՝ զի մարմնաւոր ինչ փառաց սէր, կամ ոգի ընդդիմութեան և հակառակութեան, է՝ զի ամբարտաւանութիւն կենացս թիւրեցին զնմանս յօղղող պողոտայէն, կամ փոքու իւիք ստուերաւ անուղղայ գնացից՝ նսեմացուցին զվարս նոցա, և գողացան ի նոցանէ զանուն սրբութեան։ Ա.յլ ոչ եթէ այսու արդիւնք հանձարոյ նոցա նսեմացաւ ինչ և աղօտացաւ. զի եթէ ոչ սրբութեամբ՝ գնեալ մեծամեծ արգասեօք իմաստից, և սպասաւորութեամբ՝ զոր հաւրէն ի փառս ելեղեցւոյ, գովին և կարգին ի շարս Հարց եկեղեցականաց։

Ի սոցունց աստի անշուշտ իցէ համարել և զնւսեբիոս կեսարացի, որ բազում երկասիրութեամբք եկաց ակնաւոր այր, գործեաց բազում ինչ և գրեաց բազմագոյն՝ յօգուտ և ի փառս եկեղեցւոյ. զորոյ զմտագոյնն յերկասիրութեանց ահաւասիկ տամք ի լոյս՝ ի վայելուչն եկեղեցասէր հմտից և գիտնոց։ Եւ սորա և բազում այլ մատեանք, բաց յեկեղեցական պատմութենէ աստի, զոր յաւելոյն փառս անուան իւրոյ։ Ապա ոմանք իսկ ի ահեղացուն հրատարակեալն առ՝ի մէնջ երբեմն Բրունիկոնն անուանեալ մատեան՝ ի կարգս հնոց ժամանակագրաց, հայ թարգմանութեամբ նախնեաց մերոց և յեղեալ՝ի լատին բարբառ՝ի վաստակասէր առնէ Միաբանութեանս՝ որոյ յիշատակ արդէն անմահացեալ է յազգիս բազմամեր երկասիրութեամբք, զՍ.Հ. Մեկըրտիչ ասեմ Ա.գերեան. և սոյն այս գործ մատենագրիս ոչ սակաւ լոյս ծագեաց յանցս հնոց պատմութեանց, Ո՛չ զերկրորդական ունին զտեղի՝ ի մատեանս նորա և զոր աշխատասիրեաց զնորոյ կտակարանաց,

որ կոչին Պատրաստութիւն աւետարանի և Յայտ աւետարանականք՝ ի քան զմի պատուականագոյն մատեանք կարևորք ի գիտութիւն Հնդկաբիտ կրօնից մերոց. յորոց ի միում առաջի առնէ մատենագիրս զմուտս Քրիստոնէութեան յաշխարհն և զյառաջանալ քարոզութեան աւետարանին, և ի միւսում՝ եթէ զիարդ հրէութիւնն պարտաւոր կացուցանէ զանձն՝ մերժելով զքրիստոսականս կրօնք, և զի քրիստոնէութիւնն ոչ այլ ինչ է՝ բայց լուսն հրէականին։ Այլ քան զայս երեսին գրեանս նորա՝ ամենայնիւ առաւել գտանի առաջնկայս այս գործ եկեղեցականս պատմութեան, յորում անհամեմատ ոճով վերագոյն զինքն ցուցանէ այլոց շատագէտ հմտութեամբն և յօրինեալ կարգօք. ուր երևին մեկին և կարգաւ ամենայն մատենագրաց յիշատակութիւնք, արևելեայց և արևմտեայց՝ ի դիւանացն Եդեսիոյ մինչև ցմատենադարանս Հռոմայ։ Այնդանօր Յովսեպոս, Փիլոն և Ափրիկանոս սահպ ածին ի միջ բանիւք իւրեանց և նկատագրօք, ի ըստ միոջէ նշանակին իւրաքանչիւր առն երկք և գործք, և անցք պատմութեանց իւրաքանչիւր. անդ հանդէս նահատակութեան վկայից, և տանջանարանք նոցա և արիական քանք, կարգ եպիսկոպոսաց եկեղեցեաց և քահանայապետաց Հռոմայ. և համայն ասել՝ տեսանիցես անդէն ի նմին մատենի զամենայն ինչ որ միանգամ հային ի կարգս և ի դէպս առաջին երեցուն դարուց Քրիստոնէութեան. և մարթիմբ իսկ ասել ընդ ումին ի ժամանակակցաց մերոց՝ եթէ առանց մատենիս այսորիկ կայր լինեաք յեկեղեցական պատմութեան առաջնոց դարուց։

Այլ մատեան մի այսպիսի՝ որ յամենայն լեզուս գոլ

ցես հանեալ է, գոյր և անգամին յաւուրց սրբոյն Մես-
րոպայ Թարգմանեալ՝ի հայ՝ նորին իսկ հրամանաւ,
որպէս երաշխաւորէ մեզ զայս երանելին Մովսէս քեր-
թողահայրն (Խոր. բ. ք.) « Վկայ քեզ՝ի մեծոյ երաշ-
խաւորեացդ Եկղեսիաստէ գլխոյ Եւսեբի կեսարացւոյ,
զորս ետ Թարգմանել երանելի վարդապետին Մաշտոց
՝ի հայ լեզու »։ Ա՛լ քանզի յիշատակեալդ Թարգմա-
նութիւն կարծի յառաջ քան զգիւտ հայ գրոյն, վասն
որոյ Թուեցաւ ոմանց յաստուածն լեալ և ոչ՝ի յոյն
բնագրէն. և զայս հաւաստէ մեզ յայտնապէս և զոր
այժմ ունիմք՝ի ձեռին հին Թարգմանութիւնն. զի
ոչ՝ շարագրութեանն, և յանուանս տեղեաց և մարդոց՝
ձայնաւորաց փոխանակութիւն՝ զոյն վկայեն. այլ և
յոտակ շարագրութեանն հանգամանք կարծեցուցա-
նեն արգարև լինել յարդիւնական գրչէ միոյ՝ի Թարգ-
մանչաց դասուն։ Ա՛լ որպէս ամենայն մատենից և ձե-
ռագրաց մերոց, սոյնպէս և սմին այսմիկ գէպ եղև բա-
զում ինչ կրել՝ի չեղաւիսս ժամանակին. և տգիտու-
թեամբ գրչագիր օրինակողաց բազում ուրեք մեայլ
առեալ են բանքն և խրթնացեալ՝ մինչև անիմանալի
լինել շարագրութեանն և խնաստից։ Վասն որոյ ան-
մարթ էր զայսպիսի մատեան հրաշալի և չայեկան ու-
սումնասիրաց՝ յայսպիսւոմ պայմանի աղաւաղութեան
հրատարակել՝ի լոյս, որոյ ոչ ինչ կամ սակաւ յոյժ
օգուտ գործէր ընթերցանելացն։

Ա՛ս այս հոգ յանձին տարեալ փութով՝ յարդարէր
զայն բազում մասամբ նորոգ Թարգմանելով՝ի յու-
նէն Վ. Հ. Աբրահամ վարդապետ Ձարեհան՝ի Միաբա-
նութենէ ուխտիս. միայն ուրուքչէր ինչ կարի խոտո-
րեալ հին Թարգմանութիւնն մեր՝ի բնագրին խնամ-

տից՝ պահեալ անդանօր զչնորհն և զոճ՝ և զբառս նախ-
նեացն յիւրում թարգմանութեանն. զի որոց՝ ի գիտու-
թենէ մատենին ունին օգտել՝ չահեսցին՝ ի նորոյն, որ
էգաւ՝ ի բուն գիրս. իսկ զհին թարգմանութիւնն կար-
գեսցաք՝ ի ստորև մանրագիր, զի հետասցդ հայասէրքդ
առցեն և զձաշակ այնր, և՝ ի մեր հին օրինակս
ուրեք ուրեք պակաս էջք, թողաք և զայն այսպէս՝
նշանակեալ միայն՝ ի ծանօթութեան. զի թէպէտ
գոյին բազումք՝ ի գլխոց մատենին յայլ և այլ ցրու-
եալ ձառընտիրս և՝ ի հաւաքմունս նախնեաց, սակայն
չարարաք ինչ փոյթ զայնցանէ, այլ հետևեցաք միայն
միոյ օրինակի՝ որ գտանէր՝ ի ձեռագիրս մեր. մինչև
ժամանակաւ ընտրելագոյն ևս ձեռագրի պատահեալ՝
մարթասցուք մեք, կամ եթէ և այլք, ուղղագոյն ըն-
թերցուած ընծայել բանասիրաց՝ ըստ թարգմանչաց
հարազատ իմաստից։ Ասյս են գլխաւորք յերկասիրու-
թեանց եւսեբեայ, զոր այժմ ունիմք՝ ի ձեռին. այլ
են և այլ մանր մունր գրեան և թուղթք՝ զորոց ա-
ւելորդ համարիմք երկարել առ տեղեաւս։ Ասյսքիկ
զորս գրեայն նա առ կենդանեաւ իւրով՝ որ փառա-
ւորեն զանուն իւր. այլ ոչ նոյնպէս և զոր գործեացն.
զի որչափ տմտութեամբն պանծալի եկաց նա, նոյն-
չափ և յիրս և՝ ի պայմանս կենացն թիւրեցաւ։ Ցաղ-
մուկս Ասրիանոսացն ոչ գիտաց ունել զանձն յուղիղ
շաւիղս, այլ կամ փառասիրութեան ախտիւ, կամ շը-
ղոմանօք՝ զոր լիով տեսանիցես՝ ի վարս Կոստանդիա-
նոս՝ առ նոյն կայսր բարբառեալ, եկաց միշտ՝ ի թէ-
կունս ոչ այնչափ աղանդոյն՝ որչափ աղանդաւորացն.
զի երևի եթէ և՝ ի հինկական ժողովի ընկալցի զառաջ
Համագոյ, թէպէտ և՝ ի գիրս յայտիկ և այլուր ոչ

ուղղափառ բարբառի զՀամագոյակցութենէն Որդւոյ ընդ Հօր։ Համարձակն յամենայն շփոթս երևի սա յաւաջադէմ, և՝ ի ժողովս իսկ այսր և անդր և՝ ի ժողովսն՝ զանձն՝ ի ներքս մղէ. տեսանի՝ ի ժողովն Անտիոքայ (330), ուր խնդիրք և յուզմունք լինին՝ ի պատճառս ընկենելոյ զԵւստաթիոս յաթոռոյ. երևի և՝ ի Տիւրոս (335) մաքառել ընդդէմ սրբոյն Աթանասի։ Այսչափ նշանաւոր անցք կենաց նորա են մեզ ծանօթք, իսկ այլ ոչ ինչ յիւրոց կենացն. այլ զի և զկնի Հալածանացն Դաղէրիոսի կայսեր ընտրեցաւ նա եպիսկոպոս Կեսարիոյ յամի 314, այլ եթէ զինչ գործեաց յայնժամ՝ անգիտանամք։

ՅԱՆԿ ԱՌԱՋԻՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ

—

Թէ զինչ է առաքաբէ գործոյս։

Ա. — Հատած բանի վան Տեառն մերոյ Փրկչին Յիսուսի Քրիստոսի նախէտրեանն և աստուածտւեան։

Բ. — Եւ զի անունս Յիսուս, որպէս և Քրիստոս՝ Ծանուցեալ էր երբեմն և պատուել ի սրբոց աստուածարեալ մարգարէից։

Գ. — Զի ոչ ևթէ նորալուր ինչ կամ օտար է վարդապետուԹիւն աստուածպաշտուԹեան Քրիստոսի՝ աւետարանել առ հեթանոսս։

Դ. — Վան ժամանակի յայտնուԹեան նորա ի մարդիկ։

Ե. — Եւ Թէ որպէս զայնու ժամանակաւ ըստ կանխաձայն մարգարէուԹեանցն պահանջել իշխանք՝ որք ի նախնեաց անտի պատգամաւորեալ առաքեցորդէնն ազգին Հրէից, և առաջին Թագաւորք Հերովդէս պլաղգին։

Զ. — Վան կարծեցեալ անմիաբանուԹեան յաւետարանագիրն զազգաբանուԹենէն Քրիստոսի։

Է. — Վան Հերովդի նենգաւոր կռտորածի մանկանցն, և Թէ որպիսի կատարած չար եհաս նմա։

ԴՊՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ ՎԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ԵԿԵՂԵՑՒՈՑ

—

Ա. — Թէ զինչ է Նահ սկզբան սորա։

Բ. — Հատած սկզբանց զոր ասացեալ են վան կանխաԹեան աստուածատեան փրկչին և Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որդւոյն Աստուծոյ։

Գ. — Վան անուանն Յիսուսի և Քրիստոսի, զի յայտնի եր և պատուել առ սուրբ մարգարէսն։

Դ. — Զի ոչ ևթէ ոտոյ կամ օտար է վարդապետուԹիւն աստուածպաշտուԹեան՝ զոր քարոզեաց փրկիչն մեր։

Ջ. — Զի ի ՆորուՆ ժամանակս, որպէս և ասաց մարգարէուԹիւնս, ապաՀացան առաքեորդքն այնոքիկ՝ որ յաւազակացն ի կարգէ անտի Հարցն իւրեանց Հրէիցն յԵրէից առաքեորդք յինքեանց ի վերայ իւրեանց։ Եւ եղև ի վերայ նոցա Թագաւոր ի հեթանոսաց առաջին Հերովդէս։

Է. — Վան գայրուԹեան ՆենգոյՆ Քրիստոսի, որ կարծեալ երեւ Թէ ոչ միաբանի աւետարանիչքն միմեանց։

Ը. — Վան ՆենգաւորՆ սպանմանն, զոր ՆենգեալՆ Հերովդէս զմանկտին ԲեթՀեհէմացւոց. և Թէ որպիսի կատարած չար եհաս նմա։

Բ. — Վան ժամանակաց Պիղատոսի։
Գ. — Վան քահանայապետից Հրեից՝ առ որով քարոզեաց Քրիստոս գնալ վարդապետութիւն։
ԳԱ. — Վան Ցովհաննու Մկրտչի, և վան Քրիստոսի վկայութեանց բանք։
ԳԲ. — Վան աչակերտաց Քրիստոսի մերոյ։
ԳԳ. — Պատմութիւն վան անդրանիկ նշխանին Եդեսացւոց։

Բ. — Վան ժամանակաց Պիղատոսի։
ԳԱ. — Վան վկայութեանցն զոր ասացեալ են վան Ցովհաննու Մկրտչի։
ԳԲ. — Վան աչակերտաց Քրիստոսի մերոյ։
ԳԳ. — Պատմութիւն վան Թագաւորին Ուռհայի։

ԵՒՍԵԲԵԱՑ ՊԱՄՓԻԼԱՑԻՈՑ՝

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԴՊՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՋԻՆ

—

Թէ զի՞նչ է առաջարկ գործոյս։

Զկարգաց յաջորդութենէ սրբոց առաքելոց և զանցից ժամանակաց՝ որ յաւուրց անտի Փրկչին մերոյ մինչև առ մեզ, եթէ արդեաւք և որպիսի ինչ իրք աւանդեին՝ի պատմութիւնս եկեղեցեաց, և մանաւանդ զորոց՝ի գլուխս կարգեալ և առաջնորդք կացին գովութեամբ եկեղեցեաց ականաւորաց. և թէ գոյք այնոքիկ իցեն՝ որ՝ի գարս գարս գրաւոր կամ անգիր քարոզեցին զբանն Աստուծոյ. և թէ ով որ իցեն և յոր ժամանակ՝ որ օտարոտի կրօնիւք՝ի չարաչար մոլորութիւն խարդաւանեալք, և ստանուն գիտութեան վարդապետս ծանուցեալ կայսրնապէս՝ որպէս զգայլս գիշնդակս յարձակեցան անխնայ՝ի վերայ հօտին

Ապա՝ի, թէ զինչ է ձառ սկզբան առդա։

Զկարգաց անցից առաքելոցն որ յաւուրց անտի Փրկչին մերոյ մինչև առ մեզ՝ կամեցայ գրոշմել գրով. և թէ արդեաւք, և կամ թէ որպիսի իրք պատմին, որ ինչ գործեցան՝ի պատմութիւնս եկեղեցեաց։ Եւ թէ որպիսի որ իցեն որք պանծալեալս՝ի ժողովուրդն նշանաւորք եղեն գլուխք և առաջնորդք։ Եւ թէ որ որք իցեն այնոքիկ որ՝ի գարս գարս քարոզեցին զբանն աստուածոյ, կամ առանց գրոց, կամ գրովք։ Եւ կամ թէ ով որ իցեն, և որ ժամանակ և քանիսն. և կամ յոր ժամանակս բուսան նորոգ վարդապետք մոլորութեանն սուտ գիտութենէն, որ առանց խնայելոյ իրրև զգայլս ապականիչս համարձակեցան՝ի վերայ հօտին Քրիստոսի։ Եւ հանդերձ այնոքիմբք՝ որ ինչ միանգամ անցք անցին նոյն

Քրիստոսի. Հանդերձ սոքիմքը և որ միանգամ յայնմ ժամանակի անցք անցին ընդ ժողովուրդն Հրէից, վասն ժպրհուԹեան իւրեանց՝ զոր ընդդէմ Փրկչին մերոյ ժպրհեցան. և որպիսի գարձեալ կամ զիարդ կամ յո՛ր ժամանակս պատերազմունս կրկր և հալածանս աւետարանին Քրիստոսի յերեսաց հեԹանոսաց, և այք ոմանք արեամբ և խոչտանգանօք նահատակեցան 'ի վերայ նորա, և վասն վկայիցն՝ որ եղեն յաւուրս մեր, և վասն ողորմուԹեանն Աստուծոյ և գԹուԹեան առ մեզ՝ կամեցայ ես 'ի գիր դրոշմել, ոչ այլ ուստ զկիզգն բանիս առնելով, բայց 'ի մատեսուԹենէ Աստուծոյ և Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Այլ աստանօր ինչինն բանս ներուսն հայեցե՛ք 'ի բարեսէր ընԹերցանելոցս, զի ծանր լինել խոստովանիմք և արտաքոյ զօրուԹեան մերոյ՝ զոր խոստացաքս լի անԹերի 'ի գլուխ տանել, քանզի նախ միմիք մեք յայս իրըև ընդ Ճանապարհ անկոխ և անհետ համարձակեցաք. վասն որոյ և զԱստուած ինքնին Ճանապարհիս առաջնորդ, և զՏեառն մերոյ ըզձեռնտու զօրուԹիւն՝ յօգնականուԹիւն մեզ խընդրեմք. ուր և ոչ հետս անգամ մարդկան իցէ գտանել, յառաջագոյն քան զմեզ հատեալ զնոցին շաւիղ. բայց եԹէ զիրաց իրաց 'ի ժամանակս դիպելոց իրըև նշխար

ժամայն ընդ ժողովուրդն հրէից, փոխանակ զի ժպրհեցան և համարձակէին 'ի վերայ փրկչին մերոյ։ Եւ եԹէ օրպէս և կամ զիարդ և կամ յո՛ր ժամանակս՝ հալածեցաւ 'ի հեԹանոսաց աւետարանն Աստուծոյ։ Եւ եԹէ այք իցեն մարգիկն՝ որ յամենայն ժամանակս կրեցին զպատերազմս սեառն մերոյ, տանջանօք և բերանօք և արեամբ հեղուլ։ Եւ այսու հանդերձ, և վասն վկայիցն՝ որ եղեն յաւուրս մեր, և օգնուԹիւնք ողորմուԹեան փրկչին մերոյ, որ եղեն յամենայն ժամանակս մեր։ Այլ եԹէպէտ և զայս գրել կամիմ ես, սակայն արժան է ինձ սկիզբն առնել բանին յառաջին սեպհականուԹենէ անուն փրկչին մերոյ, սեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որգւոյ Աստուծոյ։ Զպատճառ իսկ զի ծանուցեալ գիտասցին յանձնէ իմմէ հանձարեղքն, զի խոստովան իսկ եմ, եԹէ արտաքոյ զօրուԹեան իմոյ է այս, լի բովանդակ կատարել զայս խոստումն. քանզի մեք իսկ նախ սկիզբն ապաքաւ յայս ձառս, որպէս մարդ ոք որ գնայցէ զանկոխ Ճանապարհ։ և աղօԹս առնեմք զի Աստուած եղիցի մեր առաջնորդ, և զօրուԹիւն սեառն մերոյ և զնոյն օգնական մեր։ Զի հետս յայտնիս՝ զայլ մարդիկ որ յառաջ քան զմեզ գնացին ընդ այս Ճանապարհ, մեք ոչ գտաք։ Բայց միայն պատճառս սակաւս զպատմուԹեանց զոմանց զոմանց 'ի ժամա-

ինն ցիր՝ հատածս պատմութեան մեզ թողեալ. զոր օրինակ որպէս հրանշանս ինն ի բերոց բարձանց, կամ իբրև ի գիտաց աշտարակաց յանտես բացականու-թենէ ձայն մեզ ուղեցոյց՝ ընդ որ գնալ է Ճանա-պարհ, առ անխոտոր ունելոյ զընթացս բանիցս։ Որ-չափ ինչ արդ ի կատարումն առաջարկեալ խնդրոյս կարևոր դատիմք, յայնցանէ՝ զոր ի սփիւռս ցան և ցիր յիշատակեցաք, որպէս ի բանաւոր խօսուն մար-գաց քաղեալ խնամով, և զպատշաճական մասունս վաղեմեացն այնոցիկ գրութեանց յեռեալ՝ ջանաս-ցուք կազմել ի մի մարմին պատմական։ Եւ ըղձալի է ինձ՝ եթէ ոչ զամենեցուն, զերևելեացն գոնեա Փըրկ չին մերոյ առաքելոց՝ զյաջորդութիւնս և զնշանա-ւորաց միտել ցայսօր ժամանակի եկեղեցեաց, ըստ պատ-շաճի իրացն ի վերուստ կարգեալ ասանդել։ Ի Հարիկ յայս վաստակ գալ Թուխմ, զի ոչ ումեք յեկեղեցա-կան պատմագրաց փոյթ այնգութեան զիրացս կալեալ տեսանեմ։ և այն ունիմ զի որպէս կարևոր պատմու-թիւնս՝ նոյն և շահաւէտ հնախոյզ ուսումնասիրացն լինիցի։ Եւ զի կանուխ զայսոցիկ ի կանոնս ժամանա-կագրութեանս համառօտիւ եդի, լիագոյնս արդ կար-գել զպատմութիւնս ձեռն ի գործ արարից։ Սկիզբն արարից արդ բանիցս, որպէս յառաջագոյն կանխեցի

Նախ, յորս եղեն նոքա ի մասունս մասունս զոր Թողին մեզ. և իբրև ի բազում ժամանակէ ի նոյնս ձայնի իւրոց, և իբրև ի նշանէ ի բարձանց ազազակեն և հրամայեն Թէ ընդ որ Ճանա-պարհ երթիցուք. և զնացս բանին ուղղեն մեզ առանց մոլորու-թեան։ Զի զամենայն ինչ զոր միանգամ խորհիմք մեք Թէ պիտոյ իցեն այսմ Ճառից, ի յայնցանէ որ ցանեալ են ի յիշատակս ժամանակագիր գրոցացն առաջնոց, իբրև ի խօսման մարգաց քա-զեցուք զծաղիկս բարեառոյ նոցա, և զօգեցուք ընդ երկրոր-դել պատմութեան մերոյ, և ասցուք զկարգն առաքելոց փրկչին մերոյ. զի պահեալ յիշատակ նոցա ի մէջ Ճանաւոր երեքելի եկե-ղեցւոյ մինչև ցայսօր ժամանակի, Թէպէտ և ոչ զամենեցունց, սակայն զպնդոցիկ որ երևելիքն են ի նոսա, յայժ իսկ պիտոյ է աշխատութիւն վաստակոյ այսր Ճառից զոր արկեալ է մեր։ Գան-զի մերոյ յօրինակագիր գրոցս անտի առաջնոյ՝ որ եղեն ի մէջ եկե-ղեցւոյ, ոչ գիտացաք եթէ եղև նմա փոյթ այնգութեան վասն զըր-չութեան այսր Ճառից. բայց սակն ունիմ եթէ եղիցի շահ օգտու-թեան այնոցիկ որ սիրեն զուսումն երկրորդելոց պատմութեանս այսորիկ։ Բայց մինչև այժմ ի սմին Ճառէ ասէ յայսմանէ պատ-

և ասացի՝ որ քան զամենայն միտս մարդկան գէր՝ի վերոյն է և մեծ, ՚ի տնտեսութենէն փրկչին մերոյ և յաստուածութենէնն. զի արժան իսկ է այնմիկ՝ որ հանդերձեալ է տալ գրով զպատմութիւն եկեղեցւոյ, ՚ի վերուստ անտի ՚ի Քրիստոսէ գլխոյնին՝ յորմէ և գյորջորջուածս ընկալաք, յաստուածայնագոյն պետութենէնն՝ որպէս և բազմոց հաճոյ թուեցաւ, կարգել։

ԳԼՈՒԽ Ա.

Հատուած ինչ Ցհաւնն մերոյ փրկչին Քրիստոսի Քրիստոսի նախախոհութեանն և աստուածայնութեան։

Եւ զի կրկին են պայմանք կամ հանգամանք ՚ի Քրիստոս, որ նմանագոյնս ՚ի մարդկեղէն մարմնի ըզգլուխն կերպարանելով՝ զաստուածայինն ասեմ. և որ ընդ ոտիցն համեմատելով՝ մեզ նման կարեօք զմարդկութիւն զգեցեալ յաղագս մերոյն փրկութեան. արդ յորժամ ՚ի գլխաւորագունէն և ՚ի յիսկական

մարդկութենէ ժամանակացն՝ որ յառաջագոյն եգեալ է մեր՝ ՚ի հատուածս գրոյնիակ է մեր։ Բայց այժմ սպառապուռ փոյթ յանձին կալայ ես առնել զկատարումն պատմութեանս այսորիկ զոր սկսեալ է մեր։

Երկրորդ, հատած սկզբանց գոր ասացեալ ես վասն կանխահասեան աստուածայնութեան փրկչին և Ցհաւնն մերոյ Քրիստոսի Քրիստոսի որդւոյն Աստուծոյ։

Արդ սկզբն արարիչ ՚ի բանս յայտ, որպէս յառաջագոյն կանխեցեր և ասացեր ՚ի վերին և ՚ի աքսիելի աստուածութենէդ անդամ Քրիստոսի՝ որ կանուխ յառաջագոյն է քան զայս տեսութիւնս մարմնասորս։ Կա և արժան իսկ է այնմիկ որ հանդերձեալ է տալ գրով զպատմութիւն Հաւնին եկեղեցւոյ՝ ՚ի վերուստ սկսեալ ՚ի Հաւէ անտի տեսան մերոյ, զի յաստուածութենէ անտի ընկալաք մարդկութիւնն զյորջորջուածն օծութեան, զի օրինակ նորա որոշմանս որ համեմատի ՚ի մարմնին։ զի գլուխն է աստուածութիւն նորա, և յոտսն համեմատեալ է կրկին մարդկութիւն նորա, բնակիցն մեր զոր զգեցաւ վասն փրկութեան մերոյ։ Արդ յոր-

բանէն սկիզբն արասցուք կարգել՝ հաստատուն այնու-
հետեւ պատմութեանս ընթացք լինիցի, որով և քրիս-
տոնէական բարեպաշտութեանս կանխութիւն և աս-
տուածաւայելուչ արժանիք՝ որոց նոր զայն և թաք-
թաքուր հալածական և երիկեան կարծիցեն, յայտ-
նապէս երևեսցի։

Իսկ վասն ծննդեան և պատուոյ փառաց և էու-
թեանն Քրիստոսի և բնութեան՝ չիք այն բան [2] որ
բաւական իցէ ՚ի պատմել։ որպէս և Հոգին Աստուծոյ
՚ի ձեռն մարգարէին ասէր. Զազգատոհմ նորա ո՞
պատմեսցէ։ Եւ թէ. Ոչ գՀայր ոք ճանաչէ, եթէ ոչ
Որդի. և ոչ գՈրդին ոք արժանապէս Աստուծոյ ճա-
նաչէ, բայց եթէ որ ծնաւն գնա՝ Հայր միայն։ Զի ո՞
կարիցէ խորհել սրբութեամբ զիմանալի լուսոյն՝ որ
նախ քան զաշխարհս է, և զիսկական իմաստութենէն
յառաջ քան զամենայն յաւիտեանս, զկենդանւոյն
Աստուծոյ Բանէն, այն որ էրն ՚ի սկզբանէ առ Հայր
իւր. բայց Հայր միայն։ Որ կանուխն է քան զէքս ա-
մենայն՝ զերևելիս և զաներևոյթս, անդրանիկ և միա-
ծին որդի, բանաւորաց և անմահից երկնաւոր զօրու-
թեանց պետ և գլուխ, հրեշտակ մեծի խորհրդոյն և

չամ՝ արասցուք սկիզբն բանիս մերոյ ՚ի կանխութենէ անտի աս-
ուածութեան նորա, լինի այսուհետև կատարեալ բովանդակ
պատմութիւն ՚ի կարգել իմում. սովին իսկ այսուհիկ կանխու-
թիւն և օրհնութիւն քրիստոնէից երևեալ ճանաչի. զի և յա-
թաքագոյն սքանչելի և փառաւորեալ էրսա Աստուած. և ոչ եթէ
պէս կարծէն ումեք, եթէ արդ և նորոգ երևեցաւ նա։ Իսկ
ասն ծննդեան և պատուոյ փառացն Քրիստոսի դադարեցան, չիք
վայն բան որ բաւական լինիցէ ՚ի պատմել. որպէս զի ասաց Հոգին
Աստուծոյ ՚ի ձեռն մարգարէութեանն, Թէ Զազգատոհմն նորա
պատմեսցէ։ Քանզի զոր օրինակ գՀայր ոք ոչ ճանաչէ, բայց
եթէ որդի. և ոչ զորդի կարէ ոք ճանաչել՝ որպէս զնովաւ ոք է
նա, բայց միայն Հայրն որ ծնաւն գնա. բայց զոյս որ յառաջ քան
զյաւիտեանս է, և զիմաստութիւնն կատարեալ անձին, և զբանն
Աստուած կենդանի՝ այն որ էրն ՚ի սկզբանէ առ Հայր իւր. ո՞կարէ
խորհել զնմանէ սրբութեամբ և պարկեշտութեամբ, բայց Հայր։
Զայն որ նա ինքն է միայն ծնունդ աստուածութեանն, որ յա-
ռաջն է քան զամենայն ստացուած՝ որ երևին և որ ոչն երևին,
զզօրագլուխն զօրութեանց անմահ երկնաւորացն։ Զայն որ նա
ինքն է սքանչելի և խորհրդական զարթուիչ ծածուկ կամացն Հօր։
Զայն որ նա ինքն է հաստիչն ամենայնի ընդ Հօր եւ Հոգւոյ։ Զայն որ
նա ինքն է պատճառ ամենայն եղելոց։ Զայն որ նա ինքն է որդի

կատարիչ անքնին կամաց Հօր, համագոյից հաստիչ ընդ Հօր իւրում, և յետ Հօրն պատճառ եղելոցս [3]. որ Աստուծոյ իսկական որդի է միածինն, և ամենից տէր և աստուած և թագաւոր. որ զաեղութիւն և զիշխա-նութիւն աստուածութեամբն հանդերձ և զօրու-թեամբ և պատուով 'ի Հօրէն ունի: Ձի ըստ մեծա-խորհուրդ աստուածաբանութեան գրոց սրբոց գնա-նէ. ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ Աստուած, և Աստուած էր բանն. և ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա եղև և ոչինչ: Ոչոյն և մեծն Մովսէս նախամարգարէն 'ի ժամանակին իւրում գրեաց Հո-գւոյն Աստուծոյ վասն արարածոց լինելութեան, ոչ այլևս ումեք աշխարհագործն և արարիչ ամենայնի, բայց նմին ինքեան Քրիստոսի իւրում արդարև աստուա-ծայնոյ իւրում բանին՝ զստորակայից զարարչագոր-ծութիւնն թողուլ ուսուցանէր. և 'ի հաստեղն զմարդ խորհրդակից զնա իւրոց խորհրդոց առնոյր. զի՝ Ասաց Աստուած, ասէ, արասցուք մարդ ըստ պատկերի մե-րում և ըստ նմանութեան: Ոչոյն երաշխաւորէ և այլ ոք 'ի մարգարէից յօրհնութիւնս իւր խօսելով զԱս-տուծոյ, եթէ. Նա ասաց և եղեն. հրամայեաց և

հնգերիս և միածին Աստուած: Ձի նա է 'ի վերայ ամենայնի, տէր և աստուած և թագաւոր. որ միանգամայն զաեղութիւնն և զիշ-խանութիւնն հանդերձ զօրութեամբ և աստուածութեամբ, և զպատիւ փառացն 'ի բնութենէ անտի գոյութեանն Հօր ունի նա, որ ըստ խորհրդոց ասէլոց գրոց՝ վասն աստուածութեան նո-րա. Ի սկզբանէ էր բանն, և ինքն բանն էր առ Աստուած. և Աս-տուած էր բանն. և ամենայն ինչ նովաւ եղև, և առանց նորա և ոչինչ ոչ եղև: Ձի զոյն իսկ զոյս՝ Մովսէս առաքին գրեաւ մար-գարէից, 'ի ժամանակի իւրում գրեաց նա հոգւով Աստուծոյ, վասն լինելոյ և հաստատութեան արարածոց, վասն նորուն Քրիս-տոսի գրեաց, եթէ է նա արարիչ ամենայնի և պատրաստիչ. այս-ինքն, վասն զի բանն Աստուած որ ծնեալ է 'ի սկզբանէ, և զնա արար իւր հաղորդ և կցորդ 'ի հաստատել անդ զմարդն. զի ա-սէ. Ասաց Աստուած, արասցուք զմարդն ըստ նմանութեան և ըստ պատկերի կերպարանաց մերոց: Եւ 'ի վերայ բանիս այսորիկ ինքեան այլ միւս մարգարէ յասել իւրում վասն Աստուծոյ յօրհ-նութիւնն անդ, եթէ զի նա ասաց և եղեն, և ինքն հրամայեաց և հաստատեցան. այսինքն, զի հաղորդեալ է նա 'ի գործ ընդ Հօր կամաց նորա: Զսա 'ի գլխոյ 'ի ծնանելոյն մարդկութեան, ամենե-քին որ միանգամ անուանեցան արդարութեամբ և գործովք աքանչելիօք աստուածպաշտութեանն՝ ասէն մովսեական, և

Հաստատեցան, Զհայրն և զարարիչ ՚ի հանդէս ածէ-
լով իբրև Թագաւոր ամենիշխան, որ ակնարկու-
Թեամբն հրամայիցէ. իսկ զիմանն Աստուծոյ, զառ ՚ի
ձենջ քարոզեալն զՔրիստոս, իբրև երկրորդ ՚ի նմա-
նէ [4] զՀայրական հրամանսն արարչագործութեամբ
յարդիւնս բերելով: Զսա յարմտոյ անտի հանուլոյ
մարդկութեանն՝ որք միանգամ յարդարութեան և
յաստուածպաշտութեան գովութեամբ յիշատակե-
ցան, որպէս մեծն այն պաշտօնեայն Աստուծոյ Մով-
սէս, և որ յառաջ քան զնա Աբրահամ և որդիք նո-
ա, և որ յետ այսորիկ արդարք կացին և մարգարէք
մարդութեամբ մտաց աչօք տեսին և ծանեան, և իբ-
րև Որդւոյ Աստուծոյ արժանաւոր մատուցին նմա
պաշտօն երկրպագութեան: Եւ նա զՀօրն իւրոյ զպաշ-
տօն աստուածութեան և զՀայրենին գիտութիւն
հանապազօր ամենեցուն վարդապետաբար ուսոյց,
Եւ երեւեցաւ, ասէ, Տէր Աստուած իբրև զմարդ գուշ-
նաքեաց Աբրահամու, մինչդեռ նստէր նա ընդ կաղ-
նեաւն Մամբրէի. իսկ նա՝ Թէպէտ և լոկ մարդ տե-
սանէր, անկաւ անդէն և խոնարհ երկիր եպագ նմա
իբրև Աստուծոյ, և աղերս և աղօթս մատուցանէր
իբրև Տեառն, և խոստովան լինէր, զի չէր ծածկեալ
՚ի նմանէ Թէ ով իցէ նա, յասել իւրում բանիւք
այսպէս. Տէր, որ դատիդ զամենայն երկիր, մի ա-
բասցես զայդ դատաստան: Զի եթէ անձաւ իցէ ա-
մենևին և անտեղի՝ զանեզանելի բնութիւն աստուա-
ծութեանն և զանչեղչին առեալ փոխել ՚ի մարդ-

*յառաջ քան զնա՝ Աբրահամ և որդիք իւր և ոչք երեւեցան չե-
ղոյ արդարք և մարգարէք, լուսաւոր աչօք խորհրդոց տեսին և
ծանեան զնա. և իբրև որդւոյ Աստուծոյ երկրպագութիւնս ա-
ժանաւորս մատուցին նմա. և նա եղև ամենեցուն նոցա ուսուցիչ
վասն գիտութեան հօր, զի ասաց իսկ. եթէ երեւեցաւ տէր աս-
տուած իբրև զմարդ գուշաքեաց Աբրահամու, ՚ի ժամանակի
իբրև նստէր նա ՚ի սեթաժամու ընդ կաղնեաւն ՚ի Մամբրէ. իսկ
նա անկաւ և խոնարհ երկիր եպագ նմա. իբրև աչօք իւրովք մարգ
տեսանէր զնա, նա իբրև Աստուծոյ երկիր պագանէր նմա, և ա-
զօթս մատուցանէր իբրև տեառն. և խոստովան լինէր զի չէր
ծածկեալ ՚ի նմանէ Թէ նա ով իցէ, յասել իւրում բանիւք այս-
պէս. Տէր աստուած, դատաւոր ամենայն երկրի, մի և լիցին գա-
տաստանքդ այդ: Իսկ աստուած և տէր՝ որ դատի զամենայն եր-*

կեղէն կերպարան, և նմանութեամբ մարմնոյ զտեսո-
ղաց պատրել զաչս, և ոչ գրոյն զայսպիսի ինչ կեղծիս
կեղծել. զի որ ասա կոչիցէ Աստուած և Տէր, որ զա-
տի զամենայն երկիր, և առնէ զատաստան ի ձև
մարդկեղէն երևեալ, որ զի չէ օրէն զնախապատճառ
եղելոցս ամենայնի ասել՝, ապա նա միայն, որ ի սկզբ-
բանէն էր բան նորա։ Ապա որոյ և ի սաղմոսին ա-
սացաւ. եթէ Առաքեաց զբան իւր և բժշկեաց զնո-
սա, և փրկեաց զնոսա յապականութենէ իւրեանց։
Ցա՝ յետ Աստուծոյ Հօր, Տէր կոչէ Մովսէս յայտ-
նապէս. յորժամ ասիցէ. Տեղեաց Տէր ի վերայ Սո-
դոմացւոց և Գոմորացւոց ծծումբ և հուր ի տեառնէ։
Ցա՝ որ երևեցաւն Յակոբու ի նմանութիւն մարդոյ,
Աստուած անուանեն գիրք. որ ասէր ցՅակոբ. Մի
այսուհետև կոչեսցի անուն քո Յակոբ, այլ Իսրայէլ
եղիցի անուն քո, զի զօրացար ընդ Աստուծոյ։ Եւ կո-
չեաց Յակոբ զանուն տեղւոյն այնորիկ՝ Տեսիլ Աստու-
ծոյ, զի տեսի, ասէ, զԱստուած դէմ յանդիման և
ապրեցաւ անձն իմ։ Եւ չէ պարտ, չէ օրէն զաստուա-
ծայայտնութիւնս զայսոսիկ՝ զոր պատմեն մեզ սուրբ
գիրք, զերևումն հրեշտակաց կարծել, պաշտօնէից
Տեառն։ Զի յորժամ ի նոցանէ որ երևեցաւ մարդ-
կան՝ չծածկէն գիրք զանուն նոցա, զի ոչ Աստուած և
ոչ Տէր անուանեն զնոսա, այլ հրեշտակ միայն, զոր և

կիր, որ երևեցաւ ի կերպարանս մարդոյ, ոմն այլ անուանի,
բայց եթէ բանն Աստուծոյ. այն որ էրն ի սկզբանէ. զի վասն նորա
է ասացեալ ի սաղմոսի անդ, եթէ Առաքեաց զբան իւր և բժշ-
կեաց, և փրկեաց զնոսա յապականութենէն իւրեանց։ Վասն սո-
րա, զի է տէր Հայրապետութեան ընդ Հօր, յայտնապէս ասաց
Մովսէս, Թէ Տեղեաց տէր ի վերայ Սոդոմացւոց և Գոմորացւոց
հուր և ծծումբ՝ յերկաց տեառն։ Ցա որ երևեցաւ Յակոբու ի
կերպարանս մարդոյ, Աստուած անուանէն զսա գիրք. քանզի
ասաց իակ ցՅակովբ, Թէ ոչ այսուհետև կոչեսցի անուն քո Յա-
կովբ, այլ Իսրայէլ անուն քո Իսրայէլ, զի հաստատեցար դու ընդ
Աստուծոյ։ Եւ կոչեաց Յակովբ զանուն տեղւոյն այնորիկ՝ Տեսիլ
Աստուծոյ. զի ասաց իակ, եթէ տեսի ես զԱստուած դէմ յանդի-
ման, և ապրեցաւ անձն իմ։ Զի տեսիլն Աստուծոյ որ գրեցան,
կարծել մեզ Թէ իցեն հրեշտակացն հնազանդելոց և պաշտաճէից,
չունիմք իշխանութիւն. զի յորժամ երևեցաւ մարդկան ինչ ի նո-
ցանէն, ոչ ծածկէն զանուն նոցա գիրք. զի ոչ տէր, և ոչ Աս-
տուած անուանէն զնոսա, այլ հրեշտակ. զի ի բազմաց կարող է

յոլովագոյն վկայութեամբ դիւրին է մեզ հաւատալ զի առնելը Յսո՝ և որ յաջորդացն Մովսիսի Յեսու, իբրև երկնաւորաց հրեշտակաց և հրեշտակապետաց և գերաշխարհայնոցն զօրութեանց վարիչ, հաւասար Հօր յիշխանութեան և յիմաստութեան, և ընդ բո- վանդակ թագաւորութեան նորա և տէրութեան ի նմանէ [6] գլուխ և պետ, զօրավար զօրու Ցեառն կոչէ. ոչ այլազգ արդեօք, եթէ ոչ ի մարդկեղէն կերպա- րանս տեսանէր զնա: Քանզի այսպէս գրեալ է. Եւ եղև մինչ էր Յեսու յերիքով, ամբարձեալ զաչս իւր եւտես, զի կայր առաջի նորա այր, և սուսեր մերկ ի ձեռին նորա: Եւ մատուցեալ Յեսուայ ասէ ցնա. Մի՞ր ես թէ ի թշնամեաց մերոց. Եւ նա ասէ ցնա. Ես զօրավար եմ զօրու Ցեառն և այժմ եկի: Եւ անկաւ Յեսու ի վերայ երեսաց իւրոց յերկիր. և ասէ ցնա. Տէր, զինչ հրամայես տալ ծառայի քումի: Եւ ասէ զօ- րավարն Ցեառն ցՅեսու. Լոյծ զկօշիկս քո յոտից քոց, զի տեղիդ յորում կաս, տեղի սուրբ է: Ի սոցին աս-

մարգ իմանալ յայտնապէս: Զսա և Ցեսու, որ ընկալաւն ի Մով- սիսէ իբրև զիշխան ի վերայ երկնաւոր հրեշտակաց և հրեշտա- կապետաց, և աքսանչելի զօրութեանց, զօրապետ զօրութեանց տեառն անուանէ զսա. ի ժամանակի իբրև եւտես զսա ի կերպա- րանս մարդոյ. զի գրեալ է, եթէ ի ժամանակի անդ յորում էր Ցեսու ի գաչսէ անդ Յերիքով քաղաքի, համբարձ զաչս իւր և եւտես այր մի՝ զի կայր յանդիման նմա, և սուսեր մերկ ի ձեռին իւրում: Եւ մատեաւ առ նա Ցեսու և ասէ ցնա. Ի մե՞ր իցես, թէ ի թշնամեաց մերոց: Ասէ ցնա, եթէ ես զօրապետ զօրութեանցն տեառն եմ, և արդ եկի: Եւ Ցեսու անկաւ ի վերայ երեսաց իւ- րոց ի վերայ երկրի և ասէ ցնա. Տէր, և արդ զինչ հրամայես ծառայի քումի: Ասէ զօրապետն զօրութեանց տեառն ցՑեսու. Լոյծ զկօշիկս յոտից քոց, քանզի տեղիդ՝ յորում հաստեալ կաս գոյ, սուրբ է. ասալ իսկ տեղեակ լինիս դու, ի սոցին իսկ ի բանից ասալ. եթէ սա ոչ եթէ այլ է, այլ նոյնն է որ երևեցաւ Մովսիսի: Զի զսոյն իսկ օրինակ բանից ասացին գիրք առ նա, որ- պէս և առ սայս ասացին: Իբրև եւտես ասէ տէր, եթէ մերձեցաւ Մովսէս ի տեառնէլ. կոչեաց նմա ի մերձնոյէ անտի և ասէ, Մովսէս, Մովսէս: Եւ ասէ. Ահաւիկ եմ, տէր: Եւ ասէ ցնա. Մի՛ մերձենար դու այսր. լոյծ զկօշիկս քո յոտից քոց, վասն զի տե- ղիդ յոր հաստեալ կաս դու, սուրբ տեղի է: Ասէ ցնա. Ես եմ Աստուած հօր քո, Աստուած Աբրահամու, Աստուած Իսա- հակայ, Աստուած Յակոբայ: Ա՛յսպէս կանխեալ էրևեալ էր, և- թէ էր յառաջագոյն քան զաշխարհ. գոյութիւն կենդանի կա- տարեալ յանձն իւր, այն որ հաղորդեալ էր ընդ հօր և Աստու-

ան բանից ՝ի միտ առնուլ է, զի ոչ եթէ այլ ոք է սա քան որ երբեմն պատգամն տայր Մովսիսի, զի զոյն օրինակ բանից և առ նա խօսին աստուածային տառք։ Իբրև ետես, ասէ, Տէր՝ եթէ մերձենայ տեսանել, կոչեաց զնա ՝ի միջոյ մերձենալոյն, Մովսէս, Մովսէս. և նա ասէ. Ոչ է. և ասէ. Մի՛ մերձենար այսր. լոյծ զկօշիկս քո յոտից քոց, զի տեղի յորում կաս դու ՝ի դմա, երկիր սուրբ է։ Եւ ասէ ցնա. Ես եմ Աստուած Հարց քոց, Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ և Աստուած Յակոբայ։ Եւ որ յառաջ քան զէքս ամենայն կենդանին էր և կատարեալ անձնաւորութեամբ՝, և ընդ Աստուծոյ Հօր ՝ի հաստատուԹիւն ամենայնի՝ որ հաստեցանն, Հաղորդ և արարչակից բանն Աստուծոյ և իմաստութիւն՝ իսկական անուամբն կոչեցեալ, որով բաց յասացելոցս ցարդ աստուգութեանց՝ պարտ է լսել զնոյն ինքն զիմաստուԹիւն զանձնէն խօսելով ՝ի բերանոյ Սողոմոնի Ձոխ և լայն խորհրդածութեամբս. Ես իմաստութիւն բնակեցայ ՝ի խորագիտութեան, գնաւորէդրս և գիտուԹիւն կոչեցի կից։ Ինև Թագաւորք Թագաւորեն, և Հզօրք գրեն զարդարութիւն։ Ինև մեծամեծք մեծանան, և բռնաւորք ինև ունին զերկիր։ Եւ յարէ ՝ի նոյն. Ցէր հաստատեաց զիս սկիզբն Ճանապարհաց իւրոց ՝ի գործս իւր, յառաջ քան զյաւիտեանս հաստատեաց

Ծոյ ամենայնի, ՝ի հաստատութիւն ամենայնի որ հաստատեցաւ. զնմա կոչեցաւ բան Աստուծոյ և իմաստութիւն։ Այդ զի էր նա յառաջագոյն բան Աստուած, և ումեք ումեք երևեալ լինէր, Թէպէտ և ոչ ամենայն մարդոյ։ Զայս սակաւուք ասացաք։ Իսկ եթէ վասն որոյ ոչ լինէր քարոզեալ ամենայն ազգաց որ յառաջագոյն՝ որպէս արդս, ցուցցուք յայտնապէս։ Առաջին մարգկութեան գնացքն ոչ կարէին ընդունել զուսումն աքանչելի իմաստութեանն Քրիստոսի. զի ՝ի ժամանակի իրրև արհամարհեաց մարդն առաջին զպատուիրանն Աստուծոյ, զայցեալ զրկեցաւ նա ՝ի աքանչելի կենաց անտի. և նոյնժամայն մերձեալ անկաւ նա յայս կեանս մահկանացուս, ՝ի փորր ժամանակաւ. և փոխանակեցաւ նա զոյն գրգռութիւն փափկութեան զոր ունէր յԱստուած, ընդ այս երկիր նզովից և անէծից։ Եւ որ միանգամ գործեալ եղեն զնոսա և յոյն զամենայն երկիր, գոան նոքա չարք քան զնա. բայց ՝ի միոյ կամ յերկուց. և քան օրինակի գազանաց՝ զկեանսն չկեանս ընտրեցին իւրեանց. սակայն ոչ գչնութիւն քաղաքի և՝ ոչ զվարս գնացից, և ոչ զիմաստութիւն ինչ զնաս-

զիս, 'ի սկզբանէ յառաջ քան զերկիրը առնել և նախ քան զանդունդս գործել, և նախ քան զլեռնեալ աղբեւրաց ջրոց, յառաջ քան զլերինս հաստատել և յառաջ քան զամենայն բլուրս ծնաւ զիս։ Մինչդեռ պատրաստեր զերկինս՝ ընդ նմա էի, և յորժամ հաստատուն դնէր զաղբիւրս 'ի ներքոյ երկնից, ես էի առ նմա յօրինիչ ամենայնի։ Ես էի որով ուրախ լինէր նա և ցնծայի առաջի նորա յամենայն ժամ, յորժամ զուարճացեալ էր զտիեզերս բովանդակել։ Եւ զի Այս տուածն քան յառաջ քան զամենայն էր, և ոչ ամենեցուն երևեցաւ, սակաւուք ասացաւ։

Իսկ թէ վասն էր ոչ ամենայն մարդկան երբեմն և ոչ հասարակաց աղգաց, որպէս այժմ՝ քարոզեր նա, ցուցցուք հաւաստեաւ։

Առաջնոց մարդկան կենցաղ չկարէր զամենիմաստն և զամենարուեստ ուսուցին վարդապետութեան Քրիստոսի ընդունել, զի 'ի ժամանակին իրքև արհամարհեաց նախամարդն յերանութեան անդ իւրում զպատուիրանս Աստուծոյ, նոյնժամայն մերժեալ անկաւ նա 'ի մահկանացուս յայս և յաղցաւոր կեանս, և փոխանակեաց զայն գրգռութիւն փափկութեան՝ զոր ունէր նա յԱստուած, ընդ այս երկիր նզովից և անիծից։ Եւ որք 'ի նմանէ լցին ապա զերկիր՝ բազմաք չարագոյն երևեալ, բայ 'ի սակաւուց՝ ըստ օրինաւ կի անասնոց անբանից գազանաց կեանս ընտրեցին. ոչ զքաղաքաց շինուածիւն, ոչ զվաթս գնացից, ոչ զարուեստս և ոչ զպիտութիւն զնոսա ածէին նոքա։

ածէին նոքա. իսկ զօրինս և զիրաւունս կամ զընտրութիւն իմաստութեան և ոչ զանուն բնաւ ընդունէին նոքա. այլ իբրև երազմակք վարկինք և յանդգնաք՝ յանապատի չըշէին նոքա. և զնոր հաւրդս բնութեան և զօրինաւոր, և զսերմանիս շինուածոյն, զբիւրութեան ոգւոյ ապականէին, 'ի բազմութենէ չարեաց անտի կամաց նոցա. և ամենայն պղծութեանց տալին զանձինս իւրեանց ամենայնիւ. զի մերթ զմիմեանս ապականէին, և մերթ զմիմեանս սպանանէին, և մերթ զմարդիկ ուտէին. և 'ի պատերազմունս վհատից այնոցիկ՝ որ առ ամենայն մարդկան անուանեալ լինէին. և աչառութիւն յերկրի յերկինս գործել խորհէին նոքա. և չխնայութեամբ մեռանց իւրեանց 'ի անզուշէ իւրեանց՝ պատերազմիլ ընդ այնմիկ որ էն Աստուած 'ի վերայ ամենայնի՝ պատրաստէին նոքա։ Եւ քանզի յայսմ օրինակի վարեին նոքա զանձինս իւրեանց 'ի

Իակ զօրէնս և զիրաւունս, զպատուհաս մանաւանդ և զժուժկալութեան և ոչ գանուն անգամ գիտէին, այլ իբրև վայրենիս ոմանս և ամէհիս ընդ անասնատ շրջէին։ Եւ զընտաւոր գվայելչական բան խորհրդոյ, և զբանաւոր զհաղաղական սերմունս յոգւոջ իւրեանց՝ ինքնակամ գործովք չարութեան ապականեալ, յամենայն գործս անարժանութեան տային զանձինս. զի մերթ այր զընկեր իւր սպականէին, և մերթ զմիմեանս կոտորէին և մարդակեր լինէին. և յաստուածամատրութիւն անդր կամ՝ ի սկայամատրութիւն յաշխարհալուր ժպրհէին. և զերկիրս հասարակ ընդդեմ երկնից իբրև մարտկոցս ինն զինել յանդգնէին. և՝ ի տեղւոջէն՝ չիմարութեամբ մտաց իւրեանց ընդդէմ ամենեցուն Աստուծոյ պատերազմ ածել պատրաստէին։ Եւ իբրև այսպէս անկղեամանային նոքա, ամենագէտն Աստուած հեղեղաւ ջրոյ և տրձգութեամբ, իբրև ՚ի վերայ ամայի անտառաց ցիր սփռելոց՝ հալածական վաներ զնոսա, անդադար սովս, չարաչար ախտիւք, անդուլ պատերազմաւ և երկնահար շանթիւք կայծականց մաշէր զնոսա. իբրև զի զանհնարին և զչարաչար ախտս ոգւոց դժնդակագոյն պատժովք պատուհասից նահանջել ՚ի նոցանէ կամէր։ Եւ իբրև ՚ի վերայ գրեթէ հասարակաց մարդ-

հեղեղս ջրոյ, և ՚ի հրոյ իբրև զանտառս անապատի որ տարածեալ են ընդ ամենայն երկիր, էած հասոյց Աստուած ՚ի վերայ նոցա զհատուցումն բարկութեան. և մշանջենաւոր սովիւք, և պեսպես մահուք, պատերազմաւք և հրով. որ ՚ի վերուստ իջուցաչեր սառակեր զնոսա. և չարաչար ախտիւք և հիւանդութեամբն հոգւոց և տանջանաւք գառնութեան հատուցմանդ նահանջէր զնոսա։ Իբրև գրեթէ ՚ի վերայ ամենայն մարդկանն առ հասարակ տարածեալ էր չարութիւնն. իբրև զորութիւն արբեցութեան սփռեալ էր ՚ի վերայ ամենայնի, և խաւարեցուցանէր զգիս մարդկան։ Ցայնմ ժամանակի խնամատարութիւնն Աստուծոյ որ չարութենէն է նա բան, այն որ ՚ի սկզբանէն էր՝ բազում ողորմութեամբ իւրով առ որդիս մարդկան, մերթ ՚ի ձեռն տեսլեան հրեշտակաց, մերթ այն խակ զորութիւնն Աստուծոյ որ է խակ փրկիչ մեր, միամիտ կամ երկուց յառաջնոց անտի սերելեաց Աստուծոյ ըստ նմանութեան պատկերի մարդոյ երևեցաւ նա։ Նա և կարէին խակ ոչ այլ ազգ տեսանել զնա. այլ իբրև ՚ի ձեռն այսոցիկ՝ ՚ի բազում մարգիկ սերմանէր աստուածպաշտութեանն սերմանեցան. ժողովուրդ մի ամենայն Հերոյեցւոց գտնեաւ

կութեան տարածանէր անյագութիւնս չարութեան, և որպէս արբեցութիւն ինձ անհնարին՝ զամենեցուն գոզդես խաւարաւ մեծութեան կալեալ ունէր զմիտս, յայնժամ ապա անդրանիկին Ծնունդ և նախաձինն արարածոց, խնամատութիւնն Աստուծոյ, բանն՝ որ ի սկզբանէ էր, առ բազում մարդասիրութեան իւրոյ, մերթ ի ձեռն տեսլեան հրեշտակաց իւրոց պաշտօնէից, և մերթ ինքնին անձամբ՝ իբրև զօրութիւն փրկարար, սմա կամ նմա յառաջնոց անտի սիրելեաց Աստուծոյ յայտնէր, ի նմանութիւն պատկերի մարդոյ, զի ոչ այլ ազգ իսկ մարթ էր երևելի լինել։ Եւ իբրև ի ձեռն այսոցիկ ի բազում մարդիկ սերմունք աստուածպաշտութեան սերմանէին, ժողովուրդ մի ողջոյն երբայեցւոց յաստուածպաշտութիւն գային. և սոցին իսկ այսոցիկ, քանզի ցայն վայր բազում սովորութեամբք առաջնովք սովորեալ էր, ի ձեռն մարգարէին Մովսիսի զնմանութիւնս և զառակս օրինակի, զսորհրդաւոր իրիք չաբաթու և զքաւփատութեան և զայլոց զգալի հրամանաց կարգս, այլ ոչ զնոսին իսկ յայտ յանդիման զսորհուրդս՝ աւանդէր։ Այլ սոսա հաստատութիւն առեալ օրինացն, և իբրև զհոտ անուշից առ ամենայն մարդիկ սփռեալ, և ի նոցունց իսկ յայնցանէ և բազմաց ազգաց հեթանոսաց օրէնսդրաց և փիլիսոփայից ամենայն ուրեք զգաստացան միտք, և ի վայրենի և յանագորոյն գաւանութենէ ի հեզագոյն շրջեցան խորհուրդս, որպէս զի խաղաղութիւն բազում և սէր բարեկամութեան և խառնուրդ ընդ միմեանս ունել։ Յայնժամ ապա և

յաստուածպաշտութիւն։ Սոցին իսկ այսոցիկ, քանզի ցայն վայր բազում սովորութեամբքն առաջնովք հեթանոսացն զնոցին նոքա, ի ձեռն Մովսիսի մարգարէին զնմանութիւնս և զսորհուրդս չաբաթու և զքաւփատութեան և զայլոց օրինակաց ետ նմա։ Բայց ոչ ի ՃՀմարտութիւն խորհրդոց ՆԿարէր * զնա. այլ իբրև օրէնքն որ եգան վասն այսց անուանեցան. և իբրև զհոտ անուշից յամենայն մարդիկ կարգեալ լինէին նոքա, ի նոցունց իսկ յայնցանէ, և բազում ազգ հեթանոսաց ի ձեռն օրինադրացն ** և փիլիսոփայիցն որ եղեն յամենայն տեղիս ի խաւութենէ *** անտի յայս-

* Ա՛ւս. օրէնսն. ՆԿատեր.
** Ա՛ւս. օրէնս գրեացն.
*** Ա՛ւս. ի սուտութենէ.

այլոց ազգաց և ընդ ամենայն տիեզերս ժողովրդոց, որոց կանխեալ յառաջագոյն շահեալք պատրաստեցան, և լինդունելութիւն գիտութեան Հօր բաւականք գտան՝ նոյն ինքն վարդապետն առաքինութեան, այն որ հաղորդն է և համագործ Հօր իւրում յամենայնի բարիս նորա, աստուածայինն և երկնաւոր Աստուծոյ բան, ի կերպարանս մարդոյ եղեալ և զմեզ զգեցեալ զբնութիւն, ի սկզբան թագաւորութեան Հոռոմոց յայտնեալ. և գործեաց և համբեր զայն ինչ, յոր միանգամ պատգամէ մնրգարէից միաբան գտանէին. զի մարդ միանգամայն և Աստուած յայտնելոց է յաշխարհի սբանչելարար և ուսուցիչ ամենայն հեթանոսաց՝ կրօնից բարեպաշտութեան և երկրպագութեան Հօր։ Դարձեալ և վասն նորահրաշ ծննդեանն և նոր և սբանչելի վարդապետութեան և նշանագործութեանցն, նոյն և վասն օրինակի մահուն, և յարութեան նորա՝ որ ի մեռելոց, և վասն վերանալոյն աստուածաբար յերկինս, ի բստ միոջէ յառաջագոյն

մանէ և ի վայրենութենէ չբռնեցան միաբ բազմաց ի չինութիւն և ի խոնարհութիւն. որպէս զի եղիցի չինութիւնն բազում և սէր և բարեկամութիւն խառնեան ընդ միմեանս։ Եւ արդ այսուհետև ամենայն մարդկան՝ ամենայն ազգաց որ իցեն յարարածս, իբրև զմարգս որ կանխեցան և յառաջագոյն օգտեցան և կարօտ են այնուհետև ընդունել զգիտութիւն Հօր. նոյն իսկ այն ուսուցիչն ընտրութեանց և սբանչելեաց՝ այն որ հաղորդակից է ընդ Հօր իւրում յամենայն բարիս նորա, զանն Աստուծոյ և խնամատարութիւն նորա զգեցաւ մարմին և սրամբ հաչառութիւն ազգի մարդկութեան։ Խայտ եբևեցաւ նա ի սկզբան թագաւորութեան Հռոմոց. և գործեաց և համբեր նա զայն ինչ որ միանգամ բանիցն մարգարէիցն միաբանեալ լինէին. զի յառաջագոյն իսկ կանխեալ և ասացեալ էր ի մարգարէս՝ եթէ Աստուած զգենուլոց է մարդ, և գալոց է յաշխարհ. գործէր գործոց սբանչելեաց, և ուսուցիչ ամենայն հեթանոսաց երկրպագութեան Հօր։ Եւ վասն առաքելութեան իսկ գիտութեան նորա, և նոր վարդապետութեան նորա, և սբանչելի գործոցն նորա, կանխեալ էր յառաջագոյն և ասացեալ։ Եւ այսու հանգերձ, և վասն օրինակի մահուն նորա, և վասն յարութեան նորա որ ի մեռելոց, և վասն վերանալոյն նորա ընդ երկինս. և զի կատարեցաւ մարգութիւնն նորա՝ աստուածութեամբ նորա։ Այլ վասն վերջին արքայութեան նորա Դանիէլ մարգարէ եւս տեսիլ հոգւով Աստուծոյ, և նկարեաց զայն մեզ մարգկօրէն։ Զի ասաց իսկ եթէ Տեսանէի զի աճոյռք արկան և հինաւուրցն նստաւ. հանգերձ նորա սպիտակ իբրև զձիւն, և վարսք գլխոյ նորա իբրև զսուրբ, աթոռ

Տ22 465-2009
41106
41

զամենայն կանուխ նկատեալ էր նոցա։ Եւ վասն Թա-
գաւորութեան նորա որ ՚ի վախճանի յաւիտենից,
զոր մարգարէն Դանիէլ ետես հոգւով Աստուծոյ,
թէպէտ տեսիլ աստուածազգեցիկ ամենևին, բայց
մարդկօրէն նկարեաց մեզ զայն. Ջի տեսանէի, ասէ,
մինչև աթոռք անկանէին, և հինաւուրցն նստէր.
Հանդերձ նորա սպիտակ իբրև ձիւն, և հեր գլխոյ
նորա իբրև զասր սուրբ. աթոռ նորա իբրև զբոց հրոյ,
անիւք նորա իբրև զհուր բորբոքեալ. գետ հրոյ յոր-
դեալ ելանէր առաջի նորա. հազարք հազարաց պաշ-
տէին զնա, և բիւրք բիւրուց կային առաջի նորա.
ատեան նստաւ և գպրութիւնք բացան։ Եւ յառաջ
մատուցեալ, ասէ. Ջեսանէի ՚ի տեսլեան և ահա ընդ
ամպս երկնից իբրև որդի մարդոյ գայր, և հասանէր
մինչև ՚ի հինաւուրցն, և մատուցաւ առաջի նորա։ Եւ
նմա տուաւ իշխանութիւն և պատիւ և արքայութիւն.
և ամենայն ազգք և ազինք և լեզուք նմա ծառայես-
ցեն, և իշխանութիւն նորա իշխանութիւն յաւիտե-
նական որ ոչ անցանէ, և թագաւորութիւն նորա ոչ
եղծանիցի։ Այս ամենայն ոչ ՚ի վերայ այլոյ ուրուք,
բայց յայտնապէս ՚ի վերայ Փրկչին մերոյ կանուխ աս-
տուածաձայնութիւնք եղեն. որ ՚ի սկզբանէ առ Աս-
տուած էր, Աստուած բան, ՚ի վերջին ժամանակս
առեալ զմարդկութիւն՝ որդի մարդոյ անուանեցաւ։
Եւ զի յայլ խօսս քաղեալ ժողովեալ է մեր ՚ի մար-
գարէից զամենայն՝ զոր միանգամ ասացեալ են վասն

ՀԱՅԿ-ՍՍՀ

նորա բոց հրոյ, անիւք կառաց նորա հուր կիզուցոյ, գետ հուր
խաղայ և ելանէ յերեսաց նորա. հազարք հազարաց կան առաջի
նորա, և բիւրք բիւրուց պաշտեն զնա. աթեան ուղղեցաւ և գրք
բութիւնք բացան։ Եւ զկնի այսր՝ ասէ գաղտնել, Եթէ Ջեսանէի
ընդ ամպս երկնից իբրև որդի մարդոյ զի գայր և հասանէր մինչև
՚ի հինաւուրցն, և մերձենայր մինչև ՚ի նա. և նմա տուաւ իշխա-
նութիւն, պատիւ և արքայութիւն. և ամենայն ազգք և լեզուք
նմա ծառայեացեն. իշխանութիւն նորա՝ իշխանութիւն յաւիտե-
նից որ ոչ անցանէ, և արքայութեանն չիք վախճան։ Այս ամե-
նայն յայտնապէս ՚ի վերայ Փրկչին մերոյ կատարին. այն որ էրն
՚ի սկզբանէ առ Աստուած, բանն Աստուած, զի անուանեցաւ նա
որդի մարդոյ. վասն զի զդեցաւ նա զմարդկութիւնս մեր ՚ի վախ-
ճանի։ Այլ զանազի յայլ խօսս քաղեալ և ժողովեալ է մեր ՚ի
մարգարէից զամենայն զոր միանգամ ասացեալ են վասն Փրկչին

Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, և Աշգրատգոյնս ցուցեալ հաւատեաւս, ասացեալքդ ապա ի ժամուս շատացոյնք։

ԳԼՈՒԽ Բ.

Եւ զի անուանիս Յիսուս, որպէս և Քրիստոս, ճանուցեալ էր երեքեան և պատուհասեալ ի սրբոց առաքելոցն մարգարէից։

Եւ զի սոյն սա անուանս Յիսուս, որպէս և Քրիստոս, պատուեալ էր առ մարգարէիւք առաջնովք՝ սիրելեօք Աստուծոյ, ժամ է արդ ցուցանել զայն։ Զի պանծալի էր և փառաւորեալ անուանս այս Քրիստոս, նախ Մովսէս ինքնին ծանուցեալ երկնաւոր օրինակօք և առաքօք և խորհրդաւոր նմանութեամբն՝ ըստ հրամանին որ եղև նմա. Զգոյշ լեր, ասէ, որպէս ցուցաւ քեզ օրինակ ի լերինն՝ արասցես. զքահանայապետան Աստուծոյ, որպէս ինչ մարթի էր անուանել զմարդ մահ կանացուն՝ Քրիստոս կոչէր, և իբրև առաւելութիւն պատուոյ մեծի աստիճանի իշխանութեան քահա-

և անառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յայս Հաւս այսպիսի չատ լիցի։ Իսկ զանս անուանն Քրիստոսի և Յիսուսի, որ պատուեալ էր առ մարգարէիսն՝ սիրելիսն Աստուծոյ, արդ ժամանակ է ցուցանելոյ։

Երրորդ, վասն անուանն Յիսուսի և Քրիստոսի, զի յայտնի էր և պատուեալ առ սուրբ մարգարէսն։

Զի երկրպագեալ և փառաւորեալ էր անուանն Քրիստոսի, զառաջինն Մովսէս եղոյց երկնաւոր օրինակօքն և առակօքն, պէս պէս նմանութեամբք խորհրդոց։ ըստ ձայնի այնմիկ որ ասացն Նմա, եթէ Այսպէս զգուշութեամբ արասիցիր զամենայն ինչ, ըստ նմանութեանն որ երեւեցաւ քեզ ի լերինն։ և եղոյց Նմա քահանայապետան Աստուծոյ, և որպէս մարթի էր ի մէջ մարգկան անուանել զայն իսկ զա, Քրիստոս կոչել զնա, և ապ Նմա պատիւ քահանայապետութեան, որպէս բարձր ի մէջ մարգկան՝

Նայապետի, ըստ նորին իսկ բանի՝ բարձրագունին քան զամենայն գահերիցութիւնս ի մարդիկ, զԲրիստոսագ անուն ի վերայ յաւելու. և այսպէս ուրեմն աստուածային ինչ ի Բրիստոս նշմարել։ Նոյն ինքն գարձեալ Մովսէս աստուածեղէն հոգւով քաջիկ նկատելով յառաջագոյն զանունդ Յիսուս՝ ծայրագոյն պատուով գնայն մեծարէ։ Եւ որ յառաջ քան գնա չէր լուեալ ի մարդիկ, սա ինքն Մովսէս զառաջինն առեալ զանունս Յիսուս անուանէրզայրն՝ զոր ըստ օրինակին և նմանութեան յետ իւրոյ վախճանին գիտէր առնուլ զիւր անձերգի իշխանութիւնն։ Մինչեւ սորա յաջորդեալ զՄովսէս՝ ոչ ի Յիսուս անուն յորջորջէր, այլ զոր ի ծնողացն ունէր՝ Աւսէէ, և Մովսէս ի Յիսուս զայն փոխէր։ Զայս պատիւ շքեղագոյն քան զամենայն թագ արքայական նմա պարգեւեալ. զի ինքն Յեսու որդի Նաւեայ, գնմանութիւն Փրկչին զգենոյր այնուհետեւ. որ յետ Մովսիսի ի լրման առ ի նմանէ աւանդելոց ստուերական պաշտամանցն գՀնամարտութեան և զսրբութեան կրօնից ունէր առնուլ գիշխանութիւն։ Բայց Մովսէս օրինակ գայս երկուց մարդոց՝ որ առ նովաւ առաքինութեամբ և փառօք առաւել գտան քան զամենայն ժողովուրդն, միոյն քահա-

քան զամենայն ատեհանս. անուանս գԲրիստոսի գնէ սա ի պատիւ և ի փառս այսպէս, զի գեաակ իսկ էր, եթէ անունն Բրիստոսի անուն է աստուածեղէն։ Բայց գարձեալ ինքն Մովսէս և զանունն Յիսուսի որ կանխեաց եաեաս յառաջագոյն հոգւոյն Աստուծոյ, յաւելութիւն յորջորջման գնէ գնա. որ և ի մէջ մարգկան երբէք ոչ անուանեցաւ, մինչ զի երեկեցաւ Մովսէսի անունն Յիսուսի։ Զայն զանունս զայս նմա այնմ որ ի նմանութիւնս առակաց օրինակաց ընկալաւ. նա գնահապետութիւն ի վերայ ամենայն ժողովրդեանն յետ մահու իւրոյ գնէ նմա անուն. բայց այլ անուն ունէր նա ի բնէ, այն զոր եգեալ էր նմա յընդանեաց անտի իւրոց, այսինքն Աւսէէ որդի Նաւեայ։ Իսկ Յեսու, ինքն Մովսէս յորջորջէր նմա ի պատիւ փառաց, որ առաւել է քան զմեծ արքայութեան. զի ինքն Յեսու որդի Նաւեայ գնմանութիւն կերպարանաց փրկչին մերոյ զգեցեալ էր, այն որ նա միայն առանձինն գնէ Մովսիսի՝ կալաւ զառաջնորդութիւն կառավարութեան, զպաշտամանն Հնամարտութեան, այն որ Մովսիսի խորհրդով և առակաք և օրինակաք առաւ։ Բայց Մովսէս երկուց մարդոց՝ որ եղեն ընդ նմա, որ քան զամենայն ժողովուրդն առաւել կին զբանչելի գործովքն. միւսն քահանայապետութեամբ իւրով, և միւսն որ կալաւ յետ նորա զառաջնորդութիւնն,

Նայապետութեամբ, և միւսոյն իշխանական առաջնորդութեամբ յետ իւր՝ զՔրիկէին մերոյ Յիսուսի Քրիստոսի զանուն իբրև ի պատիւ դնէր ի վերայ։ Նա և մարգարէքն յետ այնորիկ յանուանէ զՔրիստոս քարոզէին յայտնապէս, և զայն ինչ զոր կրելոց էր ի Հրեից անտի. դարձեալ և վասն կոչման հեթանոսաց կանխէին յառաջագոյն վկայելիս. յորժամ երբեմն ուրեմն երեմիաս յասէր. Հոգի երեսաց մերոց, Տէր Քրիստոս. պատեցան զնովաւ յապականութեան իւրեանց, մինչդեռ մեք խորհէաք թէ ընդ հովանեաւ նորա նստցուք և կեցցուք ի մէջ հեթանոսաց։ Եւ Դաւիթ ի տագնապ տարակուսին. Ընդէր խռովեցան, ասէ, հեթանոսք և ժողովուրդք խորհեցան ի մտոտիս։ Յանդիման եղեն թագաւորք երկրի, և իշխանք ժողովեցան ի միասին վասն տեառն և վասն օծելոյ նորա։ Եւ յաւելու ի դէմ Քրիստոսի. Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ։ Խնդրեա յինէն և տաց քեզ զհեթանոսս ի ժառանգութիւն, և իշխանութիւն քեզ ընդ ամենայն ծագս երկրի։ Եւ ոչ միայն քահանայապետութեամբ պատուեալքն և ի նոյն խորհուրդ իւղով օծութեան նուիրեալք՝ օծելոյն Քրիստոսի անուամբ մեծարէին առ Եբրայեցիս, այլ և թագաւորքն զորս ի Հոգւոյն

զանուն փրկչին և տեառն մերոյ իբրև ի պատիւ փառաց եդ նոցա։ Նա և մարգարէքն որ եղեն զնոյն նոցա, անուամբ զՔրիստոս քարոզէին յայտնապէս և զայն ինչ և զոր կրելոց էր նա ի Հրեից անտի. և զարձեալ վասն կոչմանն հեթանոսաց որ լինելոց էր ի ձեռին նորա, կանխէին և յառաջագոյն վկայէին, մերմէ երեմիա՝ յասել խրատ այսպէս, եթէ Հոգի երեսաց մերոց օծեալն տեառն. պատեցան զնովաւ յապականութեան իբրեանց, այն որ ասացինն, թէ ընդ հովանեաւ նորա կեցցուք ի մէջ հեթանոսաց։ Եւ գարձեալ Դաւիթ ի զարմանալ խրատ ընդ այս ասաց. Ընդէր խռովեցան հեթանոսք և ժողովուրդք խորհեցան ի մտոտիս։ յանդիման եղեն թագաւորք երկրի, և իշխանք ժողովեցան ի միասին վասն տեառն և վասն օծելոյ նորա։ Եւ յետ այսորիկ ասաց իբրև ի դէմս Քրիստոսի. եթէ Տէր ասաց ցիս, որդի իմ ես դու, և ես այսօր ծնայ զքեզ։ Խնդրեա յինէն և տաց քեզ զհեթանոսս ի ժառանգութիւն, և իշխանութիւն քեզ զամենայն ծագս երկրի։ Եւ ոչ միայն զայնոսիկ որ քահանայապետութեամբ պատուէին օծեալ լինէին խորհրդով իւղով խնկով, զարգարեալ էր անուանն Քրիստոսի ի մէջ Հեբրայեցւոց, այլ և զիմագաւորսն

խրատեալ մարգարէքն օծանէին, օրինակս լինի և քահանայապետին Քրիստոսի կազմելով, որք և միայն Աշխարհին Յիսուսի Քրիստոսի ամենաթագաւորին Բանին Աստուծոյ զարքայական և զհրեական իշխանութեան զտիպ օրինակի յանձինս իւրեանց կրելին։ Զարձեալ և՛ ի մարգարէից անտի որ օծանն, իբրև յառակ օրինակի Քրիստոսի օծեալս գիտեմք. մինչ զի սոքա ամենեքեան զՀնչմարիտն Քրիստոս, զաստուածայինն և զերկնաւոր բանն մեզ ակնարկեալ, զմի միայն քահանայապետն ազանց բոլորելոցն, զմիակ Թագաւոր Հանուրց արարածոց, զիշխանն և զտէր մարգարէից առ Հօրն։ Եւ արդիւնք բանիցս ընծայութեան, զի ոչ որ՛ի նախնեաց անտի՝ որ խորհրդով օծան, ոչ՛ի քահանայից, ոչ՛ ի Թագաւորաց և ոչ՛ ի մարգարէից՝ զայնպիսի ինչ աստուածային զօրութիւն իշխանութեան ստացաւ, որպէս Փրկիչն մեր և Տէր Յիսուս, որ միակ և Հնչմարիտ Քրիստոս յայտնեցաւ։ Եւ ոչ որ արդարև՛ ի նոցանէ, Թէպէտ և իշխանութեամբ և պատուով ընդ շարս ժամանակաց պայծառացան յայգի անդ իւրեանց՝ երբեք զորս ընդ իշխանութեամբ իւրեանց ունէին յօրինակ անուան իւ-

զայնոսիկ որ իբրև ակնարկելով Աստուծոյ՝ օծանէին զնոսա մարգարէքն։ և իբրև զայնոսիկ որ ունէին զնշմարտոն՝ օծեալս առնուանէին զնոսա։ զի և նոքա զնմանութիւն կերպարանաց զայնորիկ՝ որ նա ինքն միայն է օծեալ Հնչմարտութեամբ, այն որ նա ինքն՝ի վերայ ամենայնի Թագաւորեալ էր։ զգեցեալ էին նոքա զըՔագաւորութիւն և զնշխանութիւն և զառաքնորդութիւն։ Զարձեալ և՛ի մարգարէից անտի որ օծան, իբրև առակաւ օրինակաւ օծեալք երևին՝ անուանեցան։ զի սոքա ամենեքին զքրիստակն որ զոր ունէին՝ զայն որ նա ինքն է օծեալ Հնչմարտութեամբ Բանն Աստուած, կարգէին նոքա զայն որ նա ինքն է միայն Հնչմարիտ քահանայապետ՝ի վերայ ամենայնի։ և միայն է Թագաւոր՝ի վերայ ամենայն արարածոց։ և միայն է մարգարէապետ Հօր, և օրինակ այսր՝ եթէ երբև յառաջոյ անտի որ խորհրդեւն օծան, ոչ՛ի քահանայից անտի, և ոչ՛ ի Թագաւորաց, և ոչ՛ ի մարգարէապետաց ստացաւ զայսպիսի զօրութիւն սքանչելիս Աստուծոյ, զոր եցոյց փրկիչն և Տէրն մեր Քրիստոս։ այն որ նա ինքն է օծեալ Հնչմարտութեամբ։ Եւ մի ոք՛ի նոցանէ, Թէպէտ և ունէին իւրեանց առիճանս պատուոյ, և յամենայն գարս փառաւորեցան՝ի մէջ ազգի իւրեանց, սակայն զայնոսիկ որ էղեն՝ի ներքոյ իշխանութեան*

* Մե՜ս օրինաբ. անուան առնելին.

բեանց քրիստոնէայս կոչեցին։ Ա՛լ և ոչ ումեք ՚ի նոցանէ պատճառ երկրպագութեան ընծայեցաւ ՚ի հնազանդելոյ անտի իւրեանց. և ոչ զինի մահու նոցա եղև ումեք այնպիսի սիրելութիւն, եթէ սրտի մնոք ոք փոխանակ ընդ նոցա մեռանէր, նէ ոչ ամենայն ազգաց որ ՚ի ներքոյ երկնից եղև երբեք վասն ուրուք ՚ի նոցանէ այնպիսի յորդոր կամք, զի և ոչ առակ օրինակին ՚ի նոսա այնպիսի ունէր զօրութիւն՝ եթէ զայդ ինչ գործեացէ, որպէս և Աշմարտութիւնն արդեամբ ՚ի ձեռն Փրկչին մերոյ յայտնեցաւ։ Որ ոչ զրինակ և զխորհուրդ քահանայապետութեան յումեքէ առնոյր, այլ և ոչ ըստ մարմնոյ ՚ի տոհմէ քահանայից ունէր զազգն, և ոչ ասպարակիր սպասաւորօք ՚ի Թագաւորութիւն գայր, և ոչ ըստ նախնեաց օրինի մարգարէ լինէր, և ոչ զիշխանութեան իրիք զգահերիցութիւն առ Հրէայսն զանձամբ առնոյր. Թէպէտ ամենեքումբք այսոքիւք առակ օրինակաւ ոչ, սակայն Աշմարտութեամբ առ ՚ի Հօրէ լինէր զարդաբեալ։ Եւ որպէս կանխեցի իսկ ասացի, ոչ ըստ նմանութեան նոցա զայս ամենայն պատիւ և զԲրիստոսդ

նոցա ոչ անուանեցին քրիստոնէայս, ՚ի հայեցեալ օրինակէ անտի զոր ունէին նոքա առ իւրեանս. այլ և ոչ պատիւ երկրպագութեան եղև. ումեք ՚ի նոցանէ ՚ի հնազանդելոյ անտի իւրեանց, և ոչ զինի մահուան նոցա, Թէ իրքև զայս խորհուրդ սիրոյ ցուցին առ նոսա. եթէ առաւասպէս սրտի մնոք փոխանակ ընդ նոցա և զինին մեռանել նոքա։ Նէ ոչ ամենայն հնազանդաց՝ որ են ՚ի ներքոյ երկնից երբեք եղև իրրև զայս աշխատութիւն մի ումեք յաւուրսնոց անտի, քանզի և ոչ այսպիսի ինչ զօրութիւն ունէր խորհուրդն նոցա, եթէ այսպիսի ինչ գործեացէ. որպէս զնոքա ինքն Աշմարտութիւնն եցոյց ՚ի ձեռն փրկչին մերոյ. այն որ ոչ եթէ առակս օրինակաց, և զխորհուրդս քահանայապետութեան առ ՚ի յաւէրտ. և ոչ յապրէ քահանայութեան * ըստ մարմնոյ էր նա, և վառեալ մարդկամբ էկաց նա ՚ի Թագաւորութեան. և ոչ մարդասէր ըստ նմանութեան առաքինացն որ եղեն կոչեցեալ նա. և ոչ առաքինեան և իշխանութիւն իրիք ունէր նա առ հրէայսն։ Ա՛լ Թէպէտ խորհրդեալ ոչ, սակայն Աշմարտութեամբ ամենայնիւ ՚ի Հօրէ զարգարեալ էր նա. որպէս կանխեցի իսկ և ասացի. ոչ ըստ նմանութեան նոցա ընդ ամէն եղև նա այսմ ամենայնի, և վասն այսորիկ և Փրկաւոս անուանի. այլ վասն զի նա ինքն միայն է Փրկաւոս Աշմարտութեան. և ՚ի սուրբ և ՚ի սքանչելի անուանէ անտի

* Մի՞ ոչ ինքն. քահանայապետութեան.

անուն Հաւատոյ եւ Յուսոյ եւ Սիրոյ, զոր ընկալեալ էր ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ, որ է Աստուած եւ Տէր ամենայնի, եւ ի Հաւատ Աստուածութեան Հօրն եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ, որ է միութիւն երից անձանց, եւ ի Յոյս յարութեան մեռելոց եւ կենաց յաւիտենից, եւ ի Սէր առ Աստուած եւ առ ամենայն մարդիկ, որ է ամենայնի գլուխ եւ պատճառ

Դարձեալ նոյն ինքն Յովսեպոս ասաց 'ի պատմութեան իւ-րում։ Եթէ յամին երկոտասաներորդի Տիբերեայ կայսեր, զի կալաւ նա զառաջնորդութիւն և զանձնային արքայութիւն յետ յիւսուն և հինգ ամի առաջնորդութեան, և զամենայն արքայու-թիւն և իշխան Օգոստեայ. եթէ Պիղատոս Պոնտացի՝ կալաւ զա-ռաջնորդութիւն 'ի վերայ երկրին հրէաստանի. և անդ ինաց նա զաման ամ, մինչև մեռաւ Տիբերիանոս. և եթէ այս այսպէս իցէ, յայսմանէ յանդիմանեալ կրասմբեցաւ 'ի մոլորութենէն զոր նախէնցին այնոքիկ որք արարին զդատաստիկսն 'ի վերայ փրկչին մերոյ սուտ եղեալ, զոր երկիւ և եւսեւն զնոսա նախ առաքիչն. Ժամանակն՝ զոր գրեցին այնոքիկ որք նախէնցին զմոլորութենէն, նոյն յանդիմանեալ կրասմբիւր զառաքեալն նորա. զի յամին 'ի չորրորդի հինգետասն լինելոյն Տիբերեայ, որ եղև յամին եօթնե-րորդի արքայութեանն նորա, գրեցին եթէ եղեն չարչարանք Փրկչին մերոյ այնոքիկ՝ որով համարձակեցան և գրեցին. զի յայնմ ժամանակի և այ ձառ ինչ էր՝ Պիղատոսի հաստել 'ի հրէաստան։ Եւ թէ արժանի իցէ հաւատալ վկայութեան Յովսեպոսի զոր գրեաց այսպէս, որպէս կանխեալք յառաջագոյն երկրորդեցաք. Եթէ յամին երկոտասաներորդի արքայութեան Տիբերիանոսի եղև գառաւատիկ 'ի վերայ հրէաստանի Պիղատոս, 'ի հրամանէ Տիբերեայ. և յամն ասցա՝ որպէս ասաց աւետարանիչն, յամին հնգետասաներորդի Տիբերեայ կայսեր, 'ի գառաւորութեան 'ի միոյ 'ի չորից մասանց անտի Իսրայէլի պետացոյ Պիղատոսի. և իբրև գնա իշխանքն չորրորդք ամենայն հրէաստանի առաջնոր-դեին՝ Հերովդէս և Լիսանեայ և Փիլիպպոս. Փրկիչն մեր և

րանին։ Այսպէս գիրք սուրբք վասն Փրկչին մերոյ, եթէ զամենայն ժամանակս վարդապետութեան իւրոյ անոյգ ի քահանայապետութեան Աննայի և Կայիափայ. այսինքն ի ժամանակս ամաց պաշտամանն քահանայապետութեան նոցա լսոցան և ամբ վարդապետութեան Քրիստոսի։ Այլ ի ժամանակէ անտի քահանայապետութեան Աննայի մինչև ցսկիզբն քահանայապետութեան Կայիափայ լինին ամբ չորք։ Այլ յայնմ ժամանակէ հետէ լուծան քահանեցան օրէնք և սովորութիւն պաշտօնէից սրբութեան, քահանայապետութիւնն որդի ի հօրէ և ցկեանս դադարեաց, և ոչ էս այլ ըստ օրինացն էին և կարդք աստուածպաշտութեան։ Եւ ընդ ժամանակս ժամանակս ի գատաւորաց Հռոմոյ առնուին զքահանայապետութիւնն, ոչինչ աւելի քան զամ մի բաւեալ ի նոցն։ Ինքն իսկ Յովսեպոս պատմէ՝ թէ զկնի Աննայ չորս քահանայապետք կացին մինչև ի Կայիափա, ի նոյն գիրս Հնախօսութեան իւրում այսպէս. եթէ վաղեմիոս Պրատոս հանեալ զԱննա ի քահանայապետութենէն կացոյց փոխանակ նորա զՅամայել զորդի Պա-

---

տէրն մեր Յիսուս Քրիստոս օծեաւն Աստուծոյ սկսաւ լինել ամաց իբրև երեսնից. և էին նա ի մկրտութիւն անգր Յովհաննու։ Եւ յայն ժամանակէ հետէ սկիզբն արար նա ի քարոզութիւն աւետարանին։

Տասներորդ՝ վասն քահանայապետից հրէից որ յաւուրս նոցա ոտոյց տէրն։

Այսպէս իսկ գիրք սուրբք վասն Փրկչին մերոյ, եթէ զամենայն ժամանակք վարդապետութեան նորա կատարեցան ի քահանայապետութեան Աննայ և Կայիափայ, այսինքն յամս ոտ. որ էն ի քահանայապետութենէ անտի Աննու մինչև ցսկիզբն քահանայապետութեան Կայիափայ։ Այլ ժամանակն որ ի միջի է և ոչ չորք ամբ ոչ լնուն, քանզի քահանեցան չէօթեցան վարք ո. բնեացն յայնմ ժամանակէ հետէ, լուծաւ քահանեցաւ պաշտօնն այն որ զամենայն աւուրս նորա իբրև ի հայրենի կարգէ ընորհեալ աւուրս էր նա քահանայապետին. և ի գատաւորաց անտի Հռոմոյ առնուին ընդ ժամանակս ժամանակս հրաման քահանայապետութեան, և ոչ ժեացեալ լինէին ի նմա աւելի քան զմի տարի. պատմէ իսկ ինքն Յովսէպոս եթէ զկնի Աննու չորս քահանայապետք կացին մինչև ի Կայիափայ. զի ի նոյն գիրս պատ-

փեայ, և զնա ևս յետ սակաւու փոխեալ և կացոյց զնեղիալսըն զորդի Ա֊ննայ քահանայապետին։ Եւ իբրև եղև և նա ևս տարի մի, Հանեալ և զնա ետ զբահանայապետութիւնն Սիմէոնի որդւոյ Բամիթայ։ Ո֊չ ինչ աւելի քան զտարի մի և սորա կալեալ զպատիւ քահանայապետութեան եղեռոզ զայն ի Յովսեպոս, որ նա ինքն ևս կայսափաս։ Արդ ամենայն ժամանակին վարդապետութեան Փրկչին մերոյ և ո֊չ չորք ամք լըցնուն, և ի ժամանակիս Ա֊ննայ մինչև ի Կայսափաս ի չորս ամս չորք քահանայապետք կացին ի պաշտամանն, և ի տարւոջն յորում Փրկիչն մեր չարչարեցաւ, ցուցանեն գիրք աւետարանչաց՝ Կայսափայ լինել քահանայապետ։ Եւ աստ Ղննայն ժամանակ վարդապետութեան Քրիստոսի՝ որպէս կանխեցաք ասացաք։ Բայց Փրկիչն և Տէրն մեր Յիսուս Քրիստոս ի սկզբան անդ քարոզութեան իւրոյ կոչեաց զերկոտասան առաքեալս, զորս և առաքեն առաւել քան զամենայն աշակերտութեան իւրոյ իբրև ի պատիւ շքոյ անուանեաց զնոսա Առաքեալս։ Եւ դարձեալ երբեմն նա այլ ևս ե֊ւթանասուն, զորս և առաքէր երկուս երկուս առաջի երեսաց իւրոց ընդ ամենայն տեղիս և ընդ քաղաքս ընդ որ ինքն երթալոց էր։

մութեան իւրոյ ասաց այսպէս. եթէ Վաղերիոս Գռնդանաոս եհան զնա ի քահանայապետութենէ անտի. և կացոյց զնովք նորա քահանայապետ զԻսմայել զորդի Փիբայ։ Եւ յետ սակաւ ժամանակի եհան և զնա ևս, և կացոյց զնեղիալսըն զորդի Անանէ քահանայապետի։ Եւ իբրև եղև և նա ևս տարի մի, եհան զնա և կացոյց զՇմաւոն զորդի Կրիթայ։ Եւ իբրև ելից և նա ևս զտարին, կալաւ զնովք նորա Յովսեպոս, զի նա ինքն է Կայսափայ։ Արդ՝ ամենայն ժամանակին վարդապետութեան Փրկչին մերոյ և ո֊չ չորք ամք լըցնուն, զի չորս քահանայապետք զչորս ամս լցին Ա֊ննայ և մինչ եկաց Կայսափայ, իւրաքանչիւր ի նոսա զիւր տարի։ Իսկ վասն Կայսափայ քահանայապետի ցուցանեն վասն նորա ի գիրս աւետարանին, եթէ և ի տարւոջն յայնմիկ էր նա քահանայապետ՝ յորում Փրկիչն մեր չարչարեցաւ. զի ի նմանէն Ա֊ննայ ժամանակն վարդապետութեան Փրկչին մերոյ, որ եղև որպէս կանխեցաք յառաջագոյն ասացաք։ Բայց Փրկիչն մեր և Տէրն մեր յետ սակաւ ժամանակաւն սկզբան քարոզութեան իւրոյ կոչեաց զերկոտասան առաքեալսն, զի զնոսա միայն առանձին առաւել քան զամենայն աշակերտութենէն իւր իբրև ի պատիւ շքոյ առաւելութենէն անուանեաց զնոսա առաքեալս։ Եւ դարձեալ յետոյ երբեմն նա այլ ևս ե֊ւթանասուն՝ զի և զնոսա ևս

ԳԼՈՒԽ Ժ.

Վասն Յովհաննու Մկրտչի և վասն Քրիստոսի վկայութեանց բանիք։

Եւ զի յետ սակաւ ժամանակաց եհատ զգլուխն Յովհաննու Մկրտչի կրասեր Հերովդէս՝ յիշեցուցաւ նեղն զայն գիրքն սուրբքն աւետարանին։ Ոչոյն Հատատաէ և Յովսեպոս, և յանուանէ յիշէ զՀերովդիադա, զի կին էր նա եղբօր Հերովդի և էառ զնա յիւր՝ի հնութիւն, ցրեալ զսխան որ ընդ առաջին անուանոյն զոր ըստ օրինաց առեալ էր. և էր նա դուստր Արետայ արքային Արաբացւոց։ Եւ մեհենաց նա զՀերովդիադա յառնէ իւրմէ առ կենդանութեամբ նորա, որպ վասն և զՅովհաննէս սպան, և յարբոյց պատերազմ ընդդէմ Արետայ արքային՝ որ ցաւամբ էր ընդ նմա վասն անարգանաց դստերն իւրոյ. և՝ի խազմին, ասէ, հարան սատակեցան առ հասարակ զօրք Հերովդի. և այս անցք անցին ընդ նա վասն չարաչար

առաքեաց նա երկու երկու առաջի աչաց իւրոց ընդ ամենայն տեղիս և ընդ քաղաքս, ուր միանգամ ինքն պատրաստեալ էր երթալ անդր։

Մեկնաբանիւրդ՝ վասն վկայութեանցն որ առացեալ են վասն Յովհաննու Մկրտչին։

Յետ սակաւ ժամանակացն եհատ զգլուխն Յովհաննու Մկրտչի Հերովդէս չորրորդ, յիշեցուցաւնն վասն այսր գիրքս սուրբք աւետարանիչ։ Բայց պատմէ և Յովսեպոս և յանուանէ յիշէ զՀերովդիադայ, և զի էր նա կին եղբօր նորա և էառ զնա Հերովդէս՝ի հնութիւն իւր. և անարգեաց նա զառաջինն զոր առեալ էր ըստ օրինաց. և էր նա դուստր Արետայ արքային պատերազմ եղեալ ընդ Հերովդէս մեհենաց յառնէ իւրմէ կենդանւոյն, զի վասն նորա եսպան նա զՅովհաննէս. և եղև պատերազմ ընդ նա և ընդ Արետա արքայ՝ վասն անարգանաց դստերն իւրոյ. զի՝ի նմանէ պատերազմի իբրև սատակացաւ մեծապ, հարան սատակեցան առ հասարակ զօրքն Հերովդի. այս ինչ անցք անցին ընդ նա վասն չարաչար ննջեցութեանն զոր գործեաց նա ընդ*

նենգաւորեաննն զոր գործեաց նա ընդդէմ Յովհաննու։ Դարձեալ նոյն ինքն Յովսեպոս՝ այր արդար զՅովհաննէս խոստովանի և քարոզ մկրտութեան, զառ յաւետարանագրացն աւանդելոց զնմանէ հաւաստար վկայելով։ Եւ պատմէ վասն Հերովդի Թէ անկաւ նա յարբայութենէ իւրմէ վասն նորուն Հերովդիադայ, զի ընդ նմա հալածեալ մեծաչքաց յաջորոց արտաքոյ քան զսահմանս ՚ի Վէննա քաղաք գաղղիացւոց։ Զայս այսպէս պատմելով յունաբառնաերորդ գիրս հնախօսութեան իւրոյ Յովսեպոս՝ յաւելու և զՅովհաննէ. եթէ՝ Ոմանց ՚ի Հրէից անտի Թուէր Թէ իբր յԱստուծոյ սատակեցան զորք Հերովդի, արդարութեամբ խնդրեալ ի նմանէ վրէժ վասն Յովհաննու՝ որ անուանեալ կոչէր Մկրտիչ։ Քանզի Հերովդէս սպանեալ էր զնա, զի էր նա այր բարի, և պատուիրանաւ իւրատէր զՀրէայս զգործոց առաքինութեանց զհետ լինել, առ միմեանս արդարութիւն ունել և առ Աստուած երկիւղած բարեպաշտութիւն, և ՚ի միբրտութիւն նորա գալ։ Զի ընդունելի Աստուծոյ զմիբրտութիւն ասէր, ոչ ՚ի քաւութիւն ինչ մեղաց զայդ վարեալով, այլ ՚ի սրբութիւն մարմնոյ, յետ միանգամ սրբեալոյ նախ ոգւոյն արդարութեամբ։

Եւ իբրև գայթն ժողովէին յամենայն կողմանց առ նա ՚ի լուր վարդապետութեան նորա՝ զոր ախորժէին

Յովհաննէս։ Զի ինքն դարձեալ Յովսեպոս, առաւել քան զմարգս երևելիս արդար և մկրտիչ խոստովանի եթէ էր Յովհաննէս, որոյ իւիք վկայեաց վասն նորա. որպէս և գրեալ իսկ է վասն նորա յաւետարանի անդ սրբոյն։ Բայց պատմէ նա վասն Հերովդի, զի անկաւ նա յարբայութենէ անտի իւրմէ վասն նորուն Հերովդիադայ. զի ընդ նմին հալածեցաւ և մեծաչքաց արտաքոյ քան զսահման յաջորս՝ բնակել նմա ՚ի Բիւննիանոյ քաղաք գաղիլեացւոց. և զայս ամենայն գրեալ է Յովսեպոսի՝ վասն Յովհաննու այսպէս. եթէ Ոմանց ՚ի հրէից անտի, ասէ, Թուէր իսկ իբր յԱստուծոյ սատակեցան զորքն Հերովդի, արդարութեամբ խնդրեալ լիներ ՚ի նմանէ վրէժն Յովհաննու, այն որ անուանեալն կոչէր Մկրտիչ։ Հերովդէս իսկ էսպան զայն Յովհաննէս, զի էր նա այր բարեբար և պատուիրէր գործել զգործս ընդունելիս, և զարդարութիւն ունել առ միմեանս. և ՚ի գործել անդ իբրեանց զաստուածպաշտութիւն, խնդամտութ լինին և մկրտութեան նորա. զի այսպէս երևէր եթէ ընդունելի էր նմա մկրտութիւնն, ոչ հարցանելոյին խոստովանութեանն զիւիք իրիք յանցանաց, այլ

յոյժ, երկեաւ Հերովդէս ընդ այնպիսի զօրութիւն
բանից նորա՝ ի վերայ մնաց մարդկանն, եթէ գուցէ
յապստամբութիւն ինչ դրգռեսցէ զնոսա, ղն գամ-
նայն ինչ ի խրատուէ նորա դործելիս. և խորհեցաւ
՝նմանի իւրում եթէ լաւ է հանգեալ սպանանել զնա,
մինչդեռ իցի կատարեալ՝ ի ձեռն նորա ինչ մի նոր, և
մի յեղափոխութեան միայնով՝ անագան ուրեմն ՝ի
զեղջ դալ։ Ի կախաճոտ մնաց աստի Հերովդէ կա-
պեալ առաքեցաւ Մկրտիչն ՝ի տուն բանտի յամրոցն
Մաքերոն և անդ սպանաւ։ Ցայսմանէ վառն Յովհան-
նու Յովսեպոս. որ և զվերկեալն մերմ ՝ի սոյն դիրս
պատմութեան իւրոյ յիշատակէ այսպէս. Եղև յայսմ
ժամանակի, ասէ, Յիսուս ոմն այր խնամառուն, եթէ
արծան իցէ մարդ կոչել զնա, զի էր նա զբանդելա-
բար, ուսուցիչ մարդկան որ Հաճութեամբ ընդունին
զճշմարտութիւն. և զաղգսն ՝ի Հրէից անտի և զը-
բաղմադոյն ՝ի Հեթանոսաց աշակերտեաց։ Քրիստոս
իսկ է նա. զնա երբեմն ՝ի մեռնութենէն իշխանաց ժո-
ղովրդեան մերոյ եհան Պիղատոս ՝ի պատիժ խաչի, այ-
նոքիկ որ սիրեցին զնա՝ ոչ դադարեցին ՝ի սկզբ անտի
նորա, զի երևեցաւ նոցա յետ երից աւուրց միւսան-

՝ի ձեռն զբօսութեան մարմնոյն. յորժամ զբօսն ոգիքն նախ զր-
գասութեամբ և զյղմամբ սրով անձն ընդ նմին. նա և վերացան իսկ
մեռեալքդ ՝ի լուր բանից նորա։ Բայց երկեաւ Հերովդէս երբե-
եաւս զայն ամենայն հաւատութիւնս հաւատեցան զոր հաւանե-
ցուցանէր նա զմարդկին, եթէ գուցէ երբեմն յապստամբութիւն
ինչ եկեսցեն, զի երևելին իսկ՝ զի զամենայն ինչ ՝ի խրատուէ նորա
գործելին. և խորհեցաւ ՝ի մտի իւրում եթէ կարի լաւ է կանխել
յառաջագոյն սպանանել զնա՝ քան մինչդեռ իցէ կատարեալ ՝ի ձեռս
նորա երբ ինչ այլ ազգ, կամ եթէ յետ գործելն լինելոյ անկեղ
նա ՝ի զեղջ ապստամբութեան. երբեմն յայսպիսի կարծեաց Հե-
ր չգիտ կարեալ առաքեցաւ նա ՝ի տուն բանդին, որ անուանեալ
կոչի Մաքերոնաց և անդ սպանաւ. զայս ասաց վառն Յովհան-
նու։ Բայց յիշեցուցանէ վառն Փրկչին մերոյ ՝ի սոյն գիրս պատ-
մութեան իւրոյ այսպէս. Եղև յամս ժամանակի այլ մի խնամառուն
ասէ՝ զն անուն էր Յիսուս, եթէ արծան է ասէ՝ ասէ՝ կոչել զնա.
զի էր նա առաւել ևս գործոց պաշտելեաց ուսուցիչ մարդկան՝
այնոքիկ որ ցանկալով ընդունին զճշմարտութիւնն. և զբազումս
՝ի հրէից անտի և զբազումս ևս ՝ի հեթանոսաց աշակերտեաց։
Քրիստոս իսկ է նա, և զնա՝ երբեմն ՝ի վկայութենէ մարդկան իշխա-
նաց ժողովրդեանն մերոյ ետ զնա Պիղատոս ՝ի պատիժ խաչի. և
այնոքիկ որ սիրեցին զնա՝ ոչ դադարեցին ՝ի սկզբ անտի նորա,

գամ կենդանի. զի մարգարէքն Աստուծոյ զայս և բիւր քան զսոսա խօսեցան հնմանիլ սբանչելիս. և մինչ չև ցայսօր ժամանակի ոչ նուաղի ժողովուրդ քրիստոնէից, որ ի նմանիլ աւրէն զանուն Յորժամ զայս ամենայն ի նոցունց ի Հրէից որ անտի մատենագիր վասն Յովհաննու Մկրտչի և վասն Փրկչին մերոյ ի գիրս իւր աւանդէ, որպիսի տեղի ապաւինի տայս մեզ նոցա, բայց զի յանդիմանեալ կշտամբեացին, որ ընդդէմ անձանց իւրեանց կարգեցին եղեն յիշատակարանս այսպիսի։ Եւ այս մինչև ցայս վայր։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Վասն աշակերտաց Փրկչին մերոյ։

Բայց առաքելոցն Փրկչին մերոյ անուանք յաւետարանէ անտի յայտնի են ամենայն ումեք. իսկ եօթանասնեցուն աշակերտացն չիք համար կարգ ըստ կարգի, բայց ասի եթէ Բառնաբաս մի ի նոցանէ էր, զի զնա յականէ յանուանէ ի բազում տեղիս յիշատակեն

զի երևեցաւ նոցա յետ երից աւուրց մեռանելոյ կենդանի. զի մարգարէքն Աստուծոյ զայս և բիւր քան զայս խօսեցան զնմանէ սբանչելիս. և մինչև ցայսօր ժամանակի ոչ նուազի ժողովուրդն քրիստոնէից որ ի նմանէ անուանեալ էր. զայն որ էրն օրինակաւ գիրն ի նոցունց ի հրէից որ յառաջագոյն եղեալ է նոցա ի գիրս իւր վասն Յովհաննու Մկրտչի և վասն Փրկչին մերոյ. արդ որպիսի տեղի ապաւինի մեզ նոցա, զի ահաւանիկ յանդիմանեալ կշտամբեացան նոքա և կու բացան զինքեանք որ ընդդէմ անձանց իւրեանց նիւթեցին և եղեն զգատաւորիքս։ Եւ այս մինչև ցայս վայր շատ լինի։

Երիտասարդութիւն, վասն աշակերտաց Փրկչին մերոյ։

Բայց առաքելոցն Փրկչին մերոյ իրրև յաւետարանէ յայտնի են անուանք նոցա ամենայն ումեք։ Իսկ եօթանասնեցուն աշակերտացն երկրորդեալ անուան նոցա ուրեք չէ յայտ։ Բայց ասի եթէ Բառնաբաս մի ի նոցանէ էր, զի զնա յականէ յանուանէ ի բազում տեղիս յիշեն գործք առաքելոցն. և Պօղոս յորժամ գրեաց առ գաղատացիսն. այլ ասի թէ Սոսթենէս այն որ գրե-

Պրակը առաքելոց, որպէս և Պօղոս 'ի գրելն իւրում առ Գաղատացիս. 'ի սոցանէ ասի և Սոսթենէս՝ այն որ ընդ Պօղոսի Թղթէը առ Կորնթացիս. Պատմէ և Ղուկաս 'ի հինգերորդ Ճառս իւր 'ի Նկարագիրսն Թէ և Կեփասն՝ այն վասն որոյ ասաց Պօղոս. Թէ Յորժամ եկին Կեփաս ՅԱնտիոք՝ ընդդէմ դարձայ նմա առաջի ամենեցուն. մի եօթանասնից աշակերտաց անտի էր, և անուանակից Հանդիպեալ Պետրոսի առաքելոյ. և զմատաթիա՝ այն որ եմուտ 'ի Համար առաքելոցն փոխանակ ընդ Յուդայի մասնչի, և զհամապատիւ Նորա զվէճակակից ընկերն յեօթանասնից անտի լինել աւանդէն զրոյցք. և վասն Թադէի ասեն Թէ մի 'ի նոցանէ և նա, զորոյ զպատմութիւնն ժամանեալ մինչև առ մեզ՝ դիցուք ընդ հուպ։ Եւ աւելի քան զայսոսիկ եօթանասունս՝ գտանես դու աշակերտս Փրկչին եթէ զգուշութեամբ միտ դիցես, և այս 'ի վկայութենէ Պօղոսի՝ որ ասաց, եթէ յետ յարութեան իւրոյ 'ի մեռելոց՝ երևեցաւ նախ Փրկիչն Կեփային, և ապա երկոտասանիցն, և ապա երևեցաւ աւելի քան զհինգ հարիւր եղբարց միանգամայն՝ յորոց

այն էր ընդ Պօղոսի 'ի Թղթի անդ Կորնթացւոց, Թէ և նա 'ի նոցանէն էր։ Բայց ըստ ասելոյ պատմութեանցն Կղեմենտոսի՝ և Պետրոս, այն որ ասաց վասն նորա Պօղոս, Թէ յորժամ եկին Պետրոս ՅԱնտիոք առաջի ամենեցուն յանդիմանեցի զնա, մի յեօթանասնից անտի է նա անուանակից Պետրոսի առաքելոյ. և Բարդոմէոս՝ այն որ եմուտ 'ի Համար առաքելոցն փոխանակ ընդ Յուդայի. և Յոստոս այն որ եկաց ընդ նմա 'ի վիճակի անդ, ասի Թէ յեօթանասնից անտի էին նոքա։ Եւ վասն Թադէոսի ասի. Թէ մի 'ի նոցանէն էր նա, որ և պատմութիւն եւս ունի վասն նորա՝ արդ եզից զնա։ Նա և աւելի քան զայս եօթանասունսն գտանես դու, որք յայս երկոսին զի էին նոքա աշակերտք Փրկչին մերոյ իբրև 'ի վկայութենէ Պօղոսի զի ասաց. Եթէ յետ յարութեան Փրկչին մերոյ 'ի մեռելոց, երևեցաւ նա Պետրոսի, և ապա երկոտասանիցն, և ապա երևեցաւ նա աւելի քան զհինգ հարիւր եղբարց միանգամայն, զի 'ի նոցանէն ասաց բայ Տնկելին, այլ բազումք 'ի նոցանէն կացին մինչև 'ի ժամանակս յորում գրեաց և ապա ասաց, եթէ երևեցաւ Յակովբոս, այն որ մի յայնցանէ որ ասի եթէ էին նոքա եղբարք Փրկչին մերոյ՝ էր նա։ Եւ գաղձալ իբրև 'ի սոցանէ Յանացան նմանող լինել երկոտասանիցն, բազումք որ եղեն առաքեալք, որպես էին ինքն Պօղոս, յաւելու եսկ և ասէ՝ եթէ ապա երևեցաւ առաքելոցն ամենեցուն։ Ահա կարճ 'ի կարճ ոչ համառօտ ասացաւ։

ոմանք ննջեցին, սակայն բազումք կան մինչև ցայսօր, ասէ, 'ի ժամանակին յորում զայս գրեաց. և ապա ա-սաց Թէ երևեցաւ Յակոբու, որ 'ի Թուոյ աշակերտաց էր և եղբայր Փրկչին մերոյ: Եւ զի բաց յերկոտասա-նիցն էին և այլ առաքեալք, յորոց էր և Պօղոս, վասն որոյ յաւելոյ ասել. եթէ Ապա երևեցաւ առաքելոցն ամենեցուն: Եւ վասն այսոցիկ այսչափ: Իսկ վասն պատմուԹեան Թադէոսի զոր կանխեալ յիշատակե-ցաք, ըստ այսմ օրինակի եղև:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Պատմուբիւն վասն տեղակալ իշխանին Եդեսացւոց:

Ի ժամանակին մինչդեռ աստուածՈւԹիւն Փրկչին մերոյ և Տեառն Յիսուսի Քրիստոսի լոյս լինէր առ ա-մենայն մարդիկ, բազմուԹիւն յոյժ վասն սքանչելի զօրուԹեանց նորա 'ի գաւառաց գաւառաց արտաքոյ Հրէաստանի՝ որ ունէին ազգի ազգի ցաւս հիւանդու-ԹեանՀ ախտից, յուսով բժշկուԹեան գալոյն անդ: Եւ Աբգար Թագաւոր՝ որ ազգաց անդրագոյն քան զնփրատ իշխեր քաջուԹեամբ, չարաչար ցաւովք հի-ւանդուԹեան վարակեալ 'ի մարմին իւր և անյոյս 'ի զօրուԹենէ մարդկեղէն արուեստից, իբրև լուաւ զա-

Երիքտասաներորդ՝ պատմուբիւն վասն թագաւորին Ոբհայի:

Իսկ պատմուԹիւնն որ եղև վասն Թադէոսի, ըստ այնմ օրի-նակի էր: Ի ժամանակի մինչդեռ քարոզէր աստուածպաշտու-ԹիւնՀ Փրկչին մերոյ և տեառն Յիսուսի Քրիստոսի առ ամենայն մարդիկ, վասն սքանչելի զօրուԹեանցն զոր գործեաց նա: Բայց բիւրք և հազարք աչխարհաց անտի որ հեռի էին յերկրէ անտի հրէաստանի, որ ունէին զազգի ազգի ցաւս հիւանդուԹեան ախ-տից, վասն յուսոյ բժշկուԹեան գալոյն առ նա. և Աբգար սրբոյ հեԹանոսաց որ յարևելից կողմանէ Եփրատու անուանէր քաջու-Թեամբ, ապականեցաւ մարմին նորա չարաչար ցաւովք որ 'ի մարդկանէ չիք նորա բժշկուԹիւն: Եւ իբրև լուաւ և ուսաւ զա-նուն Յիսուսի, և վասն զօրուԹեանցն զոր գործէր նա, և առ

նուէն Յիսուսի և վասն զօրութեացն զոր գործէր նա
վկայեալ հաչակէր Հասարակ առ ամենայն մարդիկ,
արձակեաց առ նա ՚ի ձեռն ծառայից իւրոց աղաչա-
ւորս և նամականի, գալ բժշկել զնա ՚ի հիւանդու-
թենէ իւրմէ։ Իսկ Փրկիչն մեր ոչ անսալով կոչին,
բայց արժանի արար զնա թղթոյ, յորում խոստանայր
առաքել զմի ոք յաշակերտաց իւրոց բժշկել զհիւան-
դութիւն նորա, և տալ նմա և ամենայն մերձակայից
նորա կեանս. և ոչ յամեաց կատարումն խոստմանն։
Ձի իբրև յարեաւ ՚ի մեռելոց և վերացաւ յերկինս,
Թովմաս առաքեալ մի յերկոտասանից անտի որպէս
աստուածաւստ շարժեալ զՓադէոս՝ այն որ ՚ի հա-
մարոյ եօթանասնից աշակերտաց Քրիստոսի էր, ա-
ռաքեաց Եդեսիա՝ քարոզ լինել և աւետարանիչ
վարդապետութեանն Քրիստոսի. և ՚ի ձեռն նորա
լցեալ կատարեցաւ ամենայն խոստումն Քրիստոսի։
Ունէիս քեզ վկայութիւն յիշատակաց ՚ի դիւանէ ան-
տի Եդեսացւոց քաղաքի, յորում Թագաւորեացն
Ա.բգար։ Ի յիշատակարանս Հասարակաց յորս վաղե-
մի անցք պատմութեան քաղաքին և գործք քաջու-
թեան Ա.բգարու զրոյցեալ կային, գտաք և զայսո-

Հասարակ ամենայն մարդ վկայէր վասն նորա, եւ ասէին առ նմա
Թուղթ աղաչից ՚ի ձեռն ծառայից իւրոց, և աղաչէր գալ և բժշկել զնա ՚ի հիւանդութենէ իւրմէ։ Իսկ Փրկիչն մեր չայնմ ժա-
մանակի յորում կոչեցաց զնա ոչ էառ յանձն գնալ, բայց Թղթոյ արժանի արար զնա, և խոստացաւ առաքել զմի ոք յաշակերտաց իւրոց բժշկել զհիւանդութիւն նորա, և տալ նմա կեանս և ամե-
նայն մերձակայից նորա. այլ ոչ յամեաց կատարել զխոստումն իւր։ Բայց իբրև յարեաւ ՚ի մեռելոց և վերացաւ յերկինս, Թովմաս առաքեալ մի յերկոտասանից անտի զՓադէոս այն որ ՚ի համարոյ եօթանասնից աշակերտացն Քրիստոսի էր, իբրև ՚ի զ-
բուռնենէ Աստուծոյ առաքեաց զնա յԱւրհայ, լինել քարոզ և աւետարանիչ Քրիստոսի վարդապետութեանն. և խոստումն Քրիստոսի ՚ի ձեռն նորա լցեալ կատարեցաւ։ Ունէիս գու քեզ գրով վկայութիւն սուտ՝որ առեալ լինին ՚ի մատենէ անտի յիշա-
տակաց՝ որ են յԱբերայ քաղաքէ. զի չայնմ ժամանակի չայն վայր կայր աքեղայութիւնն նորա անգ ՚ի քաղաքս որ կային անգ. զի էր գրեալ ՚ի նոսա ամենայն ինչ որ պատգամ գոյծեցաւ չառաջ-
նոց անտի մինչև զԱ.բգար։ Նա և առաս մինչև չայսօր ժամանակի պահեալ գտանին անգ. բայց չէր ինչ արգել լսել զնչյն Թուղթ՝ զոր առաքէ ՚ի մեր ՚ի ատենէ անտի գիւանին. որ ունին օրինակ չայսոց բանից որ մեկնեալ են չասորոյ լեզուէ ՚ի չայն անգր, պատ-

սիկ պահեալ միւնչև ՚ի մեր իսկ ժամանակս. և չէ ինչ անդէպ լսել զնոյն Թուղթ, զոր առեալ է մեր ՚ի տա- նէ անտի գիւմնին, և Յայտից բարբառոյն յեղեալ ՚ի Յոյն՝ օրինակ զայս։

Պատճէն նամակին զրելոյ Աբգարայ կողմնակալ իշխանէ առ Յիսուս. զոր առաքեաց ՚ի Ձեռն Անա- նեայ սուրհանդակի Յերուսաղէմ։

Աբգար իշխան Եդեսիոյ Յիսուսի փրկչի բարերարի որ երևեցաւ յաշխարհին Երուսաղէմացւոց, ողջոյն։

Լուեալ է իմ վասն քո և վասն բժշկութեանդ, որ լինին ՚ի ձեռս քո առանց դեղոյ և արմատոց. զի որ- պէս ասի՝ տաս դու կուրաց տեսանել և կաղաց գնալ, զբորոտս սրբել և զայս պիղծս և դևս հանել, և որ միանգամ չարչարեալ են ընդ երկար հիւանդու- թեամբք՝ բժշկես դու, և զմեռեալս յարուցանես։ Եւ իբրև լուայ վասն քո զայս ամենայն, եդի ՚ի մտի թ- մեմ մի յերկուց. կամ Թէ դու Աստուած իցես իջեալ յերկնից և գործես զայդ. և կամ որդի Աստուծոյ իցես և զայդ առնես։ Արդ վասն այսո- րիկ գրեցի ես ազաչել զքեզ, զի աշխատ լինիս և եկեսցես առ իս, և բժշկեսցես զհիւանդութիւնս զոր ունիմ ես։ Նաև լուայ զի հրէայք արամբնին զքէն և կամին չարչարել զքեզ։ Բայց քաղաք մի փոքրիկ և գեղեցիկ է իմ, և բաւական է մեզ երկոցունցս։

Ձէն հրովարտակին որ գրեալ է յԱբգար արքայէ առ Յիսուս. Եւ առաքեաց նմա ՚ի Ձեռն Անանիայ սուրհանդակի Յերուսա- զէմ։ Եւ եր գրեալ հրովարտակն՝ օրինակ զայս։

Աբգար Աբջամայ՝ իշխան աշխարհիս առ Յիսուս փրկիչ և բա- րերար որ երևեցաւ յաշխարհն Երուսաղէմացւոց, ողջոյն։ Լու- եալ է մեր վասն քո և վասն բժշկութեանդ որ լինի ՚ի ձեռս քո առանց դեղոյ և արմատոց. զի որպէս ասի, տաս դու կուրաց տեսանել և կաղաց գնալ, զբորոտս սրբես և զայս պիղծս և զդևս հանես, և որ միանգամ չարչարեալ են ընդ երկար հիւան- դութեամբք՝ բժշկես դու, և զմեռեալս յարուցանես։ Եւ իբրև լուայ վասն քո զայս ամենայն, եդի ՚ի մտի խմբմ մի յերկուց. կամ Թէ դու Աստուած իցես իջեալ յերկնից և գործես զայդ, և կամ Թէ որդի Աստուծոյ իցես և զայդ առնես. արդ վասն այսո- րիկ գրեցի ես ազաչել զքեզ, զի աշխատ լինիս և եկեսցես առ իս և բժշկեսցես զհիւանդութիւնս զոր ունիմ ես։ Նաև լուայ զի հրէայք արամբնին զքէն և կամին չարչարել զքեզ։ Բայց քաղաք մի փոքրիկ և գեղեցիկ է իմ, և բաւական է մեզ երկոցունցս։

Ջայս այսպէս գրեաց նա, փոքր մի յաստուածայնոց անտի նշուլից լուսաւորեալ յայնժամ Ս. Յակոբ առն, որ թէպէտ համառօտ, այլ լի և բազում զօրութեամբ. և է օրինակ զայս։

Պատասխանի Թղթոյն ի Յիսուսէ ի ձեռն Ս. Նանաիայ սուբհանգակի առ Ս. Բգաբ իշխան։

Երանի՛ քեզ, Ս. Բգաբ, այնմիկ որ հաւատացեալ չես իբր ոչ իցէ տեսեալ զնա, զի գրեալ է վասն իմ այսպէս. զի որք տեսանիցեն զնա, ոչ հաւատասցեն և կեցցեն։ Իսկ վասն այսր զի գրեցեր դու առ իս՝ գալ ինձ առ քեզ. արժան է ինձ կատարել աստ զամենայն ինչ վասն որոյ առաքեցայ ես, և իբրև կատարեցից զայն՝ ապա վերադարձայց առ այն որ առաքեացն զիս, և յորժամ վերադարձայց՝ առաքեցից քեզ մի յաշակերտաց աստի խոց, զի զգաւս քո բժշկեսցէ, և կեանս տացէ քեզ և որ միանգամ ընդ քեզ են։

Ընդ նամականուէս գաւան և այսորիկ յատորի լերզս, եթէ. Ձեռ վերանալոյն Յիսուսի առաքեաց Յուդա՝ որ և Թովմաս, զՓադէոս առաքեալ, զմի յերկոտասանից անտի։ Որ իբրև եկին և լուծաւ առ Տուբիա որդի Տուբիայ, և իբրև լու եղև վասն նորա, և յայտնի եղեն նշանքն որ ի ձեռն նորա գործէին, պատմեցին Աբգարու և ասեն, եթէ եկին առաքեալն Յիսուսի այսր, որպէս և յղեաց առ

Պատասխանի հրովարտակին զոր ինչ գրեցաւ Յերուսաղեմ՝ ի ձեռն Ագանիա սուբհանգակի առ Աբգար իշխան աշխարհի։

Երանի՛ իցէ այնմիկ որ հաւատայ չես, իբրև ոչ իցէ տեսեալ զնա. զի գրեալ է վասն իմ այսպէս. զի որք տեսանիցեն զնա՝ ոչ հաւատասցեն չես. և որք ոչն տեսանիցեն զնա, նոքա հաւատասցեն և կեցցեն։ Իսկ վասն այսր զի գրեցեր գնա առ իս գալ ինձ առ քեզ, արժան է ինձ կատարել աստ զամենայն ինչ վասն որոյ առաքեցայ եմ. և իբրև կատարեցից զայն ապա վերադարձայց առ այն որ առաքեացն զիս։ Եւ յորժամ վերադարձայց՝ առաքեցից քեզ մի յաշակերտաց աստի խոց, զի զգաւս քո բժշկեսցէ և կեանս տացէ քեզ և որ միանգամ ընդ քեզ են։ Բայց ընդ նոյն Թուղթ, զի առքա եւս մեծաւոր են ի լերզս սոցին։ Ձեռ վերանալոյն Յիսուսի, առաքեաց Յուդայ Թովմաս զՓադէոս առաքեալ մի յերկոտասանից անտի. և իբրև եկին լուծաւ նա առ Տուբիա, որդւոյ Տուբիայ. և իբրև լու եղև վասն նորա, պատմեցին Աբգարու և ասեն, եթէ եկին առաքեալն Յիսուսի այսր, որպէս և յղեաց առ

որպէս և խոստացաւն նա քեզ։ Ակսաւ այնուհետև ինքն Թադէոս բժշկել զամենայն ցաւս և զհիւանդութիւնս զօրութեամբն Աստուծոյ, որպէս զի ամենայն մարդ զարմացեալ լինէր։ Իսկ իբրև լուաւ Աբգար զմեծամեծ սքանչելիսն զոր առնէր, եթէ արդարև բժշկէր նա անուամբ և զօրութեամբ Քրիստոսի. զմտաւ էած եթէ նա իցէ այն՝ վասն որոյ առաքեաց առ նա Ցիսուս և ասէր ցնա, եթէ Յորժամ վերացայց առաքեցից առ քեզ զմի ոք յաշակերտաց իմոց, որ բժշկեսցէ զցաւս քո։ Եւ յղեաց կոչեաց զՏուբիա՝ առ որում իջեալն էր նա, և ասէ ցնա. Լուայ եթէ այր մի ամենազօր յերուսաղէմ եկն և լուծաւ ի տան քումմէ, և բազում նշանք յանուն Ցիսուսի ի ձեռս նորա լինին։ Տուբիաս, ասէ. Ա՛յո, Տէր իմ, եկն առ իս օտար ոք պանդխտաց, և բազում նշանք ի ձեռս նորա լինին։ Աբգար ասէ. Այ զնա առ իս։ Ցայն, ժամ եկեալ Տուբիայ առ Թադէոս և ասէ. Աբգար իշխան քաղաքիս յղեաց և կոչեաց զիս, և ասէ ցիս տանել զքեզ առ նա, զի բժշկեսցես դու զնա։ Թադէոս ասէ. Երթայց, քանզի առ նա մնայուանդ առաքեալ եմ։ Կանխեալ ապա Տուբիա ի վաղիւ անդր, և էառ զԹադէոս և չոգաւ առ Աբգար։ Եւ իբրև ելին առ նա, մեծ առ նմա կալով և իշխանաց նորա. և նոյնժամայն միւդեռ մտանէր նա, տեսիլ մեծ երևեցաւ Աբգարու յերեսս Թադէոսի առաքելոյ. և իբրև հասս զայս Աբգար անկաւ և երկիր ե-

քեզ։ Ակսաւ այնուհետև ինքն Թադէոս բժշկել զամենայն ցաւս և զհիւանդութիւնս զօրութեամբն Աստուծոյ, որպէս զի ամենայն մարդ զարմացեալ լինէր։ Իսկ իբրև լուաւ Աբգար զմեծամեծ սքանչելիսն զոր առնէր զբժշկէր նա, էած զմտաւ եթէ նա իցէ այն վասն որոյ առաքեաց նա առ. Քրիստոս, և ասէ ցնա՝ Յորժամ վերացայց առաքեցից առ քեզ մի յաշակերտաց իմոց, զի նա բժշկեսցէ զցաւս քո։ Եւ յղեաց կոչեաց զՏուբիա՝ առ որում իջեալն էր նա, և ասէ ցնա. Լուեալ եմ ես եթէ այր մի զօրութեանց եկն եհմուտ լուծաւ ի տան քումմէ, արդ՝ ածցես դու զնա առ իս։ Իբրև եկն Տուբիա առ Թադէոս՝ և ասէ ցնա. Աբգար արքայ յղեաց կոչեաց և ասէ ցիս տանել զքեզ առ նա, զի բժշկեսցես դու զնա։ Եւ ինքն Թադէոս ասէ. Ես երթայց, քանզի առ նա առաքեալ եմ ես զօրութեամբ։ Կանխեաց այնուհետև և Տուբիա ի վաղիւ անդր և էառ զԹադէոս, և չոգաւ առ Աբգար։ Իսկ իբրև եկին

պագ Թադէի. և զարմացան ամենեքեան որ միան-
գամ կային անդ. զի նորա ոչ տեսին զայն տեսիլ՝ այն
որ միայն Աբգարու երևեցաւ: Եւ նա հարցանէր
զԹադէոս. եթէ Աբգարև Աշմարիս աշակերտ իցես
դու Յիսուսի որդւոյ Աստուծոյ, այն որ ասաց ցիս՝ Ե-
թէ առաքեմ առ քեզ զմի յաշակերտաց իմոց, զի նա
բժշկեսցէ զքեզ և տայէ քեզ կեանս: Եւ պատաս-
խանի նմա Թադէոս և ասէ. Քանզի մեծատէս հա-
ւատացեր դու այնմ որ առաքեացն զիս, վասն այնո-
րիկ առաքեցայ ես առ քեզ, և զարձեալ եթէ հա-
ւատայցես դու ի նա, տայցին քեզ խնդրուածք սրտի
քո: Ասէ ցնա Աբգար. Ա՛յնպէս հաւատացի ի նա,
զի զՀրէից որ ի խաչ հանին զնա՝ կամեցայ ես զօրս
առնուլ և գալ կոտորել զնոսա, եթէ ոչ էր իմ ար-
գելեալ վասն Թագաւորութեան Հռովմայեցւոց: Ա-
սէ ցնա Թադէոս. Ցերն մեր զկամն Հօր իւրոյ կատա-
րեաց, և իբրև կատարեաց՝ վերացաւ նա առ Հայր իւր:
Ասէ Աբգար, ես հաւատացի ի նա և ի Հայրն նորա:
Ասէ Թադէոս. վասն այսորիկ դնեմ ես ի վերայ քո
զձեռն իմ յանուն նորա. և իբրև արար նա զայս՝
նոյնժամայն բժշկեցաւ նա ի հիւանդութենէ իւրմէ
և ի ցաւոց անտի զոր ունէր նա: Եւ զարմացեալ էր
Աբգար, զի որպէս լուեալ էր նա վասն Յիսուսի՝
զնոյն օրինակ ետես արդեամբք ի ձեռն աշակերտին
նորա Թադէոսի առաքելոյ, զի առանց դեղոյ և ար-
մատոց բժշկեաց զնա, բայց ոչ զնա միայն, այլ և

դեսկեան զի կային անդ իշխանքն նորա. և նոյնժամայն մինչդեռ
մտանէր նա տեսիլ մեծ երևեցաւ Աբգարու յերկնէն Թադէոսի
առաքելոյ. և յորժամ ետես Աբգար զԹադէոս՝ անկաւ և երկիր
եպագ նմա. և զարմացան ամենեքեան որ միանգամ կային անդ.
զի նորա ոչ տեսին զայն տեսիլ՝ այն որ միայն Աբգարու երևեցաւ:
Եւ նա հարցանէր զԹադէոս՝ եթէ արդարև Աշմարիս աշակերտ
իցես դու Յիսուսի որդւոյն Աստուծոյ այն որ ասացն ցիս՝ եթէ
առաքեմ առ քեզ զմի յաշակերտաց իմոց, զի նա բժշկեսցէ զքեզ
և տայէ քեզ կեանս: Եւ Թադէոս պատասխանի ետ նմա և ասէ.
քանզի մեծատէս հաւատացեր դու յայնմ որ առաքեացն զիս,
վասն այսորիկ առաքեցայ ես առ քեզ. և զարձեալ եթէ հաւա-
տացես դու ի նա՝ տացին քեզ խնդրուածք սրտի քո: Ասէ ցնա
Աբգար, զի այսպէս ասէ հաւատացի ի նա, զի և զՀրէայն որ ի
խաչ հանին զնա՝ կամեցայ ես զօրս առնուլ և գալ կոտորել զնոսա.

ղԱբգարն զօրդի Աբգեայ որ յոտնացաւս էր, զի և նա էմուտ և անկաւ առ ոտս նորա։ Եկաց նա յաղօթս ելս և զձեռն կալեալ բժշկեաց զնա, և զայլս բազումս զբաղաքացիս նորա բժշկեաց նա, և առնէր սքանչելիս մեծամեծս և քարոզէր զբանն Աստուծոյ։ Ցետ այսորիկ ասէ ցնա Աբգար. Դու Թադէոս զօրուս Թեամբ Աստուծոյ զայս առնես, և մեք զարմացեալ եմք ընդ այս, այլ հանդերձ այսու ամենայնիւ ազաչեմք զքեզ, զի պատմեսցես դու վասն գալստեան Քրիստոսի Թէ որպէս եղև, և վասն զօրուԹեան նորա. և Թէ որով զօրուԹեամբ գայս՝ զոր լուայ ես, գործէր նա։ Աբէ ցնա Թադէոս. լաւեմ առ այժմ, այլ քանզի քարոզել զբանն Աստուծոյ առաքեցայ ես, առ վաղիւ ժողովեա առ իս զամենայն մարդիկ քաղաքի քո. և առաջի նոցա քարոզեմ և սերմանեմ ի նոսա զբանն կենացդ, և վասն գալստեան Յիսուսի Թէ որպէս եղև, և վասն առաքելուԹեան նորա և վասն որոյ առաքեցաւ նա ի Հօրէ իւրմէ, և վասն զօրուԹեան նորա և գործոց, և վասն խորհրդոցն զոր խօսեցաւ նա յաշակերտի. և որով զօրուԹեամբ գայս գործէր նա, և վասն նորուԹեան քարոզուԹեան նորա, և վասն

եԹէ ոչ էր իմ արգելեալ վասն ԹագաւորուԹեանն հռովմայեցւոց։ Աբէ ցնա Թադէոս. Տէր մեր կամն հօր իւրոյ կատարեաց. և իբրև կատարեաց վերացաւ նա առ հայր իւր։ Աբէ Աբգար. Եւ ես հաւատացի ի նա և ի հայրն նորա։ Աբէ Թադէոս. Վասն այսորիկ գնեմ ես ի վերայ քո զձեռն իմ յանուն նորա. և իբրև արար նա զայս՝ նոյնժամայն բժշկեցաւ նա ի հիւանդուԹենէ իւրմէ և ի ցաւոց անտի՛ զոր ունէր նա։ Եւ զարմացեալ էր Աբգար, զի որպէս լուեալ էր նորա վասն Յիսուսի զնոյն օրինակ էառնս արգհամբք ի ձեռն Թադէոսի աշակերտի նորա, զի առանց գիտոյ և ուսմանոյ բժշկեաց զնա. բայց ոչ զնա միայն, այլ և զԱբգու զօրի Աբգեայ. զի էր պատագրաս։ զի և նա էմուտ և անկաւ առ ոտս նորա։ Եւ իբրև եկաց յաղօԹս ի վերայ նորա՝ բժշկեցաւ նա։ Եւ զայլս բազումս զբաղաքացիս նոցա բժշկեաց նա. և առնէր զբանն չեզիս մեծամեծս և քարոզէր զբանն Աստուծոյ։ Ցետ այսորիկ ասէ ցնա Աբգար. Դու, Թադէոս, զօրուԹեամբն Աստուծոյ զայս առնես, և մեք զարմացեալ եմք ընդ այս, այլ հանդերձ այսու ամենայնիւ ազաչեմք զքեզ զի պատմեսցես դու վասն գալստեանն Քրիստոսի Թէ որպէս եղև, և վասն զօրուԹեան նորա. և Թէ որով զօրուԹեամբ գայս զոր լուայ ես՝ գործէր նա։ Աբէ ցնա Թադէոս. Աչքդ լուռ լինիմ, այլ քանզի քարոզել զբանն Աստուծոյ առաքեցայ ես, առ վաղիւ ժողովեա ինձ զամենայն մարդիկ քա-

փոքրկութեան նուաստութեան և խոնարհութեան նորա՝ երևելոյն ի մարդկէղէն պատկեր և ի ձև. ե- թէ արդէս խոնարհեցաւ և մնչու հաւրեր, և ամ- փոփեաց նուաստացոյց զաստուածութիւն իւր. որչափ ինչ չարչարանս կրեաց ի Հրէից անտի և խաչեցաւ և էջ ի գժոխս, և քակեաց զկրճին որ ի յատենէն անքակ կայր, և յարեաւ և յարոյց ընդ իւր զատե- տենէն ննջեցեալսն. և որ միայն էջ յերկինս, վերա- ցաւ ի նոյն բազում ժողովրդովը առ Հայր իւր. և արդէս նստի ընդ աջմէ Աստուծոյ փառաւք յերկինս. և թէ արդէս գալոց է դատեցեալ փառաւք և զօրու- թեամբ ի դատել զկենդանիս և զմեռեալս: Եւ հրամայեաց Աբգար եթէ վաղիւ ընդ առաւօտն ժողովեսցին ամե- նայն մարդիկ քաղաքի իւրոյ և լսիցեն զբարոզու- թիւն Թադէոսի: Եւ յետ այսորիկ հրամայեաց տալ նմա ոսկի և արծաթ, բայց նա ոչ էառ. Ցմեռն Թա- դաւոս, ասէ, զայլոցն զիարդ առցուք: Եւ եղև այս յա- մին երեքհարիւրերորդի և քառասներորդի: Բայց ոչ տարապարտուց և յանպէտս ինչ ելիս սուրբ Աստուց անտի ի Յոյն. և յաւելաւ ի ժամանակին ի մատեան պատմութեանս:

զաքի քո. և առաքի նոցա քարոզեմ և սերմանեմ ի նոսա զբանն կենաց, և վասն գալստեանն Քհստոսի, թէ արդէս եղև վասն ա- ռաքելութեան նորա, և վասն որոյ առաքեցաւ նա ի հաւր իւրմէ. և վասն զօրութեան նորա և գործոց իւրոց, և վասն խորհրդոցն զոր խոստեցաւ նա յաշխարհի. և որպէս զօրութեամբ զայս գոր- ծէը նա. և վասն քարոզութեան նորա և վասն փոքրկութեան և խոնարհութեան նորա՝ եթէ արդէս խոնարհեցաւ և անփոփեաց և և փոքրկացոյց զանձն իւր, և խաչեցաւ և էջ ի գժոխս, և քա- կեաց զկրճինն որ յատենէն չէր քակեալ, և յարոյց զմեռեալս. և էջ միայն և վերացաւ բազում ժողովրդովք առ Հայր իւր: Զոր- մայեաց այնուհետև Աբգար եթէ վաղիւ ընդ առաւօտն ժողո- վեսցին ամենայն մարդիկ քաղաքի իւրոյ, և լսիցեն զբարոզու- թիւնն Թադէոսի: Եւ յետ այսորիկ հրամայեաց նա տալ նմա ոսկի և արծաթ: Բայց նա ոչ էառ, և ասէ. Ցմերն Թոդաւ, զայ- լոցն զիարդ առցուք: Յամին երեքհարիւրերորդի քառասներորդի եղև այս: Բայց զի ոչ տարապարտուց եկն սուրբ առաքեալն պատ- գամք յաստուց անտի ի յոյն, այս է ի ժամանակի իւրմանց եկեղեցւոյ:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Գլուխ Ա. [1] — Եւսեբիոս Պամփիլացի, ասէ և Պաղեստինա-
ցի կամ Փիւնիկեցի:

Գլուխ Բ. [2] — « Եւ յեօթն Շաբթի պատմաւ եղելոցս ամե-
նայնի »: Եթէ մարթ էր ըստ կարգի ծննդեան միայն Որդւոյն
Աստուծոյ առնուլ զրանս զայս, և ոչ ըստ համագոյ Հաստիչին
էութեան նորա ընդ Հօր, կարէր ոչ արգելոք ասել թէ՝ ուղ-
զութեամբ, այլ զի Եւսեբիոս էն բանիք զԱրիոսին ախտ ախտա-
ցեալն, որ և՝ ի բազում տրիք երկրորդ զոյդ զիւր մոլար վար-
դապետութիւնն, խորշելի է ապա ամենեին:

... [3] — « Իբրև երկրորդ՝ ի նմանէ »: Պաշտանէի է այդ և
հրամանակատարի, ուր մէք զՈրդին Աստուծոյ համագոյ Հօր գի-
տեմք՝ իշխանակից և արարչակից:

... [4] — « Ջնախապատմեա եղելոցս ամենայնի »: Մարթի ոք
ուղղութեամբ ասասցածարանել այսպէս զՀօրէ:

... [5] — « Ի նմանէ գոյս և պէտ »: Ա յսինքն է յեօթ նորա,
որ գործակալ զպաշտանէի սոյ կարծիս:

... [6] — « Կենդանին է և կատարեալ անձնաւորութեամբ »:
Զէ բաւական կենդանի գոլ Որդւոյն Աստուծոյ յառաջ քան
զկրս ամենայն և անձն կատարեալ, այլ զի և համագոյ իցէ և հա-
ւասարակից և բնութենակից Հօր, որով և Աստուած յԱս-
տուծոյ:

Գլուխ Ե. [7] — « Ցեօթ այսորիկ յարեաւ Ցուգաս յաւուրս
աշխարհագրին »: Թէպէտ չիցեն մեր կամք՝ ի ծանր և՝ ի գժուա-
րին խնդիրս մտանել, այլ զի խառն՝ ի խուռն առնուլ ժողովել
թուի՝ ի սմա զդէպս ժամանակացն Եւսեբի՝ իբրև առ գալըս-
տեամբ Փրկչին յաշխարհ, ապա ոչինչ անգէպ տակաւուք ինչ պար-
զել զայն: Որ ինչ մեկին ասէ և պարզ, զի՝ ի քառասնեւերկրորդ երկ-
րորդ ամի Աւգոստեայ կայսեր, և՝ ի վերջին ամն Թագաւորու-
թեան Հերովդէ եկն Փրկիչն մեր յաշխարհ: Իսկ զայլ ամենայն
գէպսն և զաշխարհագիրս՝ զառաջինն և զերկրորդ՝ կուտէ առ Նո-
վա: Արդ գէպ լինի առաջին աշխարհագիրն ամք ինչ յառաջ
քան զմեր Թուական, և վասն մտանն Հրէաստանի՝ Հերովդէ Թա-

գաւառի աշխարհին երբեմն բարեկամի և հպատակի յանձն լինի այն, և չընծայեա այս ամաց աշխարհագրին գան և Յովսէփ և Մարիամ ի Բեթղեհէմ մանել յաշխարհագիրս յորում և Ծնունդ Քրիստոսի։ Եւ մահաւան առա Հերովդէ, մերժելոյ և որդւոյ նորա Արքեղայոսի ի սակաւ ժամանակեայ թագաւորութենէն, առաքի Աւգոստոս Կուբրնիոս ի գաւառս Աւրուց՝ առանձին իշխանութեամբ և վերայ Հրէաստանի։ Յառաջ քան զաշխարհագիրն, որով և ի նորա անուն այնու հետ Կուբրնեան կոչի աշխարհագիրս և առաջին աշխարհագիր՝ առ յորշումն յերկրորդն, որ առաւին գաւառել կրկին անգամ կարգելոյ գաւառապետն Կուբրնեան, սկսեալ յեւթներորդ ամէ անտի Ծննդեան Փրկչին մերոյ Յիսուսի, յերեքտասաներորդ ամն։ Եւ զի Կուբրնեան կոչեցան աշխարհագիրքս և առաջինն և երկրորդն, այսպէս գրուխմել գտանին յարձանագիրս պետութեան ի Հռոմ, որում և վկայէ Յուստինոս յառաջնումն անգ. Հատագովութեան իւրում։ Արդ եթէ ընդ հարս ամաց այսոցիկ բաժանեսցուք զդէպս պատմութիւնս յԱւգոստոս, ոչինչ անճշմարտութիւն երևի այնու հետ. ընդ առ և ընդ Յովսեպոս։ արդարեանց և բան երանելւոյն Ղուկայ և պարզ է։ Որով սեանեամբ յայտնապէս ցոյս Յովսեպոսի՝ գի ընդ երկրորդ աշխարհագրութ անկանի ժամանակ ապստամբութեան Յուդայ Գալիլեացւոյն և խլացումն Հրէից, խեթալով նոցա ընդ ի ապառ անդրայ գերութիւն Բաբելացւոց։

ՅԱՆԿ ԵՐԿՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԵԱՆ

Ա. — Ասան գնացէք Առաքելոցն յետ վերադալոյն Քրիստոսի։
Բ. — Եթէ որպէս Տիբերիոս իրեն ուսաւ՝ ի Պիղատոսէ վասն Քրիստոսի և խոովեցաւ։
Գ. — Եթէ որպէս՝ ի սակաւ ժամանակի ընդ ամենայն սրբեզբօս սփռեցաւ աւետարանն Քրիստոսի։
Դ. — Թէ որպէս յետ մահուն Տիբերիոսի Թագաւորեցոյց Պայիոս զԱգրիպպաս՝ ի վերայ Հրէից, և գՀերովդէս գառաջարեալսն յաքսոր մնդնքնաւոր։
Ե. — Եթէ որպէս փիլոն վասն Հրէից լոգաւ հրեշտակաւ Թեամբ առ Պայիոս։
Զ. — Թէ որչափ չարիք հասին՝ ի վերայ Հրէից յետ ժպրհուԹեամբ համարձակելոյ նոցա՝ ի վերայ Քրիստոսի։
Է. — Թէ որպէս անձնասպան գԻւդասին գնայր Պիղատոս։
Ը. — Վասն սովոյն որ եղև յաւուրսն Կղաւդեայ։
Թ. — ՎկայուԹիւն Յակոբոս առաքելոյն։
Ժ. — Թէ որպէս Ագրիպպաս, որ նա ինքն է Հերովդէս, հալածեաց զառաքեալսն, և անյապաղ հասին նմա գատասանքն Աստուծոյ։
ԺԱ. — Վասն Թևդայ կախարդին, և որոց ընդ նմա։

ՅԱՆԳ ԴՊՐՈՒԹԻԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԳԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ԵԿԵՂԵՑԻՈՑ

Ա. — Առաջին ճառ վասն գնացից առաքելոցն յետ վերադալոյն Քրիստոսի։
Բ. — Երկրորդ, Թէ որպէս և յաւաւ Տիբերիոս վասն Քրիստոսի և խոովեցաւ։
Գ. — Երրորդ, Թէ որպէս՝ ի սակաւ ժամանակի տարածեցաւ ընդ ամենայն սրբեզբօս աւետարանն Քրիստոսի։
Դ. — Չորրորդ, Եթէ որպէս յետ Տիբերիոսի՝ Պայիոս կացոյց՝ ի վերայ հրեից զԱգրիպպ՝ ի ժամանակի իրրև նոյն նա զՀերովդէս յաքսորեաց Թեամբ անտի իւրմէ։
Ե. — Հինգերորդ, վասն Թէ որպէս փիլոն փոխանակ հրեից լոգաւ հրեշտակաւ Թեամբ առ Պայիոս։
Զ. — Վեցերորդ, Եթէ որչափ չարիք հասին՝ ի վերայ հրեից, Հետ ժպրհուԹեան համարձակելոյ նոցա՝ ի վերայ Քրիստոսի։
Է. — Եօթներորդ, վասն Թէ որպէս ինքն գանձն իւր ետասան Պիղատոս։
Ը. — Ութներորդ, վասն սովուն որ եղև յամս կղաւդեայ։
Թ. — Իններորդ, վկայուԹիւն Յակոբոս առաքելոյն։
Ժ. — Տասներորդ, Եթէ որպէս Ագրիպպաս, զի նա ինքն է Հերովդէս, ՚ի ժամանակի իրրև հալածեաց զառաքեալսն, նոյնժամայն հասին նմա գատասանքն Աստուծոյ։
ԺԱ. — Մետասաներորդ, վասն Թևդայ մոչրեցաւորչի։

ԺԲ. — Վասն Հեղինէայ դշխոյին Ասորւեանց։
ԺԳ. — Վասն Սիմէոնի կախարդի և այլոց ուրուք Հեղինէայ։
ԺԴ. — Վասն քարոզութեան Պետրոսի առաքելոյ ի Հռոմ քաղաքի։
ԺԵ. — Վասն աւետարանին որ ըստ Մարկոսի։
ԺԶ. — Եթէ արդեօք քարոզեաց զաւանչին Մարկոս զդիտութիւնն Քրիստոսի այնոցիկ որ յԵգիպտոս էին։
ԺԷ. — Թէ զինչ պատմէ Փիլոն վասն Ճգնաւորաց որոնց Եգիպտացւոց։
ԺԸ. — Եթէ արդեօք ինչ խօսք կամ Ճառք սորին Փիլոնի առ մեզ հասին։
ԺԹ. — Թէ որպիսի նեղութիւնք հասին ընդ Ժողովուրդն Հրէից յաւուրս գաղիղի։
Ի. — Որ ինչ միանգամ գործ գործեցան ի մէջ Երուսաղէմի յաւուրս Ներոնի։
ԻԱ. — Վասն Եգիպտացւոյն որ ի գործս Առաքելոյ յիշատակի։
ԻԲ. — Թէ արդեօք առաքեցաւ ի Հրէաստանի ի Հռոմէ քաղաքէ Պօղոս կապանաւք. և պատահանի արարեալ ամբաստանութեանցն արձակեցաւ ազատ։
ԻԳ. — Թէ արդեօք վկայեաց Յակովբոս, այն որ անուանեալ կոչէր եղբայր Տեառն։
ԻԴ. — Թէ արդեօք յետ Մարկոսի առաջին եպիսկոպոս եկաց Անդիքանդրացւոց եկեղեցւոյն Աննեանոս։
ԻԵ. — Վասն հալածանաց Ներոնի, յորում Պօղոս և Պետրոս ի Հռոմի վասն ատտուածապաշտութեան առին զպսակ վկայութեան։
ԻԶ. — Վասն բազում չարեացն զոր կրեցին Հրէայքն, և վասն վերջին պատերազմին նոցա ընդ Հռոմայեցւ։

ԺԲ. — Երկտասաներորդ, վասն Հեղինէայ տիկնոջ Միջագետաց։
ԺԳ. — Երեքտասաներորդ, վասն Սիմէոնի կախարդի։
ԺԴ. — Չորեքտասաներորդ, վասն քարոզութեանն Պետրոսի առաքելոյ ի Հռոմ քաղաքի։
ԺԵ. — Հնգետասաներորդ, վասն աւետարանին Մարկոսի։
ԺԶ. — Վեցտասաներորդ, եթէ արդեօք Մարկոս զաւանչինն քարոզեաց զդիտութիւն Քրիստոսի հպիսպաց։ ցոն։
ԺԷ. — Եօթնետասաներորդ, և թէ զինչ պատմէ Փիլոն վասն սրանցն Եգիպտացւոց։
ԺԸ. — Ութետասաներորդ, թէ քանի խօսք դիտացաք մեք զփիլոնեայ։
ԺԹ. — Իննետասաներորդ, եթէ որպիսի անցին ընդ Ժողովուրդն Հրէից։
Ի. — Քսաներորդ, որ ինչ միանգամ գործեցան յաւուրս Ներոնի ի մէջ Երուսաղէմի։
ԻԱ. — Քսաներորդ առաջներորդ, վասն հպիսպացւոցն այն որ և ի գործս առաքելոցն յիշատակին դնմանէն։
ԻԲ. — Քսաներորդ երկրորդ, եթէ արդեօք առաքեցաւ ի Հրէաստանի ի Հռոմէ քաղաք Պօղոս կապանաւք։ Եւ իբրև արար զպատահանին որ Ճակեցաւ նա յամենայն բամբասանաց։
ԻԳ. — Քսաներորդ երրորդ, թէ արդեօք վկայեաց Յակովբոս, այն որ անուանեալ կոչէր եղբայր տեառն մերոյ։
ԻԴ. — Քսաներորդ չորրորդ, թէ արդեօք զկնի Մարկոսի եկաց եպիսկոպոս եկեղեցւոյն Աղէքսանդրացւոցն նա Աննեանոս։
ԻԵ. — Քսաներորդ հինգերորդ, վասն հալածանացն որ եղև յամս Ներոնի, զի ի նմանէ Պետրոս և Պօղոս առին զպսակ վկայութեանն, վասն Աստուածապաշտութեան, ի Հռոմ քաղաքի։
ԻԶ. — Քսաներորդ վեցերորդ, թէ արդեօք կրեցին հրէայքն զբիւր չարիս. և վասն վերջին պատերազմին որ եղև նոցա ընդ Հռոմայեցւ։

ԴՊՐՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն

Ցոր ինչ միանգամ եկեղեցական պատմութեան արժան էր իբրու ի նախերգանս կանխել կարգել վասն աստուածութեան Փրկչին Յանէին, վասն կանխութեան ուսման վարդապետութեան մերոյ, և վասն կանխութեան աւետարանական գնացից քրիստոնէից. դարձեալ և վասն որ ի վերջին ժամանակս յայտնութեան Տեառն մերոյ, և չարչարանաց նորա և ընտրութեան առաքելոցն, զայս ամենայն ի գլուխ եհան որ յառաջ քան զայս կարճ ի կարճոյ համառօտեալ, ի նոյն և ղընծայութիւնն յաւելաք։ Եւ արդ զոր ինչ միանգամ յետ վերանալոյն նորա Յիսուսի դէպ՝ մանր դրոշմեցաք. կէս մի ի նոցունց ի գրոց սրբոյ առեալ, և կէս մի ի պատմութեանց յարտաքին գրոց ժողովեալ, զորոց ի դէպ ժամանակի յիշատակեցաք և զանուանս։

ԳԼՈՒԽ Ա.

վասն գնացից Առաքելոցն յետ վերաւնդոյն Քրիստոսի։

Արդ նախ փոխանակ Յուդայի մնանելի ընտրեցաւ Մատաթիաս յառաքելութիւն, որ էր մի յաշակերտաց անտի Տեառն մերոյ, որպէս կանխեցաք ասացեալ։ Եւ կարգեցան դարձեալ ի տեղն աղօթից և ձեռնադրութեան առաքելոցն ի պաշտօն և ի սպաս աւրհնեկութեան հաստատակաց, աւր Թուով եւթն՝ փորձ և ընտիրք, յորս էր և Ստեփանոս. որ զկնի Տեառն մերոյ՝ յետ իւրոյ ընտրութեանն, իբրու այն թէ ի սոյն կոչեցեալ քարկոծմամբ ի տեառնասպանից անտի ընկալաւ նախ զնահ, որով և ըստ անուան

Առաջին ձառ վասն գնացից առաքելոցն յետ վերաւնդոյն Քրիստոսի։

Ցամենայն որ ինչ միանգամ արժան է կանխել ընտրել կարճ ի կարճոյ համառօտաբար, յառաջ քան զպատմութիւնս ևկեղեցւոյ, վասն աստուածայնութեան Փրկչին մերոյ, և վասն կանխութենից ուստանց վարդապետութեան մերոյ, և վասն կանխութեան գնացից աւետարանին քրիստոնէութեան։ Բայց ոչ միայն վասն այսր, այլ վասն յայտնութեան Տեառն մերոյ՝ որ եղև ի ժամանակս յետնիս, և վասն չարչարանաց նորա և վասն ընտրութեան առաքելոց նորա, ի գպրութեան անդ որ յառաջ քան զայս կարճ ի կարճոյ համառօտս ասացաք զորինակ նոցա։ Բայց ասացաք արդեւ որ ինչ միանգամ եղև յետ վերանալոյն նորա. ի նոցունց գրոց մեացաք ի գրոց սրբոց. իսկ ի նոցունց ի պատմութենից յարտաքին գրչութենէ ի ժամանակի իւրեանց յիշատակեմք մեք զնոսա. արդ նախ զառաջինն՝ յառաքելութիւն փոխանակ Յուդա մնանելի ընտրեցաւ. Բարթողոմէոս, զի էր նա յաշակերտաց անտի տեառն մերոյ, որպէս կանխեցաք և յառաջագոյն ասացաք։ Բայց կացին ի պաշտօն հաստատակաց ի տեղն աղօթից և ի տեղն գպրութեան առաքելոցն, մարգք փորձեալք ընտրեալք Թուով եօթն տունն Ստեփաննեայ. այն որ նոքա զկնի տեառն մերոյ քարկոծեցաւ. ի մահ, ի տեղն այնոցիկ որ զՏէրն իւրեանց սպանին. զի ընդ նմին ի տեղեացն զոր ընկալաւ նա իբրու այն թէ նմին իբր իսկ ընտրեցաւ նա, և զպակաս յաղթութենէն զվկայիցն Քրիստոսի միաբանեալ անուամբ նախ ընկալաւ։

իւրոյ յառաջեալ ընդ փառաւոր վկայս Քրիստոսի կալաւ զպսակն յաղթութեան։ Այլ և Յակովբոս՝ այն որ անուանեալ կոչէր եղբայր Տեառն, քանզի և նա որդի անուանէր Յովսեփայ[1] ։ Բայց Յովսէփ Հայր Քրիստոսի, որում խոստեալ կոյսն, մինչև եկեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ ի Հոգւոյն սրբոյ, որպէս և ուսուցանեն գիրք սուրբք աւետարանին։ Արդ սոյն այս Յակովբոս, զոր առաջինքն արդարք կոչէին վասն սքանչելի առաքինութեանցն, պատմեն՝ եթէ ընկալաւ սա զառաջին աթոռ եպիսկոպոսութեան եկեղեցւոյն Երուսաղեմացւոց։ Եւ կղեմէս ի վեցերորդ գիրս իւրոյ Հրահանգոցն աւանդէ զնմանէ այսպէս. Յի Պետրոս, ասէ, և Յակոբոս և Յովհաննէս յետ վերանալոյ Փրկչին մերոյ, որպէս առ ի Տեառնէ նախապատուեալք ոչ եթէ ի վերայ պատուոյ և փառաց մրցելով, զՅակոբոսս զարդարն ընտրեցին եպիսկոպոս Երուսաղեմացւոց։ Եւ նոյն իսկ դարձեալ ի սոյն յիշեալ գիրս իւր այսպէս ասէ զնմանէ. եթէ Յակոբոս արդարոյ և Յովհաննու և Պետրոսի յետ յարութեան իւրոյ՝ ետ նոցա Տէրն մեր զգիտութիւն իւր, և նոքա ետուն այլոց առաքեալսն. իսկ առաքեալքն եւթանասնից, յորս էր և Բառնաբաս։ Բայց երկու էին որոց անուանք Յակոբ էին, մի արդարն զոր յա-

Իսկ Յակոբոս՝ այն որ անուանեալ կոչէր եղբայր աեառն մերոյ, քանզի և նա որդի էր Յովսեփայ։ Բայց Յովսէփ՝ այն զոմէ կասծէին եթէ հայր է նա Քրիստոսի, որ նմա խոստեալ էր վարիեմ կոյս, մինչչև մտեալ էր նոցա առ միմեանս՝ գտաւ յղացեալ ի հոգւոյ անաի սրբոյ, որպէս և ուսուցանեն գիրք աւետարանին։ Եւ զսոյն զսոյս Յակովբոս առաջինքն արդար կոչէին զնա վասն զքանչելի գործոց իւրոց։ զնմանէ պատմեն եթէ ընկալաւ զառաջին աթոռ եպիսկոպոսութեան յեկեղեցւոջ անդ Երուսաղէմ։ Կղեմէնտոս գրէ զնմանէ այսպէս, եթէ Պետրոս և Յակովբոս և Յոհաննէս, յետ վերանալոյ Փրկչին մերոյ, իբրև մարդք որ ի Փրկչէն անաի պատուհասան, չէին կարօտ փառաց իբրև, այլ և Յակովբ զայր արդար ընտրեցին նոքա յեպիսկոպոսութիւն Երուսաղէմի։ Եւ նոյն իսկ ի սոյն Հատս գարձեալ ասաց զնմանէ. եթէ Յակովբոս առն արդարոյ և Յոհաննու և Պետրոսի, յետ յարութեան պեառն մերոյ ի մեռելոց, ետ նոցա աեր մեր զգիտութիւն իւր, և նոքա ետուն այլոց առաքելոցն։ Իսկ առաքեալքն եօթանասնիցն, զի ի նոցանէ էր Բառնաբաս։ Բայց երկու էին որոց անուանք իւրեանց Յակոբ էին, մի այն արդարն

տարակէ անտի ընկեցին, և 'ի ձեռանէ Թափչին ձաղկաւ հարաւ և մեռաւ. իսկ միւս այն՝ որոյ գլուխն հատաւ։ Ցայն իսկ զայն Յակովբոս արգար՝ և Պօղոս յիշատակէր 'ի գրելն իւրում այսպէս, եթէ. Ցայլ ոք յառաքելոց անտի ես ոչ տեսի, բայց միայն զՅակով- բոս զեղբայր Տեառն։

Հանդերձ այսուիկ և խոստումն Փրկչին մերոյ առ աքեայն Ովրոյենաց 'ի գլուխս հելեալ կատարէր. զի Թովմաս զԹադէոս իբրև յաստուածային յայտնու- Թենէ առաքեաց Աբգեսիա լինել նմա քարոզ և ա- ւետարանիչ վարդապետութեան Քրիստոսի. զի 'ի յիշատակարանաց անտի որ գտաւ անդ՝ ցուցաք յա- ռաջ քան զվերջն մի։ Իսկ իբրև եհաս նա յաշխարհն յայն, բժշկեաց զԱբգար բանիւ Քրիստոսի, և զամե- նայն մարդիկ աշխարհին զարմացոյց նշանօք սքանչե- լեաց։ Եւ իբրև շատ իսկ գործովք նշանաց պատրաս- տեաց զնոսա, և 'ի պաշտօն երկրպագութեան զերու- Թեան Քրիստոսի մերձեցոյց, ապա և աշակերտեաց զնոսա վարդապետութեան Քրիստոսի։ Եւ մինչև ցայսօր ժամանակի ամենայն քաղաքն Եդեսացւոց զանուն Քրիստոսի կրեն, ոչինչ դուզնաքեայ զբաբե- Լարութեան փրկչին առ նոսա ունելով զբրինակ։ Եւ այսքիկ 'ի նախնեացն պատմութեանց ասացան։

որ յաշտարակէ անտի ընկեցին, և 'ի ձեռանէ Թափչին ձաղկաւ հարաւ և մեռաւ։ Իսկ միւս՝ այն որոյ գլուխն հատաւ։ Ցայն իսկ զայս Յակովբոս արգար և Պօղոս յիշատակէր 'ի գրելն իւրում այսպէս. եթէ զայլ ոք յառաքելոց անտի ես ոչ տեսի, բայց միայն զՅակովբոս զեղբայրն Տեառն մերոյ։ Եւ հանդերձ այսուիկ և խոստումն Փրկչին մերոյ առ արքայն Մինդագատաց կատարեալ լի- նէր. զի Թովմաս զԹադէոս իբրև 'ի զօրութենէն Աստուծոյ առա- քեաց յԱեդեսիա, լինել նմա քարոզ և աւետարանիչ վարդապե- տութեան Քրիստոսի. զի 'ի բազց անտի որ գտաւ անդ՝ ցուցաք յառաջ քան զվերջն մի։ Իսկ իբրև եհաս նա յաշխարհն յայն, զԱբգար բժշկեաց բանիւ Քրիստոսի, և զամենայն մարդիկ աշ- խարհին զարմացոյց սքանչելի զօրութեամբքն զոր գործեաց լի կատարեալ։ Իսկ 'ի ձեռն առաքելոցն իւրոց առաքեաց նա զգոր- ծըս իւր, և մերձեցոյց զնոսա յերկրպագութիւն զօրութեանն Քրիստոսի, և արար զնոսա աշակերտս վարդապետութեան կե- նացն մինչև այսօր ժամանակի, իբրև 'ի նմանէն ամենայն քա- ղաքն Ուրհայեցւոց անուանն Քրիստոսի մշտնջենաւորեալ է, և օրինակ մեծ օգնութեան փրկչին մերոյ յայտնի է 'ի նոսա, և սոքա

Արդ դարձցուք այսուհետև առ գիրս սուրբս։ Ի ժամանակի իբրև եղեն Հարուածքն առաջինք և անհնարինք ի վերայ եկեղեցւոյն Երուսաղէմացւոց ի Հրէից անտի յետ վկայութեան Ստեփաննէայ, և ի ցրուել ամենեցուն աշակերտացն՝ բայց յերկոտասանից անտի, ընդ ամենայն Հրէաստան և ի մէջ Շամրատացւոց, ոմանք ի նոցանէ, որպէս և գիրքն սուրբք ասացին, գնացին անցին մինչև ի Փիւնիկէ և ի Կիպրոս և ի Անտիոք, այլ ոչ համարձակէին նոքա քարոզել հեթանոսաց զբանն Աստուծոյ, բայց միայն Հրէից աւետարանէին։ Իսկ Պօղոս ցայնժամ էր եկեղեցւոյն, և մնանէր ի տունս տունս հաւատացելոց և քարշէր զարս և զկանայս, և տայր զնոսա ի բանտս և ի կապանս։ Այլ և Փիլիպպոս, մին յայնցանէ որ ընտրեցան ի սպաս պաշտամանն ընդ Ստեփանոսի, ի Թիւս ցրուելոյն էջ ի Սամարիա, և լի զօրութեամբ Աստուծոյ քարոզեաց նախ այնոցիկ որ անդն էին զբանն Աստուծոյ։ Եւ այնպէս իսկ զօրացոյց ի նմա Հոգին Աստուծոյ, որպէս զի և Սիմոն կախարդ հանդերձ այլովք բազմօք զՀրէից անտի ի վկայութեան անդ Ստեփաննէայ, ամենայն հրճուեցան ի մէջ շամրատացւոց, որպէս և գիրքն սուրբք ասացին. զի ոմանք ի նոցանէ գնացին և անցին մինչև ի Փիւնիկէ և ի Կիպրոս և ի Անտիոք, այլ ոչ համարձակէին նոքա քարոզել հեթանոսաց զբանն Աստուծոյ, բայց միայն հրէից աւետարանէին։ Իսկ Պօղոս ցայն ժամ էր եկեղեցւոյն, և մնանէր նա ի տունս հաւատացելոցն, և տանէր զարս և զկանայս, և տայր զնոսա ի բանտ և ի կապանս։ Նաև Փիլիպպոս յայնցանէ էր, որ ընտրեցան ի սպաս պաշտամանն ընդ Ստեփանոսի՝ յայնցանէ որ ցրուեցան. էջ նա ի Շամրին լի զօրութեամբ Աստուծոյ, և քարոզեաց նա այնոցիկ որ անդն էին՝ զբանն Աստուծոյ. և այնպէս իսկ զօրացոյն ի նմա հնարքն Աստուծոյ, որպէս զի և Սիմոն կախարդ՝ հանդերձ այլովք բազմօք յանդիմանեալ կշտամբեցաւ բանիւքն նորա. այսպիսի իսկ անառակ նենգ էր Սիմոն յայնմ ժամանակի՝ յայնցանէ որք մոլորեալ էին ի կախարդութեան նորա, զի զօրութիւն մեծ համարէին զնա։ Յայնմ

ասացեալ են իբրև ի պատմութեանց առաջնոց։ Արդ՝ դարձցուք այսուհետև առ գիրս սուրբս։ Ի ժամանակի իբրև եղեն հարուածքն առաջինք և անհնարինքն ի վերայ եկեղեցւոյն Երուսաղէմացւոց ի հրէից անտի ի վկայութեան անդ Ստեփաննէայ, ամենայն աշակերտացն բայց յերկոտասանից անտի ցրուեցան ընդ ամենայն հրէաստան և ի մէջ շամրատացւոց, որպէս և գիրքն սուրբք ասացին. զի ոմանք ի նոցանէ գնացին և անցին մինչև ի Փիւնիկէ և ի Կիպրոս և ի Անտիոք, այլ ոչ համարձակէին նոքա քարոզել հեթանոսաց զբանն Աստուծոյ, բայց միայն հրէից աւետարանէին։ Իսկ Պօղոս ցայն ժամ էր եկեղեցւոյն, և մնանէր նա ի տունս հաւատացելոցն, և տանէր զարս և զկանայս, և տայր զնոսա ի բանտ և ի կապանս։ Նաև Փիլիպպոս յայնցանէ էր, որ ընտրեցան ի սպաս պաշտամանն ընդ Ստեփանոսի՝ յայնցանէ որ ցրուեցան. էջ նա ի Շամրին լի զօրութեամբ Աստուծոյ, և քարոզեաց նա այնոցիկ որ անդն էին՝ զբանն Աստուծոյ. և այնպէս իսկ զօրացոյն ի նմա հնարքն Աստուծոյ, որպէս զի և Սիմոն կախարդ՝ հանդերձ այլովք բազմօք յանդիմանեալ կշտամբեցաւ բանիւքն նորա. այսպիսի իսկ անառակ նենգ էր Սիմոն յայնմ ժամանակի՝ յայնցանէ որք մոլորեալ էին ի կախարդութեան նորա, զի զօրութիւն մեծ համարէին զնա։ Յայնմ

խարդաւեթիւն նորա, զօրաւեթիւն մեծ Աստուծոյ գնա համարել։ Որ ի զարմանալն յայնժամ ընդ աքանչելի զօրաւեթիւնն Աստուծոյ որ լինէին ի ձեռն Փիլիպպոսի, խոնարհեցաւ կերպարանօք առ Հաւատան Քրիստոսի, մինչ զի և միրտաւեթիւն անգամ առցէ։ Զի ընդ սոյն իսկ ընդ այս արժան է մեզ զարմանալ, զի մինչև ցայսօր ժամանակի գործի յայնցանէ որ էն ի պիղծ աղանդէ անտի նորա, զի այնու հայրենի նենգաւեթեամբ իւրեանց իբրև ժանտախտիւ և զայրացեալ քոսով սողոսկեալ մտեալ յեկեղեցի, մեզանչեն մեծաապէս՝ յորս յաջողինն հեղուլ զդիմդակին և զջուր զծածկեալ իւրեանց թոյնս դառնութեան։ Բազումք իսկ ի նոցանէ ի խայտառակել նենգաւեթեանն, մերժեալ ընկերացն յեկեղեցւոյ, որպէս և ինքն Սիմոն կշտամբեալ ի Պետրոսէ ընկալաւ զարժանաւոր պատիժ պատուհասին։ Այլ ի ժամանակին իբրև հանապազօր աձէր միշտ և բազմանայր աւետարանն կենդանի, իբրև ի տեսչութենէ Աստուծոյ եկին յերուսաղէմ նեբբինի մի տիկնոջ եթովպացւոց, զի ըստ սովորութեան աշխարհին և մինչև ցայսօր ժամանակի կինն մարդ թագաւորէ ի նոսա։ Որ առաքինի ի հեթանոսաց իբրև յաստուածային յայտնութենէ ընկալաւ ի

ժամանակի և նա ի զարմանալն իւրում ընդ աքանչելի զօրաւեթիւն Աստուծոյ որ լինէին ի ձեռն Փիլիպպոսի, խոնարհեցաւ նա կերպարանօք առ Հաւատան Քրիստոսի, մինչ զի և միրտաւեթիւն առցէ։ զի ընդ սոյն իսկ ընդ այս արժան է մեզ զարմանալ, զի մինչև ցայսօր ժամանակի գործի յայնցանէ որ էն ի պիղծ աղանդէ անտի նորա, զի այնու հայրենի նենգաւեթեամբ իւրեանց դնան նոքա, և իբրև հիւանդութիւն չարաչար կեղոյ կարգի գայ ի նոսա, և մեզանչեն և կորուսանեն զայնոսիկ որ կարեն խաւնել ի նոսա զլեղին չարաւեթեան որ ծածկեալ էր ի նոսա։ Բազումք իսկ ի նոցանէն որք յանդիմանեալ կշտամբեցան, և որպէս էին նոքա մերժեալ կորացան գործովքն։ որպէս զի և ինքն Սիմոն իբրև խայտառակեցաւ ի Պետրոսէ առաքելոյ, ընկալաւ պատիժս պատուհասի որպէս և արժանի էր նա, այլ ի ժամանակի իբրև հանապազօր միշտ աձէր և բազմանայր աւետարանն կենդանի, իբրև ի տեսչութենէ Աստուծոյ, եկին յերուսաղէմ նեբբինի մի տիկնոջն հնդկաց, զի որպէս ըստ սովորութեան աշխարհին և մինչև ցայսօր ժամանակի կինն մարդ թագաւորէ ի վերայ նոցա։ զի նա նախ ի հեթանոսաց ընկալաւ զաւետարանն Քրիստոսի ի Փիլիպպոսէ։ և իբրև յայտնութենէն և նա եղև պատուական հաւատացելոց ամենայն հեթանոսաց։ Եւ իբրև գարձաւ յաշխարհն իւր։ և աւե-

Փիլիպպոսէ զԹորԹուրդ Աստուածոյ Բանին, և եղև պտուղ Հաւատացելոց ամենայն տիեզերաց, Եւ իբրև դարձաւ յաշխարհ իւր՝ աւանդեն զոյգը, աւետարանել նոցա անդ զամենեցուն Աստուածոյ զգիտութիւն, և գկենարար գալուստ Քրիստոսի մերոյ որ եղև առ մարդիկ։ Եւ այսպէս արդեամբք կատարեցաւ ի ձեռն նոցա մարգարէութիւնն որ ասէ. Եթէ Հնգիկք յառաջագոյն ձեռն տացեն առ Աստուած։ Ի ժամանակիս և Պօղոս անօթ ընտիր, ոչ ի մարդկանէ և ոչ ի ձեռն մարդոյ, այլ ի յայտնութենէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և Աստուածոյ Հօր՝ որ յարոյց զնա ի մեռելոց, կարգեցաւ առաքեալ, ի ձեռն տեսլեան և յայտնութեան բարբառոյն որ յերկնից՝ արժանի եղև կոչմանս։

ԳԼՈՒԽ Բ.

Եբէ ո՛րպէս Տիբերիոս իբրև ուսաւ ի Պիղատոսէ վասն Քրիստոսի և խռովեցաւ։

Իսկ իբրև լուր սքանչելի յարութեան Քրիստոսին և վերանալոյ նոցա յերկինս առ բազումս սիրեալ տա-

տարանեաց անդ զգիտութիւն Աստուածոյ ամենակալի, և գկենարար գալուստ Քրիստոսի մերոյ որ եղև առ մարդիկ, և արդեամբք կատարեցաւ ի ձեռն նոցա մարգարէութիւնն որ ասէ. Եթէ Հնգիկք յառաջագոյն ձեռն տացեն առ Աստուած։ Եւ Հանդերձ այսոքիկ և Պօղոս անօթ ընտիր, ոչ ի մարդկանէ և ոչ ի ձեռն մարդոյ, այլ ի յայտնութենէ աւետառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և Աստուած Հայր նոցա յարոյց զնա ի մեռելոց, ի ձեռն այնր տեսլեան և յայտնութեան բարբառոյն որ եղև ի վերայ նոցա յերկնից, արժանի եղև կոչման և եղև առաքեալ։

Երկրորդ կրկ ո՛րպէս Տիբերիոս իբրև ուսաւ ի Պիղատոսէ վասն Քրիստոսի և խռովեցաւ։

Այլ ի ժամանակի իբրև անուանեալ վեհէր բազմաց և քաղէր բազմաց պատչելի յարութիւնն Փրկչին մերոյ ի մեռելոց. և ի վերանալ նոցա ընդ յերկինս, ըստ առաջին սովորու-

Թեանն՝ գաւառակալ իշխանք ազգաց որ ինչ առնոսա նոր գործէր, նշանակեալ ծանուցանէին այնմիկ որ ունէր զիշխանութիւն Թագաւորութեան, զի ինչ մի չայնցանէ որ գործիցի, ոչ ծածկեացի ՚ի նմանէ։ Եւ արդ ՚ի հռչակել ընդ ամենայն Պաղեստին չարութեան Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի ՚ի մեռելոց, Պիղատոս գրեալ առ Տիբեր կայսր չայտ առնէր. որպէս և վասն այլոց նշանաց Տեառն մերոյ, զոր ՚ի լոյս գիտէր, և զի չէտ չարութեանն ՚ի մեռելոց, հաւատարիմ եղև նա բազմից եթէ Աստուած է։ Իսկ ինքն Տիբերիոս ծերակուտին մատոյց զայս, որ արհամարհեաց զբանն, զի ոչ նախ որպէս Թուի՝ քննեցաւ ՚ի նմանէ. զի օրինք էին վաղեմի, մի ումեք ընդ Աստուածս կարգել, բայց եթէ ՚ի խորհրդենէ և ՚ի հրամանէ ծերակուտին. այլ ՃՀմարտութեամբ զի չէր կարօտ մարդկեղէն սատարութեան և հաստատութեան փրկական բան քարոզութեան Աստուծոյ և վարդապետութեան։ Եւ իբրև մերժեաց ծերակոյտն զբանն, որ մատուցաւ ժողովոյն վասն Փրկչին մերոյ, եկաց ինաց Տիբերիոս չառաջինն խորհուրդն զոր ունէր, և հակառակ ինչ և անարժան վասն վարդապետութեան Քրիստոսի ոչ խորհեցաւ ասել։ Չայս Տերտուղիանոս՝ որ սպառսպուռ տեղեակ էր օ-

Թեանն զոր ունէին իշխանքն հեթանոսաց. զի զամենայն ինչ զոր նոր գործեացի, եղիցին ցուցանել նոցա այնմիկ որ ունէին զիշխանութիւն Թագաւորութեան, զի ինչ մի չայցանէ որ գործիցի, ոչ ծածկեացի ՚ի նմանէ։ Աստուածք իսկ լինէր ընդ ամենայն Պաղեստին չարութիւն Փրկչին մերոյ որ եղև ՚ի մեռելոց։ Պիղատոս այնուհետև Տիբերիոս արքայի եղոյց վասն նշանացն սեառն մերոյ. և զի չէտ չարութեանն ՚ի մեռելոց, հաւատարիմ եղև բազմից եթէ Աստուած է։ Իսկ ինքն Տիբերիոս սենկղետոսին մատոյց զայս բանս։ Իսկ ինքն սենկղետոսն իբրև լուաւ զբանն՝ արհամարհեաց, զի ոչ քննեցաւ նա նախ ՚ի նմանէ քան առաջին սովորութեանն որ էր. զի ՚ի մէջ հռոմայ ոչ լինէր Աստուած, բայց եթէ ՚ի խորհրդենէ և ՚ի հրամանէ սենկղետոսին։ Բայց կաթ ծերով կարծեալ էր եթէ վասն այսր իսկ Ճշմարտիւ, վասն զի չէր պարտ և պատշաճ եթէ իրաւամբք և խորհրդով մարդկան հաստատեցի կենդանի վարդապետութիւնն Աստուծոյ. այլ իբրև մերժեաց զբանն որ մատուցաւ ժողովոյն խորհրդեանն հաւանմայեցոց վասն Փրկչին մերոյ։ Ինքն Տիբերիոս եկաց ինաց չայնչին խորհուրդն զոր ունէր, և ոգեղ իրս ինչ վասն վարդապետութեանն Քրիստոսի ոչ խորհեր նա. զայս ինչ ասաց Տերտե-

բրինաց Հռոմոց, որ և այլևայլ իրօք պարծելի այր, և մեծանուն ՚ի Հռովմայեցիս, ՚ի գիրս Ջատագովութեան իւրոյ քրիստոնէից ՚ի բարբառ Հռովմայեցի, որ յեզուս ասպա ՚ի Յոյն լեզու, դնէ բանիւքս օրինակ զայս. Եւ զի անգամին ՚ի ծագմանէ օրինացս այսոցիկ խոսեացութ, ասէ, օրէնս ունիք դուք վաղեմիս, եթէ Աստուած ՚ի հրամանէ Թագաւորի միոյնոյ մի հաստատացի, մինչև փորձեալ քննեսցի ՚ի ծերակուտէ։ Մարկոս Եմիլիանոս այսպէս արար վասն դրօշելոյն իւրոյ Ալեքսանդեայ, և զայս առնէր ՚ի հաստատութիւն բանից մերոց, զի առ ձեզ ՚ի քննութենէ մարդկան տուեալ լինի աստուածութիւն, որ եթէ ոչ լինի հաւ Ձոյ մարդոյն Աստուածն, Աստուած լինել նա ոչ կարէ. և յայտնանէ արժան է մարդոյն քաւել զԱստուածն։ Արդ Տիբեր՝ յորոյ աւուրս եմուտ յաշխարհ անուն քրիստոնէից, իբրև ցուցին նմա յաշխարհէ անտի պաղեստինացւոց, ուստի սկիզբն եղև զառաջինն այսր վարդապետութեան, և նա եղոյց ծերակուտին, յայտ արարեալ Թէ հաճելի է ընդ վարդապետութիւնն։ Իսկ ծերակոյտն զի ոչ քննեաց ինքն յառաջագոյն զիս զայս արհամարհեաց զնովաւ։ Իսկ նա եկաց ինաց ՚ի հրամանի իւրում. և սպանումն մահու սպառնացաւ նա ամ-

զնանոս այր, որ սպառապուռ տեղեակ էր օրինաց Հռոմոց, որ և այլևայլ իրօք պարծելի էր. և ՚ի նշանաւոր և ՚ի պարծելի մարդկանն անտի որ էին ՚ի Հռոմ քաղաքի էր նա. զպատասխանին զոր արար նա փոխանակ քրիստոնէից ոմանց ՚ի նմանէ հռոմարէն, և մեկնեցաւ յաներէն, եդ նա ՚ի բանս իւր ՚ի պատմիչն իւրում այսպէս. Ահա մեք առաքեցաք, ասէ, և ՚ի բնակիչն վասն այսց օրինաց. օրէնս հինս ունիք դուք. եթէ Աստուած ՚ի հրամանէ Թագաւորի միոյնոյ մի հաստատացի. մինչև փորձեալ քննեսցի նա ՚ի սինկղիտոսէ։ Մարկոս Ամելիոս այսպէս արար վասն պատկերի միոյ գՆորսնոս. այս փոխանակ ընդ մեր եղև, զի առ ձեզ ՚ի քննութենէ մարդկան տուեալ լինէր աստուածութիւն. և արդ այսուհետև Թէ ոչ լինի հաճոյ Աստուածն մարդոյն, Աստուած լինել նա ոչ կարէ. և իբրև յայտնանէ մարդոյն արժան է քաւել զԱստուածն։ Արդ՝ Տիբերիոս որ յաւուրս նորա եմուտ յաշխարհ անուն քրիստոնէից. իբրև ցուցին նմա յաշխարհէ անտի պաղեստինացւոց, ուստի սկիզբն եղև զառաջին այսր վարդապետութեան, և նա եղոյց սինկղիտոսին. գնացաց իսկ եթէ հաճոյ եղև նմա այս վարդապետութիւն։ Իսկ սինկղիտոսն. վասն զի ինքն ոչ քննեաց յառաջագոյն զիս զայս արհամարհեաց զնովաւ։ Իսկ նա եկաց ինաց ՚ի հրամանի իւրում. և սպանումն մահու սպառնացաւ նա ամ-

նացեալ ամենայնի որ չարախօս կացցէն զքրիստոնէից՝ եւ այն՝ի փուճոյ անտի երկնաւոր տեսչութենէն էղև՝ի սկզբան նորա, զի սկիզբն էր յայնժամ աւետարանին բանի, զի անխափան և անարգել ընդ ամենայն երկիր ընթացցի։

ԳԼՈՒԽ Գ.

Երբ ո՛րպէս՝ի սակաւ ժամանակի ընդ ամենայն տիեզերս տիրեցաւ աւետարանն Քրիստոսի։

Այսպէս իսկ ակն յայտնի երկնաւոր զօրութեամբ և գործակցութեամբ, բանն փրկական յանկարծակի միահաղոյն իբրև զձառագայթ արեգական ամենայն տիեզերս լուսաւորեաց, և ըստ կանխասաց վկայութեան գրոցն աստուածայնոց. Ընդ ամենայն երկիր ել՝ բարբառ աստուածազգեցիկ աւետարանչացն և առաքելոց, և մինչև՝ի ծագս աշխարհի խօսք նոցա։ Եւ յամենայն քաղաքս և՝ի չէնս ազէր և բազմանայր աւետարանն Քրիստոսի, և ըստ նմանութեան կալոյ բիւրաւորօք և անչափ բազմութեամբ մարդկան յանկարծակի կազմեալ հաստատէին եկեղեցիք։ Իսկ ո-

Նայնի որ չարախօս կացցէն զքրիստոնէից, և այն՝ի փուճոյ անտի երկնաւոր տեսչութենէն էղև՝ի սկզբան նորա, զի յայնժամ սկիզբն էր աւետարանին, զի անխափան և անարգել ընդ ամենայն երկիր ընթացցի վարդապետութեան բանին։

Երրորդ, երբ որպէս՝ի սակաւ ժամանակի ընդ ամենայն տիեզերս տիրեցաւ աւետարանն Քրիստոսի։

Այսպէս իսկ զօրութեամբ և փուճով այնպութեամբ որ յերկնից էր՝ յանկարծակի իբրև զծագումն արեգական ընդ ամենայն աշխարհս ծագեցաւ աւետարանն կենաց. և յայնմ ժամանակի ըստ վկայութեան գրոցն Աստուածոյ, ընդ ամենայն երկիր ել բարբառ աւետարանչացն և առաքելոցն, և մինչև՝ի ծագս աշխարհի լսելի եղեն խօսք նոցա, և յամենայն քաղաքս և՝ի չէնս՝ ազէր և բազմանայր աւետարանն. և ըստ նմանութեան կալոց բիւրօք և հազարօք մարդկամբ, յանկարծակի եկեղեցիք բազմ-

ըոց միանգամ՝ի հայրենի կարգէ անտի իւրեանց և յառաջին մելոթութենէն հնացեալ սխալին դիւա-պաշտութեան կապեալ էին անձինք, ՝ի զօրութենէ անտի Քրիստոսի, վարդապետութեամբ և աքանչելի գործովք առաքելոց իւրոց, իբրև ՝ի չարաչար տերանց ազատեալ և ՝ի խիստ կապանաց արձակեալ՝ արհամարհեալ մեբժեցին զդիւական իւրեանց բազմաստուածութիւն, և խոստովան լինէին Թէ մի է Աստուած արարիչ ամենայնի. զոր և ուղիղ վարուք աստուածպաշտութեան և վայելչաչէս և զգաստ կրօնիւք՝ որ սերմանեցան ՝ի Քրիստէ ՝ի մէջ մարդկան, փառաւոր առնէին։ Այլ իբրև չնորհքն Աստուծոյ սիրեալ լինէին ՝ի վերայ ամենայն հեթանոսաց, նախ ՝ի կեսարիա Պաղեստինացւոց Կոռնելիոս հանդերձ ընտանեօք իւրովք ՝ի ձեռն աստուածայինն յայտնութեան և պաշտամանն Պետրոսի ընկալաւ զՀաւատս Քրիստոսի, և այլք բազումք ՝ի հեթանոսաց Անտիոք քաղաքի, որոց քարոզեցին զաւետարանն, որք ՝ի հալածանաց անտի յետ մահուն Ստեփանոսի ցրուեցան աշակերտաբար։ Եւ ՝ի ծաղկել զարգանալ եկեղեցւոյն Անտիոքացւոց և ՝ի գալ ժողովել անդ բազմաց, և մարգարէից որ յԵրուսաղէմ, ընդ որս և Բառնաբաս և Պօղոս, և ժողով բազում եղեալ, անուն

հռոմաստեալ լինէին, և որք միանգամ՝ի հայրենի կարգէ անտի իւրեանց և յառաջին մելոթութենէն հնացեալ սխալին կառապաշտութեան կապեալ էին անձինք նոցա, ՝ի զօրութենէ անտի Քրիստոսի, որ ՝ի ձեռն աշակերտացն իւրոց վարդապետութեամբ և աքանչելի գործովք՝ իբրև ՝ի չարաչար տերանց ազատեցան և արձակեցան ՝ի խիստ կապանաց. և արհամարհէին զբազմաստուածութիւն դիցն իւրեանց, և խոստովան լինէին Եթէ մի է Աստուած միայն արարիչ ամենայնի. և փառաւոր առնէին զնա ուղիղ վարուք ճշմարտութեամբ, և ցանուն և սուրբ գործովք որ սերմանեցան ՝ի Քրիստէ մերմէ ՝ի մէջ մարդկան։ Այլ իբրև չնորհքն Աստուծոյ սիրեալ լինէին ՝ի վերայ ամենայն հեթանոսաց, նախ ՝ի Կեսարիա պաղեստինացւոց. Կոռնելիոս հանդերձ ընդ ամենայն իւրովք ընկալաւ զհաւատս Քրիստոսի ՝ի ձեռն տեղեկանն Աստուծոյ և պաշտամանն Պետրոսի, և այլք բազումք ՝ի հեթանոսաց Անտիոք քաղաքի. զի այնպիսի որ յղուեցան ՝ի նեղութենէն որ եղև վասն Ստեփանոսի՝ քարոզեցին նոցա զաւետարանն. և անդր և բազմացան եկեղեցին Անտիոքացւոց։ Եւ իբրև ժողովեալ լինէին անդ բազումք և մարգարէքն որ եկեալ էին յԵրուսաղէմ՝ և ընդ նոսա Բառնաբաս և Պօղոս, և ժողովք բազում եղեալ, անուն

Քրիստոնեայ անդ նախ յայնժամ իբրև ՚ի քաջազուարճ և յարգաւանդ երկրէ եղեալ երևէր։ Անդ և Ագաբոս ՚ի մարգարէից անտի որ եկեալ էին ընդ նոսա՝ մարգարէացաւ վասն սովոյն, որ լինելոց էր առ յայսպա։ Իսկ Պօղոս և Բառնաբաս որոշեցան առաքել ՚ի պէտս եղբարց յերուսաղէմ։

ԳԼՈՒԽ Դ.

Թէ ո՞րպէս յետ մահուան Տիբերեայ թագաւորեցոյց Գայիոս զԱգրիպպաս ՚ի վերայ Հրէից և զՀերովդէս դատապարտեաց յաքսոր մշտնջենաւոր։

Ա՚Յլ Տիբեր թագաւորեալ ամն իբր քսան և երկուս և մեռաւ. և զկնի նորա կալեալ զտէրութիւնն Գայիոս՝ և անդէն թագ կապեալ Ագրիպպեայ զիշխանութեան Հրէից, թագաւորեցոյց զնա ՚ի վերայ չորրորդապետութեան Փիլիպպոսի և Լիսանեայ. և յետ ոչ բազմաց յաւել և զչորրորդապետութիւնն Հերովդի տալ նմա, և զՀերովդէս՝ այն որ ՚ի ժամանակս Փրկչին մերոյ էր, վասն բազմապատիկ մեղսասուցն յաքսոր մշտնջենաւոր դատապարտեաց Հանդերձ կնաւ իւրով Հերովդիադաւ. և վկայ այսոցիկ Ցովսեպոս։

քրիստոնէից յայնմ ժամանակի նախ քան զառաքինն իբրև յաճառս և յարդ աղբերք բղխէր և էլանէր։ Եւ Ագամ՚ի մարգարէին անտի որ եկեալ էին ընդ նոսա, մարգարէացաւ վասն սովոյն որ լինելոցն էր առ յայսպա։ Իսկ Պօղոս և Բառնաբաս իբրև կատարեցին զպաշտօնն իւրեանց՝ որ առաքեցան ՚ի սպաս պաշտաման եղբարցն։

Զորրորդ, երբ ո՞րպէս զկնի Տիբերեայ Գայիոս կացոյց ՚ի վերայ հրէիցն Զագրեայ, ՚ի ժամանակի իրում նոյն զՀերովդէս յաքսոյրենէ իւրմէ։

Ա՚Յլ Տիբերիոս եկաց յարքայութեան իւրում քսան և երկու ամ և մեռաւ։ Եւ ապա կալաւ զկնի նորա զառաջնորդութիւնն Գայիոս։ ի նմին ժամանակի եւս Թագ Ագրիպպեայ. և կա-

Զայսու ժամանակաւ մեծապէս հաչակէր Փիլոն, որ ոչ միայն միով իմաստութեամբ նշանաւոր լինէր, թէպէտ յազգէ եբրայեցի, բայց ոչ փոքր ինչ էր նա քան զանուանի մարգիկն՝ որ էին յԱղեքսանդրիա քաղաքի. և թէ որչափ ինչ յաստուածեղէնն և ի հայրենի ուսմունս վաստակեցաւ նա, յայտ է ամենեցուն արդեամբք։ Եւ զի յիմաստասիրութեան մասին և յարտաքին դիտութիւնս որպիսի՛ որ եկաց նա, չէ ինչ մեզ պիտոյ ասել, զի ի պղատոնական և ի պիւթագորեան իմաստասիրութեան, որում զՀեան գնայր, պատմեն զնմանէ թէ անցանէր նա զամենեքումբք՝ որ եղեն յաւուրս նորա։

ԳԼՈՒԽ Ե.

Երէ ո՛րպէս Փիլոն վասն Հրէից չոգաւ հրեշտակութեամբ առ Գայիոս։

Բայց որ ինչ միանգամ անցք անցին ընդ ժողովրդեան Հրէից յաւուրս Գայիոսի՛ ի հինգ դպրութիւնս

ցոյց զնա թագաւոր ի վերայ Թշնամւոյ նորա չամուսութեանն Փիլիպպոսի և Աւսենեայ. և ընդ նոսին և յետ սակաւ ժամանակի և զչամուսութիւնն նա Հերովդէ եղ նմա. և երկոջ զՀերովդէս հանդերձ Հերովդիադա կնաւ իւրով, բազում պատճառանօք տուժիւք և տուգանօք։ Բայց այս Հերովդէս այն է որ ի ժամանակս յաջորդանաց փրկչին մերոյ էր. և վկայ այսմ Ցովսեպոս։

Հինգերորդ, և թէ որպէս Փիլոն փոխանակ հրէից չոգաւ հրեշտակութեամբ առ Գայիոս։

Ցառաջս սորա Փիլոն անուանեալ էր բազմաք, ոչ միայն մեծով իմաստութեամբ, այլ էր նա երևելի. յազգէ հեբրայեցի. ոչ փոքր ինչ էր նա քան զանուանի մարգիկն որ էին յԱղեքսանդրիա քաղաքի։ Բայց՝ եթէ որչափ վաստակ աշխատութեան եղև նմա, վասն աստուածեղէնն վարդապետութեան հարցն յայտ և երևելի էր արդեամբք և ուսմամբ իմաստութեան արտաքինացն. թէ որպիսի և զինչ էր նա՝ չէ ինչ մեզ պիտոյ ասել, զի հատասարտ էր նա Պէտռմեայ և Պիթագորեայ։ Եւ պատմեն զնմանէ, թէ

գրեալ եթող նա մեզ, յորում է տեսանել և վասն անմոռնալեան Գայիոսի, որ անուանեաց զանձն իւր Աստուած, և զի բիւր իրօք անարգեաց և թշնամանեաց նա զիշխանութիւնն տերութեան իւրոյ։ Եւ վասն չարեացն՝ զոր կրեցին Հրէայք յաւուրս նորա, և զի չոգաւ նա հրեշտակութեամբ ի Հռոմ՝ փոխանակ ազգատոհմի իւրոյ որ էր յԱղեքսանդրիա քաղաքի. և թէ զիարդ եկաց նա առաջի Գայիոսի փոխանակ հայրենի օրինացն, և թէ ոչինչ աւելի քան զծառը և զայսն կատականաց շահեալ առ ի նմանէ՝ հազիւ զանձն իւր ապրեցուցանէր ի ձեռաց նորա։ Ցիշատակ զսոյն զայս և Յովսեպոս յութերորդ գիրս Հնախօսութեան իւրոյ, ըստ բանիցս ըստ այսոցիկ. Ի խռովութեանն, ասէ, որ եղև յԱղեքսանդրիա ընդ Հրէայսն և ընդ Հեթանոսս բնակիչս քաղաքին, երեք երեք հրեշտակք ընտրեցան յերկոցունց և չոգան առ Գայիոս։ Եւ էր ի հրեշտակաց անտի Աղեքսանդրացւոց Ափիոն ումն անուն, որ յոյժ հայհոյէր զազգն Հրէից, և ընդ այլ ամբաստանութիւնս յաւելոյր թէ և զփառաւոր կայսեր արհամարհէն դոքա. զի ամենեցուն որ հնազանդեալ էն ի ներքոյ իշխանութեան Հռոմայ բազինս Գայիոսի և տաճարս կանգնէին, և այ-

անցանէր նա խմաստութեամբ զամենեքումբք որ եղեն յաւուրս նորա։ Բայց ամենայն որ ինչ միանգամ անցք անցին ընդ ժողովուրդն հրէից յաւուրս Գայիոսի ի հինգ դարուքեան գրեաց և ետ մեզ. և սաաց նա վասն անմոռնալեան Գայիոսի, զի անուանեաց զանձն իւր Աստուած, զի բիւր իրօք անարգեաց և թշնամանեաց զիշխանութիւնն տերութեան իւրոյ։ Եւ չարիքն զոր կրեցին հրէայքն յաւուրս նորա. և վասն այնր զոր չոգաւ նա ի Հռոմ փոխանակ ազգատոհմի իւրոյ, որ և էր յԱղեքսանդր քաղաքի հրեշտակութեամբ։ Եւ թէ զիարդ եկաց նա առաջի Գայիոսի, փոխանակ հայրենի օրինացն։ Եւ նա ծաղր և այսն հատանաց արար զնա, և մերձ էր մեռանել ի ձեռաց նորա. յիշատակէ ըզսոյն զայս և Յովսեպոս՝ պատմութեամբքն զոր գրեաց այսպես. Եթէ ի խռովութեանն ասէ որ եղև ի մէջ Աղեքսանդր քաղաքի հրէից՝ որ բնակեալ էին անդ ի հեթանոսաց երեք երեք հրեշտակք ընտրեցան յերկոցունց, և չոգան առ Գայիոս։ Իսկ մի ի հրեշտակաց անտի յայնցանէ Աղեքսանդրացի, զի անուն էր նորա Ափիոն, յոյժ հայհոյէր նա զազգն հրէից և ասէր այլ այլն, Թէ և զփառաւոր կայսեր արհամարհէն դոքա. զի ամենայն որ հնազանդեալ էին ի ներքոյ իշխանութեան հռոմայ, զոմն և բազինս և տաճարս կանգնէին նմա. և այլևս ամենայնիւ իբրև

լովք ամենայնիւ իբրև զաստուած ընդունելին զնա, և Հրէայք միայն անարժան համարին անդրեւոք զնա պատուել, և յանուն նորա երդնուլ։ Եւ բազում այլ չարագոյնս քան զայսոսիկ խօսէր Աքիմն, որովք ակն ունէր ի զայրոյթ գրգռել զԳայիոս, և ի դէպ իսկ էր։ Իբրև առաջնորդ հրեշտակութեանն Հրէից Փիլն, այր ամենայնիւ աքանչելի՝ եղբայր Աղեքսանդրու Ալաբարքեայ, և հմուտ ձարտար փիլիսոփայութեան, պատրաստ էր տալ պատասխանի վասն չարախօսութեանցն, արգել զնա Գայիոս և մերժեաց յերեսաց իւրոց։ Եւ այնպէս սաստիկ էր ցասումն նորա, մինչև յայտնի երևել թէ որպիսի սպառնալիք անհնարին ի վերայ կային Հրէից։ Իսկ Փիլն յերանելին յերեսաց նորա անարգեալ թէհամամնաք, ասէ ցՀրէայսն՝ որ շուրջն կային. Աչժան է մեզ քաջալերել զի Գայիոս բարկացեալ է ի վերայ մեր, քանզի նովին գործով շարժէ նա զԱստուած ընդդէմ իւր. զայս Յովսեպոս։ Նա ինքն Փիլն՝ յորում գրեաց վասն հրեշտակութեան իւրոյ, յաւել նշանակել մի ըստ միոջէ մանր զամենայն ինչ որ միանգամ գործեցաւ ի ժամանակին։ Թողից զզազումն և երդից զայն ինչ՝ որ յայտնապէս ցուցանէն ընթերցանելեացն որ միանգամ անգ անցին ընդ Հրէայս անագան նոյնժամայն՝ փոխանակ ձեռնամուխ լինելոյ նոցա ի Քրիստոս։ Արդ պատմէ նա եթէ նախ յաւուրս Տիբերեայ Ակյանոս ոմն ի Հռոմէ քաղաքի, որ ՝ղզրն էր առ ինքնակալին, փոյթ

զաստուած ընդունելին զնա։ Բայց միայն հրէից այնոցիկ զի չէ համարեալ նա փառաց և անդրեւոք զնա ոչ պատուէն. և յանուն նորա ոչ երդնուն. և իբրև ասէր Աքիմն բազում չարիս զնոցա, նէն՝ որ ակն ունէր թէ նոքօք բարկանայ Գայիոս, և նման իսկ էր։ Իսկ Փիլոն այն որ ակաց հրեշտակութեամբ փոխանակ հրէից, որ ամենայնիւ աքանչելի այր էր, և էր նա եղբայր Աղեքսանդրեայ որգոյ Աղեքսանդրեայ և հմուտ ձարտար փիլիսոփայութեան. այլ թէպէտ և կարող էր նա տալ պատասխանի վասն չարախօսութեանցն. սակայն արգել զնա Գայիոս, և մերժեաց յերեսաց իւրոց։ Այլ իսկ էր ի բարկանալն նորա ի վերայ նոցա թէ ինչ չար գործէր առ նոսա։ Բայց Փիլոն էլ յերեսաց նորա անարգեալ թէհամամնաք, և ասէ ցհրէայսն որ էին առ նոսա. արժան է մեզ քաջալերել զի Գայիոս բարկացեալ է ի վերայ մեր՝ արդեամբք. Աստուած հաշտ ընդ մեզ։ Զայս ասաց Յովսեպոս։

յանձին ունէր սատակել կորուսանել զամենայն ազգն Հրէից։ Իսկ անդրէն յերկրին Հրէաստանի Պիղատոս, այն որ համարձակեցաւ ի վերայ Փրկչին մերոյ, կամեցաւ գործել ի տաճարի անդ՝ որ կանգնուն կայր յերուսաղէմ յայնժամ, զամենայն ինչ որ առ Հրէայսն չէր օրէն, և խռովեաց զնոսա մեծապէս։

ԳԼՈՒԽ Զ.

Թէ ո՛րչափ չարիք հասին ի վերայ Հրէից, յետ ժպրհուբեանմբ համարձակելոյ նոցա ի վերայ Քրիստոսի։

Իսկ իբրև մեռաւ Տիբերը, կալաւ զինի նորա զիշխանութիւնն Գայիոս՝ որ բազմեաց Թշնամանեաց զբազումս, այլ առաւել քան զամենեսեան զազգն Հրէից չարչարեաց բազում իրօք։ Զոր ի նոցունց ի բանից անտի օրինակագրին արժան է մեզ սակաւուք ուսանել, որ գրէ այսպէս՝ ԵՒԹ. Ա՛հեղիսի էր սխտն

վեցերորդ, թէ ո՛րչափ չարիք հասին ի վերայ հրէիցն յետ ժպրհուբեան համարձակելոյն նոցա ի վերայ Քրիստոսի։

Նա և ինքն իսկ Փիլոն այնուհիկ օրով գրեացն վասն հրեշտակութեան իւրոյ, եցոյց և մեկնեաց նա նոցա յայտնապէս մի քան միջէ զամենայն ինչ որ միանգամ գործեցաւ առ նոսա։ Թողից զբազումն և եդից զայն ինչ որ յայտնապէս ցուցանեն ընթեռնլոցն որ միանգամ անգք անցին ընդ հրէայսն նոյն ժամանն՝ փոխանակ ձեռնամուխ լինելոյ նոցա ի Քրիստոս։ Արդ պատմէ եՒԹ նախ յառաջս Տիբերեայ որ էր ի Հռոմ քաղաքի, Սահեանոս հիւպարքոս, որ գիւրին էր նմա իւր մեծամեծս գործել ի Թագաւորէ անտի։ Փոյթ յանձին ունէր նա սատակել կորուսանել զամենայն ազգն հրէից։ Իսկ անդէն յերկրին հրէաստանի Պիղատոս, այն որ յաւուրս նորա համարձակեցաւ ի վերայ փրկչին մերոյ։ Կամեցաւ նա գործել ի տաճարի անդ որ էր յերուսաղէմ, զամենայն ինչ որ առ հրէայսն չէր իշխան. և խռովեաց զնոսա մեծապէս։ Իսկ իբրև մեռաւ Տիբերիոս, և կալաւ զինի նորա զիշխանութիւնն Գայիոս, այն որ բազմեաց Թշնամանեաց զբազումս, բայց առաւել զամենայն ազգն հրէից չարչարեաց բազում իրօք։ Բայց կարեմք մեք ուսանել սակաւուք ի նոցունց ի բանից անտի օրի-

Հիւանդութեան մեռց Դայիոսի առ ամենայն մարդիկ, մանաւանդ առ ազգն Հրէից, ընդ որս զայրագնեալ յոյժ՝ զամենայն աղօթատեղիս նոցա ի քաղաքս քաղաքս, սկսեալ յԱղէքսանդրացւոց քաղաքէն, կիսեն գրաւէր, և պատկերօք և անդրէօք նմանութեան իւրոյ ընդ զգեստս։ Զի որ այլոց յօժարագոյնս թողոյր կանգնել զբօշեալս և նուիրել զոհս, ինքն բռնութեամբ զնոյն տայր գործել։ Եւ զտաճարն որ էր ի սուրբ քաղաքի անդ, զանմատոյցն և զապաւէնն ամենեցուն՝ փոխէր ի տաճար անուան իւրոյ, զի կոչեցի նա տաճար Նորոյս Աբրամազդայ յայտնելոյ Դայիոսի։ Եւ այլ բիւր չարիս գժուարապատում, որ անցին յաւուրս նորա ընդ ազգն Հրէից յԱղէքսանդրիա քաղաքի, պատմէ սոյն այս մատենագիրն յայլ շարագրածս իւր՝ յորում զառաքինութեանց Ջաուէ։ Միաբանի ընդ սմա և Յովսեպոս եղբ. Ջաւուրց անտի Պիղատոսի՝ յորմէ հետէ ձեռնամուխ եղեն ի Փրկիչն մեր, սկսան նեղութիւնք չարաչարքն հասանել ամենայն ազգին։ Արդ լուր, դու, զոր ինչ ցուցանէ յերկրորդ դպրութեան Պատերազմին Հրէից այսու բանիւք եղէ. ի ժամանակի անդ իբրև առաքեցաւ ի Տիբերեայ Պիղատոս գառաւապետ ի վերայ Հրէաստ-

նակագրին, զի ի նոսա գրէ այսպէս. եթէ այսպիսի էր ասէ ախտն հիւանդութեան մեռցն Դայիոսի առ ամենայն մարդիկ, մանաւանդ առ ազգն հրէից. զի զնոսա առեաց չարաչար. զաղօթս այլոց քաղաքաց անձին իւրում առնոյր։ Ակաւ իսկ յայնցանէ որ էին յԱղէքսանդր քաղաքի, և զամենայն տեղիս պատկերս և անդրէա նմանութեան իւրոյ ընդ նա. զի այն որ ցանկութեամբ ընդունէրը զայն ինչ, որ այլքն կացուցանէին նմա զգոհութեամբ իրացն, ինքն անձին իւրում կացուցանէր զնա, զտաճարն որ էր ի սուրբ քաղաքի անդ՝ որ ոչ անկանէր ի փառաց իւրոց, ինքն թագաւորն փոխեաց և արար զնա ապարանս անձին իւրոյ, զի և զիջեալ նա անուանեալ երևելի ապարան Դայիոսի։ Բայց բիւր չարիք գժուարապատումք ի պատմէ՝ անցին յաւուրս նորա ընդ ազգն հրէից յԱղէքսանդր քաղաքի, պատմէ սոյն իսկ այս օրինակաբերն, և միաբանի ընդ սմա Յովսեպոս։ Զի յաւուրց անտի Պիղատոսի՝ յորմէ հետէ ձեռնամուխ եղեն փրկչին մեր, յայնմ ժամանակէ հետէ ցուցանէ. եթէ սկսան նեղութիւնքն չարաչարքն հասանել ամենայն ազգին. արդ՝ լուր դու զոր ինչ ցուցանէ յերկրորդ դպրութեանդ պատերազմին հրէից այսու բանիւք։ եթէ ի ժամանակի անդ իբրև առաքեցաւ առ ի Տիբերեայ Պիղատոս գառաւապետ ի վերայ հրէաստանի։ Պիղերի ի ծածուկ եմոյծ յե-

տանի, գիշերի եւոյծ յերուսաղէմ զպատկերս կայսեր ծածկեալս, զորս և նշանս անուանեն։ Եւ իբրև տիւ եղև, բազում խռովութիւն լինէր ի Հրէայս վասն իբացն, զի որ մերձ էին ի տեսիլ անդր հիացեալ էին, իբրու թէ յայնմ հետէ կոխան եղէն օրէնքն. զի չէր արժան դնել ի քաղաքին նմանութիւն ինչ կամ պատկեր. զոր եթէ կշռեալ համեմատեցեալ ընդ գրեալս յաւետարանին, խելամուտ լինիս, եթէ ոչ յետ բազմաց ինչ ելեալ ի վերայ նոցա ձայն բարբառոյն՝ որ աղաղակէին առաջի Պիղատոսի, եթէ չիք մեր թագաւոր, բայց ի կայսերէ [2]։ Դարձեալ և վասն միւս ևս չարեացն որ անցին ընդ նոսա՝ պատմէ սոյն իսկ օրինակագիրն այսու բանիւք. Յետ այնորիկ, ասէ, և զայլ միւս ևս խռովութիւն յուզեաց նա, զի զգաստ ձրս տաձարին որ անուանեալ կոչէր Կորբան, ի ծախսս առաւահանացն ծախէր նա, որ գայր ի հեռաստանէ երեք հարիւր ասպարիզաւ. վասն այսորիկ ժողովուրդ ազգին Հրէից խռովեալ էր յոյժ։ Եւ յորժամ եկն Պիղատոս յերուսաղէմ, կային շուրջ զնմա

բուսաղէմ զպատկերս կայսեր։ Եւ իբրև տիւ եղև՝ բազում խռովութիւն յուզեաց ի վերայ հրէիցն, զի որք մերձ էին ի տեսիլ անդր հիացեալ էին. և իբրու թէ յայնմ հետէ կոխան եղեն օրէնքն աստուածոյ. զի ոչ կամէին նոքա դնել ի քաղաքի անդ նմանութիւն պատկերի. զոր յորժամ կշռեացես զոս ի գիրս աւետարանի խելամուտ լինիս. եթէ ոչ յետ ժամանակաց ինչ ելեալ ի վերայ նոցա ձայն բարբառոյն որ աղաղակէին առաջի Պիղատոսի և ասէին. եթէ չիք մեր թագաւոր բայց ի կայսերէ։ Եւ դարձեալ վասն միւս ևս չարչարանացն, որ անցին ընդ նոսա, պատմէ սոյն իսկ օրինակագիրն այսու բանիւք. Յետ այսորիկ ասէ, և այլ միւս ևս խռովութիւն յուզեաց նա. զի զգաստ տաձարին որ անուանեալ կոչէր պատարագ, ի ծախս առաւահանաց ծախէր նա որ գայր ի հեռաստանէ երեք հարիւր ասպարիսաւ. և վասն այսորիկ ժողովուրդ ազգին հրէից խռովեալ էր յոյժ։ Եւ յորժամ եկն Պիղատոս յերուսաղէմ, կային շուրջ զնմա և համբակագոյնս ազաղակէին։ Իսկ նա քանզի յաւելագոյն գիտաց զխռովութիւն նոցա, զորան հոռմոց վառեալս ի ներքուստ և զդեցեալս ի վերոյ դոյզն հանդերձիւ, խառնէր ընդ ժողովուրդս

*զովրդեան, Հրամանն տուեալ մի սրով վարել ընդ նո-
սա, այլ ոչք աղաղակէին բզոք ծեծել զնոսա, և ետ
նոցա նշան ի բեմէ անտի խըմէ։ Եւ անդէն ի կա-
ռամբուռել Հրէիցն, բաղումք ի հարուածոց անտի և
յոլովագոյնք ի փախչել անդ խըռնանց ի միմեանց
կոխոտեալ և սատակեցան։ Յաղեալքն աստի չարեաց
սպանելոցն զարհուրեալ ժողովուրդք և լռեալ կար-
կեցան։ Հանդերձ ասացեալքս աւանդէ զարձեալ
նոյն պատմագիր, լինել յերուսաղէմացւոց քաղաքին
և այլ բիւրապատիկ չարեաց, զի յայմ հետէ ոչ
պակասեաց ի քաղաքէ անտի և յամենայն Հրէաս-
տանէ խռովութիւն պատերազմ և չարիք ազգի ազգի
մինչև ի վերջին աւերածն՝ որ եհաս ի վերայ նոցա
ի ձեռն վեսպասիանոս։ Այս եղև Հրէից յարդար
դատաստանացն Աստուծոյ վասն ամենայնի՝ որ համ-
արձակեցան ի վերայ Քրիստոսի։*

ԳԼՈՒԽ Է.

Թէ ո՛րպէս զիւդովիկ գնայր Պիղատոս։

*Զի պարտ անգիտանալ և զայս, զի նոյն ինքն որ առ
Քրիստոսիւ էր Պիղատոս, որ և եհաց մինչև յամ*

*ազգին։ Բայց արդեւ զնոսա զի մի սրով գնայցեն. և հրամայեաց
եթէ որ միանգամ ոչ ազաղակեսցէ բզոք ծեծեցեն զնոսա. և ետ
նոցա նշան ի բեմէն խըմէ. բայց ի կառափնատել անտի խռ-
վեանց, բազում հրէայք ի հարուածոց անտի մեռան. բայց բա-
զումք ի փախչել անդ ի միմեանց կոխեցան և սատակեցան. ի
չարեն որ եղեն ի կառարկայն, հիացան ժողովուրդքն և կարկե-
ցան. և այսու ցուցանէ զի եղեն ի մէջ Երուսաղէմի բիւր չարիք.
զի յայմ հետէ ոչ պակասեաց ի քաղաքէ անտի խռովութիւն.
նա և յամենայն հրէաստանէ պատերազմ և չարիք ազգի ազգի.
մինչև ի վերջին աւերածն որ եհաս ի վերայ նոցա յամս Պիղա-
տոսի։ Այս եղև հրէիցն վասն ամենայնի որ համարձակեցան ի
վերայ Քրիստոսի յարդար դատաստանացն Աստուծոյ։*

Լսօրևնորոյ, եթէ ո՛րպէս զանձն իւր նապան ինքն Պիղատոս։

*Արժան իսկ էր գիտել Ճանաչել եթէ Պիղատոս այն որ եղև
յաւուրս Փրկչին մերոյ. այն որ ասացաք մեք վասն ժամանակաց*

Գայիոսի, յայնպիսի անկաւ նա ի նեղութիւնս ան-
հնարինս, մինչ զի ի հարկէ վտանգի զիւրովին գնալ,
ինքնին ձեռամբ լուծանելով զպատիժ պատուհասին։
Եւ այսպէս վաղվաղակի հասին ժամանեցին նմա դա-
տաստանքն Աստուծոյ։ Եւ զայս աւանդեն մեզ պատ-
մագիրքն Յունաց, որ զկարգս Ողիմպեացն և որք միան-
գամ ի նոյն ժամանակս դէպ եղեն՝ գրով թողին։

ԳԼՈՒԽ Ը.

Վասն սովոյն որ եղև յաւուրսն Կղաւդեայ։

Իսկ զԳայիոս՝ որ իբրև զամս չորս կալաւ զիշխանու-
թիւն Թագաւորութեանն, յաջորդեաց Կղաւդիոս
ինքնակալ։ Յաւուրս նորա եղև սով ի վերայ երկրի,
զոր և օտարք ի կրծոյ մերոյ գրովք իւրեանց աւան-
դեն մեզ։ Եւ այսպէս ի Գործս Առաքելոց կանուխ
գուշակութիւն Ագաբոսի մարգարէի վասն սովոյն՝ ի
գլուխ եղեալ կատարէր։ Եւ զսովն՝ որ առ Կղաւդեաւ
նշանակեալ Ղուկաս ի Գործս Առաքելոց, պատմէ և
թէ որպէս ի ձեռն Պօղոսի և Բառնաբայ եղբարքն

նորա. զի յամս Գայիոսի ասի զնմանէն եթէ անկաւ նա ի նե-
զութիւնս անհնարինս և ի չուտս չարչարս, որ ի բազում հար-
կէ վտանգի նեղութեանն, ինքն եղև սպանող անձին իւրոյ. և
կեռաք իւրովք ընկալաւ զպատիժս պատուհասի, ըստ արժանի
ձերում։ Եւ վաղվաղակի հասին ժամանեցին նմա դատաստան-
քըն Աստուծոյ. որպէս պատմեն զնմանէ օրինակագիրք գրիչքն
յունաց։

Որպէսզի վասն սովուն որ եղև յաւուրսն Կղաւդեայ։

Իսկ Գայիոս իբրև զչորս ամս կալաւ զիշխանութիւն Թագա-
ւորութեանն։ Կղաւդիոս ինքնակալ կալաւ զնոսա։ Յաւուրս
նորա եղև սովն ի վերայ երկրի։ Զայս և որ օտարքն են ուսանին
մերոյ, գրովք իւրեանց առաւել մեզ զպատմութիւնս սորա։ Որպէս
և պատմեաց Ղուկաս ի գործս առաքելոցն և ասաց վասն Ագաբի
մարգարէին, որ մարգարէացաւ նա վասն սովոյն որ լինելոց էր
առ յաւուրսն։ Եւ թէ որպէս ի ձեռն Պօղոսի և Բառնաբայ եղբար-

որ էին Յհնտիոք՝ իւրաքանչիւր ի նոցանէն ըստ կարի իւրում որպէս զիարդ կարող որ էր, ետուն տանել ի պէտս եղբարցն որ բնակեալ էին ի Հրէաստանի։

ԳԼՈՒԽ Թ.

Վկայութիւն Յակոբու առաքելոյն։

*Յայնմ ժամանակի, յայտ իսկ է թէ յամն Կղաւդեայ՝ ձեռնամուխ եղև Հերովդէս արքայ չարչարել զոմանս յեկեղեցւոյ անտի, և սպան զՅակոբոս զեղբայր Յովհաննու սրով։ Վասն այսր Յակոբու դէպք ինչ արժանաւոր յիշատակի պատմէ Կղեմէս յեւթներորդ գիրս Հրահանգաց իւրոց, իբրև ի նախնեաց անտի տուչութենէն ընկալեալ եմէ։ Որ տանէրն զնա յատեան դատաստանի՝ իբրև ետես զի վկայեաց, շարժեալ և ինքն խոստովան եղև եթէ քրիստոնեայ է։ և վարեցան, ասէ, երկոքեան ի միասին։ Եւ մինչդեռ երթային ի Նանապարհի, աղաչէր այրն և խնդրէր ի Յակոբոյ Թողուլ նմա զյանցանսն։ Իսկ նա ի մտաց խորհրդի եղև, ասելով՝ ի՞նչ է քեզ, եղբայր, զի այսպէս խնդրես ի ինձ։ Եւ նա ասէ՝ Ես ինքն ոչ գիտեմ, այլ տեսի զքեզ ի տեսլեան, եւ ահա ի վերայ գլխոյ քոյ պսակ մի կայ, եւ ես ոչ կարացի տեսանել զայն, զի ոչ եմ արժանի։ Եւ նա ասէ՝ Ես ինքն տեսի զայն, եւ ահա ի վերայ գլխոյ իմոյ է։ Եւ ասէ՝ Ես ոչ եմ արժանի պսակի, այլ դու։ Եւ ասէ՝ Ես ոչ եմ արժան

ընդ քեզ, և համբուրեաց զնա. և այսպէս ՚ի միասին հատան երկոցունց գլուխք նոցա: Յայնմ ժամանակի՝ ըստ բանից աստուածային գրոց, իբրև ետես Հերովդէս եթէ հաձոյ եղև գործ սպանումն Յակոբու Հրեից, ձեռն էարկ և ՚ի Պետրոս և եդ զնա ՚ի բանտի. և զնա իսկ սպանանիցէ՝ եթէ ոչ յաստուածայնոյն յայտնութենէն հասեալ գայր հրեշտակն ՚ի գիշերի, և աքանչելեօք արձակեր զնա ՚ի կապանաց անտի, և առաքեր ՚ի պաշտօն քարոզութեան: Վասն Պետրոսի այսպիսի տեսլութիւն եղև:

ԳԼՈՒԽ Ժ.

Թէ ո՛րպէս Ագրիպպաս, որ ևս ինքն է Հերովդէս, հալածեաց զառաքեալսն, և անլսելապէս հասին նմա դատաստանքն Աստուծոյ:

Այդ վասն ձեռնամուխ ժպրհութեան թագաւորին ՚ի վերայ առաքելոցն, ոչ եղև յապաղումն վրիժուց նորա, այլ նոյնժամայն եհաս ժամանեաց ՚ի վերայ նորա սպասաւոր բարկութեան դատաստանացն Աս-

պէս ՚ի միասին հատան երկոցունց գլուխքն նոցա յայսմ ժամանակի, ըստ ազգելոյ աստուածային գրոց: Իբրև ետես Հերովդէս եթէ հաձոյ եղև գործն սպանութեանն Յակոբու հրէից, ձեռն էարկ ՚ի Պետրոս, և եդ զնա ՚ի բանտի. զի և զնա իսկ սպանանէր նա, եթէ ոչ զի ՚ի ձեռն տեսլեանն Աստուծոյ ՚ի ժամանակի իրքև եկն եհաս ՚ի վերայ քան զնա հրեշտակն ՚ի գիշերի աքանչելեօք արձակեցաւ ՚ի կապանաց անտի, և առաքեցաւ ՚ի պաշտօն քարոզութեան: Վասն Պետրոսի այսպիսի տեսլութիւն եղև:

Տանելորոյ, երբ ո՛րպէս Ագրիպպա, որ ևս ինքն է Հերովդէս հալածեաց զառաքեալսն: Նոյնժամայն հասին նմա դատաստանքն Աստուծոյ:

Այդ՝ վասն ժպրհութեան համաձակութեանն Թագաւորին ՚ի վերայ առաքելոցն. ոչ եղև յամուրդ վրիժուցն նորա. զի նոյն ժամայն եհաս ժամանեաց ՚ի վերայ նորա սպասաւոր բարկութեան դատաստանացն Աստուծոյ, յետ ձեռնամուխ լինելոյ նորա յառա-

տուծոյ. զի չետ ձեռնամուխ լինելոյ նորա յառաքեալսն, որպէս պատմեն Գործք Առաքելոցն, իբրև եկն նա ՚ի Կեսարիա, և անդ յաւուր նշանաւոր տոնին զարքայական առեալ զանձամբ հանդերձս պայծառս, և կացեալ ՚ի վերայ բարձր բեմին և առ ժողովրդովն առնեաբանէր. և ամենայն բազմութեան ամբոխին ձայն բարձեալ աղաղակեր եթէ. Աստուծոյ է բարբառս և ոչ մարդոյ. նոյնժամայն եհար զնա հրեշտակ Աստուծոյ, և որդնալից լեալ սատակեցաւ։ Բայց զարմանալ արժան է մեզ, թէ արդեօք միաբանի աստուածային տառիցն պատմութիւնն Յովսեպոսի և յայս ևս աբանելիս. զի վկայեաց նա Հնմարտութեան յասելն իւրում ՚ի յիննևտասներորդ գիրս Հնախոսութեան իւրոյ մատենին այսպէս. Յորժամ լցան, ասէ, երեք ամք արքայութեան նորա ՚ի վերայ ամենայն Հրէաստանի, եկն նա ՚ի Կեսարիա քաղաք, այն որ յառաջագոյն անուանեալ կոչէր Աշտարակ Սորատոնեայ. և արար անդ տօն տեսլեան խաղոյ ՚ի պատիւ կայսերն՝ վասն կենաց նորա. և գայթն ժողովեցին անդաստնօր բազում արք աւագամեծարք յաշխարհն անտի։ Իսկ յաւուրն երկրորդի տեսլեան խաղոյն զգեցեալ նա պատմուճան Համակ անկեալ արծաթով, հիւսկէն աբանելի, եկն ՚ի թէատրոնն ընդ առաւօտս

քեալսն։ Որպէս ցուցանեն գործք առաքելոցն. զի յորժամ եկն նա ՚ի Կեսարիա. և յաւուրն նշանաւոր տոնի զգեցաւ նա զհնդերձ աբանելի զարքայութեանն. և նստաւ նա ՚ի վերայ բարձր բեմին. և հանէր և հաւանեցուցանէր զմարդիկ ժողովրդեանն։ Եւ ամենայն ժողովուրդքն՝ փառաւոր առնէին զնա բանիւք իւրեանց և ասէին. այս բարբառ Աստուծոյ է և չէ մարդոյ։ Եւ նոյնժամայն եհար զնա հրեշտակ Աստուծոյ. և եղև որդնալից և մեռաւ։ Բայց զարմանալ արժան է մեզ, թէ արդեօք միաբանի գրոց Աստուծոյ պատմութիւնն Յովսեպոսի, և յայս ևս աբանելիս. զի վկայեաց նա Հնմարտութեանն. պատմէ իսկ յասելն իւրում այսպէս։ Եթէ յորժամ լցան ասէ երեք ամք արքայութեան նորա ՚ի վերայ ամենայն հրէաստանի։ Եկն նա ՚ի Կեսարիա քաղաք. այն որ յառաջագոյն անուանեալ կոչէր նա աշտարակ սատրատոնեայ. և առաբար նա անդ տօն տեսլեան խաղոյ ՚ի պատիւ կայսերն վասն կենաց նորուն. և ժողովեալ էին անդ մարդիկ երևելի յաշխարհն անտի. որ առաւել էին քառասնապատուով։ Իսկ յաւուրն երկրորդումն տեսլեան խաղոյն զգեցաւ նա պատմուճան աբանելի որ անգեալ էր զնա ամենայն արծաթով. և եկն ՚ի թէատրոն ընդ

աւուրն, և իբրև անկան առաջին նշոյլք արեգականն
'ի վերայ արծաթոյն, փայլիւն նշուլեցին փայլատա-
կունք հատանէին աբանելապէս, և որք միանգամ
հայէին ընդ փայլս նշուլեցին, ահ և երկիւղ ունէր զը-
նոսա: Իսկ որ մարգահաձոյքն էին և սուտակա-
սպաք, նոյնժամայն զաղաղակ բարձին յամենեցունց կող-
մանց, ոչ 'ի բարի ինչ նմա, Աստուած զնա կոչելով,
և զի հաշտ ընդ նոսա լիցի աղաչաւոր լինելով: Թէ-
պէտ և ցայսօր իբրև 'ի մարդոյ երկնչէաք, ասէին,
մեք 'ի քէն, բայց յայսմհետէ խոստովանիմք զի վե-
րագոյն ես դու քան զընտրելիսն մահկանացու: Ո-
սատեաց 'ի նոսա Թագաւորն, և ոչ զամբարիշտ նոցա
սուտակասպասութիւն մերժեալ անարգեաց: Եւ յետ
սակաւու միոյ հայեցաւ և ետես հրեշտակ՝ զի կայր 'ի
վերոյ քան զգլուխ նորա. և նոյնժամայն գիտաց եթէ
պատճառք չարի նորա է նա, այն որ յառաջագոյն
բարեացն նորա էր. և կալաւ տագնապ նեղութեան
զսիրտ նորա, և նոյնժայն բուսաւ ցաւ յորովայնի նո-
րա և սկսաւ տապել: Որ և դարձուցեալ զայնն առ
բարեկամս իւր. Ես Աստուածն ձեր, ասէ, ահաւասիկ
հրամայն առեալ ելանեմ յաշխարհէ սասի, և բաշխն

առաւօտս աւուրն. և իբրև անկան առաջին նշոյլք արեգականն 'ի
վերայ արծաթոյն. փայլիւն նշուլացն փայլատակունք հատանէին
աբանելապէս. և որք միանգամ հայէին ընդ նշոյլսն հատագայ-
թիւն նորա ահ և երկիւղ ունէր զնոսա: Իսկ որ մարգահաձոյքն
էին և սուտակասպասքն, նոյնժամայն զաղաղակ բարձին և ասէն
յամենեցունց կողմանց բանս գովութեանց, որ 'ի բարի ինչ ոչ եղեն
նմա. զի կոչէին զնա Աստուած. և աղաչէին զնոսա զի հաշտեացի
ընդ նոսա, և ասէին. Թէպէտ և յայսօր ժամանակի իբրև. 'ի մարդ
դոյ երկնչէք մեք 'ի քէն. բայց յայսմ հետէ խոստովանիմք
մեք զի վերագոյն ես դու քան զընտրելիսն մահկանացու. այլ ոչ
սաստեաց 'ի նոսա Թագաւորն վասն այսր զի զսուտակասպասու-
թիւն անիրաւութեան նոցա նա ոչ անարգեաց: Եւ յետ սակա-
ւու միոյ հայեցաւ և ետես հրեշտակ զի կայր 'ի վերոյ քան զը-
գլուխ նորա. և նոյնժամայն գիտաց եթէ պատճառք չարի նորա
է նա, այն որ յառաջագոյն բարեացն նորա էր նա. և կալաւ ափ-
շութիւն զսիրտ նորա և նեղեցաւ. և նոյնժամայն բուսաւ ցաւ
յորովայնի նորա, և սկսաւ տապել: Իսկ 'ի հայել անդ իւրում
ընդ բարեկամս իւր սկսաւ խօսել և ասէ: Ես, զի ասէիքն դուք
եթէ Աստուած ձեր եմ, ահաւասիկ հրամայն առեալ ելանեմ
յաշխարհէ սասի: Եւ վախճան կառաւարածի նորա եղաւ 'ի վերոյ
իմ. յանդիմանեալ կշտամբեաց զբարբառան առաւելեան, զոր ա-

և Հարկ բաժնին յանդիմանեալ կշտամբէ զարբաան
ստութեան՝ զոր արդ իսկ աղաղակեցէքն դուք ինձ,
նա որ կոչեցայս ի ձէնջ անմահ, ահաւասիկ ի մեռա-
նել երթամ։ Հարկ է հնազանդել Ձակատագրին, ե-
թէ այս են կամք Աստուծոյ։ Ոյի ոչ եթէ անկած ինչ
և անընդունելի վարեցաք կեանս, այլ զոր բարերջանկին
Համարին մարդիկ և մեծափառ։ Զայս իբրև ասէր և
ի յաձախել ցաւոցն տագնապէր, առեալ տարան
փութով այնուհետև զԹագաւորն յապարանս իւր, և
եղ Համբաւ ընդ ամենայն քաղաքն թէ մեռանի նա
ընդ Տօպ։ Իսկ Ժողով մարդկան հանդերձ կանանբք
և մանկտով ի վերայ խորտոց նստեալ՝ ըստ
բինացն իւրեանց, աղաչէին զԱստուած վասն կենաց
Թագաւորին. և ի սուգ և յողբս լալեաց ընծին զա-
մենեան։ Իսկ Թագաւորն բազմեալ ի վերայ բարձր
տանեաց Հայէր ընդ նոսա ի խոնարհ, որ անկեալ
կային ի վերայ երեսաց իւրեանց, և չկարէր և ինքն
ունել զարտասուս։ Եւ զանուրս հինդ տանջեալ ան-
դադար ի ցաւոց՝ եղ նա յաշխարհն ի յիսուն և ի
չորրորդ ամի կենաց իւրոց, Թագաւորեալ ամս ԵՕՅԹ.
զչորս ամս յաւուրս Գայիոսի կայսեր, և զերիս ամս
յիշխանութեան Կղաւդեայ. զի կալաւ նա նախ զգ-
շամշտութիւնն Փիլիպպոսի զերիս ամս, և յամին չոր-

զաղակեցէքն դուք ինձ։ Եւ որ կոչեցայս ի ձէնջ անմահ, ահա-
ւասիկ ի մեռանել վարանեալ երթամ։ Բայց ունիմ զվսհման
կատարածէ զամանչն Աստուծոյ. զի չարաչար վարեցայ ես. զի
յաւուղ երկայն երեանութեամբը կէի ես. իբրև զայս ասէր չաա-
պիտապէր ցաւոց ամենիքեալ լինէր նա։ Ամեն ազգան այնուհետև
զԹագաւորն փութով պնդութեամբ յապարանս արքայութեան
իւրոյ, և եղ Համբաւ բանին առ ամենայն մարդիկ թէ մեռանի
նա ընդ սակաւ ժամանակս։ Իսկ Ժողով մարդկանն Հանդերձ
կանանբք և մանկտով ցանկալ մտիկ ի վերայ խորտոց նստելին.
և քան Հայրենի օրինացն իւրեանց աղաչէին զԱստուած ի վերայ
կենաց Թագաւորին, և սուգ առեալ լային և ողբային։ Իսկ Թա-
գաւորն բազմեալ կայր ի վերայ բարձր տանեաց և Հայէր ընդ
նոսա ի խոնարհ. զի անկեալ կային ի վերայ երեսաց իւրեանց։
Իբրև զայն տեսանէր լայր և ինքն. այլ իբրև տատակացաւ ի վե-
րայ նորա ցաւ օրովայնին իւրոյ յետ հինգ աւուր եղ յաշխարհն
չորեաքան։ Բայց եկաց նա զկեանն և զչորս ամ։ Իսկ չորեքա-
թեան անգ եկաց զեօթն ամ։ Զչորս ամս յաքսայութեան անդ՝
Գայիոսի կայսեր և զերիս ամս յիշխանութեան Կղաւդեայ. Զա-
մշտութիւնն Փիլիպպոսի զերիս ամ. իսկ չամին չորրորդի յա-

բորդի յաւելաւ նմա և Հերովդին ևս։ Եւ Թէ որպէս միաբանի և յայսմիկ այլովքն հանդերձ գրոց սրբոց Յովսեպոս՝ զարմացեալ եմ։ այլ եթէ որ Թերահաւատեալ երկմտեսցի վասն անուան Թագաւորին, սակայն ժամանակն և գործն ցուցանեն Թէ նա է. որ կամ՝ ի վերինէ օրինակագրացս փոխեցաւ անուն նորա, և կամ երկու անուանս ունէր նա, որպէս դէպ եղև և բազմաց։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Վասն Թևդայ կախարդի, և որոց բնդ նմա։

Եւ զի գաբձեալ Ղուկաս՝ ի Գործս Առաքելոց մուծանէ զԳամաղիէլ խօսելով՝ ի ժողովն ատենին որ վասն Առաքելոց եղեւ։ ի ժամանակին յայնմիկ յառնեաւ Թևդաս ասել զանձնէն Թէ իւրն ոմն, և անկաւ նա, և ամենեքին որ միանգամ երթեալ էին զհետ նորա ցրուեցան։ Ե՛կ բնր դիցուք զոր ինչ գրեաց Յովսեպոս վասն նորա, որ՝ ի Հռոմ՝ ի վեր անդր կիշատակեալ մատենիցն պատմէ օրինակ զայս։ Ի ժամանակին, ասէ, իբրև գաւառապետ կայր Հրէաստանի

ելեալ նմա և Հերովդին ևս։ Բայց Թէ որպէս միաբանի և յայսմիկ ևս հանդերձ այլովք գրոց սրբոց Յովսեպոս, զարմացեալ եմ։ Եւ եթէ որ Թերահաւատեալ երկմտեսցի վասն անուան Թագաւորին, բայց սակայն ժամանակն և գործն իւր ցուցանեն Թէ նա է. զի կամ իբրև՝ ի մոռացութենէ օրինակագրացն փոխեցաւ անուն նորա, կամ երկու անուանս ունէր նա որպէս և այլք բազումք։

Մեկնաբանութիւն. վասն Թևդասի մոլորեցուցչի։

Այլ քանզի գաբձեալ Ղուկաս՝ ի Գործս առաքելոցն մուծանէ զնաւսս զի ասաց Գամաղիէլ՝ ի ժամանակի իբրև՝ ի խորհուրդ մտեալ էին վասն առաքելոցն, եթէ յայնմ ժամանակի ասէ յարեաւ Թևդոս և ասաց իբրու Թէ իւրն ոք մեծ, իբրու նա վասն անձին իւրոյ ասէր. և անկաւ նա և ամենեքին որ միանգամ երթեալ էին զհետ նորա՝ քաշքշեցան։ Դիցուք զոր ինչ գրեաց Յովսեպոս և վասն նորա։ Զի պատմէ այսպէս. Ի ժամանակի ասէ իբրև գաւառապետ Փեդադոյ՝ ի վերայ երկրին հրէաստանի, այր

՝ Յայն՝ փոքր.

Փաղաս, այր ոմն խաբեբայ մոլորեցուցիչ Թևդաս ա-
նուն, հաձեաց հաւանեցոյց զժողովուրդս բազում
առնուլ զինչս իւրեանց և երթալ զկնի նորա առ ափն
Յորդանան գետոյ. և զի ասէր նա վասն անձին իւրոյ
Թէ մարգարէ եմ, և հրամանաւս բաժանեալ զգետն,
առնեմ ձեզ չանապարհ դիւրին, զամբոխ բազում
մոլորեցուցեալ բանիւքս այսոցիւք ձգեաց զհետ իւր։
Այլ ոչ թոյլ ետ նոցա Փաղաս երկարել ի հիմարու-
թեան իւրեանց, այլ վաշտս հեծելոց արձակեր զկնի
նոցա, որոց յանկնկալս անկեալ ի վերայ զբազումն
ի նոցանէ ի սուր սուսերի կոտորեցին և զբազումն
ձերբակալ ըմբռնեցին կենդանւոյն։ Եւ զԹևդաս կա-
լան և հատին զգլուխ նորա և տարան յԵրուսաղէմ։
Ցետ այսորիկ վասն սովոյն՝ որ եղև յամն Կղավդեայ,
յիշատակէ այսպէս։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Վասն Հեղինեայ դշխոյին Ադրոյենոց։

Ցայսու ժամանակաւ և սով մեծ լինել ի Հրէաս-
տանի, ասէ, յորում և դշխոյն Հեղինէ գնեաց ցո-

մի խաբեբայ մոլորեցուցիչ զի անուն էր նորա Թևդէ, հաձեաց
և հաւանեցոյց զժողովս բազումս առնուլ զինչս իւրեանց և եր-
թալ զկնի նորա առ ափն Յորդանան գետոյ. զի ասէր նա վասն
անձին իւրոյ՝ Եթէ մարգարէ եմ. և հրամանաւս բաժանեմ զգետն
և առնեմ նոցա ճանապարհս հոգևս. իսկև զայս ասէր՝ զբազումս
մոլորեցոյց նա։ Այլ ոչ թոյլ ետ նոցա հանդչել յիմարութեան
անուն իւրեանց ինքն փեւագոյ. այլ զօր առնէր, հեծելազօր գու-
մարէր ի վերայ նոցա. և իսկև ոչ ունէին յանկարծակի ան-
կան ի վերայ նոցա, և զբազումս ի նոցանէն ի սուր սուսերի
կոտորեցին. բայց զբազումս ձերբակալ ըմբռնեցին կենդանւոյն։
Իսկ զԹևդաս ըմբռնեցին և հատին զգլուխ նորա և տարան յԵ-
րուսաղէմ։

Ցետ այսորիկ վասն սովոյն այնորիկ՝ որ եղև յամն Կղավդեայ,
յիշատակէ այսպէս։

Երկոտասաներորդ. վասն Հեղինեայ տիկնոջ Միջագետաց։

Եւ այսու հանգերձ և սով մեծ դիպեցաւ լինել ի հրեաս-

*ըեան յԵգիպտոսէ բազում ոսկւոյ և բաշխեաց կարօ-
տելոց։ Եւ միաբան գտանես զու զբանս ընդ Գործոց
Առաքելոցն, յորում գրեալ է այսպէս. Բայց յաշա-
կերտաց անտի՝ որ էին յԱնտիոք քաղաքի, ոմպէս
զիարդ կարող ոք էր, մի մի՝ ի նոցանէն ընտրեցին տալ
տանել՝ ի սպաս պաշտամանն աղքատացն որ էին յե-
րուսաղէմ. և արարին այնպէս, և եատն տանել առ
երիցունսն՝ ի ձեռն Պօղոսի և Բառնաբայ։ Եւ զի սո-
քին իսկ այսր Հեղինեայ, զորմէ յիշատակէ պատմա-
գիրս, կան շիրիմք նշանաւորք մինչև ցայսօր ժամանա-
կի՝ ի բուրաստանս քաղաքին որ Ելիա կոչի. զոր և
Ադիաբենոյ դշխոյ ասէն լինել։*

ԳԼՈՒԽ ԺԳ.

Վասն Սիմոնի կախարդի և այլոյ ուրուք Հեղինեայ։

*Ի ժամանակին մինչդեռ Հաւատք Քրիստոսի մերոյ և
Տեառն Յիսուսի Քրիստոսի առ ամենայն մարդիկ
սփռեալ ծաւալէին, Թշնամին փրկութեան կենաց*

*տանի. զի՝ ի նմա Հեղինէ ախկին գնեաց ցորեան յԵգիպտոսէ՝
բազում ոսկւոյ, և բաշխեաց ամենայնի որ միանգամ կարօտեալ
էին անդ։ Գտանես զու իսկ զի միաբանին այս բանք՝ ի Գործոց
առաքելոցն, զի գրեալ է՝ ի նմա այսպէս. աշակերտքն որ էին յԱն-
տիոք քաղաքի՝ որշափ և ձեռնհաս ոք էր, մի մի՝ ի նոցանէն ընտ-
րեցին տալ տանել՝ ի սպաս պաշտամանն աղքատացն որ էին յե-
րուսաղէմ, և արարին այսպէս. և եատն տանել առ երիցունսն,
՝ի ձեռն Պօղոսի և Բառնաբայ։ Զի ասրին իսկ այսր Հեղինեայ՝ զոր-
մէ յիշատակեաց այս օրինակագիր՝ մինչև ցայսօր ժամանակի շի-
րիմք նշանաւորք կան ասրա առաջի գրանն Երուսաղէմի։ Ասան
ասրին իսկ այսօրիկ ասի զնմանէն եթէ Թագաւորեալ էր՝ ի Մե-
ջագեաս։*

Երիքստաւանիարդ. վասն Սիմոնի կախարդի։

*Ա յլ՝ ի ժամանակի մինչդեռ կարգեալ գային հաւատք Քրիս-
տին մերոյ և տեառն Յիսուսի Քրիստոսի առ ամենայն մարդիկ,
Թշնամին կենաց մարգկան խորամանկեր հնարս գտանել, զի ըզ-*

մարդկան խորամանկեաց եգիպ հնարս յափշտակել զթագաւորեալ քաղաքն, և ածէր անդր զԱիմին, զոր մէ յառաջ քան զփոքր մի ասացաք։ Եւ ի ձեռն աբուէսագիտութեան կախարդանաց առնս զլսազումն ի նոցանէ որ բնակեալ էին ի Հռոմ քաղաքի, ի մոլորութիւն իւր ձգեաց։ Յուցանէ վասն այսր Յուստինոս, այն որ ոչ բազմօք ինչ յետ Աւգաբէոսին աբանելի եղև ի վարդապետութիւնն աստուածպաշտութեան, զորմէ և ի դէպ ժամանակի եղից զպատշաճականս։ Այլ իսկ սա յառաջին պատասխանատուութեան իւրում առ Անտոնիոս վասն ուսմանս մերոյ գրէ այսպէս։ Ձեր վերանալոյն, ասէ, Տեառն մերոյ ընդ յերկինս, գրգռեցին չարուցին զևք զոմանս ի մարդկանէ, որ ասէին զանձանց իւրեանց Թէ Աստուածք իցեն. որք ոչ միայն հալածելով ոչ հալածեցան ի ձէնջ, այլ և պատուոյ ևս արժանի արարէք զնոսա։

Սիմոն ոմն սամարացի, ի գեղջէն որ անուանեալ կոչի Գիտտոն, չաւուրս կղզւոյդեայ կայսեր ի գիւացն ազգեցութենէն՝ նշանս առնելով և արուեստս կախարդութեան ի Հռոմ քաղաքի արքայութեան ձերոյ, և կարծեալ համարեցաւ Թէ Աստուած է, և իբրև զԱստուած անդրեաւ պատուեցաւ ի ձէնջ՝ ի վերայ

քաղաքն արքայութեան չառաջնոյն չափշտակել։ Եւ հած անդր զԱիմին, զոյն որ չառաջ քան զփոքր մի ասացաք զնմանէ. և փոքր մի պնդագոյնեան արուեստագիտութեամբ կախարդանաց իւրոց զբազումս չայնցանէ որ բնակեալ էին ի Հռոմ քաղաքի, դգեաց ի մոլորութիւն անդր իւր։ Յուցանէ վասն այսր Յուստինոս, այն որ եղև չետ առաքելոյն սակաւ ժամանակաց, և աբանելի եր ի վարդապետութեան անդ աստուածպաշտութեան. զի ի վերայ նորա որ ինչ արժանի են ասելոյ, եգից ի ժամանակի իւրեանց։ Այլ իսկ սա առաջին պատասխանին առնելով զոր արար նա առ Անտոնինոս վասն ուսմանս մերոյ, գրեաց այսպէս. Ձեր վերանալոյն, ասէ, Տեառն մերոյ ընդ յերկինս, գրգռեցին չարուցին զևք զոմանս ի մարդկանէ որ ասէին զանձանց իւրեանց Թէ աստուածք իցեն. զի ոչ միայն հալածելով ոչ հալածեցան ի ձէնջ, այլ և պատուի ևս արժանի արարէք դոնա։ Սիմոն այր Շամրացի, ի գեղջէ որ անուանեալ կոչի Գիտթեան, այն որ չամն կղզեցեալ կայսեր արուեստագիտութեան գիւթեաց որ զօրանային ի նմա՝ արար նշանս կախարդութեան ի Հռոմ քաղաքի արքայութեան ձերոյ. և կարծեալ երևեցաւ Թէ աստուած է նա. և իբրև զԱստուած պատուեցաւ ի ձէնջ անդրեան զոր

Տիբեր գետոյն ՚ի մէջ երկուց կամրջաց, արձանա-
գրութիւն յինքեան ունելով Հռոմկարէն այսպէս. Մե-
ծին Աստուծոյ սրբոյ*. և ամենեքեան գրեթէ Սա-
մարացիք, և սակաւք ումանք յօտար ազգաց իբրև
զԱստուած մեծ խոստովանեալ և երկիր պագանէին
նմա։ Եւ զկին զոն Հեղինէ որ ընդ նմա շրջէր ՚ի ժա-
մանակին յայնմիկ, որ յառաջագոյն ՚ի պոռնկութեան
կայր ՚ի Տիբերա Փիւնիկեացւոց, զառաջինն նորա միտս և
խնամատրութիւն գոլ ասացին. զայս ինչ զմանէ Յուս-
տինոս։ Մինաբանի ընդ նմա և Նիւռոս յառաջինն գիրս
իւր որ Ընդդէմ հերձուածոց, յորում միանգամայն
վասն նորին առն և վասն ամբարշտութեան ա պիղծ
վարդապետութեան նորա գրեաց։ Ցոր և աւելորդ
համարիմ երկրորդել աստանօր. իսկ որք միանգամ
կամին ուսանել վասն նորա, և վասն ամենայն աղան-
դապետացն հերձուածոց, վասն ծագման նորա և
գնացից, և զպատճառաց սուտ ումանցն և զնարից
մեքենայից նորա, զամենայն ինչ ՚ի գրչութենէ անտի
Նիւռոսի՝ զոր աւանդէն մանր, կարէ հասանել ՚ի վե-
րայ։ Սրդ գլուխ ամենայն հերձուածոց որպէս ընկա-
լաբս մեք, առաջինն Սիմոն եղև. և ՚ի նմանէ մինչև

արարէք գոբ նմա ՚ի վերայ գետոյն որ անուանեալ կոչի Տիբերիս
ան ՚ի մէջ երկուց կամրջացն, և գրեալ ՚ի վերայ նորա հռոմա-
բէն այսպէս. Սիմոնի սրբոյ. և բազումք ՚ի Շամրացւոց անտի և
սակաւք յայլոց, իբրև առաջին Աստուծոյ խոստովանէին և երկիր
պագանէին նմա։ Եւ կնոջ միում զի անուն էր նորա Մենինա*
որ շրջէր ընդ նմա ՚ի ժամանակին յայնմիկ, որ յառաջագոյն ՚ի
պոռնկութեան կայր ՚ի Ծուրս փիւնիկացւոց**. և ասէին զայսպիսի
միտս ՚ի նմանէն ընկալաբս կինն յառաջագոյն. զայս ինչ ասաց զնմա-
նէ Յուստինոս։ Բայց միաբանի ընդ նմա և Իրենէոս՝ յառաջին ՚ի
խոսն որ եղեալ են նորա ընդդէմ ազանդոցդ հերձուածոց.
զի միանգամայն վասն նորին առնն և վասն պիղծ վարդապետու-
թեան նորա գրեաց, զի յայս ձառս աւելի առնեմ թէ երկրոր-
դեմ զնա. զի որք միանգամ կամին ուսանել վասն նորա և վասն
ամենայնի որ եղեն զինք նորա առաջնորդք ազանդոց հերձուա-
ծոց, սկիզբն և գնացք նոցա, և այլ ևս ուսանիլք և տուեալիւն
նոցա, և զնարս մեքենայից նոցա, զի զամենայն ինչ ՚ի գրչութե-
նէ անտի Իրենէոսեայ՝ կարէ ուսանել։ Արդ՝ առաջին որպէս ընդ-
կալաբ մեք՝ գլուխ ամենայն հերձուածոց՝ Սիմոն եղև, զի ՚ի նմա-

* Ի յայն օրինակսդ ոմանք Հելինէ առնն և պիլբ Սելինի։
** Ցօր. Ծուխիկացւոց։

ցայսօր Ժամանակի՝ որք աղանդոյն նորա են աշա-
կերտք, զգաստութիւն ցածութեան և ըղձութիւն
հասարակաց գնացից քրիստոնէից կեղծեօք կերպա-
րանեն յանձինս, և ՚ի մոլորութիւն կռապաշտու-
թեան՝ յորմէ համարին թէ փրկեցան, վերստին սա-
հեալ գլորեցան ՚ի նոյն, զի առաջի նմանութեան և
պատկերի Սիմինի և Հեղինեայ անկեալ յերկիր, խընդ-
կօք և զոհիւք և նուիրօք պաշտեն մատուցանել ոչ ա-
մաչեն, եւ զոր զանխուչն ՚ի ծածուկ ունէին յիւրեանս,
՚ի լսել ուրուք և յապուշ կրթիլ, և զի ՚ի նոցունց բա-
նից ասացից՝ հիացեալ և թմբրիլ. այսու ասա-
շուքեամբ յիմարութեան և ցնորիւք մոլեգնու-
թեամբ լի են ամենևին՝ զոր ոչ միայն գրով չմարթի
տալ, նա և ոչ ՚ի չրթունս ցածուն մարդկան արժանի
են նոքա երկրորդելոյ՝ վասն առաւել զազրութեան և
պղծութեան նոցա, զի քան զամենայն ինչ զոր խոր-
հիցի մարդ թէ պիղծ և աղտեղի իցէ, անցեալ զան-
ցանէ պղծութիւն աղանդոյս այսորիկ, որ խաղալիկ
լինին լի ամենայն չարեօք չուառական կանանց,

նէ և մինչև յայսօր Ժամանակի կարգին գան յաղանդ անգր նո-
ցա, յայմհետէ զգնացից քրիստոնէից որ անուանի ամենայն
մարդիկ, վասն պարկեշտութեան խըրոյ նմանօզ լինել նմա կեր-
պարանեք. և յայն մոլորութիւն կռապաշտութեան ուստի ակն ու-
նեն թէ փրկեցան, ՚ի նոյն անկան գարձեալ. զի կերպարանաց և
նմանութեան նոցա, Սիմինի և Հեղինեայ՝ այն զորմէ յուշաք լեթէ
էր ընդ նմա, խնկեք և զոհիւք և նուիրօք պաշտեն զնա. և այլ որ
քան զայս և աղտեղի են ՚ի խօսել. զի որպէս ասի՝ թէ այն որ
ասէ զնոցա զառաջինն ՚ի գրոց անուն զոր ունէին նոքա, յիմարի և
զարմանայ. զի երբեւ Ձմարթի ՚ի մոլորութիւն մտաց և յիմարու-
թիւն բանից. զի այսպէս իսկ են, զի ոչ միայն գրով չմարթի ըզ-
նոսա տալ՝ նա և ոչ ՚ի չրթունս հեղ մարդկան արժանի են նոքա
երկրորդելոյ վասն առաւել անօրէնութեան և պղծութեան նո-
ցա. զի քան զամենայն ինչ զոր խորհիցի մարդ թէ պիղծ և աղ-
տեղի իցէ, անցեալ զանցանէ պղծութիւն աղանդոյս այսորիկ, որ
խաղան ընդ կանայս չուառականս լի ամենայն չարեօք. Զայս Սի-
մոն, զՀելլէ և զարարիչ այսր ամենայն չարեաց, յայնմ Ժամանա-
կի յարոյց զնա զօրութիւն չարին և Թշնամին բարեաց և հա-
կառակորդն կենաց մարդկան իբրև զահռելեան մեծ ընդդէմ մե-
ծամեծ առաքելոցն և սրբոց Քրիստի մերոյ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Վասն քարոզութեան Պետրոսի առաքելոյ ՚ի Հռոմ քաղաքի։

Զայս Սիմոն, զհայր և զարարիչ այսր ամենայն չա-
րեաց՝ յարոյց յայմ ժամանակի Թէշնամին բարեաց
և հակառակորդն կենաց մարդկան, իբրև զխոյեան
և նախանձորդ ընդդէմ մեծամեծ առաքելոցն և սըր-
բոց Փրկչին մերոյ։ Բայց սակայն երկնաւոր շնորհք՝
որ զօրաւիգն է միշտ պաշտօնէից իւրոց, ՚ի գալ ե-
րևել նոցա ամենայն ուրեք՝ շինօղացանէր վաղվաղակի
զբոցն բորբոքեալ ՚ի Թշնամւոյն, և զամենայն բարձ-
րութիւն հպարտացեալ ընդդէմ գիտութեանն Աս-
տուծոյ քակտեալ կործանէր։ Վասն այսորիկ ոչ ժո-
ղովն Սիմոնի և ոչ այլոց ուրուք յայնցանէ՝ որ բու-
սանն զկնի նորա, կարաց կալ ՚ի ժամանակի անդ ա-
ռաքելոցն. զի յաղթէր և զօրանայր քան զամենայն
լոյսն Ճշմարտութեան. և բանն աստուածայինն՝ որ
ծագեացն յայնժամ ՚ի մարդիկ աստուածուստ, զօ-
րանայր ՚ի վերայ երկրի, և ՚ի նոսին յառաքեալսն բըր-
նակէր։ Անդէն վաղվաղակի կախարդն այն՝ զորմէ ա-

Զորէրտասաներորդ. վասն քարոզութեանն Պետրոսի առաքելոյ ՚ի Հռոմ քաղաքի։

Բայց սակայն երկնաւոր շնորհացն Աստուծոյ որ զօրանանն ՚ի
պաշտօնեայս իւրեանց, ամենայն ուր հակառակին և երևելին, շի-
նօղացանէին վաղվաղակի զբոցն առաքեալ Թշնամւոյն, և քակէին
զամբարտն ձեռաք իւրեանց, և կործանէին զամենայն բարձրու-
թիւն որ հպարտանայր ընդդէմ գիտութեանն Աստուծոյ։ Եւ վասն
այսորիկ ոչ ժողովն Սիմոնի և այլոց՝ ուրուք յայնցանէ՝ որ բու-
սանն զկնի նորա, կարաց կալ ՚ի ժամանակի անդ առաքելոցն. զի
յաղթէր և զօրանայր քան զամենայն լոյսն Ճշմարտութեան և բանն
Աստուծոյ, այն որ յայնմ ժամանակի յԱստուծոյ ծագեաց ՚ի
վերայ որգւոց մարդկան, և աստղիկ և զօրութիւն նորա ՚ի վերայ
երկրի, և ՚ի նոսին յառաքեալսն նորա բնակէր։ Յայնմ ժամանա-
կի կախարդն այն՝ զորմէ ասացաքն մեք՝ իբրև ՚ի աքանչելի նշա-

* Յօր. պրէ

սայաքս, իբրև ՚ի սքանչելի աստուածային լուսոյն տանջեալ յայս մտաց իւրոց, զի նախ զառաջինն յերկրին Հրէաստանի յանդիմանեալ կշտամբեցաւ նա ՚ի Պետրոսէ առաքելոյ վասն չարեացն զոր գործէր, տապաստարհիկ անտի փախստեայ գնայր ընդ ծով՝ յաբևելից յարևմուտս անցեալ, զի համարեցաւ ընդմիտս իւր կալ անդ ըստ կամաց իւրոց։ Եւ իբրև եկն եմմաւս նա ՚ի Հռոմ քաղաք, և մեծապէս սատար լինէր նմա զօրութիւնն դիւական որ ՚ի նմա, և ի սակաւ ժամանակի այնպէս յաջողեցաւ փոյթ մոլորութեան նորա, որպէս զի և անգրի անգամ կանգնեցին նմա ՚ի պատիւ իբրև Աստուծոյ։ Այլ ոչ եթէ բազում ժամանակս յաջողեցան կամք նորա. զի նոյնժամայն հետ ընդ հետ զինի նորա ՚ի թագաւորութեան Կլաւդեայ բարերարն և մարդասէր հասարակաց ամենեցուն իսառամակալութիւն՝ զայն զմեծ և զհզօրն առաքելոցն, զայն որ վասն սքանչելի գործոց իւրոց գլուխ էր ամենայն ընկերաց իւրոց՝ վարեաց էած զՊետրոս ՚ի Հռոմ քաղաք իբրև ընդդէմ այնր ապականչին աշխարհի։ Եւ իբրև առաքինի զօրագլուխ Աստուծոյ վառեալ զինու, զվաճառ բազմագին հոգևոր լուսոյն յարևելից արևմտեայցն տաներ, զի զլոյն

լոյն Աստուծոյ տանջեցաւ ՚ի ձեռն այսց խորհրդոց իւրոց, ՚ի ժամանակի զի յանդիմանեալ կշտամբեցաւ նա ՚ի Պետրոսէ առաքելոյ. նախ զառաջինն ՚ի յերկրին հրէաստանի, ՚ի ձեռն չարեացն զոր գործէր նա։ Եւ փախեաւ անտի ՚ի հրէաստանէ բազում, և յարևելից ընդ արևմուտս գնաց նա. զի համարեցաւ ընդ միտս իւր կալ անդ ըստ կամաց իւրոց։ Այլ իբրև եմմաւս նա ՚ի Հռոմ քաղաք և մեծապէս զօրանայր ՚ի նմա զօրութիւնն որ բնակեալ էր ՚ի նա, յայսմ վայրկ ՚ի սակաւ ժամանակի այնպէս յաջողեցաւ փոյթ մոլորութեան նորա, որպէս և զի անգրի անգամ կանգնեցին նմա ՚ի պատիւ իբրև Աստուծոյ։ Այլ ոչ եթէ բազում ժամանակս յաջողեցան կամք նորա. զի նոյնժամայն հետ ընդ հետ զինի նորա ՚ի թագաւորութեան Կլաւդեայ՝ հոգաբարձութիւնն ընդհանուր և զօրագլուխ Աստուծոյ, զայն զմեծ և զհզօրն առաքելոցն, զայն որ վասն սքանչելի գործոց իւրոց էր գլուխ ամենայն ընկերաց իւրոց զՊետրոս՝ վարեցին ընդհետն եմմաւս ՚ի Հռոմ քաղաք իբրև ընդդէմ այնր ապականչին աշխարհի, և իբրև զառաքինի զօրագլուխ Աստուծոյ վառեալ զնա զինու Աստուծոյ. և զվաճառ բազմագին հոգևոր լուսոյն, յարևելից արևմտեայն տաներ և ուսուցաներ նոցա զաւրութիւն արքայութեան երկնից. յասել իւրում այսպես. եթէ այս է լոյս և

զայն, զանձն փրկարար Հոգւոյ, զքարոզութիւն ա-
քայութեան ելկնից նոցա աւետարանէր։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Վասն աւետարանին որ ըստ Մարկոսի։

Ա՛յլ իբրև եհաս առ սոսա բանն Աստուծոյ, նոյն-
ժամայն շինչաւ Սիմոնին, և լուծաւ զօրութիւն նորա։
Այնպէս իսկ ծագեաց լոյս աստուածպաշտութեան ՚ի
խորհուրդս լռոզացն Պետրոսի, զի ոչ շատ համարե-
ցան ՚ի լուր միանգամ միայն քարոզութեան բանին,
և անգիր աստուածային վարդապետութեան. այլ և
բազում խնդրուածովք ազաչէին զՄարկոս զաւետա-
բանագիրն՝ որ զհետ երթեալ էր Պետրոսի, զի գրով
թողեալ նոցա գիշատակ վարդապետութեան՝ զոր բա-
նիւ ընկալան. և ոչ դադարեցան ինչ ՚ի թախանձելոյ զնա
մինչև բռնադատել զայրն. և այս պատճառաւ լինելին
գրութեան աւետարանին որ ըստ Մարկոսի։ Իբրև
գիտաց զայս, ասեն, Առաքեալն ՚ի յայտնութենէ
սրբոյ Հոգւոյն, և ՚ի միտ էառ զիոյնի սնդութեան
մարդկան, հաւանեալ վաւերացոյց զգիրն յընթեր-

բան որ կէցուցանէ զոգիս որգւոյ մարդկան. այլ իբրև եհաս առ
նոսա բանն Աստուծոյ, նոյնժամայն շինչաւ Սիմոն և լուծաւ զո-
րութիւն նորա։

Հնգետասաներորդ. վասն աւետարանին Մարկոսի։

Այնպէս իսկ ծագեաց լոյս աստուածպաշտութեան ՚ի խոր-
հուրդս լռոզացն Պետրոսի. զի ոչ շատ բաւական եղև նոցա քա-
րոզութիւն վարդապետութեան բանին ՚ի լսելոյն միայն, այլ բա-
զում ազաչեաւք և խնդրուածովք ազաչեցին զՄարկոս, որ գրեաց
զաւետարանն՝ զի նա երթեալ էր զհետ Պետրոսի, զի գրով թող-
ցէ նոցա գիշատակ վարդապետութեան, զայն ինչ զոր բանիւ
ընկալան. զի զայն ինչ նորա յաճախագոյն չէր գործեալ, և նորա
եղեն պատճառք այսր գրոց աւետարանին Մարկոսի։ Իսկ իբրև
գիտաց Պետրոս զայն իսկ զայս, զոր յայտնեաց նմա Հոգին
Սուրբ, և ՚ի միտ էառ զիոյնի սնդութեան մարդկան, աւուրգեաց
ոգիւս զայս աւետարանել ՚ի շինութիւն եկեղեցւոյ։ Վասն այսր

ցուն յԵկեղեցիս։ Զայս պատմէ Կղեմէս ՚ի վերջերոյ գիրս Հրահանգաց իւրոց, որում վկայէ և եպիսկոպոսն Գերապատիւ Պապիաս անուն։ ՁՄարկոս յիշատակէ Պետրոս յառաջին ՚ի թղթի անդ իւրում, զոր ՚ի Հռոմմայ ասէն գրեալ, զոր և առաքաւ Բաբիլոն կոչէ զայն Առաքեալն, բանիւս՝ Ողջոյն տայ ձեզ որ ՚ի Բաբիլոն ընտրեալակից եկեղեցի է, և Մարկոս որդի իմ։

ԳԼՈՒԽ Ժ.

Երէ ո՛րպէս քարոզեաց զառաջինն Մարկոս զգիտութիւնն Քրիստոսի այնոցիկ որ յԵգիպտոս էին։

Վասն այսր Մարկոսի նախ յերկիրն Եգիպտացւոց պատմէն գնացեալ, և թէ զաւետարանն զոր գրեաց, անդ քարոզեաց, և յԱղեքսանդրացւոց քաղաքին նախ զառաջինն եկեղեցի ուղղեաց։ Եւ այնչափ էր բազմութիւն հաւատացելոց արանց և կանանց, և ՚ի սկզբան անդ ՚ի խիստ կարգս զգաստութեան փայլեալ, որպէս զի և գիրս անգամ վասն նոցա գրոշմել Փիլոնի, վասն գնացից նոցա և ժողովոյն և հացակից ընկերութեան, և վասն այլոց սովորութեանց և կարգաց։

Իսկ Կղեմենտոս ցուցանէ ՚ի պատմութեան իւրում. և վկայէ ընդ նմին դաւթեալ եպիսկոպոսն Գերապատիւ՝ զի անուն էր նմա Պապրաս, նոյն զՄարկոս յիշատակէ և Պետրոս յառաջին ՚ի թղթի անդ իւրում, զոր գրեաց ՚ի Հռոմ քաղաքէ. զի գրոշմէ նա զքաղաքն իւր, և առաքաւ կոչէ զնա Բաբէլ. և ասէ թէ հարցանէ զողջոյնն ձերմէ ընտրեալ իրքն զձեզ ՚ի Բաբէլ, և որդեակ իմ Մարկոս։*

Վերադարձ երէ զառաջինն Մարկոս՝ որպէս քարոզեաց զգիտութիւնն Քրիստոսի այնոցիկ որ յԵգիպտոս էին։

Վասն այսր Մարկոսի ասէ վերոյնէն, եթէ նա նախ յաղաւ յերկիրն եգիպտացւոց, և անդ քարոզեաց զաւետարանն, այն զի և գրելով գրեաց զնա. և նա նախ զառաջինն ուղղեաց եկեղեցի յԱղեքսանդր քաղաքի։

* Յօր. Բ–ԲԵԼ

ԳԼՈՒԽ ԺԷ.

Թէ զի՛նչ պատմէ փիլոն վասն ձգնաւորին որոնց Եգիպտացւոց։

Բայց վասն սորին Փիլոնի զոյցք աւանդեն, եթէ յաւուրս Կղաւդեայ կայսերն խօսակից ընդ Պետրոսի լինէր նա ի Հռոմ քաղաքի, մինչդեռ քարոզութեամբ էր Աւաքեալս. և այս չէ ինչ անդէպ։ Քանզի և զմիաշտակարանս՝ վասն որոյ ասացաքս, յետ բազում ժամանակաց երկասիրեալ նորա վասն եկեղեցական կարգաց, որ ցարդ զգուշեաւ պահի առ մեզ, յորում և յայտնապէս ցուցանէ և վասն գնացից միանձանց՝ որ են առ մեզ, Ճշգրտութեամբ որպէս և ենն պատմելոյ նոցա։ Եւ ոչ գիտել միայն զնոսա, ասէ, այլ և հաւանեալ և գովել, և զարմանալ ընդ առաքելաշնորհ մարդկին, որ յերբայեցւոց, որպէս Թուխն գոլով, և հրեաբար ցայն վայր պահէին նոքա զբազում սովորութիւնս առաջինս։ Բայց նախ եթէ արտաքոյ Ճշդ-

Ւօրինաւանելորդ. թէ զինչ պատմէ փիլոն վասն ասացեալ եգիպտացւոց։

Ա՛յսպէս իսկ հաստատեցաւ անդ Ժողովն հաւատացելոցն՝ առանց և կռնանդ ի նմին իսկզբան անդ կատարեալ վաստակովք իմաստութեամբ, որպէս զի և գերս անգամ վասն նոցա գրոյմեցէ Փիլոն, վասն բնակութեան նոցա և վասն Ժողովոյն նոցա, և վասն խառնութեան նոցա, և վասն այլոց գործոց նոցա։ Բայց վասն սորին Փիլոնի ասէ, եթէ յամս Կղաւդեայ կայսերն մինչդեռ քարոզէր Պետրոս ի Հռոմ քաղաքի, խօսեցաւ ընդ նմա անդ. և նման իսկ այս քանզի և զգերս զայս՝ վասն որոյ ասացաքս մեք, յետ բազում ժամանակաց աշխատեցաւ ի սմա եւթէ, զի յայսնապէս վասն գնացից պաշտամանն՝ որ պահէալ է մինչև ցայսօր ժամանակի ի մէջ եկեղեցւոյ՝ ցուցանէ. այլ վասն գնացից միանձանց որ են առ մեզ, Ճշգրտութեամբ որպէս և ենն՝ պատմէ։ Բայց ոչ զի գիտել զնոսա միայն, այլ զի և ընդունելի է նմա և զարմանալ ընդ նոսա, և փառաւորել զնոսա՝ զմարդկին զայն, զաշակերտսն առաքելոցն որ եղեն յաւուրս նորա։ Բայց էին նոքա ի հեբրայեցւոց, և ցայն վայր հրեաբար պահէին նոքա զբազում սովորութիւնս առաջինս։ Բայց նախ զառաջինն հաստատեաց և

մարտութեան՝ յանձնէ իւրմէ նա ինչ ոչ յաւելու զբ-
վան գնացից միանձանցն և աղօթից պաշտամանց
նոցա գրեաց. զոր և բժիշկս կամ պաշտօնեայս կա-
մարարս կոչէին. նոյնպէս և զկանայս որք ընդ նոսա,
իբրև նոցին զուարթ և լծակից. և զպատճառս այսր
անուանս յաւելու նա, կամ զի բան նմանութեան
բժշկաց՝ զոգիս այնոցիկ որ մեբձանալին՝ ի նոսա,
բուժէին՝ ի չարեաց ախտից, կամ վանս սուրբ և պար-
կեշտ պաշտամանն՝ որով պաշտէին նոքա զԱստուած.
Եւ զայս անուն, կամ նա ինքն եդ նոցա, որ միաբանի
յուսոյն նոցա և գնացից, կամ թէ Ոչնմարտիս այս-
պէս անուանեալ էին նոքա յառաջնոց անտի. զի
ցայնժամ անուն քրիստոնէից չէ էր սփռեալ ընդ ա-
մենայն տեղիս. այլ չէ արժան երկարագոյնս վերծել
զայսմանէ,

Եւ զի մերկանան՝ ի սկզբան անդ զառաջինն լըս-
չից իւրեանց և լսկին՝ վկայէ գնացանէ մատենագիրս
այսպէս. Ջորժամ սկիզբն առնէին, ասէ, զպատու-
թեան, քակին յանձնայն ընչից իւրեանց և յամե-
նայն հոգոց կենցաղականաց, և ապա ելանէին արտա-
քոյ քան զպարիսպս քաղաքին և յագարակս և ի
բուրաստանս բնակին, զի խաւն բնակակցութիւն ընդ
ոչ միաբանեալն ընդ նոսա՝ անօգուտ համարեալ էր

ասուածաց նա, եթէ արտաքոյ Ոչնմարտութեան ինչ յանձնէ իւրմէ նա ոչ յաւելու յայն ինչ՝ զոր պատմեաց՝ ի խոս անդր զոր գրեաց վասն գնացիցն միանձանց. և ասաց զնոցանէն, եթէ կոչին Հանգստաւորք, և կանայք որ էին ընդ նոսա Հանգստաւորութիւք, և ասաց զպատճառսն այսր անուան որ կոչէին սովաւ. կամ վասն զի Հանգուցանէին՝ ասէ՝ և բժշկէին զոգիս զայնոցիկ որ մերձենային առ նոսա՝ ի չարչարանաց չարեաց, բան նմանութեան բժշկաց. կամ վասն զի Հանգուցանէին նոքա զԱստուած, սուրբ և պարկեշտ վարուցակերն իւրեանց: Կամ զի նա եդ նոցա զայս անուն՝ որ միաբանի յուսոյն նոցա, կամ եթէ Ոչնմարտիս այսպէս անուանեալ էին նոքա յառաջնոց անտի: Կամ զի ցայն վայր անուն քրիստոնէից չէր անուանեալ ընդ ամենայն տեղիս, Ինչպէս ասացաք նախ զառաջինն, զի մերկանան լըսչից իւրեանց և լսկին. վկայէ գնացանէն և ասէ այսպէս. եթէ յորժամ սկսանէին առ՝ ի՝ գործ միանձնութեան՝ քակին յամենայն ընչից իւրեանց և յամենայն հոգոց աշխարհիս. և ապա ելանէն արտաքոյ քան զպարիսպ քաղաքն և յագարակս և ի բուրաստանս բնակէին նոքա. զի խառնակութիւն այնոցիկ որ ոչ միաբանէին գործոյն նոցա, պակասութիւն

* Ջոր. —ած.

Նոցա և պատուիրէ արդարև. Որ ի ժամանակին յայնմիկ զընծայէլոցն ի քրիստոսական կրօնս եռանդնալոյ և ջերմ հաւատոյն և նախանձողդ նմանող լինելոյ կենաց մարգարէից Թուխ տալ զպատկեր։ Նա և ի պաշտելին մեր ի Գործս Առաքելոց գրեալ կայ եթէ. Ամենեքեան որ միանգամ աշակերտեալ էին առաքելոցն զամենայն ինչս և զտացուածս զոր ունէին, վաճառէին և բաշխէին ամենեցուն՝ ումմ զիարդ պիտոյ ինչ լինէր, զի որ կարօտեալ իւիք ի միջի նոցա մի գտցի։ Եւ որք միանգամ ունէին գիւղս և ապրանս, ըստ բանին ասելոյ, վաճառէին և բերէին զդինսն, և դնէին առ ոտս առաքելոցն, զի եղիցի բաշխեալ իւրաքանչիւր ի պէտս իւր։ Նման իսկ այսոցիկ վկայէ և Փիլոն վասն մարդկանն այնորիկ, որ և յաւելեալ ի բանս իւր ասէ եթէ. Ա՛յս ազգ մարդկան ընդ ամենայն աշխարհ, յամենայն տեղիս սփռեալ գտանի, զի արժան իսկ էր գերագունի բարւոյն բաժանորդ գըտանել և ՅունՆոց և բարբարոսաց։ Եւ բազմութիւն էր նոցա առաւել յերկրին Եգիպտացւոց, ի գաւառս գաւառս կուսակալութեան նորա, մանաւանդ ՅԱղէքսանդրիա քաղաքի։ Իսկ առաքինիքն՝ որ յամենայն տեղեաց իբրև ի քաղաք պանդխտութեան Թերաֆեւտաց, զի այս է ի հեղինէն բարբառ անուն նոցա, երթային ի վայր մի պատշաճական, որ է ի վերոյ քան

և պատուիրէ համարեալ էին նոցա. և զայս գործէին նոքա յեռանդնալից սիրոյ անտի հաւատոյ, և հոգւ յանձին ունէին նմանողդ լինել գործոց մարգարէիցն։ Նա և Գործքն իսկ առաքելոցն ցուցանեն, եթէ ամենեքեան որ միանգամ աշակերտեալ էին առաքելոցն, զամենայն ինչս և զտացուածս զոր ունէին՝ վաճառէին և բաշխէին ամենայնի որում զինչ պիտոյ էր, զի որ կարօտեալ իւիք ի միջի նոցա մի գտցի. զի որք միանգամ ունէին գիւղս և ապրանս՝ ըստ բանին ասելոյ, վաճառէին և բերէին զդինսն, և դնէին առ ոտս առաքելոցն, զի եղիցի բաշխեալ իւրաքանչիւր մարգոյ՝ ի պէտս իւր։ Նման իսկ այսոցիկ վկայէ Փիլոն վասն մարդկանն այնորիկ, յասել բանիւք իւրովք այսպէս. Ընդ ամենայն տեղիս ասէ, յամենայն աշխարհէ, այս այնպէս ունի. զի արժան իսկ էր եթէ ի կատարեալ բարւոյ անտի ընկալցին յունքն և բարբարոսքն. բազումք իսկ են յերկիրն եգիպտացւոց յամենայն ի քաղաքս, մանաւանդ յԱղէքսանդր քաղաքի։ Իսկ առաքինիքն որ յամենայն տեղեաց իբրև ի քաղաք պանդխտութեան միանձանց, երթային ի տեղի մի՝ ուր պատշաճ էր նոցա, որ էր

զծովակն Մերիա, յերկիրը բարձրաւանդակ և տափաղակ, քաջագէպ յոյժ վասն անբոյնի ապահովութեան և օդոյն բարեխառնութեան։ Իսկ յետ այնորիկ նըկարէ նա զբնակութիւն նոցա ԹԷ որպէս էր, ապա և զեկեղեցեացն՝ որ ընդ ամենայն տեղիս էն, ասէ. Ցիւրաքանչիւր քնակութիւնս է նոցա սեռնեկիկ մի սուրբ՝ որ կոչի պարկեշտանոց և միաբնոց, յորում մեկուսացեալ զգաստութեան կենաց զվարժուրդս կատարէն։ Եւ ինչ անգր ոչ մնծանեն, ոչ կերակուր և ոչ ըմպելի, և ոչինչ որ միանգամ՝ի պէտս մարմնոյ կարևորք լինեն, այլ զօրինս և զբանս պատգամաց մաք գաբելից և օրհնութիւնս, և զամենայն ինչ որ միանգամ զաստուածպաշտութիւն և զիմաստութիւն յաւելուն, և կատարեն։ Եւ ընդ այլ բանս յարէ և զայս եԹէ. Ցառաւօտ մինչև յերեկոյ զօրն՝ի բուն կըրթութիւն է նոցա զգաստութեան։ Յորժամ ընդ գիրս սուրբս անցանեն՝ ըստ հայրենի աւանդիցն իմաստասիրեն այլաբանելով, զի զառակս և զօրինակս զծածկեալս համարին զաստացեալս, և ոչ այլով իւիք իմանալի, բայց եԹէ խորհրդածութեամբ պարզելի։ Ին առ նոսա և յիշատակարանք նախնեաց, որոց եղեն առաջնորդ աշակերտութեան նոցա, յորս և աւանդին այլաստղիկ վարդապետութիւնք նոցա։ Ընդ

նա՝ի վերոյ քան զծովակն, զի անուն էր նորա Մերիայ. և եգեալ է՝ի վերոյ քան զբլուրն, վասն զգալոյն վասն օդոց՝ խառնուածոց։ Իսկ յետ այսորիկ նկարեաց նա զբնակութիւն նոցա ԹԷ որպէս էր, այսինքն՝ զի կրկնաց համմտաեաց եկեղեցեացն որ ընդ ամենայն տեղիս են։ և վասն այսորիկ ասէ. Ի անդ նոցա տուն մի սուրբ, որ անուանեալ կոչի տուն հեզութեան միաբնութիւն, զի լինին՝ի նմա միաձնութեամբ, և զխորհուրդս գործոցն հեզութեան պաշտան՝ի նմա. և ինչ անգր ոչ մնծանեն, ոչ կերակուր և ոչ ըմպելի, և ոչ ինչ որ միանգամ՝ի պէտս մարմնոյ պիտոյ են։ Այլ օրէնս և բանս որ եգեալ են՝ի մարգարէից և օրհնութիւնս, և զամենայն ինչ որ միանգամ խնամութիւն և աստուածպաշտութիւն Աստուծոյ առաւելուն նոքօք և կատարեն։ Եւ յետ սակաւու միոյ ասաց. եԹէ Ցառաւօտ՝ ասէ՝ մինչև յերեկոյ, զօր ցերեկ են նոքա՝ի պաշտամունն։ Եւ իբրև ընԹեռնուն զգիրս սուրբս, խնամանեան հայրենի խնամութեամբն, և մեկնեն զառակս որ գրեալ են՝ի նոսա. զի բանք որ ասացեալ են՝ի նախագիրս խորհուրդք առակաց համարին ԹԷ գրեալ եւ՝ի նոսա։ Բայց են առ նոսա գիրք հին մարգկան, որ եղեն

* Ցօր . ուրբ-ոյ։

որս իբրև ընդ նախատիպ հայելիս հայիմ, և նմանող լինիմ օրինակի գնացից նոցա և խորհրդոյ։ Եւ ման իցէ ասել զայս առնս, որ զգրոց մերոց լուեալ իցէ խօսել։ Եւ զոր ասէն, եթէ են առ նոսա յիշատակարանք նախնեաց, թերևս վասն աւետարանիչն ասէ և վասն գրոց առաքելոց, և մեկնութեանց առաջնոց մարգարէից, և ընդ այլ բազում թղթոց Պօղոսի և զոր առ Եբրայեցիսն գրեաց, դարձեալ և վասն նորոց սաղմոսացն օրհնութեանց շարադրելոց առ ի նոցանէ այսպէս գրէ նա. Ոչ ի խոկմանս և ի հայեցողական կեանս միայն պարապին սոքա, այլ և երգս ի ն յօրհնեն և օրհնութիւնս Աստուծոյ ազգի ազգի չափովք և նուագօք. և չափ պարկեշտագոյն ախորժական է նոցա և սիրելի։ Եւ բազում ինչ այլ գնոցանէ ի յիշատակել գիրս իւր առանդէ. այլ ես զայն միայն քաղեցի ընտրեցի, որ ինչ միանգամ եկեղեցւոյ գնացից և կարգաց նմանագոյնս նկարագիրս լինէին։ Ապա եթէ ումեք ոչ երևեսցի ասացեալս նման վարուց վարդապետութեան աւետարանին, այլովք քան զորս ցայժմ ասացի՝ մարթասցէ ոք կշռել, և հաւանեսցի այնպիսին ի բանից անտի նորա որ զհեան գայ, եթէ խոհական քաջախորհուրդ ոք էր նա, և առանց երկմտութեան ընդունիցի զառ ի նմանէ վկայութիւնս.

առաքնորգք ալակերտութեան նոցա, որ թողին նոցա յիշատակ օրինակի մեկնութեանց, և հայեին ընդ նոսա իբրև ընդ հայելի, և նմանող լինին նմանութեան խորհրդոց նոցա։ Բայց նմանի՛ եթէ զայս զոր ասացեալ է վասն այսորիկ եթէ ոչ միոգեռ պատմին նոքա ի գրոց սրբոց լուսու ի նոցանէն. և զայս զոր ասաց եթէ են առ նոսա գիրք առաջնացն, թուի թէ վասն աւետարանին ասաց, և վասն գրոց առաքելոց, և պատմութեանց մեկնութեանցն առաջնոց մարգարէիցն զոր ասաց, թերևս վասն թղթոյն հերքայեցւոց և այլոց գրոց թղթոցնորին Պօղոսի։ Բայց գարձեալ վասն վարդապետութեանցն զոր առնէն նորա սկս յանձանց իւրեանց, և վասն օրհնութեանցն գրէ այսպէս. եթէ ոչ ասէ միայն խնամալով և եթէ խնամեան զգիրս, այլ և յանձանց իւրեանց առնեն երգս և օրհնութիւնս Աստուծոյ ազգի ազգի չափովք և քաղցր բարբառովք. և այլ բազում ինչ ասաց զնոցանէն։ Բայց զայս որ պիտոյն են երևեցաւ ինձ՝ եթէ արժան է ընդարձակ գնալ զնոցանէ եկեղեցւոյ իցէն. ապա թէ որ կարծիցէ եթէ այս որ ասացեալ են, չեն վարք վարդապետութեան աւետարանի, այլ մարթէ ասել կասարել և ի վերայ այլոց, հաւանեսցի նա և յայսոց բանից զոր ասաց յետ այսր, զի ի նոցանէն վկայութիւն առանց

Զի գրէ նա այսպէս. Ջժուժկալութիւն իբրև զհինն եգեալ յանձինս իւրեանց, և զայլ ամենայն առաքինութիւնս 'ի վերայ հաստատեն, իսկ կերակուր կամ ըմպելի ոք 'ի նոցանէն ոչ ձաշակէ մինչև արեգակն մտանէ, զի զհմտասխրբելն և զզգաստանալ լուսոյ առաքն գոլ գատեն, իսկ խաւարի՝ զպէտս մարմնոյ, վասն որոյ զտիւն ողջոյն՝ իմաստասիրութեան, և զաւրկաւիկ մի մասն գիշերոյ՝ տալ 'ի պէտս մարմնոյ։ Եւ ոմանք 'ի նոցանէ և զերիս աւուրս զկերակուր ոչ յիշեն, յորս առաւել հաստատեալ իցէ ցանկութիւն գիտութեան։ Եւ կէսք այնպէս ցնծան և ուրախ լինին և գրգռեալ փափկանան 'ի կերակրել անդ իւրեանց յիմաստութենէ անօթ, առաւել հաղիւ 'ի վեց աւուրս անգամ մի ման

ծերացան, ոչ ՚ի հարկէ ինչ պահելով զսրբութիւնն, որպէս ոմանք ՚ի քրմաց անտի հեթանոսաց, այլ ՚ի կատարեալ կամաց նախանձու և սիրով իմաստութեան, ընդ որում կենակից և հաղորդակից լինել փութային, անարգելոյն զանկուածութիւնս մարմնոյն: Ոչ մահկանացու ծննդոց փափաքին, այլ այմ՚ որ ոչն մեռանի. զի որ սիրէն զՍաստուած, նա միայն կարող է ծնանել զաւակ այնպիսի: Եւ յառաջեալ ՚ի բանս իւր յետ սակաւ միոյ լուսաւորագոյնս դնէ և ասէ, եթէ. Ձմեհկուածութիւնս գրոց սրբոց առնէն նորա գուշակութեամբ իմն այլասացիկ օրինակաւ. և զօրէնս առ Հասարակ՝ ոգևորս Հաւարին և կենդանիս, և զամս ասացելոցն Համեմատեալ կշռէն ՚ի մարմինս. իսկ ՚ի շունչն և ՚ի հոգի՝ զծածուկ միտս ՚ի նոցա: Որ սկզբանն մնաւանդ քննել դիտել զկրօնս իրրև ընդ հայելիս բառից և անուանց, զանմնան գեղ իմաստից յերևան ածելով, զի պիտոյ է մեզ յաւելուլ և ասել զժողովոյն նոցա, զարանց առանձին, ոյնպէս զկանանց հրաշանագս ուրոյն, որ ՚ի սովորութենէ մինչև ցայսօր պաշտին առ մեզ. մանաւանդ զաւուր չարչարանաց Փրկչին մերոյ պահոք և տքնութեամբ և ընծայերս առ

զոմն ՚ի նոցանէն ՚ի կատարեալն ծերացան, և ոչ ՚ի հարկէ ինչ պահելին զսրբութիւնն որպէս և այլք որ են ՚ի մէջ կառապարեց, այլ ՚ի կատարեալ կամաց նախանձու և սիրով իմաստութեան առաքինասիրութեան. զի ընդ նմա փոյթ յանձին ունին հաղորդել, ուստի այսպիսի անարգելոյն նոքա զանկուածութիւնս մարմնոյն, և ոչ մահկանացու զաւակին կատարեալ փափաքին, այլ այնմ՚ որ ոչ մեռանի. զի անձն որ սիրէ զՍաստուած, նա միայն կարող է ծնանել զնա: Եւ յետ սակաւ միոյ մինչև ի ջուր նա ՚ի պատմութեան անտի խօսի, և լուսաւորապէս այսպէս երկրորդել ասէ գրոց սրբոց եգեալ է նոցա իրրև թէ առակաք խօսել եկել էն. զի օրէնքն ամենայն Թուխ մարդկան այնմիկ՝ եթէ նման են մարգոյ, և բանք որ ասացեալ են նկարագիր համեմատեալ կշռեն զնոսա ՚ի մարմին: Իսկ զշունչն՝ զծածուկ իմաստութիւնն որ Թաղեալ է ՚ի նոսա, այն որ զանխափ բնակութիւն սիրէրն աթար ՚ի միտ առնուլ առաքեալն, զի այսու յայտնի անուամբք իրրև հայելւոյ գեղս աբանելիս իմաստութեամբ տանեն նորքա: Զինչ պիտոյ է մեզ յաւելուլ՝ և ասել այլ ինչ, զի եղծոյց գաթաղել վասն ժողովոյ ժողովրդեան նոցա, զի որոշեն և մեկնեն զարս առանձին, ոյնպէս և զկանայս: Աւրդ վասն վարուցըս այսոցիկ որ մինչև յայսօր պաշտեն առ մեզ՝ ասաց այն օրէնսագիրք, զի յաւուրն ածէ չարչարանաց Փրկչին մերոյ, պահոք

ծովք գրոց սրբոց անցուցանել սովորեցաք. զորս Ձըղ-
գըրատպոյնս մի ըստ միոջէ աւանդէ այլն ի գիրս իւր,
ըստ օրինակին որ պահի ցարդ առ մեզ միայն, վասն
սքանչելեան տանի մեծի, վասն գիշերապաշտօնին և
օրհնութեանցն՝ որ ասին առ մեզ, պատմելով։ Եւ թէ
զիարդ ոմն Համով և վայելչութեամբ զաղմոս եր-
գելով, և այլքն լսելիք ունին դնեն, և ի կատարած
օրհնութեանց ամենեքեան ձայնակցին. և կամ ոք
պէս ի նշանաւոր աւուրսն յայնոսիկ գեհենախշտի
լինին խոնարհութեամբ ի վերայ երկրի ննջելով. գինի
բնաւ և ամենևին ոչ ըմպեն. և զի բանիւք նորա ա-
սացից՝ յամենայնէ յորմէ արիւն ելանէ, ժուժկալեն.
Ջուր է նոցա ըմպելի, և կերակուր՝ հաց և աղ և զո-
պայ։ Հանդերձ ասացելոցս գրե հեղինակս և զօրի-
նակիչ վերակացութեան նոցա, զեկեղեցական աստի-
ճանացն, զպաշտամանէ, սարկաւագաց, և քան զամե-
նայն վեհագոյն՝ զդաւերիցութենէ, եպիսկոպոսու-
թեան։ Բայց որ ցանկան Ձղգրատպոյնս ի վերայ կալ
իրացս, ուսցին յընդարձակագոյն պատմութենէ, անտի
մատենագրիս։ Ջի քարոզացն իսկ առաջնոց վարդա-
պետութեան աւետարանին, և սովորութեանցն՝ որ
տուան Յովսաբեոյ անտի տեղեկացեալ Փիլոն, գըր-
եաց զոր գրեացն, և յայտնի է այնմ որ կամին[3]։

և սքանչելեամբ և ընթերցուածովք գրոց սրբոց ունելիք մեք ա-
ղօթութիւն առնել, զի ըստ այնմ օրինակի եղոյց այլն այն, զորմ
մեր կանխեցաք ասացեալ մեք վասն նորա գրովք իւրովք՝ ի պատ-
մել իւրում վասն սքանչելեան տանի մեծի զոր առնէաք մեք և
վասն պաշտամանն նորա և օրհնութեանցն որ ասին ի նմա, և զի
ըստ կարգի ասէ մինն, և այլքն խոստութեամբ անտի նմա. և
ի կատարած պատգամին կայնի. եթէ զիարդ յաւուրսն նշանա-
ւորս խոնարհութեամբ ննջէին ի վերայ երկրի, և գինի բնաւ ա-
մենևին ոչ ըմպեն, որպէս և գրեացն նա բանիւք իւրովք. և ոչ ա-
մենայն ինչ յորմէ արիւն ելանէ՝ ուտեն. իսկ ըմպելի նոցա ջուր
է, և ուտելի նոցա՝ աղ և հաց և զոպայ։ Եւ* այսու հանդերձ գը-
բեացն և վասն օրինակաց որ են անդ, որ կան ի գլուխս և հաւա-
տարիմ են գործոց և պաշտամանն սարկաւագաց, և վասն բարձր
աստիճանին եպիսկոպոսութեան։ Բայց զոյս՝ այն որ սկիզբ կալ
ի վերայ Ձղգրատութեան սուրբ, ուսուցին** ի նմին պատմութենէն
առնս այսորիկ։

* Յօր. ուր հաց՝ եւ զմեղս և այսու հանդերձ....
** Պիտի՝ ուսանիցէ։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Երբ ո՛րչափ ինչ խօսք կամ ձառք սորին փիլոնի առ մեզ հասին,

Եւ զի յորդ էր նա բանիւ, և առաւել էր խորհրդովք, և բարձր և վերագոյն յիմացուածս աստուածային տեառից, արար բազմօրինակ և այլազան մեկնութիւնս գրոց սրբոց։ Եւ զսոյն կարգաւ ի գրոցն Ծննդոց սկսեալ մի ըստ միոջէ որ ինչ ի նմա գոլոյք և բանք են՝ մեկնելով, և զօրինաց սրբոց այլաստացիկ տալով բացատրութիւնս։ Դարձեալ ի մատունս մատունս որոշեաց, յորս կին ինչ ինչ գժուարիմացք ի սուրբ գիրս և խճճիմք, և երկայն զմաբառումն որ ի վերայ նոցա. մատենին անուն եդ Յաղագս խնդրոց և լուծմանց որ ի Գիրս լինելութեան և Ելից։ Եւ նորա դարձեալ և զիրաց իրաց խօսք և Ձառք առանձին, զոր օրինակ վասն երկրագործութեան գիրք երկու. և վասն արբեցութեան՝ նոյնպէս. և այլք բազումք ըստ առաջարկութեան նիւթոցն ունելով զանուանս. որ-

Ներածական երդ. Եւ թէ քանի խօսս գտորին փիլոնեայ գիտացաք մեք։

Զի քարոզչն* իսկ առաքելոց վարգապետութեանն աւետարանին, և առաքելութեանցն որ առաւել յառաջելոց անտի, ժամանեաց Փիլոն և զայս ինչ գրեաց. յայտ է այնմ որ կամին։ Բայց յորդէր բանիւ իւրով, և առաւել էր խորհրդովք իւրովք. և բարձր և վերագոյն էր գրովք իմաստութեամբ Աստուածոյ. և ընդ արութեամբ ամենայն օրինակաւք արար մեկնութիւնս բանիցն գրոց. և ի ըստ միոջէ կարգաւ արար մեկնութիւն գալոցն Ծննդոց. և գրեաց ի վերայ նորա մեկնութիւն առանկայ օրինակացն սրբոց։ Բայց գաբձեալ ի մատունս մատունս որոշեաց զդէպս որ քննին ի գիրս սուրբս, և երկայն զմաբառումն որ է ի վերայ նոցա. և վասն խճճիցն իսկ որ են ի գալոցութեան ելից, և վասն լուծանելոյ նոցա. որպէս գրեաց նա վասն գալոցութեանն Ծննդոց. նոյնպէս և գրեաց և վասն նոցա։ Են իսկ նորա այլ խօսք առանձինն, զի ննջեցեալ վասն երկրաւոր գործոց երկու. և վասն արբեցութեան՝ երկու. և այլ գաբձեալ են նորա որ ընտրութեամբ գործեաց

* Յովսէպոս.

պէս Թէ որոց ՚ի լուրջ ըղձան միաբ կամ խորչին, և վասն խառնակելոյ լեզուաց, վասն բնութեան և աւրեւսից գիւտից[6], վասն ժողովոյ ՚ի հրաշանգս վարժից, և վասն՝ Թէ այք լինելոյ են ժառանգաւորք աստուածեղինացն, կամ վասն հաւատոյ և անհաւատոյ բաժնից, և դարձեալ վասն երից առաքինութեանցն, զորոց ընդ այլս գրեաց և Մովսէս։ Այս այսոսիկ և վասն փոփոխման անուանցն՝ որ են ՚ի գիրս, և Թէ վասն էր փոփոխեցան. յորոց վերկուց կատարանացն, զառաջնոյն և վերկրորդէն ինքնին գրեալ վկայէ։ Ի նորա և Ճառ վասն պանդխտութեան և վասն կենաց զգաստից՝ որ ըստ արդարութեան կատարիցի, կամ վասն անգիր օրինաց, դարձեալ և վասն սկզբից, և վասն՝ զի ոչ փոփոխի Աստուած։ Եւ դարձեալ հինգ գիրք վասն այնր, որպէս եղեցին Մովսէս՝ եթէ յԱստուծոյ են երազք։ Այս ամենայն, զոր գրեաց նա ՚ի դպրութեան լինելութեան, հասին առ մեզ։ Իսկ ՚ի դպրութեան նլից՝ հինգ գիրք վասն խօրհրդոյն և լուծանելոյ նոցա. և մի վասն Արան Ժամուն, և վասն տասն պատուիրանացն։ Զորս գիրք դարձեալ վասն օրինացն առհասարակ՝ որ միաբանին ընդ տասն պատուիրանին, և այլ վասն անանունցն որ մնալոցին ՚ի զոհս, և

զի վասն այսորիկ ասացեալ է նորա։ Իբրև զայն խօսս զոր գրեաց ՚ի վերայ նորա, մասց՝ յորժամ զարհնաւ՝ յայլմէտ կայ և անբծանել, և վասն չմոռնելոյ լեզուացն, և վասն փախելոյ բաժանացն, և վասն ժողովոյն որ վասն վարգապետութենէ. և վասն Թէ ով լինելոյ է ժառանգաւորդ աստուածեղինացն. և վասն մեղանչանացն որ արժանին են, և Թէ այք են հակառակ. և դարձեալ վասն երից փառաւորութեանցն որ ընդ այլսն գրեաց վասն նոցա Մովսէս. և վասն փոփոխմանացն դարձեալ անուանցն որ են ՚ի գիրս, և եթէ վասն էր փոփոխեցան. և ՚ի նմին դարձեալ և վասն կատարանացն երկոցունց։ Բայց է նորա և վասն պանդխտութեան, և վասն գնացից խնամանոց՝ որ կատարեցան արդարութեամբ. կամ օրինիք որ ոչ են գրեալ, և դարձեալ վասն սկզբին, և զի ոչ փոփոխի Աստուած. և դարձեալ՝ հինգ են վասն այնր զոր եղեցին Մովսէս՝ որ երկնէին երազքն յԱստուծոյ. այս իսկ ամենայն զոր միանգամ գնացաք մեք, զոր ասաց ՚ի դպրութեանն ծնեալ. զոր նաև վասն երից գնացաք զի ասաց հինգ Ճառս վասն խօրհրդոյն և լուծանելոյն նոցա, և մի վասն Արան Ժամուն և մի վասն տասն պատուիրանին. և յորս վասն որոյ ասացեալ են յօրինս և միաբանին այսմ տասն պատուիրանիս. և վասն անանունցն որ մնալոցին ՚ի նոցանէ պատարագ, և Թէ այք եղեն որ մնալէին ՚ի նոցանէն ՚ի

Թէ քանի ազգ էին զոհից։ Եւ վասն զոր յօրէնս Ե-
գեալ էն բարեացն օրհնութիւն և վարձս, և չարացն
պատիժս պատուհասից և անէծս նզովից։ Հանդերձ
այսոքիւք և մի մի Ճառս վասն տեսչութեան, վասն
Հրէից, վասն քաղաքավար դնողից, վասն Աղէքսան-
դրի, և կամ Թէ իցէ անխօսուն անասնոց բան։ Ընդ
այսոսիկ՝ և վասն զի ծառայ է ամենայն մարդ՝ որ չար
է. և՛ի հակառակին եթէ ամենայն մարդ՝ որ փոյթ
յանձին ունիցի, ազատ է։ Եւ այսոցիկ գրելոյն գՀետ
գայ և գիրն որ զՀայեցողական կենաց կամ զաղօթա-
կան պաշտօնէից, յորմէ առեալ երիցորդեցաք մեք
վասն վարուց առաքելաշնորհ մարդկան։ Եւ մեհնու-
թիւն զանուանցն Հրէայեցւոց՝ որ յօրէնս և՛ի մար-
գարէս, ասի Թէ նորա էն։

Ա.րգ սա յաւուրս Գայիոսի գնացեալ՛ի Հռոմ քա-
զաք, և վասն աստուածատեաց ամբարշտութեանն
նորա գրեալ, և ըստ սովորութեան ժամանակին՛ի
վերայ գրոցն ընդ հենգն՝ վասն առաքինութեանց
գրոյնքը, զոր՛ի գահակալել Կղաւդեայ առաջի հա-
մագումար ծերակուտին Հռոմայեցւոց ընթեռնուլ
զգիրսն պատմեն, և այնպէս հաճոյ լեալ նոցա բանն,
մինչև՛ի հասարակաց մատենադարանս դնել զայն։

Ընդ այն ժամանակս սկսեալ Լերուսաղեմ մինչև

զոհս. և զորս եգեալ էն յօրէնս և բարեացն օրհնութիւնս և
չարեացն պատիժս պատուհասից և զանէծս նզովիցն. և հանդերձ
այսու ամենայնիւ և գիրս զոր եգեալ է նոցա մի մի, իբրև զայն
զորս ասաց նա, վասն Տեսչութեան և վասն Հրէիցն, և վասն վա-
րուց գնացից. և վասն Աղէքսանդրեայ, և Թէ իցէ բան գազանաց
համբից։ Եւ այսու հանդերձ և վասն զի ծառայ ամենայն մարդ
որ չար է, և ամն այսմիկ ամենայն մարդ՝ որ փոյթ յանձին ունի
ազատ է. և այսու հանդերձ այն որ եգեալն է նոցա վասն վա-
րուցն միանձանց, զի՛ի նմանէ երիցորդեցաք մեք վասն վարուց
առաքելոցն. և մեհնութիւնս զանուանցն Հերթայեցւոցն որ են՛ի
մէջ հեթանոսաց յօրէնս և՛ի մարգարէս՝ ասի Թէ նոցա է։ Ա.րգ
սա յաւուրս Գայիոսի իբրև չոգաւ՛ի Հռոմ քաղաք, և գրեաց
վասն չարեացն Գայիոսի. իբրև այսն առնելով գրեաց՛ի վերայ
նորա վասն փառասիրութեանցն ասէ. ասի իսկ Թէ ընթերցաւ
այս գիրս ի մէջ սինգղիտոսին Հռոմայեցւոց յաւուրս
Կղօդեայ, և փառաւորեցաւ և եգաւ նա՛ի տան գանձուս գրոց որ
անդ է։

'ի Լիբիկէ ընայր Պօղոս զքարոզութիւն աւետարանին, և կղաւդիոս հալածէր զՀրեայսն 'ի Հռոմ քաղաքէ։ Իսկ Ակիւղաս և Պրիսկիլլա ընդ այլ Հրեայս ապրեալ 'ի Հռոմէ՝ հասին 'ի կողմանս ասիացւոց, և անդ ընդ Պօղոսի լինէին. որ այն ինչ ուղղեալ անդաստ նօր հաստատէր զեկեղեցիս, զոր և ուսուցանէն այսպէս գիրք Գործոց Առաքելոց։

ԳԼՈՒԽ ԻԄ.

Թէ որպիսի՛ նեղութիւնք հասին ընդ ժողովուրդն Հրէից յաւուրս զատկին։

Եւ մինչդեռ կղաւդիոս վարէր զթագաւորութիւնս, յաւուրս տօնի զատկին եղև խռովութիւն մեծ և յոյզք 'ի մէջ երուսաղէմ, մինչ զի 'ի խռնել անդ ժողովրդեան ընդ էլ և ընդ մուտս տաճարին, երեք բիւրք 'ի Հրէից կոխեցան 'ի միմեանց և սատակեցան, և չքշեցաւ տօնն 'ի սուգ և 'ի տրտմութիւն ամենայն ժողովրդեան, և եղև լալիւն և կոծ յամենայն տունս. և զայս սովին բանիւք գրեմք աւանդ Յովսեպոս։ Իսկ կղաւդիոս՝ զԱգրիպպաս զորդի Ագիպպեայ Թա-

իննևտասներորդ. թէ որպիսի՛ նեղութիւնք հասին ընդ ժողովուրդն Հրէից յաւուրսն զատկաց։

Ընդ այն ժամանակս Պօղոս առաքեալ էլեւ զքարոզութիւն աւետարանին յերուսաղէմ մինչև 'ի Լիբիկիայ։ Իսկ զՀրեայսն հալածեալ կղաւդիոս 'ի Հռոմ քաղաքէ։ Իսկ Ակիւղաս և Պրիսկիլայ ապրեցան 'ի Հռոմ քաղաքէ, և հասին 'ի կողմանս ասիացւոց, և անդ չքնէին նորա ընդ Պօղոսի։ Իբրև ցայն վայր այն ինչ * ուղղեալ էր անդ զեկեղեցիսն և հաստատէր զնոսա, ապա այսր գիրք սուրբք գործոց առաքելոց ցուցանեն։ Եւ մինչդեռ կղաւդիոս վարէր զթագաւորութիւնն, յաւուր մնծի զատկացն եղև խռովութիւն և յոյզք 'ի մէջ երուսաղէմ. և 'ի խռնել անդ ժողովրդեանն ընդ էլ և մուտս տաճարին երեք բիւրք հրէից կոխեցան 'ի միմեանց և սատակեցան. և չքշեցաւ տօնն 'ի սուգ և 'ի տրտմութիւն ամենայն ժողովրդեանն և եղև լալիւք և կոծօք յամենայն տունս. զոյս ինչ ասաց Յովսեպոս։ Իսկ կղաւդիոս չԱգրիպպաս կացոյց Թագաւոր 'ի վերայ Հրէից. իսկ

* Յոր. պ-ի։

գաւօրեցոյց ՚ի վերայ Հրէից [7], և զՓեղիքս գաւառապետ առաքեաց ամենայն աշխարհին Սամարացւոց և Գալիլէացւոց և որ Պերէայն կոչի: Եւ ինքն կացեալ յիշխանութեան իւրում զամն երեքտասան և զամիսս ութ, և թողեալ ՚ի պայազատ տէրութեան զՆերոն՝ և մեռաւ:

ԳԼՈՒԽ Ի.

Որ ինչ միանգամ գործ գործեցան ՚ի մէջ Երուսաղէմի յաւուրս Ներոնի:

Իսկ յաւուրս Ներոնի մինչդեռ Փեղիքս գաւառապետ էր ՚ի վերայ Հրէաստանի, պատմէ դարձեալ Յովսեպոս ՚ի քառներորդ գիրս Հնախօսութեան իւրում վասն հակառակութեանց և խռովութեանցն՝ որ եղեն քահանայիցն առ միմեանս՝ օրինակ զայս. Բոլորբերեցաւ, ասէ, հակառակութիւն քահանայապետիցն առ քահանայս և առ գլխաւորս ժողովրդեանն Երուսաղէմի. և մի մի ՚ի նոցանէ արար իւր գունդ

զՓեղիքս առաքեաց գաւառապետ ամենայն աշխարհին չամրատացուց և գալիլէացւոց, և աշխարհին որ անուանեալ կոչի Երեքբեայ [*] այլ երրորդ առաջնորդեաց նա ՚ի թագաւորութեանն զերեքտասան ամ և զութ ամիս՝ եթող զնոսին իւր ՚ի վերայ իշխանութեան իւրոյ զՆերոն և մեռաւ:

Քառներորդ. որ ինչ միանգամ գործ գործեցան ՚ի մէջ Երուսաղէմի յաւուրս Ներոնեայ:

Իսկ յաւուրս Ներոնեայ ՚ի ժամանակի մինչդեռ Փեղիքս գաւառապետ էր ՚ի վերայ հրէաստանի, գարձեալ պատմէ Յովսեպոս վասն հակառակութեանցն և խռովութեանցն՝ որ եղեն քահանայիցն առ միմեանս. և գրեաց այսպէս ՚ի պատմութիւնս իւր. Տղայոցեաւ, ասէ, հակառակութիւն քահանայապետիցն առ քահանայսն, և առ գլուխս ժողովրդեանն Երուսաղէմի և ամենեքին մի մի ՚ի նոցանէն արար իւր գունդ մարդկան՝ ժայռրչս և խառ-

[*] Երեքբեայ կամ որպէս այլուր ասէ զայն Թագաւորութիւն Եբերայ, է կոչեցեալ ՚ի տուրբ դիրս՝ Յորդանան Տետրաքսնոս (Մատթ. Գ. 23, Մրկ. Գ. 8. Թիւք ԼԲ. 19 և այլն). զի արդարև և բաւն Եբրայ և Եբրայեցի՝ նշանակէ անցք կամ յորդեալ կացեալ: Բայց յայն բնագիրն Լատեալայ ասէ Պերէա:

մարդկան, ժպիրչս և խռովիչս, և եղև ինքն ի վերայ նոցա գլուխ և առաջնորդ, և զոտային ընդ միմեանս և բանս հայհոյութեան ի վերայ միմեանց խօսէին և ձգէին քարինս, և որ սաստէր ի նոսա ոչ գոյր ի միջն. այլ երբև ի քաղաք մի որոյ ոչ գուցէ առաջնորդ, ժպրհուԹեամբ գործէին։ Երբև յայսպիսի մոլորուԹիւն յանդգնուԹեան եկին հասին քահանայապետքն՝ որպէս զի և զծառայս իւրեանց յղէին ի կալս և առնուին բռնիւ տասանորդս՝ որ անկին էր քահանայից։ Եւ դեպ լինէր զի չբաւորք ի քահանայից առ կաթոլուԹեան ի սուրբ մեռանէին։ Եւ այսպէս զօրացեալ յօրանայր բռնուԹիւն խռովչացն քան զարժանն ամենայն։ Եւ դարձեալ նոյն օրինակագիր պատմէ, եթէ. Ընդ այն ժամանակս երևեցաւ ի մէջ երուսաղէմի գունդ մարդկան ըստ օրինակի աւազակաց՝ զի ի տուէ ի քաղաքամիջն անդ կոտորէին՝ որ միանգամ ընդ առաջ որ լինէր նոցա. մանաւանդ ի տօնս տարբերկանայ խառնէին ընդ ժողովուրդս, և Թաքուցանէին զսուսերս իւրեանց ի ներքոյ հանդերձիցն, և նոքոք խոցոտէին զմարդիկն՝ որ գլխաւորք երևելիքն էին։ Եւ յանկանել նոցա մեռեալ, ի կողմանէ նոցին լինէին որք ի վերայ սպանողացն բարկանային. և վասն

վէչս, և եղև ինքն ի վերայ նոցա գլուխ և առաջնորդ։ Եւ իբրև զոտային ընդ միմեանս, խօսէին բանս չարաչարս հայհոյութեանց ի վերայ միմեանց և ձգէին քարինս միմեանց, և որ սաստէր ի նոսա ոչ գոյր ի միջի. այլ երբև քաղաք մի զի ոչ գուցէ նորա առաջնորդ։ Ապա ի չարն եղև ի նմա համաձայնակամութեամբ, իբրև յայսպիսի մոլորութիւն յանդգնութեան եկին հասին քահանայապետքն, որպէս զի և զծառայս իւրեանց յղէին ի կալս, և առնուին բռնիւ տասանորդս որ առնէր քահանայիցն. և դեպ լինէր զի տանէր՝ որ զքահանայն զի ի սուրբ մեռանէին առ կաթոլուԹեան. և այսպէս զօրացեալ բռնանայր բռնութիւն խռովչացն զարժանն ամենայն։ Եւ դարձեալ ինքն օրինակագիրն պատմէ, եԹէ ընդ այն ժամանակս երևեցաւ ի մէջ երուսաղէմի ըստ օրինակի աւազակաց, զի ի տուէ ի քաղաքի միջի կոտորէին որ միանգամ ընդ առաջ որ լինէր նոցա. մանաւանդ ի տօնս տարբերկանայ խառնէին ընդ ժողովուրդն, և Թաքուցանէին զսուսերս իւրեանց ի ներքոյ հանդերձիցն, և նոքոք խոցոտէին զմարդիկն որ գլխաւորք երևելիքք էին։ Եւ յորժամ գլորէին՝ լինէին նոքա յայնմ կողմանէ որք ի վերայ սպանողացն բարկանային, և վասն

* Թուի ընթեռնուլ՝ չէ տեսանէ ...

արժանաչաւատ լինելոյն, ՚ի ծածուկ մնային նոքա ընդ երկար։ Նախ իսկ զառաջինն սպանաւ ՚ի նոցանէ Յուլիանէ քահանայապետ. և զկնի նորա Հանապազ զոր կոտորեալ լինէին բազումք։ Զար իսկ երկիւղն քան զաղէտս չարեացն, զի յամենայն ժամու իբրև ՚ի պատերազմի ամենայն մարդ սպասեալ ակն ունէր մահու իւրոյ։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Վասն Եգիպտացւոյն՝ որ ՚ի Գորտս Աւաքևոց յիշատակի։

Յետ այսորիկ ընդ այլ յաւել Յովսեպոս և զայս պատմել, եթէ Հարուածովք մեծ քան զայսոսիկ չարչարեաց զՀրեայսն այր մի Եգիպտացի սուտ մարգարէ։ Զի եկն ՚ի կողմանս մեր այրս այս կախարդ, որ զՀաւատս մարգարէի յանձն իւր առեալ մոլորեցոյց զնի իւր իբրև զերիս բիւրս մարդկան, և շրջեցուցեալ ըզնոսա ընդ անապատն Հած ՚ի լեառն՝ որ անուանեալ կոչի ձիթենեաց, և իբրև կամէր նա մտանել անտի

պարտացան նոցա ոչ լինելին նոքա երևեալ՝ թէ ով ոք իցէ։ Նախ իսկ զառաջինն սպանաւ Յուլիանէ քահանայապետ, և զկնի նոքա Հանապազօր կոտորեալ լինէին բազումք. չար իսկ էր երկիւղն քան զնոյն չարչարանսն, զի յամենայն ժամու իբրև ՚ի պատերազմի ամենայն մարդ սպասեալ ակն ունէր մահու իւրոյ։

Գիտաւելորդ առասպելորդ. վասն եգիպտացւոյն՝ այն որ և ՚ի գործս առաքելոցն յիշատակեն զնմանեն։

Յետ այսորիկ Հանդերձ այլովք՝ ասաց և զայս Յովսեպոս, եթէ Հարուածովք, ասէ, որ մեծ ևս է քան զայս՝ չարչարեաց զՀրեայսն այր մի եգիպտացի սուտ մարգարէ։ Զի եկն նա ՚ի Գորասոն այս մոլորեցուչիչս և. եգ ՚ի վերայ իւր զանուն մարգարէի. և ժողովեաց առ ինքն իբրև երիք բիւր մարդիկ որ մոլորեցան զկնի նորա։ Իբրև շրջեցոյց զնոսա յանապատ՝ Հած զնոսա ՚ի լեառն որ*

* ՚ի Գորասոն՝ միւս օրինակն ունի ՚ի Գորդոն, զոր թէ ընթեռնուցուք ՚ի Գորդոն՝ նշանակէ ըստ յոյն ձայնին ՚ի վեր, ՚ի դէպն։

բռնաբար Յերուսաղէմ, և վանեալ զպահապանս Հռոմոց բռնակալել վաեղոլքն որ էին ընդ նմա, յաոաջագոյն զառաջս էառ յանդուգն ժպրհութեան նորա փեղիքս, եւ ընդդէմ նորա զօրօք հզաւմայեցուք. ձեռն էառ նմա և ամենայն ժողովուրդն 'ի փրկութիւն հայրենեաց, և 'ի խառնել մարտին փախեաւ Եգիպտացին սակաւուք, բայց ըմբռնեալ սատակեցան բազմաւք յայնցանէ՝ որք էին ընդ նմա. զայս այսպէս պատմէ Յովսեպոս յերկրորդ պատմութեան իւրում. բայց արժան է մեզ կշռել զայս՝ որ ասացաւս վասն Եգիպտացւոյն այնորիկ ընդ այնոսիկ՝ որ 'ի Գործս Առաքելոցն ասացան, յորժամ առ Փեղիքսի գուժեր ամբաստանութեամբ ժողովուրդն Հրէից ընդդէմ Պօղոսի Յերուսաղէմ, մատուցեալ հազարապետն ասէր ցՊօղոս. Մի արդեօք դու իցես Եգիպտացին որ յառաջ քան զայս աւուրս ապստամբեցուցեր և հաներ յանապատ չորս հազար արս սիկարեանս: Եւ այս եղև 'ի ժամանակս Փեղիքսի:

անուանեալ կոչի Աիթենեաց, և անտի բռնաբար կամեցաւ նա մըտանել Յերուսաղէմ. և իբրև ըմբռնեաց նա զպահապանսն Հռոմոց, և 'ի ժողովրդենէ անտի յանդգնութեամբ գայր նա հանդերձ վաեղոլքն որ էին ընդ նմա: Բայց յառաջագոյն գնպարտութիւնն ամբաստանութեան նորա Փեղիքս. զի ընդ յառաջ եղ նորա վաեղալ Հռոմովք, և յամենայն ժողովրդենէ անտի խառնեցան ընդ նոսա վասն վերծուն խնդրելոյ. և իբրև սատակացաւ մարտ պատերազմին՝ փախեաւ եգիպտացին սակաւուք. բայց ըմբռնեցան բազումք և սատակեցան 'ի յայնցանէ որ ընդ նմա էին: Զայս ասաց Յովսեպոս 'ի յերկրորդ պատմութեան անդ: Բայց արժան է մեզ կշռել զայս որ ասացեալ են ասա վասն եգիպտացւոյն այնորիկ ընդ այնոսիկ որ ասացեալ են 'ի Գործս առաքելոցն զոր ասաց հազարապետն ցՊօղոս, 'ի ժամանակի իբրև գուժեին 'ի վերայ նորա ժողովքն Հրէից 'ի մէջ Յերուսաղէմ, 'ի ժամանական Փեղիքսոյ. Եթէ ոչ գուցե ես, ասէ, այն եգիպտացի որ յառաջ քան զայս աւուրս՝ խռովեաց և եհան յանապատ երեք հազար մարդիկ չորագործս: Այս ինչ եղև 'ի ժամանակս Փեղիքսեայ:

ԳԼՈՒԽ ԻԲ.

Թէ ո՛րպէս առաքեցաւ ՚ի Հրէաստանէ ՚ի Հռոմ քաղաք Պօղոս կապաւեօք, և պատասխանի արա-
րեալ ամբաստանուողեանցն արձակեցաւ ազատ։

Փոխանակ Փելիքսեայ առաքեցաւ ՚ի Ներոնէ Փեստոս, որոյ առաջի վարելով զդատ իւր Պօղոս՝ առաքեցաւ ՚ի Հռոմ քաղաք կապանօք։ Եւ էր ընդ Ագրիպպէայս Արիստարքոս՝ զոր իրաւամբ գերեկից իւր կոչէ Նա։ Եւ Ղուկաս՝ որ զԿործս Առաքելոց գրեաց, յայսմիկ վախճան արար իւրոյ պատմութեանն յասել իւրում վասն Պօղոսի, եթէ եղև նա գերկեամ մի արձակեալ ՚ի կապանաց իւրոց. և անխափան քարոզէր անդ զբանն Աստուծոյ։ Չի չէտ պատասխանատուութեան իւրոյ յատենի դատաւորաց աւանդէն՝ գնացեալ Առաքելոյս միւսանգամ ՚ի պաշտօն քարոզութեան, և երկիցս դարձ արարեալ ՚ի քաղաքն և ապա կատարեալ վկայութեամբ։ Չի մինչդեռ յայս կապանս էր գրեաց առ Տիմոթէոս զԹուղթ իւր երկրորդ, յորում

Բանաձևորդ երկրորդ. Երբ ո՛րպէս առաքեցաւ ՚ի Հրէաստանէ ՚ի Հռոմ քաղաք Պօղոս կապաւեօք։ Եւ իբրև արար նա զպատասխանիսն արձակեցաւ նա յամենայն բամբասանաց։

Առաքեցաւ ՚ի Ներոնէ Փեստոս ՚ի տեղի Փելիքսեայ. և իբրև ասաց զդատաստանն Պօղոս՝ առաքեցաւ ՚ի Հռոմ քաղաք կապանօք։ Բայց էր ընդ Պօղոսի Արիստարքոս՝ այն որ վասն այսորիկ կոչէ զնա գերեկից իւր, և Ղուկաս որ գրեաց զԿործս առաքելոցն։ յայսմիկ միաբան պատմութիւնն նորա յասելն իւրում վասն Պօղոսի, զի եղև գերկու ամ ՚ի Հռոմ քաղաքի։ զի արձակեալ էր ՚ի կապանաց իւրոց, և անխափան քարոզէր անդ զբանն Աստուծոյ։ Բայց ասի վասն նորին առաքելոյն, եթէ ՚ի ժամանակի իրրև սկսան նա զպատասխանին վասն անձին իւրոյ, յայնմ ժամանակի չոգաւ նա դարձեալ միւսանգամ ՚ի պաշտօն քարոզութեան։ Այլ իբրև եկն նա երկիցս անգամ ՚ի քաղաք անդր՝ ապա կատարեցաւ նա վկայութեամբն. զի մինչդեռ անդէն կապեալ էր նա գրեաց առ Տիմոթէոս զԹուղթն երկրորդ, որ ՚ի նմա ելոյց և վասն առաջին պատասխանւոյն որ եղև նմա և կատարման իւրոյ. որ չէտ այսր

Նշանակէ նա զառաջին գլուխ պատասխանատուութիւն և մեծ առ դուրս գկատարումն։ Եւ ընկալ քեզ զասացեալս ամենայնի գնորա վկայութիւն։ Յառաջնում առէնին, ասէ, ոչ որ ինձ՝ ի թիկունս եկաց, այլ ամենեքին թողին գիս, մի համարեսցի նոցա այն, այլ Տէր օգնեաց ինձ և զօրացոյց գիս, զի ինձ քարոզութիւն հաստատեսցի և լուիցեն ամենայն հեթանոսք. և ապրեցայ ես՝ ի բերանոյ առիւծուն։ Որով չատիկ յայտ առնէ, եթէ վասն զի կատարեսցի քարոզութիւն նորա՝ ապրեցաւ՝ ի բերանոյ առիւծուն, զնեբոն ուրեմն բանիւս ակնարկեալ վասն անագորոյն մեռանելոյն։ Եւ յետ այնորիկ ոչ նմանագոյնս ինչ՝ ի նոյն յարէ. եթէ ապրեցուսցէ գիս՝ ի բերանոյ առիւծուն, վասն զի ետես հոգւով եթէ չէ եր հասեալ տակաւին ժամանակ կատարածի նորա՝ վասն որոյ յարէ՝ ի նոյն եթէ ապրեցայ ես՝ ի բերանոյ առիւծուն, և թէ փրկեսցէ գիս Տէր յամենայն գործոց չարաց և զերծուսցէ գիս յարքայութիւնն իւր։ Ոյի ցուցցէ մեծ առ դուրս զվկայութիւնն, զոր յայտնագոյնս՝ ի սմին իսկ թղթի կանուխ ասացեալ էր եթէ. Ես արդ այսուհետև նուիրեալ եմ, ժամանակ գարձի իմոյ հասեալ կայ։ Յայսմիկ յերկրորդում թղթի ասէ՝ զոր առ Տիմոթէոս գրէ, ցուցանէ թէ Ղուկաս միայն էր ընդ

ընկալ այսուհետև վասն այդ վկայութեանդ նորա զոր ասաց, եթէ՝ ի սալ պատասխանւոյն իմոյ ասէ՝ յառաջին նուագի անգ առ ոչ որ յերդարձս գիսկեցաւ առ իս, այլ ամենեքին թողին գիս. մի համարեսցին նոցա այս մեղք. բայց ինձ տէր օգնական էր և զօրացոյց գիս, զի ինձ քարոզութիւնն կատարեսցի, և լուիցեն ամենայն հեթանոսք՝ զի ապրեցայ ես՝ ի բերանոյ առիւծու. յայսհետև խոկ ցուցանէ այսոքիւք, եթէ յայն յառաջին առնէ անգ վասն զի կատարեսցի քարոզութիւն նորա՝ ապրեցաւ՝ ի բերանոյ առիւծու. այսինքն՝ ի Ներոնեայ. զի գնա անուանէ առիւծ վասն խստութեան բարկութեան նորա, և վասն զի էանս նա հոգւով զի գայն ժամանակս չէ եր հասեալ ժամանակ կատարածի նորա. յարեաց գայն՝ զի ասէ եթէ ապրեցայ ես՝ ի բերանոյ առիւծու. զի փրկեսցէ գիս յամենայն գործոց չարութենէ, և հասուսցէ յերկրորդ գալուստն անգր որ յերկինս է. զի ցուցցէ վասն վկայութեան իւրոյ՝ այն որ զինի նորա լինելոց էր, այն զի յայտնագոյն ասէ վասն նորա ասելն՝ ի սմին թղթի, եթէ ես արդ այսուհետև ասէ նուիրեալ եմ. և ժամանակ իմոյ գարձի հասեալ կայ։ Յայսմիկ յերկրորդում թղթի ասա, զոր առ Տիմ

նմա. իսկ յառաջնում առնի անդ և ոչ սա։ Վասն որոյ կարի իսկ Հաւանագոյն Ղուկաս զԳործոց Առաքելոց զպատմութիւնն գրեաց ցորչափ ընդ Պօղոսի էր՝ զդէպսն բովանդակելով։ Ցայս ասացաք, զի ցուցցուք եթէ ոչ յայնմ ժամանակի զոր Ղուկան գրեաց զերթաւն Պօղոսի ՚ի Հռոմ քաղաք, եղև կատարած վկայութեան նորա։ Եւ զի ՚ի դէպ յոյժ Ներսէսի ՚ի սկզբան անդ զգօնագոյնս վարելով՝ մարդասիրապէս ունկն մատուցեալ պատասխանատուութեան Պօղոսի ՚ի քառագոլութիւն վարդապետութեան կրճնից, այլ իբրև զօրացաւ ՚ի ժպրհութեան խրատ՝ հանդերձ այլովք չարեօք՝ համարձակեցաւ նա և ՚ի վերայ Առաքելոցն։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Թէ ո՛րպէս վկայեաց Յակովբոս, այն որ անուշաւ նահատակ կոչեր եղբայր Տեառն։

Իսկ Հրէայքն՝ իբրև բողոք կալաւ Պօղոս ՚ի կայսրն և առաքեցաւ ՚ի Փեստոսէ ՚ի Հռոմ քաղաք, տեսեալ զի անկան ՚ի նենգաւոր խորհրդոց անտի զոր

Թէպս իբրև գրեաց, ցուցանէ Թէ Ղուկաս միայն էր ընդ նմա իսկ յառաջնումն առնէին անդ. և մինչև ցայն ժամանակ որ եղև ընդ Պօղոսի՝ բովանդակեաց զպատմութիւն նորա։ Ցայց զայս զոր ասացաք, զի ցուցցուք եթէ ոչ յայնմ ժամանակի զոր Ղուկան գրեաց զերթաւն Պօղոսի ՚ի Հռոմ քաղաք՝ եղև կատարած վկայութեան նորա։ Ցայց Թուի եթէ ՚ի սկզբան անդ չէր խատուբեամբ Ներսէս առ այս աշակերտութիւն, և վասն այսորիկ գիրս ընկալաւ զառաջին առեանն Պօղոսի. այլ իբրև զօրացաւ ՚ի ժպրհութեան խրատ հանդերձ այլովք չարեօք համարձակեցաւ նա ՚ի վերայ առաքելոցն։

Քահանայապետ երրորդ. թէ որպէս վկայեաց Յակովբոս՝ այն որ անուշանալի կոչեր եղբայր տեառն մեծոյ։

Իսկ Հրէայքն ՚ի ժամանակի իբրև կալաւ Պօղոս բողոք ՚ի կայսր և առաքեցաւ ՚ի Հռոմ քաղաք ՚ի Փեստոսէ, և իբրև անկան նոքա ՚ի նենգաւոր խորհրդոց անտի զոր խորհէին, գտնան

խորհեին, զարձան ի վերայ Յակովբոս եղբօր Տեառն, այն որ ընկալաւ յԱռաքելոց անտի զաթոռ եպիսկոպոսութեան Երուսաղէմի։ Եւ ժպրհութիւն համարձակութեան նոցա ընդդէմ Աստուածոյ եղև այսպէս, ածին կացուցին զնա ի մէջ, և կամէին թէ ուրասցի նա ի հաւատոց անտի Քրիստոսի առաջի ամենայն ժողովրդեանն։ Իսկ նա արտաքոյ ակնկալութեան և սպասելոյ ամենեցուն՝ ի ձայն բարձր առաջի ամենայն ժողովրդեան մեծաւ համարձակութեամբ խոստովան եղև որպէս լինել Աստուծոյ զՔրիստն մեր և զՏէր յիսուս Քրիստոս։ Եւ իբրև ոչ կարացին համբերել վկայութեան նորա, քանզի ամենայն մարդոյ հաւատարիմ էր վասն զգաստութեան վարուց նորա և աստուածպաշտութեան, սպանին զնա համարձակեալ ի ժամանակի անիշխանութեան։ Զի ընդ այն ժամանակս մեռեալ էր Փեստոս ի Հրէաստանի, և առանց գլխոյ և առաջնորդի էր տեսչութիւն աշխարհին։ Բայց օրինակ կատարման Յակովբոս և յառաջ քան զայժմ կանխեցաք ցուցաք մեք ի բանից անտի Կղեմեայ, զի յաշտարակէ անտի տաճարին ընկեցին զնա, և ձաղկաւ Հարաւ ի մահ։ Ա՛լ Ճշգրտագոյնս վասն նորա Հեգեսիպպոս՝ որ մօտ ի ժամանակս Առաքելոց

նոքա ի վերայ Յակովբոս եղբօր տեառն մերոյ, այն որ ընկալաւ յառաքելոց անտի զաթոռ եպիսկոպոսութեան Երուսաղէմի։ Բայց ժպրհութիւն համարձակութեան նոցա որ ի վերայ նոցա էր՝ այսպէս եղև. ածին զնա ի մէջ և կամէին թէ ուրասցի նա ի հաւատոց անտի Քրիստոսի առաջի ամենայն ժողովրդեանն։ Իսկ նա արտաքոյ կանոնաց և սպասելոյ ամենեցուն՝ ի ձայն բարձր բարբառով համարձակութեամբ առաջի ամենայն ժողովրդեանն խոստովան եղև զանուն որդւոյն Աստուծոյ Փրկչի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Եւ իբրև ոչ կարացին համբերել վկայութեան նորա, քանզի ամենայն մարդոյ հաւատարիմ էր թէ արդարև է նա վասն կատարման վարուց նորա և խնամատարութեանն և աստուածպաշտութեանն որ էին։ Գոհն իւրեանց ժամանակ իշխանութեան՝ զի ոչ գոյր նոցա առաջնորդ։ Քանզի ընդ այն ժամանակ մեռեալ էր Փեստոս ի հրէաստանի, և առանց գլխոյ և առաջնորդի էր տեսչութիւն հրէաստանի։ Բայց օրինակ կատարման Յակովբոս և յառաջ քան զայժմ կանխեցաք ցուցաք մեք ի պատմութենէ անտի բանիցն Կղեմենտայ, զի յաշտարակէ անտի տաճարին ընկեցին զնա, և ձաղկաւ Հարաւ ի մահ։ Ճշգրտագոյնս վասն նորա ի հինգերորդ պատմութեան իւրում. եթէ Նա՝ ասէ՝ ընկալաւ զառաքելոյն յառաքելոց անտի. և

Եկաց, ՚ի հինգերորդ գիրս յիշատակարանաց իւրոց պատմէ բանիւքս. Ընկալաւ զտեսչութիւն եկեղեցւոյ միանգամայն ընդ Աւաքեայն Յակովբոս եղբայր Տեառն, այն որ արդարն անուանեալ էր յամենայն մարդոյ՝ յաւուրց անտի Տեառն մերոյ մինչև առ մեզ. քանզի բազմաց անուն էր Յակոբոս: Իսկ սա յորովայնէ մօր իւրոյ սուրբ էր, և գինի և օղի ոչ էարբե, և ինչ յորում է շունչ՝ նա ոչ եկեր, և սրբիչ ՚ի գլուխ նորա ոչ եղ, և իւղով նա ոչ օծաւ, և ՚ի բաղանիս նա ոչ եմուտ: Սա միայն իշխէր ՚ի սուրբն սրբոյ մտանել, և ոչ հանդերձ ասուեայ զգենոյր, այլ կտաւի, և միայն առանձին մտանէր ՚ի տաճարն, և գտանէին զնա զի եդեալ էր ծունր և խնդրէր Թողութիւն փոխանակ ժողովրդեանն, մինչ զի խստացան ծունկք նորա իբրև զուղտու, քանզի հանապազօր ծունր դնէր և երկիր պագանէր Աստուծոյ և Թողութիւն խնդրէր վասն ժողովրդեանն: Վասն առաւել արդարութեան իւրոյ անուանեալ կոչէր նա արդար, և պատիսպ ժողովրդեան արդարութիւն նորա. որպէս և մարգարէքն կանխաւ ծանուցին զնմանէ: Ոմանք արդ յեղեն աղանդոցն՝ որ էին ՚ի ժողովրդեանն, զորոց կանուխ յիշատակեցաք յառաջին գրութիւնս մեր, հարցանէին զնա, Թէ որ է դուռն Յիսուսի: Իսկ նա

պատմէ զնմանէն այսպէս. Եթէ ընկալաւ՝ ասէ՝ զեկեղեցի յառաքելոց անտի Յակովբոս եղբայր տեառն մերոյ, այն որ արդարն անուանեալ էր յամենայն մարդոյ, յաւուրց անտի տեառն մերոյ մինչև առ մեզ. քանզի բազմաց անուն էր Յակովբոս: Իսկ այս յորովայնի մօր իւրոյ սուրբ էր, և գինի և ողի նա ոչ էարբե, և ինչ յորում շունչ է, նա ոչ եկեր, և սրբիչ ՚ի գլուխ նորա ոչ էլ և իւղով նա ոչ օծաւ, և ՚ի բաղանիս նա ոչ եմուտ: Սա միայն իշխէր ՚ի սուրբն սրբոյ մտանել և ոչ հանդերձ ասուեայ զգենոյր նա, այլ ցխոխս. և միայն առանձին մտանէր ՚ի տաճարն. և գտանէին զնա զի եդեալ էր ծունր և խնդրէր Թողութիւն փոխանակ ժողովրդեանն. մինչ զի խստացան ծունկք նորա իբրև զուղտուց. քանզի հանապազօր ծունր դնէր և երկիր պագանէր Աստուծոյ և Թողութիւն խնդրէր վասն ժողովրդեանն: Վասն առաւել արդարութեան նորա. որպէս և մարգարէքն տեսին զնմանէ: Արդ մարդիկ յայսց ետեղն ազանդոյս որ էին ՚ի մէջ ժողովրդեանն՝ զորոց կանխեցաք ասացեալ վասն նոցա. այսու պատմութեամբ հարցանէին զնա եթէ որ է դուռն Յիսուսի: Իսկ նա

ասէ, Թէ նա է Փրկիչ. յորոց և բազումք հաւատացին եթէ Յիսուս նա ինքն է Քրիստոս։ Այդ յիշատակեալ աղանդքս, ոչ հաւատային, ոչ Թէ յարեաւ նա ի մեռելոց, և ոչ Թէ գալոց է նա հատուցանել մարդոյ ըստ գործս իւր, և որք հաւատացինն վասն Յակովբոս հաւատացին։ Եւ ի հաւատալ բազմաց յիշխանաց ժողովրդեանն, եղև ամբոխ խռովութեան Հրէից և դպրաց և փարիսեցւոց, զի ասէին Թէ նեղի ամենայն ժողովուրդն ի սպասել Յիսուսի Քրիստոսի։ Ժողովեցան և ասեն ցՅակովբ. Աղաչեմք զքեզ, Տէր, արգել զժողովուրդդ, զի աշխատասիկ մոլորեալ են զՏէրն Յիսուսի ուրուն. Թէ նա իցէ Քրիստոս։ Խրճ գրեմք ի քէն, Համձեա հաւանեցայ զամենեսեան՝ որ միանգամ եկեալ են ի ծոն գառիկս վասն Յիսուսի, զի ամենեքեան անսամք քեզ, զի մեք խակ վկայեմք քեզ և ամենայն ժողովուրդս եթէ արդար ես, և անկն առնուլ դու ումեք ոչ գիտես։ արդ հաճեաց և հաւանեցո զժողովուրդս զայս, զի մի մոլորեսցին վասն Յիսուսի. զի ամենայն ժողովուրդդ և մեք ամենեքեան յանձն առեալ հաւանիմք քեզ։ Այդ եղ կաց դու ի վերայ աշտարակի տաճարին, զի եղիցիս դու երևելի ի վերուստ, և եղիցին բանք քո լսելի ա-

ասէ ցնոսա, եթէ նա է Փրկիչ։ Եւ ի նոցանէ բազումք հաւատացին եթէ Յիսուս նա ինքն է Քրիստոս։ Այս ազանդք զորմէ կանխեցաք առացեալ ոչ հաւատացին և ոչ եթէ յարեաւ նա ի մեռելոց, և ոչ Թէ գալոց է նա հատուցանել ամենայն մարդոյ ըստ գործս իւր։ Եւ որք հաւատացինն, վասն Յակոբոս հաւատացին. այլ Թէպէտ և բազումք յիշխանաց անտի ժողովրդեանն հաւատացին, սակայն ամբոխ յոյժ էր Հրէիցն և դպրացն և փարիսեցւոցն, զի ասէին նեղի ամենայն ժողովուրդս ի սպասել Յիսուսի Քրիստոսի։ Ժողովեցան և ասեն ցՅակովբ. Աղաչեմք զքեզ, արգել զժողովուրդդ, զի աշխատասիկ մոլորեալ են առ Յիսուս ամենեսեան որ միանգամ եկեալ են ի ծոն գառիկս վասն Յիսուսի. զի ամենեքեան անսամք քեզ, զի մեք խակ վկայեմք քեզ և ամենայն ժողովուրդս, եթէ արդար ես և անկն առնուլ դու ումեք ոչ գիտես. արդ դու հաճեաւ հաւանեցո զժողովուրդս զայս, զի մի մոլորեսցին վասն Յիսուսի. զի ամենայն ժողովուրդդ և մեք ամենեքեան յանձն առեալ հաւանիմք քեզ. արդ եղ կաց դու ի վերայ աշտարակի տաճարին, զի եղիցիս դու երևելի ի վերուստ, և եղիցին բանք քո լսելի ամենայն ժողովրդեանն առհասարակ. զի

մինայն ժողովրդեան առ Հասարակ, զի վասն զատկին եկեալ էին ամենայն տոհմքն և հեթանոսք ընդ նոսա։ Հանին կացուցին զնա դպիրքն և փարիսեցիք ՚ի վերայ աշտարակի տաճարին, աղաղակեցին և ասեն ցնա. Դու որ արդարդ ես, որում պարտ է մեզ ամենեցուն հաւանել, որովհետև ժողովուրդդ մոլորեալ է զկնի Յիսուսի խաչելոյն, ասա մեզ՝ ո՛ր դուն է Յիսուս խաչելոյն։ Պատասխանի ետ նա ՚ի ձայն բարձր բարբառոյ և ասէ. Ձի՞ հարցանէք զիս վասն Որդւոյ մարդոյ. և նա աւանիկ նստի յերկինս ընդ աջմէ զօրութեան մեծի, և հանդերձեալ է նա գալ ընդ ամպս երկնից։ Եւ իբրև բազումք հաստատեցան և փառաւոր առնէին վասն վկայութեանն Յակովբու և ասէին՝ Օրհնութիւն որդւոյ Դաւթի. յայնժամ դարձեալ առ միմեանս դպիրքն և փարիսեցիք ասէին. Զաբիս գործեցաք, զի տուաք տալ Յիսուսի զայսպիսի վկայութիւնս. այլ ելցուք և ընկեցցուք զնա անտի, զի երկիցեն և ոչ հաւատասցեն նմա։ Աղաղակեցին և ասեն. ո՜հ ո՜հ մոլորեցաւ արդարն. և կատարեցին նոքա զայն ինչ որ գրեալ է յԵսայեայ մարգարէէ, զի ասէ. Սատակեցցուք զարդարն զի դժպհի եղև մեզ, վասն այսորիկ զարդիւնս գործոց իւրեանց կերիցեն։ Ելին ապա և արկին վերուստ ՚ի վայր զարդարն, և ա-

վասն զատկին եկեալ էին ամենայն տոհմքն և հեթանոսք ընդ նոսա։ Հանին կացուցին զնա այնուհետև դպիրքն և փարիսեցիքն ՚ի վերայ աշտարակի տաճարին, աղաղակեցին և ասեն ցնա. Արդ՝ քեզ պարտ և պատշաճ է մեզ ամենեցուն հաւանել և յանձն առնել, զի մոլորեալ է զկնի Յիսուսի՝ այն որ խաչեցաւն. ասա մեզ՝ թէ ո՛ր դուն է Յիսուս։ Պատասխանի ետ ՚ի ձայն բարձր բարբառոյ և ասէ. Ձի՞ հարցանէք զիս զորդի վասն որդւոյ մարդոյ, և նա աւանիկ նստի յերկինս ընդ աջմէ զօրութեանն մեծի, և հանդերձեալ է նա գալ ընդ ամպս երկնից։ Եւ իբրև բազումք հաստատեցան և փառաւոր առնէին վասն վկայութեանն Յակովբու և ասէին. Օրհնութիւն որդւոյ Դաւթի, յայնժամ դպիրքն և փարիսեցիքն ասէին առ միմեանս. Զարիս գործեցաք, զի տուաք տալ Յիսուսի զայսպիսի վկայութիւնս. այլ ելցուք և ընկեցցուք զնա անտի, զի երկիցեն և ոչ հաւատասցեն նմա։ Աղաղակեցին և ասեն. Ո՜հ, ո՜հ, արդարն մոլորեցաւ։ Եւ կատարեցին նոքա զայն ինչ՝ որ գրեալ է յԵսայեայ մարգարէ՝ զի ասէ. Սատակեցցուք զարդարն՝ զի դժպհի եղև մեզ. վասն այսորիկ զբաս գործոց ձեռաց իւրեանց վայելեսցեն։ Ելին այնուհետև և արկին վերուստ

սէին ցմիմեանս քարկոծեացուք զՅակովբ արդար. և սկսան քարկոծել, քանզի յանկանէն նա ոչ մեռաւ, այլ շրջեցաւ և ծուխը եդ և ասէ. Թողեա՛ զ'ի քէն, Տէր Աստուած Հայր, Թող զոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն: Եւ մինչդեռ նոքա քարկոծէին՝ մի ոմն ի քահանայից անտի յորդւոց Հաւաբաբու՝ Հաւաբաբիմանց անտի, զորոց վկայէ Երեմիա մարգարէ, աղաղակեաց և ասէ. Դադարեցէք, զինչ գործէք, յաղօթս կայ ի վերայ ձեր աւադիկ արդարդ: Եւ մի ի նոցանէ ընձաղաւ, էառ ի ձախիւն միջէ զտափանն, որով զՀանդերձեան տափէր, և եհար զգլուխ արդարոյն: Եւ այսպէս վկայեաց նա, և ձադեցին զնա անդէն ի տեղ ւօղն. և մինչև ցայսօր ժամանակի շիրիմ նորա կայ առ կողմ տաճարին: Վկայ ճշմարիտ եղև նա Հրէից և հեթանոսաց, եթէ Ցիսուս, նա ինքն է Քրիստոս: Եւ յետ ոչ բազմից էառ Վեսպասիանոս պատերազմաւ զՀրէաստան և գերեաց զՀրէայս: Ցայս ամենայն ընդարձակագոյնս պատմէ Հեգեսիպպոս միաբան ընդ Կղեմայ. և թէ այնպիսի զարմանալն ոմն էր առ ամենայն մարդիկ, և անուանի արդարութեամբ Յակով քոս, որպէս զի և ի Հրէից անտի որ միանգամ իմաս-

'ի վայր զարգարն, և ասէին ցմիմեանս. Քարկոծեացուք զՅակոբ արդար. և սկսան քարկոծել. Քանզի իբրև անկաւ և ոչ մեռաւ, այլ շրջեցաւ և ծունր եդ և ասէ. Թողեա՛ զ'ի քէն, տէր Աստուած, Հայր ամենայնի, Թող սոցա՝ քանզի ոչ գիտեն զինչ գործեն: Եւ մինչդեռ նոքա քարկոծէին, մի ի՛ քահանայից անտի յորդւոց Բաքաբու՝ Ռեքեբիմանց, յայնցանէ որ վկայէ ի վերայ նոցա Երեմիա մարգարէ, աղաղակեաց և ասէ. Լուռ լերուք, զինչ գործէք. յաղօթս կայ ի վերայ ձեր աւադիկ արդարդ: Եւ մի ի նոցանէն ընձեռաւ, էառ ի ձախիւն միջէ զտափանն՝ որով զՀանդերձեան տափէր, և եհար զգլուխ արդարոյն և սատակեաց. և այսպէս վկայեաց. և Թաղեցին զնա անդէն ի տեղւոջն առ կողմ տաճարին. և մինչև ցայսօր ժամանակի շիրիմն նորա կայ առ կողմն տաճարին: Արդ վկայ ճշմարիտ եղև նա Հրէից և հեթանոսաց, եթէ Յիսուս նա ինքն է Քրիստոս: Եւ նոյնժամայն հետ ընդ հետ գերեաց զնա Վեսպասիանոս: Ցայս ասաց ընդարձակագոյնս Կղեմէնտոս, բայց որ միաբանին սոցա՝ ասաց և Հեգեսիպպոս. եթէ այսպէս առ՝ զարմանալի էր առ ամենայն մարդիկ, և անուանի էր արդարութեամբ Յակովբոս, որպէս զի և ի Հրէից անտի, որ միանգամ իմաստուն ոք էր, այսպէս ունէին եթէ այսպէս պատճառք եղեն, զի

* Յոբ. Բ+է-ը-:

տուն ոք էր՝ այսպէս ունէր, եթէ այս եղեն պատ-
ճառ, զի նոյնժամայն յետ վկայութեան նորա գե-
րեցաւ Երուսաղէմ, և ոչ վասն այլոյ իրիք էանց ընդ
նոսա, այլ փոխանակ զի համարձակեցան նոքա ի վե-
րայ նորա։ Նոյն ինքն և Յովսէպոս ոչինչ գանգաղեցաւ
վկայել այսմ բանիւս՝ եթէ. Ա. յս անցք՝ որ անցին ընդ
Հրէայսն իրքու ի վրէժ Յակովբոս արդարոյ, որ էր
եղբայր Յիսուսի, որ անուանեալ կոչի Քրիստոս. փո-
խանակ զի արդար էր և սպանին զնա Հրէայքն։ Որ և
վասն մահուան նորա ի քառասներորդ գիրս Հնախօսու-
թեան իւրոյ պատմէ այսպէս. Իբրև լուաւ, ասէ,
կայսրն զմահ Փեստոսի՝ առաքեաց զԱլբինոս դատա-
ւորութեամբ ի Հրէաստան. իսկ Անանոս կրտսերն,
զորմէ ասացաւ թէ ընկալաւ զքահանայապետու-
թիւնն, յանդուգն ամն էր և ժպիրչ, և էր յաղան-
դոյ անտի սադուկեցւոյն, զորս քան զամենայն Հրէ-
այս անագորոյնս և խիստ լինել ի դատաստանի՝ կան-
խաւ ցուցաք։ Ա.րդ այսպիսի ոք գտեալ Անանոս Համա-
րեցաւ թէ եգիտ իւր ժամանակ դիպի, վասն զի Փես-
տոս մեռեալ էր, և Ալբինոս ցայնմայր դեռ ի Ճանա-
պարհի, և կարգեաց առեան դատաւորաց և տարաւ
անդր զեղբայրն Յիսուսի՝ որ անուանեալ կոչի Քրիս-
տոս, և անուն էր նորա Յակովբոս, և զայլս ոմանս. և

նոյնժամայն յետ վկայութեան նորա գերեցաւ Երուսաղէմ. և ոչ վասն այլոյ իրիք էանց ընդ նոսա, այլ վասն զի համարձակեցան ի վերայ նորա։ Բայց ասակայն և Յովսեպոս ոչինչ գանգաղեցաւ վկայել և գայս ևս գրով՝ այսու բանիւք. եթէ այս անցք որ անցին ընդ Հրէայսն իրքու թէ վասն վրիժուն Յակովբոս արդարոյ, որ էր նա եղբայր՝ որ անուանեալ կոչի Քրիստոս։ Փոխանակ զի արդար էր՝ և սպանին զնա Հրէայքն։ Եւ գարձեալ նոյն ինքն և վասն մահուան նորա ցուցանէ այսու բանիւք. Ի ժամանակի՝ ասէ՝ իրքև լուաւ կայսր վասն մահուան Փեստոսի, առաքեաց զԱլբինոս հիւպարքոս ի վերայ հրէաստանի։ Իսկ Անանոս մանուկ, այն որ առեն զնմանէին և թէ ընկալաւ զքահանայապետութիւնն, խիստ էր և յամառ յոյժ, և էր նա յաղանդոյ անտի սադուկեցւոցն, այնոցիկ որք անխնայիկն են գատաստանաւք առաւել քան զամենայն Հրէայսն, որպէս կանխեցաք ասացեալ։ Եւ քանզի այսպէս էր ինքն Անանոս, համարեցաւ նա թէ եգիտ իւր ժամանակ դիպի, վասն զի Փեստոս մեռեալ էր, և Ալբինոս ցայնմայր դեռ ի Ճանապարհի գայր. և կարգեաց առեան ժողովրդեանն, և տարաւ անդր զեղբայրն Յիսուսի՝ որ անուանեալ կոչէր Քրիստոս, զի անուն էր նորա Յակովբոս, և զայլ ոմանս. և

արար վնասանել ամբաստանութիւն իբրև զապստամբ. բայց յօրինացն, և մատնեալ զնոսա 'ի քարկոծումն մահու։ Իսկ որոց զդէմադիմիր էին 'ի քաղաքին, և զօրէնսն Աշմարտութեամբ ունէին, չար թուեցաւնոցա բանն, և յղեցին առ արքայ 'ի ծածուկ, և աղաչէին զնա առաքել առ Աննանոս, մի յայտհեաւկ գործել այսպիսի ինչ. զի և ոչ յառաջ քան զայս ուղիղ ինչ գործեալ էր նորա։ Իսկ ոմանք ի նոցանէ, ընդ առաջ ելեալ Ալբինոսի՝ որ գայր ՅԱղբանդրեայ, ցուցին վասն Աննանոսի՝ թէ ոչ ունելով իշխանութիւն առեան ուղղէր առանց Հրամանի քո։ Լուեալ սոցա Ալբինոս գրեաց մեծաւ սրտմտութեամբ առ Աննանոս, սպառնայեալ վրէժ խնդրել 'ի նմանէ. վասն որոյ և Ագրիպպաս արքայ երթայր 'ի նմանէ զքահանայապետութիւնն, կացեալ նորա իբրև զամիս երիս յիշխանութեան. և կացոյց 'ի տեղի նորա զՅիսուս որդի Տամէայ։ Ս. յուսաւի ինչ պատմին վասն Յակովբոս, որում Համարին լինել առաջին թուղթ՝ որ կաթողիկեայց ասի. բայց միա գնելի է, զի ընդ անհարազատս գրեցաւ այն, և զի բազումք յառաջնոց անտի ոչ յիշատակեցին զայն, և ոչ զայն որ Յուդայն անուանի, մին յերեքանց անտի կաթողիկեայց. բայց սակայն գիտա-

*արար վնասանել ամբաստանութիւն իբրև զմարգոց անօրինաց, և մատնեալ զնոսա 'ի մահ մեռանել։ Իսկ հնդկն ամենեքեան որ էին 'ի քաղաքի անդ, որ զօրէնսն Աշմարտութեամբ ընդունէին, չար թուեցաւ նոցա գործն այս, և յղեցին առ արքայն գաղտուկ և աղաչէին զնա առաքել առ Աննանոս՝ զի մի յայտհեաւկ եղիցի նա գործել այսպիսի ինչ. նա և ոչ յառաջ քան զայս ուղիղ ինչ գործեր նա։ Իսկ ոմանք 'ի նոցանէ՝ իբրև եկն Ագրիպպաս ՅԱղբանդրիա քաղաքն՝ ընդ առաջ ելեն նմա, և ցուցին վասն Աննանոսի, եթէ ոչ առնէր նա իշխանութեան առեան ուղղել առանց Հրամանի քո՝ այն որ և յառնէն իսկ էառ նորա և գրեաց առ Աննանոս մեծաւ սրտմտութեամբ, և սպառնացաւ վրէժ խնդրել 'ի նմանէ։ Նա և Ագրիպպ արքայ վասն այսպիսի երթայր 'ի նմանէ զքահանայապետութենէն, իբրու կացեալ էր նորա վերիս ամիս, և կացոյց փոխանակ նորա զՅիսուս որդի Դամէայ *[*]։

Ա. յա ինչ են ասացեալ վասն Յակովբոս, այն՝ որ նորա սակաւին կաթողիկեայց։ Բայց արժան է մեզ գիտել, եթէ չէ ընդունելի, զի բազումք ոչ յիշատակեցին զնա յառաջնոց անտի. և ոչ այն՝ որ Յուդայն անուանի, զի և նա մի է յերեքեանց կաթո-

* Ցն. Դ-ածայ։

ցաք եթէ և սոքա այլովք Հանդերձ ընթեռնուն Հրապարակաւ ՚ի բազում եկեղեցիս։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Թէ ո՛րպէս յետ Մարկոսի առաջին եպիսկոպոս եկաց Անդրեասեանցոց եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց Անիանոս։

Յամին ութերորդի արքայութեան Ներոնի՝ յետ Մարկոսի առաքելոյ և աւետարանչի, կալաւ նախ զպաշտօն եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց Անիանոս, այր աստուածասէր և յամենայնի սքանչելի։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Վասն հալածանացն Ներոնի՝ յորում Պօղոս և Պետրոս ՚ի Հռոմ վասն աստուածպաշտութեան առին զպսակ վկայութեան։

Ի բռնանալ Ներոնի չիշխանութիւն տէրութեան իւրոյ, ՚ի խորհուրդս չարաչարս անկանէր նա մարդն

ղեկեալ անօթ։ Բայց սակայն գիտացաք՝ եթէ և նոքա այլովք հանդերձ ընթեռնուն յեկեղեցիս բազումս։

Քառասներորդ չորրորդ. թէ ո՛րպէս յետ Մարկոսի եկաց յեկեղեցւոյ աղեքսանդրացւոց նախ զառաջին Անիանոս։

Յամին ութերորդի արքայութեանն Ներոնեայ արքայի, յետ Մարկոսի աւետարանչի կալաւ զպաշտօն եկեղեցւոյն աղեքսանդրացւոց Անիանոս։

Քառասներորդ հինգերորդ. վասն հալածանացն որ եղեն յամս Ներոնեայ. զի ՚ի նոսա Պօղոս և Պետրոս առին զպսակ վկայութեան վասն աստուածպաշտութեանն ՚ի Հռոմ քաղաքի։

Ի բռնանալ անդ Ներոնեայ չիշխանութիւն տէրութեան իւրոյ, ՚ի խորհուրդս չարաչարս անկաւ նա և ընդգէմ աստուածպաշ-

չել և ընդդէմ առաւելապաշտութեան կրօնից Աթուածոյն արարչին ամենեցուն։ Բայց թէ որպիսի ինչ եղև չարութիւն նորա և ոչրդուն՝ չէ մեզ պարապ՝ի ժամուս ձառելոյ, այլ զի բազումք ձգիցեն զայդ ընդ նմանէ առանդեցին. որ կամին՝ կարող է ուսանել յայնցանէ՝ վասն շամբուշ մոլեգնութեան առնս, որ անխորհուրդ մոռք կորոյս և առատակաց զբիւս մարդկան, և մինչ յայնպիսի անագորոյն սպանութիւնս եկն, զի և յընտանեաց իւրոց և՝ի սիրելեաց ոչ խորշեցաւ. զմայր իւր և զկինն, զարձեալ և զայլս բազումս յայգատունդ իւրմէ՝ իբրև զձշնամիս և զատելիս, ազգի ազգի մահուամբ կոտորեաց։ Աքժան էր արդ, զի ընդ այլ ամենայն և այս նմա գրեսցի, զի՝ի կայսերս առաջին հալածիչ առաւելապաշտութեան կրօնից երևեցաւ նա։ Զոյդն զայս յիշատակէ Տերտուղիանոս հաւմայեցի բանիւս՝ եթէ. Այնչէք աղէ միանդամ ընդ մտեռանս յիշատակարանաց ձերոց և գտանիցէք անդ, զի նախ զառաջինն Նէրոն՝ յորժամ զարևէլս ողջոյն հնազանդեցուցեալ, գառն առ ամենայն մարդիկ երևէր, յարոյց հալածանս ընդդէմ կրօնիցս վարդապետութեանն, և այսպիսի գլխաւորաբար սպանողաց մերոց պարծիմք մեք։ Զի որ գիտէն զայն՝ կարող

տութեանն վասնզաւ։ Բայց գրեալ է * թէ որպէս էր չարութիւն նորա, չէ մեր ժամանակ. բազումք իսկ պատմիչքն զնմանէն Ճշմարտութեանէ, զի այն որ կամի՝ի նոցանէն կարող է ուսանել վասն մեղսութեան նորա. զի անխորհուրդ մոռք կորոյս և առատակաց զբիւս մարդկան. և մինչ յայսպիսի սպանութեան սպանեալ եկն նա զի և ոչ՝ի սպանութենէն ընդանայց և սիրելեաց իւրոց արգելաւ նա. զի զմայր իւր և զեղբարս իւր, և զկինն իւր նա, և զարձեալ այլ ևս զբազումս յայգատունդ իւրմէ իբրև զձշնամիս և զատելիս ազգի ազգի մահուամբ կոտորեաց։ Աքժան էր եթէ հանգերձ ամենայնիւ թէ և այս ևս գրեսցի, վասն նորին ինքնակալ կայսերս, զի առաջինն հալածիչ առաւելապաշտութեան նա երևեցաւ։ Զայն առ զարձեալ Տերտուղիանոս հաւմայեցի յիշատակէ զնմանէն այսպէս և ասէ. Ազէ ընթերցարուք, ասէ, ՚ի մատեանս յիշատակաց ձերոց և անդ գտանիցէք, զի նախ զառաջինն Նէրոն հալածեաց զայս վարդապետութիւնս ՚ի Հռոմ քաղաքի. սասկի գառն էր նա ՚ի վերայ ամենայն մարդոյ յետ հնազանդեցուցեալ նորա զամենայն արևելս։ Եւ պարծիմք մեք իբրև այսպիսի գլխաւորաւ սպանողաց մերոց. զի այն որ գիտէ զժամանակն զայն,

* Այս ճ բաց էր ի բնի ...

է՝ ի միա առնուլ, զի հնորհք մեծ եղեն մեզ պարտաւորել մեզ՝ ի Ներընեայ. զի որ առաջին աստուածամարտն քարոզեցաւ, նա է որ և զարհեաւ՝ ի կոտորած Աւազ քեղացն, և առ սուաւ Պօղոսի Հատաւ գլուխն՝ ի Նմին՝ ի Հռոմ քաղաքի. իսկ Պետրոս Թէ՝ ի խաչ Հանաւ՝ աւանդեն վէպք: Եւ Հաւատարմացուցանէ զպատմութիւնս Պօղոսի և Պետրոսի անուանքն՝ ի շիրիմս քաղքին այնորիկ մինչև յայսօր ժամանակի: Բայց ոչ այսչափ միայն, այլ և այր մի յուխտէն մանկանց Եկեղեցւոյ Դայիոս անուն, յաւուրս Զեփիւրինոսի Եպիսկոպոսին Հռոմայեցւոց, իբրև ընդդէմ Պրոկղի՝ որ վերակացուն էր Փռիւգացւոց աղանդոյն, մաքառեալ վիճէր, զայս ինչ ասաց վասն տեղեացն՝ ուր Եդեալ էին մարմինք սրբոց Առաքելոցս. Եւ, ասէ, ունիմ ցուցանել զսխոյեանս, զնշանակս յաղթութեան Առաքելոցն. զի եթէ կամիս երթալ դու՝ ի Վատիկան, կամ՝ ի Ճանապարհն Ոստեայ, ուր գտանես զյաղթութիւն նոցա՝ որ ուղղեցին զայս Եկեղեցի, զի՝ ի միում իսկ ժամանակի վկայեցին նոքա երկոքին: Եւ Դիմնեսիոս Եպիսկոպոսն Կորնթացւոց գրելով առ Հռոմ-

կարող է՝ ի միա առնուլ՝ զի հնորհք մեծամեծ եղեն մեզ պարտաւորել մեզ՝ ի Ներընեայ: Արդ՝ սա ասէլի, քան զամենայն որ եղեն Թշնամիք, առաքին Թշնամի քարոզեցաւ Աւազեցոյ, զի հալածաց-եալ ամբարտաւանեաց նա կոտորել զառաքեալն: Արդ՝ Պօղոսի Հատաւ գլուխն անդէն՝ ի Նմին քաղաքի, և Պետրոս և նա խաչեցաւ գլխիվայր՝ ըստ սակս պատմութեանցն, և հաստատեալ զնոյն պատմութիւնս անուանս այս Պօղոսի և Պետրոսի, ունի և գայ մինչև յայսօր ժամանակի գիրքն * որ անդ էն: Բայց ոչ այս միայն, այլ և այր մի՝ ի մանկանց եկեղեցւոյ, զի անուն նորա էր Գայիոս, որ եղև յաւուրս Զեփիւրինոսի Եպիսկոպոսի Հռոմայեցւոց՝ ի ժամանակի իրն. գուպարած եգեալ մաքառէր ընդ Պօղոսի **, այն որ էին վերակացու ազանդին փռիգացւոց, զայս ինչ ասաց նա վասն տեղեացն՝ որ եդեալ էն՝ ի նոսա մարմինք սուրբ առաքելոցն. Արդ՝ Ես, ասէ, ունիմ ցուցանել զյաղթութիւնն առաքելոցն. զի եթէ կամիս երթալ դու՝ ի Բէսսիկոնս, կամ ընդ Ճանապարհն որ Հանէ ընդ կողմանս Ոստիոյ, գտանես դու զյաղթութիւնն նոցա՝ որ ուղղեցին զայս եկեղեցի: Զի՝ ի միում իսկ ժամանակի վկայեցին նոքա երկոքեանն՝ ի միասին, Դիոնեսիոս Եպիսկոպոսն Կորնթացւոց՝ Թղթովք խօսեցաւ ընդ Հռոմայեցիսն, երբեմն այսպէս. Զի և դուք, ասէ,

երրորդն էս։ Այդ յոյժ զօրաւոր զուարթ առաքեալն Քրիստոսի. որ Ճշմարտութեամբ արժանի էին նոքա Աստուծոյ. և լի և կատարեալ էին սուրբ և պարկեշտ վարուք. և ամենայն բնաւորութեամբ և պահ-չելիք զարդարեալ էին անձինք նոցա. այլ լեզուով տգէտք էին։ Բայց յաւազակ ապաստանէին 'ի սքանչելի աստուածէնէն զօրու-թիւնն որ տուաւ նոցա 'ի Փրկչէն մերմէ. որ հաւանութեամբ և արեւստագիտութեամբ բանիւք բարոզէին զուսումն վարդապե-տին Քրիստոսի։ Բայց օրինակաւ հոգւոյն սրբոյ զօրանային նոքա և զօրութեամբ սքանչելեացն Քրիստոսի որ 'ի ձեռս նոցա կատարէր։ Գնայինն և աւետարանէին զգիտութիւն արքայութեան երկնից ընդ ամենայն աշխարհ։ Բայց սակաւ ինչ փոյթ առնէին նոքա գրել զբանս գրով. և զայս զոր առնէին նոքա, վասն զի պաշտօն վերա-գոյն քան զմարդիկ պաշտէին նոքա. զի Պօղոս այն որ զօրագոյն էր քան զամենեսին պատրաստութեամբ բանին, և առաւել էր և հան-Ճարով խնամոտութեամբ, ոչ կա գրով աւելի քան զայս Թուղթս սակաւս. իբրու ունէր նա ասել բիւրս որ ոչ պատմեցան։ Իբրև այր մի որ եհաս նա 'ի տեսիլ երկնից, և յափշտակեցաւ նա և 'ի

այլ հետևողք Փրկչին մերոյ, որպէս երկոտասան ա-
ռաքեալքն և եւթանասունն աշակերտք և այլք բա-
զումք, բայց սակայն յամենայն Առաքելոց անտի
Տեառն մերոյ, Մատթէոս միայն և Յովհաննէս Թո-
ղինն մեզ գրով պատուիրակս անցիցն անցելոց, զի և նո-
ցա որպէս և բանն ցուցանէ, ՚ի հարկէ եղև գալ ՚ի
գրել. Ջի Մատթէոս նախ զառաջինն ներքայեցոց
քարոզեալ և իբրև պատրաստեր երթալ յայլ աշ-
խարհ, ետ նոցա ՚ի բարբառ հայրենի զաւետարանն
իւր, զի զպակասութիւն անձին իւրոյ ՚ի նոցանէ՝ որոց
դեռ ևս կարևոր համարէր, գրովն իւրով լնոյր: Իսկ
վասն Մարկոսի և Ղուկայ և վասն աւետարանացն որ
ըստ նոցա, իւրաքանչիւր նոքա զնուրոյն առաջ-
Թիւնս առանդնէին. իսկ Յովհաննէս զամենայն ժամա-
նակս առանց գրոց քարոզելով զաւետարանն, ՚ի վախ-
ճանի տպա վասն այսր պատճառաց գայր նա ՚ի գրել.
Ջի իբրև յառաջագոյն նախագրեալ երեք աւետա-
րանքն լինդհանուրս սիռելով գայրն հասանէին և ՚ի
նորա ձեռս, ընդունելի լեալ Առաքելոյն՝ ասէն, և
վկայեալ նորա վասն այնոցիկ Թէ Ճշմարիտ գրեցան,
բայց պակասել միայն ասէր զպատմութիւն գործոցն
Քրիստոսի՝ որ ՚ի սկզբան նախ քան զվարդապետու-

գրեխան պանդխտի, և արժանի եղև լսել անգ բանս անճառս, զոր ոչ էր արժան խօսել մարդոյ. այլ ոչ եթէ Թերի ինչ էին յայտնեալ այլ աշակերտք Փրկչին մերոյ. առաքեալք էին երկոտասան, և այլ աշակերտք ութ. և այլք հանդերձ այլովք բազմաք: Բայց սա-
կայն յամենայն առաքելոց անտի տեառն մերոյ պատմութիւնս գը-
րով Մատթէոս և Յովհաննէս միայն Թողին մեզ. զի և նոցա որպէս
և բանն ցուցանէ, ՚ի հարկէ եղև գրելն. զի Մատթէոս իբրև յառա-
ջագոյն հերքեցուցն քարոզէր. և պատրաստական էր երթալ նա
յայլ աշխարհ. ետ նոցա ՚ի լեզու հերքայեցի զաւետարանն իւր...
զի փոխանակ նորա լինի աւետարանն իւր գրով զոր քարոզէր նա:
Իսկ վասն Մարկոսի և Ղուկայ. և վասն աւետարանացն
նոցա. և յառաջ քան զայժմ առացեալ է մեր: Բայց Յովհան,
որպէս ասի ինձանէ, զամենայն ժամանակս առանց գրոյ քարոզէր
նա զաւետարանն. և ապա յետոյ վասն այսր պատճառանաց եկն
նա ՚ի գրել: Ջի ՚ի ժամանակի իրրև կարգեցան այն երեք աւետա-
րանքն և գրեցան առ ամենայն մարդ և հասին առ նա, որպէս և ա-
սի բան, ընդունելի եղև նմա և վկայեաց վասն նոցա եթէ Ճշմարիտ
գրեցան. բայց միայն այս պակաս է ՚ի նոցանէն, պատմութիւնքն՝
որ ինչ միանգամ գործեցան իսկզբանէ վարդապետութեանն Քրիս-

Թիւն նորա։ Եւ Հնմարիա է բանս. զի այլ երիք աւետարանիչքն յետ մատնելոյն Յովհաննու Մկրտչի՛ բանս, ինչ որ՛ ի միում ամի գործեցաւ՛ ի Տեառնէ մերմէ՝ գրեցին, զոր և յայտ առնեն՛ ի սկիզբն պատմելեան իւրեանց։ Եւ արդարև յետ քառասուն աւուր պահոցն և փորձութեանն զոր փորձեցաւ Տէրն մեր, յայտ առնէ Մատթէոս զժամանակ գրութեան իւրոյ. Իբրև լուաւ, ասէ, եթէ Յովհաննէս մատնեցաւ, մեկնեցաւ գնաց՛ ի Հրէաստանէ՛ ի Գալիլէա։ Եւ Մարկոս՝ եթէ յետ մատնելոյն Յովհաննու, եկն Յիսուս՛ ի Գալիլէա։ Իսկ Ղուկաս մինչև սկիզբն պատրաստել պատմելեան գործոց Տեառն մերոյ, նոյնօրինակ ընդ գնոյ ժամանակին, ասելովն՝ եթէ՝ ի վերայ ամենայն չարեացն զոր գործեաց Հերովդէս՝ յաւելաւ և զայն ևս, և եղ՝ ի բանտի զՅովհաննէս։ Եւ ապա ձայնեցին վասն այսորիկ, ասեն, զառաքեալն Յովհաննէս, զի զժամանակ՝ որ Թոզաւ յառաջին աւետարանչացն անտի, և ինչ որ գործեցաւ՛ ի նմա՛ ի Փրկիչն մերմէ, այսինքն մինչև արկեալ Մկրտչին՛ ի բանտ, տալ գրով յաւետարանի անդ իւրում։ Զոր և յայտ առնէ նա երբեմն յասելն իւրում։ Ձայն արար սկիզբն նշանաց Յիսուս, և երևեցոյց զփառս իւր։ Եւ երբեմն

տոսի, և Հնմարիա է բանս այս. կարող եմք մեք այսուհետև ուսանել եթէ այս երիք աւետարանիչքն յետ մատնելոյն Յովհաննու Մկրտչի՛ ի բանդ անդր, ինչ որ՛ ի միում ամի միայն գործեցաւ՛ ի Տեառնէ անտի մերմէ գրեցին նորա. և զայն իսկ զայս ցուցանեն՛ ի սկիզբն պատմելեանց իւրեանց, եթէ յետ քառասուն աւուրց՝ իբրև պահեաց տէր մեր և փորձեցաւ նոքօք, սկիզբն արարին նորա՛ ի ժամանակի պատմելեանցն իւրեանց. զի Մատթէոս այսպէս ցուցանէ, զի յորժամ լուաւ՝ ասէ՝ եթէ նոյնն զՅովհաննէս, փոխեցաւ նա՛ ի Հրէաստանէ՛ ի Գալիլեայ։ Եւ Մարկոս այսպէս ասաց եթէ յետ մատնելոյն Յովհաննու՝ եկն Յիսուս՛ ի Գալիլեայ։ Իսկ Ղուկաս մինչև սկսեալ նոքօք՝ ի պատմելեանն գործոց Տեառն մերոյ, այսպէս պահեաց և ասաց, եթէ Հերովդէս՝ ի վերայ ամենայն չարեացն զոր գործէր, յաւել և և կալաւ զՅովհաննէս և եդ՝ ի բանդի։ Ապաչեցին այնուհետև և զՅովհաննէս առաքեալ վասն այսորիկ եթէ այն ժամանակն որ Թոզաւ յառաջին աւետարանչացն անտի, և ինչ որ գործեցաւ՛ ի նմա՛ ի Փրկչէն մերմէ՝ տալ նոցա գրով իւրով այսինքն որ ինչ միանգամ գործեցաւ մինչև արկեալ էր զՅովհաննէս Մկրտչ՛ ի բանդ։ Եւ զայն զայս ևս գոյց նա, զի երբեմն ասաց եթէ այս է նշան առաջին զոր արար Յիսուս, և երևեցոյց

յիշատակելով զՄկրտչին յընթացս գործոցն Յիսուսի, թէ Մկրտեր և Յովհաննէս ի Յայնժամն մերձ առ Սաղիմ Ջոր և յայտնապէս ցուցանէ յառեալն իւրում՝ եթէ Ձև ևս արկեալ էր Յովհաննու ի բանտ։ Արդ Առաքեալս որ ինչ միանգամ գործեցաւ ի Տեառնէ մերմէ մինչև արկեալ Մկրտչին ի բանտ, ասացեալ յաւետարանի իւրում։ իսկ երեք այլ աւետարանիչքն՝ որ ինչ յետ մատնելոյ Յովհաննու Մկրտչի գործեցաւ, յիշատակեն։ Բայց որ զգուշեաւ միտ դնիցէ, տեսանէ անշուշտ թէ չիք անմիաբանութիւն յաւետարանսն. զի որ ըստ Յովհաննուն է՝ զպատմութիւնն առաջինն գործոց Քրիստոսի ունի, և այլքն՝ զորոց յետ այնորիկ գործեցան։ Եւ յիրաւի վասն ազգահամարին ըստ մարմնոյ ծննդոց Փրկչին լռեաց Յովհաննէս, զոր Մատթէոս և Ղուկաս կանխագոյն գրեցին։ Եւ զի սկիզբն առնէ նա զաստուածութենէնն՝ որ ի Հոգւոյ անտի Աստուծոյ իբրև վերագունի քան զընկերսն նման էր պահեալ։ Այս ասացաւ ի մէնջ վասն գրոց աւետարանին Յովհաննու։ Այլ զպատճառան որ վասն աւետարանին ըստ Մարկոսի, յառաջագոյն ցուցաք։ Իսկ Ղուկաս ի սկիզբն գրոց իւրոց կանխեաց եդ զպատճառան վասն որոյ եկն ի գրել։ Քանզի ի յօժարել

զիւսս իւր. և երբեմն յիշատակէ նա զՅովհաննէս Մկրտիչ ի միջ գործոցն Յիսուսի. զի մինչև ցայնժամ մկրաեր նա ի Յորգանան՝ որ եր առ կողմն Շաղումից. և յայտնապէս եցոյց նա յառեալ իւրում այսպէս եթէ չև էր արկեալ զՅովհաննէս ցայն վայր ի բանդ։ Արդ՝ Յոհաննէս յաւետարանի իւրում զայս գրեաց որ ինչ միանգամ գործեցաւ ի Տեառնէ անտի մերմէ՝ մինչև արկեալ էր զՅովհաննէս Մկրտիչ ի բանդ։ Իսկ այն երեք աւետարանիչքն՝ որ ինչ միանգամ գործեցաւ յետ մատնելոյն Յովհաննու. Մկրտչի՝ յիշատակեն։ Արդ՝ իբրև սուսգնացաք, յայսմիկ Ճանապի մեզ թէ չիք երկմտութիւն աւետարանացն ընդ միմեանս. քանզի այն աւետարանն Յոհաննու՝ պատմութիւն առաջին գործոցն Քրիստոսի գոյ ի նմա. և այն այլ պատմութիւնքն, զոր ինչ գործեալ է նորա ի յետոյ ժամանակս։ Բայց թուի թէ վասն այսորիկ լռեաց Յոհաննէս ի գալոցութենէ անտի ծննդոց Փրկչին մերոյ որ ըստ մարմնոյ, վասն զի Մատթէոս և Ղուկաս կանխագոյն գրեցին զնոսա։ Եւ սկսաւ նա գրել վասն աստուածութեան նորա, զի իբրև ի հոգւոյ անտի Աստուծոյ պահեցաւ նմա այս՝ որպէս առաւել առաքելոյն։ Զայս ասացեալ մեր վասն գրոց աւետարանին Յոհաննու. նա և պատճառքն որ եղեն աւետարանին Մարկոսի՝ յառաջագոյն ցուցաք մեք։ Իսկ Ղուկաս և նա իբրև սկսաւ ի գիրս իւր, կանխեաց և եդ զպատճառան՝ վասն

բազմաց յանդգնաբար թեթեւութեամբ վերստին կարգել զպատմութիւն իրացն, յորոց ինքն լի կատարեալ հասեալ էր ի վերայ, ի հարկէն ապա ածէր և ինքն ի նոյն. զի անխայեցուսցէ զմեզ յերկմիտ կարծեաց գրչացս, և զանսխալն և զստոյգ բան, որոց ինքնին շատ իսկ չնմարտութեանն լեալ էր հատու բնակակցութեամբն և կենակցութեամբ ընդ Պօղոսի և կցորդութեամբ հաղորդութեան ընդ այլ Առաքեալսն, առեալ աւանդէր մեզ աւետարանաւն իւրով։ Եւ վասն այսոցիկ ի միջի այսչափ։ Բայց յիւրում ժամանակին վասն տուչութեան առաքինոցն, և որ ինչ յայլոց ոմանց վասն այսոցիկ ասացան՝ ջանասցուք ցուցանել։ Իսկ վասն գրոցն Յովհաննու, հանդերձ աւետարանաւն և առաջին նորա թուղթ՝ առաքինոցն և վերջնոց առանց երկմտութեան ընդունելի գտան, բայց այլ երկուքն հակառակութիւն կրեն։ Իսկ վասն գրոցն Յայտնութեան մինչև ցայսօր ժամանակի բազմաց այսր անդր ձկին կարծիք։ Դարձեալ ի դէպ ժամանակի ընկալցի և այս խնդիրս զուր վճիռ ի վերայ կայութենէ անտի նախնեաց։

որոյ գրեաց. եթէ՝ քանզի բազումք այլք կամեցան գրել թեթեւութեամբ զպատմութիւնս բանից. զի նա կատարեալ էր աեղեկութեամբ վասն նոցա. և վասն զի անխայեցուսցէ զմեզ ի կարծեաց մտացն բաժանելոցն այլոց՝ եւ նա մեզ զճշմարտութիւն բանիցն զոր ընկալեալ էր նորա, և հաստատեցաւ ի նոսա ի մերձաւորութենէ անտի և հանապազորդ ընդ Պօղոսի լինելոյ իւրոյ և խառնեալ ընդ այլ առաքեալսն. և գրեաց զնոսա յաւետարանի անդ իւրում։ Բայց զայս մեք ասացաք։ Եւ դարձեալ զառաջինսն եւս զառաքինոցն՝ որ վասն նոցա է, ի ժամանակս իւրեանց ցուցանեմք, վասն գրոցն իսկ Յոհաննու. հանդերձ աւետարանաւն զոր գրեաց, և առաջին եւս Թուղթն նորա՝ առաքինոցն և վերջնոցն առանց երկմտութեան ընդունելի եղեն։ Իսկ այլ երկուքն եւս որ ասեն թէ նորա իցեն՝ երկմտութիւն դոյ զնոցանէն. իսկ վասն Յայտնութեան նորա մինչև ցայս օր ժամանակի յայսկոյս յայնկոյս շրջչրջին կարծիք զնմանէն ի բազմաց։ Եւ դարձեալ և վասն այսր եւս իբրև ի վկայութենէ առաքինոցն գտաւատանի որ զնմանէն ի ժամանակի իւրեանց ցուցանեմք։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Վասն առտուանձեռն տառիցն թէ ո՛րք ընդունելի իցեն և ո՛րք ոչ։

Աւրժան է աստանօր երկրորդել Համառօտիւ զգիրս նորոց կտակարանացս, զորոց կանխեցաք ասացաք յառաջագոյն։ Նախ ընդ առաջինսն կարգելի է զչորս աւետարանն, ապա զնոսա զգիրս Գործոց Առաքելոց, և յետ նոցա զԹուղթն Պօղոսի և ապա զառաջին Թուղթն Յովհաննու, ի նոյն Համարի դնելի է և զԱեւտրոսին առաջինն։ Եւ յետ այսոցիկ զՅայտնութիւնն Յովհաննու կարգելի, եթէ այնպէս ինչ Թուէսցի, զորմէ զայլ և այլ կարծիս ի ժամանակի իւրում դիցուք։ այսոքիկ են ահա ի կարգս ընդունելեաց։ Իսկ զորոց երկմտութիւն է, բազմաց սակայն գոլով ծանօթ՝ է Յակոբոսն և Յուդային, և Թուղթն երկրորդ՝ Պետրոսի, և երկրորդ և երրորդ Յովհաննու կոչեցեալ Թուղթքն, կամ աւետարանչի կամ այլոց ուրուք անուանակից նորին։ Ընդ անհարազատս կարգելի են գիրք գործոյն Պօղոսի, և որ Հովիւն կոչի, և

Քաւեմբորդ հինգերորդ. վասն գրոց թէ ո՛րք ևս ընդունելի և որք՝ ոչ։

Իսկ զի հասաք մեք մինչև ցայս վայր, արժան է գնել ի մէոն երկրորդելոց գիրս նոր կտակարանաց, վասն որոց կանխեցաք և ասացաք յառաջագոյն։ բայց դիցուք յառաջագոյն զաւետարանսն սուրբս, և ապա զնոսա գործոցն առաքելոց, և յետ նոցա զԹուղթն Պօղոսի և ապա զառաջին Թուղթն Յովհաննու։ Իբրև զնոյն Համարեսցուք և զԱեւտրոսին զառաջինն, և յետ նոցա և զըզՅայտնութիւնն Յովհաննու, եթէ արժանի Թուէցաւ ընդունելոց. և կարծիք որ եղիցի վասն նոցա՝ ի ժամանակի իւրեանց դիցուք, և ընդ նոսա ի խոստովանութիւն եկեղեցւոյ գիցեն։ Իսկ յայնցանէ վասն որոց երկմտութիւն է, զի ի նոցանէ բազմաց ընդունելի են, է Թուղթն այն որ կոչի Յակոբայ և Յուդայ, և Թուղթն երկրորդ՝ Պետրոսի, և Թուղթքն երկրորդ, երրորդ՝ որ կոչին Յովհաննու, կամ աւետարանչի կամ այլոց ուրուք անուանակից նորա են. և ոչք ընդայնս գիցին վասն որոց երկմտութիւն է զնոցանէ. և գիրք գործոցն Պօղոսի, և այն որ Հովիւն կոչի, և յայտնութիւնն Պետրոսի. և ընդ

Յայտնութիւնն Պետրոսի և Թուղթն Բառնաբայ, և որ Վարդապետութիւնք Առաքելոց ասին։ Դարձեալ որպէս կանխեցի ասացի և Յայտնութիւնն Յովհաննու, եթէ այնպէս ինչ թուեսցի, զի ոմանք մերժեն, և կէսք ընդ Ձմարիտս՝ զորս ընդունի եկեղեցին, դնեն զայն։ Են որ ընդ սոսա դնեն և զաւետարանն ըստ Եբրայեցւոց, ընդ որ պանծան յոյժ Եբրայեցիք՝ որք ընդ Քրիստոս ընկալան։ Ահա սոքա են ամենեքեան զորոց երկմտութիւն է։ Կարևոր գտեալ դնել առաջի զսոցա ամենեցուն զցանկ՝ որոշելով որ ըստ եկեղեցական աւանդութեան Ճշմարիտքն են, անսպաՀպՀք և ընդունելիք. և որք ոչ միայն կասկածուորք են, այլ և մերժեալք, սակայն բազմաց՝ ի մանկանց եկեղեցւոյ պաշտեալ նոքօք։ Ա. յոյսկս մարթի ասացուք Ձանազել զի տել զայս ամենայն, և զոր յանուն Առաքելոց Հանեալ է աղանդից Հերձուածոց՝ որպէս Պետրոսի, Թովմայի, Մատթեայ և այլոց ոմանց աւետարանաց, Անդրէի, Յովհաննու և այլոց Առաքելոց գործք. զորոց բնաւ ամենևին որ՝ ի մանկանց եկեղեցւոյ ՀԱռաքելոց անտի և այսր չարարին արժանի յիշատակի՝ ի գլուս իւրեանց։ Ջի յոյժ Հեռի բացագոյն և այլակերպ են տիպք բանից նոցա քան զԱռաքելոցն. և

սոսին և Թուղթքն Բառնաբայ, և այն որ կոչին Վարդապետութիւնք առաքելոցն. և գարձեալ և Յայտնութիւնն Յովհաննու որպէս կանխեցի ասացի եւ, Թէ երևի զի և նա այնպէս է։ Քանզի են ոմանք որ խառն և անաթգելն զնա, և են ոմանք՝ որ ընդ Ձշմարիտս յոլս խառատաւեալ եկեղեցի՝ դնեն զնա։ Բայց են այլք որ ընդ սոսա դնեն զաւետարանն Հերբրայեցւոց, զի ուրախ են ՝ի նոսա յոյժ Հեր բայեցիք որ չՀրիտասան ընկալան. ամենեքին սոքա յայնցանէ վասն որոյ երկմտութիւն է զնոցանէն Համարել լինին։ Պատշաճ իսկ էր կարգել զնոսա, զի որոշեսցուք Թէ որ են գիրք Ձշմարիտք. զի չէք ՝ի նոսա խառնուած իրիք զոր ևս եկեղեցի. եՀէ որ իցեն վասն որոց վարկանին և երկմտութիւն է, որ ՝ի կանոնս եկեղեցւոյ ոչ դնեն, այլ սակայն բազումք ՝ի մանկանց եկեղեցւոյ պաշտին նոքօք։ Բայց եղեցուք գիտել Եթէ յայնցանէ որ յանուն առաքելոցն՝ Հանեալ է աղանդից Հերձուածոց, որ են նոքա աւետարանք, կամ Պետրոսի կամ Թուղմայի կամ Ադդոմի կամ այլոց, կամ Պրակքսաւեթայքն Անդրէի և Յովհաննու և այլոց առաքելոցն. զի ՝ի նոցանէն բնաւ ամենևին որ ՝ի մանկանց եկեղեցւոյ որ գնացին եկին կարգաւ, ոչ արժանի արարին յիշատակի ՝ի գլուս իւրեանց, զի յոյժ Հեռի բացագոյն և այլակերպ են տիպք բանի նոցա քան զառաքելոցն. և կամք և խորհուրդք որ գրոշմեալք են ՝ի նոսա՝ յոյժ օտարագոյն

կամք և խորհուրդք ՚ի նոսա, յոյժ օտարագոյն են ՚ի Աչմանիտ հաւատոյն, զի արանց հերձուածողաց ստեղ ծուած մտայ լինել յանդիմանին յայտնապէս. վասն այսորիկ և ոչ ընդ անհարազատս միայն կարգելի են սոքա, այլ և իբրև այլանդակս և ամբարիշտս մերժելիք են և խոտելիք։ Պարձցուք արդ ապա ՚ի կարգ պատմութեանս։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Վասն Մեսեռնդրեայ կախարդի։

Սիմոնի մոգի յաջորդեալ Մենանդրոս, և զնէն երկրորդ ազգեցութեան սատանայի՝ ոչինչ յետնեալ քան զնախնին իւր երևեր նա ՚ի գնացս։ Սամարացի էր սա, ՚ի ծայր դիւթական արուեստին ոչինչ պակաս քան զվարդապետ իւր, գերազանցեալ իսկ ՚ի շաղփաղփ բանդագուշանս և յորդագոյն քան զնա գտաներ։ Փրկիչ գոլ զանձնէն վկայեր, ՚ի վերուստ ՚ի յաւիտեանց անտի՝ որ ոչ երևին, սահմանեալ ՚ի փրկութիւն որդւոց մարդկան։ Եւ ուսուցանէր եթէ այլազգ ինչ ոք ոչ կարէ յաղթել աշխարհագործ հրեշտակացն այնոցիկ, բայց եթէ աշակերտեալ նախ յու-

են ՚ի Աչմանիտ հաւատոյն. զի ոմանք յաղանգոյ անտի հերձուածոց նիւթեցին զայս ՚ի մտայ իւրեանց, զայնոքիկ որ ցուցանէն յայտնապէս վասն այսորիկ և ոչ ընդ այնոսիկ դիցին նոքա վասն որոց երկմտութիւն է զնոցանէն, այլ իբրև սաւոր և խոտելոք և անարդելոք լի և լի հրաժարեսցուք ՚ի նոցանէն։

Քաահերորդ վեցերորդ. վասն Մենենդրոսի կախարդի։

Եկեսցուք այսուհետև ՚ի պատմութիւն որ յետ այսր իցէ։ Ի Սիմոնէ կախարդէ ընկալաւ Մենենդրոս, և զնէն երկրորդ չար քան զառաջինն եցոյց յանձն իւր զօրութիւն սատանայի։ Էր նա Շամարիտ, իբրև կատարեցաւ կախարդութեամբն որպէս զվարգապետն իւր։ Բայց նա մեծամեծս խրտխռանայր և ասէր վասն անձին իւրոյ՝ եթէ նա ինքն է փրկիչն որ առաքեցաւ ՚ի վերուստ ՚ի յաւիտեանց անտի՝ որ ոչն երևին, ՚ի փրկութիւն որդւոց մարդկան. և ուսուցանէր եթէ՝ այլ ազգ ինչ, ասէ, ոչ կարէ մարդ յաղթել հրեշտակացն արարչաց աշխարհիս այսորիկ, բայց եթէ գայ նախ ՚ի կրթու-

սումն կրթութեան կախարդութեան նորա. և ապա ի մկրտութիւն նորա ընծայեալ։ Իսկ որոց արժանաւորքն գտանիցին, անմահութիւն անվախձան ի կեաս նըա յայս նոցա խոստանայր, կալ ինալ ի մշտնջենաւորս, անծերանալի և անմահ. զոր դիւրին է գիտել ի բանից անտի Երանոսի։ Եւ Յուստինոս իսկ յիշատակ առնելով զՍիմոնէ, և վասն սորա պատմէ այսպէս եթէ. Մենանդրոս ումն սամարացի ի գեղջէ Քափարգեայ՝ աշակերտ Սիմոնի մոգի, ի դիւական ոգւոյն շարժեալ գայր յԱնտիոք քաղաք, և զբազումս ապրուեստագիտութեամբ կախարդութեանն մոլորեցուցեալ գիտեմք։ Եւ որք միանգամ չոգան զկնի նորա՝ հաւանեցոյց զնոսա հաւատալ թէ ոչ մեռանիցին, և ցայժմ իսկ են ոմանք յաղանդոյ նորա՝ որ զայս այսպէս խոստովանին։ Եւ այս լինէր ի դիւական ազդեցութենէն, զի ի ձեռն կախարդոյ այսոցիկ՝ որոց զնոսն քրիստոնէի զանձամբ առեալ զնորընկերդն մեծ աստուածպաշտութեան կախարդութեամբն հայհոյել ջանասցին, և եկեղեցւոյ վարդապետութիւն զանմահութեան հոգւոց և գյարութեան մեռելոց ծաղր և ծանակ կացուսցին։ Այլ որք զայսոցիկ փըրկիչս անձանց ունել կարծեցին, և ի Հիմարիտ յուսոյ անտի անկան ի սպառ։

Թէև տեղեկութեան կախարդութեանն զոր ուսուցանէր նա։ Եւ մկրտութիւնն որ ի ձեռանէ նորա առեալ լինի որ միանգամ արժանի լինին նմա, կանոն առ յատկանիշ յայտ աշխարհի ընդունին, և կան միան առանձն հանգիստ՝ առանց ծերութեան և մահանելոյ։ Զայս գիւրին է գիտել ձանաչել ի բանից անտի Իրինէոսի։ Զոր և Յուստինոս իսկ յիշատակեաց վասն Սիմոնի. գրեաց նա պատմութիւն որ վասն նորա էր, և ասաց այսպէս եթէ. Մենանդրոս որ նա չամարացի էր, ի գեղջէ որ անուն էր նորա Քըրփարսայա աշակերտ Սիմոնի, զի մոլորեցան ի նա բազա զօրութեան գիւաց. և ինքն յԱնտիոք քաղաք, և զբազումս մոլորեցոյց արուեստագիտութեամբ կախարդութեանն։ Զի որ միանգամ չոգան զկնի նորա՝ հաւանեցոյց զնոսա հաւատալ թէ ոչ մեռանին. և այժմ իսկ են ոմանք յաստանել նորա որ այսպէս խոստովանին։ Բայց էր այս ի զօրութենէ սատանայի, զի ի ձեռն այսոր կախարդոց որ զդեղան զանուն Քրիստոսի զնորընկերդն մեծ զաստուածպաշտութեանն կախարդանօք ջանային բամբասել և հայհոյել զի ի ձեռն նոցա կատարեսցին կեանքն հոգւոց որ ոչ մեռանին, և գյարութիւն ի մեռելոց որ են նորա հաստատուն եկեղեցւոյ։ Բայց զայս զոր գրեցին զնացանէն փրկիչն վարդապետացն նոցա. ի Հիմարիտ յուսոյ անտի անկան։

ԳԼՈՒԽ ԻԷ.

Վասն հերձուածոյն Եբիոնիտաց։

Իսկ զայլս զոմանս չկարելով շարժել դէն ՚ի սիրոյն Քրիստոսի Աստուծոյ, այլևս դիւրըմբռնելի գտանէր զնոսա և խարդաւաներ յիւր ծուղակ. զորս և յիրաւի Եբիոնիտս կոչեցին առաջինք, փոխանակ զի աղքատօրէն և անարգաբար խորհէցան նոքա զՔրիստոսէ. զի դուզնաբեաց ոք մարդ զնա համարեցան, և ՚ի վաստակոց գործոց բարեաց արգարացեալ և յամուսնութեան առն և Մարիամու ծնեալ։ Պարձեալ և կարևոր համարեցան սոքա զգործս օրինաց, զի ոչ հաւատային թէ կարող էն կեալ ՚ի հաւատոց անտի միայն Քրիստոսի, և ՚ի գործոց՝ որ ըստ հաւատոցն։ Են և այլք ՚ի սոյն անուն կոչեցեալք ոմք ՚ի յայլանդակ մտաց առաջնոցն փախուցեալ, եթէ ծընաւ Տէրն մեր ՚ի կուսէ և ՚ի Հոգւոյն սրբոյ՝ ոչ ուրանան, այլ թէ ՚ի յաւիտենից է բանն Աստուած և իմաստութիւն Հօր ոչ խոստովանելով՝ յամբարշտութիւն առաջնոցն անկան, որով և հաւասար նոցա ՚ի մարմնեղէն պաշտօն օրինացն փութան և սոքա։ Մերձ

Բանաւորող հօրենդրոյ. վասն աղանդին Աբիոնացւոց։

Բայց սակայն դէն չար որ ոչ կարէր չարժել զայնոսիկ՝ որ միանգամ սիրէն զՔԱստուածոյ, կարող եղև զայնոսիկ որ ըմբռնէցանն յայնցանէ որ խոստովցուցինն զնոսա զնէի նոքա. զի զնոսա առաջինքն յիրաւի կոչէն արիոնացիս, փոխանակ զի աղքատաբար և ակարաբար ունէին նոքա զՔրիստոս. զի մարդ դուզնաքեայ ոք համինայն մարդ համարէին նոքա զնա, որ արգարացաւ ՚ի գնունդն սովորութեան գործոց, և յամուսնութենէ առն և Մարիամու. և սակն Թէ պիտոյ է նոցա գործ օրինացն, զի ոչ հաւատան Թէ կարող էն նոքա կեալ ՚ի հաւատոց անտի միայն Քրիստոսի և ՚ի գործոց անտի զոր ուսոյց։ Պարձեալ այլք որ կոչին յայս անուն, ՚ի բազում ժպրհութենէ նոցա վասն որոյ ասացաք զնոցանէն փախչին, որ զի Թէ ծնաւ Տէր մեր ՚ի կուսէ և ՚ի Հոգւոյն սրբոյ՝ ոչ ուրանան, այլ ոչ խոստովանին նոքա իբրև զնէզ, Թէ խակբանէ էր նա բան Աստուած և իմաստութիւն. և յամբարշտութիւն անօրենութեան առաջնոցն խորհէցան նոքա, առաւել ևս զպաշտօն

Ժեղի են առ սուտս և խոտելի ամենայն Թուղթք Պողոսի, օրէնսխոտոր ապստամբ յօրինաց գնա կոչելով և աւետարանն միայն որ ըստ Եբրայեցւոց՝ պաշտի առ նոսա. իսկ զայլսն դուզնաբար ունին, իսկ զշաբաթն և զայլ վարս հրեութեան՝ իբրև զնոսա պահեն. բայց զաւուրս միաշաբաթուց իբրև զմեզ՝ ի յիշատակ յարութեան Քրիստոսի կատարեն: Որոյ վասն և իրաւամբ վիճակեցան նոքա անուանս, զաղքատութիւն մնաց իւրեանց ներհակ բառիս յայտ առնելով, զի ներհան՝ ի լեզու եբրայեցի աղքատ լսի:

ԳԼՈՒԽ ԻԸ.

Վասն Կերինթեայ հերետիկոսի:

Չայսու ժամանակաւ և այլոց իրիք աղանդոց գլուխ և առաջնորդ կացեալ Կերինթոս ընկալաւ: Զոմանք Գայիոս՝ զորոյ զանան կանխեցաք ի Հառս քննութեանց նորա և ինդրոց, գրէ այսպէս. Նա և Կերինթոս, ասէ, այն որ ի ձեռն Յայտնութեան՝ որ պէս մեծի Առաքելոյն եղելոյ, հրաշապատում ստեղ-

ծարձեալն զօրինացն իբրև զնոսա փութան պահել: Այլն իսկ ազգս յամին Թղթոյն Պօղոսի լինելի ուրանան, և կոչեն օրէնսխոտոր: Բայց յաւետարանն այն որ կոչի հերբայեցւոց՝ միայն պաշտեն նոքա, և զայլսն ևս սակաւաբար դուզնաբար ունին նոքա զնոսա: Իսկ զշաբաթն և զայլ վարս հրեութեան՝ իբրև զնոսա պահեն. բայց զաւուրսն միաշաբաթուց իբրև զմեզ առանձն վասն յիշատակի յարութեան նորա: Եւ վասն այսր խորհրդոյն զոր ունեին նոքա՝ ընկալան զանուանս զայս զՔրիստ, ցուցանել վասն ազգսա խորհրդոյն նոցա. զի արիանն ազգսա կոչի՝ ի լեզուն հերբայեցի:

Քահանեորդ ութերորդ. վասն Կերինթոսի որ էր գլուխ հերձուածողաց:

Բայց՝ ի սոսին իսկ՝ ի ժամանակս յայս ընկալաւ մեզ՝ եթէ եղև Կերինթոս գլուխ միոց հերձուածոց: Իսկ Պապիաս այն որ յաառաջագոյն եղաք զանանս նորա, ի ձեռն ինդրոյն որ եղև նորա, այսպէս գրեաց զնմանէ: Նա և Կերինթոս, այն որ ի ձեռն աւետեան իբրև առաքեալ մեծ Լմնոյ գրչութեան ձախազ ընդից, որ առեաց և առաջեալ եթէ ի հրեշտակաց ուսեալ եմ զայս, եթէ յետ յարու-

ծանէր զանձնէն՝ իբրու ՚ի հրեշտակաց ուսեալ, եթէ յետ յարութեան լինելոց է թագաւորութիւն Քրիստոսի ՚ի վերայ երկրի, և դարձեալ եթէ մարդիկ որ յԱրևմտից գտանիցին, ըստ մարմնոյ ցանկութեան և ըստ հեշտութեան վայելեսցեն կեանս։ Եւ զի Թըշնամի էր նա դրոց Աստուծոյ, զթիւ հազար ամաց ՚ի ծովս հարսանեաց անցուցանել ասէր, որով և զանփոքրձին կամէր մոլորեցուցանել։ Իսկ Դիոնեսիոս՝ այն որ եպիսկոպոսն էր եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց առաջեր՝ յերկրորդ դիւրս իւր Խաւտմանցն կամ Աւետեաց, ինչ ինչ վասն Յայտնութեան Յովհաննու ՚ի նախնեաց անտի աւանդութեանց առեալ խօսելով, յիշատակ առնէ և զառնէս զայսմանէ բանիւս՝ այսպէս. Կերինթոս, ասէ, որ առաջնորդն էգէս ազանդոյն, որ ՚ի նորա անուն Կերինթացիք կոչեցան, կամեցաւ մակագրել զիւր ստեղծուածս մտաց յանուն արժանահաւատ. քանզի այս էր ուսումն վարդապետութեան նորա՝ եթէ ՚ի վերայ երկրի լինելոց է թագաւորութիւն Քրիստոսի, որում և ինքն ցանկայր, զի մարմնաւոր յոյժ և ամենևին իսկ մարմնաւոր լեալ և ՚ի նոյնս ետրաղանայր, և ՚ի յագուրդ պորտոյն, և որ զպորտոյնն են՝ յղփահայր, կերակրոցքն, ըմպելեօք և հարսանեօք. և զի սուրբ էր պատրուակեալ բարեբէ ծնիքըն, զոհիւք և զեղեօք։ Ձայսոսիկ Դիոնեսիոս՝ իսկ

թեանն՝ ասէ՝ ՚ի վերայ երկրի լինելոց է արքայութիւնն Քրիստոսի. և դարձեալ միւսանգամ զցանկութիւնս մարմնոյ ՚ի միջ ներսագնդի լինելոց եմք գործել. և քանզի Թշնամի էր դրոց Աստուծոյ՝ կամեցաւ մոլորեցուցանել և ասէ. եթէ ըստ թուոյ հազար ամի լինելոց է ուն հարսանեաց։ Նա և Դիոնեսիոս՝ այն որ էր եպիսկոպոս եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց, յերկրորդ խօսն որ վասն սկզբանն ասաց ինչ որ վասն յայտնութեանն Յովհաննու, իբրև յառաջին առաքութենէ անտի, և յիշատակ նա զայրս զայս այսրանիւք. Կերինթոս, ասէ, այն որ կացոյց զազանգս զայս, որ առնաւանել կոչին կերինթացիք, կամեցաւ նա դնել անուն արժանի հաւատալոյ մոլորութեանն այնմիկ զոր ներեթեաց նա։ Զի այս է ուսումն նորա զոր ասէր, եթէ ՚ի վերայ երկրի լինելոց է արքայութիւնն Քրիստոսի, և որոց ինքն կարօտացեալ ցանկայր, քանզի յոյժ մարմնական և սիրեր զցանկութիւնս. զնոյն ուսանէր ՚ի ուխիկ ետրաղայ խորդ՝ եթէ լինելոց է յագուրդ պորտոյ, այսինքն կերակրոցք և ըմպելիք և ամուսնութիւնք։ Եւ զայն ինչ գործեալ զոր միանգամ կարծեաց թէ եգիտ, որ անուանիք են քան զայս ուսումն և

Երանոս և զնեբրին իսկ գաղտնի կարծիս մոլորութեան նորա եղ յառաջին գիրս իւր՝ որ Ընդդէմ հերձուածոց, և յերրորդումն՝ պատմութիւն արժանի անմոռաց յիշատակի աւանդէ նա իրրև՝ ի տուչութենէ Պողիկարպոսի, եթէ ելեալ երբեմն առաքեալն Յովհաննէս՝ ի բաղանիս առ՝ ի լուանալ, բայց իրրև գիտաց եթէ՝ ի ներքս անդ է Կերինթոս՝ ոտեաւ՝ ի տեղւոջէ իւրմէ և փախեաւ՝ ի դուրս, զի ոչ համբեր նա կալ ընդ յարկաւն՝ յորում էր հերետիկոսատես. ՝ի նոյն յորդորեալ և զիւրսն. Փախիցուք, ասէր, գուցէ փլանիցին բազանիքս, զի՝ ի սմա է Կերինթոս թըշնամին Ճշմարտութեան։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Վասն Նիկողայոսի և որոց՝ ի նորա ասնուն կոչեցան։

Առ սովիմբ և հերձուածն Նիկողայեցւոց եկաց սա կաւ մի ժամանակս, որ և յիշի՝ ի գիրս Յայտնութեան Յովհաննու։ Սոքա Նիկողայիտքն հպարտացեալ պարզ

զոհս և զքնդիս անասնոց. զայս ինչ ասաց վնասակ Դիոնեսիոս։ Իսկ Իրինէոս և զկարծիս մոաց գաղտնեաց նորին եղ յառաջին խօսեն որ ընդդէմ հերձուածոցն են. և պատմութիւն արժանի յիշատակի գրոյցիսց՝ ի գիրս իւր։ Իրրև՝ ի տուչութենէ Պողիկարպոսի ըզր ասաց, եթէ Յոհան առաքեալ երբեմն՝ ի բաղանիս որպէս զի լուասցի անդ. բայց իրրև գիտաց եթէ՝ ի ներքս է Կերինթոս՝ ոտեաւ՝ ի տեղւոջէ իւրմէ և փախեաւ՝ ի դուրս, զի ոչ համբեր նա լինել՝ ի ներքս յարկին՝ յորում էր նա. և այն իսկ այս հաստատեցուցանէր զայնոսիկ որ ընդ նմա էին, և ասէր՝ փախիցուք՝ գուցէ և բազանիքս փլանիցին. զի՝ ի սմա է Կերինթոս թշնամի Ճշմարտութեանն։

Քաւեներորդ իննևերորդ. վասն Նիկողայոսի և վասն այնոցիկ որ անուանեալ կոչին յանուն նորա։

Բայց հանդերձ այսմիկ, և զայնզ հերձուածոց այն որ անուանեալ կոչին Նիկողայոսացիք, եկաց սակաւ մի ժամանակս՝ այն որ յիշատակէ զնա և Յայտնութիւնն Յոհաննու։ Սոքա հպարտացեալ պարծէին՝ ի Նիկողայոս, այն որ էր նա մի յայնցանէ՝ որ ընտ

ծէքին ՚ի Նիկողայոս՝ որ էր մի յԵւթանց անտի ընտրեալ ընդ Առեփանոսի ՚ի պաշտօն աղքատաց։ Զսմանէ կղէմէս Աղէքսանդրացի յերրորդ Յաճախապատում գիրս իւր պատմէ օրինակ զայս. Էր նորա, ասէ, կին տեսլեամբն գեղեցիկ. և յետ վերանալոյ Տեառն մերոյ իբրև նախատեսաւ նա յԱրաբելոյ որպէս դիւրաւ նահանձ, ՚ի մէջ ածեալ նորա զկինն, կալեալ զսա, ասէ, որում և հաճոյն իմէ։ Ընդ գործ այս միաբան համարեալ և զրանս նորա, Թէ պարտ է չարաչար վարել ընդ մարմնոյն։ Պարզաբար և յանխորհուրդս զՀետ գնալով գործոցս և բանիցս Հետևողք նորին՝ պտռնկին անխթիր առանց ամօթոյ։ Բայց ես ստուգեալ տեղեկացայ վասն Նիկողայոսի, Թէ բայց ՚ի միոյն ոչ ամուսնացաւ նա ընդ այլում կնոջ. դարձեալ և վասն որդւոց նորա՝ եթէ դաստերքն ծերացան ՚ի կուսութեան. և ուստր նորա եկաց ՚ի նոյն ամարի և անաբատ։ Եւ զի այս այսպէս է. ապա յանդիմանէին նորա զկին իւր առաջի Արաբելոյ, որպ վասն սուգտանէր իբրև նահանձոտ, նշանակ էր Հրաժարելոյ ՚ի հեշտութենից մարմնոյ, և բանն Թէ պարտ է չարաչար գնալ ընդ մարմնոյն, ժուժկալութեան մանաւանդ և նուաճելոյ ցանկութեան էին բանք։ Եւ որպէս կարծեմ ոչ կամէր նա ըստ պատուիրանի Փրկչին մերոյ երկուց տերանց ծառայել, ցանկութեան և Տեառն

բերանն ընդ Առեփանոսի ՚ի պաշտօն աղքատաց։ Իսկ կղէմէնտոս աղէքսանդրացի յերրորդ պատմութեան խրատ զայս ասաց վասն նորա, եթէ էր կին նորա տեսլեամբն գեղեցիկ, և յետ վերանալոյ Տեառն մերոյ նահատեսաւ նա յառաքելոյն անտի, վասն զի նախանձէր նա ընդ նմա։ Իսկ նա էած ՚ի մէջ զկինն, իբրու տանուտէականց նմա լինել կին ուժ և կամիցի. և առնէին մեղսակիցք զի այս գործ հաւասարեալ միաբանի այնմ բանի զոր ուսուցանէին, Թէ պիտոյ է առնն՝ առալ զկնոջ հանգստական խրատուց, և նմանապէսն այսմ խնիք որ էգն, և խնիք որ ասացաւ՝ գոյնպարբ և միամտութեամբ։ Եւ վասն այսորիկ պտռնկին անխթիր առանց ամօթոյ որ միանգամ անուանեալ կոչին ՚ի հերձուածոյ անտի նորա։ Բայց ես ուսեալ տեղեկացայ վասն Նիկողայոսի՝ եթէ ոչ ամուսնացաւ նա ընդ այլում կնոջ, բայց ընդ մինն միայն զոր էառն. և գարձեալ վասն որդւոց և դստերաց նորա որ ծերացան ՚ի կուսութեան. և ուսաւ նորա որ եկաց միաց առանց ամուսնութեան։ Արդ զի այս այսպէս է, յայտ է եթէ հաւմարձակութիւն որ էգն առաջի առաքելոյն վասն նախանձու կնոջն, հրաժարեալ էր ՚ի չարչարանացն

մերոյ։ Եւ Մատթէի, առնն զնոյն ուսուցեալ Թէ Մաթ. ի
տիսուք ընդ մարմինս և չարաչար գնասցուք ընդ նմա, ժ. 24
և մի ինչ ի հեշտալեաց անտի նմա հնարհեսցուք. իսկ
զՀոգին առ ձեզ սուք հաւատով և գիտութեամբ։
Որոց վասն շատասցի արդ բանս՝ որ ի խանգարել
զձեմարտութիւն ի վեր երևեալ ի ժամանակին, վազ
վազակի չիջեալ անհետացան։

ԳԼՈՒԽ Լ.

Եթէ ո՛չք յԱբաքելոց աւուրսնաւոր կեանս տարեցին։

Սակայն սա կզեմչ՝ զորոյ զբանն սակաւիկ մի յա-
ռաջագոյն յիշատակեցաք, յետ այնօրիկ յառաջ ա-
ծեալ զբանն ընդդէմ մարդկան՝ որք խոտեալ անար-
գէն զամուսնութիւն, զԱբաքեալսն՝ որ միանգամ ա-
մուսնացան, կարգէ այսպէս. Կամ Թէ գուցէ, ասէ,
և զԱբաքեալսն ևս խոտէք և անարգէք գուք. զի
Պետրոս և Փիլիպպոս օրդիս ծնան, և Փիլիպպոս ըզ-
դստերս իւր արանց ետ, և Պօղոս ոչ անտիպէ արար

և ժուժկալութիւն ի սոքանչելոց ցանկութեամբ ց։ Իսկ այլոց պատ-
ճառք եղեն չզՀոգի ի հանգիստ մարմնոյ, օրպէս և ևս այն ուսեմ.
Եթէ ոչ կամէք նա ըստ պատուիրանի Փրկչին մերոյ Տեառնէ եր-
կուց սերանց՝ ցանկութեանց և Ցեառն մերոյ։ Բայց սակն Եթէ և
Թողուիցես այսպէս ուսուցանել Թէ ընդ մարմինս, ասէ, մարթիցուք
և Ջնդեցուցք, և ինչ ըստ հանգամանսն իւրոյ մի Թողացուցուք նմա,
բայց զՀոգին առնցուցուք հաւատովք և գիտութեամբ։ Արդ ըզդ
ինչ ասացեալ էր մեր վասն այնոցիկ որ յայնմ ժամանակի հնարե-
ցան փոփոխել զձեմարտութիւնն, և չիջան վազվազակի. օրպէս և
ասի բանն։

Երևսներորդ. թէ որ ոք իցեն որ ամուսնացան յաշխարհի
յառաքելոց աւուրս։

Սակայն իսկ այն Կզեմչեաս՝ զոր յիշատակեցաք մեք զբանս նո-
րա, ցետ այսօրիկ զարձեալ վասն մարդկան որ խոտեն անարգեն
զամուսնութիւն, զառաքեալսն որ միանգամ ամուսնացան յաշ-
խարհի կարգէ գնասա և ասէ այսպէս. Կամ Թէ գուցէ և զառա-
քեալսն ևս խոտէք և անարգէք գուք, զի Պետրոս և Փիլիպպոս որ-
դիս ծնան, և Փիլիպպոս զդստերս իւր արանց ետ, և Պօղոս զարձ-

Հարցանել զողջունել լծակցին ի Թղթի իւրում, այլ ոչ ընդ իւր շրջեցուցանէր վասն պարկեշտութեան պաշտամանն[6]։ Եւ զի ի յիշատակութիւնս այսոցիկ է, կաք, չէ ինչ տաղտուկ զայս ևս պատմութիւն արժա-նալոյս նորին մատենագրի յարել ասասնոյս, որ յետ-ներդոյ Յաճախապատում դիպս իւր պատմ. օրինակ զայս. Իբրև ետես, ասէն, երանելին Պետրոս, եթէ վարեալ տանէին զկին իւր ի մահ, խնդացեալ ընդ կոչումն շնորհացն, և զի յուշարկեալ երթայր ի տուն իւր և ի հայրենիս, կոչեալ զնա յանուանէ յորդո-րական և մխիթար բանիւք. Կին դու, ասէ, յիշեա զՏէր մեր. այսպէս էր ամուսնութիւն երանելեացն, և սէր կատարեալ սիրելեացն։ Ա յսոքիկ առ այժմ ըստ ժամանն պիտոյից եգեալ, ի դէպ ժամանակի լիս-ցին Ճառեսցուք։

ԳԼՈՒԽ Լ.

Վասն Յովհաննու և փիլիպպոսի վախճանին։

Վասն Պօղոսի և Պետրոսի ելիցն յաշխարհէ եթէ յոր ժամանակս և զիարդ. դարձեալ Թէ ուր եղան

Եալ ոչ անփոյթ արար Տարցանել զողջունել ամուսնոյն իւրոյ ի Թղթի իւրում. բայց ոչ շրջեցուցանէր ընդ իւր, վասն պարկեշտու-թեան պաշտամանն։ Բայց որովհետև զայս յիշեցաք, ոչինչ վնաս իբրս գնել և զայս ևս պատմութիւն՝ որ արժանի երկրորդելոյ զսո-րին զայս օրինակագրի, այն որ յետ Ներդոյ պատմութեանն գրեաց այսպես. Ասէն, ասէ, եթէ երանելին Պետրոս ետես զկին իւր զնա վարեալ երթայր ի մեռանել, և զդալն կոչումն շնորհացն. և զի յուշարկեալ երթայր ի տուն Ա ստուածեղեան, պատահանաւք ետ և ասէ ցնա յորդորելով և մխիթարութեամբ, և կոչեաց զնա յա-կանէ յանուանէ և ասէ. Յիշեա տէր մեր։ Ա յսպէս էր ամուսնու-թիւն երանելեացն, և սէր կատարեալ սիրելեաց։ Ա յսոքիկ իսկ որ պիտոյ էին այս Ճառիս զոր արկեալ էր մեր, ի ժամանակի իւրեանց եգան այսպես։ Բայց վասն ելիցն յաշխարհէ առաքեալ Պօղոսի և Պետ-րոսի, եթէ յոր ժամանակս և Թէ զիարդ դարձեալ յետ ելանելոյն նոցա ուր եգան մեռանիք նոցա. յառաջ քան զայս առացաք մեք։

Երևանելոցդ առաչնեորդ. վասն ելիցն Յովհաննու և փիլիպպոսի։

Բայց վասն ժամանակին Յովհաննու և յառաջ քան զայժմ ա-

մարմինք նոցա վազ ուրեմն հատուցեալ է մեր. բայց վասն ժամանակին Յովհաննու յառաջ քան զայժմ ասացաք փորը ի շտեմ. իսկ տեղի մարմնոյն ուր թաղեցաւն, ի Թղթոյ անտի Պողիկրատեայ Եփեսացւոց եպիսկոպոսին յայտ է. որ գրեալ առ Վիկտոր եպիսկոպոս Հռովմայեցւոց յիշատակէ ի միասին ընդ նմա և զՓիլիպպոս առաքեալ և զասնուս ի դստերաց նորա այսպէս. Ի և Յոհա, ասէ, լուսաւորք մեծամեծք հանգուցեալ են, որք յարիցեն յառաւօտ յայնմ ի գալստեան Տեառն մերոյ, յորժամ գայցէ նա փառօք յերկինից ինդիր առնել ամենայն սրբոց իւրոց: Որպէս Փիլիպպոս՝ որ էր մի յերկոտասանից Առաքելոց անտի ննջեցեալ հանգչի ի Հիերապոլիս, և երկոքին դստերք նորա ծերացեալք ի կուսութեան: Ի նորա միւս այլ ևս դուստր՝ որ Հոգւով սրբով վարեալ զկեանս և հանգեաւ Եփեսոս: Դարձեալ և Յովհաննէս՝ այն որ անկաւ զանջրջին Յիսուսի, որ քահանայն էր Աստուծոյ և տանէր զթիթեղն քահանայապետութեան ի ձակատս, և եղև վկայ և վարդապետ, աստ Եփեսոս առ մեզ հանգչի: Այլոյժ ինչ վասն վախճանի մահու նոցա: Իսկ ի ձառս տարամխաստութեան Դայիոսի՝ զորմէ յառաջ քան զսակաւ մի յիշեցաք, Պրոկղոս՝ որոյ ընդդէմ լինելին քննութիւնքն և վէճք, վասն Փիլիպպեայ և դստերաց նորա մնհուան՝ միաբանեալ

ասացաք մեք. տեղին իսկ յորում եգեալ է ի նմա յայտ է ի Թղթոյ անտի զոր գրեաց Պողիկարպոս որ էր եպիսկոպոս Եփեսացւոց առ Բեկտոր եպիսկոպոս Հռոմ քաղաքի. և յիշատակէ նա ի միասին զնա և զՓիլիպպոս առաքեալ և զդստերս նորա, ի գրել իւրում այսպէս: Եւ Յոհա, ասէ, լուսաւորք մեծամեծք ննջեցեալ են. զի նորա յարիցեն յառաւօտ յայնմ ի գալստեան տեառն մերոյ. զի ի նմա գայ նա փառօք յերկինից, և ինդիր առնէ ամենայն սրբոց իւրոց: Փիլիպպոս այն որ էր երկոտասան առաքելոց անտի զի նա ննջեցեալ է Յերապոլիս, և երկու դուստրք նորա՝ որ ծերացան ի կուսութեան, և այլ մի ևս դուստր նորա՝ որ Հոգւով սրբով վարեալ, ընկեսաս հանգեաւ: Բայց զթձեալ և Յոհան որ բազմեալ էր ընդ ձեռամբ տեառն մերոյ, այն որ էր քահանայապետ, և զգեցեալ էր զսակաւ սրբութեան, և եղև վկայ և ուսուցիչ, նա Եփեսոս ննջեաց: Այսչափ մեք վասն նմին ասացաք: Այլ ասացեալ է ի Պապիոսէ, այն որ յառաջ քան զսակաւ մի յիշեցաք. Պրոկղոս այն որ ասացն ընդ նմա, վասն երկուց Փիլիպպոսի և դստերաց նորա, զի հաւասարեալ միաբանին այսմ ըստ կանխեցուք ասացաք մեք: Ա-

Հատատար զոր կանխեցաքս ասացաք, ասէ, այսպէս. Ցետ այսորիկ, մարգարէք չորք էին ՚ի Հերապոլիս Ասիացւոց՝ գտաւերք Փիլիպպոսի, և գերեզմանն նոցա անդ է և հօրն իւրեանց։ Եւ այս այսպէս։ Իսկ Ղուկաս ՚ի Գործս Առաքելոց վասն գտաւերացն Փիլիպպոսի, որ ՚ի ժամանակին յայնմիկ ընդ հօրն իւրեանց էին ՚ի կեսարիա Հրէաստանեայց, և ունէին շնորհս մարգարէութեան, գրէ այսպէս. Եկաք, ասէ, ՚ի Կեսարիա և մտաք ՚ի տունն Փիլիպպոսի աւետարանչի, որ էր յԵւթանց անտի, և ագաք առ նմա։ Նորա էին գտաւերք չորք կոյսք մարգարէք։ Սորիմբք որ ինչ միանգամ ՚ի մեր գիտութիւն եկին վասն Առաքելոցն և վասն առաքելական դարուն, և վասն գրոց նոցա սրբոց՝ զոր Թողին մեզ, և զորոց միանգամ երկմտութիւն է, և ՚ի բազմաց սակայն հրապարակաւ յերեզեցիս նոցա ընթերցեալ, և որոց ամենևին իսկ անհարազատ և օտարացեալք էին ՚ի Հնմարիտ հատատոց Առաքելոցն, հատուցեալ շատ՝ դարձցուք ապա ՚ի մեր պատմութիւնս։

ասց և նա Եթէ յետ սորա մարգարէք չորք էին յԱրապոլիս ասիացւոց, գտաւերք Փիլիպպոսի, և գերեզմանքն նոցա անդ է, և հօրն իւրեանց. զայս ասաց նա։ Իսկ Ղուկաս ՚ի Գործս առաքելոցն վասն գտաւերացն միւսոյ Փիլիպպոսի ասէ, զի էին նորա ընդ հօրն իւրեանց ՚ի Կեսարիայ հրէաստանեայց յայնմ ժամանակի, և ունէին նորա շնորհս մարգարէութեան. յիչէ բանիւք իւրովք, և ասէ այսպէս եթէ, Եկաք՝ ասէ՝ ՚ի Կեսարիայ և մտաք ՚ի տունն Փիլիպպոսի աւետարանչի որ էր նա յեօթեանց անտի, և լուծաք առ նմա. բայց էին նորա գտաւերք կուսանք չորք որ մարգարէանային։ Արդ զայս ինչ զոր ընկալաք մեք և ուսաք յառաքելոցն, և վասն ժամանակացն նոցա, և վասն գրոց սրբոց զոր Թողին մեզ և վասն որոց միանգամ երկմտութիւն է զնոցանէ, և բազմից ընդունելի էն, և վասն որոց լի բովանդակ խոստեալք և օտարացեալք էն ՚ի Հնմարիտ հատատոց առաքելոցն, այսոքիմբք ասացաք մեք։ Եկեսցուք այսուհետև ՚ի պատմութիւնն որ առ յապայ։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Երբ ո՛րպէս վկայեաց Սիմէոն եպիսկոպոս Երուսաղեմացւոց.

Յետ Ներսէին և Պոմպէիանոս, յաւուրս Տրայիանոսի զոր յիշեցաքս, ասի բան եթէ, ի գրգռութենէ ժողովրդեան ուրեք ուրեք ի քաղաքս յուզին հալածանք ընդդէմ մեր։ Յորում Սիմէոն կզեռլոկանց, զոր երկրորդ եպիսկոպոս Երուսաղեմացւոց լինել ասացաք, վկայութեամբ եղեալ յաշխարհէն ընկալաք, և վկայէ այսմ, որպ զանխուն ի բազում ուրեք պաշտեցաք, Հրեգեսիպպոս։ Որ պատմելով զհերեսիսմացս ոմանց, եթէ ի նոցունց ի նմին գոգցես ժամանակս ամբաստանութեամբ մատնի Սիմէոն ի դատաստան մահու. և զաւուրս բազումս պէս պէս տանջանաւք տանջեալ զի քրիստոնեայ է, և զդատաւորն անգամ և զնուաճեն ելին զարմացուցանել Համբերութեամբ իւրով. և յետոյ քան նմանութեան օրինակի չարչարանաց Տեառն մերոյ ի խաչն եղեալ կատաղած վախճանի նորա։ Բայց չէք ինչ արգել ի նմին իսկ յօրինակագրէ անտի լսել զայս

Երեսնեւերորդ եւրորդ. Թէ ո՛րպէս վկայեաց Շմաւոն եպիսկոպոս Երուսաղէմ.

Յետ Ներսէի և Պոմպէիանոսի յաւուրս Տրայիանոսի, ա՛ռ զոր վասն ժամանակացն զայս պատմեմք մեք, ուրեք ուրեք ի քաղաքս՝ ասի բան՝ Թէ յուզեցան հալածանքն՝ որ ի վերայ մեր էին, իբրեւ ա՛ռ ի գրգռութենէ ժողովրդեանն, զի ի նոսա Շմաւոն կզեռլոկանց, զոր ա՛ռ ասացաք զնմանէ եթէ եկաց եպիսկոպոս երկրորդ յԵկեղեցւոջ անդ Երուսաղեմի, ընկալաք մեք եթէ վկայութեամբ եւ նա յաշխարհէն. և վկայէ Հեգեսիպոս, այն որ պատեցաք մեք բանիւս նոցա՝ ի բազում տեղիս պատմէ վասն մարգկան, որ՝ ի հերձուածոյն են, ցուցանէ և ասէ՝ Թէ ի նոցունց յայնմ ժամանակի ամբաստան եղեն զնմանէ Թէ քրիստոնեայ է. և զաւուրս բազումս պէսպէս տանջանաւք տանջեալ լինէին նա. այսպէս զի և զդատաւորն անգամ, և որ միանգամ մերձ էին զնովաւ՝ զարմացուցանէր Համբերութեամբ իւրով. և յետոյ քան նմանութեան օրինակի չարչարանաց Տեառն մերոյ՝ ի խաչն եղեալ կատաղած վախճանի նորա։ Բայց չէք ինչ արգել եթէ ի նմին յօրինակագրէ անտի լսել զայս

զոր պատմէն եթէ. 'ի նոցունց յաղանդաւորացն անտի ոմանք ամբաստան եղեն վասն Սիմէոնի Կղէոպեանց, թէ 'ի տանէ Դաւթի է և քրիստոնեայ և վկայեաց նա ամաց իբրև հարիւր և քսանից առ Տէրայիանոս կայսերբ և առ Աստիկեաս կուսակալ գաղիլիա։ Սոյն այս Հեգեսիպպոս ասէ, եթէ և նոքին իսկ որ ամբաստան եղեն զնմանէ, յորժամ քննութիւն լինէր որոց միանգամ յազգէ անտի էին արքայութեանն Հրեից, իբրև 'ի նոյն ցեղէ ըմբռնեցան և ինքեանք։ Եւ ոչ յանդգնեալ ինչ ոք ասիցէ, յորժամ զՍիմէոն ակնկալեալ Տէառն բանից և ականատես գործոց նորա հաստիցի հաւատալով 'ի բազմօրեայ կենաց անտի նորա, և 'ի բանից յիշատակութենէ աւետարանին զՄարիամ Կղէոպեայ, զորոյ որդի լինել Սիմէոն կանխաւ եցոյց բանս։ Դարձեալ նոյն ինքն պատմագիր և զայլս ոմանս ասէ 'ի ցեղէս՝ յերզարդ անտի Փրկչին յորդւոց Յուդայ կենդանիս մինչև 'ի ժամանակս Թագաւորութեանս. զի յետ պատմելոյ նորա զառաքինի վկայութիւնն նոցա 'ի վերայ Հաւատոյն Քրիստոսի յատենի Դոմետիանոս գրէ նա այսպէս. Եղեալ գնաչիին նոքա, և 'ի գլուխ առաջնորդ կային ամենայն եկեղեցեաց իբրև վկայք, և իբրև մարդիկ՝ որ յազգէ

զոր պատմէ, եթէ 'ի նոցունց ազանդաւորացն եղեն ամբաստանութիւն վասն Շմաւոնի կղէոպեանց, թէ 'ի տանէ Դաւթի է և քրիստոնեայ է. և վկայեաց սա յամս Տրայիանոսի կայսեր և ենթիկոսի հեւպատոսի։ Բայց էր նա ամաց իբրև հարիւր և քսան. ասաց այսն իսկ այս Հեգեսիպպոս, զի և նոքին իսկ որ ամբաստան եղեն զնմանէ, յորժամ պատնջելոյ լինէին յայնմ ժամանակի՝ որ միանգամ յազգէ անտի էին արքայութեանն Հրեից, զի և նոքա կատարեցան իբրև մարդիկ եթէ 'ի նոցանէն էին։ Բայց յորժամ զնաւս ոք ածէր և խորհէր 'ի միտս իւր, գոնեէ թէ և այս Շմաւոն յայնցանէ է որք ասեին զանէն և լուան 'ի նմանէ. յորժամ ասէին օրինակ ցուցանելի 'ի բազմութեայ կենաց անտի նորա, 'ի ժամանակի իբրև յաւասակէն գերբ աւետարանին զՄարիամ կղէոպեանց։ Բայց զի և որդի նորա էր և նա, կանխեաց յառաջագոյն եցոյց այլ բան. այն օրինակագիրք և զայլս յորդւոց անտի Յուդայ, այն որ անուանեալ կոչէր եղբայր Տէառն մեծի, ցուցանէ թէ կենդանի էին 'ի ժամանակի այսր Թագաւորութեան։ Եւ յետ պատմութեան առաքինի վկայութեան նոցա որ եղեն վասն Քրիստոսի յաւուրս Դոմետիանեայ արքայի, գրեաց այսպէս, եթէ եկին չջնջէին և տեսանէին զամենայն եկեղեցիսն իբրև վկայք և իբրև մարդիկ որ յազգէ անտի էին Տէառն մեծի։ Եւ իբրև եղև խաղաղութիւն մեծ ամենայն եկեղե-

անտի Էին Տեառն մերոյ, Եւ յորժամ Հղև խաղաղու-
թիւն Սիճ ամենայն Եկեղեցեաց, ընդերկարեցան և
կեանք սոցա մինչև յամն Տրայիանոսի կայսեր, յորում
յիշատակեալը Սիմէոն Կղէոպկանց Հօրեղբօրորդի
Տեառն մերոյ ամբաստանեալ ի հերձուածողաց ո-
մանց, և մատնեալ ի դատաստան առաջի Աստիկոսի
բդեշխին, զանազան բազումս չարաչար տանջանօք վը-
կայեաց, մինչև զարմանալ ամենեցուն և բդեշխին
անգամ Թէ զնիւթդ ի հարիւրքսանամեայն որ այսպէս
տոկալ կարասցէ, և հրամայեաց ի խաչ հանել զնա,
Ձեռ այսորիկ սոյն այս այր պատմելով զանցս ժամա-
նակին յաւելուլ ասել եթէ. Մինչև ցայս վայր երբե-
միայն սուրբ առանց ապականութեան եկաց մեաց ե-
կեղեցի Քրիստոսի, զի Թէպէտ Էին ոմանք որք կամ-
ին ապականել զառաջի կանոնս փրկական վարդապե-
տութեան, սակայն ղեռ ևս ի խաւարին կաղալս խ-
րատից որջացեալ Թագչէին սոքա, Բայց երբե զանա-
զան մահուամբ փոխեցան յաշխարհէ Առաքելոյն
սուրբ պար, և Էանց ազգն որ արժանի եղև լսել ա-
կանջօք խրոխտ զինամատութիւնն Աստուծոյ, յայն-
ժամ ասպա սկիզբն էառ անաստուած մոլորութեան
հաստատութիւն ի ձեռն խաբէպաշիւր նենգութեան
սուտ վարդապետաց, Եւ զի ոչ որ մնաց յԱռաքելոց
անտի մերկապելոյ սոքա ընդդէմ Հնամարիտ քարոզու-

ցեայն, ընդդիմերկարեցան նոքա մինչև յամն Տրայիանոսի կայսեր, և
մինչև յայն ժամանակս որ ասացաքս եղեն զնմանէ կղէոպկանց
ամանք յայնպատուոյ անտի յաւելուս Ենթակոսի հետապատսի. և
զանազան բազումս չարաչար տանջանօք վկայեաց, որպես զի ամե-
նայն մարդ զարմանայր և հետապատսի իսկ, Թէ որպես համբերը նա
զայս ամենայն, երբե էր նա հարիւր և քսան ամի, և հրամայեաց ի
խաչ հանել զնա: Եւ հանդերձ այսուիկ սոյն իսկ այս այր ի պատ-
միլ խրոխտանալոյս և ասէ, Թէ յայնմ ժամանակի երբե վկայա
սուրբ առանց ապականութեան կաց մեաց եկեղեցի, զի երբե ի
խաւարի Թագչէին. Թէպէտ և Էին ոմանք որ կամէին ապականել
զառաջի կանոնս զվարդապետութեանն կենաց: Բայց երբե փոխե-
ցան յաշխարհէ ասեի ամենայն ժողովք առաքելոյն որոց, և Էանց
սոյն գործն որ արժանի եղև լսել ականջօք խրոխտ զինամատութեանն
Աստուծոյ, ապա յայնժամ սկսաւ մոլորութիւնն հաստատել, այն
որ Էր նա առանց Աստուծոյ, ի ձեռն մոլեգնութեանցն այնցիկ որ
փոփոխեն զշնորհս վարդապետութեան, զի ոչ մնաց ոք յառա-
քելոց անտի, յայսմ և համաբանակ կամին քարոզել զաստ գի-

Թեան զտանուն խբեացոյ գխոսելիւն հաշակել համ արձակեցան։ Ցայսօսիկ Հեգեսիպպոս՝ ըստ կարգի բանից նորա վանն իրացս այսպէս, այլ մեք եկեսցուք ի կարգ պատմութեանս։

ԳԼՈՒԽ ԼԹ.

Երբ ո՛րպէս արգել և կարձեաց Տրայիանոս զի մի խնդրեսցին քրիստոնեայք ի մահ։

Եւ այսպէս ձգեալ տարածեցան ընդ գաւառս բազումս ի ժամանակին յայնմիկ հալածանք որ ի վերայ մեր, մինչև Պլինիոս Սեկունդոս մեծանուն իշխան

տութիւնն ընդգէմ Աչմարիա քարոզութեանն. և այսպէս ձգեցան ընդ գաւառս բազումս հալածանքն որ ի վերայ մեր էին յայնմ ժամանակի. որպէս և Պլինիոս Սակինգոս գաւառաւր երկրէլի երբև եառս զառգմութիւն վկայիցն՝ խոսվեցաւ. և եղեալ թագաւորին վան բազում ժողովրդոց՝ որ կոտորեալ լինէին յայգագս հաւատոց։ Եւ հանգերձ այսուիկ եղեալ նմա, թէ որ ինչ չար է կամ արատաբոյ քան զբրէնս է, ոչ յանդիմանեցան թէ գործեն, բայց միայն յայտ ցանել, զի յորժամ յառնեն ընդ առաւօտս օրհնեն և փառաւորեն Քրիստոս երբև զԱստուած։ Իսկ գշնութիւնս և զապաշնութիւնս և զգիսաս և զայլ չարիս որ նման են սոցա, և նոքա խոստ և անաթ գեն, և զամենայն ինչ զոր միանգամ գործեն՝ ըստ օրինաց գործեն։ Զի ընդգէմ այսոցիկ Տրայիանոս եւս պատուէր հրամանի երբև զայս, թէ ազգդ քրիստոնէից՝ ի խնդիր մտնու մի խնդրեսցին, բայց եթէ գեպ ինչ լինիցի ուստի գտանեսցի։ Զի սոքին իսկ այսուիկ բազմութիւն ապաշնութեան հալածանացն որ յարուցեալ էր մեծագոյն չիքառ. ոչ իսկ պահպանէին պատճառք և բազդատութիւնք որ կամէին խորամանկել և չարչարել զնոսա։ Էր ժամանակ՝ զի ի ժողովրդենէ անտի, և էր ժամանակ՝ զի ի գաւառացն որ էին ի գաւառսն. Հաստեին ղնոսա գործել ի վերայ մեր։ որպէս զի առանց հրամանաց Թագաւորին ի գաւառս գաւառս բորբոքեին հալածանքն, և բազում հաւատացեալք վկայեցին ազգի ազգի պատրազմաւք։

Երեսնեւերորդ հրովրդ. Թէ որպէս արգել և կարձեաց Տրայիանոս՝ զի մի խնդրեսցին քրիստոնեայք ի մահ։

Այլ առեալ մեր զայս պատմութիւն ի պատասխանւոյ անտի Տարաւղիանոսի, զոր կանխեցաք առացեալ մեր վանն նորա որ առացեալ են հռոմայեցն, և ի սկիզբն թութիւն նորա այսպէս։ Սակայն՝ ասէ՝

գաւառակալ տեսեալ զթագաւորին վկայից խոտո-
ւյաւ, և եցոյց Թագաւորին զՅիւ կոտորելոցն ՚ի պատ-
ճառս հաւատոց, ծանոյց միանգամայն Թէ. Ոչ ի ինչ
անարժան կամ արատաբոյ օրինաց գործել յանդիմա-
նեցան նոքա, բայց միայն զի յորժամ յառնէն ընդ
առաւօտս, օրհնէն և փառաւորէն զՔրիստոս իբրև
զԱստուած: Իսկ զհնութիւնն և զսպասութիւնն և զայլ
սոցին նման ՚ի ջնաս, և նոքա խոտոէն և անարգէն, և
զամենայն ըստ օրինաց գործեն: Ա՛ր այս Տրայիանոս
ետուն վՀիւ հրամանի օրինակ զայս. Ազգն քրիստո-
նէից ՚ի ինդիր մի՛ հնդրեսցի, բայց ըմբռնեալ
որ ՚ի նոսին պատժեսցի: Եւ զիս այսու իկ սպառնացեալ
հրդեհ հալածանացն շիջաւ, Թէպէտև ոչ պակասէին
պատճառք և բաղադրեալք այնոցիկ՝ որ կամէին խորա-
մանկել և չարչարել զմեզ. էր զի ՚ի ժողովրդենէ ան-
տի, և էր զի ՚ի դատաւորաց որ էին ՚ի գաւառսն, չա-
բախօսիչ զմեզ. որպէս զի եթէ ոչ յայտնապէս, սա-
կայն ՚ի տեղիս տեղիս ընդ գաւառսն բորբոքէին հա-
լածանքն, և բազումք ՚ի հաւատացելոց ազգի ազգի
վկայութեամբ նահատակեցան: Եւ զայս պատմու-
Թիւն առեալ է մեր ՚ի պատասխանւոյ անտի Քաղա-
դովնէացն Տէրտուղիանոսի հռովմայեցւոյ, զորմէ
կանխեցաք ասացաք. որոյ առենական յայտարարու-
Թիւն այսպիսի ինչ է. Գտաք մեք, ասէ, զի արգելու-
՚ի ձէնջ ինդիր մնհու, որ էր ՚ի վերայ քրիստոնէից.
քանզի Պլինիոս Անհմնդոս գաւառապետ ՚ի գաւառս պե-
տութեան՝ պատրաստութեաց զոմանս ՚ի քրիստոնէից և
ելոյծ զնոսա ՚ի պատուոյ աստիճանաց իւրեանց. այլ
խոտովեալ ՚ի բազմութենէ անտի վկայից և ոչ գիտե-
լով զինչ գործեալ յայմ հետէ, ծանոյց Տրայիանոս
ինքնակալին, եթէ. բայց յայմանէ զի ոչ կամին զո-
հել դից, ինչ որ չար է՝ ես ՚ի նոսա ոչ գտի. յաւել

գտաք մեք զի արգելաւ ինդիրն մնհու որ էր ՚ի վերայ մեր. զի Պլի-
նիոս Անհմնդոս գաւառապետ աշխարհին պարտաւորեաց զոմանս ՚ի
քրիստոնէից անտի, և եկեալ զնոսա յատաստիանաց իւրեանց. և խոտո-
վեցաւ ՚ի բազմութենէն անտի վկայիցն որ եկեն. և քանզի ոչ գիտէր
յայմ հետէ զինչ գործեացէ, եցոյց Տրայիանոսի արքայի և ասէ
եթէ բայց յայմանէ զի ոչ կամին պաշտել զկուռս, ինչ որ չար է՝
՚ի նոսա ես ոչ գտի. այլ եցոյց նա և զայս ևս, եթէ կանխելով յա-

և ես եթէ կանխեն քրիստոնեայքս ընդ առաւօտս և ջրիքսատս օրհնեն իբրև զԱստուած. և ի խրատս ըզգուշութեան իւրեանց ալգելըն զսպանութիւն, ըզշնութիւն, զագահութիւն, և զոր միանգամ նման են սոցին: Եւ առ այս վճիռ հրամանի եդ Տրայիանոս և եթէ Աստն քրիստոնէից անխոիր մի խնդրեսցի ի մահ, բայց եթէ դէպ լինի ումեք ի նոյն ըմբռնել գատեսցի: Եւ այսոքիկ ահա ըստ կարգի բանից նորա եղան:

ԳԼՈՒԽ ԼԴ.

Երէ ո՛րպէս ի Հռովմայեցւոց եկեղեցւոջ չորրորդ եպիսկոպոս ակաց Եշարիտոս:

Յեպիսկոպոսացն անտի Հռովմայեցւոց Կղեմէս կացեալ ձամն ինն ի վարդապետութեան բանին Աստուծոյ՝ յամին երրորդի ինքնակալութեան Տրայիանոս եւ ի կենաց՝ Թոզլով Յեւարիստոս զպաշտօն առաջնորդութեան:

Նէն քրիստոնեայք ընդ առաւօտս, օրհնեն և փառաւորեն ջրիքսատս իբրև զԱստուած. և ի վարդապետէն իւրեանց պատուիրեն այսպէս, արգելուլ իւրաքանչիւր մարդ ի սպանութենէ, ի շնութենէ, յագահութենէ և ի զրկելոյ, և որ միանգամ նման են այսոցիկ: Եւ ընդդէմ այսր դրեաց Տրայիանոս, եթէ առհասն քրիստոնէից անխոիր մի խնդրեսցին ի մահ՝ բայց եթէ դէպ ումեք լինի դատեսցի: Եւ այսոքիկ իսկ այսպէս էին:

Երիսնեկորդ չորրորդ. երէ եղև եպիսկոպոս չորրորդ յեկեղեցւոջ անդ Հռոմայեցւոց Եշարտոս:

Յամին երկրորդի նորին Տրայիանոսի Կղեմէնտոս եպիսկոպոս Հռոմայեցւոց իբրև էլից վեներորդ ամի պաշտամանն իւրում՝ ի վարդապետութիւն բանին Աստուծոյ՝ եւ յաշխարհէ ասաի, և էա զպաշտօնն իւր ի ձեռն Եշտասոսի:

ԳԼՈՒԽ ԼԸ.

Զի Երուսաղեմացւոց եկեղեցւոյն երրորդ անգ եպիսկոպոս Յուստոս։

Եւ յետ կատարելոյն Սիմէոնի, որպէս ասացաքս, կալաւ զաթոռ եպիսկոպոսութեան եկեղեցւոյն Երուսաղեմացւոց Յուստոս՝ ի Հրեից հաւատացեալ, զի բիւրք էին՝ ի ժամանակին յայնմիկ ընծայեալք՝ ի հաւատս Քրիստոսի՝ ի թլփատութենէ անտի։

ԳԼՈՒԽ ԼԹ.

Վասն Իգնատիոսի և թղթոց նորա։

Բայց պարտ է զի ընդ ժամանակն ընդ այնոսիկ՝ ի կողմանս Ասիացւոց Պողիկարպոս՝ որ կենակից եղև ընդ Աւետարանին, և որոց ականատես և սպասաւորք եղեն Տեառն, և՝ ի ձեռնադրութենէ նոցա ընկալաւ

Երիսնեւորդ հինգերորդ. երկ յեկեղեցւոյն Երուսաղեմի եպիսկոպոս երկրորդ անգ Յուստոս։

Բայց յետ կատարելոյն Շմաւոնի, որպէս ասացաք յառաջագոյն, զաթոռն եպիսկոպոսութեան եկեղեցւոյն Երուսաղեմի կալաւ դիմն Նոցա Յուստոս, որ էր նա հաւատացեալ՝ ի Հրեից անտի՝ ի Քրիստոս. զի բիւրք էին յայնժ ժամանակի որ հաւատացին՝ ի թլփատելոց անտի։ Բայց պարտ է զի ընդ ժամանակն ընդ այնոսիկ՝ ի կողմանս ասիացւոց Պողիկարպոս եպիսկոպոս գիմնացաւոց, այր որ չքնեցաւ ընդ առաքեալն, և զնպիսկոպոսութիւնն՝ յայնցանէ որ տեսին զՏէրն և պաշտեցին ընկալաւ։ Յաւուրս նորա յայտ էր եպիսկոպոս եկեղեցւոյն Յարապոլսի, որ յանուն Հռոմ անուանեալ կոչէր Պապիաս։

Երիսնեւորդ վեցերորդ. վասն Իգնատիոսի և վասն թղթոց նորա։

Եւ Իգնատիոս այն որ մինչև յայսօր ժամանակի անուանի առ բազումս յեկեղեցւոջն անուանացաւոց, յետ Պետրոսի եպիսկոպոս երկրորդ նա եղև։ Բայց ասի զնմանէն բան, եթէ՝ ի կողմանց

Նա զեպիսկոպոսութիւն Զմիւռնացւոց եկեղեցւոյն ։ Ի նոյն ժամանակս Հռչակէր և Պապիաս եպիսկոպոս Հերապոլսոյ, այր Աստուածան և հմուտ գրոց ։ Եւ որ մինչև ցայսօր ժամանակի առ քաղուած ամենահռչակելին Իգնատիոս՝ յետ Պետրոսի երկրորդ եպիսկոպոսութիւն Անտիոքացւոց եկեղեցւոյն կալեցեալ։ այլ զամանէ ասի բան եթէ, ՚ի կողմանց Աւորոց առաքեցաւ ՚ի Հռոմ քաղաք, և վասն վկայութեանն Քրիստոսի անդ գազանաց եղև կուռ։ Եւ իբրև անցանէր նա ընդ գաւառս Ասիացւոց, թէպէտ և ընդ կասկածագոյն զգուշութեամբ պահապանաց Ճանապարհ առնէր, սակայն ուր և մտանէր ՚ի քաղաքս, հաստատէր զեկեղեցիս բանիւ մխիթարութեան և քաջալերէր զհաւատացեալսն նախ յաղանդոյ հերձուածոցն՝ որ այն ինչ բռնաբեալ ՚ի վեր երևէին։ Յորդոր լինէր նոցա պինդ ունել զաւանդութիւնն Առաքելոցն, և յառաւել զգուշութիւն և գրով հաստատել զվերկայութիւնն կարևոր համարեցաւ։ Եւ իբրև եկն նա ՚ի Զմիռնիա, ուր Պողիկարպոսն էր, գրեաց Թուղթ մի առ եկեղեցին Եփեսացոց, յորում և յիշատակէ զՈնեսիմոս Հովիւն նոցա. գրէ միւս ևս Թուղթ ՚ի Մագնեսիա քաղաք, որ առ Մեանդրոս գետովն, և անդ ևս յիշատակ առնէ զԴամաս զեպիսկոպոսն նոցա ։ Միւս ևս այլ Տրալլեացւոց եկեղեցւոյն՝ որոց առաջնորդասէ զՊողիբիոս։ Հանդերձ այսոքիմբք և առ եկեղե-

Աւորուց առաքեցաւ ՚ի Հռոմ քաղաք, և կերպաւ ՚ի գազանաց վասն վկայութեանն Քրիստոսի։ Բայց ՚ի ժամանակի իբրև անցանէր նա ՚ի կողմանս ասիացւոց, և պահէին զնա մեծաւ զգուշութեամբ պահապանքն՝ որ առեալ տանէին զնա. յամենայն քաղաքս ուր և մտանէր, հաստատէր զնոսա բանիւ մխիթարութեան, և քաջալերէր զնոսա զգուշանալ նախ յաղանդոյ անտի, զորմէ այն ինչ բազմացեալ էին. և ապաշէր և խնդրէր ՚ի նոցանէն, զի մի հեռասցին նոքա ՚ի առաքելութենէ անտի առաքելոցն. և վասն բազում զգուշութեան խորհեցաւ նա Թէ և գրով վկայեցէ նա։ Եւ իբրև եմուտ նա ՚ի Զմիռնիայ՝ ուր էր Պողիկարպոս եպիսկոպոսն, գրեաց նա Թուղթ մի առ եկեղեցին Եփեսացոց. և յիշատակէ Թէ գոյր նոցա Հովիւ Ոնեսիմոս. այլ միւս ևս Թուղթ ՚ի Մագնեսիայ քաղաք՝ այն որ է առ կողմն Մինեդրոս գետոյ. զի և զնմանէ յիշատակէ Եթէ էր ՚ի նմա եպիսկոպոս, զի անուն էր նորա Դամաս։ Եւ այլ միւս ևս գրեաց Տրեղիոս քաղաքի, և գրէ Թէ էր անդ առաջնորդ Պողբուոս։ Եւ հանդերձ այնոքիմբք և առ եկեղեցին Հռոմայեցւոց

ցին Հռոմէացեացս գրէ, յորում և աղաչէ զնոսա և յորդորէ մի արգելուլ զնա ի վկայութենէն նորա և մի զրկել ի ցանկալի յուսոյն, եւ ի ցոյց օրինակի ա-սացելոցն արժան է, ինչ ինչ համառօտել աստանօր, որ և գրէ այսպէս. ՅԱսորւոց, ասէ, մինչև ի Հռոմ ընդ գազանս մարանիմ, ի ցամաքի և ի ծովս զոյգ և զգերեկ կապեալ ընդ տասն ընձառիւծս, որք են դասք զինուորաց, որոց երանելոյս չինէն գտեալ՝ ևս չարագոյն լինին. բայց ես ի նոցա անխրտումենէն առաւել ևս ուսանիմ, այլ ոչ եմէ այսու արդարա-նամ; ե՛րբ իցէ զի օգտիմ ի գազանացն որ պատրաս-տեալ ինան ինձ, զոր և աղօթս առնեմ, զի արագ դացին. և աղաչեցից զնոսա զի փութով կերիցեն զիս, և մի լիցի նոցա երկնչել չինէն իբրև յոմանց՝ որ ոչ մերձենգան ի նոսա, այլ ես բռնադատեցից, եթէ և սա-քա ոչ կամիցին։ Թողութիւն արարեալ ինձ, որ ինչ ինձ օգուտն է՝ գիտեմ ես, այժմ սկսանիմ լինել աշա-կերտ, և կրեմ իմ չցանկալ իմիք ոչ յերևելեացս և ոչ յանեերևութենից, զի Յիսուսի Քրիստոսի պատուհասցայց։ Հուր և խաչ և ժողովք գազանաց, ցրուումն ոսկերաց, հատուածն անդամոց, աղացուածն ամենայն մարմնոց և

գլխաց, և մատուցց նոցա նուաճ հաճութենիւնս հաւանութեան, զի մի հրաժարեսցին նորա ի վկայութենէն նորա, և զրկեսցին զնա յոյսոյ անտի զոր ակնկալէ։ Զի ի նոցանէն արժան է գնել սակաւիկ մի վասն օրինակի, որ միանգամ ասացաւ. գրեաց իսկ բանիւ իւրով այսպէս, եթէ յԱսորոյ մինչև ի Հռոմ քառաւք ընդ գազանս մար-մնիմ ես ի ծովս և ի ցամաքի գիշերս և ցերեկ իբրև ընդ տասն ընձառիւծս, որք են նորա դասդիք զինուորացս. զի իրրու մեք բարի առնեմք նոցա, նորա չար առնեն մեզ, և նոցա չարութեանցն ևս առաւել աշակերտիմ։ Բայց ոչ վասն այնորիկ արդարացայ ինչ ևս. հարցա-նեմ ևս զաղբանն՝ որ պատրաստեալ են ինձ. և աղօթս առնեմ զի վաղվաղակի գազանք նորա ինձ, և գրգռեցից զնոսա՝ զի վաղվաղակի կերիցեն զիս, ոչ որ իբր երկնչի յայնց և ոչ մերձենայ առ սա. զի ես ասեմ և որա արդիւնքն և ոչ կամիցին մերձենալ առ ես, տակաւին ևս բռնի գնացից ի վերայ նոցա։ Գիտասջիք գուք ինձ յանձնել իմիք. ինչ որ լաւն իցէ ինձ ևս ինձն գտեալ։ Արդ այսո-հետև սկսանիմ ևս լինել աշակերտ. մի նախանձեսցի ընդ ես ինչ յայնցանէ որ երևին, զի Յիսուսի Քրիստոսի արժանի եղէց. Հուր և խաչ և ժողովք գազանաց և ցրուումն ոսկերաց և պատառատումն ան-դամոց և կոտրատումն ամենայն մարմնոց և տանջանք սատանայի, ամե-նեքեան ի վերայ իմ եկեսցեն. և միայն Յիսուսի Քրիստոսի արժանի եղէց։ Եւ զայս Թուղթս յայնմ քաղաքէ զրկեալ ասացաւ վասն նո-

*տանջանաց սատանայի եկեցեն ի վերայ իմ, միայն զի զՔրիստոս չարչեցայց։ Ցայսոսիկ ի ծաղրս ի քաղաքէն զոր ասացաք՝ առ եկեղեցիս յիշատակեալս գրէր։ Իսկ իբրև ի ծողեալ զՅմիւռնա յառաջ խաղայր, գրեաց ի Տրպիոյ առ Փիլադելփացիս և առ եկեղեցին Յմիւռնացւոց և ուրոյն մնետասանդ առ Պողիկարպոս եպիսկոպոս նոցա. զոր և գիտէր նախանձաւոր և նմանող Սաւաքելոյն, և յանձն արար նմա իբրև հավիտեան և Ճշմարիտ զՀօտ իւր Աստիրաքացւոց եկեղեցւոյն, և ազաչեաց զնա զի փութով այնպուէն հոգաբարձու լինի նոցա։ Նոյն ինքն առ Յմիւռնացւոց եկեղեցին գրելով՝ չի իտէմ ուսաի յառաջ ածեալ զանուն Քրիստոնէն մերմէ այսպէս ասէ. Իսկ ես, ասէ, և յետ յարութեան ի մարմնի գիտեմ և հաւատամ զՆերսն. քանզի յորժամ առ Պետրոսեանսն եկն, ասէ ցնոսա. Ընդաստեղեք զիս և տեսէք, զի ես նորն եմ, և ոչ եմ ոգի առանց մարմնոյ. և նորնժամայն մատեան առ նա և հաւատացին։ Ցիշատակէ և Երանոս զվկայութիւնն սրբոյս և զծաղրս նորա այսպէս. Զոր օրինակ ասաց ոմն ի մէնջ, ասէ, որ վասն վկայութեան Աստուծոյ պարտաւորեալ ընկեցաւ գաղանաց Թէ. Ցօրեան եմ Աստուծոյ և ի ժանիս գազանաց ազացեալ լինիմ՝ զի գտայց Հաց սուրբ Աստուծոյ։ Եւ Պողիկարպոս զայսո-

վկայութեան Նորա, և անդստին ՚ի սկզբանէ անտի զանարատ քաղաքավարութիւնն, և Թէ որպէս պատկեցաւ անեղծ անթառամ պսակաւն, և զբարբառին յաղթութեան էառ անխափան առանց երկմտու-թեան, խորամանկիւք հնարս հնարէք որպէս զի գո-նեա մարմին Նորա ոչ ընդհատցի մեզ. զոր օրինակ բազում ցանկալին ունել զայն և հաղորդել ընդ մարմին սրբոյն։ Քանզի սադրեալ գրգռեցին ոմանք զՆի-կետաս զհայր Հերովդի և զեղբայր Պաղկիտեայ զգա-ցուցանել դատաւորին, զի մի տացէ մեզ զմարմին սրբոյն, զի մի ասէն Թողեալ Նոցա զխաչելեալն, սմա երկիր պագանիցեն։ Ցայս ասէին Նորա ՚ի սադրանաց և ՚ի գրգռութենէ անտի Հրէից, որք զդուշանային մերոցն՝ որոց պատրաստեալ էր առնուլ գնա ՚ի խա-րուկէ հրոյն։ Ոչ գիտէլով Նոցա եթէ մեք զՔրիստոս չկարեմք երբեք Թողուլ, որ ՚ի վերայ ամենայն աշ-խարհի, որոց կարգեալ են ՚ի փրկութիւն, չարչարե-ցաւ, և ոչ այլում ումեք կարեմք պաշտօն մատուցա-նել։ Սմա որպէս որդւոյ Աստուծոյ երկիր պագանեմք. իսկ զվկայն իբրև զաշակերտս Տեառն և նմանողս արժանապէս սիրեմք մեք վասն անպակաս բարեմտու-թեան Նոցա առ Թագաւորն մեր և առ վարդապետ, որոց լսոյն և մեզ աշակերտակից Նոցա լինել և հա-

---

տանին արգասից, իբրև առես զմեծութիւն վկայութեան Նորա, այն որ յաւաջագոյն անարատ էր, որպէս պսակեցաւն անեղծ պը-սակաւն, և զյաղթութիւնն զոր էառ Նա առանց երկմտութեան, խորամանկացաւ որպէս զի և ոչ մարմին Նորա ընդհատցի մեզ, իբ-րեւ բազում ցանկալին առնել զայս և հաղորդել ընդ մարմին սրբ-ոյն։ Գրգռեցին այնուհետև. ոմանք զՆիկոպայ զհայր Հերովդի և զեղբայր Ինդկոսի, զդայցուցանել դատաւորին զի մի տացէն մեզ զմարմին Նորա. զի մի Թողցէն ասէ Նորա զայն որ ՚ի խաչն էլ, և սմա երկիր պագցեն։ Եւ իբրև գրգռեցին Նոքա, օգնէին ընդ Նոսա և Հրէայքն էս., այնուհետև որ և պահէլով էս պահէին զմեզ. զի մեք պատրաստակաց էաք առնուլ գնա ՚ի հրոյ անտի։ Զի ոչ գիտէին Նո-քա Թէ մեք զՔրիստոս ոչ երբեք կարեմք Թողուլ, զայն որ չարչա-րեցաւն վասն կենաց աշխարհի, այսինքն վասն այնոցիկ որ կամին կեալ. զի Քրիստոսի երկիր պագանեմք մեք և ոչ այլոց, Նմա՝ որ էր որդի Աստուծոյ։ Իսկ զվկայն սիրեմք մեք բան օրինի իւրեանց, զի նմանողք եղեն վկայութեան տեառն մերոյ, վասն զի զնչեցին և առա-ւել խորհրդոյն զոր ունէին Նոքա առ Թագաւորն մեր և ուսուցչին. զի արժանի լինցուք և մեք լինել Նոցա աշակերտք և հաղորդք։ Իսկ

ղորդս։ Իսկ իբրև եառես Տաբիւրապետն գյամառ պըն-
դուԹիւնն Հրէից, եդ ի միջի զմարմին սրբոյն և ըստ
սովորութեան իւրեանց այրեաց. և ապա այնուհետև
ժողովեցաք մեք զոսկերս նորա մեծագինս քան զա-
կանս պատուականս և քան զոսկի ընտիր, և եդաք
զնոսա ուր արժանն էր։ Յորում տեղւոջ որչափ ինչ
մարԹ է ժողովեալ մեր, ըստ հնորհելոյ Տեառն ուրա-
խութեամբ և ցնծութեամբ առնեմք զօր յիշատակի
վկայութեան նորա, իբրու ի յիշատակ որոց յաւա-
ջագոյն առաքինացան, և որոց զՀետն գան ի կրԹու-
Թիւն և ի հրաւհանգս։ Այսոքիկ վասն երանելւոյն
Պողիկարպեայ և վասն որ ի Փիլադելփեայ երկոտա-
սանիցն նահատակութեամբ պսակելոց ի Զմիւռնիա.
բայց առաւել քան զամենեցուն՝ նորա միայն յիշա-
տակ մեծապէս հռչակի, որ և միւնւ ի հեԹանոս
անգամ ընդ ամենայն տեղիս պատմի. Եւ այս վախ-
ճան եղև սքանչելոյն և առաքելաշնորհ Պողիկար-
պեայ, զորոյ զպատմութիւն եղբարք եկեղեցւոյն
Զմիւռնացւոց ի ԹղԹին կանուխ յիշատակելոյ ի
մէնջ, մեզ աւանդեցին։ Բայց առ սովիմբ ի ժամա-
նակս նահատակութեան Պողիկարպեայ և վասն այ-
լոց ի Զմիւռնիա վկայելոց գտցես ի գիրս յայս. ընդ
որս և Մետրոդորոս ումն, որ յաղանդոյ Մարկիոնի

իբրև եառես Տաբիւրապետն զմարմ Հրէից որպէս սովոր էին նորա,
եդ զնա ի միջի և այրեաց։ Եւ ապա յետոյ ժողովեցաք մեք զոս-
կերս նորա որ պատուական են առաւել քան զականս պատուա-
կան ծանրագինս, և դարձեալ եմ առաւել քան զոսկի ընտիր. և
եդաք զնոսա ուր արժան էր զոր Տէր ետ մեզ, զի լիցուք ժողովել
ուրախութեամբ և ցնծութեամբ. և առնեմք մեք զօրն յիշատակի
վկայութեան նորա, իբրև զկիշատակ այնոցիկ որք յառաջագոյն
առաքինացան և պատրաստութիւն այնոցիկ որ հանդերձեալն են
ճանաչող լինել նոցա. զի իբրև զայս եղև որ գործեցաւ յերանելին
Պողիկարպոս հանդերձ երկոտասանիւքն ի Պիղադելեայ որ վկայե-
ցին ի Զմիւռնիայ, և առաւել քան զամենեցուն նորա միայն բա-
զում է յիշատակ այսպէս. զի և ի միջ հեԹանոսաց պատմի։ Զի
Պողիկարպոսի պարծելոյ և աշակերտի առաքելոյ, որ իբրև զայս
կատարած եղև նորա։ Եղեալք խուն եկեղեցւոյն Զմիւռնացւոց գրե-
ցին զայս պատմութիւն նորա, յայսմ ԹղԹի զոր գրեցաք մեք։
Բայց ի սոյն յայս գեաւս վասն պտղոց վկայից որ վկայեցին ի
Զմիւռնիայ, ի սոյն յայն ժամանակս գրեցին ընդ նմին ըստ վկայու-
Թեանն Պողիկարպոսի, և ընդ նոսին ընդ այնոսիկ պատմին. և վասն

կարծի լինել երից, հրոյ մատեալ սպանաւ։ Այնուա-
նէին ի վկայս եղև յայնժամ երևելին Պիոն, զորոյ մի
ըստ միոջէ զխոստովանութիւնս, զհամարձակութիւն
բանիցն և զպատասխանատուութիւն վասն հաւատոյ
առ ժողովուրդն և առ դատաւորսն, և զերահանգ և
զուսումն վարդապետութեանն նորա հրապարակաւ, և
զյորդոր ապաշխարութեան՝ որոց միանգամ ի փորձա-
նաց անտի հալածանաց անկեալ էին. և զմխիթարու-
թիւնսն զոր մխիթարէր նա ի տան բանտի զեղբարսն
եկեալս առ նա, հանդերձ սոքիմբք և զտանջանսն զոր
համբերեցին, զգաւս դառնագինս և զբևեռսն և զժուժ-
կալութիւն պնդութեան ի բոց հրոյն, և ի կատարած
աքանչելեացս ամենայնի զմահ նորա որոց միանգամ
սիրոյգքն իցեն ուսանել, առաքեմք զնոսա ի գիրս լի
կատարեալ դրոշմեալս ի պատմութիւնս վկայից, զոր
ժողովեալ է մեր յառաջագոյն։ Բայց ի սոցանէ ամե-
նեցուն են և յիշատակք նահատակելոցն ի Պերգա-
մոն քաղաք Ասիացւոց՝ Կարպոսի և Բաբելայ և Կնով
ուրուստն Ագաթոնիկեայ, որք երևելի և աքանչելի խոս-
տովանութեամբ կատարեցան փառաւք։

Մեծարեցուսանակ՝ այն որ կարծեալ երևի երից մոլորութեանն մարկիոնացւոց, այն որ դրոյս չարութեան չունէր նա։ Իբրու վասն նախանձու վկայից Աստուծոյ մատնեցաւ և նա ի հուր և մեռաւ։ Բայց յանուանի վկայիցն որ եղեն յայնմ ժամանակի, մի ի նոցա-նէն էր երևելի Պիոնիոս, այն որ խոստովանութեան նորա ի մատաւնս մատուռս, և համարձակութեամբ բանիւ իւրով և պատասխանոիլն վասն հաւատոց որ առ ժողովուրդն և առ դատաւորսն, և ուսումն վարդապետութեանն նորա որ առաջի ամենայն մարդոյ, և զընդունելն զոր ընդունէր նա որ միանգամ անկան ի փորձանաց անտի հալածանաց, և զմխիթարութիւնսն զոր մխիթարէր նա ի տան բանդի զեղբարսն որ միանգամ մատանէին զնա։ Եւ հանդերձ պատրիմբք, և զտանջանսն զոր համբերէր նա, և չարչարանացն և բևեռել բևեռացն, և զհամբերութիւնսն որ ի հուր անդ, և կատարած նորա որ ամենայնիւ լի կատարեալ էր, գրոշմել էին ի պատմութիւնսն որ յայգագս նորա էին. որ միանգամ սերիւն և կամ մին ուսանել՝ ահա գրեալ է ի վէհսա վկայից որ ժողովեալ է մեր յառաջագոյն։ Բայց է գրեալ ի վէհսան որ միանգամ վկայեցին ի Պերգամոյ քաղաքի ասիացւոց, Կարպոսի և Պափղոսի, և Կնով միոյ որոյ անուն էր նորա Ագաթոնիկեայ՝ որ կատարեցան երևելի և աքանչելի խոստովանութեամբ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Երբ ո՛րպէս Յուստինոս իմաստասէր յառնետարանեկն ՚ի Հռոմ քաղաքի զհաւատս Քրիստոսի վկայական մահուամբ կնքեաց զվախճան իւր։

Ընդ այն ժամանակս յիշատակեալն ՚ի մէնջ փոքր մի յառաջագոյն Յուստինոս՝ յետ մատուցանելոյ նորա ինքնակալաց զերկրորդ նամակ պատասխանատուութեանն վասն կրծոյից մերոց, կատարեցաւ վկայութեամբ ՚ի նենգաւորէ քսութենէն Կրեսկենտեայ փիլիսոփայի, որ ըստ Կիւնիկեան անուանն և նախանձաւոր վարուց լինէր։ Փոխանակ զի բազում անգամ առաջի բազմութեան ունկնդրաց յաղթահարեր զնա Յուստինոս, ՚ի վերայ Աշմարտութեանն՝ զոր քարոզէր, վկայական մահուամբ գյաղթական ընկալաւ զվախճան։ Եւ զոյն զայս կատարած կենաց Աճարտարամիտ իմաստասէրն Աշմարտութեանց ամենայնի մեկնապէս կանուխ գուշակեր ՚ի նամակի անդ պատասխանւոյն՝ բանիւս. Կա, ասէր, սպասեալ ակն ունիմ մատնել ՚ի միոյ յայսցանէ՝ որ փիլիսոփայքն կոչին, և բևեռել

վկայասանելոյդ. քէ որպէս Յուստիանոս փիլիսոփայ մինչդեռս աւետարաներ ՚ի Հռոմ քաղաքի գրանն Քրիստոսի՝ վկայեաց։

Ընդ այն ժամանակս Յուստինոս այն որ յառաջ քան զառաջինն մի ասացաք վասն նորա, յետ մատուցանելոյ նորա զնամակ պատասխանւոյն երկրորդ վասն ուսմանն մերոյ նոցուն Թագաւորացն, կատարեցաւ վկայութեամբ։ Զի Կրեսկոս փիլիսոփայ, որ էր նա կինիկա՝ այսինքն շուն, զի խորհրդովք և արդեամբք անուանն իւրոյ նախանձէր նմանել. փոխանակ զի բազում անգամ յանդիմանելոյ բազմոց որ կային յաղթեաց նմա մաքառամաբ Յուստինոսս։ Իսկ յետոյ յոգեաց բաղդապոյս կուռել ՚ի վերայ նորա նենգութեամբ, և վասն Աշմարտութեանն զոր գրէր քարոզէր նա, վկայութեամբ կատարեցաւ։ Եւ զոյն զայս և այս փիլիսոփայս Աշմարտութեամբ մեկնապէս ասաց ՚ի նամակի անդ պատասխանւոյն զոր արար նա։ Եւ որ ինչ անցանելոց էր ընդ նա, կանխեաց յառաջագոյն այսու բանիւ, Թէ և ես՝ ասէ՝ սպասեալ ակն ունիմ

ընդ փայտի, ի Կրեսկենտեայ Թերևս ի պռոտոտղ և ի մտապարծ ստանուն փիլիսոփայէ, զի չէ արժանի փիլիսոփայի անուան, որում չէն տեղեակ՝ վկայէ յայտնապէս առաջի Ժողովրդեան Թէ անաստուածք են քրիստոնեայք և ամբարիշտք, և զայս առնէ ի չնորհուհս ոամկին չարաչար մոլորութեամբն։ Զի և Թէ չէ նորա երբեք ընթերցեալ զուսումն վարդապետութեան Քրիստոսի, և համարձակի ասել ի վերայ մեր ստութիւն, յայտ է Թէ չար ևս է նա քան զոր գէտս, որք բազում անգամ զգուշանան ի խօսելոյ զոր ոչն գիտեն, կամ վկայ լինել ստութեան։ Այսպ եթէ ընթերցեալ և չեղև խելամուտ մեծութեանն որ ի նմա, կամ Թէ խելամուտ եղև, և զայդ այդպէս առնէ՝ զի մի կասկածաւոր երևեսցի, առաւել ևս վատթար և յոռեգոյն գտանի, զի տգիտութեան ոամկին և անմիտ կանխակալ կարծեաց և երկիւղի ստրուկ է այնպիսին։ Հարցի զնա հարցուածս՝ որ իբրև զայս են, զի ուսցայ ի նմանէ և յանդիմանեցից եթէ արդարև ոչինչ ոչ գիտէ։ Կամիմ զի գիտիցէք դուք եթէ ճշմարիտ ասեմ, զի եթէ ոչ մատուցան առ գիտութիւնդ ձեր սոյն այս բանք մեր Հասարակաց, պատրաստ եմ դարձեալ յանդիմանն առնել միւսան-

---

մանել ի միոյ յայնցանէ որ անուանիքն են, կամ ի Կրեսկոսէ փառասէր և սուտ փիլիսոփայէ, և կամ յայլմէ, և բևեռել ընդ փայտի։ զի ոչ փիլիսոփայ արժան է մեզ կոչել զնա, զոր մի որ զոր ինչ ոչ գիտէ՝ վկայէ յայտնապէս առաջի Ժողովրդեանն, եթէ քրիստոնեայք, ասէ, առանց Աստուծոյ են և անօրէնք։ և որպէս զի արասցէ ընդունելութիւն բանիցդ որ մոլորեալն են՝ արարն զայս, զի Թէ ընթեռնուլով ոչ ընթերցաւ զուսումն վարդապետութեան Քրիստոսի, և համարձակի ասել ի վերայ մեր ստութիւն, յայտ է Թէ այլ չար է նա, և առաւել չար է նա քան զոգեաս։ զի նոքա Թերևս պահեն զանձինս իւրեանց կամ մաքառել, կամ վկայել ստութիւն զոր ինչ ոչ գիտեն։ Այսպ Թէ գարձեալ ընթերցաւ, և ոչ եղև խելամուտ մեծութեանն որ է ի նմա, կամ Թէ խելամուտ եղև, գարձեալ վասն զի մի Թուհսցի եթէ այս այսպէս է՝ արար զայս. առաւել ևս գտանի լքեալ և չար, հնազանդեալ սպիսաւեթեան և ընդունայն փառաց և երկիւղի։ Եւ զի հարցի զնա հարցուածս որ իբրև զայս են, զի ուսցայ ի նմանէ և յանդիմանեցից զնա, Թէ արդարև ոչ ինչ գիտէ։ Կամիմ ես եթէ գիտակ լինիցէք Թէ ճշմարիտ ասեմ. զի Թէ ոչ մատուցան առ գիտութիւնդ ձեր սոյն այս բանք հասարակաց, պատրաստակաց եմ ես զի գար-

գամ զՀարցուածծն, զի և սոյն այս գործ արքունա-
վայել է արժանի մեծութեան ինքնակալին։ Իսկ եթէ
գիտիցէք դուք զՀարցուածծն իմ և զպատասխանիս
նորա, յայտ է ապա ձեզ զի 'ի մերոց աստի ինչ նա
ոչ գիտէ. և թէ գիտէր և վասն ունկնդրացն իւրոց
ոչ համարձակեցաւ ասել, որպէս կանխեցի յառաջա-
գոյն ասացի, յայտ է եթէ ոչ իմաստասէր է նա, այլ
փառասէր, որ ոչ պատուէ զարժանատենչ քան Սոկ-
րատայ։ Ա.յսչափ ինչ Ցուստինոս։ Բայց որպէս ինքն
կանուխ գուշակեալ էր թէ 'ի Կրեսկոսէ դաւաճա-
նեալ կատարեցի, Տատիանոս՝ որ յառաջնին ամ կե-
նաց իւրոց վարժապետ էր 'ի հեթոորական ուսմունս
Հելլենաց, և մեծապէս փառաւորէր 'ի նոսին, բա-
զում ինչ թողեալ 'ի յիշատակ հանձարոյն, խօսելով
'ի գիրսն որ առ Հելլենս այսպէս. Եթէ և ինքն սքան-
չելին Ցուստինոս բարւոք նմանեցուցանէ զնոսա. Զի
արժան նախամեծար առնել զմարդ քան զՀնարտու-
թիւն աւազակաց։ Սակաւիկ մի զվիլիսոփայից խօսե-
լով՝ յարէ ապա 'ի նոյն այսպէս. Եթէ Կրեսկոս ոմն
Հաստատեալ բնակութեամբ 'ի մեծի քաղաքին, 'ի
մանկատփութեան զամենեքումբք անցեալ և յար-
ծաթասիրութեան յոյժ գեր 'ի վերոյ. և որ արհամա-
րել զհաճ զայլս խրատելով, ինքն ահաւադիկ անտի եր-

ձեալ յանգիման ձեր միւսանգամ լինին այս Հարցուածք, զի և սոյն
այս գործք արքայութեան է։ Ապեթէ գիտիցէք դուք զՀարցուածծ-
սըն իմ և զպատնս նորա, յայտ է ձեզ այս, թէ ինչ 'ի մերոց աստի
նա ոչ գիտէ. և թէ գիտէր և վասն այնոցիկ որ լսելին ոչ համար-
ձակեցաւ ասել, որպէս կանխեցի յառաջագոյն ասացի, յայտ է
եթէ ոչ փիլիսոփայ է նա, այլ փառասէր ընդունայն. զի և ոչ զու-
սում Սոկրատեայ որ արժանի է սիրելոյ՝ պատմէ նա. զայս ասաց
Ցուստինոս։ Բայց զայս զոր կանխեաց ասաց նա, թէ 'ի Կրեսկո-
սէ եղև նմա չարախօսութիւն որ 'ի նմա կատարեցաւ, Տէրտիանոս
պատմեաց, այր որ առաջին վարուք իւրովք Սոփեստոս էր յու-
սումն յունաց, և ոչ սակաւ ելեն փառք գովեստին զոր ունէր 'ի
նմին, և յիշատակ բազում խօսից եթող նա. զի յայնմիկ զոր ասա-
ցեալն է նորա ընդդէմ կռապաշտ հեթանոսաց՝ պատմէ այսպէս և-
Թէ. Եւ Ցուստինոս, ասէ, պաշտելի պարզ և ուղիղ ասաց Թէ
աւազակաց նման են այնոքիկ վասն որոց կանխեցաք ասացաք զնոցա-
նէն։ Եւ իբրև ասաց սակաւիկ մի վասն փիլիսոփայից, ասաց յետ
այսորիկ և զայս. Եթէ Կրեսկոս այն որ այն ինչ նորոգ եմուտ 'ի
քաղաքն Հռոմայեցւոց, սիրելով զարուագիտութիւն մանկտոյ՝ զա-

*կլինէր, որպէս զի զՅուստինոս իբրու ի մեծ ինչ չա-
լիս ի մահ խարդաւանէր, վասն զի զշնմարտութիւն
քարոզէր նա և յանդիմանէր զիւիլիսոփայս եթէ որ-
կորաժէտք են նոքա և ագահք։ Եւ այս եղև պատ-
ճառք վկայական մահու Յուստինոսի։*

ԳԼՈՒԽ ԺԷ.

Վասն վկայիցն զորս յիշատակէ ի գիրս իւր Յուստինոս։

*Սա ինքն Յուստինոս յառաջնում անդ նամակի
պատասխանւոյն յիշատակէ նախ քան զիւր նահատա-
կութիւն և զայլս ոմանս վկայեալ, զոր և կարևորա-
գոյն առաջարկեալ պատմութեանս յարեմք աստա-
նօր։ Կին ոմն, ասէ, ամուսնացեալ ընդ առն բազմոն-
ջի, և ինքն իսկ կինս այս բազ էր յառաջագոյն, բայց
իբրև ընկալաւ զՀաւատս Քրիստոսի զգաստացաւ, և
խնդրէր հնարս հաւանեցուցանելոյ և զայր իւր ցած-
նուլ իբրև զինքն, և յուշ առնէր նմա զկրօնիցս վար-*

*մունքսւմբք անցանէր, և զարծաթախրուեմամբ կարի յոյժ սրա-
դեալ էր, և ի մահաւանէ, այն որ նայն իսկ խրատէ զայլս՝ արհա-
մարհել և անարգել, ինքն երկնչէր ի մահաւանէ, այսպէս զի Յուս-
տինոս իբրև ի մեծ չարիս հնարեցաւ և էարկ ի վերայ նորա մե-
ռանել. վասն զի քարոզէր նա զշնմարտութիւն և յանդիմանէր
զիւիլիսոփայս, եթէ են նոքա ագահք և խարեբայք։ Եւ պատճառք
իսկ վկայութեան Յուստինոսի այս եղև։*

*Եօրինեւտասներորդ. բև որ որ ևն վկայքն զոր յիշատակէ խօսիքն
իւրովք Յուստինոս։*

Ինքն իսկ Յուստինոս յառաջ քան զիւր վկայութիւնն յի-
շատակէ զայրս, որ նախ քան զնա վկայեցին, ի նամակի անդ պա-
տասխանւոյն առաջնոյ, զոր արար նա Թագաւորացն, վասն զի պի-
տոյ էր այնմ Հաւիցն զոր արկեալ էր նորա. և գրեաց այսպէս,
եթէ Կին մի, ասէ, ամուսնացեալ էր առն միոյ բազանոցի, և ինքն
իսկ կինն յառաջն բազ էր։ Բայց իբրև դիտաց զուսումն վարդա-
պետութեանն Քրիստոսի, սրբեցաւ և սգաստացաւ, և Հնարս
խնդրէր հաւանեցուցանել զայր իւր զգաստանալ նմա իբրու զինքն,
և յուշ առնէր նմա զուսումն վարդապետութեան, և երկրորդեալ

դասետուԹիւն՝ եԹէ որոց ոչն զգաստուԹեամբ կեց-
ցէն և ուղղուԹեամբ՝ պահեալ կայ նոցա հուր տան-
ջանացն յաւիտենից։ Ա՛յլ նորա ՛ի խառնակաւոր գնացս
իւր հանապազորդեալ՝ օտարացուցանէր յինքենէ
զլծակից իւր. քանզի ամբարշտուԹիւն անօրէնու-
Թեան համարեալ կնոջն ընդ այնպիսւոյ առն կեալ՝
որ ընդդէմ օրինաց բնուԹեան և արդար իրաւանց
զգանկուԹիւնս իւր կամէր կատարել, խորհէր այնու-
հետև որոշել զինքն յամուսնուԹենէ նորա։ Եւ ՛ի
խրատէն յիւրոց անտի կալ ՚ինալ այլ ևս ժամանակ
մի յուսով ՛ի լաւագոյն փոխելոյ բարուց առնն, բըռ-
նադատեալ զանձն իւր ՚ինաց ընդ նմա։ Ա՛յլ իբրև
յԱղէքսանդրիա երԹեալ առնն չարաչար ևս շամբՀել
նորա անդ լուռ լինէր, զի մի լծակցուԹեամբն և ան-
կողնակից կենակցուԹեամբն հաղորդ ամբարշտու-
Թեան նորա լինիցի, ետ նմա օրինօք զապահարզա-
նին և մեկնեցաւ ՛ի նմանէ։ Իսկ այր նորա պիղծ և ան-
օրէն, որում արժան էր խնդալ և ուրախ լինել, զի
որ յառաջագոյն ընդ ծառայս և ընդ վարձկանս
տանն համարձակ ընդ արբեցուԹիւնն և ընդ ամհնայն
չարիս գայր, ոչ միայն դադարեաց ՛ի չարեացս յայս-

պատճէն նմա զհուր տանջանացն յաւիտենից՝ որ պահեալ է այնո-
ցիկ որ ոչն զգաստանան և վարին ՛ի խորհուրդս ուղիղս։ Իսկ նա ՛ի
գինւոյԹիւն պղծուԹեան իբրոյ ՚ինայր, ՛ի ձեռն ազատելի գործոց
իւրոց՝ օտար արար նա զկին իւր. քանզի ամբարշտուԹիւն անօրէ-
նուԹեան համարեալ էր կնոջն ամուսնանալ ընդ այնպիսի այր, որ
կամի գործել պէսպէս հնարիւք զգանկուԹիւնս իւր արատաբոյ օրի-
նաց բնուԹեան և արժանաւոր իրաւանց. կամեցաւ կինն քակել
յամուսնուԹենէ անտի նորա։ Եւ քանզի պատկառէր նա ՛ի մեր-
ձաւորաց անտի իւրոց, զի իրաւունն գնա զի գարձեալ միւս ևս
անգամ ներեսաց նմա վասն յոյսոյ վաղուն ԹէՀ փոխեսցին բարքն։
Իբրև եկն այրն նորա՝ բանագատեաց կինն զանձն իւր և ՚ինաց առ
նմա, վասն զի Ա՛ղէքսանդրիա էր երԹեալ. և առնէն ԹէՀ գործէր
նա անդ գործս չարաչարս՝ զի մի լըցի նմա չաղորդութիւն կցոր-
դուԹեան ընդ անօրէնուԹիւն ամբարշտուԹեան նորա՝ յամենալ
անդ իբրամ ընդ նմա յամուսնուԹեան և յանկողինս հասարակաց
՛ի բնակէն ՛ի միասին, ետ կինն ԹուղԹ ապահարզանի և մեկնե-
ցաւ ՛ի նմանէ։ Իսկ այր նորա պիղծ և անօրէն որ արժան էր նմա
խնդալ և ուրախ լինել զի արձակեցաւ կինն յայնմանէ՝ զոր գոր-
ծէրն յառաջագոյն յայնպիսւոյ ընդ ծառայս իւր և ընդ վարձկանս
տանն խառն կայր ՚ի ուրախ լինելոյ ընդ արբեցուԹիւն և ընդ ամե-
նայն չարիս, և յամենայն գործս պղծուԹեան ածաւ և դադարեաց։

ցանէ, այլ և զնա ևս կամէր ցածուցանել. փոխանակ
զի հեռացաւ ի նմանէ, արար զնմանէ ամբաստանու-
թիւն թէ քրիստոնեայ է: Իսկ կինոջն գիր աղերսա-
նաց առ ինքնակալն մատուցեալ աղաչէր Թոյլ տալ
նմա տնօրէնն և յանձանձիլ կալ ընդից իւրոց և ի
կարգի եդեալ զամենայն, ապա զամբաստանութեանն
զնմանէ առնել պատասխանի, որում և չնորհեցաւ
խնդիրն: Իսկ որ յառաջագոյն այր էր նորա՝ ոչ կա-
րելով ասել ինչ հակառակ կնոջն, ի վերայ Պաղո-
սեայ ուրուսն վարդապետի նորա յուսումն քրիստո-
նէութեան՝ դարձոյց զնա վրէժխնդրութիւն ըստ
այմ օրինակի: Հաւանեցոյց զՀարիւրապետ ոմն զնա
բարեկամ, զի կալեալ արկցէ զՊաղոմէոս ի տուն
բանտի, հարցեալ զնա միայն Թէ քրիստոնեայ իցէ:
Իսկ Պաղոմէոս քանզի Հմմարտասէր էր և ոչ խաբե-
բայ զբ կամ սուտ, խոստովան եղև Թէ քրիստոնեայ
եմ: Ապրաբ զնա Հարիւրապետն կալ ինալ ի կա-
պանս, և ընդ երկար չարչարեալ զնա ի բանտի: Այս
իբրև ածին զայրն առաջի Ուրբիկոսի, զայս միայն
Հարց և նա Թէ քրիստոնեայ իցէ: Իսկ երանելին
որ զամենայն բարի ի հաւատոց Քրիստոսի գիտէր
զնան անձին իւրոյ, խոստովան եղև զվարդապետու-

*կամեցաւ և զնա ցածուցանել՝ զայս ինչ գործեաց նա. փոխանակ
զի հեռացաւ ի նմանէ, արար զնմանէ ամբաստանութիւն Թէ
քրիստոնեայ է: Իսկ կինն զգացոյց ինքնակալ Թագաւորին և աղա-
չեաց զնա զի Թոյլ տացէ նմա զսէրս իւրոց իւրոյ վճարել, և ապա
արասցէ պատասխանի վասն որոյ ամբաստանութիւն է զնմանէ:
Յետ վճարելոյ զսէրսն. և ես նմա զայս պարգև: Իսկ այն որ յա-
ռաջագոյն այր էր նորա՝ քանզի ոչ կամէր առեալ զնա, դարձաւ չբր-
ջեցաւ ի վերայ Պաղոմէոսի վարդապետի կնոջն յուսմանն քրիս-
տոնէութեան, այն զոր եպաս Ուրբիկոս յայսմ օրինակի: Էարկ
Հարիւրապետն զՊաղոմէոս ի տուն բանտի, քանզի բարեկամ էր
նա առն նորա, աղաչեաց զնա զի ըմբռնեսցէ և բանիւ հարցցէ Թէ
քրիստոնեայ իցէ: Իսկ Պաղոմէոս քանզի Հմմարտասէր էր և ոչ
խաբեբայ կամ սուտ, խոստովան եղև Թէ քրիստոնեայ եմ: Նոյն-
ժամայն Հարիւրապետն տարաւ եդ զնա ի տուն բանտի, և բա-
զում ժամանակս չարչարեալ զնա անդ: Իսկ յետոյ իբրև ածին
զայրս զայս առաջի Ուրբիկոսի, զայս միայն Հարց Թէ՝ քրիստո-
նեայ իցէ: Եւ նա զնան զի տեղեակ Հմուտ էր Հմմարտութեանն,
ասէ յանդիման յայտնապէս խոստովան եղև յայս ուսումն պան-
ճելի Աստուծոյ. զի այն որ ուրանայ և դառնայ՝ նա երկմտելով*

Թիւն աստուածային կրօնից։ Զի որ ուրանայն Թէ քրիստոնեայ է, երկմտելով երկմտի այնպիսին 'ի հաւատոց իւրոց, կամ անպատճառ զանձն իւր համարի, և կամ օտար ինչ զուսումնս զայս և փախչի 'ի խոստովան լինելոյ զնոյն, յորոց և ոչ մին առ Ձնմարիտ քրիստոնեայս տեղի գտանէ։ Իսկ իբրև հրամայեր Ուբբիկոս ածել զվկայն 'ի պատուհաս մահու, տեսեալ զայն դատաստան անիրաւ Ղուկիոս ոմն անուն, զի և ինքն քրիստոնեայ էր, և ասէ ցՈւբբիկոս. Եւ ո՞ր իցէ վնաս առնս այսմիկ, որ ոչ ջուն, ոչ պոռնիկ, ոչ սպանող, ոչ աւազակ, ոչ յափշտակող, և ոչ յայլ ինչ գործ չարութեան յանդիմանեալ, միայն զի խոստովան եղև Թէ քրիստոնեայ է, և պարտաւորեցեր զսա, ինչ որ ոչ վայելէ ինքնակալիս Պիոսի և կայսերորդւոյ իմաստասիրի և նուիրական աւետի ծերակուտիս Հռովմայ, դատիս դու Ուբբիկէ։ Որում չտուեալ նորա այլ ինչ պատասխանի, և դու Ղուկիէ, ասէ, 'ի նոցանէն Թուխս լինել։ Եւ յասէ Ղուկիոսի, Ա՛յո, հրամայեաց և զնա տանել 'ի պատուհաս մահու։ Շնորհս ունէր մեծապէս առ այս վկայն Քրիստոսի, զի ապրեալ 'ի չարաչար տեառնոջ և երթայ առ Հայրն բարեբար և Թագաւոր ամենեցուն Աստուած։ Եւ այլ երրորդ ոմն մատուցեալ, զնոյն պատուհաս ընկալաւ և նա։ Յարէ 'ի սոյն ապա Յուստինոս վայելչաբար, զոր և կանուխ ե-

---

երկմտի 'ի հաւատոց իւրոց, կամ ինչ օտար համարի զուսումն զայս և փախչի 'ի խոստովանելոյ 'ի նա, որ մի յայտնանէ՝ առ քրիստոնեայս Ձնմարտութեան չէ։ Իսկ Ուբբիկոս իբրև հրամայեաց զնա սպանանել, եաեա Ղուկիոս, որ էր և նա քրիստոնեայ, զգաստասցոյց զայս որ եղև անիրաւութեամբ, և ասէ ցՈւբբիկոս. Զինչ պատճառք են այսր իբր ոչ յանդիմանեցաս, Թէ է նա ոչ ջուն, ոչ պոռնիկ, ոչ սպանող, ոչ աւազակ, և ոչ այլ չարեաց գործող, բայց միայն խոստովան եղև Թէ քրիստոնեայ է, և պարտաւորեցեր զնա. ինչ որ ոչ վայելէ ինքնակալ Եաեբի, և ոչ փիլիսոփայ որդւոյ կայսեր և սիրելոյ սրանցէլ այ դատիս դու, Ուբբիկէ։ Եւ իբրև ոչ էառնեա պատասխանի վասն այսորիկ, ասէ ցՂուկիոս. Երևի ինձ Թէ և դու քրիստոնեայ էս։ Իսկ Ղուկիոս խոստովան լինէր և ասէր. Ա՛յո, Ձնմարիտ քրիստոնեայ եմ։ Իսկ նա հրամայեաց Թէ և նա կորեցէ։ Եւ Ղուկիոս ասէր Եթէ մեծ շնորհք եղեն 'ի նա զի ապրեցաւ 'ի չարաչար տերանց, և երթայ առ Թագաւորն և Հայրն մեր բարեբար Աստուած։ Եւ այլ միւս ևս գարձեալ մատուցաւ երրորդ, և ընկալաւ և նա պսակիժս պատուհասի մեռանել։

դաք յառաջագոյն, եթէ. եւ ես սպասեալ ակն ունիմ՝ ի միոյ յայնցանէ որ փիլիսոփայքն անուանին, մատնիլ՝ ի մահ, պլըվքն հանդերձ։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Թէ ո՛յք իցեն Յուստինոսի երկասիրութիւնք որ առ մեզ հասին։

Սոյն այս մեր Յուստինոս բազում եթող մեզ իւրոյ կրթի հանձարոյն և աքանչելի աստուածատուր ջանիցն արդիւնս, որ լի են մեծաւ շահիւ օգտութեամբ։ Եւ որ միանգամ յայնցանէ՝ ի մեր գիտութիւն եկին՝ զկարևոր անուանն դրոշմեալ յայնս, զուսմնասիրեան՝ ի նոյնս առաքեմք։ Եւ զառաջինն ունի տեղի բան պատասխանատուութեան նորա առ Անտոնինոս Պիոս ինքնակալն և առ որդիս նորա և առ Ճերակոյսն Հռովմայեցւոց, գրեալ յընծայութիւն կրօնիցս մերոց։ Եւ միւս այլ երկրորդ պատասխանատուութիւն վասն հաւատոց մերոց արարեալ առ հանճարն ինքնակալ և յաջորդ վախճանեալն առ Անտ-

Ընդ սոյն ընդ այսս յարեաց ինքն Յուստինոս և զայս բանս զոր յառաջագոյն յիշատակեցաք, և ասաց. Եթէ ես սպասեալ ակն ունիմ, թէ՝ ի միջի յայնմանէ որ անուանեալք էին՝ մատնեցայց. և այլ ևս։

Որևուսանելորդ. թէ ո՛ր ևն իսօսք Յուստինոսի զոր ընկալաք մեք։

Բայց իսօսս բազումս եթող մեզ սոյն այս Յուստինոս որ լի են մեծաւ շահիւ։ Զի պատմեն զնմանէ, թէ անձն ունէր նա կորովի խնամատուն, որ փոյթ և պինդ էր յուսումն Աստուծոյ, զի ամենեքեան որ միանգամ սիրեն զուսումն՝ նորա արագոյն ինդիր զնոցանէ. և որ միանգամ մեր սեպեալ՝ ի նոցանէ՝ երբեմն՝ ի շահ օգտութեան գրոչմիմք զնոսա։ Ընդ սա մի որ գրեալ է առ Անտոնինոս արքայ, այն որ կոչեցան Եւսեբէս, և առ որդիս նորա, և առ սինկղիտոս հռոմայեցւոց, աղօթս և պաղատանս վասն ուսմանս մերոյ։ Եւ միւս ևս որ է՝ ի նմա պատասխանին վասն հաւատոց մերոց, զոր արարեալ է նորա առ Անտոնինոս Վէրոս, այս որ կալաւ յետ առաջ-

առնիմս վերոս զորոյ զժամանակին դէպսն դիցուք առ յապա։ Ի նորա միւս այլ գրութիւն առ Հելլէնս, յորում ընդ այլ բազում խնդրոյ՝ որ ի մէջ մեր է և փիլիսոփայիցն Յունաց, երկարագոյնս Ճառելով խօսի և զընութենէ գիւաց, զորմէ չէ տեղւոյս երկարել։ Ի նոսա բա դարձեալ ընդդէմ հերձանոսաց առ մեզ հասեալ գրութիւն, զոր և Յանդիմանութիւն վերագրէ։ Ընդ սոսա ամենեսին է նորա և այլ մատենագրութիւն վասն Միաբանութեան Աստուծոյ, զոր ոչ միայն ի մերոց գրոց, այլ և ի գրոց խմասանոցն Յունաց հաստատէ։ Պարձեալ և մակագրեալն Աղանաղոզ կամ Երգիչ, և Պարապմունք վասն հոգւոյ, յորում բազում ինչ հարցուածս պատշաճականս ըստ առաջարկութեան բանին ի մէջ բերեալ և զկարծիս արտաքին խմասանոց, խոստանալով և զիւրն ի միւս այլ գիրս իւր յաւելուլ ի սոսին։ Գրեաց և տրամախօսութիւնն ի ընդդէմ Հրէից, զոր սաքս նա յԵփեսոս ընդ Տրիփոնեայ, ընդ մեծանունն առնին յերբայեցիս ժամանակին, յորում յայտ առնէ թէ որով օրինակաւ շնորհքն Աստուծոյ ածին զնա ի բան հաւատոց. և թէ քանի փոյթ էր նորա յառաջագոյն յաւուրսն փիլիսոփայութեան, և թէ ոչչափ յօժարամիտ զՀետ եղև

Նոյն, որ պատմէցաք մեք վասն ժամանակացն որ այժմ։ Եւ միւս եա գարձեալ, ընդդէմ կատարչաց հերձանոսաց. զի ի նմա գրեալ է նորա վասն բազում քննութեանն, որ է ի մէջ մեր և փիլիսոփայ. յիցն յուսոյ։ Եւ այլ միւս եա գարձեալ զոր ետուա նա ասել ի վերայ բնութեան գիւաց, զի ոչ է մեզ այժմ գնել զնա։ Եւ գարձեալ միւս եա՝ ընդդէմ կատարչաց հերձանոսաց՝ զոր գրեաց ի վերայ նոցա Յանդիմանութիւն։ Եւ գարձեալ այլ միւս եա, եթէ մի միայն գոյ Աստուած, որ ոչ միայն ի մերոց գրոց, այլ և ի գրոց խմասանոց յուսոյ հաստատէ զնա։ Եւ գարձեալ միւս եա, որ գրեալ է ի վերայ նորա՝ Երգիչ։ Եւ գարձեալ միւս եա՝ վասն Շնչոյ, զի ի նմա եգ նա հարցուածս ընդդանաւոր որ վասն այսր Ճառից արկեալ է նա, և գնէ զկարծիս մեաց որ եղև արտաքին խմասանոց յաւուրսն անգ խրճանց, և խոստանայ ասել ընդդէմ նոցա, և գնել զկարծիս մերս որ եղեն նորա ի միւս եա խօսս։ Եւ գարձեալ՝ մեաքառասնից զոր եգ նա ընդդէմ Հրէից, զոյս զոր սաքս յԵփեսոս, ընդդէմ Տրիփոնեայ՝ որ էր յայնմ ժամանակի այր երևելի հերբայեցւոց անտ. և նովաւ ցուցանէ՝ թէ որպէս օրինակաւ ածին շնորհքն Աստուծոյ ի բան հաւատոց, և թէ քանի հոգաբարձութիւն ունէր նա յառաջագոյն յաւուրսն փիլիսոփայութեան, և թէ քանի

նա 'ի քննութիւն Աչմարտութեան։ Եւ պատմէ գաղ-
ձեալ 'ի նմա զՀրեից թէ արպէս խորամանկեալ նոցա
ստութիւնս յօդեցին ընդդէմ կրօնից վարդապետու-
թեան Քրիստոսի, խօսելով առ Տրիփոն այսպէս. Ոչ
միայն, ասէ, ոչ ապաշաւեալ և գարձարուք յորոց
չարաչարն գործեցէք, այլ և արս ընտրանաւ առէք
գուք Հերուսաղէմ, և առաքեցէք 'ի ժամանակին
յայնմիկ ընդ ամենայն երկիր, ասել եթէ Աղանդ
Հերձուածոյ 'ի վեր երևեցաւ անաստուած քրիստո-
նէից. չարախօսել զմեզ այսպէս, զոր և յեղյեղեն
ցայսօր՝ որ միանգամ ոչ գիտեն զմեզ. որով ոչ միայն
ձերոյ վնասուն և մոլորութեան անձանց պատճառք
գտայք գուք, այլ և ամենայն մարդկան։ Յաւելու
ապա 'ի նոյն գիրս, եթէ մինչև յաւուրս նորա փայ-
լէին շնորհք մարգարէութեան 'ի մէջ եկեղեցւոյ։
Յիշատակ առնէ սա և վասն Յայտնութեան Յովհան-
նու, և յայտնապէս ասէ, թէ նորուն առաքելոյ է
գործ։ Այծէ և բանս ինչ մարգարէականս 'ի կշտամ-
բութիւն Տրիփոնեայ՝ զոր Հրեից Հատեալ Հանեալ
էր 'ի գրոց սրբոց։ Եւ այլ յոլով երկասիրութիւնք
են նորա, որ առ բազում եղբարս գտանին, որ մինչև
առ նախնիս անդամ մեծի փութոյ և մտադրութեան
արժանաւոր համարեցան, որպէս զի և Եղեռնս վկայու-

քննութիւն եղև նմա յամենայն անձնէ խրտմ վասն Աչմարտու-
թեանն։ Եւ պատմէ 'ի նմա գտաձեալ վասն Հրեից որ յօդեցին
զնենգութիւնն 'ի վերայ ուսմանն Քրիստոսի, յասել խրատ ընդ-
դէմ Տրիփոնեայ այսպէս, թէ ոչ ասէ գառնալով մի գործէիք
յայնցանէ զոր գործեցէք չարաչարս, այլ և արս երևելիս ընտր-
եցէք գուք յայնմ ժամանակի յՆերուսաղէմ, և առաքեցէք ընդ ա-
մենայն երկիր՝ ասել եթէ ազանդ հերձուածոց երևեցան առանց
աստուածոյ քրիստոնէից. և խօսին զմինչ չարիս. զայս որ այսօր ա-
սեն զմեզ ամենեքին՝ որ միանգամ ոչ գիտեն զմեզ։ Արդ այսու-
հետև ոչ միայն անձանց մերոց և գուք պատճառ կիսաս, այլ և
ամենայն մարդկան։ Գրեաց խակ և ևսոյց, եթէ մինչև յաւուրս նո-
րա կային շնորհք մարգարէութեան 'ի մէջ եկեղեցւոյ։ Յիշատակէ
խակ և վասն Յայտնութեանն Յովհաննու, և ասէ յայտնապէս՝ թէ
նորուն առաքելոյ է։ Եւ յիշատակէ զբանս 'ի մարգարէից, և յան-
դիմանէ զՏրիփոն, զոր Հրեից Հատեալ Հանեալ էր զնա 'ի գրոց։
Այլ բազում խօսք են նորա որ գտանին առ եղբարս բազումս. զի
այսպէս համարեալ էին առաքեալքն խօսք առնս այսորիկ որ լինէին
պնդութիւն յօժարութեան, զի Տիրոնս երկրորդելով երկրորդէ 'ի

Թէամբ նորա վարի ուրեք ուրեք և ի յորրորդ գիրս իւր որ ընդդէմ հերձուածոց, այսպիսի ինչ ասէ. Բարւոք ասաց Յուստինոս, ասէ, ի Ճառս իւր ընդդէմ Մարկիոնի, Թէ և ոչ նմին իսկ Տեառն մերոյ յանձն առնուի լսել, եթէ աւետարանէր նա այլ Աստուած քան յարարչէն, նոյն ինքն գարձեալ և ի հինգերորդ գիրս նորին գործոյ ասէ. Բարւոք ասաց Յուստինոս եթէ յառաջ քան զգալուստ Տեառն մերոյ ոչ երբեք համարձակեցաւ ստանայ հայհոյել զԱստուած, քանզի ոչ գիտէր նա ցայնժամայր զպարտաւորութիւն իւր։ Ա. յաղիւկ ի հարիւր պիտոյից ասացան ի յորդոր փութոյ ուսուիասիրացն զգրուիքս նորա գալ։ Եւ այս այսչափ։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Թէ ո՛յք առ ինքնակարգեալքն Վերոսի կացին եպիսկոպոսք ի Հռոմ և յԱղեքսանդրիա։

Յամին ուԹերորդի իշխանուԹեան Անտոնինոսի Վերոսեայ, ի ընուլ մետասան ամաց եպիսկոպոսու-

բանից անսխ նորա, ի յորրորդ խոսան իւր որ եգեալ է նորա ընդդէմ հերձուածոց, և երկրորդէ ի բանից նորա այսպէս. Թէ Բարւոք, ասէ, ասաց Յուստինոս ի խոսս անդ զոր եգեալ է նորա ընդդէմ Մարկիոնի, եթէ և ոչ և նմին աւետարանէր մերոյ յանձն առնուի, Թէ աւետարանէր Թէ այլ աստուած քան յարարչէ։ Եւ գարձեալ յայլ միւս ևս խոս՝ ի հինգերորդ տոմին իսկ այսր Ճառիցս՝ ասէ այսպէս, եթէ Բարւոք ասաց Յուստինոս, Թէ յառաջ քան զգալուստ տեառն մերոյ ոչ երբեք համարձակեցաւ ստանայ հայհոյել զԱստուած. քանզի ոչ գիտէր նա ցայնմայր զպարտաւորութիւն իւր։ Բայց յայս Երկին իւրաստաց և վասն յորդորելոյ այնոցիկ որ սիրեն զուսումն, զի փութով ընդունեսցեն եղեցին ինդրել կալ ի վերայ խոսից նորա, ի Ճառս որ այսպէս եղեն։

Ինձնատանելորդ. բէ որք եղեն եպիսկոպոսք որք կացին ի Հռոմ և յԱղեքսանդրիա յաւուրս Վերոսեայ։

Յամին իսկ ուԹերորդի ԹագաւորուԹեան Անտոնինոսի Վերոսեայ, երբէ եղեց Անիկետոս եպիսկոպոսն հաւատոյիցս զՔաջա-

Թեան Անիկտոսի 'ի վերայ եկեղեցւոյն Հռոմայ՝ յաջորդեաց զնա Սոտեր։ Եւ յեկեղեցւոջ Աղեքսանդրացւոց կացեալ յորերտասան ամ Կեղադիոն՝ կալաւ յետ նորա Ագրիպպինոս զաթոռն։

ԳԼՈՒԽ Ի.

Թէ ո՛վ որ եւս որ 'ի ժամանակին կացին եպիսկոպոսք յԱլեսիոս։

Եւ 'ի վերայ Անտիոքացւոց եկեղեցւոյն յայնժամ Թէոփիլոս վեցերորդ յետ Առաքելոյն Ծանուցաւ. զի յետ Հերենի չորրորդ կացեալ եպիսկոպոս Կոռնելիոս, և զնա յաջորդէր Հինգերորդ 'ի կարգէ անտի եպիսկոպոսաց Երոս։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Վասն մատենագրաց եկեղեցւոյ՝ որ պայծառացան 'ի ժամանակին յայնմիկ։

Ընդ այն ժամանակս երևելի էր յեկեղեցւոջ Հեգեսիպպոս, զորմէ լիովին Ծանուցաք յառաջին գլուխ

սան ամ, կալաւ յետ նորա Սոտեր։ Բայց գաբռէել և յեկեղեցւոջ անդ աղեքսանդրացւոց, իբրև եկաց չորեքտասան ամ Կեղեդիոն, կալաւ յետ նորա Ագրիպպիանոս։

Քառասներորդ. թէ ո՛վ որ եւս եպիսկոպոսքն որ եղեն յԱլեսիոս։

Եւ յեկեղեցւոջ անդ անտիոքացւոց եպիսկոպոս վեցերորդ յետ առաքելոյն յայս է Թէոփիլոս։ Բայց էր անդ յետ Հերմենեայ Կուդրեղիոս չորրորդ։ Իսկ յետ նորա որ կալաւ զաոռնէն եպիսկոպոսաւԹեան՝ հինգերորդ էր սա։

Քառասներորդ առաչներորդ. վասն օրինակագրաց մատենից եկեղեցւոյ, որ սքանչելի եին ընդ այն ժամանակս։

Սքանչելի իսկ էր ընդ այն ժամանակս 'ի ՋՔ եկեղեցւոյ Հեգ-

Թէան գրոցս. և Դիմոնէսիոս Եպիսկոպոս Կորնթացւոց և Պինիտոս Կրետացւոց, դարձեալ և Փիլիպպոս և Ապողինար և Մելիտոս և Մուսանոս և Մոդեստոս և յետ ամենեցունն սուրբ Իրանեոս: Որոց գրուածիւնք զառաքելական աւանդութեանց և առողջ հաւատոյ զուղղափառութիւն աւրհոդք պահեալ մինչև առ մեզ հասին:

ԳԼՈՒԽ ԻԲ.

Վասն Հեգեսիպպեայ և զորոց յիշատակ առնէ նա:

Իսկ Հեգեսիպպոս 'ի հինգերորդ առ մեզ հասեալ յիշատակարանս իւր, լի կատարեալ վարդապետութեամբ զորոց Թողու մեզ տեղեկութիւնս, յորում պատմէ նա եթէ յորժամ տարագնաց ուղևորութեամբ գնայր մինչև 'ի Հռոմ, ընդ բազում եպիսկոպոսս հաղորդեալ, և զնոյն յամենեցունն լուաւ վարդապետութիւն: Բայց լուր' զոր յետ յիշատակելոյ նորա զբաժուղն Կղեմեայ առ Կորնթացիս յարէ 'ի նոյն. եթէ եկաց մնաց եկեղեցին կորնթացւոց յուղիղ վարդա-

պետս, առ որ ուսաք մեք Թէ էր յաջորդող անտի. և Դիոնեսիոս՝ եպիսկոպոս կորնթացւոց. և Պինիտոս՝ որ էր նա եպիսկոպոս կրետացւոց: Եւ հանդերձ այսոքեմբք՝ Փիլիպպոս և Ապողինարէոս, Մելիտոս, և Մուսանոս, և Մեգեսիոս և Իրենէոս: Եւ մինչև առ մեզ 'ի ձեռն գրոց սոցա կարգեցան և եկին հաւատքն Քրիստոսեան Թէան յաջորդեցին:

Վասն երկրորդ. վասն Քնգսիպոսի, և վասն որոց միանգամ յիշատակէ:

Իսկ Հեգեսիպոս 'ի հինգ խօսեն զոր ուսաք մեք՝ զոր եգեալ է նորա, եթէ նա գրիչատակս խորհրդոց իւրոց լի կատարեալ: Զի 'ի նոսա ցուցանէ, Թէ ընդ եպիսկոպոսս բազումս հաղորդեցաւ 'ի ժամանակի իւրում, իբրև խոստացեալ երթայր նա 'ի Հռոմ քաղաք. և յամենեցունց զայս ուսումն ընկալաւ նա: Բայց լուիցուք 'ի նմանէն զինչ ասէ յետ այլոց, և վասն Թղթոյն Կղեմենտեայ զոր գրեաց նա առ եկեղեցին կորնթացւոց, և երկոր-գէ այսպէս. Եթէ եկաց մնաց եկեղեցին կորնթացւոց 'ի վարդա-

պետութեան մինչև յաւուրս Պրիմոսի եպիսկոպոսի՛ի Կորնթոս։ Ընդ որս՛ի նաւարկելն իմուտ՛ի Հռոմ Հաղորդեցայ ընդ նոսա, զի եղէ աւուրս բազումս՛ի Կորնթոս, և միմիարեցաք ոչ սակաւ ընդ ուղղութիւն հաւատոյ միաբանց։ Նէ իբրև չոգայ՛ի Հռոմ քաղաք, կայի անդ առ Անիկետոսի, որոյ սարկաւագ էր յայնժամ Եղեւթերոս. և յետ Անիկետոսի կալաւ զաթոռ նորա Սոտէր, և յետ նորա նոյն ինքն Եղեւթերոս։ Յիւրաքանչիւր յաջորդութիւնս եպիսկոպոսաց՛ի քաղաքս քաղաքս նոյն պահին կարգք, որպէս օրէնք և մարգարէք և Տէրն մեր քարոզեաց։ Նոյն ինքն դարձեալ մատենագիրս զսիզիզես հերձուածոց, որ եղեն յաւուրս նորա գնէ այսպէս։ Ցետ վկայելոյ Յակոբոս արդարոյ եկաց եպիսկոպոսս Շմաւոն կղեմէ պետանց միաբան հաւանութեամբ հաստարակաց, զի երկրորդ հօրեղբօրորդի էր Տեառն մերոյ. և վասն այնորիկ կոչէին զհեգեզեցիս կոյս, զի ցայնժամ ընդ ապականեալ բանիւ։ Նախ զառաջինն Թէբուղիս սկսաւ ապականել, փոխանակ զի ոչ եղև նա եպիսկոպոս. և եկաց սա մի յերեքն հերձուածոց, ի ժողովոյն անտի գոլով՝ ուստի և Սիմոն էր, յորմէ և Սիմոնեայքն։ Կղեոբիոս, յորմէ և Կղեոբեանք. Դոսիթէոս՝ յորմէ Դոսիթէոսք, և Մասբոթէոս

պետութեանն միամտութիւն, մինչև յաւուրս Պրիմոսի եպիսկոպոսի՛ որ էր՛ի Կորնթոս՛ի ժամանակի իբրև մեկնեցայ ես երթալ՛ի Հռոմ, հաղորդեցայ ես ընդ կորնթացիսն, և եղէ ընդ նոսա աւուրս բազումս, և հանգեաք՛ի միասին ուղիղ ուսմամբ։ Իբրև չոգայ՛ի Հռոմ քաղաք՝ անդ ամենայն կարգն եպիսկոպոսաց մինչև Անիկետոս, որ կալաւ յետ նորա Սոտէրն, և յետ Սոտերի՝ Ազեղեթոս. և այսպէս է ամենայն կարգն և յաջորդն եկն. զի՛ պէս, որպէս և քարոզիչն օրէնքն և մարգարէքն և տէր մեր։ Եւ նոյն ինքն՝ գրուածքն ապացուցանեն՝ որ եղեն յաւուրս նորա, գրուածոց այսոցիկ բանիւք։ Եթէ յետ վկայելոյն Յակոբոս արդարոյ, եկաց եպիսկոպոս երկրորդ Շմաւոն կղեմէնտոց, զի ամենայն մարդ՛ի վերայ նորա եգին զմիտս որ էր նա արդի եղբօր Յովսէփայ. և էր հարազատ տեառն մերոյ, և վասն այսորիկ կոչէին զհեգեզեցիս կոյս, զի ցայնմայր ոչ է ապականեալ նա՛ի լուրս ընդունայնս։ Այլ սկսաւ նախ զառաջինն ապականել անդ Թէբուղիոս, փոխանակ զի ոչ եղև նա եպիսկոպոս, և է նա մի յերեքն հերձուածոց անտի. և է նա՛ի ժողովոյնէն անտի, ուստի Սիմոնն էր, վասն այսորիկ անաս-

յորմէ Մասբոթացիք, և ի նոցանէ Մենանդրացիք, Մարկիոնացիք, Կարպոկրատեանք, Վալենտինեանք, Բասիլիդեանք և Սատուռնիլեանք, Ցորոց մէն մի ի նոցանէ ըստ կարծեաց մտաց իւրեանց մուծին ազանդս հերձուածոց. և ի սոցանէ եղեն սուտ Քրիստոսք, և սուտ մարգարէք և սուտ առաքեալք: Որք բաժանեցին զՀաւատարմութիւն եկեղեցւոյ բանիւք ապականութեան զոր խօսեցան զուտ ճշմարտութեան և զօձելոյ նորա: Դարձեալ նոյն ինքն Հեգեսիպպոս և վասն ազանդոց հերձուածոց որ եղեն երբեմն ի Հրէայս՝ պատմէ այսպէս. Եղեն, ասէ, և կարծիք բաժանեալք ի Թլփատութեան անդ ի մէջ որդւոցն Իսրայէլի հակառակ ընդ ազգին Յուդայ և ընդ օձելոյն. և են Յեսսէեանք, Գաղիլեացիք, Հանապազորդ մկրտողք, Մածբոթացիք, Սամարացիք, Սադուկեցիք և Փարիսեցիք. ընդ որս և այլք բազումք, զորոց փոքր ի շատէ կանուխ ի պատմութեան մերում ուրեք ուրեք յաւելոյ կարգեցաք: Եւ յատեսարանէ անտի Եբայեցւոց և Աւորւոց. և ինչ ինչ յԵբրայական բարբառն եդեալ՝ յայտ առնէ վասն անձին իւրոյ եթէ Յեբրայեցւոց անտի է հաւատացեալ: Եւ ինչ ինչ այլ գարձեալ իբրև յանդիր աւանդութենէ Հրէից ընկալեալ յիշատակէ, Ուր միայն սա այլ և Երանոս և

Նեալ կոչին սիմոնացիք. և Կղեոբիոս՝ զի ի նմանէն եղեն կղեոբիանոսք. և Դոսիթէոս՝ որ ի նմանէն եղեն դոսիթէանոսք: Եւ Խորինթոս՝ որ ի նմանէն եղեն գորինթացիք. և Մասբոթացիք. և ի սոցանէ եղեն Մենդրացիք և Մարկիոնացիք և կարպոկրատեանք. և բասիլիդեանք և սատրնեղինացիք: Զի ամենեքին մի մի ի նոցանէն առանձինն և այլք ըստ կարծեաց մտաց անձանց իւրեանց մուծին ազանդս հերձուածոց. և ի սոցանէն եղեն սուտ քրիստոսք և սուտ մարգարէք, և սուտ առաքեալք: Զի նոքա բաժանեցին զՀաւատարմութիւն եկեղեցւոյ բանիւք ապականութեան՝ զոր խօսեցան ի վերայ Աւետեացն և ի վերայ օձելոյ նորա: Դարձեալ ինքն Հեգեսիպպոս և վասն ազանդիցն հերձուածոց՝ որ էին ի մէջ Հրէիցն, յաւելոյ պատմէ և ասէ, եթէ էին խորհուրդք բաժանեալք ի Թլփատութեան անդ ի մէջ Իսրայէլի, յայսցանէ էին որ հակառակէին ընդ ազգն Յուդայ և ընդ Քրիստոսի, որ են նոքա այսպիսիք, Համոնացիք և Գաղիլեացիք. Միշա մկրտողք, Մածբոթացիք և Եհատերացիք. Սադուկեցիք և Փարիսեացիք, և այլք բազումք գրեաց, զի ի նոցանէն ի ժամանակի իւրեանց ժամանակաւք մեք այսու պատմութեամբ: Եւ յատեսարանէ անտի յԵբրայեցւոց և աւորոց,

ամենայն նախնեացն պար զառաքեալն Սողոմոնի՝ Սմենաւրուեստ զգօտութիւն կոչէին, իսկ զԱղաղանեաց կամ զԱնցայտից գրոց խօսելով՝ ոկկոս յայնցանէ 'ի ժամանակս անդ իւր յոմանց 'ի հերձուածողս մարդկանէ անարի նիւթեալս պատմէ,

ԳԼՈՒԽ ԻԳ.

Վասն Դիոնեսիոսի Կորնթացւոց եպիսկոպոսի; և վասն թղթոց նորա.

Այսացուք այսուհետեւ և վասն Դիոնեսեայ՝ որ կալաւ զաթոռ եպիսկոպոսութեան եկեղեցւոյն Կորնթացւոց, որ զբանչելին զիւր ջանասէր փութոյն խըզնամն ոչ միայն որոց ընդ ձեռամբ իւրով էին, այլ և օտար աշխարհաց անհնախանձ առատաբար հաղորդէր, պիտանի զանձն իւր կացուցեալ կամողիկեայ թըղթովքն զբեղուքն առ բազումս եկեղեցիս. յորս էր և առ Լակեդեմոնացիս վասն աշակերտութեան Ջնմարիտ Հաւատոց զբեալ, և վասն խաղաղութեան և միաբա-

և առաքեցին ինչ ինչ եգ նա 'ի լեզուէ հերբայեցւոց, և ցուցանէ վասն անձին իւրոյ եթէ 'ի հերբայեցւոց էր նա և հաւատաց։ Եւ այլը գաթէոլ Լիշատակի իրըն 'ի անչուութենէն անաթ հրեութենէն առանց գրոց։ Եւ այն իսկ սա և երիտաս, և ամենայն ազաքինէն՝ զառաքեալ Սողոմոնի զգօնութեանս աքանչելի կոչէին զնա. և զայնոսիկ որ անուանեալ կոչէին յայտնութենէք, պատմէ եթէ 'ի նոցանէն 'ի ժամանակս անդ իւր՝ նիւթեացն յոմանց 'ի հերձուածող մարդկանէ անաթ։

Քաւեներդ երրորդ. վասն Դիոնեսիոսի եպիսկոպոսի Կորնթացւոց, և վասն թղթոցն զոր գրեաց։

Այսացուք այսուհետեւ և վասն սորա։ Նախ վասն Դիոնեսիոսի, որ էր եպիսկոպոս եկեղեցւոյն Կորնթացւոց, զի փութոյնն պնդութեան՝ զոր ունէր նա յառաքեալն Աստուծոյ՝ ոչ միայն զայնոսիկ որ էին ընդ ձեռամբ նորա աստուածակերպս, այլև հեռաւոր աշխարհաց էր նա չահ պատութեան. զի 'ի ձեռն թղթոցն զոր գրէր նա առ եկեղեցիս։ Եւ է մի զոր գրեաց առ գնոմանացիան վասն աշակերտութեան Ջնմարիտ հաւատոց, և վասն խաղաղութեան և

նուիրեան, եւ միւս առ Ա֊թենացիս՝ զարթուցանել ի նոսա զհաւատս եւ յորդորել ըստ աւետարանին գնալ, յոր թուլացեալս զնոսա կշտամբել՝ եւ մերձ անկանել ի հաւատոյ. եւ ի կարգէ բանիս յիշատակէ զՊապդիոս եպիսկոպոս նոցա ի հալածանս ժամանակին վկայութեամբ վախճանեալ. եւ յետ մահու նորա Կոդրատոսի կացեալ եպիսկոպոս, ի ձեռն փութոյ սնդուխեան նորա ժողովեալ զրուելոցն եւ արծարծեալ հաւատոյ նոցա՝ վկայէ։ Պարձեալ ցուցանէ եւ թէ Դիոնեսիոս Արիսպագացին՝ որ ի ձեռն Պօղոսի էին ի հաւատս, որպէս և գրեալ է ի Գործս Առաքելոցն, առաջին եպիսկոպոս եղեւ եկեղեցւոյն Ա֊թենացւոց։ Եւ միւս այլ թուղթ է նորա գրեալ առ Նիկոմիդացիս, յորում մարտուցեալ ընդդէմ աղանդոյն Մարկիոնի, կանոնս հաստատունս դնէ ձշմարտութեան։ Եւ առ եկեղեցին որ է ի Գորտինա, և առ այլ եկեղեցիս կրետացւոց գրելով՝ գովէ մեծապէս զՓիլիպպոս զեպիսկոպոս նոցա, զի զհաւատոց հաստատութենէ եկեղեցւոյ նորա վկայէին բազումք, և յիշեցուցանէ նոցա զգոյշ լինել՝ ի կամակար և ի խեղաթիւր գնացից հերձուածողաց։ Եւ ի թուղթն իւր որ առ եկեղեցին Լիմաստրիս և ի Պոնտոս՝ յիշատակէ զԲաբիլեդէս և զելպիստոս իբրու ի նոցանէ

վասն միաբանութեան։ Եւ միւս առ Ա֊թենացիս, վասն զուարթութեան հաւատոց. և վասն գործոց աւետարանի. և յանդիմանէալ կշտամբէ զնոսա նուաւս, վասն զի լքեալ էին միաբ նոցա և մերձ էին յիւս գառնալ յաւետարանէն անտի։ Եւ յայտնէ գէպ եղև վերկայել եպիսկոպոսին՝ որ կայր ի գլուխ առաջնորդութեան նոցա, զի անուն էր նորա Պապդիոս, ի հալածանսն որ եղև ընդ այն ժամանակս։ Եւ յիշատակէ թէ Կոդրատոս եղև նոցա եպիսկոպոս յետ վկայելոյն Պապդիոսի։ Եւ վկայէ ի վերայ Կոդրատոսի, թէ ի ձեռն փութոյ սնդուխեան նորա եկին ժողովեցան ցրուեալքն, և արծարծեցան հաւատոք նոցա։ Եւ հանդերձ այսոքիւք ցուցանէ Դիոնեսիոս այն որ էրն Արիսպագոսէ, որ հաւատաց ի ձեռն Պօղոսի, որպէս և գրեալ է ի գործս առաքելոցն, եթէ եպիսկոպոս առաջին եկեղեցւոյ Ա֊թենացւոց նա եղև։ Եւ այլ միւս ևս թուղթ է նորա՝ զոր գրեաց առ Նիկոմիդացիս, և նովաւ պատրաստացաւ ընդդէմ աղանդին մարկիոնացւոց և հաստատակաց զուսումն ձշմարտութեան։ Եւ առ եկեղեցին՝ որ է ի Գորտինա, և առ այլ եկեղեցիս՝ որ էին ի կղզիսն Կրետացւոց, և գովէ ի նմա զՓիլիպպոս, որ էր նոցա եպիսկոպոս, զի առաքինութիւնս բա-

յորդորեալ՝ի գրութիւն, և զեպիսկոպոս նոցա զՊաղմա յանուանէ յիշատակեալ. տայ զմեկնութիւնս գրոց սրբոց, և բազում և այլ ևս ուսուցանել նոցա վասն ամենայնի և ժուժկալութեան. և պատուիրել նոցա ընդունել զայնոսիկ՝ որք միանգամ դառնան՝ի գայթակղութենէ, ի յանցանաց և՝ի մեղս. թենէ. հերձուածոց։ Ի նորա և այլ թուղթ առ Կնոսացիս՝ յորում ազաչէ զՊիղիտոս՝ մի իբրու՝ի հարկէ լուծ ծանր ժուժկալութեան՝ի վերայ եղեալ դնել այլ եղելի նա իմանալ զտկարութիւն բազմաց։ Որում պատասխանի արարեալ Պիղիտոս, զարմանայ նախ ընդ Վիճեսիոս և գովէ զնա, և փոխանակաւ խնդրէ ապա՝ի նմանէ հաստատուն կերակուրս երբեք երբեք բաշխել նոցա, և կատարեալ թղթովքն հրահանգել զժողովուրդն հաւատացեալ ինքեան, զի մի կամաւք բանիւն մնասել միշտ մորդիկն և ծերասցին՝ի վարս տղայութեան։ Թղթովս այսու ուղղափառութիւն հաւատոց Պիղիտոսի, և փոյթ սնդութեան նորա վասն չահու օգտութեան այնոցիկ՝ որ ընդ ձեռամբ նորա էին, և հանձար խօսից և իմաստութիւն նորա յաստուածայինսն իբրու՝ի պատկերի Ճշգրիտ կերպարանեալ երևի։ Բայց Վիճեսեայ՝ի գարձեալ և այլ միւս ևս թուղթ առ Հռոմայեցիս՝ի ժամանակն՝ յորում եպիսկոպոս էր նոցա Սոտեր անուն, յոր-

զամն վկայեն՝ի վերայ եկեղեցւոյն այնորիկ որ էր ընդ ձեռամբ նորա. և յիշեցուցանէ նմա զդէպ լինել՝ի քրիստեմնէ անտի հերձուածոցն։ Եւ եկեղեցւոյն որ էր Ամմաուսբին, հանգերձ այլովք որ էին՝ի կողմանս պունդացւոց, գրեաց թուղթ և հոյոյ թէ Բաքիղիէս և Հեպիսթոս յորդորեցին զնա և գրեաց, և գրչութեաց՝ի նոսա զմեկնութիւնս գրոց Պաուռնոյ. և ցուցանէ թէ էր նոցա եպիսկոպոս Պ սղէմոյ։ Եւ բազում և այլ ևս ուսուցանէ նոցա վասն ամենայնի և սրբութեան։ Եւ պատուիրէ նոցա գործել զի եղիցին ընդունել զայնոսիկ՝ որ միանգամ դառնան՝ի գայթակղութենէ և՝ի թերութենէ, և՝ի մեղսութենէ հերձուածոցն որ ընդ նոսա պարեալ է։ Եւ այլ միւս ևս թուղթ զոր գրեաց նա առ կանոնացիսն. և ազաչէ՝ի նմա զՎիճեսիոս եպիսկոպոս եկեղեցւոյն՝ որ անդ էր, զի մի գիցէ զուրց ծանր սրբութեան՝ի հարկ՝ի վերայ եղեալ, այլ եղելի նա իմանալ զտկարութիւն բազմաց։ Զի ընդհակ այսր գրեաց ինքն Վիճեսիոս, և զարմացաւ ընդ նմա և գովեաց զԻրենէոս. և ազաչեաց և խրատեաց՝ի նմանէ՝ թէ և յայլ ժամանակս հաստատուն կերակրով՝ի

մէ ինչ մի քաղեալ դնել աստանօր՝ ոչինչ անձամբ համարիմ. որ զսովորութիւնս Հռոմայեցւոց մինչև ի հալածանս ժամանակիս զգուշութեամբ պահեալը գովելով՝ գրէ այսպէս. Քանզի անդստին ի սկզբանէ անտի սովորութիւն է ձեր, ասէ, բազմապատիկ օրինակաւ բարերարել եղբարս, և տալ տանել թոշակ ի քաղաքս քաղաքս բազում եկեղեցեաց, որով զկայ- բօտութիւն աղքատաց լնուք, և որոց ի մետաղս էն դատապարտեալ եղբարց զոգեպահիկն մատակարարէք, զոր և ի նախնեաց անտի սովոր էք առնել զգուշացեալ Հայրենատուր աւանդութեան Հռոմայեցւոցդ:

Իակ երանելի եպիսկոպոսն ձեր Սոտէր ոչ միայն պահեաց զայս կարգ, այլ և աճեցոյց զտուրսն՝ զոր տայր տանել առատաբար առ սուրբսն. և երանական բանիւք մխիթարէր որ ելանէին առ նա զեղբարսն՝ իբրև Հայր գորովասէր զորդիս իւր: Եւ ի նմին յայսմ թղթի յիշատակէ նա զքաղցրն Կղեմայ գրեալ առ Կորնթացիս, և ցուցանէ ի սկզբանէ անտի սովորութիւն լեալ ընթեռնուլ յեկեղեցւոջ. Այսօր, ասէ, կատարեմք զհերոմնական զօր միաշաբաթուն, և ըն-

---

ձեռն կատարեալ թղթոց՝ կերակրեսցէ զժողովուրդն զոր ունի նա ի ներքոյ ձեռն իւրոյ. զի մինչև ի վախճան կատարածի բանիւ անապականութեամբ եղիցին խորհել. և ծերասցին ի վարս տգայութեան: Զի սովին այսու թղթով ձանձալի օրինակ Հզօրութեան Հմայիցա Մեկինիասի. և փոյթ սիգութեան նորա էր վասն չահի օգտութեան այնոցիկ՝ որ էին ընդ ձեռամբ նորա, և խօսից և Հանդարոյն՝ որ յատուկ ածպարտութիւնն էր: Բայց գործեալ է Դիոնեսիոսի և այլ մեռ ևս թուղթ առ Հռոմայեցիս, որ գրեալ է առ եպիսկոպոս որ էր յայնմ ժամանակի՝ որ անուն էր նորա Սոփեր: Եւ ի նմանէ գիւղաբ բան սակաւիկ մի, թէ որպէս գովէ նա զսովորութիւնն Հռոմայեցւոց, որ պահեցաւ մինչ ի հալածանս յայս որ եղեն յաւուրս մեր, և այսպէս ասէ ելեէ Իակըզբանէ ունէիք գործ սովորութիւն օգնական լինել եղ ուրց ամենայն ընտրութեամբ, և տալ տանել թոշակ եկեղեցեաց՝ որ են ընդ ամենայն քաղաքս. զի երբեմն զկարօտութիւնն աղքատաց ընդարձակէք գործ, և եղբարցն որ բնակեալ են ի տագաւարս՝ զկարօտութիւն նոցա լնուք գործ Թոշակաւն զոր յատաջագոյն սովոր էք տալ տանել. իբրև ի Հայրենի տուչութենէ նախնեաց իւրեանց պահէն Հռոմայեցիք զայս սովորութիւն: Զի եպիսկոպոսդ ձեր երանելի Սոփեր՝ ոչ միայն պահելով պահեաց նա,

*Թեոդոսիմ զԹուղթն ձեր, զոր Հանապազ ընթերց-
ման՝ որպէս և զյաւաջադոյն գրեալն առ մեզ զՔ-
Թուղթն կղեմեայ, խելամուտ լինիցիմք խրատու և
վարդապետութեան։ Նոյն ինքն գարձեալ վասն ԹզՔ
Թոց իւրոց՝ փոխանակ զի խարդախեցին ոմանք՝ այս-
պէս ասէ. Աղաչեցէք զիս եղբարք գրել Թուղթս առ
նոսա և գրեցի, և առին լցին զնոսա առաքեալք սա-
տանայի որոմամբք, այնու զի ինչ ինչ Հատին ի նոցա-
նէ և ինչ ինչ յաւելին, որոց վայն յաւիտենից պա-
հեալ կայ։ Բայց չէն զարմանք, զի եթէ զաստուա-
ծեղէն տաճն յանդգնեցան ոմանք խարդախել՝ որ-
չափ ևս առաւել Համարձակեսցին ոչ յայնպիսին ձեռ-
նամուխ գտանել։ Բայց յայսցանէ ամենեցունց՝ է դար-
ձեալ միւս ևս Թուղթ Դիոնիսեայ առ Կրիսպոսփոր
քոյր Հաւատացեալ, յորում զպատշաճական տայ նմա
զկերակուր բանին։ Եւ այս վասն Դիոնիսեայ այսչափ։*

այլ և անձնցանէն զանձոյդ զառաքս զոր տայր առնել սրբոցն, և բանիւք բարեաք միխթարէր զնոքսն որ եբանէին անդր՝ իբրև Հայր ոչ ըմած զբռիս խաբ։ Եւ ի սմին յայսմ Թղթէ յիշատակէ նա և զԹուղթն զոր գրեաց Կղեմէնտոս առ կորնթացիսն. և ցուցանէ իբրև յաւաքին սակրամենտ առաջի ամենայն եկեղեցւոյն ընթեռնուն անդ. արդ ասաց նա եթէ, Այսօր արարաք մեք օր սուրբ զմիաշաբաթուն, և ընթերցաք ի նմա զԹուղթն ձեր, զոյն որ և Հանապազօր արժան է՝ զի յորժամ ընթեռնուիմք զնա՝ լինիցիմք խնամանանալ, իբրև յաւաքին Թղթոյ անտի որ գրեցաւ մեզ ի Կղեմէնտոսէ։ Նոյն ինքն գարձեալ և վասն ԹզՔոյն իւրոյ, փոխանակ զի ապականեցին զնա ոմանք, ասաց այսպէս. եթէ Թուղթս գրել աղաչեցէք զիս եղբարք՝ և գրեցի, և առին լցին զնոսա առաքեալքն սատանայի որոմամբք, այնու իւրք՝ զի պակասեցուցին ի նոցանէն և յաւելին ի նոսին. զի նոցուն այնոցիկ վասն յաւիտենից է պահեալ։ Բայց ոչ աբաւնչելի են իբրա՛ զի եթէ ի գիրս սեառն մերոյ փոփոխեցին ոմանք, ուր Թէ և ի վերայ այնոցիկ՝ որ ոչ այսպէս են՝ արարին ներդեպելուն։ Եւ գարձեալ միւս զԹուղթ է Դիոնեսիոսի՝ որ գրեալ է առ Քրիսպոսքոյ քոյր Հաւատացեալ՝ որ նման էր նոցա, և զկերակուր բանին ըստ պիտոյից նոքա տայր նմա։ Վասն Դիոնեսիոսի այսչափ ինչ։*

ԳԼՈՒԽ ԻԴ.

Վասն Թէոփիլեայ եպիսկոպոսին Անտիոքացւոց։

Իսկ Թէոփիլէայ՝ զոր ասացաք եպիսկոպոս լինել Անտիոքացւոց, երեք գիրք են առ Աւտոլիկոս վասն նախնական սկզբանց Հաւատոց. և միւս այլ մակագրեալ ընդդէմ Հերձուածոյ Հերմոգինեայ, յորում ՚ի Յայտնութենէ Յովհաննու պաշտի նա ՚ի վկայութիւն։ Ի նորա և այլ գիրք իբրև կոչումն ընծայութեան ՚ի հրահանգ երախայից։ Եւ զի ոչ փոքր ինչ և յայնժամ ըստ նմանութեան որոմն ապականէին ոմանք զսուրբ սերմանիս վարդապետութեան Աւետարանչացն, իսկ որ ընդ ամենայն տեղիս հովիւք էին եկեղեցեացն՝ հալածէին զայնպիսիսն իբրև զգազանս վայրի ՚ի խաշնէ Քրիստոսի. մերթ խրատուք և յորդորմամբ առ եղբարս, և մերթ յայտնապէս բացաւ երեսաց մաքառելով ընդ նոսա, ՚ի խնդիրս հարցմանց և ՚ի հերքմունս յամենի զնոսա առնէին։ Եւ ՚ի ձեռն գրոց խօսից զկարծիս մտաց նոցա Ճշգրտութեամբ յանդի-

Քաանևդտրդ չորրորդ. վասն Թէոփիլեայ եպիսկոպոսին անտիոքացւոց, և վասն փիլիպպոսի, և վասն Միղիտոսի, և վասն Միլտոնեայ, և վասն ոգւոց յիշատակացն, և վասն Պապիեասրոսի և վասն Միտրոնեսի։

Իսկ Թէոփիլէայ՝ այն որ ասացաքն զնմանէն, Թէ երեք եպիսկոպոս անտիոքացւոց. և երեք խօսք են նորա ընդդէմ Ցաղկոսի, եւ այլ միւս եւ՝ որ գրեալ է ՚ի վերայ նորա ընդդէմ հերձուածողին Հերմոգինեսի. զի ՚ի նմա պաշտի նա ՚ի վկայութիւն ՚ի Յայտնութենէն անտի Յովհաննու։ Եւ այլ գիրք են նորա որ պիտոյ են վասն առաքելաբանութեան։ Այնոքիկ որ յուսամանէն են հերձուածոյ, յայնմ ժամանակի ՚ի նմանութիւն որոմն ապականէին զսուրբ սերմանիս վարդապետութեան առաքելոցն։ Իսկ հովիւքն՝ որ էին եկեղեցիս ընդ ամենայն տեղիս, իբրև զգազանս վայրի ՚ի խաշնէ Քրիստոսի հալածէին զնոսա. մերթ վարդապետութեամբ և աղօթիւք որ առ եղբարս, և մերթ յայտնապէս յանդիման նոցա պատերազմէին մաքառմամբ, և յամենի առնէին զնոսա։ Բայց գայթակղել և ՚ի ձեռն

մանեալ խայտառակեին, եւ ինքն իսկ Թէոփիլոս՝ Թող զայլ յօլովս, պատերազմէր ընդդէմ նոցա, և այս ի գրոց անտի նոցա յայտ է, զոր ոչնչ հեռաւակ ընդդէմ Մարկիանոսեցւոյն գրէր. որ և ընդ այլ երկասիրութիւնս նորա մինչև ցայսօր պահեալ կայ։ Որում և յաջորդեաց յեպիսկոպոսութեան Անտիոքացւոց եկեղեցւոյն եւթնեերորդն Յովաննէս Մաքսիմինոս։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Վասն Փիլիպպեայ և Մատեանին։

Իսկ Փիլիպպոս՝ զոր ի բանից անտի Դիոնիսեայ Գորտինացւոց եկեղեցւոյն եպիսկոպոս լինել գիտացաք, արար խօսք մի մեծաձիգն խնամով ընդդէմ Մարկիոնի. զոր օրինակ և Կլեմանտոս և Մատեոդոս, այլ վերջինս այս առաւել գոտեւ ի խայտառակել յայտնապէս զմոլորութիւնն առնին։ Մատենագրեցին և այլք յօլովք, որոց խօսք պահեալ կան առ բազումս յեղբարց մինչև ցայսօր ժամանակի։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Վասն Մելիտոնի, և գործոց նմանօքս տայ նա։

Ի ժամանակին յայնմիկ Մելիտոն Սարդիացւոց եկեղեցւոյն և Ապողինար Հիերապօլսոյ եպիսկոպոս՝ մե-

գրոց խօսից զկարծիս մատոյց նոցա Ջդրաւութեամբ յանգիմանելին և խայտառակելին։ Իսկ ինքն Թէոփիլոս Հանդերձ այլովք պատերազմեալ ընդդէմ նոցա, յայտ իսկ է ի խօսեն զոր արարեալ է նորա ուժգին ընդդէմ Մարկիանոսեցւոյն եւ յետ սորա կալաւ զեպիսկոպոսութիւն եկեղեցւոյն անտիոքացւոց Մաքսիմինոս, որ էր նա եօթներորդ յետ առաքելոյն։ Իսկ Փիլիպպոս այն զորմէ ուսաք մեք զնմանէն ի բանից անտի Դիոնիսեայ եպիսկոպոսին կորնթացւոց, որ է նա եպիսկոպոս եկեղեցւոյն գորտինացւոց քաղաքին։ և նա արար խօսք մի ընդդէմ Մարկիանեայ մեծաւ հոգաբարձութեամբ։ եւ Իրենէոս և Մելիտոս այն՝ որ առաւել քան զայլս խայտառա-

Ծապէս պայծառանային. զի երկաքանչիւր որ արարին բանս պատասխանւոյ առ ինքնակալն Հռոմոց՝ որ թա- գաւորէրն ի ժամանակին. Իսկ ի գրոց նոցա հաս- եալքն ի գիտութիւն մեր այսոքիկ էն. Մելիտոնի երկու գիրք վասն Զատկի, վասն վարուց աշխուհակա- նութեան և վասն Մարգարէից. վասն եկեղեցւոյ, վասն տէրունական աւուրն, վասն քնութեան մար- դոյ, և այլ խօսք վասն արարչութեան, և միւս ևս վասն գերելոյ զղջայունս մեր ի հնազանդութիւն հաւատոյ. Դարձեալ վասն Հոգւոյ և մարմնոյ և մե- տաց, վասն մկրտութեան, վասն Ննդեան և Ծննդեան Քրիստոսի [8], և այլ վասն Մարգարէութեան, վասն Ատաբսիրութեան. և գիրք մի Բանալի մակագրեալ: Դարձեալ վասն Սատանայի, վասն Յայտնութեան Յովհաննու, վասն Աստուծոյ մարմնաւոր լինելոյն [9]. և միւս այլ՝ զոր գրեաց առ Աննտինոս ինքնակալ: Եւ ի գրելն նորա վասն Զատկին այսպէս սկիզբն առնէ նա բանից իւրոց. Առ Սերուիլեան Պաւղոսիս, ասէ, փո- խանակաւ բդեշխին Ասիացւոց, յորում ժամանակի վկայեաց Սակարիս մաՀուամբ նահատակութեան՝

կեաց յայտնապէս զմոլորութիւն ատեն այնոքիկ: Եւ այլք բա- զումք, որ խօսք նոցա պահել են առ եղբարս բազումս մինչև ցայսօր ժամանակի: Յայնմ ժամանակի և Մելիտոս եպիսկոպոս և- կեղեցւոյն սարդեացւոց. և Ապողինարէս եպիսկոպոս եկեղեցւոյն Ցարապոլոլի պաՀպէլտակց զօրանային. զի նորա արարին խօսս պա- տասխանւոյ վասն հաւատոյ՝ մի՛ի նոցանէն առանձինն, և մատու- ցին Թագաւորին Հռոմոց, որ էր յայնմ ժամանակի: Բայց խօսք նոցա զոր մեզ գիտացաք այս են. Մելիտոնի երկու՝ վասն Զատկի, վասն Վարուց և վասն Մարգարէից, և միւս ևս վասն եկեղեցւոյ, և միւս ևս վասն Տաբաշծուց, և գրաձեալ միւս ևս վասն Հաւատոյ մարգոց. և միւս ևս վասն Աստղծատոյ Նորին, և գրաձեալ միւս ևս վասն Հնազանդութեան հաւատոյ. և Հանդիպ այսոքիմբք վասն Տնչոյ և մարմնոյ, և գրաձեալ վասն Մկրտութեան, և վասն Ճշմար- տութեան, և վասն Հաւատոյ, և վասն Ծննդեան Քրիստոսի. և վասն բանի մարգարէութեան Նորա և գրաձեալ վասն Տնչոյ և մարմնոյ. և այլ միւս ևս վասն Արժանաբերութեան, և վասն Սատա- նայի. և վասն Յայտնութեանն Յովհաննու և գրաձեալ միւս ևս վասն Աստուծոյ որ ղգեցաւ մարմին. և միւս այլ՝ զոր գրեաց առ Աննտ- նինոս արքայ ի ժամանակի յորժամ գրեաց նա վասն ժամանակ- ման զատկին. և սկսաւ թէ գրեացէ եղոյց զայս: Զի ի ժամանակս Սերոզիզոսի Պաղտ անթիվհնապատան ասիացւոց վկայեաց ... և եղև ինդիր բազում ի Լաւոդիկիա, վասն զատկին որ պատահէ ի

յուզեցաւ խնդիր մեծ ի Լաւոդիկիէ վասն գաւիթն, որ դէպ եղև յաւուրսն յայնոսիկ՝ զորմէ գրեցաքս։ Զոյն գայս յիշատակէ և Կղեմէս Աղեքսանդրացի ի խօսս իւր որ զգատիկէն. և Թէ ի պատճառս գրոյն Մելիտոնի եկն և ինքն ի գրել, Եւ ի գիրս պատմ. խանատուութեան իւրոյ առ ինքնակալն Անտոնինոս՝ զայս ամենայն առ նովին ինքնակալաւ ընդդէմ մեր եղեալ՝ պատմէ, որ չեղև երբեք յառաջագոյն զի այժմ արդ հալածի, ասէ, ազգ աստուածապաշտից՝ նորով հրովարտակաւն ի կողմանս Ասիացւոց։ Ջի անմոմեի չարախօսքն և ցանկացողք ընչից օտարին՝ պատճառս առեալ յաղբունի հրովարտակացն, կողոպտեն և յափշտակեն զոյգ և զերեկ զանմեղ մարդիկն, Եւ յաւելեալ ի բանս իւր ասէ. Եթէ այգ ամենայն քոյովդ հրամանաւ գործի, բարւոք է, զի Թագաւոր արդար զանուղղայս քնաւ չխորհի երբեք. և մեք խընդութեամբ մտադիւր ընկալցուք զդատակնիք մահուս, Բայց զայս միայն ի քէն աղաչեմք, զի անձամբ դու նախ քննեսցես գյամառ և զՀակառակողմարդիկս, որպէս սահեն զմէնջ, և ըստ արդարութեան քում դատեսցես՝ եթէ արժանի մահու գտցես գնոսա և պատժոյ կամ կենաց և հանգստեան։ Այլ եթէ չիցէ այդ քո կամք և հրամանն, որ առ խուժադուժ Թշնամիս ան-

ժամանակս ժամանակս յաւուրսն յայնոսիկ և գրեցան ոչխար։ Զոյն իսկ զայս խօսս յիշատակէ և Կղեմէս Աղեքսանդրացի և ի խօսս իւր զոր գրեաց նա վասն գաւիթն և առաց, եթէ երբէ ի պատճառս խօսիցն Մելիտոնի գրեաց և նա։ Իսկ յայն խօսս պատասխանեալն զոր եդ նա ինքնակալ Թագաւորին, զի երբէ զայս պատմէ, եթէ եղեն չարչարանք ի նմանէ ժողովգածանս մերոյ՝ եթէ ինչ որ երբէք ոչ եղեն, այժմ հալածի առհմ երիվարածաց Աստուածոյ նոր հրամանաւք ի կողմանս ասացւոց։ Ջի չարախօսքն և ցանկացողք ընչից ասացւոցդ, այնպիսիկ որ առանց ամենայն են, ի պատճառս հրամանիցն նորա յայտնապէս կողոպտեն և յափշտակեն զոյգ և զերեկ զմարդիկ անմեղս։ Եւ զլինի այլոց ասաց գտնել, Թէ գու իսկ հրամայեցեր գործել զայս բարւոք է և գործի, զի Թագաւոր արդար ոչ երբէք խորհի ինչ անիրաւութեամբ. և մեք մեծաւ ուրախութեամբ համբերեմք զպատիժ այսր մահու։ Բայց միայն աղաչեմ առաւելագոյնք քէդ, զի նախ փորձեսցես զվատ արս այսր հակառակութեան և գտանեսցես առաւելութեամբ՝ զի Թէ արժանի են մահու և պատժոյ կամ կենաց և հանգստեան։ Այլ եթէ ի քէն չիցեն այս կամք և նոր հրամանքս, զի ոչ առացեալ է ե-

գամ անագորոյն է և խիստ, առաւել ևս յայնժամ աղերսարկուք առ քեզ դիմեմք՝ չթողուլ զմեզ այդպէս յաւար և ի կողոպուտ ամենից։ Եւ յաւելուլ դարձեալ ասել. Ա.յդ առ մեզ իմաստասիրութիւնդ նախ զառաջինն ի բարբարոսաց միջի պայծառացաւ, ապա առ տիեզերական իշխանութեամբ նախնեացն քոց Աւգոստէայ յազգի քումմէ ծաղկեցաւ, եղեալ մանաւանդ նշան բարեգուշակ քումմէ թագաւորութեան, քանզի յայնմ հետէ ի մեծութիւն և ի փառաւորութիւն աճեալ զարգացաւ իշխանութիւն Հռոմոյ. որոյ դու ժառանգ յանկալի եղեալ, եղիցիս իսկ հանդերձ որդւովդ քովք, եթէ զոյդ ընդ թագաւորութեան Աւգոստէայ ծնանելոյն և զարգացելոյ իմաստասիրութեան, զոր նախնիք քո ընդ այլ պաշտամունս և զսա մեծարեալ պատկառ կացեալ զգուշասցիս։ Եւ այս գարձեալ երիցագոյն առհասարակ՝ զի յերանութիւն բարւոք սկսեալ թագաւորութեանն մնդակից գոլով ի միասին աճեցեալ զարգացաւ և մերս իմաստասիրութիւն, իբրև զի յաւուրց անտի Աւգոստէայ ինչ մի ի ձախողակաց անտի ոչ պատահեցաւ. թագաւորութեան ձերում՝ այլ նա մանաւանդ ամենայնին մեծաշուք և փառաւոր ըստ ըղձից հասարակաց ամենեցուն յաջողեցաւ։ Յամենայն թագաւորաց ձերոց Ներոն և Դոմետիանոս միայն հա-

թէ գործեսցի այս այսպէս և ոչ առ Քրիստիա բարբարոսս, առաւել ևս խնդրեմք ի քէն զի մի անփոյթ արասցես զմեզ յայս հաւանանս որ եղիւ մեզ յաչխարհէ։ Բայց յետ այսոցիկ ասաց եթէ փիլիսոփայութիւնն մեր նախ զառաջինն ի մէջ բարբարոսաց առաքինացաւ. բայց ծաղկեցաւ և յազգի քումմէ յաւուրս Աւգոստէայ, և եղև թագաւորութիւնն հռոմոյ յիշխանութիւն մեծ, և մանաւանդ ի քումմ թագաւորութենդ յայնմանէ բարւոքեան. զի յայնմհետէ աձէ և զարգանայ իշխանութիւնն հռոմոյ, այն որ գուդ ընկալար և մեծացուցեր զնա, և այլ ևս ուժգնացուցես հանդերձ որդւովք քովք, իբրու պահես գու զիշխանութիւնն զայն որ աձէ ընդ թագաւորութեան ձերում, որ սկսաւն յԱւգոստեայ նոր. և հարքն քո հանդերձ պատրաստմամբք զայս պատուեցին։ Եւ օրինակ մեծ այս է, զի յերանութիւն թագաւորութեանդ ծաղկեցաւ աւետարանս մեր ընդ բարւոք սկզբան իւրում։ Զի իբրև յաւուրց անտի Աւգոստեայ ինչ չար ոչ եղև թագաւորութեանդ ձերոյ, այլ առաւել ևս ամենայն իւիք փառաւորի և զօրանայ յաղթս մեր ամենեցուն. և յամենայն թագաւորացն որ եղեն Ներոն,

ւանեալ յաչազկոտ մարդկան՝ հաձելեան ընդ չարա-
խօսութիւնս ի վերայ ուսման մերոյ։ Եւ ի նոցունց
անտի յայնցանէ իբրև ի սովորութենէ առանց իրա-
ւանց դէպ եղև կարգել սուտ զրպարտութեանց ի վե-
րայ մեր։ Այլ զտիտուեթիւն մոլորութեան նոցա
Տարքն քո բարեպարիշտը յուղղութիւն ածեալ բա-
ղում անգամ ի ձեռն հրովարտակաց կարձեցին զյո-
լովս յայնցանէ՝ որք համարձակեցան աշխատ առնել
զսոսա։ Ընդ որս և Հատ քո Ագրիանոս, Թողեալ
զայլս բազմագոյնս, գրեր վասն այսր առ Փունդանոս
առ փոխանակ բդեշխին Ասիացւոց։ Իսկ հայր քո, ընդ
որում մանն էր քո յայնժամ յանձնանձանաց աշխար-
հին, գրեաց ի քաղաքս քաղաքս զն մի որ մերձիցէ
մեզ։ ընդ որս առ Լարիսացիս, առ Թեսալոնիկեցիս
առ Աթենացիս և առ Համբրէն Հելլենացիս։ Եւ զի
զբեզ ի նոյն խորհուրդս նոցա գիտեմք, մարդասիրա-
գոյնս մանաւանդ և լի խնամոտութեամբ զմեզ խոր-
հել վստահ եմք ասել և ընդ եղս խնդրուածոց մերոց։
Եւ այս ցայս վայր ի գրոց անտի նորա զոր ի վեր
անդր ասացաք։ Նոյն ինքն ի քաղուածոյս իւր ի նախ-
երգանն անդ կարգէ զՀամար գրոց հին կտակարա-
նաց, Թէ զյր հասարակ հաւանութեամբ ընդունելիք
էին, զոր ի դէպ վարկայ դնել առաջօրօք. և ունի
բանս զայս ձև օրինակի։

Դամետիանոս միայն հաւանեցան հրապուրեցան հաւանել նախան-
ձաւոր մարդկան. և յանձն առին զրպարտութիւնն ի վերայ
ուսմանս մերոյ. և ի նոցունց յայսցանէ իբրև ի սովորութենէն ա-
ռանց իրաւանց դէպ եղև կարգել սուտ վկայութիւնն ի վերայ
մեր։ Բայց սակայն զմոլորութիւն նոցա Տարքն քո յուղղութիւն
ածին. զբազում անգամ զրպարտութիւն կարձեցին ի ձեռն հրովար-
տակաց՝ զայնոսիկ որ միանգամ համարձակեցան և կամեցան աշ-
խատ առնել։ Վասն այսորիկ ընդդէմ իսկ Տարաս Ադրիանոս բազ-
մաց. և գրեաց վասն այսր առ Փունդինոս անթիվհազարաւոս ասելս
ցոց։ Իսկ հայր քո գրեաց վասն մեր առ ամենայն քաղաքս։ զն մի
որ մեզիցէ մեզ. իբրու դու վարկիր ընդդէմ ամենայն ինչ. և զբա-
րեհաւատիկեցիս և զաթեիստիկեցիս և զամենայն ազգս
հեթանոսաց։ Բայց վասն քո տեղեակ եմք, Թէ աւելի քան զնոսա
ունիս դու խորհուրդ բարեաց վասն այսր. և գիտեմք զի առաւել
լապէս զամենայն ինչ խնամոտութեամբ հրամայես դու. վասն ամե-
նայնի զոր ինդրեցաք մեք։ Բայց այս միայն ցայս վայր։ Իսկ ի քա-
ղածոյս որ գրեալ է Մելիտոնէ, ի սկսանել իւրում՝ ի նա գրոչ-

Մելիտոն առ Ոնեսիմոս եղբայր ողջոյն.

Եւ քանզի փութով պնդութեամբ զոր ունիս դու վասն բանին Աստուծոյ, բազում անգամ աղաչեցեր զիս, զի արարիկ քեզ քաղուածոյս յօրինոյց և՛ի մարգարէից վասն Փրկչին մերոյ և վասն հաստատակաց հաւատոյ: Դարձեալ զի ուսանել կամիս վասն հին կտակարանացն ստուգութեամբ թէ քանիպատիկ իցեն թուով, և ո՛ր կարգ նոցա. պէտ արարի ընդ ձեռս քո զայսոսիկ քան զամենայն ինչ առաւել ընտրես. և՛ի վերայ յատիճենական փրկութեան քո մրցեալ ձգնիս: Արդ՝ի ժամանակին իբրև էի ես՝ի կողմանս արևելից և հասի մինչև՛ի տեղիսն՝ ուր քարոզեցաւ այս ամենայն և՛ի գլուխ ելլ, և ուսայ ինամով վասն գրոց հին կտակարանաց, դրոշմեցի և ետուս բերել քեզ, որոց անուանք են այսոքիկ: Մովսիսի հինգ գամատեանքն, Ծնունդք, Ելք, Ղևտականք, Թիւք, և Երկրորդ օրէնք: Դարձեալ Յեսուս որդի Նաւեայ, Դատաւորք, Հռութ, Յորք գիրք Թագաւորաց, Մնա մեաց զերիս գրոց հին կտակարանաց, և եցոյց եթէ ո՛ր են ընդունելիք. զի արժանի կարգէ գնոսա ասա: Իսկ գրեաց այսպէս. Մելիտոն առ Ոնեսիմոս եղբայր, ողջոյն: Քանզի բազում անգամ աղաչեցեր՝ի ձեռն փութով պնդութեան զոր ունիս դու վասն բանին, զի արարից քեզ քաղուածոյս յօրինոյց և՛ի մարգարէից վասն փրկչին մերոյ, և վասն ամենայն հաւանոյ մերոյ: Եւ գարձեալ զի կամիցար դու ուսանել վասն հին գրոց ձշմարտութեամբ թէ քանի՞ են թուով, և ո՛ր կարգ զինի են, փոյթ եղև ինձ զայն զայս առնել. զի տեղեկացոյն գիտէի ես զիսոյն պնդութեան քո զոր ունիս դու վասն հաւատոյ, և վասն վարդապետութեան բանին. զի առաքեալ քան զամենայն ինչ զսեր Աստուծոյ յարգիս դու: Արդ՝ի ժամանակի իբրև էի ես՝ի կողմանս արևելից, և հասի մինչև յաչխարհն՝ ուր քարոզեցան և գործեցան, և ուսայ վասն գրոց հին կտակարանացդ փութով պնդութեամբ, գրոշմեցի և ետուս բերել քեզ. որ են անուանք նոցա այս ինչ: Մովսիսի՝ հինգ, Ծնունդք և Ելք, Ղևտացւոցն և Թիւքն և Երկրորդ օրէնքն. և գարձեալ Յեսուս որդի Նաւեայ, Դպրութիւն Դատաւորաց, և Արաւոթ. և գպրութիւն Թագաւորաց՝ չորք. և գպրութիւն Յիշատակաց՝ երիս. և Սաղմոսք Դաւթի, և Սողոմոնի Առակք, Ձգտութիւնն և Եկեղեսիաս

* Հռութ.

ցորդաց երկու, Սաղմոսք Դաւթի, Սողոմոնի առակք, Իմաստութիւն, Յովսէփ և երգ երգոց և Յոբ։ Մարգարէիցն գիրք, Եսայի, Երեմիա, և երկոտասան մարգարէքն միանգամայն. Եզեկիէլ և Դանիէլ և Եզր, Յորոց ի սոցունց յայսցանէ արարի ես քաղուածոյս և եդի ի վեց գիրս։ Ա. յսորիկ այսչափ վասն Մելիտոնի։

ԳԼՈՒԽ Իէ.

Վասն Ապողինարի եպիսկոպոսին Հերապօլսոյ։

Եւ Ապողինարի են գրուածիւնք ոչ սակաւ՝ որ պահին առ բազումս. իսկ զոր մեք տեսաք ի մեր այսոքիկ են. Բան պատասխանատրութեան առ կանուխս յիշատակեալն մեր ինքնակալ. ընդդէմ Հեղինոց հինգ գիրք, և ընդդէմ Հրէից երկու։ Յետ այսորիկ գրեալ նորա և վասն աղանդոյն Փռիւգացւոց՝ որ այն ինչ նորոգ ի վեր երևեր, և արագ արագ աղմուկս շինէին յուզեր համարձակ նորակրօնութեամբն, զի դեռ ևս յայնժամ Մոնտանոս հանդերձ սուտ մարգարէուհի կանամբքն զհիմունս իւրոյ մոլորութեանն դնէր։

տէս, և երգերգոց և Յոբ և մարգարէք՝ Եսայի, և երկոտասան մարգարէ միանգամայն Երեմիա և Եզեկիէլ և Դանիէլ և Եզր։ Զի ի սոցունց յայսցանէ, արարի ես քաղուածոյս. և եդի ի վեց խօսս։ Ա.յս Մելիտոնի։ Եւ գարձեալ և Ապողինարեան խօսք բազում են որ պահին առ բազումս։ Իսկ զոր մեք տեսաք ի այսքան։ Մի խօսք պատասխանատուին զոր արարեալ է նորա առ այս Թագաւոր՝ վասն որոյ կանխեցաք առացաք մեք զնմանէն յառաջագոյն. և ընդդէմ հերձանոցս՝ հինգ. և ընդդէմ Հրէից երկու. և որ միանգամ յետ այսր եդ. վասն աղանդին փռիւգացւոց. որ այն ինչ նորոգ բուսաւ յառաջ քան զսակաւ մի ժամանակ։ Զի յայնմ ժամանակի սկսաւ Մոնտանոս հանդերձ կանամբք և սուտ մարգարէիւքն որ չըջէին ընդ նմա՝ խոտորեցուցանել ի ճշմարտութենէ անտի։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Վասն Մուսանեայ՝ զոր ի կարգս մատենագրաց դասեցաք սակաւ մի յառաջ, էն նորա խօսք զօրաւոր և կորովի բանիւք արարեալ առ եղբարս, որ Թիւրեցան զհետ հերձուածոյն Ծուժկալաց, որ այն ինչ սկսեալ էր գլուխ ամբառնալ, և մեծանալ յաշխարհն զօտաբոտի և զապականիչ կարծիս մոլորութեան։ Որոյ ա-զանդապետ զՅատիանոս դնեն։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Վասն Յատիանոսի և վասն աղանդոյ նորա։

Զորոյ յառաջ քան զսակաւ մի զանոն երկրորդեցաք՝ որ վասն աբանդելոյն Ցուստինոսի, և նորին ինքեան վկայի աշակերտ զնա ասացաք։ Զայս յայտ առնէ Երանուս յառաջին գիրս իւր ընդդէմ հերձուածոց, և վասն նորին Յատիանոսի և աղանդոյ նորա գրէ այսպէս. Ի Սատուռնինեայ և ի Մարկիոնէ առեալ

Ինանիերորդ տիեզերորդ. վասն աղանդին Յատիանոսի։

Բայց Մխսանոսի՝ այն որ Թուեցաք մեք զնա ընդ այնոսիկ զորս համարեցաքն, է նորա խօսք զոր արարեալ է առ եղբարս՝ որ Թիւրեցան յաղանդս հերձուածոց, որ անուանեալ կոչին անկրեսացիք, գործուցանել զնոսա ի Չնմարտութիւն։ Զի այն ինչ որ սկսան երևիլ և մեծանալ յաշխարհն կարծիս մեսց՝ սուտ և օտար և ապականիչ։ Բայց ասի բան՝ Թէ այսր մոլորութեան պատճառ սկզբան սորա՝ Տերբիանոս եղև, այն որ յառաջ քան զսակաւ մի երկրորդեցաք ի բանից նորա զոր ասաց վասն Ցուստինոսի վկայի աբանդելոյ. և պատմեցաք զնմանէն Թէ աշակերտ նորա էր։ Բայց ցուցանէ վասն այսր Իրենէոս յառաջին խօսեան զոր արարեալ է նո-

* Մխս որ. Տրպ-ռոյ։

որ Ժուժկալքն անուանեցան, քարոզեցին զանամսին կեանս և խոտեցին անարգեցին զառաջին ստեղծուածն Աստուծոյ, հայհոյելով լսելեացն զոյն՝ որ արարն զարու և զեգ ՚ի ծնունդս մարդկան. և ուսուցին հրաժարել յամենայնէ յորում է շունչ, անշնորհակալ գտեալ առ արարիչն ամենայնի Աստուած: Ուրացան սոքա և զփրկութիւն նախամարդոյն ՚ի վերջ ուրեմն զայս հայհոյութիւն յաւելեալ Տատիանոս, որ աշակերտ լեալ Յուստինոսի, ցոլոյսի ընդ նմա շրջէր, այսպիսի ինչ երբեք ոչ երևեցոյց: Իսկ յետ վկայութեամբ մահու վարդապետին, օգտեալ նորա յեկեղեցւոյ և ուսուցեալ սնոտեաց աստուածաբանութեամբ՝ կարծէր յանձն իւր լինել վարդապետ առաւել քան զայլս, և ստեղծ յօրինեաց ինքեան վարդապետութիւն նորաձև, ըստ Վաղենտինեանց՝ յաւիտեանս ոմանս անեղեսպեծս առասպելէր, և ըստ նմանութեան Մարկիոնի և Սատուռնիլեայ՝ զամուսնութիւն ապականութիւն և պղծութիւն պատկութեան կոչէր. յաւել և յինքեանէ զլանալ զփրկութիւն նախամարդոյն Ադամայ, Զայսոսիկ Ներանոս յայնժամ: Իսկ յետ ոչ բազմաց Աւետրոս ոմն անուն սատար առնդոյս և զօրացուցիչ եղեալ, յիւր անուն և աշա-

բա ընդդէմ հերձուածոց՝ վասն նորին Տէրբիանոսի և վասն ազանդոյ նորին. և գրէ այսպէս. Եթէ Ցեա Սատրիղոսի և Մարկիոնի, օրք անուանեալ կոչին անկրեատ՝ քարոզեցին և խոտեցին զամուսնութիւն, և զրկին զառաջին ստեղծուածն Աստուծոյ. և ծանկապես հայհոյին զայն որ արարն զարու և զեգ ՚ի ծնունդս մարդկան. և ուսուցանէին մարդոյ հրաժարել ՚ի կենդանոյ յամենայնէ յորում է շունչ, և զրկեալ զանան զշնորհութիւնն Աստուծոյ արարչի ամենայնի, և կան հակառակ ընդդէմ փրկութեան մարդոյ որ ստեղծաւն յառաջագոյն: Եւ այս արդ ևս երևեցաւ առ նոսա, զի նախ Տէրբիանոս եմոյծ զայս հայհոյութիւն, այն որ աշակերտ էր Յուստինոսի. և որչափ ժամանակս ընդ նմա շրջէր՝ այսպիսի ինչ նա ոչ երևեցոյց, իսկ յետ վկայութեան նորա՝ հեռացաւ սա յեկեղեցւոյ. զի հպարտացաւ և ամբարտաւանեաց և կարծէր յանձն իւր լինել վարդապետ առաւել քան զայլս. և արար անձին իւրոյ օրինակ զայլոյ ուսման. և պատմիչ պատմութիւնս և նա ըստ նմանութեան վաղենտինեանացն, և զաշխարհս ասէ անեղեսպեծս. և կոչեաց զամուսնութիւն՝ ապականութիւն և պատկութիւն, ըստ նմանութեան Մարկիոնի և Սատրիղոսեայ. և կայ հակառակ ընդ փրկութիւնն Ադամայ: Զայս ասաց Իրինէոս: Իսկ յետ սակաւ ժամանակի երևեցաւ այլ մի՝ զի անուն էր նորա Աւետրոս.

*կերտեալքն սմա Սեւերիանոսք կոչեցան։ Վարին նո-
քա օրինօք և մարգարէիւք և աւետարանաւ, այլ ըստ
կարծեաց իւրեանց տան մեկնութիւնս գրոց սրբոց։
Հայհոյեն զՊօղոս, և խոտեն զԹուղթս նորա, ոչ
ընդունին և զԳործս Առաքելոց։ Սոյն սա Տատիանոս
գլուխ նոցա արար յարակցութիւն ինն և զուգահա-
ւաքուածն չգիտեմ որպէս ի չորից աւետարանաց ժո-
ղովելով ի մի որպէս համաբարբառ աւետարանի, զո-
րոց և զանունն կոչեաց ի Չորից, որ մինչև ցայսօր ժա-
մանակի կայ առ ոմանս։ Սակն ոմանք համարձակեալ
նորա փոխել զառնս առաքելոյն, իբրու յոմ վայելուչ
յօրինելով զայնս։ Եթող սա բազում գիրս, յորոց
հռչակեալն ի բազմաց գովութեամբ է այն որ Ա-
ղեքսեն, յորում ի վաղնջուց անտի ժամանակաց
կարգեալ զամենայն արս երևելիս ի նոսա, կանխա-
գոյն քան զամենեսին զնոսա ցուցանէ զՄովսէս և
զմարգարէս Եբրայեցւոց։ Եւ այս նորա երկասիրու-
թիւն քան զամենայն գիրս նորա գերեզկագոյն և օգ-
տակարագոյն Թուի լինել։ Եւ վասն այսոցիկ այսչափ։*

*Համարեաց զայս աղանգս, և եղև նա պատճառ այնոցիկ որ միան-
գամ այակերթին նմա, զի եղիցին նոքա կոչել յանունն նորա սևե-
բիանոք։ Ա՛յլ պաշտին իակ նոքա յօրէնս և ի մարգարէս և յա-
ւետարանն. և ըստ կարծեաց մտաց իւրեանց Թարգմանին նոքա
զմեկնութիւնս գրոց։ Բայց հայհոյեն նոքա զՊօղոս առաքեալ, և
խոտեն զԹուղթս նորա, և ոչ ընդունին նոքա և ոչ զԳործս Առա-
քելոյն։ Սոյն սա Տէսբիանոս գլուխ նոցա առաջին Ժողովեաց և
խառնակեաց և եդ աւետարան, և կոչեաց նմա Աւետարան՝ այսինքն
խառնուածոյ, սա որ առ բազումս մինչև ցայսօր ժամանակի կայ։
Բայց ասի գնմանէ, եթէ համարձակեցաւ նա փոխել բանս յառա-
քելոյ անտի, որպէս զի ուղղեսցէ նա զյօդուածս բանին կարգելոյ։
Եթող սոյն իակ սա խօսս բազումս, զի ի նոցանէն են խօսք մի որ
անուանի առ բազումս ընդդէմ հերձանոսաց. զի ի նմա յիշատա-
կեաց զանուանին որ եղեն ի մէջ հերձանոսաց յառաջին ժամա-
նակաց անտի, և հցոյց և յայտ արար՝ եթէ կանխագոյն են քան
զամենեսին Մովսէս և մարգարէքն Եբրայեցւոց. զի սոյն այս խօսք
երևի թէ առաւել է, և է ի նմա չահ օգտութեան աւելի քան զա-
մենայն խօսից նորա։ Այս իակ ասացաւ վասն այսց։*

ԳԼՈՒԽ Լ.

Վասն Բարդեհասեաց ասորւոյ, և վասն գրոց նորա որ առ մեզ հասին։

Սա նովին ինքնակալութեամբ ի բազմանալ հեծուածոց ի Միջագետս, Բարդեծան այր երևելի և շնօր բանիւք ի բարբառ ասորի, գրէր ընդդէմ Մարկիոնի և այլոց ոմանց աղանդապետաց՝ տրամախօսութիւնս ի լեզու և ի նշանագիրս հայրենիս, ընդ այլ բազում երկասիրութիւնս իւր, զոր ծանօթք նորա և աշակերտք, զի բազումք էին կորովաբանք առ նմա, հանին ի լեզուէ Ասորւոց ի Յոյն։ Ի սոսա է և Տրամախօսութիւն նորա շնօր առ Աւտոնինոս[10], ընդդէմ որոց զիմաբմենին ընդունին, զաւշին կամ զբազդ և զնակատագիր։ Եւ զայլ բազում ինչ ասեն գրեալ նոր բա ի պատճառս հալածանաց ժամանակին։ Բայց էր սա յառաջագոյն յաշակերտութենէ ուսման վաղենտինոս, այլ իբրև անարգեցաւ յաչս նորա վարդապետութիւնն այն, և ի վերայ հասեալ խելամուտ եղև ինքնակարկառ առասպելաց վարդապետին, հանարեցաւ այնուհետև յանձն իւր դառնալ յուղիղ

Բառաճերպդ վիճերպդ. վասն Բարդեհասեաց, և վասն խօսից որ ևս նորա։

Ի նմին ինչ ալբեայութեանն Աւտոնինոսի վերասեալ, բազում էին ազանդք հերձուածոց ի Միջագետս յՈւռհայ. Բարդեծան այր երևելի, որ ասորի լեզուով խնամուն կորովի էր յոյժ, և ընդդէմ մարկիոնացւոցն և այլոցն որ վերահացու էին որշելոյ աղանդոյն, ետաց բանիւ իւրով և գրեաց նա զիասան յիւր լեզու հանգերձ այլովք խօսիւք բազմովք. և էին նորա ընկերք և ծանօթք բազումք և զբազդն էին բանիւք. և նոքա հանին զիասա նորա ի լեզուէ ասորոց ի յոյն. և ի նոյն խօսն իւր է մեզ առասպել և նորա մեծագոյն վասն բաշխից զոր գրեացն Աւտոնինոսի։ Եւ այլ բազումն ասեն զնմանէ թէ գրեաց ի պատճառս հալածանացն որ էղեն յայնմ ժամանակի։ Բայց էր սա յառաջագոյն յուսման անդ Վալենտինոսի։ Եւ իբրև անարգեցաւ յաչս իւր սա, և կշռամ

խորհուրդս, այլ ոչ ևս կատարեալ ընդհաց նա յիւրմէ զաղջ առաջին հերձուածոյն։

Զայսու ժամանակաւ վախճանեալ զկեանս իւր Հան. գեաւ Սոտեր եպիսկոպոս եկեղեցւոյն Հռովմայեցւոց։

բնալ յանդիմանեաց զբազում պատմութիւնս նորա. և խորհեցաւ թէ արդեօք ինքն յանձնէ իւրմէ փոխեսցի ՚ի խորհուրդս առաւելս. այլ ոչ ևս կատարեալ ընդհաց նա յիւրմէ զաղջ առաջին հերձուածոյն։ Զայնմ ժամանակի հանգեաւ եպիսկոպոս եկեղեցւոյն Հռովմայեցւոց։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

Գլուխ Լ. [1] — « Ցընաւանի դէմ ». Ընաւանի դէմ կուգէին ոգիքն՝ որ խօսէին ՚ի հարցուածն, կամ որպէս Սուրբսացն էր՝ որ զձախողս և յաջողս կանխէր ազգ առնել նմա. գաթձեալ որ կա-խարդասացին անապալով դէմ՝ նշանս պատրս ցուցանէին: Ի սոցին կարգի էին և երազահան դէմքն, որ յերազս յայտնէին այնոցիկ՝ որոց նոցին հպատակէին: Եւս և որք ՚ի ձեռն գիւթական երգոց մոգելով զմանկունս, ՚ի թմրիլս նոցա տային գուշակ լինել զորոց ախորժէին: Էին և որք ընդ Սիմինի մոգի խարդասանեալ զմանկունս և բռնաւոր սպառնալ՝ կուչէին զՆոգիս նոցա ՚ի սատարութիւն ա-բուեստագիտելեան իւրեանց: Ի սոսա համարի էին սա հեթա-նոսս և սատրին սատուածք՝ որ ընտանեբար ընդ մարդկան չոքէին:

Գլուխ Ը. [2] — « Հեգեսպոս ». Կրասէր էր սա ժամանա-կաւ քան զՅուստինոս, Երանուսի մանուանդ ժամանակակից, և երկրեան սոքա սա ելեւէներեաւս քահանայապետիս մատենա-դրեալ, որով և սա Մարկոսիս Աստուածեւս է սա:

...[3] — « Մարգարէս կարգեաց ». Ըստ մտաց հեթանոսաց խօ-սելով Հեգեսպոսս փոխանակ քրմաց մարգարէս ասէ. և մանա-ւանդ զի յԵգիպտոս պաշտեն առնոյր նոր աստուածութիւնս այս, քան նոցին Եգիպտացւոցն կրօնից սովորութիւնն՝ իբրև խորհրդոց գաղտնեաց խորհրդատուս քուրմքն նոցա մարգարէք կոչէին, այսպէս և Աստիճեան քուրմքն՝ մարգարէք կոչէցան:

Գլուխ ԺԲ. [4] — « Խճաստասէր որդւոյ ». Զայս բան ըստ շա-բաթականութեան վանն Վէրոսի միայն մարթելիք առնուլ, թէպէտ Մարկոսի Պիոսի առաջնակաս համարիցի անուանս. Քան-զի որդեգրեալ իւր Ադրեանոս զՆերոս Վէրոս կնասր, ՚ի մեռանել Նորա՝ առնու զԱնտոնիոս Պիոս փոխանակ Նորա յորդեգիրս՝ օրէնս նմին եդեալ յիւրմէ կողմանէ դրել զՄարկոս Պիոս և զԼուկիոս զորդի Ելիոսի Վէրոսի ՚ի ժառանգս ինքնակալութեան, այլ զի ըստ Յուստինեայ բանիցն՝ Վէրոսի է առեալ խնաստասէր անուանդ. սա-կայն կայցի զոր որպէս և ախորժէն:

Գլուխ ԺԵ. [5] — « Եւ էր օր մեծի չաբաթուն ». Թէպէտ բազում կարծիք լեալ իցեն ՚ի գիտականս վասն աւուրս մեծի շա-բաթուն, այլ սորդն է, զի իցէ շաբաթն այն աւուդ՝ որում յա-ջորդէ Պասկեն:

... [6] — « Զաստիպեան ». Հանդիսադիր խաղուց համարի զսա Հռուփինոս. Թէպէտ ՚ի պաշտամանն իշխանութեան նորա էր որ-դարև և այս գործ մատակարարութեան մեծի ծախուց հանդիսից

խաղուց, սակայն քրմապետի ունէր սա պատիւ, հասարակ հաւա-
նութեամբ քաղաքացւոյ Ախացւոց ամէ ամի՛ ի զուգօրութեան աշ-
նանի՛ ի սկիզբն տարւոյն նոցա ընտրեալ յայս բարձ աւագա-
թեան, տալով նմա և տուն իշխանական ի տան քաղաքացւոյ օրք
ընտրոյ էին տեարք։ Այլ ինդիր է, եթէ մի ոմն միայն էր Ախա-
պան թէ բազումք. մի որ միայն Թուի, այլ ուր յիշին բազումք՛ ի
միասին, որպէս՛ ի Կորնթա Առաքելոց, իցեն առքս Ախապատք ա-
մացն անցելոց. զի որպէս առ Հրէայս քահանայապետն միանդամ՝
միւս քահանայապետս կոչէր, որով մարթի էր բազմից կոչել միան-
դամին քահանայապետս, այնպէս և առ տոսա, զոր և հաւատաւ
վկայաբանութիւն Պողիկարպեայ, որ վկայեալն ասէ արբոյս առ
Փիլիպպեաւս Ախապատս։

... [7] — « Պահապանի գաղանացն »։ Յայս անուն կամեցաք
թարգմանել զտաճկական բառդ Confector, որք և տիգուորք ևս
կոչէին, զոյս գործ էր պատրաստել հանել զդազանս՛ ի կրկիսին
և գրգռել զնոսա ընդդէմ վկայից, որպէս զի չէին տքա դահիճք.
քանզի և՛ ի կարևոր դէպս տանէին զվկայագութիւն գաղանացն և
չհոգուին գիմել՛ ի վերայ ժողովրդեան։

Գլուխ ԻԶ. [8] — « Վասն Սկզբան և Ծննդեան Քրիստոսի »։
Զյունական բառդ περὶ Κτίσεως վասն լինելութեան իմանալով, ո-
րով և սկիզբն եղելութեան տալ կարծելով՝ խղճալ և չջրել են
՛ի περὶ πίστεως զոր մարթի էր կարծել վասն էութեան առնուլ կամ
սկզբան, որ և անսկիզբն է և՛ ի յաւիտենից։

... [9] — « Վասն մարմնաւոր լինելոյն Աստուծոյ »։ Յայս գիրս
իւր կամեր Մելիտն յուշանել զմարմնաւորութիւնն Աստուծոյ,
՛ի բազում վկայութեանց առաքս Պրոց կարծելով զայն հաստա-
տել զոր և կշտամբէ Արտգինէս՛ ի մեկնութեան անդ իւրում
գրոյն ծննդոց, հերքելով զայս նորա մոլորութիւն։

Գլուխ Լ. [10] — « Ա՛ն Անառնինոս ընծայել »։ Գովութեամբ
յիշատակէ Հերոնիմոս զայս գիրս. այլ թէ Անառնինոս այն ինք-
նակալն եցէ Հռոմոց, և ոչ գուշակեալ ոք այլ աչակերտ Հերմի-
նակին՝ տարակոյս է. քանզի նոյն ինքն Եւսեբի՛ ի Պատրաստու-
թեան աւետարանին՝ Նուերիայ ասէ Բարդեծանոս աշակերտեալ
Իրոց և ծանօթիկ վարամախոսութեանս իւր։

ՅԱՆԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԵԱՆ

Ա. — Թէ քանիք եղեն վկայք յաւուրս Վերոսի արքայի՛ ի Գաղղիա, և Թէ գիարդ նահատակեալ մրցեցան՛ ի վերայ աստուածապաշտութեան։

Բ. — Թէ որպէս վկայքն սիրելիք Աստուծոյ ընկալեալ զամենեսեան և բժշկեին, որ միանգամ գայթակղէին՛ ի հաւատեանն։

Գ. — Թէ որպիսի յայտնութիւն առ յԱստուծոյ լինէր յաղօթսն Աստաղոսի վկային։

Դ. — Թէ որպէս վկայքն Թուղթ ընծայութեան տան Երանոսի։

Ե. — Թէ որպէս առ Մարկոսիս Աբուղեաս լուսաւոր Աստուծոյ զաղբիս մերոյն՝ իջոյց նոցա անձրև յերկինից։

Զ. — Համար և կարգ եպիսկոպոսացն Հռոմայ։

Է. — Թէ մինչև յայն ժամանակս լինէին նշանք և սքանչելիք՛ ի ձեռն հաւատացելոց։

Ը. — Թէ որպէս յիշատակէ Երանոս զգիրս սուրբս։

Թ. — Թէ ոչք կացին եպիսկոպոսք յաւուրս ինքնակալութեան Կոմոդոսի։

Ժ. — Վասն Պանտենեայ իմաստասիրի։

ԺԱ. — Վասն Կղեմայ Աղէքսանդրացւոյ։

ԺԲ. — Վասն եպիսկոպոսացն Երուսաղէմացւոյ։

ԺԳ. — Վասն Հեգեսիոնեայ և առ՛ի Նմանէ յիշատակեալ տարբաժանութեան Մարկիանիտաց։

ԴՊՐՈՒԹԻՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԱՍՄՈՒԹԵԱՆՑ ՆԿԵՂԷՈՑՈՑ՝

Ա. — Առաջին ճառք, Թէ որպէս վկայք եղեն յաւուրս Վերոսի արքայի՛ ի Գաղղիա. և Թէ գիարդ հարմարեցին պատերազմին վասն աստուածպաշտութեան։

Բ. — Երկրորդ, Թէ որպէս վկայքն և սիրելիքն Աստուծոյ ընծայեցին և բռնութեանն զամենեսեան որ միանգամ գայթակղեցին՛ ի հալածանսն։

Գ. — Երրորդ, Թէ որպիսի տեսիլ եղեւ՛ ի տեսչական խրատուն Աստաղոս վկային։

Դ. — Չորրորդ, Թէ որպէս յաճախ առնէին վկայքն վիշտիւնս Թղթովքն խրատանց։

Ե. — Հինգերորդ, Թէ որպէս իջոյց Աստուած անձրև յերկինից յաղօթս քրիստոնէիցն՝ Մարկոսի և Աբրեկոսի կայսեր։

Զ. — Վեցերորդ, եպիսկոպոսք որ եղեն՛ ի Հռոմ քաղաքի։

Է. — Եօթներորդ, եթէ մինչ յայն ժամանակս լինէին նշանք և սքանչելիք՛ ի ձեռն հաւատացելոցն։

Ը. — Ութերորդ, Թէ որպէս յիշատակէ Իրինէոս զգիրս Աստուծոյ։

Թ. — Իններորդ, եպիսկոպոսք որ եղեն յաւուրս կոմիքեայ արքայի։

Ժ. — Տասներորդ, վասն Պանտենեայ փիլիսոփայի։

ԺԱ. — Միաստասաներորդ, վասն Կղեմենտեայ ազէքսանդրացւոյ։

ԺԲ. — Երկոտասաներորդ, վասն եպիսկոպոսացն՝ որ եղեն Երուսաղէմ։

ԺԳ. — Երեքտասաներորդ, վասն Որոգենեայ[1]. և վասն երկմտութեանն զոր յիշատակեաց վասն Մարկիանի։

[1] Ցոր. Որոգենեայ։

ԺԴ. — Վասն սուտ մարգարէից՝ որ էին յաղանդին Փռիւգացւոց։
Ժե. — Վասն հերձուածոյն Իւսեանոյ որ ի Հռոմ քաղաքի։
ԺԶ. — Թէ գինւոյ վասն Մոնտանեայ և վասն սուտ մարգարէից նորա խցին բանք։
Ժէ. — Վասն Միլտիագեայ և վասն գրոց նորա։
ԺԸ. — Թէ որպէս յանդիմանեաց Ապողինարիս զաղանդն Փռիւգացւոց. և կամ թէ զոյց ոմանց արար նա յիշատակ։
ԺԹ. — Աներեւոյթ վասն աղանդոյն Փռիւգացւոց։
Ի. — Թէ որչափ ինչ Եբիոնիս ընդգէմ հերձուածոյն, որ էին ի Հռոմի քաղաքի՝ գրեաց։
ԻԱ. — Զիւրդ ի Հռոմի Ապողինարիս վկայեաց։
ԻԲ. — Թէ ոչք ի ժամանակին կացին հալածականք անուանիք։
ԻԳ. — Ցաղագս ինդրոյ զատկին յուզելոյ յայնժամ։
ԻԴ. — Վասն տարաձայնութեան որ եղև ի կողմանս Ասիացւոց։
ԻԵ. — Թէ որպէս եղև մի միաբանութիւն հաւատարմութեան ընդ ամենայն տեղիս վասն տնի զատկին։
ԻԶ. — Թէ քանիս եմոզ մեզ Եբիոնիս խրոյ գիտելոյ հանճարոյն յիշատակս։
ԻԷ. — Եւ ոչք գործեալ երևելիք եղեն ի ժամանակին յայնմիկ։
ԻԸ. — Վասն այնոցիկ՝ որ ի սկզբանէ անտի գնացին հերձուածոյն Ասրեմոնիի, և թէ որպիսիք ոմանք էին սոքա ի գնացս իւրեանց և ի վարս, և թէ զիարդ համարձակեցան եղծանել զգիրս սուրբս։

ԺԴ. — Զօրեքասաներորդ, վասն սուտ մարգարէիցն որ էին յաղանդոյ փռիւգացւոց։
Ժե. — Հնգետասաներորդ, վասն բաժանմանն Փղորիանոսեայ և Բագելատոսի որ եղև ի Հռոմ քաղաքի։
ԺԶ. — Վեցասաներորդ, թէ գինւոյ ասի վասն Մոնտանոսեայ, և վասն սուտ մարգարէիցն որ էին ընդ նմա։
ԺԷ. — Եօթնեասաներորդ, վասն Մելտիագոսեայ, և վասն խօսիցն զոր գրեաց։
ԺԸ. — Ութեասաներորդ, եթէ որպէս յանդիմանեաց Ապողինարիս զաղանդն փռիւգացւոց, և կամ զոր գիրս յիշատակեաց։
ԺԹ. — Իննեասաներորդ, եթէ գինւոյ ասաց Աներեւոյթն վասն աղանդոյն փռիւգացւոց։
Ի. — Քսաներորդ, թէ որչափ ինչ ասաց գրով իւրինէսն ընդդէմ հերձուածոյն որ էին ի Հռոմ քաղաքի։
ԻԱ. — Քսաներորդ առաջներորդ, թէ որպէս վկայեաց Ապողինարիս ի Հռոմ քաղաքի։
ԻԲ. — Քսաներորդ երկրորդ, թէ որ եպիսկոպոսք երևելիք էին ընդ այն ժամանակս։
ԻԳ. — Քսաներորդ երրորդ, վասն խնդրոյն՝ որ եղև յայնմ ժամանակի վասն զատկին։
ԻԴ. — Քսաներորդ չորրորդ, վասն բաժանմանն որ եղև ի կողմանս ասիացւոց։
ԻԵ. — Քսաներորդ հինգերորդ, թէ որպէս եղև մի հաւատարմութիւն ընդ ամենայն տեղիս վասն զատկի։
ԻԶ. — Քսաներորդ վեցերորդ, եթէ քանի խօսս ընկալաւ մեր ի պնդութենէն անտի իրինեան։
ԻԷ. — Քսաներորդ եօթներորդ, վասն այլոց բազմաց որ եղեն երևելիք ընդայն ժամանակս։
ԻԸ. — Քսաներորդ ութերորդ, վասն այնոցիկ որ եղեն խափ բանէ յաղանդէ անտի Ասրեմոնի. և որպ որիճակաս. էին նոքա. և թէ որպէս հաստատեցան նոքա եղծանել զգիրս սուրբս։

ԴՊՐՈՒԹԻՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն

Իսկ եպիսկոպոսն Հռովմայեցւոց եկեղեցւոյն Սո-
տէրը կեցեալ զամն ութ՝ վախճանեաց զկեանս իւր,
զոր և երկոտասաներորդ յԱռաքելոց անտի ելեւէ-
բոս յաջորդեաց յաթոռակալութիւն, եւ յամին ու-
թուտասներորդի Անտոնինոսի վերոսի ինքնակալի՝
ի գաւառս գաւառս պետութեան յարեաւ Տալա-
ծումն սաստիկ իբրու ի գրգռութենէ ժողովրդեան
հակառակ մեր, և բիւրաւորք վկայից ընդ ամենայն
տեղիս փառաւորեցան մահուամբ նահատակութեան.
յորոց յամենեցուն՝ զորս ի միում գաւառի և ի ժո-
ղովրդեան գէպ եղեն՝ քաղեալ համառօտիւ եդից
աստանօր. զորս և պատմութեամբս յեռանոց աւան-
դել իբրև արժանաւորս անմահական յիշատակի գործ
մեր իցէ, Յխօսս՝ յորում լի կատարեալ զիւրացս գըտ-
ցեմ Տառեալ, ի վկայաբանութիւնս մարտիրոսաց յե-
ռեցաք, ոչ զպատմականս միայն, այլ և զվարդապե-
տականն ունելով զրուցատրութիւնս. իսկ որ միան-
գամ առաջնակաց գրութեանն իցեն այժմ պատկանա-
ւորք, զայնոսիկ միայն համառօտեալ դիցուք ի սմա,
Ա.յլք ի պատմագրաց փութան ապաքէն ի գիր դրոշ-
մել զյաղթութիւնս պատերազմաց, զախոյեանս կանգ-

նեալը ընդդէմ թշնամեաց, զառաքինութիւնս զօրա-
վարաց, զարութիւն քաջութեան զօրականին, որք ի
վերայ հայրենի աշխարհին որդւոց և ստացուածոց, յա-
րիւնյապաժոյժ բազմապատիկ կոտորածով թշնամեաց
լուացեալ թաթաւեցան, Խակ որ վասն վարուց աս-
տուածպաշտութեան պատմական մեր բանս է, վասն
խաղաղաւէտ պատերազմին՝ որ ի շինութիւն է և ի
խաղաղութիւն ոգւոց. և վասն որոց առաքինացանն ի
նմին, ոչ ի վերայ աշխարհին և սիրելեաց մարտու-
ցեալ, այլ ի վերայ չշմարտութեան և բարեպաշտու-
թեան, ի կոթողս Տնայուենս դրոշմեալ յաւերժական,
Ձի զարիական պնդութիւն նահատակացն աստուած-
պաշտութեան, զբազմաչարչար ժուժկալութիւն համ-
բերութեան նոցա, զյաղթանակս ի վերայ դիւաց,
և զյաղթութիւնս ընդդէմ անեղեալի ոսոխին, և
յայսոցիկ ամենայնի վերայ զպատկն ի յիշատակ յա-
ւիտենական քարոզեմք մեք։

ԳԼՈՒԽ Ա.

Լ՟ւ թէ քանի՛ք եղեն վկայք յաւուրս Վերոսի արքային ի Գաղղիա, և թէ զիա՛րդ նաամատակեալ մրցեցան ի վերայ աստուածպաշտութեան։

Յաչխարհին անդ Գաղղիացւոց էր այս մարտ պատերազմի նահատակացս Քրիստոսի. յորում քաղաքք երեւելիք, մայր քաղաքաց՝ առաւելեալ քան զայլս Լուգդոն և Վիէնա. և առ երկոքումբք քաղաքօքն և առ ամենայն նահանգաւն գնայ Հռոդանոս գետ մեծ յաղթաջուր։ Ցպատմութիւնս վկայիցս գրեցին երեւելի եկեղեցիք վայրացն այնոցիկ, և եառուն տանել առ որս ի կողմանս Ասիացւոց էին և Փռիւգացւոց, որ ինչ գործեցաւն առ նոսա պատմելով օրինակ զայս. զորոց և Ձեզ բարւոյ դնեմ զբանս։

Ա՛սաք առաւիկք. թէ որչափ վկայք եղեն յաւուրս Վերոսի արքային ի Գաղիոյ. և թէ զիա՛րդ նաամարտիրին պատերազմին վասն աստուածպաշտութեանն։

Իսկ եպիսկոպոս եկեղեցւոյն Հռոմայեցւոց Սովտէր որ եկաց զաթոռ ամ և ել յաչխարհէ ասեն. և կալաւ զնի՛ն նորա Վիկթորս. և էր նա եպիսկոպոս երկտասաներորդ յետ առաքելոցն։ Բայց էր յամին եօթնեւտասներորդի՝ ինքնակալին Աւռաւնիոսի Վերոսի. զի ի սմին յայնմ ժամանակի ընդ գաւառաւ յաւանս, և ի տեղիս տեղիս առաքապէս յարձան հալածականքն ի վերայ մեր, իբրեւ. ի դրդռւմենէ անաի ժողովրդեանն. և բիւրս վկայից որ եղեն ընդ սմինայն տեղիս յորժամ համեմատելով կշռիցէ ոք որ ինչ անցք անցին ընդ մերում ժողովրդեանն. գրեցաւ և առաւ այնոցիկ որ լինեն նոցա վասն յիշատակի Տեառն։ Բայց զդիցս պատմութեանցս այս լի բովանդակ գրոյիլ է մեր ընդ վկայիցն զոր ժողովեցաք. զի ոչ միայն ըստ օրինակի պատմութեանց ասացեալ է մեր, այլ և վարդապետեմք։ Բայց այժմ զայս որ պիտոյ են այսմ Տեառն զոր արկեալ է մեր՝ քաղեսցուք և գիցուք։ Իսկ այլք որ պատմեն և գրեն զպատմութիւնս աչխարհի, տան գլաղթութիւն պատերազ-

* Ցոր. ը Ի ԽԲՏԳԲ։

Որ ի Վիննա և որ ի Լուգդուն Գաղղիացւոց բնակք Ծառայք Քրիստոսի առ որ ի կողմանս Ասիացւոց և Փռիւգացւոց են եղբարք Հաւատոցս մերոց և յոյժ փրկութեան Տալորդք, խաղաղութիւն շնորհք և փառք յԱստուծոյ Հօրէ և ի Քրիստոսէ Տեառնէ մերմէ։ Ա. յորիւք և սոցին նման բանիւք սկիզբն խօսից իւրեանց եդեալ, կարգեն ապա ըզպատմութիւնն օրինակ զայս։ Չմեծ և զանհարիւն Ձգնութիւնս, ասեն, որ աստ, զայրոյթի մոլեգնութեան հեթանոսաց ընդդէմ սրբոց, և որչափ ինչ Տամբերին վկայքն երանելիք, չեմք բաւական Ձգբը-

մաց որ լինին ի թշնամեաց, և զառաքինութիւնս զօրակցաց, և զպաշտպանութիւնս պատերազմողաց, որ թշնամեացն արեամբ և սպանմամբ բազում մանկանց աչխարհս, և այլոց մեծութեամբ։ Իսկ բան պատմութեան որ վասն վարուց առաքեալսն ասեմք մեք, վասն պատերազմին է՝ որ վասն չինութեան ոգւոց, և վասն այնոցիկ որ առաքինացան ի նմին։ զի ոչ վասն աշխարհի մարթեան, այլ վասն Ձմարտութեան։ և ոչ վասն սիրելեաց իւրեանց, այլ վասն առաքեալսն Տեառն մերոյ։ Եւ գրոչիկսդ մեք վասն յիշատակի յաւիտենից զՀամբերութիւն նահատակացն Ձմարտութեան, և որ ինչ միանգամ Համբերեցին նոքա զրկութեամբ իւրեանց, և զպաղատութիւնն զոր յաղթեցին նոքա աներևոյթ գիւացն և թշնամացն, և զպարին նոցա վասն յիշատակի յաւիտենից քարոզեմք մեք։ Ագ յաչխարհն անդ Գալլիացւոց էր այս մարտ պատերազմի, այնց վկայից վասն որոց ասացաք զնոցանէն։ Բայց անուանին անդ քաղաքք երեսկիք, մայր քաղաքաց որ առաքել են քան զայլս որ են յաչխարհն անդ՝ Վաւրգոնայ և Բիանենայ՝, զի առ քաղաքօքն երկոքումբք և առ ամենայն նահանգսն նոցունց քաղաքաց՝ անցանէր Ագռնոս գէտ քաղաքի յորգուածեամբ Ջուրց իւրոց։ Ձպատմութիւնս իսկ որ վասն վկայից Ձ գրեցին և հաւան տանել երևելի եկեղեցիքն որ էին ի կողմանս գալլիացւոց, և առ եկեղեցիսն որ էին ի կողմանս ասիացւոց, փռիւգացւոց, որ ինչ միանգամ գործ գործեցաւ առ նոսա։ Բայց պատմեն զայս օրինակ. եղեց զնոսն իսկ զբանս նոցա։ Վառաքք Քրիստոսի որ բնակեալ են ի Բիանենայ և ի Վաւրգոնայ ի կողմանս գալլիացւոց, առ եղբարս որ են ի կողմանս ասիացւոց և Փռիւգացւոց, որ միանգամ ունիցին զՀաւատս փրկչին մերոյ և յուսայն, շնորհք և խաղաղութիւն և փառք յԱստուծոյ Հօրէ և ի Քրիստոսէ տեառն մերոյ։ Եւ յետ այնորիկ ասացին սակաւիկ մի զպատմութիւնն. և սկսանին և առնէն սկիզբն բանին իւրեանց այսպես եթէ՝ Վասն մեծութեան նեղութեանն որ եղև աստ, և վասն բարկութեանն հեթանոսաց՝ որ եղև ի վերայ սրբոցն, թէ քանի Համբերին վկայքն երանելիք Ձգրատութեամբ, և մեք ոչ բա-

՝ Լուգդուն և Վիննա։

տապատում ձեզ առնելոյ բանիւք, և ոչ իսկ այլ ոք կարիցէ գրով զայն բովանդակել: Զի յամենայն զօրութենէ իւրմէ խիզախեաց ՚ի վերայ մեր հակառակորդն, իբրու կանուխ նկարելով ՚ի մեզ զգալուստ իւր՝ որ լինելոց է առ յապա անամօթի ևս ժպրխոտեամբ: Ընդ ամենայն փորձ էանց նա՝ յուզել զարթուցանել զամենայն ընդդէմ ծառայից Աստուծոյ, զի ոչ միայն ՚ի տանց և ՚ի բաղանեաց և ՚ի հրապարակաց հալածէին զմեզ, այլ զի և բնաւ ամենևին որ ՚ի մէնջ մի երևեսցի ուրեք՝ զպատնայիս ՚ի վերայ կապէին: Բայց վերամարտիկ գոլով ՚ի մեր կողմն շնորհքն Աստուծոյ, և զտկարսն անգամ զօրացուցանէր, և ըզհաստատունսն իբրև զսիւնս անշարժս ընդդէմ նորա արձանացուցանէր, որոց և անընդոստ ժուժկալութեամբ զամենայն յարձակումն թշնամւոյն յայտ էդարձ արհամարհէին: Այնուհետեւ միագունդ միաշունչ կառուցին ընդ նմա, զամենայն ազգ նախատանաց և չարչարանաց յանձինս իւրեանց ընդունելով, թէթև և ոչինչ համարէին զայս ամենայն, միայն զի փութալ կարասցեն առ Քրիստոս, հաւաստեալ տուգիս թէ Զեն արժանի չարչարանք ժամանակիս հանդերձելոց փառացն՝ որ յայտնելոց են ՚ի մեզ: Եւ նախ որ ինչ միանգամ անցք անցանէին ընդ նոսա յամբոխէ անտի բազմու-

---

ական լինելք առելոյ, և ոչ գրով մարթի բովանդակել: Զի յամենայն զօրութենէ իւրմէ յուզեցաւ ՚ի վերայ մեր Թշնամին. և յաջագոյն նկարեաց ՚ի մեզ զգալուստն իւր որ լինելոց է առ յապա՝ անամօթի համաբանակ, և ամենայն իրօք հնարեցաւ յուզել զարթուցանել զայս միանգամ իրօք էին, զի կանխեսցէ կրթեսցէ զնոսա ընդդէմ ծառայիցն Աստուծոյ: Զի ոչ միայն ՚ի տանց և ՚ի բաղանեաց և ՚ի հրապարակաց հալածէին զմեզ, այլ զի և բնաւ ամենևին որ ՚ի մէնջ մի երևեսցի ուրեք՝ սպառնային մեզ. բայց կային հակառակ նոցա շնորհքն Աստուծոյ, և որ միանգամ հիւանդք էին՝ սպրեցուցանէին զնոսա. անյաջող էին սիրքն հաստատունք, զի կարէին ՚ի ձեռն համբերութեանն իւրեանց ընդունել յանձինս իւրեանց զամենայն սպառնալիս Թշնամւոյն. և ամենևքեան ՚ի միասին ամբերէին ամենայն նախատանաց և չարչարանաց. և բազում փառք ՚ի նոցանէ համարեալ էին յայս՝ զի փոյթ պիղծ Թեանն չէին ունէին երթալ առ Քրիստոս. և ցուցանէին և յայտ առնէին Թէ չեն արժանի չարչարանք ժամանակացս այսոցիկ փառացն որոց՝ որ յայտնելոց են ՚ի մեզ: Եւ նախ որ ինչ միանգամ անցանէր ընդ նոսա յամբոխէ անտի որ ժողովեալ էին համբերելոյն

*Թէան ռամկին՝ տանեէին քաջութեամբ, մոլեգին ազա-
զակի նոցա, չէլոյն, Հարուածոյն, սուլեցոյն, և յափըշ-
տակութեան ընչից, քարկոծանացն և արգելանաց.
և ամենայն որ միանգամ վայրկենացեալ ժողովրդեան
գործ է՝ առնել ընդդէմ ոխերիմ իւրոյ թշնամւոյն և
ազգին ոսոխի: Ածեալ ասա սրբոյն յատեան հրա-
պարակին 'ի հազարապետէ զօրուն և յատենակալից
քաղաքին յանդիման ժողովրդեան և 'ի դատաստան
հարցափորձի խոստովան լեալ՝ արկան 'ի բանտ մինչև
ցգալուստ դատաւորին: Ցետ այնորիկ ածան նոքա ա-
ռաջի դատաւորին՝ որ խոստագոյնս գնայր ընդ մերձ-
անդ Վետտիոս Եպագաթոս անուն ոմն յերջարց՝ որ
լին էր և կատարեալ 'ի սէր Աստուծոյ և ընկերին, որ
այնպէս միտ դնէր վարուց առաքինութեան՝ որ մինչ-
դեռ մանուկն էր, ծերունւոյն Զաքարիայ վկայեալ զո-
վութեանն Հաւասարէր. զի գնայր նա յամենայն պա-
տուիրանս Տեառն անարատ և ամենայն պաշտամամբ
առ ընկերս անձանձիր էր, և ունէր նա զնախանձն
Աստուծոյ և եռայր Հոգւով: Ա յսպիսի ոք գոլով նո-
քա ոչ Համբերէր տեսանել զդատաստանս անիրաւս
ընդդէմ մեր, այլ զայրագնեալ խնդրէր փոխանակ
եղբարց տալ պատասխանի և ցուցանել յայտնապէս*

քաջութեամբ, Հարուածոյն և քարկոծանացն և բանդին, և ամե-
նայն որ ինչ միաբերան ասէին ընդ մեզ 'ի վայրկին
մարդկանէ առ սիրելիս իւրեանց և առ թշնամիս: Իսկ երբեմն եկին 'ի
հրապարակ և հարցան 'ի հազարապետէ անտի և իշխանացն որ
կային 'ի քաղաքին, առաջի ամենայն ժողովրդեանն երբեմն խոստո-
վան եղեն թէ քրիստոնեայ են, արգելան 'ի բանդի մինչև եկն գա-
տաւորն: Եւ յետ այնորիկ ածին առ դատաւորն այն որ ասէին
խոստովանութեամբ դնայր նա ընդ ժողովրդոյն մեր: Բայց եղեալ մի ոմն
անուն էր Նոքա Վպիեռոս Ապէմագոս *, որ կատարեալ էր սիրով
Աստուծոյ և առ ընկերս իւր. զի այսպէս կատարեալ էր վարիք
իւրովք որ մինչդեռ մանուկ էր Համեմատեալ Զաքարիայ, ըստ
վկայութեանն որ ասացեալ է 'ի վերայ Նորա, զի գնայր նա յամե-
նայն պատուիրանս տեառն անարատ և ամենայն պաշտամամբ առ
ընկերս իւր անձանձիր էր. և ունէր նա զնախանձն Աստուծոյ, և ե-
ռայր Հոգւով. այսպիսի էր նա, զի ոչ Համբերէր տեսանել զդա-
տաստանսն որ լինէին 'ի մեզ անիրաւութեամբ. այլ բարկանայր
առաւել և Հաւանէցուցանէր Թէ լուծցին, և տայր պատասխանի
փոխանակ եղբարց, զի մի գործեսցի առ նոսա ինչ անիրաւու-

* Վկաւոս Եպագաթոս:

Թէ չէր ինչ անաստուած առ մեզ, չէր ինչ ամբարիշտ։ Բայց որք շուրջ զբեմսն կային՝ զաղաղակ բարձին ընդդէմ նորա, զի էր նա այր երևելի, և ինքն դատաւորն ոչ անսացեալ իրաւացի խնդրոյն՝ զայս միայն հարցանէր ի նմանէ Թէ. Եւ դու քրիստոնեայ իցես։ Եւ ի խոստովան լինելն ի ձայն բարձր բարբառոյ, խառնեցաւ և ինքն ի Թիւս վկայից. զի միխթար և բարեխօս քրիստոնէիցս անուանեալ, քան զՁաքարիայն ունէր առաւել Հոգի բարեխօս, որ առ առաստաԹեան սիրոյն հաՃեալ հաւանեցաւ յանձն առնուլ զպատասխանատուԹիւն փոխանակ եղբարցդ, և դնել զանձն իւր ի վերայ նոցա։ Զի էր նա և է իսկ Ձշմարիտ աշակերտ Քրիստոսի, զՀետ գնալով գառինն Աստուծոյ՝ ուր և երԹայր սա։ Այսոքիւ որոշիչն այլք. զի որ երևելիքն էին և պատրաստք, նախավկայք հանդիսանային՝ որք մտադիւր յօժարուԹեամբ ընկալին զխոստովանուԹիւնն վկայուԹեան։ Իսկ անպատրաստքն և անմարդք և դեռևս տկարք, ոչ կարէին հանդարտել զօրուԹեան մեծի պատերազմին, յորոց անկան Թուով տասն՝ ի մեծ տրտմուԹիւն մեզ և ի սուգ անբաւ, որք և զայլոց՝ որոց ցայն վայր չէր ըմբռնեալ, հնարեալ խախտեցին զյօժարուԹիւնն. որք Թէպէտ և

Թեամբ՝ իբրու զայնոսիկ Թէ առանց Աստուծոյ իցեն։ Բայց զաղաղակ բարձին ի վերայ նորա ամենեքին որ շուրջ պատեալ կային զբեմսն, զի էր նա այր երևելի. և ինքն դատաւորն ոչ ընկալաւ զաղաՃանն արդարուԹեան զոր մատոյց նմա, բայց միայն զայս հարցանէր ցնա Թէ և դա քրիստոնեայ իցէ. Իսկ նա խոստովան եղև յայտնապէս, և ի ձայն բարձր բարբառոյ աղաղակեր, և խառնեցաւ ընդ ի Թիւ վկայից և եղև միխթարիչ քրիստոնէից. զի ունէր նա Հոգի բարեխօս առաւել քան զՁաքարիայ. զի զբազում սէրն իւր հոգւոյ և վասն պատասխանի տալոյ՝ որ փոխանակ եղբարցն էր՝ կամեցաւ և դնել զանձն իւր, զի էր Ձշմարիտ աշակերտ Քրիստոսի, որ մեծաձայնեալ էր գառինն Աստուծոյ՝ ուր և երԹայր։ Աստ ուրեքիւ լինէին բազումք երևելիք, և պատրաստեալ լինէին դնել ի վկայից՝ այնոցիկ որ յամենայն մտաց և ի խորհրդոց իւրեանց կատարեալք էին խոստովանուԹեամբ վկայուԹեանն։ Բայց երևելի լինէին որ միանգամ անպատրաստք և անկիրթք էին, զի ցայն վայր հիւանդք էին և ոչ կարէին հանդարտել զօրուԹեան մեծ պատերազմին. զի ի նոցանէն յետս գաղանն Թուով տասն. և նորա պատմուԹիւն բազում է առաջ մեզ, և զնորընտրեալսն զայլոց՝ որ ցայն վայր չէին ըմբռնեալ՝ հիւանդացուցին։ Եւ նոքին

*Ծանր ծանր չարչարանս կրէին, սակայն մեծ առ վե-
կայս դէպ երէին միշտ, և ոչ քակէին ի նոցանէ: Ցայնժամ մեք ամենեքեան մեծապէս զահի հարաք վասն անյայտ ելից խոստովանութեան մանաւանդ, և ոչ էթէ ի սպառնացեալ տանջանացն. քանզի իբրև հա-
կառակ ի կատարած իրացն երկիւղ առնէր զմեզ զի մի ոք տկարացեալ անկցի: Բայց հանապազորդ ըմբռնեալ լինէին որ միանգամ արժանի էին, և ընուին զթիւ համարոյ զանկելոյն այսպէս. և յայսց երկուց եկեղեցեաց եռանդնոտքն և փոյթք ընտրեալ ժողովէին ի հաստատութիւն պնդութեան մեզ ասա-
նօր: Դարձեալ ըմբռնեալ լինէին և ամենք ի հեթա-
նոս ծառայից մերոց. քանզի յայնոսպէս առաջի ա-
մենայն ժողովրդեան հրամայեաց դատաւորն իւրով առնել մեզ ամենեցուն: Որոց ի դարանակալութենէ անտի սատանայի ի չարչարանաց երկուցեալ՝ որոց տանէին սուրբքն, և ի զինուորայ հրապուրեալ ստել զմիջնջ եթէ զթիւեստեան հայկէբոյթս պաշտեմք մեք, զմիս մանկանց տղայոց ի կերակուր հանելով, և յե-
դիպուսեան մծղնեայ ագգապիղծ խառնակութիւնս խառնակիմք՝ ընդ մարս անկանելով, և այլ բազում ինչ զոր ոչ խօսել և ոչ խորհել օրէն է մեզ, և ոչ հաւա-
տալ իսկ եթէ գործեցաւ երբեք ինչ մի իբրև զայս*

*իսկ այնոքիկ զամենայն չարչարանս կրէին ի հեթանոսաց ընդ նո-
սին ընդ վկայսն, և ոչ քակէին ի նոցանէն: Ցայնժամ մեք ամենե-
քեան մեծապէս սոսկացաք, զի ցայնժամ ոչ գիտէաք զինչ անցք անցանէին ի խոստովանութեան անդ. ոչ եթէ երկնչէաք ի չար-
չարանացն որ գային ի վերայ մեր, այլ զի հայէաք ընդ կատարած իրացն, և երկնչէաք զի մի գարձցի ոք: Բայց զի ըմբռնեալ լինէին հանապազորդ որ միանգամ արժանի էին, և ընուին զթիւ համարոյ զանկելոյն. այսպէս զի յայսց երկուց եկեղեցեան ընտրեցան ամե-
նայն պինդք և փոյթք, և որ միանգամ առաւելապէս ի ձեռն նոցա հաստատեալ լինէին եկեղեցիք որ ատա էին: Դարձեալ ըմբռնեալ լինէին ամենք ի հեթանոսաց անտի, ընդանիք ամենք ի մերոց ա-
տեն. քանզի յայնոսպէս առաջի ամենայն ժողովրդեան հրամայ-
եաց դատաւորն ինդիր առնել մեզ ամենեցուն: Իսկ նոքա իբրև ի զջումնէն ատամնոյն՝ երկեան ի քեբանեան զոր ակամայիւն որ համբերէին սուրբքն, գրգռեցին զնոսա հրապուրանօք զինուորքն ստել նոցա զինջ և ստել եթէ զոյգիս մեր ուտեմք մեք և ընդ մարս մեր ամուսնութեամբ խառնակիմք, և այլ բազում զոր ոչ իչեմք խօսել և ոչ խորհել, և ոչ հաւատալ եթէ գործեցաւ երբեք ինչ իբ-*

առ մարդիկ։ Եւ իբրև եւ Համբաւս այս՝ գազանացան
ամենեքեան ընդդէմ մեր, զի Թէ էին ոմանք որ յա-
ռաջագոյն գԹային ի մեզ վասն ընտանի Հարազա-
տութեան, մեծապէս զայրագնեալ յայնժամ կրձը-
տէին ընդդէմ մեր զատամունս իւրեանց։ Եւ լցեալ
կատարէր բան Տեառն մերոյ՝ որ ասաց եԹէ. Եկեսցէ
ժամանակ զի ամենայն որ սպանանիցէ զձեզ՝ Համարի-
ցի պաշտօն մատուցանել Աստուծոյ։ Այնք այնուհետեւ
ի տանջանս անհնարինս Համբերէին վկայքն Ելեան-
լեք, զի ընդ Հակառակս եղեալ ձգնէր սատանայ Թէ
եւ ի նոցանէ լուիցի բան ինչ Հայհոյութեան։ Բայց
առաւել սաստկացաւ բարկութիւն Ժողովրդեան եւ
դատաւորին եւ զինուորաց ի վերայ Սանկտոսի սարկա-
ւագի ի Վիենոյ քաղաքին եւ ի վերայ Մատուրոսի՝
որ այն ինչ առեալ էր կնիք նոր, այլ էր նա նահա-
տակ քաջ Քրիստոսի, եւ ի վերայ Աստացոսի՝ որ էր
ծննդեամբ ի Պերգամոն քաղաքէ, որ եւ եկաց միշտ
սիւն Հաստատութեան մերոյ եկեղեցւոյ։ Դարձեալ
եւ ընդդէմ Բլանդինայ՝ որով եցոյց Քրիստոս, զի որ
անարգքն երէց եսային ի մարդիկ եւ անտեսմբ եւ արհա-
մարհք, զնոսա մեծի փառաց արժանի առնէ առ Աս-
տուծոյ, վասն մեծի սիրոյն առ նա, որ յարդիւնս անդ-

բեւ զայս առ մարդիկ։ Իսկ իբրև եւ այս Համբաւ, ամենայն մարդ
զգեցաւ սրամտութիւն բարկութեան ի վերայ մեր իբրեւ գազանք
չարաչարք։ զի Թէ էին ոմանք որ յառաջագոյն գԹային ի մեզ վասն
Հարազատութեան՝ յայնժամ մեծապէս զայրանային եւ երծանէին
զատամունս իւրեանց ի վերայ մեր։ Բայց լցեալ կատարէր բան
տեառն մերոյ զոր ասաց, Թէ եկեսցէ ժամանակ, զի ամենայն որ
սպանանիցէ զձեզ եւ Համարիցի Թէ Աստուծոյ պատարագ մատուցի։
Ասոնք այնուհետեւ ի տանջանս անհնարինս Համբերէին վկայքն Ե-
լեանլեք, զի Հնարէր սատանայ, Թէ եւ ի նոցանէն խոսեալ լիցի
Հայհոյութիւն ինչ։ Բայց առաւել սաստկացաւ բարկութիւն ամե-
նայն Ժողովրդեանն եւ գաւառաւրին եւ զինուորացն ի վերայ Սե-
նականոսի սարկաւագի ի Բիւնանա քաղաքէ, եւ ի վերայ Մարթոյ,
որ այն ինչ առեալ էր նորա կնիք նոր, եւ էր իսկ նա նահատակ քաջ
պիտանի, եւ ի վերայ Աստուդոսի՝ որ էր նա յազգէ ի Պերգամոն
քաղաքէ։ Նա իսկ էր Հանապազորդ սիւն Հաստատուն ամենայնի որ
ի յայսմ աշխարհի։ եւ ի վերայ Ազաթոնիկեայ՝ այն որ նմա եցոյց
Քրիստոս, որ երեւեցաւ ի մէջ մարտագանդուածք եւ ապեղք և արհա-
մարհեալք, վասն մեծ փառացն արժանի լինելոյ առ Աստուած, յա-
ղագս սիրոյն որ առ նա, այն որ զրաւեալ ձանձրի և ոչ տես-

Հաւատեալ յուցանի և ոչ ՚ի մնացորդիվ փառս ազ-
գատոհմին։ Իբրև ամենեքին զահի հարեալ էաք, և
որ տիկին նորա էր ըստ մարմնոյ ՚ի կարգի վկայից զո-
լով յայնժամ ՚ի պատերազմի անդ Հոգայր վասն ա-
ղախնոյ իւրոյ Թէ գուցէ վասն տկարութեան մարմնոյն
չկարիցէ խոստովան լինել Համարձակ, իսկ Բլանդի-
նա այնչափ և այնպիսի զգեցաւ զօրութիւն, մինչ զի
որ կարգաւ պէսպէս տանջանօք տանջէին զնա յաճա-
խտիճ մինչև յերեկոյ՝ լուծեալ լքան և խոստովան ե-
ղեն Եթէ յաղթահարեցան, և չունելով այլ ինչ Հը-
նարս տանջանաց՝ զարմանային Եթէ զնարդ մնայր ՚ի
նմա չունչ դեռևս, զի պատառեալ էր ամենայն մար-
մին նորա և քանցեալ. և վկայէին Թէ մի ՚ի նեղու-
թեանց անտի բաւական էր քաղել Հանել ՚ի նմանէ
զչունչ նորա, որչափ և առաւել այս ամենայն տան-
ջանք չարչարանաց։ Բայց ինքն երանելին իբրև նահա-
տակ քաջ նորոգեալ լինէր ՚ի խոստովանութեան անդ
իւրում. և այս էր նորա կազդուրումն և Հանգիստ և
սփոփանք ցաւոց, յերկնէղէն ստեպ Եթէ. Քրիստոնեայ
եմ, և Թէ առ մեզ չար ինչ ոչ գործի։ Իսկ Սանկտոս
քան զամենայն մարդ կերդէն միտս գէր ՚ի վերոյ տանէր
քաջութեամբ չարչարանացն. և յահն ունել անօրի-
նացն Եթէ առ տագնապ վշտացն մարթ ասցին գոնեայ

լեամբ պարծի։ Իբրև ամենեքին զահի հարեալ էաք, նա և այն որ
էր տիկին նորա ըստ մարմնոյ, զի և նա ՚ի նոյն վկայից էր ՚ի պատե-
րազմի անդ. և հոգայր նա վասն ազախնոյ իւրոյ, Թէ գուցէ ոչ կա-
րիցէ խոստովանել յայտնի և համարձակ վասն տկարութեան
մարմնոյ իւրոյ։ Իսկ ինքն Բլանդինայ որ իբրև զայրս զօրութեամբ
լցաւ, որպէս զի լուծցին և լքցին տկարացեալք այնոքիկ որ կար-
գաւ պէսպէս տանջանօք տանջէին զնա յաճախտիճ մինչև յերեկոյ.
և նորա խոստովան լինէին Եթէ յաղթահարեցան, և ինչ Հնարս առ-
նել նմա ոչ գտանէին. և զարմանային էին զի մնաց ՚ի նմա գոնեայ
չունչ, զի պատառեալ էր ամենայն մարմին նորա և քանցեալ. և
վկայէին, Թէ մի ՚ի նեղութեանց անտի բաւական էր քաղել ՚ի Հա-
նել նմանէ զչունչ նորա, որչափ և առաւել այս տանջանք ամե-
նայն չարչարանաց։ Բայց ինքն երանելին իբրև նահատակ քաջ նո-
րոգեալ լինէր ՚ի խոստովանութեան անդ իւրում. և այս էր լրիւ-
արձակութիւն և Հանգիստ նորա, զի մի յաւելցէ նմա յիմիք զոր
կրէին. և համբերէր յայտնի զի սաստ եմէ քրիստոնեայ եմ, և առ
մեզ չար ինչ ոչ գործի։ Իսկ Սանկտոս, և նա առաւելապէս և ա-
ւելի քան զամենայն մարդ ՚ի չարչարանս ՚ի մարգկանէ համբերէր

որսալ ՚ի բերանոյ նորա բան ինչ անսարժան, նա այն-
պէս պնդութեամբ քաջութեան եկաց ընդդէմ նոցա՝
զի և ոչ զանուն իւր անգամ ասաց նոցա, և ոչ թէ
յորմէ՛ ժողովրդէնէ կամ յորմէ՛ քաղաքէ էր, կամ թէ
ծառայ իցէ կամ ազատ. այլ ամենայն հարցմանն նոցա
զայս առնէր միշտ պատասխանի ՚ի լեզու հռոմ թէ՝
Քրիստոնեայ եմ։ Եւ զայս փոխանակ անուան, քաղա-
քի և ազգին խոստովան լինէր, և այլ ինչ բնաւ ամե-
նեւին ոչ լուան ՚ի նմանէ հեթանոսք։ Եւ վասն այնո-
րիկ յամառ պնդութեամբ հակառակէին ընդդէմ
նորա և դատաւորն և դահիճքն. զի իբրև ոչ ինչ այլ
գտանէին առնել նմա՝ տախտակս պղնձիս շողացու-
ցեալ դնէին ՚ի վերայ մարմնոյ նորա ՚ի կակղամիս տե-
ղիսն։ Եւ իբրև այրէր մարմին նորա, նա Հաստեբա-
տար ժուժկալութեամբն աննկուն և անկքեփ կաց-
եալ արիանայր ՚ի խոստովանութեան անդ իւրում,
յերկնաւոր բնմանէ ջուրցն կենդանութեան զօրա-
ցեալ, որ ՚ի կողիցն Քրիստոսի ելեալ, և ցօղէր ՚ի վէ-
րայ։ Եւ ինքն իսկ մարմին նորա ՚ի մեծոյ վկայէր ան-
ցիցն ամենայնի. զի բովանդակ վէրքք էին և կեղք, և
կծկեալ, թիւրեալ և ՚ի սպառ եղծեալ արտաքին տե-
սիլ կերպարանաց նորա։ Թէպէտ և վշտանայր ՚ի նմա

քաջութեամբ. և իբրու կարծէին անօրէնքն, թէ վասն տխրութեան
և վասն մեծի չարչարանացն լուիցէ ՚ի նմանէ որ ինչ արժան էսկ-
լել, նա այնպէս եկաց ընդդէմ նոցա համբերութեամբ իւրով, որ-
պէս զի և ոչ զանուն իւր անգամ ասաց նոցա, և ոչ թէ յորմէ ժո-
ղովրդենէ, և ոչ թէ յորմէ քաղաքէ, և ոչ թէ ծառայ իցէ, կամ
ազատ. այլ ընդդէմ ամենայն ընչի զոր հարցանէին ցնա՝ զայս միայ
պատասխանի ՚ի լեզու հռոմ, թէ քրիստոնեայ եմ։ և յայսմիկ խոս-
տովանէր ընդ անուան և ընդ քաղաքի և ընդ տոհմի և փոխանակ
ամենայն իրիք հատասարութեամբ. և այլ ինչ բնաւ ամենեւին ոչ
լուան ՚ի նմանէ հեթանոսք։ Եւ վասն այսորիկ եղև ընդդէմ նորա
հակառակութիւն մեծ հետանոց ՚ի գատաւորէ անտի, և յայնցա-
նէ էր որ չարչարէին զնա։ Եւ իբրև այլ ինչ ոչ գտանէին առնել
նմա, յետոյ տախտակս պղնձիս շողացուցանէին և դնէին ՚ի վերայ
մարմնոյ նորա ՚ի կակղամիս տեղիսն։ Եւ իբրև այրէր մարմին նորա,
նա Հաստեբէր և ոչ խոնարհէր կամ կքէր, այլ զօրանայր ՚ի խոս-
տովանութեան անդ՝ յերկնաւոր բնմանէ ջուրցն կենդանացաց որ
էլեալ ՚ի կողիցն Քրիստոսի, որ ցօղէր ՚ի վէրայ նորա և զօրացուցա-
նէր։ Նա և ինքն իսկ մարմին նորա վկայի այնմ իմիք զոր Հաստեբեն,
զի վէրքք էին և կեղք և կեղեքեալ և տգեղացեալ ամենայն տեսիլ

Քրիստոս, սակայն փառասիրութիւն մեծ կատարէր ի ձեռն նորա. զի խափանէր Թշնամին, զի յուսանէր նովաւ օրինակ այլոց բազմաց, Թէ չիք ինչ ահաւոր՝ ուր սէր է Հոր, և ոչ յաւալէ և վշտագին՝ ուր փառքն են Քրիստոսի: Իակ անօրէնքն լիտ աւուրց դարձեալ չարատանջ չարչարեին զվկայն, կարծեալ այնպէս եւ Թէ նեխեալ և հարեալ մարմին նորա՝ յաւաղին անդ կոտանան յաղթեն նմա, զի չմարթէր և ոչ ձեռն մարդոյ միրձենալ ի նա, և կամ եթէ միոցի ի տանջանն՝ ահ և երկիւղ լիցի այլոց: Բայց ոչ միայն յայսպիսեաց աստի անցք ոչ անցին ընդ նա, այլ և քան զկարծիս մարդկանն ուղեալ կանգուն և վերջնեալքն տանջանօքք բժշկեալ ամենևին՝ յիւր յառաջին դարձաւ նա ի կերպարանս և ի պէտս անդամոց իւրոց. մինչ զի յետին գերլցքն ոչ ի պատուհաս տանջանաց լինէին նմա, այլ ի բժշկութիւն ընդհանրաց Քրիստոսի: Եւ զկին ոմն անուն Բիբլա՝ որ յառաջագոյն յուրացելոց անտի էր, յուսացեալ դիւին ի սպառ կործանել զնա, զի եռեւս զնա լոյծ և մեղմ, կամէցաւ ի վերայ դառնալ պարտութեանն նորա յաւելուլ և զհպարտութիւնս, վասն որոյ եւս ածել զնա միւսանգամ ի չարչարանս, և սափրէր և նեղէր խօսել զմեղս բանս անարժանս: Իակ նա անդէն մինչդեռ ի չարչարանս էր, զարթուցեալ իբրև ի խոր քնոյ, և յուշ լինէին նմա ի ձեռն այսր

նորա ի կերպարանաց մարդոյ. զի Թէպէտ վշտանայր նովաւ Քրիստոս, սակայն գովեստ մեծ կատարէր ի ձեռն նորա. զի խափանէր զԹշնամին և յուսայնէր նովաւ օրինակ այլոց բազմաց՝ Թէ չիք ինչ ահաւոր ուր սէր Հոր է, և ոչ այն ինչ որ յաւելցուցանէ ուր փառքն Քրիստոսի են: Իակ անօրէնքն ի վաղիւ անդր դարձեալ միւսանգամ չարչարէին զվկայն և համարձակ Թէ իբրու նեխեալ և հարեալ էր մարմին նորա, զի Թէ մատուցին զնա յաւաղին տանջանն՝ յաղթեն նմա. զի ոչ մարթէր և ոչ ձեռն մարդոյ մատուցանել ի նա. կամ Թէ մեռցի ի տանջանս, ահ և երկիւղ լիցի այլոց: Բայց ոչ միայն յայսպիսեաց անցք որ անցին ընդ նա, այլ այն ինչ զոր մարդիկ ոչ խորհէին և ոչ դնաւս ածէին, բժշկեցաւ և ողջացաւ նա ի ձեռն տանջանացն զոր մատուցին նմա յետոյ և ընկալաւ զառաքին նմա. նովաւեան պէտս անդամոց իւրոց. զի տանջանքն երկոցունք ոչ ի չարչարանս եղեն նմա, այլ ի բժշկութիւն ընդհանրաց Քրիստոսի: Եւ կին մի զի անուն էր նորա Բիբլայ, որ էր նա յայնցանէ որ ուրացան յառաջագոյն, իբրև համարեցաւ Թշնամին Թէ անկեալ կործանեցաւ, կամեցաւ գարձեալ միւսանգամ Թէ և ի ձեռն հայհոյու-

Ժամանակեան տանջանաց տանջանք գԵհեհոյն յաւիտենից, և պատասխանի առնէք ընդդէմ հայհոյչացն այսպէս. Ջհարդ, ասէր, ուտէն նոքա զմանկտի, որ և զարիւն անասնոց ոչ ունին իշխանութիւն ուտել. և յայնմհետէ խոստովանէք Թէ Քրիստոնեայ եմ, և 'ի բաժին ժառանգութեան վկային խառնէք, նէ իբրև 'ի ձեռն հմտերութեան երանելեացն խոփանեցան Քրիստոսիւ անօրինացն չարչարանք, միւս ևս խորհրդոյ մանկութիւն մեքենայից հնարէր Թշնամին, զի չարգելցեն բանից և 'ի խաւարին և չանձուկ վայրս արկեալ զնոսա սլրկէր զոտս նոցա 'ի կոձեղս, մինչև 'ի հինգ ծակս տարածեալ, և այլովք նմին տանջանօք, որպէս սովոր էին զայլագնեալ արբանեակք սատանայի չարակտուտ լինել զարգելելոյն. որով բազումք 'ի նոցանէ հեղձեալ լինէին 'ի բանտին, զորս միանգամ կամեցաւ Ձեր այս օրինակ ելանել չաշխարհէ, ցուցանելով նոցա զիառս իւր; Իակ որ գառնապէս տանջեալ լինէին, մինչև կարծեալ երևելոյ եթէ և ամենայն բժշկութեան մատուցեալ առ նոսա սակայն ապրել ոչ կարէին, կային մնային նոքա 'ի բանտին զրկեալք չամենայն հոգւաբարձութենէ մարդկան, այլ 'ի Ցեառնէ զօրացեալ հոգեպէս և մարմնապէս ողջա-

Թէեան պարտաւորեցեալ զնա և էած միւսանգամ 'ի չարչարանս, և սոսկալիս նեղեր զնա, խօսել զինչ բան անաբժանս. զի էանս ըզմեղութիւն նորա և զանմեղութիւն: Իակ նա անպէն միշտգնա 'ի չարչարանս կայր' յուշ եղև նմա յանձն իւր, և զարթնաւ իբրև 'ի խոր քնոյ, և յիշեաց նա 'ի ձեռն այսր տանջանաց ժամանակեան զտանջանս գԵհեհոյն յաւիտենից, և պատասխանի էտ ընդդէմ հայհոյչացն և ասէ. Ջհարդ ուտեն զմանկտի, որ և զարիւն անասնոց ոչ ունին իշխանութիւն ուտել. և յայնմհետէ խոստովանէք զան անձին իւրոյ Թէ քրիստոնեայ եմ, և 'ի Թէ համարյ վկայիցն չաւելու: Իակ իբրև խոփանեցան Քրիստոսիւ անօրինաց չարչարանքն 'ի ձեռն համբերութեան երանելեացն, այլ միւս ևս խորամանկութիւն մեքենայից հնարէր Թշնամին. զի չարգելցեն բանիցն 'ի խաւարին անդրէն և չանձուկ վայրս չարչարեացն զնոսա, և սլրկեացէ զոտս նոցա 'ի կոձեղ զհինգ ծակով. և այլովք տանջանօք որպէս սովոր էին բարկութեամբ պատռել առ նոսա. և այս միոյմ այնգութեան 'ի Թշնամւոյ անտի գործեալ լինէին առ արգելելոյն այսպէս, զի բազումք 'ի նոցանէն հեղձեալ լինէին 'ի բանդին, որ կամեցաւ տէր Թէ այսպէս եղցեն չաշխարհէ, զի ցուցցէ զանձն իւր, նէ այնպիսի որ տանջեցան գառնապէս, որ կարծեալ երևելոյ եթէ

Նային և այսու միսիթարեալ անդէն ՚ի գեղեցիկ նա-
Հատակութիւնն։ Եւ այլք ոմանք նորոգ ըմբռնեալ,
որոց անհոգձ մնալինքն տանջանաց, ոչ տանելով խրս-
տութեան արգելանին, անդէն ՚ի ներքս մտանէին,
Իսկ երանելի Պողիկոս, այն որում Հաւատացեալ էր
պաշտօն եպիսկոպոսութեան Լուգդունացւոց եկեղե-
ցւոյն, որ զննանամինիւք ուրեմն էր և վաստեալ յոյժ
մարմնով, և Հազիւ ուրեմն առ մարմնաւոր տկարու-
թեանն ընդէր, սակայն առ ցանկութեան վկայու-
թեանն՝ որ առաջի կայր, եռայր ոգւով և զօրանայր,
քաջչեալ ածաւ և սա ՚ի բեմ անդր. որ թէպէտ մար-
մնով կէս մի ՚ի ծերութենէ և կէս մի առ խոթու-
թեան լուծեալ էր ամենևին, այլ ոգի նորա ՚ի նմա
էր, զի փառաւորեսցի Նովաւ Քրիստոս։ Եւ իբրև ա-
ծին զնա զննուորքն ՚ի բեմ անդր, զհետ գալով և ա-
տենակալաց քաղաքին և ամենայն ժողովրդեան ՚ի
ձայն բարձր աղաղակելով, իբրու եթէ դա ինքնին
էր Քրիստոս, խոստովանէր նա զբարւոք դաւանու-
թիւն։ Եւ հարցեալ ՚ի դատաւորէն թէ ո՞ր է Աս-
տուածն քրիստոնէից. պատասխանի տուեալ ասէր.
Եթէ արժանի իցես, դիւրին է քեզ գիտել։ Այնդէն

և ամենայն բժշկութիւն մատիցէ առ նոսա՝ սակայն այրել ոչ կա-
րէին, նոքա կային ինչպէս անառն ՚ի բանսին՝ իբրու զրկեալ էին
յամենայն հոգւաբարձութենէ մարդկան, այլ ՚ի սեառնէ զօրանա-
յին և աղքանչէին հոգւապէս և մարմնապէս, և զայլսն յորդորէին և
միսիթարէին։ Որ նորոգ ըմբռնեալն էին, և ցայն վայր որ հաժարեալ
էին մարմինք նոցա, ոչ հաւատերբին ծանրութեան արգելանին, այլ
՚ի ներքս մտանէին։ Իսկ Պողիկոնոս երանելի, այն որ հաւատաց-
եալ էր պաշտաման եպիսկոպոսութեան զաւոգունացւոց, որ անց-
եալ էր վննուան՝ ամով, և յոյժ տկար էր մարմնով իբրով, և հա-
զիւ ունէր զոգի վասն տկարութեանն. բայց ղնան խորհրդով հո-
գւոյ իբրու զօրանայր, վասն ցանկութեան վկայութեանն որ կայր.
և զնա իսկ քաջչէին ածէին ՚ի բեմ անդր, իբրու մարմինն իւր լու-
ծեալ էր ՚ի ծերութենէ և ՚ի տկարութենէ, բայց շունչ նորա պա-
հեալ էր ՚ի նմա, զի Քրիստոս նովաւ փառաւորեսցի։ Եւ իբրև ա-
ծին զնա զննուորքն առ բեմ անդր, և շուրջ էին զնովաւ խնամք քա-
ղաքին, և ամենայն ժողովուրդն ՚ի ձայն բարձր բարբառոյ աղա-
ղակէին ազգ ազգ աղաղակաւ, Թէ դա ինքնին է Քրիստոս. իսկ
նա խոստովանէր զբարւոք վկայութենն։ Իբրև դաւաւորն ասէ-
պետ նեղէր զնա ասելեմ ո՞ր է աստուածն քրիստոնէից. և նա

՚ Ցոր. ը. հ. տ՚ոմ.

*քարշեալ զնա յանխնայ, ազգի ազգի հարուածս տալ
լին նմա. և որ շուրջ զնովաւն էին՝ ոմն ոտիւք, ոմն ձե-
ռօք թշնամաներ զնա, և ոչ ակն ածէին ի ծերութեա-
նէ անտի նորա: Եւ որ միանգամ հեռի ոք էր ի նմա-
նէ, իւրաքանչիւր զինչ և ի ձեռին իւրում ունէր՝
ձգէին ի նա. և ամենեքին համարէին ի միտս իւր-
եանց մեղանչել մեծապէս և անօրինել՝ եթէ անհոգ
լիցին ի ժպրհելոյ ընդդէմ նորա. զի այսպէս զվրէժ
դից իւրեանց խնդրել ի նմանէ կարծէին: Եւ իբրև
հազիւ միայց ի նմա չունչ՝ տարան ընկեցին ի բանտ,
և յետ երկուց աւուրց մեռաւ նա: Եչ մեծապէս փայ-
լէր անդ տեսչութիւն Աստուծոյ և անչափ ողորմու-
թիւն Քրիստոսի, դուն ուրեք դէպ լեալ յեղբարս,
բայց և ոչինչ օտար ի խորհրդոց Քրիստոսի. զի որք
ըմբռնեալ յառաջագոյն և ուրացան, արգելեալ լի-
նէին և նոքա ի բանտին և կցորդք գոլով նեղութեան
վկայիցն, և ոչ յայս կեանս շահէին ինչ զի ուրացան,
զի խոստովանողքն, որպէս քրիստոնեապէս արգելեալ,
ոչ այլ ինչ ՚ի պատս զնոցանէ ամբաստանութիւն լինէր.
իսկ նորա իբրև սպանողք յայնմհետէ և պիղծք կա-
լեալք էին, և երկպատիկ քան զայլսն տանջէին և չար
չարէին: Հաւատացելոցն ուրախութիւն վկայութեանն
Թեթևացուցանէր զբեռն, և յոյսն աւետեաց և սէրն*

*ատաց, Թէ արժանի եա՛ ուանոիա: Եւ մնաւեան և սկսան քարշել
զնա յանխնայ, և ի հարուածս ազգի ազգի համբերէր նա: Իսկ որ
մերձ և շուրջ զնովաւ էին, ոմն ոտիւք և ոմն ձեռօք թշնամանէին
ազգի ազգի թշնամանօք, և ոչ ակնածէին ի ծերութենէ անտի նո-
րա: Եւ որ միանգամ հեռի ոք էր ի նմանէ՝ իւրաքանչիւր որ ի նո-
ցանէ զինչ և ի ձեռին իւրում ունէր՝ ձգէին ի նա, և ամենեքին
նոքա զայս համարէին ի միտս իւրեանց՝ Թէ յոյժ և անհնարին
յանցանս յանցանէ և անիրաւի, այն որ յամէ և ոչ վազվազակի
պղծի ի նա. զի այսպէս համարէին նոքա եթէ զվրէժս դից իւրեանց
խնդրեսցին: Եւ իբրև հազիւ միայց ի նմա չունչ, տարան ընկեցին
ի բանդ, և յետ երկուց աւուրց մեռաւ: Ինչ եղև տեսչութիւն
մեծ Աստուծոյ, և անչափ ողորմութիւն Քրիստոսի յայն սակաւս
որ անկան. զի ոչ Թոզան նոքա ի տեսչութենէն Քրիստոսի: Եւ
այնպիսիկ որ ըմբռնեցան յառաջագոյն և ուրացան, արգելեալ լի-
նէին և նոքա ի բանդի և համբերէին նեղութեանց. զի և ոչ յայսմ
ինչ յաչխարհի շահ օգուտ եղև նոցա յայնմիկ զի ուրացանն.
զի այնպիսիկ որ խոստացան եղեն որպէս քրիստոնեապէս արգելեալ
լինէին, իբրև ոչ բեբէին զնոցանէն այլ ինչ պատճառս: Իսկ նոքա*

առ Քրիստոս և Հոգին Հայրական միխիթարեր զնոսա. իսկ ուրացեալքն խիղճ մնաց առաւելապէս տանջէր, այնպէս զի յայսմանէ լինել ամենեցուն ի հրապարակս ի գունդ երեսաց իւրեանց։ Այլ վկայքն լուրջք և զուարթք եւանէին, և չնորհ բազում և փառք խառնեալ փայլէին յերեսս նոցա, և կապարէն իբրև զարգ վայելուչեան լինէր ի վերայ նոցա, որպէս զՀարսն գեղեցիկ զարդու ոսկեհուռ Տանդերձիւ զարդարեալ. և Հարիանէր ի նոցանէ, Հոա անոյշ Քրիստոսի, միւնչև կարծել ոմանց թէ նիւթական իւղով աշխարհիս օծեալ իցէն։ Իսկ ուրացեալքն իբրև տրամեալք և կապացեալք և գունատեալք և ամենայնից նախատեալք ի հեթանոսաց որպէս զլանս և անարիս և զպանդղի զանճամբ առնելով գյանցանս, կորուսեալ միանգամ զամենապատիւ, զիրաւաւորեալ և զիրկարար զաՀնէնն, Ջոր տեսեալ այլոց ամենեցուն մեծապէս Հառաչէին, որով բմբռնեալքն յետ այնորիկ անյապաղ խոտորեան լինէին, չտալով տեղի սադրանաց բանսարկուին։ Եւ յետ ոչ բազմից հինչ բանից՝ յարել ի նոյն դարձեալ թէ. Ջկնի այսոցիկ ամենայնի ի բազմերիսակ դէմն կերպարանէին վկայութեան նոցա եղէք, որպէս զի ի յամենասէր ծագկանց զանազանեալ ի գոյնս և ի տեսակս բազմերեսին պսակս ի նուէր Աս-

յայմմէնեակ իբրև ապառաժք և պիղծք կալեալք էին, և երկպառակ քան զոյնն առնչէին և չարչարէին։ Իսկ ասցա ուրախութիւն վերկայութեանն Թէոնաացոյցեալք գրեան, և յոյն առնեակաց և սէրն Քրիստոսի և Հոգին բարեխօս։ Իսկ զայնոսիկ որ ուրացանն՝ խիղճ մնացն նոցա առաւելապէս տանջէր զնոսա, այնպէս զի և յամենայն մարդկանէ անտի յայտնի էին ի հրապարակս՝ ի գունդ երեսաց իւրեանց։ Իսկ վկայքն յորժամ էլանէին լուրջք և զուարթք էին, և շնորհք և բազումք փառք խառնեալ էին յերեսս նոցա. և կապարէն իբրև զզարգ վայելչութեան էր ի վերայ նոցա, որպէս զՀարսն զարգարեալ գեղեցիկ զարգուս ոսկեհուռս. և Հարիանէր ի նոցանէն Հոա անոյշ Քրիստոսի, զի էին որ կարծեալ երևէին թէ իւղով աշխարհիս օծեալ իցէն։ Իսկ ուրացեալքն իբրև տրամեալք և կորացեալք և գունատեալք և ամենայնից և նախատեալք ի հեթանոսաց, իբրև մեզկեալք և լուծեալք և պատառհասեալծեալք լինէին իբրև պսակք. և կորուսին զանունն որ քան զամենայն պատուական և փառաւորն է և կեցուցանէ։ Եւ իբրև ասացին սակաւիկ մի, յետ այսորիկ յաւելին և ասեն, թէ յետ այսր յամենայն կերպս բաժանեցաք վկայութեանն ի վախճանէն նոցա. զի

տուծոյ Հօր։ Չի արժան իակ էր արիական նահատակացն՝ որ բազմապատիկ Հանդիսից տարան և մեծապէս յաղթեցին, ընդունել և զմեծ պատին անեղծութեան։ Եւ ածան արդ Մատուռս, Սանկտոս, Բրանդինա և Ամատաղոս առ գազանսն յամիթեատրոնն՝ առ Ժողովուրդն, ի տեսիլ անդաղրամ խոստմանն Քրիստոսի, որ ի մեր պատճառս քան զօրինս առհասարակիւ՝ կարգեալ էր նոցա զայս Հանդէս գազանամարտիս։ Այդ Մատուռս և Սանկտոս անցին գաղձեալ ընդ ամենայն ազգս տանջանաց՝ իբրու եթէ չէր ինչ կրեալ նոցա յատաջագոյն, կամ մնասանդ որպէս ըմբիշք որ ընդ բազում նուագս ախոյենիցն վիճակեալ յաղթող գտանիցին. զի վասն պակին էր նոցա մարտ պատերազմիս։ Դարձեալ վերստին ընդ հարուածս սոխրական գանից անցանէին, ընդ խաժատանս գազանաց, և զոր միանգամ ի մէջ գնեալ Քրեան իբրու ազաղակաւ հրամայէր ամբոխ բազմութեան ոռամկին։ Ցետ այսորիկ և ի վերայ երկաթի ահագնացեալին գնացաք, և Թէպէտ ի խորովել մարմնոց Հօտ Ջնջձերոյն ի յանընդունս Ժողովրդեան հասանէր, սակայն և այնպէս ոչ առնէին վախճան գործոյն գառնութեան, այլ ևս քան զևս մեծագնեալ կամիէն յաղթել Համբերութեան երանելեացն. սա-

յամենայն ծականց և յամենայն բուսոց բղխեցին պակ և մատուցին Հօր։ Արժան իակ էր ասել վասն Հզօր նահատակացն որ Համբերին ի պատերազմին՝ պէսպէս փոփոխմամբք, և յաղթեցին մեծապէս և առին զպսակս մեծ զանեղութեան։ Այլ զԱնաթեմեոս և զՎիկտոր և զՎաչէ տա՛ղս, ածին արկանել գազանաց առաջի ամենայն Ժողովրդեան ի տեսիլ ամենայն Հեթանոսաց որ անդադրմ էին յաւուրն . . . վասն մեր ի տեսիլ . . . Իսկ զՎիտաթեոս և զՎիկտոս ածին գաթանել ի Թէատրոնն յամենայն չարչարանս՝ իբրև այն Թէ ոչինչ եղէ նոցա. առաւելապէս բազում չարչարանաք յաղթեին Թշնամւոյն, զի վասն պակին էր նոցա մարտ պատերազմին։ Նայց գաթանել Համբերին նոքա կեզոյ վերայն զոր ունէին, և գնասանանդն զգազանացն, և զամենայն՝ որ ինչ միանգամ ազաղակէին Ժողովուրդն ի մէջտեղեան անդ իբրանց սասք և անսք, և հրամայէին չարչարել զնոսա։ Եւ Հանդերձ այսոքս ամենայնիւ, ի վերայ երկաթի ահագնացեալին գնացաք, և իբրև խորովէին մարմինքն՝ Հօտ այրմանն ահ արկանէր ի Ժողովրդեանն, սակայն և այնպէս ոչ ամաչէին, այլ ևս քան զևս առաւել մէջ գնէին և կամէին յաղթել Համբերութեան երանելեացն.

կայր ոչ այլ ինչ լուան ՚ի Անկիտոսէ, բայց զբան խոստովանութեան միայն, զոր ՚ի սկզբանէ անտի առնոր էր նա յերգելոյ։ Ժուժկալեալ արդ սոցա մեծի պատերազմին, յերկարել ՚ի նոսա ընչից կենդանութեան, սրախողխող սպանան. և փոխանակ բազմադիմի մեղանմաքից աւուրն, տեսիլ եղեն նոքա ամենայն աշխարհի։ Իսկ Բլանդինա ՚ի փայտէ կախեալ արկաւ ՚ի կերակուր գազանաց, որ ըստ կերպի խաչին կախեալ, և ուժգին աղօթիւքն առ Աստուած, բազում քաջալերս յաւելոյր ՚ի նահատակն Քրիստոսի՝ որք և արտաքին մարմնով այջք ՚ի ձեռն վկայուհւոյն տեսանէին զնա՝ որ ՚ի խաչն էլ վասն նոցա, զի հաւանեցուսցէ զՀաւատացեալսն ՚ի նա, զի ամենայն որ չարչարի վասն փառացն Քրիստոսի, հաղորդութիւն ունի նա ընդ Աստուծոյ կենդանւոյ։ Եւ իբրև ոչ մերձեցան ՚ի նա և ոչ մի ՚ի գազանաց անտի, իջուցին զնա ՚ի փայտէ և տարան եդին դարձեալ ՚ի բանտի՝ պահել այլեւս պատերազմի, զի բազմապատիկ հանդիսիւ Ճգնութեամբ յաղթեացէ Թշնամւոյն սատանայի. և գկամակոր օձին անհրաժեշտ կացուսցէ զդատապարտութիւն, և յոր-

սակայն և ոչ այսպէս լուան այլ ինչ ՚ի Անկիտոսէ, բայց ՚ի բանէ * ՚ի խոստովանութեանն յաշխատանէ՝ որ վկայաբանին սովորեալ ասէր։ Արգ սոցա մեծ պատերազմին համբերին, վասն զի չառ ընդ երկարեցաւ ՚ի նոսա չունչ իբրեանց, յհասոյ փոզոսեցան և փոխանակ յայտնի մարթոյն տեսլեանցն որ լինէին յայնմ աւուր, նոքա եղեն տեսիլ ամենայն երկրի։ Իսկ Վազեդինեայս, ՚ի փայտէ կախեցաւ, և պատրաստեալ էր լինել կերակուր գազանաց, որ յարձակեալ էին ՚ի վերայ նորա և տեսլեամբ իւրով ըստ կերպարանաց խաչի կախեալ կայր, և ուժգին աղօթիւք իւրովք քաջալերութիւնս մեծ առնէր նա այնոցիկ որ զպատերազմն առնէին. տեսանէին պատերազմեալ իւրեանց, և արտաքին այջք իւրեանց ՚ի ձեռն այսոսիկ տեսլեան՝ զոյն որ ՚ի խաչն էլ վասն նոցա, զի հաւանեցուսցէ զամենեսին որ միաղամ հաւատան ՚ի նա. զի ամենայն որ չարչարի վասն փառացն Քրիստոսի՝ հաղորդութիւն ունի նա ընդ Աստուծոյ կենդանւոյ։ Եւ իբրև ոչ մերձեցան ՚ի նա մի ՚ի գազանաց անտի, իջուցին ՚ի փայտէ և տարան եդին դարձեալ ՚ի բանդէ, զի պահեցի նա այլեւս պատերազմի. զի բազում կրթութեամբքն յաղթեացէ Թշնամւոյն սատանայի, և պատրաստութիւնն որ ոչ անցանէ՝ առացէ նմա։ Բայց զերգարան յորգորելոցն, եթէ այս փոքրիկս և տկարս և արհամարհելս իբրև զնահատակ մեծ՝ որ ոչ յաղթահա-

* Յոր. ԼԲ-ԽԲ։

դորեակ խոտխոտեսցէ զեղջերս, զի թէպէտ ինքն փոքր, տկար և արհամարհ, սակայն մեծի և անյաղթ նահատակին Քրիստոսի զդեցեալ զզօրութիւն և բազում կռուով յաղթեաց հակառակորդին, և 'ի մրցարանին անեղծ պսակաւ պսակեցաւ: Եւ զԱստուածս ինքնին խնդրեր ժողովուրդն մեծապէս 'ի պատուհաս տանջանաց, զի էր նա անուանի. և չտնեղով խիղճ անձին իւրոյ՝ եկն նա պատրաստական 'ի նահատակութիւն, զի հմուտ իսկ էր նա 'ի խոստովանութիւն քրիստոնէութեան, և հանապազօր վկայ Աստուածութեան առ մեզ: Եւ իբրև շուրջ ածէին զնա զթէաթրոնաւն, երեմայր առաջի նորա տախտակ մի գրեալ 'ի լեզու հռովմայեցի. Սա է Աստուածս քրիստոնեայ: Եւ 'ի յուզել գրգռել ընդդէմ նորա ժողովրդեան, իբրև գիտաց գատաւորն եթէ հռովմայեցի է նա, հրամայեաց կապել և դնել 'ի բանտի ընդ այլսն՝ որ էին անդ. և գրեաց վասն նոցա առ կայսրն և ճնայր վճռով հրամանին առ 'ի նմանէ: Իսկ ժամանակին՝ որ եղև 'ի միջի, ոչ անօգուտ ինչ և անպտուղ լինէր, այլ 'ի ձեռն համբերութեան նոցա անչափ գթութիւն Քրիստոսի երևեալ փայլէր, զի 'ի ձեռն կենդանեաց 'ի կենդանութիւն գային մեռեալքն և 'ի ձեռն վկա-

*բի՝ քաջալերեալ էր. և բազում կռուով յաղթեաց թշնամւոյն, և 'ի պատերազմի անեղծ պսակաւ պսակեցաւ: Իսկ զԱստուածս, և զնա մեծապէս խնդրէին ժողովուրդքն, զի էր նա անուանի. և վասն բարւոք խորհրդեանն զոր ունէր նա՝ եմուտ իբրև զնահատակ պատրաստեալ. քանզի կիրթ հմուտ էր նա 'ի խոստովանութիւն քրիստոնէութեան, և հանապազօր մշտակաս Աստուածութեամբ էր նա առ մեզ: Եւ իբրև ածին զնա շուրջ զթէաթրոնաւն, երեմայր առաջի նորա տախտակ մի որ գրեալ էր 'ի նմա զսա հռովմարէն լեզուի. Ահա է Աստուածս քրիստոնեայ: Եւ ժողովուրդն մեծապէս տատականայր 'ի վերայ նորա: Եւ իբրև գիտաց դատաւորն եթէ հռովմայեցի է՝ հրամայեաց կապել և գնել 'ի բանդի ընդ այլսն որ էին անդ. զի գրեաց վասն նոցա առ կայսր, և ակն ունէր զնոսա վճռել ի կենդանի 'ի նմանէն: Իսկ ժամանակին որ եղև 'ի միջի՝ ոչ եթէ խափանեալ էր նոցա, կամ անպտուղ. այլ 'ի ձեռն համբերութեան նոցա անչափ գթութիւն Քրիստոսի երևեալ լինէր, զի 'ի ձեռն այնոցիկ որ կենդանի էին, և որք մեռանին, և վկայքն այնոքիկ, և այնոսիկ որ չէիննն վկայք գաւանութեան. և լինէր ուրախութիւն մեծ մարն մերոյ կուսի, զի զայնոսիկ որ ընկեցան * իբրև գիտակաւ ըն-*

* Յոր. Շեհ.՝

յից՝ ընդհէնը տակաւնդելոյն և լինէր ուրախութիւն մեծ մարն կուսի, զի զորս ընկէցն իբրև զմեռեալս, ընդունէր զնոսա կենդանիս։ Ցի՛ ի ձեռն վկայիցս քաղուածք յայնցանէ որ ուրացանն՝ վերստին երկնեալ և կերպարանեալ ՚ի Քրիստոս, և կենդանանորոգեալ ուսանէին խոստովան լինել։ Այսպէս ՚ի կենդանութիւն եկեալ և ՚ի զօրութիւն՝ մատչէին վերստին ՚ի բեմ անդր, և փոխեալ ՚ի հիւթ քաղցրագոյն յերկայնմտութենէն Աստուծոյ՝ որ ոչ կամի զմահ մեղաւորի, այլ զդառնալ նորա և զկեալ, գային ՚ի նոր հարցուփորձ ՚ի դատաւորէ անտի։ Եկին պատասխանի և ՚ի կայսերէն քրածեծ կորուսանել զնոսա. բայց որ ուրանային՝ արձակեսցին ազատ։ Եւ ՚ի լինել ամենայն ժողով տօնին, ուր յամենայն ազգաց եկեալ խառներ բազմութիւն մարդկան, հրամայեաց դատաւորն ածել զերանելին վկայն յատեան, իբր ՚ի հանդէս և ՚ի տեսիլ բազմութեան ամբոխին. և գարձեալ միւսանգամ ՚ի հարցուփորձ մատուցանէր զնոսա, և որ միանգամ էին ՚ի կարգս քաղաքացւոց Հռոմայեցւոց՝ հրամայեաց զգլուխս նոցա հատանել։ իսկ զայլսն ետ արկանել առաջի գազանաց։ Բայց մեծապէս փառաւորբէր Քրիստոս յայնօսիկ՝ որ յառաջագոյն ուրացան, զի արտաքոյ քան զկարծիս հեթանոսաց խոստովանէին, և առանձին գարձեալ ՚ի հարցուփորձ քննութեան

կալաւ զնոսա կենդանիս. զի ՚ի ձեռն վկայիցն այնոցիկ բազումք յայնցանէ որ ուրացանն՝ յզգաստացք լինէին և ծնեալք, և զորեղացեալ և ուսանէին և խոստովան լինէին, և իբրև կենդանեաք և առողջք էին, մատչէին առ բեմ անդր՝ զի հարցցին ՚ի դատաւորէ անտի. ՚ի ձեռն խորգամանն այն որ ոչն կամի զնոցա մեղաւորին, այլ քաղցր է նա ՚ի վերայ այնոցիկ որ գառնանն առ նա։ Գրեաց կայսր թէ որ միանգամ ոչ ուրանան մեռցին, և որք ուրանանն արձակեսցին իսկ ՚ի ժողովուրդ որ լինի ասա, զի բազում են ՚ի սմա մարդիկ՝ զի ամենայն ազգաց ժողովին այսր։ Եւ իբրև սկսաւ ժողովել, էած զնոսա յատեան անդր, զի արասցէ զերանելյան թէասրն և տեսիլ ամենայն ժողովրդեանն. և վասն այսորիկ գարձեալ միւսանգամ հարցանէր զնոսա. և որ միանգամ էին յատեանն հաստատեալք հրամայեաց հատանել զգլուխս նոցա. իսկ զայլսն ետ տանել դազանաց։ Բայց փառաւորեալ լինէր Քրիստոս յայնօսիկ որ յառաջագոյնն ուրացան. զի արտաքոյ քան զկարծիսն հեթանոսաց խոստովանէին. և առանձինն հարցեալ լինէին նոքա, իբրև այն՝ թէ ահա ասեն արձակի, իսկ իբրև խոստովան եղեն յատեանն

մատուցեալ, իբր այն Թէ ահա արձակին. այլ խոս-
տովանեալ յաւելան ՚ի Թիւս վկայից։ Մնացին միայն
արտաքոյ, յորս և ոչ հետք անգամ հաւատոց երբեք
գտաւ, և ոչ գիտութիւն հանդերձին հարանեաց և
ոչ մտածութիւն երկիւղին Աստուծոյ, այլ վարուք
իւրեանց հայհոյութեան լինէին առիթ Ճանապար-
հին Ճշմարտութեան, և ելին որդիք կորստեան։ Իսկ
այլքն ամենեքեան կրկին ժողովեցան յեկեղեցւոջ
Տեառն, զորոց իբրև հարցուփորձ լինէր՝ Ալեքսանդրոս
ոմն ազգաւ Փռիւգացի, յարուեստ բժիշկ, զամն բա-
զումս կեցեալ ՚ի Գաղղիա և ծանօթ գրեթէ ամենե-
ցուն սիրով առ Աստուած և հաւատարմութեամբ ՚ի
քարոզութիւն բանին, որ չէր իսկ անմասն յառաքե-
լութեան շնորհաց, կացեալ առաջի բեմին և ակնար-
կելովն իւրով յորդորէր զնոսա ՚ի խոստովանութիւն,
և որոց շուրջն կային՝ Թուէր նա յերկուսս լինել։ Յա-
ւուցեալ զայրանայր Ժողովուրդն ընդդէմ նոցա, որոց
ուրացեալ միանգամ, դառնային խոստովան լինել և
աղաղակէին զԱլեքսանդրոսէ, իբրու դորա արարեալ
զայս։ Եւ իբրև հած և կացոյց զնա դատաւորն և հար-
ցանէր Թէ ո՞վ իցէ. և յասել նորա՝ Ֆրիւտոնեայ,
բարկացեալ սրտմտութեամբ ՚ի վերայ նորա պատուի-
րեաց զի գաղանաց ընկեցին։ Եւ ՚ի վաղիւ անդր է-

լան նոքա ՚ի Թիւս վկայիցն։ Բայց մնացին արտաքս այնոքիկ որ և ոչ հետ հաւատոց երբեք եղեն ՚ի նոսա, և ոչ գիտութիւն հանդերձին հարանեաց, և ոչ խորհուրդ աստուածպաշտութեան, այլ և վա-
րուք իւրեանց հայհոյելին զՃանապարհն Ճշմարտութեան, զի էին նոքա որդիք կորստեան. և այլքն ևս յաւելան լեկեղեցի անդ։ Իբ-
րև հարցեալ լինէին, այր մի զի անուն էր նորա Ալեքսանդրոս, զի յապգէ էր նա փռիւգացի, և յարուեստ գիտութեան խնամատա-
րեան էր նա բժիշկ, և ջանասիրս բազումս չբռնեցաւ նա ՚ի գալ ևս
և երեկելի էր ամենայն մարդոյ՝ վասն սիրոյն որ առ Աստուած ու-
նէր, և համարձակութեան ցանկն իւրոյ ոչ իսկ էր զղիակալ ՚ի պար-
գեաց անօթ առաքելութեան։ Մոյն իսկ տա կայր առաջի բեմին, և
ակնարկելովին իւրով յորդորէր զնոսա յօժարութեամբ խոստովան
լինել։ և իբրև այն Թէ երկին հարկանէր նմա, յայտ իսկ էր այնոցիկ
որ կային առ բեմին։ Բարկացաւ ամենայն ժողովուրդն վասն այնո-
ցիկ որ ուրացանն, զի գործէալ միանգամ գործան խոստովան
եղեն. և աղաղակեցին զԱլեքսանդրոսէ, իբրու Թէ գա արար զայս։
և իբրև հած և կացոյց զնա դատաւորն, և հարցանէր Թէ զինչ նա
իցէ, և նա ասաց Թէ քրիստոնեայ, բարկացաւ սրտմտութեամբ ՚ի

մուտ նա ընդ Աստուածայ ի կրկես անդր, զի և զսա ի ջնորհս ժողովրդեան հրամայեալ էր դատաւորին արկանել գազանաց։ Սոքա երկոքեան ընդ ամենայն ազգս տանջանաց անցեալ, որ պատրաստեալ կային ի թէատրոնի, և մեծի պատերազմին ժուժկալեալ՝ փողոտեցան ասպ. այլ Աղէքսանդրոս և ոչ հագուց էլ բնաւ, և ոչ կռնչեաց լեզուաւ իբրոյ կամ ձիկ եհան, այլ ի սրտին իւրում խօսէր ընդ Աստուածոյ։ Իսկ Աստաղոս իբրև յերկաթի աթոռ նստուցեալ և այրեին, յեղանել ձեռնձերպական հոտոյն ի մարմնոյ նորա, ասէ ցամբոխն ի լեզու հռոմայերէնն. Այս է ահա ուտել զմարմին մարդկեղէն, զոր առնէդ դուք. այլ մեք ոչ զմարդիկ երբեք ուտեմք, և ոչ յար ինչ գործել ախորժեմք։ Եւ իբրև հարցին զնա Թէ Ջինչ անուն իցէ Աստուածոյ, պատասխանեաց՝ Աստուածոյ չիք անուն, որպէս մարդոյ մահկանացուի։ Ցետ այսոցիկ ամենայնի՝ ի վերջնում աւուրս մենամարտիկ կռուոյն մուծին զինադիւնս հանդերձ պատանեկաւ միով՝ անուն Պանդիկոս՝ ամաց իբրև հնգետասան Նից. զօրհանապազ ածէին զնոսա անդր ի տեսանել զբարբարանս այլոց, և տիպել զնոսա երդնուլ ի կռուան։ Եւ զի հաստատութեամբ պինդ կացեալ նո-

վերայ նորա, և պատրաստութեաց զի գազանաց ընկերացէ։ Եւ ի վաղիւ անդր եմուտ նա ընդ Աստաղեայ։ Եւ զնոյն իսկ զԱստաղոս, որպէս զի չնորհս արասցէ ժողովրդեանն, հրամայեաց գատաւորն արկանել գազանաց։ Իսկ իբրև անցոյցին զնոսա ի թէատրոն անդր ընդ ամենայն գործիսն որ պատրաստեալ էին չարչարանաց և հանճարէին զմեծ պատերազմ, և ասպ յեաղ փողոտեցան նոքա. այլ Աղէքսանդրոս և ոչ յոգոց էլ բնաւ, և ոչ բանայով երաց գբերան իւր և ասաց ինչ, բայց միայն ի սրտի իւրում խօսէր ընդ Աստուածոյ։ Իսկ Աստաղոս, իբրև նստուցին զնա ի վերայ երկաթ Թէ աթոռոյ զի այրեացէ, իբրև սկսաւ եղանել ի մարմնոյ անտի նորա չոտ, ասէ ի լեզու հռոմարէն ցամբոխն ժողովրդեան՝ ուտել զմարդոյ մարմին այս զոր դուք ընդ մեզ գործէք գեռ. այլ մեք ոչ զմարդիկ ուտեմք, և ոչ երբէք չար ինչ գործեալ է մեր։ Եւ իբրև հարցին զնա Թէ զինչ անուանի աստուած, նա ասէ ցնոսա՝ Աստուածոյ անուն չիք որպէս և մարդոյ։ Ցետ այսոր ամենայնի յանուրն վերջնոյ մարտիցն, մուծին զինադիւնսդ հանդերձ պատանեկաւ միով՝ զի անուն էր նորա Պանդիոնս, զի էր նա ամաց իբրև. Հնգետասան. զնոսա հանապազօր մուծանէին զի եղեցին տեսանել զչարչարանն զայնոցն, և տիպէին նոցա երդնուլ ի կռուան։ Եւ քան-

ցա արհամարհէին զդիմս, զայրացեալ ամբոխին ոչ՝ի հասակ պատանեկին այնուհետեւ ողորմէր և ոչ՝ի կա-նացի ազգէ անտի պատկառէր. այլ ընդ անհնարին կտտանսն և չուրջ ընդ ամենայն գործիս տանջանաց անցուցեալս՝ ստիպէին երդնուլ։ Բայց չկարացին ինչ նոցա ստանանել, զի ինքնին Պռնդիկոս յորդորեալ խրա-խուսէր՝ի քեռէ անտի իւրմէ՝ի վիպաւուէյն, զի և հեթանոսք իսկ տեսանէին զի քաջալերեալ սիրդը նա զերանելի պատանին, որ և տարեալ արուեստիւք ամենայն տանջանացն ետ զՀոգին։ Իսկ երանուհին Բլանդինա յետ ամենեցունն նոցա՝ իբրև մայր աղնուա-կան որ զորդիս իւր վառեսցէ՝ի նահատակութիւն, և արձակեսցէ զնոսա պսակաւորս առ Թագաւորն. Փու-Թայր առ նոսա ընդ նոյն Հանապարհ Հգնութեան՝ լի ուրախութեամբ և ցնծութեամբ յերս անդ վախճա-նին, որպէս այն Թէ յընթրիս Հարսանեաց կոչեցեալ իցէ և ոչ Թէ՝ի կերակուր գաղանաց։ Յետ Հարուա-ծոյն և գաղանաց, և յետ տապակին խորովելոյ աբ-կին զնա՝ի վանդակ և ընկեցաւ առաջի ցլոյ. որ՝ի գա-զանէն շատ իսկ ձգելով՝ի վեր յօդս չարչարէր, այլ իբրու Թէ ոչ զգայցէ ընդ անցեալսն՝ի նա վասն յու-սոյն ակն ունելոյ՝ որում Հաւատայրն, և խօսակից ընդ

զի կացին մեացին նոքա յաղագս Թեան, և արհամարհեալ անաբ-դէին զնոսա, զայրացաւ՝ի վերայ նոցա առՀասարակ ամենայն ժո-ղովուրդն՝ որպէս զի ոչ՝ի վերայ Հասակի պատանեկին այնորիկ ողորմեացին, և ոչ՝ի կանացի ազգէ անտի պատկառեցեն. այլ սր-կին զնոսա յամենայն չարչարանս, և անցուցին զնոսա ընդ ամենայն փոփոխմունս տանջանացն, և ստիպէին նոցա երդնուլ։ Իբրև ոչ կարէին առնել նոցա զայս. զի ինքն Պռեսիկոս զօրացեալ լինէր՝ի քեռէ անտի իւրմէ. և տեսանէին իսկ հեթանոսքն, զի նա իսկ յոր-գորեր և յօժարեցուցանէր և Հաստատէր զնա. Համբեր այնուհե-տեւ քաջութեամբ ամենայն չարչարանացն, և յանձն արար զՀոգին և եղ յաչխարհէ։ Իսկ Բազմիցիկեայ երանելի՝ յետ ամենեցունց իբրև զմայր քաջ որ յորդորեաց զորդիս իւր, և արձակեաց զնոսա պսակեալս առ Քրիստոս, և կատարեալ եղեց զամենայն պատերազ-մունս որդւոց իւրոց, և փութայր նա երթալ առ նոսա իբրու լի էր ուրախութեամբ և ցնծութեամբ, որպէս այն Թէ յուրախու-Թիւն Հարսանեաց կոչեալ իցէ, արիւն զնա գաղանաց։ Եւ յետ Հարուածոյն և գաղանացն, և յետ տապակին խորովելոյ՝ յետոյ արկին զնա՝ի վանդակ, և ընկեցաւ նա առաջի ցուարակի։ Իբրև չարչարեալ լինէր՝ի նմանէն իբր այն Թէ և ոչ զգալով զգայցէ

Քրիստոսի լինելոյ, և յետոյ ուրեմն սպանաւ սրով և սա, մինչև վկայել և հեթանոսաց եթէ ցայնժամ չէր զի երբեք կին մարդ՝ որ այսպիսի և այսքան չարչարանաց տանիցէ։ Սակայն և ոչ այնպէս լինչ յագեցաւ մոլեգնութիւն անգթութեան նոցա, որ առ սուրբսն էր. զի ի վերագէ անտի ի հնոյ օձին յուզեալ վայրենի և խուժդուժ ազգք հեթանոսաց՝ ոչ գիտէին լռել և դադարել։ Այլ զարհուրանօք չարութիւն նոցա միւս ևս այլ թշնամանս հնարեցաւ ընդդէմ մարմնոց սրբոցն, զի և ոչ ի յաղթահարելոյ անտի իւրեանց կորացան ինչ, զի ոչ ունէին ոչ զգացումն մարդոյ և ոչ միտս, այլ վառեալ բորբոքեր սրտմտութիւն բարկութեան նոցա քան զգազանաց ի վերայ մեր, դատաւորին և ժողովրդեան. և անխրատ ատելութեամբ ատէին զմեզ. զի կատարեսցի բան գրոյն որ ասէ՝ Անխրատեսցին անօրինք և խմաստունք խնասցին։ Զի որք ի բանտի անդ հեղձան, արկին զնոսա շանց. և պահէին զգուշութեամբ զցայգ և զցերեկ, զի մի թաղեսցին նորա ի մէնջ։ Եւ ապա զինացորդս ի գազանաց և ի հրոյն, գլօշոտեալսն և զաճիւնացեալս, և զկառափունն և զերանացն կոտորս դնէին ի բացի

այնմ խնդ որ ինչ անցանէք ընդ նա՝ վասն յուսոյն և աւն ունէլոյ այնմ խնդ որում հաւատացին, և վասն խօսից իւրոց որ ընդ Քրիստոսէ։ Եւ յետոյ փողոսեցաւ և նա. և գոհանային ամենայն հեթանոսքն, զի ոչ երբեք կրեաց կին մարդ այսպիսի երկար չարչարանս։ Սակայն և ոչ այսպէս յագեցաւ մոլորութիւն նոցա և խաստութիւն որ առ սուրբսն էր. զի ի վայրենի գազանաց այսմիկքն ի սատանայէ՝ յուզեցան հեթանոսք վայրենիք և խժդուժք, և ոչ գիտէին լռել և դադարել։ Խարձեալ միւս ևս անդամ, այլ ևս միւս սիեղբն թշնամանաց արարին մարմնոց սրբոցն. զի ոչ կոթացան նա, քա ի յաղթահարելոյ անտի իւրեանց զերեսաց, և խորհուրդս մարգկան չտեսնէին նորա, այլ առաւել յուզեցին սրամտութիւն բարկութեան նոցա ի վերայ մեր քան զգազանաց. և գոհասարն և ժողովուրդն ամենեքին առ հասարակ ցուցանէին զանօրէն սուէլութիւնն իւրեանց զոր ունէին առ մեզ, զի կատարեսցի բան գրոյն զոր ասէ. Եթէ անօրէնն ևս անխրատեսցի, և արգարն ևս այլ արգասցի։ Իսկ զայնոսիկ որ հեղձանն ի բանդի անդ՝ արկին զնոսա շանց, և պահէին զնոսա հոգաբարձութեամբ զցայգ և զցերեկ, զի մի թաղեսցին նորա ի մէնջ։ Եւ ապա եգին զինացորդս որ մնացեալ էին ի գազանաց անտի և ի հրոյ, ի նոցանէն կեղեքեալք և այլև-

* Ցար. յոյժ։

անձամբ ընդ խիստ զգուշութեամբ զինուորագ զաւուրս բազումս։ Լինի որ գազանանայրն և կրճտելին զատամունս իւրեանց ՚ի վերայ նշխարացս այսոցիկ, իբրու զի առաւել ևս վրէժս ՚ի նոցանէ կամելով առնուլ և այլք ծաղր և այսպն կատականաց առնելին զնոսա, մեծացուցանելով զկուռս իւրեանց, որպէս զարժանաւորս պատուհասին կշռեալ նոցին։ Իսկ որք հեզագոյնքն թուէին և ախտակցաբար կաթկիպ մեզ, նախատանօք խօսել առնուին և նոքա թէ Ո՛ւր է Աստուած նոցա. և զինչ օգուտ եղև նոցա պաշտօն նորա, որք և զանձինս իւրեանց եղին ՚ի վերայ։ Ա՛յսչափ ինչ խոիր զանազանութեան էր ՚ի խորհուրդս հեթանոսաց, իսկ մեք ՚ի մեծ սուգ նստեաք, զի ոչ կարէաք թաղել զմարմինս նոցա յերկիր. զի և ոչ գիշեր օգնական մեզ առ այս լինէր, և ոչ արծաթհաւանութեացն զպահապանն, և ոչ խնդրուածք և աղերս ողորթէր ինչ զնոսա. զի ամենայն փութով պնդութեամբ պահէին զնոսա, իբրև այն թէ մեծ ինչ շահ իցէ նոցա առ ՚ի չթաղելոյ անտի։ Եւ յետ այսոյ բանից յաւելուն դարձեալ՝ եթէ իբրև պէսպէս

գեալք, և կառափունք այլոց բազմաց հանդերձ կառքորածովք* մեացորդաց նոցա, և պահէին զնոսա զի մի թաղեսցին ՚ի հոգաբարձութենէն զինուորացն առաւօտ բազումս։ Եւ էին ՚ի նոցունց ՚ի հեթանոսաց անտի, որ գազանանային և կրճտէին զատամունս իւրեանց ՚ի վերայ նոցա, և խնդրէին զվրէժ առնուլ ՚ի նոցանէ առաւել քան զնոսա։ Իսկ այլքն ծաղր և այսպն կատականաց առնէին զնոսա, և յարգէին և մեծացուցանէին զկուռսն իւրեանց. և ասէին եթէ ՚ի նոցանէն ընկալան զպահպանս պատուհասիչ իւրեանց։ Իսկ կէսքն որ կարծեալ էրևէին թէ խոնարհք և վշտացեալ իցեն ՚ի նոսա, և նախատէին զնոսա և ասէին, թէ ա՛ր է աստուածն նոցա, և զինչ օգուտ եղև նոցա պաշտօն նորա, այն որ առաւել քան զանձինս իւրեանց ընտրեցին զնա, առ ՚ի յայնցանէ իսկ թէ իբրև զայս փոփոխմունս պատահել լինէին նոքա։ Իսկ մեք ՚ի սուգ մեծ էաք, քանզի ոչ կարէաք թաղել զմարմինս նոցա յերկիրի. զի և ոչ գիշերի պատէ լինէր մեզ այսմ, և ոչ արծաթհաւանութեացն զպահապանն, և ոչ ազդէք և խնդրուածք պատհաւանութեացն զնոսա. զի պէսպէս հնարիւք պահէին զնոսա զգուշութեամբ, իբրև այն թէ ինչ շահիցէ նոցա առ ՚ի չթաղելոյ անտի։ Եւ յետ այսր իբրև ասացին այլ և յաւելին՝ եթէ Զմարմինս, ասէն, վկայիցէ իբրև խայտառակեցին պէսպէս կերպարանօք, և եղին զնոսա յա-

* Յոր. կառքորածովք։

օրինակաւ խայտառակեցին զմարմինս վկայից, եղին զնոսա յարևու զվեց օր, և այրեալ ապա զնոսա անօրէնքն և յանձին գարձուցեալ ցրեցին 'ի հովտանոս գետ՝ որ ընդ այն անցանէր, որպէս զի և ոչ նշխարք նոցա երևեսցին 'ի վերայ երկրի։ Եւ զայս գործէին՝ յաղթել կարծելով Աստուծոյ և բառնալ հանել 'ի նոցանէ զիւանդամ ծնունդ և զնորոգումն. և որպէս նոքայն ասէին թէ ոչ յոյս լիցի նոցա յարու-թեան, յոր ապաստան եղեալ ածին և մուծին զօտարոտին զայն և զնոր պաշտօն, և արհամարհեալ անարգեցին զամենայն վիշտս նեղութեանց, և մտագիւտ յօժարութեամբ եկին 'ի մահ։ Ցեսցուք արդ եթէ յարիցեն նոքա, և թէ Աստուած նոցա կարասցէ օգնել նոցին և ապրեցուցանել զնոսա 'ի ձեռաց մերոց։

բևու զվեց օր, և ապա յետոյ այրեցին զնոսա անօրէնքն՝ մինչև ևս զնոսին իբրև զմխիթր, և ընկեցին զնոսա 'ի Թոգոն գետ որ անցանէր ընդ այն. որպէս զի և ոչ մնացորդք նոցա երևեսցին յայնմ հետ 'ի վերայ երկրի։ Եւ զայս գործէին որպէս մարդիկ Թէ Աստուծոյ կարիցեն յաղթել, և հանցեն առցեն 'ի նոցանէ զնորոգումն յարութեան նոցա որ 'ի մեռելոց է. զի որպէս ասէին նոքա Թէ և ոչ յոյս լիցի նոցա յարութեանն վասն՝ յոր ապաստան եղեն, և մուծին մեզ պաշտօն օտար և նոր երկիւղի, և արհամարհեալ անարգեցին նոքա զամենայն վիշտս նեղութեանց, և եկին 'ի մահ ինքնութեամբ պատրաստակամք։ Եւ արդ տեսցուք Թէ յարիցեն նոքա. և այժմ տեսցուք եթէ կարասցէ Աստուած օգնել նոցա, և ապրեցուցանել զնոսա 'ի ձեռաց մերոց։

ԳԼՈՒԽ Բ.

Թէ ո՛րպէս վկայքն սիրելիք Աստուծոյ ընկալեալ զամենեսեան և բժշկէին, որ միաւորեալ գայրակղէին ի հաւատս։

Եւ այս ամենայն անցք առ ինքնակալութեամբ Վերոսեայ անցանէին ընդ եկեղեցին Քրիստոսի, յորոց մարթի ե կշռել ի միտս՝ թէ զինչ ընդ այն ժամանակս և յայլ գաւառս պետութեան անցանէր։ Այլ ի դէպ է ի թզուցս յայսցանէ յաւելուլ և այլ ինչ բանս, յորս փայլէ հեզութիւն և մարդասիրութիւն վկայիցս՝ զորոց կանխեցաք ասացաք։ Եւ ունի բանս օրինակ զայս. Այնպէս նահանձաւորքն էին, ասէ, և նմանողք Քրիստոսի, որ ի կերպարանս Աստուծոյ էր և ոչինչ յափշտակութիւն համարեցաւ լինել հաւասար Աստուծոյ։ Եւ թէպէտ յայս ծագ փառաց էին նոքա, զի ոչ միանգամ կամ երկիցս, այլ բազում անգամ վկայեալ, և ի գազանաց ի բանտ փոխաբկեալ ի խա-

երկրորդ. թէ ո՛րպէս վկայք սիրելիք Աստուծոյ ընդունէին, և բժշկէին զամենեսեան որ միաւորեալ գայրակղէին ի հաւատս։

Զայս զոր կանխեցաք ասացաք յառաջագոյն կրէին եկեղեցիքն Քրիստոսի՝ յամս ինքնակալ Վերոսեայ։ Զի յայսցանէ մարթի * մարդոյն կշռել ի միտս իւր, թէ զինչ անցք անցին ընդ այն ժամանակս ի քաղաքս և յայլ գաւառս։ Աւժան է իսկ ի սմին յայսմ գրոց գրոյմել և այլ բանս, զի նոքաք երևի խանարհութիւն և ողորմութիւն այնց վկայից, վասն որոց կանխեցաք ասացաք մեք զնացանէն յառաջագոյն։ Բայց գրեալ են և այս բանք, եթէ վկայքն ամէն այսպէս էին նահանձաւորք և նմանողք Քրիստոսի։ այն որ թէպէտ և կերպարանք էր Աստուծոյ, սակայն ոչ յափշտակութիւն համարեցաւ ունել զանձն իւր հաւասար Աստուծոյ։ որ իրև յայս փառս էին նոքա, զի ոչ միանգամ կամ երկիցս, այլ բազում անգամ վկայեցին։ որ թէպէտ ի գազանաց, և առ ի նոցանէ լի էին խարանօք և վիրօք և սպեաք, սակայն և ոչ ինքեանք ա-

* Յոր. մարդ ի մարդոյն։

բանս, յերաշխեաց և ՚ի վերս պատեալ մարմինք, սա-
կայն ոչ ինքեանք վկայս լինել զանձինս քարոզիչն, և
ոչ մեզ ՚ի սոյն անուն զնոսա կոչել համարձակիչին։
Բայց եթէ դէպ եղիւ ուրեք և կոչեաց որ զնոսա կամ
Թղթով կամ բանիւ՝ վկայս, խոստագոյնս կշտամբէին
զնոսա զի յօժարագոյնս նուիրէին նոքա Քրիստոսի
զայս անուն վկայութեան, որ է վկայ հաւատարիմ և
Ճշմարիտ և անդրանիկ մեռելոց և սկիզբն կենաց առ
Աստուծոյ։ Եւ յիշէին նոքա զվկայն գնացեալս ՚ի
միջ, և ասէին՝ նոքա են վկայք զոր ՚ի ձեռն խոստո-
վանութեան իւրեանց ընկալաւ զնոսա Քրիստոս և
հնարեաց զվկայութիւն նոցա ՚ի ձեռն վախճանին իւր-
եանց, իսկ մեք խոնարհ և տատապեալ խոստովա-
նողք. և բազում արտասուօք աղաչէին զեղբարս և
խնդրէին զի աղօթս արասցեն և հանապազորդ պա-
զատանս վասն վախճանի կատարման նոցա։ Եւ զզօ-
րութիւն վկայութեան արդեամբք յուցանէին բա-
զում համարձակութեամբ յանդիման լինելով հե-
թանոսաց, և զանգնաւականութիւն՝ ոգւով համբերա-
տար ժուժկալութեամբ և արիական աներկիւղա-

սէին վասն անձանց իւրեանց Թէ վկայք իցեն, և ոչ համարձակէին մեզ կոչել նոցա յայս անուն. բայց Թէ դէպ եղիւ ուրեք և կոչեաց որ զնոսա վկայ՝ կամ Թղթով կամ բանիւ, խոստագոյն պատուհասէին զայնոսիկ որ կոչէին զնոսա. զի ուրախութեամբ նուիրէին նոքա զայս անուն Քրիստոսի վկայութեան, այնմիկ որ նա է վկայ հաւատարիմ Ճշմարտութեան և անդրանիկ մեռելոց և սկիզբն կենաց։ Եւ յիշէին նոքա զվկայն որ էին յաշխարհն, և ասէին եթէ նոքա են վկայք, որ ՚ի ձեռն խոստովանութեան իւրեանց արաւ զնոսա Քրիստոս Թէ վարեցին, և ինքեաց զվկայութիւնն նոցա ՚ի ձեռն վախճանին իւրեանց. իսկ մեք խոստովանեալք աղաչաք և տատապեալք։ Եւ բազում արտասուօք աղաչէին զերբարս, և խնդրէին ՚ի նոցանէն զի աղօթս և պաղատանս արասցեն փոխանակ նոցա զի կատարեսցին. և զզօրութիւն վկայութեանն արդեամբք կատարէին, յուցանէին բազում համարձակութեամբն զոր ունէին նոքա առ Հեթանոսս, և զժուժկալութիւն իւրեանց համբերութեամն աներկիւղ յուցանէին. յանուանէ անուն վկայից հրաժարէին առաջի եղբարց, քաջալ և նոքա երկիւղիս. Ապառնոյ էին։ Պարձանալ չէս այսորիկ ասացին, Թէ Թռնարհեցուցանէին զանձինս իւրեանց ՚ի ներքոյ ձեռինն բարձու, այնմ որ ՚ի նմանէ բարթայան այժմ։ Այլ ամենայն ուրեք պատասխանի առնէին, և ամբաստան զուրեք չլինէին. և արձակէին զամենայն մարդ, և զոք ոչ կապէին. և այնոցիկ որ չարչարէին զնոսա՝ աղօթս առնէին ՚ի

*թեամբ յայտ առնէին. այլ յանուանէ վկայից չնորհելոց նոցա յերդարձ մեծաւ երկիւղածութեամբ հրաժարէին։ Եւ յետ սակաւու միոյ դառնայ ասէր. Եւ զի խնայարհեցուցին զանձինս իւրեանց ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ, ի նմանէ արդ արժանապէս բարձրացան։ Այնուհետև ջատագով կային, ոչ զոք ամբաստանէին, զամենեսեան արձակէին և զոք ոչ կապէին. և ի վերայ այնոցիկ որ չարչարէին զնոսա, աղօթս առնէին որպէս Յովհաննէս վկայն կատարեալ՝ թէ Մի համարիր սոցա զայս մեզ։ Իսկ եթէ փոխանակ այնոցիկ որ քարկոծ առնէին զնա՝ աղաչէր նա, սրբոյն և առաւել փոխանակ երջարց։ Ընդ այլ բանս յարէ գարձեալ ի նոյն. Թէ Այս պատերազմ մեծ եղև նոցա ընդդէմ հակառակորդին ի ձեռն կատարեալ սիրոյն, զի հերձցի չար վիշապն. և զայնոսիկ որ կարծեացն եթէ եկուլ, կենդանիս թքցէ զնոսա. զի ոչ եթէ պանծանօք հպարտանային ի վերայ անկեղծին, այլ որով իւիք ինքեանք առաւելուին՝ նոքօք ըզկարօտութիւն այլոց ընուին. զի զուտ մայրենի ունէին առ նոսա, և բազում արտասուս վասն նոցա արկանէին առ Հայր. կենաս խնդրեցին և ետ նոցա, զոր և նոքա ընդ մերձաւորսն իւրեանց բաշխեցին, և յամենայնի յաղթողք չուեցին առ Աստուած, և զհաղաղութիւն հանապազ սիրեցին, զհաղաղութիւն ետուն մեզ, և խաղաղութեամբ ժամանեցին առ Աստուած,

վերայ նոցա, որպէս Ստեփաննոս վկայն կատարեալ՝ զի ասէր, Մի համարիր սոցա զայս մեզ։ Իսկ եթէ փոխանակ այնոցիկ որ քարկոծ առնէին՝ աղաչէր նա, որպէս և առաւել փոխանակ եղարցն։ Եւ յետ սակաւու միոյ ասացին գարձեալ, Թէ այս ամենայն պատերազմ մեծ որ եղև նոցա ընդ աստուանայի՝ վասն կատարեալ սիրոյն, զի հերձցի չար վիշապն, և զայնոսիկ որ կարծեացն եթէ անկան՝ կենդանիս թքցէ զնոսա. զի ոչ Հպարտանային ի վերայ այնոցիկ որ անկանն, այլ որով իւիք ինքեանք առաւել էին ընուին զկարօտութիւն այլոցն, զի զուտ որպէս և մայր ի վերայ որդւոց՝ ունէին նոքա, և բազում արտասուս արկանէին վասն նոցա առ Հայր. և կենաս խնդրեցին ի նմանէ և ետուն նոցա, և նոքա բաշխեցին ընդ մերձաւորս իւրեանց. և ամենայն իւիք զգեցան զյաղթութիւն և գնացին առ Աստուած, և զհաղաղութիւն սիրեցին հանապազ, և զհաղաղութիւն ետուն մեզ, և խաղաղութեամբ ժամանեցին նոքա առ Աստուած, և ոչ թողին ցաւս մերձ իւրեանց, և

և ոչ Թողին աշխատութիւն մերն իւրեանց, ոչ խոս-
վութիւն և պատերազմ եղբարց, այլ ուրախութիւն
և խնդութիւն և միաբանութիւն և սէր։ Այս ամե-
նայն ասացաւ վասն աղեգորով գԹոդ երանելեացն առ
անկեալ եղբարսն 'ի շահ օգտի ընԹերցանելեացն. 'ի
յանդիմանութիւն այնոցիկ որ տմարդի և անողորմ
գտան, և անխնայ ընդ անդամսն Քրիստոսի վարեցան։

ԳԼՈՒԽ Գ.

Թէ որպիսի՛ յայտնուրթիւն առ յԱստուծոյ լինէր յաւուրսն Աստաղոսի վկային։

Ի յառաջապատում ԹուղԹս վկայից է միւս այլ
դէպք արժանաւոր յիշատակի, զոր և ոչինչ անձաշ
համարիմ դնել աստանօր 'ի գիտութիւն՝ որոց միան-
գամ յակն արկանիցին զայն։ Եւ ունի բանն այսպէս.
Ակնիբիադես ոմն 'ի Թուոյ վկայիցս մԹին վարէր
կեանս, յաւնոյր երբեք կերակուր, բայց եԹէ հաց և
ջուր, և զնոյն խրճԹնի վարս կայէր հանապազորդել
և 'ի բանտին. և երեւեցաւ Աստաղոսի վկային՝ յետ

ոչ խոսվութիւն և պատերազմ եղբարց իւրեանց, այլ ուրախու-
Թիւն և խնդութիւն և միաբանութիւն և սէր։ Այս որ ասացաւ
վասն սիրոյ երանելեացն որ ունէին առ անկեալ եղբարսն, երբե-
շահ օգտութեան եդան ասաս. վասն խորհրդոց այնոցիկ որ անգութ
և անողորմ կին, որ մերձնան յանգամն Քրիստոսի յանխնայ։

երրորդ. թէ որպիսի տեսիլս եղեւս 'ի տեսլեանն իրում Աստաղեայ վկային։

Այլ իսկ այս գիրք այսց վկայից՝ վասն որոյ կանխեցաք ասա-
ցեալ զնոցանէն յառաջագոյն, և այլ միւս ևս պատմութիւն գոյ 'ի
սմա՝ արժանի յիշատակի։ Բայց չիք նախանձ զնա գնել գրու-
Թեան նոցա որ միանգամ ընԹեռնուն. և է իսկ նա այսպէս։ Ակնի-
բադես, ասէ, մի 'ի նոցանէն՝ մԹին վարուք վարեալ լինէր նա. և
այլ ինչ յառաջագոյն ոչ ուսեալ և ոչ ըմբռնէր, բայց Թէ հաց կամ
ջուր լոկ. և կամիր նա ևԹէ և 'ի բանգի անգ այնպէս եղիցի վա-
րել զանձն իւր։ Իսկ Աստաղեայ երանելւոյ երևեցաւ տեսիլ,

առաջին յաղթութեանցնորա՝ի կրկիսին, տեսիլ յայտնութեան առ Յիսուսէ, եթէ ոչ բարւոք առնէք Աղկիբիադ ոչ հաղորդելով յարարածս Աստուծոյ, և թողուլ այլոց օրինակ գայթակղութեան։ Աղկիբիադ դեայ հաւանեալ խրատուն առնոյր այնուհետեւ յաճախ կերակրոց և գոհանայր զԱստուծոյ. զի չթողցոյր զնոսա անայցելու ընօրէն Աստուծոյ, և Հոգին սուրբ էր ուսուցիչ նոցա։ Եւ վասն այսորիկ այսչափ։

Իսկ իբրև Մահատնոս, Աղկիբիադ և Թէոդոտոս նախ զառաջինն՝ի կողմանս Փռիւգացւոց կարծիս մարգարէութեան զանձանց տարածանելին առ բազումս, քանզի՝ի ժամանակս յայնոսիկ սքանչելիք ընօրհացն Աստուծոյ դեռևս առ բազում եկեղեցիս կատարէին, վասն այնորիկ դիւրաւ հաւատս ընծայեցին յոլովք թէ և սոքա մարգարէանայցեն։ Եւ թէպէտ երկմտութիւն զնոցանէ լինէր, այլ հաւատացեալք որ էին՝ի Գաղղիա՝ զղջատառտանս մտաց իւրեանց և զերկիւղածութիւն ուղիղ հաւատոյն հպատակեալ, յաւելին առաքել առ նոսա զայլ և այլ թուղթս վկայիցն կատարելոց առ նոսա. և մինչդեռ՝ի բանտի էին նոքա՝ առ եղբարս որ էին՝ի կողմանս Ասիացւոց և Փռիւգացւոց, այլ և առ Ելեւթերոս՝ որ էր՝ի ժամանակին եպիսկոպոս Հռովմայեցւոց՝ վասն խաղաղութեան եկեղեցւոյ պատգամաւոր լինէին [2]։

[2] Այս առաջին պատերազմն զոր կրեաց նա, եթէ ոչ բարւոք առնէք Աղկիբադէս զի ոչ հաղորդի՝ յարարածս Աստուծոյ, և թողուլ այլոց օրինակ գայթակղութեան։ Բայց յանձն էառ Աղկիբագէս ամենեցուն նոցա, և ընդունէր զկերակուր և գոհանայր զԱստուծոյ. զի ոչ թողեալ լինէին նոքա առանց ակնութեան ընօրհացն Աստուծոյ, այլ Հոգին սուրբ էր ուսուցիչ նոցա։ Եւ սոքա միանգամայն վայր շատ լինէին։

՝ Յոր. յոյժ։

ԳԼՈՒԽ Դ.

Թէ ո՛րպէս վկայքն թողք ընծայուրեան տան Երանոսի։

Նոքին իսկ վկայքն՝ զերանոս որ երեց էր յայնժամ Լուգդունացւոց եկեղեցւոյն, թղթով ընծայութեան յանձն առնէին Ելեւթերիոսի եպիսկոպոսին Հռոմայեցւոց, բազում ինչ վկայեալ զառնէս՝ որպէս և յայտ առնէ բան թղթոյս, որ է օրինակ զայս.

Խնդալ քեզ միշտ ի Տէր, ազաչեմք, ո՛ Հայր մեր Ելեւթերիէ։

Ցորդորեցաք տալ քեզ զայս գիր ի ձեռն Երանոսի եղբօր և ծառայի մերոյ, զոր և աղաչեմք ընդունել զսա իբրև նախանձաւոր ուխտի կտակարանաց Քրիստոսի։ Եւ զի գիտեմք նախապատուել յայսմ զարդարութիւն, վասն որոյ զսա իբրև երեց եկեղեցւոյն ընդ առաջինսն քեզ յանձն առնեմք։

Ա՛յլ զի պիտոյ է մեզ երկրորդել զկարգ անուանց վկայիցն, որ գրեալ կան ի յիշատակեալ թուղթսն, որոց միանգամ գլուխքն հատան, և որ արկան ի գհշ

Զորրորդ. նրէ ո՛րպէս յանձն առնէին վկայքն գիրիևոս իրղովքն իւրեանց։

Իսկ այնոքիկ՝ առաւել Մոնտանոսեայ և Աղկիբագեայ և Թէոդոտեայ ի կողմանս փռիւգացւոց, նախ զառաջինն երկն զնոցանէ կարծիք մարգարէութեան առ բազումս. զնշանիւք սքանչելիք շնորհացն Աստուծոյ միշտ ընդ այն Ժամանակս կատարեալ լինէին յեկեղեցիս բազումս. և վասն այսորիկ էին կարծիքն և զնոցանէն առ բազումս, թէ և նոքա մարգարէանալով մարգարէանան։ Բայց էր վասն նոցա երկմտութիւն։ Պարձեալ եղբարքն որ էին ի Գաղիոս, ընտրողութիւն նոցա որ յաստուածապաշտութիւնն էր Հմարթիա հաւատալ, և վասն այսոցիկ գրեցին Թուղթս նշանաւորս վկայիցն որ կատարեցան առ նոսա, մինչդեռ նոքա ի բանդի էին, առ եղբարս որ էին ի կողմանս ասիացւոց և փռիւգացւոց։ Էին ի նոսա բայց ոչ զսոսա միայն, այլ և զՆիւեմեդրոս եպիսկոպոս Հռոմայեցւոց որ էր յայնմ Ժամանակի, վասն խաղաղութեան եկեղեցւոյ աղաչէին զնա։ Եւ նոյն իսկ վկայքն այնոքիկ և գիրինէոս, որ էր

և 'ի կերակուր գազանաց, և որ ինձեցին 'ի բանտի անդ, և զԹիւ խոստովանողացն որ կենդանի էին յայն ժամ. զի որ կամին՝ գիւրին է ուսանել լի կատարեալ, անցանելով ընդ գիրսն, զոր և որպէս կանխեցաք ա- սացաք, եդեալ է մեր պատարուն 'ի հաւաքմունս վը- կայաբանութեանց՝ շարագրեալ առ 'ի մէնջ։ Եւ այսո- քիկ յամս Աստուածասէր կայսեր Հանդիպեալ դէպք։

ԳԼՈՒԽ Ե.

Թէ ո՛րպէս առ Մարկոսիւ Աբրեղեաւ յուեալ Աս- տուծոյ զաղօթս մերոցն՝ իչոյց ևոցա անձրև յերկինից։

Բայց ասի բան, եթէ եղբայրք ինքնակալին[5] Մար- կոս Աւրեղիոս կայսրն իբրև մարտ եդեալ պատերազ- մէր ընդ գերմանացիս և ընդ Սարմատս, և նեղեցան 'ի

նոցա էրեց յայնմ ժամանակի ևկեղեցւոյն լաւագունագոց, յանձն առնէին զնա Ալևքեբրոսի եպիսկոպոսին հռոմայեցւոց, և վկայէին 'ի վերայ նորա բազում ինչ. որպէս ցաւագնեն բանք նոցա զի ասէ- ին այպեւս. Զի եղեցես ուրախ լինել յԱստուած. գարձեալ և հա- նապազօր միշտ աղօթս առնէիք 'ի վերայ քո, հայր մեր Եղևեբրէ. զայս գիրս զոր կանխեցաք յաւաջագոյն գրոշմեցաք մէք՝ զի բերցէ զնոսա քեզ եղբայր մեր և ընդակից իրինէոս. ազաչեմք և խնդրեմք և յանձն առնեմք քեզ զսա, զի նախանձաւոր է սա կատարանաց։ Բայց զինչ պէտ է մեզ երկօրգիւ զկարգ անուանց վկայեցն, զի գրոշմեալ են յայս գիրս առաքեալքն որոց միանգամ գլուխք խը- հանեց հատան և պսակեցան, և որոց որ միանգամ կան 'ի գէշ և 'ի կերակուր գազանաց. և գարձեալ զայնոսիկ որ ինձեցինն 'ի բանգի անդ. և զԹիւ խոստովանեալացն որ կենդանի էին յայնժամ. զի այն որ կամի գիւրին է նմա ուսանել լի կատարեալ՝ յորժամ առցէ զգ- գիրս նոցա, այն որ և զնա հանգերձ ժողովէ վկայից զոր ժողովե- ցուք մէք՝ խառնեալ է մեր։

Հինգերորդ. թէ ո՛րպէս իչոյց Աստուած անձրև յերկինից յաղօթս քրիստոնէից. և Աւրեղիոս կայսր։

Բայց այն ինչ որ եղեն յամս Աստուածնոսի, և էին այս զոր կան- խեցաք ասացաք զնոսանէն։ Բայց ասի բան եթէ եղբայր այսր Մարկոսի Աւրեղիոս կայսր 'ի ժամանակի իբրև կարգեաց նա զգ-

Ծարաւոյ զօրքն, չգտանէր և ելի աղագս։ Իսկ գունդքն լեգէոն զօրուն՝ որ կոչէր Մելիտինացւոց, որ ի ժամանակէ անտի և այսր ի հաւատացելոց է կաղմեալ ի Ձախատէն ընդդէմ Թշնամեաց, ի ծունր իջեալ խոնարհ յերկիր, որպէս մերս սովորութիւն է յաղօթս, և պաղատանս առ Աստուած մատուցանէին։ Ել մինչդեռ ապշեալ զարմանային ընդ այն Թշնամիքն, եւս աքանչելի մեծ քան զայս հանդիպեալ պատմեն, չանձաւոր հալածական սպառսպուռ սատակել Թշնամեաց նոցա, և իջանել յորդութիւն անձրեւաց ի լիութիւն բաւականի վտանգելոյ և ծարաւեալոյ աղերսաւոր զօրուն։ Ա՛յս պատմութիւն և առօստար ի կրծոյ մերոց մատենագրիս գտանի, որոյ միանգամ փոյթ եղև զդէպս ժամանակին գրել, որպէս և առ մերս իսկ. այլ արտաքին պատմիչք իբրև օտարք ի հաւատոյ պատմել պատմեն զսքանչելիս, այլ աղօթից մերոց զոյն ոչ տան։ Իսկ մերքն իբրև սիրողք Աշխարհութեան, պարզ մտօք և միամիտ սրտիւ, որպէս և եղեն առանդեն, յորոց մին է և Ագաղինարիւ-

գունդս զօրաց իւրոց՝ մարտ գնել և պատերազմ առնել ընդ Պերսիկոս և ընդ Սարմատս, զի ծարաւեցան զօրքն նորա ի ջրոյ, և ոչ գտանէր հնարս ինչ առնելոյ։ Իսկ զնուռբքն՝ գունդ մի ի լեգէոն զօրաց անտի, որ անուանեալ կոչիւր Մելիտինայ, որ յայնմ հետէ մինչև ցայսօր ժամանակի հաւատացելոյ հաստատեալ է, իբրև կարգեցան ընդդէմ Թշնամեաց իւրեանց, խոնարհեցան ծունր եդեն ի վերայ երկրի, որպէս և մեք սովորութիւն ունիմք յաղօթս կալոյ, և աղաչէին զԱստուած. և այս իբրև աքանչելի ինն երևեր Թշնամեաց նոցա։ Ել մինչդեռ նորա զարմացեալ հայէին ընդ այն, նա՛ւս աքանչելի որ մեծ է քան զայս՝ էհաս ժամանակ յայտ շարժուին արտասան մեծի, և զթշնամին նոցա հալածական փախուստ տային ի սատակումն կորստեան. և անձրևատն ընդարձակ հեղաց ամենայն զօրացն նորա, վասն այնորիկ որ անկեալ աղաչէին զԱստուած զի մերձ եղիս ամենայն զօրքն սատակել ի ծարաւոյ։ Բայց այս պատմութիւն է և առ օրինակագիրսն, որ հեռի են յաւանէ սատ մերմէ. զի առ նոսա գործեցաւ այս, այլ ցուցին յայս արարին վասն սուտ ամանք և ի մերոց ասեն։ Բայց արտաքին օրինակագիրքն պատմութեանց իբրև օտարք հաւատոյ գրեցին զսքանչելիսս զայս, զի ոչ խոտորեան եղեն Թէ յաղօթից մեր եղև այս. իսկ մերքն իբրև սիրելիք Աշխարհութեանն՝ պարզ մտօք և միամիտ սրտիւ որ ինչ գործեցաւ՝ նայապէս էառնն. զի մի ի նոցանէն էր Ագաղինարիւս, որ ասաց վասն այս լեգէոնի եթէ յաղօթս նորա է. զեն այս աքանչելիքս. զի յայնմ ժամանակէ հետէ ընկալաւ զանունն

ոս, որ լեգէոնին, ասէ, որոյ աղօթիւքն եղէն սքանչելիքն, տուաւ յինքնակալէն անունս Շանթածիգ՝[4] ըստ Հռոմայ բարբառոյն. և այսոցիկ վկայ հաւատարիմ է առ մեզ Տերտուղիանոս՝ որ ՚ի պատասխանատուութեան իւրում վասն կրծոյիցս մերոց առ Ծերակոյտն Հռովմայ տուեալ ՚ի բարբառ հռովմէական գրէ յայտնի և հաստատուն ցուցակութեամբ և զպատմութիւնս այսպէս. Մարկոսի իմաստնագունին յինքնակալս կայ Թուղթ, ասէ, մինչև ցայսօր ժամանակի, յորում վկայէ եթէ առ ՚ի չգոյէ ջուրց առ դուրս կորստեան գոլով զօրուն իւրոյ ՚ի Գերմանիա, աղօթիւք քրիստոնէից փրկեցան։ Եւ զինքնակալէս ասէ, պատուհաս մահու սպառնացեալ որոց միանգամ կամիցին ամբաստան զմեզ լինել։ Եւ յաւելու գարձեալ նոյն ինքն աշխարհածանօթ նոցին այրն եթէ. Այժ ամենայն օրինք, զորս ընդդէմ մեր վարեն ամբարիշտք, անիրաւք են և անագորոյն, զորս ոչ պահեաց Վեսպասիանոս, Թիտոս յաղթական ՚ի վերայ Հրէից։ Ոչ զոր և Տրայիանոս մասամբ խոտեալ անարգեաց հրամանաւն իւրով. Թէ Մի խնդրեսցին քրիստոնեայք ՚ի մահ. և ոչ Ադրիանոս իսկ խուզարկուն և քննիչ ամենայնի, և ոչ Անտոնիոս Պիոս հաստատեաց ինչ զայնս, այլ ամենայն որ ըստ հաճոյս խորհեցաւ զայսցանէ, Այլ մեք գարձցուք ՚ի կարգ պատմութեանս։ Ադրդ Պօթինոս զինանամնիւք ուրեմն իբրև կատարեր ընդվկայս գաղղիացւոց, կալաւ յետ նորա զեպիսկոսու-

[4] ՚Ի յարբայէ անտի ըստ Հռոմ լեզուի. որ միաբանի այսմ խմիք. մի Թէ վկայս բարեխօս է որ գործեցաւ. և վկայ հաւատարիմ այսոցիկ Տարտեղիանոս է, այն որ գրեացն ՚ի լեզու Հռոմ զնոսա պատասխանոյ հաւատոց մերոց առ սինգղետաան, որ զոյն սա կամեցեալ յաւաջագոյն յիշատակեցաք։ Հաստատէ իսկ զայս պատմութիւնն մեծաւ օրինակաւ որ արգեամբք գործեցաւ. գրեաց իսկ և նա, և ասէ այսպէս. Եթէ Մարկոս, ասէ, արքայ իմաստուն, Թուղթ նորա կայ մինչև ցայսօր ժամանակի, զի ՚ի նոսա վկայէ եթէ Գերմանիկ ՚ի նուազութեան անդ ջուրն՝ մերձ էին զօրք նորա սատակել. և յաղթօս քրիստոնէից փրկեցան. և ասաց զմեզնէն եթէ պատուհաս մահու սպառնացաւ ամենայնի, որ միանգամ կամիցին ամբաստան լինել զժողովրդենէ մերմէ։ Եւ յետ այսորիկ ասաց գարձեալ ասաց սոյն իսկ այս այր. Արդ որ են այս օրինք ամբարշտութեան և անօրէնութեան և խաւարութեան՝ որ ՚ի վերայ մեր միայն գնին. որ և

Թիւն լուգդունացւոց եկեղեցւոյն Երանոս։ Զսա ՚ի մանկութենէ անտի իւրմէ աշակերտեալ Պողիկարպոսի գիտելիք, որ և զկարգ յաջորդութեան եպիսկոպոսաց Հռոմայ գրելով յերրորդ գիրս իւր ընդդէմ Հերձուածոց մինչև ցելեւթերիոս Հասոյց, ընդ որով և զպատմութիւն իւր գրեաց, և ասանդէ այսպէս։

ԳԼՈՒԽ Չ.

Հաւատ և կարգ եպիսկոպոսացն Հռոմայ։

Առաքեալք, ասէ, երանելիք եդին զՀիմունս եկեղեցւոյս և կարգեալ յօրինեալ զսա, զպաշտօն եպիսկոպոսութեան Լինոսի աւանդեցին, զորմէ յիշատակ առնէ Պօղոս ՚ի Թղթի իւրում առ Տիմոթէոս. որում և յաջորդէ Անաստկլետոս։ Եւ յետ սորա երրորդ զինի առաքելոց կալաւ զեպիսկոպոսութիւնն Կղեմէս. սա տեսեալ էր զառաքեալսն և արբանեակ նոցին լեալ և գեռ ևս հնչէր յականջս նորա քարոզութիւն առաքելոցն, և զտուչութիւնս նոցա առաջի աչաց իւրոց

ոչ Ասպասիանոս պահէաց զնոսա, երբև Հրէիցն յաղթեաց։ Իսկ Տրիանոս խոտեաց և անարգեաց զնոսա, եթէ մի ինդբեացին քրիստոնէից ՚ի մահ. և ոչ Հեգրիանոս առուգեաց ինչ զնոսա, իբրու ինքն զամենայն ինչ քննէր և ինդրէր. և ոչ Անտոնինոս՝ այն որ Եւսեբիոս կոչեցաւ։

Վեցերորդ. եպիսկոպոսաք որ եղեն ՚ի Հռոմ քաղաքի։

Եկեալ այսուհետև ՚ի կարգ պատմութեանն։ Իսկ Պողիկարպոս իբրև եկից զամենայն ամն կենաց իւրոց պինդսուն, և կատարեցեալ ընդ վկայսն գաղիացւոց, կալաւ զնոսա զեպիսկոպոսութիւն եկեղեցւոյն լուգդունացւոց՝ Իրինէոս. սա իսկ ՚ի մանկութենէ իւրմէ աշակերտեալ էր Պողիկարպոսի, և զկարգն զեպիսկոպոսացն որ եղեն ՚ի Հռոմ քաղաքի՝ նա գրեաց յերրորդ խօսն, զոր եգ ընդդէմ Հերձուածոցն. և համարեցաւ զնոսա մինչև Վկտորիանոս, այն որ վասն ժամանակացն նորա արկեալ է նորա զիշխանութեան խօսիցն նորա. պատմէ իսկ զնոցանէն և կարգէ զնոսա այսպէս. եթէ Առաքեալքն, ասէ, երանելիք եդին զՀիմունս եկեղեցւոյ և շինեցին զնա, և կացուցին նմա եպիսկոպոս զԱնանիոս։ Զսա իսկ Յուդիանոս յիշատակէ Պօղոս առաքեալ ՚ի Թղթի անդ

ունէր. և ոչ եթէ սա միայն, այլ և բազումք յաշակերտեցեն առաքելոցն կենդանիք էին դեռ ևս ի ժամանակին։ Յաւուրս սորին իսկ Կղեմայ եղև խռովութիւն մեծ եղբարց ի Կորնթոս. և գրեաց եկեղեցին Հռովմայ Թուղթ երկար և Հոն բանիւք՝ կորնթացւոց, նուաճել զնոսա ի խաղաղութիւն և նորոգել զհաւատս նոցա, և զ՝ի նորոյ ընկալեալ աւանդութիւնս յառաքելոց անտի։ Եւ յետ սակաւու միոյ յաւելեալ յետ Կղեմայ կալաւ զաթոռն Եւարիստոս, և զսա յաջորդեաց Ալէքսանդր. և այսպէս վեցերորդ յետ առաքելոց եկաց Իւիստոս. և յետ սորա Տելեսփորոս, որ և վկայեաց փառաւք, և յետ նորա Հիգինոս և ապա Պիոս, և ապա Անիկետոս. և Անիկետոսի յաջորդեալ Սոտեր. արդ երկոտասաներորդ յետ առաքելոյն կալաւ Եղեւթերոս զաստիճան եպիսկոպոսութեան։ Ա՛յսու կարգաւ և յաջորդութեամբ, ըստ աւանդութեան առաքելոց յեկեղեցւոջ և Ճշմարտութիւն քարոզութեան Հայս մինչև առ մեզ։

Տիմոթէոսի։ Եւ կալաւ յետ նորա Անանկղիտոս. և յետ սորա երբորդ զնի առաքելոցն կալաւ զեպիսկոպոսութիւնն Կղեմէնտոս. սա եաեա զառաքեալսն երանելիս և շրջեցաւ ընդ նոսա. և ցայն վայր քարոզութիւն առաքելոցն հասատատեալ էր ի նմա, և տակաւին նոցա առաջի աչաց նորա էր հանապազ. և ոչ եթէ նա միայն, այլ և բազումք մնացեալ էին յայնմ ժամանակի՝ որ աչակերտեցան յառաքելոց անտի։ Յաւուրս իսկ սորին Կղեմէնտոսի եղև խռովութիւն բազում եղբարց ի Կորնթոս, և եւս առաւել Թուղթ եկեղեցին Հռոմայեցւոց ի Կորնթոս, նուաճել զնոսա ի խաղաղութիւն, և նորոգել զհաւատս նոցա, և զաւանութիւնն զոր ընկալան նոքա ուրախութեամբ յառաքելոց անտի։ Եւ յետ սակաւու միոյ ասաց դարձեալ. եթէ յետ այսր Կղեմէնտոսի կալաւ Եւրաստոս. և յետ Եւրաստոսի Ալէքսանդրոս. և ապա եկաց վեցերորդ յետ առաքելոցն Ֆաւստոս. և յետ նորա Տազեփորոս, այն որ վկայեցաւ սքանչելապէս, և յետ նորա Հիգինոս. և յետ Հիգինոսի Փիոս. և գարձեալ յետ նորա Անիկետոս։ Բայց կալաւ Անիկետոսի Սոտեր. և յետ նորա կալաւ երկոտասաներորդ յետ առաքելոցն Ադիթերոս. և ի նոյն ասեն ի նմին ուսման գնացին, և աւետութիւն զոր ընկալաւ եկեղեցի յառաքելոց անտի, և քարոզութիւն Ճշմարտութեանն եկն Հայս մինչև առ մեզ։ Զայս ասաց Իրինոս, որ մեծաբանեալ հաւատարին պատմութեանցն այնոցիկ որ կանխեալ ասացեալ են մեզ։

ԳԼՈՒԽ Լ.

Թէ մինչև յայն ժամանակս յիւրմէն նշանք և սքանչելիք ՚ի ձեռն Հաւատացելոց։

Զայսոսիկ ելբանոս միաբան ամենեքեան յառաջագոյն ատենագրեալ ՚ի մէնջ կարգեալ Ճգրիտ պատմութիւնս ՚ի հինգ գիրսն՝ զորս և գրեաց նա ՚ի յանդիմանութիւն և ՚ի հերքումն սուտանուն գիտութեանն։ Յերկրորդ գիրսն նորին առաջարկեալ Ճառիցն վկայէ Թէ մինչև յաւուրս նորա միայեալ էր յեկեղեցւոջ օրինակ զօրութեանն աստուածային սքանչելեաց. և ցուցանէ զայդ բանիւս. Թէպէտ հեռի եմք, ասէ, ՚ի մեռեալս յարուցանելոյ՝ որպէս Տէրն մեր արար և առաքեալքն աղօթիւք, այլ սակայն առ բազումս անգամ ՚ի մէջ եղբարց ՚ի տեղիս տեղիս առ՚ի հարկէ պիտոյից աղօթիւք հաստարակաց, պահօք և բազում խնդրուածովք գարձաւ անդրէն հոգի մեռելոյն, և ՀՀնորհեցաւ մարդն աղօթից սրբոց։ Եւ յետ այսց քանից դառնայ ասել. Ոչ եթէ վասն Տեառն մերոյ առաչօք ասէն գործեալ, վերացուսցուք տարցուք զնոսա առ մարգարէսն, և ցուցցուք ՚ի նոցանէն եթէ ա-

Երկրորդ. թէ մինչև յայն ժամանակս յիւրմէն նշանք և սքանչելիք ՚ի ձեռն Հաւատացելոց։

Բայց ՚ի խօսսն զոր գրեաց Իրինէոս որ էն հինգ Թուով վասն յանդիմանութեան և լուծանելոյ սուտ գիտութեանն, յերկրորդ խօսս անդ սոբին Հաւից գրեաց, եթէ և յաւուրս նորա միացեալ էր և օրինակ զօրութեանց սքանչելեաց յեկեղեցիս. և ցուցանէ իակ այսու բանիւ. Թէ ոչ՝ ասէ՝ լսելի Թերի են յայսմանէ ՚ի յարուցանելոյ զմեռեալս, որպէս և առքին մեր յարուցանէր, և առաքեալքն աղօթիւք խնդրեանց. և բազում անգամ է ՚ի մէջ եղբարց յորժամ արժանի լինէր և իմդրեաց յԱստուծոյ եկեղեցին ՚ի տեղիս տեղիս, պահովք և բազում խնդրուածովք գարձաւ անդրէն հոգի մեռելն, և Հնորհեցաւ մարդկան աղօթից սրբոցն։ Եւ յետ այսորիկ ասաց գաբձեալ, զի եթէ ասէն և վասն տեառն մերոյ եթէ առ աչօք գործէր որ իբրև զայն էր, վերացուսցուք տարցուք զնոսա առ

մեծայն ինչ կանուխ ասացեալ էր յառաջագոյն վասն նորա, և ահա արդեամբ եղ՝ ի գլուխ. և նա ինքն է միայն որդի Աստուծոյ: Վասն որոյ և յանուն նորա՝ որ միանգամ աշակերտին նմա Հնմարտութեամբ, ի ձեռն պարգևացն հնարելոց առ ի նմանէ, ի բարերարու-թիւն այլոց ի մարդկանէ զնոյն կատարեն: Եւ ըստ պարգևացս այսոցիկ ոմանք զգևս հալածեն ստուգիւ և Հնմարտութեամբ, մինչև բազում անգամ սրբելոցն յայսոց պղծոց հաւատալ հաստատութեամբ և ինալ յեկեղեցի: Այլք զկանուխ գիտութիւն լինելոցն և ապառնեաց ընդունին, և տեսիլս և հնորհս մարգա-րէականս: Են և որ ի վերայ հիւանդաց ձեռն դնե-լով բժշկեն, և յառաջին առողջութիւն դարձուցա-նեն. այլ և մեռեալք յարեան, որպէս կանխեցաք ա-սացաք, և կային ինացին ընդ մեզ զամս բազումս: Բայց զի ևս երկարեսցուք, զի ոչ է թիւ պարգևացն, զոր ընդ համօրէն սիեզերս ընկալաւ եկեղեցի ի ձեռանէ Աստուծոյ՝ յանուն Յիսուսի Քրիստոսի, որ ի խաչն եղ ընդ Պոնտացւով Պիղատոսիս, և կատարէ զօրհնանապազ ի փրկութիւն ազգաց. ոչ խաթկանօք վարի և ոչ կաշառօք եղծանի, այլ որպէս ձրի ետ՝ ձրի և պաշտէ: Նոյն ինքն և յայլում վայրի գրէ ետ

մարգարէն, և ցուցցուք նոցա ի նոցանէն եթէ ամենայն ինչ կանխե-ալ ասացեալ էր յառաջագոյն վասն նորա, և գործեցաւ Հնմար-տութեամբ, և նա ինքն է միայն որդի Աստուծոյ. և վասն այսորիկ որ միանգամ են աշակերտք նորա Հնմարտութեամբ, յանուն նորա և ի ձեռն պարգևացն զոր առին ի նմանէ վասն օգտութեան այլոց մարդկան գործէին, որ իբրև զայսպիսի բան պարգևացն զոր առին ի նմանէ ոմանք. զի են ոմանք ի նոցանէ որ զգևս հալածէին հա-ւատովք և Հնմարտութեամբ. զի քանիցս անգամ լեալ սրբելոյն մարդկան յայսոց պղծոց, հաւատան և լինին յեկեղեցի: Բայց են այլք որ և կանուխ գիտութիւն որ լինելոց է առ ապառնին, և ակ-նիլ և բանս մարգարէութեան: Իսկ այլք զայնոսիկ որ հիւանդ են՝ ձեռնդրութեամբ բժշկեն և ողջացուցանեն: Բայց ահա որպէս կանխեցաք ասացաք, և մեռեալք յարեան և կային ինացին ընդ մեզ զամս բազումս: Բայց զինչ ասացուք զայս, զի ոչ է թիւ պար-գևացն զոր ընկալաւ եկեղեցի ի տեառնէ մերմէ ընդ ամենայն աշ-խարհս. և յանուն Յիսուսի Քրիստոսի այն որ ի խաչն եղ յառուրս պոնտացւոյ Պիղատոսի, հանապազօր կատարէ զօգուտ հաւատա-ցելոց. իբրև զոր ոչ խաթէ, և արծաթոյ պարգևս ոչ ասէ, և զի զոր-օրինակ ձրի ետ Աստուծոյ՝ ձրի և ասէ: Եւ յայլում վայրի զնոյն

լուսաւք մեք ՚ի բազում եղբարց յԵկեղեցւոջ, որք հնարս մարգարէութեան ունէին և ՚ի գանազան լեզուս խօսէին ՚ի ձեռն Հոգւոյն սրբոյ, և զգաղտնիս մարդկան ՚ի յայտ ածէին ՚ի շահ օգտութեան նոցա, և զխոր-հուրդս Աստուծոյ պատմէին։ Եւ զայս զոր ասացաք, զի ցուցցուք թէ մինչև ՚ի ժամանակն յայնոսիկ բազմացան պարգևք Հոգւոյն տեւէին բաւէին առ արժանաւորան։

ԳԼՈՒԽ Ը.

Թէ ո՛րպէս յիշատակէ Եւթաւնոս զգիրս առաքելս։

Եւ քանզի ՚ի սկզբան անդ պատմութեանս խոստացաք կարգել ՚ի ժամանակի իւրում զանուն երիցանցն առաջնոց և մատենագրաց եկեղեցւոյ՝ զորոց սրբոց, զոր ըստ կարգի տուչութեանն ընկալան ՚ի նախնեաց անտի և մեզ աւանդեցին, յորոց և Եւթաւնոս. զկնոջ արդ ուրեմն զանուն նորա՝ որ նախ զբերդոց աւետարանացն գրեալ ասէ այսպէս. Մատթէոս, ասէ, յԵբրայեցիս ՚ի բնիկ նոցա լեզուն արար զգրութիւն աւետ-

խակ գրեաց։ Եթէ ասէ, որպէս ուսաք մեք վասն բազում եղբարց յԵկեղեցւոջ, որ ունէին շնորհս մարգարէութեան, և յամենայն լեզուս խօսէին Հոգւով սրբով, և զգաղտնիս մարդկան բերէն յայտ, երբեմն ՚ի շահ օգտութեան զնորհուրդս Աստուծոյ պատմեն։ Եւ զայս զոր ասացաք, զի ցուցցուք Թէ մինչև յայն մարգարէս կացին ձեացին պարգևք նշանաւորք առ այնոսիկ որ արժանի էին։

Որբերորդ. բէ ո՛րպէս յիշատակէ Իրինէոս զգիրս Աստուծոյ։

Այլ քանզի ՚ի ժամանակի իւրում սկսաք մեք ՚ի պատմութեան անդ նմին, խոստացաք գնել որ ինչ ասացին ՚ի ժամանակի իւրանց երիցունքն առաջինք և օրինակագիրքն որ եղեն յԵկեղեցւոջ վասն գրոց՝ Թէ որ են ընդունելի ըստ կարգին տուչութեան զոր ընկալան, և կարգեցին առաքն նոքա գրովք իւրեանց, զի մի ՚ի նոցանէն եր Իրինէոս։ Ինքնաւ այսպէս կեսու զբանս նոցա. և նախ զառաջինն զայն ինչ՝ զոր ասաց նա վասն աւետարանին սրբոյ։ ասաց իսկ այսպէս, Եթէ Մատթէոս՝ ասէ՝ ՚ի մէջ հեբրայեցւոց ըստ լեզուի իւրեանց և զկիր աւետարանին արար եղ՝ Պետրոս և Պաւղոս

տարանին, մինչդեռ Պօղոս և Պետրոս աւետարանէին
'ի Հռոմ քաղաքի և զեկեղեցիս ուղղէին։ Յետ ելից
նոցա յաշխարհէ [3], Մարկոս աշակերտն և թարգման
Պետրոսի՝ զոյն ինչ զոր Պետրոսի էր քարոզեալ, գրով
գրոչմեալ մեզ աւանդեաց։ Իսկ Ղուկաս՝ որ ընդ Պօ-
ղոսի չոքէր, զաւետարանն՝ զոր նա քարոզեաց, գրով
ետ մեզ։ Եւ յետ ամենեցուն Յովհաննէս աշակերտ
Տեառն մերոյ, այն որ անկաւն զլանջօք նորա, գրեաց
զաւետարանն 'ի ժամանակին մինչդեռ յԵփեսոս էր
Ասիացւոց։ Զայսոսիկ ասէ նա յերկրորդ դիրս իւր 'ի
յիշատակեալն 'ի մէնջ։ Իսկ 'ի հինգերորդին այսպէս
ասէ վասն Յայտնութեան Յովհաննու և վասն Համա-
րոյ անուան Նեռինն։ Եւ զի այս այսպէս է, ասէ, և
յամենայն իսկ յրենաիր և 'ի վաղեմի օրինակս այս Թիւ
եդեալ է, և վկայեն ամենեքին որ ականատես գտան
Յովհաննու, և բանն ինքնին ուսուցանէ, զի Թիւ ան-
ուան գազանին ըստ Համարոյ Յունաց 'ի նշանագրաց
անտի 'ի նմա իմանի։ Եւ յետ սակաւու միոյ յաւելու
ասել զարձեալ վասն նորին Յովհաննու Յայտնու-
Թեանն. Չկամիմք մեք, ասէ, յանխորհուրդս ինչ և
համարձակագոյնս սինդել վասն անուան Նեռինն. զի
եթէ կարևոր ինչ էր 'ի ժամանակին յայնմիկ յայտ-
նապէս քարոզել զանուանս, անշուշտ 'ի ձեռն այնորիկ

աւետարանէին 'ի Հռոմ քաղաքի և ուղղէին զեկեղեցիս։ Եւ յետ
վախճանելոյ նոցա յաշխարհէ, Մարկոս աշակերտն և թարգմանն
Պետրոսի, և նա զոյն ինչ զոր քարոզէրն Պետրոս՝ գրով գրեաց և
ետ ցմեզ։ Իսկ Ղուկաս, այն որ ընդ Պօղոսին չոքէր, զաւետարան
զոր քարոզէր Պօղոս՝ գրով արար և եգ։ Եւ յետ ամենեցունց Յո-
հան աշակերտ աետուն մերոյ, այն որ անկաւն զլանջօքն Տեառն, և
գրեաց աւետարան 'ի ժամանակի մինչդեռ նա յԵփեսոս ա-
սիացւոց։ Զայս իսկ ասացեալ է նորա յերկրորդ խօսս Տեառնջոյ
զոր ասացաք մեք զնոցանէն յառաջագոյն։ Իսկ 'ի հինգերորդ
խօսն այսպէս ասաց վասն Յայտնութեանն Յովհաննու, և վասն Հա-
մարոյ անուանն Նեռին։ Իբրև, այս, ասէ, այսպէս են, և յամենայն օ-
րինակս աւանկնս զոր գիտեն փութով սինդութեամբ՝ եդեալ է այս
Թիւ, և վկայեն ամենեքին որ միանգամ դէմ յանդիման անտի
ջՅովհան. և ինքն բանն իսկ ուսուցանէ մեզ, զի Թիւ անուան այսր
ոճի՝ ըստ Համարոյ յունեաց՝ 'ի նշանագրաց Եբրայ Տառաչի։ Եւ յետ
սակաւու միոյ ասաց գարձեալ վասն նորա. Եթէ մեք, ասէ, ոչինչ
նշդիմիմ վասն անուան Նեռինն՝ Հաւանել և ասել վասն նորա Չմար-
տութեամբ, զի Թէ պէտ էր քարոզել յայնապէս յայնմ ժա-

որ էտ զՅայտնութիւնն՝ ասացեալ լինէը, զի ոչ բա-
զում ինչ ժամանակաւ յառաջագոյն, այլ համարեաց
Թէ յայգի մերում՝ ի կատարած Թագաւորութեանն
Դոմետիանոսի։ Զայս վասն Յայտնութեան ասաց մեր
Եւսեբիոս։ Ասէ և զառաջնոյ Թղթոյն Յովհաննու չի-
շատակ առնէ, բազում վկայութիւնս ի նմանէ յա-
ռաջ բերելով. որպէս և զառաջնոյ Թղթոյն Պետրոսի,
Իսկ զՀովհէնն գիրս՝ ոչ միայն ոչ անգիտանայ, այլ և
ընդունելի համարի՝ ասելովը, բարւոք ասաց գիրն, որ
ասացն Թէ յառաջ քան զամենայն հաւատա եթէ
մի է Աստուած, որ հաստատեաց զամենայն և կազ-
մեաց. և որ զՀեռն գայ։ Պաշտի գարձեալ ի բանից
անտի իմաստութեան Սողոմոնի, եթէ Մատգրութիւն
օրինաց հաստատութիւն անեղծութեան, իսկ անեղ-
ծութիւն մերձաւոր լինել առնէ Աստուծոյ։ Ցիշա-
տակէ և զերեց մի յառաքելաշնորհ արանց անտի,
այլ լռէ զանունն, դնելով զմեկնութիւն նորա զգրոց
սրբոց։ Ցիշատակէ գարձեալ և զՅուստինոս վկայ և
զԻգնատիոս, և պաշտի ի վկայութիւն ի գրոց անտի
նոցա։ Խոստանայ և այլսը ի գրոց անտի Մարկիոնի
ի նորին իսկ ի պատճառաբանութեանց առնել զՀեր-
քուածն մերոցութեան նորա։ Եւ վասն Թարգմանու-

մանակի անուանն նորա ի չէան այնորիկ որ էտ զՅայտնութիւնն՝
ասացեալ լինէը. զի ոչ յառաջ բազում ինչ ժամանակաւ երևեցաւ
նա, այլ համարեաց Թէ յայամ ազգի մերում՝ ի կատարած Թագա-
ւորութեանն Դոմետիանոսի. զայս պատմեաց վասն յայտնութեանն
այնորիկ այրս այն՝ վասն որոյ ասացաք։ Բայց յիշատակէ և սա զա-
ռաջին Թուղթն Յովհաննու և բերէ ի նմանէն բազում վկայութիւնս։
Սպրիպէս և զՅուստինն Պետրոսի զառաջինն։ Իսկ զայն գիրս զՀովհէն
ոչ միայն Եթէ գիտելով և եթէ գիտէ զնա, այլ և ընդունելի է նմա-
և ասէ ի նմանէն այսպէս, Եթէ բարւոք, ասէ, ասացին գիրք Թէ
նախ զառաջին հաւատա Եթէ մի է Աստուած որ հաստատեաց զա-
մենայն և կազմեաց, և որ այլ էս։ Եւ ի գիտութեան Սողոմոնի
պաշտի բանիւքն նորա. և ասէ ի նմանէ այսպէս, Եթէ ակնկալ ասէ
Աստուծոյ կեանս գործէ, և էհասցէ առ Աստուած մատուցանէն։
Եւ ինչ զոր լինէը երեց մի զոր ընկալաւ նա յառաքելոց անտի, յի-
շատակէ գարձեալ և այն որ զանուանն իւրոյ չէտ մեզ. և գնէ գար-
ձեալ յիւրմէ մեկնութիւնս գրոց Աստուծոյ։ Բայց գարձեալ յիշա-
տակեաց և զՅուստինոս վկայ, և զԻգնատիոս, և պաշտի ի վկա-
յութիւն ի գրոց անտի նոցա։ Բայց խոստանայ գարձեալ ի չէան
փութոյ սիգուածքեան զոր ասաք, զի ի նոցանէ ի գրոց անտի

Թէան եւ Թադէոսէ աստուածընկալն տուխին՝ լուր զինչ ասէ. Աստուած, ասէ, մարդ եղև, և ինքն ՏԷրն կեցոյց զմեզ, և եւս մեզ նշան, եթէ ահա կոյս յղասցի և ծնցի որդի, եւ ոչ որպէս ոմանք ախորժեցին ասել, որ Հաւատարմակին արդ Թարգման լինել գրոց, եթէ Ահաւասիկ աղջիկ յղասցի և ծնցի որդի, որպէս Թարգմանեաց Ֆէոդոտիան Եփեսացի և Ակիւղաս Պոնտացի՝ երկոքին նոքա եկամուտք ի Հրէից. զորոց ըզհետ գնացին և եբիոնիտք՝ ի Յովսեփայ ասելով ծընեալ զՏէրն մեր: Եւ չետ սակաւու միայ յարէ՝ի սոյն. եթէ մինչև Հաստատեալ էր իշխանութեան Հռոմոց, և դեռևս Մակեդոնացիք ունէին զտէրութիւն Ասիացւոց, Պաղեմէոս որդի Ղագոսի [6] փոյթ յանձին կալեալ զարդարել զտուն դիւանին, զոր կանգնեալ էր Ա՛ղեքսանդրիա ընտիր ընտիր մատենիւք ամենայն ազգաց: Խնդրեաց նա և յերուսաղէմացւոց անտի՝ ի յոյն լեզու լերգուլ զիրս նոցա: Եւ նոքա քանզի՝ ի հնազանդութեան կային յայնմ ժամանակի Մակեդոնացւոցն, յղեցին առ Պաղեմէոս զորս միանգամ ունէին կիզիթս և տեղեակ գրոց սրբոց և Հմուտս երկոցունց լեզուաց՝ ի ծերունեաց անտի զարս եւթանասուն, և Աստուածընկալն՝ որ ուղղէր զամենայն, Բայց ինքն արքայ անձամբ կամելով առնուլ զփորձ

Մարկիոնի կայցուք ընդդէմ նորա: Բայց Թէպէտ Թարգմանեցան գիրք հոգւոյն Աստուծոյ յեւթանասնից անտի որ Թարգմանեցին զնոսա, լուր զինչ գրեաց՝ ի բանս իւր, եթէ Աստուած՝ ասէ՝ մարդ եղև, և ինքն տէր կեցոյց զմեզ, և եւս մեզ նշան՝ եթէ ահաւասիկ կոյս յղասցի և ծնցի. և ոչ որպէս ոմանք ասացին յայնցանէ որ հաւատացին Թարգմանել զգիրս այսոր, եթէ ահաւասիկ ասէ օրիորդ յղասցի և ծնցի որդի, որպէս Թարգմանեաց Ֆէոդոտիան Եփեսացի, և Ակիւղաս պոնտացի, զի երկոքին նոքա էին հրէայք՝ զգէ՛ որ զինեն նոցա գնացին իբրև նոքաքն և ասեն, Թէ՝ ի Յովսեփայ ծնեալ տէր մեր: Եւ չետ սակաւու միայ ասաց գարձեալ. եթէ յառաջ մինչև Հաստատեալ էր իշխանութիւնն Հռոմոց, և յայն ժամ մակեդոնացիք ունէին զիշխանութիւնն ասիացւոց, Պաղեմէոս որ փոյթ յանձին ունէր զարգարել զտուն գիւանին զոր կանգնեաց նա Ա՛ղեքսանդր քաղաք՝ գրովք ամենայն մարդկան, որ և էր արժանի փութով պնդութեան. ինդրեաց նա յորդոյն Երուսաղէմ ասաքնալ իւր զգիրս նոցա, և հանել զնոսա՝ ի յոյն լեզու: Իսկ նոքա քանզի՝ ի հնազանդութեան կային յայնմ ժամանակի մակեդոնացւոցն, յղեցին առ Պաղեմէոս եւթանասուն հրէայ, որ կիզիթ և տեղեակ էին

*Հանդիսի նոցա, զի գուցէ միաբանեսցին նոքա և Թա-
գաւորն ի ԹարգմանուԹեան անդ իւրեանց զՀըր-
մարաւԹիւն որ ի գիրս, էառ որոշեաց զնոսա ի մի-
մեանց, և հրամայեաց առնել ամենեցուն զնոյն Թարգ-
մանուԹիւն, և ման ամենայն գրոց զոյն երկոր-
դեաց առնել: Եւ իբրև Ժողովեցան և եկին ամենե-
քեան առ Պաղամիոս, և եղին առ միմեանս իւրաքան-
չիւր ի նոցանէ զիւր ԹարգմանուԹիւն, և Աստուած
փառաւորեցաւ, և յայտնի եղեւն աստուածային լինել
գրոցն. զի ամենեքեան նովին բանիւք և բառիւք զը-
միաս իմաստիցս բացատրեցին ի քէն մինչև ի կատա-
րած. և ամենայն հեԹանոսք՝ որ էին անդ, գիտացին
եԹէ ի զօրուԹենէ Աստուծոյ Թարգմանեցան գիրքն:
Եւ չէն ինչ զարմանք զի զայս այսպէս առնէր Աս-
տուած. որ ի գերազուԹեան անդ Ժողովրդեան յա-
ւուրս Նաբուգոդոնոսորայ իբրև ապականեալ վատ-
նեին գրեանք, յետ եւԹանասուն ամի ի գառնալ
Հրէից յաշխարհ իւրեանց ի ժամանակս Արտաշիսի
արքային Պարսից ետ զՀոգին Յիշողս քահանայ
յազգէ Ղևւատացւոց, զի գրեսցէ զամենայն բանս մար-
գարէիցն առաջնոց, և գարձեսցէ ի Ժողովուրդ զո-
րեհնան Մովսիսի: Աստուած ինչ Երանոս:*

գրոց, և գիտէին զերկու լեզուն. բայց Աստուած առնէր զոր ինչ և կամէր: Իսկ ինքն արքայ կամեցաւ առնուլ զիարձ Հանդիսի նոցա. զի երկեաւ նա Թէ գուցէ միաբանեսցին նոքա ի միաս, և Թագաւորեսցին ի ԹարգմանուԹեան անդ իւրեանց զՀըրմարաւԹիւնն որ է ի գիրս. և էառ որոշեաց զնոսա ի միմեանց և հրամայեաց եԹէ ամենեքեան զի ԹարգմանուԹիւն Թարգմանեսցէն. և այսպէս արար ման ամենայն գործոց: Իսկ իբրև Ժողովեցան և եկին ամենեքեան ի միասին առ Պաղամիոս, և ընԹերցան ընդ միմեանս ամենեքեան իւրաքանչիւր ի նոցանէ զիւր Թարգմանն, և Աստուած փառաւորեցաւ. և գիրքդ յայնմի եղեն՝ և եԹէ Աստուծոյ են ճշմարիտ. զի ամենեքեան ի միասին զնոյն բան և զնոյն անուանս ասացին ի քէն մինչև ի կատարած. և ամենայն հեԹանոսքն որ էին անդ, գիտացին եԹէ ի զօրուԹենէ Աստուծոյ Թարգմանեցին գիրքն: Եւ չէն ինչ զարմանք այս զոր արար Աստուած. այն որ և ի գերուԹեան անդ Ժողովրդեանն որ եղեւ յաւուրս Նաբուգոդոնոսորայ, զի ապականեցան և վատնեցան գրեանքն, և յետ եւԹանասուն ամի ի ժամանակի իւրում եղեն հրեպտյ յաշխարհն իւրեանց, ի ժամանակս Արտաշիսի արքային պարսից, ետ աՀոգին Յեզրաս քահանայ յազգէ Ղևւատացւոց, զի գրեսցէ զամենայն բանս մարգարէիցն առաջնոց, և առցէ Ժողովրդեանն զօրէնսն որ տուաւ ի ձեռն Մովսէսի: Զայս ամենայն ասաց Իրենէոս:

ԳԼՈՒԽ Թ.

Թէ ո՛յք կացին եպիսկոպոսք յաւուրս հնգերևակաւորեան Կոնդոսի։

Ետեալ բաւեալ Աննտոնինոսի զամն ինն եւ ամսան ՚ի թագաւորութեան անդ իւրում, կալաւ յետ նորա զիշխանութիւնն Կոմոդոս, և յաւաջնում ամի հնգետասներորդ նորա իբրև ելից կատարեաց Ագրիպպինոս զերկոտասան ամն ՚ի պաշտօն եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց, կալաւ յետ նորա Յուլիանոս զեպիսկոպոսութիւնն նոցա։

ԳԼՈՒԽ Ժ.

Վասն Պանտենեայ իմաստասիրի։

Եւ էր ՚ի ժամանակին յայնմիկ գլուխ և առաջնորդ վարժից հրաշանգաց հաւատացելոց այր ոմն աբանդելի վարդապետութեամբ իւրով՝ և անուն նորա Պանտենոս։ Քանզի ՚ի սկզբանէ անտի հաստատեալ էր առ նոսա ուսումն վարդապետութեան գրոց սրբոց, որ և

իններորդ, եպիսկոպոսք որ եղեն յաւուրս կոմիդեայ արքային։

Իսկ իբրև ելից Աննտոնինոս զինն և զամսան ամ ՚ի թագաւորութեան անդ իւրում, կալաւ յետ նորա Կոմոդէս. զի յամին աւանդատ նորին թագաւորութեան ելից կատարեաց Ագրեպպինոս զերկոտասան ամ ՚ի պաշտօն եպիսկոպոսութեան եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց. և կալաւ յետ նորա Յուլիանոս։

Տասներորդ. վասն Պենդենոսեայ փիլիսոփայի։

Բայց էր յայնմ ժամանակի գլուխ և առաջնորդ ուսման հաւատացելոց՝ որ էր Աղեքսանդր քաղաքի՝ այր աբանդելի էր յոյսումն խնամոութեան, և անուանիւբ Պանտենոս, զի իբրև յաւաջին սովորութենէն հաստատեալ էր առ նոսա վարդապետութեան բանից սրբոց, այն որ մինչև առ մեզ ձգեաց. և ՚ի մարգկանէ որ

մինչև առ մեզ ձգեցաւ, և 'ի մարդկանէ որ 'ի բան և 'ի փոյթ սինդուխեան աստուածպաշտոց հզօրք էին, գումարեալ ժողովէին։ Եւ ասի բան, եթէ քան զամենայն իմաստունս ժամանակին փոյլեր այրս այս, և էր յուսմանէ վարդապետութեան Սոփիկեանց. և այնչափ յօժարամիտ էր և եռանդնոտ վասն բանին Աստուծոյ, որպէս զի և քարոզ աւետարանին Քրիստոսի եղև նա ազգացն արևելից և մինչև յերկիրն Հնդկաց էած զքարոզութիւնն։ Զի էին դեռևս 'ի ժամանակին յայնմիկ բազում աւետարանիչք բանին Աստուծոյ, որք ըստ աստուածային նախանձուն զառաքելոց բերելոյ յանձինս զնմանութիւն յաձնեմն և 'ի շինուած բանին Աստուծոյ փութային, յորոց էր և Պանտենոս. զոր և մինչև 'ի Հնդիկս հասեալ պատմեն, և անդ գտեալ զաւետարանն Մատթէի առ հաւատացեալս ոմանս, զոր մինչև երթեալ Պանտենեայ անդր՝ քարոզելով նոցա յառաջագոյն Բարդողիմէոսի՝ միոյ յերկոտասանից, և երբայական գրով առ նոսա թողեալ, որ և ցայն վայր անկորուստ էր պահեալ։ Իսկ ինքն Պանտենոս յետ բազում ուղղութեանցն, առաջնորդ վարժից վարդապետութեան կալով յԱղեքսանդրիա, կէս մի կենդանի բարբառով և կէս մի 'ի ձեռն

զօրագոյն էին բանիւն, և 'ի փոյթ սինդուխեան աստուածպաշտութեան հաստատեալ էր։ Բայց ասի բան, եթէ քան զամենայն որ միանգամ առաքեալ էին յայնմ ժամանակի լուսաւոր էր այրս այն՝ զոմն առացաք. և յուսմանէ էր փիլիսոփայութեան այնոցիկ որ անուանեալ կոչէին տոյիկոսք. այսպէս իսկ ասէն զնմանէն եթէ էցոյց նա զնորհս-ուրդսն յօժարութեան զոր ունէր վասն բանին Աստուծոյ, որպէս զի և քարոզ աւետարանին Քրիստոսի եղև նա հեթանոսացն՝ որ են յարևելս. և եմուտ նա մինչև յերկիրն Հնդկաց, զի էին ցայն վայր յայնմ ժամանակի բազում աւետարանիչք բանին Աստուծոյ, այնպիսի որ ըստ նախանձուն Աստուծոյ զնմանութիւն կերպարանաց զառաքելոցն բարձեալ ունէին, և իբրև 'ի մնացեալ և 'ի շինուած բանին Աստուծոյ փութացեալ զօրանային, և մին 'ի նոցանէն էր Պենդանոս։ Որ ասի զնմանէն Թէ եմուտ նա յարեւելս Հնդկաց, և եգիտ անդ զաւետարան Մատթէոսի. որ յառաջ մինչև երթեալ էր նորա անդր, էր նա առ մարդս հաւատացեալս 'ի Քրիստոս որ էին անդ՝ զոր քարոզեաց նոցա Բարդողիմէոս մի յառաքելոց անտի, և եմոյծ նոցա զգիրսն զաւետարանին Մատթէոսի հեբրայեցերէն գրով, և պահեալ էր առ նոսա մինչև յայնմ ժամանակս։ Իսկ ինքն Պենդանոս հանգերձ ամենայն բարի գործովք, և յետ առաջնորդ վարդապետութեանն որ էր յԱղեքսանդրիա քաղաքի՝

գրոց խօսից զգանձս աստուածային վարդապետու-
թեան համբարեր՝ ի յիշատակարանս եկեղեցւոյ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Վասն Կղեմայ Աղեքսանդրացւոյ։

Ընդ այն ժամանակս Թեւակոխեր յուսումն աս-
տուածային տաւից և հռչակեալն Աղեքսանդրիա
Կղեմէս, համանուն նախնոյ եպիսկոպոսին Հռոմայ և
աշակերտի Առաքելոցն. որ և՝ ի գիրս Օրինակաց իւրոց
յանուանէ յիշատակէ զՊանտենոս իբրև վարդապետ
և ուսուցիչ։ Ասէ և յառաջնում անդ գիրս՝ ի Յառա-
ջադիմութիւնս իւր զսա Թուի նա ակնարկել, յորժամ
զերևելիս յառաքելականէ, յորոց և վար-
ժեցաւ ինքն, ՝ի համար արկեալ կարգեր բանիւս այս-
պէս. Ցայսոսիկ գիրս, ասէ, ոչ՝ ի ցոյց ինչ հանձարոյ
արուեստակեալ ՝ի մեր, այլ՝ ի յիշատակարան ծերու-
թեան գանձեցաք, և՝ ի դեղ դարմանոյ մոռացու-
թեան, պատկեր իմն անարուեստ և ստուերագիր հը-
զօրացն և յաւերժ կենդանեաց բանից, զոր արժանի

եղև նա, և կենդանի բարբառով և՝ ի ձեռն գրոց խօսից գանձս վար-
դապետութեան զաստուածպաշտութիւն դնէր նա։

Մեռաւանևերորդ. վասն Կղեմենտեայ ադեքսանդրացւոյ։

Իսկ յաւուրս Պենտաենոսի յայնմի էր՝ ի մէջ ազգքրիստո-
ցեաց՝ որ ընդ Լերևէլնէր և Թեւակոխեր գրովք Աստուածոյ Կղեմինոս,
տուռանակից եպիսկոպոսին այնորիկ՝ որ եղև՝ ի Հռոմ քաղաքի, որ
էր Նա աշակերտ առաքելոցն։ Սոյն իսկ այս Կղեմինոս, ՝ի խօսան
զոր գրեաց յանուն իւր, յիշատակէ և զՊենդաենոս՝ եթէ վարդա-
պետ ուսուցիչ էր։ Բայց էր Նորա և այլ խօսս. և՝ ի խօսն առա-
ջինս ակնարկէ վասն Նորին Պենդաենոսի. ՝ի ժամանակի իրում էցոյց
Նա վասն երևելի մարգկանն որ ընկալան և կարգեցան յառաքելոց
անտի, առաց իսկայապէս, եթէ զոյս, ասէ, Հաւատ որ արկեալ է մեր,
չէն գիրք՝ կարգելոք արուեստագիտութեամբ տեղեան, այլ յիշա-
տակ գանձեմք առն գանձի ծերութեան, զի եղիցին Նորա դեղք
մոլորութեան, և պատկերք առանց արուեստագիտութեան, և կեր-
պարանք կենդանիք և հզօր պատկերաց բանից մարգկան երանելոց,

եղէ լսել յերանելւոյն անտի և մեծագոլ ոքերոյն. զի ոմն ի նոցանէ ի յունական ելլադայ էր, այլ ոք ի մեծ ՅունաստանէՆ, միւս ոմն ծննդեամբ Այսրուց, և միւսն Եգիպտոսէ, և այլք յարևելս կեցեալ. յորոց ոմն Այսրեստանեայց էր և միւսն Պաղեստինացի՝ ի նախնեաց անտի Եբրայեցի։ Եւ յետ ամենեցուն դէպ եղև ինձ գտանել զնա՝ որ զօրութեամբ առաջին էր. և հետամուտ լեալ նմին ի Թագաստեան նորա յԵգիպտոս՝ հանգեայ առ նմա։ Առաք արդ զՀմարիտ տուչութիւնս առաքելական վարդապետութեան անապատ պահեալ, որ ի Պետրոսէ, ի Յակոբայ և ի Յովհաննէ և ի Պօղոսէ՝ յառաքելոց անտի սրբոց, որպէս որդի ի հօրէ ընկալեալ յաջորդութեամբ (Թէպէտ սակաւք իցեն նմանող Հարց որդիք) սակայն եկին հասին կամօքն Աստուծոյ մինչև առ մեզ նախնականն այն և առաքելական սերմանիք ի միտս մեր սերմանեալ։

որ արժանի եղէ ես լսել, որ իբրև Հմարթաբեր արժանի են յիշատակի պատուոյ։ Զի ոմն ի նոցանէն ի յԵլլադայ էր, և միւս ևս յԱսորոց, և միւս ևս յԵգիպտոսէ, և միւս ևս յԱբևելից։ Զի սոքին այսոքիկ, ոմն ի նոցանէ յԱսորեստանէ էր, և միւս ևս Պաղեստինացի՝ որ էր նա խակղբանէ ի հեբրայեցւոց անտի. և յետոյ ամենեցունց՝ պատահեցի այնմիկ որ զօրութեամբ առաջին էր, և գտի ես զնա զի Թագաւորեալ էր և չէր յայտնի. և հանգեայ ես առ նմայն։ գիպատոս որ միանգամ պահեցին զկարգ տուչութեանն զվարդապետութիւն Հմարթութեանն։ Իսկ և խակ ի Պետրոսէ և Յակոբոյ և ի Յովհաննէ և ի Պօղոսէ յառաքելոց անտի սրբոց, իբրև որդիք ի հարց իւրեանց ընկալան. սակաւք խակ են որ նմանող են հարց իւրեանց։ Բայց եկին հասին մինչև առ մեզ ի կամս Աստուծոյ, որք սերմանեցին ի մեզ զսերմանիս սրբութեան զհարցն մերոց զառաքելոց։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Վասն եպիսկոպոսացն Երուսաղեմացւոց։

Ջայնու ժամանակաւ եպիսկոպոս էր եկեղեցւոյն Երուսաղեմացւոց Նարկիսոս, որ մինչև ցայսօր ժամանակի ի բազմաց գովութեամբ է ծանուցեալ. և էր նա ի կարգէն հնգետասաներորդ եպիսկոպոս՝ յաւերածոյ անտի Հրէից որ առ Ադրիանոս, զի յայնմ հետէ զկնի որոց ի Թլփատութենէ անտի էին ի հեթանոսաց կացին առաջնորդք. և ցուցաք յառաջագոյն եթէ եղև անդ առաջին եպիսկոպոս ի հեթանոսաց անտի Մարկոս. և յետ նորա եպիսկոպոսացաւ Կասիանոս, ապա Պօպղիոս, և ապա Մաքսիմոս, և յետ սոցա Յուլիանոս, որպէս յայտ առնէ կարգ յաջորդութեան եպիսկոպոսացն ի նոսա։ Եւ յետ Յուլիանոս Գայիոս, ապա Սիւմաքոս, և միւս Գայիոս. և դարձեալ Յուլիանոս երկրորդ և Կապիտոն. և յետ սոցա Վաղէս և Դողբիանոս, և յետ ամենեցուն Նարկիսոս. որ երեսներորդ է յաւաքելոց անտի ըստ կարգի յաջորդութեան։

Երկրտասաներորդ. վասն եպիսկոպոսացն որ ի նմին յերուսաղէմ։

Ընդ այն ժամանակս յայտնի էր եպիսկոպոս յեկեղեցւոջ անդ Երուսաղէմ Նարկիսոս, այն որ անուանի էր մինչև ցայսօր ժամանակի։ Բայց էր նա հնգետասաներորդ ի կարգի անդ յաւերածոյ անտի Հրէիցն, որ յառն Հերբիանոսի եղեւ. զի յայնմ ժամանակի հետէ սկսաւ զառաջինն հաստատել մեզ եկեղեցին որ ի հեթանոսացն։ Եւ զինի այնոցիկ որ ի Թլփատութենէ անտի էին։ Բայց յուշացուք մեք եթէ եղև անդ եպիսկոպոս առաջին ի հեթանոսաց Մարկոս, և յետ նորա Կասիանոս՝ որպէս ցուցանէ կարգն որ ասեմք. և յետ սորա Պապղիոս. և դարձեալ յետ սորա Մաքսիմոս. և յետ սորա Յուլիանոս. և յետ սորա Գայիոս*. և դարձեալ միւս Յուլիանոս. և յետ նորա Կասիանոն. և յետ նորա Վաղէս և դարձեալ Դողբիանոս. և յետ ամենեցունց Նարկիսոս։ Որ լինին ընդ ամենեսին երեսուն յետ առաքելոցն ըստ կարգին։

* Իլատացս. Ե յետ սորա Սիմաքոս և դա- Գայիոս։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Վասն Հռոդոնեայ և առ ի նմանէ յիշատակեալ տարաձայնուհսիան Մարկիոնիտաց.

Յայնմ ժամանակի Հռոդոն ծննդեամբ ասիացի, աշակերտեալ ի Հռոմ որպէս ինքն պատմէ Տատիանոս, զորմէ կանխեալ ծանօթ ես տուաք. որ ընդ այլ բազում գրեանս շարագրեաց նա և հերքումն ընդդէմ մոլորութեան Մարկիոնի, զոր և առ նովաւ ի բազում հերձուածս բաժանեալ պատմէ. և զառաջնորդս հերձուածոյն այնորիկ կարգելով Ջդիւ գոտակաւ, զմիոյ միոյ ի նոցանէ զատութիւնն կշռամբէ. և լուր ի նոցին իսկ բանից. Վասն այնորիկ, ասէ, տարաձայնք գըտան յիւրեանս, զի չիք հաստատութիւն վարդապետութեանն՝ զոր հնարեալ յօդեցին, և սոցա խմբէն Ապելղէս ոմն որ խստակեաց վարուքն և ալեօք ծերութեան կարծեալ զանձն ոմն՝ մի սիկղէն խոստովանի, և վասն մարգարէութեանց ասէ, թէ ի հակառակորդ.

Երեքտասաներորդ. վասն Իւրոդոնեայ, և վասն յաժանմանն որ յիշատակաց յադասս Մարկիոնի.

Յայնմ ժամանակի Իւրոդոն * որ էր նա յադգէ ասիացի և աշակերտեաւ նա ի Հռոմ քաղաքի Տէտիանոսի **, այն որ յառաջագոյն ասացաք զնմանէն, որպէս և ինքն պատմեաց. սորին իսկ եղեալ է գիրս նշանաւորս. և հանդերձ այսորիկ ի ընդդէմ ազանդին Մարկիոնի էդ, այն որ յառուրս նորա բաժանեցաւ ի սիրաս բաժանեալսս, որպէս և պատմէ ի ժամանակի իրում գրեաց նա վասն այնոցիկ որ սրարբին զհերձուածսն. և Յէմարտութեամբ յանգիմանէ, եաց զանան սաուեհան՝ զի հնարեցան և գոին ամենեքին մի ի նոցանէն. Լուր իսկ ի նմանէն, զի գրեաց նա զայս այսպէս ենթէ, վասն այսորիկ, ասէ, բաժանեցան յանձինս իւրեանց, փոխանակ զի կալին նորա վերակացուք խորհրդականն՝ զի չիք նորա հաստատութիւն. Իսկ յետքան նոցանէդ այնոցիկ Աքիղազէս, այն որ հպարտացաւն էր յայնս ծերութեան իւրոյ, ի մի սիկղէն խոստովանի. և վասն մարգարէութեանց ասէ՝ թէ ի հոգւոյն հակառակութեանց*

* Յոր. Իւրթեան.
** Յոր. ի Տէտիանոսէ.

Հոգւոյն են՝ ի բանս աղջկան միոյ դիւահարի՝ ի հրաշապոյրս անկեալ՝ որում անուն էր Փիլոմինա։ Եւ այլք երկու սկզբունս մուծանեն որպէս Մարկիոնն, յորս են Պոտիտոս և Բասիլիկոս։ Եւ որք զՀետ գնալով գայլոյն Պծտացւոց, ոչ կարացին ընտիր առնել ընդ այս և ընդ այն, որ չիցեն նոյն, և ժոեցան ասել դոյզնաբար և առանց օրինակի և հաւաստեաց՝ եթէ երկու սկզբունք են։ Իսկ այլք դարձեալ՝ չար ևս քան զայս նաւակոծեալ, ոչ երկու միայն, այլ և երիս դնեն բնութիւնս, որոց գլուխ և առաջնորդ եկաց Սիմեոնոս, որպէս ասեն՝ որք ունին զաւանութեան նորա։ Բայց գրեալ նա ինքն Հոդոն, եթէ՝ ի մաքառումն եկն ընդ Ապելլէսի, և ասէ այսպէս. Ապելլէս ծերունին մաքառեցաւ ընդ մեզ, և յանդիմանեալ կշտամբեցաւ՝ ի բազում ինչ չարաչար մոլորութիւնս՝ որպէս եթէ չիցեն պէտք ամենևին՝ ի հանդէս քննութեան ածելոյ զամն հաւատոց, այլ ամենայն մարդ կացցէ անսասկ յայն ինչ՝ յոր հաւատացն. զի որ միանգամ յուսանն յայն, որ՝ ի խաչն եալ կեան միայն՝ եթէ՝ ի գործս բարիս գտցին։ Ջի քան զամենայն ինչ անհաւաստագոյն է, ասէր, և խրթնի՝ զԱստուածոյ խօսել, որպէս կանխեցի ասացի։ Մի սկիզբն դնէ նա, որպէս և մեք ասեմք. և ապա յաւելու կուտէ՝ ի վերայ զամենայն կարծիս մտաց

են, վասն զի՝ ի հրապոյրս անկեալ է՝ ի բանս կուսի միոյ դիւահարի՝ զի անուն էր նորա Պեղամինայ։ Իսկ այլք երկու սկզբունս մուծանեն՝ որպէս Մարկիոնն, զի՝ ի նոցանէն են Պենտիտոս և Բասիլիկոս, և այլք՝ որ չարան զնոսն Պենտիտոսի, և ոչ կարացին ընտրել զերս՝ զոր օրինակ և ոչ ինքն. զոր գիւրինն էին՝ գործան, և ասեն եթէ եւ երկու սկզբունք՝ դոյզնաբար առանց օրինակի ցուցանելոյ։ Իսկ այլք՝ ի նոցանէն գարձեալ՝ ի չար ևս քան զայս անկան, զի ոչ երկու բնութիւնս միայն դնեն, այլ և երիս, որ է նոցա գլուխ և առաջնորդ Սիմեոնոս, որպէս ասեն՝ որք ունին զաւանութեան նորա։ Բայց գրեաց ինքն որդին, եթէ և՝ ի մաքառումն եկն ընդ Ապելլէս, և ասէ այսպէս՝ եթէ Ապելլէս ծերունի մաքառեցաւ ընդ մեզ, և բազում ինչ չարաչար զոր ասէր նա՝ յանդիմանեալ կշտամբեցաւ։ Եւ վասն այսորիկ ասէր, եթէ ոչ պիտոյ է ածել զբանն՝ ի հանդէս հարցափորձի, այլ ամենայն մարդ կացցէ անսասկ յայն ինչ՝ յոր հաւատացն։ Զի ասէր նա թէ ամենևիսկ որ միանգամ յուսանն յայն որ՝ ի խաչն եալ կեան, բայց միայն եթէ գտանին՝ ի գործս բարիս։ Եւ որ ինչ գժուարին էր քան զամենայն ուսուցանէր, որպէս կանխեցի ասացի՝ վասն Աստուծոյ, զի գնէ նա մի սկիզբն՝ որպէս և

իւրոց։ Եւ ՚ի հարցանելը իմ, եթէ Ուստի՞ ունիս զնա ծայութիւնդ, կամ՝ զիարդ կարես ասել դու մի սիրելոյն, ասա մեզ։ Եւ նա ասէր. Մարգարէութիւնքն ինքեանք զինքեանս յանդիմանեն, զի Աչմարիտ ինչ չասեն, զի չմիաբանին ընդ միմեանս, սուտ են և հակառակ անձանց իւրեանց։ Բայց Թէ սրպէս էր, զի մի սիրելոյն ասէր, և ինքն զիւր անգիտութիւն խոստովաներ, այլ զի միայն ՚ի քնէ առ այն բռնադատեալ յորդորէր։ Եւ յերդմնեցուցանէին իմում զնա զի զՀմարիտն ասասցէ, երդնոյր և սիդէր, Թէ չեմ տեղեակ Թէ սրպէս մի իցէ անսկիզբն Աստուած, այլ միայն Հաւատամ։ Իսկ ես ծիծաղեցայ և անգանեցի զայրն, որ ասէր զանձնէն Թէ վարդապետ իցէ, և ոչ գիտէր հաստատել զայն ինչ՝ զոր ուսուցանէրն։ Եւ ՚ի սոյն չայս գիրս իւր առ Կալլիստիոն՝ խոստովան լինի Հռոդոն աշակերտեալ ՚ի Հռովմ քաղաքի առ ոտս Տատիանոսի, և երկասիրեալ ասէ Տատիանոս զգիրս իմն դրոց, յորում և զմԹին և զծածկեալ բանս սուրբ Գրոց ձեռն արկեալ պարզել։ Յաւելու ապա և ինքն Հռոդոն առանձին գրութեամբ զլուծումն խնդրոցս այսոցիկ առնել ուրեմն։ գտանեմք յիշատակութիւնս զայսմանէ և ՚ի Մելիտոնի վեցօրեայ աւուրց, (որ

մէք ասեմք։ և յորժամ գնէ՝ յաւելու և ասէ զամենայն կարծիս մեաց իւրոց։ և յորժամ ասեմք մէք ընդդէմ նորա, եթէ ուսո՞ւ ունիս դու զօրինակդ զայդ, կամ զիարդ կարես ասել դու մի սիրելոյն՝ ասա մեզ։ Իսկ նա ասէր Թէ մարգարէութիւնքն ինքեանք զինքեանս յանդիմանեն, զի ինչ Աչմարիտ չասեն, զի ոչ միաբանին ընդ միմեանս, և սուտ են և հակառակ անձանց իւրեանց։ Բայց Թէ սրպէս էր մի սիրելոյն՝ ասէր Թէ ոչ գիտեմ, այլ զի այսպէս խոսէր միայն։ և գայթակղեցուցանէին զնա՝ զի ասասցէ Աչմարիտ, և երդնոյր և հաստատէր և ասէր, Թէ չեմ տեղեակ՝ Թէ սրպէս մի Աստուած դոյ, այլ միայն հաւատամ նմա։ Իսկ ես ծիծաղեցայ և անգանեցի զնա ՚ի միտս իմ, քանզի ասէր նա զանձնէ իւրմէ Թէ վարդապետ ուսուցիչ իցէ, և ոչ գիտէր հաստատել զայն ինչ՝ զոր ուսուցանէրն։ Բայց ՚ի սոյն չայս խոսս գրեաց նա առ Կղեմտոն, և խոստովան լինէր Թէ աշակերտեցաւ նա ՚ի Հռոմ քաղաքի ՚ի Տէ-ոփոնոսէ. և ասէր եթէ փոքր յանձին եղև Տիտիանոսի, և եդ գըլ-խութիւնս հարցուածոց. և խոստանայր նոքօք հաստատել, զի ծած-կեալ էր և չէր յայտնի ինչ՝ որ գրոշմեալ էր ՚ի գիրս Աստուծոյ։ Իսկ ինքն Իւրդոն ՚ի խոս իւր խոստանայ գնել զլուծումն հար-ցուածոցն նորա։ Բայց է նորա գիրք և վեցօրեայ աւուրցն։

դինի կարծեմ)։ Իսկ Ապեղէոս այս բազում ինչ ամէ բարշտութեամբ խօսեցաւ ընդդէմ օրինաց Մովսիսի. ընդ նմին և զբանն Աստուծոյ զաւետարանն Հայհոյեաց ՚ի բազում գիրս իւր. ՚ի կշտամբութիւն և յեղծումն նոցին, որպէս կարծեր նա, մեծաւ փութով վաստակեալ։ Եւ վասն այսոցիկ այսչափ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Վասն առաւտ մարգարէիցն որ ևս յաղանդին փիլիգացւոց։

Իսկ բարիատեացն և չարասէրը թշնամին, հակառակ կողմն եկեղեցւոյն Աստուծոյ, ոչ եթող և ոչ մի հընարս նենգութեան՝ զոր ոչ լարեաց ընդդէմ մարդկան։ Դարձեալ հերձուածս օտարոտիս ետ ընձիւղել ընդդէմ եկեղեցւոյ, յորոց ոմանք ըստ նմանութեան թունաւոր սողոց ՚ի կողմանս Ասիացւոց և փռիւգացւոց սողասկեալ գնային. և զՄոնտանոս Հոգի միսթարիչ, և ՚ի նորայոց անտի զՊրիսկիլլա և զՄաքսիմիլլա զկանայս՝ իբրև մարգարէուհիս Մոնտանոսի ձեռն յանձին հարեալ պանծանօք քարոզէին։

Իսկ Ապիղոնէս այն որ ասացաքն գնմանէն, բազում ինչ հայհոյեաց զԱստուած, և ընդ նմին և զբանն Աստուծոյ հայհոյեաց բազում խօսիւք իւրովք. և որպէս կարծեր նա ՚ի միտս իւր, վասն յանդգնութեան գրոց իւրոց և կշտամբութեան նոցին՝ փոյթ մեծ եցէ նոքա։ Այլ իսկ ասացաւ վասն այսր։

Զորիբտաւանեայորդ. վասն առաւտ մարգարէիցն որ էին յաղանդին փիլիգացւոց։

Իսկ Թշնամին եկեղեցւոյ Աստուծոյ, որ առաքին է բարեաց և սիրող չարեաց, ոչ եթող մի հնարս առնել նենգութեան ընդդէմ մարդկան. գարձեալ պնդեաց և փութացոյց առնել հերձուածս ընդդէմ եկեղեցւոյն. զի ոմանք ՚ի նոցանէ ըստ նմանութեան նզովեալ սողոց որ արկանէ զթոյնս իւր ՚ի կողմանս ասիացւոց և փռիգացւոց չոչէին։ Իսկ Մոնտանոս հպարտացեալ ձեռն յանձին հարեալ Թէ նա իցէ Հոգի բարեխաս. և Պրիսկայ և Մաքսիմիլլա կանայքդ էին ՚ի նորայոց անտի, և նոքա հպարտացեալ ձեռն յանձին հարեալ էին, զի մարգարէք էին նոքա Մոնտանոսի։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Վասն հերձուածոյն Բլաստեայ որ ի Հռոմ քաղաքի.

Էին և որ ի Հռոմ քաղաքի գոռոզանային, և էր նոցա առաջնորդ Փլորիանոս՝ որ անկեալ էր յերկիցս Թենէ եկեղեցւոյ, և ընդ նմին Բլաստոս որ ի նոյն օրինակ կործանումն էր գլորեալ որք զաւազումն ի մանկանց եկեղեցւոյ ձգէին զկնի կամայ խաբեանց։ Եւ երկոքին սոքա օտարոտի վարդապետութեամբ հակառակ Ճշմարտութեան յառնէին։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Թէ զինչ վասն Մոնտանեայ և վասն առաջի մարգարէից նորա իցեն բանք։

Իսկ ընդդէմ աղանդոյ՝ որ անուանեալ կոչին Փռիւգացւոց, զէն զօրաւոր և հակառակամարտ յարոյց Աստուած զԱպողինար Հերապօլսեցի, զոր ի վեր անդր

Հնգետասաներորդ. վասն բաժանմանն փղորիանոսեայ. և Բաղեատոսի, որ եղև ի Հռոմ քաղաքի։

Բայց էին այլք որ ի Հռոմ քաղաքի գոռոզանային, զի էր նոցա առաջնորդ Փղորիանոս, որ անկեալ էր յերկուցեքեան եկեղեցւոյ, և ընդ նմին Բաղեատոս՝ որ ըստ նմին օրինակի անկաւ և նա. զի նոքա և զաւազումն և ի մանկանց եկեղեցւոյ ձգէին զկնի կամայ խաբեանց. և երկոքին նոքա խաբաքանչիւր կային հակառակ Ճշմարտութեանն։

Վեցտասաներորդ. թէ զինչ ասի վասն Մոնտանոսեայ, և վասն առաջի մարգարէից՝ որ էին ընդ նմա։

Իսկ ընդդէմ աղանդին որ անուանեալ կոչին փռիւգացւոց, զօրութիւն Ճշմարտութեանն յարոյց մարթանել ընդդէմ նոցա ուշգին

յիշեաց բանս, ընդ նմա և զայլս բազումս հզօրս բա-
նիւ՝ Յաթիլս նորին, յորոց և բազում Ճառք վասն ա-
ռաքելական պատմութեանն Թողան մեզ։ Եւ ի նոցունց
յայնցանէ ոմն ի սկիզբն գրոց իւրոց՝ որ ընդդէմ նո-
ցա, յայտ առնէ, թէ և առանց գրոյ ի բանից բերա-
նոյ յանդիմանեաց զնոսա. և սկիզբն առնէ բանին
իբրև զայս օրինակ։

Ճառաջ քան զբազում ժամանակս պատուիրեցայ
ի քէն, սիրելի Աբիկիւէ Մարկէղէ, յօրինել խօսս
ընդդէմ աղանդոյն Միքիտաեայ [7], և յերկմիտս դանդ-
աղեցայ մինչև ցայսօր ժամանակի. ոչ թէ զի ոչ կա-
րէի յանդիմանել զստութիւնն և վկայել Ճշմարտու-
թեան, այլ զանգիտէի ես և երկնչէի, զի մի երևե-
ցայց ոմանց թէ ի վերայ վարդապետութեան աւե-
տարանի նորոյս կտակի յաւելուլ ինչ կամիցիմ. զի որ
կամին ըստ վարդապետութեան աւետարանին գնալ,
ոչ յաւելուլ ինչ կարէ ի վերայ և ոչ պակասեցուցա-
նել ի նմանէ։ Բայց նորոգ երթեալ իմ Ալնկիւբիա
գաղատացւոց և գտեալ զեկեղեցի տեղւոյն [8] ոչ որ-
պէս ինքեանք ասէին ի նոր մարգարէութենէ աստի,
այլ որպէս ցուցցի յետոյ՝ ի սուտ մարգարէութենէն
մոգեալ և կախարդեալ, և ըստ կարի իմում՝ որպէս

զինու որ ոչ յաղթահարի զՎիզինաբէս, այն որ էրն ներաւոլիս,
այն զոր յիշատակեացն զնա բան յառաջագոյն, և զայլս բազումս
որ ընդ նմին որ խնամուն էին բանիւ. զի ի նոցունց յայնցանէ
բազում Ճառք պատմութեանց Թողան մեզ։ Իակ ինքն Ապողինարիս
իբրև սկսաւ գրել ընդդէմ նոցա, ցուցանէ և յայտ առնէ թէ և ա-
ռանց գրոյ յանդիմանեաց զնոսա բանիւ, և խակզբան բանի
իւրում գնէ իբրև զայս օրինակ. Ճառաջ քան զբազում ժամա-
նակս, ասէ, պատուիրեցայ ի քէն, սիրելի Աբիկէ Մակեդղայ,
գնել խօսս ընդդէմ աղանդին որ անուանեալ կոչի Միլոտագեաի և
արգելայ մինչև ցայսօր ժամանակի, ոչ թէ զի ոչ կարէի ես յանդի-
մանել զստութիւնն և վկայել Ճշմարտութեանն, այլ զանգիտէի
ես և երկնչէի զի մի երևեցայց ես ոմանց՝ եթէ ի վերայ վարդապե-
տութեան կաւակարանացս նորոյ աւետարանին կամիմ ես յաւելուլ
ինչ. զի այն որ կամի գնալ ըստ վարդապետութեան աւետա րանին
ոչ կարէ յաւելուլ ի վերայ նորա և ոչ պակասեցուցանել ի նը-
մանէ ինչ։ Բայց նորոգ երթեալ եմ ես Ալնկիւբիա գաղատացւոց,
և Հասի ժամանեցի ես եկեղեցւոյն պնդացւոց որ խռովեալ էր ի
նոր մարգարէութենէ աստի յայսմանէ, որպէս և նոքին ասեն. իբր

[7] Յօր. Հերէս որէ ևս. իակ Մ-ԻՒՀԵՂՆ պարտի լինի Մ-ՐԻՒՀԵ։

ընդհ.ք Տեառն մերոյ Յեսուսի՝ խօսեցայ յԵկեղեցւոջ վասն սոցին այսոցիկ, և վասն այլոց ի նոցուն առաջի արկելոց զաւրս բազումս, որպէս զի եկեղեցին լի ե- ղիցի ուրախութեամբ և յնծութեամբ և հաստատեցաւ ի հաւատս Աշմարտութեան. և որ հակառակորդն էին մերժեցան առ ժամանակ մի, և աստուածամարտքն[9] ամենայնից տրամեցան։ Բայց աղաչեցին երիցունք տեղ- ւոյն այնորիկ, զի որ միանգամ խօսեցեալն եղև ընդ- դէմ այսոցիկ՝ որ հակառակ էին բանին Աշմարտու- թեան, գրով թողուլ նոցա ի յիշատակ։ Ընդ մեզ էր և երիցակիցն մեր Զոսիկոս Ասորինացի։ Բայց ոչ կա- տարեալ զնդիր նոցա՝ խոստացաք միայն գրել աս- տէն շնորհելոյն Աստուծոյ, և փութով պնդութեամբ տալ տանել նոցա։ Զայս և զայլ սոցին նմանս ասելով նորա ի սկիզբն խօսից իւրոց, յառաջ մատուցեալ զՅառան՝ պատմէ ապա այսպէս, Թէ ոչպէս պատճառք եղեն այսր աղանդոյ. Ստամբակութեամբ, ասէ, և նո- րոգ երկպառակութեամբ Ճղքելոյ Հերձուածոյն յԵ- կեղեցւոյ անտի՝ եղեն պատճառք օրինակ զայս. գիւղ մի է, ասէ, ի Միւսիա՝ ի սահմանագլուխս Փռիւգա- ցւոց Ալրդաբա անուն, անդ Մոնտանոս ոմն ի նորա- կերտ հաւատացելոց անտի յաւուրս Գրատոսեայ փո-

---

Երևի նա յիւրաց անտի մարգարէութենէն՝ սուտ. և ըստ կարի զո- րութեան իմոյ որպէս ընդհ.ք տեառն մերոյ Տեառն, խօսեցայ յԵ- կեղեցւոջ վասն սոցին այսոցիկ, և վասն որոյ խիթք խոստանան ա- ւուրք բազումք, որպէս զի եկեղեցին լի եղև ուրախութեամբ և յնծութեամբ. և որ հակառակորդն էին մերժեցան առ ժամանակ մի, և որ վերակացու էին նոցա՝ ամենայնից տրամեցան։ Բայց ապա- չեցին երիցունքն որ էին յամենայն աշխարհի անդ, եթէ որ միան- գամ խօսեցեալն եղև ընդդէմ այնոցիկ որք հակառակ էին բանին Աշմարտութեան, գրով թողցէ ցնոսա նոցա. իբրև էր ընդ մեզ որ պաշտօնակիցն մեր երէց Զոսիկէ։ Բայց առնելով զայս ոչ արա- բաք, այլ խոստացաք գրել ասուէն շնորհեցեալ Աստուծոյ փութով պնդութեամբ և տալ տանել նոցա։ Եւ յետ այսորիկ ասաց այլ եա- և խակդանէ բանի իւրոյ պատմէ վասն այսր որ եղեն պատ- ճառք այսր աղանդոյ. Մինչդեռ կայ ի բանի անդ այսպէս. Պատճառք, ասէ, եթէ որպէս երևեցաւ հերձուած աղանդին նոցա ընդդէմ ա- մենայն եկեղեցւոյն, այսպէս եղև։ Գիւղ մի, ասէ, Թէ է ի Միւսիա փրիգացւոց՝, զի անուն է նորա Արդաբաս. զի անդ ասի վասն միոյ ուրումն որ հաւատաց նորոգ, զի անուն էր նորա Մոնտանոս, յա-

՝ Յոր. Թէպէտ ՝ էլէ՝ ՝ ՝

խանակի բդեշխին Աբիացւոց, չարաչար ցանկութեամբ գահերիցութեան վառեալ, եւ մուտ թշնամւոյն յանձն իւր, և զգեցաւ հոգի չար մոլորութեան, և յանկարծակի սկսաւ ելանել ի մեծ իւրոց, և մարգարէանալ և խօսել բանս օտարոտիս արտաքոյ սովորութեան տուչութեան եկեղեցւոյ, որ ի վերուստ անտի կարգեալ առ մեզ հաստատեր: Իակ որ միանգամ ի ժամանակին յայնմիկ լուան ի նմանէ զբանս այնպիսի, որպէս զարեցան, և իբրև առն՝ յոր ոգի մոլորութեան մտեալ էր և զօրութիւն դիւացն և խռովիչ ժողովրդեան վկիրճի, սաստեալ արգելուչին նմա զի մի խօսեսցի. և յիշեին զպատուհասս Ցեառն մերոյ և զսաստս՝ զգուշանալ արթնութեամբ ի սուտ մարգարէից անտի: Իակ կէսք իբրև ի հոգի սուրբ և ի պարգեւս մարգարէութեան հայեցեալ պարծէին նոքա, և յողոջեալ մեղկէին յանձինս իւրեանց և ոչ յիշէին զպատուիրանս Ցեառն մերոյ. և կալ խարդեալք դիւեալք ի նմանէ, զխելաբեխն, զըզփաղաքուչն և զմոլորեցուցիչ ժողովրդեան զոգին՝ խրատ խօսեալ յորդորէին զի մի լռեսցէ այնու հետեւ: Եւ ա բուեստգիտութեամբս այսու, մանաւանդ չարարուեստ հնարիւք նենգութեան, մինչքենայեաց բանսար-

---

ուրս Գրատոսեայ անթիւհիւպատոսին ասացւոց. զի բազում ցանկութեամբ առաջնորդասիրութեամբ եւ յանձն իւր ձանապարհ լինել թշնամւոյն, և զգեցաւ զնա հոգի չար մոլորութեան, և յանկարծակի սկսաւ ելանել ի մեծ իւրոց, և սկսաւ մարգարէանալ և խօսել բանս օտարոտիս, արտաքոյ սովորութեան տուչութեան եկեղեցւոյ: Իակ որ միանգամ էին յայնմ ժամանակի, որք լուան ի նմանէ զբանս օտարոտիս, որպէս զարեցան, իբրև զայր մի յոր հոգի մոլորութեան մտեալ է և զօրութիւն դիւահ. խռովեցուցանէ զժողովուրդս, սաստէին նմա և արգելուին զի մի խօսեսցի. և յիշէին զպատուիրանն առաւն մերոյ՝ զի սպառնայր զգուշանալ զուարթնութեամբ ի սուտ մարգարէից անտի: Իակ կէսք իբրև ի հոգի սուրբ և ի պարգեւս մարգարէութեան հայեցեալ պարծէին նոքա, և լքեալ մեղկէին նոքա յանձինս իւրեանց, և ոչ յիշէին զպատուիրանն առաւն մերոյ, և զայն հոգի որ մեղանչէ մատաղ և կորացուցանէ զնա, և մոլորեցուցանէ զժողովուրդս՝ զի մոլորին և գիրին ի նմանէ, յորդորէին զնա որպէս զի մի գազարեսցէ նա այնուհետեւ: Եւ էր այն արուեստագիտութեամբ մեքենայիկ թշնամւոյն, որ հնարեցաւն վասն կորստեան այնոցիկ որ լանին նմա, յայնմիկ զի*

* Յոր հղիէր.

կուն զկորուստ անհնազանդիցն և անլսողացն, և որք արտաքոյ քան զարժանն պատուէին զնա, զարթոյց և վառեալ բորբոքեաց զմիտս նոցա զօտարացելոցն ի Հնմարիտ հաւատոց՝ Յարոյց և այլ երկուս կանայս՝ զորս և ելից հոգւով մելրուԹեան, որք և շամբաբար, անՀանՀն և օտարաձայնս, ըստ օրինակին, որպէս կանխեցաք ասացաք՝ բարբառէին։ Եւ որք միանգամ խնդալով ընդ այնս պանծային, երանելիս զնոսա կարդայը ոգին մելրուԹեան, և ի ձեռն մեծամեծ խոստմանց ուռուցեալ փքացուցանէր զնոսա. և երբեմն իսկ ՃարտարուԹեամբ իմն և արժանահաւատ օրինակաւ յայտնապէս պարտաւորէր զնոսա, որպէս զի և յանդիմանիչ իսկ երևեսցի նոցա։ Սակաւք էին որ ի փախուցացոյց կողմանէն մելրեցան. և զամենայն եկեղեցին որ ի ներքոյ երկնից, ուռուցանէր զևն հայհոյել ժըլրՀուԹեամբ, այլ ոչ պատիւ և ոչ մուտս ի նոսա գտանէր ոգին սուտ մերգարէուԹեան։ Քանզի հաւատացեալք որ էին ի կողմանս Ասիացւոց, բազում անգամ ի բազում տեղիս ժողովեալ վասն այսր, և քննեալ զնոր վարգապետուԹիւնս, վՃիռս ի վերայ դնէին ԹԷ պիղծ է և ամբարիշտ, և այսպէս դատապարտեալ զաղանդն մերժեցին յեկեղեցւոյ և ի բաց Հալածեցին ի ՀաղորդուԹենէ նորա։ Ձայս յառաջին

պատուէին զնա արտաքոյ քան զարժանն, և զարթոյց և այրեաց զևարհամբոյր նոցա որ ՆՀէին ի Հնմարիտ հաւատոց անտի. և յայլոյց այլ կս երկուս կանայս և ելից զնոսա հոգւով մելրուԹեան. և խօսէին նոքա մելրուԹեամբ և ի ժամ ատրաժամ և արտաքոյ քան զօրինակ արժանաւոր ըստ նմանուԹեան Մանանասեայ. և որ միանգամ նայէին ընդ նոսա՝ լուծեալ լքանէին. և երանի ասէր նոցա դևն, և ի ձեռն մեծամեծ խոստմանն չպարտաւուցանէր զնոսա։ Բայց երբեմն և պարտաւորէր զայր մի երբեմն ի նմանուԹենէ կերպարանաց, որպէս զի եղիցի նա արժանի Հաւատալոյ՝ ԹԷ և յանդիմանիչ է նա. սակաւք իսկ էին ի փրիգացւոց կողմանէն որ մելրեցան. և զամենայն եկեղեցի որ էին ի ներքոյ երկնից՝ ուռուցանէր նոցա ժպրՀուԹեամբ իւրով դևն հայհոյել. վասն զի ոչ ընդունէին զնոսա պատուով, և ոչ սուտ ՃանապարՀի սուտ մերգարէուԹեան գտանէր ի նոսա դիւին։ Զի ամենայն հաւատացեալքն որ էին ի կողմանս ասիացւոց՝ բազում անգամ ժողովեցան ի բազում տեղիս վասն այսր, և զոյն բանս որ խօսեալ լինէին նորոգ, մուծին զնոսա ի հարցափնդրտ. և վՃիռ ի վերայ դնէին նոցա եԹԷ բանք են պիղծք, և խոտեցին անարգեցին զաղանդն զայն. և այսպէս ընկե-

խօսս իւր. ապա ընդ բովանդակ գիրսն սփռելով զկըշտամբանս իւր ընդդէմ մոլորութեանն աղանդոյս՝ մերս յառաջագոյն յիշատակեալ մնտենագիրս. յերկրորդ գիրսն ապա վասն կատարածի նոցին ասէ այսպէս. Մարգարէսսպանս զմեզ կոչեն, փոխանակ զի զշաղակրատ մարգարէս նոցա մեք ոչ ընկալաք, զի ասեն թէ սոքա են զորս խոստացաւ Տէրն մեր առաքել ժողովրդեանս: Աղաւէմբ վասն Աստուծոյ տացեն մեզ պատասխանի, զի իցէ՞ ոք ի նոցանէ՝ որ ի տանէ անտի Մոնտանեայ են և ի կանանց ստաբանից, որ հալածեցան ի Հրէից անտի կամ սպանան յանօրինաց. չիք իսկ և ոչ մի: Եւ ոչ ոք ի նոցանէ ըմբռնեցաւ վասն անուանս և խաչեցաւ. և ոչ ի ժողովս Հրէից ի կանանց անտի նոցա ոք տանջեցաւ կամ քարկոծեցաւ երբեք. այլ այլով մահուամբ ասի Թէ Մոնտանոս և Մաքսիմիլլա մեռան: Քանզի որպէս զրոյցք ասեն, երկոքին սոքա ի մտակօրոյս խելաբախս հոգւոյ անտի խեղդ արկեալ անձանց մեռան. ոչ եթէ ի միասին, այլ իւրաքանչիւր յիւրում ժամանակի ըստ միհնոն ՅուԹգայ մտանչի: Որպէս և զարմանալին այն և առաջին պարագլուխ մարգարէութեանս այսորիկ Թէոդոտոս, ելեալ ի մտաց իւրոց հաւատայ ոգւոյն մոլորու-

ցան նոքա յեկեղեցւոյ, և մերժեցան ի հաղորդութենէ նոցա: Զայս պատմեաց Ապողինարիս նախ ինքն, և յամենայն խօսս իւր աւաքս յանդիմանութիւն մոլորութեանս այսմիկ: Եւ յերկրորդ խօսսն վասն կատարածի սոցին այսպէս ասաց. Քանզի, ասէ, կոչեն զմեզ մարգարէս անօգուտս, փոխանակ զի ոչ ընկալաք մեք զսուտ մարգարէսն նոցա. զի ասեն Թէ սոքա են զոր խոստացաւ Տէրն մեր առաքել ժողովրդեանն այնմիկ, տացեն մեզ պատասխանի իրթև աւասիկ Աստուածն, զի եթէ իցէ՞ ոք յայնցանէ որ ի տանէ անտի Մոնտանոսեայ են, և ի կանանց անտի որ սկսան խօսել տառապեալն, որ հալածեցան ի Հրէից անտի, կամ սպանան յանօրինաց. չիք իսկ և ոչ մի, և ոչ ոք ի նոցանէն ըմբռնեցաւ վասն անուանս այսորիկ և խաչեցաւ. և ոչ ի ժողովս հրէից մի ոք ի կանանց անտի նոցա տանջեցաւ կամ քարկոծեցաւ երբէք: Բայց այլով մահուամբ ասի զնոցանէն Թէ մեռան: Զի Մոնտանոս և Մաքսիմիլլա սոքա երկոքին չարժեցան յապականիչ հոգւոյ անտի և սպանին զանձինս իւրեանց, ոչ եթէ ի միասին, այլ ի ժամանակի մահու միոյ միոյ ի նոցանէն. և այս հաստատ է զնոցանէն Թէ այսպէս մեռան, ըստ միհնոն ՅուԹգայ մատնչի: Եւ որպէս ասի բան վասն այսորիկ որ գլուխ

* ՅՈՎ. ԻԷ՚ԻԵ:

Թէան, և իբր այն Թէ ընդ յերկինս յափշտակեսցի, անկաւ և մեռաւ չարաչար։ Եւ զայս այսպէս լեալ պատմեն։ Այլ զի չէ տեսեալ մեր, վասն այնորիկ և ոչ պարտս համարիմք հաւատս ընծայել այսոյիսեաց աստի, այլ երանեալ գլուխ. բայց եթէ այսպէս և է. Թէ այլազգ, մեռանելով մեռան Մոնտանոս և Թէոդոտոս և կինն յիշատակեալ՝ի մէնջ։ Նոյն ինքն գաձեալ՝ի նոյն գիրս իւր ասէ. Եթէ կամեցան սուրբ Է. պիսկոպոսունքն՝ որ էին յայնմ ժամանակի յանդիմանել զՀոգին, որ էր՝ի Մաքսիմիլլա, բայց արգելան՝ի նոցանէ, որ օգնական և Թիկունք էին Հոգւոյն մոլորեալեան։ Եւ յաւելու. Թէ Մի՛ ասացէ Հոգին այն Մաքսիմիլլայ, ըստ որում՝ի բանս Այտերեայ Ուրբաանոսի գրեալ է, Թէ հալածիմ ես իբրև զգայլ՝ի գառանց, չեմ գայլ, այլ բան և Հոգի և զօրութիւն։ Այլ զզօրութիւնս՝ի Հոգիս յայս ցուցցէ արդեամբք և յանդիմանեսցէ. և բանադատեսցէ զայնոսիկ խոստովանեալ և հաւանեալ, որ միանգամ՝ի բանակցութիւն եկին և զչափ առնուլ զշաղակրատ ոգւոյն, զարս ընտիրս, ասեմ, և եպիսկոպոսութեամբ մեծարեցս. զՈ-

*խրն էզև. մարգարէութեանն այնորիկ որ անուանի առ նոսա, զի նա ինքն է Թէոդոտոս *, այն որ իբրև գաւառապետ լեալ էր նոցա. զի էլ նա՝ի մեզ իւրոց, և հաւատաց Հոգւոյն մոլորութեան, իբրև այն Թէ ընդ երկինս վերանայցէ, և անկաւ և մեռաւ չարաչար. այն իսկ Թէ այս այսպէս եղև։ Բայց սակայն մինչ տեսցուք մեք, կամ Թէ գուք հաւանեալքիք, վասն այսր մի հաւատցուք վճռութեացդ, այլ երանեալք. կամ Թէ չիցէ այսպէս, կամ Թէ իցէ՝ մեռանելով մեռան Մոնտանոս և Թէոդոտոս և Մաքսիմիլլա։ Ասացան՝ի այն յայսս խոսս եթէ կամեցան սուրբ եպիսկոպոսքն որ էին յայնմ ժամանակի յանդիմանել զՀոգին որ էր՝ի նոսա, և արգելին զնոսա այլք որ օգնական և Թիկունք էին Հոգւոյն մոլորութեան։ Գրեաց իսկ այսպէս. Զի մի, ասէ, ասասցէ ըստ բանին Իւրոյ որ առ Ասատուա ** Ուրբաանոս՝ Հոգին սուրբ էր՝ի Մաքսիմիլլայ, Թէ հալածիմ ես, ասէ, իբրև զգայլ՝ի գառանց։ Չեմ գայլ, այլ բան և Հոգի և զօրութիւն։ Եթէ իցէ զօրութիւն՝ի Հոգիս յայս՝ արդեամբք ցուցցէ և յանդիմանեսցէ. և՝ի չէն Հոգւոյն այնորիկ բռնագատեսցէ՝ զի խոստովանեսցին՝ի նա, զայնոսիկ որ միանգամ էին զչափ առնուլ զնորա, և յանդիմանել զՀոգին զայն՝ մինչդեռ խոսէր, զի էին նոքա ալք ազատք և եպիսկոպոսք, Զոտիկոս՝ի Կումնոյ գեղջէ, և Յուլիանոս Ապոլոնոյ.*

* Յօր. Թէոդոտոս. այլ օր. Թէոփոտոս։
** Մեր օր. ոչ սոսա պրեմ։

տիկոս՝ որ ՚ի Կամանայ գեղջէ, և զՅուլիանոս Ա՛պա-
մէայ։ Զորոց խցին զերեսանս՝ որ ՚ի տանէ Թէմիտեայ
էն, և ոչ էառն Թոյլ յանդիմանել զՀոգին զայն,
զսուտ և զմոլորեցուցիչ ժողովրդեան։ Եւ ՚ի սոյն յայս
խօսս՝ ընդ այլ բազում բանս յանդիմանութեան սուտ
մարգարէութեանց Մաքսիմիլեայ, ասէ և վասն ժամա-
նակին, յորում գրեաց զայսոսիկ, և յիշատակէ զկան-
խատաց գուշակութիւնս կնոջն՝ Թէ պատերազմ և
խռովութիւն լինելոց է։ Զորոց գուշակութեանցն զըր-
ուժիւն յանդիմանեալ կշտամբէ նա բանիւս. Եթէ
Զիարդ ոչ ահա յայտ եղև և յայտ ևս ստութիւն
նորա, զի ահաւասիկ աւելի քան զերեքտասան ամ էն
մինչև ցայսօր, յորմէ հետէ մեռաւ կինն այս, և ոչ ե-
զև պատերազմ՝ ոչ աշխարհաւ և ոչ առանձին. նաև
քրիստոնէից ևս առաւել խաղաղութիւն եղև ՚ի գը-
ուժութեանցն Աստուծոյ։ Ա՛յսոքիկ յերկրորդ գրոց նո-
րա։ Եղից սակաւուք և յերրորդ գրոց նորա վասն որոյ
հպարտայեալ պարծէին Թէ բազում վկայք եղեն ՚ի
նոցանէ. և ասէ այսպէս. Զոբժամ ամենայնիւ, զորս
ասացաք՝ յանդիմանին, և չիք նոցա ինչ ասելոյ, դի-
մեալ ապաւէնին ապա ՚ի վկայսն՝ Թէ վկայս բազում
ունիմք մեք, և Թէ հաւատարիմ նշանակ իցէ այս զո-
ւրութեան մարգարէական ոգւոյն՝ որ ՚ի նոսա։ Սակայն

զի զսուտ արգելին այնոքիկ որ ՚ի տանէ Թէմիտեայ, և ոչ էառն
Թոյլ յանդիմանել զՀոգին զայն, և ցուցանել Թէ սուտ է նա և մո-
լորեցուցիչ ժողովրդեան։ Եւ ՚ի սոյն յայս խօսս գրաբեալ ասաց
նա և այլ բազում ևս վասն յանդիմանութեան սուտ մարգարէու-
Թեանն Մաքսիմիլեայ. և ասաց նա վասն ժամանակին յորում գրեաց
զայս, և յիշատակէ և զբանս մարգարէութեանն, զի և գիւթեաց
նա՝ Թէ պատերազմ և խռովութիւն լինելոց է։ Եւ յանդիմանել
կշտամբէ նա զսուտ Թիւն նորա. Եթէ զիարդ, ասէ, ոչ ահա յայտ
եղև և յայս ևս ստութիւն նորա. զի ահաւասիկ աւելի քան զերեք-
տասան ամ մինչև ցայսօր՝ զի մեռաւ կինոջն այնմիկ և ոչ եղև պա-
տերազմ, և ոչ յամենայն աշխարհ. նաև քրիստոնէից ևս առաւել
խաղաղութիւն եղև ՚ի գործութեանցն Աստուծոյ։ Եւ այլ խօսկերկ-
րորդ խօսից անտի եգից սակաւիկ մի բանիւ. վասն այնոցիկ որ չը-
պարտացեալն պարծին, եթէ և ՚ի նոցանէն եղեն վկայք բազումք,
ասաց իսկ այսպէս. Եթէ յորժամ ամենայնիւս յանդիմանին, և չիք
նոցա ինչ ասելոյ յուսացեալ ապաւինին նոքա ՚ի վկայս, և ասեն՝
վկայս բազումս ունիմք մեք. և այս օրինակ է հաւատալի եթէ սուտ
է հոգին մարգարէութեան որ ասի Թէ է առ նոսա. զի աւելի քան

ըստ իս՝ չեն այս ամենևին Աշմարտութեան հաւա
տիք. զի են և յայլոց հերձուածոց՝ որոց իցեն բաղում
վկայք, այլ ոչ վասն այնորիկ ինչ հաւանիմք նոցա, և
ոչ եթէ Աշմարտութիւն գոյ ՚ի նոսա՝ խոստովանիմք
Նախ ՚ի Մարկիոնի հերձուածոյն՝ որ Մարկիոնացիք
կոչին, բաղում վկայս Քրիստոսի ունել ասեն՝ որք ըզ
նոյն ինքն զՔրիստոս Աշմարտութեամբ ոչ խոստովա
նին: Եւ յետ սակաւու միոյ յարէ ապա ՚ի նոյն. վասն
այսորիկ որք միանգամ ՚ի վկայութիւն Աշմարիտ հա
ւատոցս կոչին յեկեղեցւոյ, և դէպ լինի նոցա ընդ ա
նուանեալ վկայն յաղանդոյ անտի Փռիւգացւոց զը
տանել, որոշին ՚ի նոցանէ և ոչ կցորդին ընդ նոսա, զի
ոչ կամին հաղորդ լինել ընդ հոգւոյն Մոնտանեայ և
կանանցն այնոցիկ: Եւ զի զոր ասեմն Աշմարիտ է, դէպ
եղև յաւուրս մեր յԱպամէա, որ ՚ի վերայ Մենանդ-
րոս գետոյ, զի ՚ի վկայից անտի ՚ի Գայիոսէ և յԱղեք-
սանդրոսէ՝ որք յեւմենեայ էին սոյն այսպէս եղեալ
ցուցաւ:

զամենայն ասէ որ չէ Աշմարիտ. զի և յայլոց հերձուածոց են որոց
են նոցա վկայք բաղումք, այլ ոչ վասն այսր ասելոյ եթէ բարեբ
ուենն, և ոչ խոստովանիմք եթէ Աշմարտութեամբ գոյ առ նոսա. և
Նախ մարկիոնացւոց հերձուածոյ անտի, զի ասէն թէ վկայք բա.
զումք են առ նոսա. բայց ՚ի Քրիստոս Աշմարտիւ ոչ խոստովանին:
Եւ յետ սակաւու միոյ ասաց գարձեալ: Վասն այսորիկ յորժամ
կոչին յեկեղեցւոյ ՚ի վկայութիւն որ միանգամ ունին զհաւատս
Աշմարիտ ընդ վկայն որ կոչին յաղանդոյ անտի փռիւգացւոց, որոյն
՚ի նոցանէ, և իբրև ոչ կցորդին ընդ նոսա կատարին: Քանզի ոչ կա.
մին հաւատալ նոքա հոգւոյն՝ որ է ՚ի Մոնտանոս և ՚ի կանայսն յոյ.
նոսիկ. և այս Աշմարիտ և յաւուրս մեր եղև յԱպամիայ՝ այն որ են ՚ի
վերայ Մենանդրոս գետոյ, յայնոսիկ որ ՚ի տանէ անտի Գայիոսի և
Աղեքսանդրեայ են, որ վկայեցին յԱմենիայէ:

ԳԼՈՒԽ ԺԷ.

Վասն Միտրիադեայ և վասն գրոց նորա։

Ի սոյն գիրս իւր յիշատակ առնէ սա և զՄիլտիադեայ ումեմնէ մատենագրէ, որպէս եթէ գիրս յօրինեաւ և սորա ընդդէմ հերձուածոյն։ Քանզի բանս վկայութեան ի նոցայոց անտի ածեալ ի մէջ, յարէ ապա ի նոյն, թէ զայս գտի ի գիրս ուրեք նոցա ընդդէմ խօսիցն Աղկիբիադեայ [10] եղբօր մերոյ, որ ցուցանէր նոցա թէ չէ պարտ մարգարէի ի հիացման անդ մտաց իւրոց խօսել, այլ ի կարծիս համառօտել։ Եւ ի բանի անդ իւրում ի՛ջեալ գայ նա ի նոսա՝ որ միանգամ մարգարեացան ի նոր կտակարանս, ընդ որս Հաւմարի և զկին մի Ամմիա անուն և զՈգրատոս, ասելով այպէս թէ. Սուտ մարգարէն ի խանդս մտաց իւրոց է, որում զՀետ գայ ապա և աներկիւղ ժպրհուԹիւն, որ ի կամայական անուսումնուԹենէ յառաջ եկեալ

Էօրենտասներորդ. վասն Միտրիադեայ՝ և վասն խօսիցն գոր գրեաց։

Զայս իսկ խօսս զոր գրեաց այրս այս՝ վասն որոյ ասացաքս չէ չատակէ և զՄեզուեդաս օրինակիցբր եկեղեցւոյ, զոր գրեաց և նա խօսս ընդդէմ այսոր ազանդի։ Իբրև եդ նա բանս ինչ ի նոցայոց անտի, և յաւելու և ասէ. Թէ զայս գտցես * ի խօսս մի նոցա, որ կան հակառակ ընդդէմ խօսիցն Աղկիբիադեայ եղբօր մերում, այն որ ի նմա ցուցանէր նա Թէ ոչ պիտոյ է մարգարէի խօսել արտաքոյ մըտաց իւրոց. և կարճ ի կարճոյ։ Մինչդեռ ի՛ջեալ գայ նա ի բանի անդ իւրում կարգ զայսոսիկ, որ միանգամ մարգարեացան ի նոր կտակարանս, զի ընդ այնոսիկ համարի և զկին մի զի անուն էր Ննա Ասմախայ, և զՈգրատոս **. ասաց իսկ այսպէս. Թէ մարգարէ սուտ արտաքոյ մտաց իւրոց եղև, և վասն այսորիկ անամեթ և աներկիւղ սկսանի իսկ ի կամս իւր անգիտուԹեամբ. բայց գնայ նա ոչ ի կամս իւր մոլորուԹեամբ, որպէս յառաջագոյն կանխեցի ասացի։ Զի ըստ այսմ օրինակի ոչ կարեն ցուցանել Թէ եղեր մի ի

* Յոր. ֆԹէյե։
** Յոր. Նա կ-ՐՐՐ-։

փոխի ապա յակամայ մոլեգնութիւն, զոր և յառաջագոյն կանխեցաք ասացաք։ Եւ թէ չկարացին նոքա ցուցանել ըստ այմ օրինակի ոչ՝ի հին կտակարանս և ոչ՝ի նորս ընկալեալ ուրուք զՀոգի մարգարէութեան, ոչ զԱգաբոս, ոչ զՅուդա, ոչ զԵիղա, ոչ զդաստեբս Փիլիպպոսի, ոչ զԱմմիա Փիլադելփացի և ոչ զկոդրատոս և ոչ զայլ ոք, ապա մի այսուհետուև որ չէն նոցա բաժին՝ յայն պարծեսցին։ Եւ դարձեալ յետ սակաւու միոյ յարէ. Չի թէ յետ Կոդրատեայ և Ամմեայ, որ՝ի Փիլադելփեայն էր, որպէս ասեն նոքա, կանայք տանն Մոնտանոսի զշնորհս մարգարէութեան ընկալան, ցուցցեն ապա թէ այլք ոմանք Մոնտանեայ և կանանցն նորա յաջորդեցին. զի հարկ է շնորհաց մարգարէութեան լինել՝ի մէջ եկեղեցւոյ մինչ՝ի վերջին գալուստն Քրիստոսի, որպէս և ասաց Առաքեալն։ Այլ ոչ ունին ցուցանել նոքա, զի չորբեքտասան ամ է՝ի մահուանէ Մաքսիմիլլայ մինչև ցայժմ։ Ցայսոսիկ նա։ Իսկ բարեյիշատակեալն մեր Միլտիադէս և զայլ ևս արդիւնս ջանասէր երկասիրութեանց՝ի վերայ աստուածային բանից եՀոդ մեզ, որպէս գնաց՝ զոր ընդդէմ հերձանոցս, նոյնպէս և զոր ընդդէմ Հրէից արար նա զերկոսին զայսոսիկ՝ի կրկին կարգեալ

մարգարէից, ոչ՝ի հին կտակարանս և ոչ՝ի նորս, յամենեցունց որ միանգամ զգեցան շնորհն սուրբ, ոչ ընդ Ագաբոս և ոչ ընդ Յուդայ և ոչ ընդ Նեղոսի, և ոչ ընդ դաստերսն Փիլիպպոսի, և ոչ ընդ Ամմոսիայ՝ այն որ՝ի Փիղադելփիայն՝ էր, և ոչ ընդ Կոդրատոսի, և ոչ ընդ միւսմ ումեք յայլոց անտի։ Մի այսուհետև պարծեսցին այսուիկ, իբր ոչ ևս համար նոցա ընդ նոսա։ Եւ դարձեալ յետ սակաւու միոյասաց։ Զի թէ յետ Կոդրատոսեայ, և Ամմոսիայ՝ այն որ Փիղադելփացւոյն էր, թէ՝ որպէս ասեն, նոքա ընկալան կանայքն տանն Մոնտանոսի շնորհս մարգարէութեան, ցուցցեն եՀեն յայնցանէ որ՝ի տանէ անտի նորա էն, և՝ի կանանց նոցա որ ընկալաւ։ զի պիտոյ է շնորհաց մարգարէութեան լինել՝ի մէջ եկեղեցւոյ մինչ՝ի վերջին գալուստն, որպէս և ասաց Առաքեալն։ այլ ոչ ունին նոքա ցուցանել, զի չորբեքտասան ամ է՝ի մահուանէն Մաքսիմիլայ մինչև ցայժմ։ Սա իսկ ասաց զայս ամենայն՝ իսկ Միլտեագոն այն որ ասացն զնշմանէն, և յիշատակ պւյոց գործոցն եՀոդ մեզ վասն բանից Աստուածայ՝ի խօսեան զոր գրեաց նա ընդդէմ հերձանոցաց, և մեւս ևս զոր արար նա ընդդէմ Հրէից։ և յերկոսին Ճառսն խրաքանչիւր

* ՑՕր. ՚ր Փիղադելփիայ էր, այլ օր. ՚ր Պիղադելփիայ էր։

գիրս։ Եւ առ աշխարհի իշխանս վասն իմաստասիրու-
Թեան՝ զոր պաշտէր նա, արար պատասխանատուու-
Թիւն։

ԳԼՈՒԽ ԺԸ.

*Թէ ո՛րպէս յանդիմանեաց Պօղոսիոս զաղանդն
փոխզգացոց և կամ թէ զո՛յր ոմանց արար նա
յիշատակ։*

Իսկ Պօղոսիոս մատենագիրն եկեղեցւոյ ՚ի հեր-
քումն աղանդոյն փոխզգացոց ձեռն արկեալ՝ որ հզօ-
բացեալն էր յայնժամ, և արար ուրոյն առանձին խօսս
ընդդէմ նոցա, և զհակառակեալն ՚ի նոսա մարգարէու-
Թիւնս սուտ եցոյց, և զվարս առաջնորդաց աղանդոյս
այսորիկ յանդիմանեալ կշտամբեաց։ Լուր զնորին իսկ
բանս զոր վասն Մոնտանոսի գրէ այսպէս. բայց Թէ ո՛
զբ իցէ այս նոր վարդապետս, գործք նորա և ուսումն
վարդապետութեանն ցուցանեն։ Սա է՝ որ ուսոյցն
զլուծումն ամուսնութեան և եդ օրէնս պահոց. որ
զԳեպուզա և զՏիւմին գլխաքակնեարն փոխզգացոց՝

՚ի նոցանէն երկուս երկուս խօսս եդեալ է նորա։ Բայց գարձեալ և
և խօսս պատասխանւոյ եդեալ է նորա ընդդէմ հերձանաաց, վասն
Փիլիսոփայութեան այնմ յորում ինքն էր։

*Որ եւս առաւել երթոյս. թէ ո՛րպէս յանդիմանեաց Պօղոսիոս զաղանդն
փրիգացոց. և կամ զորս յիշատակեաց։*

Իսկ ընդդէմ աղանդին անուանեալ կոյն փրիգացոց, և Պօ-
ղոսիոս այլ օրինակագիր մանուկ եկեղեցւոյ, խելու յայնժամ
աստակացեալ էր ՚ի կողմանս փրիգացոց, խօսս մի արար յանդգնա-
նութեան, և զմարգարէսն որ անուանեալ էր ՚ի նոսա՝ յանդգնա-
նեաց զի սուտ են. և զվարս առաջնորդաց աղանդիս այսորիկ Թէ
որպէս էին՝ յանդիմանեալ կշտամբեաց։ Լուր դու զնոցա բանն զոր
ասաց նա վասն Մոնտանոսակաց այսպէս. Բայց Թէ զինչ ոք իցէ այս
նոր վարդապետս՝ գործք և ուսումն իւր ցուցանեն։ Սա է որ ու-
սոյց զլուծումն ամուսնութեան, և եդ օրէնս պահոց, այն որ զՊա-
պղոյն և զՏիմն՝ երեսաւոր մեծ կոչէ զնոսա, բայց են առաջ քաղաք
փոքրկունք փրիգացոց։ Եւ կամիցաւ նա ժողովել զամենայն որ

Երեսաղէմ անուանեալ, կամէլով անդր ժողովել յամենայն տեղեաց՝ որ միանգամ հաւանեսցին նմա, և կայցէ հարկահանս պահանջողս արծաթոյ, և յանուն պատարագաց հնարեցաւ առնուլ կաշառս, և ոսկիկ կարգէր ոչ միանգամ քարոզելին զուսումն նորա, զի՛ի ձեռն պորտաբոյծ զօշաքաղութեան նոցին հաստատեսցի ուսումն վարդապետութեան նորա։ Զայս վասն Մոնտանոսի։ Իսկ վասն մարգարէուհեացն նորա յառաջ մատուցեալ զբանն իւր ասէ այսպէս. Ա՛լ վասն կանանցս այսոցիկ պարագլուխ մարգարէիցս յայտ առնեմք, զի յորժամ լցան հոգւով մոլորութեան, թողին զարս իւրեանց, և զիարդ ապա ստեն նոքա կոչելով զՊրիսկիլլա և յաւելեալ՝ի բանս իւր ասէ. Դիտեա ապաքէն, զի ամենայն գիրք արգելուն և կարձեն չառնուլ մարգարէի կաշառս և արծաթ. արդ յորժամ տեսանեմ ես զմարգարէ զի առնու ոսկի և արծաթ և հանդերձս պատուականս, զիարդ ոչ հրաժարեցայց՝ի նմանէ։ Դարձեալ գալով՝ի բանս իւր վասն միոյ՝ի նոցանէ՝ որ խոստովանողն կարծին առ նոսա, ասէ այպէս. Եթէ թէ միտսն ինքնին՝ որ զգեցեալ էր զժլատ ագահութիւն, և չկարաց տանել զնշան խոստովանութեան, այլ բազում ար-

միանգամ հաւանեսցին նմա յամենայն տեղեաց, այն որ կացցէ հարկահանս պահանջողս արծաթոյ. և յանուն պատարագաց հնարեցաւ առնուլ կաշառս՝ այն որ հարկս տայցէ և պարգևս բաշխէր ամենայնի որ միանգամ քարոզելին զուսումն նորա. զի՛ի ձեռն զօշաքաղութեան նոցա հաստատեսցի ուսումն բանի նորա։ Զայս իսկ ասաց վասն Մոնտանոսի և մարգարէիցն նորա, և գրեաց այսպէս. Թէ ցուցանեմք նախ վասն մարգարէիցն նորա, յորժամ լցան, ասէ, հոգւով մոլորութեան, թողին զարս իւրեանց. արդ զիարդ ասէն վասն Պրիսկիայ և կոչէն զնա կոյս։ Եւ գաղնել ևս յաւելու և ասէ. գիտեա դու զի ամենայն գիրք արգելուն և կարձեն զմարգարէ՝ զի մի առցէ կաշառ և արծաթ։ Արդ յորժամ տեսանեմ ես զմարգարէ՝ զի առնու ոսկի և արծաթ և հանդերձս պատուականս, զիարդ ոչ հրաժարեցայց՝ի նմանէ։ Եւ գաղնել միւնդհս իմանէ գայ՝ի բանի անդ իւրում, ասաց վասն միոյ խոստովանելոյ անաի նոցա այսպէս։ Եթէ թէ միտսն *, որ զգեցեալ էր զագահութիւն իսկ կերպարանօք, որպէս զի արժանի լիցի ընդունելոյ, այն որ ոչ առ նա ըզնշանն խոստովանութեան, այլ բազում արծաթով թափեաց նա յիւրմէ զնայանան. որ իբրև արժան էր խոնարհել մտաց նորա,

* Ցօր. ԵՒ Ֆ— ՃՃ։

ծանծով Թափեաց նա լիւբմ զկապանս, և վասն որոյ խոնարհէին պարտ էր, վասն այնորիկ իբրև վկայ հը-պարտացեալ պարծէր նա և համարձակեցաւ ըստ նը-մանութեան առաքելոյն գրել Թուղթ կաթողիկէ և աշակերտել զայնոսիկ՝ որ առաւելագոյն հաւատա-ցեալ էին քան զնա, պատերազմակից լինել ի քարո-զութիւն նորաձայն վարդապետութեան, և հայհոյել զՔէր մեր և զառաքեալսն և զեկեղեցի սուրբ: Եւ վասն այլոց գարձեալ՝ որ իբրև վկայս պատուէին ի նո-ցանէ, գրէ այսպէս. Զի մի զբազմաց առցուք ի խո-սել, ասասցէ մեզ կինն այն մարգարէ ՅԱղեքսան-դրիոյ, որ կոչէր զանձն իւր վկայ, որ ի միասին ընդ Նմա ձաշակէր, որ ի բազմաց երկրպագութիւն առ-նոյր, զորոյ գպաիշտակութենէն և զայլոց ժպրհու-Թեանցն պատուհասակոծ եղելոց ոչ է մեզ պիտոյ ա-սել, որոց վկայ են նեբբնատունք մեհենից '' յորս ար-ձանագրեալ հրապարակին յանցանքն: Արդ ահ, ուր Թողուցու զմեզ. մարգարէն գպաիշտակութեանց վը-կայէն, եթէ վկայն զագահութեան մարգարէին: Զի իբրև Տէրն մեր ասաց. Մի ստանայք ոսկի, և մի' ար-ծաթ և մի' երկուս հանդերձս. նոքա հակառակ ա-մենայնի յարգելեալ յստացուածս յայ-սոսիկ: Եւ ցուցցուք զի որ առ նոսա վկայքն կոչին և մարգարէք, ոչ միայն 'ի մեծատանց, այլ և յաղքա-

վասն այնորիկ իբրև վկայ հպարտացեալ պարծէր նա, և համար-ձակեցաւ նմանող լինել առաքելոյ, և գրել Թուղթ կաթողիկէ. և աշակերտել զայնոսիկ որ առաւելագոյն հաւատացեալ էին քան զնա, զի կրթեսցին ընդ Նմա բանիւք անուռւղք, և հայհոյեսցեն զտէր մեր և զառաքեալսն նորա և զեկեղեցի սուրբ: Եւ վասն միասոյ գոր-ձեալ, այն որ պատուհաս էր ի նոցանէն իբրև զվկայս, այսպէս ա-սաց: Եթէ մի, ասէ, ասասցուք վասն բազմաց, ասասցէ մեզ մար-գարէն վասն Աղէքսանդրեայ, այն որ կոչէր զանձն իւր վկայ, այն՝ որ ընդ Նմա իսկ ձաշակէր նա, այն՝ որ երկրպագանէն Նմա բա-զումք, այն՝ որ վասն կողոպտից իւրոց և վասն այլոց ժպրհութեան իւրոյ որ ի նոսին գտաւեցաւ, ոչ մեզ պիտոյ ասել, այլ որմէն ա-կան հասանելոյ: Արդ ահ ուր Թողուս զմեզ. մարգարէն Թողու զկողոպուտս իւր վկային, եթէ վկայն մարգարէին զագահութիւնս իւր: Զի իբրու տէր մեր ասաց, մի ստանայք ոսկի և արծաթ, և ոչ երկուս հանդերձս, նոքա հակառակ ամենայնի յանցանէն յայս ասացուածս որ հասեալ է նոցա: Զի ցուցանէն վասն այնորիկ որ կոչինն առ նոսա վկայք և մարգարէք, զի ոչ միայն 'ի մեծատանց,

տաց և յորդոց և յայրեաց արծաթս ժողովին, եթէ իցէ նոցա յայսմ տեղի արգարանալոյ, կայցեն ինձա-ցեն ՚ի նոյնս և պատասխանի արասցեն մեզ զիրացս. իսկ եթէ չանդիմանեալ հաւանեսցին, գոնեա յայսմ հետէ դադարեսցեն ՚ի չանցանաց անտի իւրեանց։ Զի Տարկ իսկ է ՚ի հանդէս գալ պատուոյ մարգարէին, քանզի ՚ի պատուոյ անտի իւրմէ ծառն Աստուածի։ Եւ որ կամիցին ստուգիւ ինչ վասն Աղէքսանդրի գիտել, դաւեսցաւ սա յատենի Եմիլեայ Պրոնտոնեայ փոխանակի բը-դեշխին Ասիացւոց Յիփեսոս՝ ոչ վասն անուան տեառն, այլ վասն համարձակելոյն ՚ի գողգոթիւն, քանզի կանխս իսկ անկեալ էր նա ՚ի հաւատոցն։ Եւ իբրև երդուեալ և ստեաց նա չանուն Տեառն և արձակեցաւ, մոլորեցոյց զՀաւատացեալս տեղւոյն, և եկեղեցին ուստի էր նա՝ ոչ ընկալաւ զնա, զի աւազակ էր. և որ կամին ուսանել զայս, ունկին նորա զդիւանն Ասիացւոց։ Եւ սակայն չՀանդէպ զնա մարգարէն, որ զամն բազումն ընդ նմա եկաց, վասն որոյ ՚ի չանդիմանելս մեր զսա՝ և զնոյն ինքն զմարգարէն նուաստ կըշտամբեմք. և առաջի բազմաց կարեմք ցուցանել զայդ. և եթէ վըստահք իցեն՝ տարցեն փորձոյ չանդիմանութեան։ Դարձեալ և յայլում վայրի ՚ի նոյն գիրս իւր վասն մարգարէից՝ որ պարծին նոքօք չաւելու ասել.

տալ և չաղքատաց և յորդոց և յայրեաց ժողովին նոքա արծաթ. և ապա թէ իցէ նոցա յոյս ապաստանի՝ կացեն չայսոսիկ. և դիցեն ուրա մի, զի թէ չանդիմանեսցեն գնոսա յայսմհետէ դադարեսցեն ՚ի չանցանաց անտի իւրեանց. զի պիտոյ իսկ էր ՚ի հանդէս գալ պատուոյ մարգարէին, զի ՚ի պատուոյ անտի իւրմէ Հաստատի ծառ։ Զի եղիցի չայսոսիկ իսկ այնոցիկ որ կամին նորա ասել վասն Աղէքսանդրեայ ցուցցուք չայսմհետէ, դաւեսցաւ սա Ալեքսոսէ Պրոնտոնեայ՝ անթեհիւպատուն եկեղեացւոց, ոչ վասն անուան, այլ վասն կողոպտիչն զոր ժպրհէր և առնոյր։ Եւ իբրև ուրացաւ և երդուաւ և սուտ չանուն տեառն մերոյ և արձակեցաւ, և մոլորեցոյց զՀաւատացեալսն որ անդ էին. և եկեղեցին իւր ուստի էր նա՝ ոչ ընկալաւ զնա, քանզի աւազակ էր։ Եւ որ միանգամ կամին ուսանել, ունկին նորա զդիւանն ասացւոց. այն որ ոչն գիտէ զայս մարգարէ իբրու առ նմա է զամն բազումն, զսա չանդիմանելմ մեք, և ՚ի ձեռն նորա և զսացուածս իւր. և կշռամբելմ մեք զմարգարէսն զայս ըստ նորա նմանութեանն, և կարեմք ցուցանել առաջի բազմաց, և թէ յուսացեալ իցեն՝ համբերացեն չանդիմանութեանն։ Բայց դարձեալ յայլում վայրի ՚ի նոյն խօս վասն մարգա-

*եթէ ուրանան թէ ոչ առնուն մարգարէքն նոցա կա-
շառ, զայս իսկ խոստովանեսցին թէ չէն նոքա մար-
գարէք եթէ միանգամ առեալ յանդիմանեսցին. և
բիւր վկայս և հաւաստիս ածիցե նոցա առ այն. և Հարկ
իսկ է եթէ համայն պտուղ մարգարէին ՚ի փորձոյ
ծանիցի: Արդ աղէ ասա, մարգարէ զՀելիս գլխոյն և
զմազս մօրուացն ներկանէ, մարգարէ ՚ի ծարիր և ՚ի
մգոյր շալակի, մարգարէ զարդասէր լինի, մարգարէ
լիցս և տապէլուկս խաղայ, մարգարէ փոխատու և
վաշխառու լինի, խոստովանեսցին եթէ իշխանութիւն
իցէ գործել զայսոսիկ թէ ոչ: Բայց ես ցուցանեմ թէ
գործեցաւ այս ամենայն առ նոսա: Եւ նոյն ինքն իսկ
Ապողինիոս ՚ի սոյն գիրս իւր վկայէ եթէ քառասուն
ամք են յորմէ հետէ Մոնտանոս ձեռն արկեալ էր ՚ի
կարծեցեալ իւր մարգարէութիւն: Եւ դարձեալ ա-
սէ եթէ Ցարեաւ Ջոտիկոն այն, զոր յիշատակեաց
և առաջին օրինակագիրն, յանդիմանել զդէն զօրա-
ցեալ ՚ի Մաքսիմիլլա՝ որ ընծայեցուցանէր զանձն ՚ի
Պեպուզա թէ մարգարէանայ, և արգելաւ նա յայ-
նոցիկ՝ որ ՚ի խորհուրդ և ՚ի կողմն կնոջն էին: Ցիշա-
տակէ և զԹրասէաս վկայն՝ որ եղև յայնմ ժամանա-
կի: Այսքդարձեալ իբրև ՚ի տուչութենէն նախնեաց
թէ պատուիրեաց Տէրն մեր առաքելոցն մի հեռանալ*

*բերէին որ պարծէին նոքօք, յաւելու և ասէ այսպէս. Ուրանան, ա-
սէ, թէ ոչ առնուն մարգարէքն նոցա կաշառս, զայս իսկ խոստովա-
նեսցին՝ զի թէ յանդիմանեսցին թէ առեալ իցէ նոցա, չէն նոքա
մարգարէք, և բիւր վկայս կացուցից: Արժան իսկ է՝ թէ, ասէն,
այն մարգարէին պտուղ փորձեսցի: Արդ՝ աղէ ասա ինձ, մարգա-
րէ լուանայ, մարգարէ զարդարի, մարգարէ զարդասէր լինէ, մար-
գարէ տապալի և հոգի խաղայ, մարգարէ փոխ առ՝ խոստովա-
նեսցին թէ իցէ իշխանութիւն գործել զայս՝ թէ ոչ, բայց ես ցու-
ցանեմ զի գործեցաւ առ նոսա: Եւ նոյն ինքն իսկ Ապողինիոս ՚ի
սոյն ՚ի խօսս իւր պատմէ, եթէ քառասուն ամ մինչև ՚ի գերեա*
*յայս խօսիցին, յորմէ հետէ սկսեալ է Մոնտանոսայ յայնմ որ
կարծեալ երևի մարգարէութիւն: Եւ դարձեալ ասաց թէ Զատի-
կոս, այն որ յիշատակեաց զնա առաջին օրինակագիրն, թէ ՚ի ժա-
մանակի իբրև ընծայեցուցանէր նա զանձն իւր թէ մարգարէանայ
Մաքսիմիլլայ ՚ի Պապուզայ, յարեաւ նա յանդիմանել զհոգին որ
զբռնացեալ ՚ի նա, և արգելչին զնա այնոքիկ, որք ունէին զնորհուր-
դըս նորա. բայց յիշատակէ և զԹրասեաս վկայ որ եղև յայնմ ժա-*

* Ցոր. ՚ի Գերեա. Ուս որ. ՚ի Գերեա.

*Յերուսաղէմ զերկոտասան ամ՝ եւ պաշտի նա՛ ի վե-
կայութիւն՝ ի Յայտնութենէն անտի Յովհաննու. և
պատմէ Թէ և մեռեալ յարոյց Յովհաննէս Յեփեսոս
զօրութեամբն Աստուծոյ։ Եւ զայլ բազում ինչ գրեաց
նա՝ որով զբազմավաստակ մոլորութիւն հերձուածոյն
այնորիկ սպառազսպուա զաղանդաւորեաց։ Զայսոսիկ Ապո-
ղինարէս։*

ԳԼՈՒԽ ԻԵ.

Վերապիոն վասն աղանդոյն Փռիւգացւոց։

*Զհասից Ապողինարի՝ որ ընդդէմ այսր աղանդոյն
Փռիւգացւոց յիշէ Վերապիոն եպիսկոպոս, որ եկաց
յետ Մաքսիմինոսի յեկեղեցւոջ անդ Աղտիոքացւոց.
քանզի՛ ի Թղթի անդ իւրում որ առ Կարինոս և Պոն-
տիոս հերքելով զաղանդն զայն յիշատակ առնէ և
զԱպողինարէ։ Եւ զի գիտասջիք, ասէ, եթէ գործդ
այդ ստութեան, որ անուանեալ կոչի մարգարէու-
թիւն նոր, խոտեալ է և անարգեալ յեղբայրութե-*

*մանակի։ Այսց իսկ գաթեալ իբրև՛ ի կարգէ ստուգութեան, թէ
պատուիրեաց տէր մեր առաքելոցն զերկոտասան ամ մի հեռացնին
յերուսաղէմ։ Բայց պաշտի նա՛ ի վկայութիւն՝ ի Յայտնութենէն
անտի Յովհաննու., և պատմէ Թէ և մեռեալ յարոյց Յովհաննէս
Յեփեսոս զօրութեամբն Աստուծոյ։ Եւ այլ եւս ասաց որ նոքօք
յանդիմանեաց նա զպատաւսպուա զաղանդն զայն վասն որոյ և ասա-
ցաք մեք։ Զայս ասաց Ապողինէոս։*

*Ինձեւտասներորդ. թէ դինչ ասաց Վերապիոն * վասն
աղանդին փռիւգացւոց։*

Բայց վասն ամենայնի որ միանգամ ասաց Ապողինարէս ընդ-
դէմ այսր աղանդի փռիւգացւոց, յիշատակէ զնա Վերապիոն եպիս-
կոպոսն, որ եկն յետ Մաքսիմինոսի յեկեղեցւոջ անդ անտիոքա-
ցւոց։ Յիշատակէ զնա՛ ի Թղթի իսկ իւրում զոր գրեաց առ Մար-
կոս և առ Փաւրիոս **, զի՛ ինձնս յանդիմանեաց և նա զայս աղանդ-
և յաւէտ եւս ասել վասն զի եղիցուք գիտել, ասէ, Թէ ստութիւնն
այն որ անուանեալ կոչի մարգարէութիւն նորա, խոտեալ անար-

* Մխս որ Աէոպէն։
** Թէբեա՝ կարկաս և փռնտիոս ընթեռնուլ պարտ իցէ։

նէն՝ որ ընդ ամենայն տիեզերս, եւտու բերել ձեզ ըզ-
Թուղթս Կղեմդեայ Պապին Հռոմայ երանելւոյ եպիսկո-
պոսին Հերապօլսոյ Աբիացւոց։ Եւ ի Թղթիս Սերա-
պիոնի դրոշմեալ կան ստորագրութիւնք եպիսկոպո-
սաց, յորոց ոմն այսպէս ստորագրէ. Աբեղիոս Կիւ-
բենիոս վկայ՝ Ողջ լինել ձեզ ըղձամ։ Եւ այլ ոք ըստ
այսմ օրինակի՝ Ելիոս Պապիոս Յուլիոս ի Դեբելտեայ
Կողնիոյ եպիսկոպոս Թրակացւոց. Կենդանի է Տէր,
որ յերկինս է, եթէ երանելին Սոտաս, որ ի յԱն-
քիալէ՝ կամեցաւ հանել զգեան ի Պրիսկիլլայ, և ոչ
ետուն թոյլ կեղծաւորքն։ Եւ այլոց բազմաց եպիսկո-
պոսաց միաբանելոց երևին ձեռնագիր ստորագրու-
թիւնք դրոշմեալք ի գիրս յայս։ Եւ որ վասն այսոցիկ
են՝ այսչափ։

գեալ զօրութիւն նորա ամենայն եղբայրութեանն՝ որ են ընդ ա-
մենայն տիեզերս. զի ետուս բերել ես ձեզ Թուղթս Կղոդեայ Պապ-
զինարի երանելւոյ եպիսկոպոսի՝ որ էր յԱբասպօլիս ասիացւոց։
Յայսմ իսկ Թղթի Սերապիոնի և դրոշմ եպիսկոպոսաց բազմաց
դրոշմեալ է ի նմա։ Զի են ի նոցանէ որ այսպէս դրոշմեցին, Ա-
քեղիոս Կիւբրինոս վկայ՝ ազօթս առնեմ զի առողջ լինիջիք։ Իսկ
միւս ևս ըստ այսմ օրինակի, Աբեղիոս Պապիոս Յուլիանոս եպիս-
կոպոս և ի Բեղեհկոսէ Թրկացւոց *։ Կենդանի է Աստուած որ
յերկինս է, եթէ Սովտոս երանելի՝ որ էր նա յԱքեղզոս, կամեցաւ
հանել զգեան. որ էր ի Պրիսկէայ. և ոչ ետուն նմա Թոյլ կեղծաւ-
որքն, և այլք ** եպիսկոպոսացն որ բազում են Թուով միաբանին
այսմիկ։ Դրոշմեաց զԹուղթն նոցա յայսմ Թղթի, այսպէս իսկ էին։

* Պիտի ուղղել՝ ի Դեբելտոս Բրակացւոց, զի զառաջին վանկ անուանն՝ և Թարգմանեալ է վրիպակաւ։
** Յօր. գաւառիկ կայր տեղին։

ԳԼՈՒԽ Ի·

Թէ որչա՛փ ինչ Երանելոյ ընդդէմ հերձուածոցն, որ էին ի Հռոմ քաղաքի գրեաց,

Եւ որոց ՚ի Հռոմ քաղաքի զողջամիտ կրօնս եկեղեցւոյ ապախտ առնէին, բազում Թուղթս շարադրեաց Երանելոյ ընդդէմ նոցա. զմին ընդդէմ Բլաստոսի՝ վասն հերձուածոց, իսկ զմիւսն ընդդէմ Փլորինոսի՝ վասն Միապետութեան [12], և զի չէ Աստուած արարիչ չարեաց. կանխելով նորա պաշտպան կալ Թուխ վարդապետութեանս. զի յորժամ խարդաւանեցաւ սա ՚ի մոլորութիւն Վաղենտիանոսի՝ գրեաց Երանելոյ մեծաձայն փուքթով զՈւԹեակսն, յորում և նշանակէ՝ ժամանեալ նորա առաջնոյ կարգի յաջողութեան առաքելոցն։ Եւ ՚ի կատարածի գրոցս գտի ես ծանօթութիւն ինչ կարևոր նշանագրեալ, զոր և ՚ի դէպ համարիմ յեռուլ ՚ի պատմութիւնս որ ունի օրինակ զայս. Երդմնեցուցանեմ զքեզ, զօրինակող մատենիս ՚ի ՏԷր մեր Յիսուս Քրիստոս և ՚ի փառաւոր

Գլուխ երրորդ. երէ քանի ինչ ասաց Իրինէոս ընդդէմ հերձուածոցն, որ էին ՚ի Հռոմ քաղաքի։

Էին իսկ ՚ի Հռոմ քաղաքի ոմանք որ փոփոխէին զՇնմարտութիւն օրինաց եկեղեցւոյ։ Իսկ Իրինէոս գրեաց Թուղթս նշանաւորս. ՚ի միում գրեաց ՚ի վերայ նորա ընդդէմ Բաղեստոսի վասն հերձուածոց՝ իսկ ՚ի միւսումն՝ ընդդէմ Փղիքսոսի՝ վասն միոյ սկզբան, և զի Աստուած չէ արարիչ չարեաց, զի վերակացու լեալ է սա այսմ խորհրդեանն։ Եւ գարձեալ վասն նորա, զի գերբեցաւ նա ՚ի մոլորութիւն անգր ասէն Վաղենտիանոսի, և վասն ուղերձոցն եգ խօսս Իրինէոս մեծաւ պնդութեամբ. զի ՚ի նմա գրոշմեաց եթէ ժամանեաց նա կարգին առաջնոյ առաքելոց։ Եւ ՚ի կատարածի այսր խօսից գրոշմեաց վերջին զոր գտի ես արժան է երկրորդել ընդ *

* Աստանօր ՚ի հայ օրինակին պակասէ Թուղթ Երինէոսի և մասն մի քառերորդ գլխոյն, և ապա գլուխք երեք, քառներորդ առաջներորդ, քառներորդ երկրորդ և քառներորդ երրորդ, որ արդէն նշանակեալ կան ՚ի ցանկս նախնեացն, եզ 318։

գալուստ Նորա, որով գայ նա դատել զկենդանիս և զմեռեալս, զի բաղդատիցես զգաղափարեալդ և ուղղեսցես զնոյն ըստ բնագրիդ, ուստի խնամով առեր զօրինակն, ըստ այնմ և գրեսցես և զերգմունս զայս և դիցես յօրինակիդ։ Արդ զայսոսիկ նա յօգուտ ասաց, և մեք նշանագրեցաք որպէս զի ունիցիմք զնախնիսն զայսոսիկ և զարդարև աստուածարեալ արս՝ յաբացոյցս ընտիր խնամոտ մտադրութեան։ Եւ ի թըղթին իւրում առ Փլորինոս՝ զոր կանխեցաք ասացաք, յիշէ նա ինքն երանոս թէ որպէս կենակից էր նա և կենցաղակից ընդ Պողիկարպոսի առելով։ Այս վարդապետութիւնք, ա՛վ Փլորինէ, զի անխայտելով ասացից, ոչ են ողջմիտ, օտար են յեկեղեցւոյ, և ի մեծ ամբարշտութիւն խարդաւանեն՝ զորս միանգամ հաւանինն նոցին, զայս վարդապետութիւնս՝ և ոչ որ արտաքոյ եկեղեցւոյ գտանին հերետիոսք՝ իշխեցին բարբառել երբեք։ Զայսպիսի վարդապետութիւն՝ որ յառաջ քան զմեզ երիցունք էին, որ և ընդ առաքեղոց շրջէին՝ չաւանդեցին քեզ. քանզի տեսի զքեզ մինդեռ տակաւին մանուկ էի ի տօրին Սմիւռնա առ Պողիկարպոսի, զի պայծառ փայլէիր ի դահլիճն, և գուն գործէիր հաճոյ առ նմա գտանել։ Քանզի առաւել յուշիլ ունիմ զյայնժամ եղեալսն քան զայժմուս, վասն զի առ մանկութեան ուսմունք աճելով աճեն ընդ ոգւոյ՝ տարրացեալք ի նմա, մինչև կարող լինել ինձ ասել և զտեղին՝ յորում բազմեալ Ճառէր երանելին Պողիկարպոս, և զելս նորա և զմուտս և զնկարագիր վարուց նորա, և զմարմնոյ կերպարան և զձառս, զորս առնէր առ բազմութիւնն, և զընդ Յովհաննու կենաց կցորդութիւն, որպէս պատմէր և զընդ այլոց տեսողաց զՏէրն. և որպէս յիշատակէր զբանս նոցա։ Եւ յաղագս Տեառն՝ զոր ինչ միանգամ ի նոցանէն լուեալ էր, և վասն աքանչելեաց նորա և վասն վարդապետութեան, որպէս ականատես եղելոյ բանին կենաց, առեալ Պողիկարպոս պատմէր զամենայն միաձայն գրոց սրբոց։ Զայսոսիկ ես յայնժամ ի ձեռն ողորմութեանն Աստուծոյ ի վերայ իմ եղելոյ՝ մտադիւր լսէի, դրոշմելով զայս առ ի յիշատակի ոչ ի քարտիսի, այլ ի սրտի իմում։ և միշտ հնոր-

Հօքն Աստուծոյ որոշեմ տիրապէս։ Եւ կարող եմ վկայել առաջի Աստուծոյ, զի եթէ զայդպիսի նոքա-ձայնութիւնս լսէր երանելին և առաքելական երկոյն, գոչէր արդեօք, և խոյեալ զանկնջս իւր, և ըստ սովորութեանն ասէր. Տէր իմ տէր, յոյսպիսի ժամանակս պահեցեր զիս, զի տարապոյ այսոցիկ։ Եւ փախչէր անշուշտ և ի տեղւոջէն՝ ուր նոստէր կամ յոտին կայր, զայդպիսի լսելով զբանս։ Եւ ի թղթոց իսկ նոքա՝ զորս յղեր երբեմն առ մեծաւոր եկեղեցիս առ ի հաստատել զնոսա, կամ առ ոմանս յեղբարց ի խրատ և ի յորդոր նոցին, մարթի յայտնի լինել։ Ձայսոսիկ ևբանիս։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Զիա՛րդ ի Հռոմ Ապոդոնիոս վկայեաց։

Իսկ ի ժամանակի թագաւորութեանն Կոմոդոսի ի հեղութիւն հանդարտութեան փոխեցան իրք մեր, խաղաղութիւն՝ շնորհօքն Աստուծոյ, որոց ընդ ամենայն տիեզերս՝ գտանելով եկեղեցեաց. զի և փրկանն բան յամենայն ազգէ մարդկան զամենայն ոգի վերածէր ի կրօնս բարեպաշտութեան բոլորիցն Աստուծոյ, մինչ զի և ի Հռոմ յոլովք ի մեծատանց և յաղնուաց դիմէին ընտանեօք և ազգակցօք ի փրկութիւն անդր։ Սակայ չկարէր հանդուրժել այսմ բարիատեացն սատանայ՝ ի բնէ մախայոզն, վառեցաւ կամեցաւ անդէն հնարել ազգի մեքենայս ընդդէմ մեր։ Այս՝ ի քաղաքէ անտի Հռոմայեցւոց զԱպողինիոս ի խմբել հաւատացելոց՝ զայր երևելի ի հրահանգս գիտութեան և յիմաստասիրութեան, յատեան ձգէ զնմին յարքանեկայ չարութեան առ բաստան նմին յարուցեալ։ Սակայ չառաւականն այն, վասն տարադէպ անկանուն ամբաստանութեանն, զի չէր արժան ըստ արքունի հրամանի յայդպիսի դատաձանաց կեալ ումեք, վասն որոյ անդէն և անդ խոտակեցան բարձք նորա, զի Պերենիոս դատաւոր զայս

դատակնիք ած ՚ի վերայ նորա։ Իսկ աստուածածասէր վկայն կարի Թ ախանձեալ ՚ի դատաւորէ անտի և յորդորեալ առնախօսել ՚ի խորհրդարանի ծերակուտին, հզօր պերճախօսութեամբ ետ վկայութիւն հաւատոց՝ յանդիման ամենեցուն արարեալ զիւր պատասխանատուութիւն, և ըստ վճռոյ ծերակուտին ընկալաւ զկատարումն սրով. զի նախնի օրինօք սահմանեալ էր առ նոսա, ոչ այլազգ զերծանել ումեք ՚ի քրիստոնէից ձգելոց յատեան դատաստանի, բայց եթէ հրաժարելով յառաջարկութենէ անտի իւրմէ։ Այլ զամենայն ասացեալս առ ՚ի նմանէ յատենի անդ, և զպատասխանիս՝ զորս արար նա Հարցուածոցն Պերենիկոսի, և զամենայն պատասխանատուութիւն նորա առ ծերակոյտն, եթէ ցանկանայիցէ ոք գիտել մի ըստ միոջէ, ուսցի ՚ի հին վկայիցն մատենէ առ ՚ի մէնջ հաւաքելոց։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Թէ ո՛յք ՚ի ժառանգակիւն կացին եպիսկոպոսաց առնուռանիչ։

Այդ ՚ի տասներորդ ամի Կոմոդեայ Թագաւորութեան, յետ Ելևթերոսի՝ որ պաշտեաց զամն երեքտասան զեպիսկոպոսութիւն իւր, յաջորդէ Վիկտոր, յորում՝ ամի և ՁուլիանոսԼ լեալ զտամն ամս, կալաւ զՀոգաբարձութիւն եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց Դեմետրիոս։ Առ որովք և Աստիճաքացւոց եկեղեցւոյն՝ ուԹերորդն յառաքելոց անտի յիշատակեալ ՚ի մէնջ Աերապիոն եպիսկոպոս Ճանաչի, և Հեսաբիոյ Պաղեստինու առաջնորդէ Թէոփիլոս։ Նշմարեմք և Նարկիսոս՝ զոր կանխեաց յիշատակեաց բանս, զերուսաղէմացւոց եկեղեցւոյն վարէր տակաւին յայնժամ զպաշտօն։ Եւ ՚ի ԿորնԹոս Ձանեսատանի՝ եպիսկոպոս էր ընդ այն ժամանակս Բակքիւղոս, և ՚ի վիճակին Եփեսոսի՝ Պողիկրատէս։ Եւ այլք ևս, որպէս ՚ի դէպ է, առ այսոքիւք բազմագոյն եպիսկոպոսաք զայնու ժամա-

նակաւ վարեին, այլ որոց միանգամ գրով առ մեզ է. հաս ու դղափառութիւն հաւատոց, զնոսա ևեթ, որ. պէս վայելէր էր, յանուանէ եդաք։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս խնդրոյ Զատկին յուզելոյ յայնժամ։

Խնդիր յայնմ ժամանակի ոչ փոքր յուզեցաւ, քանզի համօրէն Ասիոյ վիճակք պարտ համարէին իբրև ի նախնեացն տուչութենէ զգուշանալ չորեքտասաներորդ աւուր լուսնի վասն ծոյլ փրկական Զատկին, յորում աւուր զենուլ զպասեքն հրամայեալ էր Հրեից, որպես թէ պարտ իցէ ամենայնիւ ըստ սմին սակի՝ յոր օր եօթնեկին և հանդիսեացն՝ լուծուին պահոց առնել, բայց չէր սովորութիւն ըստ այսմ օրինակի առնել և այլոց եկեղեցեաց՝ որ ընդ ամենայն տիեզերս, առ որս յառաքելոցն աւանդութենէ մնալն ցայսօր պահի սովորութիւնս, ոչ լուծանելով զպահս յայլում աւուր արտաքոյ քան զօրն յարութեան Փրկչին մերոյ։ Եկին ժողովեցան ի միասին վասն այսորիկ եպիսկոպոսաց գումար, և ամենեքեան միաբան ի միջի խորհրդոյ գրեցին թուղթս առ ամենայն եկեղեցիս՝ որ ընդ ամենայն տեղիս, թէ յօրինաց եկեղեցւոյ մի եղիցի պաշտել խորհրդոյ յարութեանն որ ի մեռելոց Տեառն մերոյ, բայց յաւուր միաշաբաթին, և յայսմ աւուր միայն լինի լուծանել զպահս Զատկին։ Բայց կայ մինչև ցայսօր ժամանակի դէր այնոցիկ՝

և յայսօր ժամանակի պահի այս սովորութիւն, մինչ յայլում աւուր ոչ լուծանէ զպահս արտաքոյ քան զօրն յարութեան Փրկչին մերոյ։ Եկին ժողովեցան ի միասին վասն այսոր եպիսկոպոսաց, և ամենեքեան ի մի միաս և ի միջի խորհրդոյ գրեցին Թուղթս առ ամենայն եկեղեցիս որ ընդ ամենայն տեղիս, թէ յօրինաց եկեղեցւոյ մի եղիցի պաշտել խորհրդոյ յարութեանն որ ի մեռելոց տեառն մերոյ, բայց յաւուրն միաշաբաթին. և յայսմ աւուրս միայն պահեցոյ լուծանել զպահս զատկի։ Բայց են և մինչև յայսօր ժամանակի դէրք այնոցիկ որ ժողովեցանն յայնմ ժամա-

որ Ժողովեցան յայնժամ՝ ի Պաղեստին, և որոց գա-
հերէց նստէին Թէոփիլոս եպիսկոպոս եկեղեցւոյն կե-
սարացւոց և Նարկիսոս Երուսաղէմացւոցն։ Եւ այլ գիր
դարձեալ վասն նորին խնդրոյ՝ որոց գումարեցան ՚ի
Հռոմ քաղաքի յորում երիւք և անուն վիկտորի։ Ես
և եպիսկոպոսացն Պոնտացւոց, որոց գլխաւոր էր երիւ-
ցագոյնն ՚ի նոսա Պալմա, և եկեղեցեացն որ ՚ի Գաղ-
ղիա, և գլուխ նոցա Երանոս։ Դարձեալ և գաւառին
Ոսդրոյենաց (Միջագետաց) և քաղաքաց որ ՚ի նմա, և
Բաբիւղոնի եպիսկոպոսին Կորնթացւոց և այլոց բազ-
մաց Թուղթք՝ որք ՚ի մի և ՚ի նոյն վարդապետութիւն
միաբանեալ հաւասար տալով զՀին։ Եւ այն ևս նոցա
սահման, զոր և ասացաքս։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Վասն տարաձայնութեան որ եղև ՚ի կողմանս Ասիացւոց։

Իսկ եպիսկոպոսք՝ որ էին ՚ի կողմանս Ասիացւոց,
պնդէին պահել զսովորութիւնս ՚ի նախնեաց անտի
ընկալեալ, և առաջնորդ նոցա էր Պողիկրատ, որ ՚ի

նախ ՚ի Պաղեստին, զի գլուխ էր նոցա Թէոփիլոս եպիսկոպոս և-
կեղեցւոյն կեսարացւոց, և Նարկիսոս * եկեղեցւոյ Երուսաղէմի.
և այնուհետև դարձեալ Ժողովեցան ՚ի Հռոմ քաղաքի. և են գիրք միա-
ւն իսկ նորին խոշտնից, և ցուցանէ վասն սորին Ռեհտոր եպիսկո-
պոսն. և վասն եպիսկոպոսաց այլ աշխարհաց՝ որ գլխաւոր էր նո-
ցա Փղեմոն. և եկեղեցեացն որ ՚ի Գաղիոն են՝ Իրինէոս էր նոցա
գլխաւոր։ Բայց դարձեալ և եկեղեցեացն և քաղաքացն որ ՚ի Մի-
ջագետս են. և Բաբիղոնի եպիսկոպոսի կորնթացւոց, և այլոց
բազմաց որք ՚ի մի միտս միաբանեցան և եդեն միահամառ. և զի այս
էր մի վճիռ զոյս զոր ասացաքս նոր։

Քաւեներորդ յորորդի. վասն յաժանմանն որ եղև ՚ի կողմանս
ասիացւոց։

Իսկ եպիսկոպոսացն որ էին ՚ի կողմանս ասիացւոց փութային
պահել զսովորութիւնն առաջին որ տուաւ նոցա։ Բայց էր նոցա

* Ցօր. տեղի գտաւրկ Թողեալ էր։

Թղթի իւրում՝ զոր առ Վիկտոր և առ եկեղեցին Հռոմայեցւոց գրեաց՝ դնէ զառաջաբանն կարգաւ առ նոսա հասեալ բանիւքս այսոքիւք. Մեք զլուն զՀաբազանն ունիմք զօր, ոչ յաւելումբ ինչ՝ ի նմա և ոչ պակասեցուցանեմք. զի ՅԱսիա կրօնիցս հիմունք կան ննջեցեալ, որք յառնելոց են յարուբ գալստեան Ցեառն մերոյ, յորժամ գայ փառաք յերկինից և խնդիր առնէ ամենայն սրբոց իւրոց։ Փիլիպպոս՝ որ յերկոտասան առաքելոց անտի էր, և ննջեաց ի Հերապօլիս, և երկու գստերք նորա որ ծերացան ի կուսութեան, և միւս գուստր նորա՝ որ Հոգւով սրբով վարեր, և Հանգեաւ յԵփեսոս։ Դարձեալ և Յովհան, այն որ անկաւ զլանջսն Յիսուսի, որ քահանայ էր, որ զթիթեղն քահանայապետութեան տանէր, և էր վկայ և վարդապետ. սոյն այս Յովհան յԵփեսոս ննջեաց։ Եւ Պողիկարպոս, որ ի Զմիւռնիա եպիսկոպոս եղև և վկայ. և Թրասէաս եպիսկոպոս Եւմենէից և վկայ, որ և ննջեաց ի Զմիւռնիա։ Եւ զի պիտոյ մեզ ասել վասն Սակարեայ եպիսկոպոսի և վկայի՝ որ ի Լաւոդիկէ ննջեաց։ Եւ վասն Պորփիւռի երանելւոյ և վասն Մելիտոնի նեղբինոյ, որ Հոգւովն սրբով գործէր զամենայն, որ արդ Հանգուցեալ կայ ի Սարդիկէ, և սպասեալ ակն

առաքնորդ Պողիկրատոս, այն որ և նա՝ ի Թղթի անդ զոր գրեաց առ Ռեկտոր, և ընկալաւ եկեղեցին Հռոմայեցւոց. և կարգն առաջնոյ Թեմեան առեալ էր այսպէս. Թէ մեք, ասէ, առանց այլոց առնեմք զօրէնս զայս, ոչ յաւելումբ ի նա և ոչ պակասեցուցանեմք ի նմանէն։ Զի և ՅԱսիա լուսաւորք մեծամեծք ննջեցեալք են, զի նոքա յառնելոյն են յարուբ գալստեան տեառն մերոյ, զի գայ փառաւք յերկինից, և խնդիր առնէ ամենայն սրբոց։ Փիլիպպոս՝ այն որ յերկոտասան առաքելոց անտի, զի նա ննջեաց Յերապօլիս, և էր. կու գստերք նորա որ ծերացան ի կուսութեան, և միւս գուստր նորա Հոգւով սրբով վարեր և Հանգեաւ Յեփեսոս։ Բայց գոյ Դարձեալ Յովհան՝ այն որ անկաւ զլանջսն Յիսուսի, այն որ էրն քահանայ և եղեալ էր զպսակն սրբութեան, և էր նա վկայ և ուսուցիչ. այն սա Յեփեսոս ննջեաց։ Եւ գարձեալ և Պողիկարպոս՝ ի Զմիւռնիա, և էր նա եպիսկոպոս և վկայ. և Թրասէաս որ էր եպիսկոպոս և վկայ յԱմենեացւոց, ննջեաց՝ ի Զմիւռնիա։ Բայց պիտոյ և ասել վասն Պրգոսակայ՝ եպիսկոպոսի և վկայի. զի և նա ննջեաց ի Լաւոդիկէայ. գարձեալ և վասն Պորփիւրոսի երանելւոյ, և վասն Մելիտոնի նեղբինոյ, այն որ Հոգւովն սրբով վարեր գամենայն ժա-

՝ Մին որ. Աէրտեայ։

ունի այցելութեան Տեառն յերկինից, յորում և յառնել ունի 'ի մեռելոց։ Սոքա ամենեքեան պահեցին զօրն չորեքտասաներորդ Զատկի, որպէս և աւետարանն ասաց, և իւիք ոչ խոտորեցան, այլ ըստ կանոնի հաւատոց ընթացան։ Եւ ես կրտսերս յամենեցունց 'ի ձէնջ Պողիկրատ, ըստ աւանդութեան ազգակացս իմոց, յորոց և ոմանց աշակերտեցայ, զի եւթն էին ազգակից իմ եպիսկոպոսունք և ես ութերորդ. և ամենեքեան սոքա տճնէին զօր Պասեքին՝ յորժամ ժողովուրդն Հրէից անհետ առնէր 'ի տանց իւրոց զխմոր։ Արդ ես եղբարք, եօթանասուն և հնգից ամաց եմ այժմ 'ի Տէր, և թղթակից և բանակակից եղէ ընդ եղբարս՝ որ էն ընդ ամենայն աշխարհ, և անցի ընդ ամենայն գիրս սուրբս, և ոչ զանգիտեմ ես յայնցանէ՝ որ մեծասաստ սպառնան, զի այնոցիկ՝ որ աւագք էին քան զիս, ասացի թէ Աստուծոյ արժան է անսալ առաւել քան մարդկան։ Եւ 'ի վերայ այսոցիկ յաւելու ապա և վասն եպիսկոպոսացն միաբանեցայ 'ի նոյն խորհուրդս իւր, թէ կարէի յիշել և զեպիսկոպոսունս՝ որք ընդ իս, զորս հրամայեցէքն կոչել՝ և կոչեցի. զորոց եթէ զանուանս առնում 'ի գրի, բա-

մանակն, որ եգեալ է 'ի Սարդեսս, և սպասեալ ահն ունի գործոցն յերկինից, զի 'ի նմա յառնէ 'ի մեռելոց։ Սոքա ամենեքեան պահեցին զօրն չորեքտասաներորդ զատկի, որպէս և աւետարանն ասաց, և իւիք ոչ խոտորեցան, այլ ընդ անցեցան նոքա կանոնին հաւատոց։ Բայց դարձեալ և ես Պողիկրատոս որ եմ կրսեր ամենեցուն, որպէս ընկալայ ես յհղբարց իմոց հարազատաց, զի ընդ նեցայ ես ոմանց 'ի նոցանէն։ Եւ եթէ իսկ էին եղբարքն իմ եպիսկոպոսք, և ես ութերորդ, և միշտ հանապազ գայս ... էին * նոքին եղբարքն իմ յորժամ ժողովուրդն ընդէր զխմորն։ Արդ ես, եղբարք, վաթսունևհինգ ամի եմ 'ի տէր մեր, և խառնեցայ ես յեղբարս որ էն ընդ ամենայն աշխարհ, և անցի ընդ ամենայն գիրս սուրբս, և ոչինչ տագնապիմ ես յայնցանէ՝ որ բարկանան։ Զի այնոքիկ որ մեծամեծք էին քան զիս՝ ասացին **, թէ Աստուծոյ արժան է անսալ առաւել քան մարդկան։ Եւ 'ի վերայ այսց յաւելու և ասէ վասն եպիսկոպոսացն խորհրդակցացն իւրոց որ էին ընդ նմա միւնգեռ գրէրն. Աղօթս առնէի, ասէ, յիշել զեպիսկոպոսն *** որ դիպեցան առ, զորս, դուքն հրամայեցէք կոչել զնոսա և կոչե-

* Ընթերցիր՝ զայս որ տճնէին կամ պահէին։
** Յոր. առաջն։
*** Յոր. վերինոցան։

զուզք էն յոյժ։ Որք Թէպէտև տեսին զնուաստու-
Թիւնս իմ, սակայն միախորհուրդ միաբան գտան ընդ
Թղթիս, զի գիտացին եԹէ ոչ զուր տարապարտուց
տանիմ զալիս իմ, այլ զի հանապազորդ ըստ Ցիսուսի
Քրիստոսի քաղաքավարիմ։ Եւ իբրև այս այսպէս լի-
նէր, եպիսկոպոսն Հռոմայեցւոց Վիկտոր կամեցաւ
զամենայն եկեղեցիս Ասիացւոց միանգամայն հանդերձ
սահմանակցօքն վհատակօք հատանել ընկերուել ի հա-
ւատարուԹենէ հասարակաց՝ իբրև օտարացեալս ի
հաւատոց, և օրինադրեաց գրով զամենայն միաՀա-
մուռ եղբարս որ էին անդ հերձեալս ի միաբԹենէ և
կեղեցւոյն քարոզել։ Բայց ոչ ամենայն եպիսկոպո-
սացն հաձոյ եղև այս. այլ գրեալով յորդոր լինէին
նմա խորհել զայն ինչ՝ որ խաղաղուԹեան իցէ և միա-
բանուԹեան և սիրոյ եղբարց։ Եւ են ԹուղԹք նոցա
զորս մեծաւ սրտդուԹեամբ գրէն առ Վիկտոր, ընդ
որս գրեաց և Ւրանեոս ի դէմս եղբարց՝ որոց գահե-
ցեց էր ինքն ի Գաղղիա։ Հաստատեալ էր և նա Թէ
յաւուր միաշաբաԹին միայն պարտ էր կատարել զըզ
խորհուրդ յարուԹեան Տեառն. սակայն և պատշա-

*

*գիլ, զանուանան նոցա Թէ գրեմ, բազումք են յոյժ։ Իսկ որ միան-
գամ գիտէին զիմաբրկուԹիւնս իմ, և միաբանեցան այսմ ԹղԹի, զի
գիտեն եԹէ ոչ զուր տարապարտուց եկէն ալիքս իմ, այլ ի Քրիս-
տոս Յիսուս յարեցայ ես հանապազորդ։*

*Քաւեներորդ գինգերորդ. բէ պրպեռ եղև մի հատատարարիւն ընդ
ամենայն տեղիս վասն զատկի։*

Իսկ եպիսկոպոսն Հռոմայեցւոց Բնկեղբոր կամեցաւ յանկար-
ծակի զի զամենայն եկեղեցիսն ասիացւոց հանդերձ ամենայն ժո-
ղովրդովքն * որ մերձ էին առ նոսա հատանել ընկերուել զամենե-
սեան միանգամայն ի հաւատարուԹենէ հասարակաց, իբրև զմաբ-
դեա բաժանեալս երկիմաս և քարոզեաց կապեաց գնոսա ի ձեռն
ԹղԹոյ ի միասին զամենայն եղբարս որ անդ էին։ Բայց ոչ ամե-
նայն եպիսկոպոսացն հաձոյ եղև այս. այլ գրէին և պատուիրէին
նմա խորհել զայն ինչ որ խաղաղուԹեան իցէ և միաբանուԹեան և
սիրոյ եղբարց։ Բայց են և անուանեալք նոցա գրով զոր գրեցին սլնե-
գուԹեամբ առ Բնկեղբոր, և ի նոցունց յայնցանէ էր և Իրենէոս,
որ գրեաց նա և ի դէմս եղբարցն որ էին ի Գաղղիա՝ ի նեղբոյ ձե-
ռին նորա։ Բայց հաստատեալ էր նա վասն այսր Թէ յաւուր միա-
շաբաԹու միայն է արժան լինել խորհուրդ յարուԹեան տեառն

* Մեր որ. Խոշնչէն։

Ձապէս գրէր առ Վիկտոր եթէ. Ոչ է արժան հաստանել զայս ամենայն եկեղեցիս Աստուծոյ, զի պահէին նոքա զտուչութիւն առաջին սովորութեանն. և զայլ բազում խորհուրդս բարեաց տայր նմա. յարէ- լով ի բանս իւր այսպէս թէ Ոչ վասն աւուրն միայն է նոցա բաժին երկմտութեան, այլ և վասն օրինակին պահոց. զի են որ կարծեն թէ մի օր [15] միայն պարտ է նոցա պահել, և են որ երկու, և են որ բազում, և են որ զքառասուն ժամ տուընջեան և գիշերոյ չափեն զօրն զայն, և այս ամենայն բաժինք են ի մէջ այնոցիկ որ պահէինն: Եւ ոչ առ մեօք եղև այս, այլ առ նախնեօքն՝ որ յառաջ եղեն քան զմեզ. որ առ թէ- բաշոգ մտութեան առաջնորդաց միամիտ խորհրդով դով դոյզնաբար սպրդեալ սովորութեանն՝ և յետնոց ապա աւանդեցաւ, սակայն ամենեքին խաղաղութիւն ունէին ընդ միմեանս, որպէս և մեքս. թէպտև բա- ժինք պահոց էին, սակայն միաբանութիւն հաւատոց հաստատուն էր: Ի վերայ այսց յաւելու ապա զպատ- մութիւնս, զոր ի ձայ համարիմ յերեսուլ աստանօր, և է բանն օրինակ զայս: Եւ որք յառաջ քան զՍոտէր առաջնորդք էին այդր եկեղեցւոյ, որոյ ի գլուխ կաս դու այսօր. Անիկետոս և Պիոս և Հիգինոս և Տելեսփո-

մերոյ ի զատիկ: Բայց առ Բիկտոր * գրեաց եթէ ոչ է արժան հաստանել զայս ամենայն եկեղեցիս Աստուծոյ զի պահէին նոքա զտուչութիւն առաջին սովորութեանն. և այլ բազում ինչ ազուչը նա զնա: Եւ ի նոյն բանս իւր յաւել և ասաց այսպէս. Թէ ոչ, ասէ, վասն աւուրն միայն է նոցա բաժին երկմտութեան, այլ և վասն օրինակի պահոց նոքին. զի են որ կարծեն ի միաս իւրեանց՝ թէ մի օր պէտք է նոցա պահել, և են որ երկուս, և են որ բազում, և են որ զքառասուն ժամ տուընջեան և գիշերոյ չափեն զօրն զայն. և այս ամենայն բաժինք են ի մէջ այնոցիկ որ պահէինն. և ոչ ի մէ- բում աւուրս միայն եղև այս, այլ և յամս այնոցիկ որ յառաջ եղեն քան զմեզ, որ ոչ թէ ձնշմարիտ ունէին զսովորութիւնն, այլ մեզ և դոյզնաբար, և ամենեքեան խաղաղութիւն ունէին ընդ միմեանս որպէս և մեքս. թէպտև բաժինք պահոց էին, սակայն միաբանութիւն հաւատոցն հաստատուն էր: Եւ ի վերայ այսց յաւելու պատմութիւն, այն որ պէտք է գնել զնա այժմ, զի է նա այսպէս. Եթէ ամենեքեան, ասէ, եպիսկոպոսքն այդր եկեղեցւոյ որպէս գուգ առաջնորդեա, որ եղեն յառաջ քան զՍոտէր, Անիկ-

* Ցոր. ուրիկոր. Փաս որ. Վասն այսորիկ որ.

բոս և Փիլոս և Հերմոնոս և Տաթեսփորոս՝ և Քսեսոս. ոչ նոքա պահեցին զայս օր, և ոչ որ ետուն զնոսա գիտուն պահել զնա։ Եւ Թեոփէտ և նոքա ոչ պահէին զսա, սակայն խաղաղութիւն ունէին ընդ մարդս որ պահէին զսա յայլ եկեղեցիս որ գային առ նոսա, ուր դէպ լինէր պահելոյ և չպահելոյ. և ոչ երբեք անգոանեցան մարդք վասն այսր իրաց, այլ Եկեսէ և ոչ պահէին եպիսկոպոսքն որ յառաջ եղեն քան զքեզ, սակայն այնոցիկ՝ որ պահէինն յայլ եկեղեցիս, տային տանել նոցա հաղորդութիւն։ Ունէր ասել և Պողիկարպոս յօրժամ եկն ի Հռոմ յաւուրս Անիկետոսի, և ունէին նոքա ընդ միմեանս տրտունջ սակաւիկ մի վասն այլ իրաց, և նոյնժամայն տրարին խաղաղութիւն ընդ միմեանս. և վասն այսր իրաց ոչինչ հակառակութիւն եղև նոցա ընդ միմեանս։ Նա և կարէր իսկ ոչ Անիկետոս հաւանեցուցանել զՊողիկարպոս՝ եթէ մի պահելոյ զնոյն զօրս զայս, քանզի ընդ Յովհաննու աշակերտին տեառն մերոյ և ընդ այլ առաքեալսն չրջէր նա, և ընդ նոսա պահեաց նա զօրս զայս։ Եւ Պողիկարպոս ** հաւանեցոյց զԱնիկետոս պահել, զի ասաց նմա եթէ պէտ է մեզ պահել զսովորութիւնն հարցն մերոց եպիսկոպոսաց՝ որ եղեն յառաջ քան զմեզ։ Եւ իբրև սոքա այսպէս էին՝ հա-

* Յօր. Եբեբէոբոս. միւս օր. Եբեբէոբոս. այլ մեք եդաք բոս այնմ որ ետ Թեան զօր այլոր տեսաք գրեալ գՏէրէոբոս։

** Յն. և ոչ Պողիկարպոս։

կացին. և յայս պայման գոլով Նոցա Հաղորդեցան ընդ միմեանս. և ետ Անիկտոս մատուցանել Պօղիկարպեայ պատարագ յեկեղեցւոջ, և խաղաղութեամբ մեկնեցան ի միմեանց. և եր խաղաղութիւն յամենայն եկեղեցիս, յորս պահէին և յորս ոչ պահէին: Եւ եբանոս արժանաւոր ըստ իւրում անուանն օրինակաւս այսու խաղաղարար երևեցաւ, վասն եկեղեցւոյ խաղաղութեան յորդոր լեալ և պատգամաւոր: Քանզի ոչ միայն առ Վիկտոր, այլ և առ բազում գլխաւոր եպիսկոպոսունս եկեղեցեաց ըստ օրինակիս ըստ այսմիկ գրեաց վասն խնդրոյս յուզելոյ:

ԳԼՈՒԽ ԻԵ.

Թէ ո՛րպէս եղև մի միաբանութիւն հաւատոյ ընդ ամենայն տեղիս վասն տօնի Զատկին:

Իսկ եպիսկոպոսունք՝ որ ի կողմանս Պաղեստինացւոց, զոր և յառաջ քան զսակաւ մի յիշեցաք, Նարկիսոս և Թէոփիլոս, ընդ նոսին և Կասիոս Տիւրացւոց և Կլարոս Պաղոմեացւոց եպիսկոպոսք, և որք միանգամ գումարեցան միաբան ժողովով սակս խնդրոյս

զորգեցան ընդ միմեանս, և յեկեղեցւոջ ետ Անիկտոս Պօղիկարպոս մատուցանել պատարագ իւրով հրամանաւ, և խաղաղութեամբ մեկնեցան ի միմեանց. իրրու յամենայն եկեղեցիս խաղաղութիւն եր այնոցիկ որ պահէին, և այնոցիկ որ ոչ պահէին: Իսկ Իրինէոս որ կատարեալ միաբանի անուան իւրոյ, զի արգեամբք եր նա խաղաղարար, զի այս է թարգմանութիւն անուան նորա, զայս խընդրեր և աղաչէր վասն խաղաղութեան: Եւ նոյն իսկ ինքն ոչ միայն առ Բելկոսոր, այլ և առ բազում մարգիկ որ էին յեկեղեցիս, զսա այսց նմանութեան գրեաց ի Թղթի Իւրում վասն այսր խզձի: Իսկ եպիսկոպոսքն որ եղեն ի կողմանս պաղեստինացւոց, այնոքիկ որ յառաջ քան զսակաւ մի յիշեցաք զնոսա. Նարկիսոս * և Թէոփիլոս, և ընդ նոսին Կասիոս ** եպիսկոպոս եկեղեցւոյն Ժուբրացւոց, և Կաղերոս պաղոմեացւոց, և որ միանգամ ժողովեցան

* Մեր որ. Կարկիսոս.
** Մեր որ. Կասիոս.

այսօրիկ, գրելով վասն տուչութեանն յառաքելոց անտի կարգաւ Հասելոյ առ նոսա վասն տօնի Յատկին՝ ի կատարածի գրոյն յաւելուն այսպէս. փոյթ յանձին կալարուք տալ տանել զպատձէնն Թղթոյս այսօրիկ ամենայն եկեղեցեաց, զի մի եղիցուք մեք պատձառաք այնոցիկ, որ դիւրաւ մոլորեցուցանեն զանձինս իւրեանց։ Եւ զայս ևս յայտ առնեմք ձեզ, զի յայսմ աւուր զոր մեքս առնեմք, զնոյն և Յովհաննէսպրիա առնեն, զի ի միևնոյն երթան առ նոսա Թուղթք, և ի նոցանէ առ մեզ գան, զի ի միում հաւասարութեան ի միասին եղիցի մեզ առնել զօրս զայս սուրբ։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Թէ քանի՛ս երդ մեզ Երաևնոս իշոյ գեղեցիկ հաևձաւոյն յիշատակս։

Բաց ի գրոցս այսոցիկ և ի Թղթոցս՝ զօրս յիշեցաք, են Երաևնոսի և խօսք ընդդէմ հերձանոսաց, կարի իսկ հակիրճ՝ այլ բազմաշահ, մանագրեալ ցաղագս գի-

---

*ընդ նոսա, գրեցին վասն տուչութեան առաքելոցն՝ զոր ընկալան նոքա վասն զատկի. և ի կատարածի գրոյն յաւելուն և ասեն զայս բանս. Թէ պատձէն զայսոր Թղթոյ փոյթ յանձին կալարուք, և տուք տանել այլոցմ * եկեղեցեացն, զի մի եղիցուք մեք պատձառաք այնոցիկ որ դիւրաւն մոլորեցուցանեն զանձինս իւրեանց։ Եւ զայս ևս յայտ առնեմք ձեզ, զի յայսմ աւուր որ մեք առնեմք՝ առնեն և ազէքսանդրացիք. զի ի միևնոյն երթան առ նոսա Թուղթք, և ի նոցանէ առ մեզ գան, զի ի միում հաւասարութեան ի միասին եղիցին առնել զօրս զայս սուրբ։*

Քաևևերորդ վիճերորդ. թէ քանի՛ խօսս ընկալաք մեք ի պիդոթևևեի անտի իրինևոսի.

Բայց հանդերձ այսու խօսիւք և Թղթով զոր ասացաք մեք և Թէ են Երինևոսի, է նորա գտաւեալ խօսք ընդդէմ հերձանոսաց համառօտ, զի է ի նոսա շահ բազում, և գրեալ է ի վերոյ նորա

---

* Թերևս՝ ամենայն եկեղեցեացն։

տուԹեան։ Եւ այլ միւս ևս Ձառ ընծայեալ Մարկիոնի ուրուքն եղբօր ՚ի ցուցակուԹիւն քարոզուԹեան առաքելոցն. դարձեալ և գիրս այլ և այլ տրամախոսուԹեանց, յորս և յիշատակէ զԹուղթն Եբրայեցւոց և զգիրս որ ԻմաստուԹիւն ասի Սողոմոնի [18], ա-ծելով ՚ի նոցունց ինչ ինչ վկայուԹիւնս։ Այսոքիկ են գրուԹիւնք Երանոսի Եկեալք ՚ի մեզ ծանօԹուԹիւն։

Ցաւուրս յայսոսիկ կացեալ Կոմոդոսի յիշխանուԹեան իւրում զամն երեքտասան և մեռաւ, զոր պատուհաս Սեւերոս յետ վեցամեայ միայն տէրուԹեան Պերտինաքսեայ։

ԳԼՈՒԽ ԻԷ.

Եւ ո՛յք դարձեալ երևելիք եղեն ՚ի ժամանակին յայնմիկ։

Այս քազումն սակայն քազում յիշատակք են ցայսօր վաստակոց Հանճարոյ այնր ժամանակի նախնի մատենագրաց եկեղեցւոյ. և որ ՚ի մեզ ծանօԹուԹիւն եկին՝ Հերակղեոնդեայն խօսք Ա՛ռաքեալն. և Մաթ-

ԹէՎան խմաստուԹեան. և այլ միւս ևս որ գրեալ է եղբօր միւմ, զի անուն էր նորա Մարկիոնէ՝ վան օրինակի քարոզուԹեան առաքելոցն. և միւս ևս գիրք մաքառումն ընդդրանաւ, զի ՚ի նմա յիշատակէ զԹուղթն Հեբրայեցւոց, և զԶգածուԹիւնն Սողոմոնի, և եղ ՚ի նմա ՚ի բանից անտի նոցա։ Գիրք եակ Իրինէոսի զոր մեք գիտացաք սոքա են։

Քաւևերորդ նօրևներորդ. վան այնց քազմաց որ եղևն յայնմ ժամանակի երևելիք։

Իակ երբե եկաց Կոմոդոս յարքայուԹեան անդ զերեքտասան ամ և մեռաւ. և եկաց Պարտինաքէս զվեց ամս. յետ մեռանելն Կոմոդեայ Սեւերոս կալաւ զնոն նորա։ Այլ խօսք բազումք են որ կան մինչև յայսօր ժամանակի առ բազումս, զնին մարդկան մանկանց եկեղեցւոյ, որ եգեալ էր բազում պնդուԹեամբ։ Իակ զոր մեք գիտեմք, է Հերակղեոսին զոր ասաց Ա՛ռաքեալ։ Եւ Մաթ-

սիմոնի վասն ստէպ 'ի հերետիկոսացս անտի յղեղեղ-
լոյ ինդրոյն, Թէ ուստի է չար, և Թէ զինչ բնութիւն
հիւղեայն։ Դարձեալ Կանդիտոսին վասն Վեցօրեայ
աւուրցն. և Ապիոնի վասն սորին պատճառացս առա-
ջարկութեան. նոյնպէս և Փեստոսի վասն Յարու-
Թեան 'ի մեռելոց, և Ալբաթիանու ինչ ինչ Ճառք, և
այլոց բազմաց։ Զորոց չունելով պատճառս և ժամա-
նակ կարևոր տալոյ զգիր, վասն որոյ և ոչ գրի-
շատակս անդամ նոցա 'ի պատմութեանս նշանագրե-
ցաք։ Եւ այլոց բազմաց, զորոց չունիմք տալ զանուա-
նըս՝ հասին առ մեզ գրութիւնք. որոց աստուածեղէն
սուրբ տառիցն մեկնութիւնք հաւաստեաւ յայտ առ-
նեն զձշմարտութիւն հաւատոց նոցին՝ Թէ և ման-
կունք են եկեղեցւոյ։ Սակայն անյայտ են մեզ այնու,
զի չունին գրութիւնք նոցա զանուանս հեղինակացն
մակագրեալ 'ի վերայ։

մնոյ վասն այսր խղճի, զոր աշակերտին ամենից 'ի Հերձուածոյ ան-
տի, Թէ ուստի է չար. և վասն եթէ Հաստատելով Հաստատ Է-
ղոյ. գարձեալ Կանդիտոսի՝ վեցօրեայ աւուրցն. և Ափիոնի վասն
սորին այսր Ճառից. և Փեստոսի վասն յարութեան 'ի մեռելոց.
և մես և Ճառս Ջաբիանոսի, և զայլոց բազմաց, այնուհետև որ վասն
զի չիք մեզ պատճառք՝ ոչ եգաք ժամանակս նոցա յայս գիրս. և
ոչ զնիշատակս նոցա 'ի պատմութեան նշանակեցաք։ Եւ այլք բա-
զումք այնոքիկ զոր ոչ կարեմք մեք երկրորդել զանուանս նոցա.
սակաւք գնոսս նոցա, զի էին չնմարիտ հաւատովք մանկունք եկեղե-
ցւոյ, որպէս ցուցանեն Թարգմանութիւնք նոցա։ Բայց չեն յայտնի.
վասն զի չեն գրեալ անուանք նոցա որ գրեցին զնոսա։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Վասն այնոցիկ՝ որ ի սկզբանէ աւետի զհետ գնացին հերձուածոյն Արտեմոնի, թէ որպիսի՛ք ոմանք էին սոքա ի գնացս իւրեանց և ի վարս, և թէ գիա՛րդ հաւատարմակեցան եղծանել զգիրս սուրբս։

Ի գիրս միոյ ուրուք ի յառաջապատումս մերս մատենագրացն այնոցիկ երկասիրելոյ ընդդէմ աղանդոյն Արտեմոնեայ, այն որ հնարեցաւն նորոգել զմոլորութիւն Պաւղոսի Սամոսատացւոյ առ մեզ, ի պատմութիւն ինչ կարի ի դէպ առաջարկեալ գրոցս։ Եւ զի այս աղանդ՝ դուշնաքեայ մարդ ասէ զՔրիստիչն մերս, յանդիմանեալ կշտամբէ զնա խօսս այս թէ ոչ ի բազում ժամանակաց հետէ մոլորեալ է նոցա նորասիրութեամբն, քանզի որ վերակացուքն էին աղանդոյն՝ հպարտացեալ պարծէին կանխագոյն յոյժ գոլ եւ յետ այլոց բանից բազմաց յանդիմանութեան ընդդէմ ստութեան հայհոյութեան նոցա՝ գայ ապա կարգաւ և յայս պատմութիւն զայս ձև օրինակ. Ամենեքեան առաջինքն, ասէ, և առաքեալք Քրիստին, զայս

Քաւեներորդ ուրեորդի. վասն այնոցիկ որ հղին խոկգրաւեր յաղանդոյ աւետի Արտեմոնի. և որով օրինակաւ էին նորա. և թէ որպես հաւատարմակեցան նորա եղծանել զգիրս սուրբս։

Եւ յիմաստնոց ասեմ յայսցանէ վասն որոց ասացաք մեք ի խօսս զոր եղեալ է մեծաւ հոգաբարձութեամբ միջ ուրուքն ի նոցանէն, ընդդէմ աղանդին Արտեմոնեայ. այն որ հնարեցաւն նորոգել զնա ընդդէմ մեր, Պօղոս շնչաւոր։ Զոյ ի նմա պատմութիւն որ պէտոյ են այսմ ճառիդ զոր արկեալ է մեր. զի այս ազատ ասէ վասն փրկչին մերոյ՝ Թէ մարդ է զոր արկեալ է մեր։ Բայց յանդիմանեալ կշտամբէ զնա, Թէ ոչ յառաջ քան զբազում ժամանակս պատահեաց յիկեղեցւոյ։ Քանզի հպարտացեալ պարծէին այնոքիկ որ վերակացու են նորա Թէ կանխագոյն է նա։ Եւ եգ նա և այլ բազում վասն յանդիմանութեան սուտ բանիցն հայհոյութեան նոցա և պատմէ այսպէս. Աստ Թէ ամենայն առաքինքն և նոքա յառաքելոցն ընկալան և ուսան զնոյնս զայս զոր ասացաքս. և պահեցին

այսպէս ընկալեալ և ուսուցին, և պահեցին զՀըշ-
մարտութիւն քարոզութեան մինչև ՚ի ժամանակս
Վիկտորի, որ երեքտասաներորդ էր ՚ի Պետրոսէ ե-
պիսկոպոս ՚ի Հռոմ քաղաքի. իսկ ՚ի Զեփիւռինեայ
յաճռոգակալէ նորա և անդր եղեաւ Հշմարտութիւնս։
Եւ թերևս արժանի լինէր Հաւանութեան բանս եթէ
ոչ նախ գիրք սուրբք հակառակ ընդդէմ նոցա զին-
ին։ Դարձեալ են և գրութիւնք ումանց եղբարց մե-
ծոց, որ երիցագոյն են քան զժամանակս Վիկտորի, և
խօսեցան նոքա ընդդէմ հերձուածոց վասն Հշմար-
տութեանն, և ընդդէմ աղանդոց ժամանակին։ Ջնուա
տինեայ ասեմ, զՄիլտիադեայ, զՏատիանոս և զկղե-
մէս և զայլոց բազմաց, յորս յամենեսեան ՚ի նոսա աս-
տուածաբանի Բրիստոս։ Իսկ զերանոսին, զՄելիտո-
նին և զայլոցն ով է որ ոչ գիտէ զգիրս, որ քարոզեն
վասն Բրիստոսի թէ Աստուած է և մարդ։ Սաղմոք
իսկ և երգք ՚ի նախնեաց անտի յեղբարց հաւատա-
ցելոց յօրինեալք՝ աստուածաբանելով փառաբանեն
զԲրիստոս զԲանն Աստուծոյ։ Եւ զիարդ ապա ընդ այս-
քան ամս աւետարանելով Հշմարտութիւն վարդապե-
տութեանս եկեղեցւոյ, մարթ ինչ իցէ լինել որպէս

ասէ Հշմարտութիւն քարոզութեան մինչև ՚ի ժամանակս Բենկտո-
րի, որ էր նա եպիսկոպոս երեքտասաներորդ ՚ի Հռոմ քաղաքի
յետ Պետրոսի, ՚ի Զեփերինոսէ իսկ՝ այն որ կալաւ զինի նորա։
գործեցաւ աստուածութիւնն ՚ի վերայ Հշմարտութեանն։ Բայց այս թե-
րևս արժանի էր հաւանութեան, թէ ոչ նախ գիրք սուրբք կան հա-
կառակ ընդդէմ նոցա։ Բայց են և գիրք ումանց յեղբարց մերոց, որ
հին են քան զժամանակս Բենկտոսի, որք գրեցին ընդդէմ հերձուա-
ծոց վասն Հշմարտութեան, և ընդդէմ աղանդից որ էին յայնմ ժա-
մանակի. ասեմ իսկ Յուստինոսի և Մելտոնի և Տերտիա-
նոսի և Կղեմենտեայ և այլոց բազմաց. զի ամենեքեան սուրբ ասեն
վասն աստուածութեան Բրիստոսի։ Իսկ զերենէոսի և զՄելիտո-
նի և զայլոցն՝ ով է որ ոչ գիտէ զգիրս նոցա, որ քարոզեն վասն
Բրիստոսի թէ Աստուած է և մարդ։ բայց վարդապետութիւնք
և երգք* որ գրեցին ՚ի հաւատացեալ եղբարց անտի, իսկզբանէ փա-
ռաւորն զԲրիստոս զանն Աստուծոյ, և ասեն վասն աստուա-
ծութեան նորա։ Արդ զիարդ յայս ամենայն ամս աւետարանի Հշ-
մարտութիւն եկեղեցւոյ, մարթի ինչ իցէ լինել այսմ զոր ասեն նո-
քա, թէ մինչ ՚ի ժամանակս Բենկտորի քարոզէին այս միաբ. կամ

* Յօր. Հերոդիոս-Բիոն. Գ. որ երեկն.

աւետն նոքա, թէ մինչ ՚ի ժամանակս Վիկտորի այնպէս քարոզէր, զոր օրինակ և ինքեանք արդ վարդապետեն կամին։ Կամ զիարդ ոչ ակնածեն զպատրել նոքա այսպիսի զՎիկտոր. մինչդեռ քաջ գիտեն զի Վիկտոր՝ զհաղարտապարդն Թէոտոդոս, որ գլուխն էր և հայր այսր աստուածբարոյ խոտորմանն, որ մարդ դուզ նաբեայ ասաց նախ զԲրխստոս, մերժեալ տարապարեցաւ ՚ի հաղորդութենէ եկեղեցւոյ։ Չի եթէ նոյն միաբ էին և խորհուրդք Վիկտորի, որպէս և ամբաստիչն հայհոյութիւն նոցա ուսուցանէ, զիարդ ապա մերժէր նա զԹէոտոդոս՝ զգտիչ աղանդոյս։ Վասն Վիկտորի այսչափ. որ զամս տասն կացեալ ՚ի պաշտաման իւրում, կալաւ յետ նորա զաթոռն Չեփիւռինոս՝ յոմէ ինձ ինձերօրդի Թագաւորութեան Սեւերեայ, ՅետԱյսորիկ նոյն ինքն հեղինակ գրոյս՝ որ ընդդէմ հերձսիոմպատիս աղանդոյս այսորիկ, յաւելեալ և զայլ ևս բանս վասն գործոյն յամն Չիւփիւռինեայ, յարէ ՚ի նոսին այսպէս. Յիշեցուցից, ասէ, եղբարց՝ ինչ մի որ յաւուրս մեր գործեցաւ, որ եթէ ՚ի Սոդոմ գործեալ էր՝ կարծէմ՚ի խրատ զգօնութեան ածէր զնոսա։ Ա.յր մի էր Նատալիոս անուն խոստովանող՝ ոչ ՚ի վաղուց այլ ՚ի մեր ժամանակս, որ մոլորեցաւ զհետ Սկկլեպիոդոտեայ և Թէոտոդոսի ուրումն սեղանաւոր

զիարդ ոչ ակնածեն զպատրել զԲիկտոր այսպիսի *, իբրև գիտեն Չէմարտութեամբ թէ Բիկտոր զԹէոտոս որ էին գլուխ և հայր այսր խոտորման որ ուրանայ յԱստուծոյ տարագրեաց զնա՚ի հաղորդութենէ կյորդութեան, որ նախ նա ասէր վասն Քրիստոսի՝ թէ մարդ դուզնաքեայ է։ Չի թէ Բիկտոր՝ որպէս ասեն՝ հաւատայր ըստ ուսմանն հայհոյութեան նոցա, զիարդ ընկենոյր նա զԹէոտոս, այն որ նա եղև գրիչ այսր աղանդի. և զայս ասայ վասն Բիկտորի։ Իսկ իբրև եկաց ՚ի պաշտաման իւրում զամանամ, կալաւ յետ նորա Չեփրանոս յամին ինձերօրդի Թագաւորութեան Սեւերեայ։ Եւ յաւելու և ասէ. այն որ եղ զայս խօսս վասն այնորիկ որ սկսաւ յայս աղանդ, վասն որոյ ասացաք զնմանէն։ Եւ այլ միւս ևս գործ որ եղև յամն Չեփրիանոսի, և գոյ այսու բանիւ այսպէս. յիշեցուցից՝ ասէ՝ եղբարց իբր մի որ յաւուրս մեր գործեցաւ, այն որ աչին ունիմ եթէ գործեալ էր ՚ի Սոդոմ՝ Թերևս խմաանացուցանէր զնա։ Ա.յր մի էր զի անուն էր նորա Ախաղիոս, և էր նա խոստովանեալ. բայց ոչ յաւաջագոյն էր նա, այլ ՚ի մեր ժամանակս։

* Յօր. պատճ։

*բի. և էին երկոքեան սոքա աշակերտք Թէոդոտոսի խաղաղասէրգին, զորոյ զկարծեացն մոլորութենէն կա-
լաւ և ասել զնեսաբաս յիմարութենէ կանխեցաւ
ասացաք, և թէ որչէաց զնա 'ի հաղորդութենէ կը-
ցորդութեան Վիկտոր եպիսկոպոս Հռոմայեցւոց։ Եւ
Հաւանեցուցին սոքա զնատալիոս կարգել նմա ուխտիկ
և կոչել զնա եպիսկոպոս աղանդոյն. զի եղիցի նա առ-
նուլ 'ի նոցանէ ամսոյ ամսոյ Հարիւր յիսուն դահե-
կան։ Իբրև գնացեալ յարեցաւ նա 'ի սոսա, ժամա-
նակս բազումս 'ի ձեռն տեսչեան խրատեալ լինէր 'ի
Տեառնէ մերմէ. զի Աստուած ողորմած և Տէր մեր
Յիսուս Քրիստոս ոչ կամեցաւ թէ լիցի նա արտաքոյ
եկեղեցւոյ և կորիցէ, որ վկայն եղև չարչարանացն նո-
ցա։ Եւ իբրև յուշացեալ անփոյթ առնէր նա զտե-
սիլն, որսացեալ պատուոյն գահերիցութեան առ նո-
սա, և զօշաքաղութեամբն որ զաւազան կորուսից, 'ի
վախճանի ապա չարաչար գանակոծ տանջեցաւ 'ի
հրեշտակաց սրբոց զամենայն գիշերն, և կանխեալ
նորա ընդ առաւօտն, զգեցաւ քուրձ և ցանեաց գլ-
խեաւ մոխիր, և բազում փութով սկսաւ ուժգին
արտասուօք անկանել առ ոտս Յեփիւռինոսի ե-
պիսկոպոսի. ընկենայր զանձն իւր և թաւալէր առ*

Զսա մոլորեցուցին երբեմն Ակղեպիգոտոս և Թէոդոտոս միաբանք, և էր սա սրտակիցս։ Էին սոքա երկոքին աշակերտք Թէոդոտոսի, այն որ ասացաքն զնմանէն յառաջագոյն. Թէ վասն զորս մնաց յիմարութեան որոշեաց զնա 'ի հաղորդութենէ կցորդութեան Բիկտորոյ եպիսկոպոսի. Հաւանեցուցին իսկ զԱնատալիոս, զի եղիցի սուրհանդակ յայսմանէ, և կոչեացի եպիսկոպոս այնոր ազանդի, և եղիցի նա առնուլ 'ի նոցանէ ամսոյ ամսոյ հարիւր և յիսուն դահեկան։ Իսկ իբրև ընդառնացաւ նոցա, ժամանակս բազումս 'ի ձեռն տեսչեան խրատեալ լինէր 'ի տէառնէ մերմէ. Իսկ Աստուած ողորմած և տէր մեր Յիսուս Քրիստոս ոչ կամեցաւ թէ լիցի նա արտաքոյ քան զեկեղեցի և կորիցէ, քանզի եղև նա վկայ չարչարանաց նորա։ Բայց քանզի լքեալ մաքս հայեր նա ընդ տեսիլն քան զոր ասացաքն լինէր նա 'ի ձեռն գլխատութեանն որ առ նոսա և զշարաքարութեանցն որ կրեաւ ասեն։ Իսկ յետոյ ապաշխարեաց 'ի հրեշտակաց սրբոց. զամենայն գիշերն չարչարեցաւ մեծապէս։ Եւ նորա ժամսայն կանխեաց ընդ առաւօտն և զգեցաւ քուրձ և ցանեաց խոլեաւ մոխիր, և բազում փութով սկսաւ ուժգին արտասուօք անկանել առ ոտս Յեփիւռինոսի եպիսկոպոսի. և ընկենայր զանձն իւր առաջի ամենայն մարդոյ, ոչ առաջի այնոցիկ միայն որ

ոտն՝ ոչ վիճակաւորացն միայն, այլ և առաջի ժողո-
վըրդեանն, և շարժէր արտասուօք իւրովք զԹո-
Թիւն պորովալից եկեղեցւոյ ողբըմածին Քրիստոսի,
սրտառուչս աղաչէր և ցուցանէր զաշխէպն վանն
Քրիստոսի ընկալեալս, և հաղիւ ուրեմն ի հաղորդու-
Թիւն կացորդութեան ընկալեալ լինէր: Բնր գիցուք և
զայլ ևս բանս մատենագրիս ընդդէմ հերետիկոսացս
այսոցիկ՝ որ ունի օրինակ զայս. Զգիրս սուրբս, ասէ,
աներկիւղ համարձակութեամբ եղծին ապականեցիկս
սոքա, զկանոնս առաջին հաւատոցն ապաիստ արարին
և զՔրիստոս ոչ ճանաչեն, և ոչ քննեն Թէ զինչ ա-
սեն գիրք Աստուծոյ. այլ Թէ քանի ձևս խելամտու-
Թեանց հնարել կարիցեն ի հաստատութիւն անաս-
տուած ամբարշտութեան իւրեանց տքնին անխոնջ:
Եթէ օր բան ինչ աստուածեղէն տառից առաջի
արկցէ նոցա՝ խուզեն և քննեն եթէ խառն կամ ան-
ջատ հաւաքաբանութեամբ պատասխանի առնել մտը-
Թասցեն: Այսպիսի արարեալ զգիրս սուրբս Աստու-
ծոյ և կրթին ուսանին զերկրաչափութիւն իբրու Թէ
յերկիրէ գոլով, զերկրաւորս խօսին, և զոր ի վերուս-
տըն եկն՝ ոչ գիտեն: Զի ոմանք ի նոցանէ փութով
պնդութեամբ զնչկղիդէան պաշտեն, ընդ Աբիստո-
տէլ և ընդ Թէոփրաստ հիանան, և Գաղենոսի երկըր-

էին յաստիճանի անդ եկեղեցւոյ, այլ և առաջի ժողովրդեան. և հեղոյր նա զարտասուս իւր և առաջի ողորմած եկեղեցւոյ Քրիս-
տոսի ողորմածի, և յոյժ աղաչէր և խնդրէր ի նոցանէն և ցուցա-
նէր զնչեղս վիրացն զոր ընկալաւ, և հաղիւ ետուն նմա զխաղաղու-
Թիւն կացորդութեան: Եւ ընդ այս բանս յարեալ են և այլ բանք
սորին այսոր օրինակագրի զի են այսպէս. Զգիրս սուրբս՝ ասէ՝ աներ-
կիւղ համարձակ եղծին ապականեցին, և զկանոնն զառաջին հա-
ւատոցն զրկեցին, և զՔրիստոս ոչ ճանաչեն, և ոչ քննեն Թէ զինչ
ասեն գիրք Աստուծոյ. այլ Թէ որպէս ի կերպարանս մնջառման
գացեն, որ զրկէ զաստուածութիւն որդւոյ. և Թէ ոք կարացանէ
զնոսա բան ի գրոց Աստուծոյ, նախ նոքա հարցանեն Թէ այս բան
զորպիսի կերպարանս մնջառման կարէ առնել, խառնուածն եթէ
որոշուածն: Բայց Թողեն զգիրս սուրբս, և կրթին և ուսանին զյաճ
երկրի, իբրու Թէ որդիք իցեն երկրի. և յերկրէ խօսին. և զոյն որ
էին ի վերուստ՝ ոչ գիտեն: Զի Սկզբնէս առ ոմն մի ի նոցանէն փու-
Թով պնդութեամբ ուսանի. Արեւստաւորիչն և Թէոպրաստոս. յոյժ
պաճուճելիք էին առ նոսա, զի Գաղենոս առ ոմանս ի նոցանէ իբրու-
ցոյն Թէ երկրպագելով երկրպագի: Իակ նոքա յաւուրհատուս-

պագութիւն մատուցանեն։ Իսկ արդ որք զարուեստս անհաւատից ի հաստատութիւն կարծեաց մոլորու-թեան աղանդոց իւրեանց վարեն, և խորամանկու-թեամբ անաստուածից զպարզութիւն հաւատոց աս-տուածեղէն գրոց ապականեն, իբրու թէ չիցեն ամե-նևին մերձաւորք հաւատոց, զինչ պիտոյ իցէ ասել զնոցանէ։ Ասեն այսորիկ աներկիւղ համարձակ ձեռ-նամուխ եղեն ի գիրս Աստուծոյ, և ասեն թէ ուղղե-լով ուղղեմք զնոսա։ Եւ զի ոչ զուր տարապարտուց բամբասեմք ինչ զնոսա, այն որ կամի՝ կարէ ուսանել։ Եթէ կամիցի որ զօրինակս սուրբ գրոց փոխագրեալս ի նոցանէ բազդատել և կշռել ընդ միմեանս՝ գտցէ զնոսա ամենևին անմիաբանս։ տարաձայնք են արտաքս և Աակղեպիատեայն ի Թէոդոտոսեանցն։ Բազումք իսկ գտանին յօրինակաց աստի նոցա, զի փութով սխա-թեամբ փոխագրեալ են յաշակերտաց նոցին, որ-պէս նոքայն կոչեն զուղղագրեալս ի միոյ ի միոյ ի նո-ցանէ, բայց ստուգիւ ապականեալս և եղծեալս։ Դիար-ձեալ Հերմոփիլեայ օրինակէն չմիաբանին սոցայցն. և որք Ապողինեանքն կոչին՝ և ոչ յիւրեանս անգամ

թեանն այնոցիկ որ ոչն հաւատան, պաշտին ի խորհուրդս ապան-դինն նոցա, և ի խորամանկութիւն այնոցիկ որ առանց Աստուծոյ իցեն։ Խառնեալ են ընդ պարզ հաւատան գրոցն Աստուծոյ, իբրու և ոչ մերձենալով մերձենային նոքա առ հաւատան։ Զինչ պիտոյ է մեզ ասել զնոցանէն։ վասն այսորիկ աներկիւղ համարձակ ձեռ-նամուխ եղեն ի գիրս Աստուծոյ, և ասեն բան։ ուղղելով ուղղեմք զնոսա։ Այն որ կամի կարէ ուսանել, եթէ որ կամի հանել զօրինակ զմիոյ միոյ ի նոցանէ և ընծեռնուել զնոսա ընդ միմեանս, գտցէ զնոսա զի երկմտեալ և բաժանեալ են ի միմեանց. զի բաժանեալ են Աակղեպիատեայն ի Թէոդոտոսեայն։ Բազումք իսկ գտանին ի գրոց անտի նոցա. քանզի փութով սխալեցան գրեն զնոսա աշակերտք նոցա՝ զուղղելոն զմիոյ միոյ ի նոցանէն, օրպէս և նոքայն կո-չեն զնոսա. բայց են նոքա եղծեալք և ապականեալք։ Բայց գտ-նեմ Հերմոփիլեայ սուտ ոչ միաբանին. իսկ Ապողինիդեայն * և ոչ նոքա նոցայնոցն միաբանին։ Զի թէ որ ընծեռցցի զայնոցիկ որ յառաջագոյն ուղղեցան ի նոցանէ ընդ այնոցիկ որ յետոյ ապակա-նեցին, գտանէ թէ ոչ միաբանին ընդ միմեանս։ Այլ թէ քանի է ժամանակն այս մեզացս, թուի թէ և նոքա Հարտատ գիտեն. կամ ոչ հաւատան եթէ ի Հոգւոյն սրբոյ առացան Գիրք սուրբք. և են նոքա առանց հաւատոց կամ զանձինս իւրեանց խնամատուս համա-

* Յօր. Կոդոֆ-Ըէրդն։

միաբան գտանին։ Զի Թէ ոք կշռելով ընթերցցի զայ-
նոսիկ՝ զոր յառաջագոյն յարդարեաց նա ըստ մտի,
ընդ այնոսիկ՝ զորս յետոյ ասպա յեղաշրջեաց, գտցէ
ամենևին իսկ անմիաբանս ընդ միմեանս։ Այլ Թէ
քանի՛ է ժպրհուԹիւն այս մեղացս, Թուի Թէ և նո-
քա Ճարտար գիտեն. զի կամ ոչ հաւատան Թէ
Հոգւով սրբով ասացան Գիրքը սուրբք և անհաւատք
են, կամ զանձինս իւրեանց իմաստունս համարին քան
զՀոգին սուրբ. և զինչ այլ են նոքա, բայց Թէ դի-
ւահարք։ Զի ոչ կարեն ուրանալ Թէ չիցէ նոցա այս
ժպրհուԹիւն. զի ձեռնագիրքն նոցա են օրինակքն, և
ոչ՝ ի նոցանէ՝ յորոց աշակերտեցան նոքա՝ ի հաւատս
Քրիստոսի, զայսպիսի ընկալան գիրս, և չիք նոցա ցու-
ցանել բնագիրս՝ յորոց առին զնմանն։ Քանզի ոմանք
՝ի նոցանէ ոչ միայն կամեցան փոխել զգիրս սուրբս,
այլ և սպառ սպուռ ուրացեալ զօրէնս և զմարգարէս,
՝ի չնորհս անօրէնն և անաստուած մոլորուԹեան իւր-
եանց՝ ՝ի վիհս յետին կորստեան խարդաւանեցին
զանձինս։ Եւ վասն այսոցիկ ասացաւ այսչափ։

րին քան զՀոգին սուրբ, զինչ և այլ ինչ են նոքա՝ քան Եթէ
դիւահարք, զի ոչ կարեն նոքա ուրանալ Թէ չիցէ նոցա այս ժպրհ-
հուԹիւն. իբրու ձեռագիր իւրեանց գրեն յայնցանէ ուսոի աշակերտ-
ուեցան նոքա, ոչ ընկալան նոքա այսպէս զգիրս. և չիք նոցա ցու-
ցանել Թէ ուսոի գրեցին նոքա զօրէն ... ՝ի նոցանէ ոչ զի փոխե-
լով փոխել զնոսա կամէին, այլ սպառսպուռ ուրացան յօրինաց և
՝ի մարգարէից, ուսոմանք իւրեանց՝ այն որ առանց օրինաց և ա-
ռանց Աստուծոյ է, և ՝ի պատճառս մոլորուԹեանն ՝ի վախճան
կորստեան ընկեցան։ Եւ վասն այսոցիկ մինչ ցայս վայր պատ-
մեցաք։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

ԳԼՈՒԽ Ա. [1] — « Ախոյեանին վիճակելոց »։ Եւ զի օրինք էին ըմբշաց մնամաքառից երկու երկու հանել ՚ի կռիւ, և յաղթողացն գառնալ մնամաքառել ընդ միմեանս, մինչև ՚ի բազում ամենից անտի ախոյենից միայ մարտ ուժիք յաղթական, որում և հասանէր ապա պսակիլ. այս է ասէն ՚ի բազմապատիկ մրցմունս ագռնին յաղթեալ։

ԳԼՈՒԽ Գ. [2] — « Եւ առ նիւթեբոս եպիսկոպոս Հռոմայ գրէին »։ Ի բանիկ անտի Տեբռուհեանու եթէ և քահանայապետն Հռոմայ ծանեաւ զմարթարէութիւն Մոնտանոսի և կանանցն Պրեսկայ և Մաքսիմիլլայ, զոյգ եղ եթէ ՚ի Թղթոյ ասաի վկայիցն Լուգդունացւոց և ՚ի կեղծաւպատիր ներգործեանէ Մոնտանեանց պատրեալ քահանայապետս գրէր եկեղեցեացն Ասիացւոց ընդունել զնոսա ՚ի հաղորդութիւն, այլ ընդ հռոմ խրատել ՚ի Պրաքսեայ ասելովէ ասիացւոց, զնակառակ առաջնոյն գրելով ըստ նմա խորհրդին իւրոյ Անիկիտեայ՝ խոտոր մերժեաց զնոսա։

ԳԼՈՒԽ Ե. [3] — « Եղբայր ինքնակալին Մարկոս Աւրելիոս »։ Եղբայր ասէ ինքնակալին Անտոնինոսի զՄ. Աւրելիոս, ուր նոյն ինքն Մ. Աւրելիոս է և Անտոնինոս, որպ և եղբայրագիր Լուկիոս Վէրոս։ Այլ մարտագիրն ընդդէմ Գերմանաց և Սարմատացւոց ինքնին ըստ վկայելոյ պատմագրացն Մ. Աւրելիոս Անտոնինոսն էր։

... [4] — « Շանթաձիգ »։ Ըստ Դիոնի Կասսիոսի՝ որ զհռովմէական լեգէոնիչ կարգէ խօսս, գունդս այս երեք էր ժամանակաւքան զամն ինքնակալութեան Անտոնինոսի. և զի Ապողինար Տերտուղիանոս վկայելով եթէ ապօթիւք քրիստոնէից զօրականին ընկալան զանձրևն, չյանելոյն ինչ վասն շանթաձիգ անուան ապօթեացն գնդին, միայն՝ թէ ՚ի Մելիտինեցւոց անտի էր զօրականն. և Դիոնի առնէն զՇանթաձիգն գունդ ՚ի Կապպադովկիոյ, միաբանիցին թերևս այսու, զի և Մելիտինէ ՚ի Փռքեան Հայոց՝ էր ՚ի Կուսաստալուքենէ Կապպադովկիոյ, բայց թէ եղե յայնժամ գունդ մի ողջոյն ՚ի հաւատացելոց անտի կազմեալ, ըստ նորին Ապողինարի բանիցն՝ զորով զանց առնէ Եւսեբ, կայէ ոչ որպէս և ախորժէն։

ԳԼՈՒԽ Ը. [5] — « Յետ եղից նոցա յաշխարհէ »։ Որով չմիաբանութիւն երևի պատմելոցն Եւսեբեայ և Պապիայ և Կղեմեսի Աղէքսանդրացւոյ. զի յեօթներորդ առ կենդանութեամբ Պետրոսի առացին գրեալ զաւետարանն իւր Մարկոս, և առ յետ եղից նորա յաշխարհէ։ Որով յայտ է թէ չեն ՚ի հաւատոց այսոքիկ, և գժուարինք ՚ի քննութիւն։

...[6] — Եգեն արդարև 'ի նահինեաց անտի հարց՝ որ առ Պետրոսիաս արդեւով Ղագրոսի ասացին լեալ զմեռանելութիւն սրբոցդ տաճիցն, և յոլովագոյնք առ եղբայրսեաւրն Պաղեստաւս. և յետոյ այս առ հասարակ ընդունելի լեալ։ Եւ յերեսուն անդ երկմտութենանս պատճառս. զի Պաղեստիոյ եղբայրսեաւրն երկամաս գահակից հօրն լեալ, որ ինչ առ կենդանութենէն Պաղեստիոյ Ղագրոսի սկսեալ էր ջանիւք Վեմերացոյն փաղեցացոյն Թարգմանութիւնս այս, յետ մահուն նոցին՝ առ սրգեւով նորա եղբայրսեաւրեւ 'ի գլուխ եկ կատարեցաւ, որով և երաւամբ ի և հօրն և սրգոյն տալ զայդ պարծանս։

Գլուխ ԺԶ.[7] — « Ընդդէմ Միւսիոգենայ ». Աներևոյթ նոր է անունս այս 'ի գլխաւոր սրբոցն Մոնտանոսի. վասն որոյ թերևս ասացեալ լինի եթէ սա իցէ յառաջագոյն յիշատակելոյն Աղեքսիաս, կամ թէ զԱղեքսիոսդ զայդ Միւսիոգենս իցէ ընդեռնելի։

...[8] — « Զնկեզեցի տեղւոյն ». Ուր 'ի նահինեաց Թարգմանութենէն նիւեչէի Պոնտոսոյ ընդեռնումք, զանազանութեամբ մեռագրաց պլույլեալ. քանզի գիւրին է յոյժ 'ի յունական բառադէտոս որ է գեղ, և Ποντος Պոնտոս վրիպակաւ փոխանակել զբարս. այլ մեք երաւամբ զայս այսպէս եգաք։

...[9] — « Աառուածամարտսն առմեռելոց տրամեցան ». Եւ առ 'ի հին Թարգմանութենէն ՀԷՒՈՒՆԱ եգեալէ. նոյնպէս և առ առաքելութիւն է ձեռագրացդ ընդ ἀντιθέτους և ընդ ἀντιθέσους յոյց զերկերգն ընծայեալ, յոյժ 'ի գէպ Մոնտանեայ՝ որ մխիթարիչ Հոգի առաքելական ձեռն կոչէր, զի և բառգ ἀντιθέτους հակառակորդ մանաւանդ նշանակէ և ոչ վերակացու, որով և զմիանգամ եգեալն կրնկել էր։

Գլուխ ԺԸ.[10] — « Ընդդէմ խոսկեն Ադեքսիաեայ ». Վերբուսն ասա Միւսիոգեաս սկսեալ՝ զՄիւսիոգենդ անուն փոխէ յԱղեքսիաս. և Թէ զնորդ իցէ վրիպակդ այդ ընդ Միւսիոգենս և ընդ Ադեքսիաս չիմանամ։

Գլուխ ԺԸ.[11] — « Որոց վկայեն Նեղբեսաւուղք մեհենից ». Քանզի յԱթենս գմսոն շինուածոյն՝ որ 'ի յերին կողմն մեհենին Աթենասայ Բազպայեոյն էր կառուցեալ, յորում և զգանձն հասարակաց պահէին ὀπισθόδομος կոչէին, զոր և Նեղեոգոտ եգաք, ասել և որ յամենայն մեհենս գանձեր այս շինուած՝ էր փոխանակ գիւանի հասարակաց քաղաքացոց. ուր և յանցաւորաց չարագործութենէք արձանագրեալք հրատարակէին, ուստի զայս ակնարկէ ըստս։

Գլուխ Ի.[12] — « Վասն Միսակաւսէնեան ». Մակագրաւս այսու յոլովագոյն երկասիրութենէք են նախին հաւատացելոց ընդգէմ քաղմասաւսած բազմապետութեան հնէիանոսաց, յորում և զամենակալ վեհապետութեան Հօր յաւգանէին արարիչ համայնից և միաճնեան վարիչ։

Գլուխ ԻԳ.[13] — « Չի են որ կարծեն հնէ մի օր ». Զայս ըստս Երանոսի յայլ և այլ և 'ի բազմապատիկ յիսս ասին ասաւելագործութիւնք, և բազում հնդկերս յուզելոցն զապհոց, այլ հաւանական նագոյնն է Պերբոնեայ կարգինարի կարծիք՝ որ ոչ վասն Քառասնորդացն, այլ միայն վասն սրբոյ չարաշարեալն խնամոյ զրանդ ասա-

ցեալ. ի սոյն միտս առեալ և զբանս Դիոնիսեայ Ալեքսանդրացւոյ առ Բասիլիդէս, թէ « Վասն աւուրցն պահոց ոչ միօրինակ ունին սովնեքեան, ոմն՝ օրք յաւելուն և ոմն՝ օրք նուազեցուցանեն ». ոչ զՔրեստոնեութեացն անգուշա՝ որ նոցին է առ հասարակ ի կամ[ո]ղիկէ եկեղեցւոջ: Դարձեալ որ ասէն՝ չափել ոմանց ի պահն զառաքելական և զիջելոյ զաւասաւն ժամուն, ի յիշատակ քառասնօրեայ պահոց Փրկչին, այս է որ ի բնէ անհնարինն էր մարդոյ, առանց մասնաւոր աստուածայնոյն օգնականութեան, ժամս ընդ աւուրց փոխանակէին ի պահոդ սրբոյ չաբաթուն, այսինքն ի սպառ անսուաղութեան և ի ծոմն այսու գոնէա ի նմանութիւն Քրիստոսի Թևակոխել ըղձալով. և զայս ըստ բարեպաշտ եւանգան իւրաքանչիւր ազատ ընտրութեամբ:

... [14] — « Տային տանել զհաղորդութիւն ». Խմանալ է այսու զսովորութիւն եսիսկոպոսաց երբեմն, զի ի զատական տանս տաւաքին միանց յօրինայ անտի, զոր Հաշտութիւն կոչէին. որ էր նշանակ երաք և արգելամբք հաղորդելոյ ընդ միմեանս: Որ և յետոյ ուրեմն ի Լաւոդիկեայ ժողովոյն օրինաք արգելաւ:

Գլուխ ԻԶ. [15] — « Խնամատութիւն Սողոմանի ասացեալ ». Նշանական իցէ Թէրևս գնելն Եւսեբեայ զբառդ Սողոմանի առչեւզի նախնի հարք և եկեղեցական գրիչք զՎառական Սողոմանի Խնամատութիւն կոչէին. և որ այժմ. Խնամատութիւն Սողոմանի կոչին՝ վրիպակաւ կարծեմ յաւելեալ զյատկացուցիչդ. քանզի Հեգեսիպպոս և Երանոս պաշտեալ նովաւ չուան նմա զայդ մականիր:

ՅԱՆԿ ՎԵՑԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԵԱՆ

Ա. — Վասն Հալածանացն՝ որ եղեն յաւուրս Սահեայ։
Բ. — Վասն ի մանկութենէ անսուտ դաստիարակութեան Որոգինեայ։
Գ. — Թէ որպէս Որոգինէս զեռ եւս պատանեակ զոլով քարոզէր զբանն Աստուծոյ։
Դ. — Թէ քանիք ոմանք յաշակերտէլոց Որոգինի վկայութեամբ կատարէցան։
Ե. — Վասն Փոտամիենեայ։
Զ. — Վասն Կղեմեայ Աղէքսանդրացւոյ։
Է. — Վասն Յուդայի օրինակագիր գրչի։
Ը. — Վասն գործոց յանգգնութեան Որոգինեայ։
Թ. — Վասն սքանչելեացն՝ որ եղեն ի ձեռն Նարկիսեայ։
Ժ. — Վասն եպիսկոպոսացն Երուսաղէմացւոց։
ԺԱ. — Վասն Աղէքսանդրու։
ԺԲ. — Վասն Սերապիոնի եւ վասն Ծանուցեալ առ մեզ գրոց Նորա։
ԺԳ. — Վասն գրոցն Կղեմեայ։
ԺԴ. — Թէ քանի գիրս աստուածաբանէն ասացից լինել Կղեմէս։
ԺԵ. — Վասն Հերակլեայ։
ԺԶ. — Թէ որպէս փոյթ յանձին ունէր Որոգինէս վասն գրոց սրբոց։

ԴՊՐՈՒԹԻՒՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ։

Ա. — Ձհագ առաջին վասն Հալածանացն որ եղեն յաւուրս Սահեայ։
Բ. — Երկրորդ, վասն փութոյ յաժառաքեծան իւր խրեգենի, որբ՝ ի մանկութենէն իւրմէ։
Գ. — Երրորդ, զի մինչեւ ոտոյ էր իրիգինէս՝ քարոզէր զուսումն վարդապետութեանն Քրիստոսի։
Դ. — Զորրորդ, որ միանգամ ասկէ բանեցան ի ներքոյ ձեռն իրիգինէսի, վկայելով վկայեցան ի մարտիրոսութիւն։
Ե. — Հինգերորդ, վասն փոտամիենեայ։
Զ. — Վեցերորդ, վասն Կղեմենտեայ աղէքսանդրացւոյ։
Է. — Եօթներորդ, վասն Յուդայ օրինակագիր գրչի։
Ը. — Ութերորդ, վասն իրացն զոր գործեաց ժպրհամբ իրիգինէս։
Թ. — Իններորդ, վասն սքանչելեացն որ եղեն ի ձեռն Նարկիսեայ։
Ժ. — Տասներորդ, վասն եպիսկոպոսաց Երուսաղէմի։
ԺԱ. — Մետասաներորդ, վասն Աղէքսանդրեայ եպիսկոպոսի։
ԺԲ. — Երկոտասաներորդ, վասն Սերապիոնեայ եւ վասն խօսիցն որ եղեալ է Նորա։
ԺԳ. — Երեքտասաներորդ, վասն խօսիցն զոր գրեաց Կղեմենտոս։
ԺԴ. — Չորեքտասաներորդ, Թէ քանի գիրս յիշատակեաց Կղեմենտոս։
ԺԵ. — Հնգետասաներորդ, վասն Հերակլեայ։
ԺԶ. — Վեցտասաներորդ, Թէ որպէս փոյթ յանձին ունէր վասն գրոց սրբոց։

ԺԲ. — Վասն Մխիթարայ որ Թարգմանեաց զԳիրս։
ԺԳ. — Վասն Ամբրոսիոյ։
ԺԴ. — Թէ որպիսի յիշատակք են զՈրոգինէսի առ հետեւոսս։
Ի. — Թէ որոյ մատենագրեայ ժամանակին վաստակք առ մեզ հասին։
ԻԱ. — Թէ ոյք կացեն երեսփոխ եպիսկոպոսք ի ժամանակին։
ԻԲ. — Թէ որչափ ինչ Հիպոդիտոսեայ գրուածոցն առ մեզ հասին։
ԻԳ. — Վասն վաստակոց Որոգինէսի, և Թէ որպէս ընկալաւ նա զպատուական երիցութեան եկեղեցւոյն։
ԻԴ. — Թէ զինչ ինչ մեկնութիւնս արար Որոգինէս մինչ գնա յԱղեքսանդրիա էր։
ԻԵ. — Թէ զոր ի գրոց անտի յերկոցունց կտակարանացն սըրբոց որպէս ընդունելիս ի համար արարեալ Որոգինէս։
ԻԶ. — Թէ որպէս Հերակլիս կալաւ զեպիսկոպոսութիւն եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց։
ԻԷ. — Թէ որպէս հայհոյեին եպիսկոպոսքն զնոյն Որոգինէս։
ԻԸ. — Վասն հալածանացն որ յաւուրս Մաքսիմինեայ։
ԻԹ. — Վասն Փաբիանոսի, և Թէ զիարդ սքանչելիքք առ յԱպատածոյ եղև նա եպիսկոպոս Հռոմայեցւոց։
Լ. — Թէ քանի՞ աւակերաք եղեն Որոգինէսի։
ԼԱ. — Վասն Ափրիկանեայ ժամանակագրի։
ԼԲ. — Զոր՝ն և զորպիսիս մեկնութիւնս արար Որոգինէս ի Կենսաբեա Պաղեստինացւոց։
ԼԳ. — Վասն մոլորութեան Բերկլեայ։
ԼԴ. — Վասն Փիլիպպեայ կայսեր։

ԺԲ. — Լսեմնեւատանեբորդ, վասն Սիմեաքեայ որ Թարգմանեաց զԳիրս։
ԺԳ. — Լսեմնեւատանեբորդ, վասն Ամբրոսեայ։
ԺԴ. — Լսեմնեւատանեբորդ, Թէ որպիսի յիշատակք են վասն Լուրգինէսի։
Ի. — Քառանեբորդ, Թէ որպէս խոսք էին խմաստնոցեսք էին յայնմ ժամանակի։
ԻԱ. — Քառանեբորդ առաջնեբորդ, Թէ որչափ եպիսկոպոսք յայնմ էին յայնմ ժամանակի։
ԻԲ. — Քառանեբորդ երկրորդ, Թէ քանի՞ խոսք յայտնի են Հիպոդիտեայ։
ԻԳ. — Քառանեբորդ երրորդ, վասն փոխի պիդուհեան Լուրգինէսի զի որ ժամն եղև նա լինել երեց յեկեղեցւոյ։
ԻԴ. — Քառանեբորդ չորրորդ, Թէ որպես մեկնեհիմնա գրեաց յԱղեքսանդրիայ քաղաքի։
ԻԵ. — Քառանեբորդ հինգերորդ, Թէ զիարդ յիչէ Լուրգինէս զգիրս որ ընդունելոյց են յեկեղեցւոյ։
ԻԶ. — Քառանեբորդ վեցերորդ, զի Հերակլէ կալաւ զեպիսկոպոսութիւն եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց։
ԻԷ. — Քառանեբորդ եօթներորդ, եթէ որպէս կամ զիարդ հայհոյեին եպիսկոպոսքն զնոսեան։
ԻԸ. — Քառանեբորդ ութներորդ, վասն հալածանացն որ եղեն յաւուրս Մաքսիմինոսի։
ԻԹ. — Քառանեբորդ իններորդ, վասն Փիբիանոսի, Թէ որպէս կամ զիարդ սքանչելիքս նա սքանչելիցս, լինել նմա եպիսկոպոս ի Հռոմ քաղաքի։
Լ. — Լբեանեբորդ, Թէ քանի՞ աշակերտք նորին էրիկեհան։
ԼԱ. — Լբեանեբորդ առաջներորդ, վասն Փրիկանոսի։
ԼԲ. — Լբեանեբորդ երկրորդ, Թէ որպիսի մեկնութիւնս գրեաց Լուրգինէս ի կենսաբեայ պաղեստինացւոց։
ԼԳ. — Լբեանեբորդ երրորդ, վասն խոսորման Բերկեզեսոսի, և վասն Փիլիպպեայ։
ԼԴ. — Լբեանեբորդ չորրորդ, վասն Դիոնեսեայ որ կալաւ զեպիսկոպոսութիւնն զնոյն Հերակլեայ։

Լե. — Թէ որպէս Դիոնիսիոս յաջորդեաց զՀերակլ յեպիսկոպոսութեան։
Լզ. — Թէ որչափ ինչ այլ վաստակս վաստակեաց Որոգինէս։
Լէ. — Վասն հերձուածոցն Ակաքացւոց։
Լը. — Վասն հերձուածոցն Եղկեսխացւոց։
Լթ. — Վասն հալածանաց Դեկոսի, և Թէ որչափ ինչ վիշտս չաթ-չարանաց կրեաց Որոգինէս։
Խ. — Որ ինչ անդր անցին ընդ Դիոնիսիոս եպիսկոպոս։
Խա. — Վասն վկայիցն որ յԱղէքսանդրիա կատարեցան։
Խբ. — Եւ վասն այլոց ինչ յիշատակելոց ՚ի Դիոնիսիոս։
Խգ. — Վասն Նովատեայ և Թէ որպիսի ոք էր և զինչ հերձուած ազանդոյ նորա։
Խդ. — Գաւառութիւն Դիոնիսիոս վասն Սերապիոնի ուրուք։
Խե. — Թուղթ Դիոնիսիոս առ Նովատոս։
Խզ. — Եւ վասն այլոց Թղթոց Դիոնիսիոս։

Լե. — Երեսներորդ հինգերորդ, Թէ քանի փոյթ պեղումենան էր իրիցենոսի։
Լզ. — Երեսներորդ վեցերորդ, վասն հերձուածոց որ ելեն ՚ի կողմանս արեւելից։
Լէ. — Երեսներորդ եօթներորդ, վասն ազանդին Հերակլեացւոց։
Լը. — Երեսներորդ ութերորդ, վասն ժամանակացն Դանիէլայ։
Լթ. — Երեսներորդ իններորդ, վասն որ ինչ անցք անցին ընդ Դիոնիսիոս։
խ. — Քառասներորդ, վասն օրոց վկայելոցն յԱղէքսանդրիայ։
խա. — Քառասներորդ առաջներորդ, վասն այլոց իրաց զոր պատմեաց Դիոնիսիոս։
խբ. — Քառասներորդ երկրորդ, վասն Նիւատեայ, Թէ որպէս էր Նա. և վասն ազանդին նորուն։
խգ. — Քառասներորդ երրորդ, պատմութիւն Դիոնիսիոսի՝ և վասն Սերապիոնի։
խդ. — Քառասներորդ չորրորդ, Թուղթ զոր գրեաց Դիոնիսիոս առ Նիւատոս։
խե. — Քառասներորդ հինգերորդ, վասն այլոց Թղթոց Դիոնիսիոսի։

ԴՊՐՈՒԹԻՒՆ ՎԷՑԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Վասն հալածանացն՝ որ եղեն յաւուրս Սահակայ։

Իբրև յուզեաց և յարոյց Սուրբոս հալածումն ՚ի վերայ եկեղեցեաց, աբանչելի լինէին ընդ ամենայն տեղիս վկայութիւնք նահատակացն ՚ի վերայ կրօնիցս աստուածպաշտութեան. բայց առաւել յաձախեին Յունաստանդրիա. յեգիպտոսէ և ՚ի Թեբայիդոյ իբրև յասպարէզ մի մեծ Աստուծոյ անդր ածելով զընտիր ընտիրս նահատակաց, որոց և պէսպէս տանջանաց մա՛հու արհաւիրօք մղումբ ժուժկալեալ՝ ընդունէին Աստուծոյ զպսակ յաղթութեան։ Ի սոսա եր և Ալեքսանդրիա՝ որ Հայր ասի լինել Որոգինեայ, որ և կա՛ռափնատեալ՝ եթող զորդին իւր մանուկ դեռահասակ. որ թէ որպէս ՚ի մանկական տիոց անտի յօժա՛

Առաջին ձառք վասն հալածանացն որ եղեն յաւուրս Սահակայ։

Ար՛դ իբրև Սուրբոս յուզեաց և յարոյց զՀալածումն ՚ի վերայ եկեղեցեաց, աբանչելի եին վկայութիւնք նահատակացն աստուածպաշտութեան որ լինէին ընդ ամենայն տեղիս, բայց առաւել Յունաստանդրիա և յեգիպտացւոց անտի և յամենայն ասիացւոց, և տալին տանել զնոսա անդր իբրև յասպարէզ ՚ի մեծ և ՚ի պանչելի նահատակացն Աստուծոյ, և ժուժկալութեամբ պէսպէս տանջանացն ազգի ազգի մահուամբք պսակ ընդունէին Աստուծոյ. զի ՚ի նոցունց իսկ յայնցանէ էր և Պղտոնէս, այն որ ասի վասն նորա զի էր նա հայր Իրիփինեայ, և հասաւ գլուխ նորա ՚ի մարտիրոսութեան, և եթող զորդիս իւր տղայ։ Ա՛յլ գիարդ կամ որպէս եին խորհուրդք մարգկանն այնորիկ ՚ի ժամանակ անտի յայնմանէ ՚ի բանս Աստուծոյ, ժամ է ասել համառօտ. քանզի առաւել անուա՛նի է նա առ բազումս, այլ յոլով են վարք առանն այնորիկ, որ կամ

բամիտ գտանէը առ աստուածայինսն՝ չէ ինչ անդէպ Համառօտիւ դնել աստ, մանաւանդ զի առ բազումս բազում են զրոյցք զՀամբաւոյ առնս։

ԳԼՈՒԽ Բ.

Վասն ի մանկութենէ առնտի դաստիարակութեան Որոգինեայ։

Բազում և երկարագոյն Ճառից պէտք էին արգելօք, եթէ ձեռն ի գործ ոք լինէր պարապելով զվարս առնս այսորիկ ի գիր արձանացուցանելոյ. և Հարկ խակ էր ըստ օրինի առանձին ուրոյն կարգել պատմութիւն Սկզբ մեք՝ որ յամենայնի Համառօտութեան միշտ պատկառ կամք, կարճ՝ի կարճոյ Հատուածոյզ սակաւուք և զմանէ, ի Թղթոց ոմանց և ի բանից անտի բարեկամաց Նորա և ի Ծանօթից, որ միանչև ի մեր ժամանակս Հասին, փութասցուք գլայտնագոյնսն ածել ի մէջ։

Որոգինեայ՝ որպէս կարդ բանիս է ասել, ի խանձարրոյ անտի արժանապատում ինձ Թուին իրքն. իբր տասներորդ ամ էր Թագաւորութեան Սեւերեայ, և իշխան կուսակալ կայր Աղեքսանդրացւոց և Համօրէն Եգիպտացւոց Լետոս, և զեկեղեցեացն այնոցիկ զա-

գրով լսել զնմանէ. և ի գիրս առանձինն ինդրելին Ճառք Նորա։ Բայց մեք առասցուք այժմիկ կարճ՝ի կարճոյ Համառօտ զպատմութենէ սակաւուք, որպէս ըստ կարի մերում վասն Նորա, ի Թղթոյ և ի պատմութենէն զոր ուրեմք մեք առ մեզ, որ պահեցաւ մինչ ի ժամանակս մեր ի Ծանօթից անտի Նորա։

Երկրորդ. վասն փութոյ պնդութեան իրիցինեսի որ էր ի մանկութեան իւրում։

Իսկ Իւրիցինէա որպէս և ինձ Թուի՝ արժանի է նա յիշատակի ի մանկութենէն իւրմէ։ Բայց էր ամն տասներորդ Սևերեայ, և էր իշխան և նահապետ ազգաբանդրացւոց և ամենայն եգիպտացւոց՝ Լետոս։ Իսկ յեկեղեցւոջ անդ նոցա էր եպիսկոպոս կացեալ Նորոգ զնին Յուլիանոսի Նեմեսու։ Սկզբ և ի ժամանակս իբրև սա-

ռաջնորդութիւն յետ Յուլիանոս այն ինչ ունէր Դե-
մետր, սատկանայր յոյժ բոց հրդեհի հալածանացն,
և բազումք ընդունէին զպատակ վկայութեան. վառ-
եալ բորբոքէր և ոգին Որոյհնեայ դեռևս պատա-
նեակ փոքրամեայ՝ յայնժամ՝ ի սէր վկայութեան. որ
պէս զի ընկենոյր նա զանձն իւր ի վտանգս, և մեծաւ
յօժարութեամբ դիմէր յասպարէզ մրցութեան. և
ոչ կարի ինչ հեռի էր ի նմանել մահ, եթէ ոչ երկ-
նաւոր խնամոց տեսչութեանն Աստուծոյ արգելեալ
էր զնա վասն բազմաց օգտի, ի ձեռն մերն նահանջե-
լով զնորհուրդս նորա: Ջառաջին աղաչէր և խնդրէր
ի նմանէ մայրն բանիւք ողբալոյ, զի անխայեացէ
նա ի գուբ մայրենի սիրելութեան, այլ իբրև ետես
թէ յոյժ այնգեալ է, մանաւանդ յորմէ հետէ գի-
տաց թէ կալան զՀայրն և պահեն ի տան բանտի, և
խրոխտացեր ի վկայութիւն մարտիրոսութեան, էած
թագոյց մայրն զամենայն հանդերձս նորա, և արգել
զնա ի ներքս ի տան բռնի: Եւ իբրև ետես նա եթէ
առաջի ըղձից ցանկութեան քան զՀասանին ձգելոյ չը-
կայ այլ ինչ ասպարէզ, սակայն և այնպէս չկարեր լը-
ռել և դադարել, այլ գիր յորդորանաց առ Հայրն
գրեր, յօժարեցուցանել զնա ի վկայութիւն մարտի-

որկացաւ յոյժ բոց հրոյն տագնապի հալածանացն, և բազումք
ընդունէին զպատակ վկայութեան, այսպէս վառեալ բորբոքէր
սէրն * վկայութեան ի միտս և ի խորհուրդս Իրիփինեի: Իբրու
ինքն տղայ էր փոքրիկ, ինքն ընկենոյր զանձն իւր ի վիրաս և ի կա-
րիս, և մեծաւ յօժարութեամբ պնդէցաւ և եմուտ ի մարտ պա-
տերազմի յամենայն մահս խոշոր և խորհրդոց. և ոչ եթէ կարի
հեռի ինչ էր վախճանել նորա յաչխարհէ ասել յայսմանէ, թէ ոչ
երթևեկաւոր փութային Աստուծոյ արգելեալ էր զնա վասն բազմաց
օգտի. ի ձեռն մերն նորա նահանջեր զնորհուրդս նորա: Բայց զա-
ռաջինն աղաչէր և խնդրէր ի նմանէ մայրն բանիւք ողբալոյ, զի
անխայեացէ ի սէր մերն զոր ունէր առ նա: Այլ իբրև ետես մայրն
թէ յոյժ այնգեալ է նա, և ոչ յօժարին միաք նորա. իբրև գիտաց
ինքն եթէ կալան զՀայրն և պահէին ի տան բանդի, և ինքն ամե-
նայնիւ խրոխտակր ի վկայութիւն մարտիրոսութեան, առ թագոյց
մայրն զամենայն հանդերձս նորա, և արգել զնա ի ներքս ի տան
բռնի: Իսկ նա իբրև այլ ինչ ոչ կարէր առնել, և միաք նորա առա-
ջի քան զՀասանին նորա ձգէին, և ոչ կարէր լռել և դադարել.

* Ցօր. ի սէրն:

բռուսթեան, և ըստ կարգի այլոց բանից և գայս խրատ յաւելցուր նմա. Պինդ կաց, ասէր, և զգոյշ լեր անձին քում. մի վասն մեր ինչ փոխեացիս ի խորհուրդ դոցդ։ Ա՛յս Որոգինեայ առաջին մանկական լըծամիտ խելամուռթեանն և անկեղծասոր բարեպաշտուռթեանն նշանակ՝ գրով կայ մեզ աւանդեալ. քանզի և ի բանս հաւատոյ և ի գիրս սուրբս ոչ թէ ինչ օ բինակաւ ձեռնամուխ լինէր նա յուսումն, այլ մտադիւր յօժարուռթեամբ մեծաւաստակ ջանիւք անգըսուին ի մանկուռթենէն կրթէր զանձն իւր ի նոսին։ Զի հայրն ի վերայ խրատու արտաքին խնամտուռթեան և վասն այսոցիկ մեծապէս փոյթ տանէր, զի նախ քան զկրթուռթիւն յունականին մակացուռթեան, ի հրաշ հանգս խրատու սրբուռթեան զնա ընդելացուցանէր, և օր ըստ օրէ հատուածս ինչ ի սուրբ Գրոց ուսեալ ի բերան և արտասանել հրամայէր։ Եւ այս ոչ եթէ ընդդէմ կամաց մանկանն լինէր, այլ յամենայն մտաց և ի խորհրդոց զհետ մտեալ նորա և ի նոսին վաստակէր, մինչ զի չլինել նմա բաւական գուշնաքեայ ընթերցուած գրոց սրբոց, այլ առաւելագոյն ինչ

այլ թուղթ գրէր և տայր առնել հօրն՝ յորգորել յօժարեցուցանել զնա ի վկայուռթիւն մտաքինուռթեան, և այսու բանիւ հաշէր և հաւանեցուցանէր զնա թղթովն. Պինդ կաց, ասէ, և զգոյշ լեր անձին քում, և վասն մեր գուս մի ինչ հոգացցես։ Ա՛յս է օրինակ առաջին լուսաւորուռթեան մանկուռթենէն Իւրիգինէսի որ էր յերկիրս տեառն մերոյ ղոր գրեցաք մեք։

Երրորդ. զի մինչդեռ տղայ էր Իրիգինէս քարոզէր գուսումն վարդապետարանաւ Քրիստոսի,

Նա և վասն բանին հաւատոյ փոյթ մեծ յօժարուռթեան եդ ի միտս իւր Իրիգինէս, զի ի մանկուռթենէն իւրմէ զգերս սուրբս Աստուծոյ ուսեալ էր, և նոքօք կրթէր զանձն իւր. զի ոչ եթէ սակաւ ինչ վաստակէր և աշխատէր ի նոսա։ Իսկ հայրն նորա հանդերձ այսու խրատու և արտաքին խնամտուռթեանն, և վասն այնոցիկ ևս փուռթապէս հոգայր նա. և նախ քան զկրթուռթիւն յունացս ուսմանն խրատու՝ ն. ուսմամբ գրոց Աստուծոյ ընդելացուցանէր զնա, և օր ըստ օրէ պահանջէր ի նմանէ զերբորդուռթիւն ուսմանն Աստուծոյ։ Բայց ոչ եթէ արտաքոյ քան զկամն ի նորուն մանկան է այս, այլ յամենայն մտաց և խորհրդոց իւրոց ջանայր նա և վաստակէր ի նմա. այնպէս աշխատէր՝ զի ոչ լինէր նմա բաւական ընթերցուածն գուշնաքեայ գրոց սրբոց, այլ զիներ վասն խորին ի-

խնդրէը, և 'ի խորս տեսութեան նոցին խելամուտ լինել ջանայր։ Խնդիրս յուզէր և հարցմունս առաջի առնէր Հօրն Թէ զինչ միաք իցեն այս ինչ կամ այն բանից աստուածաշունչ տառիցն։ Իսկ Հայր նորա կարծեալ երևէր Թէ սաստիցէ նմա, և խրատէր մի քան զչափ հասակին, և մի զգեր 'ի վերոյն քան ըզմիտս ապարթանել։ Եւ ինքն սակայն ցնծայր յանձն իւր և ուրախ էր յոյժ, և գոհանայր զԱստուծոյ ըզտուողէն ամենայն բարեաց, զի արժանի արար զնա լինել Հայր այնպիսւոյ մանկան։ Բազում անգամ է, կեալ կայր 'ի վերայ մանկանն որ ննջէը և որպէս ա՜սեն, քանայր զանձն նորա, և իբրու բնակարան Հոգւոյն Աստուծոյ համբուրէր զայն ջերմեռանդն սիրով, և վասն քաջամանկութեան երանէր նա զանձն իւր։ Զայս և որ ինչ նման է սոցին զմանկութենէն Ո՜րոգինեայ պատմեն։ Այլ իբրև կատարեցաւ Հայր նորա վկայութեամբ, ձեաց պատանեակն Հանդերձ մարբըն և վեցհարիւրք կրտսեր եղբարբըն իւրովք որբացեալ, մինչև էր նորա լցեալ զերեքնեասան ամ Հասակին։ Եւ զի և զստացուածս Հօրն առեալ էին յարքունիս, սակաւ և նուազ պիտոյիւք աշխարհիս այսբրիկ ձեացեալ նորա Հանդերձ ընտանեօք իւրովք, արժանի եղև իննամոց տեսլութեան Աստուծոյ։ Ընակալեալ և բնակեցաւ առ հնով միոյ մեծատան և երևել

մատուռեհանն որ ծածկեալ էր 'ի նոսա. զի ջան մեծ և յոյժ անխոյսութիւն առնէր նա Հօրն իւր, հարցանէր զնա՝ Թէ զինչ կամի գիրքս այսու բանիս ցուցանել և յայտ առնել մեզ։ Իսկ Հօր նորա կարծեալ երևէր Թէ սաստիցէ նմա յայտնապէս. և ուսուցանէր նմա զի մի եղեցի քննել զայն ինչ որ արտաքոյ է քան զչափն նորա, կամ ինչ արտաքոյ քան զմիտս նորա յօրինի։ Բայց ինքն առանձին ցնծայր և ուրախ էր յոյժ, և գոհանայր զԱստուծոյ զտուողէն ամենայն բարեաց, զի արժանի արար զնա լինել Հայր այնպիսւոյ մանկան։ Բազում անգամ իսկ մնանէր և կայր 'ի վերայ մանկանն՝ յօրժամ ննջէր, և որպէս ասեն՝ բանայր զանջնա նորա իբրու Հոգի Աստուծոյ բնակէր անդ, և համբուրէր զնա 'ի պատիս սիրոյ։ Զայս և որ ինչ նման է սոցին՝ մինչդեռ մանուկ էր իրիցինէն՝ ասէն վասն նորա։ Այլ իբրև կատարեցաւ Հայր նորա 'ի վկայութենէն մարտիրոսութեան՝ ձեաց հանդերձ մարբն և կրսեր եղբարբըն իւրովք, զի էին նորա Թուով վեց, իբրու չէր լցեալ նորա ցայս վայր երեքնեասան ամ. այլ զի և զստացուածս Հօրն առեալ էր և տաւեալ չարքունիս, և սակաւ և նուազ պիտոյիւք աշխարհիս այսբրիկ ձեա-

*ւոյ. որ սիրէր զայր մի մեծանուն անտիոքացի աղգաւ
'ի գլխաւորաց անտի Հերեսիոփատաց Աղեքսանդրիոյ
քաղաքի. և առնոյր զնա կինն յորդեգիրս և խնամէր
զնա: Իսկ Որոգինէս Թէպէտ ընդ այնպիսւոյ առն 'ի
հարկէ բնակէր, սակայն զօրինակ Ճշմարիտ հաւատոց
իւրոց արդեամբք ցուցանէր, զի իբրև ժողովուրդ բա-
զում ոչ 'ի հերեսիոփատաց միայն, այլ և 'ի մերոց անտի
գայլին ժողովէին 'ի տան Պօղոսի, զի այս էր անուն
առնն, 'ի համբաւ Ճարտարխօսութեան նորա, ինքն
Որոգինէս ոչ երբեք յօժարեաց բնաւ կալ ընդ նմա
յաղօթս, զի 'ի մանկութենէ իւրմէ պահէր նա զօ-
րէնս եկեղեցւոյ, և գարշէր մեբժէր, որպէս և ինքն
ուրեք վկայէ, 'ի վարդապետութենէ անտի հերե-
սիոփատաց: Այլ զի յառաջագոյն կրթեալ էր նա 'ի
հօրէ իւրմէ 'ի հելլենական մանկացութիւնս, և զկնի
մահուան նորա մտադիւրագոյնս տայր զանձն իւր 'ի
կրթութիւն քանից, և փոքր 'ի շատէ 'ի քերականա-
կան գպրութիւնս ընդելանէր նա. մինչ զի ոչ բազում
ինչ անցեալ 'ի վերայ չէտ մահու Հօրն, չայսոսիկ
պարապելով չայնհայնէր լիուլի առատութեամբ
զպէտս կարօտութեանն իւրոյ, ըստ հասակի տիոյն
մանկութեան,*

*ցեալ էր նա' հանդերձ ընդանեօք իւրովք: Բայց արժանի եղև նա
աւգտութեան յԱստուծոյ, և ընդունելի եղև և հանգեաւ առ Քրիս-
միով մեծասան և երևելւոյ, զի ունէր նա այր անուանի' որ Պօղոս
կոչիւր. և էր նա 'ի հերեսիոփոյ անտի որ յԱղեքսանդր քաղաքի,
և աղգաւ անտիոքացի: Բայց արար կինն զնա իւր որդի, և սիրէր
չոյժ. այլ Թէպէտ և ընդ այնպիսւոյ առն 'ի հարկէ բնակէր Որո-
գինէս, սակայն զօրինակ Ճշմարիտ հաւատոց իւրոց արդեամբք ցու-
ցանէր. զի իբրև ժողովուրդք բազումք ժողովէին 'ի տանն Պօղոսի,
քանզի կարծեալ երևէր Թէ լուսաւորէր բանիւ իւրով Պօղոս:
Բայց ոչ միայն 'ի հերեսիոփատաց անտի, նա և 'ի մերոց ասի պա-
տուհասել էր նա: Այլ ինքն Որիգինէս և ոչ երբեք յօժարեաց բնաւ
կալ յաղօթս ընդ նմա. զի 'ի մանկութենէ իւրմէ պահէր նա զօ-
րէնս եկեղեցւոյ, և խոտէր և անարգէր զաղանդն հերձուածոց.
որպէս և ինքն բանիւ իւրով ասաց և վկայեաց: Այլ քանզի կըր-
թեալ և ընդելեալ էր 'ի հօրէ իւրմէ ընդ խմաստունն յունաց, և
զկնի մահուան հօրն' յամենայն մտաց և խորհրդոց իւրոց տայր
զանձն իւր 'ի կրթութիւն քանից. և փոքր 'ի շատէ ընդ ուսումն
գրամարտիկոսաց ընդելանէր նա: Եւ չետ սակաւ ժամանակի' զի
կատարեցաւ չայր նորա, տայր նա զանձն իւր չերկայս, և չայնմ*

ԳԼՈՒԽ Գ.

Թէ ո՛րպէս Որոգինէս դէռ ևս պատանեկակ գոլով քարոզէր զբանին Աստուծոյ։

Ի դադարել վարժիցն, որպէս և ինքն պատմէ, և՝ ի չգտանել նորա զոք յԱղեքսանդրիա յաշակերտութիւն վարդապետութեան կրօնից, զի ամենեքեան՝ ի սպառնալեաց անտի Հալածանացն ցրուեալք էին և փախուցեալք, մերձեցան առ նա՝ ի հեթանոսաց անտի ոմանք լսել՝ ի նմանէ զբանն Աստուծոյ, յորոց ա-ռաջին լինէր նշանակ նա զՊլուտարքոս ոմն, որ յետ գործովք բարեաց վարելոյ զկեանս իւր յաշխարհի, և վկայութեամբ ևս կատարեցաւ. և երկրորդն՝ Հերակլ եղբայր Պլուտարքեայ, որ և սա խմաստասիրա-կան և խստակրօն կենաց տուեալ օրինակ՝ զինէն Դե-մետրեայ արժանաւոր գտաւ եպիսկոպոսութեան և կեղեցւոյն Աղեքսանդրացւոց։ Եւ եր Որոգինէս ամայ ութ-տասանից յորժամ վարդապետ կարգեցաւ և, կամակից ընծայելոյ՝ ի հաւատս. յորում ժամանակի յառաջադէմ լինէր նա՝ ի հալածանս անդ՝ զոր յա-րոյց Ակիւղաս իշխանն Աղեքսանդրացւոց, և առաւել առ ամենայն ընտանիս հաւատոց ստահայր անուն,

ժամանակի ունէր նա ինչս բազումս ծախիչ առատապէս. ՝ի ժա-մանակի իբրև հանապազորդէր նա յուսումն, որպէս և ինքն իսկ պատմեայց ՝ի ձեռն գրոց, և ոչ ոք էր յԱղեքսանդր քաղաքի պատ-բաստական յուսումնասիրել և աշակերտել՝ զի ամենայն ոք փախու-ցեալ էր ՝ի սպառնալեաց անտի հալածանացն։ Մերձեցան առ նա ոմանք ՝ի կամապաշտից անտի լսել ՝ի նմանէ զբանն Աստուծոյ, և առաջին ՝ի նոցանէ ցուցանէ Թէ էր Պղուտարքոս, այն որ իբրև գործովք բարեաց վարեաց զանձն իւր, և վկայութեամբ ևս Աստու-ծոյ կատարեցաւ. և երկրորդ՝ Հերակլէս եղբայր նորա, այն զի և նա ինքն էս առ նա օրինակ գործոց ՝ի մանկութենէն կրթութեան, և յետոյ եպիսկոպոս եղև. եկեղեցւոյն ազեքսանդրացւոց զինի Դե-մետրեայ։ Բայց էր ինքն իրիգինէս ութեասան ամի, ՝ի ժամանակի իբրև. եկաց նա ՝ի վարդապետութիւն աշակերտութեան. յայնմ ժամանակի առաւել խակ գտաւ նա ՝ի հալածանս անդ, զոր արար Ակիւղաս իշխանն ազեքսանդրացւոց. իբրև առաւել առ ամենայն

յօժարական ընդունելութեամբն՝ զոր ցուցանէր առ ամենայն վկայս սուրբ, զորս գիտէր և զորս ոչն գիտէր. զի ոչ եթէ յորժամ մինչ ի տան բանդին էին նոքա, կամ ի ժամ պատասխանատուութեան միայն և ի վերջին վճիռս դատաւիրջոյն մերձեալ կայր ընդ նոսա, այլ և մինչդեռ ածէին զնոսա ի մահ, բազում համարձակութեամբ յարեալ ի նոսա՝ ի վտանգս զանձն իւր արկանէր, և մեծ առ նոսա խիզախելով համարձակ հաւքոյր տայր նոցա և ողջունէր, և բազում անգամ ի մոլեգնեալ ամբոխէ անտի ժողովրդեան հեթանոսաց, որ շուրջն կային՝ մերձ լինէր քաջակոչիմ մեռանել եթէ ոչ յաջոյ անտի Աստուծոյ օգնականութիւն լինէր նմա, և զբանիբերապէս ապրէր ի նոցանէ։ Դարձեալ նոյն ինքն աստուածային շնորհ երբէք երբէք, զոր ժխուարին է ամիրափել ի քանի նուագս՝ վասն կարի յօժարամտութեանն և համարձակութեանն զոր համարձակէր ի բանն Քրիստոսի, ի գարանակալութեանց անտի պահէր զնա։ Եւ պատեբազմ այնպիսի յանհաւատից անտի յառնէր ի վերայ նոքա, զի ամբոխիւ յարուցեալ նոցա պաշարէին զբականաքը զտունն՝ յորում էր նա, վասն բազմութեան աշակերտելոյ առ նմա ի հաւատս սրբութեան. և այլ

ընդանիս հաւատոյ ըստանայր նա անուն անուանի, խորհրդոյնքն զոր ցուցանէր և ընդունէր զամենայն վկայս սուրբս՝ զորս գիտէր և և զորս ոչն գիտէր զնոսա. զի ոչ եթէ յորժամ մինչ ի տան բանգին էին նոքա, միայն մերձենայր առ նոսա, կամ մինչ ի վճիռն հարցանելոյն նոցա, այլ և յետոյ մինչդեռ երթային նոքա ի մեռանել՝ յարեալ երթայր ընդ վկայն սուրբս, և համարձակութեամբ բազմաց չջէր նա և արկանէր զանձն իւր ի վնաս և ի չարչարանս. և մերձենայր համարձակ տալ ողջոյն համբուրելով զվկայն. և քանիցս անգամ զայրանային ի վերայ նորա ժողովուրդքն հեթանոսաց որ շրջապատեալ էին. և մերթ եկ էր մեռանել ի նոցանէն՝ թէ ոչ զի յաջոյ անտի Աստուծոյ օգնականութիւն լինէր նմա և ապրէր ի նոցանէ։ Բայց երբեմն շնորհքն Աստուծոյ դարձեալ պահէին զնա, ի ժամանակի յորժամ առնէին ի վերայ նորա զնեղութիւնն յայնմ ժամանակի՝ վասն խորհրդոյն նորա և վասն համարձակութեանն որ համարձակէր ի բանն Քրիստոսի, այլ այնպիսի պատերազմիւ ի վերայ նորա յանհաւատից անտի, զի ոչնաւա յոյժ լինէին նորա վասն նորա, և կացուցանէին զնուսրա պահապան ի վերայ տանն յորում բնակէր նա, վասն ժողովրդեանն որ ժողովէր առ նա՝ ուսանել զհաւատս սրբ-

պէս վառեալ բորբոքեին ՚ի վերայ նորա հանապազօր
հալածանքն, որպէս զի և ոչ առնէին քաղաքն Աղէք-
սանդրացւոց բառական լինել նմա, զի փախչէր նա
տանէ ՚ի տուն, և յամենայն տեղեաց հալածական
դնայր, վասն ժողովրդեանն՝ որ ՚ի ձեռն նորա մեր-
նայր յուսումն աստուածպաշտութեան։ Եւ զի հանա-
պազօրեայ գործք նորա ուղղութիւնք էին կատարեալ
իմաստութեան, սբանչելիք մանաւանդ ըստ առածին,
եթէ ըստ բանիցն և գնացք նորա էին, և ըստ գնա-
ցիցն բանք. վասն որոյ և զօրութիւնն Աստուծոյ առա-
ւել օգնական լինէր նմա, և ոչ սակաւք նախանձաւոր
առաքինութեանց նորա լինէին։ Եւ իբրև ետես եթէ
յոլովք են՝ որ յամախեն առ նմա յաշակերտութիւն,
զի ՚ի Դիմոտրեայ եպիսկոպոսէ նմա միայնոյ հաւա-
տացեալ կոչումն ընծայութեան նորահաւատից, զմը-
տաւ էած թէ ոչ միաբանիլ ուսումն գրամատիկոսաց
ընդ խրատու ուսմանս Աստուծոյ, վասն որոյ և անդան-
դաղ որոշեաց մեկնեաց զանձն իւր յանօգուտ և ՚ի
հակառակ սրբոյ վարդապետութեանս ՚ի մանկացու-
թենէն անտի գրամատիկոսաց։ Եւ խոհական խորհրդո-
վով՝ զի մի՛ կարօտացեալ այլոց ուրուք սատարութեան,
զամենայն մատեանս նախնեացն Ճարտարախօսից յար-

բութեան. և այնպէս վառեալ բորբոքեին ՚ի վերայ նորա հանա-
պազօր հալածանքն, որպէս զի և ոչ ամենայն քաղաքն բառական
եղէ նմա. զի փախչէր նա տանէ ՚ի տուն, և յամենայն տեղեաց հա-
լածեալ լինէր նա վասն ժողովրդեանն այնորիկ որ ՚ի ձեռն նորա
մերձենայր առ ուսումն աստուածպաշտութեան։ Եւ քանզի և
գործք նորա սքանչելի էին վաստակովք կատարեալ իմաստու-
թենէն, և ըստ բանից իւրոց էին գործք իւր, և ըստ գործոց իւրոց
էին ուսումն վարդապետութեան իւրոյ, և վասն այսր առաւել
օգնական լինէր նմա զօրութիւնն Աստուծոյ. և նմանօգաց ևս լինէին
նմա բազումք։ Այլ իբրև ետես եթէ մերձենան առ նա աշակերտք
բազումք ուսանել ՚ի նմանէ, ՚ի Հրէաստանէ Դիմոտրեայ եպիսկո-
պոսէ և եկեղեցւոյն որ անդ էր, էած զնաւս թէ ոչ միաբանիլ ու-
սումն գրամատիկոսաց այսմ խրատու ուսմանս Աստուծոյ, նոյն-
ժամայն որոշեաց և մեկնեաց զանձն իւր ՚ի նմանէն. քանզի հաս-
կեցաւ զնա անօգուտ և հակառակ ուսմանս սրբոյ այս ուսումն բա-
նից գրամատիկոսաց։ Եւ արժանաւոր խորհրդով՝ որպէս զի մի՛
կարօտացեալ այլ ոք ապաստան լինել, զամենայն զգիրսն, զաաջ-
նոյն որ էին նորա, որ մեծաւ փութով և հոգաբարձութեամբ ըս-
տացեալ էր, էա զնոսա միւսմ ուսմանն որ գնաց էառ ՚ի նմանէ, զի

դարունս և խնամով յօրինեալս՝ ի վաճառ հանեալ, շատանայր առնուլ ի նմանէ՝ որ գնացն էառ զգիս, չորս չորս քնիմնս օր ըստ օրէ։ Եւ զամն բազումս ըստ այսմ օրինակի խմաստասիրութեամբ վարէր, և զամենայն զրգիռս մանկական ցանկութեան ի բաց հատանէր յիւրմէ, և զսիւն ամենայն ի հրահանգս յայսոսիկ մեծամասնակ տաժանէր, և զբազում ժամս գիշերոյն յընթերցուածս աստուածեղէն տառից նուիրեր, և խստակրօն կենօք քաղաքավարէր. զի զօրն ցերեկ ի կրթութիւնս պահոց, և գիշերի զժամն քնոյն չափով կշռեր, և զայն ի մահիճն բնաւ ամենևին ոչ, այլ ի վերայ երկրի հապճեպ փութով գետնախշոի լինէր։ Եւ քան զամենայն յաւետարանական պատուերս փրկչին զդուշանալ պարտ համարէր, որպէս՝ մի ստանալ երկուս պարեգօտս, մի ագանել կօշիկս, և մի հոգալ յոյժ վասն վաղուն։ Եւ քան զՀասակ տիոցն վառեալ ոգւով, ցրտոյ և մերկութեան տակաւր, և ի ծայր կատարեալ անստացուածութեան ժամանեալ, զամենեսեան՝ որ գիւրեն էին զարմացուցանէր։ Բազումք ախտակից ընդ նմա լեալ վասն ծանր վաստակոցն զոր վաստակէր նա ի վարդապետութիւն աստուածպաշտութեան, ցանկային սատարել նմա յընչից իւրեանց և ի ստացուածոց. իսկ նա բնաւ ամե-

եղեալ նա նմա բերել հանապազօր չորս բնիոնս, և այնու չատ էր նմա։ Եւ զամն բազումս յայսմ օրինակի խմաստութեան չրջէր, և զամենայն ցանկութիւն մանկութեան ի բաց հատանէր ընկենոյր յիւրմէ, և զսիւն ամենայն մեծաւ գործով վաստակէր նա, և զբազում ժամս ի գիշերոյ անաւ յընթերցուածս գրոց Աստուածոյ կըրթեր, և ի վարս խմաստութեան հաստատեալ լինէր՝ մանաւանդ ի կրթութիւն պահոց. և ժամս չափով կշռեալ լինէր նորա զօրն ընդ ջէր, ի մահիճն բնաւ ամենևին ոչ ննջէր, այլ ի վերայ երկրի. և առաւել քան զամենայն ինչ զաւետարան Փրկչին մերոյ զմաւ ածէր և խորհէր թէ արժան է պահել զօր ուսոյցն, եթէ մի աստուցուած երկուս պարեգօտս, և մի ագանօք կօշիկս յոտս և զի մի պատուհասուցէ ի հոգս աշխարհի այսորիկ. այլ անցեալ խորհրդովք զամեօք իւրովք գնայր, և ցրտոյ և մերկութեան տևէր, և կատարեալ լոկութեամբ չրջէր, և զարմացուցանէր զամենայն գէտս և զծանօթս իւր։ Իսպէ բազումք յոմանց ի մարգկանէ անտի կամէին հաղորդել ի վաստակն՝ զոր վաստակէր նա ի վարդապետութիւն աստուածպաշտութեան յընչից իւրեանց և ի ստացուածոց, իսկ նա բնաւ ամենևին ոչ խոնարհէր ի ժուժկալութենէ ան-

նևիին ոչ խոնարհէը 'ի խիստ ժուժկալութենէ անտի իւրմէ : Եւ ասի վասն նորա բան, եթէ զամս բազումս գնայր նա 'ի վերայ երկրի բակ, իբրև ոչինչ ոչ ագանէր. նա և 'ի պիտոյից գինւոյ և այլոց՝ որ արբեցուցանեն զկերակուր Հարկի, զամս բազումս հրաժարեալ նա, մինչև վտանգել ստամոքսացն 'ի խանգարումն և յապականութիւն : Իբրև այսու խստութեբ վարուբ առակ օրինակի լինէր տեսողացն, զբազումս յաշակերտաց անտի իւրոց 'ի նախանձ նմանութեան իւրոյ ձգէր, և 'ի հեթանոսաց անհաւատից, 'ի նշանաւոր և 'ի կրթի մարդկանէ և 'ի փիլիսոփայից վարէր յուսումն վարդապետութեան իւրոյ : Զի յորոց սերմիւ և հաւատով ընկալան զբանն Աստուծոյ 'ի ձեռն նորա, եղեն որք 'ի ժամանակս Հալածանացն այսոցիկ պայծառացան, մինչ զի ըմբռնեալ ոմանք և վկայութեամբ մարտիրոսութեան կատարեցան :

տի համբերութեան իւրոյ : Այլ ասի վասն նորա բան, եթէ զամս բազումս գնայր նա 'ի վերայ երկրի բակ, իբրև ոչինչ ոչ ագանէր. նա և 'ի պիտոյից գինւոյ և այլոց՝ որ արբեցուցանեն զկերակուր Հարկի՝ զամս բազումս հրաժարեալ նա, զի մերձ էր յապականել 'ի խանգարել ստամոքս իւր : Իբրև այսու վարուբ խմաստութեամբ առակ օրինակի լինէր տեսողացն, բազումք նախանձէին նմանել նմա յաշակերտաց անտի իւրոց և 'ի հեթանոսաց անհաւատից, և յայնցանէ որ յիմաստութիւն փիլիսոփայութեանն վարեալ էին : Եւ զմարդս նշանաւորս վարէր անդ յուսումն վարդապետութեան իւրոյ. զի այնոքիկ որ հաւատով զբանն Աստուծոյ ընկալան 'ի ձեռն նորա՝ և նոքա արանչելիք էին և զարմանալիք յայնմ ժամանակի հալածանացն, և բազումք 'ի նոցանէ ըմբռնեցան և 'ի վկայութիւն մարտիրոսութեան կատարեցան :

ԳԼՈՒԽ Դ.

Թէ քանիք տևանք յաշակերտելոց Որոգինէի վկայութեամբ պատուհասեան,

Եւ առաջին 'ի սոցանէ եղև փոքր մի յառաջ յիշատակեալն մեր Պղատարքոս, զոր իբրև վաթեալ տանէին 'ի մահ, ընդ նմա էր և մեր Որոգինէս միևնոյն ցկետ վախճանի վկայութեանն, որ և հազիւ զերծաներ 'ի սպառնալեաց անտի քաղաքացւոց նորա, որ պատճառք մահուն նորա զնա դնէին, պահելով զնա կամացն Աստուծոյ և զայս նուագ։ Իսկ զկնի Պղատարքեայ վկայ երկրորդ՝ յաշակերտաց անտի Որոգինեայ, երևեցաւ Աբերնոս, որ 'ի ձեռն հրոյ եցոյց զՀանդէս հաւատոցն՝ զոր ընկալաւ։ Ի նմին դարձեալ յաշակերտութենէ անտի նորա եղև վկայ երրորդ Հերակլիդէս՝ որ երախայն էր ցայնժամ, և յետ նորա չորրորդ՝ Հերոն, որ այն ինչ նորոգ առեալ էր կնիք, և երկոցունց նոցա Հատան գլուխք։ Ընդ սոսա դարձեալ 'ի վարժոցէ անտի նորա Հինգերորդ Նահատակ աստուածպաշտութեան քարոզեցաւ 'ի վերայ առաջնոցն և այլ միւս

Զորրորդ. որ միանգամ աշակերտեցաւ 'ի ներքոյ ձեռին Իրիգինեայ, վկայեալ վկայեցաւ 'ի մարտիրոսութիւն,

Արդ առաջին 'ի նոցանէ Պղատարքոս, այն որ ասացաք վասն նորա յառաջ փոքր ժամանակաւ, 'ի ժամանակի իբրև վաթեալ երթայր նա 'ի մեռանել՝ ընդ նմա չորեր և Իրիգինէս, մինչ և կատարեցաւ 'ի մարտիրոսութիւն. և մերձ էր 'ի մեռանել 'ի քաղաքակոյց անտի Իւրոյ, որպէս զի նա եղև պատճառ մահու նորա. բայց կամքն Աստուծոյ պահէին զնա յայնմ ժամանակի։ Իսկ զկնի Պղատարքոսեայ վկայ երկրորդ յաշակերտաց անտի Իրիգինեայ երևեցաւ Աբեռնոս, այն որ 'ի ձեռն հրոյն եցոյց զՀանդէս հաւատոցն՝ զոր ընկալաւ։ Եւ 'ի նմին դարձեալ յաշակերտութենէ անտի նորա եղև վկայ երրորդ* Հերակլիդէս, որ մինչ ցայն ժամ երախայ էր. և զկնի նորա չորրորդ Հերոն, որ այն ինչ նորոգ առեալ էր նորա կնիք. երկոցունց նոցա գլուխք Հատան։ Եւ ընդ այնոսիկ

* Յօր. Երիոդէ։

և Աերենոս, որում յետ բազում տանջանաց և չար-
չարանաց, որոց համբերն, հատաւ գլուխ նորա։ Իսկ
՝ի կանանց Հերայիս՝ որ դեռ երախայն էր, և զինիք
մկրտութեան՝ ըստ նորին իսկ Որոգինեայ ասելոյն,
հրով ընկալեալ, եւ ՝ի կենաց աստի։

ԳԼՈՒԽ Ե.

Վասն փոտամիենիայ։

Ընդ սոսին այսոսիկ՝ զորս կարգեցաքս, եօթնե-
րորդ համարի Բասիլիդես, այն որ ՝ի պատուհաս մնոյ
էած զհնչակաւորն փոտամիենա. զորմէ բազում բանք
գովութեան ընթանան ընդ բնակիչս գաւառին, որ
վասն անարատ սրբութեան և կուսութեան, յորում
և գերազանցեցան՝ բիւր պատերազմունս կրեաց ՝ի
տարփածուաց անտի իւրոց։ Այլ ընդ աքանչելի վսե-
մութեան ոգւոյն և գեղոյն վայելչութեան անձին
ծաղկեր. բազմաց տարաւ նա վասն հաւատոյն Քրիս-
տոսի, և յետ անհնարին և չարաչար տանջանաց հան-
դերձ մարդն իւրով Մարկեղեաւ՝ հրով կատարեցաւ։

դարձեալ և նմին յաշակերտութենէ անտի նորա, հինգերորդ նա-
հատակ առաւելապաշտութեանն քարոզեցաւ այլ մեւս և Աերա-
նոս, այն որ զինի բազում տանջանացն և չարչարանացն զոր համ-
բեր, հատաւ գլուխ նորա։ Իսկ ՝ի կանանց Հերայիս, մինդեո երա-
խայ էր իսկ, և հինիք՝ որպէս և Իւրիպինէս ասացեալ է ուրեք ՝ի
ձեռն հրոյն վկայութեան առ և եղ յաշխարհէ աստի։

Հինգերորդ. վասն փոտամիենիայ։

Ընդ սոսին ընդ այնոսիկ զորս համարեցաք՝ երեւեալ լինի եւթ-
ներորդ Բասիլիդես, այն որ վարեալն տանի զՓոտամինոնաս, ան-
տի որ մինչ. ցարդ գովի և փառաւորի առ բազում գաւառականս,
Թէ համբերն նա բազում պատերազմի՝ յայնցանէ որ ցանկային սրբ-
բութեան և կուսութենէն նորա, այն որ նովին իսկ փառաւորեցաւ-
զի ընդ սրբութեան անձին իւրոյ, և գեղով վայելչութեան անձին
իւրոյ ծաղկեալ զուարճանայր առանց ազատզութեան։ Եւ իբրև
բազում չարչարանս կրեաց նա յանձին իւր, յետոյ զինի բազում և
չարաչար և դառն տանջանացն հանդերձ մարդն իւրով Մարկեղեաւ

Եւ պատմէն եթէ դատաւորն, որում անուն էր Ակիւ-
ղաս, իբրև վերս դատաւորեաց և հարուածս բա-
զումս անցոյց ընդ ամենայն մարմին նորա, սպառնայր
մահանել զնա ի ձեռս սուսերամարտից ի գաւշանս և
ի թշնամանս անձին նորա։ Եւ իբրև սակաւիկ մի մը-
տայոյզ լինէր յանձն իւր կոյն, հարցանէին զնա թէ
զինչ խօրհիցի. իսկ նա պատասխանի առնէր նոցա
այնպէս, որպէս զի կարծել հեթանոսաց եթէ ամբա-
րիշտս առ նոսա բարբառէր, և ընդ բանին ընկալաւ
նա նոյնհետայն զմեհր մահուն։ Եւ էր Բասիլիդես
ոմն ի զինուորաց անտի՝ որ վարեալ տանէին զնա ի
մահ. որ իբրև ռամիկ ժողովրդեանն կամ էր նեղել
զսբբուհին, և բանիւք ազատեցուցանել թշնամանել
զնա, արգելոյր զնոսա և հալածէր զթշնամանադիրս
նորա, և բազում գութ և մարդասիրութիւն առ նա
ցուցանէր։ Իսկ կոյն սուրբ փոխանակ կարեկից ար-
գահատանաց առնն, միսիթար իւն նմին տալով քաջա-
լերեաց, ասէր, զի յորժամ երթայց յաստեացս,
խնդրեցից ի տեառնէ իմմէ, զի ոչ յամեսցէ զփոխա-
րէնն երախտեաց քոց առ իս։ Ցետ զայս ասելոյն, ե-
ռանդան ձիւթոյն՝ սակաւ սակաւ հեղուլ զողջոյն մար-
մնոյն յոտից մինչև ցգլուխ, քաջութեամբ ժուժկա-
լեալ՝ տարաւ վախճանի մահուն։ Եւ օրինակ զայս

ի ձեռն հրոյ կատարեցաւ։ Այլ ասէն վասն դատաւորին այնորիկ.
զի անուն էր նորա Ակիւղաս, զի իբրև վերս դատաւորեաց և հա-
րուածս բազումս անցոյց ընդ ամենայն մարմին նորա, յետոյ սպառ-
նայր տալ զնա ի ձեռն բազանոց մարդկան թշնամանել զմարմին
նորա։ Բայց նա մնայոյզ եղև սակաւիկ մի և հարցանէին զնա թէ
զինչ կամիցի։ Իսկ նա ըստ այսր պատգամ պատասխանի արար
նոցա, որպէս զի կարծեսցեն ի մտս իւրեանց թէ բան ինչ ժպըր-
հութեան ասաց ընդդէմ նոցա, և ընդ նմին ընդ բանին իւրում ան-
դէն ընկալաւ զմեհր մահուն իւրոյ։ Իսկ Բասիլիդես, այն որ ասա-
ցաքն վասն նորա, էր նա մի ի զինուորաց, զերի վարեալ տանէին
զնա ի մահ. այլ իբրև ժողովրդոյն կամէին չարչարել զնա
և բանիւք ազատեցուցանել թշնամանէին զնա, նա արգելոյր զնոսա
և հալածէր զթշնամանադիրսն նորա, և ցուցանէր և յայտ առնէր
առ նոսա զբազում ողորմութիւն իւր։ Եւ նա իսկ չնորհ կալաւ
յոյժ առնն այնմիկ՝ որ չարչարեցաւ վասն նորա, և ասէր ցնա զի
յանապատեալ լինի նա՝ եթէ յորժամ երթայցէ խնդրեսցէ նա ի տեառ-
նէ անտի իւրմէ, և ոչ յամիցէ զփոխարէն զերախտիս զոր միան-
գամ գործեաց նա առ նա։ Իբրև զայս ասաց քաջութեամբ սքան-

նահատակեցաւ յոդնահաչակ կոյսն։ Եւ յետ ոչ բազ-
մաց ինչ աւուրց Բասիլիդէս, չգիտեմ ինչ պատ-
ճառս՝ իբրև եկեալ զինուորականաց նորա երդուեաւն ի
նմանէ պահանջէին, պատասխանի առնէր թէ Ջեմ
ես իշխան երդնուլ քնաւ ամենևին, զի քրիստոնեայ
եմ։ և զայս յայտնապէս խոստովան լինէր։ Զառաջինն
խաղ առնել թուէր նոցա, այլ իբրև պնդէր նա ի
նոյն, ածին զնա առ դատաւորն։ և ի կրկնելն առա-
ջի նորա զխոստովանութիւնն իւր հաստատութեամբ,
արկաւ ի կապանս։ Լուեալ յայնժամ եղբարքն ի
Տէր՝ չոգան առ նա և հարցանէին, թէ Ջինչ պատ-
ճառք իցեն անկարծ և աբանելի դարձին։ և ասա-
ցեալ նորա պատմեն եթէ Փոստոսիենա երեք աւուրբք
յետ վկայութեան իւրոյ եկեալ գիշերի կայր ի վե-
րոյ քան զնա, և գնէր պսակ ի գլուխ նորա, և ասէր,
աղաչեալ վասն նորա Քրոջն ի Տեառնէ, և ընկալեալ
զինդրուածսն, և ոչ յամեսցէ գալ և նա առ ինքն ի
վեր յերկինս։ Եւ յետ այսորիկ ընկալեալ յեղբարց
անտի զկնիք ի Տէր մեր, և ի վաղիւ անդր վկայու-
թեամբ Տեառն փառաւորեալ, հատաւ գլուխ նորա։
Ընդ այն ժամանակս պատմեն և զբազմութիւն զայրս ՅԱ-
ղեքսանդրացւոց անտի յանկարծակի եկեալ ի հա-

չելապէս ժուժկալ եղև և համբեր եւանգան ձիւթոյն սակաւ սա-
կաւ ի վերայ ամենայն մարմնոյ նորա յոտից մինչև գլուխ։ Կոյսն
այն աբանելի այսպիսեաւ իրօք յաղթեաց պատերազմի նորոյ, այլ
ոչ յամեաց։ բայց սակաւ ժամանակ Բասիլիդէս, այն որ ասացաքն
վասն նորա, եկեալ պահանջէին ի նմանէն երդուեաւն ինչ զինուորքն
որ զնուազուլալ էին ընդ նմա։ իսկ նա ասէր, Թէ չէ նա իշխան երդ-
նուլ քնաւ ամենևին՝ քանզի քրիստոնեայ է։ և զայս յայտնապէս
խոստովան լինէր։ Երկեր նոցա Թէ խաղ ինչ առնիցէ նա։ Ա՛լ իբ-
րև ընդկերկարեր և աստուգեր, ածին զնա առ դատաւորն։ և ան-
ցեալ կալոր առաջի նորա ի խոստովանութենէն։ և մանեցաւ նա
պնդակեաց ի չարչարանս տանջանաց։ Իսկ եղբարքն որ ի տեր մեր
էին՝ չոգան առ նա և հարցանէին Թէ որ պատճառք են այս, զի յան-
կարծակի աբանելիացաք իբրև եկեր գու։ Իսկ նա ասաց նոցա. Փո-
սիմնեայ, ասէ, երեք աւուրք յառաջ քան զվկայութենէն իւր եկեն
եկաց ի գիշերի ի վերոյ քան զնա, և եդ պսակ ի գլուխ նորա, և
ասաց՝ բայ յանձնէ առ տէր զնան նորա, և ետ նմա զինդրուածս
նորա, և ոչ յամեմ և վաղվաղ զնա առ ինքն։ Եւ յետ այսր ամենայնի
եաուն նմա եղբարքն կնիք ի տէր մեր, և ի վաղիւ անդր փառա-
ւորեցաւ նա ի վկայութիւն մարտիրոսութեան, և հատաւ գլուխ

ւատս Քրիստոսի, երևեալ և նոցա Փոխհիմնեալ ի տեսլեան գիշերոյ, և կոչեալ զնոսա առ բանն աս-տուածային։ Եւ վասն այսորիկ այսչափ։

ԳԼՈՒԽ Զ.

Վասն Կղեմեայ Աղեքսանդրացւոյ։

ԶՊանտենոս յաջորդեալ Կղեմէս, զկրթութիւն վարդապետութեան եկամտից ի հաւատս ունէր նա յայնժամ Աղեքսանդրիա, մինչ զի և Որոգինէս ի մանկութեան իւրում ի լուր բանից նորա յաճախէր։ Ի ժամանակին յայնմիկ մատենագրելով Կղեմէս զիւր պատմութիւնս յիշատակաց (զՅաճախապատում) յառաջնում անդ գիրս կարգելով ժամանակս բերեալ Հասուցանէ զայն մինչև ցմահ Կոմոդեայ. ուստի յայտ է եթէ յաւուրս Աւրելեայ՝ զորմէ բանս է արդ, վասն տակերը նա յայս գործ պատմութեանս։

նորա։ Եւ այլ բազումք յԱղեքսանդր քաղաքի յանկարծակի մբռնեցան առ բանն Քրիստոսի ընդ այն ժամանակս. և որպէս պատմէ՝ եթէ երևեցաւ նոցա ի տեսլեան գիշերի Փոխմինեայ, և կոչեաց զնոսա առ բանն Քրիստոսի։

Վկայերորդ. վասն Կղեմենտեայ ադեքսանդրացւոյ։

Զկնի Պենտենոսի Կղեմենտոս ընկալաւ զաշակերտութիւն աղեքսանդրացւոց. ընդ այն ժամանակս մինչդեռ Իրիդինէս ասացեալ էր, մի յայնցանէ որ աշակերտեալք էին ի Ներքոյ Հեռին նորա էր նա։ Այլ իբրև եդ Կղեմենտոս պատմութիւնս յիշատակաց, յառաջին խասն եդ նա գիրս, զոր բովանդակեաց ժամանակս, մի գրեաց զնա մինչև ի մահն Կոմոդեայ։ Ասէ յայտ լինի եթէ յաւուրսն Աւերելեայ Քանայր և վաստակէր նա յայս պատմութիւնս՝ զոր բանս պատմէ վասն ժամանակացն նոցա։

ԳԼՈՒԽ Է.

Վասն Յուդայի օրինակագիր գրչի։

Յայնմ ժամանակի միւս եւս օրինակագիրք գրիչ էր կաց Յուդաս, որ զեւթանասունն եւթներորդացն Դանիէլի գրելով՝ մինչեւ ի տասներորդ ամ աքքայութեան Սեդեքեայ բռնակալեաց։ Որ և ի քերան հաւատացելոց զտեպ յերկնէրեալ գալուստ Նեռին՝ կարծէր թէ մօտ առ դուրս իցէ, զի այնպէս սաստկագոյն յայնժամ յարեան ի վերայ մեր հալածանքն, և պղտորեցին զմիտս բազմաց։

ԳԼՈՒԽ Ը.

Վասն գործոյ յանդգնութեան Որոգինեայ։

Ի ժամանակին իբրև աշակերտէր Որոգինէս զնորընծայ հաւատացեալս Յաղքսանդրիա քաղաքի, գոր ծեաց ինչ մի զմանկութեան և զթերամտութեան, սակայն զհաւատոց և զգաստութեան ուներով ի նմա

Երրեւերորդ. վասն Յուդայի օրինակագիր գրչի։

Յայնմ ժամանակի այլ միւս եւս օրինակագիրք գրիչ էր, զի անուն էր նորա Յուդա։ Եւ գրեաց և եգ գրով. վասն եւթանասունն և եւթն երերորդացն որ են ի Դանիէլ, և մինչև ի տասներորդ ամն աքքայութեանն Սեդեքեայ բռնակալեաց զգրչութիւն ժամանակաց, զոր եգ և վասն գալստեան Նեռինն։ Կարծէր ի միտս իւր թէ եկն մերձեցաւ, զի այնպէս սաստկագոյն յարեան ի վերայ մեր հալածանքն, և պղտորեցին զմիտս բազմաց։

Որերորդ. վասն իրացն զոր գործեաց Ժպրնոսեւսեմբ Իւրիգինէս։

Յայնմ ժամանակի իբրև աշակերտէր յԱղէքսանդր քաղաքի Իւրիգինէս, գործեաց նա իբրեւ զմանկութեան և զանմտութեան. բայց է ի նմա օրինակ հաւատոց և զգաստութեան նորա։ Զի զայն զոր ասացեալն է յաւետարանի, թէ են ներքինիք որ ինքեանք ա-

զօրինակ։ Զի զբանն Թէ Էն նեբբինիք՝ որ արարին զանձինս իբրեանց նեբբինիս վասն արքայութեան Աստուծոյ. միամտութեամբ և ամենևին մանկաբար ընդունելով՝ համարէր ՚ի միտս իւր կատարեալ զբան փրկչին մերոյ, և մանաւանդ զի մինուկ ևս էր հասակաւ. և զմանուածէր Թէ ոչ միայն արանց արժան է խոսել զբանն Աստուծոյ, այլ և կանանց. որպէս զի հատցէ զպատճառս կարծեաց անհաւատիցն, ժբ. տեցաւ կատարել զբան փրկչին մերոյ արդեամբք, համարեալ Թէ զանխուլ մնասցէ այն ՚ի ծանօթից իւրոց. այլ ոչ ըստ կամաց նորա Թագուն եկայ գործեն, իբրև դիտաց զայն Դեմետրիոս եպիսկոպոս եկեղեցւոյն այնորիկ, զարմացաւ ընդ համարձակութիւն նորա, այլ գյօժարամտութիւն նորա, զպարզութիւն հաւատոցն ընդունելի գտեալ՝ քաջալերեալ յորդորեաց զնա ՚ի գործ վարդապետութեան և ՚ի հրահանգս երախայիւց։ Ապա իսկ զբ էր յայնժամ Դեմետրիոս։ Այլ յետ ոչ բազմից իբրև ետես եթէ յաջողութեամբն մեծաւորի նա և փառաւորի յամենեցունն, տկարացաւ իբրև զմարդ, և գրեաց առ ամենայն եպիսկոպոսունս վասն նորա, և ջանայց ցուցանել զանարժանութիւն գործոյն։ Ինդղի քաջընտիրքն և փոքք և մեծանուն

բարին զանձինս իբրեանց նեբբինիս վասն արքայութեան Աստուծոյ։ ընկալաւ զնա ինքն միամտութեամբ պարզ մտաք, և համարէր ՚ի միտս իւր Թէ զբան Փրկչին մերոյ կատարէր, և մանաւանդ զի մինուկ ևս էր հասակաւ. և զմանուածէր Թէ ոչ միայն արանց արժան է խոսել զբանն Աստուծոյ, այլ և կանանց. որպէս զի հատցէ զպատճառս անմեղութեան զանհաւատիցն, իբրեխոացաւ կատարել զբանս Փրկչին մերոյ արդեամբք. որպէս զի կարծեաց նա Թէ հատցէ զանգամն իւր, և զբ ՚ի ծանօթից իւրոյ մի գիտասցէ. այլ Թէպէտ և կամելով կամեցաւ նա այսպէս, սակայն չէր պարտ Թաքչել այսպիսի գործոց։ Այլ իբրև գիտաց Դեմետրիոս եպիսկոպոս եկեղեցւոյն նոցա, զարմացաւ ընդ համարձակութիւնն զոր գործեաց։ Բայց ընդունելի եղեն նմա խորհուրդք և հաւատք նորա, և նա հրամայեաց նմա համարձակել. և առաւել ևս զնդել ՚ի գործ աշակերտութեանն՝ որ էր անդ։ Բայց յայնմ ժամանակի այսպիսի ինչ էր Դեմետրիոս։ Իսկ յետ ասացս ժամանակաց, նոյն ինքն Դեմետրիոս իբրև ետես եթէ առաքինանայ և յարդի և լուսաւորի և ամենայն մարդոյ անուանի, և իբրև զմարդ հիւանդացաւ նա. և գրեաց առ ամենայն եպիսկոպոսս վասն նորա, եթէ գործս՝ առ՝ անարժան գործեաց, իբրև նոցուն եպիսկոպոսացն պաշտօնեա-

եպիսկոպոսունք Պաղեստինացւոց, զկնեսարացւոցն ա-
սեմ և զՂերուսաղեմացւոց, մեծի պատուոյ արժանի դա-
տեալ զՈրոգինէս, ձեռն երիցութեան եդեալ ի
վերայ նորա։ Եւ իբրև ի մեծ փառաւորութիւն ամ-
բաւնայր նա, և վասն առաքինութեանն և իմաստու-
թեան՝ զանուն առ ամենայն մարդիկ ընդ ամենայն
տեղիս ստանայր, և ոչ մի ինչ գտանէր Դեմոփղոնս՝
որ ամբաստան լինիցի զնմանէ, չարախօս կայր այնու-
հետև զգործոյն՝ զոր ի մանկութեան իւրում գոր-
ծեաց նա, և համարձակեցաւ խառնել կայն ամբաս-
տանութիւն և զայնոսիկ՝ որ երէցն արարին գնա։
Բայց այս սակաւ ինչ զկնի եղև. իսկ կայնժամ Որո-
գինէս յԱղեքսանդրիա էր ի գործ աստուածային բա-
նին, և որոց մեքենայինն առ նա անխափան զցայգ
և զցերեկ քարոզէր, հանապազորդելով անձամբիր
յուսումն աստուածեղէն ընդ ունկնդիրսն իւր։

Եւ կացեալ Սեւերոսի զութատան ամն յիշխա-
նութեան անդ իւրում, պայազատէ գնա Անտոնինոս
որդի նորա ընդ նորա։

Իսկ կայնցանէ որ առաքինացանն ի հալածանս ժա-
մանակին, և յետ խաստովանութեան և մրցանացն
պահեցան տեսչութեամբն Աստուծոյ՝ էր և Աղեքսան-

ցւոց որք փորձել և աքանչելիք էին յամենայն կեսարացւոց, և ե-
րուսաղէմ, ձեռն երիցութեան եդեն ի վերայ Որոգինէսի. քան-
զի փորձեցին գնա թէ արժանի է առաւել պատուոյ։ Այլ իբրև ա-
ռաւել նա մեծամեծ փառաց, և սերտացաւ անուն նորա և առա-
քինութիւն զնորութեան և զիմաստութեան առ ամենայն մարդիկ ընդ ամենայն տեղիս։ Իբրև ոչ գտանէր Դեմոփղոնս որ ամբաս-
տան լինիցի գնմանէն, եթէ ի վերայ նորա չարախօսութիւն զերացն
զոր գործեաց ի մանկութեան իւրում. համարձակեցաւ նախ խառ-
նել ընդ նմա յամբաստանութեան անգր՝ և զայնոսիկ որ երէցն ա-
րարին գնա։ Բայց այս ինչ եղև զկնի սակաւ ժամանակի, և Որո-
գինէս էր յԱղեքսանդր քաղաքի, ի գործ վարդապետութեանն Ա-
ստուծոյ անարգել զօրանայր զցայգ և զցերեկ՝ զայնոսիկ որ մեքե-
նայինն առ նա, և հանապազորդէր նա ի վարդապետութիւն անգր
Աստուծոյ առանց զանձրանալոյ, առ այնոսիկ որ աշակերտէին ի
նեբբոյ ձեռն նորա։ Այլ իբրև եկաց յարբայութեան անդ զութա-
տան ամ Սեւերիոս, Անտոնինոս որդի նորա կալաւ զկնի նորա։
Բայց յայնմ ժամանակի յայնցանէ որ առաքինացանն ի հալածանսն,
զկնի պատճառանացն զոր արարին խոստովանութեամբ և պահեցան
տեսչութեամբն Աստուծոյ, մի յայնցանէ էր Աղեքսանդրոս. զի նա

դրոս, որ և յետ ոչ բազմաց եկաց եպիսկոպոս եկե-
ղեցւոյն Երուսաղէմի. որ վասն փառաւոր խոստովա-
նութեանն ի Քրիստոս՝ արժանի եղև այսմ եպիսկո-
պոսութեան. իսկ Նարկիսոս՝ որ եպիսկոպոսն էր յա-
ռաջ քան զնա, դեռ ևս կենդանի էր յայնժամ։

ԳԼՈՒԽ Թ.

Վասն սքանչելեացն՝ որ եղեն ի ձեռն Նարկիսեայ։

Այլ զբանչելիս բազումս իբրև ի տուչութենէ և ի կարգելոյ եղբարց պատմեն վասն Նարկիսեայ հաւատացեալք եկեղեցւոյն այնորիկ. ընդ որս և զայսպիսի ինչ նշան սքանչելեաց ի նմանէ եղեալ յիշատակեն. էր երբեմն զի ի մեծ հսկումն տօնի Զատկին պակասեաց ձէթ սարկաւագին, և իբրև տրտմութիւն կալաւ զամենայն ժողովուրդն վասն այսորիկ, հրամայ յեաց Նարկիսոս այնոցիկ՝ որ զձրագունսն հանդերձէին, բերել մատուցանել նմա ջուր ի մերձաւոր ջրոյ հորոյ անտի, և իբրև հանեալ բերին զայն, յաղօթս եկաց ի վերայ ջրոյն, և պինդ հաւատովն զոր ունէր առ Տէր մեր, հրամայեաց արկանել զայն ի ձրագան։ Եւ իբրև արարին զայս, սքանչելի զօրութեամբն Աս-

եկաց եպիսկոպոս եկեղեցւոյն Երուսաղէմի. և որպէս այլ մի զի փառաւորեցաւ խոստովանութեամբն վասն Քրիստոսի, արժանի եղև այս եպիսկոպոսութեան՝ զոր ասացաք վասն նորա, մինչդեռ կենդանի էր յաշխարհի Նարկիսոս. այն որ էր յառաջ քան զնա անդ եպիսկոպոս։

Ինևերորդ. վասն սքանչելեացն որ եղեն ի ձեռն Նարկիսեայ։

Այլ սքանչելիս բազումս իբրև ի տուչութենէ և ի կարգելոյ եղբարց պատմեն վասն նորին Նարկիսեայ։ Բայց յիշեն և զայս ևս նշան սքանչելեաց որ եղեն ի ձեռս նորա. զի էր երբեմն հսկումն մեծ տօնին զատկաց, պակասեաց ձէթ սարկաւագին, և տրտմութիւն կալաւ զամենայն ժողովուրդն վասն այսորիկ։ Իսկ Նարկիսոս հրամայեաց այնոցիկ որ զձրագան հանդերձէին՝ բերել մատուցանել նմա ջուր. և իբրև այս եղև, եկաց յաղօթս ի վերայ ջրոյն, և հրամայեաց արկանել ի ձրագան պինդ հաւատովն

տուեցոյ, ՚ի վեր քան զամենայն միտս, չքնեցան ջուրքն ՚ի բնութիւն ձիթոյն. և առ բազում եղբարս սակաւ մի ՚ի ձիթոյն յայնմանէ պահեցաւ մինչև ՚ի մեր ժամանակս՝ ՚ի ցոյց և ՚ի յիշատակ աբանչելեացն։ Եւ այլ բազում ինչ վասն կենաց առն այնորիկ արժանի յիշատակի պատմեն, ընդ որս և այսպիսի ինչ։ Աբբ ոմանք չարք ոչ կարեցին տանել ժուժկալ սնդութեան նորա և անապատ սաստկութեան բարուցն, և երկուցեալք զի մի ըմբռնեսցին և անկցին ՚ի դատաստան նորա, որոց վկայէին խիղճ մտացն վասն բազմապատիկ չարեացն գործելոց, յառաջեցին նուիրեցին պատճառս նենգութեան, և բերին կուտեցին ՚ի վերայ նորա պէսպէս չարախօսութիւնս, և առ ՚ի հաւանեցուցանել զլսողս իւրեանց երդմամբ հաստատէին զամբաստանութիւնն։ Էր որ երդնոյր եթէ հրով այրեցայց, թէ չիցէ այս այսպէս. և էր որ խոհս և չարաչար հնարագութեամբ ծախսեցի մարմին իւր, ասէր. և երրորդ ոմն, թէ կուրասցին աչք իւր։ Եւ թէպէտ այսպէս երդնուին նորա և նզովէին զանձինս իւրեանց, սակայն ոչ աբ ՚ի հաւատացելոց անտի միտ դնէր բանից նոցա, վասն հանապազորդ ցածուն և սքանչելի վարուց Նարկիսեայ։ Բայց նա ոչ կարելով տանել դըժ-

զոր ունէր առ աւեր մեր։ Եւ իբրև արար զայս սքանչելիս զօրութեամբն Աստուծոյ, այն որ առաւելն է քան զբանս, չքնեցան ջուրքն ՚ի բնութիւն ձիթոյ, և առ եղբարս բազումս որ են անդ յայնմ հետէ մինչև առ մեզ պահեցան ՚ի նմանէ սակաւիկ մի ՚ի ցոյց տեսլեան սքանչելեացն։ Բայց և այլ բազում ասեն վասն վարուց առնն այնորիկ, թէ արժանի է յիշատակի. զի նոքունքբ իսկ ասի այս, թէ վասն ժուժկալութեան սորին և վասն ձգնարուեստութեան վարուց նորա, զի էին մարդք չարք որ ոչ կարէին համբերել նմա, և երկնչէին զի մի ըմբռնեսցին նորա և անկցին ՚ի դատաստանս նորա. քանզի հաստատեալ գիտէին յանձանց իւրեանց զչարիսն զոր գործէին. և յառաջեցան նուիրեցին ՚ի վերայ նորա պատճառս նենգութեան, և բերին կուտեցին ՚ի վերայ նորա պէսպէս չարախօսութիւնս։ Եւ ՚ի հաւանեցուցանել նոցա զլսողսն իբրեանց, երդմամբ հաստատէին և ստուգէին զամբաստանութիւնն։ Եւ մին ՚ի նոցանէ երդնոյր և ասէր, թէ չիցէ այս՝ հրով այրեցայց։ Ա.յլ միւսն ասէր. Թէ չիցէ այս, չարաչար հնարագութեամբ և առնջանօք սպառեսցին մարմինք նորա։ Իսկ երրորդն ասէր. Թէ այս այսպէս չիցէ՝ աչք նորան կուրասցին։ Թէպէտ և այսպէս երդնուին և նզովէին, սակայն ոչ ՚ի հաւատացելոց անտի ոչ նայէր ՚ի նոսա, վասն հանապազորդ ցա-

նէ՝ութեան քանից նոցին, և զի սիրէը եւս ՚ի քնէ զվարս միանձնութեան, փախեաւ ՚ի ժողովրդենէ անտի եկեղեցւոյն, և յանապատի և յանդիստ տեղիս քնաւկէը զամս բազումս։ Բայց սակայն ակն մեծ արդարութեան դատաստանացն Աստուծոյ ոչ հանդարտեալ եկաց ՚ի վերայ գործոցս այսոցիկ, այլ վաղվաղակի փոյթ ընդ փոյթ էած հասոյց զհատուցումն բարկութեան ՚ի վերայ ամբարշտացն, զանէծս նզովիցն զոր ինքեանք հասին ՚ի վերայ անձանց իւրեանց ՚ի սուրբն իւրեանց և ՚ի զուարթութիւն։ Այլ այն առաքինին իրրեւ չէր ինչ մի ՚ի պատճառանացդ, ՚ի սակաւ մի ՚ի փոյթսատկանէ՝ որ անկաւ ՚ի սոսին յարամ բնակեալ էր նա, ՚ի գիշերի վարկեաւ հանգիստ ընդ սմինայն առանն, և այրեցաւ նա, և սմինայն ազգատոհմ իւր։ Իսկ երկրորդն, յանկարծակի սմինայն մարմինն իւր առ հասարակ յոտից մինչև ցգլուխս հարաւ չարաչար կեղիւ, զոր և ընտրեացն վասն իւր։ Իսկ երրորդին տեսեալ զանոյս պատուհասի առաջինոյն և երկուցեալ ՚ի դատաստանաց անտի Աստուծոյ սմինայնի, և խոստովան եղև զչարախորհուրդ միաբանութիւնն իւրեանոյ յայս զրպարտութիւն։ Եւ այնպէս ապա սուգ առեալ կոծէը և լայր բազում արտասուօք և զղջմամբ և ոչ գադարէր, մինչև կուբացան երկոքին

ծառն և աքանչելի գործոց նարեկասայ։ Բայց նա քանզի համբերէը չարեացն նոցա, և զի սիրէը եւս ՚ի քնէ զվարս միանձնութեան, փախեաւ ՚ի ժողովրդենէ անտի եկեղեցւոյն, և յանապատի յանդիստ տեղիս Թաբաւենայ բնակէը զամս բազումս։ Բայց սակայն ակն մեծ դատաստանացն Աստուծոյ յայնոսիկ որ գործեցաւն ոչ հեզգոյաւ, այլ վաղվաղակի փոյթ ընդ փոյթ էած հասոյց զհատուցումն բարկութեան ՚ի վերայ ամբարշտացն, զանէծն նզովիցն զոր ինքեանք հասին ՚ի վերայ անձանց իւրեանց ՚ի սուրբն իւրեանց և ՚ի զուարթութիւն։ Այլ այն առաքինին իրրեւ չէր ինչ մի ՚ի պատճառանացդ, ՚ի սակաւ մի ՚ի փոյթսատկանէ՝ որ անկաւ ՚ի սոսին յարամ բնակեալ էր նա, ՚ի գիշերի վարկեաւ հանգիստ ընդ սմինայն առանն, և այրեցաւ նա, և սմինայն ազգատոհմ իւր։ Իսկ երկրորդն, յանկարծակի սմինայն մարմինն իւր առ հասարակ յոտից մինչև ցգլուխս հարաւ չարաչար հիւանդութեամբ և տանջանօք, այն որ ինքն իսկ ընտրեաց իւր։ Իսկ երրորդն իրրեւ տեսեալ զայդ անցք անցին ընդ առաջին ընկերան իւր, երկեաւ ՚ի դատաստանաց անտի Աստուծոյ տեսողին սմինայնի, այն որ ոչ ոք կարէ փախչել ՚ի նմանէն, և խոստովան լինէը սմինայն մարդոյ զչարիսն զոր խորհեցան ՚ի մէջի իւրեանց։ Եւ այսպէս սուգ առեալ կոծէը և լայր, և լայր բազում արտաս-

աչք իւր։ Եւ սոքա արդ այսպէս եւտուն զլրեժ պատուհասին վասն զուր տարապարտուց չարախօսութեանն։

ԳԼՈՒԽ Ժ.

Վասն եպիսկոպոսացն Երուսաղեմացւոց։

Իբրև տեղի տուեալ հեռացաւ Նարկիսոս, և ուր երն չէր յայտ, հաձոյ եղև եպիսկոպոսաց եկեղեցեացն որ սահմանակիցք էին, կացուցանել այլ եպիսկոպոս փոխանակ նորա, որոյ անունն էր Դիոս. որ կացեալ ոչ բազում ինչ ժամանակս, զկնի նորա կալաւ Գերմանիոն և ապա Գորգիոս։ Եւ յաւուրս սորա իբրև 'ի յարութենէ մեռելոց 'ի վեր երևեցաւ Նարկիսոս, և դարձեալ ազաւեցին զնա եղբարք գալ վերըստին յառաջնորդութիւն վիճակին. քանզի ամենեքեան զարմացեալ էին վասն 'ի բաց մեկնելոյն և վասն իմաստութեան նորա. և քան զամենայն վասն վրէժխնդրութեանն, զոր արար նմա Աստուած։

սուքք և զշմամբ, և ոչ դադարէր մինչև կուբացան երկոքին աչք իւր։ Այլ նոքա զայս պատիժս ընկալան զատութեան զպարտեալոց իւրեանց։

Տաճնեորդ. վասն եպիսկոպոսացն որ նոքա յԵրուսաղեմ։

Իբրև հեռացաւ Նարկիսոս, և ուր երն չէր յայտ, հաձոյ եղև եպիսկոպոսաց եկեղեցեացն որ մերձ էին անդր, զի կացուսցին եպիսկոպոս այլ փոխանակ նորա, զի անուն էր նորա Դիոս։ Իբրև եկաց սա սակաւ ժամանակս, կալաւ զկնի նորա Գերմանիոն, և զկնի նորա Գորգիոս։ Եւ յաւուրս նորա իբրև 'ի յարութենէ մեռելոց երևեցաւ 'ի տեղւոջ ուրեք Նարկիսոս։ Եւ գարձեալ ազաչեցին զնա եղբարք, զի եկեալ կացցէ յեկեղեցւոջ իւրմէ. և ամենայն մարդ մեծապէս և զարմացեալ էր ընդ նմա, վասն այնր զի հեռացաւն և վասն վարուց իմաստութեան նորա. և առաւել և քան զամենայն ինչ վասն վրէժխնդրութեանն զոր արար նմա Աստուած։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Վասն Աղեքսանդրոսի։

Եւ իբրև ոչ կարէր այնուհետեւ Նարկիսոս առ յոյժ ծերութեանն վարել զպաշտօն առաջնորդութեան իւրոյ, զԱղեքսանդրոս զկանուխ յիշատակեալս ՚ի միջի, զայլոց եկեղեցւոց եպիսկոպոս՝ կոչեաց տեսչութիւնն աստուածային ՚ի ձեռն տեսլեանն յայտնելոյ նմա ՚ի գիշերի, ՚ի պաշտօնակցութիւն ընդ Նարկիսեայ։ Յորժամ ըստ տեսլեանս, որպէս յաստուածայնոյն հրամանէ եղեալ նորա ՚ի կողմանց անտի Գամրաց՝ ուր եպիսկոպոսն էր զառաջինն, գայր Յերուսաղէմ յայցելութիւն տեղեացն և յաղօթս. ընկալան զնա եղբարքն սիրով, և ոչ թոյլ ետուն նմա միւսանգամ դառնալ անդրէն յաշխարհ իւր, այլոյլ յայտնութեամբ՝ որ յուցաւ նոցա ՚ի գիշերի, զի ձայն եղեալ առ նոսա յայնաւարարսա՝ որ երևելիքն էին ՚ի սրբութեան, և հրաման Աստուծոյ, ելանել նոցա արտաքս քան զդուռն քաղաքին, և զկարգեալ նոցա Աստուծոյ ընդունել զեպիսկոպոսն։ Ցոր իբրև արարին միաբան հաւանութեամբ սահմանակից եպիսկո-

Մեկնաբանութիւն. վասն Աղեքսանդրեայ եպիսկոպոսի։

Իբրև ոչ կարէր այնուհետեւ Նարկիսոս այն որ ասացաքն վասն նորա՝ վասն բազում ծերութեան նորա, զԱղեքսանդրոս այն որ էր եպիսկոպոս այլոյ եկեղեցւոյ, կոչեաց զնա տեսչութիւնն Աստուծոյ ՚ի ձեռն տեսլեանն որ երևեցաւ նմա ՚ի գիշերի պաշտել նմա ընդ Նարկիսոս։ Բայց եկեալ էր նա ՚ի կողմանց անտի Գամրաց, ուր էր եպիսկոպոս զառաջինն, որպէս զի յաղօթս կացցէ յԵրուսաղէմ, և տեսցէ զտեղիսն որ անդ իցեն ըստ տեսլեանն Աստուծոյ. և որդիքն զնա եղբարք անդէն սիրով, և ոչ թոյլ եւտուն նմա միւսանգամ դառնալ անդրէն յաշխարհ իւր։ Եւ նորա իսկ ՚ի ձեռն տեսլեան միւսոյ որ երևեցաւ նոցա ՚ի գիշերի, զի ամենեցուն օրք միանգամ փոյթք և պիղծք էին ՚ի նոսա միաբան ասացաւ նոցա հաւաստութեամբ ելանել նոցա արտաքս քան զդուռն քաղաքի, և ընդունել զեպիսկոպոսս, այն որ Աստուծոյ յառաջագոյն ընտրեցաւ նոցա։ Ապա իբրև զայս արարին խոնարհութեամբ եպիսկոպոսացն

պոսացն, և իբրև ՚ի հարիկ բանի արգելին զնա անդէն։ Բանզի յիշէ և ինքն Աղեքսանդրոս ՚ի Թուղթս իւր առ Անտիոքեացսն՝ որ կայ պահի մինչև ցայսօր, զգահերիցութիւն Նարկիսեայ ընդ իւր, և գրէ ՚ի վախճան Թղթոյս այսպէս. Հարցանէք զողջոյնէ ձերմէ Նարկիսոս՝ որ յառաջ քան զիս կալաւ զաթոռ առաջնորդութեան տեղւոյս, որ և այժմ արդ պաշտօնակից է ընդ իս յաղօթս, գոլով որդի հարիւր և ութեւտասանաւորի, և աղաչէ զձեզ, որպէս և ես, լինել ձեզ միաբան, ՚ի մի միտս և ՚ի խորհուրդս հաւասար։ Եւ այսքրիկ այսպէս։

Եւ իբրև հանգեաւ Աբրահամն եպիսկոպոս եկեղեցւոյն Անտիոքացւոց, և կալաւ զաթոռն Սկիլիպիադես՝ այն որ ՚ի ժամանակս հալածանացն խոստովանութեամբ փառաւորեցաւ, յիշէ և զսմանէ Աղեքսանդրոս գրելով առ Անտիոքացիս բանիւքս այսոքիւք.

Աղեքսանդրոս ծառայ և կապեալ Յիսուսի Քրիստոսի առ երջանիկ եկեղեցին Անտիոքացւոց ՚ի Տէր խնդալ։

Թէպէտ և փոքրոգի արար Տէրն մեր զիւրսն իմ

բազմաց որ կային յեկեղեցիսն որ մեռ էին առ նոսա, իբրև ՚ի հարկէ բանի արգելին զնա անդէն։ Այլ յիշէ և ինքն Աղեքսանդրոս ըզնարկիսոս որ եկաց ընդ նմա յիշխանութենէն եպիսկոպոսութեան, ՚ի Թղթի իւրում զոր գրեաց առ Անտոնինեայ, զի կան առ մեզ Թուղթքն այն մինչև յայսօր ժամանակի։ Գրեաց իսկ զայս բանս ՚ի կատարածի անդ Թղթոյն և ասէ. Չարցանէք զողջոյնէ ձերմէ Նարկիսոս, այն որ յառաջ քան զիս նա վարեր զայս տեղի եպիսկոպոսութեան, և այժմ աղօթիւք իւրովք զնգեալ նա առնել զիմն. գրուածս ինչ հանգերձ։ Եւ են առաւել կնոց սորա ամք իբր հարիւր և ինն։ Եւ աղաչէ սա զձեզ որպէս և ես իսկ, լինել ձեզ միաբան ՚ի մի միտս և ՚ի խորհուրդս հաւասարք։ Եւ այս այսպիսի լեալ։

Երկոտասաներորդ. վասն Աբրահամեայ և վասն խօսիցն որ եղեալ է առաջ։

Այլ իբրև հանգեաւ Աբրահամն եպիսկոպոս եկեղեցւոյն անտիոքացւոց, կալաւ զնորա Սկիլիպիադես, այն որ փառաւորեցաւն խոստովանութեամբ հալածանաց։ Յիշէ իսկ զնա Աղեքսանդրոս, այն որ առն վասն նորա զի գրեաց այսպէս. Աղեքսանդրոս ծառայ և կալանաւորս Յիսուսի Քրիստոսի, առ երանելի եկեղեցիդ անտիոքացւոց՝ ՚ի տէր ողջոյն։ Աւաղ Տէր մեր զկապանս իմ, զի Թե-

'ի ժամանակի՝ յորում էի ես 'ի տան բանդին, զի լուայ վասն եկեղեցւոյդ ձերոյ սրբոյ Աստիճանացողդ, եթէ լրեալ 'ի հոգաբարձութենէ անտի Աստուծոյ եկաց 'ի դմա եպիսկոպոս արժանաւոր Հաւատովքն Ակակիսիադէս։ Եւ զի ետ տանել զձուղեն զայս 'ի ձեռն կղերմայ, յուցանել զայն 'ի կատարածի նորուն այսպէս. Եթող բերել ձեզ զդիրս, տեարք իմ եղբարք, 'ի ձեռն կղերմայ, երանելւոյ երիցու, առն առաքինւոյ և հանդիսիւ փորձ և ընտիր գտելոյ, զոր և դուք ինքնին քաջ գիտէք՝ որ իբրև յակնարկութենէ կամաց և 'ի խնամոց Տեառն առ մեզ էր, հաստատեաց և աՃեցոյց զեկեղեցին Քրիստոսի։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Վասն Սերապիոնի և վասն Տանեուցեալ առ մեզ գրոց նորա։

Իսկ Սերապիոնի ընդ գրոցն վարժից կրթութեան և այլ ևս յիշատակք վարդապետութեան նորա թըւին պահեալ առ այլս. բայց այնոքիկ առ մեզ միայն հասին, զոր գրեացն առ Դոմնինոս ոմն՝ որ 'ի ժամանակի հալածանաց կործանեցաւ 'ի հաւատոյն Քրիստոսի 'ի պաշտօն հրէութեան, և զորս առ Պոնտիոս և

թէ լեցի ինձ 'ի ժամանակի անդ յորում էի ես 'ի տան բանդին, զի ուսեալ գիտացի ես վասն եկեղեցւոյդ ձերոյ սրբոյ անաւրէնացողց. զի իբրև 'ի հոգաբարձութենէ անտի Աստուծոյ եկաց 'ի դմա եպիսկոպոս Ակակիսիոս. զի դմա պատշաճ է լինել քան արժանի հաւատոց իւրոց։ Ցայսմ ձգեմ յուցանել 'ի կատարածի նորուն, զի ես տանել զնա 'ի ձեռն Կղեմինտոսի. բայց գրեաց այսպէս. Զայս դիրս եառ բերել ձեզ, եղբարք իմ և տեարք, 'ի ձեռն Կղեմինտոսի երիցու երանելւոյ, առն աբանելոյ և քննեալ յամենայնի. այն զի և դուք ինքնին քաջ գիտէք զդա, այն որ իբրև եկն այսր՝ մեծաւ հոգաբարձութեամբ իւրով գործոյ Տեառն հաստատեաց, և աՃեցոյց զեկեղեցի Քրիստոսի։ Իսկ Սերապիոնէսդ, այն որ փորձ մի յառաջ ժամուս առացաք մեք վասն նորա, Թուի թէ նորա այլ գիրք գոն առ բազումս վարդապետութեան բանից իւրոց։ Բայց մեք զայնս և եթէ գիտացաք զոր գրեաց առ Դոմնինէ, որ կործանեցաւ 'ի ժամանակի հալածանաց 'ի հաւատոյ անտի Քրիստոսի 'ի պաշ-

առ Կարիկոս Ժառանգաւորս եկեղեցւոյ, և այլ ևս Թուղթս առ այլս ոմանս։ Դարձեալ և գիրս վասն աւետարանին՝ որ Պետրոսի կոչի, յանդիմանելով որ ի նմա ստութիւնք էին, առ ոմանս ի Հռոսացւոց՝ եկեղեցւոյն, որ ի պատճառս գրոցն այնոցիկ խոտորեցան ի վարդապետութիւնս և յուսմունս օտարաձայնս։ Եւ չէ իսկ անդէպ բերել աստանօր բանս ինչ ի գրոցս յայսցանէ, յորս յայտնի երևի՝ թէ որպիսի խորհուրդք էին նորա զաւետարանին. Մեք, եղբարք, ասէ, զՊետրոս և զայլ առաքեալսն իբրև զքրիստոս ընդունիմք, այլ որ ինչ միանգամ յանուն նոցա ստութեամբ գրեալ են, խոտեմք և անարգեմք, իբրև կիրթք և հմուտք, քանզի գիտեմք թէ ի նախնեաց անտի զայսպիսի ինչ մեք ոչ ընկալաք։ Զի յորժամ առ ձեզ էի՝ թուէր ինձ թէ ամենեքեան ուղիղ հաւատով ընթանայիք. և իբրև զաւետարանն՝ զոր յանուն Պետրոսի ունէին ոմանք ի ձէնջ, ոչ կամեցայ ընթեռնուլ, ասացի, եթէ այդ իցեն ի ձեզ պատճառք կարձմտութեան ձերոյ՝ ընթերցարուք. բայց արդ գիտացի ի բանից անտի նոցա, եթէ հերձուած կայ թաքուցեալ ի միտս նոցա, վասն որոյ փութամ միւսանգամ գալ առ ձեզ։ Արդ մնասջիք ինձ ընդ հուպ, եղբարք, և ի

ոճն հրեւութեան։ Եւ այլ միւս ևս զոր գրեաց նա առ Պնտիոս և առ Կրիկոս, առ մարդս մանկունս եկեղեցւոյ. և այլ ևս Թուղթս առ այլս, և դարձեալ միւս ևս խօսս որ եգեալ է նորա վասն աւետարանին որ կոչի Պետրոսի, և յանդիմանեաց նա որ միանգամ ասացեալ էր ի նմա ստութեամբ, վասն ոմանց որ խոտորեցան ի պատճառս գրոցն այնորիկ յօտար յուսմունս անդ յեկեղեցւոջ անգրուածացոց։ Բայց արժան է գնել սակաւ մի բանս ի նմանէ. և ցուցանէ և յայս առնէ նոքօք թէ որպիսի խորհուրդք էին։ Եւ վասն գրոցն այնմիկ գրէ այսպէս։ Մեք, ասէ, եղբարք, զՊետրոս և զայլ առաքեալսն իբրև զքրիստոս ընդունիմք, այլ որ ինչ միանգամ յանուն նոցա ստութեամբ գրեալ են՝ խոտեմք և անարգեմք, իբրև մարդք կիրթք և հմուտք. զի գիտեմք մեք եթէ զայս ոչ ընկալաք, այլ ես իբրև եկի առ ձեզ՝ թուէր ինձ՝ ի միտս իմ եթէ ուղիղ հաւատով մերձեցարուք դուք. և իբրև ոչ ընթերցաք մեք զաւետարանն զայն, զոր յանուն Պետրոսի ունէին ոմանք ի ձէնջ. ասացի՝ զամ եթէ այս և եթ առնէ ի միջի ձերում պատուէր՝ ընթերցարուք։ Բայց այժմ զի գիտացի եթէ հարցուած թաքուցեալ էր ի միտս նոցա, վասն այնր որոյ ասացին, ես փոյթ ունիմ միւսանգամ գալ առ ձեզ։ Արդ, եղբարք, զի տեղեկացայք և ի վերայ հասէք

միտ առնուցուք եթէ յորմէ՞ հերձուածոյ էր Մարկիոն, որ հակառակէր ընդ անձին իւրում՝ և զայն ինչ զոր խօսէրն ոչ խմանայր. և զոյն զայս ուսմունք՝ ի գրելոց աստի առ ձեզ։ Յանօթի առեալ իմ զայն գիրս յայլոց՝ որ տեղեակք էն և կիրթք աւետարանին, յա- շակերտութենէ առաքելոցդ անտի նոցա ուսեալ՝ զորս և երևութականս կոչեմք, զի բազում իմաստք էն ի նմա՝ ի վարդապետութենէ անտի նոցա, և ընթեր- ցեալ՝ ի միտ առի։ Էն են արդարև՝ ի նմա և բանք ըստ Հնմարիտ վարդապետութեան Փրկչին մերոյ. սակայն և բազում ինչ կամակորեալ, զորոց գրեցի առ ձեզ։ Եւ այս վասն Սերապիոնեայ։

ԳԼՈՒԽ Ժ.Գ.

Վասն գրոցն Կղեմայ։

Իսկ որ Կղեմայ Յաճախապատում գիրքն էն և պա- հին առ մեզ՝ ուրեք էն թուլ, մանկագրեալ Տիտոսի Փաւլոսի Կղեմայ վասն Հնմարիտ փիլիսոփայութեան յիշատակացն գիտնականաց յաճախապատում մա- տեան։ Էննորա դարձեալ և գիրքն օրինակաց կամ նմա

թէ յորմէ՞ հերձուածոյ էր Մարկիոն, զի հակառակէր անձին իւ- րոյ, և զայն ինչ զոր խօսէրն ոչ խմանայր, զոյն իսկ զայս ուսանիք դուք յայնցանէ որ գրեցան ձեզ. զի էս կարացի առնուլ յայլոց և ընթեռնուլ՝ յայնցանէ որ տեղեակ էին այն աւետարանին, յա- մինոյն յայնցանէ որ ընկալան յայնցանէ որ սկսան՝ ի նա, զի ըզ- նոսա կոչեմք մեք կարծէ . . . խօսա։ Բազում միաբ որ էն՝ ի նմա յուսանիկ անտի իւրեանց էն, զի՝ ի նոցանէն ինդրեցաբ մեք և ըն- թերցաբ։ Բայց էն՝ ի նմա բազում բանք, բան պարզ վարդապե- տութենէն Փրկչին մերոյ. իսկ կէսքն փոփոխեալ էն, զի զայնմ իսկ գրեցաբ մեք ձեզ։ Եւ այս է վասն Սերապիոնեայ։

Երկբտասաներորդ. վասն խօսից զոր գրեաց Կղեմէնտոս։

Իսկ Կղեմէնտեայ գոն գիրք պատմութեանց զոր եգեալ է իւր ուրեք, որ կան առ մեզ մինչև ցայսօր ժամանակիս, որ գրեալ է՝ ի վե- րայ նոցա յիշատակ պատմութեանց Տիտեայ Փաւլոսի, Կղեմէն- տոս՝ ի գիտից փիլիսոփայութենէն Հնմարտութենէն։ Եւ գարձեալ այլ խօսք էն նորա ուրեք վասն նմանութենէն որ էն՝ ի գիրս, զի նո-

նուիրեան՝ նոյնպէս ուղի Թուղի, յորս յանուանէ յիշէ զՊանտենոս վարդապետ իւր. և զմեհինութիւնս ի նախնեաց անտի ընկալեալ և զաւանդութիւնս ի սմա բովանդակելոյ։ Էն նորա և այլ խօսք՝ Յորդոր առ Հելլենս. և երեք գիրք ի դաստիարակն իւր. և միւս ևս դարձեալ Թէ Ո՞ր մեծատուն է՝ որ կեայ. և ս և վասն Ջատկի, վասն պահոց, վասն ջարախօսութեան. Յորդոր խրատու համբերութեան առ Ղորակինիք հաւատացեալս, որ և մնկագրի վասն կանոնաց եկեղեցւոյ. և վասն այսոցիկ որ ի հրեութիւն թևակոխեն՝ զոր գրեաց առ յառաջագոյն յիշատակեալս մեր Սղբսանդրոս եպիսկոպոս Երուսաղէմի։

Ի ցաշխատասպատում գիրս իւր Կղեմէ՝ ոչ միայն որ ինչ ի սուրբ գիրս էր ծաղկաքաղ արար, այլ և ի ցուց նաց անտի որ շահ օգտութեան էր ի նոսա՝ յիշեաց, զՅուդա և զլաւրբարոսաց զկարծիս ժողովեաց, և զզ գլխաւոր աղանդոց հերձուածոց զմոլորութիւնս յան դիմանեաց։ Բազում պատմութիւնս ած սփռեաց, և բազմատուփն օրինակս խրատու և իմաստութեան մէջ մատակարարեաց, յամենեսեան ի սոսա խառնելով և զկարծիս փիլիսոփայից. վասն որոյ և Ճահոզապէս կո-

քօք յանուն իւր յիշէ նա զՊենտանոս որ վարդապետն իւր էր, և գրեաց վասն ամենայնի զոր ընկալաւ ևս նմա։ Բայց են նորա և այլ խօսք ընդդէմ հերձուածոց՝ յօժարութեան. և երկրորդ խօսք՝ խրատու. և միւս ևս որ գրեալ է ի վերայ նորա, եթէ որ է մեծատունն որ կեայ. և այլ միւս ևս զատկի. և գոյն ուսուցին զատկի. և վասն չարախօսութեան. և այլ միւս ևս վասն յօժարութեան Համբերութեան որ մկրտիցին նորոգութեամբ. և դարձեալ միւս ևս որ գրեալ է ի վերայ նոցա վասն կանոնաց եկեղեցւոյ. և գրեալ է ընդդէմ այնոցիկ որ պահէին զհրեութիւնն, որ գրեաց զնա առ Ալէքսանդրոս, այն որ ասացաքն վասն նորա՝ եթէ էր նա եպիսկոպոս Երուսաղէմի։

Զորիքրատաւևերորդ. թէ քանի գիրս յիշատակեաց Կղեմենտոս։

Ի գիրսն յայնս զոր եդ Կղեմէնտոս՝ զպատմութեանցն, որ ոչ միայն զայն ինչ որ էր ի գիրս սուրբս պատմեաց, այլ և զայն ինչ որ ասացաւ ի Ցուսեպպոսէ. որ երեք Թէ իցէ ի նմա շահ օգտութեան։ Յիշեաց ի նմա և ասաց վասն բազում աղանդոց յուսեաց և բաբաբոսաց, և յանդիմանեաց զսուտ կարծիսն զգխաւորաց հերձուածոցն, և տարածեաց ընդ պատմութիւնս բազումս, և ևս մեզ օրինակ բազում վարդապետութեան, զխրատու և զիմաստութեան.

*չեաց զդիբս Յաճախապատում՝ Եւ վարիցնա յայնս վը-
կայութեամբ՝ի գրոց անտի յայնցանէ, որոց վասն երկ-
մտութիւն է, որպէս յիմաստութենէն Սողոմոնի,
՝ի Ցեսուայ որդւոյ Սիրաքայ, և ՝ի Թղթոց անտի Եր-
եայեցւոց և ՝ի Թղթոյն Բառնաբայ և ՝ի Կղեմայ և ՝ի
Յուդայ։ Զիշէ և զՅատիսնու զիրսն ընդդէմ Հելլե-
նաց և զկաստիսնուէն վասն ժամանակագրութեան.
նոյնպէս դարձեալ և զՔիլեն և զԱբիստաբուլոս և ըզ-
Յովսեպոս և զԴեմետրիոս և զԵւփոլեմոս, զօրինակա-
գիր գրիչս Հրէից. և զի ամենեքին սոքա ցուցին եթէ
երկ է ժամանակաւ Մովսէս և ազգն Հրէից քան զա-
մենայն հնախօսութիւնս նախնեացն Հելլենաց։ Եւ
այլ պէսպէս կարևոր հմտութեամբք լի են բանք առն
այսորիկ. յորում յառաջին գիրս անդ զանձնէն խո-
սելով՝ մեծաւոր առ աշակերտս առաքելոցն լինել ա-
սէ։ Ի նոյն գիրս դարձեալ խոստանայ և մեկնութիւնս
զԱբրահամեան առնել։ Եւ ՝ի խօսս իւր որ վասն Յատ-
կին՝ խոստման լինի յայլոց ՝ի սոյն եկեալ։ զի զտու-
թեան զոր յերկրացոյց անտի յակամայս ունէր՝
գրով Թողուցաւ որոց զկնի գալոց իցեն ազգ։ Յի-*

*և ՝ի առա ամենեքին առնէ նա և զաղանդն փիլիսոփայից. և վասն
այսորիկ գրեաց ՝ի վերայ նոցա զնմանութիւն Յառնա այսորիկ, և
կոչեաց զնոսա յերկատակս պատմութեանց։ Բայց առնու ՝ի նոցանէն
՝ի վկայութիւն ՝ի գրոց անտի յայնցանէ որ երկմտութիւն է վասն
սոցա, այսինքն ՝ի Ջգծութենէ Սողոմոնի, և Եսողայ * որդւոյ Սի-
րաքայ, և ՝ի Թղթոյ անտի Հերթայեցւոց, և ՝ի Թղթոյ անտի Բառ-
նաբայ, և Կղեմենտեայ և Յուդայ։ Բայց յիշէ ՝ի նմա և զխօսն զոր
գրեաց Ցերթանոս ընդդէմ Հելենացոց. յիշեաց և զԱճախանոս,
որ պարբերաբար գիրս վասն ժամանակաց. դարձեալ և զՔիլեն և
զԱբիստաբուլոս, և զՅովսեպոս և զԴեմետրիոս և զԱփիոլեմոս, զի
են նոքա օրինակագիր գրիչք հրէից, և զի ամենեքին ցուցին և յայտ
արարին, եթէ երկ է Մովսէս և ազգասէնին հրէից քան զամենայն
պատմութիւնս առաջինս զոր եգեալ է յաւանդ։ Այ իսկ են խօսք
առն այնորիկ որ ասացաք վասն նորա յառաջին վարդապետու-
թեան, քաղցր և բազում։ Եւ մի ՝ի նոցանէն ասաց վասն անձին իւ-
րոյ եթէ մերձ էր նա առ այնօրիկ օրը ընկալան յառաքելոց անտի,
այլ խոտացաւ նա և յանձն էր առ նոքօք գնել գիրս վասն արարա-
ծոց. և ՝ի խօսն յայնս զոր գրեաց վասն զառակաց խոստման լինի
եթէ յայլմէ բանագտեցաւ նա գնել գրով զառաջութիւնն զոր
լուաւ յառաջին յերկրացոյց անտի, և ապա այնոցիկ որ զկնին գայ-*

* Յօր ՝ի՝ Ա՝ի՝։

*չէ՛ ի սոյն գիրս և զերանոս և զՄելիտոս և զայլս ո-
մանս, զորոց և զպատմութիւնն ածէ՛ ի մէջ։*

ԳԼՈՒԽ ԺԴ.

*Թէ քանի՛ գիրս առտուրամեղէն տառից չիշէ
Կղեմէս։*

*Սոյն սա Կղեմէս՝ ի գիրս օրինակաց, զի միանգամայն
ասացից, զերկոցունցն զՀնոյն և զնորոց կտակարանաց
զՀամառօտ պատմութիւնս կարգեաց. ոչ լռեաց և զայն-
ցանէ որոց վասն երկմտութիւն է, զՅուդայիկն, ասեմ՝
և որ կաթողիկեայքն կոչին, զԲառնաբայիկն, զՅայտնու-
թիւնն՝ որ Պետրոսի ասի. իսկ վասն Եբրայեցւոց
Թղթոյն՝ Պօղոսի գոլ Հաստատէ, բնաւ զբեալ չՅե-
բայական բարբառ, և՛ ի Լուկայ՛ ի յոյն յեղեալ և
Յունաց ընծայեալ, վասն այսորիկ և նմանօրինակ ձևս
բանից և՛ ի Թարգմանութեան Թղթոյս և՛ ի գործս
Առաքելոց երևի։ Եւ զի չդնէ՛ ի սկիզբն Թղթոյն՝
Պօղոս առաքեալ, կարի իսկ՛ ի դէպ. զի առ Եբրա-
յեցիս գրէր՝ որք կանուխ իսկ՛ ի միտս կասկածոտս
էին զնմանէ, իմաստութեամբ արար նա զայս, զի մի՛
ի սկզբան անդ խրտեցուսցէ զնոսա չլսել բանիցն։ Եւ
յառաջ մատուցեալ ապա զբանս իւր ասէ. Չի որպէս

յեն։ Բայց յիշէ՛ ի նոսա զԻրինէոս և զՄելիտոն, և զմիս Իրինէոս
և եդ զպատմութիւնն նոցա։ Ալլ՛ ի խոսն յայնոսիկ որ գրեալն են
վասն նմանութեանց որ են՛ ի գիրս Համառօտս, զպատմութիւնս
ամենայն գրոց եդ՛ ի նոսա, և ոչ զանցոյց և ոչ զայն ևս վասն որոց
երկմտութիւն է վասն նոցա, յամենայն զԹուղթն Յուդայ, և այն
որ կոչին կաթողիկեայք, և Բառնաբայն, և Յայտնութիւնն՝ որ կոչի
Պետրոսի։ Իսկ վասն Թղթոյն հեբրայեցւոց ասաց և Հաստատեաց՝
բայ Պօղոսի է, և գրեցաւ առ հեբրայեցիս՛ ի լեզու հեբրայեցւոց.
բայց յունարէն Լուկայ Թարգմանեաց զնա և ետ յունաց. վասն
այնորիկ նմանեալ գտանին գիրք Թարգմանութեան այսր Թղթոյ
գրոյն գործոց առաքելոցն։ Եւ զի չէ գրեալ՛ ի սկիզբն Թղթոյն՝
Պօղոս առաքեալ, վասն որոյ առ հեբրայեցիս գրեաց նա, զի կան-
խեցին յառաջագոյն կալան՛ ի վերայ նորա կարծիս. և իմաստու-
թեամբ արար նա զայս, զի մի՛ ի սկզբանն իսկ գարձուսցէ զնոսա
զի լուիցեն նմա։ Մինչդեռ լքանէր՛ ի բան անգր, յաւել և ասաց,

երանելի երէցն ասէր, վասն զի Տէր մեր առաքեալ էր ի Հօրէ ամենակալէ առ երբայեցիս, առ ցածուածեան արար զայս Պօղոս. և զի առ հեթանոսս սահմանեալ էր ինքն, ոչ գրեաց զանձն իւր առաքեալ երբայեցւոց, յաղագս պատիւ առնելոյ Տեառն իւրոյ, և զի քաղցր հաստատութեամբ իսկ գրէր առ երբայեցիս քարոզ և առաքեալ հեթանոսաց: Ի սոյն գիրս գարձեալ կղեմէս վասն կարգի աւետարանացն խօսելով՝ ըստ տուչութեան երիցանց անտի առաջնոց դնէ այսպէս. Նախ գրեցան, ասէ, աւետարանքն, յորս գոլոթիէն ծննդոց է, այն է ազգահամար Քրիստոսի. իսկ որ ըստ Մարկոսին է, յայսպիսի իմն տեսլութենէ եկն նա ի գրութիւն: Զի յորժամ քարոզէր Պետրոս ի Հռոմ զանձն հրապարակաւ, և Հոգւով Աստուծոյ պատմէր զաւետարանն, բազումք յունկնդրացն անտի նորա աղաչեցին զՄարկոս՝ որ ի սկզբանէն զհետ երթեալ էր առաքելոյս, և յիշեր զոր ինչ միանգամ խօսեցեալ էր նորա, զի ի գիր առնուցու զասացեալսն. որ և կարգեալ զաւետարանն՝ ետ որոց կարօտ էին նոքա: Իսկ իբրև գիտաց զայս Պետրոս, ոչ արգել, և ոչ յայտնապէս հրամանաւ ի նոյն յորդորեաց: Իսկ Յովհաննէս իբրև ետես եթէ այլ աւետարանքն վասն մարմնաւո-

զի ասէր որպէս ասէր երէցն երանելի, եթէ վասն զի տէր մեր առաքեալ յԱստուծոյ ամենակալ որ առաքեցաւ առ հեբրայեցիս, վասն այսորիկ խոնարհութեամբ արար զայս Պօղոս: Եւ վասն զի առ հեթանոսս առաքեցաւ նա, ոչ գրեաց զանձն իւր առաքեալ հեբրայեցւոց, յաղագս պատիւ առնելոյ տեառն մերոյ. և քանզի չէր նմա հարկ գրել առ հեբրայեցիս, զի նա քարոզ հեթանոսաց էր և ոչ նոցա: Բայց գարձեալ ինքն կղեմէնտոս ի նոսին ի գիրսն իւր յայնս եդ վասն կարգելոյ աւետարանացն, ըստ տուչութեան կարգելոյ առաջին երիցանց. այլ ասաց զայն նախ գրեցան աւետարանքն այն, յորս գոլոթիէն ծննդոց է ի նոսա յամենայն Մատթէոսի և Ղուկայ: Իսկ աւետարանն Մարկոսի այսպիսի առնչութիւն եղև վասն նորա, զի Պետրոս յորժամ քարոզէր ի Հռոմ քաղաքի զբանն Աստուծոյ ամենայն ժողովրդեանն և Հոգւով խօսէր զաւետարանն, բազումք յայնցանէ որ կային՝ աղաչեցին զՄարկոս, զայն որ հնգետասնից զհետ իսկ երթեալ էր նորա, և յիշէր որ ինչ միանգամ խօսեցեալ էր՝ զի գրեսցէ իսկ զնոսին զնոսան: Եւ իբրև արար զաւետարանն, ետ զնա այնոցիկ որ կարօտ էին նոքա: Իսկ իբրև գիտաց Պետրոս ոչ արգելով արգել, և ոչ հրամայելով հրամայեաց: Ա՛յլ Յովհան իբրև ետես յետոյ, եթէ այլ աւետա-

բուԹեան Տէառն մերոյ գրեալ էին, աստուածակիր հոգւով սրբոյ առաքեալսն հոգևոր ի յորդորանաց անտի աշակերտելոց իւրոց ածեալ։ Այսչափ ինչ կղեմէս։

Իսկ վերոյիշեալս մեր Աղեքսանդրոս՝ ի գիրս իւր ուրեք առ Որոգինէս, յիշելով զկղեմէս և զՊանտեենոս իբրև ծանօԹս իւր, գրէ այսպէս. Ջի այս եղէն, ասէ, կամք Աստուծոյ. որպէս և դու իսկ գիտես, զի նախնեաց անտի յառաջնոց անշարժ կայցէ սեր մեր և բարեկամուԹիւն, ջերմագոյն մանաւանդ լինի և հաստատեալ։ Ջի հարս ձանձրանամք մեք զերանելիսն զայնոսիկ՝ որ յառաջեցին քան զմեզ, և մեք զկնի սահաւուց առ նոսա երԹալոց եմք, զՊանտեենոս արդարև զերանելին և զտէրն իմ և զսուրբն կղեմէս, որ հաւատար մեր եղև ինձ և սատար և օգնական. և որք սոցին իցեն նմանողք. զի սոքօք ծանեայ ես զքեզ, առաքինիդ յամենայնի, տեր իմ և եղբայր։ Եւ այսոքիկ այսպէս։

Իսկ Աստամնդիոս, քանզի այս անուն էր Որոգինեայ, յամս առաջնորդուԹեան Ջեփիւրինոսի եպիսկոպոսի եկեղեցւոյն Հռովմայեցւոց՝ ի Հռովմ գնացեալ պատմէ. Ես ինքնին ուսուիւք խնդրելի, ասէ, երԹալ տեսանել զնախնագոյն եկեղեցին Հռովմայեցւոց։ Եւ

բանքն որ միանգամ ասացեալ՝ ի նոսա, վասն մարգկուԹեան տէառն մերոյ գրեալ է՝ ի նոսա, յորդորիչքն զնա գէտք և ծանօԹք իւր. զգեցաւ զնոքի Աստուծոյ և արար եդ աւետարան վասն աստուածառուԹեան նորա։ Զայս ամենայն ասաց Կղեմենտոս։ Բայց դարձեալ Աղեքսանդրոս, այն որ ասացաքն վասն նորա, յիշէ զԿղեմենտոս ընդ նմին և զՊանտեենոս, ի ձեռն գրոյն զոր գրեաց առ Որոգինէս, զի ծանօԹք էին նորա նոքա, գրեաց այսպէս. Ջի այս, ասէ, կամք Աստուծոյ եղեն, որպէս և դու իսկ գիտես, զի կացցէ ճշմարիտ անշարժ սէր հարցն մերոց, զի նա առաւել լինի եղեալ և հաստատեալ. զի հարքն մեր երանելիքն այնոքիկ էին, որ յառաջագոյն գտնացին քան զմեզ, և զկնի սակաւ ժամանակի և մեք առ նոսա երԹալոց եմք։ Պէնտաենոս երանելի, որպէս էր նա տէր իմ և օգնական կար յոյժ. և միւս ևս գարձեալ նմանող նմին, զի նոքօք ծանեայ ես զքեզ որ ամենայնիւ առաքինացեալ ես, որ դու ինքն ես տէր իմ և եղբայր. այս եղև այսպէս։ Բայց ինքն Աթամնդիոս, քանզի այս անուն էր յառաջ Իրոգինէսի, գնաց նա երբեմն՝ ի Հռոմ քաղաք, յամս Ջեփիրինոսի եպիսկոպոսին եկեղեցւոյն նոցա, և ինքն իսկ գրեաց այսպէս. ԵԹէ յաղԹս կայի երԹալ տեսանել զառաջին

լեալ անդ ոչ բաղում ինչ ժամանակս դարձաւ անդրէն յԱղեքսանդրիա. և անդ զսովորական իւր պաշտօն վարդապետութեան երախայից բաղում փութով պնդութեամբ վարէր, ցօրէսի Դեմետրիոս եպիսկոպոս տեղւոյն աղաչէր և խնդրէր ի նմանէ զի անձանձրոյթ յօգուտ եղբարցն պարապեսցի։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Վասն Հերակլեայ։

Այլ խրթև եռեաց Որոգինէս թէ չէ բաւական պատրաստով ի խորս գրոցն մտանել, և ի մեկնութիւնս նոցին և ի թարգմանութիւնս հանապազորդել, և միանգամայն ի հրատարակս վարդապետութեան եկեղեցւոյ առնոյ, որք ոչ թոյլ տային նմա և ոչ զոք ի անգամ կալնել, որ յառաւօտէ մինչև ցերեկոյ անդուլ անդադար ի վարժոյ անգր նորա յաձախէին, բաժանեաց ընդ երկու ջօդուածս զօրն, և ընտրեաց յաշակերտաց իւրոց զՀերակլէս, զքանասէրն և զիմաստ յաստուածայինն, և զկորովլին բանիւք, և որ ի փիլիսոփայութենէ իսկ

եկեղեցին հաւատոյ եւ յորդ. և խրթև եղև անդ սակաւ ժամանակ դարձեալ եկն նա յԱղեքսանդրիա, և անդ աշակերտիւք բազմագնդութեամբ, որպայն վայր ինքն Դեմետրիոս եպիսկոպոսն նոցա աղաչէր և խնդրէր ի նմանէն, զի առանց ձանձրանալոյ եղիցի նա գործել զօգուտն եղբարց։

Հերակլեայ. վասն Հերակլեայ։

Այլ խրթև եռեաց երոգինէս, թէ չէ միայն բաւական առանձին հանապազորդութեան ընթեռնլոյ հարցն սրբոց, և հարցուածոց մեկնութեան նոցունց գրոց և աշակերտութեան։ Պարձեալ վարդապետութենէն որ մերձնային առ նա, զի ոչ թոյլ տային նմա և ոչ զոք անգամ առնուլ. զի յաւելցուն այլք ի վերոյ այլոց յառաւօտէ մինչև ցերեկոյ յաշակերտութիւն վարդապետութեան նորա, բաժանեաց ընդ երկու զծոյզս զօրն, և արար իւր զոմն ընկալեալ յաշակերտութիւն անգր, զայն, որ քան զամենայն զգեաս իւր և զձանձոթս, զնա միայն առանձին ընտրեաց իւր. քանզի յոյժ փոյթ և պինդ էր նա յիւրս Աստուծոյ. և կորովի էր նա բանիւք, և ի փիլիսոփայութենէ չէր ինչ հեռի։ Եւ ես նմա զա-

չէր ինչ անմահն, և հաղորդ և պաշտօնակից էառ զնա ինքեան 'ի վարդապետութեան. զնորամուտսն յաշա-կերտութիւն և զհամբակսն՝ առ նա առաքէր. և ըստ կարգի յառաջացեալն ինքեան պահէր յունկնդրու-թիւն։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Թէ ո՛րպէս փոյթ յանձին ուներ Որոգինէս վասն գրոց սրբոց։

Այնչափ ինչ փոյթ էր Որոգինէսի 'ի խորամուխ քննութիւն գրոց սրբոց, զի և զեբրայական լեզուն ուսաւ, զսկզբնատիպ գիրսն՝ որ էին առ Հրեայս եբրա-կեցի գրով գնոց ստացաւ, և բաց յեւթանասնից, և զայլ ևս Թարգմանութիւնս աստուածծեղէն տարից, և զայլայլեալսն անգամ որպէս զԱկիւղասայն և զՍիմաքոսին և զԹէոդոտիոնէական եգիտ, և զորս ոչ գիտեմ յորոց շտեմարանաց՝ 'ի հնոց անտի ժամանակաց ծածկեալս խուզեալ եբեր 'ի մէջ. և քանզի ոչ գիտէին Թէ ո՛ Թարգմանեաց զնոսա, զայս և եթէ եցոյց, եթէ զմին որ է 'ի Նիկոպոլիս եգիտ մերձ Այգիսն, և զգ-

առաջին աշակերտութիւնն որ միանգամ մնանէին ուսանել նորոգ։ Իսկ զայնոսիկ որ կիրճ և հմուտ էին, Թոյլ եւ նոցա լսել և ուսա-նել յինքենէ։

Վերտառութիւն. թէ ո՛րպէս փոյթ յանձին ուներ Որոգինէս վասն գրոց սրբոց։

Ճշմարտութեամբ այսպէս քննէր Որոգինէս վասն գրոց սրբոց, որպէս և լեզու Հեբրայեցի ուսաւ նա, և ստացաւ նա զգիրս որ էին առ հրեայսն հեբրայեցի գրովն և քննէր կայր և 'ի վերայ առնու-թեանն Թարգմանութեան գրոց սրբոց զոր Թարգմանեցին այլքն, բայց յեւթանասնից անտի և այլ Թարգմանութիւնս գրոց սրբոց, որ փոփոխեալ էին քան զՍիմաքոսին և Թէոդոտիոնի։ Եգիտ նա զի ծածկեալ էին ժամանակաց բազումս, քննեաց և եկեր 'ի մէջ և յայտնեաց զնոսա. և քանզի ոչ գիտէին Թէ ո՛ Թարգմա-նեաց զնոսա, զայս և եթէ եցոյց և յայտ արար վասն նոցա, եթէ զմի 'ի նոցանէն եգիտ նա 'ի Նիկոպոլիս, իսկ զմիսն յայլումն տեղւոջ։ Բայց 'ի Թարգմանութեան անգ առմնոյ զոր արարեալ է նորա,

միւմն յայլում տեղւոջ։ Բայց ի վերջիջեան ԹարգմանուԹեան անդ սաղմոսին ի վերայ չորից նշանագրեցոյն յաւել և այլ ևս ԹարգմանուԹիւնս զՀինգերորդն և զվեցերորդ և զեւԹներորդ. վասն միոյն միայն յայցնմանէ յայտ արար Թէ գտաւ յԵրիքով ի կատար մի ի ժամանակս Աստուհինոսի որդւոյ Սեւերեայ, Ջայս ամենայն ԹարգմանուԹիւնս ի մի ժողովեաց, կարգելով զնոսա ի տունս տունս և դնելով յիւրաքանչիւր էջս ընդդէմ միմեանց հանդերձ քնագրոյն երբայեցւով, և եԹող մեզ զվեցիջեան օրինակն. դարձեալ ապա և զԹարգմանուԹիւնսն զԱկիւղայն, զՍիմաքոսին և զՔէոտոդոտեայն հանդերձ եւԹանասնիցն ԹարգմանուԹեամբ ի քառիջեանս կարգեաց։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Վասն Սիւմաքոսին՝ որ թարգմանեաց զգիրս։

ՋԹարգմանչացս զայսոցիկ արժան է մեզ գիտել, զի Սիւմաքոս երիտիսա էր աղանդաւոր, որ զՔրիստոս ի Յովսեփայ և ի Մարեամայ մարդ դուզնաքեայ ասէն. և պարտ համարին հրէապէս պահել զօրէնս, որպէս

զնոսին այսոր չորից նշանաւորաց զոր Թարգմանեցին, եցոյց Թէ է այլ եւԹարգմանուԹիւն հինգերորդ և վեցերորդ և եւԹներորդ, և ցուցանէ և յայտ առնէ վասն միոյ ի նոցանէ՝ Թէ յերիքով գտաւ ի կարաս մի, ի ժամանակս Աստուհինոսի որդւոյ Սևերեայ արքային. զայն իսկ զամենայն մեկնուԹիւնս ժողովեաց ի միասին և հանդ ընդ նոսա, և եդ զնոսա ընդդէմ միմեանց հանդերձ գրչմիւքն հերբայեցւով, և եԹող մեզ օրինակս այն որ կոչին վեց օրինակաց։ Եւ այլ գտաւեալ միւս ևս առանձինն եդ. և զԱկիւղայն և զՍիմաքեայն և զՔէոտոտայն՝ հանդերձ եւԹանասնիցն։

Էօրինեւտասներորդ. վասն Սիւմաքեայ որ թարգմանեաց զգիրս։

Պարտեալ արժան է մեզ գիտել Թէ Սիմաքոս մի յայնցանէ էր նա, որ Թարգմանեցին զգիրսն Աքիւռացւոյ. ապադ հերձուածոց է այս՝ որ կոչի աբիոնացւոց, այնոքիկ որ ասեն վասն Քրիստոսի, եԹէ եղև նա ի Յովսեփայ և ի Մարիամայ, և համարին զնա իբրև զմարդ դուզնաքեայ և ասեն Թէ պարտ է մեզ պահել զօրէնսն հրէ-

կանխեցաք ցուցաք յառաջիկն գիրս պատմութեանս։ Են և խօսք յիշատակարանաց Սիւմաքեայ, որ կան մինչև ցայսօր, յորս մաքառեալ նորա ընդդէմ աւետարանին Մատթէի՝ զչերձուածն Եբիոնաց հաստատել թուի։ Զայսոսիկ Որոգինէս ընդ այլ թարգմանութիւնս գրոց Սիւմաքեայ՝ի ցուլիանեայ կնոջէ ուսմնեալ, ասէ, առեալ զոր՝ի հարց անտի իւրոց ունէր ժառանգութեամբ։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Վասն Ամբրոսեայ։

Ի ժամանակին յայնմիկ և Ամբրոսիոս՝ որ՝ի խորհուրդս հերձուածոյն Վաղենտինեանց էր, ՚ի ձշմարտութենէն անտի՝ զոր ուսուցանէր Որոգինէս յանդիմանեալ՝ իբրև՝ի լուսոյ պայծառութենէ լքեալ մտաց նորա զօրութիւն, դարձաւ՝ի ձշմարիտ հաւատս եկեղեցւոյ։ Եւ այլք բազումք յիմաստնոց, ՚ի սփռել համբաւու անուան Որոգինի ընդ ամենայն աշխարհ, գայլին առ նա զչափ առնուլ զկորովութեան բանից

ապէս, որպէս կանխեցաք յառաջագոյն և ցուցաք յայսմ պատմութեան. և խօսս եգեալ է Սիմաքեայ որ կան մինչև յայսօր ժամանակի, զի ասէ՝ի նոսա ընդդէմ աւետարանին Մատթէոսի, որպէս զի հաստատեացէ նա զայս ազանդ հերձուածոց։ Բայց ցուցանէ վասն այսորիկ Իրիգինէս, եթէ ընդ այլ թարգմանութիւնս գրոց զոր արար Սիմաքոս, զի առեալ էր նորա՝ի կնոջէ միոջէ՝ Ցուլիանեայ անուն նորա, և ասաց վասն նորա զայն որ առեալ էր՝ի Սիմաքեայ զդիրն գայն։

Որ և առաւել ևս գրոյ վասն Ամբրոսեայ։

Ցայնմ ժամանակի Ամբրոսիոս, այր որ երևին իւր միաք աղանդին վաղենտինեանոց, յանդիմանեալ կնոջմէնջուս նա՝ի ձշմարտութենէն անտի զոր ուսուցանէր Իրիգինէս, և լուսաւորեցան միաք և խորհուրդք նորա, և դարձաւ՝ի ձշմարիտ հաւատս եկեղեցւոյ. և այլք բազումք որ էին խրատուէ անտի ուսման իմաստութեան. ՚ի ժամանակի իրրև էլանէր տարածանէր համբաւն Որոգինէի ընդ ամենայն աշխարհ գայլին առ նա զչափ առնուլ և զհանգէս աւանդել զկորովութեան նորա վասն բանին Աստուծոյ։ Բազումք՝ի հե-

նորա 'ի գիրս սուրբս։ Եւ բազումք 'ի հերետիկոսաց, և 'ի նշանաւոր փիլիսոփայից ոչ սակաւք մեծաւ փութով պնդութեամբ գային տեսանել զնա, ոչ վասն աստուածեղէն բանից միայն, այլ և վասն փիլիսոփայութեան արտաքնոցն յորս և աշակերտեին նմա։ Եւ զորս մտավարժս և յաջողակս 'ի նոսա տեսանէր, դնէր առաջի նոցա զուսումն փիլիսոփայութեան, զերկրաչափութեան և զհամարողութեան և զայլ բազում նախնական հրահանգս ուսման. և ընդ ամենայն ազանգս փիլիսոփայութեան ածեալ զնոսա, դնէր առաջի զդիրս նոցուն փիլիսոփայիցն, տայր զնոցին մեկնութիւնս և պարզէր զտեսութիւնսն, մինչ զի իմաստասէր մեծ և 'ի նոցուն իսկ 'ի հելլենաց հռչակեալ լինէր այրն։ Զբազումս 'ի տիմաթ համբակաց իւրոց յուսումն արտաքին դպրութեան մուծանէր, զի ոչ սակաւ ինչ շահ օգտի յայնմանէ գտանել նոցա, ասէր, 'ի հանճար և 'ի պատրաստութիւն դրոց սրբոց. վասն այսորիկ և ինքեան իսկ կարևոր համարէր զկրթութիւն երկրաւոր և փիլիսոփայական գիտութեան։

ԳԼՈՒԽ Ժ.

Թէ որպիսի՛ յիշատակք ևն զՊորփիւռեայ առ Հեբաևնոս։

Եւ վկայս այսոցիկ նորին ուղղութեանց 'ի նոցուն իսկ 'ի հելլենաց փիլիսոփայս տեսանեմք զհռչակա-

ձուածոց անոի, և 'ի նշանաւոր փիլիսոփայից, ոչ մոռնիկ սակաւ էին որ մեծաւ պնդութեամբ գային տեսանել զնա, ոչ միայն վասն բանին Աստուածոյ այլ և վասն փիլիսոփայութեան արտաքնոցն որ ուսանէին 'ի նմանէ։ Եւ զոր տեսանէր Թէ կրթովիք էին իմաստասիրք ընթերցուածովք ուսման, տայր նոցա զուսումն վարդապետութեան՝ զչափոյ երկրի և զձուոց, և այլովք բազմօք կանխաւ կրթեալ զնոսա իմաստասիրութեամբ, և ուսուցանէր նոցա զաղանգս փիլիսոփայից, և պատմէր նոցա վասն գրոց նոցուն. և հայէր և գնէր խոսս ընդդէմ ամենեցուն այսպէս։ զի և 'ի նոցուն իսկ 'ի հելլենասաց քարոզեալ լինէր այրն այն, զի էր փիլիսոփայ մեծ։ Բայց զբազումս 'ի հերձուածոյ անոի մուծանէր յուսումն գպրութեան, և ասէր

ւորս 'ի ժամանակին. յորոց 'ի գիրս յաձախագոյնս գտանեմք յիշատակութիւնս զառնէս, որք մերթ ընդ գիրս իւրեանց սմա ընծայէին, և մերթ իբրև վարդապետի 'ի քննութիւն նորա և 'ի դատաստան զվատ տակս իւրեանց ապաստան առնէին: Այլ զի պիտոյ է զայսոցիկ երկարել. յորժամ Պորփիւր՝ յաւուրս մեր 'ի Սիկիլիա դեգերելով [2], բազում ինչ ընդդէմ մեր գրեաց, յորս և չարախօսել կամելով զսուրբ գրոց՝ յիշատակ առնէ և զԹարգմանչաց նորա, և յորժամ չգտանէր ինչ բամբասանս զվարդապետութեամբ գլուխն շինել, դարձաւ նա 'ի թշնամանս, և ասել բանս հայհոյութեան 'ի վերայ մեկնչաց՝ մանաւանդ 'ի վերայ Որոգինէսայ, զոր 'ի մանկութենէ անտի իւրմէ ձանձնալ, ասէր, և թշնամանել զնա կամելով՝ յանգէտս 'ի գովութիւն առնոյր զայն. է զի զՀմարտութիւն խոստովանելով, զոր այլազգ ինչ ասել նման չէր հնար, և է զի ստելով՝ որով և թագուցանել զանձն կարծէր. մերթ ամբաստան լինի զնմանէ իբրև զբրիստոնէէ. և մերթ ընդ ուսումն փիլիսոփայութեան նորա սքանչա-

թէ ոչ սակաւ շահ և օգուտ լինի նոցա 'ի նմանէն' 'ի հանճար և 'ի պատրաստութիւն գրոց սրբոց. և ասն այսորիկ և նա եւս առաւել փութայր և սիրէր 'ի հանճարեղութիւն ուսման փիլիսոփայութեան աչխարհս, և վկայէ այսր փութոյ սիրոյ նորա նոցա, փիլիսոփայքն որ էին 'ի հելենացոց անտի յաւուրս նորա նոցա են, զի 'ի գիրս նոցա բազում յիշատակք են առն այնորիկ. զի մերթ առնա գրէին և ցուցանէին զնաս իւրեանց, և մերթ իբրև վարդապետք 'ինքեանք իսկ գերէին մատուցանէին զնաս առնա, զի քննեսցէ և փոխեսցէ զվատսն աչխատութեան նոցա: Զինչ պիտոյ է ասել ասն այսր ամենայնի: Պորփիւրիէ իսկ՝ այն որ յաւուրսն մեր եկաց 'ի Սիկիղիա, և արար եղ գիրս բազումս ընդդէմ մեր, զի նոքա կամէր նա ասել չար 'ի վերայ գրոց սրբոց. և յիշեաց նա զայնոսիկ որ սպարին զնիւնութիւն գրոց: Եւ իբրև այլ ինչ բամբասանս ազատութենէն ոչ կարացին բամբասել 'ի վերայ ազատչին նոցա, չբնկեցաւ սկսաւ հայհոյութեամբ հայհոյել և ասել բանս չարաչարս 'ի վերայ մեկնչացն, և մանաւանդ 'ի վերայ Իրինէոսի. զի ծանօթ նորա էր նա 'ի մանկութենէն իւրմէ. և կամէր ասել 'ի վերայ նորա բանս չարաչարս հայհոյութեան. այլ ոչ գիտէր նենգ հատատաւելով հատատաւէր նա զայրն զայն. 'ի նոցանէն ասաց 'ի վերայ նորա Տէրմարիա, զոր այլ ազգ ինչ ասել նման չէ հնար: Բայց 'ի նոցանէն և սաւելեամբ որովք կարծէր խաբել և մոլորեցուցանել նոքաք, մերթ ամբաստան լինէր զնմանէ իբրև զառնէ քրիստոնէէ և մերթ գրէր նա վասն նորա թէ առաւել էր քա յաւուրսն փիլիսոփայու-

ցեալ Հռչակ Հարկանէ. այլ լուր դու նորին իսկ ըզբանն. Ոմանք, ասէ, 'ի գիջողակութենէ անտի հրէաքան գրոցն ոչ կամեցող ընդունիլ զայնոսիկ ընծայուին նոցին և 'ի մեկնութիւնս ձեռն արկին յանմիաբանս և հակառակս գրելոցն. որ ոչ 'ի պատասխանատուութիւն էր օտարոտի նոցա աղանդոյն, այլ 'ի գովութիւն և յընդունելութիւն վարդապետութեան նոցա։ Զի որ ինչ 'ի Մովսիսէ յայտնապէս ասացեալ էր, օրինակս իմն այլասացիկս և պատգամս լի խորհրդովք գաղտնեաց պանծացեալ յայնս տեսանել, աստուածարել համարձակեցան. և այսպիսի ունայն խորհրդով ղրաստատանս մտաց իւրեանց կախարդելով, յառաջ մատուցին զմեկնութիւնս իւրեանց։ Եւ յաւելեալ նորա գարձեալ 'ի բանս իւր, ասէ. Եւ անհեթեթ անտեղութեանս օրինակ և սկիզբն եղև յառնէն յայնմանէ, զոր մինչդեռ տղայ էի, յիշեմ ես տեսեալ զնա, մեծապէս գովեալ յայնժամ, և ցարդ իսկ՝ գրոցքն իւրովք զորս եթող՝ ցուցանէ զՀանճարոյն. որոյ գերագոյն են փառքն առ վարդապետս աղանդոյն։ Ընդ այնքան ես Որոգինէս՝ որ աշակերտացաւ Ամմոնիոսի՝ այն որ առաւել գտաւ յոյժ առ մեզ 'ի փիլիսոփայութեան. և որ 'ի կրթութիւնս բանից մեծապէս շահե-

Թեան։ Բայց լուր դու զինչ ասէ բանիւ իւրով, զի 'ի սուտենէ անտի ասէ 'ի գրոց հրէից, որ են ոմանք որ ոչ հեռացան 'ի նոցանէ, և խորհեցան գտանել իւրեանց արձակուրդ, և արարին նոքա ինքեանց մեկնութիւնս, որ ոչ միաբանին և ոչ մերձենան առ այն ինչ որ գրեալ է 'ի նոսա։ Ակն ոչ միայն պատասխանի է նա փոխանակ գրոցն որ չեն ճշմարիտ, այլ ընդունի և և գովէ զնոսա, զորգարեցուցին իսկ խորհրդովքն զայն ինչ՝ որ ասացեալ է 'ի Մովսէս յայտնապէս, և եգին 'ի վերայ նորա գտեան աստուածաբանն, զի օրինք են նոքա որ լի են ծածուկ խորհրդովք. և ամենաստանութեամբ մոլորեցուցանէին զդատաւորն գիտութեան անձանց, և արարին նոքա իւրեանց մեկնութիւնս։ Եւ յետ այսորիկ ինքն իսկ Որոգինէս ասաց գարձեալ. բայց պատճառք այսր ապականութեան էր այր մի, այն իսկ որ ես մինդեռ տղայ էի տեսի զնա, զի յոյժ ցուցանէր նա զնանդէս իւր։ Եւ և այժմ ցարդ ևս ցուցանէ զնանդէս իւր գրովք զոր եթող, որ նա ինքն է Իրենիոս այն որ տարածեալ կարգի անուն մեծ առաքինութեանն նորա առ ուսուցիչսն այսր բանից, զի էր նա աշակերտ Ամմոնիոսոյ, այն որ 'ի ժամանակս մեր առաւել գտաւ նա 'ի փիլիսոփայութեան։ Բայց կրթութեամբ բանին օգուտս մեծ ստացաւ Իրենիոս 'ի վարդապե-

ցաւ ՚ի վարդապետէն իւրմէ. իսկ յուղղութիւնս կե-
նաց՝ հակառակ նմին արար իւր Ձանապարհ։ Զի Սմին-
նիոս քրիստոնեայ էր և ընդ քրիստոնեայս մնեալ ընդ
ծնողս իւր, այլ իբրև ՚ի հասակ խորհրդոց և փիլիսո-
փայութեան ժամանեաց, անդէն ըստ օրինաց ՚ի վարս
առաքինութեան դարձ արար։ Իսկ Որոգինէս Հելլէն
գոլով և ըստ խրատու Հելլենաց մնեալ, գնաց զկնի
դուժ ժպրհութեանն, գերեալ նմին զանձն իւր և
զզօրութիւն բանից իւրոց։ Վարուք իւրովք քրիստո-
նէաբար և արտաքոյ քան զօրինս կեցեալ. իսկ կար-
ծեաք մեսայն զիրաց և զԱստուածոյ հելլենախոհ գտա-
ներ, և ՚ի հելլենաց մուրացածոյիւն զառասպել օտա-
րոտի աղանդոյն իւրոյ կարկատէր։ Եւ հանապազորդ
՚ի Պղատոնի, Նումենեայ, Կրոնիոսի[3], Ապողոփանեայ,
Լոնգինոսի, Մոտերադեայ, Նիկոմաքեայ, և ՚ի հան-
ձարեղաց Պիւթագորեանց անտի արանց անուանեաց
՚ի գիրս դեգերէր։ Ցաւելոյր ՚ի սոսին և զգիրս Գերե-
մենեայ ստոյիկեան իմաստասիրի և զԿորնուտեայ, յո-
րոց ուսաւ նա զխորհուրդս կրճնիցն Հելլենաց, և եթէր
մերձեցոյց ՚ի հրէական օրէնս։ Զայս ամենայն Պօղ-
փիւր յերրորդ խօսս իւր՝ զոր ընդդէմ քրիստոնէից

տուեն անաւ իւրմէ. այն խորհրդովք ուղիղ գնացիւք ՚ի Ձանա-
պարհ որ էր հակառակ նմին գնայր նա. զի Ամմոնիոս քրիստոնեայ
էր, որ մնաւ ՚ի մէջ հարց իւրոց, զի էին նոքա քրիստոնէաբք. այլ
իբրև մերձեցաւ նա ՚ի մուս, և հաւ փիլիսոփայութիւն, նոյնծա-
մայն ՚ի վարս առաքինեաց* դարձաւ նա։ Իսկ Իրիգինէս, այն որ
էին հեթանոս, և խրատեալ էր յուսումն հեթանոսաց, զնոսին գնաց
նա դուժ ժպրհութեանն զոր այժմ իսկ ունի, և փոփոխեաց զօ-
րութիւնն որ նկարեալ և դրոշմեալ էր ՚ի բանսն, և վարուք իւրովք
կայր քրիստոնէացար և արտաքոյ քան զօրինս. բայց գրովք և
կարծեօք մտաց վասն Աստուածոյ՝ հեթանոսաբար ունէր նա. և զայն
ինչ որ հեթանոսացն էր՝ գներ նա ՚ի վերայ առակացն իւրոց ատոց.
զի էր նա հանապազորդ ՚ի գիրսն Պղատոնեայ և Նումենոսեայ
Ակրեանոսեայ և Պողիպենեսեայ և Լոնգենեսեայ և Մոդերատոսեայ
և Նիկոմաքոսեայ, և զգիրս մարդոց զնմանանոց որ էին ՚ի տանէ
անտի Պիւթագորեանց։ Բայց ընթեռնոյր նա և պաշտէր, և ՚ի գիրսն
Քաղմոնեայ ատուկացուց**, և ՚ի գիրսն Ակրեանոսեայ, զի ՚ի նո-
ցանէն ուսաւ նա զօրինակ խորհրդոց որ պաշտին նոքօք հեթա-
նոսք. և էին մերձեցաւ նա ՚ի գիրսն հրէից։

* Յօր. ատուածոյ։
** Այս Քրդն է ատուկիան։

գրեաց։ Ադդ որ ինչ վասն վարժիցն և բազմաւսումն գիտութեան առնս ասէ, Հշմարտութեամբ ասէ. այլ ստէ յայտնապէս, քանզի ոչ արդել էր նմա չտեղլ որ հակառակն էր քրիստոնէից, թէ՝ ի հեթանոսաց դալ ձաւ Որոգինէս և եկն՝ ի քրիստոնէութիւն. և թէ Աքմինիոս՝ ի գնացից անտի աստուածպաշտութեան՝ ի կռապաշտութիւն անկաւ։ Քանզի Որոգինէս զՀաւատս վարդապետութեան որ՝ ի Քրիստոս էր, ՝ի հարց անտի իւրոց ընկալեալ և պահեաց, որպէս պատմութիւնս եղոյց. և Աքմինիոս զաստուածային իմաստութեան պատուէրսն սուրբ և անարատ և անխախուտ պահեաց մինչև ցվախճան կենաց իւրոց. որպէս և վկայեն մինչև ցայսօր վաստակք առնս, զորս ելեղ չիք շատակս իւրոյ երևելի հանձարոյն, զոր օրինակ մակագրեալն նորա Խօսք վասն միաբանութեան Մովսէսի և Յիսուսի, և այլք ծր գտանին առ բանասէրս։ Ասացաւ այս ամենայն՝ ի մէնջ՝ ի կշտամբութիւն սուտ և տարապարտուց զրպարտութեան առնն, և՝ ի հաւաստիս բազմահմուտ կրթութեան Որոգինէսոյ յուսումն հելլենական։ Վասն այսորիկ՝ ի պատասխանատուութիւն մարդկանն՝ որ խծբծէին զնա փոխանակ

իւրեանց ասելոց. թէ որպիսի յիշատակք են վասն իւրիցինսի։

Զայս ամենայն Պորփիւրեայ ասաց՝ ի խօսն երրորդ, զոր գրեաց ընդդէմ քրիստոնէից։ Բայց վասն հանապազորդութեան բազմութեանն ուսմանն առն այնորիկ հաստատուաց և ստուգեցոյ. այլ առեաց յայտնապէս՝ զի ասաց վասն նորա՝ թէ՝ ի հեթանոսաց դարձաւ և եկն՝ ի քրիստոնէութիւն. և զԱքմինիոս՝ որ խոստովցաւ՝ ի գնացից անտի աստուածպաշտութեան՝ ի կռապաշտութիւն, զինչ արդեաւթող էր նմա ասել, քանզի էր նա հակառակ քրիստոնէից. զի ուսումն վարդապետութեանն Իւրիցինսի որ՝ ի Քրիստոս էր, և՝ ի հարց անտի իւրոց կալեալ էր և հաստատեալ, որպէս պատմութիւնս եղոյց։ Բայց յառաջ խնդրութիւնն Աքմինիոսեայ որ յԱստուած էր, սուրբ և անարատ պահեցաւ. և ոչ չբծնեցաւ մինչև՝ ի վախճան մահու իւրոյ, որպէս և վկայեն վաստակք առն այնորիկ մինչև յայսօր՝ ի խօսն զոր ելեղոյ. զի են նորա չահ և օգուտ բազմաց երբև զնասն զոյն որ են նորա, զի գրեալ է՝ ի վերայ նորա վասն Միաբանութեան Մովսիսի և Յիսուայ, և այլք են որ գտանին առ մարդս սիրելոյս բարեաց։ Բայց զայս առացաք մեք վասն օրինակի առնն այնորիկ, և վասն բազում կրթութեանն Իրիցինսեայ յուսումն յունաց։ Վասն սորին իսկ այսորիկ արար նա պատասխանի մարդկան որ խծբծէին զնա, փոխանակ այնոր զի փոյթ

զի այսպէս պնդութեամբ զՀետ գնայր ուսմանս, գրէ
նա՛ի Թղթի ուրեք օրինակ զայս. Եւ զի անդուլ հա-
նապազորդէի ես, ասէ, ՚ի վարդապետութիւն բանին,
և համբաւ վարդապետութեան մերոյ ընթանայր, մերձե-
ցան առ մեզ մանուկք ՚ի հերձուածոց անտի հե-
լեսիովտաց, և երբեմն յիմաստնոցն Հելլենաց, մանա-
ւանդ ՚ի փիլիսոփայից անտի նոցա, վասն որոյ կամէզև
ինձ քննել զվարդապետութիւնս հերձուածոցն, և որ
ինչ ՚ի փիլիսոփայից խոստանան ձշմարտութիւնս: Եւ
զոր արարաքս զՀետ գնալով օրինակին Պանտենեայ,
որ յառաջ քան զմեզ օգուտ եղև բազմաց, ոչ սակաւ
ունելով յայսոսիկ հրահանգս պատրաստութեան, որ
պէս և զՀերակլէտն՝ որ արդ իսկ ՚ի կարգս երիցանց
եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց կայ, զոր և դուն ՚ի վար-
ժսյս փիլիսոփայից. և էր հինգ ամ, յորմէ հետէ անդր
յաձախեր նա փութով, մինչև իմ սկիզբն արարեալ
՚ի լուր բանից նոցա: Եւ որ յառաջագոյն դուշնաբերեայ
հանդերձիւ հասարակաց վարեր, մերկացեալ զայնս և
զգենոյր զկերպարանս փիլիսոփայից, զոր և ցարդ իսկ
պահեալ է, և ոչ դադարէ ըստ կարի իւրում ՚ի հե-
տազօտելոյ բանասեր քննութեամբ զգիրս Յունաց:
Ա.յսոքիկ յՈրդինեայ ՚ի պատասխանատուութիւն

յանձին ունէր պնդութեամբ վասն ուսմանն նոցա: Եւ գրէաց ՚ի
Թղթի միւմ այսպէս. որ վասն զի հանապազորդէի ես ՚ի վարդապե-
տութիւն բանին, և համբաւ վարդապետութեան մերոյ ընթանայր,
մերձենցան առ մեզ ոմանք երբեմն ՚ի հերձուածոց անտի, և երբեմն
յայոցանց անտի հելենասաց, մանաւանդ յայնցանէ որ էին ՚ի փի-
լիսոփայութենէն անտի, և հաճոյ եղև մեզ հարցանել վասն ասու-
դին հերձուածոց և վասն փիլիսոփայիցն որ յանձն առնուն ասել
ձշմարտութիւն: Բայց զայս ինչ զոր ասացաք մեք, այնմ որ յա-
ռաջ քան զմեզ եղև նմանող եղեալ մեք, զի բազմաց օգուտ եղև նա,
որ նա ինքն է Պենտաենոս. զի ոչ սակաւ ինչ մեծութիւն էր նորա
յայսմիկ. և Հերակլէայ, այն որ անդէն իսկ յերիցութեան կայ ա-
ղեքսանդրացւոց, այն զի գոհ էս զնա առ վարդապետս ուսման փի-
լիսոփայից, և էր նորա հինգ ամ, զի հանապազ էր նա անդ մինչև
իմ սկսեալ էր զայս բանս: Եւ վասն այսորիկ Թեակտ և յառաջա-
գոյն պաշտեալ լինէր նա դուշնաբերեայ հանդերձիւ, սակայն մերկա-
նայր և զգենոյր զկերպարանս փիլիսոփայից, և մինչև յայսօր ժա-
մանակի պահեալ է առ նմա: Եւ ՚ի գերան յուշոց ըստ կարի ի-
րում ոչ դադարեաց յընթերցուածոց անտի նոցա: Զայս իսկ ասաց
՚ի ժամանակի իրրև առնէր պատասխանի վասն անգադար ուսման

անձին իւրոյ վասն փութոյ Ջանից իւրոց զհետ հել լենական դարուն ասացան։

Ի ժամանակին մինչդեռ Աղեքսանդրիա էր Որոգինէս, եկն զօրական որ և մատոյց գիր Դեմետրեայ եպիսկոպոսի եկեղեցւոյն և կուսակալի երկրին Եգիպտացւոց յիշխանէն Ալեքսանդրացւոց, արձակել առնու վաղվաղակի զՈրոգինէս, լսել ի նմանէ զհաւատոց. և արձակեցին զնա և գնաց ի կողմանս Ալեքսանդրացւոց։ Եւ յետ ոչ բազմաց կատարեալ նորա զգործն, վասն որոյ գնացեալն էր՝ դարձ արար Աղեքսանդրիա. և իբրև սակաւ մի էանց ի վերայ, և զարհեաւ պատերազմ սաստիկ ի քաղաքի անդ, եւ մեհենեցաւ նա Աղեքսանդրիոյ, և ոչ ի սպառ անկասկած Համարեալ դեգերել ի կողմանս Եգիպտացւոց՝ եկն ի Կեսարիա Պաղեստինացւոց և անդ լինէր։ Եւ աղաչեցին զնա եպիսկոպոսք որ անդ՝ զի ուսուսցէ և մեհենեցէ զգիրս սուրբս առաջի ամենայն եկեղեցւոյն, թէ պետ և ցայն վայր չէ էր ընկալեալ նորա ձեռնադրութիւն երիցութեան։ և այս էայր է ի գրելոց անտի առ Դեմետրիոս, զոր Աղեքսանդրոս եպիսկոպոս եկեղեցւոյն Երուսաղէմի և Թէոկտիստոս Կեսարացւոց գրեցին ի պատասխանի օրինակ զայս։

Ջոր գրեցերդ ի Թղթիդ, Թէ չէ լսեալ քո երբեք

իւրոյ ի Տէրնս։ Ալ երբև չորհէր նա յայնմ ժամանակի Աղեքսանդրիա՝ եկն միտն ի զննուրացս, և մատոյց գիր Դեմետրեայ եպիսկոպոսի եկեղեցւոյն որ անդ էր, և հաղարապահեն որ էր երկրին Եգիպտացւոց յայնմ ժամանակի ի գառաւորէ անտի որ էր ի կողմանս արաբացւոց, արձակել առ նա վաղվաղակի զՈրոգինէս, և ի նմանէ բանս ինչ։ և արձակեցին զնա և գնացին ի կողմանս արաբացւոց։ Եւ երբև եղև անդ սակաւ ժամանակս, և վճռեալ զպէտն որ երթեալն էր նա, կրկնեցաւ եկն նա անդրէն Աղեքսանդրիա. այլ երբև սակաւ մի ժամանակք անցին ի միջի, զարհեաւ բազում պատերազմ ի քաղաքի անդ։ Եւ գնաց Աղեքսանդրիա, և ոչ կամէր մտանել բնաւ ամենևին ի կողմանս ամենայն Եգիպտացւոց, և եկն նա ի կողմանս կեսարիայ պաղեստինացւոց և անդ լինէր, և ուսուցանէր և մեհենէր զգիրս սուրբս առաջի ամենայն եկեղեցւոյն։ Եւ եպիսկոպոսք որ էին անդ՝ մատուցին զնա այսմիկ, զի ցայն վայր չէ էր ընկալեալ ձեռնադրութիւն երիցութեան. և այն իսկ այս չայտ է յայնմանէ որ ինչ գրեացն առ Դեմետրիոս Աղեքսանդրոս եպիսկոպոս եկեղեցւոյն Երուսաղէմի. և առնէր պատասխանի այսպէս, զի յաւել ասէ և ասաց գրովք իւրովք, Թէ զայս երբեք չէ

այսպիսի ինչ, և ոչ առ մեզ անգամ հանդիպեալ, Թէ մինչ եպիսկոպոսք ի գլուխ կայցեն, աշխարհիկք խօսեցին առ ժողովուրդն, և չգիտեմ որպէս խոտորեցայք դուք յայսմ ի ձշմարտութենէ: Այսմ, Թէ ուր շահ օգտի էր եղելոց, հրամայեր ի սուրբ եպիսկոպոսաց և աշխարհիկ մարդկան խօսել առ ժողովուրդն, որպէս առ Լարանտացիս հրաման ընդուներ եւել բիա ի Նէոնեայ, և Յիկոնիոն՝ Պաւղինոս ի Կեղեայ՝ առ Սինատացիս, Թէոդորոս Այտիկոսէ, յեղեալց մերոց յերանելեաց: Ի դեպ է և այլ ուրեք այսմ այսպէս եղեալ և ի մեր գիտութիւն ոչ ժամանեալ: Եւ այսպէս Որոգինէս դեռ ի պատանեկութեան յամին ոչ միայն ի գիտակացն և ի ծանօթից, այլ և յեպիսկոպոսաց անտի որ էին յաշխարհս հեռաւորս պատուեալ լիներ: Եւ ի յղել դարձեալ Դեմետրի կոչել զնա Թղթովք, և ի ձեռն սարկաւագաց եկեղեցւոյն ստիպել զնա գալ Այղեքսանդրիա, դարձ արարեալ նորա զսովորական գործ պաշտամանն փութով պըղտութեամբ ի գլուխ տանէր:

լուեալ և ոչ այժմ Թէ մինչ եպիսկոպոսք ի գլուխ կայցեն, եղիցին ոմանք ի ժողովրդենէն որոց չէ առեալ ձեռնադրութիւն և ոչ գիտացեալ: Ես զիարդ յայտնապէս ասեմ որ ինչ չեն ձշմարիտ, ոՀր գասանին որ կարող են շահ և օգուտ առնել եղբարց, և մխիթարել զժողովուրդս. զի հրամայի նոցա սուրբ եպիսկոպոսաց Թարգմանել նոցա ելբև ի Լերիդա՝ որպէս չելպիոն հրամայէ խօսել ի Նեբրոնեայ, և յիկոնիա՝ Պօղինոս, ի Կղեսոսեայ, և ի Սիւնհոդոս՝ Թեոդորոս Այտիկոսէ, զի են նոքա եղբարք երանելիք: Բայց նման է այս Թէ և յայլ աշխարհս լինի այսպիսի. և մեք ոչ գիտեմք: Բայց այսպէս պատուեալ լինէր իրիգինէս, ոչ միայն յայնցանէ որ գտուին զնա, այլ և յեպիսկոպոսաց անտի որ էին ի հեռաւոր աշխարհս: Բայց գարձեալ յղեաց կոչեաց զնա Դեմետրիոս Թղթովք, և ի ձեռն սարկաւագաց եկեղեցւոյն ստիպեր գալ նմա Այղեքսանդրիա, և զիւրեն պնդութեան որպէս սովոր եր զառաջինն՝ կատարել նմա:

ԳԼՈՒԽ Ի.

Թէ ո՛րոց մատենագրաց ժամանակին վաստակք առ մեզ հասին։

Երևելիք գոյն ի ժամանակին քաղուածք յատկեն եկեղեցւոյն առք կորուսեալսոսք բանիւ. որոց Թուղթք գրեալք Յիւրեանս՝ կան մինչև ցայսօր ժամանակի դիւրագիւտ ցանկացողացն, զի գանձեալքեն ի դիւանի Հեղեա քաղաքի՝ զոր կառոյցն Աղեքսանդր եպիսկոպոս եկեղեցւոյն այնորիկ, յորմէ կարացաք քաղել առնուլ և մեք որ ինչ պիտոյ էր առաքելական պատմութեանս։ Զոր էր և Բերղիլեաս եպիսկոպոս Բոստրացւոց կողմանցն Արաբացւոց, որ բաց ի Թղթոյն և գրութեանցն եօթ և քաղուածոյ գեղեցիկ յիշատակս Տանձարոյ. նոյնպէս և Հիպոլիտոս այլոյ ուրուք եկեղեցւոյ առաքնորդ՝։ Ընդ առ մեզ և Գայիոսի առն կորուսեալ մաքառումն ի Հռոմ քաղաքի յառաջս Ջեփիւրինոսի ընդդէմ Պրոկղեայ՝ որ զօրավիգ դնէր աղանդոյն Փռիւգացւոց, յորում զհակառա-

Քառներորդ. բէ ուրպես խօսք էին խնամոցն որ էին յայնմ ժամանակի։

Էին իսկ յայնմ ժամանակի բազում մարդիկ մանկունք եկեղեցւոյ կորուսեալսոսք բանիւ. և են Թուղթք նոցա զոր գրէին առ միմեանս որ կան մինչև ցայսօր ժամանակի, և պահեցաւ մինչև առ մեզ ի տան գանձն անդ՝ որ էր ի Հեղեայ, զի նա ինքն է յերեսաս զնմ զոր չինեալ էր Աղեքսանդրեայ, և այն որ առաքնորդ էր յայնմ եկեղեցւոյն երեսատղեմի. զի ի նմանէն կարացաք քաղել առնուլ և մեք զայն ինչ որ պիտոյ էր այսմ Հաւաքմանս պատմութեան զոր արարեալ է մեր։ Բայց ի նոցուն իսկ յայցատնէ էր և Բերղիլեաս որ եղեալ նա մեզ Թուղթս և խօսս յայտնիս զյուսաւորութեան իւրոյ, և էր նա եպիսկոպոս բոստրացւոց կողմանց արաբացւոց, և Հիպոլիտոս որ էր և նա գլուխ այլոյ եկեղեցւոյ. այլ սեսանելմք և զմաքառումն Գայիոսի, զի էր նա այլ կարգի և իմաստուն բանիւ, զի արարեալ է նորաշէնս գիր մաքառման ի Հռոմ քաղաքի յառաջս Ջեփիւրինոսի ընդդէմ Պրոկղոսեայ, այն որ վերագոյնն էր ասացաք զինն փիլիգացւոց. զի նոքաւ կարկեցոյց նա զյուսաւորութեն համարձակութեանն զայնոցիկ որ ընդդէմ գրէին եդին զդէս նանրագիրս։

կորդաց կարկեցոյց նա զկտուԹիւնն համարձակուԹեան 'ի գիրս նոցա նանրագիրս. և յիշեցուցանէ միայն զերկբտասան ԹուղԹն սրբոց առաքելոց, և զկնբայեցոյն ոչ խառնէ 'ի Թիւս այլոցն. քանզի և մինչև ցայսօր ժամանակի ոմանք 'ի Հռովմայեցւոց չհամարին զայն Պօղոսի։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Թէ ո՛յք կացին երևելի եպիսկոպոսք 'ի ժամանակին։

Եւ իբրև եկաց յարքայուԹեան անդ Անտոնինոս զամն եօԹն և զամիսս վեց՝ կալաւ զկնի նորա Մակրինոս. կացեալ և նորա տարի մի, անդրէն միւս ոմն Անտոնինոս կալաւ զիշխանուԹիւնն Հռոմոց։ Եւ յամին յառաջնում ԹագաւորուԹեան նորա Զեփիւռինոս եպիսկոպոս եկեղեցւոյն Հռովմայեցւոց փոխեցաւ յաստեացս, կացեալ յառաջնորդուԹեան անդ իբրեւ զամս ուԹուտասն։ Եւ յետ նորա կալաւ զեպիսկոպոսուԹիւնն Կալիստոս, որ զամս հինգ կացեալ 'ի պաշտամանն, եԹող Ուրբանեայ զեկեղեցին։ Ի ժամանակ

Եւ յիշեցուցանէ միայն զերկբտասան ԹուղԹն զառաքելոց, և զկնբայեցոյն ոչ խառնէ նա 'ի Թիւս այլոցն. քանզի և մինչև ցայսօր ժամանակի ոմանք 'ի հռոմայեցւոց անտի համարին Թէ չէ նա Պօղոսի։

Գլուխ իա. Թէ ո՛յք եպիսկոպոսք յայնմի ևս յայնմ ժամանակի։

Այլ իբրև եկաց յարքայուԹեան անդ Անտոնինոս զեւԹն ամ և զվեց ամիս, Մակարիոս կալաւ զկնի նորա։ Այլ իբրև եկաց և նա զտարի մի, դարձեալ այլ միւս ևս Անտոնինոս կալաւ զԹագաւորուԹիւնն Հռոմոց։ Եւ յամին առաջնում ԹագաւորուԹեան նորա Զեփերինոս եպիսկոպոս եկեղեցւոյն Հռոմայեցւոց վախճանեցաւ. յաջորդէս, իբրու կալեալ էր նա զպաշտօն եպիսկոպոսուԹեան եկեղեցւոյն զեւԹն և տասն ամ։ Եւ զկնի նորա կալաւ զեպիսկոպոսուԹիւն Կալիստոս. և իբրև եկաց նա զեւԹն ամ, եԹող նա զպաշտօն իւր Ուրբանոսեայ։ Յայնմ ժամանակի կալաւ Ինքնակալ Ադրիանոսեայ զաքսաւորուԹիւնն հռոմայեցւոց, յետ չորից ա-

*կին զկնի չորեքամեայ տէրութեան Անտոնինոսի կա-
ւաւ Աղեքսանդրոս ինքնակալ զաքբայութիւնն Հռո-
մոյ։ Եւ յեկեղեցւոջ անդ Անտիոքացւոց յետ Ակվիլ
պիատեայ կալաւ զեպիսկոպոսութիւնն Փիլետոս։ Իսկ
մայր Աղեքսանդրի՝ Մամմիա անուն, կին բարեպաշտօն
էր յոյժ և երկիւղած Աստուծոյ, և իբրև համբաւ
անուանն Որոգինեայ ընդ ամենայն աշխարհ ընթա-
նայր, եհաս լուր նորա և յունկն տիկնոջն, և ըղձացաւ
նա տեսանել զայրն, և զչափ առնուլ 'ի բազմայ ան-
տի աքանչացեալ աստուածեղէնն իմաստութեան նորա
և զգիտութեան։ Եւ զի էր յայնժամ բամբիչս այս
ԱՆտիոք՝ առաքեալ զօրականս զպաշտօնեայս իւր կո-
չեցայ զնա գալ առ ինքն. որ կացեալ առ նմա սակաւ
մի ժամանակս, ետոյց նմա բազում ինչ. վասն փառաց
Տեառն մերոյ և վասն զօրութեան նորա աստուածա-
յին վարդապետութեանն, և դարձ արար անդրէն 'ի
սովորական գործ պաշտամանն իւրոյ։*

*մաց զոր կացեալ էր Անտոնինոսեայ։ Եւ յայնմ ժամանակի և յե-
կեղեցւոջ անդ անտիոքացւոց յետ Ակղկղպեգեայ՝ Պիղատոս կա-
ւաւ զեպիսկոպոսութիւն նոցա։ Իսկ մայրն Աղեքսանդրեայ ինքնա-
կալին, զի անուն էր նորա Ամամիայ, որ հաղիւ ուրեք եթէ գտանի
այնպէս կին աստուածապաշտ իբրև զնա. 'ի ժամանակի իբրև ա-
նուանէր համբաւն Իւրիգինեսի ընդ ամենայն աշխարհ, և նա լուաւ
վասն նորա, և փոյթ յանձին ունէր յոյժ արժանի լինել տեսլեան
նորա, և զչափ առնուլ և զհանգէս տեսանել զհանճարոյ և զիմաս-
տութեան նորա զոր ունէր նա 'ի պաշտօն տեառն մերոյ, զի զար-
մանային ընդ նա բազումք։ Բայց 'ի ժամանակի իբրև էր նա Ան-
տիոք քաղաքի, կոչեաց զնա գալ առ նմա 'ի ձեռն զինուորաց ա-
ռաքելոց, և եղև նա առ նմա սակաւ ժամանակս։ Բազում ինչ ե-
ցոյց նա առ նմա, որպէս զի վասն փառաց տեառն մերոյ, և վասն
փառաց վարդապետութեան նորա։ Բայց սակայն փութայր նա
երթալ անդրէն ուր սովորն էր։*

ԳԼՈՒԽ ԻԲ.

Թէ ո՛րչափ ինչ Հիպողիտեայ գրուքիւնք առ մեզ հասին։

Ի ժամանակին Հիպողիւտէս ընդ այլ բազում յիշատակս հանձարոյն, գրեաց և վասն Ցատկին՝ զչարս ժամանակաց կարգելով 'ի նմա և կանոն ինչ զատկան 'ի շրջան վեշտասան ամաց, յառաջին ամ ինքնակալուԹեան Աղեքսանդրի դնելով զսկիզբն ԹուակառուԹեանս։ Յամենայն գրուԹեանց նորա սոքա են որ առ մեզ հասին. վասն վեցօրեայ արարածոց. ընդդէմ Մարկիոնացւոց. յԵրգս Երգոցն, վասն քանի մի գըլխոց գրոցն Եզեկիէլի. վասն Ցատկի. ընդդէմ ամենայն հերձուածոց. իցէն նորա և այլ ևս երկասիրուԹիւնք առ ոմանս պահեալք։

Բառնիերոյ արկրոյդ. թէ ո՛րչափ խօսք գիտացաք մեք զՀիպողիտեայ։

Հիպողիտոս 'ի ժամանակին յայնմիկ իբրև դնէր խօսս բազումս, ընդ Նոսին և վասն Զատկաց արար նա խօսս մի, զի 'ի նմա եգ նա զՀամարս ժամանակաց. և զտասն ամեայ * կանոնն, և մինչև յամին առաջնումն ինքնակալ Աղեքսանդրեայ բովանդակեաց զՀամարն զամենայն զոր եգ։ Բայց և այլ խօսք են նորա զոր ընկալաք մեք զի են այս ինչ, վասն վեցօրեայ ծննդոց, և ընդդէմ Մարկիոնացւոց, և վասն օրհնուԹեան օրհնուԹեանց, և վասն փոքր մի յԵզեկիէլ, և վասն Զատկաց, և ընդդէմ ազանդին ամենայն հերձուածոց։ Բայց են և այլ ևս որ գտանին առ բազումս։

* Ցօր. ը. ֆ. ոմոյ. Թերևս՝ վեշտասանամեայ պարտ իցէ ընթեռնուլ։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Վասն վաստակոց Որոգինեայ, և թէ ո՛րպէս ընկալաւ նա զպատիւ նրիցուբեան եկեղեցւոյն։

Ի ժամանակէ անտի յայնմանէ ձեռն էարկ Որոգէն նէա առնել մեկնութիւնս աստուածեղէն տառից յորդորեալ Ամբրոսեայ՝ ոչ բանիւք միայն աղաչանաց, այլ և առատապէս զիարևոր ծախսն պատրաստելով նմա, զի աւելի քան զեւթն գրիչք երագագիրք շրջէին ընդ նմա մնալով Հրամանին, և փոխոխէին նոքա մի ըստ միոջէ ի ժամ յայտնիս. և օրինակագիրքն մատենիցն ոչ սակաւք էին, և օրիորդք վարժք ի գեղագրութիւն, զորոց զամենեցուն զիարևոր պիտոյս առատապէս Հոգայր Ամբրոսիոս, զի ի հանապազորդութիւն անդր բանին Աստուծոյ և ի փոյթ մեկնութեան գրոցն յօժարագոյնս զնա արասցէ։

Մինչդեռ այս իրք լինէին, ուրբանեայ կայսեալ յեպիսկոպոսութեան եկեղեցւոյն Հռովմայեցւոց զամս ութ յաջորդեաց զնա Փոնտիանոս. և Աստիճացաւոյ եկեղեցւոյն յետ Փիլետոսի եկաց Զեբենոս յեպիսկոպոսութեան։ Եւ յաւուրս յայսոսիկ ստիպեալ Որոգինեայ վասն գործոյ իրիք եկեղեցւոյ երթալ ի Յու-

Քաանեորոյ երկրորդ. վասն փութոյ և պնդութեան Որոգինեի, զի արժանի եղև նա լինել երից յեկեղեցւոյ։

Ի ժամանակէ անտի յայնմանէ սկսաւ Որոգինէս խօսս գնել՝ի վերայ գրոց սրբոց։ Ամբրոսիոս իբս իսկ փութացուցանէր և պնդէր զնա այսմ գործոյ. և ոչ միայն բանիւք բազմօք յորդորէր և աղաչէր զնա, այլ և զծախսն բազում պիտոյից պատրաստէր սա նմա, զի գրիչք երագագիրք սեմագիրք շրջէին ընդ նմա աւելի քան զեւթն, զի աւր նոցա և գրէին, և փոխոխէին նոքա մի ըստ միոջէ ի ժամս յայտնիս։ Եւ որ գրէին զդիրսն, էին այլք բազումք և ոչ սակաւք էին. և զամենայն ծախս պիտոյիցն ամենեցուն ինքն Ամբրոսիոս ասէր լինել և ի հանապազորդութիւն անդր բանին Աստուծոյ նա պնդէր և յորդորէր զնա, և առաւել զի գիշեր նա զնոսա. զի այս իսկ այսպէս էին։ Իսկ Ամբրոսիոս ի ժամանակի իրքն եկաց նա յեպիսկոպոսութեան եկեղեցւոյն Հռովմայեցւոց զամ աւ, կալաւ զնեն նոքա Փոտինոս։ Եւ յեկեղեցւոյն անտիոքացւոց զնեն Պղատոն Բանենոս եղև եպիսկոպոս, զի յաւուրս նորա Հարկ եղև

Նաստան՝ յանցանել իւրում ընդ Պաղեստին, ընկալաւ զձեռնադրութիւն երիցութեան ի Կեսարիա եպիսկոպոսաց անտի՝ որ էին անդ։ Եւ որ ինչ վասն այսորիկ յուզեցան ապա խնդիրք, և որ Հաճոյ եղև եպիսկոպոսաց եկեղեցեացն սահմանել զիրացս, և որ չափ ինչ դարձեալ վասն աստուածային քանին գեղեցիկ վաստակս վաստակեցաւ նա, ուրոյն առանձին պատմութեան պէտք էին. այլ յերկրորդ գիրս մեր որ ի ջատագովութիւն նորին արարաք, սակաւուք փոքր ի շատէ հատուցաք [3]։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Թէ զինչ ինչ մնկնուրիւնս արար Որոգինէս մինչդեռ յԱղեքսանդրիա էր։

Աստ ելոյս ցարդ և զայս արժան է ի վերայ յաւելուլ, զի ի վեցերորդ գիրս մեկնութեան անդ իւրում աւետարանին Յովհաննու վկայէ ինքնին նա՝ եթէ զառաջին հնգեակ գիրսն մինչդեռ անդէն յԱղեքսանդրիա էր շարագրեաց, և բովանդակ քսան և երկու գիրք հասին առ մեզ։ Իսկ յիններորդ գիրս մեկնու-

իրաց իրիք Իրիգինեսի, վասն եկեղեցեաց դարձոյց երթալ նմա ի Հեղեայ։ Ընկալաւ նա զձեռնադրութիւն երիցութեան ի Կեսարիա՝ յեպիսկոպոսաց անտի որ էին անդ։

Քահանայորդի չորրորդ. թէ որպիսի մնկնուրիւնս գրեաց նա յԱղեքսանդրիա քաղաքի։

Այլ այսպիսի աշխատութիւնք եղեն Իրիգինեսի վասն այսր ղոր ասացաք մեք, և նոքիմիք աշխատութեամբք զինչ Հաճոյ եղև եպիսկոպոսացն վասն այսց որ կային յեկեղեցիս, և զնրբալի փոյթ պնդութեան յանձին ունէր վասն բանին Աստուծոյ, պատմութիւն այլ միւս ևս առանձին պիտոյ է։ Բայց սակաւիկ մի ասեմք վասն նորա յերկրորդ. Ասաս պատասխանեցաւ զոր արարաք մեք վասն նորա։ Իսկ զայս արժան է մեզ գնել, զի ի վեցերորդ մեկնութեան անդ զոր արար նա վասն աւետարանին Յովհաննու, եցոյց և յայտ արար եթէ զայն հինգ խօսն առաջինս մինչև անդէն յԱղեքսանդրիայ էր եդ նա, իսկ ի վերայ ամենայն աւետարանի եդ նա քսան և երկու խօսս գիտացաք մեք զոր եդ։ Իսկ մեկնութիւնս արարածոց արար նա երկուտասան. և յիններորդ խօսն ցուցանէ և յայտ առնէ, թէ

Թեան արարածոց, որ միանգամայն երկոտասան գիրք են՝ ոչ միայն առաջին ուխտիեան Աղեքսանդրիա արարեալ յայտ առնէ, այլ և զմեհենութիւնս յառաջին ի քան և հինգ սաղմոս. զարձեալ և ի վերայ Ողբոց Երեմիայ, յորոց հինգ գիրք առ մեզ հասին. յորս յիշեցուցանէ նա և որ վասն յարուխեան մեռելոց գրեալ է, յորոց և երկու կան առ մեզ։ Եւ զգիրսն՝ որ վասն իշխանաց, զորս մինչև ելեալ էրկրն Աղեքսանդրիոյ յօրինեաց. զարձեալ և վասն Ճաճախապատուհ մակագրեալ տասն Թուով գրոցն [6], որ ի նմին քաղաքի առ ինքնակալութեամբ Աղեքսանդրի շարագրեալ էր, զոր յինքնագիր ծանօթութիւնս անդ յաւելեալ ի գիրս յայսոսիկ վկայէ նա։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Թէ զո՛րս ի գրոց անտի յերկոցունց կտակարանացն սրբոց որպէս ընդունելիս ի հաւատ արկաև Որոգինէս։

Ի սկիզբն մեհենութեան անգ առաջնոյ սաղմոսին կարգէ զթիւ և զհամար գրոց սրբոց կտակարանաց ըստ բանիցս ըստ այսոցիկ. Ոչ է արժան անգիտանալ, ասէ, Թէ կտակարանացն գիրք, զոր օրինակ աւանդեցին մեզ երբայեցիքն քան և երկու են, ըստ Թուոյ

ընդ առաջինն յԱղեքսանդրեայ արար նա զնոսա, և զքան և հինգ յառաջին սաղմոսից ասէ։ Բայց դարձեալ այլ միւս ևս հինգ վասն Ողբոցն Երեմիայ զոր մեք գիտացաք, և ի նոսա յիշեցուցանէ վասն երկուց ևս զոր արար նա վասն Ցարութեան մեռելոց։ Եւ դարձեալ վասն գրոցն այնոցիկ զոր գրեաց նա մինչև ելեալ էր նա ի Աղեքսանդր քաղաքէ։ Եւ դարձեալ վասն յիշատակաց պատմութեանց ասեն զոր արարեալ է Նորա անգէն ի քաղաքի ի Թագաւորութեանն Աղեքսանդրեայ։

Վասնիորոյ հինգիորոյ. բէ այսպէս յիշեցուցանէ Որոգինէս զգիրսն որ ընդունելի են ի մէջ եկեղեցւոյն։

Այլ երբեմն գրոյշքն նա զայն սաղմոս որ զառաջինն եգ նա զթիւ և զհամար գրոց սրբոց հին կտակարանաց, ասաց իսկ այսպէս. Արժան է, ասէ, յուշանալ, եթէ գիրք որ ընդունելի են զոր ետուն

Նշանագրաց Նոցա: Յարէ 'ի Նոյն ապա, եթէ ըստ եր-
բայեցւոց քսան և երկու գիրքն այս են. որ առ մեզ
Ծնունդք մակագրի, առ Եբրայեցիս 'ի սկզբանէ ան-
ուն գրոյն առեալ Պերէշիտ [1], այս ինքն 'ի սկզբանէ կո-
չի: Ելք, Վէլլէ շմոթ [2], Սա են անուանքը. Ղեւտականք,
Վէիգրա [3], Եւ կոչեաց. Թիւք, Ամմէա փէքոտիմ [4].
Երկրորդ Օրէնք, Էլլէ Առէպարիմ [5], Սա են պատ-
գամք. իսկ Ցեսու որդի Նաւեայ, Եհոշուան պէն-
Նուն [6]. Դատաւորք և Հռութ 'ի միասին առեալ առ
նոսա Շոֆէքիմ [7]. իսկ գալուստինքը թագաւորու-
թեանց առաջին և երկրորդ, 'ի մի գիրս և սոքա՝ Սա-
մուէլ ասի, այն է Աստուածակոչ: Եւ երրորդ և չոր-
րորդ թագաւորութիւնքն, Վամմէլէխ Տաւիթ [8], Եւ
թագաւորն Դաւիթ. և առաջին և երկրորդ Մնացոր-
դաց գիրք 'ի մի առեալ և սոքա, Տիվրի հայամիմ [9],
Բանք աւուրց. Եզրայրն երկու. Եզրա, որ է Օգնա-
կան. գիրք Սաղմոսացն, Սէֆէր թէհիմ [10]. Առակքն
Սողոմոնի, Միշղոթ [11]. Ժողովող, Քոհէլէթ [12]. Երգ
երգոց, Սիր Աշիրիմ [13]. Եսայի Նոյնպէս, Էյշայաս. Ե-
րեմիա Հանդերձ ողբովքն և Թղթով, Երեմիա. Դանի-
էլ, Տանիէլ. Եզեկիէլ, Եզէխէլ. Յովք, Յովբ. Ես-

մեզ Հեբրայեցիք քսաներկուք են՝ ըստ Թուոյ Նշանագրաց Նոցա: Զկնի այսր յաւել և ասաց. Որ են ասէ քսաներկու գիրք 'ի մէջ Հեբրայեցւոցն այս են. այս որ կոչի առ մեզ Ծնունդք, առ Հեբրա-
յեցիսն՝ 'ի գլխոյ գրոց կոչի, այսինքն՝ իսկզբանէ. և Ելք կոչին Հե-
բրայեցերէն Զմաւոթ, զի է մեկնութիւն նորա՝ Ա՛յս անուանք. իսկ Քահանայիցն՝ Վիկարեայ, այսինքն՝ Եւ կոչեաց. իսկ Թուոցն կոչէ Ամպակոդիմ, իսկ Երկրորդ Օրինացն՝ Ալէզաբէրիմ, այս-
ինքն՝ Ա՛յս պատգամք. իսկ Ցեսու որդի Նաւեայ՝ Ցեսուեան. իսկ
Դատաւորք և Հռութ առ նոսա կոչի Նաեւս փաստիմ. իսկ գալուս-
թիւն Թագաւորաց երկուս որ կոչին Աչախագպրեամն, այսինքն՝
բանք աւուրց. Եւ Եզրայր երկուս որ ասին առ նոսա Ախէզայ,
զի կոչի օգնական. իսկ գալուստիւն Սաղմոսաց՝ որ կոչի Սփսրթա-

1 בראשית:
2 דאלה שפות:
3 ריקרא:
4 אמם פקורים:
5 אלה הדבדים:
6 יהושע בקבו:
7 שופטים:
8 רהפלך דוד:
9 דברי היפים:
10 ספר תהלים:
11 משלות:
12 קהלת:
13 שיר השידים:

Թէը, Եւսեբի. Բայ յայսցանէ է դարձեալ Մակաբայեցւոյն մանագրեալ Սարմէա սարմանէ էլ. Ջայս ամենայն եգ նա 'ի գիրսն, զոր ասացաքս կանխաւ. իսկ յառաջինն գիրս իւր որ 'ի վերայ աւետարանին Մատթէի, պահելով նորա զկանոնս եկեղեցւոյ, չորս աւետարանս միայն գիտել վկայէ այսպէս.

Իբրև 'ի տուչութենէ, ասէ, ուսայ վասն չորից աւետարանացն, որք միայն անխոցած յամենայն եկեղեցիս Աստուծոյ՝ որ 'ի ներքոյ երկնից ընդունելիք են. Ջառաջինն գրեաց՝ որ մաքսաւորն էր Եփեթեայ, և ապա առաքեալ Քիսոսի Քրիստոսի Մատթէոս, և յերբայեական բարբառ շարագրեալ զայն ետ Հրէից հաւատացելոց. Իսկ երկրորդն՝ որ ըստ Մարկոսին, որպէս առաջի եգ նմա Պետրոս՝ գրեաց նա ըստ այմմ, զոր և կոչէ որդի իւր 'ի կաթողիկէ Թղթի անդ, ասելով. Ողջունէ զձեզ՝ որ 'ի Բաբելոն ընտրեալիկ իմ և Մարկոս որդի իմ՝ Իսկ երրորդն՝ ըստ Ղուկայն, զոր գովէ Պօղոս և որ գրեցաւն վասն հեթանոսաց հաւատացելոց. Ետ ամենեցուն սոցա Յովհաննուն, որ և 'ի հինգերորդ գիրս մեկնութեան աւետարանիս խօսելով զթղթոց առաքելոցն այսպէս ասէ. Որ արժանին եղև

զիմ. և առակէն Սողոմոնի՝ որ կոչի Նմշաթ. և եկեղեսիաստէ որ կոչի Կահդաթ. Երգերգոց՝ Սէր սէրիմ. Խայէ՝ Խայեայ. Երեմիայ հանդերձ ողբովքն և Թղթովքն Անբուամայ. Դանիէլ՝ Դանիէլ. Յովը՝ Յովբ. Խթէր՝ Խթէր. Ա՛յլ են գարձեալ և այլ ևս բայ 'ի Մակաբայեցւոց անտի, զի գրեալ է 'ի վերայ Նոցա Աբբութի Մաբնայէլ. Ջայս ամենայն եգ 'ի խօսն յայնս զոր ասացաքս վասն նորա: Իսկ յառաջին խօսն զոր գրեաց նա յաւետարանի անդ Մատթէոս, պահեաց զկանոնս եկեղեցւոյ, և վկայեաց եթէ չորս աւետարանս միայն գիտաց նա: Որպէս իսկ այսպէս. Եթէ 'ի տուչութենէ, ասէ, ուսայ ես վասն չորից աւետարանացն, զի նոքա միայն անխոցած են յամենայն եկեղեցիս Աստուծոյ որ են 'ի ներքոյ երկնից: Եւ նախ յառաջ գրեաց Մատթէոս, այն որ զառաջինն մաքսաւոր էր, և ապա յետոյ եղև նա առաքեալ Քիսոսի Քրիստոսի: Գրեաց զնա Հրէից հաւատացելոցն հերթայեցերէն գրով: Իսկ երկրորդ Մարկոսին, այն որ գրեացն որպէս և պատմեաց նմա Պետրոս. զի զնա կոչէ որդի իմ՝ 'ի կաթողիկէ Թղթի անդ. եթէ հարցանէ զողջունել ձերմէ ընտրեալ որ է երբև զձեզ 'ի Բաբել, և Մարկոս որդի իմ՝ Իսկ երրորդն Ղուկայ աւետարանն, այն որ Պօղոս գովէ զնա, զոր արար նա հեթանոսաց հաւատացելոցն: Եւ չորրորդն Յոհաննուն զինի ամենեցուն, և յայն 'ի մեկնութեան անդ հինգերորդ զոր արար յաւետարանի անդ Յոհաննու՝ զայն իսկ ասաց վասն Թղթոց առաքելոցն այսպէս. Եթէ Պօղոս, ասէ, այն որ արժանի եղև լինել

սպասաւոր լինել Նորոց կատակարանաց՝ ոչ որ գրոյն է, այլ հոգւով՝ Պօղոս, որ էլից զաւետարանն յերուսաղէմ մինչև ի կողմանս Լիւրիկեացւոց, և ոչ ամենայն եկեղեցեաց՝ որոց ուսոյցն գրեաց նա, և որոց գրեացն՝ սակաւ ինչ գրեաց։ Եւ Պետրոս՝ յորոյ վերայ շինեալ է եկեղեցին Քրիստոսի, զոր դրունք դժոխոց ոչ կարասցեն յաղթել, զմի միայն Թուղթս ըստ հասարակաց հաւանութեան եթող. համարեսցուք Թէ իցէ նորա և երկրորդ Թուղթ, զի երկբայութիւն է զայնմանէ։ Իսկ զինչ վասն Յովհաննու ասացաք, որ անկաւն զանջրջն Յիսուսի, որ զմի միայն եթող աւետարան, Թէպէտ խոստովան եղև Թէ կարող էր այնպիսի ինչ մատենագրել զոր և աշխարհս չլինեալ բաւական տանել զգիրսն։ Գրեաց և զՅայտնութեան գիրս, սակայն հրամայեցաւ լռել և մի գրել զբարբառս եւթն որոտմանցն։ Եթող և Թուղթ մի, այլ սակաւատող հանդերձ։ Համարեաց Թէ նորա իցէ և երկրորդն և երրորդն, քանզի ոչ հաւանին ամենեքեան հարազատս լինել, սակայն չիք ի նոսա և ոչ հարիւր ստիքս անգամ։ Իսկ զերբայեցւոց Թղթոյն խօսելով ի Ճառս իւր՝ ասէ Ծիւք կերպարանաց բանից Թղթոյս՝ որ առ Եբրայեցիսն կոչի, չունի զխոստո-

սպասաւոր Նորոց կատակարանաց, այլ ոչ որ գրով է՝ այլ որ հոգւոյն է, այն որ և արար զաւետարանն յերուսաղէմ մինչև ի կողմանս լիւրիկացւոց։ և ոչ ամենայն եկեղեցեացն զոր ուսոյց գրեաց նա Թուղթս, սակայն և յոյնս զոր գրեացն սակաւ սպասաւ է նորա։ Իսկ Պետրոս այն որ ի վերայ նորա շինեալ է եկեղեցին Քրիստոսի, այն որոյ դժոխոց ոչ յաղթեն նմա, մի Թուղթ միայն եթող նա՝ այն որ խոստովան լինի գնմանէ եկեղեցի, համարեաց Թէ և որպէս իցեն. քանզի երկբայութիւն է վասն նորա։ Իսկ զինչ ասացաք վասն Յովհաննու, այն որ անկաւ զանջրջն Յիսուսի, զի մի աւետարան եթող նա։ և խոստովան եղև Թէ կարող էր նա առնել զբազումս զոր աշխարհս բաւական չլինէր նորա։ Բայց գրեաց նա և Յայտնութիւն, և հրամայեցաւ նմա զի լռեսցէ և մի գրեացէ նա զբարբառս որոտմանցն։ Բայց եթող նա և Թուղթ մի որ սակաւ բանք են ի նմա, համարեաց եթէ երկուք և երեք իցեն. քանզի ոչ ամենայն մարդ խոստովանի, Թէ նորա իցեն նորա։ Սակայն չիք ի նոսա և. ոչ հարիւր պատգամ։ Բայց ասաց նա գալ ձեզ վասն Թղթոցն հեբրայեցւոց յօրժամ Թարգմաներ Թէ ախտ բանի Թղթոյն հեբրայեցւոց ոչ ոգիս է մեկնութիւն նորա, որպէս և ինքն առաքեալ խոստովան լինի վասն անձին իւրոյ Թէ ոգիս էր նա բանիս իւրով. զի կորովութեամբն արգելեալ և յարմարեալ է

Թիւն ոՀոյ առաքելոյս, որպէս և ինքն խոստովանի Թէ Տգէտ է բանիւ, այսինքն յոՀ և ի ձև բանիցն։ Ա՛յլ Թուղթս այս ըստ ամենայնի վայելուչ Թեան յունականին շարագրեալ, մինչև ամենեցուն՝ որ դատողական միտս ունիցին, խոստովանել զոՀոյն զանազանուԹիւն։ Դարձեալ և իմաստք ի նմա սքանչելիք, արժանաւորք առաքելական մտաց. և ամենայն որ հաւանեսցի ՀաստատուԹեանս, որ մտադիր փութով անցանիցէ ընդ գիրս առաքելոյն։ Եւ ապա յարէ ի նոյն Թէ Ես զայսպիսի տամ վՀիւ, զի միտք և իմաստք Թղթոյս առաքեալ են, իսկ կարգ և ձև բանից այլոց ուրուք՝ որ չիշեալ զբանս առաքելականս, և որպէս աշակերտ գրիչ պարապով զասացեալսն ի վարդապետէն իւրմէ։ Ա՛րդ յոլովս յեկեղեցիսդ և ընկալեալ է սա որպէս Պօղոսին, կարէ պարծել ի սոյն, զի ոչ վայրապար Հաքեն իքրև Պօղոսի զնա մեզ աւանդեցին։ Ա՛յլ Թէ ոմն իցէ գրիչ Թղթոյս, Ճշմարտապէս Աստուծոյ միայնոյ է գիտելի։ Իսկ որ առ մեզ ենՀաս պատմուԹիւն՝ կէսք կղեմայ տան զայն՝ եպիսկոպոսի եկեղեցւոյն Հռոմայեցւոց և կէսք Ղուկայ, որ զաւետարանն և զգործս Առաքելոց գրեաց։ Եւ վասն այսորիկ բաւականասցի այսչափ։

Թուղթս այս յոգւոյն զարդարագիր բանիւք իւրովք ըստ չէզոՀ առաւել քան զայլ Թուղթս առաքելոյ. և խոստովանէ ամենայն մարդ՝ Թէ աՀեղակ է նա քննել զընտրուԹիւնս մեկնուԹեանց։ Դարձեալ միտք որ ի նմա են՝ սքանչելի են և չեն պակաս յայնցանէ զոր գրեաց առաքեալ։ Եւ զի այս Ճշմարիտ է, միաբանի ամենայն՝ որ գիտէ Հայել ընդ ընԹերցուածն առաքելոյ։ Եւ յետ այսորիկ յաւել նա և ասաց. զի ես ասէ Հաւանեմ և ասեմ, Թէ միտք որ են յայսմ Թղթի՝ առաքելոյ են։ իսկ մեկնուԹիւնն կէսք բանի սոցա այլոյ ուրումն է՝ որ չիշէր զոր ինչ ասէր առաքեալ, և որպէս աշակերտ գրէր նա զոր ինչ ասէր վարդապետն իւր։ Ա՛րդ յորում կեկղեցի և իցէ Թուղթս այս՝ իքրև զառաքելոյ ընկալցին զսա։ այլ Թէ ով գրեաց զայս Թուղթս Ճշմարիտ, Աստուած միայն գիտէ։ Բայց պատմուԹիւն որ ենՀաս առ մեզ վասն սորա, ասեն, Կղեմէնտոս գրեաց զսա, այն որ ասի եղեէ էր նա եպիսկոպոս եկեղեցւոյն Հռոմայեցւոց. և այլք ասեն Թէ Ղուկա գրեաց զնա, այն որ զաւետարան և զԳործս Առաքելոցն գրեաց։ Ա՛յս ինչ ասացաւ մինչև ցայս վայր՝ չատ լեզի։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Թէ ո՛րպէս Հերակլէս կալաւ զեպիսկոպոսութիւն եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց։

Ցամին տանեբորդի ինքնակալութեան Աղեքսանդրոս, իբրև եւ Որոգինէս յԱղեքսանդրիոյ երթալ՝ի Կեսարիա, եթող նա զնդ փոխանակ ընդ իւր վարդապետ նորընծայ Հաւատացելոց զՀերակլէս։ Եւ յետ ոչ բազմաց՝ի վախճանել Դեմետրի եպիսկոպոսին Եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց տեւեալ՝ի պաշտամանն իւրում զամս քառասուն և երիս, կալաւ զաթոռ եպիսկոպոսութեան Հերակլէս։ Ի ժամանակին պայծառանայր Փիլիպիանոս եպիսկոպոս Կեսարիոյ Կապադովկացւոց։

ԳԼՈՒԽ ԻԷ.

Թէ ո՛րպէս հայէին եպիսկոպոսքն ընդ Որոգինէս։

Ա.Հիպէսի փոյթ պնդութեան յանձին կալաւ վասն Որոգինի Փիլիպիանոս, մինչև յաշխարհ իւր կոչել զնա

Փաաներորդ վեցերորդ. զի Հերակլէ կալաւ զեպիսկոպոսութիւն եկեղեցւոյն աղեքսանդրացւոց։

Ցամին տանեբորդի այսր Թագաւորութեան, ՚ի ժամանակի իբրև եւ Իրիգինէս յԱղեքսանդր քաղաքէ, և լինէր ՚ի Կեսարիա, եթող նա փոխանակ ընդ իւր անդէն վարդապետ այնոցիկ որ աշակերտէին օր ըստ օրէ՝ զՀերակլէ։ Եւ յետ սակաւ ժամանակաց Դեմետրիոս եպիսկոպոս եկեղեցւոյն Նոցա հանգեաւ, իբրև լցեալ էր զպաշտօնն իւր զքառասուն և զերիս ամ, կալաւ զեպիսկոպոսութիւնն զկնի նորա Հերակլէ։

Փաաներորդ եօթներորդ. թէ ո՛րպէս կամ զիա՞րդ հայէին եպիսկոպոսքն ընդ միմեանս։

Աչքն՚էլի էր յոյժ յայնմ ժամանակի Պետրոսիոս եպիսկոպոս եկեղեցւոյն Կեսարու կապադովկացւոց, զի այսպիսի փոյթ

յօգուտ եկեղեցեաց. և ինքնին ելեալ նա գայր ի Հրէաստան ի տեսանել զնա և ի լսել, և ժամանակս բազումս լինէր առ նմա յառաւել գիտութիւն աստուածային բանին։ Ոչ միայն սա, այլ և Աղեքսանդր Երուսաղէմացւոց և Թէոկիստոս Կեսարիոյ Պաղեստինացւոց Հանապազօր առ նմա էին իբրև առ վարդապետի, նմա միայնոյ յանձն արարեալ զմեկնութիւնս գրոց սրբոց և զայլ ամենայն պաշտօն վարդապետութեան եկեղեցւոյ։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Վասն հայրապետացն որ յաջորդեցին Մաքսիմիլիանոսի։

Եւ կացեալ Աղեքսանդրու կայսեր զերեքտասան ամս յիշխանութեան Հռոմոց, կալաւ զթերութիւնն Մաքսիմինոս։ Որ առ ոխերիմ քինու առելութեան ընդդէմ տանն Աղեքսանդրու՝ յորում բազում հաւատացեալք էին, յարոյց հալածանս, և զառաջնորդս եկեղեցեաց միայն իբրև պատճառս և քարոզս վարդապետութեան աւետարանին, հրամայեաց կո-

պնդութեան յանձին ունէր վասն Իրիդինեսի, զի երբեմն յաչխարհն իւր ուր ինքն յղեալ և կոչեալ զնա, երթալ իբրև յօգուտ և ի շահ եկեղեցեաց։ Ի ժամանակի իբրև եկն նա յերկիրն հրէաստան՝ ժամանակս բազումս եղև առ նոսա, որպէս զի առաւել լիցին նոքա ի գիտութիւն աստուածպաշտութեան։ Եւ ոչ եթէ նա միայն, այլ և Աղեքսանդրոս եպիսկոպոսն Երուսաղէմի, և Թէոկաեստոս կեսարացւոյ՝ հանապազօր էին առ նմա իբրև առ վարդապետի, և նմա տային առնել զմեկնութիւնս գրոց Աստուածոյ, և զայլ վարդապետութիւնս եկեղեցւոյ։

Գլուխ երկոտասներորդ։ վասն հայրապետացն որ եղեն յաջորդս Մաքսիմինոսի։

Եւ իբրև ելից կատարեաց Աղեքսանդրոս ինքնակալ զերեքտասան ամ գթագաւորութիւնն հռոմայեցւոց, Մաքսիմինոս կալաւ զնոսա։ զի ասի սա, վասն զի եղեալ նա հակառակ թշնամի տանն Աղեքսանդրեայ արքայի որ ի բազում հաւատացելոյց հաստատեալ էր, յոչնչաց և յարոյց հալածանս, և զառաջնորդս եկեղեցեացն միայն զնոսա հրամայեաց կոտորել, որպէս թէ նոքա իցեն պատ-

տորել։ Աբար յայնժամ Որոգինէս խօսս վասն վկայից, և ընծայեաց Ամբրոսեայ և Պրոտոկտետեայ երիցու եկեղեցւոյն կեսարացւոց. զի երկոցունց նոցա ոչ թե թէև նեղութիւնք և վտանգք հասին ՚ի հալածանս անդ՝ յորում և խոստովանութեամբ պայծառացան աքեն, որպէս պատմի, ոչ ինչ աւելի քան զամն երիս կեցեալ Մաքսիմինոսի։ ՋԺամանակս հալածանացս նշանագրէ Որոգինէս և ՚ի քսաներորդ առաջներորդ գիրս մեկնութեան աւետարանին Յովհաննու և յայլ թուղթս իւր։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Վասն փաբիանոսի, և թէ զիա՛րդ սքանչելիօք առ Աստուծոյ եղև նա եպիսկոպոս Հռովմայեցւոց։

Իբրև զկնի Մաքսիմինոսի ամբառնայր իշխանութիւն Հռովմայեցւոց Գորդիանոս, յետ վեցամեայ աւագնորդութեան եկեղեցւոյն Հռովմայ վախճանեալ Փոնտիանոս՝ յաջորդէ զնա Անտերոս. կացեալ և նո-

Ձառաք վարդապետութեան աւետարանին։ Յայնմ իսկ ժամանակի արար իւր Որոգինէս խօսս վասն վկայից, և գրեաց յանուն Ամբրոսեայ և Պրոտոկոսեայ երիցանց եկեղեցւոյն կեսարացւոց, զի երկոցունց նոցա չարչարանք մեծամեծք և նեղութիւնք տագնապի հասին ՚ի հալածանսդ անտի, և ըստ բանի առելոյ անդէն ՚ի քաղաքի վկայեցին աքեն այն. զի գրոչմեալ իսկ է նորա զայն ժամանակն ջհալածանացն ՚ի մեկնութեան անդ քսան և երկուց, զոր արարեալ է նորա վասն աւետարանին Յովհաննու, և ՚ի բազում թուղթս իւր։

Քաւներորդ ԻՆներորդ. վասն փիլիպպոսի ՚ թէ որպէս կամ զիա՛րդ եղև նա սքանչելիօք եպիսկոպոս ՚ի Հռոմ քաղաքի։

Այլ իբրև եկաց ՚ի թագաւորութեան անդ զերիս ամն Մաքսիմինոս, Գորդիանոս կալաւ զկնի նորա զթագաւորութիւնն Հռոմայեցւոց։ Իսկ յեկեղեցւոջ անդ Հռոմայեցւոց իբրև եկաց յեպիսկոպոսութեան անդ Փոնտիանոս զվեց ամ, կալաւ զկնի նորա Անտերոս։ Եւ իբրև եկաց ՚ի պաշտաման անդ զմի ամիս, կալաւ զկնի

բա 'ի պաշտամանն իւրում ամիս մի միայն, Թողու զա-
Թոռն Փաբիանու։ Եւ պատմէն եթէ յետ մահուան
Աննեբոսի՝ գայր Փաբիանոս յագարակէ հանդերձ
ընկերօք իւրովք 'ի Հռոմ կալ անդ բնակութեամբ,
և իբրև աբանչելիք յերկնաւոր շնորհաց անտի Սբ-
տուածոյ արժանի լինէր եպիսկոպոսութեան։ Քանզի
իբրև ժողովեալ էին եղբարք 'ի միասին յեկեղեցւոջ
'ի ձեռնադրութիւն ընծայելոյն յեպիսկոպոսութիւն.
և բազումք յերևելեաց անտի զոք և 'ի փառաւորաց
կարծէին ընտրել, և ոչ 'ի միոս ուրուք անգամ ան-
կանէր վանն Փաբիանու՝ որ անդ, յանկարծ իբրև 'ի
բարձանց Թռուցեալ աղաւնի մի եկն և հանգեաւ,
ասեն, 'ի վերայ գլխոյ նորա՝ նշանակեալ զօրինակ Հո-
գւոյն սրբոյ, որ ըստ նմանութեան աղաւնոյ էջն և
հանգեաւ 'ի վերայ Փրկչին մերոյ։ Ընդ այն տեսիլ
շարժեալ ժողովուրդն առ հասարակ իբրև 'ի միոյ հո-
գւոյն Աստուծոյ միաշունչ հաւանութեամբ աղաղա-
կէին Թէ՝ արժանի է դա, և վաղվաղակի առեալ զնա
Նատուցին յաթոռ եպիսկոպոսութեան։ Ջայսու ժա-
մանակաւ փոխելով յաշխարհէ և Ջերբինոս եպիսկո-
պոս Աննտիոքացւոց, կալաւ զաթոռ իշխանութեանն
Բաբիլաս։ Իսկ յԱղեքսանդրիա յետ Դեմետրի՝ որ
զքառասունն և զերիս ամ եկաց յեպիսկոպոսութեան,
կալաւ զպաշտօն նորա Հերակլէս և 'ի վարդապետու-

նորա Փերբիանու։ Աստն վասն սորա, Թէ յետ մահուանն Աննեբոսի
գայր նա յագարակէ հանդերձ այլովք ընկերօք, և մերձեցաւ 'ի
Հռոմ. և անդ իբրև աբանչելիք յերկնաւոր շնորհաց անտի Աստու-
ծոյ արժանի եղև եպիսկոպոսութեան։ Զի 'ի ժամանակի իբրև ժո-
ղովեալ էին 'ի միասին եղբարք վասն այնր որ ընդունելոյց էր զնե-
նադրութիւն եպիսկոպոսութեան, և այլ մարդիկ բազում գվա-
ւորք և աբանչելիք էին անդ, որ վասն նոցա կարծէին բազումք վասն
այսր իրաց։ Իսկ Փերբիանոս իբրև ոչ 'ի միոս և ոչ 'ի խորհուրդս
ուրուք անկեալ էր վասն նորա, յանկարծակի իբրև 'ի բարձանց
Թռուցեալ աղաւնի մի, և եկն հանգեաւ 'ի վերայ գլխոյ նորա, և
ելոյզ զօրինակ զոյնր հոգւոյ՝ որ ըստ նմանութեան մարմնոյ աղա-
ւնոյ էջ հանգեաւ 'ի վերայ Փրկչին մերոյ։ Եւ խռովեցաւ առ հասա-
րակ ամենայն ժողովուրդն 'ի հոգւոյ Աստուծոյ, և յամենայն միաց
և խորհրդոց իւրեանց աղաղակէին վասն նորա և ասէին. Թէ ար-
ժանի է դա։ Եւ նոյնժամայն առին և նստուցին զնա յաթոռ եպիս-
կոպոսութեան։ Ելոյզ յայնմ ժամանակի իբրև եղ յաշխարհէն Ին-

Թիւն երախայից կարգեցաւ Դիմնեսիոս, զի եր և սա յաշակերտաց անտի Որոգինի։

ԳԼՈՒԽ Լ.

Թէ քանի՛ աշակերտք եղեն Որոգինի։

Մինչդեռ Որոգինէս՝ ի կեսարիա զգործ սովորա-
կան պաշտամանն իւրոյ կատարէր՝ գայիոս առ նա բա-
զումք ոչ միայն՝ ի քաղաքացւոց անտի և՝ ի բնակաց
երկրին, այլ և՝ ի հեռաւոր աշխարհաց աշակերտիլ
նմա, զորոց զգլխաւորս ծանեաք՝ զԹէոդորոս՝ որ եղև
յաւուրս մեր մեծանունն Գրիգորիոս եպիսկոպոս. և
զեղբայր նորա զԱթենադորոս, զորս զակատեալս
յոյժ սեւամանելով Որոգինի զհետ հելլենական և հը-
ռովմէական ուսման, արկ՝ ի նոսա զսէր փիլիսոփայու-
թեան, և յորդորեաց յօժարեցոյց փոխանակել զա-
ռաջին փոյթն սնդութեան ընդ աստուածեղէն վար-
դապետութեան։ Եւ իբրև եղեն առ նմա զամս հինգ,
այնպէս առաւելեալ զարգացան՝ ի սրբազան պերճա-
խօսութեան և՝ ի վարդապետութեան աստուածային

նենոս եպիսկոպոս եկեղեցւոյն անտիոքացւոց, կալաւ զնոսա
զեպիսկոպոսութիւն Բաբիլոյ։

Երանելոյդ. թէ քանի՞ աշակերտք եղեն Յուղիանեսի։

Իսկ յեկեղեցւոջ անդ աղէքսանդրացւոց՝ ի ժամանակի իբրև
կալաւ զպաշտօն նոցա Հերակլէ զնի Ալմաբեայ, Դիմնեսիոս կա-
լաւ զվարդապետութիւն աշակերտութեանն որ անդ էր. զի էր և
նա մի յաշակերտաց անտի Որոգինեսի։ Իսկ ինքն Իրիգինէս աթոռ
իւր գործ սովորութեան, չքէր և տեսանէր զիրան՝ ի կեսարիա.
մերձնային առ նա բազումք, ոչ միայն յաշխարհէ անտի, այլ և՝ ի
հեռաւոր աշխարհաց աշակերտք բազումք եղեն նորա՝ որ Թողին
զաշխարհս իւրեանց։ Բայց մեք գիտացաք զմարդս որ գլխաւորք
էին՝ ի նոսա, զԹէոդորոս՝ այն որ յաւուրս մեր էր նա եպիսկոպոս
անուանի, և կոչեցաւ Գրիգորիոս, և եղբայր իւր Աթենադորոս,
զի նոքա յոյժ փափագեալ էին յաւուրս յառաջ և հառմայեցաւ։
Բայց նա եգ՝ ի նոսա զձշմարիտ սէր փիլիսոփայութեան, և յորդո-
րեաց և յօժարեցոյց զնոսա փոխանակել զառաջին փոյթն սնդու-
թեան ընդ վարդապետութիւն աստուածպաշտութեան։ Իսկ իբրև

բանին, մինչ զի դեռ ևս մանկահասակք երկոքին սո-
քա, արժանի եղեն եպիսկոպոսանալոյ եկեղեցեացն
Պոնտացւոց։

ԳԼՈՒԽ ԼԱ.

Վասն Աֆրիկանեայ ժամանակագրի։

Ի ժամանակին մեծապէս փայլեցաւ Աֆրիկանոս,
որ զդիրս մանագրեալն Ջեզդրն[7] շարադրեաց. է սո-
քա և Թուղթ մի առ Որոգինէս, յորում երկայն նա
ընդ հարաշատութիւն պատմութեան Տուշանայ, և
պաՀանջեալ և յօդուածոյ ինչ Համարի զայն ի Դա-
նիէլ։ Որում լայն և Հոխ բանիւ պատասխանի առնէ
Որոգինէս։ Նորին Աֆրիկանոսի հինգ գիրք ժամանա-
կագրութեան են՝ մնադիր քննութեամբ յօրինեալ,
որ և ողջ Հասին առ մեզ։ Յորում առ մեծի Համբա-
ւոյն Հերակլեայ գնացեալ նորա յԱղեքսանդրիա, ա-
սէ, զոր և յիմաստասիրութեան և յայլ հելլենական
մակացութիւնս առաւելեալ, և յեպիսկոպոսութիւն
եկեղեցւոյն այնորիկ արժանացեալ՝ կանխեցաք ասա-
ցաք։ Ի նորին Աֆրիկանոս և Թուղթ մի առ Արիստի-

*եղեն առ նմա զհինգ ամ, այնպիսի առաւել գոան յաստուածպաշ-
տութիւնն, զի մինչդեռ տղայք էին նորա երկոքին՝ արժանի եղեն
լինել եպիսկոպոսք եկեղեցւոյն պոնտացւոց։*

Երեսներորդ առաքեալորդի. վասն Աֆրիկանոսի։

Յայնմ ժամանակի Աֆրիկանոս էր յայնմն օրինակագիր գրիչ-
իակ Թուղթ մի նորա զոր գրեաց առ Որոգինէս, վասն պատմու-
թեանն Տուշանայ՝ որ է ի Դանիէլ անդ. իբրու Թէ չէ նա տեղեակ
եթէ Ճշմարիտ իցէ, և Թէ առա՛ւ նէ գրեաց առ նա երկիցնէս Թէ
Ճշմարիտ է։ Բայց սորին իակ ԶՖրիկանոսի* ընկալաք մեք հինգ
գպրութիւն զգրոցն ժամանակաց, զոր եդ նա բազում փութով և
պնդութեամբ. և ի նոսա ասաց՝ Թէ չուգաւ նա յԱղեքսանդրիա
վասն բազում Համբաւոյն Հերակլեայ, այլ որ ցուցաք մեք վասն
նորա, Թէ պաՀանջելի եղև բանիւ փիլիսոփայութեան և այլով ա-
մենիւ. և կալաւ նա զեպիսկոպոսութիւնն որ անդ էր։ Բայց և և
այլ միւս Թուղթ Աֆրիկանոսի զոր գրեացն առ Ըռիստիգէս, վասն

* Այսինքն Զ Աֆրիկանոսի։

դէս վասն կարծեցեալ անմիաբանութեանն ընդ Մատ-
թէոս և ընդ Ղուկաս յաղագս համարն Քրիստոսի։ Յո-
բում յայտնապէս ցուցանէ նա զմիաբանութիւն աւե-
տարանչացն ՚ի պատմութենէն. զոր ՚ի հարց անտի
ընկալեալ կարգէ, զոր և մեք ՚ի դէպ ժամանակին
յառաջնում դպրութեան անդ պատմութեանս եդաք։

ԳԼՈՒԽ ԼԲ.

Ջո՛րս և զորսիսի՛ մեկնութիւնս արար Որոգինէս ՚ի Կեսարիա Պաղեստինացւոց։

Ի ժամանակին արար Որոգինէս զմեկնութիւնս
մարգարէութեանցն Եսայեայ և Եզեկիէլի՛ յորոց զե-
րիս մասն Եսայեայ մինչև ՚ի տեսիլ չորքոտանեաց ա-
նապատին, յերեսուն գիրս ունիմք առ մեզ. իսկ Եզե-
կիէլին ՚ի քսան և ՚ի հինգ՝ ՚ի վերայ ամենայն մար-
գարէութեանց նորա, զոր յԱթենս գոլով ՚ի ժամա-
նակին բովանդակեաց նա. և սկիզբն արար յերգս
երգոցն, և հինգ գիրս յօրինեալ անդ, լցայոյց զայն
՚ի տասն՝ դարձ արարեալ ՚ի Կեսարիա։ Եւ զինչ պէտք
իցեն թուել կարգել աստանօր Ձդիւ գտակաւ զցանկ

երկմտութեանն որ կարծի բազմաց. Թէ է ՚ի դպրութիւն Ծննդոց,
որ վասն Քրիստոսի զոր գրեցին Մատթէոս և Ղուկաս, զի ՚ի նմա
եցոյց նա զմիաբանութիւն աւետարանչացն յայտնապէս. որ իբրև
՚ի պատմութենէն զոր ընկալեալ էր նորա, այն որ ՚ի ժամանակի
իւրում եդաք մեք զնոսա ՚ի դպրութենէ առաջնում այսր Ձառից
զոր արկեալ է մեր։

Երեսնեւերկրորդ հերքումն. թէ որպիսի մեկնութիւնս եղ Իրիգինէս ՚ի Կեսարիա պաղեստինացւոց։

Իսկ Իրիգինէս եղ մեկնութիւնս մարգարէութեանն Եսայեայ և Եզեկիէլի, զմի մասն յերից անտի Եսայեայ մինչ երեսին չորքոտանեացն հարաւոյ երեսուն խօսս ընկալաւ մեք, զոր եդեալ է նորա։ Եւ Եզեկիէլի քսան և հինգ, ՚ի վերայ ամենայն մարգարէութեանց նորա։ Իսկ յորժամ չոգաւ նա յայնմ ժամանակի յԱթէն քաղաքի, անդ կատարեաց զեզեկիէլ, և սկսաւ յերգս երգոցն, և եդ անդ հինգ խօսս. և յորժամ շրջեցաւ և եկն ՚ի Կեսարիա, կատարեաց զնոսա զամենեսին, զի են նորա թուով տասն։ Այլ զինչ պիտոյ է

գրոց առնս այսորիկ՝ որ արդարև առանձինն պարապոյ է գործ. զոր և հատուցաք ի գիրս, յորում զՊամփիլեայ՝ որ եկայն առ մեզ, զսուրբ վկային գրեցաք։ Ուր և զփութոյ Ջանիկ Պամփիլեայ խօսելով վասն գրոց սրբոց, զգանկ գրոց Որոգինի և զայլոց մատենագրաց, զոր ժողովեացն նա՝ եդաք։ Զի որ սիրողն է կարէ անտի տեղեկանալ, Թէ որչափ ինչ ի գրոց Որոգինեայ հասին առ մեզ։ Այլ մեք գթածցուք անգրէն ի կարգ պատմութեանս։

ԳԼՈՒԽ ԼԳ.

Վասն մոլորութեան Բերիլլեայ։

Իսկ Բերիլլոս՝ զորմէ կանխեցաքս ասել սակաւ մի յառաջ, եպիսկոպոս էր Բոսդրաց Արաբացւոց, որ շրջել կամելով զկանոնս եկեղեցւոյ, նորս ամենևին և օտարս ի հաւատոց ի ներքս մուծանել ջանայր, զի ժպրհէր ասել համարձակութեամբ վասն Տեառն մերոյ Փրկչին Թէ չէր ի նմա գոյութիւն, այն է անձն ա-

ասել այժմ չդիտութեամբ վասն խոսից առն այնորիկ, զի նոքա առանձինն ինդրին փոյթ ժամանակիւ։ Դրեալ իսկ է մեր ի մատենին յիշատակաց որ արարեալ է մեր գրոցն զոր ժողովեաց Պամփիլոս վկայն սուրբ՝ որ եղև յաւուրս մեր. զի ի նմա ցուցաք ըստ փոյթ պնդութեան Պամփիլեայ որ ի պաշտօն Տեառն մերոյ էր՝ Թէ որչափ ինչ էր։ Եւ ցուցաք մեք վասն սոցա գանձուն գրոց զոր ժողովեաց նա զԻրիգինէին, և զայլ օրինակագիրս գրոյ զմանկանց եկեղեցւոյ, զի ամենայն որ սիրէ՝ անտի կարէ ուսանել և տեղեկանալ զվաստակ աշխատութեան զԻրոգինեսի՝ զոր ընկալաք մեք։ Բայց առ այժմ գործցուք եկեսցուք ի կարգ անդր պատմութեան։

Երեսնեւերդ երրորդ. վասն խոտորմանն Բերիդեղիսեայ, և վասն փիլիպպոսի։

Իսկ Բերիննղեղոս, այն որ յառաջ սակաւ ժամանակաւ ցուցաք վասն նորա՝ Թէ էր նա եպիսկոպոս Բոսորայ ի կողմանս արաբացւոց, կամեցաւ նա փոխել զնշմարիտ հաւատս եկեղեցւոյ, և մուծանել զաղանդս հերձուածոց որ օտար էին ի հաւատոց. զի ժպրհէր ասել համարձակութեամբ վասն փրկչին Տեառն մերոյ, Թէ ոչ է ի նմա անձամբ գոյացութիւնն յառաջ՝ մինչև եկեալ զա-

ռանձին՝ միևչև եկեալ նորա զգեցեալ զմարդն, և թէ չիք նորա յատուկ սեպհական աստուածութիւն ան-ձին, այլ աստուածութիւնն Հօր իւրոյ բնակեալ է 'ի նմա [7]։ Վասն այսորիկ բազում յեպիսկոպոսաց իմն-դիրս և վէձս յարուցեալ ընդ առն ընդ այնմիկ, աղա-չեցին ապա զՈրոգինէս ընդ այլս՝ խօսել ընդ առնն, և տեսանել թէ միով իցէ նա։ Եւ իբրև գիտաց Որոգինէս զոր ինչ խօսեր նա, յանդի-մանեալ կշտամբեաց զնա, զի ոչ ուղիղ գնայր։ և բա-նաւոր ցուցիւք և ընծայութեամբ հաւանեցոյց ած զնա 'ի Հնմարտութիւնն, և հաստատեաց յառաջին հա-ւատս առաջի՝ զոր ունէր նա։ Եւ կան միևչև ցայսօր յիշատակարանք վասն Բերիլլեայ և վասն գումարելոյ ժողովոյն 'ի պատձառս նորա, և վասն ինդրոյ Որոգի-նէսոյ առաջարկելոյ նմա, և թէ արդարև ինչ մաքառե-լով խօսեցաւ նա ընդ նմա յեկեղեցւոջ նորա անդ, և որ ինչ միանգամ եղև վասն այսորիկ 'ի մի բովանդա-կելով զամենայն։ Եւ որ այլ ինչ բազմապատիկ յիշա-տակութիւնք էին յերիցանց մերոյ ժամանակիս, թո-ղուլ և լռել ըմբռն կարծեցի, իբրև ոչինչ իւիք պատ-շաձեալ առաջիկայ պատմութեանս։ Եւ որ ինչ կա-րևորք էն 'ի գիտութիւն վասն նորա, զամենայն 'ի մե-րոյս վասն նորա յօրինելոյ ջատագովութենէ և 'ի

ցեալ էր զմարդն. և չիք նորա, ասէ, աստուածութիւն անձին իւ-րոյ, այլ աստուածութիւն Հօր իւրոյ բնակեալ էր 'ի նմա։ Եւ վասն այսորիկ բազում եպիսկոպոսք մաքառումն եգեալ և հարցուած առնէին ընդ առն ընդ այնմիկ. և ապաչէին զՈրոգինէս ինքանել ընդ այլս, և խօսել նախ ընդ առն ընդ այնմիկ, տեսանել թէ որպիսի միտս ունի նա։ Իբրև գիտաց Որիգինէս թէ զինչ խօսեր նա, յան-դիմանեալ կշտամբեաց զնա՝ զի ոչ ուղիղ գնայր. և հաւանեցոյց զնա հանձարեղով խորհրդովք, և բազում օրինակօք վասն այսո-ւսխոյ հաւատոց, և գաթձոյց 'ի Հնմարտութիւն և հաստատուց յառաջին հաւատսն՝ զոր ունէր նա։ Եւ են գիրք մինչև յայսօր վասն Բերիդեզոսեայ, և վասն Ժողովոյն՝ որ եղև վասն նո-ցա, և վասն մաքառմանն Որոգինէսի՝ որ ընդ նմա եղև, և ինչ որ խօսեցաւ յինդեզեցոջն որ անդ էր. և զամենայն որ ինչ միանգամ գործեցաւ անդ յայնմ ժամանակի. և այլ բազումն զոր հաւուն մեզ երիցանցն որ եղեն յաւուրս մեր, վասն յիշատակի Իրիգինէսի. զի կամիմ ես անցանել 'ի սոցանէն, վասն զի չեն պիտոյ այսմ պատ-մութեանդ։ Այլ այն ինչ որ պիտոյ էին ուսանել վասն նորա, ըզ-նոյնս իսկ զայնս ընտրեալ է մեր 'ի պատասխանւոյ անաի վաւաս-

սուրբ վկային Պամփիլեայ պատասխանատուութենէն՝ որ առ մեզ, կարէ որ ինդրել. զոր վասն պատճառա- խընդիր բամբասասէր մարդկան՝ վաստակակից սա- տարուեցեամբ միմեանց ապաքաջ։

ԳԼՈՒԽ Լ.։

Վասն փիլիպպեայ կայսեր։

Իբրև եկաց Գորդիանոս 'ի թագաւորութեան անդ Հռոմայեցւոց զվեց ամ միայն, կալաւ Փիլիպպոս ընդ որգւոյն իւրոյ Փիլիպպեայ զիշխանութիւնն։ Այլ վասն նորա բան, թէ քրիստոնեայ էր նա. և յաւուր վերջ- նում աքսուելոյն զատկի իբրև կամէր կիրակի լինել աղօթիցն ընդ ժողովրդեան յեկեղեցւոջ, ոչ հրամա- յեաց նմա եպիսկոպոսն՝ որ կայր 'ի գլուխ ժողովը- դեանն 'ի ժամանակին յայնմիկ, մինչև ոչ խոստովան լիցի և համարեսցի զանձն իւր ընդ այնոսիկ՝ որ վասն յանցանաց իւրեանց կան յապաշխարութեան. զի վասն բազում ինաստից՝ զոր գործեալ էր՝ չէր հնար եպիսկոպոսին ընդունել զնա, մինչև նորա զայս ամե- նայն կատարեալ։ Եւ պատմէն հնանդեալ ինքնա- կալին մտադիւր կամաք, և արգեամբք յուցեալ զՀրէ- մարիտ և զաբրեակբ միաս վասն երկիւղին Աստուծոյ։

*կոյն մերոյ։ Եւ արարաք մեք՝ ես և Պանփիլէոս վկայն սուրբ որ ե- ղև յաւուրս մեր, զի փոյթ պնդութեան յանձին կալաք մեք և ե- դաք վասն այնոցիկ որ սիրեն զբամբասանս։ Իսկ Գորդիանոս իբրև եկաց 'ի թագաւորութեան անդ հռոմայեցւոց զվեց ամ, կալաւ Փիլիպպոս զիշխանութիւնն։ Այլ վասն նորա բան, եթէ էր նա քրիստոնեայ. և յաւուրն վերջնում աքսութեան ասէին զատկաց՝ կամեցաւ [թէ խոստովան] յայնդան * ընդ ժողովրդեան եկեղեցւոյ՝ և ոչ հրամայեաց նմա եպիսկոպոսն որ կայր 'ի գլուխ ժողովրդեանն յայնմ ժամանակի. մինչև խոստովան լինել նմա, և համարել զանձն իւր ընդ այնոսիկ որ վասն յանցանաց իւրեանց կացին յապաշխա- րութեան. յաւել իւրում [թէ ոչ] չիք հնար, չընդունիմ ես [թէ ոչ] զայս առնես, վասն բազում բամբասանացն զոր ունէր նա վասն նո- րա։ Եւ նա յանձն էառ յայնմանէ մեաց իւրոց որպէս և զիարդ ա- սէին ընդնմանէ, և եցոյց արգեամբք զմիտն Աչմարիտս՝ զոր ունէր նա յաստուածապաշտութիւնն։*

* [թերևս՝ յաջորդն իմանալ պարտ իցէ։]

ԳԼՈՒԽ ԼԵ.

Թէ ո՛րպէս Դիոնեսիոս յաջորդեաց զՀերակլէս յեպիսկոպոսուբեան։

Ցամին երրորդի Թագաւորութեան Փիլիպպոսի փոխեցաւ Հերակլէս ՚ի կենաց, կեցեալ նորա յաջողութեան իւրում զամս վեց տասան. և կալաւ զեպիսկոպոսութիւն եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց Դիոնեսիոս։

ԳԼՈՒԽ ԼԶ.

Թէ ո՛րչափ ինչ այլ վաստակս վաստակեաց Որոգինէս։

Ի ժամանակին՝ որպէս ՚ի գեպ էր յաճախէին հաւատքն, և մեծաւ համարձակութեամբ քարոզեալ լինէր ուսումն վարդապետութեան Քրիստոսի ընդ ամենայն մարդիկ. և Որոգինէս էր ամաց իբրև վաթսընից, և երկար հանապազօրեայ կրթութեամբ ջանից ստացեալ յորդութիւն բանից, թայլ տայր երա-

Երեսներորդ չորրորդ. վասն Դիոնեսիոսի՝ որ կալաւ զեպիսկոպոսութիւնն զկնի Հրակղեայ։

Ցամին երրորդի Թագաւորութեանն Փիլիպպոսի, եւ Հերակղէ յաշխարհէս, իբրև կացեալ էր յեպիսկոպոսութիւն եկեղեցւոյն աղեքսանդրացւոց զվեց տասան ամ, և կալաւ զնկնէ նորա Դիոնեսիոս։

Երեսներորդ հինգերորդ. թէ քանի փոյթ պնդութեան էր Որոգինեայ։

Ցայնմ ժամանակի յաճախէին հաւատքն և բազմանային, վասն զի մեծաւ համարձակութեամբ քարոզեալ լինէր ուսումն վարդապետութեան ընդ ամենայն մարդիկ։ Եւ Որոգինէս էր ամաց իբրև վաթսուն, և ստացեալ էր նա բազում լուսաւորութիւն մաց յայց յերկար հնութեան ժամանակի և հրամայեաց նա երագագիր

գագիր դպրաց՝ ի գիր առնուլ՝ զոր խօսէրն հնձն, առ Ժողովուրդն, զոր կանխաւ չառնոյր զայդ յանձն։ Ի սոյն ժամանակս արար նա ուղի գիրս ընդդէմ գրոցն Նէսթոսի Եպիկուրենի՝ մանկագրելոյ բանիւ Ձշմարտութեան։ Դարձեալ՝ ի քան և՝ ի հինգ գիրս արար ըզմեկնութիւն Մատթէի աւետարանին. արար և յերկոտասան մարգարէս, յորոց զքսան և զհինգ գիրս միայն գտաք։ Ի նորա և Թուղթ մի առ Փիլիպպոս կայսր, և միւս այլ առ կին նորա Աւեբա, և այլ պէս պէս Թուղթս առ բազումս, յորոց որչափ ինչ՝ ի սփիւռս ցրուեալս և ապրեալս առ ոմանս ոմանս գտաք, ըստ կարի մերում քաղեցաք առաք, և՝ ի հատորս հատորս ամփոփեցաք, զի մի գարձցին և ցրուեսցին վերստին, որ Թուով աւելի են քան զՀարիւր։ Դրեաց նա և առ Փերբիանոս եպիսկոպոս եկեղեցւոյն Հռոմայեցւոց և առ բազում առաջնորդս եկեղեցեաց՝ վասն Ձշմարիտ հաւատոյ. զորոց զՀաւատսի ընծայութիւն գտաք ես՝ ի վեց գիրս Յատագովութեան, զոր արարաք վասն առնս։

դրչաց, զի եղիցին նորա գրել զայն ինչ զոր խօսէրն առաջի Ժողովրդեանն. եթէև կանխաւ չառնոյր նա յանձն գործել զայս գործ։ Եւ եդ նա ուղի խօսս ընդդէմ Կղէսասեայ, այն որ էր յայանդոյ անտի եպիկուրեայց*. և յաւետարանի անդ Մատթէոսի արար մեկնութիւնս՝ քան և հինգ խօսս։ Եւ՝ ի վերայ երկոտասան մարգարէիցն, զոր մեք գտաք քան և հինգ։ Բայց կայ Թուղթ մի նորա և առ Փիլիպպոս արքայ. և այլ միւս ևս առ կնոջ նորա, զի անուն էր նորա Ալեբեայ. և այլ Թուղթք յայանիք են նորա առ բազումս, զոր գտաք մեք քաղել առնուլ՝ ի նոցանէ՝ առ որս կային առ նոսա. և գնել զնոսա գրով զի մի եղիցին նորա ցրուեալք. զի են նորա Թուով աւելի քան զՀարիւր։ Դրեաց և առ Փերբիանոս եպիսկոպոս եկեղեցւոյն Հռոմայեցւոց. և առ բազումս առաջնորդս եկեղեցեաց, վասն Ձշմարիտ հաւատոյ։ Բայց ունէաք գաւ զայսորիկ զօրինակս՝ ի պատասխանի անդ վերադրոյդ զոր արարեալ է մեր վասն առն այնորիկ։

* Ցօր. Եպիփան.

ԳԼՈՒԽ ԼԷ.

Վասն հերձուածոյն Այրաբացւոց.

Ի սոյն դարձեալ ժամանակս ՚ի վեր երևեցին և այլք Այրաբիա, որ զօտար ՚ի Ճշմարտութենէ վարդապետութիւնս ՚ի ներքս մուծանէին. որք վասն մարդկէղէնս Հոգւոց ասէին թէ յայսմ յաւիտենիս ընդ մարմնոցն մեռանելով ապականին, և դարձեալ միւսանգամ ՚ի յարուԹեան ընդ նոսա նորոգեալ և կենդանանան։ Գումարեալ յայնժամ վասն այսորիկ Ժողով մեծ՝ աղաչեցին զարձեալ և անդ զՈրոգինէս բանս ՚ի մէջ բերել վասն խնդրոյս այսորիկ առաջի բազմութեան ժողովրդեան. որ այնպէս գեղեցիկս խօսեցաւ, մինչ զի զամենայն մոլորեալս յառաջնի դարձոյց ՚ի Ճշմարտութիւն։

Երեսներորդ վեցերորդ. վասն հերձուածոց որ հղեն ՚ի կողմանս այրաբացւոց։

Դարձեալ ընդ կողմանս այրաբացւոց այլք երևեցան յայնմ ժամանակի, որ մուծանէին զաղանդ հերձուածոց որ օտար էր Ճշմարտութեանն. զի ասէին նոքա վասն ընդոյ մարդկան, Թէ յերանելի խրատուէ յաշխարհէ յասաւ յայսմանէ՝ մեռանի և ապականի. և դարձեալ միւսանգամ ՚ի յարուԹեանն նորոգի նա։ Յայնժամ ժողովեցան ժողովուրդք բազումք և ազաչեցին զՈրիգինէս և յայսմ վայրի էս. և սկսաւ խօսել և բանս ՚ի մէջ բերել վասն խնդրոյս այսորիկ. և այնպէս խօսեցաւ՝ զի զամենայն խորհուրդս մոլորեալս քայքայեալս, որ յառաջն մոլորեալ էին ՚ի խաբեուԹեան, դարձոյց ՚ի Ճշմարտութիւն։

ԳԼՈՒԽ ԼԸ.

Վասն հերձուածոյն Եղկեսիացւոց.

Այս նովիմբ դարձեալ և այլ միւս ևս աղանդ հերձուածոյ՝ որ Եղկեսիացիքն կոչէին, ի վեր բուսաւ, այլ անդէն ի սկսանելն իւրում և չիջաւ: Զոր յիշէ Որոգինէս ի խօսել իւրում առաջի ժողովրդեան՝ ի մեհենութեան անդ ուխտեցելոցդ երկրորդի սաղմոսին, այսպէս. Եկէ, ասէ, յաւուրս յայսոսիկ այր ոմն՝ որ ձեռն յանձին հարեալ խորհէր զօրավիգն կալամբարիշտ և անաստուած աղանդոյն Եղկեսիացւոց, այն ինչ նորոգ յարուցելոց ընդդէմ եկեղեցւոց. և թէ զօրպիսի չարիս յանցդնի աղանդն այն՝ եդից ձեզ առաջի, զի մի և դուք ի նոյն խորխորատ խարդաւանիցիք: Ինչ ինչ յամենայն գրոց սրբոց խոտէ և անարգէ աղանդս այս, սակայն պաշտի յամենեցունց ի հին կտակարանաց և ի նորոց իսկ, ուր զՊօղոս չընդունի բնաւ ամենևին: Զիք ինչ խէթ և խիղճ ուրանալ ըզՔրիստոս, ասէ, որ գիտէն և խորհին թէ բերանով ուրանայ ի հարկէ, այլ ոչ սրտիւ: Ունին նոքա գիրս՝ զոր յերկինից անկեալ, ասեն. և թէ որ լսէն և հաւա-

երեսներորդ հօրենրորդ. վասն աղանդին հերձողհսիացւոց.

Եղև այլ միւս ևս այլ աղանդ հերձուածոց այնոցիկ որ կոչին հերձղհսիացիք. և անդէն ի սկսանելն իւրում չիջաւ նա: Բայց յիշեցուցանէ զնա ի խօսել իւրում առաջի ժողովրդեանն Իրիգինէս. ի սաղմոսի անդ ուխտեցելոցդ երկրորդի, և ասէ այսպէս. Եկն, ասէ, այր մի ի ժամանակի յայսմիկ որ խորհէր զմիաս զայս, եթէ կարասցէ ուսուցանել զմիաս ամբարշտութեան առանց Աստուծոյ, զաղանդին հերձուածոցն որ կոչին հերձղհսիացւոց նորոգ ի վերայ եկեղեցւոց. այլ թէ որպիսի չարիս ասէին միաքն այն՝ եդից զնա առաջի ձեր, զի մի լինիջիք դուք անկեալ ի նոսա: Խոտէ և անարգէ ինչ ինչ յամենայն գրոց, և պաշտի գործեալ յամենեցունց ի հին կտակարանաց և ի նոր աւետեաց. այլ խոտէ և աղարտէ գործեալ զառաքելոյս ամենայն և ասէ, Թէ չիք ինչ խէթ և խիղճ ուրանալ զՔրիստոս մարդոյ դուշնաբար. և այն որ գիտէ գիտելով՝ բերանով ուրանայ ի հարկէ, բայց ոչ սրտիւ: Եւ ունին նոքա գիրս միայն, որ ասեն վասն նորա Թէ յերկինից անկաւ, Թէ այն որ լսէ և

տայ այնմ, Թողութիւն մեղաց ընդունի, բայց յայնմանէ զոր է-Թող տէր մեր Յիսուս Քրիստոս։

ԳԼՈՒԽ Լ.

Վասն հալածանացն Դեկոսի, և թէ ո՛րչափ ինչ վիշտս չարչարանացն կրեաց Որոգինէս։

Եւ կացեալ Փիլիպպոսի ՚ի Թագաւորութեան զամս եօթն, փոխանակեաց զնա յիշխանութեան Դեկոս, և առ Թշնամութեան ընդդէմ Փիլիպպեայ՝ յարոյց հալածանս ՚ի վերայ եկեղեցեաց. յորում վկայութեամբ պսակեալ Փերբիանոս ՚ի Հռոմ; եկաց ընդ նորա եպիսկոպոս Կոռնելիոս։ իսկ ՚ի Պաղեստին, Ագեբքանդր եպիսկոպոս եկեղեցւոյն Երուսաղէմի, ածաւ դարձեալ միւսանգամ վասն Քրիստոսի ՚ի Կեսարիա յաստեան դատաւորին, և իբրև փառաւորեցաւ անդ երկիցս անգամ խոստովանութեամբ, արկին զնա ՚ի տան բանդի, որ ՚ի ծերութիւն պարարտութեան յեցեալ յայնժամ երանելին և պսակեալ աքանչելի ալեօքն ծաղկելովք, յետ աքանչելի և յայտնի վկայութեան յաստենի դատաւորին հանգեաւ ՚ի տան բանտին։ և կա-

Հաւատայ նմա Թողութիւն մեղաց ընդունի, բայց յայնմանէ զոր է-Թող տէր մեր Յիսուս Քրիստոս։

Երեսնեւերրորդ ութերորդ. վասն Ժամանակացն Դակիոսեայ։

Այլ իբրև եկաց Փիլիպպոս ՚ի Թագաւորութեան անդ զեւթն ամ, կալաւ զնովի նորա Դակիոս. և վասն Թշնամութեան զոր ունէր նա ընդ Փիլիպպեայ, յուզեաց և յարոյց հալածանս ՚ի վերայ եկեղեցեաց, զի ՚ի նոցա պսակեցաւ ՚ի Հռոմ քաղաքի Փերբիանոս եպիսկոպոսն նոցա վկայութեամբ։ Եւ կալաւ զնովի նորա զեպիսկոպոսութիւնն Ակրիղոս, ՚ի կողմանս պաղեստինացւոց, զԱգեբքանդրի և զեկեղեցւոյն Երուսաղեմի։ Դարձեալ միւսանգամ վասն Քրիստոսի ՚ի Կեսարիայ, ածին կացուցին զնա առաջի գաւառապետին յաստեան դատաստանի. և անդ փառաւորեցաւ նա երկիցս անգամ խոստովանութեամբն. կապեցին և եգին ՚ի տան բանդին, ՚ի ժամանակի իբրև էր հնացեալ ծերութեամբ բազմաւ, և պսակեալ աքանչելի ալեօք ծաղկելովք։ Այլ իբրև հանգեաւ նա անդէն ՚ի տան բանդին, յետ աքանչելի և յայտնի վկայութեան նորա յաստենի դա-

լաւ գեպիսկոպոսութիւն եկեղեցւոյն Երուսաղէմի Մազաբանէս։ Ըստ օրինակիս Ալէքսանդրի յետ խոստովանութեան իւրոյ հանգուցեալ և Բաբելայ յԱնտիոք՝ ի տան բանտին, կալաւ զառաջնորդութիւն եկեղեցւոյն Փաբիանոս։

Իսկ որ ինչ անցք անցին ընդ Որոգինէս՝ ի հալածանս, և թէ որ այնոցիկ եղև վախճան, յորժամ դէմն չարաշունչ զհամանգամայն զօրութիւնս իւր ածէր շարժէր՝ ի վերայ առնն, և զամենայն մեքենայս հնարից և զպէսպէս արուեստս մեծաւ պատերազմաւ կարգէր ընդդէմ, և քան զամենայն որ՝ ի ժամանակին յարուցանէր՝ ի վերայ նորա մարտ պատերազմի. որ թէ զնարդ և արշաւ համբերը այրն այն վասն բանին Քրիստոսի՝ կապանաց և կտտանաց՝ ի մարմին իւր, և՝ ի բանտս նեղբերինս և՝ ի խաւարինս շղթայից և ձեռակապից տաբաւ. և զի զբազում աւուրս պրկեալ էին ոտք նորա՝ ի կոճեղս չորիւք ծակօք, և սպառնալեաց հրոյ. և որ ինչ միանգամ՝ ի վերայ էին՝ ի թշնամեաց անտի նորա, ժուժկալեաց ամենայնի սիղտութեամբ քաջութեամբ. և թէ որպիսի եղև կատարած նորա՝ ի յամառել դատաւորին յամենայն զօրութենէ իւրմէ չսպանանել զնա. և թէ որպիսի՛ ինչ բանս եթող

տաւորին, Մազաբանէս կալաւ զեպիսկոպոսութիւն եկեղեցւոյն Երուսաղէմի։ Եւ ըստ նմանութեան օրինակի Ալէքսանդրեայ, Բաբելայ եպիսկոպոսն անտիոքացւոց յետ խոստովանութեան իւրում անդէն՝ ի բանդին հանգեաւ և էլ չաշխարհէ. և եկաց զկնի նորա յեկեղեցւոջ անդ Փեբիոս։ Այլ որ ինչ անցք անցին ընդ Որոգինէս՝ ի հալածանս անդ, զնարդ և քանի անհեաց, և որպիսի եղև կատարած նորա, և կամ զնարդ յարոյց՝ ի վերայ նորա դևն չարաշունչ, զամենայն զօրս իւր իբրև ընդդէմ այնպիսւոյ առն, և մեծաւ պատերազմաւ չանացաւ ընդդէմ նորա պէսպէս արուեստիւք և ազգի ազգի զօրութեամբք։ Եւ աւելի քան զամենեցուն որ յայնմ ժամանակի եղև՝ ի վերայ նոցա մարտ պատերազմի՝ յարեաւ՝ ի վերայ նորա, և նրշաւի և կամ զնարդ համբերը այրն այն վասն բանին Քրիստոսի զկապանս և զբանս՝ ի մարմինս իւր, և պատիժս պատուհասից զոր ընկալաւ նա զշղթայից և զձեռակապից, և տան բանդի՝ ի գոմսն նեղբերինս և՝ ի խաւարինս. և զի զաւուրս բազումս պրկեալ էին ոտք նորա՝ ի կոճեղս չորիւք ծակօք, և զպատառումն հրոյ. և որ ինչ միանգամ էին՝ ի վերայ նորա՝ ի թշնամեաց անտի համբեր քաջութեամբ և սիղտութեամբ. և եթէ որպիսի եղև կատարած նորա, զի հակառակէր և ընդդէմ դառնայր նորա դատաւորն յամե-

նա յետ այնորիկ 'ի շահ օգտի՝ որոց կարօտինն զօրու-
թեան և քաջութեան, զայս ամենայն 'ի բազում
թուղթս առն այնորիկ է տեսանել մնոր ստուգաբան
Հմնարտութեամբ։

ԳԼՈՒԽ Խ.

Որ ինչ անցք անցին ընդ Դիոնեսիոս եպիսկոպոս։

Որ ինչ անցք անցին ընդ Դիոնեսիոս՝ 'ի թղթոյ ան-
տի նորա որ առ Գերմանոս դնեմ զայն. յորում զանձ-
նէ իւրմէ խօսելով նա պատմէ այսպէս. Առաջի Ա-
ստուծոյ խօսիմ ես, որ գիտէն թէ ոչ ստեմ. ոչ ինձէն
ինչ յօժարեալ, և ոչ որպէս անյոյս ոք յԱստուածՙ փա-
խեայ ես. այլ իբրև 'ի սկզբան անդ հալածանացն
Դեկիոսի՝ յղեր Սաբինոս 'ի խուզարկուաց իւրոց զոք
խնդրել զիս, ես զաւուրս չորս կացի անդէն 'ի տան
ինձեալով խնդրակին։ Իսկ նա ընդ ամենայն տեղիս շրջ-
ջեր և յուզէր զՀանապարհս և զդէտս և զագարակս,
ուր միանգամ կարծէր թէ թագուցեալ իցեմ; կամ
ընդ այն անցեալ. շլացուեցեամբ իմն հարեալ էին աչք

նայն զօրուԹենէ իւրմէ, զի ապանէչ զնա. և զի որպիսի բանս ասէր
նա յետոյ որ լինէին շահ օգտուԹեան այնոցիկ որ կարօտէին զօրու-
Թեան և քաջութեան։ Ա՛յս ամենայն 'ի Թուղթս առն այնորիկ
գրեալ են Հնգրտուեցեամբ և Հմնարտուեցեամբ։

Երեսնեւերորդ իննևերորդ. վասն որ ինչ անցք անցին ընդ
Դիոնեսիոս։

Այլ որ ինչ անցք անցին ընդ Դիոնեսիոս 'ի հալածանաց ան-
տի, 'ի թղթոյ անդ յայնմանէ զոր գրեաց նա առ Գերմանոս՝ դնեմ
զնա։ Եւ պատմէ նա վասն անձին իւրոյ յասել իւրամ այսպէս. Զի
ես, ասէ, առաջի Աստուծոյ խօսիմ. և եթէ սուիցեմ նա գիտէ, զի
ոչինչ գիտէի ես զանձին իմոյ բնաւ. և ոչ իբրև զայն ոք՝ եթէ չիցէ
նորա Աստուած՝ փախեալ ես, այլ 'ի սկզբանէ իսկ զառաջինն 'ի ժա-
մանակի իբրև եղան հալածանքն յաւուրս Վալիրեանոսի, նոյնժա-
մայն Սաբինոս յղեաց պահապանս խնդրել զիս, և ես զչորս աւուրս
ինացի անդէն 'ի տան, զի ապաստանել ակնունէի ես պահապանին։
Իսկ նա ընդ ամենայն տեղիս շրջէր և յուզէր զՀանապարհս և զդէ-
տս և զագարակս, ուր միանգամ կարծէր նա թէ երթեալ թա-

Նորա զի մի գոցէ զտունն, քանզի չՀաւատայր նա Թէ
'ի Հալածանս անդ իմում' ի տան գազարիցեմ ես։ Եւ
Հաղիւ ուրեմն յետ չորից աւուրց 'ի Տրամայել ինձ
Աստուծոյ փոխել այլուր, և 'ի յաջողել Նորա աքանչե-
լապէս զՀանապարհս իմ։ ես և մանկունքն և եղբայրք
բազումք միանգամայն ելաք. և զի 'ի Հոգաբարձու-
Թենէ իւրմանց Աստուծոյ եղև գործդ, եկաք իրացն ա-
պա ցուցին, զի Թերևս ումեք ումեք 'ի շահ և յօգուտ
եղաք։ Եւ յետ այլոց բանիւ՝ յարէ 'ի նոյն գաւձեալ
և որ ինչ անցք անցին յետ փախչելոյն Նորա այսպէս.
Իսկ ես և որ ընդ իս էին, ասէ, ընդ երեկս ըմբռնեալ
'ի գիւղաքաղաք ածաք 'ի Տափոսիրէ. այլ Տիմոթէոս
իբրև 'ի խնամոյ Աստուծոյ ոչ դիպեցաւ անդ ընդ մեզ
և ոչ ըմբռնեցաւ. բայց իբրև եկին յետոյ 'ի տուն ե-
գիտ զայն գատարկ, և 'ի պահ զգուշութեան սպա-
սաւորաց գատաւորին, և Թէ զմեզ վարեալ առեալ
գնացեալ էր։ Եւ գարձեալ յաւելու 'ի բանս իւր Թէ.
Որպիսի օրինակ աքանչելի խնամոյ Աստուծոյ եր, ա-
սացից Ձհմարտութեամբ։ Պատահեաց Տիմոթէոս չի-
նական ոք միևդհետ փախուցեալ երթայր նա խոս-
վեալ, և Հարցանէր զնա վասն պատճառաց Ձեպելոյն.
և նա ասաց նմա որ ինչ էրն ստուգութեամբ։ Եւ լու-

գուցեալ իցեմ։ Փակեալ իսկ էին աչք Նորա զի մի գոցէ զտունն.
զի ոչ Հաւատայր նա Թէ 'ի Հալածել անդ իմում' 'ի տան գազա-
րիցեմ ես. և Հաղիւ յետ չորից աւուրց Տրամայեաց ինձ Թուել և
աքանչելապէս ուղղեաց զՀանապարհս իմ. և ես և մանկունքն և եղ-
բարք բազումք միանգամայն ելաք. զի այս իսկ գործ Հոգաբարձու-
Թեան տեառնէնման Աստուծոյ էր։ Զայս ինչ որ յետոյ եցոյց և
յայտ արար, զի Թերևս եղեալ ումեք ումեք 'ի շահ և յօգուտ։ Եւ
իբրև ասաց նա սակաւիկ մի, յետ այսորիկ ցուցանէ որ ինչ անցք
անցին յետ փախչելոյն Նորա, յասէ Խոստով այսպէս. Զի ես, ա-
սէ, ընդ երեկս օր, Հանդերձ Նորինքք որ էին ընդ իս, եղաք մեք 'ի
Ներբոյ ձեռին Հռոմոց, և ածին զմեզ 'ի Փոսիրեոս։ Իսկ Տիմոթէ-
ոս, իբրև 'ի տեսչութենէ անտի Աստուծոյ, ոչ դիպեցաւ անդ և
ոչ ըմբռնեցաւ։ Բայց իբրև եկին յետոյ 'ի տուն եդիտ զնա տեառնէնալ.
և զի պահէին զնա սպասաւորքն խրթնդց, և զմեզ զի վարեալ առ-
եալ գնացեալ էր, և յետ այլոց բազմաց գարձեալ ասաց, եթէ
որպիսի ասէ օրինակ տեառնէնման Նորա այսր աքանչելեաց Ձհմարիտ
ասէ։ Պատահեաց այր մի յորդւոց անտի Նահանգին մերոյ Տիմո-
Թեայ միևդհետ փախուցեալ երթայր խոստովանել, և Հարցանէր զնա
վասն պատճառանաց Ձեպոյ Նորա։ Իսկ Նա ասաց Նմա Ձհմարիտ.

եաւ շինականին, քանզի ՚ի խրախուն հարսանեաց երթայր, և ըստ օրինի կոչնոցս հանէին զդիւրն ՚ի գլուխ, մտեալ նորա պատմեաց զայս ամենայն բազմականացն։ Իսկ նորա իբրև ՚ի միջէ խորհրդոյ ձայն տալով միմեանց ՚ի վեր վազեցին, և խոյացեալ փութապէս եկին հասին առ մեզ և զաղաղակ բարձին։ Եւ ՚ի փախչել անդէն պահապանաց մերոց, եկին կացին նորա ՚ի վերայ մեր, մինչդեռ ՚ի գետնախիտսայս մեր ընկողմեալ էաք։ Ցառաջինն աւազակս համարեցայ ես զնոսա, Աստուած գիտէ, եթէ եկին կողոպտել և յափշտակել զմեզ. և կացեալ ՚ի մէնհինն մերկ կտաւի պարեգօտիս միայն, և զայլ հանդերձս՝ զորս եդեալ էր իմ ՚ի մի կողմ, առեալ մատուցանէի նոցա։ Եւ նորա հրամայն տալոյն ինձ յառնել վաղվաղակի և ելանել ՚ի տեղւոջէն։ Եւ իբրև ՚ի միտ առի ես վասն որոյ եկեալ են նորա, աղաղակէի և խնդրէի և աղաչէի զնոսա երթալ ՚ի բաց և թողուլ զմեզ, և եթէ բարեգործել ինչ առ մեզ կամիցին, տարցեն հասուցցեն զմեզ յիս առ գերեվարս մեր, և նորա թող հատցեն զդլուխ իմ։ Եւ իբրև այսպէս աղաղակէի ես, ընկերք իմ և հաղորդք ամենայնի տեղեակ իրացն՝ յարուցին յոտն կացուցին զիս բռնի։ Եւ յարկանել իմում զանձն

բայց նա իբրև լուաւ, երթայր խրախն լինել ՚ի հարսանիս ըստ սովորութեան իւրեանց զոր առնէին սկիզ. յորժամ այսպիսի ժողովեալ լինէին, և իբրև եմուտ ասաց նա բազմականացն։ Իսկ նորա միով ձայնիւ խրախուսելով իբրև ՚ի միջէ խորհրդոյ վազեցին յարեան անտի, և ընթանալով փութապէս եկին հասին կացին ՚ի վերայ մեր և զաղաղակ բարձին. և իբրև ձնեցին, փախեան զնուագքն որ պահէին զմեզ, և եկին կացին ՚ի վերայ մեր մինչդեռ ընկողմեալ էաք ՚ի մէնհինն անկողնոց։ Բայց ես որպէս Աստուած իսկ գիտէ, աւազակս համարեցայ զնոսա զառաջինն, եթէ եկին կողոպտել և յափշտակել զմեզ. և իբրև միացեալ և ես ՚ի մէնհինն մերկ կտաւի շապկաք, և զայլ հանդերձան զոր եդեալ* էր իմ մեկուսի, առեալ մատուցանէի նոցա։ Եւ նորա հրամայն տալոյն ինձ յառնել վաղվաղակի և ելանել անտի։ Եւ իբրև ՚ի միտ առի ես թէ վասն որոյ եկեալ են նորա, աղաղակէի և խնդրէի և աղաչէի զնոսա, երթալ նոցա և թողուլ զիս. ապա եթէ կամիցին առնել բարեգործել, տարցեն հասուցցեն զմեզ այնոցիկ որ վարեալ տանէին զմեզ, և նորա թող հատցեն զդլուխ իմ։ Եւ իբրև զայս աղաղակէի ես, որպէս և տեղեակ իսկ ընկերքն իմ հաղորդք, որ հաղորդեցան ընդ իս ամե-

* Ցօր՝ Ի բիւրս

իմ յերկիր, առին նոքա զոտից և զձեռաց իմոց, և քարշ
չեցին Հանին զնա արտաքս։ Եւ զհետ իմ գային վը-
կայք եղելոցս այսոցիկ Գայիոս, Փաւստոս, Պետրոս և
Պօղոս. և առին Հանին զնա ՚ի քաղաքէն յայմմանէ, և
նատուցին ՚ի վերայ մերկ անհամեմատ իշոյ և առին գնա-
ցին։ Զայսոսիկ պատմեաց Դիոնեսիոս վասն անձին
իւրոյ։

ԳԼՈՒԽ ԽԱ.

Վասն վկայիցն որ յԱղեքսանդրիա կատարեցան։

Նոյն ինքն Դիոնեսիոս ՚ի Թուղթն իւր որ առ Փա-
բիոս եպիսկոպոս Անտիոքացւոց գրէ զնահատակու-
թիւն վկայիցն՝ որ յաւուրս Դեկոսի յԱղեքսանդրիա
կատարեցան, և պատմէ այսպէս. Ոչ եթէ ՚ի հրամա-
նէ Թագաւորին սկսան հալածանքն, այլ ամենայնա-
ժագոյն կանխեաց այն, զի չարագուշիս սին դիւթ և
գուշակ հասեալ ՚ի քաղաքս յուզեաց յարոյց ընդդէմ
մեր զխառնիճաղանձ ամբոխս ժողովրդեան հեթանո-
սաց, և փչեաց զարթոյց ՚ի բնակիչս աշխարհին զնոր-

նայնիւ խիք, յարուցին յոտն կացուցին զնա բռնի. և ես սրկի
զանձն իմ ՚ի վերայ երկրի։ Իսկ նոքա առին զոտից և զձեռաց իմոց,
և քարշեցին Հանին զնա արտաքս։ Էին իսկ ընդ նա վկայք այսը ա-
մենայնի Գայիոս և Փաւստոս, Պետրոս և Պօղոս։ Եւ առին Հանին զնա
՚ի քաղաքէ անտի յայմմանէ և նստուցին ՚ի վերայ սրտմտոյ իշոյ.
և առին գնացին։ Զայս ինչ ասաց Դիոնեսիոս վասն անձին իւրոյ։

Գլուխ երորդ. վասն այնոցիկ որ վկայիցին յԱղեքսանդր քաղաքի։

Սակայն նոյն ինքն Դիոնեսիոս ՚ի ձեռն Թղթոյն զոր գրեաց առ
Փեբիոնոս եպիսկոպոս անտիոքացւոց. վասն վկայիցն որ վկայեցին
յաւուրս Դակիոսեայ յԱղեքսանդր քաղաքի. պատմէ նա վասն
պատերազմացն նոցա, յասէ իւրեամ այսպէս. Հալածանքն, ասէ,
առ մեզ, ոչ ՚ի հրամանէ Թագաւորին սկսան. զի ամենայն ի յառաջ
քան զհրամանն կանխեաց յառաջագոյն յարոյց ՚ի վերայ մեր զըս-
պառնալին ժողովրդոյն հեթանոսաց. զի վարեաց զնոսա ՚ի կոռ-
պաշտութիւն անօրէնն դիւթն և չարագործն, յայմ քաղաքի։ Իսկ
նոքա իբրև գրգռեցան ՚ի նոցանէ և առին խլհանուռթիւն, զամենայն
մոլորութիւն համարեցան և այս կռապաշտութիւնս միայն է ար-

Թիւն կուռցն պաշտամանն, որով վառեալք զամենայն գործ անարժանութեան համարձակեցան անցուցա- նել ընդ մեզ, զոր և միակ պաշտօն բարի և նուէր հա- ճոյական դից համարէին եթէ 'ի կոտորածս և 'ի սպա- նումն մեր արիասցին։ Արդ յաւիտակեցին նոքա նախ զայր մի ալևոր Միտրան անուն, և հրամայէին նմա խօսել քանս հայհոյութեան. որ իբրև չառնոյր յանձն, հարկանէին նոքա բզբզ զմարմին նորա, և եղեգամբք սրելովք խոցոտէին զաչս նորա և զերեսս, և տարան հանին զնա արտաքոյ քաղաքին, և քարկոծեցին զնա և մեռաւ։ Ապա զկին ոմն հաւատացեալ անուն Կու- ինտա, ածէին 'ի տուն կուռց և տիրեցին զնա երկիր պա- գանել. և իբրև զերեսս դարձուցեալ նորա գաղջեր և մերժէր 'ի նոցանէ, և չառնոյր բնաւ յանձն. կապեցին զոտս նորա և քարշեցին ընդ ամենայն փողոցս քաղա- քին ընդ խիստ քարայատակն, և ջախեալ քարամբ զատամունս նորա և բրածեծ գանակոծ արարեալ, ա- ծին սպա արտաքոյ քաղաքին 'ի նոյն տեղին, և քա- րակոչմամբ սպանին։ Ես յետ այնորիկ դիմեցին միան- գամայն առ Հարկանել զտունն երկիւղածաց Աս- տուածոյ. և զոր ինչ գրացիս իւրեանց Ճանաչէին՝ դիմեալ 'ի նոսա կողոպտէին և յափշտակէին զոր ինչ միանգամ գտանէին, և զսպասս մեծագինս՝ իւրեանց առնուին, իսկ զանարգս և զփայտեղէնս՝ ընկենուին և այրէին

կըրպագութիւն Աստուծոյ։ Արդ՝ յառաջինն յափշտակեցին նոքա այր մի ալևոր, զի անուն էր Ամրիտան, և հրամայեցին նմա խօսել քանս հայհոյութեան. և նա իբրև չառնոյր յանձն, նոքա հարկա- նէին փայտիւ զմարմին նորա. և եղեգամբք սրելովք խոցոտէին զաչս և զերեսս նորա. և տարան հանին զնա արտաքոյ քաղաքին, և քար- կոծեցին զնա և մեռաւ։ Դարձեալ և այլ կին հաւատացեալ, զի ա- նուն էր նորա Կոյինտայ, ածէն 'ի տուն կուռցն և տիրեցին երկիր- պագանել. անդ։ Եւ իբրև դարձուցեալ էր նա զանձն իւր, և խո- սէր ազաւաղակ զիբան. և բնաւ առնէին յանձն ոչ առնոյր, կապե- ցին զոտսն և քարշեցին ընդ ամենայն փողոցս քաղաքին ընդ քա- րուտ տեղիս։ Իբրև զարկուցանէին զնա 'ի վերայ խիստ խիստ վի- մաց և հարկանէին. և իբրև մեռաւ բերին ընկեցին զնա 'ի տեղւոջն յառաջուցն։ Եւ գարձեալ խրոխտացան միանգամայն առաւ հար- կանել զտունն երկիւղածաց Աստուծոյ. և զոր Ճանաչէին զդրա- ցիս գիշերջ գիշերջ 'ի նոցանէ՝ հանէին և կողոպտէին և յափշտակէին զոր ինչ միանգամ գտանէին զոր։ և զանօթս պատուականս նոցա առնուին նոքա իւրեանց։ Իսկ զանարգսն և զփայտեղէնսն ընկե-

'ի վերայ Հանապարհայ։ Եւ եր տեսիլ քաղաքին իբր. 'ի Թշնամեաց գերի վարելոյ. իսկ եղբարք տեղի տուեալ խուսեին, և զյափշտակութիւն ընչից իւրեանց, իբրև զայնոսիկ՝ որոց վկայէ առաքեալն, խընդութեամբ ընդունէին։ Եւ ոչ գիտեմ եթէ ոք ուրացաւ 'ի սեառնէ մինչև յայս ժամանակս, բայց եթէ գէպ ումեք եղև և ըմբռնեցաւ միայն առանձին։ Ա՛լ և զքաջանչելի կոյսն, զպառաւեաւն Ալպողնիա՝ կալան յայնժամ, և հարեալ զծնօտս նորա խորտակեցին զամենայն զատամունս նորին, և վառեալ հուր արտաքոյ քաղաքին սպառնային այրել զնա կենդանւոյն, եթէ ոչ խօսեսցի բանս հայհոյութեան իբրև զնոսա. իսկ նորա զտեղի առեալ սակաւիկ մի իբրև ազաչաւոր, և յանկարծ զօրութեամբ սրդուեցաւ վազեաց 'ի հուրն և այրեցաւ։ Հասեալ և 'ի վերայ Սրապիոնի ուրուքն 'ի տան իւրում, իբրև չարչարեցին զնա չարաչար հարուածովք, և խորտակեցին զամենայն յօդուածս անդամոյն, ընկէցին զնա 'ի վէրնատանէ 'ի խոնարհ։ Զգտանէր մեզ բնաւ ամենևին ոչ Հանապարհ արահետ, և ոչ շաւիղ նեղ և նուրբ երբ գնացից՝ ոչ ցցայգ և ոչ ցերեկ. զի Հանապազօր ընդ ամենայն տեղիս քարոզ կարգայր, եթէ ոք ոչ խօսեսցի բանս

նուրբն և այրէին 'ի վերայ Հանապարհացն։ Եւ իբրև 'ի մէջ քաղաքի միջոյ, որ գերի վարեալ իցէ 'ի Թշնամեաց իւրոց, տեսիլք չարաչարք և գործք ահագինք գործէին 'ի նմա։ Իսկ եղբարք խուսեին և տեղի տային. և զյափշտակութիւն ընչից իւրեանց խնդութեամբ Համբերէին, իբրև զայնոսիկ վասն որոց առաքեալն վկայեաց. և ոչ գիտեմ եթէ ոք ուրացաւ 'ի սեառնէ մինչև յայս ժամանակս, բայց եթէ դէպ ումեք եղև և ըմբռնեցաւ մի միայն առանձինն։ Նա և զայն գկոյսն պառաւ և որանչելի, զի անուն էր նորա Ալպողնիա, կալան զնա և խորտակեցին զամենայն տատամունս, և հօրգեցին Հանդի գնչեզակս ծնօտիցն, և վառեցին հուր արտաքոյ քաղաքին, և սպառնային այրել զնա կենդանւոյն՝ եթէ ոչ խօսեսցի բանս հայհոյութեան իբրև զնոսա։ Իսկ նա զտեղի էառ սակաւիկ մի և Հանդեաւ. և զբուրթեամբ սրդուեցաւ վազեաց 'ի հուրն, և անդ այրեցաւ։ Իսկ Ալերսիոնեայ Ժամանեցին անդէն 'ի տան իւրում և իբրև չարչարեցին զնա չարաչար հարուածովք, և խորտակեցին զգլուխ ամենայն անդամոց նորա՝ ընկէցին 'ի վէրնատանէ 'ի խոնարհ։ Չգտանէր մեզ ինչ բնաւ ամենևին, ոչ Հանապարհ և ոչ ելք գնացից և ոչ շաւիղ նեղ և նուրբ գնալ ընդ նա՝ ոչ ցայգ և ոչ ցերեկ, զի Հանապազօր ընդ ամենայն տեղիս քարոզ կարգային աղաղակեն և ասէին, եթէ այն ոք ոչն խօսեսցի բանս հայհոյութեան իբրև զնոսա, նոյն-

Հայհոյութեան , նոյնժամայն քարշեալ տարցի նա վաղվաղակի և հրով այրեսցի։ Եւ այս ընդ բազում ժամանակս երկարեր սաստկապէս։ Ի վերայ եկեալ ապա չուառականացն խռովութեան և քաղաքական պատերազմի՝ զանազորիւ իւրեանց անգթութիւն՝ զոր առ մեզ ունէին, ընդ միմեանս գործուցին, և ընդարձակեցաւ սակաւիկ մի մեզ, յորժամ արգելաւ սրբոյ մասուքիւն բարկութեան նոցա ի մէնջ։ Եւ յանկարծ ահա զրոյց ընթանայր՝ եթէ մարդասիրագոյն առ մեզ թագաւորութեան փոփոխեալ, և ահագին սպառնալիք երկիւղ ի վերայ կային. և գայր հասանէր հրաման սաստիկ և անշնորհս, ոչինչ պակաս քան զայն, որ կանուխ ասացաւ ի Տեառնէ մերմէ. եթէ հնար ինչ իցէ գայթաղեցուցանել և զընտրեալսն։ Եւ զամենայն մարդ սարսուռ և սոսկումն ունէր. և բազումք յականաւոր մարդկանէ առ երկիւղ գային վաղվաղակի. և որք պաշտօնեայք էին տէրութեան ի հարկէ պարտուցն ստիպէին երևեալ, և ոմանք խակ ի ծանօթից և ի մերձաւորաց ածեալ լինէին, և յականէ յանուանէ կոչէին մատչել ի զօհն պղծութեան

Ժամայն քարշեալ տարցին և հրով այրեսցեն։ Եւ այս երք բազում ժամանակ մոլորեալ էին յայսմ օրինակի։

Ֆառաանեորդ առալիեորդ. վասն այլոց իրաց զոր պատմեաց Դիոնեսոս։

Բայց գարձեալ ասաց, Թէ յետ այսր կալաւ խռովութիւն խակ զնոսին զարթագործան, և զյանդգնութիւն գժնդակութեան իւրեանց զոր ունէին առ մեզ մարթա պատերազմի ընդ միմեանս գարձուցին զնա, և ընդարձակեցաւ սակաւիկ մի մեզ. խափանեցաւ սրմտութիւն բարկութեան նոցա զոր ունէին առ մեզ, և նոյնժամայն գարձեալ զի յայտնեցաւ մեզ փոփոխումն նուաճեալ թագաւորութեանն, յոյժ տարածեցաւ ի վերայ մեր սպառնալիք ահագին երկիւղ. և գայր հասանէր հրամանն ահագին ոչ կարի պակաս քան զայն որ ասացեալ են ի Տեառնէ մերմէ. զի Թէ կարասցէ հնարս առնել և զընտրելսցն գայթակղեցուցանել։ Բայց սակայն զամենայն մարդ սարսուռ և սոսկումն ունէր։ Եւ նոյնժամայն ի գլխաւոր մարդկանէ անտի բազումք, և ոմանք ի նոցանէ ինքեանք գային երկիւղիւ, և զոմանս ածելով ածէին ի հրապարակս, ի պատճառս հարկաց պահանջելոց, և ոմանք ատենաբանել լինէին ի մերձաւորաց իւրեանց. և յականէ յանուանէ կոչեալ լինէին նոքա մերձենալ ի զօհն պղծութեան և տգեղութեան. և ոմանք ի նո-

և աղտեղութեան. էին և որք դողացեալք և գունատեալք, իբրու թէ ոչ ի զոհագործութիւն, այլ անձամբ ի սպանդ և ի զոհ կուգոյն մատուիցին. մինչև այսն կատականաց լինել բազմութեան ամբոխին՝ որ շուրջն կային, և յայտ լինել ամենայն մարդկան թէ վատասիրտք են և զանգիտող և ի մահ և ի զոհ։ Էին ոմանք՝ որ պատրաստագոյս ընթանային ի բագինս, համարձակ ժպրհութեամբ, որպէս եթէ չէր նոցա լեալ երբեք քրիստոնեայս, և կատարէր ի նոսա բան Տեառն մերոյ. Եթէ հազիւ կեցցեն։ Իսկ այլք՝ կէս մի ի սմա, և կէս մի ի նոսա միտէին. ոմանք փախչէին, և ոմանք ըմբռնեալ լինէին, էր որ ի կապանս և ի բանտս գնային, և էր որ և զաւուրս բազումս արգելեալ և մինչև յատեան հարցափորձի մատուցեալ՝ ուրանային։ Էին գարձեալ և որք տանջանաց ինչ տարեալ քաջութեամբ, ի սպառնացելոյն անտի զարհուրեալ տեղի տային։ Իսկ Զմարիամ և երանելի սիւնք Տեառն մերոյ հաստատմամ խթսխեալ ի նոսա, ըստ սնդուքեան հաւատոց իւրեանց ընկալեալ և զօրութիւն ժուժկալութեան ի նմանէ՝ եղէն սքանչելի վկայք արքայութեան նորա։ Յորոց առաջինն Յուլիանոս, որ առ ոտնաւորութեամն չկարէր ոչ գնալ և ոչ կալ, մատուցաւ երիւս ընկերօքն՝ որ բարձեալ բերէին զնա։ Զնացեալ գողացեալք և գունատեալք, և իբրու թէ ոչ նոքա մատուցանիցեն զոհն, այլ եթէ ինքեանք լինելոց իցեն զոհք և զնիւթք կուգոն. և այսն կատականաց լինէին ի բազում ժողովրդոց անտի որ ժողովեալ էին և կային անդ. և յայտնի էին ամենայն մարդկան թէ զահի հարեալ են ի մեռանել և ի զոհել։ Էին ոմանք որ յանձն առեալ պատրաստագոյն ընթանային մատուցանել զզոհն, և զօրացեալ էին ի համարձակութիւն ժպրհութեան իւրեանց, որպէս մարդք եթէ չիցէ նոցա լեալ բնաւ քրիստոնէայ, զի ի վերայ նոցա կատարի բան տեառն մերոյ, և Զմարիամն եթէ հազիւ կեցցեն։ Իսկ այլք ոմանք մտեալ էին յերկոսին կողմանս։ Ոմանք փախչէին և ոմանք ըմբռնեալ լինէին. և ի նոցանէ ոմանց մինչև ի կապանս և ի բանդս հասին. և ոմանք ի նոցանէ և զաւուրս բազումս արգելեալ, և մինչև մտեալ էին յատեան գատաստանաւն։ Իսկ Զմարիամ և երանելի սիւնքն տեառն մերոյ հաստատեցան ի նմանէ, և ըստ Զմարիամեան հաւատոյ իւրեանց առին ի նմանէ ժուժկալութիւն և զօրութիւն, և եղեն նոքա վկայք պատրաստութեան նորա։ Զի է առաջինն Յուլիանոս այր պատագոյս, զի չկարէր նա ոչ գնալ և ոչ կալ. և մատուցին զնա հանգերձ երիւս այլովք

կերպաց նորա մին նոյնժամայն ուրացաւ, իսկ միւսն Կրոնիոն Եւհուս կոչեցեալ՝ այն է Բարեմիտ, ընդ ծե-
րունւոյն Յուլիանոս խոստովան եղև զՔրիստոս. զորս
և եդեալ՝ի վերայ ուղտուց, և ընդ ամենայն քաղաք-
քըն՝ զոր գիտեք Թէ քանիսն մեծ է, շրջեցուցեալ և
բազմեցեալ Հարկանէին վերամբարձ զնոսա ունելով. և
՝ի վերջէ անշէջ հրով այրեցին զնոսա յանդիման ա-
մենայն ժողովրդեան: Իսկ զօրականն, որ միանդեա
տանէին զսուրբսն՝ի վերայ կայր նոցա՝ և արգելոյր որ
անարգէինն զնոսա, յաղաղակել ժողովրդեան ընդ-
դէմ նորա՝ ածաւ յատեան անդ Հզօր սպառազէնն
Աստուծոյ Ռեսաս. քանզի այս անուն էր նորա, արիա-
ցեալ՝ի մեծի պատերազմի՝ի վերայ աստուածապաշ-
տութեան գլխատմամբ կատարեցաւ: Եւ այլ ոմն
ծննդեամբ լիբէացի, անուամբ և արդեամբք օրհնու-
թեան Աստուծոյ յիրաւի կոչեալ Մակար՝ այն է երա-
նելի, հրապուրանօք սատիպեալ՝ի դատաւորէն ուրա-
նալ, էբրև չառնոյր նա յանձն՝ կենդանւոյն այրեցաւ:
Ցետ այսոցիկ Ապեմախոս և Աղեքսանդր՝ յետ բա-
զում ժամանակս երկարելոյ՝ի կապանս, և բազում
չարաչար կտտանաց համբերելոյ, քերանաց և հա-
րուածոց, ընկեցան՝ի հուր անշէջ, ընդ նոսին և կանայք
չորք: Իսկ Ամմոներիա կոյս սուրբ, զոր յամառ պըղ-

որ բարձեալն կարէին զնա, և միւնն նոյնժամայն ուրացաւ: Իսկ
միւսն զի անուն էր նմա Կարնիոն, որ Թարբեմանի լուսաւորմիտք,
և ինքն Սաբա Յուլիանոս, խոստովան եղեն՝ի տէր մեր. և եդին
զնոսա՝ի վերայ ուղտուց և ընդ ամենայն քաղաքն զոր գիտէք դուք
Թէ քանիսն մեծ է, շրջեցուցանէին զնոսա և հարկանէին, իբրու
նորա՝ի բարձու նսեմէին. և ապա հրով այրեցին յանդիման ամե-
նայն ժողովրդեանն: Իսկ զկնուր մի կայր՝ի վերոյ քան զնոսա,
մինչդեռ վարեալ տանէին զնոսա, և կայր ընդդէմ այնոցիկ որ ա-
նարգէինն զնոսա. և նորա զաղաղակ բարձին վասն նորա. և մերձե-
ցաւ նա իբրև զայր հզօր, և զդեցաւ զպատառազինութիւն Աստու-
ծոյ, և խոստովան եղև և իրախոյս եբարձ. և յայս մեծ պատերազ-
մի որ վասն աստուածպաշտութեան առաքինացաւ և բարձաւ գը-
լուխ նորա: Եւ միւս զի էր ազգատոհմին նորա՝ի Լիբիայ, և անուն
նորա կոչիւր Մակար՝ այսինքն երանելի, բայց յոյժ գթգութր զնա
դատաւորն ուրանալ. և իբրև ոչ առ յանձն դատաւորին կենդան-
ւոյն այրեցաւ: Իսկ Ապեմաքոս յետ այսոցիկ և Աղեքսանդրոս,
իբրև բազում ժամանակս յերկարեցան՝ի կապանսն, և համբերե-
ին բազում ցաւոց և քերանաց և չարաչար հարուածոց, ընկեցան

դուխամբ չարչարեաց պատաւորն, փոխանակ զի կանխեալ ասացեալ էր նորա չտալ ամենևին պատասխանի վասն որոց և չարչանիցէ նա. և՝ի կալ ինալ կուսին՝ի բանին, ՝ի մահ վարեցաւ։ Ընդ այլս էր և պառաւ մի հեզ և ցածուն՝ Մերկուբիա անուն, և Վիտ նեսիա բազմազաւակ՝ որ ոչ առաւել քան զՏէրն սիրեաց զորդիս իւր, մինչև՝ի տանջանս մատուցեալ՝ սրով ընկալան զմահ, զի կորացեալ ամաչէր դատաւորն և ի կանանց անգամ յաղթահարեալ երևել, զոր՝ի նախամարտիկ սրբուհիսն Ամմինեբիայ զփորձ առեալ էր։

Մատուցան դարձեալ յատեան Հերոն և Աստէր և Խիդորոս եգիպտացիք, և ընդ նոսա Վիտսկորոս պատանեակ հնգետասանամեայ։ Եւ իբրև կամէր դատաւորն զպատանեային նախ փորձել բանիւք իբրև դիւրաշուռ ոք տղայ, և սպառնալեօք պատուհասից ածացուցանել զնա իբրև զդիւրդ և զտկար. ոչ չուղմ բանիցն տեղի տայր Վիտսկորոս և ոչ՝ի սպառնալեացն երկնչէր։ Իսկ զայլս վայրենագոյնս տանջեաց, և իբրև ժուժկալեին նոքա սկսուխամբ, էատ հրով այրել զնոսա։ Եւ զՎիտսկորոս՝ որ մեծագոյն փառաւորէր ա-

և նոքա՝ի հուր։ Եւ ընդ նոսին և կանայք երեք և կոյս մի զի անուն էր նորա Ամմինեբիայ։ չարչարեաց զնա՛ յոյժ դառաւորն, և նա համակաւակ կոյսը դառաւորին։ Փոխանակ զի կանխեաց յառաջագոյն ևման՝ի մասց իւրոց Թէ զայն ինչ որ միանգամ հրամայեացէ նմա, նա զայն ինչ ոչ խոսեացէ. և իբրև հառաստեաց և առաւգաց զայն իւր՝ ՝ի մահ վարեցաւ։ Իսկ զայլսն և մի՝ի նոցանէն էր պառաւ, հեզ և ցածուն. զի անուն էր նորա Ամերիորիայ, և միւս այլ կին, զի էին նորա որդիք բազումք, և ոչ սիրեաց նա զնոսա առաւել քան զաբեր մեր, զի անուն էր նորա Վիտնեսիայ։ Ապրացեալ ամաչեաց դատաւորն քարել զնոսա, քանզի և՝ի կանանց անգամ յաղթահարեալ լինէր նա, և հրամայեաց սպանանել զնոսա սրով։ Իբրև քարանձինս՝ ՝ի նոսա ոչ մնացին, զի փոխանակ ամենեցուն Ամմինեբիայ մատաւ։ Եւ գարձեալ Հերոն և Աստէր և Խիդորոս, զի էին նոքա և գիպատացիք, և ընդ նոսա պատանեակ մի հնգետասանամեայ, զի անուն էր նորա Վիտսկորոս կոտորեցան։ Եւ նախ զառաջինն զպատանեային կամեցաւ խաբել, մոլորեցուցանել բանիւք պատրանօք իբրև զայլ անձն, և նենգաճիւն վտանգի հասուցանէր՝ ՝ի վերայ նորա չարչարանօք տանջանացն, որպէս զի լքեալ լուծցի նա։ Իսկ ինքն Վիտսկորոս բնաւ ամենևին չանձն ոչ առնոյր. զի և լսել անգամ գաղչէր նա՝ ՝ի բանիցն։ Իսկ զայլսն մեծագոյնս քննեաց. բայց նոքա համբերեին. և էատ հրով այրել զնոսա։ Իսկ Վիտսկորոս որ

*ռաջի ամբոխին, և ամենայն բանից նորա իմաստու-
Թեամբ առնէր զպատասխանին, զարմացեալ ընդ նա
դատաւորն արձակեաց, որպէս Թէ վասն հասակի
տղայութեան նորա ժամանակ դարձի և զղջանալոյ
ընդունելով նմա։ Եւ այժմ ընդ մեզ է արժանին Ա-
տուծոյ Դիոսկորոս պահեալ՝ի մեծ և յերկարաձիգ
պատերազմ։*

*Եւ Նեմեսիոս ոմն եգիպտացի զրպարտեցաւ իբրև
ասպնջական աւազակաց, և իբրև օտար՝ի չարախո-
սութենէն արձակեցաւ՝ի հարիւրապետէն, և ամ-
բաստանեալ իբրև քրիստոնեայ, նովին կապանօք ա-
ծաւ առ դատաւորն։ Իսկ անօրէնն կրկին քան զաւա-
զակն հարուածովք և տանջանօք չարչարեալ զնա, ՝ի
միջի նոցուն աւազակաց եւս այրել, և փառաւորեցաւ
երանելին ըստ նմանութեան Քրիստոսի։*

*Եւ ահա դաս մի զինուորաց Ամմոն, Զէնոն, Պտղո-
մէոս և Ինգէնէս, ընդ նոսա և Թէոփիլոս՝ կային առաջի դատաւորին. և՝ի դատել ուրուք իբրև
քրիստոնեայ և՝ի Թիւրել տկարանալ նորա յուրա-
ցութիւն, կային նոքա և կրճտէին զատամունսն, և
դիմօք ակնարկի առնէին, և զէեռս ձգէին, և զնոյն ձև
ցուցակի՝ի մարմինս իւրեանց յայտ առնէին։ Եւ իբ-*

*սքանչելին և փառաւորեալ էր քան զամենայն ժողովուրդն, իմաս-
տութեամբ առնէր զպատասխանին ընդդէմ ամենայն հարցուածոց
նորա. զարմացաւ ընդ նա և Թոյլ եւս նմա. և որպէս Թէ ժամանակ
դարձի զղջանալոյ եւս նմա, վասն հասակի տղայութեան նորա. և
այժմ ընդ մեզ է Դիոսկորոս արժանի Աստուծոյ. զի մեծի և ընդ
երկար պատերազմի Թոյլատրեալ՝ի մարտ ասի յայսմանէ։ Իսկ այր
մի զի անուն էր Նեմիսիոն, զի էր նա եգիպտացի, զրպարտեցաւ իբ-
րեւ Թէ այն ասպնջական իցէ աւազակաց։ Իբրև արձակեցաւ նա՝ի
հարիւրապետէ անտի յայսմ չարախօսութենէ զի օտար էր, և ա-
տացին ոմանք վասն նորա Թէ քրիստոնեայ է. և ածին զնա նովին
կապանօք առ դատաւորն։ Իսկ անօրէնն կրկին քան զաւազական
հարուածովք և տանջանօք չարչարեաց զնա, և՝ի միջի նոցուն աւա-
զակացն այրեաց զնա. և փառաւորեցաւ երանելին ըստ նմանու-
թեան Քրիստոսի։ Բայց յանկարծակի գունդ մի զինուորաց Ամմն
և Զէնոն և Պտղոմէոս և Ինգէնէս, և ընդ նոսա Թէոփիլոս Թերա-
պեն, կային առաջի դատաւորին՝ի ժամանակի մինչդեռ դատելին
քրիստոնեայ մի, և Թիւրեալ էր նա ուրանալ. կային և կրճտէին
զատամունսն իւրեանց, և երեսաց իւրեանց ակնարկէին. և զէեռս
իւրեանց՝ի վեր ամբառնային, և ցուցանէին նմա զմարմինս իւ-*

րև ամենեքեան ՚ի նոսա դարձան, մինչև ուրուք ձեռն արկեալ ՚ի նոսա, ընծայեան մնին կացին նոքա առաջի բեմի դատաւորին, և յայտ առնէին Թէ քրիստոնեայք են։ Ընդ որ զահի հարան և դատաւորն և ժողովականքն՝ մինչ զի դատափետքն քաջալերեալ պատրաստագոյնս երևէին. և որք դատաւորն նախին վերհերեալ զանգիտէին։ Եւ սոքա այսպէս ի դատաստարանի անդ Ճոխաբար Ճեմէին, և ցնծալոյն վկայութեամբ, կանգնելով Աստուծով իւրեանց յաղթանակ գեղեցիկ։

ԳԼՈՒԽ ԽԲ.

Եւ վասն այլոց ինչ յիշատակելոց ՚ի Դիոնիսեայ։

Իսկ այլք բազումք ՚ի հաւատացելոց ընդ քաղաքս և ընդ գիւղս ցանկալ ցրուեցան հերետից հեթանոսաց, յորոց զմին օրինակի վասն յիշատակելոյց։ Խաքիւրիոն ոմն անուն գործէր վարձու զգործս գաւառապետութեան միոյ ուրուն ՚ի գլխաւորաց տեղւոյն, որ և հրամայեալ ՚ի տեառնէ իւրմէ զոհել իբրև չառնոյր յանձն, նախատակօծ լինէր ՚ի նմանէ թշնամանօք. և ՚ի կալն ինալ իւր ՚ի նոյն միտս ժուժկալու-

բեանց։ Եւ իբրև բարկացան ՚ի վերայ նոցա ամենեքին մինչև ձեռնարկեալ էր ուրուք ՚ի նոսա և կալեալ ՚ի բերանոց ընծայեան և մնին կացին առաջի բեմին դատաւորին, և ասէին վասն անձանց իւրեանց Թէ քրիստոնեայք իցեն. այնպէս ահագին էր ահսկին, զի և գատաւորն անդամ և որ ընդ նմա էին զահի հարան, և այնոքիկ որ յառէին անդ էին՝ քաջալերեալ զօրանային. վասն որոյ նոքա չարչարանացն համբերեցին, և որք գատաւորին զնոսա զարհուրեցան յոյժ։ Եւ նոքա անգէն ՚ի տան գատաւորին քարոզեցին և ցնծացան վկայեմբեամբ, և արար զնոսա տառապ առնել աբանելիս։ Եւ այլք բազումք ՚ի քաղաքաց և ՚ի չինաց կուտեցան ՚ի հեթանոսաց. զի զմի ՚ի նոցանէ յիշեցուցանեմ ես յօրինակ երևելի. այր մի զի անուն էր նոցա Աքենեբիոն, և գործէր նա զգործս գաւառապետութեան ՚ի վարձու. միւսոյն ոմանցին ՚ի գլխաւորաց. ոմս հրամայեաց տէր իւր զոհս մատուցանել. և իբրև ոչ կամեցաւ առնել յանձն՝ թշնամանէին զնա. և իբրև համբեր նա՝ սպառնայր նմա, և իբրև հաստատեալ ժուժկալ լինէր՝ էառ նա ցուպ մի մեծ, և հարկ

Թեամբ, յաճախէին սպառնալիք՝ի տեառնէն և Թըշ-
նամանք, մինչև յաւուր միում առեալ տեառն նորա
ցուպ մի մեծ ընդ որովայն նորա և ընդ ընդերսն մը-
խեալ սպան զնա։ Եւ զի պիտոյ է մեզ ասել վասն
բազմաթեան՝ որ ընդ անապատս և ընդ լերինս մոլը-
րեալ՝ի քաղցոյ և՝ի ծարաւոյ, ՝ի ցրտոյ և՝ի հիւան-
դութենէ, յաւազակաց և՝ի գաղանաց կոտորեցան.
իսկ որք ապրեցանն վկայք են ընտրութեան և յաղ-
թութեան նոցա։ Յաւելից ասասնօր և գործ մի՝ի
հաւաստիս Աշմարտութեան ասացելոցս։ Քերէմոն ոմն
ծերունի անցեալ զաւուրըք, եպիսկոպոս Նիլոս քա-
ղաքի, փախեաւ ամուսնաւն իւրով հանդերձ՝ի լեառն
Արաբիոն[9], և ոչ ևս գարձաւ անտի. և Թէպէտ ընդ
երկար խուզեալ խնդրեցին զնոսա եղբարքը, սակայն
ոչ կարացին կալ՝ի վերայ և ոչ գտիակունս նոցա գը-
տին։ Եւ բազումք իսկ յայնմ Արաբիոն լեռնէն գերի
վարեցան՝ի բարբարոս Սարակինոսաց յորոց ոմանք
Հազիւ փրկեցան բազում ոսկւով և այլք կան մինչև
ցայսօր։ Եւ զայսոսիկ ոչ՝ի տարապարտուց ինչ երկ-
րորդեցի, եղբայր, այլ զի գիտասցես, Թէ որպիսի չա-
րիք անցին ընդ մեզ. զի որ առաւել փորձ եղէն, աւե-
լագոյն և տեղեակ գտանիցին։ Եւ յետ սակաւուց
յարէ ասել՝ի նոյն ԵԹԷ. Նոքին իսկ վկայքն սուրբք՝

Նխոհ զորօվայն և զգանձակ նորա և անդէն սատակեաց։ Զինչ պի-
տոյ է ասել մեզ վասն ժողովրդեանն որ մոլորեալ շրջէին յանապա-
տի անդ և՝ի քաղցոյ և՝ի ծարաւոյ, և՝ի մերկութենէ և՝ի հիւան-
դութենէ և յաւազակաց և՝ի գազանաց սատակեալ եղեն։ Եւ նո-
քա իսկ որ առաքինացանն՝ վկայք են նոքա ընտրութեան և յաղ-
թութեան նոցա։ Բայց եդից ես գործ մի երևելիս։ Քերմոն անուն
եպիսկոպոս՝ արամեալ ընդ ծերութիւն, քաղաքի մերոյ որ անուա-
նեալ կոչի Նիլոս։ Սա փախեաւ ամուսնաւն իւրով հանդերձ՝ի
լեառն արաբացոց և ոչ գարձան, և ոչ կալ՝ի վերայ նոցա կարա-
ցին. և Թէպէտ կարի յոյժ խնդրեցին զնոսա եղբարքը, սակայն ոչ
զնոսա և ոչ զդիակունս նոցա գտին։ Բազումք իսկ յայնմ լերինն
արաբացւոց վարեցան՝ի բարբարոս տաճկաց. զի են ոմանք՝ի նո-
ցանէ որ Հազիւ փրկեցան բազում ոսկով, և այլք մինչև ցայսօր
ժամանակի։ Եւ զայս զոր երկրորդեցի ես, եղբայր, ոչ ԵԹԷ՝ի
զուր տարապարտուց ինչ է, այլ զի եղիցիս գիտել գու, Թէ որ-
պիսի չարիք անցին ընդ մեզ. զի որք աւելագոյն կրթեցան, աւելա-
գոյն ևս տեղեակ են նոցա։ Եւ յետ այսորիկ յաւելու և ասէ. Թէ
այնոքիկ վկայքն սուրբք որք այժմ առաքինի են, և հաղորդք են

որ այժմ առ Քրիստոսի են և արքայութեան նորա հաղորդք, և դատողութեան նորա աթոռակիցք, յոր ժամ ընդ մեզ էին, զոմանս յերջարց անտի անկելոց և աղտեղելոց ի ձեռնէրս զոհիցն կռոց, ընկալան զբ թուեթեամբ. զի տեսին զձիմարիտ զեղջ և զապաշաւ նոցա, և ըստ նորա հաճութեան կամաց հաւատալով գործել՝ որում ոչն կամի զմահ մեղաւորի, այլ զդառնալ նորա յապաշխարութիւն և զկեալ, ընկալան զնո սա և ժողովեցին, և կցորդեցան ընդ նոսա աղօթիւք և հացիւ սեղանոյ։ Արդ զինչ վասն սոցա խրատ տայք դուք մեզ, եղբարք, զինչ առնել ևս մեզ։ Հաւատա բեացուք արդեօք միով խորհրդով ընդ վկայն, և ըզդուշասցուք դատաստանի նոցա և չնորհացն. և թրոց ողորմելոցն նոքա՝ գթութեամբ գնասցուք և մեք. և կամ թէ համարձակեսցուք առնել անիրաւ զդատաստան նոցա, և քննիչ կալ ի վերայ դատաստանի նոցա և խորհրդոց, և զգուշ քաղցրութեան նոցա արտմեցուցանել, և զուղղութիւն կարգին տապալել։ Զայսո սիկ ի դեպ յոյժ յաւել Դիոնեսիոս վասն այնոցիկ՝ որ ի ժամանակս հալածանաց տկարացան ի հաւատս։

արքայութեան նորա. և դատաստանեօք նորա դատին նովաւ հանդերձ զոմանս յերջարց անտի որ անկանեն և պարտաւորեցան ի բամբասանս զոհից, ընկալան զնոսա՝ զի տեսին զեղջ և զապաշաւանձանց նոցա և զասպաչխարութիւն. և գիտացին թէ մարթի ընդունել այնմիկ, որ ոչն բնաւ կամի և զմահ մեղաւորի որպէս զապաշխարութիւն նորա. և քննեալք և ընկալեալք զնոսա. և ժողովեցեք և հաստատեցէք և կցորդեցարուք ընդ նոսա աղօթիւք և հաց ուտելով։ Արդ զինչ խրատ տայցէք դուք մեզ վասն այսր եղբարցա. զինչ է արժան մեզ առնել, հաւատարել ընդ նոսա միով խորհրդով կամ թէ առնել զդատաստան նոցա անիրաւ, և առնել զանձինս մեր դատաւոր կամաց նոցա և զգաղտնութիւն ասատուծոյ արտմեցուցանել, և զուղղութիւն նոցա տապալել։

ԳԼՈՒԽ ԽԳ.

Վասն Նովատեայ և թէ որպիսի՛ ոք էր և զի՛նչ հերձուած աղանդոյ նորա։

Եւ քանզի ամբարտաւանութեամբ յարեաւ ընդդեմ գայթակղելոցս այսոցիկ՝ի Հալածանաց՝ Նովատոս երէց եկեղեցւոյն Հռոմայեցւոց, իբրու զի չիցէ նոցա յայս կենաց այսուհետև, թէպէտ և զամենայն կատարեսցեն՝ որ ինչ յանկեղծ գարձ և՛ի սուրբ խոստովանութիւն պահանջիցի. և եղև նա գլուխ և ա-ռաջնորդ հերձուածոյն այնորիկ՝ որ խօթամիտ և փըքացեալ խորհրդով կաթարտաս սուրբս զանձինս կոչեցին։ Եւ վասն այսորիկ գումարեցաւ ժողով մեծ՝ի Հռոմ՝ յեօթանասուն եպիսկոպոսաց, և յերիցանց և՛ի սարկաւագաց բազմութիւն յոյժ. և՛ի գրել խոկ՝ի գաւառաց գաւառաց հովուաց եկեղեցեաց և՛ի հարցանել ժողովոյն թէ զինչ արժան իցէ առնել. վՀիւ այսպիսի առաքեցաւ՝ի սիւնհոդոսէն կընդհանուրս առ ամենեսին. Ջնովատոս և զընդ նմա ժողովրդեալս յանդգնութեամբ, և զորս միանգամ համաձայն եղբայրատեաց և տմարդի խորհրդոց առնն գըտ-

Քառասներորդ երկրորդ. վասն Նովատեայ թէ որպէս էր նա և վասն աղանդի նորա։

Ջայս զոր ասաց Դիոնեսիոս, վասն այնոցիկ որ հիւանդացան՝ի ժամանակի անդ հալածանաց, և վասն զի չպարտացաւ ամբարտաւանեաց՝ի վերայ նոցա Նեռոս. զի էր նա յառաջ երէց եկեղեցւոյն հռոմայեցւոց զի իբրու թէ այսուհետև չիցէ նոցա յայս կենաց, և ոչ թէպէտ կատարեսցեն զամենայն խոստովանութիւն սիրով և սրտութեամբ. և եղև նա գլուխ և առաջնորդ այնոցիկ որ չպարտացեալ ամբարտաւանէին՝ի միոս իւրեանց՝ կաթարտաս, այսինքն սուրբս. վասն նորա խոկ ժողովեցաւ սիւնհոդոս՝ի Հռոմ քաղաք մեծ՝ վերնասուն եպիսկոպոսաց, և երիցունք ասէլագոյն քան զնոսա, և սարկաւագունք և գաբձէալ խրաքանչիւր այլոց աշխարհաց հովիւք որ էին յամենայն աշխարհս գրեցին թէ զինչ արժան իցէ առնել վասն այսր. և ուրեք հաստատութեան հաստատեցին կացուցին ամենեքին, եթէ Նեռոսս հանգերձ այնոքիւքը որ չպար-

ցին, օտարս համարեացն զայնպիսին յԵկեղեցւոյ. և զեղբարսն վտանգեալս դեղով ապաշխարութեան բուժեալ առողջացուցեն։ Իբ առ այս կան և Թուղթք Կոստնեղեայ եպիսկոպոսի Հռոմմայեցւոց առ Փարիսս առաջնորդ Աստիոքացւոց եկեղեցւոյն. յորում և վասն Ժողովոյն՝ որ եղև ի Հռոմ, և որ ինչ միանգամ հաՀաՀոյ եղև ամենայն եղբարց՝ որ էին ի կողմանս Իտալացւոց և Աֆրիկեցւոց և յամենայն գաւառսն, յայտ առնէ։ Էն գարձեալ և այլ Թուղթք ի Հռոմ ընդ Կիպրիանոսի և այլոց եպիսկոպոսաց՝ որ ընդ նմա ի կողմանս Աֆրիկեցւոց, յորս ցուցանեն Թէ միաբանին և նոքա այսմ հաւանութեան. Թէ արժան է ձեռն տալ փորձանաւորացն, և իբրաւամբ տարագիր առնել ի կաԹողիկէ եկեղեցւոյ զառաջնորդ հերձուածոյն, և որք միանգամ զՀետ նորա գնայցեն։ Ընդ սոսա է և այլ միւս ևս Թուղթ Կոստնեղեայ վասն ամենայնի՝ որ միանգամ հաՀաՀոյ եղև Ժողովոյն. և այլ գարձեալ վասն գործոց Նովատեայ, յորմէ չէ ինչ անգէպ ածել առաՀանօր ինչ ինչ, զի որ միանգամ անցանիցեն ընդ պատմութիւնս՝ եղիցի նոցա գիտել Հանապազ Թէ որպիսի ոք էր սա։ Արդ Կոստնեղեայ ցուցանելով Փաբիոսի Թէ որպիսի ոք էր Նովատոս, գրէ օրինակ զայս. Եւ զի

տացանն ընդ նմա. և որք միանգամ այսմ խորհրդոց առեալութեան եղբարց խրախոյս միաբանին, զի է սա առանց ազօրմածութեան զոր ետուին այս, օտար համարեալ լիցին նոքա եկեղեցւոյ, և զեղբարսն որ անկեալ իցեն յայս խեղաթիւրն ապականութեան բժշկեսցեն և ողջացուսցեն զնոսա դեղով ապաշխարութեան, Հասին և մեզ։ Իակ Թուղթքն Կիւբրիանոսի եպիսկոպոսի Հռոմայեցւոց, զոր գրեաց առ Փեբիոս եպիսկոպոս եկեղեցւոյն անտիոքացւոց վասն Ժողովոյն որ եղև ի Հռոմ քաղաքի, և որ ինչ միանգամ ՀաՀաՀոյ եղև ամենայն եղբարց որ էին ի կողմանն յիտալացւոց և յաֆրիկեացւոց և յամենայն աչխարՀ. և այլ Թուղթք գարձեալ որ գրեալ են ի Հռոմ լեզու Կիպրիանոսի և այլոց որ ընդ նմա էին ի կողմանս ափրիկացւոց, զի նոքաք ցուցին և յայտ արարին Թէ միաբանին նոքա այսմ հաւանութեան, ԵԹէ արժան է օգնական լինել այնոցիկ՝ որ անկեալ իցեն ի փորձանս. և զի արժան և յիրաւի է քաջոգել և տարագիր առնել ի սուրբ եկեղեցւոյ զգլուխ և զառաջնորդ զայդր ազանդի ի հերձուածոյ, և որ միանգամ հնազանդին նմա։ Մատեալ մերձեցեալ իսկ էր ընդ Թուղթսն ընդ այնս և այլ միւս ևս առ Կորնիղոս՝ վասն ամենայնի որ միանգամ հաՀաՀոյ եղև Ժողովոյն։ Գարձեալ և միւս ևս վասն ամենայնի որ ինչ գործեցան

գիտակ լինիս Թէ՝ ի վաղուց հետէ եպիսկոպոսութեան ցանկայը այրս այս զարմանալի, և Թագուցեալ ունէը յանձին իւրում զայս յախտուն ցանկութիւն. և զորս յառաջագոյն ընդ նմա էին գնոստուվանողս քօղարկել զանմտութիւն իւր՝ խաբեալ մոլորեցուցանէը, Կամիմ ասել զՄաքսիմոս երէց եկեղեցւոյս, և զՄարբանոս՝ որք երկիցս ժառանգէցին զպարծանս արիւական խոստովանութեան, և զՍիմոնիոս և զկելերինոս՝ այն որ ողորմութեամբն Աստուծոյ քաջութեամբ տարաւ ամենայն տանջանաց, և Տաստատութեամբ հաւատոյն իւրոց զՀիւանդութիւն մարմնոյ իւրոյ բժշկեաց, և արար յաղթութիւն կատարեալ ընդդէմ Թշնամեաց: Այդ սոքին իսկ իբրև՝ ի միտ առին և ծանեան զնենգութիւն առնն, և՝ ի կերպս կերպս լինել նորա և զտութիւն զերգմանցն և զանից, զվայրենի անկցորդութիւն, և զգայլաբարոյ խորամանկութիւն՝ Թողեալ զնա գարձան յեկեղեցի սուրբ, և զամենայն մեքենայս չարութեան նորա՝ զոր Թագուցանէը նա յանձին իւրում՝ առաջի բազում եպիսկոպոսաց և երիցանց և բազմագոյն աշխարհիկ մարդ-

'ի Նէեառս. արժան է մեզ դնել անտի սակաւիկ մի, զի եղիցին գիտել Հանապազ Թէ որպիսի որ էր նա որ միանգամ ընծեռնուցուն զգիրս զայս: Այդ նմին են իսկ Փիբիսնասեայ եղբայք Կորնիդոս Թէ որպիսի որ էր նա, և գրեաց այսպէս: Որ վասն զի, ասէ, եղիցիս գու գիտել, Թէ զառաջինն ցանկայր նա եպիսկոպոսութեան այն իսկ այս ապաշ և յիմար, և Թաքուցեալ ունէը յանձին իւրում զայս ցանկութիւն Թէեձեռութեան, և խաբեալ մոլորեցուցանէը զայլս քողով չպարտութեան իւրոյ յայտնիկ, զի յառաջագոյն էին ընդ նմա խոստովանեալք: Եւ կամիմ ես ասել, Թէ օրպէս և կամ զնոքդ Մաքսիմոս երէց օր առ մեզ էր, և Որբանոս որք երկիցս անդամ առին զպարծանս առաքինութեան խոստովանութեանն և Սիմնհագոս և Կալիանոս այր՝ որ զամենայն չարչարանս համբերբ քաջութեամբ ողորմութեամբն Աստուծոյ, և առաջնութիւն չհաւատոյն նորա զՀիւանդութիւն մարմնոյ նորա բժշկեաց, և յաղթեաց նա լի կատարեալ Թշնամեացն: Այդ այն իսկ արքա այս իբրև՝ ի միտ առին և տեղեկացան նմա, և ծանեան զնենգութիւն զոր ունէը նա, և զկերպսն կերպսն լինել նորա և զտութիւն զերգմանցն և զանից, և զի ոչ հաղորդէր նա, և զսէրն նենգութեան նորա, գնային առ՝ ի նմանէն, և գարձան եկին յեկեղեցի. և զամենայն մեքենայսն և զչարութիւնն զոր ունէը յառաջագոյն ի Թագուցանէը յանձին իւրում, կային բազում եպիսկոպոսք և երիցունք և այլ բազում մարդիկ՝ ի Ժողովգունէ անտի պատմեցին, և լային և

*կան կային և պատմէին. և ողբային և աշխարհէին փո-
խանակ զի հաւանեալ լարաբարոյ նենդաւոր գաղա-
նին՝ ժամանակ մի արտաքոյ եղեն ի սուրբ եկեղեցւոյ,
և գարձեալ յետ սակաւու միոյ ասէ. Ջարմանալի
եմ ի նմա, եղբարք սիրելիք, փոփոխումն և յեղե-
ղուկն ի փոքր ժամանակի տեսի, զի պանծալին
այն մարդ՝ որ ահագին երդմամբ մնդէր և հաս-
տատէր թէ չցանկայ եպիսկոպոսութեան, յանկարծ
իբրու ի մեքենայէ խմբէն ժայթքեալ՝ եպիսկոպոս
գտաւ ի միջի. և որ վարդապետութեան եկեղեցւոյ
և հրահանգաց նորին նախամարտիկ ախոյեան լինել
կարծեցուցանէը զինքն, իբրև գողանալ և յափշտա-
կել կամէը զեպիսկոպոսութիւնն՝ այն որ յերկինից ոչ
տուաւ նմա, ընտրեաց նա զերկուս ոմանս զանյայտս
զիրկութենէ անձանց՝ իւր զվոլոզ, և առաքեաց զնո-
սա ի կողմն մի խառնիոյ յանփառունակ և ի նուա-
զեալ. և զերիս եպիսկոպոսս զարս շինականս և զմիա-
միտս մեքենաւոր կեղծաւորութեամբն պատրեալ մն
լորեցոյց, մնդելով թէ հարկ է նոցա գալ վաղվաղա-
կի ի Հռոմ, և զհերձուածս ծագեալս անդանօր՝ ընդ
այլ եպիսկոպոսունս միշնորդութեամբ իւրեանց լու-
ծանել: Եւ իբրև եկին սոքա, որպէս յառաջագոյն
ասացի, աքը պարզամիտք, և չարահնար արուեստիցն*

*զղջանային փոխանակ այնը զի յանձն առեալ էը նոցա զնենգու-
թիւն չարութեան նորա. և եկին սակաւ մի ժամանակս արտաքոյ
քան զեկեղեցւոյ: Եւ գարձեալ յետ սակաւու միոյ ասաց. եղբարք
սիրելիք, թէ քանի փոփոխումն և յեղեղուկն տեսի ես ի նա ի
փոքր ժամանակեանն. զի այն իսկ այր, որ համարի զանձն իւր
սուրբ և պարկեշտ, զի հաձէը և հաւանեցուցանէը նա ահագին
երդմամբ թէ ոչ ցանկայր նա եպիսկոպոսութեան, յանկարծակի
եպիսկոպոս իբրև մեքենայիւք երևի գտեալ ի միջի, զի նա օրէնս-
դիր որ կայր փոխանակ իրաց ուղղութեան եկեղեցւոյ ի ժամանա-
կի իբրև կամեցաւ գողանալ յափշտակել զեպիսկոպոսութիւնն,
այն որ յերկինից ոչ տուաւ նմա: Ընտրեաց նա իւր երկուս հաղոր-
դս որոց գոյս անձանց իւրեանց հաստեալ էին, և յղեաց զնոսա ի
կողմն մի փոքր ի կողմանցն յետալուցաց, ածել երիս եպիսկոպոս
զարս շինականս և զմիամիտս, զորս խաբեալ մոլորեցոյց զնոսա մե-
քենաւոր կեղծաւորութեամն զոր նիւթեաց. զի հաւատացուցա-
նէը նոցա եթէ պիտոյ է նոցա գալ վաղվաղակի և ընդ այլ եպիսկո-
պոսս ի Հռոմ քաղաք. զի որ միանգամ հերձուած ինչ եգեալ իցէ
լուծցի, իբրև նոքա ևս միշնորդ լինիցին. և եկին, քանզի մարդք*

նէնգութեան ամիսոջէ՝ ըմբռնեալ փակեցան յառաջագոյն պատրաստելոց առ այս նմին նամուղ յարանց ոմանց. որք և ի տասներորդ ժամուն ի գիներբուս և ի շուայտութիւնս՝ մինչդեռ աշխարհս շուրջ գալ թըւէր նոցա, բռնադատեցին զնոսա տալ նմա զուսմն և կերպարանեալ իմն վայրապար ձեռնադրութիւն եպիսկոպոսութեան, զոր դարանակալ նէնգութեամբ՝ որ չէրն նմա անկ շորթէր: Ցետ ոչ բազմաց՝ միոյն յեպիսկոպոսացն այնոցիկ դարձաւ եկն յեկեղեցի, և լայր և խոստովան լինէր զմեղս իւր. զոր և վասն աղաչանաց նորա և ամենայն առաքինակց Ժողովրդեան ընկալաք զնա ի հաղորդութիւն իբրև այր մի դուզնաքեայ: Եւ փոխանակ եպիսկոպոսացն այնոցիկ՝ այլ եպիսկոպոս արարաք և առաքեցաք ի տեղիսն ուր էին նոքա: Արդ նախանձայոյզն և վրէժխնդիր աւետարանին ոչ գիտէր թէ մի եպիսկոպոս պարտ է լինել ի միում կաթողիկէ եկեղեցւոջ: Յորում՝ ոչ անգիտացեալ, քանզի և զիարդ մարթի էր անգիտանալ զի ուր քառասուն և վեց երիցունք են, եւ թէն սարկաւագունք, եւ թէն կիսասարկաւագունք, քառասուն երկու ջահնկալք, երդիւեցուցիչք, ընթերցողք և դռնապանք՝ յիսուն և երկու, այրիք և վշտակիրք [10] ամենեքեան աւելի քան զհազար և հինգ հարիւր և զամենեսեան զոսա հնարէք և մարդասիրութիւն ցեւան

միամիտք էին, որպէս յառաջագոյն ասացաք: Ըմբռնեալ կապեցան նոքա ի մեքենայս կեղծաւորութեան մարդոց չարաց, մարդք ապըստակեալք նամանոք նմին ի տասն ժամին իբրև արբեալք էին, բռնադատեցին զնոսա տալ նմա ձեռնադրութիւն, հայեցեալ և ընդունայն զեպիսկոպոսութիւնն, այն որ դարանակալ և կեղծաւորութեամբ չարաւ պահանջէր զնա, իբրև չէր նմա արժանի: Եւ մի ի նոցանից յայնցանէ յետ ոսկաւ միոյ ժամանակաց դարձաւ և էին յեկեղեցի, լայր և խոստովանէր զմեղս իւր Թէ հաղորդեցաք ընդ նմա իբրև ընդ այր մի դուզնաքեայ: Աղաչէր և ինդրէր յԱստուծոյ վասն որոյ ամենայն Ժողովրդոյն Թէ փոխանակ եպիսկոպոսացն այնոցիկ այլ եպիսկոպոս արարաք, և առաքեցաք ի տեղիսն ուր էին նոքա: Արդ այն պահանջիցն աւետարանի ոչ գիտէր եթէ մի եպիսկոպոս պիտոյ է լինել ի մի կաթուղիկէ եկեղեցի, այն զոր այն ձանձրէ զնա. զի ուր քառասուն և վեց երեց են, և եօթն սարկաւագ, և երդիւեցուցիչք, և ընթերցիչք, և դռնապահաքք յարմարիչք յիսուն և երկու և պղտիկն եղելովք հանդերձ աւելի քան զհազար և զհինգ հարիւր և զամենեսին զնորէնք և մարդասիրութիւն տեառն մե-

մերոյ կերակրէ. և սակայն այնչափ և այնպիսի կա-
րևոր խուզմբ բազմանձեան յեկեղեցւոջ, և աստուա-
ծային խնամոց տեսչութեամբ Հոգեացեալ, և Թուով
առաւելեալ յոյժ յոյժ ժողովրդեամբն՝ ոչ կարաց
խոտորեցուցանել ինչ զնա ի յուսահատ յանդգնու-
թենէն և դարձուցանել յեկեղեցի: Ընդ այլ ևս բանս
յարէ դարձեալ այսպէս. Աւասցուք արդ աղէ, թէ
յոր գործս արդեանց և յոր քաղաքավարութիւն կե-
նաց ապաստանեալ նորա և զհետ եղև եպիսկոպոսու-
թեան: Մի թէ ի սկզբանէ յեկեղեցւոջ չըլնէր նա, և
նահատակութիւնս բազումս վասն նորա նահատակե-
ցաւ, և վտանգս և վիշտս մեծամեծս և ծանուցեալ վասն
աստուածպաշտութեան կրեաց. զի պատճառք հաւա-
տոյոյ նորա սատանայ եղև, որ եմուտ և շատ իսկ ժա-
մանակս բնակեցաւ ի նմա. և խնամն օգնականու-
թեան գտեալ նորա յերդմնեցուցչաց, իբրև անկաւ
նա ի հիւանդութիւն դառնութեան և մերձ համա-
րէր ի գրունս մահու, անդէն ի նոյն մահիճս՝ յոր
անկեալ դնէր, հեղոյն ի վերայ նորա ջուր մկրտու-
թեան և էառ կնիք, եթէ արժան իցէ էառ ասել. զի
իբրև յարեաւ նա յախտէ անտի հիւանդութեան,
չկատարեցաւ ի վերայ նորա այն ամենայն, զոր ըստ
օրինաց եկեղեցւոյն արժան էր նմա ընդունել, և ոչ

րոյ կերակրէն: Իսկ զայնպիսին և ոչ իբրև այսպիսի ամենայն ժողո-
վուրդն որ առաւել է ի մէջ եկեղեցւոյ, և Թէ համարոյ իբրոյ որ
ի ձեռն փութոյ Աստուծոյ հանդերձ բազում ժողովրդեամբ որ
անթիւ իցէ. յայսպիսւոյ յուսահատութենէ ոչ կորացոյց զնա և
զարձոյց յեկեղեցի: Եւ զարձեալ անդերձ այլոյք յաւելու և ա-
ռէ զայս. զի յայսմ հետէ սասացաք, Թէ վասն որպիսի գործոյ, և
վասն որպիսի վարուց յուսացեալ սպասաւն եղև, և խնդրեաց
զպիսկոպոսութիւն. մինչ ի սկզբանէ յեկեղեցւոջ չըլնէր նա, և
պատեբազմս բազումս կրեալ էր նորա վասն նորուն եկեղեցւոյ, և
ի վերա բազումս և ի մեծամեծս եղեալ էր նորա վասն աստուած-
պաշտութեան. զի նորա պատճառք հաւատոյոյ սատանայ եղև. զի
եմուտ և բնակեցաւ ի նմա ժամանակս բազումս, և օգնեալ լինէր
նա յերդմնեցուցչայ անտի: Բայց անկաւ նա յախտ չարաչար, և ի
հիւանդութիւն դառնութեան. և իբրև համարեցաւ Թէ մերձ իցէ
նա ի մեռանել, անդէն ի նոյն մահիճս յորում անկեալ գնէր հե-
ղին ի վերայ նորա ջուրս մկրտութեան և էառ կնիք: Եթէ արժան
իցէ վասն այնպիսւոյն Թէ առն: Եւ իբրև յարեաւ յախտէ անտի
հիւանդութենէն, ոչ եղև արժանի այլոց իբրոյ որպէս արժան

կնքեցաւ Նա յեպիսկոպոսէ. իսկ եթէ այսմ չեղև Նա արժանի, զիա՛րդ ընկալաւ զՀոգին սուրբ: Յետ սակաւիկ մի ժամանակաց ուրացաւ Թէ իցէ երեց: Ցի իբրև աղաչէին և ինդրէին 'ի Նմանէ սարկաւագունքն ելանել Նմա 'ի տանէն՝ ուր արգելաւ էր զանձն իւր, համանել յօգնութիւն եղբարց, որպէս և արժան էր ե-
բիցուն ըստ կարի իւրում ձեռն տալ սատարութեան վտանգելոց և կարօտեալց, Նա այնպէս չլսէրլոյն արար աղաչանաց նոցա, մինչև գժկամակեալ եթող զնոսա և սրացաւ անտի: Ո՛չ ևս այսուհետև կամիմ ես երէց լինել, ասէր, զի այլ վարս և այլ գնացս սիրեմ: Եւ յետ այլոց բանից յարէ գարձեալ Թէ. Ա՛յրս այս գե-
բատպայծառ, եթող զեկեղեցին Աստուծոյ, յորում հաւատացին և զաստիճան երիցութեան ընկալաւ 'ի ձեռնադրիչ եպիսկոպոսին, զոր իբրև արգելուին ուխտ եկեղեցւոյն և բազումք իսկ 'ի ժո-
ղովրդենէն՝ Թէ չէր օրէն 'ի մահիճս հիւանդութեան ջրոյն հեղլով կնիք առեղծն 'ի վիճակ ժառանգաւո-

է Նմա ընդունել ըստ օրինաց եկեղեցւոյ, այսինքն կնքել Նմա յեպիսկոպոսէ: Իսկ Թէ այսմ արժանի Նա ոչ եղև, զիա՛րդ ընկալաւ զՀոգին սուրբ: Ցետ սակաւիկ մի ժամանակաւն սաաց գարձեալ զի Նա, ասէ, առ երկիւղ իւրում և առ սիրել զկեանս աշխարհիս այ-
սօրիկ, 'ի ժամանակի հալածանացն ուրացաւ Թէ բնաւ չէ երէց: Եւ իբրև աղաչէին և ինդրէին 'ի Նմանէ սարկաւագունքն ելանել Նմա 'ի տանէն ուր արգելեալ էր զանձն իւր անդ, օգնական լինել եղբարց որպէս և արժանի էր, և ծրտալ կարիսն երիցու օգնական լինել, որ կայցէ 'ի մէջ վտանգի նեղութեան, և կարօտ իցեն օգ-
նականութեան: Իսկ Նա այնպէս հրաժարեաց զի մի հատանեսցի սարկաւագացն որ աղաչէինն զնա. զի իբրև եցոյց Նա նոցա երեսս խստութեան, Թողին զնա և մեկնեցան 'ի Նմանէ. զի ասէր Թէ չը-
կամիմ ես այսուհետև լինել երէց. վասն զի այլ վարս և այլ գնացս սիրեմ: Եւ գարձեալ իբրև էանց Նա սակաւիկ մի յաւելու և ասէ. զի եթող Նա՝ այն որ համարեցաւն զանձն իւր առաքինի, զեկեղեցի Ֆրիսաոսի, այն զի 'ի Նմա հաւատաց Նա, և արժանի եղև երիցու-
թեան. զի ջնորհ կամեցաւ առնել Նմա եպիսկոպոսն, այն որ եգ 'ի վերայ Նորա ձեռն զերիցութեանն. իբրու չէր կամեցեալ ընդ Նմա ուխտն եկեղեցւոյ և բազումք 'ի ժողովրդենէ անտի. քանզի չուէր Նա իշխանութիւն խառնել յուխտ եկեղեցւոյ ըստ օրինաց այլ մի որ 'ի մահիճս իւր 'ի հիւանդութեան ժամանակի արկին 'ի վերայ Նորա ջուրս մկրտութեան: Իսկ Նա աղաչէր հաւանեցուցանէր զնո-

*բաց ամբառնալ. աղաչէր զնոսա եպիսկոպոսն և հաւանեցուցանէր թէ սմա միայն Թոյլ տուք տալ զձեզ նադրութիւնս։ Յաւելու ապա և զայլ գործ անհնթեթ և չարագոյն զառնէս քան զանցեալսն ամենայն։ Յորժամ մատուցանէր, ասէ, պատարագ, և բաշխէր և տայր իւրաքանչիւր միւր մասն, փոխանակ օրհնութեան 'ի վերայ ողորմելեացն այնոցիկ, բուռն հարկանէր երկոքումբ ձեռամբք զմատուցեալսն յօրէնս սրբոյ և ստիպէր զնա երդնուլ, և չՅողոյր մինչև տուեալ ասել զի զնորուն իսկ զանձն երկրորդեցից։ Երգուիր դու ինձ, ասէր, 'ի մարմին և յարիւն Ջեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի ոչ Թողցես դու զնա երբեք և դարձցես 'ի Կոռնելիոս։ Եւ մարդն այն տառապեալ ոչ Ձաշակէր, մինչև ոչ նզովէր զանձն իւր. և յառնուլն զՅոյն փոխանակ ամէն ասէր. Ոչ ևս դարձայց, ասէր, առ Կոռնելիոս։

Եւ յետ այլոց բանից ասէ դարձեալ (Կոռնելիոս)։ Ցայս գիտասջիր, զի մերկ և Թափուր մնայ նա, զի օր ըստ օրէ Թողուն զնա եղբարքն և գառնան յեկեղեցի։ Յոր և երանելի վկայն Մովսէս, որ 'ի վերջին աւուրս վկայեաց առ մեզ գեղեցիկ և սքանչելի վկայութեամբ, մինչդեռ յաշխարհի էր՝ իբրև եռես զպարհութիւն համարձակութեան նորա, մերժեաց զնա 'ի հաղոր-

սա, Թէ սմա միայն Թոյլ տուք, Թող եղիցի ձեռն 'ի վերայ սորա։ Բայց գարձեալ և այլ միւս կս չարիս որ չար էր քան զայլս յաւելու և ասէ։ Զի յորժամ մատուցանէր պատարագ, և բաշխէր և տայր իւրաքանչիւր մարդոյ զիւր մասն, փոխանակ զի օրհնեսցէ նա զմարդիկ սակաւ օր առնուելնն 'ի նմանէ՝ բուռն հարկանէր երկու ձեռամբ իւրով զձեռանէ առն այնորիկ որ առնոյր զնան, և ստիպէր երդնուլ այսպէս. զնորուն զբանն երկրորդեմ ես. Երգուիր դու ինձ, ասէ, 'ի մարմին և արիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի ոչ Թողցես դու զնա երբեք, և գարձցես առ Կոռնելիոս. և մարդն այն տառապեալ՝ ոչ լինէր Ձաղորդեալ մինչև նզովէր զանձն իւր. զի փոխանակ Թէ տասցէ նա ամէն. յորժամ առնոյր զՅոյն զայն ասէր մարդն այն. Թէ ոչ գառնամ ես առ Կորնելիոս։ Ցետ այլոց բանից ասէր գարձեալ, զայս եղիցին դու գիտել. զի յայսմ ամենայնէ մերկացեալ մնայ նա Թափուր. զի օրըստօրէ Հանապազորդ Թողուն զնա եղբարքն և գառնան յեկեղեցի։ Զի զՅոյն իսկ զայս և Մովսէս վկայ երանելի, այն որ վկայեացն առ մեզ յառաջ քառը մի ժամանակաւք զգեղեցիկ վկայութիւն և զքանչելի, մինչդեռ կենդանի էր յաշխարհի. իբրև եռես զպարհութիւն հա-

գումԹենէ իւրմէ, և զՀինգ երիցունս՝ որ պատառեցան ելին յեկեղեցւոյ։ Եւ ՚ի կատարածի անդ ԹղԹոյն կարգէ նա զԹիւ եպիսկոպոսացն՝ որք ՚ի Հռոմ գտեալ դատապարտեցին զանմտութիւն Նովատոսի, ընդ անուանցն նշանակելով և զվիճակս աԹոռոց նոցին. նոյնպէս և որոց ոչ գոլով ՚ի Հռոմ միաբանեցան ՚ի հեռուստ ԹղԹովք իւրեանց ընդ վճիռս գումարեցելոյն անդ, ընդ անուանցն յիշատակէ Ֆլաւիտոսի, ընդ անուանցն Նիւատոսի և զմիոյ միոյ քաղաքանին։ Ցայս ամենայն յայտնապէս գրեաց Կոռնելիոս եպիսկոպոս առ Փաբիոս Անտիոքացւոյ։

ԳԼՈՒԽ ԽԴ.

Պատմութիւն Դիոնեսիոսի վասն Աերապիոնի ուրուանի։

Առ սոյն ինքն Փաբիոս՝ որ միտէրն երբեմն յայս առանդ գրելով Դիոնեսիոս եպիսկոպոս Աղեքսանդրացւոց, բազում ինչ զապաշխարութենէն խօսելով և զնահատակութենէն վկայիցն՝ որք փոքր մի յառաջագոյն յԱղեքսանդրիա կատարեցան. ընդ այլ պատմու-

մարմակութեան նորա և զխպարտութիւն ամբարտաւանութեան նորա, կապեաց զնա ՚ի հաղորդութենէ կցորդելոյ, զնա և զՀինգ եւս էրէց որ պատառեցան և ելին յեկեղեցւոյ։ Եւ ՚ի կատարածի անդ ԹղԹոյն կարգէ նա զանուանս եպիսկոպոսացն, որ էկին ՚ի Հռոմ քաղաք և եգին ՚ի տէղի զչարիսն Նէոռակայ, զի եցոյց զանուանս նոցա և զեկեղեցիան յորում կային ՚ի նոսա. և զայնոցիկ որ ոչ էկին ՚ի Հռոմ քաղաք, այլ միաբանեցան ԹղԹովք իւրեանց ընդ այնոսիկ որ էկինն՝ յիշեցուցանէ և զնոցան իսկ զանուանս և զքաղաքացն յորում կային ՚ի նոսա։ Զայս ինչ գրեաց Կոռնելիոս առ Փաբիոս եպիսկոպոսն անտիոքացւոց։

Գլուխ ԽԵ. պատմութիւն վասն Դիոնեսիոսի և Աերապիոնիոյ։

Սմին իսկ՝ այսմ Փաբիոսիոյ՝ որ ԹիւրեալԷր յայս աղանդ չերծացուածոց, և Դիոնեսիոս եպիսկոպոսն աղեքսանդրացւոց գրեաց և պատմեաց բազում խոսս ԹղԹովք իւրովք վասն ապաշխարութեան, և կարգեաց զպատեջամբնան զայնոսիկ, որ վկայեցինն յառաջ փոքր մի ժամանակաւ յԱղեքսանդրէ քաղաքէ։ Եւ հանդերձ միւս

Թիւնս յաւելու և զայսպիսի ինչ դէպս լի զարմանալեօք. զոր և Հարկ է յեռուլ՝ի գիրս այս պատմութեան, և ունի բանս օրինակ զայս. Եղից քեզ, ասէ, օրինակ մի՝ որ առ մեզ պատահեցաւ։ Սերապիոն ոմն էր առ մեզ Ծերունի հաւատացեալ, ժամանակս բազումս կեցեալ անաչառ. և՝ի փոքմանս Հալածանացն անկեալ, խնդրէր սա ընդ երիար և աղաչէր, և ոչ ոք միտ դնէր նմա, զի զօհեալ էր նորա։ Եւ եղև նմա հիւանդանալ, և զաւուրս երիս անկեալ դնել անխօս ամենեւին և անզգայ, և իբրև յաւուրն չորրորդի սակաւիկ մի զարթեաւ, կոչեաց զԵռոն իւր՝ի դստերէն՝ և ասէ ցնա. Մինչև յերբ ունիցիք դուք զիս, որդեակ, փութացարուք աղաւեմ, և վաղագոյն արձակեցէք զիս. երթ կոչեա դու ինձ զմի ոք յերիցանց անտի. զայս ասէր նա և անդէն անբարբառ լինէր։ Ընթացաւ պատանեակն երթալ զկնի երիցուն. և էր ժամն գիշեր. և ինքն իսկ երէցն խօթ էր և չկարաց գալ։ Եւ զի պատուէր հրամանի տուեալ էր իմ, թէ որ միանգամ մերձ իցէ փոխել՝ի կենացս, եթէ խնդրեսցէ, և մանաւանդ թէ յաւաղագոյն իսկ աղաչեցեալ իցէ, հապա՛ր ձակ լինի նմա յուսով բարեաւ եղանել յաշխարհէ. վասն որոյ ետ նա պատանեկին փոքրիկ մասն մի յօրհնոյն, և հրամայեաց նմա թանալ և դնել՝ի բերան Ծերունւոյն։ Դարձաւ պատանեակն և եբեր. և

պատմութեամբ իբրև մի որ լի կին պատճառօք պատմեաց նա, և զոյն ևս արժան է դնել յայս գիրս։ Զի նա այսպէս օրինակ մի ասէ, որ ինչ եղև առ մեզ եկեղ ոտաքի քո զՍերապիոն Ծերունի և զհաւատացեալ. զի բազում ժամանակս կեցեալ էր նա անաչառ։ Բայց՝ի ժամանակի անդ փոքմութեան և հալածանաց անկաւ նա. իբրու ժամանակս բազումս խնդրէր և աղաչէր, և ոք ոչ հայէր ընդ նա, քանզի զօհեալ նա. այլ իբրև հիւանդացաւ նա աւուրս երիս, և անկեալ դնէր և խօսէր, և խլրտուածն ինչ իբրև չգտանէր՝ի նմա. և յաւուրն չորրորդի սակաւիկ մի զարթեաւ. կոչեաց զԵռոն իւր և ասէ ցնա. Որդեակ, մինչև յերբ ունիք դուք զիս առանն. երթ կոչեա դու ինձ զմի ոք յերիցանց անտի. և իբրև զայս ասաց, դարձեալ դնէր նա և խօսէր։ Ընթացաւ պատանեակն երթալ զկնի երիցուն. և էր ժամն գիշեր. քանզի ոչ կարացաւ՝ վասն զի առեալ էր իմ պատուէր հրամանի, թէ որ միանգամ ելանէն յաշխարհէ, եթէ խնդրեսցեն և մանաւանդ, թէ յաւաղագոյն ևս աղաչեցեալ իցէ, համարձակեալ լինի նոցա յուսով բարեաւ եղանել յաշխարհէ ասել։ Եւ նա պատանեկասն սակա-

իբրև մերձ էր՝ միշտև մտեալ նորա ի տուն, զար-
թեաւ դարձեալ Սերապիոն, և ասէ. Եկիր որդեակ,
երէցն ոչ կարաց գալ. արա դու վաղվաղակի որ ինչ
հրամայեցաւ քեզ, և արձակեա զիս ելանել ի կե-
նացս՝ եւ եթաց պատանեակն և եհեղ ընդ բերանն,
և իբրև եկուլ, նոյնժամայն արձակեաց զոգին։ Եւ ա-
հա ոչ արդեամբք իսկ յայտ եղև, զի վանն այնորիկ
պահեցաւ նա և երկարեցաւ ի կեանս, զի արձակես-
ցի. և սրբեալ ի մեղաց անտի անօրէնութեան իւրոյ՝
վանն բազմապատիկ բարեացն յառաջադոյն գործե-
ցոյ, կարասցէ դասիլ ի Թիւս խոստովանելոցն ի
Քրիստոսէ։

ԳԼՈՒԽ Խե.

Թուղթ Դիոնեսիոսի առ Նովատոս։

Տեսցուք արդ Թէ սոյն այս Դիոնեսիոս որպիսի
Թուղթս գրեաց առ Նովատոս, որ խառնիչն յայս-
ժամ զեղբայրութիւն եկեղեցւոյն Հռոմայեցւոց՝ և
զի զպատճառս գժտութեան և հերձուածոյն զեղ-
բարիք ոմանք արկանէր, որպէս Թէ յանկամ ի սո-

ւիկ մի օրինս, և հրամայեաց նմա Թանալ և գնել ի բերան ծերու-
նոյն։ Նկն պատանեակն և եբեր. բայց իբրև մերձ եղև ի հասանել,
միշտև մտեալ էր նորա, զարթեաւ դարձեալ Սերապիոն և ասէ.
եկիր որդեակ. և նա ասաց նմա Թէ երէցն ոչ կարաց գալ։ Ասէ ցնա.
Արդ դու արա որ ինչ հրամայեցաւ քեզ, վաղվաղակի փրկեա զիս։
Եւ եթաց պատանեակն, և էարկ նմա ընդ բերանն։ Եւ իբրև ե-
կուլ, նոյնժամայն արձակեաց զոգին։ Արդ ահա ոչ արդեամբք
յայտ եղև այս զի վանն այնորիկ պահեցաւ և ընդերկարեցաւ, զի
արձակեսցի. և իբրև ընկեցան մեղք անօրէնութեան նորա եգիտ նա
զնոստովանութիւնն իւր զբարեացն զոր գործեալ էր նորա յա-
ռաջագոյն։ Զայս ինչ գրեաց Դիոնեսիոս։

Քառասնեւերրորդ յորդորդ. թուղթ զոր գրեաց Դիոնեսիոս առ
Նովատոս։

Տեսցուք զարձեալ այժմ Թէ սոյն իսկ այս Դիոնեսիոս զինչ
գրեաց առ Նովատոս. զի երկիցուցանէր յայնմժամանակի զեղբայ-
րութիւնն որ էր ի Հռոմ քաղաքի. վանն զի ունէր նա զպատճառս
զմանց յեղբարց անտի. նորա սուիպեցին նմա գալ յայս աղանգ

ցանկ մղեալ գայր յայս, տէս որպէս գրէ նմա երա-
նելին։

Դիմանեսիոս Նովատոսի եղբօր ինդալ.

ԵԹԷ որպէս ասեսդ յոչ կամն եկիր դու յայդ,
յայտ արա զայն ի հեռանալդ քո կամելին։ Պարտ է
քեզ ամենայնի ժուժկալել, զի մի եկեղեցի Քրիստո-
սի պատուհասցի։ Զի ոչ փոքր ինչ պարծանք են վկա-
յութեամբ չարչարանս յանձն առնուլ, զի մի զեկե-
ղեցին պատառեսցես, քան եթէ զի մի կռոց զոհես-
ցես. և ըստ իս մեծագոյն ևս է այս քան զայն. զի
անդ վասն միոյ ևեթ քոյին անձինդ, իսկ աստ ի վե-
րայ ամենայն եկեղեցւոյ նահատակիս։ Եւ այժմ իսկ
արդ եթէ հաւանեցուցեալ ստիպեսցես զեղբարս գալ
ի միաբանութիւն, մեծ լիցին ուղղութիւնքդ քան
զմեղս քո. և ոչ իսկ ի մեղս, այլ մանաւանդ ի գո-
վութիւն քեզ համարեսցի։ Իսկ եթէ չկարիցես ա-
ծել զանհաւանսն, փութա ապրեցոյ զանձն քո։ Ողջ
լինել քեզ ըղձամ խաղաղութեամբ ի Քրիստոս։

Ջայսոսիկ առ Նովատոս։

հերձուածոց. և տես դու զնոքդ գրեացդ առ նա։ Դիմանեսոս առ
Նեսոտոս եղբայր ողջոյն։ ԵԹԷ որպէս ասես դու, թէ ոչ ի կամ
քո եկիր դու յայդ իրս. ցոյց և յայտ արա, ի հեռանալ քումմէ
քոյէ արժան իսկ է ամենայնի համբերել քեզ վասն այս, զի
մի պատառեսցես զեկեղեցի Աստուծոյ. և այս վկայութիւն, զի մի
պատառեսցէ զք զեկեղեցի, չէ փոքր պարծանք սորա քան զայնոր,
զի մի զք պատեսցէ վկայս. բայց այսպէս ասեմ, և առաւել ևս է
քան զայն։ Զի անդ վասն միոյ անձին խրթոյ վկայէ, իսկ աստ փոխա-
նակ ամենայն եկեղեցւոյ վկայէր. և այժմ եթէ հաւանեցուսցես,
և բանագաւաս զեղբարս գալ նոցա ի միաբանութիւն՝ լինի մեծ ա-
ռաքինութիւն քո քան զմեղս քո. և այն մեղք համարեալ քեզ ոչ
լինի, այլ այս առաքինութիւն գովեալ փառաւորի։ Ապա եթէ ոչ
կարես դու հաւանեցուցանել զնոսա, ապրեցուցանելով ապրե-
ցուսջիր զանձն քո, զի իցես դու առողջ և մերձաւոր խաղաղու-
թեան ի Քրիստոս. աղօթս առնեմ ի վերայ քո։

ԳԼՈՒԽ ԽԶ.

Եւ վասն այլոց բազոց Դիոնիսեայ։

Գրեաց դարձեալ Դիոնեսիոս և առ եղբարս՝ որ յԵգիպտոս վասն ապաշխարութեան, յորում դնէ նա զԹուեցեալն իւր վասն անկելոյն ի հաւատոց, զանաստուանելով զաստիճանս յանցաւորութեան նոցա։ Ի նոյնա և առանձին գիրսն վասն ապաշխարութեան առ Կոնոն եպիսկոպոս Հերմապոլեայ եկեղեցւոյն։ Ի և միւս այլ խրատական առ Հօտ իւր յԱղեքսանդրիա. միւս ևս առ Որոգինէս գրեալ վասն վկայութեան. Թուղթ և առ եղբարս Լաւոդիկեայ եկեղեցւոյն՝ որոց առաջնորդ էր Թեղիմիդրէս եպիսկոպոս. նոյնպէս և առ Հայս վասն ապաշխարութեան, որոց եպիսկոպոս էր յայնժամ Մերհրուժան։ Ի վերայ այսոցիկ ամենեցուն և առ Կոռնելիոս եպիսկոպոս Հռովմայ ի պատասխանի Թղթոյ նորա՝ որ ընդդէմ Նովատեայ, յորում աղաչեալ ասէ զինքն ի Հելենոսէ յեպիսկոպոսէ Տարսոնի կիլիկեցւոց, և յայլոց միաբանելոց ընդ նմա, զոր օրինակ ի Փերմիլիանու Կապադովկեցւոց և ի Թէոկտեստեայ Պաղեստինացւոց՝ երթալ ի Ժողովն

Քառասներորդ հինգերորդ. վասն այլոց բազոց Դիոնեսեայ։

Զայս ևսկ զոր ասացաք յառաջագոյն գրեաց Դիոնեսիոս առ Նեոտոս։ Գրեաց Թուղթ և առ այնոսիկ որ յԵգիպտոսն են վասն ապաշխարութեան զի ի նմա կատարեաց զկանն իւր, որ վասն այնոցիկ էր որով գայթակղեցանն. և առ Կոռնէ եպիսկոպոս ի Հերմապոլիս։ Ի նորա և այլ միւս և վասն ապաշխարութեան. և միւս վասն խրատու առ իւր Ժողովուրդ անգր յԱղեքսանդրիա. և այլ միւս ևս է նորա՝ զոր գրեաց առ Որոգինէս վասն վկայութեան, և առ եղբարս որ են ի Պաղեստինա. զի էր նոցա եպիսկոպոս Թեոկտիստոս, և առ այնոսիկ որ էին յԱմմոնիա, զի էր նոցա եպիսկոպոս Մերհրուժան։ Գրեաց դարձեալ վասն ապաշխարութեան։ Ես հանգերձ այսու ամենայնիւ, և առ Կորնելիոս եպիսկոպոս Հռոմ քաջզաբի. զի առեալ էր նորա Թուղթ վասն Նեոտոսեայ. և ի նմա է ցոյց գնա, թէ ապաչեցին գնա Հելենոս եպիսկոպոս Տարսոն քաջաքին կիլիկեցւոց՝ այլովք հանգերձ որ էին ընդ նմա այսոքիւք, Թաքսեանոս Կապադովկացւոց, և Թէոկտեստոս Պաղեստինացւոց, զի

*ՅԱնտիոք, յորում ջանային ոմանք զօրաւիգն կալ ա-
ղանդոյն Նովատոսի։ Ընդ այսոսիկ յաւելու յիշատա-
կել, լուր հասեալ նմա եթէ հանգեաւ Փաբիոս, և
փոխանակ նորա կացուցաւ Դեմետրիանոս եպիսկոպոս
Անտիոքացւոց եկեղեցւոյն։ Գրէ և վասն երկուսաղէ-
մացւոց եպիսկոպոսին այսպէս եթէ. Երանելի Աղեք-
սանդրոս ՚ի տան բանտի գոլով՝ հանգեաւ երանու-
թեամբ։ Չհետ գայ ապա և այլ թուղթ նորին Դիո-
նեսեայ առ եղբարս՝ որ ՚ի Հռոմ տարեալ ՚ի ձեռն
Հիպոլիտեայ իբրև պաշտօնեի նորա. առ նոսա դար-
ձեալ վասն խաղաղութեան. սապէս և վասն ապաշ-
խարութեան. և միւս այլ առ խոստովանողսն՝ որք ՚ի
խորհուրդս Նովատեայ միտեալ սատարէին նմա. և
այլ ևս երկուս թուղթս առ նոսա գարձեալ՝ ՚ի զղջա-
նալ նոցա և ՚ի դառնալ յեկեղեցի Քրիստոսի։ Եւ առ
այլս բազումս նոյնպէս ՚ի ձեռն գրոց խօսելով, որոց
միանգամ մինչև ցայսօր ժամանակի փութաջան սի-
րողք են բանից նորա, եթող նոցա բազմադիմի շահս
օգտութեան։*

*գրեցին նոքա առ նա՝ գալ նմա ՚ի ժողովն որ եղև ՅԱնտիոք քաղա-
քի. քանզի էին ոմանք որ կամէին հաստատել կացուցանել զա-
զանդն Նեոտոսեայ։ Եւ այսու հանդերձ գրեաց նա, զի ցուցին նմա
թէ հանգեաւ Փեբիոս, և կալաւ զկնի նորա Դեմետրիանոս եպիս-
կոպոս որ անդ էր։ Բայց գրեաց նա և վասն եպիսկոպոսին Երու-
սաղէմի. եթէ Աղեքսանդրոս, ասէ, աբանէլի, ՚ի ժամանակի իբրև
էր նա ՚ի տան բանտին՝ հանգեաւ երանութեամբ։ Բայց է նորա և
այլ թուղթ, զոր գրեաց նա այնոցիկ որ ՚ի Հռոմ քաղաքին են, զոր
տարաւ Հիպոլիտոս, նոցուն խոկ այնոցիկ։ Գրեաց և վասն խաղա-
ղութեան. և միւս ևս վասն Ապաշխարութեան. գրեաց և առ խոս-
տովանեալսն որ էին անդ, զի հառնեալ և հնազանդեալ էին մեռցն
Նեոտոսեայ։ Եւ դարձեալ նոցուն խոկ գրեաց նա թուղթ երկրորդ
իբրև գարձան յեկեղեցի։ Եւ այլոց բազմաց գրեաց նա իբրև ջոյս։
և եթող զշահ օգտութեան ամենայնի, որ միանգամ մինչև ցայսօր
ժամանակի փութով պնդութեամբ հաստատեալ ունէին զբանս
նորա։*

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

—

ԳԼՈՒԽ ԺԲ. [1] — « Ի Հռոմայեցւոց եկեղեցւոյն ». Հռոմս քաղաք է ի Կիլիկիա:

ԳԼՈՒԽ ԺԲ. [2] — « Յաւուրս մեր ի Սիկիլիա գեղերկով ». Պօրփիւռ՝ որ Տիւրացին էր ծննդեամբ և Ղանկինոսի աշակերտեալ յԱԹենս, ի լուր համբաւոյ Պլոտինեայ՝ եկեալ երթայր ի Հռոմ, և մինչդեռ ի յոյս առաջնութեան խօժանձն մարթեցոյն ի Սիկիլիա գեղերկոյ, գրեաց զոր գրեացն ընդդէմ Քրիստոնէից:

...[3] « Նուաճնեայ և Կրոնոսի ». Եւ զի Կղեմէս Աղէքսանդրացի և Որոգինէս և Եւսեբի, Թերթա և այլք՝ պաշտին բանիւք իմաստասիրաց այսոցիկ, ոչ ինչ անդէպ իցէ սակաւուք ասել Թէ ոյք ոմանք էին սոքա: Նուաճնեոս յԱպամեայ քաղաքէ Ասորւոց՝ իմաստասէր Պիւթագորեան, որպէս և Կրոնոս, Քանզի մեծաբանել զվարդապետութիւն Պղատոնի ընդ Պիւթագորայն որով և Պղատոնեանք երբեմն կոչին: Այսր Նուաճնեայ զհաւատարան յիշատակէ Կղեմէս Աղէքսանդրացի ի Յամախասպասում գիրս իւր Թէ. Զինչ այլ ոք է Պղատոն, բայց եթէ Մովսէս ի բարբառ Աւտիկեցի: Գրեաց սա վասն բարւոյ. վասն գժուարիմաց ծածկելոց բանից Պղատոնի:

ԳԼՈՒԽ Ի. [4] — « Հիպոդիատս այլոյ ուրուք եկեղեցւոյ առաջնորդ ». Ա՛ռ ինչ լաւ Եւսեբի չասել զվիճակ Հիպոդիատոյ, այլուսոքեք գիտեմք Մեթոդեայնս գոլ սոքա Արաբացւոց և վկայ:

ԳԼՈՒԽ ԻԻ. [5] — « Որ ի քառասնամեայ թագաւորութիւնն Ներա արարաք ». Թէպէտ և արտաքոյ առաքելական պատմութեան եկեղեցւոյ երկարագոյնս Թուի գեգերել Եւսեբի յառաջին գեպս կենաց Որդինեայ, սակայն ի մեծագոյն Թերևս համարելի իցէ նմա Թերութիւն չգնելն զվէճս ժողովոյ եպիսկոպոսացն զքառասնապարտութեան Որոգինեայ. և ոչ զարել և կարեւոր չառնագովութեան մանկանգրես և և Պամփիլեայ վկային զմանէ. ուր տեսիլովք առնն մեծի առ աստեղութեան ընդդէմ Նորա, անչէտ արարին գնացս ի տպատ: Յորոց ի նշխարացն հատած ինչ իբրև ի մեծէ նաւաբեկութենէ տպերակ պահեաց մեզ Փռոխս, յորում և երկին ժողովս լեալ ընդդէմ Որոգինեայ տեսանեմք. յորոց առաջինն մերժէ զնա յեկեղեցւոյն Աղէքսանդրիոյ, և երկրորդն ի քահանայութենէն և ի հերկացուցանէ: Եւ զի անգործ ձեռս վէճան, փոխանակ զի առանց օրինական ազգեցութեան առ նա և ի բացակայութեան Նորա առաւ, և զի ընդ այլ բազմաց եպիսկոպոսաց պահաւոր և հաւատնութիւն հաստատութեան Հռովմայ գահոյն:

ԳԼՈՒԽ ԼԱ. 6 — « Որ գիրս մակագրեալ Քեսմեան չորա. գրեաց ». Կարծեմ՝ ի գրչագ յետոյ ուրեմն յատկեալ այս մասն բանի, որ չիք ի Թարգմանութեան Հառափնեայ, և ոչ յիշատակութիւն ինչ յայսմանէ ի Հերթևիանայ, քանզի և ծաղուս իսկ էր արդեօք ևկեղեցւոյ պատմագրի, ի սկիզբն անդ խօսից իւրոց երբեմն զնաւարտագոյն ինչ խնդիրն յիշատակ առնել զդրոյն՝ որ զնատաց Նահ և զբազածոյից գնոցդ և զգիւթականաց արուեստից. և ի հնութենականաց անտի առնու զիւր անուն Քեսմեան՝ զի բան Սուբդատայ և Գեղարդեայ Սիւնեկազան ի կամարէ անտի Ասողկան յորջորջեալ այսպէս: Աւրնեն կրկին Ափրիկանոսք են. առաջինն՝ Աեքստոս Ափրիկանոս Լիբէացի կրօնիւք հեթանոս և հեղինակ գրոցս: Իսկ երկրորդն՝ մերս այս ժամանակագիր Յուլիոս Ափրիկանոս Պալեստինացի հաւատացեալ ի Քրիստոս:

ԳԼՈՒԽ ԼԲ. 7 — « Ակն առաւածութիւն Հօր բնակեալ ի Նմա ». Գիտաւոր մտորութիւն Եւբիւլեայ՝ զի յառաջ քան զմարգեղութիւն բանին Առաւծոյ, չկամէր Նանաչել ի Նմա գոյութիւն՝ որ և անձն սեպհական: Ակն որ ասէրն չունել Ցեառն մերոյ իւր առաւածութիւն սեպհական, այլ Հօրն իւրոյ առաւածութիւնն բնակեալ ի Նմա, մարթէր արդեօք ուղղութեամբ ասել, քանզի թէպէտ երիք անձինք են Երրորդութեան այլ մի առաւածութիւն, որով և մի Առաւած յերիս անձինս, վասն որոյ և առաւածութիւն բանին ի առաւածութիւնն Հօր: Ակն եթէ չկամիր առաւածութիւն բանին ի առաւածութիւնն Հօր: Ակն եթէ չկամիր առաւածութիւն առ և Որդւոյ, և կցորդութեամբ նորա միոյն ընդ Հօր և անուամբ լոկով Առաւած համարիր զնա. առաջնոյ մերոյ թեանն հնաւորդ լինի և այս, զի ըստ Աբեռոսին էր երբեմն յորժամ չէր Որդի, ապա ոչ յատկանական և ոչ Առաւած խոստեամբ, այլ մարդ գոլնաքեայ:

ԳԼՈՒԽ ԽԲ. 8 — « Ի լեառն Աթաբիոն ». Զայս լեառն յիշատակէ Երոզոտոս. իսկ Պաղեստինս և այլք՝ Տրոյիկոն կոչեն զնա: Որ ի մերձաւոր ձայնէն Թուի փոխեալ ապա ի լեառն Աթաբացոց:

ԳԼՈՒԽ ԽԹ. 9 — « Եւ վշտահիրք ». Ցորոց ի համարի էին բանասիրեալքն, ի տանէ և ի բնակութենէն արտաքսեալքն և մերժեալք, չգաւորք և կարօտք ոգեպահիկ կերակրոյն և այլք խեղք յանդամոց. և այլն:

ՅԱՆԿ ԵՕԹՆԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԵԱՆ

Ա. — Վասն անօրէն գնացից Դիկիոսի և Գաղղոսի։
Բ. — Թէ ոչք կացին ի Ժամանակին եպիսկոպոսք Հռովմայ։
Գ. — Թէ որպէս Կիպրիանոս Հանդերձ եպիսկոպոսօք որ ընդ նմա՝վարդապետէր նոսա եթէ զգաթէնալն ի մոլորու-թենէ հերձուածոց պարտ իցէ սրբել ապրումեցեամբ։
Դ. — Թէ ո՞րչափ ինչ Թուղթս վասն խնդրոյս այսորիկ գրեաց Դիոնէսիոս։
Ե. — Վասն որ չէտ հալածանացն խաղաղութեան։
Զ. — Վասն ազանդոյն Սաբելլեայ։
Է. — Վասն պիղծ մոլորութեան հերձուածողացն, և վասն երկ-նաւոք տեսլեան Դիոնէսեայ, և վասն կանոնաց եկեղե-ցւոյն զոր ընկալաւ նա։
Ը. — Վասն օտարութեամբ այլակրօնութեան Նովատեայ։
Թ. — Վասն անօրէն մկրտութեան հերձողացն։
Ժ. — Վասն Վաղերիանոսի և վասն հալածանացն որ ի նմանէ։
ԺԱ. — Վասն անցելոցն որ անցին ընդ Դիոնէսիոս և ընդ հաւատա-ցեալսն որ յԵգիպտոս։
ԺԲ. — Վասն որոց վկայեցինն ի Կեսարիա Պաղեստինացւոց։
ԺԳ. — Վասն որ առ Գաղլէնոսիւ խաղաղութեանն։
ԺԴ. — Վասն եպիսկոպոսացն որ ծաղկեցան ի ժամանակին։

ԴՊՐՈՒԹԻՒՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ։

Ա. — Ձառաք առաջին, վասն գնացից չարեացն Դիկիոսեայ։
Բ. — Երկրորդ, վասն եպիսկոպոսացն որ եղեն յաւուրս Նոցա ի Հռոմ քա-ղաքի։
Գ. — Երրորդ, Թէ որպէս եգ պատուէր Տրամանի զառաջինն, Ուրախանալ և-պիսկոպոսացն Հանդերձ որ էին ընդ Նմա, զի եղիցին սրբեալ մկրտու-թեամբ որ միանգամ գառնայցեն ի հերձուածոց անտի։
Դ. — Չորրորդ, Թէ ո՞րչափ Թուղթ գրեաց վասն այսորիկ Դիոնէսիոս։
Ե. — Հինգերորդ, վասն խաղաղութեան որ եգև յետ հալածանացն։
Զ. — Վեցերորդ, վասն ազանդին հերձուածոց Սերթիոյ։
Է. — Եօթներորդ, վասն պիղծ մոլորութեանն հերձուածից, և վասն տես-լեանն որ երևեցաւ յԱլեսանդրիա Դիոնէսեայ. և վասն կանոնաց եկե-ղեցւոյ զոր ընկալաւ։
Ը. — Ութներորդ, վասն երկմտութեան ազանդին Նովատեայ։
Թ. — Իններորդ, վասն անօրէն մկրտութեանն հերձուածոց։
Ժ. — Տասներորդ, վասն Վաղերիանոսի, և վասն հալածանացն զոր արար։
ԺԱ. — Մեսասաներորդ, վասն ամենայնի որ ինչ անցք անցին յայնմ ժամա-նակի ընդ Դիոնէսեա վկայողս։
ԺԲ. — Երկոտասաներորդ, վասն որոց վկայեցինն ի Կեսարիա պաղեստինա-ցւոց։
ԺԳ. — Երեքտասաներորդ, վասն խաղաղութեանն զոր արար Գաղիոս։
ԺԴ. — Չորեքտասաներորդ, վասն եպիսկոպոսացն որ առաքինեացին յայնմ ժամանակի։

ԺԵ. — Թէ ո՛րպէս վկայեաց Մարիննոս ՚ի Կեսարիա։
ԺԶ. — Պատմութիւն Աքսիրեոսի։
ԺԷ. — Վասն սքանչելեաց Փրկչին մերոյ ՚ի Պանեասա։
ԺԸ. — Վասն պղնձի պատկերին կանգնելոյ ՚ի տեղւոյն կնոջին։
ԺԹ. — Վասն սեթոսոյն Յակոբայ եպիսկոպոսի։
Ի. — Վասն ոսկական Թղթոցն Դիոնեսիոսի, յորս և կանոնագրութիւնք վասն Զատկին։
ԻԱ. — Վասն անցից որ անցին յԱղէքսանդրիա։
ԻԲ. — Վասն վերահաս հիւանդութեանն յԱղէքսանդրիա։
ԻԳ. — Վասն Ինքնակալութեան Գաղղիոնոսի։
ԻԴ. — Վասն Նեպոտեայ և ընդդէմ Նորա մոլորութեանն։
ԻԵ. — Վասն Յայտնութեան Յովհաննու։
ԻԶ. — Վասն Թղթոց Դիոնեսիոսի։
ԻԷ. — Վասն Պօղոսի Սամոսատացւոյ, և վասն աղանդոյ հերձուածոյն Նորա զոր երևեցուցեալ յԱնտիոք։
ԻԸ. — Վասն անուանի եպիսկոպոսաց որ կացին ՚ի ժամանակին։
ԻԹ. — Թէ ո՛րպէս յանդիմանեալ Պօղոս ՚ի Մալքիոնէ յերկուս, որ Սոփեստան էր երբեմն, և տարագիր եղև։
Լ. — Վասն Թղթոյ եպիսկոպոսաց Ժողովոյն ընդդէմ Պօղոսի։
ԼԱ. — Վասն Ճախող աղանդոյն Մանիքեացւոց, որ այն ինչ Նորոգ սկսաւ յայնժամ։
ԼԲ. — Որ վասն առ մերովս ժամանակաւ Ծաղկելոց եկեղեցական մարդկան. և Թէ ո՞վք ՚ի նոցանէ կացին մեացին մինչև յաւերս եկեղեցացն։

ԺԵ. — Հնգետասաներորդ, Թէ ո՛րպէս վկայեաց Մարիննոս ՚ի Կեսարիա։
ԺԶ. — Վեցտասաներորդ, պատմութիւն վասն Աքսերեայ։
ԺԷ. — Եօթնեւտասաներորդ, վասն նշանացն որ եղեն ՚ի Պենպայիս մեծամեծ գործոցն ՚ի Փրկչին մերոյ։
ԺԸ. — Ութեւտասաներորդ, վասն սեթոսոյն Յակոբու։
ԺԹ. — Իննեւտասաներորդ, վասն Թղթոցն զոր գրեաց Դիոնեսիոս վասն ժամից. և ՚ի նոսա ասաց վասն Զատկի։
Ի. — Քսաներորդ, վասն ամենայնի որ ինչ անցք անցին յԱղէքսանդրիա քաղաքի։
ԻԱ. — Քսաներորդ առաջներորդ, վասն հիւանդութեանն որ եղև յԱղէքսանդրիա։
ԻԲ. — Քսաներորդ երկրորդ, վասն արքայութեանն Գաղիոսեայ։
ԻԳ. — Քսաներորդ երրորդ, վասն Նեպտեայ. և վասն հերձուածոցն զոր արար։
ԻԴ. — Քսաներորդ չորրորդ, վասն յայտնութեանն Յովհաննու։
ԻԵ. — Քսաներորդ հինգերորդ, վասն Թղթոցն Դիոնեսիոսի։
ԻԶ. — Քսաներորդ վեցերորդ, վասն Պօղոսի շինացւոյ. և վասն հերձուածոյն զոր արար յԱնտիոք քաղաքի։
ԻԷ. — Քսաներորդ եօթներորդ, վասն անուանի եպիսկոպոսացն որ էին յայնմ ժամանակի։
ԻԸ. — Քսաներորդ ութերորդ, Թէ ո՛րպէս յանդիմանեցաւ Պօղոս, և տարագրեցաւ։
ԻԹ. — Քսաներորդ իններորդ, վասն Ճախող աղանդին մանիքեացւոց որ այն ինչ Նորոգ սկսաւ յայնմ ժամանակի.
Լ. — Երեսներորդ, վասն մարդկան մանկանց եկեղեցւոյ, որ փառաւորեցան յաւուրս մեր. և որքան մեացին ՚ի նոցանէն մինչև յաւերսդ եկեղեցացն որ յաւուրս Վալեանոսի եղև։

---

1 Յոր. էջըն։

ԴՊՐՈՒԹԻՒՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Ն Ա Խ Ե Ր Դ Ա Ն

Եւ յեւթներորդ յայս գիրս եկեղեցական պատմութեանս՝ մեծն այն Աղեքսանդրացւոց Հայրապետ Դիոնեսիոս բազմապատիկ բանիւք իւրով վաստակակից մեզ լինի, զամենայն դէպս իւրոյ ժամանակին՝ մի ըստ միոջէ մանր նկարագրել աւանդէ մեզ՝ ի Թուղթս իւր. յորոց և սկիզբն արասցուք պատմութեանս։

ԳԼՈՒԽ Ա.

Վասն աւետման գնացից Դիմոսի և Գադդոսի.

Դեկոսի և ոչ իսկ զժամանակ երկուց ամաց կալեալ զիշխանութիւնն՝ սպանաւ Հանդերձ երկու որդւովքն, և յաջորդեաց զնա Գադդոս: Ի ժամանակին կատարեալ Որոգինեայ զեւթանասունն ամ կենաց իւրոց, փոխեցաւ յաստեացս: Իսկ Դիոնեսիոս գրելով առ Հերմամմոն այսպէս ասէ վասն Գադդոսի. Այլ և ոչ Գադդոս ծանեաւ զչարիս Դեկոսի, և ոչ միտ եդ յոր ինչ վրիպեալ կործանեցաւ նա, այլ ընդ նոյն իսկ ընդ վէմն՝ որ եդեալ էր առաջի աչաց նորա, ընդ հարեալ գթեցաւ և սա: Զի իբրև յաջողեցաւ նա յարքայութեան իւրում, և ամենայն ինչ ըստ կամաց նորա ընթանայր, զարս սուբբս, որ վասն կենաց նորա և խաղաղութեան աղօթս առնէին առ Աստուած՝ հալա-

Աւասիկ ձառք. վասն գնացից չարեաց Դակիոսեայ և Գադիոսեայ.

Կալաւ զինէ Դակիոսեայ Գադիոս: Ցայս իսկ ի դպրութեան եօթներորդ պատմութեանդ եկեղեցւոյ, ի սմա գրեցեալ վաստակ կէ ընդ մէզ Դիոնեսոս եպիսկոպոս մեծ, պատմութեամբ զոր պատմեաց բանիւք և թղթովք ի մասունս, զամենայն ինչ զոր միանգամ գործեցաւ յաւուրս նորա: Բայց ես ասեմ արարիչ՝ սկիզբն բանիս այսմիկ: Դակիոս իբրև ոչ երկուս ամս կալաւ զիշխանութիւնն, սպանաւ երկու որդւովք իւրովք հանդերձ, և կալաւ զինէ նորա Գադիոս: Ցայնմ ժամանակի կատարեաց Որոգինէս վարդապետն ամ, և հանգեաւ: Արդ ի ժամանակի իբրև գրեաց Դիոնեսոս առ Հերմամն վասն Գադիոսեայ այսպէս ասաց. Զի և ոչ Գադիոս, ասէ, գիտէր զչարիսն Դակիոսեայ և ոչ նայեցաւ նա ընդ այն ինչ՝ որով յանցեաւն նա, այլ ի նոյն իսկ ի վէմն որ եդեալ էր առաջի աչաց նորա՝ գայթակղեցաւ և սա. զի իբրև յաջողութեան իւրում առաւել լինէր և իբրն նորա ըստ մտաց իւրոց գործեալ լինէին, զմարգս սուբբս որ աղօթս առնէին առ Աստուած վասն խաղաղութեան և առաջնութեան նորա՝ հալածէր նա: Արդ ընդ նոսին

ծէը, ընդ նոսին ապա և զաղօթս նոցա վասն իւր՝ի բաց յինքենէ մերժէը։

ԳԼՈՒԽ Ը.

Թէ ո՞յք կացին՝ի ժամանակին եպիսկոպոսք Հռովմայ։

Իսկ՝ի Հռովմայեցւոց քաղաքի լցեալ Կոռնելեայ զամն երիս եպիսկոպոսութեանն՝ փոխանակեաց զնա Լուկիոս. որ և զամ ամիս միայն պաշտեալ՝ և՝ի վը-ճարէն՝ի կենաց, Ստեփանոսի եղբօղ զաճառն։ Ա-սա ինքն Ստեփանոս գրեաց նախ Դիոնեսիոս վասն մկրտութեան, զի ոչ թերեւ ինչ՝ի ժամանակին յառ-նելին խնդիրք, եթէ արժան իցէ սրբել՝ի ձեռն մը-կրտութեան՝ որ միանգամ դառնայցէն՝ի հերձուա-ծոց ուստէք. զի՝ի վաղուց սովորութիւն էր հաստա-տուն վասն այսպիսեացն՝ աղօթիւք ձեռնադրութեան միայն շատանալ։

իսկ ընդ այնոսիկ հալածէը նա և զաղօթսն և զոր առնէին վասն նորա։ Զայս ինչ ասաց վասն նորա։

Երկրորդ. վասն եպիսկոպոսացն որ ետին յաւուրս նորին բազաւորութեանն՝ի Հռոմ քաղաքի։

Իսկ յետկնեցւոջ անդ հռովմայեցւոց, իբրև վարեաց զեպիսկո-պոսութիւնն Կորնելիոս զերիս ամս, Ղուկիոս կալաւ զինի նորա. և իբրև պաշտեաց և սա և զամ ամիս, ՚ի մեռանել իւրմէ՝ Ստե-փանոս ետ զեպիսկոպոսութիւնն։

Երրորդ. րե որպէս եղ զպատուէր հրամանին զաւագիսն Աքրիա-նոս եպիսկոպոսաքն հանդերձ որ էին ընդ նոսա, զի եղիցին սրբեալ մկրտութեամբ որ միանգամ դառնայցին՝ի հերձուա-ծոց անտի։

Ա՛յժմ իսկ Ստեփանոսի գրեաց Թուղթ զաւաջինն վասն մը-կրտութեան, զի խռովեցաւ անդ այս բիծ մեծ, զի թէ արժան իցէ սրբել՝ի ձեռն մկրտութեան, որ միանգամ դառնայցէն՝ի հերձուա-ծոց ուստէք. զի էր սովորութիւն զաւաջինն վասն այսպիսեաց ի-բաց, զի աղօթիւք ձեռնադրութեան միայն հաղորդին ընդ նոսա։

ԳԼՈՒԽ Գ.

Թէ ո՛րպէս Կիպրիանոս հանդերձ եպիսկոպոսօքն որ ընդ նմա՝ վարդապետէր նախ եթէ զդարձեալսն ի մոլորութենէ հերձուածոց պարտ իցէ սրբել մկրտութեամբ։

Կիպրիանոս նախ յայնժամ, որ հովիւն էր կարքեդոնացւոց եկեղեցւոյն, ոչ այլ ազգ ինչ, բայց եթէ ի ձեռն մկրտութեան սրբելով զնոսա նախ ի մոլորութենէն իւրեանց՝ ընդունել զնոսա արժան համարէր։ Իսկ Ստեփանոս, չէ պարտ չէ արժան, ասէր, արտաքոյ քան զտուչութիւն սովորութեանն՝ զոր ի նախնեացն անտի ունիմք, նոր ինչ օրէնս ի ներքս մուծանել և դժկամակեր յոյժ վասն այսորիկ։

ԳԼՈՒԽ Դ.

Թէ ո՛րչափ ինչ բուղթս վասն խնդրոյս այսորիկ գրեաց Դիոնեսիոս։

Բազում ինչ զխնդրոյս խօսեցաւ Դիոնեսիոս գրով ընդ Ստեփանոսի, յորս ի վախճանին ի դադարել արդ, ասէ, հալածանաց ամենայն եկեղեցիք ընդ ա-

Բայց զառաջինն յայնմ ժամանակի Կիպրիանոս եպիսկոպոսն եկեղեցւոյն Կարկեդոնացւոց ասէր, Թէ այլազգ ինչ չէ արժան զնոսա ընդունել, բայց եթէ սրբեսցին նոքա ի ձեռն մկրտութեան յաոաջին մոլորութենէնէ անտի։ Իսկ Ստեփանոս ասէր. Թէ չէ արժան նորոգել այլ ինչ արտաքոյ քան զտուչութիւն սովորութեանն զոր ունէին, և բարկանայր նա վասն այսր։

Զորրորդ. թէ ո՛րպէս բուղթս գրեաց վասն այսորիկ Դիոնեսիոս։

Բազում ինչ գրեաց վասն այսր Դիոնեսիոս առ Ստեփանոս, և յետոյ եղեալ նմա Թէ յորժամ յաձեան գառաքելոցն հալածանքն,

մենայն տեղիս խորշելով ՚ի նորակրօնութենէ Հռովմ տեառնց, առնեն ընդ միմեանս խաղաղութիւն։ Եւ գրէ վասն այսորիկ օրինակ զայս։

ԳԼՈՒԽ Ե.

Վասն որ յետ հայրապետութեան խաղաղութիւնն։

Գիտեաք արդ, եղբայր, զի որ յարևելեան են և որ յանդրադարձ գաւառս պատահեալ երբեմն եկեղեցիք, միաբանեցան արդ ՚ի մի միտս, և ամենայն ուրեք՝ որ միանգամ՚ի գլուխ եկեղեցեացն կան միախորհուրդք, խնդան և ուրախ լինին մեծապէս ընդ այս խաղաղութիւնն արտաքոյ քան զիւրեանց ակնկալութիւն. Դեմետրիանոս յԱնտիոք, Թէոկտիստոս՚ի Կեսարիա, Մազաբանէս՝յետ Աղեքսանդրի մահուն յերուսաղէմ՝ (այն է յերուսաղէմ), Մարինոս՝ ՚ի Տիւրոս, Հելիոդոր՝յետ Թէլիմխոբայ, ՚ի Լաւոդիկէ, Հելենոս՚ի Տարսոն և այլ ամենայն եկեղեցիք Կիլիկեցւոց, Փիլիմիանոս և ամենայն Կապադովկիա։ Չերևևելիս միայն էպիսկոպոսաց կարպեցի, զի մի երկարելով զթուղթս տաղտուկ եղիցէ քեզ։ Եւ համօրէն Ասորիք և Ագաբիա, որոց սատարեալ գրեցեքդ, և Միջագետք և

ամենայն եկեղեցիք ընդ ամենայն տեղիս գործան յերկմտութենէն անտի նեռատեաց և եղեռնագործ թշնամի ընդ միմեանս։ Գրէի իսկ այսպէս։ Եղիցես, ասէ, գիտել այժմիկ, եղբայր, եթէ եկեղեցիքն մեր ամենայն որ յառաջագոյն պատահեալ էին յարևելս, և արտաքոյ քան զնա, ամենեքեան միաբանեցան ՚ի մի միտս և ՚ի մի խորհուրդս. և ամենեքեան որ միանգամ՚կային ՚ի գլուխ եկեղեցւոյ՝ խնդան և ուրախ լինին մեծապէս ընդ այս խաղաղութիւնս որ եղև, իբրու ոչ ակն ունէին, Դեմետրիանոս յԱնտիոք, և Թէոկտիստոս՝ ՚ի Կեսարիա. և Մեղբանոս ՚ի Հռոմ՝ զի նա ինքն է երուսաղէմ, Մարինոս ՚ի Տիւրոս յետ Աղեքսանդրեայ մահուն, Հելիոդորոս ՚ի Լաւոդիկեայ յետ մահուան Թալմիդորայ, Հելմիանոս ՚ի Տարսոն, և ամենայն եկեղեցիք Կիլիկեցւոց, և Պաղեստինոս և ամենայն Կապադովկացիք. զէպիսկոպոսսս զերեւելիսս միայն անուանեցի, զի մի երկայնեցից Թուղթս, և մի եղիցի Ծանրութիւն և բազմապարիսն։ Ամենայն կողմանէ իսկ Ասորոց և Արաբացւոց, հանդերձ այնոքիւք որ էին ընդ ամենայն ժամանակս որ այժմ առաքեցէք, և ՚ի Մի-

Պետրոս և Բիւրեանիա, Գաղատիա ասէլ, ամենեքին միանգամայն ընդ ամենայն տեղիս խնդան և ուրախ են, և միաբանութեամբ և սիրով եղբայրութեան փառաւորեն զԱստուած։ Ցայսօսիկ Դիմնեսիոս։

Իսկ Ստեփանոսի լցեալ զերկուս ամս ի պաշտաման իւրում, յաջորդէ զնա Սեստոս։ Զոր սա կրեաց Դիոնեսիոս Թուղթ երկրորդ վասն միաբանութեան, յայտ առնելով զիաւրհուրդս և զդատաստան Ստեփանոսի և զայլոց եպիսկոպոսաց. և վասն Ստեփանոսի այսպէս ասէ. Գրեաց նախ, ասէ, վասն Հերենոսի, վասն Փիլիպիանոս և վասն ամենեցուն՝ որ էին ի կողմանս Կիւլիկեցւոց և Կապադովկայեցւոց և Գաղատացւոց, և ամենեցուն որ սահմանակից են ազգաց հեթանոսաց, թէ և ոչ ընդ նոսա կամէր նա հաղորդել զի վերստին սկրտէին նոքա զհերետիտոսսն։ Ցնա դու զմեծութիւն խնդրեայս. քանզի որպէս լուայ, սահմանաւ վճռեցաւ արդարև ի մեծամեծ սինհոդոս եպիսկոպոսաց[1], թէ որ միանգամ ի հերետիտոսից անտի մերձենան ի կաթողիկէ եկեղեցի, երախայացեալ նախ սկրտեցին և սրբեցին յաղտոյ անտի և ի նեխուտ հին խմորոյն և վասն այսր ամենայնի գրեցի և աղաչե-

ջագետս և Պոնտոս և Բիւրեանիա, և զի ժողովեցուք և ասացուք, և ամենեքին խնդան և ուրախ են ընդ ամենայն տեղիս. և միաբանութեամբ և սիրոյն եղբայրութեան փառաւորեն զԱստուած։ Ցայս ինչ ասաց Դիոնեսիոս։

Հինգերորդ. վասն խաղաղութեանն որ եղև յետ հալածանացն։

Իսկ Ստեփանոս երբեք եղից կատարեաց զերկուս ամս պաշտաման իւր, Քաւստոս կալաւ զնորա. առ սմա գրեաց Դիոնեսիոս Թուղթ երկրորդ վասն միաբանութեան, և եցոյց նմա վասն կամաց և գաւառականին Ստեփանոսի և այլոց եպիսկոպոսացն։ Եւ վասն Ստեփանոսի այսպէս. Եթէ առաքեաց, ասէ, յառաջագոյն վասն Հերետիտոսի և վասն Պարմենայ և զիւր ամենեցուն որ էին ի կողմանս Կիւլիկեցւոց և Կապադովկայեցւոց, յայտ է թէ և ի կողմանս Գաղատացւոց, և ամենայն հեթանոսաց որ սահմանակիցք են նոցա, որպէս զի և ոչ ընդ նոսա հաղորդէր նա վասն այսր պատճառանաց, քանզի սկրտէին, ասէ, վերստին զհերետիտոսսն։ Եւ տես գու զմեծութիւն այսր էրգոյ։ Որպէս ուսաւ ես Զմիւռնեայ, հերձուածք եղեն մեծամեծք վասն այսր ի ժողովս եպիսկոպոսաց, թէ որ միանգամ մերձենայ յաղանդոյ անտի եղիցին աշակերտել զնա, և ապա սկրտեացին և սրբեացին նոքա յաղտոյ անտի, և ի նե-

ցի վնաս։ Եւ զինի սակաւս միով թէ՝ Եւ առ սիրելիս մեր և երիցակիցս առ Դիմոթէոսոս և առ Փիլէմոն, որք յառաջագոյն խորհրդակիցք էին Ստեփանոսի, և գրեցին առ իս զերացս, նախ սակաւ մի, իսկ այժմ երկարագոյնս գրեցի առ նոսա։ Եւ այսպէս ինչ վասն ծանօթ խնդրոյս շատացի։

ԳԼՈՒԽ Չ.

Վասն աղանդոյն Սաբելեայ։

Ի նմին ամս թղթի նշանակելով և վասն աղանդոյն Սաբելի՝ որ այն ինչ յայնժամ՝ի վեր երևէր, ասէ. Վասն այժմ իսկ նորոգ խլրտելոյ աղանդոյն՝ի Պտղոմայիս Պենտապօլեայ՝ լի ամբարշտութեամբ և հայհոյութեամբ զԱստուածոյ ամենակալէ Հօրէն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և բազում անհնազանդութեամբ ընդդէմ Միածնի որդւոյ նորա և անդրանկան ամենայն արարածոց և բանին առելոյ զմարդկութիւն։ և լի դարձեալ անհնազանդութեամբ վասն Հոգւոյն սրբոյ։ Եւ իբրև յերկոցունց կողմանց եկին առ իս թուղթք և եղբարք՝ի վիճել զնդրոյս. գրեցի ես

խնամ հին խնդրոյն. և վասն այսր ամենայնի գրեցի և աղաչեցի զնա։ Եւ զինի այլոց դարձեալ. Նա և առ սիրելիսն և պաշտամնակիցսն մեր երիցունսն՝ Դիմոթէոս և Փիլէմոն, զի էին նորա յառաջագոյն խորհրդակիցք Ստեփանոսայ, որ գրեցին առ իս վասն այսր ամենայնի։ Յառաջ գրեցի ես առ նոսա սակաւիկ մի, իսկ այժմ բազմաց գրեցի եւ նոցա։ Այս ինչ վասն այսր արատոյ՝ զոր գրեցաք մեք վասն նորա։

Վկայութիւն. վասն աղանդին Սիրենեայ։

Այլ եղոյց նա այսու հանգերձ և վասն հերձուածոցն ևս տանն Սիրենեայ, որ յաւուրս նորա երևեցան. և ասէ այսպէս։ Վասն այսր աղանդի որ այժմ երևեցաւ՝ի Պտղոմայիդ Պանդոզպուց, միոք ամբարշտութեամբ լի հայհոյութեամբ զԱստուածոյ ամենակալէ Հօրէն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և բազում երկմտութիւն ունի նա։ Եւ վասն որդւոյ նորա Միածնի անգրանկանն ամենայն արարածոց, բանին որ զչեցաւ զմարդկութիւնն, և անգիտութիւն վասն Հոգւոյն Սրբոյ։ Եւ իբրև եկին յերկոցունց կողմանց առ իս, միաչև առեալ եր իմ զթուղթսն, և միաչև խօսեալ եր ընդ իս եղ-

Թուղթս՝ որչափ ինչ մարթացայ օգնականութեամբ հնարհացն Աստուծոյ Հոխագոյն վարդապետօրէն. զոր ասացի և զպատձէնս եւս բերել քեզ։

ԳԼՈՒԽ Լ.

Վասն պիղծ մոլորութեան հերեսիոփոտացն, և վասն երկնաւոր տեսլեան Դիոնիսեայ, և վասն կանոնաց եկեղեցւոյ՝ զոր ընկալաւ նա։

Եւ յերրորդ Թղթի անդ առ Փիլեմոն երէց Հռոմ. մէական եկեղեցւոյ՝ վասն մկրտութեան գրելով Վիթ. նեսիոս, այսպիսի ինչ գնէ. Իսկ ես, ասէ, ի գիրս և ի տուչութիւն հերեսիոփոտաց ընթացայ, Թէպէտ առ ժամանակ մի աղտեղեցի զանձն իմ պիղծ խորհրդով նոցա, սակայն զայս օգուտ ի նոցանէ ընկալայ ես, զի լռելեան ի միտս իմ յանդիմանեալ կշտամբեցից զնոսա, և առաւել յոյժ խոտեալ անարգեցից։ Այլ երբեմն ոմն յեղբարց անտի յերիցանց արգելոյր զիս, զի զահի հարեալ էր նա Թէ գուցէ խառնեցայց ես ի տիղմ չարութեան նոցա. և յիրաւի իսկ ասէր նա ցիս, Թէ ապականես զանձդ, որպէս և ես ինքն ի միտ ա-

բարց. գրեցի և եւս առաւել, որպէս և կարացի զօրութեամբն ջոր ես ինձ Աստուած. և վարդապետութեամբ պատմեցի ես զիրս, և զպատձէն սուցա եւս բերել քեզ։

Լօրենտոյդ. վասն պիղծ մոլորութեան հերեսիոփոտացն. և վասն տեսլեանն որ երևեցաւ յԱստուծոյ Դիոնեսեայ, և վասն կանոնաց եկեղեցւոյն զոր ընկալաւ։

Եւ յերրորդ Թղթի անդ, որ վասն մկրտութեանն է, զոր գրեաց Վիթեսեոս առ Փեղմոն երէց Հռոմ քաղաքի, գնէ զայս. Զի ես, ասէ, ի խաս և ի տուչութիւն հերեսիոփոտացն ընթացայ. բայց Թէպէտ աղտեղեցի զանձն իմ առ ժամանակ մի պիղծ խորհրդով նոցա, սակայն օգուտ զայս առի ի նոցանէ զի յանդիմանեալ կշտամբեցից զնոսա ես առաւելն, և առաւել յոյժ խոտեցից անարգեցից զնոսա։ Այլ ի ժամանակի իրքև եղբայր մի յերիցանց անտի արգելոյր զիս, զի երկուցեալ զահի հարեալ ես նա, Թէ գուցէ խառնեցայց ես ի տիղմն չարութեան նոցա, զի ասէր նա Թէ ա-

ուի, որում և տեսիլ ինչ երկնառաք 'ի վերայ եկեալ հաստատեաց զնա 'ի նմին միտս։ Ոչ եղև առ իս բան՝ որ յայտնապէս հրաման տայր ինձ ասելով. Որ ինչ 'ի քո ձեռս գայ, ընծերգիր. քանզի բաւական ես մեկնել զամենայն և քննել, զի և 'ի սկզբան անդ Հանապարհ եղև այս քեզ 'ի հաւատս։ Եւ հաւատայի ես տեսլեանս, որ հաւասարեալ միաբանէր առաքելական բարբառոյն՝ զոր առ հզօրս պատուէր տայր լինել սեղանաւորս խմաստունս [2]։ Եւ յետ այնորիկ զձեռաւից իսկ զՀերձուածոց ՀառելովՀ յաւելու այսպէս. Ցայս կանոն ես և զօրինակ յերանելոյ պաւղն մերմ 'ի Հերակլեայ ընկալայ, որ զեկեալս առ նա 'ի հերետիոլատց անտի, Թէպէտ յայտնապէս հերձեալ յեկեղեցւոյ, և Թէպէտ ոչ Հերձեալ 'ի սպառ՝ այլ առ արտաքս Հաղորդելոյ ընդ նմա, սակայն ծանուցեալոց առ օտարոտութիւն վարդապետս յաձախել, Հալածեաց զամենեսեան յեկեղեցւոյ, և աղաչանաց իսկ նոցա ոչ անսայր՝ մինչև ոչ խոստովան եղեն յանդիման ամենայն ժողովրդեանն, և պատմեցին զամենայն՝ զոր միանգամ լուան 'ի հակառակորդաց անտի եկեղեցւոյ։ Եւ այնուհետև ապա ժողովեաց զնոսա առ ինքն, և ոչ Հարկ համարեցաւ տալ նոցա կրկին կնիք, քանզի

պահանես զանձն քո. և հաստատեալ գիտացի ես Թէ Հնմարիտ ասէ Նա։ Յայնժամ երևեցաւ ինձ տեսիլ Աստուծոյ, և յերկեցայ զնա։ Բան իսկ եղև 'ի վերայ իմ, և հրամայեաց ինձ յայտնապէս և ասաց. ԵԹԷ ամենայնի որ գայցեն 'ի ձեռն քո՝ եղեցես ընԹեռնուլ զնոսա, քան զի կարող ես զոք քննել զամենեսին և յանդիմանել զի և քեզ այս պատճառք 'ի հաւատս եղեն։ Եւ ընկալայ ես զայս տեսիլ, զի հաւասարեալ միաբանին առաքելոյց զոր ասաց առ հզօրս, ԹԷ եղերբուք, ասէ, վաՀճառականաք փորձեալք. և յետ այսորիկ յաւելու և ասէ վասն ամենայն ազանգին հերձուածոցս այսպէս. Զի ես, ասէ, զայս կանոնս և զօրինակս զՀերակղեայ եպիսկոպոսի զերանելւոյ ընկալայ, զի զայնոսիկ որ մերձենային առ նա յաղանգոյ անտի որ պատաւեցան յեկեղեցւոյ. և ոչ իսկ պատաւեցին նոքա, այլ կարծեալ երևին նոքա ԵԹԷ ժողովին ընդ նոսա։ Իսկ երբև ցուցին վասն նոցա ԹԷ մերձեցան նոքա առ ոմանս յայնցանէ որ ապաւեցանէն զօտար ուսուածն, Հալածեաց զնոսա յեկեղեցւոյ։ Եւ երբև աղաչէին և խնդրէին 'ի նմանէն, սակայն ոչ ընկալաւ զնոսա մինչև խոստովան եղեն յանդիման ամենայն ժողովրդեանն, և տացին զամենայն ինչ զոր միանգամ լուան նոքա յայնցանէ որ Հակառակ կային ընդդէմ եկեղեցւոյ։ Եւ ապա ժողովեաց զնոսա առ ինքն, և

առեալ էր նոցա յառաջագոյն ի նմանէ զՀոգին սուրբ։ Երկարագոյս ապա Ձառելով զինդրոյս, յաւել թէ. Ուսայ ես՝ զի ոչ այժմ Ալիքիկեցիք միայն մուծին զայս, այլ և կանուխ ժամանակաւ եպիսկոպոսաց՝ որ էին յառաջ քան զմեզ ի բազմամարդ եկեղեցիս. և ի ժողովոյ եղբարց որ յԻկոնիոն և որ ի քաղաքն Սիւնացոց և առ այլս բազումս այսպէս Հաձոյ Թուեցեալ։ Ցորոց զվճիռս և զսահմանս չջնջել, և ի հակառակութիւն և ի գժտութիւն զնոսա արկանել ոչ ասէր ժեմ, զի գրեալ իսկ է. Մի փոխեր զսահմանս ընկերի քո, զոր եդին հարքն քո։ Ցորմէրդ Թուղթ նոքա վասն Ալրտութեան առ Դիոնեսիոս է գրեալ՝ եդեց յայնժամ ի Հռոմ, և յետ ոչ բազմաց յեպիսկոպոսութիւն քաղաքիս ամբարձեալ։ Եւ թէ աքանչելի էր սա և կորովի բանիւք ի վկայութենէ անտի Դիոնեսեայ Աղեքսանդրացւոց մարթ է գիտել։ Ապա ի Թղթին յայնմիկ՝ որ առ նոյն ինքն երէցն վասն Նովատեայ յիշեցուցանէ նա այսպէս։

ոչ պիտոյ էրև ասել նոցա կինք քանզի առեալ էր նոցա ի նմանէն յառաջագոյն կինք սուրբ։ Բայց գարձեալ Հմուտ և տեղեակ էր նա Ձառիցն առաւել. և յաւել և ասաց այսպէս. Զի ուսայ ես, ասէ, զայս, թէ ոչ այժմ ափրիկացիքն միայն մուծին զայս, այլ և յառաջագոյն ի ժամանակս եպիսկոպոսացն որ էին յառաջ քան զմեզ յեկեղեցիսն որ լի են մարդկամբ, և ի ժողովս եղբարց Ամրոց որ էրն յԻկոնիա հանդիպ այլովք։ Նա և բազմաց իսկ Հաձոյ եղև այս, զի զկամն նոցա որ չջնջէ ի հակառակութիւն արկանէ զնոսա յայնմիկ, զի ոչ միաբանի նմա. ասացեալ իսկ է Թէ մի փոխեր զսահմանս ընկերի քո, զոր եդին հաստատեցին հարքն քո։ Բայց մի ի Թղթոյ անտի նորա է վասն Ալրտութեան գրեցաւ առ Դիոնեսիոս որ էր ի Հռոմ քաղաքի, զի յայնմ ժամանակի երէց էր նա, որ յետ սակաւ ժամանակի կալաւ զեպիսկոպոսութիւն նոցա. զի ի նմանէ Ալք Ալրթեամբ գիտել Ճանաչէլ, Թէ որպիսի վկայութիւն վկայէր ի վերայ նորա Դիոնեսիոս աղէքսանդրացի, զի է նա աքանչելի և կորովի բանիւք։

ԳԼՈՒԽ Ը.

Վասն օտարոտնուն այլակրօնուբեան Նովատեայ։

Ջնովատեանս, ասէ, յիրաւի ատեմք մեք, փոխա-նակ զի պատառեաց նա զեկեղեցին, և ձգեաց զոմանս յեղբարց յամբարշտութիւն և՝ ի հայհոյութիւն. և վարդապետութիւն անսուրբ և անարժան զՍտուծոյ՝ ի մէջ եմոյծ. և զքաղցրն և զամենողորմն զՔրիստոս՝ որպէս անողորմ զրպարտեաց. և՝ ի վերայ այսոցիկ ամենայնի զմիրտութիւնն սուրբ խո-տեալ անարգէ [3], և կործանել զՀաւատս և զխոստո-վանութիւն որ յառաջ քան զայն, և փախուցանէ յանձանց նոցա սպառազուսն զՀոգին սուրբ [4], թէ-պէտ և էր յոյս ինչ մնալոյ՝ ի նոսա, կամ անդրէն վե-րըստին դառնալոյ։

Որբորդ. վասն երկմտութեան ապականին Նեստեայ։

Բայց գրեաց և նմա հանդերձ այլովք յիշեցուցանել նմա և վասն Նեստեայ այսու բանիւք, թէ զնեստոս յիրաւի, ասէ, ա-տեմք մեք զնա, փոխանակ զի պատառեաց նա զեկեղեցի, և ձգեաց զոմանս յեկեղեցւոյ յամբարշտութիւն և՝ ի հայհոյութիւն. և՝ ի վերայ Աստուծոյ ապանդ անարժան քարոզեաց և՝ ի վերայ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի քաղցրութեանն զրպարտէ զնա, որպէս թէ չէ նա ողորմած. և հանդերձ այսու ամենայնիւ զոր զրկէ՝ զա-նայ նա և զմիրտութիւնն սուրբ, և կործանէ նա զՀաւատս և զխոս-տովանութիւնն որ յառաջ էր քան զնա, և փախուցանէ յանձանց իւրեանց սպառազուսն զՀոգին Սուրբ. թէպէտ և էր՝ ի նոցա յոյս մնալ և դառնալ առ անձինս իւրեանց։ Եւ միւս ևս գրեալ է նորա առ Քսեստոս եպիսկոպոս Հռոմ քաղաքի, զի՝ ի նմա ասացեալ է նորա բազում ինչ վասն հերձուածոյն, և դնէ զիրսն որ գործեցան առ նմա այսպէս։

ԳԼՈՒԽ Թ.

Վասն աւօրէնի մկրտութեան հերետիկոսաց։

Ի Դիոնիսեայ և ի հինգերորդ Թուղթ առ Ակստոս եպիսկոպոս Հռոմայ գրեալ յորում բազում ինչ զհերետիկոսացն խօսելով՝ ինչ մի որ առ նովաւ հանդիպեալ պատմէ այսպէս. Եւ յիրաւի խորհրդակից լինել ինձ, եղբայր, խորհրդովք քով ազաւէտ, և գիտել զկամս քո խնդրեմ՝ զի դիպեցաւ ինձ գործ մի այսպիսի, և զահի հարեալ երկնչիմ եթէ գուցէ յանցանիցեմ։ Զի ոմն յեղբարց անտի հաւատացեալց ժողովելոց ընդ մեզ, կանուխ իսկ և յառաջ քան զմի ձեռնադրութիւն, և որպէս Թուխ ինձ, և քան զեպիսկոպոսութիւն երանելոյն Հերակղեայ՝ յեկեղեցի Տեառն և ի ժողովուրդ նորա հաղորդեալ, եկն առ իս լալով՝ զի դեպ եղև նմա առաջի գտանել մկրտութեան հերետիկոսացն, և լսել զհարցմունս նոցա և զպատասխանիս. և ողբայր նա զանձն իւր և անկանէր յոտս իմ և խոստովանէր և երդմամբ հրաժարէր ի մկրտութենէն՝ զոր ի հերետիկոսաց ընկալեալ էր. քանզի չէք բնաւ ամենևին, ասէր, հաղորդութիւն ընդ այս և ընդ այն մկրտութիւն. և Թէ լի է այն ամբարշտութեամբ և հայհոյութեամբ։ Եւ Թէ վըշ-

Ի ևևերորդ. վասն աւօրէնի մկրտութեանն հերետիկոսաց։

Դարձեալ ասէ այսպէս. Եթէ, եղբայր, ձմեռաթիւ խրատ խընդրէիք ի քէն վասն այսպիսւոյ իրաց որ մերձեցան առ իս, զի երկուցեալ զահի հարեալ եմ՝ եւ եթէ գուցէ յանցանիցեմ. զի եղբայրս մի հաւատացեալ յայնցանէ որ ժողովեալ են ընդ մեզ, որ Թուխ Թէ յառաջագոյն է նա և քան զձեռնադրութիւնն զոր առեալ է իմ. զի ինձ այնպէս Թուխ, Թէ միշտ կացեալ էր հերակղեայ եպանեղեայ, խառնեալ էր նա ի ժողովուրդ հեկեղեցւոյ. և գիտեցաւ նա ընդ այնոսիկ որ արդս մկրտին. և լուաւ զՀարցումն և զասելապատասխանուէն, և մերձեցաւ առ իս և լայր և ողբայր ի վերայ անձին իւրոյ, և արկաներ զանձն իւր առ ոտս իմ, և խոստովանէր Թէ զնմբդ մկրտեցաւ ի հերետիկոսաց անտի, և ասէր Թէ չէք հաղորդութիւն բնաւ ամենևին այնմ մկրտութեանն և այսմ մկրտե-

տացեալ է նա յոյժ արդ յանձն իւր, և չիք նման հա-
մարձակութիւն համբառնալոյ զաչս իւր առ Աս-
տուած, զի ի գործս և ի բանս անօրէնութեան նո-
ցա խառնեցաւ. վասն որոյ և աղաչէր այսմ մաքուր
աւազանին սրբութեան հանդիպել և ընդունելու-
թեան և պարգեւի չնորհաց։ Ցոր ոչ իշխեցի ես առ-
նել, զի ասացի՝ բաւական է նման հանապազօրեայ հա-
ղորդութիւն առ այս։ Զի որոյ գոհութեան աղօթից
լսող լեալ էր ստէպ, և ընդ եկեղեցւոյն զամէնն պա-
տասխանեալ, որ սրբոյ սեղանոյն յանդիման կացեալ
և զձեռս իւր ընդդէմ սուրբ կերակրոյն սփռեալ լըն-
դունակութիւն և ի ձաշակ, և մարմնոյ և արեան
Քրիստոսի մերոյ հաղորդ գտեալ ընդ երկար ժամանակս,
ոչ համարձակեցայ ես զամենայն եղծեալ ի նմա՝ ի
գլխոյ անտի նորոգ սկսանել. այլ հրաման ետու քա-
ջալերել և հաստատուն հաստատով և յուսով բա-
րեաւ մերձենալ ի հաղորդութիւն սրբութեան։ Իսկ
նա ոչ դադարէր ի լալոյ, և դողայր մատղել ի սեղան,
և հաղիւ յորդորեալ հաւանեցուցանէաք զնա յա-
ղօթս կալ ընդ մեզ։ Բայց յասացելոցս է նորա և այլ
թուղթ վասն մկրտութեան՝ լեկեղեցւոյն և լիւր ա-
նուն ուղղեալ առ Սեստոս՝ և առ եկեղեցին Հռոմ-
մայ, յորում վասն առաջարկեալ ինդրոյն երկարա-
գոյնս ձառէ։ Ի դարձեալ նորա և այլ թուղթ առ

Թէանս, զի այն ամբարշտութիւն լի է և հայհոյութիւն. և ասէր
Թէ յոյժ վշասացեալ է նա յանձն իւր, և չիք նմա համարձակու-
թիւն համբառնալ զաչս իւր առ Աստուած՝ ի բանից և ի գործոց
անարժանութենէ, զի խառնեցաւ ի նոսա. և վասն այսորիկ ասա-
չէր նա արժանի լինել այսմ պարզ սրբութեան և պարգեւի չնոր-
հացն։ Զաչսն իսկ զայս ես ոչ իշխեցի առնել, զի ասացի՝ բաւական է
հաղորդութիւն այնր ամենայնի ժամանակաւոր՝ որ խառնեցաւն
ընդ նա. զի լուաւ նա զի մատչէր պատարագ, և ես պատասխանի
և ասաց՝ ամէն. և եկաց առաջի սեղանոյն, և սփռեաց զձեռս իւր
առաջի ընդդէմ սուրբ կերակրոյն, և էառ զմարմին և զարիւն
տեառն մերոյ, և կցորդեցաւ ընդ նմա ժամանակս բազումս։ Եւ ոչ
համարձակիմ ես վերստին զարձուցանել զնա, այլ հրաման ասյլ
ես նմա քաջալերել զնա և Հնազանդ յուսով բարեաւ
մերձենալ ի կցորդութիւն սրբութեանն։ Իսկ նա ոչ դադարէր ի
լալոյ և դողայր մատչել ի սեղանն, և հազիւ հաւանեցուցանէաք
զնա. յոյժ եկաց նա ընդ մեզ յաղօթս. և հանդերձ այսու թղթովք
զոր ասացի ես է այլ մին ես թուղթ նորա զոր գրեալ է առ Գիո-

Դիմնեսիոս հռովմայեցի վասն Լիկիանոս։ Եւ վասն այսոցիկ այսչափ։

ԳԼՈՒԽ Ժ.

Վասն Վաղերիանոսի, և հալածանացն որ ՚ի նմանէ։

Իսկ տուընն Գաղղեան իբրև ոչ ինչ աւելի քան զամս երկուս կացեալ յիշխանութեան բնաջինջ բարձաւ ՚ի միջոյ, և կալաւ զթագաւորութիւնն Վաղերիանոս Գաղիներեաւ որդւով իւրով հանդերձ։ Եւ զինչ դարձեալ վասն սորա աւանդէ Դիմնեսիոս՝ մարթիմբ ՚ի թղթոյ անտի նորա առ Հերմամոն ուսանել, յորում և պատմէ նա օրինակ զայս։ Նմանագոյնս, ասէ, յայտ նեցաւ Յովհաննու. Ցի տուաւ, ասէ, նմա բերան որ խօսի զմեծամեծս և զհայհոյութիւն։ և տուաւ նմա իշխանութիւն զամիսս քառասուն և երկու. և զարմանալ արժան է թէ զիարդ երկոքին իսկ այսոքիկ կատարին ՚ի Վաղենտիանոս։ Այլ յառաջ քան զամենայն միտ դնել է, թէ որպէս քաղցր էր նա և բարեբար առ ծառայս Աստուծոյ. զի ոչ ոք նախ քան զնա ՚ի թագաւորաց, և ոչ նոքին իսկ որք յայնմանէս

Նէռոս, այն որ էր ՚ի Հռոմ քաղաքի՝ վասն Պետրոսեայ. և վասն այնց իսկ գրեցան այժմ առնոյն։

Տասներորդ. վասն Վաղերիանոսի։ Եւ վասն հալածանացն զոր արար։

Իսկ տուընն Գաղղեան իբրև ոչ երկուս ամս ապառ կացին ՚ի թագաւորութեան, ընկեցան երկիր յայիսաբոյն ասաի յայսմանէ. և կալաւ զթագաւորութիւնն Վաղերիանոս Գաղիներեաւ որդւով իւրով հանդերձ։ Բայց գարձեալ թէ զինչ գրեաց և վասն սորա Դիմնեսիոս՝ կարելի՛ է ուսանիլ ՚ի թղթոյ անտի յայնմանէ, զոր գրեաց առ Հերմամոն. զի ՚ի նմին պատմէ այսպէս. Եթէ Յովհաննու, ասէ, այսպէս յայտնեցաւ վասն սորա և ասաց, թէ տուաւ նմա բերան՝ որ խօսի զմեծամեծս, և տուաւ նմա իշխանութիւն տալ մի և միայն երկուս. երկոքին իսկ սորա կատարին ՚ի վերայ Վաղերիանոսի։ Զարմանալ իսկ առաւել ընդ այն ինչ որ յառաջ քան զայս էր և խորհէր թէ զիարդ էր նա յառաքագոյն. զի էր նա քաղցր և սիրուն էին միաբանք նորա առ ծառայս Աստուծոյ. զի և ոչ միաւ թա-

քրիստոնեայս լինել ասէին[5], այնպէս ողջք մարդասիրութեամբ ազ խաղաղութեան առ նոսա կարգառեաց, որպէս սա ի սկզբան անդ ինքնակալութեան իւրոյ։ Եւ ամենայն տուն նորա լի էր աստուածապաշտ որերով, և էր իրրև եկեղեցի Աստուծոյ. այլ հաւատ նեցոյց և շրջեաց զնա յառաջին մտաց իւրոյ վարդապետն և նախիշխան կախարդացն Եգիպտացւոց[6], և հրամայեաց նմա կոտորել և հալածել զարս սուրբս և անարատս իրրև հակառակամարտս և արգելս պիղծ և զազիր դիւթութեանց։ Քանզի էին և են իսկ արգ կարողք նորա մեծ առնութեր գտանելով՝ կամ երևելով իսկ միայն, փչմամբ և բարբառով յրուել զնոհրեական անօրէն դիւացն զնենգութիւն։ Կատարողութիւնս անմաքուրս, մեռքենաւոր արուեստս պիղծս և նուիրագործութիւնս անբարիս ուսուցանէր նա նմա. տալ խողխողել զմանկունս եղկելիս, զոհել զորդիս ծնողաց եղկելեաց. հերձուլ զփորոտիս նորածին տղայոցն, և յօշոյշ կոտրել և պատառել զստեղծուածս Աստուծոյ. որպէս եթէ ի ծագ բարեբաստութեան ժամանեսցի նա նոքօք։ Եւ ի վերայ այսոցիկ ամենայնի ածէ նա ասել եթէ՝ Դեղեցիկս Մարդիգաւորացն եղեն յառաջ քան զնա. չինութեամբ և պատուով ունէր զնոսա այպէս։ Նա և ոչ այնքան օրք երևեցան, զի էին նորա քրիստոնեայք. այնպէս կալան զնոսա. որպէս նա ընդունէր զնոսա զառաջինն. և իրրև զընդանիս և զբարեկամս, և ամենայն տունն նորա լի էր պաշտնեից Աստուծոյ, և էր նա եկեղեցի Աստուծոյ։ Բայց հանճարեաւ և հաւանեցոյց զնա շրջել յառաջին մտաց անտի զոր ունէր նա, այր մի եգիպտացի կախարդ և գլուխ ժողովրդականն. և հրամայեաց նմա թէ արք սուրբք և արդարք հալածեսցին և կոտորեսցին իրրև մարդք մեղաւորք և պատուհասք կախարդաց զազրաց և պղծոց։ Նա և էին իսկ կարող և կարէին որ միեզեռս կայրին և երևէին բանիւք բերանով իւրեանց միայն խափանել զնենգութիւն չարութեանն գիւաց տեառապրծաց, գործք որ չէին սուրբ, և զարուեստ գիտութիւնս պղծութեանց, և զզնչս անբարիս ուսուցանէր նա նմա գործել, և պատանիել զոգւոյս տառապեալս, և զոհել զորդիս զնոցն տառապելոց, և հեղձուլ զփորոտիս մանկունս որ այն ինչ ծնեալ էին, և կոտրել մատունս մատունս զստեղծուածս Աստուծոյ. զի իրր և եթէ ի չեռն այսց եղիցին նորա ի չինութիւն։ Եւ գարձեալ յաւելու և ասէ։ Այգ բարւոք պատիւս մատոյց նոցա Մակաբեանս զարթայութեանն զայնր զոր յաւատացեալ էին ի վերայ նորա, այն որ ասի վասն նորա՝ թէ ամենայն իւիք էր նա թագաւոր. բայց ինչ որ արժան էր հաւատակաց՝ նա ոչ

*Նոս վասն յուսացեալոյ Թագաւորութեանն Հնորհս մա-
տոյց այնոցիկ՝ և որ ի սկզբանէ անտի գանձապետ հա-
մարեալ էր Թագաւորին, ոչ պատշաճաւոր ինչ գան-
ձապետութեանն և ոչ օգտի ինչ յաղագս հասարա-
կաց խորհեցաւ նա, այլ անկաւ ընդ անիծիւք մար-
գարէական բանին. Թէ Վայ դոցա որ մարգարէանան
ի սրտից իւրեանց . . . և զհասարակաց խնամակալու-
թիւնն Աստուծոյ ոչ տեսանէին։ Ոչ ոչ ի միտ էառնու
զՀանուրց հոգաբարձութիւնն ընդ տիեզերս, և ոչ
երկեաւ ի դատաստանաց անտի այնորիկ, որ յառաջ
քան զամենայն է, և ի վերայ ամենայնի և ընդ ամե-
նեսին. և վասն այսորիկ եղև նա Թշնամի կաթողիկէ
եկեղեցւոյ Նորա, և զրկեաց և զլացաւ և օտարացոյց
զանձն իւր յողորմութենէն Աստուծոյ. և յոյժ հեռի
եղև ի փրկութենէ անտի իւրմէ, Հշմարտելով ի սմին
զնշանակ անուան իւրոյ՝։ Եւ յետ այլոց բանից յարէ.
Եւ զի Վաղերիանոս յայսոսիկ ածաւ գործս ի Մաք-
րինեայ, վասն այսորիկ և ի նախատինս և ի Թշնա-
մանս անարգանաց մատնեցաւ նա, որպէս և ասացաւն
առ Եսայի Թէ՝ Ինքեանք ընտրեցին զՀանապարհս իւ-
րեանց, և զգաբշէլիս իւրեանց՝ զոր անձինք նոցա ա-
խորժեցին։ Եւ ես առից ի ձեռն զխաբէութիւնս նո-
ցա, և ըստ մեղաց նոցա Հատուցից նոցա։ Իսկ Մաք-
րինոս շամբչեալ քան զարժանն իւր զՀետ իշխանու-*

*խորհէր, այլ գատապարտեցաւ նա բանիւ մարգարէութեան որ
ասացեալ է՝ Թէ վայ այնոցիկ իցէ որ մարգարէանան ի սիրտս իւ-
րեանց, և բնաւ ոչ երբէք նոցա. զի ոչ գիտաց նա զՀոգեպատճա-
Թիւնն զայն որ ի վերայ ամենայնի սփռեալ է։ Եւ ոչ երկեաւ նա
ի դատաստանաց անտի այնորիկ որ էն յառաջ քան զամենայն և
յամենայնի և ընդ ամենեսին. և վասն այսորիկ եղև նա Թշնամի կա-
Թողիկէ եկեղեցւոյ Նորա, և զրկեաց և զլացաւ, և օտարացոյց
զանձն իւր սիրելեաց Աստուծոյ, և Հալածեաց զնա ի կենաց իւ-
րոց ժամանակս բազումս, և յայսս Հատատացոյց զանուն իւր։ Եւ
դարձեալ Հանգերձ այլ վէպ ասաց միւսանգամ. Եթէ Վաղերիանոս
ցանկացաւ գալ յայսմանէ յայս. և տուաւ նմա ի Թշնամանս ա-
նարգանաց և ի նախատինս. որպէս և ասացեալ է առ Եսայի. Թէ
Նորա Հաձեցան ընդ Ճանապարհս իւրեանց. և ընդ կուռս կամաց
անձանց իւրեանց. և Ես Հաձեցայց ընդ խաչառականս նոցա. և
Հատուցից նոցա զմեղս անօրէնութեանս իւրեանց։ Իսկ նա այսպէս
բերբ չարքարութեանն արատոյ քան զարժանն. և քանզի ոչ կա-
րէր նա զՀնարաւ զղարդ արքայութեանն, զի երկուս որդիս՝ իբրև*

Թէոան. և զի չկարէր զանձամբ առնուլ զպարտս արքայական, զի խեղ էր անդամով. զերկուս որդիս իւր՝ զի ընկալցին զՀայրենի մեղս, կացոյց ի տէրութեան. և կոտարեցաւ ի նոսա յայտնապէս կանխասաց բան Տեառն Թէ՝ Որ հատուցանեմ զմեղս Հարց՝ որդւոց, յերից և ի չորս ազգս ատելեաց իմոց։ Ցի զչարաչար ցանկութիւն իւր, յոր յաջողեցաւն՝ զգլխով որդւոց իւրոց ածեալ, և զչարութիւն իւր և զատելութիւնն առ Աստուած գնոքօք էարկ։ Վասն Վաղերիանոս այսչափ ինչ Դիոնեսիոս։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Վասն անցիցն որ անցին ընդ Դիոնեսիոս և ընդ հաշատացեալսն՝ որ յԵգիպտոս։

Վասն Հալածանացն՝ որ յարեան յաւուրս նորա գառնութեամբ, և Թէ քանի՛ Համբեր նա վասն աստուածպաշտութեան Հանդերձ նոքիմբք որ ընդ նմա էին, յոյցանէն քանիք նորա գրեալ առ Գերմանոս ոմն եպիսկոպոս՝ որ չարաչոյն կամէր լինել զնմանէ, և ասէ այսպէս. Տագնապ է ինձ արդարև Թէ գուցէ ի հիմարութիւն և յանզգամութիւն անկանիցիմ, զի

ազգականեալ էր մարմնին իւրեանց, կացոյց զնոսա, և ընկալան զմեղս Հարց իւրեանց. զի յեկեղեցիս կատարեցաւ ի վերայ նոցա բանն Աստուծոյ զի ասէ. Որ հատուցանի զմեղս Հարց յորդիս յերից և ի չորս գարս ատելեաց իմոց. զի զչարաչար ցանկութիւն իւր որ յաջողեալ էր նոքօք, զնոսա ի վերայ գլխոյ որդւոց իւրոց, և ի նոսա ընկալաւ զչարութիւն իւր, և զատելութիւնն զոր ունէր առ Աստուած։ Վասն Վաղերիանոսի զայս ինչ գրեաց Դիոնեսիոս։

Մեհատաւևերորդ. վասն ամենայնի որ ինչ միանգամ անցք անցին յայնմ ժամանակի ընդ Դիոնեսիոս յԵգիպտոս։

Վասն Հալածանացն որ յարեան յաւուրս նորա գառնութեամբ. Թէ քանի՛ Համբերեաց նա վասն աստուածպաշտութեան Հանդերձ այնոքիմբք որ էին ընդ նմա. բանիք նորա որ ցուցանեն մեզ զոր գրեաց նա առ Գերմանոս եպիսկոպոս, որ կամէր նա խասել զնմանէ չարաչար Հայհոյութիւն ասաց իսկ այսպէս. Եթէ ձշմարիտ, ասէր, յիմարութիւն նեղիմ ես անկանել, զի բանագատիմ

բռնադատիմ ես պատմել ՚ի հարկէ զսքանչելիս տեսչութեանս Աստուծոյ յուսկեալ առ մեզ. այլ զի գրեալ է թէ՝ Զխորհուրդ Թագաւորի բարւոք է ծածկել, իսկ զգործս Աստուծոյ յայտնել փառաւոր. և զի բուռն է ինձ ՚ի Գերմանոսէ՝ գամ ես ի բանս։ Եկի ես առ Եմիլիանոս, ոչ եթէ ես միայն, այլ և երիցակից մեր Մաքսիմինոս ընդ իս, և սարկաւագունք Փաւստոս, Նեսերիոս և Գերեմիոս. և ՚ի Հռոմէայ կեղբարց անտի ոմն եմուտ ընդ մեզ։ Ի սկզբան անդ չասաց ինձ Եմիլիանոս թէ՝ Մի՛ ժողովս գումարեր. զի աւելի ինն Թուէր նմա այն. այլ զվերջինն կանխեաց ասաց նա, զի ոչ վասն այնր ինչ փոյթ էր նմա թէ զայլս ՚ի ժողով գումարիցեմ ես, այլ թէ զի մի քրիստոնեայք իցեն։ Եւ հրամայէր նա ինձ լռել դադարել յայնմանէ, զի Թուէր նմա թէ յորժամ ես գառնայցեմ, գան զկնի իմ և այլք։ Եւ ես առ Ամֆեանոս. և ոչ եթէ ես միայն, զի եին ընդ իս պաշտօնակիցք մեր Մաքսիմինոս երէց, և սարկաւագունք Փաւստոս, Նեսերիոս և Գերմանոս։ Բայց եմուտ ընդ մեզ մի ոմն յեղբարց որ էր ընդ մեզ ՚ի Հռոմ քաղաքէ։ Իսկ Ամֆեանոս ոչ ասաց ինձ զառաջինն, թէ մի լինիր դու ժողովել զի այս աւելի ինն Թուէր նմա. այլ զայն զվերջն ասաց նա նախ, զի ոչ վասն այսր միայն փոյթ էր նմա՝ թէ մի եղիցուք տապտել զայլս. այլ և վասն այսր զի մի եղիցուք մեք քրիստոնեայք։ Եւ հրամայեաց նա լռել գադարել յայնմանէ, զի Թուէր նմա թէ յորժամ ես գառնայցեմ, գան զկնի իմ և այլք։ Բայց ես եւս նմա պատասխանի արպէս և արժան էր. եթէ Աստուծոյ արժան է անապատ առաւել քան մարդկան։ Եւ վկայեցի ես առաջի երեսաց նորա, թէ ես Աստուծոյ միայն երկիւղագանձեմ այն որ նա միայն է առանձինն, և ոչ այլ ումեք. և ոչ երբեք փոփոխիմ ես և կամ գադարեմ յայտնել, զի եմք քրիստոնեայք։

ես ՚ի հարկէ պատմել զսքանչելի տեսչութիւնն Աստուծոյ որ եղև ՚ի վերայ մեր. այլ քանզի գրեալ է, թէ զխորհուրդ Թագաւորի բարւոք է ծածկել, իսկ զգործս Աստուծոյ յայտնել՝ պարտ է, վասն այսորիկ պատմեցից վասն բռնութեանն Գերմանեայ։ Արդ եկի ես առ Ամֆեանոս. և ոչ եթէ ես միայն, զի եին ընդ իս պաշտօնակիցք մեր Մաքսիմինոս երէց, և սարկաւագունք Փաւստոս, Նեսերիոս։ Բայց եմուտ ընդ մեզ մի ոմն յեղբարց որ էր ընդ մեզ ՚ի Հռոմ քաղաքէ։ Իսկ Ամֆեանոս ոչ ասաց ինձ զառաջինն, թէ մի լինիր դու ժողովել զի այս աւելի ինն Թուէր նմա. այլ զայն զվերջն ասաց նա նախ, զի ոչ վասն այսր միայն փոյթ էր նմա՝ թէ մի եղիցուք տապտել զայլս. այլ և վասն այսր զի մի եղիցուք մեք քրիստոնեայք։ Եւ հրամայեաց նա լռել գադարել յայնմանէ, զի Թուէր նմա թէ յորժամ ես գառնայցեմ, գան զկնի իմ և այլք։ Բայց ես եւս նմա պատասխանի արպէս և արժան էր. եթէ Աստուծոյ արժան է անապատ, առաւել քան մարդկան։ Եւ վկայեցի ես առաջի երեսաց նորա, թէ ես Աստուծոյ միայն երկիւղագանձեմ այն որ նա միայն է առանձինն, և ոչ այլ ումեք. և ոչ երբեք փոփոխիմ ես և կամ գադարեմ յայտնել, զի եմք քրիստոնեայք։

Բեփրոյ։ Լուսաւորեալ զանա զոր երկուստեք խօսեցաք՝ որ և արձանագրեալ կայ ի վէհս առենականս։ Իբրև մտին Դիմնեսիոս, Փաւստոս, Մաքսիմոս, Մարկեղոս և Բեբեմեն, խօսել սկսաւ դատաւորն Եմիլիանոս և ասէ. Ես ի բանից իսկ բերանոյ խօսեցայ ընդ ձեզ վասն մարդասիրութեան տէրանց մերոց, որով գնան նոքա ընդ ձեզ. ետուն նոքա ձեզ զիշխանութիւն կենաց, եթէ կամիցիք դառնալ յօրէնս բնութեան, և երկիր պագանել դիցն՝ որ ողջ և կանգուն պահեն զթագաւորութիւն նոցա, և մոռանալ ձեզ զայնոսիկ՝ որ արտաքոյ են քան զբնութիւն։ Արդ զինչ ասէք վասն այսր. ինձ այսպէս թուի, թէ ոչ լինիջիք զլացողք մարդասիրութեան նոցա, զի ի լաւ անդր զձեզ յօրդորեն։

Պատասխանի արար նմա Դիմնեսիոս և ասէ. Ոչ ա մենայն մարդիկ զնոյն դիս պաշտեն, այլ զայնոսիկ միայն զոր և յաստուածս համարիցին. իսկ մեք միոյն Աստուծոյ արարչին ամենայնի, որ ետ զթագաւորութիւնս աստուածասիրացն քաջաց արանց Վաղերիանոս և Գաղիէնոսի, զնա պաշտեմք և նմին երկրպագանեմք. և նմա հանապազօր վասն արքայութեան ձերոյ, զի անշարժ կայցէ միասցէ՝ աղօթս մատուցանեմք։

Դատաւորն Եմիլիանոս ասէ. Իսկ ո՞ արգելու զձեզ,

ես վասն այսորիկ հրամայեաց նա մեզ երթալ ի գեղ մի յանապատ, զի անուն էր նորա Կիպրոս։ Լուսաւորչ զանա զայս զոր խօսեցան յիշխողացդ կռմանց, որ եկեալ էն ի վէհսս և ի դատաստիսն։ Իբրև մարի Դիմնեսիոս և Փաւստոս և Մաքսիմոս և Մարկեղոս և Բեբեմեն. Աւրիանոս՝ որ վարիչ զգաստաւորութիւնն, խօսել սկսաւ և ասէ. Ես առանց Թզնոյ ասացի ձեզ վասն մարդասիրութեան տէրանցն մերոց, զի նոքա գնան նոքա առ ձեզ։ Զի նոքա ետուն զիշխանութիւն կենաց, թէ կամիցիք դուք գառնալ յօրէնս բնութեան, և երկիրպագանել դիցն որ ապրեցուցանեն զթագաւորութիւն արքայութեան նոցա, և մոռանալ ձեզ զայնոսիկ որ արտաքոյ են քան զբնութիւն։ Արդ զինչ ասէք դուք վասն այսր. զի ինձ այսպէս թուի, թէ ոչ լինիջիք դուք զլացողք մարդասիրութեան նոցա. վասն զի յորդորեն նոքա զձեզ գալ յառաւելութիւն փառաց։ Պատասխանի ետ նմա Դիմնեսիոս և ասէ. Ոչ ամենայն մարդ երկիրպագանէ ամենայն դից, այլ մարդք այնոցիկ որոց կարծեն։ Իսկ մեք միոյ Աստուծոյ արարչին ամենայնի, այնմ որ ետ թագաւորութիւն երկիւղածաց իւրոց Վաղերիանոսի և Գաղիոսեայ, նմա երկիր պագանեմք, և նմին աղօթս մատուցանեմք հանապազօր

եթէ իցէ Աստուած, Հանդերձ այլովք աստուածովք բնութեան և սմա երկիր պագանիցէք. զի դիցն հրաման եղև ձեզ երկիր պագանել, դիցն այնոցիկ՝ զորս ամենայն մարդիկ գիտեն։

Դիմնեսիոս ասէ. Մեք այլևս՝ երկիր ոչ պագանեմք։ Եմիլիանոս ասէ. Ցեսանեմ աւադիկ զձեզ զի ապաշնորհք էք և անզգայք առ քաղցրութիւն մարդասիրութեան օգոստափառ ինքնակալացս մերոց. վասն այսորիկ ոչ ինաօչիք դուք՝ի քաղաքիս, այլ ընկեցից զձեզ՝ի կողմանս Լիբէացւոց՝ի տեղին որ անուանեալ կոչի Քեփրոյ. զի զայն տեղի ընտրեցի ես ձեզ՝ի հրամանէ Թագաւորաց. և մի եղիցի ձեր իշխանութիւն բնաւ ամենևին, ոչ ձեր և ոչ այլոց առնել ժողովս, կամ մտանել յայս որ կոչէք դուք նոցա կենաւրիայ՝ այսինքն, տեղի մարտիրոսաց՝ Թէ ոք * գայցէ որ երթայցէ յայնպիսի տեղի՝ զորս հրամայեցաք ձեզ չերթալ անդր, և գայցէ որ ժողովիցէ ժողով, ինքն անձամբ իւրով ածէ՝ի վերայ անձին իւրոյ վիշտս չարչարանաց և զայրագին տուգանաց և զպատուհասս արժանիս։ Ահդ՝ երթայք գնացէք դուք՝ի տեղի անդր որ հրամայեցաւ ձեզ երթալ։ Եւ յայսմ*

վասն արքայութեան ձերոյ զի անչարժ կացցէ ինաօչէ նա։ Ամենայնս որ առաջնորդ էր դատաւորութեանն, պատասխանի ետ և ասէ ցնոսա. Իսկ ո՞ արգելու զձեզ եթէ իցէ Աստուած, երկիր պագանել նմա հանդերձ այլովք աստուածովք բնութեան. զի դիցն հրաման եղև ձեզ երկիրպագանել, դիցն այնոցիկ որ ամենայն մարդ գիտէ ցնոսա։ Պատասխանի ետ Իմնեսոս և ասէ. Մեք այլևս երկիր ոչ պագանեմք։ Ահդ՝ Ամիզնոս պատասխանի ետ և ասէ ցնոսա. Ցեսանեմ աւադիկ զձեզ զի զլացող էք դուք և անգէտք քաղցրութեանն երկիրպագանել զթագաւորութեանցն. վասն այսորիկ ոչ եղիջիք դուք յայսմ քաղաքի. այլ ընկեցից զձեզ՝ի գաւառսն Լիբէացւոց, ՝ի տեղի որ անուանեալ կոչի Կեպրև. զի զայն տեղի ընտրեցի ձեզ՝ի հրամանէ Թագաւորաց. և մի եղիցի ձեր իշխանութիւն բնաւ ամենևին, ոչ ձեր և ոչ այլոց՝ առնել ժողովս, կամ մտանել յայս որ կոչէք դուք՝նոցա կենաւրիայ՝ այսինքն, տեղի մարտիրոսաց՝ Թէ ոք * գայցէ որ երթայցէ յայնպիսի տեղի՝ զորս հրամայեցաք ձեզ չերթալ անդր, և գայցէ որ ժողովիցէ ժողով, ինքն անձամբ իւրով ածէ՝ի վերայ անձին իւրոյ վիշտս չարչարանաց և զայրագին տուգանաց և զպատուհասս արժանիս։ Ահդ՝ երթայք գնացէք դուք՝ի տեղի անդր որ հրամայեցաւ ձեզ երթալ։ Եւ յայսմ

* Ցօր. ու՝

Հանգիստ զոգի առնուլ և ոչ օր մի. և զիմդր ուրեմն Ժողովս առնելոյ կամ ոչ առնելոյ պարապ էր ինձ[8]։

Եւ յետ այլոց բանից դառնայ ասել. Բայց սակայն և ոչ 'ի յիրական Ժողովոյ անտի Հեռի գտաք մեք Տեառն օգնականութեամբ, այլ որ 'ի քաղաքի էին՝ Ժողովի էս զնոսա պնդագոյնս, որպէս Թէ ընդ նոսա լինիմ ես. այլ բան բանին Թէպէտ Հեռի էի ես 'ի նոցանէ մարմնով, սակայն մերձ էի Հոգւով։ Իսկ 'ի Քէ փրոյ Ժողովուրդ բազում պնդ խոտեցաւ ընդ մեզ, կէս մի 'ի քաղաքակցաց անտի մերոց եղբարց զՀետ մեր գալով, և այլք յԵգիպտոսէ եկեալ յարեցան 'ի մեզ. զի և անդ դուառն մեծ բանի եբաց մեզ Աստուած։ Ջառաջինն Հալածեալք և քարկոծեալ լինիմք անդ. իսկ յետոյ ոչ սակաւք 'ի կառապաշտ Հեթանոսաց անտի Թողին զկուռս իւրեանց և դարձան առ Աստուած։ Զի յառաջ քան զմեզ չև էր նոցա ընկալեալ զբանն Աստուծոյ, և 'ի ձեռն մեր նախ սերմանեցաւ 'ի նոսա բանն, և որպէս այն Թէ վասն այնորիկ տարաւ զմեզ Աստուած առ նոսա, և կատարեցաք զայս պաշտօն մեր և դարձեալ միւսանգամ այլուր փոխեաց զմեզ։ Եւ քանզի Եմիլիանոս 'ի դժնդակագոյն վայրս լիբիական աշխարհին՝ որպէս Թուէրն կամէր փոխել զմեզ, Հրաման ետ յամենայն տեղեաց 'ի Մարկոսիս Ժողովել։

Ժամանակի իբրև հիւանդ էի ես, և սաստկաց զիս. և չետ ինձ Հանդիստ զոգի առնուլ և ոչ օր մի, արդ՝ որ պարապ էր ինձ կամ Ժողովել զոք կամ ոչ Ժողովել։ Եւ զնի այսր Հանգերձ այլովք ասաց գարձեալ։ Բայց սակայն և ոչ 'ի Ժողովդենէ անտի յայսմանէ որ երեխս, չնորհօքն Տեառն մերոյ Հեւսացաք իսկ մեք. այլ 'ի քաղաքի Ժողովի էս զնոսա պնդագոյն, իբրև այն Թէ ընդ նոսա էի էս. իբրև Հեռի էի ես 'ի նոցանէն մարմնապէս, սակայն մերձ էի առ նոսա Հոգևպէս որպէս ասացեալ է։ Իսկ 'ի Ալեպոյ Ժողովուրդ բազում գնաց ընդ մեզ. եղբարք քաղաքակիցք յարեցան 'ի մեզ բազումք և այլք մնացեան առ մեզ յԵգիպտոսէ, զի և անդ մեծ բանի եբաց մեզ Աստուած։ Բայց զառաջինն Հալածեալք և քարկոծեալք եղաք։ Իսկ յետոյ մարդիկ ոչ սակաւ 'ի կառապաշտ Հեթանոսաց անտի Թողին զկուռս իւրեանց և դարձան առ Աստուած։ Զի յառաջ քան զմեզ չէ էր նոցա ընկալեալ զբանն Աստուծոյ. 'ի մերում ձեռն առաջին սերմանեցաւ 'ի նոցա բանն։ Եւ որպէս այն Թէ վասն այնորիկ տարաւ զմեզ Աստուած առ նոսա, և կատարեցաք զայս պաշտօն մեր։ Եւ գարձեալ միւս անգամ փոխեցաք մեք անտի. զի Ամիլիանոս 'ի գաւառս չարաչարս լիբիկացւոց ըստ կարծեաց մը-

և 'ի գիւղս գիւղս ընդ ամենայն գաւառն ցրուեալ ցանեաց զմեզ։ Եւ այսպէս՝ մինչև մեր 'ի միտ առեալ էր, եդ զմեզ 'ի Ճանապարհ, և զայս այսպէս խորհրդով կազմեր պատրաստեր, զի երբ և կամք լինին նմա գիւրըմբռնելիս զմեզ գտցէ։ Եւ իբրև հրամայն եղև ինձ երթալ 'ի Փեւիրոյէ, և ոչ զտեղին անգամ գիտեի թէ ուր երթալ ունիմք, և ոչ զանունն անգամ յառաջագոյն լուեալ. և սակայն խնդամիտ և անխռով եղի 'ի Ճանապարհ. այլ իբրև ազդ եղև ինձ թէ 'ի գաւառն Կողաթացւոց երթամք, գիտեն որ ընդ իս անդ պատահեցան թէ ծրպէս զգածայ ես, և ես ինձէն ամբաստան լինիմ զանձնէս, զի զառաջինն տըրտմեցայ յոյժ և զբարեցայ. զի Թէպետ և ծանօթագոյն ևս էր մեզ երկիրն և ընդելագոյն, բայց ասէի թէ թափուր է աշխարհս այս յերեքից և 'ի մարդոց սիրտ անհնաց, և տաժանելի է Ճանապարհն և աւազուտ։ Սակայն միխիթարութիւն մեծ եղև յասելն եղբարց, թէ մօտ է տեղիս 'ի քաղաքն, և որպէս 'ի Փերոյ՝ եկեսցեն մեզ եղբարք բազումք յԵգիպտոսէ, մինչև առաւել ևս բազմաժողով կազմեսցուք մեզ և կեղեցի, և մերձաւորութեամբ տեղւոյն 'ի քաղաքն յաճախագոյն ևս վայելեսցուք 'ի տեսութիւն սիրե-

տաց իւրոց կամէր փոխել զմեզ, և յամենայն տեղեաց 'ի Մերբատոս հրամայեաց մեզ ժողովել. և որպէսզի գիւղս իւրաքանչիւր մեզ 'ի հատանել անդ զմեզ խակ եդ նա։ Եթէ նախ մեք գտեալ լինաք յայսմ Ճանապարհի. զի յայտ է թէ վասն այսր կազմեաց և պատրաստեաց նա զայս իրս այսպէս, զի յորժամ կամիցի ունել նա զմեզ ամենեսին 'ի պատրաստի գտեալ լինուք նմա։ Իբրև եղև ինձ հրամանն երթալ 'ի Կիպրոյ, և ոչ զտեղին անգամ թէ ուր իցէ գիտեի ես, և ոչ զանուն յառաջագոյն լուեալ էր իմ։ Եւ Թէպետ և այսպէս էի, սակայն նոյնժամայն գնացի ես իբրու չէն խռովեալ, այլ իբրև Թուեցաւ ինձ եթէ հանդիպեալ եմք մեք երթալ 'ի գաւառն Կողոթացւոց, գիտեն այնոքիկ որ պատահէցէն անդ թէ որպէս եղէ ես. զի յայսմ վայրի զանձն իմ կշտամբեմ ես, զի զառաջինն տրտմեցայ և յոյժ զբարեցայ. զի Թէպէտ և Ճանչէաք և տեղւոյ էաք աշխարհին, սակայն ասէի թէ թափուր է աշխարհս այս յերեքից և 'ի մարդոց պատանեաց. և պատրաստակաց է 'ի վիշտս չարչարանաց որ միանգամ գնան ընդ Ճանապարհս աւազակուտ։ Սակայն եղև ինձ միխիթարութիւն սփոփութեան, զի հասին մեզ եղբարք և ասացին թէ յոյժ մօտ է այս տեղի 'ի քաղաք։ Իսկ 'ի Կիպրոյ եղբարք բազումք յԵգիպտացւոց անտի գային և խռնէին

լեաց մերոց, յընտանեաց և ՚ի կարևոր բարեկամաց. և յապանել անդ եկելոցն որպէս ՚ի հեռաւոր յաբ- ձակավայրս քաղաքին, արասցուք մեզ Ժողով՝ եկե- ղեցի առանձին։ Եւ եղև այնպէս որպէս և ասացինն։ Եւ յետ սակաւուց յաւել և որ ինչ անցք անցին ընդ նա։ Ս. Լեւոն եպս., ասէ, Գերմանոս ՚ի քաղցր խոս- տովանութիւն իւր պանծացի, և յոլովագոյնս ունի- ցի պատմել զանձնէն անցս և գործս. այլ քանի՞ ինչ կարիցէ նա ՚ի համար արկանել ձեզ վճիռս ատենից, զհատուածն գրաւուածս ստացուածոց, զտարագիր աբօրս, զընչից յափշտակութիւնս, ՚ի փառաց և ՚ի պատուոյ անկանելն, զարհամարհանս կենցաղականացն, որինչ գրել զգովեստիւք դատաւորաց և վիսորհրդականաց, զպատնաչալիս հակառակորդաց, զգործ աղաղակի ամ- բոխին, զվիշտս վտանգաց, զհալածանս, վտարանդի զիւխատուստ, և զաւազմադիմի նեղութիւնս անձկու- թեանց որոց տարաբո՝ զոր օրինակ դէպ եղեն մեզ առ Դեկոսիս, առ Սաբինեաս և զոր մինչև ցայսօր ժամա- նակի առ Եմիլիանոս կրեմք, իսկ Գերմանոս ոչ ե- բեւեցաւ, կամ զինչ յիշատակ գնմանէ։ Ս. Լեւոն է, արդ դադարեալ լռեցից ՚ի բազում անզգամութենէս,

ընդ մեզ. և ընդարձակութեամբ համարձակ կարեմք Ժողովել Ժո- ղովուրդս։ Բայց անդ զի մերձ էր տեղին ՚ի քաղաքն՝ հանապազ հան- դուցեալ լինէաք ՚ի տեղիս Չմեռիտ սիրելեաց և յընտանեաց և ՚ի բարեկամաց մերոց, զի գային և հանդչէին. և իբրև տեսի որ հեռի էին ՚ի քաղաքէ, առ սակաւ սակաւ լինէաք առնել Ժողովուրդս. և այս այսպէս եղև։ Եւ հանդերձ այլովք գործոց նա գարձեալ և վասն ամենայնի որ ինչ անցք անցին ընդ նա։ Եւ[1]թէ խոստովանու- թեամբ, ասէ, բազմաւ գովէ և յարգել զանձն իւր Գերմանոս. և բազում ինչ ունի նա ասել վասն անձին իւրոյ, որ համբոյր և տե- սեաց քան թուոյ կոտորածոյն որ եղեն ՚ի վերայ մեր, զի առան ինչք մեր զոր ունէաք, և հրամանքն որ ՚ի վերայ մեր եգեալ լինէ- ին, և յափշտակութիւն ստացուածոց մերոց. և զի բարձաւ ՚ի մէնջ պատուն մեր և պարծանք ազխարհի, և զի նուազեցաւ գովես- ութիւն փառաց մերոց, և զի անարգեցին և արհամարհեցին զմեզ դա- տաւորք և նախարարք և պատուաւորք օտարաց. և զգոյժ աղաղակին զոր աղաղակէին ՚ի վերայ մեր. և զվիշտն չարչարանաց զոր կրե- ցաք և գհալածանսն, և զի մերկացաքն, և զի ձգնեցաքն, և զվիշտ ժամանակացն, և գհամբերութենէն մերոյ, գվտանգ նեղութենացն Թէ որչափ ինչ համբերեալ կրեցի ես յաւուրս Դեկոսեայ և Վա- լերիանոսի, և քանի ինչ մինչև ցայսօր ժամանակի, ՚ի ձեռաց անտի Ամիլիանոսի, յայսմիկ ոչ երևեցաւ Գերմանոս, կամ որ ինդիր և-

յոր ՚ի պատճառս Գերմանոսի անկայ. և եղբարց Թռ
ղից գիտակաց պատմել մի ըստ միոջէ զամենայն։

Նոյն ինքն դարձեալ Դիմոթեոս ՚ի գիրս իւր որ առ
Դոմետիոս և Դիդիմոս զՀալածանացն յիշելով՝ խօսի
այսպէս. Աչելորդ է կարգել յանուանէ զմերսն, որք
բազումք են յոյժ և ձեզ անծանօթք. այլ այսչափ ինչ
գիտասջիք, զի արք և կանայք, երիտասարդք և ծերք,
աղջկունք և պառաւունք, զինուորք և դուզնաքեայ
մարդիկ, յամենայն ցեղէ և յամենայն հասակէ, ո
մանք ՚ի ձեռն հարուածոց տանջանաց և հրոյ, և ո
մանք սրով յաղթեցին պատերազմի և առին զպսակն,
Եւ սակայն չեղև ոմանց բաւական ժամանակս երևե
լոյ Թէ ընտրեալ իցեն Աստուծոյ, որպէս և ոչ ինձ
Թուի մինչև ցայսօր ժամանակի, որպէս յայլում ՚ի
դէպ ժամուն՝ զոր ինքն գիտէ, պահեաց զնս, այն որ
ասացն Թէ. Ի ժամանակի ընդունելութեան լուայ
քեզ, և յաւուր փրկութեան օգնեցի քեզ։ Եւ զի ըզ
մերոցս Տարցանէք և կամիք գիտել Թէ զիարդ կեամ
քըս. լուայք արդարև եթէ զիարդ առեալ տանէին
զմեզ կապեալս Տարիւրապատքն, իշխանք ժողովըր
դեանն, զինուորք և դահիճք՝ զնս և զԻայիոս և զՓա

զև վասն նորա. այլ ՚ի բազմութենէ անտի յարմարութեանն, յո
րում անկայ ես վասն Աերմանեայ, անփոյթ առնէմ ես. և վասն
այսորիկ խոտորիմ ես ՚ի պատմութենացն անտի յայնմանէ որ
միանգամ եղեն. զի պատմեացն զայն եղերաքն մեր որ գիտեն։
Բայց զնոյն օրինակ և ՚ի Թղթէ անդ գրեաց նա առ Դոմետիանոս,
և առ Դիդիմոս զՀալածանան որ եղեն։ Յիշեցուցանէ գարձեալ այ
սու բանիւք. Թէ զմարդիկն, ասէ, ՚ի մերոց անտի որ բազմաքն են,
և ոչ գիտէք գուք զնոսա, եւ ըլի ինն Թուեցաւ կարգել ինձ զա
նուանս նոցա։ Բայց սակայն եղիջիք գիտել Թէ արք և կանայք և
երիտասարդք և կուսանք և ծերք և պառաւունք, և զինուորք և
մարդիկք դուզնաքեայ, և ազգի ազգի և պէսպէս հասակք, ոմանք
՚ի նոցանէ ՚ի ձեռն հարուածոց տանջանաց և հրոյ, և ոմանք ՚ի ձեռն
սուսերի սրոյ յաղթեցին պատերազմի և առին զպսակն։ Իսկ այլոց
փոքրկանց, ոչ բաւական եղև նոցա ժամանակս այս երևել Թէ ըն
տրեալ իցեն Աստուծոյ, ըստ նմանութեանն որ եղև և ևհաս առ ես
մինչև յայսօր ժամանակի. քան զի ժամանակեան որում ինքն գի
տէր պահեաց զնս. այն որ ասացն եթէ ՚ի ժամանակի ընդունելու
Թեան լուայ քեզ, և յաւուր փրկութեան օգնեցի քեզ. զի վասն
մեր քանզի հարցանէք և կամիք դուք ուսանիլ Թէ որպիսի իցեմք,
Թերևս լուեալ իցէ ձեր, եթէ զիարդ առեալ կապեալս տանէին
զմեզ հարիւր ասպետքն և քաղաքապետքն և զինուորք, ընդ նոսա և

*ւբստոս և զՊօղոս և զՊետրոս, ի վերայ եկեալ ո-
մանց և ի Մարիստեայ։ Եւ իբրև դժկամակեաք զհետ
գնալ նոցա, բռնի յափշտակեալ զմեզ քարշելով տա-
նէին։ Ես արդ և Գայիոս և Պետրոս որք մնացեալ յեղ-
բարց՝ յամայի և ի տխուր վայրս աշխարհին լիբէա-
ցւոց փակեալ կամք, երից աւուրց գնացից Ձմիւռնարհ
հեռի ի Պարիստոնեայ։ Եւ յառաջ մատուցեալ զրանս
իւր՝ ասէ. Իսկ ի քաղաքին ի Ծածուկ տեսեալ զեղ-
բարս՝ զհի Հարեալ Թագեան երիցունքն Մաբսիմոս,
Դիոսկորոս, Դեմետրիոս և Լուկիոս. և որ երևելիքն
էին յաշխարհին՝ Փաւստինոս և Ակիւղաս, մնըրեալ
շրջէին յերկրին եգիպտացւոց։ Ա՚Լ՚ի սարկաւագացն
յախտէ մահու [9] կատորելոց մնացին միայն Փաւստոս,
Եւսեբիոս և Փերեմոն։ Իսկ Եւսեբիոս՝ զոր ի սկզբ-
բանէ զօրացոյց Աստուած և պատրաստեաց ի կասկա-
ծաւոր սպասաւորութիւն խոստովանողացն որ ի բան-
դին, և զնշխարս մարմնոց երանեալ վկայիցն կատա-
րելոց ի սինդոնս ժողովել ամփոփէր։ Քանզի մինչև
ցայսօր ժամանակի ոչ գադարեաց դատաւորն ի ձգե-
լոց անտի յատեան նորա զոմանս անգթութեամբ
սպանանել, որպէս կանխեցի ասացի, և զկնս քերել
տանջանօք. իսկ զայլս ի բանտս և ի կապանս մաշէր*

*գահիճք՝ զնս և զԳայիոս և զՓաւստոս, զՊօղոս և զՊետրոս. զի եկին
և կային ի վերայ մարդիկ ի Մերոեայ։ Եւ իբրև ոչ կամեցաք յա-
րել ընդ նոսա և երթալ, ի բռնի յափշտակեցին զմեզ, և քարշելով
տանէին։ Բայց այժմիկ ես և Գայիոս և Պետրոս միայն եղաք որք
յայլ եղբարցն, և արգելեալ եմք յանապատի յաչխարհ խաւարին
լիբեացւոց, որ հեռի է ի Պրոտոնեայ գնացից երից աւուրց Ձմ-
նապարհ։ Եւ ի պատմել խրատ զբանն ասաց գարձեալ. Եթէ ի
քաղաքի իրեն երկուցկալք զհի հարեալք գայր ի Ծածուկ տե-
սանեն զեղբարս երիցունքն Մաբսիմոս և Դիոսկորոս, զի նոցա
էին երևելիք յայնմ աշխարհի։ Իսկ Փաւստինոս և Ակիւղաս այժ
մնըրեալ շրջէին յերկրին եգիպտացւոց։ Իսկ որ յետ նոցա սար-
կաւագացն էին՝ ի կղզոյն մնան, և մնացին Փաւստոս, Եւսեբիոս,
այն որ խոկզբանէ իսկ Աստուած պատրաստեաց զնոսա և զօրացոյց
լի առնել. նմա զպատն պաշտամանն խոստովանելոյն որ են ի բան-
դին մեծաւ պատերազմաւ, և զժողով մարմնոցն զերանեալ վկա-
յիցն կատարելոյն ի վերայ տապանակս, զի մինչև ցայսօր ժամա-
նակի ոչ գադարեաց դատաւորն ի սպանանելոյ անաւ խաւա-
Թեամբ զմարդիկն որ մերձենային առ նա. զկնս քերեր տանջա-
նօք, իսկ զայլս չարչարեր բանդիւք և կապանօք, և հրամայեր եթէ*

չարաչար, և հրամայէր Թէ ամենևին ոք մի՛ մերձենայի առ նոսա. և խոյզ արկանէր Թէ գուցէ ոք երևեցաւ առ նոսա. և սակայն Աստուած ի՛ ձեռն փութոյ խնամոյ լըջամիտ եղբարց հանգուցանէր զնեղեալսն և ըզվտանգեալս։ Ջայսոսիկ Դիոնեսիոս ի նոյն գիրս իւր։ Բայց գիտել արժան է, զի Եւսեբիոսն այն՝ զոր սարկաւագ ասացաք, յետ ոչ բազմաց եպիսկոպոս կարգեցաւ ի Լաւդիկէ Այորւոց. իսկ երէցն Մաքսիմոս զկնի Դիոնիսեայ կալաւ զաԹոռ եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց. և Փաւստոս՝ որ ընդ Դիոնիսեայ խոստովանուԹեամբ փառաւորեցաւ յայնժամ, պահեցաւ մինչև ի Հալածանս՝ որ ի ժամանակս մեր, լի աւուրըք ծերուԹեան պարարտուԹեան, և յաւուրս մեր պսակեցաւ վկայուԹեամբ, և Տատաւ գլուխ նորա։ Որ ինչ առ Դիոնիսեաւ անցք անցին, այսոքիկ էն։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Վասն որոց վկայեցին ի Կեսարիա Պաղեստինացւոց։

Ի սոյն յայս Հալածանս վաղերիանու երեք ամանք փառաւորեցան խոստովանուԹեամբ Քրիստոսի ի կե-

---

որ ամենևին մի՛ մերձենայի առ նոսա. և խոյզ արկանէր Թէ գուցէ այլ ոք երևեցաւ։ Բայց սակայն Աստուած ի՛ ձեռն փութոյ պընդուԹեան եղբարց պիտանեաց հանգուցանէր զնեղեալսն զվտանգեալսն։ Ջայս ինչ ասաց Դիոնեսիոս։ Բայց եղեցուք գիտել Թէ Եւսեբէս, այն որ ասացաքն վասն նորա զի էր նա սարկաւագ նա, յետ սակաւ ժամանակաց եպիսկոպոս զաւոգիկեցւոց կոչմանցն ասացեաց եկաց նա։ Իսկ Մաքսիմոս, այն որ ասացաք վասն նորա Թէ էր նա երէց, զկնի Դիոնեսեայ նա կալաւ զեպիսկոպոսուԹիւն եկեղեցւոյն աղեքսանդրացւոց։ Իսկ Փաւստոս, այն որ ընդ նմանի փառաւորեցաւ և եղև խոստովանեալ, պահեցաւ մինչ ի հալածանսն որ եղեն յաւուրս մեր, իբր էր նա բազմամեայ ծերուԹեամբ, և ի ժամանակս մեր պսակեցաւ վկայուԹեամբ և Տատաւ գլուխ նորա։ Որ ինչ անցք անցին ընդ Դիոնեսիոս յայնմ ժամանակի այս ինչ է։

Երկոտասաներորդ. վասն որոց վկայեցին ի կեսարիա պաղեստինացւոց։

Բայց յայսմ ժամանակի հալածանացն զոր ասաք Վաղերիա-

սարիա Պաղեստինացւոց, և 'ի կուր գազանաց արկեալ աբանչելի վկայութեամբ պսակեցան փառաւոր. յորոց միումն անուն էր Պերիակոս, միւսում Մաղքոս, և երրորդին Աղէքսանդր. եւ պատմէն եթէ յապաքսակս քնակելով սոցա՝ զառաջինն իբրև վատս և երկչոտս աղարտէին զանձինս, որպէս զի յորժամ բաշխէր պսակն՝ որոց փափաքեալ կարօտէին երկնաւոր սիրոյն, ինքեանք անփոյթ դադարէին և ոչ յափշտակէին զպսակն վկայութեան. Ձայս խորհելով նոցա փութացան ելին գնացին 'ի Կեսարիա, և երեւեցան 'ի միասին յատեան դատաւորին, և արժանի եղեն այնմ կատարածի՝ զոր ասացաքս. Սոքօք հանդերձ և կին ոմն 'ի նմին քաղաքի 'ի սոյն հալածանս՝ ըստ օրինակիս նահատակեալ ելանել յաշխարհէս պատմէն. այլ սակայն բան լսի եթէ 'ի հերձուածոց անտի Մարկիոնացւոց էր.

ԳԼՈՒԽ Ի Գ.

Վասն որ առ Գաղիլեոնոսիւ խաղաղութեանն.

Ա.յլ ոչ յետ բազմաց իբրև վանեալ դերեցաւ Վաղերիանոս 'ի խժիջն բարբարոսաց, միապետեալ օրդի

նոս երեք մարդք փառաւորեցան խոստովանութեամբ Քրիստոսի 'ի Կեսարիա պաղեստինացւոց, և կատարեցան վկայութեամբ, և ղեն կենդանւոյ գազանաց. միումն 'ի նոցանէ անուն Պերիակոյ, և միւսում՝ Մաղքոս, և միւսն՝ Աղէքսանդրոս. Այլ ասէն վասն նոցա եթէ քնակեալ էին յապաքսակս, և զառաջինն համարեցան զանձինս իբրեւ զնուաստացեալս և լուծեալս. զի 'ի ժամանակի յորժամ բաշխէր զպսակն այնոցիկ որ կարօտեալ փափաքէին երկնաւոր սիրոյն, և նոքա անփոյթ առնէին և ոչ յափշտակէին զպսակս վկայութեան. և իբրև զայս խորհեցան խրախուսեցին և մտին 'ի Կեսարիա, և չքան 'ի միասին առ դատաւորն, և արժանի եղեն այնմ կատարածի զոր ասացաք. Բայց հանդերձ այսոքիւքն և կին մի 'ի սոյն հալածանս 'ի նմին քաղաքի ըստ նմին պատերազմի կրեաց, բայց եր յապաղեցոյ անտի մարկիանացւոց.

Երիքտասանիկորդ. վասն խաղաղութեանն զոր արար Գաղիոս.

Ա.յլ յետ սակաւ ժամանակաց դերի վարեցաւ Վաղերիանոս,

նորա Գաղիլեացոյս և քաղցրութեամբ վարէր զիշխանութիւն իւր. և ՚ի հրամանէ նորա լռեցին յամենայն ընդդէմ մեր հալածանքն. և հրովարտակ ազատութեան եհան առաքինորդաց ուսմանս մերոյ՝ ըստ կարգաց սովորութեան համարձակ պաշտել զիշխանութիւն իւրեանց, և էր օրինակ զայս.

Ինքնակալ կայսր Պօպղիոս Լիկինիոս Գաղիլեացոս, Պիոս Փելիքս Աւգոստոս՝ առ Դիմեհիոս և առ Պօնտոս և առ Դեմետրիոս և առ այլ եպիսկոպոսս.

Զբարերարութիւն լսեցս պարգևաց հրամայեցի ես հասարակ կարգել ընդ ամենայն աշխարհ, զի ՚ի տեղեաց անտի ընտրելոց ՚ի պաշտօն կրօնից մերձեսցի՛ հեռասցին: Ասեն այսորիկ և դուք ՚ի պատճենէ անտի հրովարտակիս մարթէք իրաւունս ձեզ առնուլ, զի օք ձեզ ի՛ մեղիցէ. և որ միանգամ կարգք են և օրինք ՚ի ձեզ, առ յինէն իշխանութիւն տուեալ լինի: Ասեմ որոյ Աւրելիոս Կիւրենիոս մերս գանձապետ և համարակալ զգուշացի առ յինէն տուեալ բանից պատճենի հրովարտակիս: Զայս ՚ի լատինէ ՚ի յոյն փոխեցաք, ՚ի մեկինն ևս յիմացուած բանին: Գարձեալ նոքին կայսերէ և այլ հրամանագիր առ այլ եպիսկո-

և եղև ծառայ գուժ բարբարոսաց, և եկաց որդի նորա գլուխ Թագաւորութեանն միայն առանձինն, և քաղցրութեամբ առաջնորդեր արքայութեանն իւրոյ, և գազարեցին ՚ի ձեռն հրամանի նորա հալածանքն որ էին ՚ի վերայ մեր: Եւ հրամայեաց նա ՚ի ձեռն Թզղեցոյն, Թէ առաքինորդ ուսմանս մերոյ ազատութեամբ անձանց իւրեանց ըստ սովորութեանն եղիցի պաշտել: Բայց էր գրեալ այսպէս: Ինքնակալ կայսր Պօպղիոս, Լիկինիոս, Գաղիլեոս, Աւերէա, Աւռէլիոս, Սաբեսոս, առ Դիոնէսոս և առ Պինտէ, և առ Դեմետրիոս, և առ այլ եպիսկոպոսս. Զբարերարութիւն պարգևաց ևս մեզ հրամայեցի ես կարգել ընդ ամենայն աշխարհ, զի մերժեալ հեռասցին նորա ՚ի նշանաւոր տեղեաց անտի զոր ընտրեցին ՚ի պաշտօն դիցն օտարոտեաց: Վասն այսորիկ և դուք մարթէք գիտել զնա, նշանել ՚ի պատճէնից անտի հրովարտակացն իմոց, զի օք ձեզ մի մեղիցէ. վասն այսորիկ այն ինչ որ մարթի կատարել ձեզ, և իշխանութիւն ունիք յատուկ ժամանակաւ, և առ յինէն տուեալ լինի ձեզ: Եւ վասն այսորիկ Աւրելիոս Կիւրենիոս, այն որ կայսն ՚ի վերայ մեծամեծ իրաց, նա պահեսցէ զպատճէն հրովարտակաց որ տուան առ յինէն. մեկինեցան տղայ ՚ի Հռոմ լեզուէ և եգան ասա: Եւ գարձեալ այլ միւս ևս հրովարտակ է նորա զոր գրեաց առ այլ եպիսկոպոսս, զի հրամայեաց նոցա առնուլ զանգիան որ անուանեալ կոչին կիմաւրք, այսինքն՝ զանգեան մարտիրոսաց:

պոան, յորում իշխանութիւն տայ նոցա առնուլ զվայրս ննջարանացն Հաւատացելոց։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Վասն եպիսկոպոսացն՝ որ ձեռնադրեցան ի Յովհաննիսէ։

Դէտ ևս վարէր յայնժամ զիշխանութիւն առաջնորդութեան Հռոմայեցւոց եկեղեցւոյն Կեստոս. իսկ Աշխարհացւոց՝ զկնի Փաբիոսի Դեմետրիանոս. և ի Կեսարիա Կապադովկացւոց՝ Փիրմիլիանոս. և յեկեղեցիս Պոնտացւոց՝ Գրիգորիոս և Եղբայր նորա Աթենադորոս. որ յաշակերտաց անտի էին Որոգինեայ։ Իսկ ի Կեսարիա Պաղեստինացւոց յետ մահու Թէոկտեստեայ՝ կալաւ զեպիսկոպոսութիւնն Դոմնոս. որոյ կացեալ սակաւ ինչ ժամանակս՝ կալաւ զկնի նորա Թէոտենոս՝ որ եկաց մինչև յաւուրս մեր. յաշակերտութենէ անտի Որոգինեայ գոլով և սա։ Եւ Յիրաւսաղէմ իբրև Հանգեաւ Մազաբանոս, կալաւ զաթոռն Հիմենէոս, որ և փառաւորեցաւ յաւուրս մեր զսմն բազումս։

Զորներտասաներորդ. վասն եպիսկոպոսացն որ առաքինեալքն յայնմ ժամանակի։

Յայնմ ժամանակի մինչ ցայն* ևս կայր յեկեղեցւոջ անգ Հռոմ քաջաքն Քաւսաոս, և յեկեղեցւոջ անտիոքացւոց զկնի Փիբիոսի** Դեմետրիոս։ Իսկ Պաղեստինացիանոս ի Կեսարիա կապադովկացւոց. և յեկեղեցիսն պոնտացւոց Գրիգորիոս, և եղբայրն նորա Աթենադորոս, զի ևեթ նոքա ևս Յանեղիք Իրիգինեսի։ Իսկ ի Կեսարիա պաղեստինացւոց յետ մահու Թէոկտեստոսի, կալաւ զկնի նորա զեպիսկոպոսութիւնն Դոմնոս։ Եւ իբրև եկաց և սակաւ ինչ ժամանակս կալաւ զկնի նորա Թէոտենոս, այս որ յաւուրս մեր էր. և սա յաշակերտութենէ անտի Որոգինեսի։ Եւ յԵրուսաղէմ իբրև Հանգեաւ Մազաբանոս՝ կալաւ զկնի նորա Հիմենէոս. սա որ փառաւորեցաւ յաւուրս մեր զսմն բազումս։

* Յոր. ցաՃ։
** Յոր. Փէ-րէոսէ։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Թէ ո՛րպէս վկայեաց Մարիննոս ՚ի Կեսարիա.

Մինչդեռ խաղաղութիւն էր եկեղեցեաց ընդ ամենայն աշխարհ, այլ մի ՚ի կեսարիա Պաղեստինացւոց Մարինոս անուն, պատուական յաստիճան զինուորութեան և ազգաւ և մեծութեամբ երևելի՝ նահատակեալ ՚ի վերայ վկայութեան Քրիստոսի հատաւ գլուխ նորա. և էր պատճառք գործոյս այս՝ ի պատիւ աստիճանի առ Հռովմայեցիս, որում հասեալ զբ հարիւրապետ կոչի. ՚ի պարապել պաշտամանն՝ ըստ կարգի աստիճանին կոչեցաւ յայն Մարինոս. որ իբրև ՚ի պատրաստի էր գալ յայն պատիւ, վաղեաց ոմն եւ առաջի բեմին և ամբաստան կայր զնմանէ Թէ. Զի օրէն սմա ընդունել զպատիւ Հռոմոյ ըստ վաղեմի մերոց օրինաց, զի քրիստոնեայ է դա, և ոչ զոհէ Թագաւորաց մերոց. ինձ անկ է վիճակն այն պատուոյ։ Խռովեալ ընդ այն դատաւորն Աքիւս, հարցանէր զառաջինն Թէ որպիսի խորհուրդս ունիցի Մարինոս. և իբրև ետես

Հնգետասաներորդ. թէ որպէս վկայեաց Մարիաննոս ՚ի Կեսարիա։

Յայնմ ժամանակի մինչդեռ խաղաղութիւն էր եկեղեցեաց յամենայն աշխարհի։ Էր այր մի ՚ի Կեսարիայ պաղեստինացւոց, զի առնուն էր նորա Մարիաննոս, որ պատուաւոր էր յաստիճան զինուորութեան Հռոմոյ, և մեծութեամբ այր էր երևելի. և Թէ վասն վկայութեանն Քրիստոսի հատաւ գլուխ նորա ըստ այսմ պատճառանաց։ Ի պատիւ աստիճանի ՚ի մէջ զինուորաց Հռոմոյ, զի որ՝ ըստ հասանել աստիճանի հարիւրապետութեան։ Իբրև պատրաստեալ էր այս աստիճան այնմ որ վերանայրն ՚ի նա, ինքն կարգ աստիճանին կոչեաց զՄարինոս եղանել ՚ի նա։ Եւ իբրև ՚ի պատրաստի էր նա գալ հասանել յայն պատիւ, վազեաց ոմն եմուտ առաջի բեմին և ասէր, Թէ չէք օրէն իշխանութիւն ընդունել զպատիւ Հռոմոյ ըստ հին օրինաց, զի քրիստոնեայ է դա. և դա ոչ զոհէ օրպէս և Թագաւորք զոհեն. յանդիմանէր զնա, նմա իսկ անկ էր տեղին այն։ Եւ բարկացաւ ՚ի վերայ նորա դատաւորն, որ անուանէր Աքիւս, և զառաջինն հարցանէր Թէ որպիսի խորհուրդս ունի Մարինոս. իբրև ետես նա զի խոստովանէր Թէ քրիստոնեայ եմ, բազում

զի խոստովանէր նա զնդապետ Թէ քրիստոնեայ եմ: զերիս ժամն չսորհեաց նմա խորհել յանձն իւր: եւ իբրև եւ նա յատենէն, Թէոտեկտոս եպիսկոպոս քաղաքին մտաւ ցեալ ձգեաց զնա առ ինքն բանիւք, և զձեռանէն կալեալ էած զնա յեկեղեցի. և կացոյց առաջի տեղւոյն սրբութեան, եբաց սակաւիկ մի զբազմոց նորա, և ետոյց նմա զսուսերն՝ զոր ածեալ էր ընդ մէջ, և զգիրս սրբոց աւետարանչացն ի հանդիպոյ նորա եդեալ. Ընտրեա, ասէ, զի՛ ի սոցանէ կամիցես: Մարիենոս մտադիւրագոյնս ձգեալ անդէն զաբիւր և բուռն եհար զգրոց Աստուածոյ: Պինդ կալ, ասէ Թէոտեկտոս, պինդ կալ զԱստուածդ, և զոր ընտրեցեր՝ զօրացեալ նովաւ հանդիպեսցիս նմին. Երթ ՚ի խաղաղութիւն: Ելեալ նորա յեկեղեցւոյն քարող կարդայր և աղաղակէր առաջի բեմի դատաւորին, Թէ լցաւ ժամադիւն. և իբրև յօժարամիտ հաւատով եկեալ կայր յատենին, նոյնժամայն վարեցաւ ՚ի մահ և կատարեցաւ վկայութեամբ:

Ժուժկալութեամբ զերիս ժամն եւ նմա խորհել յանձն իւր: Այլ իբրև եւ նա յատենէ անտի, Թէոտիկտոս եպիսկոպոս որ անդ էր, մատեաւ և ձգեաց զնա առ ինքն բանիւք, և բուռն եհար զձեռանէ նորա և էած զնա յեկեղեցի, և կացոյց զնա առաջի տեղւոյն սրբութեան. և եբաց զբազմոց նորա սակաւիկ մի, և ետոյց նմա զսուսերն զոր ածեալ էր ընդ մէջ. և եդ նմա զդիրս աւետարանն, և հրամայեաց նմա ընտրել՝ Թէ զոր ՚ի նոցանէ կամիցի: Իսկ նա սատանայական նոյնժամայն ձգեաց զաբիւր, և բուռն եհար զգրոցն Աստուածոյ: Պատասխանի եւ Թէոտիկտոս և ասէ ցնա. Պինդ կալ զԱստուածդ, պինդ կալ, և արժանի լինիս այնմ խնդր զոր ընտրեցեր զու քեզ. իբրու իցես զու զօրացեալ ՚ի նմանէն, երթ խաղաղութեամբ: Իսկ նա նոյնժամայն իբրև եկն անտի, քարոզ կարդայր և աղաղակէր առաջի բեմի դատաւորին. զի և լցեալ էր ժամն զոր եդեալ էր նմա դատաւորն: Իբրև եկաց առաջի, եցոյց նա զնոր հաւատսն հաւատոց իւրոց, և նոյնժամայն վարեցաւ ՚ի մահ և կատարեցաւ վկայութեամբ:

ԳԼՈՒԽ ԺԶ.

Պատմութիւն Աստիրիոսի։

Յայսու ժամանակաւ և Աստիրիոս ոմն վասն աստուածասէր համարձակութեան համբաւեալ հռչակի, էր սա ի ծերակուտէն Հռովմայ, բարեկամ Թագաւորացդ, և ազնուականութեամբ տոհմին և մեծութեամբն ամենեցուն երևելի։ Դիպեցաւ սա նահատակութեան վկայի ուրուք կատարելոյ. ետ զուս իւր ի ներքոյ, և ի վերայ բազմապատիկ և պատուական հանդերձիցն եբարձ զմարմին երանելւոյն. և ի մեծաղին յոյժ սինդոնի ամփոփեալ զայն Թաղեաց ի վայելուչ գամբանի, Բազում ինչ այլ պատմին զառնէս զայսմանէ գէտք և ծանօթք նորա, որ կեցին մինչև յաւուրս մեր։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Վասն սքանչելացն Փրկչին մերոյ ի Պաղեստաս։

Ցաւանդութիւնս անդ զուցաց էն և սքանչելիքս այս։ ի կեսարիա Փիլիպպեան՝ զոր Փիւնիկեցիք Պա-

վէշտասաներորդ . պատմութիւն վասն Աստիրոսի ;

Ա՛յլ յայսմ վայրի, և Աստերէս ուրէն յիշատակ համարձակութեան զսիրոյն Աստուծոյ. այր մի զի էր նա ի սինկղիտոսաց Հռոմ քաղաքի՝ բարեկամ Թագաւորաց. երևելի էր ամենայն մարդկան վասն առաւել մեծութեան և ազնուականութեան ազգատոհմն մեր իւրոյ. և գիպեցաւ նա մինչդեռ պահակալ լինէր վկայ մի, և եգ զաչս իւր և եբարձ զմարմին զբանելւոյն, առաւել և սքանչելի հանդերձիւք, և էառ գնաց, և տարաւ Թաղեաց և ամփոփեաց զնա կազմ ի պայց յիշեն զնա այլովք բազմաք գէտք և ծանօթք առն այնոքիկ, և այն որ կենդանի մնացին մինչև յաւուրս մեր։

Եւ ըստ այսմ սքանչելեաց, ի կեսարիա Փիլիպպեւոց, այն որ Պետրան կոչեն զնա ի Փիւնիկէ. ասեն Թէ յանկանս աղբերացն որ

Նէաս ասէն, յականս անդ աղբերացն, որ խաղան 'ի լեռնէ անտի՝ որ անուանեալ կոչի Պանիոս, յորոց և Յորդանան գետ ելանէ, յաւուրս տօնից զոհս ինչ արկանել պատմեն, որ և դիւական պատիր խաբէութեամբ ընկղմեալ ոչ ևս այլ երևեալ 'ի հանդիսատեսից տեղւոյն իբրև հրաշալիք սքանչելեաց հռչակելով։ Դէպ եղև երբեմն Աստերեայ 'ի տեղւոջն գտանել 'ի ժամու անդ հանդիսին. և զի զարմացեալս եահս ըզբազումս ընդ իրսն, աւազեաց նա ընդ մոլորութիւն նոցա, ամբարձ ապա զաչս իւր յերկինս և կարդայր ջՔրիստոս՝ որ է 'ի վերայ ամենայնի Աստուած, զի զմոլորեցուցիչ ժողովրդեանն զդևսն կշտամբեալ դադարեցուցէ 'ի պատրանաց անտի նոցա։ Եւ իբրև և կաց նա յաղօթս, ասէն, վերացաւ յանկարծ եկաց զոհն 'ի վերայ ջուրց աղբերն, և այսպէս լռեաց դադարեաց մոլորութիւնն այն, ոչ ևս այլ կարծեցեալ սքանչելեացն 'ի տեղւոջն երևեալ։

խաղան 'ի լեռնէ անտի՝ որ անուանեալ կոչի Պենիոս, զի 'ի նոցանէ ելանէ Յորդանան գետ. յաւուրս տանի որ խոստացեալ էր Հեթանոսաց 'ի զոհս անասնոց, զի զինչ և էր արկեալ էին ինն անդր, բայց այն իսկ այս՝ զի 'ի զօրութենէ օգնականութեան դիւին ընկղմեալ լինէր, և ոչ ուրեք գտանի։ Իբրև սքանչելեօք և անուանեալ հռչակ լինէր, այն ինչ որ գործեալ լինէր անդ յայնժամ որ գիպէին անդ։ Բայց երբեմն գիպեցաւ 'ի տեղւոջն յայնմիկ ինքն Աստերէս, և եահս զի զարմացեալ էին բազումք ընդ իրսն ընդ այնս, և անխոհեմ նա 'ի վերայ մոլորութեան նոցա, համբարձ զաչս իւր յերկինս և աղաչէր զՔրիստոս Աստուած որ է 'ի վերայ ամենայնի, զի խայտառակեսցէ զդևն որ մոլորեցուցանէր զժողովուրդն, և դադարեցուցէ զմոլորեցուցիչն 'ի մոլորութենէ անտի յայնմանէ։ Եւ իբրև եկաց նա յաղօթս՝ վերացաւ եկաց զոհն 'ի վերայ ջուրց աղբերն. և այսպէս լռեաց դադարեաց մոլորութիւնն այն. և քան զամ սքանչելեացն որ կարծեալ երևէր՝ ոչ այնուհետև պաշտեալ լինէր յաշխարհին յայնմիկ։

ԳԼՈՒԽ ԺԸ.

Վասն պղնձի պատկերին կանգնելոյ ի տեղատեղս կենդանեաց։

Եւ զի զքաղաքէս յիշատակեցաք, ոչինչ ՚ի դէպ համարիմ լռել անցանել զարժանին յիշատակաց պատմութեամբ՝ վասն որոց զկնի մեր եկեսցին ազգք։ Վասն կնոջ տեղատեսի՝ զոր ուսաքս ՚ի սուրբ աւետարանէն թէ բժշկեցաւ ՚ի Փրկչէն մերմէ ՚ի ցաւոց անտի իւրոց, յայնմ քաղաքէ ասեն թէ էր նա, և զտունն նորա ցուցանեն անդէն ՚ի քաղաքին, որ և ՚ի Փրկչէն մերմէ առ նա եղելոյ բարերարութեանն նշանակ և ախոյեան կայ մինչև ցայսօր ժամանակի. զի առաջի դրան տան նորա երևի կանգուն ՚ի վերայ բարձր վիմի պատկեր պղնձի կնոջ ՚ի ծունր իջելոյ, և զբազուկս ՚ի ձեւ աղաչաւորի տարածելոյ։ Եւ ընդդէմ նորուն կնոջ կայ դարձեալ առնապատկեր ՚ի նոյն նիւթոյ՝ առեալ զիւրեաւ կրկնոց պարկեշտ, և կարկառեալ զձեռն իւր առ կինն։ Եւ ՚ի կողմանէ ոտից նորա ՚ի խարսխի անդ բուսեալ երևի արմատ ինչ օտար տեսլեամբ իւրով, որ

Եօթևտասներորդ. վասն նշանացն որ եղեն ՚ի Պենեպայ մնծամեծ գործոց Փրկչին մերոյ։

Այլ քանզի այս քաղաք յիշեցի, ոչ արժանի է զանցուցանել զսա զայսու պատմութեամբ, զի արժանի է սա լինել յիշատակաց այնոցիկ որ գայցեն զկնի մեր։ Վասն կնոջ տեղատեսի որոյ բըզխասին արեանն խաղացեալ եղանէր, զոր ուսաք մեք ՚ի սուրբ աւետարանէ անտի որ բժշկեցաւն ՚ի Փրկչէն մերմէ ՚ի ցաւոց անտի իւրոց՝ յայնմ քաղաքէ ասեն թէ էր նա, և տունն նորա յայտ էր անդէն ՚ի քաղաքին։ Եւ շնորհք ողորմութեանն որ եղեն ՚ի կինն ՚ի Փրկչէն մերմէ՝ նշան աքանչելեաց կայ մինչև ցայսօր ժամանակի. զի առաջի դրաց տան նորա կայ ՚ի վերայ բարձր վիմի պատկեր պղնձի կնոջ, զի ինքնալ է ՚ի ծունկս իւր, և առեալ ունի զձեռս իւր առաջի իւր, և աղաչէ ըստ նորա նմանութեան։ Եւ ընդդէմ նորուն կընոջ կայ դարձեալ պատկեր պղնձի առն մարդոյ, որ կանգնեալ և կայ՝ առեալ զիւրեաւ մեկնոց և կարկառեալ ունի զձեռն իւր կընոջն։ Եւ ՚ի կողմանէ ոտից նորա ՚ի վերոյ քան զչանգերձն բուս-

ելանէ բարձրանայ մինչև 'ի դրօշակ Հանդերձի նորա, և է դեղ ամենայն ցաւոց։ Ցայս անդրի զնամանութիւն պատկերի Փրկչին մերոյ ունել ասեն, և եկայ ինաց նա մինչև յաւուրս մեր, զոր և աչօք մերովք տեսաք, յուղևորութեան մերում յայն քաղաք։ Բայց ոչ զուր մանաց ինչ է, թէ 'ի հեթանոսաց բարեբարեաւքն 'ի Փրկչէն, զայս ինչ արարին նմա. քանզի և զառաքեալսն Պետրոսի և Պօղոսի զնամանութիւն կերպարանացն, և զնորուն խակ Քրիստոսի դեղովք նկարեալ մինչև 'ի մեր ժամանակս տեսաք պահեալ։ Ցի որպէս հաւանեաւք եմ անխտիր առաջինքն՝ ըստ օրինի հեթանոսաց իբրև փրկիչս ոմանս այս օրինակ պատուել զոսա սովորեցան [10]։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Վասն արուեստն Յակոբայ եպիսկոպոսի։

Ցի աշխատեցաւ Յակոբա՝ այն որ ընկալաւ նախ զեպիսկոպոսութիւն 'ի Փրկչէն մերմէ և յառաքելոց անտի զնկեզեցւոյն Երուսաղէմացւոց, զոր և եղբայր Տեառն կոչէն գիրք սուրբք, մինչև ցայսօր ժամանակի պա-

սեալ է արմատ ինչ որ օտար է տեսլեամբ իւրով ամենայն արմատոց, և ելանէ նա մինչև 'ի դրօշակ հանդերձի նորա, և է նա դեղ ամենայն ցաւոց. այս անդրի նմանութիւն Փրկչին մերոյ է, որպէս և ասեն. և եկայ մեաց նա մինչև յաւուրս մեր. և աչօք մերովք տեսաք զնա 'ի ժամանակի իբրև չորաք 'ի քաղաք անդր։ Բայց ոչ մեծ ինչ է այս զոր արարին այնոքիկ որ 'ի հեթանոսացն էին որ օգտեցան 'ի Փրկչէ անտի մերմէ։ Ալ զի և զկերպարանն նմանութեան զառաքելոցն զՊօղոսի և զՊետրոսի, և զնորուն Քրիստոսի նկարեալ նոցա դեղովք և կան մինչև ցայսօր ժամանակիս. քանզի առաջինքն դպրեցաքար ըստ սովորութեան հռոմպաշտութեան իբրև ըզփրկիչս յայսմ օրինակի պատուէին զնոսա։

Որ հետևաբերութ. վասն արուեստն Յակոբայ։

Ալ զաշխատեցաւ Յակոբա, այն որ ընկալաւ զեպիսկոպոսութիւնն 'ի Փրկչէն մերմէ, և յառաքելոց անտի զնկեզեցւոյն Երուսաղէմի, այն որ էր եղբայր Քրիստոսի որպէս և ասացեալ է 'ի գիրս, մինչև ցայսօր ժամանակի պահէ գայ յեղբարց անտի որ ան-

Հեաղ, եղբարք եկեղեցւոյն այնորիկ 'ի նահանեաց անտի վարելիք և մեծարելք շատ իսկ յայտ առնեն, թէ զիաւրդ առաջինքն մեր՝ և որ առ մեօք հաւատացեալք, զարս տուբրս վանն առ Աստուած սիրոյն նոցա արժանաւոր պատուով մեծարեն: Եւ վանն այսր այսչափ:

ԳԼՈՒԽ Ի.

Վասն տօնական թղթոցն Դիոնիսեայ, յորս և կանոնադրութիւնք վասն Զատկին:

Նոյն ինքն Դիոնեսիոս հանդերձ բազում Թղթովքն, զորս յիշատակեցաք՝ գրեաց 'ի ժամանակին և վասն տօնից, յորում բանս յօրինելով գովեստից վասն զատկական տօնին. յորոց վերին առ Փլաւիոս և զիւսն առ Դոմետիոս և առ Դիդիմոս ուղղեալ ընծայէ՝ եդ 'ի նոսա զանթամանն կանոնս ցուցանելով Թէ չէ արժան առնել զտօն Զատկի, բայց եթէ 'ի գարնանային զուգօրէից տունջեան և գիշերոյ: Առ այսոսիկ գրեաց և այլ Թուղթ առ երիցակիցս իւր եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց. և զայլս բազում 'ի ժամանակի անդ սաստկութեան հալածանաց:

դէն իրթէ 'ի կարգելոյ, և ցուցանէն յայտնապէս ամենայն մարդոյ Թէ առաջինքն և մինչև ցայսօր ժամանակի օրպիսի պատուով ուշ նէին զմարգս սուրբս սիրելիս Աստուծոյ: Վասն այսր մինչև ցայս վայր է:

Իննևտասներորդ. վասն թղթոցն զոր գրեաց Դիոնեսիոս վասն տօնից, և 'ի նոսին ասաց վասն Զատկի:

Դիոնեսիոս, ասէն, հանդերձ այլովք Թղթովք զոր գրեաց, են նորա Թուղթք զոր և յայնմ ժամանակի վասն տօնից, և խօսեցաւ նա բանս և վասն տօնին Զատկաց: Բայց զմի 'ի նոցանէն գրեաց առ Փլաւիոս* և միւս ևս առ Դոմետիանոս և առ Դիդիմոս, և եդ 'ի նմա զանթամանն կանոնան, և ցոյց 'ի նմա՝ Թէ ոչ է արժան առնել զտօնն զատկի, բայց Թէ զինի հաւասարելոյ տուբնջեան և գիշերոյ: Բայց հանդերձ այսոքիմբք գրեաց և այլ միւս ևս Թուղթ առ երիցոնան՝ որ էին ընդ նմա յԱղէքսանդրիա. և այլ միւս ևս գրեաց առանձինն, մինչդեռ հալածանքն կային ևս:

* Յօր. Փլաւ-ոս:

ԳԼՈՒԽ ԻԱ.

Վասն անցիցն որ անցին յԱղեքսանդրիա։

Եւ ՚ի դառնալ լինել խաղաղութեան՝ դարձաւ և Դիոնեսիոս յԱղեքսանդրիա. այլ ՚ի յառնել վերստին խռովութեան և քաղաքական պատերազմի՝ ոչ կարէր լալ նոցա տեսանել զամենայն եղբարսն ցրուեալս ընդ քաղաքն վասն աղիկի խռովութեան, ՚ի ոտնի զատկին իբրև տարագիր ոք ՚ի քաղաքէն յօտար սահմանաց անտի գրով խօսեր դարձեալ ընդ նոսա։ Ցետ տակաւուց և Հերաքեայ ումեմն եպիսկոպոսի Լեգիսպոս գրեալ վասն ոտնից՝ յիշատակ առնէ և զխռովից ժամանակին յԱղեքսանդրիա բանիւս այսու. Ա.յլ ես զի զարմացեալ եմ, եթէ պժուարին է ինձ խօսել ՚ի ձեզն Թղթոյ ընդ այնոսիկ՝ որ ՚ի Հեռաստան բնակեալ են, ուր զի և ընդ անձն իմ խօսել և խորհրդակից նմին լինել անկարանամ ամենևին։ Զի և ընդ աղիս իմ, ընդ բնակակից և ընդ հոգեկից եղբարս, ընդ նորին եկեղեցւոյ քաղաքակից Թղթով խօսել ամի-

Քառանկարդ. վասն ամենայնի որ ինչ անցք անցին յԱղեքսանդրիա։

Բայց յորժամ մերձ եղև լինել խաղաղութեանն՝ եկն այնու հետև Դիոնեսիոս յԱղեքսանդրիա, և գարձեալ իսկ յայսմ վերրէ ՚ի ժամանակի իբր եղև խռովութիւն և պատերազմ ՚ի քաղաքի անդ, վասն զի ոչ կարէր նա տեսանել զամենայն եղբարսն որ էին ՚ի քաղաքի անդ, զի բաժանեալ էին ընդ երկուս բաժինս։ Եւ գարձեալ յաւուրն ոտնի անդէն ՚ի նմին Ադեքսանդրիա գրեաց և խօսեցաւ ընդ նոսա գրով. իբրև այն ոք որ լուծեալ է արտարկոյ քան զաշխարհ։ և Ցարբերիս իսկ եպիսկոպոսն որ յետ այսոցիկ գրեաց, և այլ մեր և Թեոգնէ վասն ոտնից, և յիշեցուցանէ ՚ի նմին վասն խռովութեանն որ եղև Ադեքսանդրիա քաղաքի, այսու բանիւ՝ յասել խրատ։ Ա.յլ ես զի զարմացեալ եմ, եթէ գժուար է ինձ խօսել ՚ի ձեզն Թղթոյս ընդ այնոսիկ որ ՚ի հեռաստան բնակեալ են, ուր զի և խօսել ընդ անձն իմ և առնուլ խրատ ՚ի նմանէ գժուար է ինձ, զի ընդ եղբարս որ են որդիք սիրոյ իմոյ և մանկունք բնակութեանն իմոյ և որդիք անձին իմոյ, և ՚ի նմին կարգաց և ՚ի նմին եկեղեցւոյ, կարօտ եմ ես եթէ ՚ի ձեզն գրոյ և Թղթոյ խօսե-

պիմ, և Թէ զիարդ տաց տանել զայնոսիկ առ նոսա յանհնարից կարգի տեսանեմ։ Քանզի դիւրագոյն ևս է, յասացից ՚ի սահմանագլուխս աշխարհիս, այլ և Յո֊ րևելից յարևմուտս ընթանալ, քան յԱղեքսանդրիա ՚ի կողմանէ ՚ի կողմն անցանել։ Ցի քան զանապատն զմեծ և զանկոխ, ընդ որ զամս քառասուն գնացին որդիքն իսրայէլի, անանցք են արդ և անկոխ ՚ի քա֊ ղաքամիջի աստ փողոցք։ Եւ խաղաղ և անդորր նա֊ ւահանգիստքս բերեն արդ զնմանութիւն զծուոյն հերձելոյ և յայսկոյս և յայն ՚ի պարիսպս բաժանե֊ լոյ ՚ի Ձանապարհ ձիավարուն իսրայէլացւոց, յորոց յարահետ շաւիղս ընկղմեցան եգիպտացիքն. քանզի յաձախ բազմապատիկ կոտորածքս զկարմիր ծովուն տան մեզ զպատկեր։ Եւ գեան որ խաղայ ընդ մէջ քաղաքիս ցամաքեցաւ քան զնապատն անջրդի և տխրատեսիլ, յորում այնպէս ծարաւեաց Իսրայէլ ՚ի գնալն իւրում ընդ նա, մինչև աղաղակել և բողոք բառնալ առ Մովսէս՝ տալ նոցա ջուր ՚ի ձեռն սքան֊ չելարար տեառն յայսմաւուրս վիմի։ Եւ եղև դարձեալ զի այնպէս յորդեալ գեղաւ նա մինչև հեղեղել զա֊ մենայն երկիրն, զՁանապարհս և զագարակս, և Թու֊

ցայց. և Թէ զիարդ տաց տանել զնոսա առ նոսա՝ չգիտեմ, զի գիւ֊ րին է մարդոյ ոչ միայն արագաբս երթալ քան զամման, այլ և հա֊ սանել յարևելից մինչև ՚ի մուտս արեւու, քան անցանել յայսմ կող֊ մանէ Ազգքանդգը քաղաքի մինչև յայն կողմն. զի քան զայն անա֊ պատ գնեցն և զաշգաինն յոր ոչ ոք էանց ՚ի նա մարդ, ընդ որ որ֊ դիքն Իսրայէլի գնացին զերկուսք գաթովք, գժուար է մարդոյ ան֊ ցանել ընդ Ձանապարհ որ է ընդ մէջ քաղաքիս և ծովուն այնմիկ որ բաժանեցաւ, և անցին նոքա իբրև ընդ Ձանապարհ հորթեալ *, և ըն֊ կղմեցան ՚ի նմա եգիպտացիքն, նմանութիւն նորա եղեն նաւահան֊ գիստքն խաղաղութեան այնոքիկ որ առանց ալեաց ծփանացն են, սպանելոյքն՝ որ երևին ՚ի նոսա՝ ըստ նմանութեան Կարմիր ծո֊ վուն։ Եւ գեան որ խաղայ անցանէ ընդ մէջ քաղաքիս՝ երբեմն և֊ բևեցաւ ցամաքեալ առաւել քան զանապատն անջրդի, և խաւա֊ րին էր առաւել քան զնոյն անապատ յորում ծարաւեացն Իսրայ֊ էլ, ՚ի ժամանակի մինչդեռ գնայր ընդ նա. աղաղակեցին և զբողոք բարձին առ Մովսէս և զրիանց նոցա ջուր յայսմաւուրս վիմէ, այն որ գործեաց աքանչելիս միայն։ Իսկ երբեմն այսպէս լցաւ, զի հե֊ ղեղաց նա զամենայն գաւառս և զՆանապարհս և զագարակս, և արար նշան սպառնալութեան զայն ջուրց զհեղեղին՝ որ եղեն յաւուրս

* Յոր. ընդ ճանապարհս հորթեալ։

էր ինն սպառնալ ածել մեզ զբազմութիւն ջուրցն որ առ Նոյիս։ Եւ արեամբ և վիրաւորոք և դիակամբ հեղձուցելովք պղծեալ՝ խաղայ ինձանէ նա զօրհնապազ, որպէս եղեւն Փարաւոնի առ Մովսիսիս. զի դարձաւ նա յարիւն և նեխեցաւ։ Եւ որպէս ասպա ջուրք սրբիչք ջուրցն եղիցին այն որ սրբէն զանձնայն։ Կամ զիարդ Աւկիանոս մեծն այն և անբաւ և անզգալի ի մարդկանէ՝ զտեալ մարբեսցէ զայս ծով գառնութեան։ Եւ կամ որով օրինակաւ գետն այն յաղթ՝ որ խաղայ ելանէ յԱդին դրախտէ, ի չորս առաջս բաժանեալ, գայցէ և խառնեսցի ի մի առաջ ի Գեհոն, ի բաց լուանալով զսիկ և զտիղմ։ Կամ երբ ամենատ ի չարաչար գոլորշեացն պղտորեալ օդք սրբեալ պարզեսցին։ Զի այսպիսի և այսչափ շոգ ի յերկրէ, ի ծովէ և ի գետոց՝ հողմք և շունչք, և ի ձախճաց նետխութիւն հնչեալ, և որ ի ներքոյ տարերքն ապականեալ՝ փոխանակ ցօղոյ աւիշք թորեսցին և կեղ մահու։ Եւ զարմանան և չգիտեն թէ ուստի լինիցին յաճախ մահքդ և սրածութիւնք, ուստի չարաչար հիւանդութիւնք, ուստի ազգի ազգի ապականութիւնք, ուստի պէսպէս և բազմերանգ կորուստ մարդկան, և ընդէ՞ր մեծս այս քաղաք առաւելագոյն բազմութիւն

Նոյի. հանապազօր խաղայ և ինձանէ, երբեմն պղծեալ է արեամբ և վիրաւորելովք և հեղձուցելովք, որպէս զի եղև Փարաւոնի յառաւրան Մովսէսի, զի դարձաւ յարիւն և նեխեցաւ։ Արդ որպիսի ջուրք այլք եղիցին սրբիչք ջուրցն որ սրբէն զանձնայն ինչ. կամ զիարդ զնոցանէ ամենայնս մեծ, այն որ ոչ գործի ի նմա ձանապարհ ի մարդկանէ, և լուացեալ զայս ծով գառնութեան. կամ զիարդ խառնեսցին չորք առաջք գետոյն այն որ խաղայն և ելանէ յԱդին դրախտէ, և զնոցանէ լուացեալ զպղտորութիւն Գեհոնէն*. և երբեմն զտեսցին օդք պղտորեալք ի չարաչար հոտոց անտի՝ որ հարկանէ յամենայն տեղեաց. զի այսպէս ելանէ շոգի յերկրէ, և արդ ի ծովէ և շունչք ի գետոց, և հոտ ի մարգոց **, որպէս զի ապականեսցին բնութիւնքն և ցօղք և գարձցին և եղիցին կեղ մահու. և զարմանան և չգիտեն թէ ուստի լինիցին մահքդ. և ուստի չարաչար հիւանդութիւնք, և ուստի լինին ազգի ազգի ապականութիւնքդ. և ուստի լինին բազում կորուստ մարդկան պէսպէս որոշմանց. վասն երբ շիջ ի քաղաքի ատա Ժողովուրդ բազում բնակչաց ի մանկտոյ մինչև ի ծերս, որչափ և ծերացան կատա-

* ՅՕր. ի հեղէ։
** ՅՕր. ի հրէաց. բայց Ա. ի նաւաշանդստից։

քնակեաց յտանկիցի Հինքեան, Թէպէտ և ՚ի մանկանց սկսեալ ՚ի տղայոց մինչև ցզառամեալ ծերուԹիւն ՚ի համար արկցին. որ երբեմն զառոյգ այրական հասակ միայն հաշուէր. որ ՚ի քառամտասնեկից մինչև ցեօԹանասնամեայս այնչափ բազումք էին յայնժամ, որ չէր մարԹի արդ այժմ ընել զայն Թիւնոցա, որ յազգա համարեհ անտի քաղաքացւոցն, և ՚ի Թուոյ որոց յարքունուստ ընդունին զառձիկ ցորենոյ ՚ի չորեքտասան նամեհից մինչև յուԹասնամեհսն յայտ է։ Եւ որոց ՚ի դիմաց արդ կերպարանաց երիտասարդքն են ՚ի չափ յայն ժամու ծերոցն են։ Եւ Թէպէտ այսպէս զազգ մարդկան նուազեալ և ծախեալ տեսանեն յերկրի, և զի օր ըստ օրէ յաճախէ սպառ սպառս սատակումն կորստեան նոցա, սակայն ոչ դողան և ոչ երկնչին։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Վասն վերադառ հիւանդութեանն յԱղեքսանդրիա։

Ցետ տնական պատերազմին յաջորդեաց ՚ի նոսա ախտ մահու. և իբրև մերձ լինէր տօն զատկին, դարձեալ միւսանգամ գրով խօսեր Դիոնեսիոս ընդ եղբարս, և վասն յանկարծահաս նեղուԹեան վտանգին

բեալ հասակաք աՀեցուցանէր զնոսա և զայլս ՚ի քառասնամենից մինչև յեօԹանասունս. զի այսպէս բազմանային յայնմ ժամանակի, որ Թիւ նոցա այժմիկ ոչ կասարի, զի գրեցան և Թուեցան նոքա ՚ի չափ ցորենոյ որ տուեալ լինի յարքունուստ, ՚ի չորեքտասաներորդ մինչև յիսնամեայս. և այսոքիկ որ տղայքն են տեսելեաւքն իւրեանց եղեն վախճանակ այնոցիկ որ յառաջն ծերացեալն էին, և Թէպէտ և այսպէս տեսանեն՝ զի սպառի և ընկի ազգ մարդկան հասպասաղօր յերկրէ, սակայն ոչ դողան և ոչ երկնչին. զի յաճախէ և բազմանայ սպառ-խոսուս սատակումն կորստեան նոցա։

Քսաներորդ առաչնորդ. վասն հիւանդութեանն որ եղև յԱղեքսանդր քաղաքի։

Ցետ այսորիկ եկն Հասաք քազաքին Հիւանդութիւն մահու։ Եւ իբրև մերձ էր տօնն Հասանել՝ դարձեալ միւսանգամ Դիոնեսիոս գրով խօսեցաւ ընդ եղբարսն, և վասն ՆեղուԹեան վտանգին որ

այսպէս ասէ. Ա՛յլոց ՚ի մարդկանէ ոչ թուէին թէ ա-
ւուրքս տօնականք իցեն. զի և ոչ իսկ տօն է նոցա, ոչ
մերս այս, և ոչ այլ. վշտացեալոցն ոչ միայն ասեմ, այլ
և որ կարծեցեալ երևին թէ ուրախք իցեն. Ցի ամե-
նայն ուրեք արդ ողբք են, յամենայն տեղիս սուգ, և
վասն բազմութեան կատորելոցն և զօրհնասպաս դի-
ակնացելոցն հեծութիւն և լալուն ընդ քաղաքն հա-
մօրէն։ Եւ որպէս գրեալ է ի վերայ անդրանկացն
Եգիպտացւոց, սոյնպէս եղև և այժմ ազազակ մեծ,
զի չիք այն տուն՝ որ չիցէ ՚ի նմա մեռեալ, սակայն ե-
րանիւ թէ ի միայն էր մեռեալն։ Խաղողիք արդարև
և յառաջ քան զայս դժնդակագոյն վիշտք հասին ՚ի
վերայ մեր։ Նախ այն իսկ՝ զի տարագիր հանեաւ մեր
ժեցաք ՚ի քաղաքէս. և թէպէտ յամենեցուն հալա-
ծեալ և մահապարտեալք, սակայն անթերի կատա-
րեաք զտօնս մեր. և բնաւ իսկ ամենայն վայրք տառա-
պանաց մերոց, դաշտ ՚ի վայրի և անապատն, և նաւ
և պանդոկ և տուն բանտի՝ լինէր մեզ տեղի տօնա-
կան և ժողով կացզդի։ Ա՛յլ քան զամենեսեան զու-
արթագինս տօնեցին՝ որք կատարեցան վկայութեամբ
՚ի Քրիստոս, ուրախութիւն յերկինս առնելով։ Ցետ
այսորիկ պատերազմ և սուիր ժամանեցին մեզ, յորս
տառապեցաք և մեք հաւասար հեթանոսաց. որ միան-
դամ ՚ի ժանտութենէ նոցա եկիմ ՚ի մեզ՝ միայն տա-
բաք, և որոց ՚ի հաւասար կռուոյ այր ընդ ընկերին
տոյժք էին՝ բաժանորդ գտաք։ Սակայն խաղաղու-
թեամբն Քրիստոսի միխիթարեալ սփոփեաք, զոր մեզ
միայն ընտրեաց նա։ Եւ իբրև սուգ մի ժամանակ ոգի
առնուլ համարեաք և մեք և նորա, և ահա եկն ՚ի վե-
րայ ախտս այս ժանտ, քան զամենայն վիշտս վտանգի

եղև՝ եցոյց նոցա այսու բանիւ. Ա՛յլոց մարգկան, ասէ, ոչ երևի
նոցա թէ այս ժամանակ է ուրախ, զի և ոչ իսկ նոցա տօն՝ ոչ այս և
ոչ այլ, և միւս այլ ոչ այլ տօնքն միայն, այլ և ոչ այն որ կարծեաքն
երևի եթէ ուրախ է. առաւել զի ամենայն ինչ այժմ եղև ողբալի,
և ամենայն մարդ լայ և ողբայ. և ՚ի ձայն սգոյ երեմայ ընդ ամենայն
քաղաքս ՚ի բազմութենէն անտի սառակիլացն, և յայնցանէ որ մե-
ռանին հանապազորայ։ Որպէս և գրեալ է վասն անդրանկացն եգիպ-
տացւոց, սոյնպէս եղև այժմ ազազակ մեծ. զի չիք այն տուն որ չի-
ցէ ՚ի նմա մեռեալ. և Թողուին զնոսա ընկերք իւրեանց և փախչե-

երկիւղալի նոցա և ահագին. որ ըստ բանի մատենադրի ուրուքն ի նոցանէ, քան զամենայն կարծիս ակն կալուածեան առաւելեալ: Բայց ոչ այսպէս և մեզ, այլ վարժոց իմն կրթութեան լինէր այն մեզ և փորձ հանդիսի, զի թէպետև առաւել ի հեթանոսս անդր ընդարձակեր, այլ և ոչ ի մէնջ ինչ խորշէր մահն: Քանզի բազումք յեղարդ մերոց առ բազում գթոյն և սիրոյ ընտանութեան, ոչ անխայտալով անձանց, ձեռն միաբանց տալով յայց հիւանդաց շքջկին անխտիր, լիաբար զպէտս հոգալով և բժշկութիւնս կատարելով ի Քրիստոս, խնդութեամբ ախտակից և մահակից ընդ նոսա լինէին, զվիշտս ընկերին յանձինս իւրեանց ըզացուցեալ, և առ ի նոցանէ զախտս և զցաւս ի մարմնիս իւրեանց բառնալով: Ոչ բազումք ի խըզնամս հիւանդութեան և ի փրկութիւն մերձաւորին ինքեանք մահացան, զմահ նոցա յինքեանս փոխադրեալ և զամենական բանն, որ սիրակամութեան միայն ցոյցն Թուէր ցայնժամ, արդեամբք արդ լցին փարելի լեալ վասն նոցա՝ չուեցին յաստի կենացս: Ոչ ընտիրքն յեղարդ մերոց, երիցունք իակ և սարկաւագունք, և որք կարի իակ գովելիք էին առ ժողովրդին, այս օրինակ մահուամբ ելին յաշխարհէ, զոր և առ բազում աստուածպաշտութեան նոցա և հաստատուն հաւատոց ոչինչ պակաս համարիմ քան զնահատակութիւն մարտիրոսութեան: Ոչ որք զմարմինս սրբոց բազկօք խոնարհելովք ի ծոցս իւրեանց ընկալան, և զաչս նոցա և զբերանս կափուցին, և ընդգրկեալ և բարձեալ յաւս իւրեանց տարան, և լուացմամբ և հանգերձիւք զարդարեցին, և յետ սակաւուց և ինքեանք զնոյն սպաս ծառայութեան յայլոց ընկալան, զի որք կենդանիքն էին, զօրինակի գնացելոցն ընծայեին միշտ գՔեան: Իակ հեթանոսք սոցին հակառակ ամենևին. զխօթացեալս մերժէին ի բնակութենէն, և ի սիրելեաց իւրեանց փախուցեալ խոյս տային, և կիսամահս զնոսա ի վերայ Ձանապարհաց ընկենուին, և զմեռեալս անթաղս ամայիս ի բացօթեայս, զայն

ին, և ի վերայ Ձանապարհաց ընկենուին զնոսա մերձ ի մահ և զմեռեալս իւրեանց անթաղ ընկենուին. զի երկուցեալ զայն հա-

Հարեալք 'ի կցորդութենէ մահուան, զի գուցէ և 'ի նոսա փոխանցեսցի այն. և Թէպետ զամենայն Հաւատս հնարէին, սակայն 'ի նմանէ փախչել ոչ կարէին. Ցետ Թղթոյս այսորիկ իբրև խաղաղութիւն լինէր 'ի քաղաքին, գրեաց նա և այլ Թուղթ վասն տժգից առ եղբարս՝ որ էին 'ի կողմանս Եգիպտացւոց. զկնի այսորիկ և զայլս ևս բազում. են նորա և վասն շաբաթոյ և վասն կրթութեանն գրեալ Թուղթք. Իսկ առ Հերմոն և առ եղբարս՝ որ Աիգիպտոս գրելով՝ բազում ինչ զնեկոսէ և գչարեացն՝ որոց զնա յաջորդեցին յիշխանութեան, խօսելով՝ յիշեցուցանէ և զփառաղութենէն՝ որ եղև ապա առ Գաղիլեոսիս։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Վասն ինքնակալութեան Գաղիլեոսի։

Ցոր և չիք ինչ արգել 'ի նորին իսկ 'ի բանիցն լսել, որ ունի օրինակ զայս. Եւ ինքն Դեկոս, ասէ, զթագաւորաց զմին մատնեալ և զմիւսն պատերազմեալ վանեալ, ազգատոհմեալ իւրով հանդերձ վաղվաղակի արմատաքի 'ի բնէ կորեաւ։ Եւ ծանուցաւ ինքնակալ

բեալ էին նոքա Թէ մի խառնեսցի ընդ նոսա հաղորդութիւն մահու. այն Թէպէտ կարի խորամանկ էին, սակայն փախչել 'ի նմանէ ոչ կարացին։ Եւ յետ այսր Թղթոյ իբրև եղև խաղաղութիւն 'ի քաղաքի անդ, գրեաց նա գարձեալ Թուղթ տժգի առ եղբարսն որ էին 'ի կողմանս եգիպտացւոց։ Եւ այսու հանդերձ գարձեալ գրեաց նա այլս ևս. բայց է նմա այլ միւս ևս վասն չաբաթոյ, և միւս ևս վասն կրթութեան։

Գլուխ երկրորդ. վասն թագաւորութեանն Գաղիլեոսայ։

Ալ 'ի ժամանակի իբրև գրեաց զԹուղթն գարձեալ Դեկոս առ Հերմոն, և առ բազում եղբարսն որ էին 'ի կողմանս եգիպտացւոց, ասաց ինչ վասն բազում չարեաց գնացին Դակիոսեայ, և զայնոցիկ որ զկնի նոցա եղեն, յիշեցուցանէ 'ի նմա զփառաղութիւնն զոր արար Գայիոս յաւուրս մեր. չիք իսկ արգել լսել 'ի նմանէն. զի գրեաց այսպէս. Դակիոս, ասէ, ազգատոհմութիւրով հանդերձ 'ի բնէ վաղվաղակի սատակեցաւ և կորեաւ։ Բայց երևեցաւ Գաղիոս. և ամենայն մարդ գոհ է զնմանէ, այն որ էր

Գաղիլեացոյ և առնելոյն ընդունելի գտաւ. հին միանգամայն և նոր, նախ քան զնոսա և յետ նոցա Թագաւոր, ըստ բանին որ ասացաւ առ Եսայի. Որ ինչ՝ ի սկզբանէն էր, այն եկն և երևեցաւ. և արդ իսկ ծագի նա. զի որպէս ամ յորժամ՝ ի ներքոյ Ջառագայթից արեգական անցանէ, ծածկէ զնա և ստուերաձրս զնոսաւ ածէ սակաւիկ մի, և ինքն փոխանակ ընդ նորա երևի, և յանդանել ամպոյն և՝ ի սպառել, դարձեալ երևի և ծագէ արեգակն, որ յառաջագոյն ծագեալն էր միանգամ: այսպէս խտրոց՝ ի միջև արկեալ զանձն իւր Մակրինոս, և մօտ առ Թագաւորութիւն Գաղիլեացոյի կացուցեալ՝ ոչ ևս արդ երևի. քանզի և յառաջագոյն իսկ չէր նա: Իսկ սա նոյն է որպէս և էրն. և որպէս այն Թէ՝ ի բաց արար յիւրմէ սակաւիկ մի զիշխանութիւն իւր՝ որպէս զծերութիւնն, և սըրբեալ՝ ի չարեաց անտի իւրոց, և արդ պայծառագոյս փայլի, և՝ ի հեռաւորս երևի և լսի, և ամենայն ուրեք ընդ անայ: Ցետ այսորիկ եղոյց և զժամանակ գըրութեանն. Թէ ահա Թուի ինձ միտ եդեալ Հայել յաւուրս ամաց Թագաւորացն, և տեսանել զամբարիշտս մեծացեալս և ամբարձեալս, և ահա և սակաւիկ մի ոչ ևս այլ լսի և անուն իսկ նոցա անգամ: նոյն

Թագաւոր հին և նոր է առաջին. է և գնի այնոցիկ, որպէս ասացեալ իսկ է առ Եսայի մարգարէ, Թէ այն ինչ որ իսկզբանէ էին՝ ահա եկին և եղեն նոքա որ արդ ևս ծագելոց են. զորօրինակ ամպ յորժամ անցանէ՝ ի ներքոյ Ջառագայթից արեգական՝ ծածկէ և մեծացուցանէ զնա սակաւիկ մի, և ինքն երևի փոխանակ ընդ նորա. և յորժամ անցանէ և սպառի ամպն, երևի գործեալ և ծագէ արեգակն՝ որ յառաջագոյն ծագեալ էր. այնպէս իբրև եկաց և մերձեցաւ Մակրինոս * յայս արքայութիւնն՝ ի Գաղիլեա այս որ կայս արդ: այն անօրէնն Դակիոս չէ՝ ի միջի, քանզի և ոչ յառաջ իսկ էր նա: Իսկ ասէ այժմիկ որպէս և էր իսկ, և իբրև այն Թէ՝ ի բաց արար յիւրմէ զծերութիւնն իւր արքայութիւնն, և սրբեցաւ՝ ի չարեաց անտի որ էին՝ ի նմա. և արդ լուսաւորեալ է սատակապէս, և երևի և լսի՝ ի հեռաստանէ, և գործով յայնմանէ տեղւոջ: Ցետ այսորիկ եղոյց նա և զժամանակն յորում զայս գրեաց. զի ինձ, ասէ, անկանի՝ ի միտս իմ և հայել յաւուրս ամացն Թագաւորացն զի տեսանեմ ես ասացեալ, զի իբրև անուանեցան անօրէն ամբարիշտքն, յետ սակաւ ժամանակաց եղեն նոքա առանց անուանց. սոյն

* Յօր. Մրկիանոս. և փետ Մաւրիանոս:

պէս և զարդարն զայն և զսիրելին Աստուծոյ [11], որ զեօթնեքրդ ամ թագաւորութեանն լցեալ, յինն-երորդ անդր դիմէ, յորում և տան ցնծութեան կատարեսցուք։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Վասն Նեպոտեայ և վասն նորա մոլորութեանն։

Ի վերայ այսոցիկ ամենայն գրելոյն արար Դիոնեսիոս փութով խնամով և երկուս գիրս վասն աւետեաց խոստացելոյ Աստուծոյ. և պատճառք ձառիցս եղև Նեպոս սին եպիսկոպոս Հեգիպտոս՝ որ հրեաբար իմանալով զաւետիս աստուածեղէն գրոցն առ սուրբս, հազարամեան իմն մարմնաւոր փափկութիւնս դնէր ի վերայ երկրի, և զոյն զայս կարծիս ի ցայտնութենէն Յովհաննու համարէր հաստատել, և զգիրսն որ վասն այսորիկ յօրինէր՝ Հերքումն այլաբանականաց մակագրեաց. այս է՝ ընդդէմ որոց յայլաբանական միտս առնուն զբանս սուրբ գրոց։ Ասէ յաբեաւ ընդդէմ սորա Դիոնեսիոս գրովքն վասն աւետեացն Աստուծոյ, յառաջնումն անդ եդ զիւր միտս զինդրոյս

պէս և արդարս և սիրելիս Աստուծոյ։ Եւ իբրև անցին հեթեն ամ, ահաւասիկ ընդ կատարել միւս եւս տարի։ Ասա որ մեզ ի սմա առնէք տանս։

Գլուխ երրորդ. վասն Նեպոտեայ, և վասն հերձուածոցն զոր արար։

Հանդերձ այսու ամենայնիւ փոյթ յանձին կալաւ Դիոնեսիոս, և արար եդ երկու խօսս վասն աւետեաց պարգեացն Աստուծոյ։ Բայց պատճառք այսր ձառիցս նեփիւռէ եղև նմա. զի էր նա եպիսկոպոս յերկրին եգիպտացւոց, և հրեաբէն ուսուցանէր նոցա յաւել խրատս, եթէ աւետեալ լինին աւետիք սրբոց պարգեացն՝ որ գրեալ են ի գիրս, և հազար ամ եղ նա՝ թէ լինելոց է հաստատութիւն մարմնաւոր ի վերայ երկրի. համարեցաւ հաստատել զոյն իսկ սա զկարծիս մտաց իւրոց ի յայտնութենէն անտի Յովհաննու։ Եւ եդ նա խօսս վասն այսորիկ և գրեաց ի վերայ նորա յանդիմանութիւն առակաց բանից։ Բայց ևկաց ընդդէմ այսր Նեփիւռէայ՝ Դիոնեսիոս, խօսիւքն զոր գրեաց նա վասն աւետեացն, և ի նոյն խօսսն յայնս

այսօրիկ, և յերկրորդին զՅովհաննու յայտնութենէն առեալ խօսել՝ ի մուտս անդ բանին զնեպոտեայ յիշատակ առնէ այսպէս. Եւ որովհետև գիրս իմն նեպոտեայ յառաջ մատուցանեն, ընդ որ և պարծինն յոյժ, իբրև անչուշտ անընդդիմադրելի ցուցեալ նորա զԹագաւորութիւնն Քրիստոսի՝ ի վերայ երկրի, այլով բազմօք մեծարեմ յոյժ և սիրեմ զնեպոս՝ վասն հաւատոյն, վասն աշխատասէր փութոյն, վասն անխոնջ դեգերելոյն՝ ի գիրս սուրբս, և վասն բազում սաղմոսերգութեան, որով մինչև ցայժմ բազումք յեղջերոց միսեթարեալ սփոփին: Մեծաւ ակնածու պատուով ունիմ ես զայրդ զայդ, մանաւանդ զի կանխեալ հանգուցեալ է, այլ զի սիրելի է ինձ առաւել և քան զամենայն պատուական Ձշմարտութիւն, վասն որոյ որ միանգամ ուղղութեամբ է ասացեալ առ՝ի նմանէ արժան է առանց նախանձու գովել և ընդունել: իսկ որ ոչ առողջ մտօք են գրեալ, պարտ են մեզ քննել զայնոսիկ և մերժել: Ցի եթէ կենդանի էր նա, և լոկ բանիւ միայն հրատարակէր զկարծիս իւր, բաւական էին առանց գրոց բանակցութիւն ընդ նմա, որ հարցմամբ և պատասխանեաւ հաւանեալ արդեօք հակառակորդք յառաջին միաբանութիւն ուղղու-

---

եգ նա և զմիտս զայս զոր ունէր նա վասն այսր Ճառից: Իսկ յայն յերկրորդն ասաց վասն Ցովհաննու, և յիշեցուցանէ իսկզբան նորա զնեփիտէ, և գրէ վասն նորա այսպէս. Թէ վասն զի խօսս ունին զնեփիտեայ, այն որ նուաւն հպարտացեալ պարծին յոյժ· զի ցուցանի նուաւս, ասէ յայտնապէս, Թէ լինելոց է, ասէ, նուաւս արքայութիւնն Քրիստոսի՝ ի վերայ երկրի այլովք բազմօք: Ընդունելի է ինձ, և սիրեմ զնեփիտէ· և վասն հաւատոյն և վասն հոգաբարձութեան նորա, և վասն հանապազորդ լինելոյ նորա զգիրս ընթերցուիլ, և վասն բազում Թևակոխելոյ նորա զաղմոս առելով և մինչև ցայսօր ժամանակի մեծաւ չքով և պատկառանօք ունիմ ես զայրս զայս, մանաւանդ զի յառաջագոյն հանգեաւ: Բայց սակայն սիրուն և պատուական է քան զամենայն ինչ Ձշմարտութիւնն, զի արժան է գովել և տալ առանց նախանձու զամենայն ինչ զոր միանգամ ասաց ուղղութեամբ: Բայց հարցոյք և յանդիմանեսցուք զայն ինչ որ երևի, Թէ ոչ առողջութեամբ գրեալ է նորա. և Թէ կենդանի էր և գոյզն բանիւ ուսուցանէր* զայս՝ չատ բաւական լինէր խօսքն առանց գրոց· զի՝ ի ձեռն հարցանելոյն և պատասխանի առնելոյն հաւանեցուցանէաք և յանդիմանէաք զայնոսիկ որ ընդ-

* Ցօր. ուսուցան զայս:

Թէան գային, Եւ զի գիրք հրատարակեալ են արդ, և որպէս ոմանց կարծեալ էրևի՝ լի հաւանականու- Թեամբ. առ որովք զվարդապետս օրինաց և զմարգարէս ոչինչ համարին, յաւանան երթալ զկնի աւետարանին, և խոստեն և անարգեն զթուղթս առաքելոց, և զվարդապետութիւն գրոցս իբրև մեծ ինչ և խորհուրդ գաղտնի լինել խոստանան պանծանօք, և միամիտ եղբարց մերոց չտան թոյլ բարձրագոյնս ինչ և մեծամեծս խորհել վասն սքանչելի գալստեան Փրկչին մերոյ, և կամ վասն յարութեան մեռելոց և վասն ժողովելոյն մերոյ առ նա և կերպարանակից նմին լինելոց, այլ թէթևս յոյժ և մահկանացուս և որպէս որ կասս՝ աչն ունել հաւանեցուցանեն յարքայու- Թեան Աստուծոյ, վասն որոյ պարտ է և մեզ որպէս ընդ կենդանեաց խօսել ընդ եղբօր մերոյ Ներսեհեայ և յանդիմանել ցնոսա բանից յաւելուս ասել. Ցոր- ժամ յԱրսինոյէ էի ես, որպէս գիտեսդ՝ անդ նախ ի վեր երևեցաւ մոլորութիւնս այս, մինչև հերձուածս և ապստամբութիւնս առնել ընդդէմ հաստարակաց կաթողիկէ եկեղեցւոյ. կոչեցի զերիցսն և զվարդապետս զառաջնորդս շինից, գալով և եղբարց որք յօ-

գէմ գարձեալ լինին հակառակութեամբ Աչմարիտ վարդապետու- Թեանն իբրև եդեալ գիրք ի միջի, և կարծեալ երևի ոմանց՝ Թէ զօրութիւն ունի հաւանութեամբ խրով, և են վարդապետք օրի- նաց և մարգարէից. և իբրև զոչինչ համարեալ են նոցա. և ուսու- ցանեն երթալ զկնի աւետարանի, և խոստին և անարգեն զթուղթ- սըն առաքելոց. Բայց զուսումն զայս խօսից՝ խոստանան Թէ խոր- հուրդ ինն մեծ ծածկեալ է ի նմա, և միամիտ եղբարցն մերոց ոչ տան Թոյլ խորհել զայն ինչ որ վերագոյն և մեծամեծքն են, ոչ վասն սքանչելի գալստեան Փրկչին մերոյ իբրև Աչմարտիւ, և ոչ վասն յա- րութեանն մերոյ ի մեռելոց, և վասն ժողովելոյն մերոյ առ նա, և զի հանդիպեալ նմա մեք նմանել նմա. այլ հաձեն հաւանեցուցա- նեն կարծել զայն ինչ որ նուազք և ապականութեան իցեն, ասեն լինելոց է յարքայութեան Աստուծոյ իբրև զայս ժամուս: Վասն այսորիկ արժան է մեզ ասել ընդդէմ եղբօր մերոյ Ներսեհեայ որ- պէս ընդ առն միոյ կենդանւոյ: Ցեղ այսորիկ յաւելուս և ասէ. Ի ժամանակի իբրև եւ ես, ասէ, յԱրեւստաւնեայ, որպէս և գիտես գու իբրև յառաջ բազում ժամանակաք եղեալ զնեալ էր այս ու- սումն, որպէս զի և բաժինք հերձուածոց լեալ էին յեկեղեցւոջ, յղեցի կոչեցի զերիցսն և զեղբարսն մեր և զվարդապետս առաջ- նորդս որ էին ի շէնս, և գրգռեցի զնոսա զի յանդիման ամենայն ժողովոցն արասցուք զՏրցուածս բանին: Եւ բերին մասու-

ժարեցինն գալ. և յորդորեցի զնոսա հրապարակաւ առաջի ամենեցուն առնել քննութիւն զինդրոյս։ Եւ բերին մատուցին ինձ զիւրն զայն իբրև վկայեն անվկանդ և պարիսպ անառիկ. և նստայ ես ընդ նոսա զերիս աւուրս յառաւօտէ մինչև յերեկոյ, փոյթ կալեալ քննել և ուղղել որ ինչ՝ի գիրս գրեալ էր։ Եւ զարմացայ ես ընդ հաստատութիւն եղբարց, ընդ սէր Ճշմարտութեան նոցա, ընդ հաւանութիւն և ընդ հանձարն նոցա. զի կարգաւ և հեզութեամբ առնէաք մէք նոցա զվարդուածս մեր, զտարակոյսս և զմիաբանութիւն հաւանութեան. և խնամով խորշէաք չլինել յաղթասէր՝ յորս միանգամ հաւանեալ էաք, թէ պէտև Ճշմարտութիւնք իցեն այնոքիկ, և ոչ յորժամ ընդդէմ կայր մեզ բանն՝ հրաժարեալ խոյս տայաք. այլ ըստ կարի մերում մտանէաք՝ի բան անդր առաջարկեալ, և փոյթ յանձին ունէաք հաստատել զնա։ Եւ՝ի զօրանալ բանի հակառակորդին չամաչէաք մէք դառնալ յանձն առնուլ և խոստովան լինել, այլ անխիղճ հաւատով և առանց կէղծաւորութեան առ Աստուած ամբարձեալ զմիտս մեր, որ ինչ միանգամ բազմապատիկ ընծայութեամբ ըստ վարդապետութեան գրոց սրբոց հաստատեալ լինէր՝ ընդունէաք մէք։ Եւ՝ի վախճանի ապա՝ որ առաջնորդն էր և գլուխ

ցին առ նա զդէպս զայս, իբրև զնէն և զպարիսպ որ ոչ յաղթահարի։ Եւ նոսայ ես՝ի միջի նոցա զերիս աւուրս յառաւօտէ մինչև յերեկոյ, և կամեցայ ես յանդիմանել զայն ինչ որ գրեալն էր՝ի նմա. և զարմացեալ էի ես ընդ ուղղութիւն եղբարցս մերոց, և ընդ սէր Ճշմարտութեան նոցա և ընդ հաւանութիւն և ընդ հանձարն նոցա. զի կարգաւ օրինակաւ և խոնարհութեամբ հեզութեամբ առնէաք մէք նոցա զվարդուածան մեր և զհաւանութիւն և զմիաբանութիւն մեր. և յայնցանէ որ երեւեալն լինէին նոցա եթէ ոչ ուղիղ են՝ զի յորմէ պատճառանաց և իցէ հակառակութեամբ, կանխեցան և ըմբռնեցան միանգամ և երկիցս, և ըստ կամաց հաճութեան իւրեանց առնէին զնոսա, հրաժարեալ լինէաք և ոչ փախչէաք՝ յորժամ ընդդէմ կայր մեզ բանն. այլ որչափ կարէաք մատնէաք մէք՝ի բան անդր, և փոյթ յանձին ունէաք հաստատել զնա. այլ թէ և անկեալ ինձ լինէր բանն՝ ամաչէաք մէք դառնալ յանձն առնուլ. և խոստովան լինէ նա, որպէս և էրն նա, այլ խորհրդովք բարեօք առանց կէղծաւորութեան. և իբրև բարձեալ ունէաք ընդմիս մեր առ Աստուած, ՚ի ձեռն ցուցեալ վարդապետութեանն որ հաստատեալ լինէր գրոց սրբոց՝ ընդունէաք մէք։ Եւ յետոյ այն

ուսմանս՝ Կորակիոն անուն Նորա, խոստովան եղև և վկայեաց լաւ ի լաւ ամենայն եղբարցդ Ժողովականաց, Թէ ոչ ևս այլ յամառեալ կացցուք ուսմանս և մնաքառեցողացդ վասն Նորա, ոչ խօսեցցուք զայնմանէ և ոչ ուսուցցուք. զի շատ իսկ ասացաւ ի հերքումն Նորա։ Եւ ամենեքեան որ ի տեղւոջ անդ էին եղբարքն՝ ուրախ եղեն ընդ այս հաստատակաց քանակցութիւն, և ամենեցունն խոնարհել ի հաշտութիւն խաղաղութեան։

ԳԼՈՒԽ ԻԵ.

Վասն Յայտնուբեան Յովհաննու։

Եւ յետ այնորիկ գարձեալ Նորա ի բանս խրատ այսպէս վասն Յայտնութեան Յովհաննու ասէ. Եղեն ոմանք յառաջ քան զմեզ որ խոստեցին անարգելոյն բնաւին զայս գիրս. զի մի ի գլխոց գրոցն գատափետեալ և մերժեալ իբրև անհարազատս ամենևին, անբմաստս և անբանաւոր ասացուածս. և զանուն իսկ գրոցն սուտ լինել ցուցին. զի ոչ Յովհաննու է, և ոչ

որ առաքինորդ և գլուխ էր այս ուսման, զի անուն էր Նորա Կարկիոն, խոստովան եղև և վկայեաց յանդիման ամենայն եղբարցն մերոց որ կային անդ և լսէին, Թէ ոչ այսուհետև հայեցուքս յայս ուսումն, և ոչ մնաքառեցուքս վասն Նորա, և ոչ յիշեցուքս զսա և ոչ ուսուցուքս. քանզի զօրապէս ասացաւ վասն Նորա, զոր ասացաք մեք ընդդէմ Նորա։ Եւ այլ եղբարք բազումք ուրախ լինէին ընդ այս բանս, որ եղև ի մէջ հաստատակաց, և զի խնդրէցաք մեք առ ամենայն մարդիկ սիրով։

Գլուխ երրորդ. վասն Յայտնութեանն Յովհաննու։

Բայց գարձեալ մինչդեռ պատմէ գայ բանիւ իւրով Դիոնէսիոս վասն յայտնութեանն Յովհաննու զայս ասաց. Թէ են ոմանք որ յառաջ քան զմեզ եղեն, և խոստեցին անարգելոյն բնաւին զայս գիրս, և յանդիմանեցին զնա ամենայն բանիւ, և ասացին վասն Նորա. Թէ ոչ է գիտութեան և ոչ խորհրդոց ինչ. և սուտ է, ասեն, այս որ գրեալ է ի վերայ սորա Թէ Յովհաննու է. զի ասեն Թէ ոչ Նորա է, և ոչ յայտնութիւն է գա. զի չորք ասեն առաքաւանալ է գա ընդ քաղով մատրութեան. և ոչ միայն Թէ միոյ յառաքելոցն չիցէ գա,

Յայտնութիւն. այլ և ընդ յոյժ իսկ Թանձր տգիտու-
թեան քողով առագաստեալ, ասէն, որ ոչ միայն Թէ
առաքելոյ չէ դա, այլ և ոչ միոյ սուրուք ի սրբոց, կամ
Թէ միոյ ի մանկանց անտի եկեղեցւոյ շարագրեալ։
Ա՛յլ կերինթոս, ասէն, յորմէ և կերինթացւոցն ա-
ղանդ, կամեցաւ տալ գործոյն անուն արժանահա-
ւատ, զոր յանձնէն իւրմէ նիւթեաց. զի այս է նորա
ուսումն վարդապետութեան, Թէ ի վերայ երկրի լի-
նելոց է արքայութիւն Քրիստոսի. և որոց ինքն ցան-
կայր. քանզի մարմնաւէր էր և ամենևին իսկ մարմնա-
ւոր, նորօք ետես նա երազս. պորտն և որ ընդ պորտո-
վքն էն շուայտութիւնք, այս ինքն ի կերակուրս և
յըմպելիս և ի հարսանիս, յորս և պարկեշտագոյնս
գնալ համարէր, ի տօնս, ի զոհս, ի սպանդս պատա-
րագաց։ Ա՛յլ չհամարձակիմ ես մերժել ի սպառ զը-
գիրս զայս. քանզի բազումք յեղբարց փութով պըն-
դութեամբ ունին զսա. այլ քան զնմին իմաստութիւն
մեծ ինչ կարծիս զսմանէ ունելով խորհուրդս ինչ և
զնրաց իրաց զարմանալի ինն իմաստս գաղտնիս բովանդ
դակեալս ի սմա համարիմ. Թէպէտ և ոչ իմանամ,
սակայն կարծեմ Թէ միտք խորութեան էն ի բանս։
Եւ ոչ եթէ իմով խորհրդով չափեմ ես և քննեմ
զնոսա, այլ բազում ինչ ի նմանէ հաւատոց ընծայե-
լով՝ բարձրագոյն համարիմ լինել քան զնմ հասողու-

այլ և ոչ միոյ ուրուք ի սրբոց անտի, կամ Թէ միոյ ի մանկանց անտի եկեղեցւոյ արարին զայս գիրս. այլ կերինթոս, ասէն, եգ զսա, այն որ եգ զաղանդն որ անուանեալ կոչի կերինթացւոց, և կամեցաւ նա դնել անուն արժանաւոր հաւատալի այսմ գրոց՝ զոր նիւթեաց նա յանձնէ իւրմէ. զի այս ուսուցմն վարդապետութեան է աղանդին նորա, Թէ ի վերայ երկրի լինելոց է արքայութիւնն Քրիստոսի, և զայն ինչ զոր ցանկայր ինքն, քանզի մարմնաւէր էր և յոյժ մարմնաւոր, նոքօք ետես նա երազս. այսինքն կերակուրք և ըմպելիք և հարսանիք, և զորս համարի եթէ աքանչելապէս ա-
ռաց, Թէ տան՝ ասէ՝ և զոհք և զնիւք պատարագաց։ Ա՛յլ ես զգիւղ զայս գիրս ոչ համարձակիմ, քանզի բազումք եղբարք պնդութեամբ բազմաւ ունին զսա. այլ ասեմ Թէ քան զնմանատութիւն իմ մեծ են կարծիք մեզ առ նոսա, ակն ունիմ Թէ ծածկեալ և աքանչելի է ինչ որ գրոչմեալ է ի նմա, Թէպէտ և ոչ իմանամ. ակն ունիմ Թէ միտք խորութեան գրեալ են ի բանս նորա, և ոչ եթէ իմով խորհրդովք չափեմ ես և քննեմ զնոսա. և բազում ինչ ի նմանէ հաւատովք ընդունիմ և ակն ունիմ եթէ վերագոյն է Թէ յինէն ժամանակաց.

Թիւն, և ոչ մեբժեմ ես զայն ինչ՝ որում չեմն խեղա-
մուռ, և զարմանամ մանաւանդ քան եթէ գիտիցեմ:

Ցետ այսորիկ՝ ի քննն մատուցեալ զբանդակ գիրս
Յայտնութեան, յայտնապէս խոստովանի թէ անչնա-
բինն է յառաջեռն յառաջին ընթերցման անդ՝ ի միտ
առնուլ զզօրութիւն ասացելոցն և յաւելու՝ ի նոյն
այսպէս. Եւ յորժամ կատարեաց նա, զի այսպէս ա-
սացից, զամենայն մարգարէութիւնս, երանի տայ մար-
գարէին այնոցիկ որ պահէն զնա, որով և զանձն իւր
երանէ: Երանի՛, ասէ, որ պահէ զբան մարգարէու-
թեան գրոցս այսոցիկ. և ես Յովհաննէս որ լուայ և
տեսի զայս: Յովհաննէս կոչէ զսա, և Յովհաննու լինել
գրոցս՝ ոչ հակառակիմ. և թէ միոյ ուրուք՝ ի հոգե-
շունչ սրբոց անտի է գործդ միաբանիմ. այլ ոչ դիւ-
բաւ հաւանիմ թէ իցէ սա Յովհաննու առաքելոյ որ-
դւոյ Ջեբեդեայ եղբօրն Յակոբու, որում է աւետա-
բանն՝ որ ըստ Յովհաննու, և Թուղթն կաթողիկէ, Ջի
՝ի ձևոյ խօսիցն և յոճոյ բանից երկոցունց այսոցիկ, և
գրոցս Յայտնութեան օտար ամենևին առաջարկու-
թեանն և տպոց կերպարանացն, ոչ նոյն մատենագրի
գործ լինել ասեմ: Եւ զի աւետարանիչն ոչ ուրեք զա-
նուն իւր գրէ, և ոչ քարոզէ զանձն իւր՝ ոչ յաւետա-
բանի անդ և ոչ՝ ի թղթին: Եւ մինչդեռ ինքանէ գայ

և ոչ խոստմ ես զայն ինչ որում ես հաստ չեղէ նմա: Բայց զար-
մացեալ եմ ես առաւել ևս. զի չգիտացին զնոսա հանդերձ այսու-
ամբ հարցաւածոց զամենայն գիրսն Յայտնութեան, և եցոյց թէ ոչ
ոք կարէ իմանալ նմա գոլն և յայտնի խորհրդոյ: Եւ յաւել և
ասէ. Թէ յորժամ կատարեաց նա զամենայն մարգարէութիւնն,
ետ երանութիւն մարգարէն այնոցիկ որ պահէն զնա, և անձին իւ-
րում, երանի իցէ այնմիկ ասէ, որ պահեսցէ զբան մարգարէու-
թեան գրոցս զայսոցիկ. և ինձ Յովհաննու որ լուայ և տեսի զայս,
զի կոչի այս Յովհաննու, թէ այս գիրք Յովհաննու. վասն այսր ոչ հա-
կառակիմ ես, այլ միաբանեալ եմ ես այսմ՝ թէ միոյ ուրուք՝ ի
սրբոց անտի որ զՀոգին զգեցեալ էր՝ է սա. այլ չասեմ՝ թէ է սա
Յովհաննու առաքելոյ, որդւոյ Ջեբեդեայ եղբօրն Յակոբու, այն որ
էր նմա աւետարան և Թուղթն կաթողիկէ: Բայց նման է իրրև՝ ի
մտոց որ գրոյմեալ է յերկոսին՝ ի նոսա. և իրրև՝ ի տպոց բանից
նոցա և ըստ նմանութեան գրոց նոցա, թէ ոչ նորա է նա. զի աւե-
տարանիչն ոչ երբեք գրեաց զանուն իւր ուրեք, և ոչ քարոզեաց
զանձն իւր՝ ոչ յաւետարանի և ոչ՝ ի թղթի անդ. և մինչդեռ ինքանէ
գայ սակաւիկ մի բանիւն, ասաց դարձեալ թէ Յովհաննէս ոչ յիշեաց

սակաւիկ մի, ասէ դարձեալ. Թէ Յովհաննէս ոչ զանձն ինչն և ոչ զայլմէ ումեքէ յիշատակ առնէ. իսկ գրիչ Յայտնութեանս անդէնի՛ սկզբան կարգէ զանուն իւր, Թէ Յայտնութիւն Յիսուսի Քրիստոսի, ի՛ ձեռն որոյ ետ Աստուած ցուցանել ծառայից իւրոց, որ ինչ լինելոց է վաղվաղակի. և նշանակեաց առաքելով ի՛ ձեռն հրեշտակի իւրոյ առ ծառայ իւր Յովհաննէս. որ վկայեաց զվկայութիւն բանին Աստուծոյ և զվկայութիւն Նորա զոր ետես։ Ա՛յսպէս և ի՛ Թղթին գրէ. ի՛ Յովհաննէ առ եօթն եկեղեցիս՝ որ են ՚ի Ասիա ընդ ձեզ և խաղաղութիւն։ Իսկ աւետարանիչն և ոչ ի՛ կաթողիկէ Թղթին մակագրէ զանուն իւր, այլ անդէն առանց նախաշաւիղ աւելորդ ինչ բանից պարզապէս ի՛ խորհրդենէ անտի յայտնութեան աստուածութեանն սկսանի Թէ. Որ էրն ի՛ սկզբանէ, զորմէ լուաքն, որում ականատես իսկ եղեաք։ Վասն որոյ յայտնութեան և Տէրն մեր երանէ Սիմոնի. Երանի՛ է քեզ Սիմոն, որդի Յովհաննու, զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է։ Ա՛յլ և ոչ յերկրորդում անդ և յերրորդում Թուղթին, զորս Յովհաննու տան, Թէպետ և համառօտք, ա՛նունն Յովհաննու կարգի, այլ անանունն՝ երեց միայն գրէ։ Իսկ միւսոյն ոչ միանգամ միայն յիշատակու-

զանձն իւր ուրեք և ոչ երբէք զայլն։ Իսկ նա որ գրեաց զայս Յայտնութիւն, նոյնժամայն գրեաց զանուն իւր ի՛ սկիզբն նորա և ասէ՝ Թէ Յայտնութիւն Յիսուսի, այն որ ետ ցուցանել ծառայից իւրոց վաղվաղակի, և առաքեաց ի՛ ձեռն հրեշտակի իւրոյ, և եցոյց ծառայի իւրոյ Յովհաննու, այն որ վկայեաց վասն բանին Աստուծոյ, և վկայեաց վասն ամենայնի զոր ետես։ Եւ գրէ՛ ի Թղթի անդ գրեաց Յովհաննէս եօթն եկեղեցեացն՝ որ են ի կողմանս ասացաց, շնորհ ընդ ձեզ և խաղաղութիւն։ Աւետարանիչն և ոչ ի՛ կաթուղիկէ անտի յայտնութեան աստուածութեանն սկսաւ նա, այն որ էրն իսկզբանէ, այն որ լուաքն և աչաւք զնա աչօք մերովք. զի վասն այսր յայտնութեան, և տէր մեր երանէ Շմաւոնի. Երանի է քեզ, Շմաւոն, որդի Յովնանու, զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է։ Բայց և ոչ ի՛ Թղթի անդ յերկրորդում և յերրորդում որ են Յովհաննու, Թէպետ և սակաւք իցեն, անուն Յովհաննու չէ եղեալ ի՛ նոսա, այլ առանց անուան գրեաց. զի երբեմն այս ասէ ոչ չատ եղև նմա անուանել զանձն իւր միանգամ, և ապա զկնի պատմել զայն ինչ զոր ունէցէ նա, այլ յա-

Թիւն անուանին բառական եղև, և անտի ապա յառաջ մատոյց զպատմութիւնն, այլ յաւել երկրորդել. Ես Յովհաննէս եղբայր ձեր և հաւասարորդ նեղութեան և արքայութեան և համբերութեան որ ՚ի Քրիստոս Յիսուս. եղէ ես ՚ի կղզւոջն որ անուանեալ կոչի Պատմոս, վասն բանին և վասն վկայութեան Յիսուսի Քրիստոսի: Եւ ՚ի կատարածի գրոցս այսոցիկ: Ես Յովհաննէս լուայ և տեսի զայս ամենայն: Եւ Թէ Յովհաննէս է որ գրեաց զայս, պարտ է հաւատալ զի ինքնին վկայէ նա. բայց Թէ ո՞իցէ Յովհաննէսդ այդ, չէ յայտ. զի չասէ նա վասն անձին իւրոյ՝ որպէս բազում անգամ ասացեալ է նորա յաւետարանին Թէ. Աշակերտն այն զոր սիրէրն Յիսուս. կամ՝ Որ և անկաւն ՚ի վերայ լանջից նորա, և կամ՝ Եղբայր Յակոբոս. և կամ՝ Որ ականատես և ականջալուր եղև բանին: Ջի եթէ ինչ մի յայսցանէ ասացեալ էր, և զանձն իւր յայտնապէս ծանուցեալ, բայց և ոչ մի ինչ յայսպիսեացս ասէ. այլ Թէ, Եղբայր ձեր և հաւասարակից և վկայ Յիսուսի. և Թէ, Երանելի է զի եառնու և լուաւ զյայտնութիւնս զայս: Բազում համարիմ անուանակից գոլ Յովհաննու, վասն զի սիրելին ձնա և զարմանային և նախանձելին ընդ նա, և կամելին լինել սիրեցեալ ՚ի Տեառնէ՝ որպէս և նայն սիրեցաւս. որով և ցանկացան

ակնալ երկրորդել. Թէ Ես, ասէ, Յովհաննէս եղբայր ձեր և հաւասարորդ ձեր նեղութեան և արքայութեան և համբերութեան վասն Քրիստոսի եղէ ՚ի կղզւոջ որ անուանեալ կոչի Պատմոս, վասն բանին Աստուծոյ և վասն վկայութեանն Յիսուսի. և ՚ի կատարածի նորա ասէ զայս. Երանի իցէ այնմիկ որ պահիցէ զբան մարգարէութեան զգրոյս զայսորիկ. և ինձ Յովհաննուս որ լուայս զայս և տեսի եթէ Յովհաննէս է այն որ գրեաց զայս՝ ստացաւոյզ մեք: Բայց Թէ ո՞ր իցէ՝ չէ յայտ, զի ոչ ասաց նա վասն անձին իւրոյ, որպէս ասացեալ է նորա քանիցս անդամ յաւետարանին Թէ այնպէսն այն զոր սիրէր ձնա ասէր, և զի անկաւ ՚ի վերայ լանջից նորա, և ոչ եթէ եղբօրն Յակոբոս է նա, և ոչ զի եւս զաւր մեր և լուաւ ՚ի նմանէ, զի փոխանակ այսր ամենայնի զոր ասացաք մեք, նա այսպէս կամեցաւ յուցանել վասն անձին իւրոյ, և մի յայտնապէս չասաց, այլ Թէ նա է եղբայր մեր և կցորդ մեր և վկայ Յիսուսի, և երանելի զոր ինչ եւս և լուաւ յայտ յայտնութեան: Բայց բազումք եղեն որ յանուն Յովհաննու յօրինէին լինելին, այսինքն՝ վասն զի սիրելին ձնա, և զարմանային և նախանձելին ընդ նմա. և

կրեալ զանուանս. զոր օրինակ և յանուն Պօղոսի և Պե-
տրոսի բազումք յորջորջին յորդւոց Հաւատացելոց:
Բայց է միւս ևս Յովհաննէս՝ ի գործս Առաքելոյն՝ կո-
չեցեալն Մարկոս, զոր առին ընդ իւրեանս Պօղոս և
Բառնաբաս. զորմէ ասաց՝ Թէ՝ Ունէին և զՅովհաննէս
պաշտօնեայ: Այլ Թէ սա գրեաց զայսոսիկ, ոչ
անյայտ է ամենեքին. քանզի չէ գրեալ Թէ ընդ նոսա
չոգաւ նա՝ ի կողմանս Ասիացւոց. այլ Թէ իբրև իջին
նոքա՝ որ ընդ Պօղոսի էին՝ ի Պափոս և եկին՝ ի Պեր-
գէ Պամփիլիոյ. և Յովհան եթող զնոսա և գարձաւ
յԵրուսաղէմ: Այլ և զայլ ոմն Յովհաննէս համարիմ
լեալ յԱսիա. քանզի երկուս գերեզմանս ասեն յԵ-
փեսոս, և երկոքին իսկ յանուն Յովհաննու: Եւ յի-
մմտոյց և՝ի բանից և՝ի բաւից և՝ի ձեռն շարագրու-
Թեան երկոցունց գրոցն՝ յիրաւի ոք ասասցէ, այլ ինչ
լինել զայս քան զայն: Զի աւետարանն և Թուղթն
միաբանեալ հաւասարին միմեանց, միօրինակ ունելով
և սկիզբն. զի՝ի սմա ասէ. Ի սկզբանէ էր բանն. և՝ի
նմա. Որ էրն՝ի սկզբանէ. յայսմ Թէ. Բանն մարմին
եղև և բնակեաց՝ի մեզ, և տեսաք զփառս նորա, զփառս
իբրև զմիածնի առ՝ի Հօրէ. և յայսմ Թէպէտ և փո-

կամէին լինել սերեցեալք՝ի աւետնէ որպէս նա սերեցաւ, և էրն
՝ի վերայ անձանց իւրեանց զանուանս զայս: Զոր օրինակ յանուն Պօ-
ղոսի և Պետրոսի, և՝ի մէջ հաւատացելոց բազումք յորջորջին որդ-
ւոց իւրեանց: Բայց այլ միւս ևս Յոհան՝ի գործս առաքելոցն գը-
րեալ է որ անուանեալ կոչի Մարկոս, այն որ առին ընդ իւրեանս
Պօղոս և Բառնաբաս, զոյն զորմէ ասացն գարձեալ՝ Թէ Յոհան
պաշտօներ զնոսա: Այլ Թէ սա գրեաց զայս Յայտնութիւն, և ոչ ևս
ասեմ: Զի չէ գրեալ Թէ չոգաւ նա ընդ նոսա՝ի կողմանս Ասիա-
ցւոց. այլ իբրև իջին նոքա՝ի Փամփիւլացւոց. և Յոհան եթող զնոսա և գարձաւ զնաց
յԵրուսաղէմ: Այլ այն ունիմ Թէ այլ ոմն անուն Յոհան է նա
յայնցանէ որ էին՝ի կողմանն Ասիացւոց: Քանզի ասեն երկուս
գերեզմանս յԵփեսոս, և երկոքին նոքա Յոհաննու անուանին՝ Թէ
են: Նա և՝ի նմին խմաստութենէ և՝ի նոցունց՝ի բանից անտի, և
՝ի յոգուածոց յորինելոցն նմանէ և Թէ այլուստ կարծեալ էր քան
զոյն. զի միաբանեալ հաւասարին միմեանց յաւետարանի: Զի յա-
ւետարանի անդ ասէ, խակբանէ էր բանն. և՝ի Թղթի անդ ասէ,
որ էրն խակբանէ: Եւ յայնմ ասէ. Բանն մարմին եղև, և բնակեաց
՝ի մեզ, և տեսաք զփառս նորա իբրև զփառս Միածնի առ՝ի Հօրէ.
և՝ի Թղթի անդ զնոյն իսկ ասէ, Թէպէտ և փոխեալ են ասա-
ւէկ մի, Թէ այն ասէ որ լուաքն և տեսաք զնա աչօք մերովք, և ձեռա-

քըը մի այլափոխ սակայն նոյն Թէ. Ցորմէ լուաքն, ո-
րում ականատես իակ եղաք, և ձեռք մեր ջշոշափեցին
'ի վերայ բանին կենաց, և կեանքն յայտնեցաւ. Ուան-
զի զայս իբրև նախաշաւիղ 'ի մուտս անդ բանին գնէ,
զի յայտ արասցէ ապա ընդդէմ այնոցիկ՝ որ ոչ մաթ-
ռնով եկեալ ասէին զՔերն մեր. վասն այնորիկ և խը-
նամով զգուշութեամբ 'ի վերայ եբեը Թէ. Ցոր տե-
սաքն՝ վկայեմք և պատմեմք ձեզ զյաւիտենական կե-
նաց՝ որ էր առ Հօր, և երևեցաւ մեզ։ Ցոր տեսաքն և
լուաք՝ պատմեմք և ձեզ։ Ցնոյնիսկ դայ միշտ, և 'ի յա-
ռաջարկութենէ անտի իբրմ ոչ երբեք հեռանայ.
նորիմբք պատգամաբ և նորիմբք բանիւբ զնօսա իւր
յարմարէ։ Ցայս կարձ՝ 'ի կարձոյ յիշեցուցաբ մեբ, իսկ
որ միտ եդեալ ընդ այնս անցանիցէ, գտանէ յերկո-
սին իսկ 'ի նոսա յաձախ վասն կենաց, վասն լուսոյ
փախչելոյ 'ի խաւարէն. և յաձախագոյնս վասն ձըշ-
մարտութեան, վասն հնորհաց, վասն ուրախութենան,
վասն մարմնոյ և արեան Ցեսուն, վասն գատաստանին
և Թողութեան մեզաց, և վասն առ մեզ սիրոյն Աբ-
տուածոյ, և վասն պատուիրանին սիրոյ առ միմեանս և
զի զամենայն պատուիրանս պարտ է պահել, և վասն
յանդիմանութեան աշխարհի, սատանայի և առա-
քրիստոսին. վասն աւետեաց Հոգւոյն սրբոյ, վասն որ
դեգրութեան առ Աստուած. վասն հաւատոցն որ ա-

փեցաք զնա ձեռօք մերոյք վասն բանին կենաց, և ինքեանք կենաքն
յայտնեցան։ Ցայս ինչ ասաց նա, որպէս զի յայտ արար նա յետ
այսորիկ ընդդէմ այնոցիկ որ ասեն, Թէ ոչ մարմնով եկն մեր-
և վասն այսորիկ վաւերով սկզբունքիւ յարեաց յասել իբրամ-
Թէ զայն զոր տեսաքն զնա՝ վկայեմք և աւետարանեմք ձեզ վասն
բանին կենաց, որ էրն առ Հայր և երևեցաւ մեզ, այս՝ զոր լուաք և
տեսաք աւետարանեմք ձեզ. և տեսաւոր է բանին իւրոյ, և 'ի ձա-
ռիւ անտի նորա ոչ էլանէ. և զամենայն ինչ նորիմբք պատգամաբ
պատմէ։ Ցայս կարձ 'ի կարձոյ մեբ յիշեցուցաբ ձեզ։ Իսկ այն որ
ընթեռնուն իմաստութենամբ, գտանէ Թէ յերկոսին 'ի նոսա բա-
զում և տագաւել ասէ վասն կենաց և վասն լուսոյ, և խոսէ և ա-
նարգել գիտաբ. և ասէ միտ և հանապազորդ վասն ձշմարտու-
Թեան և վասն հնորհաց և վասն ուրախութենան, և վասն մարմնոյ և
արեան տեառն մերոյ, և վասն գատաստանաց։ վասն Թողութենան
մեզաց, և վասն պատուիրանի սիրոյն մերոյ առ միմեանս, և զի զա-
մենայն պատուիրանս պիտոյ է պահել. և վասն յանդիմանութենան
աշխարհի և սատանայի և առա քրիստոսին, և վասն խոստովանե-

մեհեան իւիք պահանջի ՚ի մէնջ. և թէ Հայր և Որդի նոյնօրինակ անուանեալ և յայտմ և յայնմ՝ Սրդ. եւ թէ մտադրութեամբ ոք կշռեսցէ զամենայն մի ըստ միոջէ, զնոյն երանգս, զնոյն ազգ գրութեան գտցէ և յաւետարանի և ՚ի թղթին. ուր գիրք Յայտնութեան անմանի ամենևին և օտար ՚ի սպառ ՚ի նոցանէ, ոչինչ ունելով ազգակցութիւն և ոչ դրացութիւն անգամ՝ ոչ ընդ շատ և ոչ ընդ փոքր: Այլ և ոչ յիշատակու- թիւն ինչ է կամ մտածութիւն ՚ի թղթի անդ կաթո- ղիկէին զՅայտնութենէն, թողից ասել յաւետարա- նի, և ոչ ՚ի Յայտնութեան՝ զթղթոյն: Ուր օտկայն Պօղոս ՚ի Թուղթս իւր ուրեք ուրեք զյայտնութեանց իւրոց յիշատակ առնէ, զորս և ոչ գրով աւանդեաց մեզ զնոսա առանձինն: Դարձեալ յոմնոյ անտի և ՚ի ձեռց շարագրութեանն մնացիմք կշռել զայլութիւն աւետարանին և թղթոյն ՚ի Յայտնութենէն. զի սոքա ոչ միայն անասլեաք ՚ի հելլենական ընթանան բար- բառ, այլ և կարի կորովութեամբ ՚ի խօսս ՚ի շարա- մանութիւնս և ՚ի շարակարգութիւնս բառից և բա- նից գրեալ են: Եւ օտար ամենևին ՚ի սոցանէ Յայտ- նութեանն գիրքն՝ յորում խուժդուժ ձայնք, ընդդէմ օրինաց լեզուին աստանդեալ գանգաչմունք և ահակա- կան բացատրութիւնք խիտ և հոծ երևին: Չերկուս

լոյ Հոգւոյն սրբոյ, և վասն որգեգրութեան առ Աստուած, վասն հաւատոցն որ ամենայն իւիք պահանջին ՚ի մէնջ, և յամենայն տեղ- օք անուանի զՀայր և զՈրդի: Եւ իրքև կշռեմք զամենայն զնոյն իսկ զնմանութիւն կերպարանաց տեսանելեաց զաւետարանին և զթղթոյն այնորիկ: Իսկ այն Յայտնութենէն փոփոխեալ և օտար իմն են բանք նորա յայտ բանից, և ոչ յարի բնաւ յայս բանս՝ ընդ շատ և ընդ փոքր, և ոչ անուանք անգամ ունի նա հաղորդութիւն ընդ այս բանս. և ոչ յիշատակ իրիք, և ոչ միաբ և խորհուրդք, և ոչ Թուղթին անգամ միաբանին Յայտնութեան այնմիկ, Թող թէ աւ- ետարանին, և ոչ Յայտնութենէն Թղթոյն այնմիկ: Նա և Պօղոս ա- ռաց ՚ի ձեռն Թղթոյ իւրոյ ինչ վասն յայտնութեանցն իւրոյ զոր ոչ գրեաց զնոսա առանձինն: Բայց գտանեմք կարեմք մեք կշռել, համեմատել զնաբերութիւնս նոցա ՚ի մեկնութենէ աւետարանին, և ՚ի թղթոյն այնորիկ ընդդէմ յայտնութեանն, զի սոքա ոչ միայն խուճս խուճս չին ասացեալ յոյն լեզուաւ, և կարի կորովու- թեամբ յարմարեալ են բանք նոցա, և հաստատուն խորհրդով և ուղիղ մեկնութեամբ գրեալ են և ոչ գտանին ՚ի նոսա պատ- գամս խժդուժս կամ աստանդեալս կամ ոգեյս. քանզի զերկոսին

զայս, որպէս հաւանեալս եմ, ունիմք աւետարանիչս՝ զՆորՀս բանից և զգիտութեան, զի էտ նմա Տէրն զկրկին զայս պարգեւս ՆորՀաց, զբան գիտութեան և զիմաստութեան։ Իսկ որ զՅայտնութիւնն ետես, և զգիտութիւն և զմարգարէութիւնն ընկալաւ՝ չՀակառակիմ ես ընդ նմա բնաւ, այլ տեսանեմ զի զբան և զլեզու ոչ Ճշգրիտ ունի նա զՀելլենացին, այլ ուրեք ուրեք խաթարալ շրջշրջի նա խօսիւքն, և յայտնապէս ընդդիմ օրինաց լեզուին մեղանչէ։ Այլ չէ պարտ չէ արժան խոտիւ պահանջել զայս ամենայն, զի մի որ կարծեացէ զինեն Թէ պարսաւելոյ վասն ասեմ զայս, այլ զի զանմանութիւնն գրոցս այսոցիկ յանդիման արարից։

ԳԼՈՒԽ ԻԶ.

Վասն բղոց Դիոնիսեայ։

Ի վերայ այսոցիկ են և այլ բազում Թուղթք Դիոնիսեայ, որպէս և որ ընդդիմ Սաբելի գրեալ առ Ամմոն եպիսկոպոս Բերինիկեցւոց, և որք առ Տէլեսփորոս և առ Եւփրանորա գրեալ։ դարձեալ միւս այլ Թուղթ առ նոյն ինքն Ամմոն և առ Եւբուլա։ գրեաց

ընտրութիւն բանից ունիմք նա. էտ նմա տէր միր բան գիտութեան և զիմաստութեան։ Իսկ այն որ զՅայտնութիւնն գրեաց վասն այսր Թէ յայտնեցաւ նմա, և ընկալաւ զգիտութիւն և զմարգարէութիւն, չՀակառակիմ ես։ Բայց տեսանեմ ես զբան և զլեզու ոչ զի Ճշգրիտ ունիմք նա յուսնարէն, այլ շրջշրջի նա խօսիւք խրթին։ բարբարոս լեզուով խիք խիք, և ոչ է պարզ և զուտ բանիւք։ Բայց այժմ չէ ինձ արժան զայս կարգել. մի որ կարծեացէ զինեն Թէ պարսաւելով ինչ պարսաւեցի զնա այսու բանիւք զոր ասացի։ Բայց միայն ցուցանելով ևՀե ցուցի ես, Թէ չեն Համեմատ այս գիրք միմեանց։

Գրականութիւն հինգերորդ. վասն բղոյն Դիոնիսեայ։

Չանգերձ այսոքիմբք են և այլ Թուղթք բազումք Դիոնիսեայ։ Բայց գրեաց նա ընդդիմ Սերիպեայ առ Ամմն եպիսկոպոս Բաբելիկեցւոց, և առ Տեղափորա, և առ Ռիբանորա։ Եւ գարձեալ այլ առ Ամմն և առ Փերա, եգ իակ վասն սորան Հարից այլ չորս խօսք

նա դարձեալ և վասն նորին առաջարկութեան գիրս չորս առ անուանակից իւր Դիմոթեոս եպիսկոպոս Հռոմայ. բայց յայսցանէ են նորա և այլ բազմապատիկ թուղթք առ մեզ: Որպէս և այլ ձեռն և լայն բանիւ խօսք ի ձեւ և յոճ թղթագրութեան, զոր օրինակ որ վասն բնութեան կամ բանից բարուց գրեալ առ Տիմոթէոս մանուկ. և վասն փորձութեան՝ ընծայեալ եւփրանորայ: Հանդերձ սոքօք գրեաց նա և առ բասիլիդէս եպիսկոպոս Պէնտապօլսեցւոց. յորում մեկնութիւնս արարեալ ասէ սկզբան գրոցն Ժողովողի. դարձեալ և զայլ թուղթս առ նոյն ինքն Բասիլիդէս ունիմք առ մեզ: Եւ պատմութեամբ այսոցիկ ամենայնի՝ ազգին որ գալոց է զնոսի մեր աւանդեմք մեք, թէ որպիսի ինչ եղև դարս այս:

ԳԼՈՒԽ Իէ.

Վասն Պօղոսի Սամոստացւոյ, և վասն աղանդոյ հերձուածոյն նորա զոր հրահանգոյց յԱնտիոք:

Կացեալ Սէքստոսի յառաջնորդութեան եկեղեցւոյն Հռոմայեցւոց զամս մեռասան [12], կալաւ զնոսի

զոր գրեաց նա առ Դիմոթեոս անուանակից իւր, որ էր նա եպիսկոպոս Հռոմ քաղաքի: Եւ այլ թուղթք բայց յայսցանէ կան սորա առ մեզ: Բայց գարձեալ այլ խօսք են նորա, զի բազումք են պատմութեամբք իւրեանց որ գրեալ են ըստ նմանութեանց թղթոց, և իբրև զայնոսիկ զոր գրեաց նա վասն բարոյից առ Տիմոթէոս մանուկ: Եւ վասն փորձանացն այնոցիկ զոր գրեաց նա առ Ափրանորայ: Ա՛յսու հանդերձ գրեաց նա և առ բասիլիդէս եպիսկոպոս որ էր ի Պէնդապօլիս, ասաց թէ արար եդ նա մեկնութիւն խնդրեան եկեղեսիաստեայ ընդդէմ այնորիկ: Եւ թուղթ և սմենայն մեզ: Զայս ամենայն գրեաց Դիմոթեոս: Ա՛յլ յետ պատմութեանցս այսոցիկ ցուցաք մեք գարուս այսմ որ գալոց էին զնոսի մեր առ յայսմ՝ զպատմութիւն զամենայնի որ ինչ միանգամ գոլեցան յաւուրս մեր:

Բասիլիդոյ վիճաբոյն. վասն Պաւղոսի շամշտացւոյ և վասն աղանդին հերձուածոց զոր կացոյց յԱնտիոք քաղաքի:

Իբրև եկաց Բսէտասս յեկեղեցւոջ անդ Հռոմ քաղաքի զմեռասան ամ, կալաւ զնոսի նորա Դիմոթեոս, անուանակից Դիմոթե-

Նորա զաթոռն Դիոնեսիոս անուանակից Աղեքսանդրացւոյն։ Այլ սովիմբ փոխելով Դեմետրիանոսի ՚ի կենաց, կալաւ զեպիսկոպոսութիւն Աղեքսանդրացոց Պօղոս Սամոսատացի։ Եւ իբրև ընդդէմ վարդապետութեան եկեղեցւոյ նուաստս և չարաչարս խորհէր սա վասն Քրիստոսի, որպէս եթէ քան զՀասաբակաց բնութիւն չիցէ ինչ աւելի ՚ի նմա, աղաչեցին զԴիոնեսիոս Աղեքսանդրացիքն փութալ գալ ՚ի ժողով. որ ՚ի պատձառս ծերութեան և տկարութեան մարմնոյն հրաժարեալ ՚ի ձեռն թղթոյ ծանոյց զիւր միտս զնոսին գրոյս։ Իսկ այլ եկեղեցեաց Հովիւք եկին ժողովեցան յամենայն տեղեաց ընդդէմ որոյ ապականիչն էր և զեաւ Հօտին Քրիստոսի, և փութացան ամենեքին ՅԱնտիոք։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Վասն անուանի եպիսկոպոսաց որ կացին ՚ի ժամանակին։

Ի ժողովական Հայրապետն երևելիք էին Փիլիմիլիանոս եպիսկոպոս Կեսարու Կապադովկեցւոց. Գրի-

սեալ աղէքսանդրացւոյ։ Եւ յայսմ ժամանակի զինի Դեմետրիանոսի էանկոյն յաշխարհն, այն որ էրն ՅԱնտիոք քաղաքի, կալաւ զեպիսկոպոսութիւնն նոցա Պաւղէ, այն որ էր ՚ի Շմշատ քաղաքէ։ Բայց սա արտաքոյ խոստովանութեան եկեղեցւոյ խորհէցաւ ՚ի վերայ Քրիստոսի խորհուրդ տկարութեան և աղքատութեան, իբրև ՚ի վերոյ գոյղպաբեալ մարդոյ։ Աղաչեցին զԴիոնեսիոս այն որ էրն ՅԱղէքսանդրիայ, գալ նմա ՚ի ժողովն որ եղև վասն նորա։ Եւ նա հրաժարեաց վասն ծերութեան և տկարութեան մարմնոյ իւրոյ. և գրեաց և եդ ՚ի թղթի և եցոյց զիւրս և զնորհուրդս զոր ուսեալ նա վասն այսր խնդրոյ։

Ֆաւաներորդ եօթներորդ. վասն անուանի եպիսկոպոսացն որ էին յայնմ ժամանակի։

Հովիւքն որ էին յայլ եկեղեցիս, ժողովեցան յամենայն տեղեաց վասն այնր որ եղեալ էր ապականիչ Հօտին Քրիստոսի, և ամենեքին փոյթ յանձին կալան ժողովեցան և եկին ՅԱնտիոք քաղաք։ Բայց ՚ի սոսին իսկ յայսոսիկ պաշտելի էին Գաբիղիոս եպիս-

գորիս և Ա.Թէոնադորոս եղբարբք՝ եկեղեցեացն Պոն-
տացւոց Հալիւբ. յորս և Հելենոս եկեղեցւոյն Տարսո-
նի, և Նիկոմաս Իկոնիոնի, ընդ այլք և Հիմնեկոս Ե-
րուսաղէմացւոց եկեղեցւոյն, և սահմանորդ Նորին
Թէոտեկնոս կեսարիոյ Պաղեստինացւոց. Մաքսիմոս՝
որ բազում գովութեամբ առաքինորդեր եղբարբն Պոն-
տացւոց։ Եւ այլք բազումք՝ որ հանդերձ երիցամբք
և սարկաւագօք եկին ժողովեցան ի քաղաքս ի սոյն
պատճառս, զորոց և չէր իսկ գժտարին տալ զհա-
մարն, այլ զերևելիս առաւել եդաք մեք աստանօր։
Արդ ամենեցուն սոցա ստէպ և ի բազում նուագս ժո-
ղովեալ ի միասին, բանք և խնդիրք յիւրաքանչիւր
նիստս յուզէին. և Թէպէտ նորա որ Սամոստացւոյն
էին համախոհք Թագուցանել ծածկել կամէին զո-
տարուսումն իւրեանց, սակայն սոքա բազում պնդու-
Թեամբ խայտառակէին զաղանդն նորա, և բերէին
յայտնէին զՀայհոյութիւնն՝ զոր Հայհոյեաց ընդիմա-
տոս։ Ի ժամանակին հանդերձ Դիոնեսիոս յամին եր-
կոտասաներորդի արքայութեան Գալիենոսի, կեցեալ
յեպիսկոպոսութեան Ազբքսանդրացւոյն եկեղեցւոյն

կոզոս Կեսարու կապադովկացւոց, և Գրիգորիոս, և Ա.Թէնաթո-
րոս, որ էին եղբարբք և հալիւբք եկեղեցւոյն պոնտացւոց. և Հելի-
նոս եկեղեցւոյն տարսոնացւոց, և Նիկոմէ յԻկոնացւոց քաղաքին,
և եկեղեցւոյն Երուսաղէմի Հիմնէոս և Թէոտիկնոս կեսարիոյ
պաղեստինացւոց, և Մաքսիմոս որ աքանչելապէս առաքինորդեր եղ-
բարբն որ էին ի Բոսոր քաղաքի, և այլք բազումք զորս ոչ բաւա-
կան լինի մարդ համարել զնոսա, հանդերձ երիցովք և սարկաւա-
գօք որ ժողովեցան ի քաղաքն յայն զոր ասացաք վասն նորա յա-
ղագս այսր պատճառանացս։

Քահանիրորդ ուրիշորդ. թէ որպէս յանկիմանեցաւ Պաւղէ
և տարապարեցաւ։

Եպիսկոպոսք որ առաւել երևելիք էին սոքա ամենեքին են
զորս համարեցաք. և բազումանգամ ի ժամանակս նշանաւորս ժո-
ղովեալ լինէին նորա ի միասին, և յարուցանէին բանս և խօսէին
յամենայն ժողովեաքն։ Եւ Թէպէտ և նորա առնէին պաղան չա-
մչուացւոց կամէին Թագուցանել և ծածկել զոտար ուսուցն իւ-
րեանց, սակայն սոքա բազում փութով պնդութեամբ խայտառա-
կէին զաղանդն նորա, և բերէին յայտնէին զՀայհոյութիւնն որ
Հայհոյեաց ընդիմատոս։ Յայնմ ժամանակի յանգեաւ Դիոնեսիոս յա-
մին երկոտասաներորդի արքայութեան Գալիենոսի, երբև կեցեալ
էր նորա յեպիսկոպոսութեան անդ աղբքսանդրացւոց զեղեծ-

զան ուԹ և տան, և փոխանակեաց զնա Մաքսիմոս։ Եւ Գաղիլեացի ընդ ամենայն զհինգետասան ամ կալեալ զիշխանութիւնն, եկաց յետ նորա Կղաւդիոս զերկեամ մի միայն, և եԹող Աբրեղիանու զաղքայութիւնն։

ԳԼՈՒԽ ԻԹ.

ԹԷ ո՛րպէս յանդիմանեաց Պօղոս ՚ի Մալքիոնէ յերիցուէ, որ Սոփեստիան էր երբեմն, և տարապիր եղև։

Յաւուրս Աբրեղիանու գումարեալ և վերջնոյ ժողովոյս ՚ի քաղմաԹիս եպիսկոպոսաց անտի, յորում և անպատրուակ խայտառակեալ և դատապարտեալ յայտնապէս առաջի ամենեցուն օտարուսումն հերձուածոյս այսորիկ յԱնտիոք քաղաքի հերետիկոսապետն Պօղոս, և մերժեալ տարագիր եղև ՚ի կաԹողիկէ եկեղեցւոյ որ ընդ ամենայն աշխարհ։ Բայց առաւել քան զամենեսեան յանդիմանեալ կշտամբեաց զնա ՚ի վեր հանեալ զնենգաւոր ծածկուԹիւն նորա Մալքիոն ոմն, այր կորովաբան, որ երբեմն յԱնտիոք իմաստակաց վարժարանին վարդապետ կացեալ, և ոչ եԹէ այսչափ միայն, այլ և վասն առաւել սնդուԹեան հաւատոց իւրոց առ Քրիստոս, նոցին եկեղեցւոյն երեց լինել արժանի էր գտեալ։ Այսպէս մինչ

եառնան ամ. և կալաւ զնին նորա Մաքսիմինոս։ Այլ երբեմն եկաց յարքայութեան Գաղիոս զհնգետասան ամ, Կղաւդիոս եկաց զաս-ըն մի։ Կալաւ զնին նորա Աբրեղիանոս, որ յաւուրս նորա ժողովեցան եպիսկոպոսք բազումք ՚ի ժողով անդր. և յայնմի եղև և գըս-բովեցաւ յամենայն մարդոյ օտար ուսմանէն իւրով պատճէ, այն որ եղև գլուխ և առաջնորդ հերձուածոյն յԱնտիոք քաղաքի, և տա-բագրեցաւ նա ՚ի կաԹողիկէ եկեղեցւոյ որ ընդ ամենայն աշխարհս։ Բայց առաւել ևս յանդիմանեալ կշտամբեաց զնա։ իբրև ինքն ծած-կեալ Թագուցանէր զանձն իւր, Մաղթեն՝ այր կորովի բանիւք և այլովք վարդապետութեամբք, և էր նա Սոփեստաէս յուսոյ-մանն որ էր յԱնտիոք քաղաքի. ոչ եԹէ այսչափ միայն, այլ վասն առաւել սնդուԹեան հաւատոց իւրոց զոր ունէր առ Քրիստոս, և

դեռ նշանագրեին երագագիր գրիչք՝ արար Մալքիան զմաքառումն խօսից իւրոց, զոր և ունիմք մինչև ցայսօր, և առաւել քան զայլս զամենեսին կարացեալ մեզ կանալ զգաղտնօրոգայթ թաքնութիւն առնն։

ԳԼՈՒԽ Լ.

Վասն թղթոյ եպիսկոպոսաց ժողովոյն ընդդէմ Պօղոսի։

Արդ՝ ի հասարակաց հաւանութենէ, իբրև՝ ի միջէ խորհրդոյ գրեցին հովիւքն՝ որ ժողովեալ էին անդ, թուղթ առ Դիոնեսիոս եպիսկոպոս Հռովմայեցւոց և առ Մաքսիմոս Աղեքսանդրացւոց, և ետուն տանել ընդ ամենայն գաւառս պետութեան, ցուցանելով զիւրեքն պնդութեան իւրեանց ամենեցուն, և զմոլորուսումն վարդապետութիւն Պօղոսի, և զյանդգնութիւն կշտամբութեան և զառաջարկս և զհարցուածսն զոր յարուցին ընդդէմ նորա. գարձեալ և զդնացս և զբարեայս զառնն պատմելով։ Ջոր և՝ ի նոյնից իսկ՝ ի բանից անտի բարւոք է երկրորդեալ ասատ՝ ի յիշատակ՝ որոց զհետ մեր եկեսցեն ազգ։

երկոյ անգամ արժանի եղև նա լինել եկեղեցւոյն նոցա։ Զի այսպէս իբրև գրոշմիւն և գրեին գրիչք երագագիրք, արար նա առ նմա ըզմաքառումն խօսից՝ որ մինչև ցայսօր ժամանակի տեղեկացեալ գըրեմք։ զի կարէ նա միայն՝ առանձինն առաւել քան զայլս խոչառակել զայն զայն որ թագուցանէր զմեռս և խաբէր։

Արդ մի թուղթ իբրև՝ ի միջէ խորհրդոյ գրեցին հովիւքն որ ժողովեցան անդ. յանուն Դիոնեսեայ եպիսկոպոսի Հռոմայեցւոց և Մաքսիմեանոս եպիսկոպոս եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց, և ետուն տանել ընդ ամենայն իշխանութիւնս. և ցուցին զիւրեքն պնդութեան իւրեանց ամենայն մարգկան. և զնոսաորութիւնն** օտար ուսման պատճէայ, և զանգիմանութիւն կշտամբութեան, և զհարցուածսն զոր յարուցին ընդդէմ նորա։ Եւ գարձեալ պատմեցին նոքա նովին թղթով զդնացս և զբարեայս զառն զայն. զի՝ ի նոցունց՝ ի բանից անտի իբրև վասն յիշատակի բարւոքք է երկրորդել սակա-

* Յօր. ՈՒ ԻՆՆ ԼԻ ԳՆ.

** Յօր. ՈՒՐՈՒԹԻՒՆ.

Նահականին.

Առ Դիոնեսիոս և առ Մարսիմոս և առ ամենայն պաշտօնակիցս մեր՝ որ իցեն ընդ ամենայն աշխարհ, եպիսկոպոսաց, երիցանց և սարկաւագաց և ամենայն կաթողիկէ եկեղեցւոյ որ ի ներքոյ երկնից, Հելենոս և Հիմենէոս և Թէոփիլոս և Թէոտեկնոս և Մարսիմոս. Պրոկղ և Նիկոմաս, և Ելիանոս և Պօղոս, Բոլաս և Պրոտոգենէս և Հերաքս և Եւտիքիոս և Թէոդորոս և Մալքիոն և Լուկիոս և որք ընդ մեզ են ամենեքեան, սահմանորդ մեզ քաղաքաց և ժողովրդոց եպիսկոպոսունք, երիցունք և սարկաւագունք և եկեղեցիք Աստուծոյ, սիրելեաց եղբարց ի Տէր ողջոյն։

Յետ սակաւուց յաւելուն ասել թէ. Ձղեցաք և առաքեցաք զայլ բազում եպիսկոպոսս հեռաւորս ի մէնջ՝ գալ հասանել ի բժշկութիւն մահաբեր ապականիչ մոլորութեանս. զոր օրինակ և առ Դիոնեսիոս Աղէքսանդրացի և առ Փիրմիլիանոս Կապադովկացի առ երանելին, Որոց Դիոնեսիոս պատասխանի առնելով յԱնտիոք, յորում և ոչ ողջունի անգամ արժանի արար զառաջնորդ մոլորութեանս, և ոչ յանուն նորա, այլ առ ամենայն եկեղեցին ուղղեաց զբաժուղքն, զորոյ և զպատճէնն դիցուք ի մեծոյ, նակ

*Եւ մի յայս Ջառս գրեցին այսպէս: Առ Դիոնեսիոս և առ Մարսիմիանոս, և առ ամենայն պաշտօնակիցս մեր որ իցեն ընդ ամենայն աշխարհս, եպիսկոպոսք երիցունք և սարկաւագունք, և առ ամենայն եկեղեցի կաթողիկէ որ իցեն ի ներքոյ երկնից. Հեղանոս և Հիմերոս և Թէոփիլոս և Թէոտեկնոս, և Մարսիմոս, և Պրոկղոս և Նիկոմէ և Հելիանէ, և Պաւղոս, և Բիզնոս և Փառիգենէս, և Մարքեղոս, և Եւտեքոս *, և Թէոդորոս, և Մելքեոն, և Ղուդիանոս, Հանդերձ ամենեքեանքդ որ բնակեալ են առ մեզ՝ ի քաղաքս մերձաւորս և ի մէջ հեթանոսաց, եպիսկոպոսք երիցունք և սարկաւագունք, և եկեղեցի Աստուծոյ ի սէր եղբարց մերոց՝ ողջոյն։ Ցետ սակաւուս միոյ յաւելուն և ասեն նոքա, Թէ յղեցաք և ազաչեցաք ի միասին և զայլս եպիսկոպոսս բազումս որ հեռի են ի մէնջ, գալ հասանել նոցա ի բժշկութիւն այսր ապականացնուցեան. զորօրինակ և առ Դիոնեսիոս աղէքսանդրացի և առ Պաբմենիանոս կապադովկացի առ երանելին։ Բայց Դիոնեսիոս գրեաց

* Յօր. Օνեփոս։

*Փիլիպիանոս երկիցս եկն ԱՅստիոք և դատապար-
տեաց զնորութիւն այլանդակութեան նորա, որպէս
և գիտեմք և վկայեմք որք անդր դիպեցաք, և այլք
բազումք տեղեկագոյն գիտեն։ Ա՛լ իբրև յանձն ա-
ռեալ խոստանայր Պօղոս դառնալ ՚ի մտաց անտի իւ-
րոց, հաւատաց նմա երանելին, և յուսացեալ ուղղել
զիրն առանց պատճառս տալոյ հայհոյութեան բանին
Աստուծոյ՝ եբարձ ՚ի նմանէ զիւր վճիռ դատապար-
տութեանն. բայց խաբեցաւ նա ՚ի նմանէ՝ որ զՍա-
տուած իւր և զՏէրն ուրացաւ, և զհաւատս՝ զոր ու-
նէրն ոչ պահեաց։ Եւ իբրև պատրաստեր Փիլիպիա-
նոս գարձեալ միւսանգամ գալ ԱՅստիոք, և մինչ ՚ի
Տարսոն ժամաներ, յառաջագոյն փորձ աստուածու-
թեան ամբարշտութեան առնն, և մեր հրաւէր կոչոյ առ
նա առաքեալ, և ժողովեալ ճեպեաք նմա՝ փոխեցաւ
նա յաշխարհէս։ Եւ յետ այլոց բանից տայ նա զնկա-
րագիրը վարուց հերեսիոփատպետիս Թէ որպիսի որ էր
սա՝ օրինակ զայս. Իբրև հեռացաւ նա, ասէ, օտարա-
ցաւ ՚ի կանոնաց եկեղեցւոյ և ՚ի սիրէ և յայլանդակ
վարդապետութիւն զառածեալ, ոչ է մեզ հարկ այ-
նուհետև զօտարոտին յեկեղեցւոյ դատել. որ յառա-*

*Թուղթ ԱՅստիոքայ, և զայն զառաջնորդ այսր մոլորութեան և ոչ
ողջունի անդամ արար արժանի զնա, և ոչ գրով գրեաց առ նա,
այլ առ ամենայն եկեղեցի։ Եւ զպատճէն Թղթոյն գրեցաք առ մեզ։
Պերպիլիանոս և երկիցս անդամ եկն և արհամարհեալ գտովեաց*
նա զայն ինչ զոր միանգամ նորոգեաց անօրէնն, որպէս գիտեմք և
վկայեմք։ որք գիտեցաք անդ, և այլք բազումք տեղեկագոյնք գի-
տեն։ Եւ իբրև յանձն էառ նա դառնալ ՚ի մտաց անտի յայնցանէ,
հաւատաց նմա և համարեցաւ Թէ ուղղեցեալ նա զայս իւր որպէս
զի ոչ հայհոյեցեալ բանն Աստուծոյ իւիք։ Բայց նա դարձաւ, զի
մերձեցաւ նա յայնմանէ որ ուրացաւն զտէր իւր և զԱստուած. և
զհաւատսն զոյնս զոր ունէրն յառաջագոյն՝ ոչ պահեցին։ Բայց
պատրաստեալ էր Պաւղոսիանոս գարձեալ միւսանգամ գալ ԱՅս-
տիոքայ. քանզի առեալ էր նա զիշխան զայսր չարեաց ուրացող ԱԱս-
տուծոյ, և եկն նա ՚ի Տարսոն։ Բայց մեք իբրև ժողովեցաք և կոչե-
ցաք զնա, և այն ունէաք Թէ եկեսցէ, նա հանգեաւ յաշխարհէ
սասի. և հանդերձ ոչղովք գրեաց նա և վասն այսր։ Ա՛լ իբրև հե-
ռացաւ նա ՚ի կենաց եկեղեցւոյ. և եկն յուսումն յօտար և ՚ի սնո-
տի. ոչ պիտոյ է մեզ դառել զնա ՚ի գործոց անտի իւրոց զայնպէ-
սին որ արտաքոյ է եկեղեցւոյ. այն որ յառաջագոյն կարօտ և սը-*

* Յօր. ԳՐԻՓԱՆՈՍ։

ջագոյն կարօտն էր և տնանկ, իբր զի ոչ ի հայրենի ընչից ընկալեալ նորա ժառանգութիւն և կամ յարու- եստ և ի ձեռաց ձարտարութենէ ստացեալ ինչ, ի բազում մեծութիւն էլեալ արդ հասանէ, ժողովէ- լով իւր յանիրաւութենէ և ի սեղանակատուտ յա- փըշտակութենէ և ի խուելոյ զեղբարս. որոց խոստա- ցեալ վարձուբ օգնական զրկելոյն լինել, դառնայ և ատէ նոցա. և յազատութիւն նեղելոյ՝ որոց յօժար իցէն ի տուրս միայն զի թափեսցին յաշխատութե- նէս. և զուր տարապարտուց զընծայս ընդունի, և շա- հավաձառ զաստուածպաշտութիւն համարի։ Եւ այն պէս սոսկացեալ ամբարտաւանէ, զի զանձամբ առեալ զաշխարհական պատիւս՝ հազարապետ արքունի մա- նաւանդ քան եպիսկոպոս կամի թէ ոք զնա կոչեսցէ, ձեմ առեալ գնալով ընդ հրապարակն միանգամայն և թուղթս ընթեռնուլով, յերթալն և հրամանն տայ սպասաւորին լու ի լու ամբոխին. և գուռնդ արքանե- կաց, կէսք յառաջոյ և կէսք զկին, մինչ զի առ փքոյ- ուռոյց մեծամտութեանն նախանձու առնել նշանակ զհաւատս մեր և առելութեան։ Եւ ոչ ի ժողովս ե- կեղեցւոյ պոռատախօս ձամարտակութեան նորա չափ է և սահման առ փառս ի մարդկանէ որասոյց և ըն- դունայն պերձութեամբն ապշեցուցանելոյ զողջամիտ

նակ էր։ Իբր ոչ հայրենի ընչից առեալ էր նորա ժառանգութիւն, և ոչ յարուեստ գիտութենէ, և ոչ ի գործոյ իրիք ստացեալ նա- և արդ եկեալ հասեալ ի բազում մեծութիւն յանիրաւութենէ, և կողոպտիչ եկեղեցեաց. և ի տուժից զոր տուժէ զեղբարս մինչև ցայսօր ժամանակի. և խոստանայ նա օգնական լինել զրկելոյն և արթաթացուցանել, վասն զի ասացն Նմա վարձս, և դառնայ առ նոցա. և զուր տարապարտուց առնու. նա յայնցանէ որք արկանէն զնա յիւրս ինչ զոր պատրաստեալ է նոցա. զի ասացն և թափեսցին յայնցանէ որ աշխատէն զնոսա, և աստուածպաշտութիւն իբրև շահի վաճառ համարեալ է նմա. և զի չպարտացեալ են միաք իւր և ամբարտաւանեալ, և զդեցեալ է նա զիշխանութիւնն աշխարհի. և կամի թէ ոք կոչեսցէ զնա առաջ սիրոյ և ոչ եպիսկոպոս, և առ- հեալ չըլի ի հրապարակս և ընթեռնուլ զթուղթս. և երթալով գալով ընդ հրապարակս ասկաւ հրամանն տայ թղթոյն, և չըլեալ են զոմանս բազում ոմանք ի նոցանէ. զան պինի նորա բազում ան- թիւք առ նախանձու արտաքինոյն զի նախանձեսցին վասն մեծա- մտութեան ամբարտաւանութեան պոռի իւրոյ. և ոչ վասն լինու- թեանն զոր ցուցանէ ի ժողով եկեղեցւոյ փոյթ ինչ է նմա, այն

զանփոքր մարդիկին։ Բեմ և աթոռ բարձրագահ կազ-
մեաց նա իւր, ոչ իբրև զաշակերտի Քրիստոսի. և
տուն առնի իբրև զիշխանաց աշխարհիս, ի նոյն ա-
նուն կոչելով զայն։ Եւ յատենի անդ ձեռն զաթոռին
հարկանէ, և տրոփէ ոտիւք իւրովք ի վերայ բեմին։
Եւ որ միանգամ չգովէնն զնա, և չշարժեն իբրև ի
Թէատրոնի զվարչամակս իւրեանց, և ոչ ազաղակեն
և ոչ ի վեր վազվազեն ըստ նմանութեան թիկնակից
նորա սրանց և կանանց՝ որ զնովաւ կան և լսեն նմա
լկտութեամբ, այլ ի տան Աստուծոյ պարկեշտ վայել-
չութեամբ և ցածութեամբ կան և լսեն նմա, նախա-
տակօծ զնոսա առնէ և թշնամանէ։ Եւ զվարդապետս
բանին Աստուծոյ զգնացեալսն՝ այսպէս կատականաց
առնէ յանդիման ամենայն ժողովրդեան, և խօսի մե-
ծամեծս՝ ոչ իբրև եպիսկոպոս ոք, այլ իբրև սոփես-
տէս և կախարդ խաբեբայ։ Այլ և զառղմոսս և զօրհ-
նութիւնս ի Տէրն մեր Յիսուս Քրիստոս՝ իբրև նորս
և ի նոր մարդոց յօրինեալս խափանեալ, պատ-
րաստեաց ինքն կանայս՝ երգել յաւուր մեծի զատկին
ի միջոցին եկեղեցւոյն ի գովութիւն իւր, զի որ լսէն
զնոսա գողութեան և սոսկութեան ունի զնա։ Եւ եպիսկոպո-
սացն մերձաւոր քաղաքաց և շինից և երիցանցն՝ որ

որ հնարի երևել ի նոցանէ գովելի ընդունայն, և զարմացուցանէ
այսու գործով զանձինս միամիտս։ Իակ բեմ և աթոռ բարձր զոր
կազմեաց նա իւր, ոչ իբրև զաշակերտ Քրիստոսի. և տուն առնի
իբրև գառաւօրեայ աշխարհի է նորա անուանել. և յարժամ գա-
ղտի ձեռն զբարձի հարկանէ, և տոփէ ոտիւք իւրովք ի վերայ բե-
մին իւրոյ։ Եւ որ միանգամ ոչ գովէն զնա և ոչ չարժէն իբրև ի
Թէատրոնի զուարթս* իւրեանց, և ոչ ազաղակեն և ոչ վազվազեն
ըստ նմանութեան խաւարչացն որ յարեալ են ի նա՝ արք և կանայք,
որ լսեն նմա լկտութեամբ։ Իակ զայնոսիկ որ լսենն ի նմանէ հնազան-
թեամբ և հանգարտութեամբ իբրև ի տան Աստուծոյ, պատուհաս-
տակօծ առնէ և թշնամանէ զնոսա թշնամանօք, և այսպէս կատակա-
նաց առնէ նա զմեկնիչս բանին Աստուծոյ որ եկեալն յաշխարհէ
յանդիման ամենայն ժողովրդեանն, և խօսի բանս մեծամեծս, ոչ իբ-
րև եպիսկոպոս՝ այլ իբրև սոփեստէս և իբրև զմոլորեցուցիչ խա-
բերայ։ Եւ զնոսա զոր ասացեալ է վասն տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի՝ փոխեաց զնոսա. զի ասէ վասն նոցա, Թէ նորք են նոր
մարդկան։ Իակ ինքն՝ պատարաստեաց կանայս, զի երիցին նորա եր-
գել ի վերայ անուան նորա ի միջոցի եկեղեցւոյ յաւուրն մեծի

* Յօրինակին խառնակ եր գրութիւն բառիդ։

սուտակասպասուԹեամբ ունէին զնա, Թոյլ տայ ներքողել զինքն առաջի Ժողովրդեան։ Եւ ոչ կամի խոստովանել ընդ մեզ զորդին Աստուծոյ ՚ի յերկինից իջեալ։ զորովք սղագունիւք արդ սահեալ անցանելոյ, ուր առ յապայս երկարագոյնս ունիմք Ճառել։ Եւ այս ոչ ՚ի լոկ բանից միոյն ցուցաւ, այլ և ՚ի յիշատակաց անտի նորա առաքելոց առ ձեզ՝ յաձախագոյնս հաւաստեալ։ ոչ վայրապար ինչ քանիցս անգամ վասն Յիսուսի Քրիստոսի ասաց Թէ ՚ի նեղբուստ յերկրէ ասաի է։ Իսկ որ օրհնութիւնս երգէն ՚ի նա և գովեաց որս առաջի Ժողովրդեան, և հրեշտակ յերկինից իջեալ զանօրէն զվարդապետն իւրեանց քարոզէին, ոչ սասան նոցա կամ արգելուլ, այլ մօտ առ ընթեր կայ նոցա Հպարտն և ամբարտաւան։ Իսկ զինչ արասցուք զկանայսն՝ որպէս Աստիճոքացիք կոչէն, քորս տանտիկինայս յարեալ ՚ի նա և յերիցուս և ՚ի սարկաւագունս. ընդ որս զայս և զայլ բազում անգուժելի մեզս, որոց գիտակն է և ականատես՝ սակայն ծածկէ զուշակէ զայնս զի Հնազանդեալս զնոսա կայցէ միշտ ՚ի ներքոյ ձեռն իւրոյ. և զորս քանիս և արդեամբ զերծ կէ, չՀամարձակին և նոքա ամբաստան զնմանէ լինել։ զի երկինքն վասն անձանց իւրեանց։ Այլ և ընդ ամենայնի զգաստութիւն. վասն որոյ որք զայսպիսեացս են

զաակին. զի որ լսէ զնոսա՝ գողութիւն և սոսկութիւն ունի զնա։ Եւ ոչ եպիսկոպոսացն և երիցանցն որ պատարագք և սուտակասպասուԹեամբ ունէին զնա, որ ՚ի քաղաքի անդ և ՚ի չէնսն մտանեն, Թոյլ տայ նոցա խոսել առաջի Ժողովրդեանն։ վասն Որդւոյ Աստուծոյ ոչ կամի նա խոստովանել. Եթէ յերկինէ իջեալ է։ Եւ այս ոչ գոյն բանիւք ասացաւ ՚ի նմանէն, այլ ՚ի խոսից անտի զոր առաքեաց՝ Յանաչի Թէ քանիցս անգամ վասն Յիսուսի Քրիստոսի ասաց, Թէ ՚ի ներքուստ է. և զայնոսիկ որ երդէն ՚ի վերայ անուան նորա և գովէն զանօրէն վարդապետն իւրեանց, և հրեշտակ իջեալ յերկինից կոչէն զնա՝ ոչ արգելուլ. այլ յորժամ կամի յառնել Հպարտն և ամբարտաւանն ասէն այսք։ Իսկ գնացարան առանիկիայս որ էն ընդ նոսա, և ընդ երիցունն և ընդ սարկաւագունսն որ յարեալ էն ՚ի նա։ Նա և այս իսկ Հանդերձ այլովք մեղօք որ չէք նոցա բժշկութիւն ծանէկ զնոցանէն. և իրրև գիտաց և յանդիմանեաց զնոսա զի երիցին Հնազանդեալ ՚ի ներքոյ ձեռն նորա, զնոսին իսկ զայնոսիկ բանիւ և արգեամբ զրկէ և զանոյ. և ոչ Համարձակին ամբաստան լինել և յանդիմանել զնա, զի երկինքն նորա յանձանց իւրեանց. այլ ապար զնոսա զի երկինքն մեծանալ. և վասն այսորիկ որ

մոլեալ գՀետ, սիրեն զնա և զարմանան ընդ նա։ Այլ առ ինչ զայս ամենայն գրեմք. տեղեկացեալ գիտեմք, սիրելիք, եթէ եպիսկոպոսն և ամենայն երիցանքն եկեղեցւոյ օրինակ բարեաց գործոց ժողովրդեանն պարտին լինել. ոչինչ անգիտանամք և զայս, զի որ միանգամ ժողովեցին առ իւրեանս կանայս ՚ի բնակակցութիւն ընդ նոսա՝ անկեալ կօրծանեցան և համ կասկածաւորք միայն եղեն։ Արդ թէպէտ և դիցէ ոք ՚ի մտի թէ ազատելի ինչ ոչ գործեաց, սակայն ՚ի կարծեաց որ անտի բուսանի, պարտ է նմա երկնչել և խոյրչել, զի մի գայթակղեցուցէ զոք, կամ ՚ի նմանութիւն իւր ձգեսցէ։ Ցի զիարդ սաստեցէ նա և խրատեսցէ զընկերն չյաձախել առ առնակինն՝ զի մի գայթակղեսցի, որպէս և գրեալ է. որ զմին եհան յիւրմէ, զերկուս ունի աղէկամարդս և գեղեցիկս տեսանելով, և յորժամ ուրեք երթայ ընդ իւր չքնեցուցանէ զնոսա, և փափկութեամբ մնուցանէ զնոսա և պէսպէս կերակրովք յագեցուցանէ։ Վասն այսորիկ լան և հեծծեն ամենեքեան. այլ յիշխանութենէ նորա և ՚ի բռնակալութենէն այնպէս երկուցեալ զահի հաբեալ են, զի չիշխեն ամբաստան զնմանէ լինել։ Այլ որպէս ասացաքս յառաջագոյն՝ մարթի էր ումեք կըշռ-

այսպիսի գործովք մոլեալ են, և սիրեն զնա և զարմանան ընդ նա։ Այլ զինչ գրեմք զայս. տեղեկացեալ իսկ եմք. սիրելիք մեր, զի եպիսկոպոսք և ամենայն քահանայք եկեղեցւոյս՝ նմանութիւն օրինակի գործոց բարեաց ամենայն ժողովրդեանն պարտ է նոցա լինել։ Նա և զայս գիտեմք մեք, թէ որ միանգամ ժողովեցին. իւրեանց կանայս բնակել ընդ նոսա՝ անկեալ կործանեցան. իսկ ՚ի կեսոյ վերայ կարծիք ևեթ էղեն։ Արդ թէպէտ և դիցէ ոք զայս ՚ի մտի եթէ ոչ գործեաց ինչ պղծութիւն պոռնկութեամբ, սակայն ՚ի կարծեաց անտի որ բուսանի յայլոց խրոց ասահ յայսցանէ, պարտ էր նմա երկնչել և զահի հարկանել. իսկ նա և ոչ այլոց հրամայէ նմանել նմա, զիարդ սաստեսցէ և խրատեսցէ նա զայլս, զի մի խանարհեացին առ կին մարդ, որպէս զի զգուշացի՝ զի մի գայթակղեսցի, որպէս և գրեալ է. այն որ արդ ևս եհան զկին յիւրմէ, և են ընդ նմա և այլ ևս երկու աղէկամարդք, և գեղեցիկ տեսանելով և յորժամ ուրեք երթայ՝ ընդ իւր չքնեցուցանէ զնոսա, և պէսպէս կերակրովք յագեցուցանէ զնոսա. զի վասն այսորիկ լան և հեծծեն բազումք ՚ի միտս իւրեանց. և այսպէս երկուցեալ զահի հարեալ են ՚ի խոտանելոյն անտի գժտութենէն նորա, և ոչ յանգիմանել զնա իշխեն։ Այլ յայսմ ամենայնի, որ

տամբել զնա, եթէ զմեր միաս ունէր նա, և ընդ մեզ էր համարեալ: Որ երկնամբ ուրացեալ զխորհուրդս եկեղեցւոյ՝ խարդաւանեցաւ պանծանօք ի պիղծ աղանդն Արտեմայ, զի պիտոյ է ցուցանել զայր նորա, քանզի այսու հետև չէն իակ պիտոյ զպատճառս այսոցիկ պահանջել: Եւ ի կատարածի թղթոյն յաւելուն այսպէս թէ իբրև տեսաք զնա զի հակառակ կայր Աստուծոյ, և ինքնակամ չտայր հրաժեշտ յաթոռոյն և ի մէնջ, հարկեցաք առնուլ կացուցանել փոխանակ ընդ նորա այլ եպիսկոպոս, ոչ առանց տեսուլեան Աստուծոյ՝ որպէս և հաւատացաքս, զԴեմետրիանու է բանելոյ՝ որ յառաջ քան զա առաջնորդ եկաց եկեղեցւոյս քաղում գովութեամբ, զորդին զԴոմնոս ամենայն առաքինութեամբ վայելչականաւ առն եպիսկոպոսի զարդարեալ: Եւ վասն այսորիկ ծանուցաք ձեզ զի սմա գրեսջիք և ի սմանէ ընդունիջիք զձուղթս միաբան հաւասարութեան: Իակ նա Սամոսատային առ Արտեմա գրեաց և առ համախոհս նորա, և որք ընդ նոսա հաղորդ գտանիցին: Եւ այսորիկ այսպէս ծանուցան ի մէնջ Արդ իբրև անկաւ Պաղոս ի հաւատոց անտի Ձշմարտութեան, ընդ նմին և յեպիսկոպոսութենէն որպէս յառաջագոյն ասացաք, Դոմնոս կալաւ զպաշտօն եկեղեցւոյն Անտիոքացւոց: Իակ իբրև

յառաջագոյն ասացաք, մարթի էր մարգոյ յանդիմանել զայնպիսին եթէ զմեր միաս ունէր նա, և ընդ մեզ համարեալ էր: Իակ զոյն որ գողացաւ զխորհուրդն եկեղեցւոյ և խայտառակեաց զնա պիղծ աղանգով Արտեմեանցդ զի պիտոյ է ցուցանել զայր նորա, ոչ այսու հետև պիտոյ է յետ այսր ամենայնի պահանջել ի նմանէ զայս: Եւ գարձեալ ի կատարածի Թղթին յաւելուն և ասեն զայս. եթէ նզեցաք ի հարկէ, ասեն, իբրև տեսաք զնա զի կայր հակառակ Աստուծոյ, և ոչ հարկեր քարոզել ապրագիր առնել զնա, և կանգնել կացուցանել փոխանակ ընդ նորա այլ եպիսկոպոս կամուղիկ եկեղեցւոյ, փութային Աստուծոյ, որպէս գիտացաք և ծանեաք, այս ինքն՝ զորդին Դեմետրիանոսի երանելւոյ, այն որ եկաց յայսմ եկեղեցւոյ յառաջ քան զա զքանելիսպէս և զարգարեալ ամենայն բաբի գործովք արժանի եպիսկոպոսութեան: Եւ յուցաք ձեզ զի սմա եղիջիք գոլ գրել Թուղթս և ի սմանէ ընդունել Թուղթս հաւասարութեան: Իակ նա առ Արտեմն գրեացէ և առ այնոսիկ որ ունէին զմիաս նորա և հաղորդին ընդ նմա: Այլ իբրև անկաւ Պաւղէ ի հաւատոց անտի Ձշմարտութենան, և ընդ նմին յեպիսկոպոսութենէն, որպէս յառաջագոյն ասացաք, Դոմնոս կալաւ զպաշտօն և-

ոչ կամի Պօղոս հեռանալ[45] ի տանէ անտի եկեղեցւոյն՝ դիմեցին աղերսանօք առ ինքնակալն Աբեղեանոս, որ արգասրութեամբ ելոյծ զինդիլն հրամանս տուեալ՝ թէ նոցա տացի տունն, ընդ որս Իսաւլիոյ և քաղաքին Հաւսմայ եպիսկոպոսունք թղթակիցք են և Տաղորդ։ Եւ այսպէս ծանուցեալն այն այր ամենայնից բազում անարգանօք ի ձեռն իշխանաց աշխարհիս հալածեցաւ յեկեղեցւոյ։

Այսպէս էր ի ժամանակին յայնմիկ ինքնակալն Աբեղեանոս ընդ մեզ. իսկ իբրև ընդերկարեցաւ նա յիշխանութեանն, այլ ինն խորհեցաւ նա, և յայնց խրատուէ չարժեալ յարոյց հալածանս ի վերայ մեր. վասն այսորիկ և բազում զրոյգք լինէին առ մարդիկ զնամէ։ Այլ իբրև մերձ էր նա, զի այսպէս ասացից՝ տալ հրովարտակացն ընդդէմ մեր զարքունին կնիք հաստատութեան, և ահա ժամանեցին ի վերայ նորա դատաստանքն Աստուծոյ. զի ի դնելն զձեռնն՝ յարմբկանէ անտի դատաւոին կապեցաւ, և մեծապէս յայտնի եղև ամենեցուն՝ զի ոչ երբեք համարձակեալ է իշխանաց աշխարհիս այսորիկ շարժել ընդդէմ եկեղեցւոյն Քրիստոսի, եթէ ոչ ի հզօր ձեռանէ անտի նորա և յերկնաւոր դատաստանէն առ ի խրատ և

կեղեցւոյն Աղուանից։ Իսկ իբրև ոչ կամեցաւ հեռանալ Պաւղէ ի տանէ անտի եկեղեցւոյ, յուցին վասն նորա Աբեղեանոսի արքային, և վասն ամենայնի որ ինչ արժան է առնել. վասն այսորիկ գրեաց նա բարեաւ. հրամայեաց իսկ թէ նոցա լիցի տուեալ տունն եկեղեցւոյ, վասն որոյ գրէն և առաքէն եպիսկոպոսքն որ են ի կողմանս Իսաւլացւոց և ի Հաւսմ քաղաքի որ յայսմ ասխատ էին։ Եւ այսպէս ամենայնից բազում անարգանօք ի ձեռն իշխանաց աշխարհիս հալածեցաւ յեկեղեցւոյ անտի այնն այն։ Բայց այնպիսի էր յայնմ ժամանակի Աբեղիանոս առ ժողովուրդն քրիստոնէից։ Իսկ իբրև ընդերկարեցաւ և ի թագաւորութեանն, այլ ինն խորհեցաւ նա ի վերայ մեր և յայնց խրատուէ գրեաց նա և յարոյց ի վերայ մեր հալածանս. յոյժ իսկ խօսեալ լինէին զնամէ զանն առ ամենայն մարդոց։ Այլ իբրև մերձ էր նա գրել թղթոյն խաբուէն վասն մեր, դատաստանքն Աստուծոյ ժամանեցին ի վերայ նորա. և իբրև ի հարկէ կապեցին զնա ի չարչարանս կապանաց անտի. և ելոյց ամենայն մարդոց զի անօգն լուսաւորութեամբ, զի ոչ երբեք անփոյթ առնէ Աստուած ի վրէժխնդրել ի դատաւորացդ աշխարհի, որ միանգամ կամին չարչարել զեկեղեցի Քրիստոսի։ Բայց եթէ թողուն նոքա ի տագնիկ հզօր ձեռանէ ի դատաստանէ անտի Ա-

յաւղղութիւն իւրոյն, ըստ ժամանակին զոր գիտէ նա, Թոյլ տացի։ Եւ իբրև եկաց Աբեղիանոս յինքնակալութեան իւրում զամն վեց, կալաւ զինի նորա Պրոքոս և սորա ևս իբր զնախորդ իւր գործելոյ սին կայցեալ յիշխանութեան, յաջորդէ զնա Կարոս հանդերձ որդւովք իւրովք Կարինոսիւ և Նումերիանոս։ Եւ սոցա ոչինչ աւելի քան զերամեայ մի ժամանակ վարեալ զթագաւորութիւնն փոխեցան իշխանութիւնն առ Դիոկղետիանոս, և առ այնոսիկ որ ապա գահակից կից ընդ նմա եղեն։ Ա՛ռ որովք յարեան հալածանքն յաւուրս մեր, յորում և քակտուին եկեղեցեաց։ Ա՛յլ փոքր մի յառաջ քան զայս եղ յաչխարհէ Դիոնեսիոս եպիսկոպոս Հռոմայեցւոց կացեալ ի պաշտաման իւրում զամն ինն, և կալաւ զաթոռ նորա Փեղիքս։

ԳԼՈՒԽ ԼԱ.

Վասն ձախող աղանդոյն Մանիքեցւոց, որ այն ինչ ևորոգ սկսաւ յայնժամ։

Յայնմ ժամանակի և Մանի՝ ըստ անուան իւրոյ դիւաշունչ աղանդոցն և խելառեալ մոլեգնութեամբ

տուծոյ իբրև ի խրատ պատուհասից, ի ժամանակի յորում գիտէ Թէ պիտոյ էցէն ի քննութիւն։ Ա՛յլ իբրև եկաց ի Թագաւորութեան ամգ Աբեղիանոս զվեց ամ, կալաւ զինի նորա Պրոքոս, և առ ևս իբրև զառաջինն քան զինքն, Կարոս հանդերձ որդւովք իւրովք որ ևն նորա Կիւրինոս և Նումերիանոս կալան զաբքայութիւնն։ Եւ գործեալ իբրև կացին նորա զերիս ամս առաւ ինչ սակաւ, ելն եհաս աբքայութիւնն առ Դիոկղետիանոս, և առ այնոսիկ որ եկին զինի նորա. զի ի ժամանակն նորա էղեն հալածանքն որ յարեան յաւուրս մեր, և քակտուին եկեղեցեաց։ Բայց յառաջ քան զայս ժամանակս սակաւիկ մի իբրև եկաց Դիոնեսիոս եպիսկոպոսն Հռոմայեցւոց ի պաշտաման իւրում զինն ամ՝ եղ յաչխարհէ, և կալաւ զինի նորա Փիլիքս։

Գլուխ երեսներորդ. վասն ձախող աղանդին մանիքեացւոց, որ այն ինչ նորոգ սկսաւ յայնմ ժամանակի։

Յայնմ ժամանակի և Մանի որ ըստ անուան իւրոյ մոլեգնեցաւ ըստ մտաց իւրոց յաղագն դիւահար՝ վառեցաւ ապականել զո-

զինեալ յաստուածամարտ բանսարկուէն ի կորուստ բազմաց ի վեր երևեցաւ։ Սա ըստ կենացն տարազու, ըստ բանից և ըստ բարուց խուժ ոք, և ըստ մտաց հանճարոյն դիւաբախ էր և մոլի, որ և աշակերտեալ ինքեան զնմանին իւր, զՔրիստոս յինքեան կերպարա- նել կեղծէր, և մխիթարիչ գոլ և նոյն ինքն Հոգին սուրբ զանձն քարոզէր, և ի մոլեգնութեան իւրում հպարտացեալ ապարթ աներ։ Եւ ըստ օրինակին Քրիս- տոսի ընտրեաց իւր երկոտասան աշակերտս ընկերս այլանդակ ուսման իւրոյ. և զի վաղուց չիջեալ բազ- մապատիկ աղանդոց զսուտ և զամբարիշտ վարդապե- տութիւնս ի մի կուտեալ՝ ի սահմանաց անտի Պարս- սից իբրև զձոյն մահաբեր ցանեալ սիրեցաւ յերկիրս մեր։ Ցորմէ և ամբարիշտ անուն Մանիքեցւոց ի բա- զում տեղիս ցայժմ գլուխ ի վեր ամբառնայ։ Այս- պէս եղև ստանուն գիտութեանն այնորիկ սկիզբն, որ ընդ այն ժամանակս վերաբուսաւ։

զիվ խորհուրդս, յորոյ զնա ստանայ Թշնամի Աստուծոյ ի կո- րուստ բազմաց։ Բայց է նա բարբարոս գործով և բանիւ և կերպա- րանօք, և բնութեամբ իւրով գիւաղար էր և մոլեր. և ետ զանձն իւր այնպիսեաց որ նման են նոցին։ Զի կամեցաւ նա առնուլ իւր գնմանութիւն կերպարանաց Քրիստոսի, և քարոզէր զանձն իւր և կռէր Թէ նա Հոգի սուրբ է բարեխօս, և հպարտացեալ ամբար- տաւանէր ի մոլեգնութեան անդ իւրում։ Եւ ընտրեաց նա իւր աշակերտս երկոտասան ըստ նմանութեան Քրիստոսի։ Եւ ու- սումն սուտ ամբարշտութեան յամբարիշտ աղանդոց որ ի վաղուց էս չիջեալ էին՝ եգիտ արծարծեաց, և իբրև զնեղի մահու տարածե- ցաւ յերկիրս յայս, յորում մեք եմք ի կռմանցն յարևելից։ Եւ անուն մանիքնացւոց տարածեցաւ առ բազումս։ Եւ այսպէս էր Ճառք այսր սուտ գիտութեան որ բուսաւ ընդ այն ժամանակս։

ԳԼՈՒԽ Լ.

Որ վասն առ Սերովբ ժամանակաւ Տաղկոյց եկե-
ղեցական մարդկան. և թէ ո՛չք ի նոցանէ կացին
մնացին մինչև յաւուր եկեղեցացն։

Ընդ այն ժամանակս կեցեալ Փեղիքս ի գլուխ եկե-
ղեցւոյն Հռովմայեցւոց զամս հինգ, յետ նորա կալաւ
զաթոռն Եւտիքիանոս. որ զամիսս տասն միայն տեւեալ
ի նմա, եթող զայն Գայիոսի՝ որ տեւեալ բաւեաց
մինչև յաւուրս մեր։ Եւ սորա կեցեալ զամս հնգե-
տասան յառաջնորդութեան անդ իւրում, կալաւ
զնոյն նորա Մարկեղինոս, առ որով եղեն և Հալա-
ծանքն։ Ի սոցա աւուրս՝ Աղտիոքացւոց եկեղեցւոյն
զեպիսկոպոսութիւնն զնոյն Դոմնէոս կալաւ Տիմոթէ-
ոս, և յետ սորա Կիւրեղ։ Առ սովաւ ծանեաք զԻորո-
թէոս երէց Աղտիոքացւոց եկեղեցւոյն, զայր բանի-
բուն. և զի փոյթ էր նա և սիրող աստուածեղէն տա-
ւից և կիրթ յերբայականին՝ վասն որոյ և բազում
դիտութեամբ զնոցին իսկ զընագիրսն աստուածա-
շունչ մատենիցն ընթեռնոյր անսայթաք։ Ազատական
առեալ էր նորա դաստիարակութիւն, և ի մանկու-

Երիսներորդ. վասն մարդկան մանկանց եկեղեցւոյ, որ փառաւո-
րեցան յաւուրս մեր. և թէ որք ի նոցանէ մնացին մինչև յա-
ւեր եկեղեցացն որ եղեն յաւուրս հալածանացն։

Ընդ այն ժամանակս իբրև եկաց յեկեղեցւոջ անդ հռոմայե-
ցւոց Փեղիքս զհինգ ամ, կալաւ զնոյն նորա Եւտիքիանոս։ Իբրև ե-
կաց և սա զեւթն ամիսս, եթող զտեղին իւր Գայիոսեայ. սա
յաւուրս մեր եղեւ։ Եւ իբրև եկաց և սա հնգետասան ամ, կա-
լաւ զնոյն նորա Մարկեղիանոս. սա որ հասեալ սմա հալածանքն։ Եւ
յաւուրս նոցուն վարեաց իսկ զեպիսկոպոսութիւնն անտիոքացւոց
զնոյն Դոմնէոս՝ Տիմոթէոս, և զնոյն սորա կալաւ Կանդեղեղոս։ Եւ
ի սորա յաւուրս գնացաք մեք, զի էր երէց յեկեղեցւոջ անտիո-
քացւոց Պաղոթէոս՝ այր կրօնիւ բանիբուն, և ունէր նա զշնոր-
հունեան գրոց Աստուծոյ. և փոյթ յանձին կալաւ նա վասն հե-
բրայեցի լեզուի, և զգիրս հեբրայեցիս ընթեռնոյր նա խնամաս-
թեամբ հանճարով։ Բայց կրօնիւ էր նա յառաջագոյն և յաւուրս

Թէնէ հետէ յոտնումն մակացութեան հելլենականին ոչինչ անմասն. այլ ի բնէ անտի և ի ծնէ ներքինի էր, ընդ որ Թագաւորն իբրև ընդ սքանչելիս զարմացեալ՝ մերձեցոյց զնա առ ինքն, և պատուեալ վերակացու կարգեաց ի վերայ ծիրանաներկացն Պափեայ՝ որ առ Տիբրոսիւ։ Զնա լուաք մեք շատ իսկ հմտութեամբ մեկնելով զդիս սուրբս՝ յեկեղեցւոջ։ Իսկ զկնի Կիբրղի Տիբանոս առաջնորդեաց եկեղեցւոյն Անտիոքացւոց, առ որով յաձախեցին յափշտակութիւնք և աւեր եւ կեղեցեաց։ Իսկ ի Լաւոդիկեացւոց եկեղեցւոջ յետ Սոկրատայ՝ Եւսեբիոս կալաւ զեպիսկոպոսութիւն, որ Այգեբանդրեայ քաղաքէն էր, և պատճառք փոխելոյ նորա ի հայրենի երկրէն այսր՝ եղեն իբր Պողոսի Սամոսատացւոյն. զի իբրև գայր նա վասն այսորիկ Այսորիս, արգելաւ ի փութոտ սիրողացդ բանին Աստուածոյ չգառնալ անդրէն յաշխարհ իւր, որ և առ մեօք գանձ ցանկալի ծանուցաւ աստուածպաշտութեան, զոր և ի բանից անտի Դիմնիսեայ ի վեր անդր կանուխ ի միջ եդելոյ՝ ի միտ առնուլ է։ Որում և յաջորդեաց Աճատոլիոս, բարին՝ որպէս ասեն, բարւոյն յաջորդեալ, որ և ինքն ծննդեամբ Այգեբանդրացի էր։ Սա բանիւ և կրթութեամբ հելլենականին խմաս-

խմասութեան յանձաց։ Այլ բնութեամբ իբրով էր սա ներքինի, այսպէս իսկ էր նա ի բան ծնէ իւրմէ. և Թագաւորն վասն սքանչելեաց մերձեցոյց զնա առ ինքն. և իբրև պատուի իշխան վերակացու ասուկան ի վերայ ծիրանաներկացն որ են ի Ծոբ քաղաքի կացոյց զնա յաձաղագոյն։ Ի սմանէ լուաք սակաւիկ մի ի ժամանակի իբրև մեկնէր զդիս Աստուծոյ յեկեղեցւոջ։ Իսկ զկնի Կանդիդեզոսայ՝ Տերենտոս առաջնորդեաց եկեղեցւոյն անտիոքացւոց. և զկնի Սոկրատայ եկաց յեկեղեցւոջ անդ Լաւոդիկեացւոց Եւսեբիոս որ էր յԱղեքսանդր քաղաքէ։ Բայց պատճառք գալոյ նորա այս է. իբր Պաւղեայ չամշտացաւ եղեն, զի վասն նորա ելին նա ի կռմանս Աստեից, և արգելաւ նա ի մարգոյ պիսակեաց որ էին ասա՝ զի մի դարձցի նա յաշխարհն իւր. զի փղձկութեան յանձին ունէին նորա վասն բանին Աստուծոյ։ Սոյն իսկ սա սիրելի է յաւուրս մեր իւրոց աստուածպաշտութեան։ Բայց գիրքն է մեզ ուսանել ի բանից անտի Դիմնիսեայ, զորս յաձաղագոյն եգեալ է մեր։ Զի Անասոլիս կալաւ զնին Եւսեբի. և եկաց այր քաջ զնին առ քաջի։ Նաև ինքն Անասոլիս էր նա ազգասացդ աղգաս։ Բայց բանիւ և ուսմամբ փիլիսոփայութեան յանձաց գլխաւոր էր նա առաւել քան զամենայն ընտրեալսն որ եղեն յաւուրս մեր։ զի համարուէ

տասիրութեան գլուխ և իշխան, և քան զամենեսեան որ յաւուրս մեր կացին իմաստնադոյն հաւատացեալ. ի համարողութեան, յերկրաչափականին, յաստղաբաշխութեան, ի տրամախոսական վարժս և ի բնագիտական տեսութիւնս և ի հռետորականին և ի համայն իսկ մանկացութիւնս ի ծայրն էր ժամանեալ, վասն որոյ և աղաչեալ Աղեքսանդրացւոց կարգել նոցա ի քաղաքին վարժող Արիստոտելական իմաստասիրութեան, Բազում ինչ գործս լաւութեան պատմեն զնմանէ գործեալ Աղեքսանդրիա ի պաշարման անդ Բրուքիոնի, յորում և նախապատիւ մեծարեր նա յիշխանս քաղաքին։ Բայց օրինակի վասն նշանագրեցից ինչ մի. իբրև պահապետ համբաւ ցորենոյ պահեցին, և քան զՀնամեացն՝ տագնապ սովոյն առաւել նեղէր զնոսա. անդ Ընատոլիոս այսպիսի ինչ հնարս եգիտ։ Իբրու զի մանս մի քաղաքին մարտակից և Թիկունք էին զօրացն Հռովմայեցւոց [14], որով և արտաքոյ պաշարմանս, յորում էր և Եւսեբիոս՝ միշտ երթեալ նորա Աւսորիս, որոյ և համբաւ անուան նորա յականջս զօրագլխին Հռովմայեցւոց հասեալ էր, յղեաց եցոյց նմա Ընատոլիոս վասն որոց սատակէին ի սովոյ յարգելանի անդ քաղաքին։ Իսկ նա իբրև

Թուոց և չափոյ երկրի և ուսմանէ աստեղաց, և ուսմանէ մոգութեան, և տեղեկութեամբ բարոյից, և ուսմանէ հռետորութեամբ կատարեալ էր։ Եւ վասն այսորիկ և զվարդապետութիւն կարգին Արիստոտելոյ, որ էր յԱղեքսանդր քաղաքի, աղաչեցին զնա քաղաքացիքն՝ կացուցանել։ Պատմեն իսկ զնմանէ բազում առաքինութիւն զոր գործեաց նա յԱղեքսանդր քաղաքի. ի ժամանակի իբրև էր պաշարեալ քաղաքն, և չուրջ պատեալ պահէին զնա զինուորքն, և պատուհասէ նա յամենայն մարդոյ։ Բայց վասն օրինակի ցուցանելոյ որ ինչ պատմի վասն նորա, յիշեցուցանեմ ես իբր մի զոր գործեաց։ Աւանն Թէ՛ի ժամանակի իբրև պատեալ պաշարեալ էր քաղաքն ի Թշնամեաց անտի, պակասեաց անդ կերակուր պարզանց. բայց առաւել քան զպաշարեալսն ի Թշնամեաց նեղեալ էին զինուորքն՝ տագնապ սովոյն նեղեալ բռնագաւեր զնոսա։ Ալ իբրև էր անդ այրս այս, խորհեցաւ և գործեաց իբրև զայս իբս։ Իբրու զի մի մանն քաղաքին Թիկունք էին և օգնական զօրացն Հռովմայեցւոց և ընդ նոսին էր և Եւսեբիոս, և ոչ էր նա արգելեալ ի քաղաքին. զի յայնմ ժամանակի միշտ երթեալ էր նորա ի կողմանս Աւսորոց, ընդ այնոսիկ էր նա՝ որ ի քաղաքին չէին արգելեալ, և առաքինութեամբ մեծ և անուն անուանի առացաւ նա առ զօրագլխին Հռո-

տեղեկացաւ զրուցացն, ինդրեաց 'ի զօրագլխէ անտի Հոռոմոց իբրև 'ի հնորհս մեծի պարգևի՝ առլել այնոցիկ՝ որ 'ի Թէնամէաց անտի կամակար գայցեն 'ի հնազանդութիւն. և 'ի հանդիպել ինդրոյն յղեաց անդէն Եւսեբիոս և եցոյց Անատոլեայ։ Իբրև գիտաց նա զնոստուհինն, գումարեաց զժողով խորհրդեան Աղեքսանդրացւոց, և նախ զառաջինն Քանայր հաւանեցուցանել զնոսա՝ զի ձեռն տայցեն 'ի Հոռոմն բարեկամութեամբ։ Սակայն իբրև ետես եթէ զայրագնեալք խրատանան նորա լսել բանն, այլ չկարծեմ՝ ասէ, եթէ և յայսմ օր հաւանիցիք ինձ. խրատ տամ ձեզ Թողուլ արտաքոյ քան զդուռն քաղաքիս զամենայն բերան անպիտան՝ երթալ ուր և կամիցին, զպառաւսն, զմանկտին և զծերս. և լինդէր ունիմք զնոսա առ մեզ մեռանել զուր տարապարտուց. և կամ զորս խեղեալ և ապականեալ իցեն մարմնով լինդէր սատակեմք 'ի սուլոց. այլ արժան է մեզ զարս միայն և զերիտասարդս պահել, և 'ի նոսա բաշխել զկարեւոր մեր ցորեան՝ որք կարողքն են և բաւականք 'ի պահպանութիւն քաղաքիս։ Եւ այսպիսի խորհրդով հաձեաց հաւանեցեալ նա զժողովն. և ինքն յարուցեալ նախ վճիռ. ետ՝ թէ

մոց, և յղեաց եցոյց նմա Աննատոլէս վասն այնոցիկ որ սատակէինն 'ի սուլոյ յարգելանի անդ քաղաքին։ Իսկ նա իբրև տեղեկացաւ զբուացն, ինդրեաց 'ի զօրագլխէ անտի Հոռոմոց, առլել այնոցիկ որ գնան և հնազանդին ասցա 'ի Թէնամէաց անտի իւրոց։ Եւ իբրև պարգևաբ և մեծաւ շնորհիւ յանձն եառ նմա զօրագլուխն, յղեաց Եւսեբէս և եցոյց Աննատոլեայ։ Իսկ նա իբրև գիտաց զնոստուհին մարգևին, ժողովեաց նա զժողովն խորհրդեան աղբևանդրացւոց, և նախ զառաջինն հաւանեցուցանէր զնոստ զի ձեռն տայցեն 'ի Հոռոմն բարեկամութեամբ։ Իսկ իբրև ետես զնոստ Թէ խաստացան ընդ բանն ընդ այնս և չտարն յանձն, ասէ ցնոստ. զարձեալ, որպէս ինձ Թուի, Թէ չայսմիկ գուբ վնս ոչ բանագատաբ. և Թէ սոքա որ աւելորդս են, որ անպիտանն են մեզ, այսինքն, պառաւսունք և մանկտիք, խրատ տամ ձեզ Թողուլ զնոստ արտաքոյ գրան քաղաքիս, և երթիցեն ուր կամիցին. ընդէր ունիմք զնոստ առ մեզ զուր տարապարտուց, զի մեռ 'ի մահ են. և կամ զորս ձեղեալ և ապականեալ են մարմնով իւրեանց՝ ընդէր սատակեմք զնոստ 'ի սուլոյ. այլ արժան է մեզ կենդանել զերիտասարդս և զկուսանս միայն, և զնել զհամբաւս ցորենոյ այնոցիկ որ կարող բաւական իցեն պահել զքաղաքս։ Իբրև այսպիսեաւս խորհրդով հաձեաց հաւանեցեալ նա զժողովուրդն։ Եւ նախ զառաջինն եկաց նա և ետուն 'ի քաղաքն անտի զամենայն ինչ որ միանգամ չէին պետոյ մտանել 'ի հա-

զամենեսեան որ միանգամ չէին կարող ՚ի զէն, զարս և զկանայս մերժել հանել ՚ի քաղաքէն. որոց Թէպետ և ՚ինացեալ էր ՚ի քաղաքին՝ յոչինչ պիտանացուք, յայս ինչ կենաց չէր նոցա և սատակէին ՚ի սովոյն։ Եւ իբրև միաբանեցին առ հասարակ ամենայն ժողովն յայսմ խորհրդեան, գրեհեն զամենայն պաշարեալսն ՚ի քաղաքի անդ կեցոյց նա։ Եւ նախ սկիզբն արար ՚ի մանկանց եկեղեցւոյ, ապա և այլոց որ էին ՚ի քաղաքի անդ Թոյլ արար փախչել յամենայն հասակէ՝ որոլ ոչ միայն որոց վճռով ժողովոյն հրաման էր, այլ ՚ի նոցա պատճառս և զայլս բազումս զգեցուցանէին գաղտ ՚ի զգեստս կանացիս և գիշերի ՚ի հրամանէ փութոյ նորա հանէին ընդ դուռն քաղաքին, և Թողուին երԹալ առ զօրս Հռոմոց։ Եւ անդ ընդունէր զնոսա Եւսեբիոս, և իբրև զՀայր և բժիշկ մեծաւ հոգաբարձուԹեամբ և բժշկուԹեամբ հանգուցանէր զչարալուրս տանջեալսն յերկար արգելանացն։ Զայսպիսի հովիւս՝ յաստուածային ակնարկուԹենէ անտի արժանի եղև ունել մի ըստ միոջէ եկեղեցին Լաւոդիկեացւոց. որք յետ պատերազմիս փոխեցան ՚ի Քրիստոս ՚ի քաղաքին Լաւոդիկեացւոց։ Թէպետ և ոչ բազում ինչ գիրս եԹող Աստուածոս, այլ որչափ ինչ հասին առ մեզ ՚ի նմանէ, մարԹիմք յայնց ՚ի միտ առնուլ, զի

մար հանդիսի զօրացն, զարս և զկանայս, և մերժեաց զնոսա ՚ի քաղաքէ անտի։ Նա և ոչ Թէպետ և ՚ինացեալ էին անպիտանք ՚ի քաղաքի անդ, յայս ինչ կենաց չգտանէր նոցա, զի ՚ի սովոյ սատակէին նոքա։ Եւ իբրև միաբանեցին առ հասարակ ամենայն մարդ այսմ խորհրդեան, գրէ Թէ զամենայն մարդ որ ՚ի քաղաքի անդ էին կեցոյց նա։ Եւ նախ զառաջինն սկիզբն արար նա ՚ի մանկանց եկեղեցւոյ, և ապա զայլն եւս որ էին ՚ի քաղաքի անդ՝ յամենայն կողմանս հրամայեաց փախչել նոցա, ոչ միայն յայնոսիկ որ խորհրդեամբն բանիս արժանեցին զնոսա, այլ ՚ի նոցա պատճառս զայլս բազումս զգեցուցանէին գաղտ հանգիստս կանացիս, և ՚ի գիշերի ՚ի հրամանէ փութոյ նորա էլանէին ընդ դուռն քաղաքին, և երԹային առ զօրս Հռոմոց, և անդ ընդունէր զնոսա Եւսեբիոս, և իբրև զայր և զբժիշկ մեծաւ հոգաբարձուԹեամբ և բժշկուԹեամբ հանգուցայներ զնոսա, զի տանջեալք և չարչարեալք էին նոքա ընդ յերկար արգելանաց անտի։ Զայսպիսի հովիւս արժանի եղև ընդունել եկեղեցին Լաւոդիկեացւոց մի ըստ միոջէ փութոյն Աստուածոյ։ Եւ յետ այնր պատերազմի զոր ասացաք վասն նորա, եկին նոքա Աղեքսանդր քաղաքէ ՚ի քաղաքն Լաւոդիկեացւոց։ Բազում խոս եգեալ

կորովի էր նա բանիւ և Հոգւով բազմապատիկ հմտու-
թեամբն, յորս մանաւանդ վասն Ջատկին վարդապե-
տութիւնք էն նորա. յորոց ի զատկական կանոնաց
անտի Աննատոլեայ ինչ արժան է համառօտագրել
աստանօր։

Արդ յառաջնում տարւոջ, ասէ, զամմամուտ ա-
ռաջնոյ ամսոյն՝ որ սկիզբն է բովանդակ ինն և տա-
նասնեայ շրջանին, ըստ Եգիպտացւոց ի քսան և ի վե-
ցերորդ աւուր Պաոնեոդ ամենեանն, իսկ ըստ Մակե-
դոնացւոց ի քսան և երկու Դիստրեայ, և որպէս
Հռովմայեցիքն ասեն ի մետասան յառաջ քան զկա-
լանդացն Ապրիլի. և գտանի արդ արեգակն ի քսան
և վեց Պաոնեոդ ամենեանն ոչ միայն ի հատածն ա-
ռաջին զմուտ իւր արարեալ, այլ և զաւուրս չորս յա-
ռաջեալ ի նոյն։ Այս իսկ հատածն է առաջին յեր-
կոտասան մասնէն, յորում և հաւասարի տիւ գիշե-
րոյ. և սա ինքն է սկիզբն ամսոյ և գլուխ շրջանին ինն
և տասնեկի, և սովոր էն արձակուրդ զսա կոչել ըն-
թացից Մոլորակաց։ Իսկ այն ամիս՝ որ կանխէ զայս
մասն, վերջին է ամսոյն և ի հատածն երկոտասա-
ներորդ՝ և վերջին երկոտասաներից մասանց և կատա-
րած շրջանին մոլորակաց։ Վասն այսորիկ որ միանգամ

է Աննատոլեայ մեծաւ փութով պնդութեամբ։ Բայց զայս ևս ե-
ղեալ ընկալաք մեք զոր ի նոցանէն կարեմք ուսանել, եթէ քանի կորովի
էր նա բանիւ իւրով և բազում ուսմամբ իւրով և եղոյզ իսկ և պատ-
մաց նա խօսիւք իւրովք, մանաւանդ վասն զատկի զի ի նոցանէն
արժան է մեզ յիշեցուցանել սակաւիկ մի այժմ։ Այս ի կանոնաց
անտի զոր եդ Աննատոլէս վասն զատկի։ Արդ ի նմին, ասէ, ի տաս-
ներորդ անդ է նախ ամսագլուխ առաջին ամսոյն, զի է նա սկիզբն եր-
կոտասան ամի, որ ըստ համարոյ եգիպտացւոց է նա քսան և վեց
Պաոնեոդայ։ իսկ Թոթոյ ամսոց մակեդոնացւոց՝ քսան և երկու. Ա-
բաթայ, այսինքն մետասաներորդ Արեգ ամենեանն։ Բայց գտանի ա-
րեգակն ի քսան և վեց Պաոնեոդայ, զի է նա քսան և երկու. Ա-
գաթայ, ոչ միայն զի մտանելով մտանէ նա ի հատածն առաջին. այլ
և զի ունի նա չորս աւուրս որով գնաց նա. այս իսկ հատածս է
առաջին միոյ յերկոտասան մասնէ, և ի սմա հաւասարի տիւ գիշե-
րոյ. և սա ինքն սկիզբն ամսոյ և գլուխ Ժամանակաց. որ շրջի և
դայ ի տեղւոջ իւրում ինննասան ամ. և որպէս սովոր էն, ասէն
բազումք ի նմա լուծանին ընթացք աստեղաց՝ որ կոչին մոլորեալք.
վասն զի չէն յայտնի, իսկ այն ամիս որ առաջի նորա է, վերջին է
նա ամսոյն և հատած երկոտասաներորդ, և մասն վերջին երկոտաս-

*յայսմ մասին դնեն զամին առաջին, և զչորեքտասա-
ներորդն զատկին ՚ի ժամնակիս համարին, ոչ սակաւ
վրիպել նոցա ասելն. և չէ իսկ այս մեր բանս, այլ ՚ի
Հրէից նախնեացդ, և յառաջ քան զՔրիստոս ծանուց-
ցեալ և ՚ի նոցանէ խնամով պահեալ։ Գիտացին զայս
Փիլոն, Յովսէպոս և Մուսէոս. և ոչ սոքա միայն, այլ և
որ յայժ կանուխ էնքան զսոսա, երկոքինն անհնագոյնքն,
Ագաթոքուլէանք, որք վարդապետքն անուանեցան.
և Աբիստաբուղոս իսկ անգամ, որ մի էր յեօթանաս-
նից անտի, որ Թարգմանեցին զգիրս սուրբ Եբրայե-
ցւոց՝ հրամանաւ Եղեայրասէրն Պտղոմէայ և Հօր նո-
րա, և զնկնումն գրոց օրինացն Մովսիսի սքաւրին
վասն Թագաւորացս։ Եւ ՚ի լուծումն խնդրոցն՝ որ ՚ի
գիրս անդ կոչեց, ասացին Թէ՝ Պարտք են հասարա-
կաց ամենեցուն զենուլ զզատիկն յետ գարնանի հա-
ւասարելոյ աւուրց տունջեան և գիշերոյ, յորժամ
ընդ միջի ամիսն առաջին. և այս դեպ լինի՝ յորժամ
արեգակն ընդ առաջին արեգակնային հատածն, կամ
որ կենդանակերպն կոչեն շրջան՝ ընթանայ։ Իսկ Ա-
բիստաբուղ յաւելու Թէ վասն տոնի զատկին ոչ միայն
արեգական հարկ է անցանել ընդ զուգօրեայ հա-*

*ամէնցն, և կատարած շրջանին աստեղաց որ կոչին մոլորեալք։ Վասն
այսորիկ որ միանգամ յայսմ մասին գնեն զամին առաջին, և զչո-
րեքտասաներորդ զատկին յայսմ ժամնակիկ համարին գնա, ոչ սա-
կաւ ինչ հանձար խնասաւելեան նոցա։ Զէ իսկ մեր բանս այս, զի
Հրէայքն այնքան որ յառաջ էին քան զՔրիստոս, գիտէին զսա և
պահէին. և կարելի մեք ուսանել մանաւանդ վասն այսորիկ յայն-
ցանէ որ ասացին, Փիլոն և Յովսէպոս և Մօսէս. և ոչ ՚ի սոցանէ
միայն, այլ և յայնցանէ որ յայժ կանուխ էն քան զնոսա, յերկուց
մարգոց անտի որ երկոքեան Բաբելժողով էին, այնո-
քիկ որ անուանեալ կոչին գպիրք, այն որ յԱրիստաբուղեայ. այն որ
՚ի Պենագայ քաղաքէն էր, այն որ ընդ եօթանասնեան էր՝ որ
Թարգմանեցին զգիրս սուրբս Հեբրայեցւոց Պտղոմէայ Փիլադելֆո-
սեայ և Հօր նորա, և զնկնումն գրոց օրինացն Մովսիսի սքաւրին
առքս Թագաւորացն։ Եւ իբրև լուծանէին նոքա որ միանգամ ընդ
քինն մտեալ էին ՚ի գպրութեանն ելից ասացին, Թէ պարտ է ա-
մենայն մարգոյ զենուլ զզատիկն հաւասարութեամբ յետ հասա-
րակաց աւուրընթան և գիշերոյ յԱդար, յորժամ ընդ միջի ամիսն ա-
ռաջին. ՚ի սոյն այս ժամնակ գտանի, որ է նա հատած առաջին
արեգական։ Իսկ Աբիստաբուղոս յաւելու և ասէ, Թէ ոմանք զատ-
կի ՚ի հարկէ ոչ միայն մինչդեռ գնայ արեգակն ՚ի հատածն առաջին,
յորժամ հաւասարի տիւն գիշերոյն։*

տածն, այլ և լուսին։ Աւրդ կրկին են զուգօրեայ հաստատեալ, մին գարնանային, միւսն աշնանային, յորս չափեալ են ժամանակքն ընդ միմեանս հաւասարութեամբ և սահմանեցաւ օր զատկաց ՚ի չորեքտասաներորդ աւուրն լուսնի զկնի երեկորեան, զի ՚ի նմա կայ լուսին ընդդէմ արեգական տրամասիս, որպէս է տեսանել ՚ի լրանալ լուսնի։ Աւրդ յորժամ արեգակն ՚ի գարնանային զուգօրեայ հաստածն հանդիպի, լուսինն ՚ի հարկ կէ յաշնանային հասարակածի կայ։ Գիտեմ և այլ բազում ինչ ասացեալ ՚ի նոցանէ, յորոց կէս մի հաւանական միայն, և կէս մի հաստատուն ցուցիչ և օրինակօք հաւաստեալ, որով ջանան ցուցանել յայտնապէս վասն զատկին և վասն բազարջակերաց տօնին Թէ պարտ է լինել զկնի հաւասարելոյ տունջեան և գիշերոյ։ Բայց Թողում անդր զայս ամենայն յաձախութիւնս ապացուցութեանց, և զի բարձաւ քօղն՝ որ եդեալ էր ՚ի վերայ օրինաց Մովսիսի, և այսուհետև բացաւ երեսօք ՔՐիստոս և զվարդապետութիւնն իւր և գչարչարանս իբրև ընդ հայելի տեսանեմք։ Այլ զի ամիսն առաջին առ Եբրայեցիս յայնժամ է, յորժամ հաւասարի տիւն գիշերոյ, զայս և վարդապետութիւն ենովքայ հաստատէ։

Բայց հաստատի երկիցս անդամ, յագար և ի լուսէ, այսինքն յարեգ և ի հոգի, և չափեալ են կշռով ժամանակքն ընդ միմեանս հաւասարութեամբ։ Տուաւ իսկ օրն զատկաց ՚ի չորեքտասաներորդ աւուրն զկնի երեկորեան, զի ՚ի նմա կայ լուսինն ընդդէմ արեգական հաւասարութեամբ չափով կշռով, որպէս և կարեմք ուսանել։ Իսկ յորժամ ընդս լուսինն, լինի այնուհետև կալ հանդէպ միմեանց արեգակն յայն հատածն առաջին, յորժամ հաւասարի տիւն գիշերոյն յագար, և լուսինն ՚ի հարկէ ՚ի միւսն ևս հատած յորժամ հաւասարի տիւն գիշերոյն ՚ի լուսէ։ Գիտեմ ես այլ բազում որ ասացեալ է նորա հաւանութեամբ և օրինակօք ցուցանելիք որ վասն տեառն մերոյ, զի նոքօք կամեցաւ ցուցանել վասն տնին բազարջակերաց զատկի, Թէ պիտոյ էր լինել զկնի հաւասարելոյ տունջեան և գիշերոյ։ Բայց Թողում անդր որ իբրև զայսպիսի ածական օրինակաց. զի բարձաւ ՚ի նոցանէ քօղն որ եդեալ էր ՚ի վերայ օրինացն Մովսիսի. և այսուհետև բացաւ երեսօք գՔրիստոս և զվարդապետութիւնն իւր իբրև ընդ հայելի տեսանեմք։ Այլ եթէ ամիսն առաջին առ Հեբրայեցիս յայնժամ է յորժամ հաւասարի տիւն գիշերոյ։ Զայս և վարդապետութիւնն ենովքայ հաստատէ։ Այլն իսկ այս Աստուածս տասներորդ խօսս եթող վասն վարդապե-

Իսկ սոյն սա Ա֊ստուղիս տասն գիրս Թուաբանական ներածութեան, և զայլ յիշատակս հանապազորդ իւրոց բանսիմնմուտ պարապմանց և Թևակոխելոյն յաւուրն վարդապետութեան գրոց սրբոց եՀոդ մեզ։ Ի սորա վերայ եդ զՀեռն եպիսկոպոսութեան յաւագագոյն Թէոտեկտոս եպիսկոպոս Կեսարիոյ Պաղեստինացւոց. զի փոյթ յանձին կալաւ նա Թողուլ զնա եպիսկոպոս զնի իւր յեկեղեցւոջ յայնմիկ, և փոքր ի ժամանակս երկոքին ի միասին կացին յաւաջնորդութեան եկեղեցւոյն։ Եւ իբրև կոչեցան նոքա յԱ֊ստիոք ի Ժողովն վասն Պողոսի, և անցաներ նա ընդ քաղաքն Լաւոդիկեացւոց՝ բուռն հարին զնմանէ եղբարքն և արգելին անդէն յետ մահուն Եւսեբի։

Եւ իբրև փոխեցաւ ի կենաց Ա֊ստուղիոս, եկաց յեկեղեցւոջ անդ նոցա Ա֊ստիանոս վերջին՝ նախ քան զՀալածանսն։ Ի մաստասիրական գիտութեամբն և Հելլենական վարժիւք զարմանալի էր սա ամենեցուն, այլ ոչ նոյնպէս և Հաւատովքն առ Աստուած, որ և ի ժամանակի առաջնիկայ Հալածանացն յանդիմանեալ կշտամբեցաւ, զի նենգաւոր էր և վատ և անարի և ոչ փիլիսոփոս Ճշմարտութեամբ։ Այլ ոչ եԹէ վասն այնորիկ ինչ տապալեին իբրև եկեղեցւոյն, զի անդէն ուղղեալ Հաստատեաց զայն յառ Աստուծոյ փրկչէն ամենեցուն կարգեալն նոցա եպիսկոպոս Թէոդոտոս, ի

տութեան Թուոց. և այլ օրինակս զՀանապազորդութեան իւրոյ. և զԹևակոխելոյն յաւուրն վարդապետութեանն Ա֊ստուծոյ. ի սորա վերայ եդ զՀեռն զեպիսկոպոսութեան յաւագագոյն Թէոտեկտոս եպիսկոպոս պաղեստինացւոց, զի փոյթ յանձին կալաւ նա Թողուլ զնա եպիսկոպոս զնին իւր յեկեղեցւոջն յայնմիկ յորում եկաց նա։ Եւ փոքր ի ժամանակս երկոքինն ի միասին կացին յեկեղեցին յայն։ Այլ իբրև կոչեցան նոքա յԱ֊ստիոք ի Ժողովն վասն Պողոսի. իբրև անցաներ նա ընդ քաղաքն լաւոդիկեացւոց, բուռն հարին զնմանէ եղբարքն, և արգելին անդէն յետ մահուն Եւսեբի։ Իսկ իբրև էլ չտլեաբՀէ ասել Ա֊ստուղիս, եկաց յեկեղեցւոջ անդ նոցա Ա֊ստիանոս ի ժամանակի վերջին հալածանացն։ Բայց յաղագս փիլիսոփայութեան և այլոյ ուսմանէրք յունաց զարմանային զնմանէ բազումք. այլ Հաւատովք առ Ա֊ստուած այնպէս ուղիղ էր։ զի ի ժամանակի հալածանացն յանդիմանեալ կշտամբեցաւ այրն այն, զի նենգաւոր էր և չար և երկչոտ և ոչ փիլիսոփոս Ճշմարտութեան. այլ ոչ եԹէ վասն նորա ինչ տապալեալ լինէին իբրև եկեղեցւոյն, զի Հաստատեցան

ձեռն գործոց Ձնմարտեալ արդեամբք զանուն իւր և զեպիսկոպոսի։ Ցի յարուեստս բժշկականին՝ ի մար-
մնոց դարմանս առաջին էր նա քան զբաղումս գիտու-
թեամբն, իսկ ի խնամն հոգաբարձութեան հոգւոց՝
ոչ գոյր այլ ոք նման նմա, մարդասիրութեամբն,
միամիտ բարեսիրութեամբն, վշտակից փութոյն յօգ-
նականութիւն կարօտելոց։ Նոյն և յաստուածային
հրահանգս վարդապետութեան վարժ էր նա և կիրթ։
Ա յսպիսի ոք ահա եկաց սա։

Իսկ ի կեսարիա Պաղեստինացւոց յետ մահուն
Թէոտեկնոսի՝ որ մեծամեծամ փութով վարեաց զե-
պիսկոպոսութիւն իւր, կալաւ զաթոռն Ագաբիոս,
զորոյ զբազմավաստակ աշխատութիւնս և զբարեսէր
հոգաբարձութիւն հաւատացեալ ինքեան հօտին, և
զառատաձեռն բաշխոյս առ ամենայն ոք, և մանա-
ւանդ առ աղքատս ժողովրդեանն՝ հաւատեաւ գի-
տացաք։ Ի սորա աւուրս եկաց Պամփիլոս կորովի բա-
նիւ, և վարուք և կենօք Ձնմարիտ փիլիսոփայ, երի-
ցութեամբ եկեղեցւոյն այնորիկ պատուեալ։ Ա յլ թէ
որպիսի ոք էր սա և ուստի, ոչ փոքր ինչ և սուղ բա-
նիւ կարեմք ցուցանել զայն. այլ մի ըստ միոջէ վասն
կենցաղ նորա, վասն վարժիցն կարգելոց առ ի նմանել,
և վասն բազմադիմի պատերազմացն՝ զոր Համբեր նա

Ա ռաւուծոյ փրկչէն ամենայնի։ Ի ժամանակի իրրև եկաց յեկեղե-
ցւոջ անդ նոցա եպիսկոպոս Թէոգոնոս. և նովին իրօք հաստա-
տեաց նա զանուն իւր և զանուն եպիսկոպոսին, լի խնամատարեամբ
և բժշկութեամբ մարմնոյն գլխաւոր էր և առաջին։ Իսկ բժշկու-
թեամբ ոգւոց ոչ գոյր այլ մարդ նման նմա, լի ողորմութեամբ
փոյթ էր և սիրասիրութեամբ վշտացեալ նա ընդ այնոսիկ իրրև ի չար
օգուտութեան նոցա. յոյժ իսկ սքանչել էր նա ընդ վարդապետու-
թիւն առաստաձգաչափութեանն։ Իսկ ի կեսարիա պաղեստինացւոց
Թէոտեկնոս մեծաս պնդութեամբ վարեաց զեպիսկոպոսութիւնն։
Ես կալաս զինի նորա Ագաբիս, այն որ յոյժ վաստակէր և սիրա-
տեամբ ունէր զշոգաբարձութիւնն վասն առաջնորդութեան ժո-
ղովրդեանն, և ձերբ առաստութեան հոգւոյր նա վասն ամենայն ու-
րուք մանաւանդ վասն աղքատաց։ Ի սորա իսկ յաւուրս գիտեմք
մեք զի էր նա անդ Պանֆիլոս այր կորովի բանիւ, և գործով խո-
րով էր նա փիլիսոփայ Ձնմարտութեան. և էր երեց եկեղեցւոյն
նոցա։ Ա յլ թէ զինքրդ էր նա, կամ ուստի, ոչ փոքր Ճառիւք կա-
րեմք ցուցանել զնմանէ. զի վասն ամենայն գործոց նորա, և վասն
վարդապետութեանն յորում կայր նա, և վասն պատերազմին զոր

'ի ժամենակի հալածանաց խոստովանուԹեամբ, և 'ի վախճանի վասն պսակին վկայուԹեան որով պսակեցաւ նա, յառանձին ուրոյն գիրս կարգեցաք մեք. զի քան զամենեսեան որ առ մեզ կացին աբանելի եղև երանելիս այս այր: Իսկ յորոց մինչև յաւուրս մեր հասին սակաւս ծանեաք, զՓիլոքիոս յերիցանց անտի և կեղեցւոյն Աղեքսանդրացւոց, և զՄելետիոս եպիսկոպոս եկեղեցեացն Պմտատացւոց: Առաջինն՝ անստացուած սոսկումԹեան վարուք և ուսմամբ փիլիսոփայուԹեան փորձ գտեալ, և տեսուԹեամբ և մեկնուԹեամբ աստուածՀեղէն տաւիղ 'ի Ժողովս եկեղեցւոյ հմուտ էր և տեղեակ աբանելապէս: Իսկ Մելետիոս՝ զոր Աստիկեան մեղր կոչէին, որ միանգամ խնամատուԹեան էին հետամուտք, և արդարև այնպիսի ոք եկաց նա որպէս եթէ յամենայն ազգ վարդապետուԹեան ամենակատարեալ զսա ոք գրէր: Ի հռետորական արուեստ ոչ ոք կարաց շատ իսկ ըստ արժանւոյն զարմանալ ընդ նա. որպէս զի ասիցէ ոք յիրաւի Թէ 'ի բնէ էր այս նմա: Իսկ այլով բազմատեղեակ հմտուԹեամբն և գիտուԹեամբ ո՞ էր որ կարաց էր. բեք գերազանցել զնովաւ: Եւ յամենայն իսկ ՃարտարուԹեան խօսից ամենարուեստ և կորովաբան գոլ զսա միայն ասէր ոք արդեօք, որ միանգամ ընդ նորա

համբեր 'ի ժամենակի հալածանացն ազգի ազգի խոստովանուԹեամբ և պսակաւն զոր եգաւ 'ի ձեռն վկայուԹեանն. 'ի Ճառան որ զնմանէն առանձինն ասացաք մեք. սա իսկ սատ աբանելի էր: Բայց սակաւք գտան յաւուրս մեր որ գիտացաք մեք, զՓիլոքիոս յերիցանց անտի որ էր յեկեղեցւոյ ազգեքսանդրացւոց. և Մելետիոս եպիսկոպոս եկեղեցւոյն պմտգացւոց: Այլ այն առաջինն վարուք սոսկումԹեան և ուսմամբ փիլիսոփայուԹեանն փորձեալ էր, և խնամատուԹեամբ ասատուածպատուուԹեանն և մեկնուԹեամբ և խօսից ամենայն Ժողովրդեան եկեղեցւոյն հմուտ տեղեակ էր աբանելապէս: Իսկ մեղր Ծորածոյ կոչէին զնա ոմանք որ ուսեալ էին զնմատուԹեն: Եւ այսպէս կատարեալ էր ըստ անուան խրոյ: զի 'ի փառատուրուԹիւն հռետորականուԹեան ոչ ոք կարէր ասել զնմանէն Թէ ոչ ունի ինչ էր նա, որպէս զի ասիցէ ոք Թէ այս իրքն 'ի բնուԹենէ եցէ նորա: Իսկ այլով աբանելուԹեամբ տեղեկուԹեան և բազմատամանին որ կարաց անցանել աբանելուԹեամբն նորա, զի խնամատուԹեամբ բանին որ արտաքինոց՝ Ճարտար էր և կոփով, և այն որ առնու զիմօրձ հանդիպի նորա Թերևս ասէ Թէ նա միայն էր այսպիսի և ոչ այլ ոք: Բայց հաւանական այսոցիկ էր և ըս-

փորձ հանդիսին անցանէը. սոցին համեմատ և սքան-
չելութիւն վարուց նորա: Ջսա 'ի ժամանակի անդ
հալածանացն մինչ փախուցեալ էր 'ի կողմանս Պա-
ղեստինացւոց՝ զեօթն ամս արժանի եղաք տեսանել:

Իսկ զեկեղեցւոյն Երուսաղեմացւոց յետ Հիմնեալ՝
զոր յիշեցաքս փորը մի յառաջ, կալաւ Ջաքէոս ըզ-
պաշտօն առաջնորդութեան. իբրև ոչ յետ բազմաց
հանգեաւ և սա, Հերմին վերջին՝ կալաւ զաթոռն ա-
ռաքելական, որ մինչև 'ի ժամանակս հալածանացն որ
յաւուրս մեր՝ պահեալ էր հաստատութեամբ: Իսկ
Ա՛ղեքսանդրիա յետ մահուն Դիոնեսիոսի կացեալ
Մաքսիմոսի եպիսկոպոսութեան անդ զամս վեշտա-
սան՝ զկնի նորա կալաւ Թէոնաս: Ա՛ր սովաւ հան-
դերձ Փիլեաս պայծառացաւ Ա՛ղեքսանդրիա և Ա-
քիլէս երիցական պատուով պատուեալ, որում և յանձն
էր վարդապետութիւն հաւատոց: Ոչինչ նուազ և սա
'ի գործ փիլիսոփայութեան և 'ի վարս աւետարանա-
կան առաքինութեան սերտ և փոյթ գտաւ: Իսկ յետ
պաշտելոյն Թէոնաս զննեալ զամն զառաջնորդու-
թիւն՝ կալաւ յետ նորա զեպիսկոպոսութիւնն Ա՛ղեք-
սանդրացւոց՝ Պետրոս: Փառաւորեցաւ և սա մանա-
ւանդ ընդ երկոտասան ամն եպիսկոպոսութեան անդ
իւրում: զերիս ամն յառաջ քան զՀալածանն առաջ-
նորդեաց եկեղեցւոյն. և զայլ ժամանակս կենաց իւ-

քանչելութիւն վարուց նորա: Ջսա 'ի ժամանակի անդ հալածա-
նացն մինչև փախուցեալ էր 'ի գաւառսն պաղեստինացւոց զեօթն
ամ տեսանէին զնա: Իսկ եկեղեցւոյն Երուսաղէմի յետ Հիմնո-
սեալ եպիսկոպոսի այն որ յառաջագոյն ցուցաք վասն նորա, Զե-
բեդեայ կալաւ զաջակցն որ անդ էր: Բայց յետ սակաւու միոյ ժա-
մանակի իբրև հանգեաւ սա, Հերմին վերջին կալաւ զաթոռ առա-
քելոցն որ պահեալ էր մինչև 'ի ժամանակս հալածանացն: Իսկ
Ա՛ղեքսանդրիա իբրև եկաց եպիսկոպոսութեան անդ Մաքսիմոս
զուխեաման ամ յետ մահուան Դիոնեսի, Թէոնէս կալաւ զկնի
նորա: Եւ յաւուրս սորա Ա՛ղեքսանդրիա հանգերձ փիլոսոփաւ-
երիցու, և Աքեղէս յայտնի էր, և վարդապետութիւն սուրբ
հաւատոց ունէր նա անդ. բայց սակաւք էին որ գտանէին ըստ նո-
րա նմանութեան 'ի գործ փիլիսոփայութեան. և 'ի վաս ուսման
աւետարանին պնդապէս կայր: Իսկ յետ պաշտելոյն Թէոնէսեայ
զննեալսան ամ, կալաւ յետ նորա զեպիսկոպոսութիւնն ազգ-
քսան-դրացւոց Պետրոս, որ փառաւորեցաւ նա առաւելապէս զերկոտա-
սան ամ յեպիսկոպոսութեան անդ. բայց առաջնորդեաց եկեղե-

րոց խստակեաց վարուք Ճգներ, միանգամայն և 'ի շահ օգտութեան եկեղեցւոյն մեծապէս հսկեր, որ և յինն նեղորդ ամի հալածանացն հատաւ գլուխ նորա, և վկայութեան պսակաւ զարդարեցաւ։ Մինչև ցայս վայր ածեալ զպատմութիւն կարգաւ, որ յաւուրց անտի ծննդեան փրկչին մերոյ մինչև քակտումն եկեղեցւոյ 'ի հալածանս՝ բովանդակին ամբ երեք հարիւր և հինգ, արդ այսուհետև վասն որոց արիացանն առ մեօք պատերազմաւ 'ի վերայ հաւատոց աստուածպաշտութեան, թէ ով ոք, և որպիսի էին նոքա գրով ղթողուք յիշատակ, որոց միանգամ զկնի մեր գայցեն։

ցոյն զերիս ամս յառաջ քան զհալածանսն. և զայլ ժամանակս վարուց իւրոց բազում երկայնմտութեամբ անձին իւրում առաջնորդեր. և իբրև 'ի շահ օգտութեան հոգւոյն նա մեծապէս վասն եկեղեցւոյն։ Արդ յամին իննևորգի հալածանացն հատաւ գլուխ նորա և զարդարեցաւ պսակեալ վկայութեամբ։ Մինչև ցայս վայր բովանդակացաք զնաւս ոտանիս կարգելոյ։ Որ յաւուրց անտի ծննդեան Փրկչին մերոյ մինչև քակտեցան եկեղեցիք 'ի հալածանս որ կան՝ լինին ամք երեք հարիւր և հինգ։ Արդ այսուհետև պատմացուք վասն ամենայնի որ միանգամ զօրացան 'ի պատերազմի վասն աստուածպաշտութեան։ Եւ թէ ով ոք և որպէս էին նոքա, գրով Թողցուք յիշատակ ամենայնի որ միանգամ զկնի մեր գայցեն։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

—

Գլուխ Ե. [1] — « ի մեծամեծ օրհնութեանց եպիսկոպոսաց ». Ա՛յն է՝ ի ժողովէն Իկոնիոյ գումարեալ՝ ի յիւրից եպիսկոպոսաց. զոր յիշատակէ Փիլիմինոս գրելով առ Կիպրիանոս Հայրապետ, ՝ի կրկին ժողով Ափրիկեայ որ ընդ Աքրիպպինեա՛ս կարծ ածինէ. ցաց եպիսկոպոսաց, և որ առ Կիպրիանոս. յորում ուխտաւ և պիսկոպոսք էին խոստովանողք, յորոց և ոչ սակաւք մարտիրոսացան ասա. նոյն գործեալ և ՝ի ժողովէն Սիննատացւոց:

Գլուխ Ը. [2] — « Լինել սեղանատուրս խմաուռնս ». Զգիտեմ ուստի առնու զայս բան առաքելոյն. զի է ուրէք արդարև, « Իբրև հազարապետս խմաուռնս ». կամ զի « Ջամենայն ինչ փոքրիկք » որովհետև սեղանատուրս փորձս, ասէ ՝ի բնագրին, կամ Թէ ըստ Ովսեբեայ Յերոսղեմական աւետարանէն առնուցու զայս ասէլ:

Գլուխ Ը. [3] — « եւ զկրաւութիւնն սուրբ խոտեալ անարգե ». Քանզի մերձէր Նովատիանոս չընդունէր զկրաւութիւնն կաթողիկէ եկեղեցւոյն. զի ՝ի սրբութենէն պատանէին կամէր կշռել զվաւերականութիւնն խորհրդոյն, վասն որոյ յարժանաւոր պաշտանէն միայն ներքաղնի՝ քրիստոնեայս համարէր, որով կրկին մկրըտէին զկամուսս իւրեանց, զորոց գՀետ գնացին ապա Դոնատեանք:

... [4] — « Զի ՝ի սպաս սպուռ փախուցանէ զՀոգին սուրբ ». Ա՛յս է՝ ոչ ընդունելով զապաշխարութիւնն, որով և զքաւութիւն մեղաց և զվերածագիծ ՝ի ընծրկս, փախուցանէ ՝ի սպաս զՀոգին սուրբ անշրջս անզգայութեամբ:

Գլուխ Ժ. [5] — « Ցայտնապէս քրիստոնեայս լինել ասէին ». Զփիլիպպոս ակնարկէ բանս, և Թերթս և զՎիքթորաքդր Սենբրոս:

... [6] — « Նախընթաց կախարդացն եգիպտացւոց ». Եւ զի հզօրք էին յայնժամ ՝ի Հռովմ քաղաքին Իսիսի և Սերապեայ և գուշակք նոցա և կախարդք, այլ Թէ ո՞ եր կախարդապետն նոցա չասէ ինչ յայտնի, բայց Թերթս զՄակրինոս ակնարկիցէ որ իբրև գաստիարակ և վարդապետ նորա, կորուսեան հզև պատմեա:

... [7] — « Ձհմարտեալով ՝ի սմա զինանակ անուան իւրոյ ». Մակրինոսդ անուն՝ հետաւոր նշանակէ:

Գլուխ ԺԱ. [8] — « Զիարդ ուրեմն Հոգովս առնելոյ կամ ոչ առնելոյ պարապ էր ինձ ». Ա՛ռ. Գերմանոս է այս ՝ի պատասխանի, որ ամբաստան լինէր զնմանէ՝ Թէ յառաջ քան զՀաւատացեալ էր նորա Հոգովեալ զՀաւատացեալ Հօտ իւր, ըստ սովորութեան եպիսկոպոսաց, ՝ի սրտաւնդել զնոսա ընդդէմ սպառնացեալ նե-

ղուԹեանց և մահուան, ՚ի հաղորդել օրինացն և ՚ի հիւթել զբանեայս, այլ իբրև վարձկան ոք զանձին փրկուԹենէ միայն հոգալով՝ փախչէր ։

... [9] — « Յախտէ մահու »։ Ոմն ՚ի հին ԹարգմանուԹեան գտանեմք « Ի կղզւոջ մեռան »։ և այս ՚ի զանազանուԹենէ բնագիրն ձեռագրացն է որ վրիպակաւ մանաւանդ փոխանակ ընԹեռնլոյ ἐν τῇ νόσῳ ընԹերցեալ է ἐν τῇ νήσῳ միով տառիւ յեղաշրջեալ ամենևին դիմաստ բանին ։

Գլուխ ԺԲ. [10] — « Անխոհեմ սովորեցան »։ ԵԹէ չիցէ ինչ խարդախեալ ՚ի բանս ՚ի պատկերամարտից անտի՝ ըստ սովորուԹեան հեԹանոսաց կամ հեԹանոսաբար ասելով պատուել զպատկերսն, կամի ցուցանել բանիւս եԹէ խոիր մեծ է ընդ քրիստոնէական յարգանս պատկերաց և ընդ հեԹանոսականս. զոր չունի եկեղեցին ։

Գլուխ ԻԳ. [11] — « Զարդարն զգեն և զսիրելին Աստուծոյ »։ Մայրապետ գովուԹիւնքս այսոքիկ զկատարիչս ինքնակալաց, մինչդեռ զի չեն հալածիչ լեալ քրիստոնէից՝ ծանր է լսել մեզ, և պատեհագոյն ականջաց ։

Գլուխ ԻԷ. [12] — « Զամս մեռանան »։ Ցանցանէ ասա Եւսեբէ ՚ի Թիւս ամաց քահանայապետուԹեան Սէքստոսի, որ զերկուսիմ մի միայն և զամիս մեռանան ասեանէմք զաԹոռակալուԹիւն նորա ՚ի գաւազանադիրս քահանայապետաց Հռովմայ. և զի իսկ զվկայական մահուանէ նորա ։

Գլուխ Լ. [13] — « Եւ իբրև ոչ կամէր հեռանալ Պօղոս »։ Գանգղ անսասեալ Պօղոսի վճռոյ Ժողովոյն, և յիւթեալ ՚ի զօրուԹիւն իշխանուԹեան դչխոյին Զէնոբիայ՝ որ հզօրն էր յայնժամ Արեւելս, չՀաղորդ զաԹոռ իւր և զկնկղեցին, մինչև ՚ի պարտել դչխոյիս առաջի զինուցն Հռովմայեցւոց՝ դիմեցին եպիսկոպոսունք առ ինքնակալն Աւրելիանոս և իբրև կուսակից Թշնամւոյն և հակառակ սէրուԹեան Հռոմոց՝ մերժեցին զնա յաԹոռոյն և ՚ի քաղաքէն ։

Գլուխ ԼԲ. [14] — « Մաթաակից զօրացն Հռովմայեցւոց »։ Մինչդեռ ինքնակալն Կաղերիոս պատերազմաւ էր ընդ խուժս, պարապ գտեալ և զօրացեալ յիշխանուԹեան իւրում Զէնոբիա առաքեաց զզօրավար զօրուն իւրոյ զՋաբդա Ծանր ձեռամբ ՚ի վերայ Եգիպտոսի, որ և օգնականուԹեամբ Տիմոկլեեայ կալաւ զաշխարհն, և եղ զաԹոռ իշխանուԹեան իւրոյ Աղեքսանդրիա։ Իսկ Պւրռոս հռովմէական զօրքն և Եգիպտացւովք՝ որք էին ՚ի կողմն պալմիրացւոյն պատերազմել ընդ Բրուբիոնի, այս է ահա պատմուԹիւն պաշարման և պատերազմին. այլ ԹէպԹէ զնովքդ ՚ի գէպ գայցէ այս ընդ ժամանակագրուԹեան՝ Աստուածայ Աւորիս գտանել և միանգամայն Եգիպտոս՝ չէ տեղւոյս քննել ։

ՅԱՆԿ ՈՒԹԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԵՆՆ

Ա. — Թէ որպիսի՛ ինչ յառաջ քան զՀալածանս պայման մէրոցն էր։
Բ. — Վասն առաքեալ եկեղեցեաց։
Գ. — Վասն ազգի ազգի տանջանաց՝ որով նահատակեցան վերկայքն ի Հալածանս։
Դ. — Վասն փառաւոր վկայիցն Աստուծոյ, որ բազմապատիկ պակաւք աստուածպաշտութեան պակսեցան, և թէ որպէս լցաւ աշխարհ ամենայն յիշատակաւք նոցա։
Ե. — Որ ինչ ի Նիկոմիդիա գործեցան երբք։
Զ. — Վասն սրոց ի յարքունեաց անաւ կայսերաց էին։
Է. — Վասն եգիպտացւոց որ վկայեցին ի Փիւնիկէ։
Ը. — Վասն այնոցիկ որք վկայեցին անդէն յԵգիպտոս։
Թ. — Վասն այնոցիկ որ ի Թեբայիս վկայեցին։
Ժ. — Գրով վկայութիւնք երանելւոյն Փիլէասայ վասն ամենայնի՛ որ գործեցան յԱղէքսանդրիա քաղաքի։
ԺԱ. — Վասն այնոցիկ որ ի Փռիւգիա վկայեցին։
ԺԲ. — Վասն բազմութեան արանց և կանանց՝ որ բազմերիւակ հանդիսիւք նահատակեցան։

ԴՊՐՈՒԹԻՒՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ։

Ա. — Առաջին Ճառք, վասն այնոցիկ որ ելին յառաջ քան զՀալածանսն։
Բ. — Երկրորդ, վասն քահանայից եկեղեցեաց։
Գ. — Երրորդ, վասն Թէ որպէս արարչին պատերազմ, որք եղեն ի Հալածանսն։
Դ. — Չորրորդ, վասն արանց վկայիցն Աստուծոյ, Թէ որպէս լցան ամենայն աշխարհ յիշատակաւք նոցա, և առին պակս նշանաւորս վասն աստուածպաշտութեան։
Ե. — Հինգերորդ, վասն այնոցիկ որ վկայեցին ի Նիկոմիդիա։
Զ. — Վեցերորդ, վասն այնոցիկ որ վկայեցին ի տանց անաւ թագաւորացն։
Է. — Լսեմներորդ, վասն եգիպտացւոյն որ վկայեցին ի Փիւնիկէ։
Ը. — Ութներորդ, վասն այնոցիկ որ վկայեցին յԵգիպտոս։
Թ. — Իններորդ, վասն այնոցիկ որ վկայեցին ի Թեբայիս։
Ժ. — Տասներորդ, ուսումն զոր գրեաց Փիլէաս վկայ վասն ամենայնի որ Փիւնդամ գործեցան յԱղէքսանդրիա։
ԺԱ. — Մեւսասաներորդ, վասն այնոցիկ որ վկայեցին ի Փռիւգիա։
ԺԲ. — Երկոտասաներորդ, վասն բազում արանց և կանանց որ արարչին պատերազմ բազում ընտրութեամբք։

ԺԳ. — Վասն առաքինութեաց եկեղեցեացն, որք զՇնչմարտութիւն աստուածպաշտութեան՝ զոր քարոզեցին բանիւ, հեղմամբ արեան իւրեանց կնքեցին յայտնապէս։

ԺԴ. — Վասն քարուց և կենաց Հընամեան աստուածպաշտութեան։

ԺԵ. — Վասն արտաքնոց ուրոյն գիտից։

ԺՋ. — Վասն փոփոխելոյ իրացն 'ի բարւոքի պայման։

ԺԸ. — Թէ ո՞րպէս փոխեցին ինքնակալք զնախնեական հրամանան։

ԺԳ. — Երկբաժանեալքդ, վասն այնոցիկ որ կացին 'ի գլուխ եկեղեցեացն որ ցուցին զՇնչմարտութիւն աստուածպաշտութեանն զոր քարոզէին հեղմամբ արեան իւրեանց։

ԺԴ. — Զօրեքաժանեալքդ, վասն Թէ ո՞րպէս էին Հընամիք աստուածպաշտութեանն։

ԺԵ. — Հնգեաժանեալքդ, վասն որոյ պիտանւոյ անգք անցին չեռոյ։

ԺՋ. — Վեցաժանեալքդ, վասն բարւոյ նորոգման իւրեանց որ եղեւ։

ԺԸ. — Եօթնեաժանեալքդ, վասն Նորոգման Թագաւորացն։

ԴՊՐՈՒԹԻՒՆ ՈՒԹԵՐՈՐԴ

Ն Ա Խ Ե Ր Գ Ա Ն

Ջայջորգութիւն կարգիս որ յառաքելոց անտի՝ յեօթն դպրութիւնս բովանդակեցաք, և յայս յուԹերորդս՝ որ ինչ գործեցաւ յաւուրս մեր ոչ դուզնաբար, այլ ընտիր առնելով՝ ի նոսա՝ զարժանիս յիշատակի տալ գրով յուսումն այնոցիկ որ լինելոց են ձկնի մեր։

ԳԼՈՒԽ Ա.

Թէ որպիսի՞ ինչ յառաջ քան զհաւատալն պարտական մերոցն էր։

Արդ անտի սկիզբն արարցուք բանիս, եթէ քա-
նի՞ն և թէ որպիսի՞ յառաջ քան զՀաւատածանս որ առ
մեզ համարձակութիւն և փառք էին բանին աս-
տուածպաշտութեան՝ որ աւետարանեցաւ ՚ի ձեռն
Քրիստոսի ամենայն մարդկան ցունաց և բարբարո-
սաց, մեծ է քան զմեզս կար որպէս արժանն է պատ-
մել։ Օրինակ առցուք ՚ի բարեկամութենէ անտի ինք-
նակալաց առ մերս, յորոց և ոմանց իշխանութիւն ՚ի
ձեռս տային գտաւառաց, ազատս կացուցանելով զնո-
սա յերկիւղէ կռոցն զոհից՝ առ բազում սիրելու-
թեան իւրեանց առ ուսումն ուխտի մերոյ։ Եւ զինչ
ասել իցէ և վասն այնոցիկ՝ որ յարքունեաց անտի
կայսերաց էին, և վասն նոցին իսկ ինքնակալաց՝ որք
ընտանեաց իւրեանց կանանց և որդւոց և ծառայից
համարձակութիւն տային բանիւ և կենօք պաշտել
զկրօնս իւրեանց յայտ յանդիման նոցա, այլ և պար-

Առային ձառք, վասն այնոցիկ որ նոցին յառաջ քան զհաւատածանսն։

Ընդունելութիւն կարգիս որ յառաքելոց անտի եւթեն գալու-
թիւն բովանդակեցաք. և յայս գալութիւն ուսերորդ որ ինչ գոր-
ծեցաւ յաւուրս մեր, ոչ գուցնաբար արժան է ասել գրով յա-
ւուրս այնոցիկ որ լինելոց են զկնի մեր։ Բայց սկսցուք ՚ի սմին բա-
նէ ասել յայտնութէ. եմէ քանիսն, և թէ որպիսի համարձակու-
թիւն և փառք էին բանին աստուածպաշտութեան, որ աւետարա-
նեցաւ ՚ի ձեռն Քրիստոսի ամենայն մարդկան, ՚ի մէջ ցունաց և
բարբարոսաց յառաջ քան զՀաւատածանսն որ եղեն յաւուրս մեր.
մեծ է քան զմեզ պատմել զնմանէ որպէս արժանի է նա. և օրինա-
կիս առցուք ՚ի պատառէ անտի որ պատառէին թագաւորքն զմանեա
՚ի մերոց անտի, և նոցա տային զիշխանութիւն ՚ի վերայ հեթանո-
սաց, և բազում սիրով որ պահէին առ ուսումն ուխտի մերոյ, յաշ-
խատութիւն զոհիցն ինայեցուցանէին զհեթանոսս. այլ զինչ և ա-

Ծել իսկ ընդ այն ազատութիւն. և զի զնոսա առաւել քան զԾառայակիցս նոցա արժանիս Հաւատարմութեան համարէին։ Որպիսի որ Դորոթէոս էղև՝ որ քան զամենայն մարդ բարեմիտ և հաւատարիմ գտաւ նոսա, և վասն այսորիկ իսկ և պատուաւորագոյն քան զամենեսին՝ որ միանգամ իշխանութեամբ և ոչ միկանութեամբ գաւառաց 'ի նոցանէ պատուեցան։ Իբրև զսա էր և Մծծանուն Դորգոնիոս, և այլ սոցին նման բազումք պատուեալք վասն բանին Աստուծոյ։ Այսպէս և առանձին եկեղեցեացն գլխաւորք պատուեալ Մծծարէին 'ի գաւառապետաց և 'ի դատաւորաց և յամենեցուն իսկ առանձին սպասու Ծառայութեամբ։ Եւ զիարդ որ զբիւրս բիւրս մարդկան դիմեալս 'ի հաւատս, զբազմութիւն Ժողովրդոց հաւատացելոց 'ի քաղաքս քաղաքս, և զնշանաւոր տոհմութիւնս նոցա 'ի տաճարս Աստուծոյ գրով բովանդակել կարասցէ։ Որպես զի չլինեին բանական սրմնոյ հետեւ շինուածքն, և վերստին 'ի հիմանց անտի ընդարձակագոյնս կանգնէին եկեղեցիք 'ի բազում

տասցուք վասն այնոցիկ որ 'ի տանց անտի Թագաւորացն էին, և իշխանաց այնոցիկ որ ընտանեցան իւր առաքին երեսից իւրոց տալին համարձակութիւն Աստուած, բանիւ և վարուք կանանց իւրեանց, և որդւոց և ծառայից. զի ոչ թէ միայն զի պարծեցան նոքա համարձակութեամբն հաւատոյ հաւանեցուցանէին զնոսա, այլ զի և աքանչելապէս և աւելի քան զայնոսիկ որ մնանն ընդ նոսա, ընդունելի էին նոցա և համարբէին զնոսա. որպէս զիարդ և էր Դորոթէոս, այն որ առաւել քան զամենայն մարդ պահէր ընդ նոսա ջնջմարտութիւնն և հաւատայր. և վասն այսորիկ պատուական էր քան զամենեսին որ միանգամ յաջողութիւն և 'ի գլխաւորութիւն էին։ Եւ Դոգոնիոս այն որ իբրև զայն անուանի էր, և այլ մինեանքն որ իբրև զնոսայն էին, պատուեալ էին վասն բանին Աստուծոյ. և թէ որպէս առաւել ընկալեալ և պատուեալ լինէին դլխաւորքն եկեղեցւոյն 'ի գաւառապետից և 'ի գաւառաւորաց ամենեցունց։

Երկրորդ. վասն քահանայից եկեղեցւոց։

Բայց զնմանէ կամ որպէս կարասցէ որ զբիւր Ժողովրդոց մարդկանն որ լինէին և բազմանային յամենայն քաղաքս, և զիարդ պնդութեան Ժողովրդոցն որ լինէին յաւուրս նշանաւորս 'ի մէջ եկեղեցւոյ, որպէս զի ոչ բաւական լինէին այնուհետեւ առաջին շինուածքն, այլ վերստին ընդարձակէին և լայնէին և շինէին եկեղեցիս իբրև զքաղաքս։ Բայց առաջ 'ի նոսին 'ի ժամանակաւն իբրև

քաղաքանէին։ Եւ զայս երկայնաձիգ ժամանակի հա-
նապազորդ աշխատի և գլխոցուածիւն՝ ոչ նախանձ յա-
պաղեցուցանէր, ոչ բանսարկուն չարադէս չարակներ,
ոչ մարդկան խաբէութիւն արգելուլ կարէր՝ ցորքան
ձեռն Աստուծոյ յերկինից ձգեալ հովանի ունէր և
պահէր զժողովուրդ իւր, արժանաւոր գնա այնմ գը-
տեալ։ Իսկ իբրև ՚ի բազում ազատութենէ ՚ի մեղկու-
թիւն հատաք և ՚ի յոռւթիւն, և այր ընդ ընկերի
նախանձու գնայաք և թշնամանաք. և ոչ այսչափ մի-
այն, այլ իբրև այն եթէ յընտանեկան պատերազմ
յարուցեալ, զինու նիզակաք և տիգաք բանից կռուէ-
աք ընդ միմեանս, առաջնորդք ընդ առաջնորդս, և
ժողովուրդք ընդ ժողովրդեան խռովեալ ընդհարկա-
նէք. նենգութիւն և կեղծաւորութիւն ՚ի ծայր չա-
րութեան ժամանեալ։ Իսկ ստուգութիւնն Աստուծոյ,
երկայնմտութեամբ որպէս և վայել էր նմա, ցորչափ
միաժողով միաբան կայր ժողովուրդն մեղմով իմն հան-
դէս առնէր այցելութեան իւրոյ. և սկսան հալածանք
քրն յեղբարց անտի որ ՚ի զինուորութեան էին։ Բայց
իբրև ոչ զգացաք և ոչ խորհեցաք՝ թէ որպէս հաշ-
տեցուսցուք ընդ մեզ զԱստուած, այլ իբրև անաս-
տուածք ոմանք և ամբարիշտք, որ անխնամ և անայ-
ցելու զմարդկային մեր իրս համարիցին, չարիս ՚ի վե-

աձէին և հանապազօր բազմանային և զօրանային և յաւելուին։ Ոչ
գոյր նախանձ որ յապաղեցուցանէր, և ոչ դէպ չար կարէր ցուցա-
նել զհակառակութիւն իւր, և ոչ զի խաբէութեամբ մարդկան յա-
պաղեցուցէ, որքան ձեռն Աստուծոյ որ յերկինից ձգեալ հովանի
ունէր և պահէր զժողովուրդս իւր որչափ արժանի էր։ Իսկ իբրև
՚ի բազում խաղաղութենէն անտի և յազատութենէն փոփոխեցան
իրք մեր և նախանձէին բազումք և հայհոյեին զմիմեանս. և ոչ այս-
չափ միայն, այլ իբրև այն եթէ մեք ընդ անձինս մեր պատերազ-
մեաք զինու և նիզակաք և տիգաք բանից, և առաջնորդք զառաջնոր-
դըս մերս բաղադրեցուցանէին, և ժողովուրդ ՚ի վերայ ժողովրդեան խառ-
վեալ լինէր. և կեղծաւորութիւն անչափ և խեղճատակութիւն ՚ի
ձեռն չարեացն բազմանայր և զօրանայր։ Իսկ ստուգութիւնն Աս-
տուծոյ, ժամանակաւ եմամբ որպէս և վայելէր նմա, իբրև ցոյն
վայր ժողովուրդն կայնէ խաղաղութենէ, և փոքրիկսակս զար-
թոյց զգործ իւր. և սկսան հալածանքն յեղբարց անտի որ զինուո-
րեալ էին ՚ի զինուորութենէն։ Բայց իբրև ոչ զգացաք և ոչ խորհե-
ցաք թէ որպէս հաշտեսցի ընդ մեզ Աստուած և քաւեսցէ զմեզ,
այլ իբրև մարդք որ առանց Աստուծոյ են համարէաք զիրս մեր, և

բայ չարեաց յաւելուած: Իսկ կարծեցեալ Հովիւքն մերժեցին յինքեանց զօրհնս աստուածպաշտութեան, և յաղթասէր հակառակութեամբ ընդ միմեանս վաճառեալ բորբոքեին, և միայն զայն ևեթ խորհէին, զի զհակառակութեան և զպատառնութեան և զնախանձուն, զքննամութեան և զատելութեան առ միմեանս աձեցուցանէին. և զգաստասիրութեան՝ իբրև բռնակալութեան յօժարական զհետ ընթանային: Եւ յայնժամ ապա ըստ բանից Երեմիայ Թէ. Զիարդ խաւարեցոյց սրտմտութեամբ բարկութեամբ Տէր զդուստրն Սիոնի. ընկէց յերկնից յերկիր զփառսն Իսրայէլի, և ոչ յիշեաց զպատուանդան ոտից իւրոց յաւուր սրտմտութեան բարկութեան իւրոյ. այլ ընկոյզ Տէր յանխնայ զամենայն գեղ Յակոբայ. և քակեաց զամենայն ամուրս նորա: Եւ որպէս ՚ի սաղմոսին կանխաձայնութիւնը էն. Դարձուցեր զաւխտ ՚ի ծառայէ քումմէ, պղծեցեր յերկրի՝ յաւեր եկեղեցեացն, զպբութիւն նորա: Քակեցեր զամենայն պարիսպս նորա, և եդեր զամուրս նորա ՚ի դողութիւն: Յափշտակեցին զնա անցաւորք Ճանապարհի, եղև նա նախատ դրացեաց իւրոց: Բարձր արարեր զաջ նեղչաց նորա, ուրախ զամենայն թշնամիս նորա: Դարձուցեր զօգնութիւն ՚ի սրոյ նորա, և ոչ ընկալար զնա ՚ի պատե-

բազմի։ Ընարգեցեր զորքուԹիւն նորա, և զաԹոռ նորա յերկիր կործանեցեր։ Նուազ արարեր զաւուրս ժամանակաց նորա, և հեղեր զնոսա զամէն։

ԳԼՈՒԽ Ը.

Վասն աւերման եկեղեցեաց։

Բայց եԹէ կատարեցաւ այս ամենայն յաւուրս մեր, յորժամ տաճարք աղօԹից մերոց հիմն՝ի վեր յատակ կէին, և գիրք սուրբ կառակարանաց՝ի մէջ հրապարակաց այրէին, և մեք աչօք մերովք տեսանէաք. և հոգիւք եկեղեցեաց մերոց այսր անդր ամէՌով ԹաքաԹաքուր շրջէին, և ոմանք իսկ անարգանօք ըմբռնեալ այպն կատակ Թշնամեաց լինէին. և որպէս ասէ այլուր բանն մարգարէական ԹԷ՝ ՆՀեզ անարգուԹիւն՝ի վերայ իշխանաց նոցա, մոլորեցոյց զնոսա յանապատի և ոչ՝ի ճանապարհի։ Բայց չէ մեր զայս ամենայն անՀնարին վիշտս տառապանաց՝ որ մինչև ցվերջ հասին՝ի վերայ մեր, բանիւ տալ՝ի գիր, և ոչ որ յառաջ քան զՀալածանս գժտուԹիւնք էին ընդ միմեանս և պլանդակուԹիւնք՝ յիշատակել՝ի դէպ և ըմբռնի։ Վասն այսորիկ աւելի ինչ յայնցանէ պատմել ոչ կա-

---

Տեաց Նորա. գարձոյց զօգնուԹիւն սրոյ Նորա, և ոչ ընկալաւ զնա՝ի պատեբազմի, և խափանեաց զյաղԹեցուցիչ Նորա, և զաԹոռ Նորա յերկիր կործանեաց. Նուազ արար զաւուրս մանկուԹեան Նորա, և զգեցոյց զնա ամաԹով։ Բայց եԹէ կատարեցաւ այս ամենայն՝ի վերայ մեր՝ի ժամանակի իրեն. տառապեալք աղօԹից՝ի բարձանց յերկիր մինչև՝ի հիմունս իւրեանց կործանեալ լինէին, և գիրք սուրբք Աստուծոյ՝ի մէջ հրապարակաց միշ այրէին՝ աչօք մերովք տեսանէաք. և հովիւքն եկեղեցեաց անխնամուԹեամբ այսր և անդր Թաքչէին. և՝ի նոցանէ ըմբռնեալ լինէին ԹշնամեաՌք և ապարգուԹեամբ, և՝ի Թշնամեաց անտի այպն և կատակ լինէին։ Եւ որպէս ասաց յայլումբանի մարգարէուԹեան եԹէ էարկ չարս՝ի վերայ իշխանաց, և մոլորեցոյց զնոսա ըստ ասաւղի և ոչ՝ի ճանապարհն։ Բայց յիշատակել զայս չէ մեր, և ոչ բաժանին առ միմեանս. և չարիքն որ յառաջ քան զՀալածանսն մեր էին տալ զնոսա՝ի յիշատակ։ Վասն այսորիկ աւելի ինչ ոչ կամեցաք պատմել քան զայս։ Բայց զայն ինչ որ նորոք փառաւորեմք մեք զարգար գա-

միք, բայց զայն ինչ միայն, որով զաստուածայինն գաստատան արդարացուցուք։ Եթէ այդպէս իցէ՝ և ոչ գնոցանէ որ հիւանդացանն 'ի հալածանս, և կամ որ նահակոծեցան խոպառ 'ի փրկութեան իւրեանց, կամ որք կամովին ընկղմեցան 'ի խորս ալեաց՝ կամեցայ ինչ յիշատակ առնել. այլ զայն միայն 'ի հանրական պատմութեանս յաւելցուք՝ որ նախ մեզ և ապա զմեր եկեղեց, լինիցին 'ի շահ օգտութեան։

ԳԼՈՒԽ Գ.

Վասն ազգի ազգի տանջանացն՝ որով նահատակեցան վկայքն 'ի հալածանսն։

Եկեսցուք յայսմ հետէ նշանակել կարճ 'ի կարճոյ զքաջչելլի պատերազմունս զվկայից բանին Աստուծոյ։ Զամին ինն և տասնեւերորդի ինքնակալութեան Դիոկղետիանոսի, յամսեանն Դիստրեայ, զոր Հռոմայեցիք Մարտասեն, 'ի ժամնակի իբրև մերձ էր օր տօնի յարչաւանաց Փրկչին մերոյ, և սիրեցան յանկարծական ընդ ամենայն աշխարհ հրովարտակք թագաւորութեանն, հրաման տուեալ քակել իջուցանել զեկեղե-

տաստանն Աստուծոյ. և Թէ այդպէս իցէ և ոչ վասն այնոցիկ որ հիւանդացան 'ի հալածանսն, կամ վասն այնոցիկ որ ընկղմեցան ազատախտուած կառարեալ, և նովին կամքն իւրեանց ընկեցան 'ի խորս ալեացն, կամեցայ ես յիշատակել։ Այլ զայս և եթէ յաւելցուք 'ի կատարեալ պատմութիւն, զայն ինչ որ նախ մեզ այնոցիկ որ զկնի մեր դալոց են լինիցին 'ի շահ օգտութեան։

Երրորդ. վասն թէ ո՛րպէս արարին զպատերազմ որ եղեւ 'ի հալածանսն։

Ար֊ եկեսցուք յայսմ հետէ նշանակեացուք կարճ 'ի կարճոյ համառօտ զքաջչելլի պատերազմունս զվկայից բանին Աստուծոյ։ Էր իսկ յամին ինն և տասնեւերորդի Թագաւորութեանն Դիոկղետիանոսի յարեւգ ամենան 'ի ժամնակի իբրև մերձ էր օրն տօնի յարչաւանաց Փրկչին մերոյ 'ի հասանել, և սիրեցան յանկարծակի ընդ ամենայն աշխարհ հրովարտակք Թագաւորութեանն. և առեալ զնոսին հրաման քակել իջուցանել զեկեղեցիսն մինչև 'ի հիմն, և

ցիս մինչև ՚ի հինն, և զդիրս սրբութեան այրել հրով. և զոր միանգամ պատուով ունէին զսպաս՝ պղծեալ անարգել, և սոսկականք քաղաքացւոց եթէ կացցեն ինասցեն ՚ի նոյն իւրեանց միտս քրիստոնէութեան, յազատութենէ անտի զրկեալ գացին։ Առաջինն հրովարտակն՝ որ էլ ընդդէմ մեր, այսպիսի ինչ էր։ Իսկ յետ ոչ բազմաց էլ միւս այլ հրովարտակ՝ հրամանաւ, թէ ամենեքեան որ միանգամ կայցեն ՚ի գլուխ եկեղեցաց ընդ ամենայն տեղիս ընծայեալ ՚ի կապանս մատնեցցին, և ազգի ազգի հնարիւք փորձեցցին զնոսա, հել դիցս Քայսեժամապա յոլովագոյնք յառաջնոցդաց անտի եկեղեցեաց անհնարին խոշտանգանաց տանեալ, յօժարագոյնս մեծի նահատակութեան հանդիպեսս մեզ ընծայեցին։ Եղեն և նոքա ոչ սակաւք՝ որք լուծեալք մեղկեալք յահէ անտի երկիւղին, ՚ի սկզբան իսկ պատերազմին նուաղեցան և լքան. իսկ ՚ի վերայ այլոց ամենեցուն միոյ միոյ ՚ի նոցանէ, բազմօրինակ մեքենայք տանջանաց փոխեալ լինէին։ Էր որ Հարուածով ՚ի մարմինս տանջեալ, և էր որ անտանելի չարչարանօք և քերանօք զպատիժ պատուհասի իւրեանց ընդունէին. կիսոցն ոչ երբեմնիկ կատարած կենաց ՚ի նոսին ՚ի տանջանսն լինէր. իսկ այլոց դարձեալ այլազգ զպատերազմն վարելով, զի էր որ իբրև բռնի վարեին

զդիրս սրբութեան այրել հրով. և որ միանգամ պատուով ունէին զնոսա ՚ի նշանամանս անարգեցին, և որ միանգամ էին երբեմն ՚ի ծառայութիւն և ազատեցան, եթէ կացցեն ինասցեն ՚ի միտս քրիստոնէութեան՝ յազատութենէն անտի իւրեանց զրկեալ գացին։ Դիրն իսկ առաջին որ եգաւ ՚ի վերայ մեր այսպիսի էր։ Իսկ յետ սակաւ մի ժամանակի այլ հրովարտակ եկին որ ունէին հրաման յինքեանս, եթէ ամենեքին որ միանգամ կայցեն ՚ի գլուխ եկեղեցեաց ընդ ամենայն տեղիս, նախ մատնեսցին նոքա ՚ի բանդս և ՚ի կապանս, և ապա յետոյ ազգի ազգի նեղութեամբ և պեսպես չարչարանօք նեղեսցին նոքա զոհել։ Քայնմ ժամանակի ՚ի բազում գլխաւորս եկեղեցեաց տանջանք չարաչարք կանխեցին երևեցան ՚ի նոսա։ Իսկ այլ հովիւք լուծեալ մեղկեալ լուծան անձինք նոցա յահէ անտի երկիւղին, և պարզ մեկին ՚ի սկզբանն իսկ պատերազմին նուաստ ղեկան և լքան։ Իսկ ՚ի վերայ այլոցն ամենեցուն միոյ միոյ ՚ի նոցանէ մեքենայք նշանաւորք չարաչարանաց փոփոխեալք լինէին. և որ հարուածովք տանջեալ լինէին մարմինք նոցա. և է որ անբուն և անչափ տանջանօք և քերանօք զպատիժ պատուհասի իւրեանց ընդունէին. զի ՚ի նոսին լինէր կատարած կենաց որ բազմաց ոչ էր

'ի զոհ պղծութեան և աղտեղութեան թէպէտ և ոչ զոհէը՝ իբրև այն թէ զոհեաց արձակեալ լինէր. և էր որ ոչ 'ի բագին անգամ մատչէր, և ոչ բնաւ հուպ լինէր որ սիրզ և աղտեղի էր՝ յասելն այլոց թէ զոհեաց, զղջպարտութիւնս ընկալեալ լուիկ և գնայր. իսկ այլ ոք կիսամահ բարձեալ և իբրև զմեռեալ ընկեցեալ դնէր, և էր դարձեալ որ 'ի վերայ երկրի ընկեցեալ և զոտանէ քարշեալ լինէր ընդ երկար, և յայնցանէ որ զոհէին՝ համարեալ լինէր. և էր որ աղաղակէր և 'ի ձայն բարձր վկայէր թէ գարշի նա 'ի զոհից. միւս որ զղրիստոնեայ եին աղաղակէր, և խոտովանութեամբ փրկական անուանն փառաւորեալ լինէր, այլ ոք թէ ոչ զոհեաց և ոչ զոհեացե երբէք պնդէր. Բայց ոք 'ի բազմաձեռն գնդէ անտի զօրակոչին առ այս կարգելոյ՝ ծեծեալ բռնցի 'ի բերանն և 'ի կզակս զի լռեացեն, բռնի արտաքս ընկեցեալ լինէին. Ա յսպէս ամենուստ թշնամիք աստուածպաշտութեան ամենայն հնարիւք ձգնէին, զի կարծեալ ե-

բարւոք: Իսկ այլք դարձեալք այլազգ դարձեալ եղեն ընդ պատերազմին:

Զորրորդ. վասն սրանչելի վկայիցն Աստուծոյ. թէ որպես յցան ամենայն աշխարհ յիշատակօք նոցա: Եւ առին զպսակս ճշմարտութեան:

Զի էր որ իբրև այլք բռնի մղէին գնասս 'ի զոհսն պղծութեան և աղտեղութեան մատուցանէին: Իբրև այն թէ զոհելով զոհեաց արձակեալ լինէր, թէպէտ և ոչ զոհէր. և էին որ ոչ և մատչելով մատչեին, և ոչ որ հուպ եղեն յինչ որ սիրզ և աղտեղի էր. և յայնմիկ զի այլքն առնէին եւթէ զոհեցին ընդունէր զղջպարտութիւնն իբրև լուիկ էր և գնայր: Իսկ միւսն եւս ընդ մահ և ընդ կեանս պատեալ լինէր. և իբրև զմեռեալ ընկեցեալ դնէր, և էր դարձեալ որ 'ի վերայ երկրի ընկեցեալ լինէր, և զոտանէ քարշեալ լինէր ընդ յերկար և իբրև զմեռեալ ընկեցեալ դնէր, և յայնցանէ որ զոհէցին համարեալ լինէր: Եւ էր որ աղաղակէր և 'ի ձայն բարձր բարբառոյ վկայէր. և իբրև ուրանայր 'ի զոհից անտի աղտեղութեանն և պղծութեան: Եւ միւս ևս թէ քրիստոնեայ եմ աղաղակէր և գովեալ լինէր խոստովանութեամբ անուան փրկչին մերոյ: Միւս ևս ոչ ի զոհեաց, և զոհէ սակս: Բայց սակայն բազումք տանջեալք լինէին և կարկինի բազում հնարիւք բանակին հատանէին, այն որ վասն այսր ունէր պատասէր հրամանի, և յերկուս և 'ի կզակս իւրանց ծեծեալ լինէին, և բռնի արտաքս ընկեցեալ լինէին: Ա յսպէս յամենայն հնարից թշնամանաց աստուածպաշտութեանն զօրանային

բևեռցին Թէ կատարեցան կամք Նոցա։ Բայց ընդդէմ վկայիցն սրբոց այսոքիկ ոչ յաջողէին. զորոց եթէ ըզպատմութիւնս Ձդիւ գտանիս օգ դնել կամիր, որ բան առ այս լինիկր բաւական։

ԳԼՈՒԽ Դ.

Վասն փառաւոր վկայիցն Աստուծոյ, որ բազմապատիկ պսակօք աստուածպաշտութեան պսակեցան, և թէ ո՞րպէս յղաւ աշխարհ ամենայն յիշատակօք նոցա։

Քանզի բազում արդեօք ունիցի օգ պատմել՝ որ ի վերայ աստուածպաշտութեան աքանչելի յօժարութեամբ եղէն զանձինս իւրեանց. ոչ միայն իբրև յուզեցան հալածանաքն ընդ ամենայն տեղիս, այլ և յաոաջ քան զբազում ժամանակս մինդեռ խաղաղութիւն էր։ Զի այն ինչ իբրև ի խոր քնոյ զարթուցեալ՝ որ զիշխանութիւն յաւիտենից ունի, գաղտ ծածկապէս դարաներ եկեղեցեաց՝ յետ Դեկոսի և Վալերիանոս հալածանացն, և ոչ միանգամայն յարուցաներ ընդդէմ մեր պատերազմ, այլ զնոսա միայն՝ որ զինուորեալքն էին փորձեր, յայսմիկ ակն ունէր նա դիւրաբար ըմբռնել և զայլս, եթէ ընդ սոսա նախ մար-

յոյժ, զի կարծեալ երևեցին Թէ կատարեցան կամք Նոցա։ Բայց և ոչ առ վկայսն սուրբս էյանէին այսոքիկ, այլ նոքին որ ոչ բաւական լինի բանս ի պատմել վասն Նոցա Ձմարտութեամբ։ Զի բիւրք էին պատմել մարդոյ զնոցանէն որ ցուցին զխորհուրդ աքանչելի վասն աստուածպաշտութեան, ոչ միայն իբրև յուզեցան հալածանքն ի վերայ ամենայնի, այլ և յառաջ քան զբազում ժամանակս խաղաղութիւն էր. զի նոյնժամայն զառաջինն իբրև ի գլխաւորէ խորութեամբ յուզեցաւ, այն որ կալաւ զիշխանութիւն Թագաւորութեանն գաղտ և ծածկապէս սկսաւ ի հալածանն եկեղեցեաց յետ ժամանակեանն որ եղև ի միջի յետ Դիոկղետիանոս և ի վերայ մեր յանկարծակի յարոյց զանձն իւր պատերազմել ընդ մեզ։ Բայց նախ զառաջինն զայնոսիկ որ ի զինուորութեան ա՛գ զինուորեալ էին՝ փորձէր. զի յայսմիկ կարծեալ ակն ունէր Թէ յաղթահարեցին մեացորդք այլոցն դիւ-

առեալ յաղթեսցէ։ Ջբազումս էր այնուհետեւ տեսանել, զի լուծեալք ի զինուորութենէ՝ զսովորական ընտրեցին իւրեանց կեանս, զի մի ուրասցին ի պաշտամանէ անտի արարչին ամենայնի։ Ջի իբրև զօրագլուխ զօրուն՝ չգիտեմ յայնժամ ո՞, մատուցեալ ձեռն արկանէր ի հալածանս զինուորաց, հանդէս առնէր զօրուն, և որոշէր մեհենիք զնոսա ըստ ցեղիցն և ըստ ազգին և դներ առաջի՝ ընտրել նոցա, կամ յանձն առնուլ զՀրամանն ինքնակալից և կալ ի պատուի անդ յորում էին, և կամ ի հակառակել՝ զրկեալ գոցին յայնմանէ։ Այնդ բազումք որ արքայութեան Քրիստոսի զինուորք էին, առանց երկմտութեան և կամ դանդաղելոյ ընտրեցին զխոստովանութիւն վկայութեան քան զկալածեցեալ փառս և զվայելչութիւն աշխարհի յոր վայելէին։ Եղեն ոմանք ի նոցանէ որ ոչ միայն զպատիւն Թողուին, այլ և զմահ վասն Ջհարիւրիս ուխտի աստուածպաշտութեան համբերէին. զի մեզմով դեռևս յայնժամ սատարն նենգութեան բանսարկուն մինչև ցՀեղուճն արեան սակաւուց համարձակէր, և Թուի Թէ երկինչեր նա ցայնվայր ի բազմութենէ անտի հաւատացելոց, շարժել հասարակ ի վերայ նո-

բաւ. եԹէ զառաջինն մարթեցէ և յաղթեսցէ նոցա, զբազումս այնուհետեւ ի զինուորացն անտի տեսանէր մարդ, զի ուրախութեամբ ընդունէին յանձինս իւրեանց՝ լուծանել և լինել իբրև զայլսն որ կեցին գոյզնաբար, զի մի ուրասցին ի պաշտամանէ անտի արարչին ամենայնի։ Ջի ի ժամանակի իբրև զօրագլուխն այն որ էր յայնմ ժամանակի. զի այն ինչ նորոգ զառաջին մատուցեալ էր նա ի հալածանս զինուորաց, և որոշէր և մեհենիք որ միանգամ գրեալ էին ի զինուորութեան. և դներ առաջի ընտրել նոցա, կամ յանձն առցեն կացցեն ի պատուի անդ՝ յորում էին, և կամ Թէ զի ոչ կամիացին և կացցեն հակառակ ընդդէմ հրամանին՝ զրկեալ գոցին ի նմանէ։ Եւ բազումք որ էին զինուորք արքայութեանն Քրիստոսի, զի խոստովանութիւնն որ ի նմա էր պատրաստաբար առանց երկմտութեան պատուհասին առաւել քան զվտասն որ կարծեալ էր լինել, և զյամ օգտութեան զօր ունէին նոքա։ Բայց էին ոմանք ի նոցանէ սակաւք, զի ոչ Թէ միայն զպատիւն Թողուին, այլ և զմահն վասն Ջհարիւրիս ուխտի աստուածպաշտութեան համբերէին զայնոսիկ որ էին զօրացուցիչ նենգութեան չարին. զի այն ինչ յայնմ ժամանակի համարձակէցաւ ի հեղուճն արեան սակաւուց. և Թուի Թէ երկինչէր նա ցայն վայր ի բազում հաւատացելոց անտի, և ծանրացոյց նա խրոխտել ի պատերազմին որ առ ամենայն ումեք։

ցա պատերազմ։ Իսկ իբրև յայտնեցաւ մերկաբար ՚ի կռիւ, ոչ ոք կարէ պատմել քանիս, թէ որչափ և որպիսի վկայս Քրիստոսի, յամենայն տեղիս ՚ի քաղաքս և ՚ի շէնս յանդիմանն առաջի աչաց իւրոց ամենայն ոք տեսանէր։

ԳԼՈՒԽ Ե.

Որ ինչ ՚ի Նիկոմիդիա գործեցաւ իրք։

Յայնժամ ոչ յամենշանից ոք, նա մանաւանդ աշխարհ հակառ մեծութեամբ պատուոյ երևելի այր, ՚ի գնել հրովարտակին ՚ի վերայ եկեղեցեաց ՚ի Նիկոմիդիա, յուզեալ աստուածային նախանձու, և եռանդեամբ հաւատոյն խրոխտացեալ, ձգեաց զձեռն ՚ի հրովարտակն որ ՚ի նշանաւոր տեղւոջ ՚ի հրապարակի անդ եդեալ էր, և ինքյոյ զայն իբրև պիղծ ինչ և ամբարիշտ, և պատառեալ ընկեց, մինչդեռ անդէն ՚ի քաղաքին էին երկոքին իսկ ինքնակալքն, որ երէցն էր քան զայլն ամենեսին, և որ զչորրորդ աստիճան ունէր իշխանութեան։ Եւ սա յայնժամ առաջին քան զամենեսին արիական գործովք փառաւորեցաւ ՚ի քաղաքին. և անդէն ըստ խրոխտ համարձակութեան համբերք պատուհասին անտխուր և անխռով մինչև ՚ի շունչն վերջին։

Հինգերորդ. վասն այնոցիկ որ վկայեցին ՚ի Նիկոմիդիա։

Իսկ իբրև յայտնեցաւ մերկաբար, ոչ ոք կարէ պատմել բանիս, եթէ որպէս զվկայս Աստուծոյ տեսանէր առաջի աչաց իւրոց մարդ յամենայն քաղաքս և ՚ի շէնս։ Յայնմ ժամանակի մի ոմն յանկուցեաց անտի յայնցանէ որ առաւելապէս զքաջելի էին յաստիճանս պատուոյ՝ որ կարծեալ երևին յաշխարհի, իսկ և իսկ իբրև եդաւ գիրս այս ՚ի վերայ եկեղեցեաց ՚ի Նիկոմիդիա, յուզեցաւ նախանձու Աստուծոյ, և խրոխտացաւ հաւատոյն եռանդեամբ։ Իբրև եդեալ էր գիրս այս ՚ի նշանաւոր տեղւոջ ՚ի հրապարակի, և ինքյոյ զնա և պատառեաց ընկեց, փոխանակ զի իբրև պղծութեամբ և անիրաւութեամբ եդաւ։ Իբրև էին անդէն թագաւորքն երկոքին ՚ի նմին քաղաքի, այսինքն այն որ քան զամենեսին երէցն էր, և այն որ զաստիճան չորրորդ զառաջնորդութեան ունէր, այս իսկ առաքինի եղև առաջի վկայիցն այնոցիկ որ եղեն յայնմ ժամանակի, և այսու կերպարանօք փառաւորեցաւ. և նոյնժամայն համբերք զոյն

ԳԼՈՒԽ Զ.

Վասն որոց ի յարքունեաց անտի կայսերաց Լիւն։

Բայց քան զամենեսին որ զարմանալի երբեք պատահեալ առ ի մեզ անուանի՝ եթէ ի մէջ Յունաց և եթէ ի մէջ բարբարոսաց, ի ժամանակին յայնմիկ երեւեցան փառաւոր և աքանչելի վկայքն Աստուծոյ Դորոթէոս և ընկերքն նորա լրընտանեաց անտի ի պաշտօնէից Թագաւորաց. որք մեծամեծ և զերագոյն ունէին պատիւս առ ի տերանց իւրեանց, և ոչինչ պակաս քան զորդիս Հարազատս սիրէին զեալք ի նոցանէ, առաւել քան զփառս և զգրգռանս աշխարհիս մեծագանձ արդարև Ճոխութիւն համարէին զնախատինս, զաղքատութիւն և զազգի ազգի նոքաչնար մահուանս որ ըստ կրօնից աստուածպաշտութեան։ Եւ ի նոցունց յայնցանէ յիշատակելոց զմին, Թէ որպիսի ընկալաւ նա վախճան, զի ի սմանէ տացուք ի միտ առնուլ և զայն ինչ որ ընդ այլս էանց, որոց միանգամ պատմութեան գրոցս ակն արկանիցեն։

Մեծաւ մատուցաւ երբեմն ոմն ի Նիկոմիդիա առաջի ինքնակալացն և հրամայեցաւ նմա զոհել. որ իբրև

ինչ որ համեմատին այսմ խրոխտացոյց, և առանց տրամութեան պատճառաց զանձն իւր մինչև ի չունչն վերջին։ Բայց առաւել քան զամենայն վկայսն որ գովեցան աքանչելագոյն, և անուանեցան զօրութեամբ որ եղեն ընդ ժամանակս ժամանակս, կամ ի մէջ Յունաց կամ ի մէջ բարբարոսաց յայնմ ժամանակի վկայք աքանչելիք Աստուծոյ, այնոքիկ առաւել Դորոթէոս. որ էին նոքա լրընտանեաց անտի Թագաւորացն. որք զպատիւն մեծ և վերագոյն ունէին առ ի տերանց անտի իւրեանց, և ի տարին սիրոյ որգուոյն իւրեանց չէին որոշեալ տարա։ Բայց մեծութիւն իրին Ճշմարտիւ համարին առաւել քան զփառս և զգրգռանս փոփոխելեան աշխարհիս այսորիկ, զնախատինսն և զցաւս չարչարանաց որ վասն աստուածպաշտութեան էր, և զմահն ազգի ազգի որ նորոգեալ լինէին ի վերայ նոցա։ Եւ ի նոցունց յայնցանէ յիշատակելոց զմին, Թէ որպիսի վախճան եղև նմա, զի ի նմանէն հասկնասցուք և զայն ինչ որ էանց ընդ այլսն որ միանգամ կարգան զիրս զայս։ Ասին այնուհետեւ ի մէջ զմի ոմն յայնմ քաղաքի, վասն որոյ առացաք մեք զնմանէ, առաջի այնր Թագաւորացն, և հրամայեցաւ նմա զոհել։

Հանսայր հրամանին և պինդ կայր, մերկ ի բարձուէ յօդս կախել հրամայեցաւ, և ի հարուածս գանից քանցել զանհնարս մարմին նորա , մինչև յաղթեալ ականջ հնազանդեսցի: Իբրև այս օրինակ խոշտանգեալ և ոչ փոխեցաւ երանելին ի մտաց իւրոց, և ղի ոսկերքն այնուհետև արտաքս երևէին, աղ և քացախ խառնեալ և արկին ի վերայ մարմնոյն: Իսկ իբրև ժուժկալեալ տարաւ ցաւոցն, տապակս և հուր ի մէջ բերէին, և իբրև զմիս ուտելի զնացորդս մարմնոյ նո- րա յայնմ հրատի ղի մի միանգամայն ծախեալ վախ- ճանեսցի՝ առ սակաւ սակաւ մաշէին: Եւ որ եդիին զնա ի վերայ հրոյն չտային նմա Թոյլ ելանել անտի՝ մինչև ակնարկելով գոնեա խոստասցի զհրամայեալսն կատարել. իսկ նա անշարժ և անխոտոր ի խորհուրդս և յաղթական ի չարչարանս անդ իւրում արձակեաց զհոգին: Ա.յսպիսի եղև վկայութիւն սորա , որ ի պաշ- տօնէից անտի ինքնակալացն էր, արժանի արդարև անուան իւրոյ , որ Պետրոսն կոչէր: Ոչինչ նուազ գը- տաւ և պլոյն վկայութիւն , այլ առ Համառօտու- թեան Թողումք աստանօր , զայս միայն ասելով եթէ Դոլոթէոս և Գորգոնիոս Հանդերձ այլովք ընկերօք ի պաշտօնէից անտի արքունեաց՝ յետ ազգի ազգի պատերազմաց որոց տարան, խեղդ ի պարանոցս ար- կեալ փոխանակեցին զայս կեանս ընդ անտի կենացն

Իսկ իբրև հաստատեալ ժուժկալ լինէր, հրամայեցաւ կախել ի բարձու մերկ, և քերկոցի ամենայն մարմինն հարուածովք մինչև յաղթահարիլոցի, Թէ ոչ կամիցի առնել զոր ինչ հրամայիցի: Եւ իբրև զայս վիշտս վշտացաւ և ոչ փոխեցաւ ի մտաց իւրոց, և ոս- կերքն այնուհետև արտաքս երևէին, աղ և քացախ խառնեցին և արկին ի վերայ վիրաց մարմնոյն: Իսկ իբրև զայս ցաւս առ ոսն ե- հար, տապակս և հուր ի մէջ բերէին, և իբրև զմիս ուտելի մաշ- ցորդք մարմնոյ նորա յայնմ հրատի մաշեալ լինէին առ սակաւ սակաւ, ոչ միանգամայն յանկարծակի՝ զի մի գերբաւ վախճանես- ցի: Ոչ տային նմա Թոյլ այնոքիկ որ եդիին ի վերայ հրոյն՝ ելանել անտի. մինչ զի գոնեայ ակնարկելով խոստասցի զհրամայեալսն կա- տարել: Իսկ նա ի մտաց անտի իւրոց չէնեբ չարժեալ. նովին չար- չարանօք արձակեաց զհոգին իւր: Եւ այսպիսի էր վկայութիւն սորա որ լրնտանեաց Թագաւորացն էր, զի արժանի էր Տէմար- տիւ յորջորջմանն իւրոյ, և Պետրոս էր անուն սորա: Բայց չէին նուազ քան զայս որ գործեցան ի միւս տեղի. այլ զի մի սասա- ցուք զբազումս, Թողցուք անդր զնացորդսն և զայս ասասցուք:

անապատական պահին։ Յայսմ ժամանակի և Աթէիոս՝ որ ի գլուխ կայր եկեղեցւոյն Նիկոմիդացւոց, վասն վկայութեանն Քրիստոսի կատարմամբ նահատակեցաւ, ընդ որում յաւելան և այլ բազումք վկայք։

Քանզի յաւուրսն յայնոսիկ՝ չգիտեմ թէ որպէս և կամ ուստի, հարաւ Հուր զապարանից արքունի ի Նիկոմիդիա, և իբրև ի սուտ կարծեաց եղ համբաւ եթէ ի ժողովրդենէ աստի մերմէ եղև այս. և այնուհետեւ իբրև ի հրամանէ ակնարկելոյ Թագաւորին ձեռն ի գործ լինէին առ հասարակ զամենայն ազգն երկիւղածաց ի բնէ սատակել, և էր որ սրով կատարեալ լինէին և էր միահողոյն խմբովին հրով մաշեալ լինէին։ Եւ ասի բան, թէ յաստուածային իին կամաց զօրութենէն, որ անպատմելին է՝ արք և կանայք անգամ ի հուր անդր վաղէին մտանէին, իսկ զայլս բազումս կապեալս և ի մակոյկս լցեալ դահիճքն ի խորս անդ ծովակուր առնէին. զընտանիս Թագաւորացն՝ յետ մահուան նոցա վայելչապէս ի գերեզմանս ամփոփեալս, հրաման տային տանել զարք նոցա բրել հանել

Դորթէոս և Գորգոնիոս, հանդերձ այլովք բազմաւք՝ որ էին ի տանէ անտի Թագաւորութեանն, յետ ազգի ազգի պատերազմաց զոր կրեցին, փոխանակեցին զայս կեանքս, և առին զանանց կեանս և զանապական պսակն ի Քրիստոսէ Աստուծոյ։

Վկայաբանութիւն Անթիմոսի որ վկայեցաւ ի տասից աւուրն յունվարի։

Յայսմ ժամանակի և Աթէիոս որ կայր ի գլուխ եկեղեցւոյն Նիկոմիդացւոց վասն վկայութեանն Քրիստոսի հաւատոյ գլուխ նոքա և յաւելաւ անդաբձեալ ընդ նմին յանկարծակի բազում վկայք ընդ այն իսկ աւուրս։ Ոչ գիտեմ թէ որպէս կամ ուստի հարաւ հուր զանձն Թագաւորութեանն որ էր ի Նիկոմիդիա, և իբրև ի սուտ կարծեաց, եղ համբաւ եթէ ի ժողովրդենէ առ անձն էրն։ և այնուհետեւ իբրև ի հրամանէ ակնարկելոյ Թագաւորին առ անձնային ժողովուրդն առ հասարակ որ էր անդ էր կիզածացն Աստուծոյ, էին որ սրով կատարեալ լինէին, և էին որ հրով մաշեալ լինէին։ Եւ ասի բան թէ իբրև ի զօրութենէ կամաց Աստուծոյ որ ոչ պատմի, արք հանդերձ կանամբք ի հուր անդր վաղէին մտանէին։ Իսկ թշնամիքն զբազումս զայնս որ սրով բառնային ի խորս ծովու ընկենուին։ Իսկ զընտանիս Թագաւորացն յետ մահուան նոցա յերկիր Թագէին որպէս արժանէր, վերստին փոխեցին հանին զնոսա, և տային ընկենուլ ի ծով։ Համարեցան Թագա-

զնոսա ՚ի հանգստարանաց նոցա և ՚ի ծով անդր առնել. զի մի որպէս նոքայն կարծէին, կալով ՚ինալով նոցա ՚ի գերեզմանս, յաստուածս համարեալ և երկրպագու. Թիւն առնուցուն։ Եւ այսօրիկ ՚ի սկզբան անդ հալածանացն ՚ի Նիկոմիդիա գործեցան։ Իսկ յետ սակաւ մի ժամանակաց ՚ի գաւառն՝ որ անուանեալ կոչի Մելիտինէ, գարձեալ և ՚ի կողմանս Աւսրւոց ՚ի վեր ելանէին՝ որ զինքնակալութեան Թեկն ածէին [1]. և հրաման արքունի լինէր զի ամենայն ուրեք զգլխաւորս եկեղեցեաց՝ կապեալս արկցեն ՚ի բանտ։ Եւ յետ այսորիկ տեսիլ անցիցն անցելոց գերագոյն էր քան զամենայն պատմութիւն, զի զզառամութիւն բիւրաւոր մարդկան ընդ ամենայն տեղիս արգելեալ փակէին, և որ երբեմն պատրաստեալ էին բանտք սպանողաց և գերեզմանահատացն դիակապտից, յայնժամ եպիսկոպոսք, երիցամբք, սարկաւագօք, ընթերցողք և երգեհեցուցչօք լի լինէին, մինչև չնայլոյ տեղի չարաչարութեանց պարտաւորացն։ Գայրն հասանէին գարձեալ ՚ի վերայ առաջնոցն և այլ հրովարտակք զի արգելեալքն ՚ի բանտս՝ եթէ զոհեսցեն, արձակեսցին և երթիցեն ուր և կամիցին, ապա եթէ այնպէս և չառնուցուն յանձն, բիւրապատիկ տանջանօք քանցեալ զմարմինս խոշտանգել զնոսա։ Եւ աստ գարձեալ

առքն տեարքն նոցա, Թէ իբրև եգեալ էին նոքա ՚ի գերեզմանս երկիր պագանել նոցա մարդիկ, և աստուածս համարին զնոսա։ Իսկ որ միանգամ ինչ գործեցաւ խնդրան հալածանացն ՚ի Նիկոմիդա, այս և որ իբրև զայս էին։ Իսկ յետ սակաւ մի ժամանակաց ՚ի գաւառ որ անուանեալ կոչի Մելիտինէ։ Եւ գարձեալ և ՚ի կողմանս Աւսրւոց այլք բազումք անդէն ՚ի նմին Թագաւորութեանն, և հնարէին զի զամենայն գլխաւորս եկեղեցեաց որ ընդ ամենայն տեղիս իցեն՝ արկցեն ՚ի բանդս հրամանաւ Թագաւորին. և էր տեսիլ որ ՚ի նոսայն գործեալ լինէր վերագոյն քան զամենայն պատմութիւն. զի բազմութիւն բիւրուց արգելեալ էր ընդ ամենայն տեղիս ՚ի բանդս, որ պատրաստեալ էին յառաջագոյն սպանողացն և գիտ կողոպտիչն. յայնժամ եպիսկոպոսք և երիցունք և սարկաւագունք և ընթերցողք և երգեհեցուցիչք լինէին. որպէս զի մի ինասցէ անդ տեղի գաւառապատում չարագործաց ՚ի գործս չարութեանց։ Բայց գարձեալ և այլ հրովարտակք էին հասին առաջնոցն, զի ՚ի նոսա գրեալ էր վասն ամենեցուն որ արգելեալն էին որ Թէ զոհեսցեն արձակեսցին, և երթիցեն ազատութեամբ ուր և կամիցին. ապա Եթէ այնպէս և չառնուն յանձն, բազում տանջանօք հրամայեցեալ

զիմաղդ ոք կարէ Թուել զբազմութիւն վկայիցն որ ընդ ամենայն տեղիս, մանաւանդ զայնոսիկ որ Աֆրիկէ, ի Մաւրիտանիա, ի Թեբայիտ և Եգիպտոս. և որք անտի յայլ յաշխարհ և ի քաղաքս փոխեալ փառաւորեցան վկայութեամբ։

ԳԼՈՒԽ Է.

Վասն Եգիպտացւոց որ վկայեցին ի Փիւնիկէ.

Գիտացաք մեք զոմանս ի նոցանէ որ ի Պաղեստին առաքինացան, և զայլս ի Տիւրոս Փիւնիկեցւոց. քանզի ո՛չ, որ տեսեալ զնոսա և ոչ զարմանք կալաւ զնա ընդ անչափ և ընդ անհամար հարուածս և ընդ համբերութիւն այնց արդարև սքանչելի նահատակացն աստուածապաշտութեան. որք յետ հարուածոցն գաղնից արիական ժուժկալութեամբ մրցեին ընդ գազանս արիւնախանձս խրոխտելով ի կրկիսի, ընդ ընձուց, ընդ բազմագղի արջուց ընդ խոզից վայրենեաց և ընդ ցլուց ի բոց հրոյ և յերկաթ հրաշեկ խարանաւս զայրագնելոց։ Եւ ի լինել այսոցիկ ամենայնի և մեք անձամբ անդ դիպեցաք, ուր զզօրութիւն աստուածե-

զի քերեացին։ Եւ այսուհետև դարձեալ և ասա զիարդ ոք կարէ Թուել զբազմութիւն վկայիցն որ ընդ ամենայն տեղիս, մանաւանդ զայնոսիկ որ Աֆրիկեայն էին, և ի Ժողովուրդն Մաւրացւոց և ի Թեբայիս և Եգիպտոս, այնոքիկ որ յետ այսր և յայլ աշխարհս և ի քաղաքս եղեն և փառաւորեցան վկայութեամբ։

Երրորդ. վասն եգիպտացւոցն որք վկայեցին ի Փիւնիկէ։

Դիտեմք մեք զայնոսիկ որ Եգիպտոսէն էին, զի առաքինացան ի Պաղեստին. և տեղեակ եմք այնոցիկ որ ի Տիւրն փիւնիկեցւոց, զի այն որ ետես զնոսա՝ զարմանք կալաւ զնոսա ընդ անչափ և ընդ անհամար հալածանսն, և ընդ համբերութիւն այնց նահատակացն սքանչելեաց, ջնջարատութեամբ աստուածպաշտութեանն, և պատերազմէն զոր առնէին։ Զի ոմն և ոմն ընդ հարուածոցն նոցա ընդ դազանս մարգահեաս խրոխտելով. ընձուց և արջուց և խոզից վայրենեաց և զոտաբակաց որ զայրանային խարանաւք հրոյն և գիմեին և մատուցանէին նոցա, և պանդխտի համբերութեամբ քաջացն որ առ մի մի ի դազանսդ անտի էր. և այսոքիկ որ մինչև ընկենին, և մեք

զնէն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ վասն որոյ նա-
հատակքն վկայեին, արդեւամբ մեծ առ նոսա տեսեալ
պատմեմք։ Որպէս և զմարդակերացն գազանաց ժամ
ձիգս չհամարձակել մերձենալ և կամ հուպ ՚ի մարմին սիրելեացն Աստուծոյ լինել. ուր յայլս օտարս՝ ՚ի
գրգռելն գնոսա սակաւիկ մի, անդէն դիմեալ և առ-
ժամայն սատակէին։ Իսկ սրբոցն նահատակաց՝ թէ-
պէտ և մերկամարմինք և ձեռաք իւրեանց շարժէին
ձգելին զգազանս առ իւրեանս, զի այսպէս հրամա-
յեալ լինէր նոցա առնել, և ոչ քնաւ ամենևին զժա-
նիսն հասուցանէին։ Էր զի և ՚ի նոսա դիմէին, այլ
որպէս յաստուածային ինն զօրութենէ վանեալք
անդրէն յետս դառնային։ և այս ընդ երկար ժամա-
նակս այսպէս գործեալ, ոչ սակաւ զարմացումն հան-
դիսատեսից ածէր ՚ի վերայ։ Եւ իբրև առաջին գա-
զանն ինչ ոչ գործէր, երկրորդ և երրորդ գազանս
արձակէին ՚ի վերայ նորին միոյ վկայի։ Բայց զարմա-
նալի է անյողդողդ հաստատութիւն վկայիցն երանե-
լեաց, և անվրդով արիական ոգին ի մանկական նոցա
մարմինս։ Չի անդ էր տեսանել և պատանեակ այն
ինչ ՚ի հասակ տիոջն քաջանալ, առանց կապանաց
և ըստ օրինակի նահանջութեան խաչին բազկատարած,

անդ դիպեցաք։ Իբրու զօրութիւն աստուածեղէն Փրկչին մերոյ
Յիսուսի Քրիստոսի, այն որ վասն նորա վկայէին՝ կայր առ նոսա և
արդեամբք ցուցանէր վկայիցն առաքինութեանց. և մեք տեսաք գա-
զանս չարաչարս, զի բազում անգամ փութացուցանէին մերձենալ
և կամ հուպ լինել ՚ի մարմին սիրելեացն Աստուծոյ, և ոչ համար-
ձակէին։ Իսկ զայլս օտարս որ բերէին, սակաւիկ մի գրգռելին զնո-
սա, և նոքա դիմէին ՚ի վերայ նոցա և առ-ժամայն սատակէին։ Իսկ
զնահատակ պաշնչելիան թէպէտ և մերկ կային, և ձեռաք իւրեանց
շարժէին և ձգելին զնոսա առ ինքեանս, զի այսպէս հրամայեալ լի-
ներ նոցա զի արասցեն, և ոչ քնաւ ամենևին հասանէին առ նոսա։
Բայց էր ժամանակ զի և դիմելով դիմէին ՚ի վերայ նոցա, և ՚ի զօ-
րութէն Աստուծոյ հեռանային և յետս դառնային. և այսոքիկ իբրև
ընդ յերկար ժամանակս գործեալ լինէին՝ պաշնչելիս մեծամեծս
ասային տեսողացն. և իբրև առաջին գազանն ինչ ոչ գործէր, գա-
զան երկրորդ արձակէին ՚ի վերայ նոցա։ Բայց զարմանալ է ընդ
ժուժկալութեանն որ ոչ յողդողդէր վկայիցն երանելեաց, և ընդ
համբերութեանն որ ոչ շարժի որ ՚ի մարմինս մանկացն, զի տես-
նէի ես զշամ հասակին որ պակաս էր քան զքսանամեայս, զի կայր
երիտասարդն առանց կապանացն. և ձգէր զձեռս իւր ըստ օրինակի

անեղկիւղ խորհրդով և անվկանդ յաղօթս և ՚ի խընդրուածս կացեալ առ Աստուած, ոչ խռովէլ և ոչ դեղեկել ինչ ուրեք ՚ի տեղւոյն՝ մինչդեռ արքայ և ինձ զբարկութիւն և զմահ չնչելով հասանէին ՚ի մարմին նորա անհնարին ժանեաքն, այլ չդիտեմ որպէս յաստուածայինն իմն գաղտնի կամաց խոցեալ լինէր բերան նոցա և անդրէն միւսանգամ յետս ընդ կրունկն դառնային։ Եւ սա այսպէս հանդիսանայր։ Եւ զայլս ապա տեսանէի ես, զի հինգ էին սոքա Թուով, արկեալ առաջի ամենի ցլուն, որ յարտաքնոց յօտարաց մերձենալ առ նա եղջերօքն իւրովք յօդս ամբարձեալ և յերկիր ընկենոյր չարաչուկ չարատանջ, և ՚ի տուրբ վկայն միայն Թէպէտև սրամտեր բառաչելով, սակայն մերձենալ ոչ կարէր։ Ոտիւքն և եղջերօք ոգորելով զգետինն խեթ կէր. և ՚ի վերայ խարտեացն և հրաւառ մարակացն ՚ի զայրուցս անդ սպառնալիս շընչէր, սակայն ՚ի տեսչութենէն Աստուծոյ անդրէն յետս դառնայր։ Իբրև սա ոչ մեղանչէր նոցա, դարձեալ այլ գազանս արձակէին ՚ի վերայ. և յետ ազգի ազգի անհնարին գազանացն արձակելոց, սրով սպանան ամենեքեան, և փոխանակ երկրի և գերեզմանի ՚ի խորս ծովու ընկեցան։ Այս օրինակ եղև պատերազմ Եգիպտացւոց՝ որ ՚ի վերայ աստուածապաշտուԹեան ՚ի Տիւրոս նահատակեցան։

Նմանութեան խաչին. և անեղկիւղ խորհրդով որ ոչ յողդողդի պըրկեալ էր առ Աստուած յաղօթս և ՚ի խնդրուածս, և ոչ խռովէր կամ խանգարէր ուրեք ՚ի տեղւոջն անտի յայնմանէ յօրում կայր. մինչդեռ արքայ և ինձք որ զբարկութիւն և զմահն չնչէին հասանել ՚ի մարմինս նորա մերձ կէին. և այս ՚ի զօրութենէն Աստուծոյ որ ոչ պատմի՝ խցեալ լինէր բերան նոցա, և դարձեալ միւսանգամ անդրէն յետս դառնային, և սա ահ և ի այսպէս էր։ Եւ ապա զայլս տեսանէի ես որ արկանէին առաջի զուարակաց ամենեցուն, այն որ զայլսն սրասրելոնս որ մերձենային ՚ի նա՝ եղջերօք իւրովք ՚ի վեր ընկենոյր և անդէն պատառէր զնոսա։ Իսկ վկայքն սրբոց Թէպէտև և սրամտեր բառաչելով, սակայն մերձենալ ՚ի նոսա ոչ կարէր. բայց ոտիւք և եղջերօք իւրովք այսր անդր ոգորէր, և վասն զայրասլըյն բարկութեան չչէր։ Իսկ ՚ի տեսչութենէն Աստուծոյ անդէն յետս դառնային, զի և ոչ այս մեղանչէր նոցա։ Բայց դարձեալ այլ գազանս արձակէին ՚ի վերայ նոցա, և յետոյ գառնագոյն քան զգազանս սրով սպանան. և փոխանակ երկրի և գերեզմանի ՚ի խորս ծովու ընկղմեցան. և զի իբրև զայս էր պատերազմին եգիպտացոց, այնոցիկ որ ցաւցին զմարտ պատերազմի վասն աստուածապաշտուԹեան ՚ի Ծուր քաղաքի։

ԳԼՈՒԽ Ը.

Վասն այնոցիկ որք վկայեցին անդէն յԵգիպտոս։

Բայց զարմանալ է և ընդ այնոսիկ՝ որ անդէն յերկրին իւրեանց վկայեցին, որպէս զի բիւրք Թուով արք հանդերձ կանամբք և մանկտւով վան վարդապետ աւետեան Փրկչին մերոյ արհամարհեալ զառաջամանակեայ կեանս, և համբերեցին մահու ազգի ազգի կերպարանաց։ Ոմանք 'ի նոցանէ յետ քերանացն և տանջանացն և չարաչար հարուածոց և բիւր մեքենայիցն և ահաւոր չարչարանացն՝ 'ի հուր ընկեցեալ լինէին։ այլք 'ի խորս ծովուն ընկղմեցան, կեանք համարձակ խնդութեամբ պսպարանոցս իւրեանց մատուցանէին սրոյն որ հատանէին զգլուխս նոցա. ոմանք 'ի տանջանսն մեռանէին, այլք 'ի սովոյ սատակէին. կեանք 'ի խաչ ելանէին, եր որ ըստ սովորութեան չարագործաց, այլք չարք քան զնոսա, վերստին խնդրեալ լինէին կենդանւոյն մինչ զի 'ի վերայ նոցուն փայտիցն 'ի սովոյ սատակեալ լինէին։

Որբերորդ. վասն այնոցիկ որ վկայեցին անդէն յԵգիպտոս։

Բայց զարմանալի է ընդ այնոսիկ որ անդէն յերկրին իւրեանց վկայեցին, որպէս զի բիւրք Թուով արք հանդերձ կանամբք և մանկտւով վան վարգապետ աւետեան Փրկչին մերոյ արհամարհեցին զառաջամանակեայ կեանս, և համբերեցին մահու ազգի ազգի կերպարանաց։ Ոմանք 'ի նոցանէ յետ քերանացն և տանջանացն և չարաչար հարուածոցն և բիւր մեքենայիցն և ահաւոր չարչարանացն՝ 'ի հուր ընկեցեալ լինէին. այլք 'ի խորս ծովուն ընկղմեցան, կեանք համարձակ խնդութեամբ պսպարանոցս իւրեանց մատուցանէին սրոյն որ հատանէին զգլուխս նոցա. ոմանք 'ի տանջանսն մեռանէին, այլք 'ի սովոյ սատակէին. կեանք 'ի խաչ ելանէին, եր որ ըստ սովորութեան չարագործաց, այլք չարք քան զնոսա, վերստին խնդրեալ լինէին կենդանւոյն մինչ զի 'ի վերայ նոցուն փայտիցն 'ի սովոյ սատակեալ լինէին։

ԳԼՈՒԽ Թ.

Վասն այնոցիկ որ ի Թեբայիս վկայեցին։

Ընդեալ իսկ զանցեալ էին քան զամենայն բան հաւատոյ և ցաւք, որոց ժուժկալեալ տարան վկայքն ի Թեբայիս, զի փոխանակ եղծանց՝ խեցեաւ ամենայն մարմին նոցա մինչև ի վախճան կատարածի նոցա քեբեալ լինէին։ Եւ կանայք զմիոյ միոյ յոտիցն կապեալ, և ի վեր ի բարձու մեքենայիւք գլխիվայր ամբարձեալ տանջեալ լինէին՝ ամենևին մերկ և անծած կոյթ, տեսիլ չարաչար անողորմ և խիստ քան զամենայն ինչ տեսողացն լինէին։ Եւ զայլս դարձեալ ի ծառս և յոստս նոցին պրկեալ սպանանէին. զի զհասատապինդս մանաւանդ յոստոց անտի ծառոց մեքենայիւք ոմանք ոստի և անտի ձգեալ ի մի վայր, և զբուռնս վկայիցն մի ոստի և մի անտի կապեալ, և Թողուին զոստն ի բնիկ իւրեանց դառնալ դիմս, և յանկարծակի անդամակոտոր առնէին զնահատակսն։ Եւ զայս ոչ զաւուրս ինչ կամ ամսակաւ ժամանակս, այլ ընդ երկար զամս բազումս գործէին. էր օր զի աւելի քան զտասն, և էր զի քան զքսան Թուով սպանեալ լինէր։

Իններորդ. վասն այնոցիկ որ վկայեցին ի Թեբայիս։

Ընդեալ իսկ զանցեալ էին ի բանէ հաւատածոյ և ցաւք, զոր համբերելին վկայքն ի Թեբայիս. զի խեցեաւ փոխանակ եղծեր ամենայն մարմին նոցա քերեալ լինէր մինչև ի վախճան կատարածի նոցա։ Եւ կանայք մի մի զոտից իւրեանց կապեալ լինէին, և ի վեր ի բարձու մեքենայիւք տանջեալ լինէին մերկ պղտիզ, տեսիլ չարաչար անողորմ և խիստ քան զամենայն ինչ տեսողացն էին նոքա։ Պարձեալ այլք երբեք կապեալ էին ի ծառս և յոստս ի վերայ նոցա ածէին, զի զոստս բիւրս զծառոց մեքենայիւք իւին ոստի և անտի ձգէին զնոսա ի մի տեղի, և զոստս վկայիցն մի ոստի և մի անտի պրկէին, և Թողուին զոստան երթալ անդէն ի տեղի իւրեանց, զի կոտորել յանկարծակի զանգամն նոցա խորտանկէին. և այս իսկ գործեալ լինէին, ոչ աւուրս ինչ կամ ժամանակս սակաւ, այլ զամս բազումս։ Էր օր զի աւելի քան զտասն Թուով սպանեալ լինէին, և էր զի աւելի քան զքսան և երեսին և երեսուն և մինչև ի

ին, և երբեմն երեսուն իսկ և մինչև ՚ի վաթսուն. և դարձեալ երբեք երբեք և մինչև ցհարիւր ՚ի միում աւուր աքք և կանայք հանդերձ մանկտւով կոտորէին ազգի ազգի և փոփոխ պատժոք պատուհասիւ պարտաւորեալք։ Եւ մեք ինքնին՝ ՚ի շրջելն մեր ՚ի կողմանս յայնոսիկ ականատես գտաք բազմայ միահաղոյն ՚ի միում աւուր կառափնատելոյն և հրով նահատակեալ։ Զի շլացաւ սուրն ՚ի հատանելոյ անտի, և դահիճքն վաստակեցան, և ձանձրացան ՚ի փոխանակելոյ զմիմեանս։ Ցեսաք յայնժամ և զբանչելի պնդութիւնն արութեանն, և զաստուածային արդարև զօրութիւնն և զյաժարական միտս այնոցիկ որ հաւատացին յօծեալն Աստուծոյ. զի յորժամ ընդունէին սուրբքն զվճիռ մահու իւրեանց, նոյնժամ վազէին մտանէին ընդ այլ և այլ մուտս առաջի բեմի դատաւորին և խոստովան լինէին թէ քրիստոնեայք են. և արհամարհեալ յայս դնէին զանհնարին և զբազմօրինակ պէսպէս տանջանսն, և անվեհեր համարձակութեամբ զաստուածպաշտութիւն արարչին ամենեցուն քարոզէին. և խնդութեամբ և զուարթագին ցնծութեամբ զվճիռ մահու ընդունէին, որպէս զի սաղմոս իսկ նուագել և օրհնութիւնս և գոհութիւնս Ցեառն հայմայիոյ վերառաքել մինչև ՚ի վերջին շունչ կենաց իւ-

վաթսուն. և յայլում ժամու և մինչև ՚ի հարիւր ՚ի միում աւուր աքք և կանայք հանդերձ մանկտւով մեռանէին և պարտաւորեալ լինէին ազգի ազգի և պէսպէս պատժովք պատուհասիւ։ Բայց և մեք տեսաք այնք մերովք ՚ի ժամանակի իրերն. չոգաք յաշխարհն յայն, զի բազումք յանկարծակի ՚ի միում աւուր էին որ զչուխս նոցա հատանէին, զի շլացաւ սուրն ՚ի հատանելոյ անտի և ոչ կարէր հատանել, և ինքեանք ապառողքն վաստակեցին և ձանձրացան ՚ի փոփոխել իւրեանց մի ըստ միոջէ։ Բայց խրտիառութիւն զբանչելի կատարեալ կամաք զօրութեամբն Աստուծոյ տեսանէին զայնոցիկ որ հաւատացին յօծեալն Աստուծոյ. զի նոյնժամայն յորժամ ընդունէին սուրբքն զվճիռ մահու իւրեանց՝ վազէին մտանէին այլք յայլսէ կողմանէ առաջի բեմի դատաւորին, և խոստովան լինէին վասն անձանց իւրեանց թէ քրիստոնեայք են, և արհամարհէին և անգոնանէին զհալածիչսն, զայն ամենայն զնեղութիւնսն և զտանջանսն պէսպէս տանջանս սրամտութեամբ էին յատուածպաշտութիւնն, և խնդութեամբ և ցնծութեամբ զվճիռ մահու ընդունէին երգելով, և օրհնութիւնս և գոհութիւնս Աստուծոյ ամենայնի հանէին մինչև ՚ի վերջին շունչ։ Բայց զարմացեալ

բերանց. և արդարև զարմանալոյ արժանի էին սոքա, Բայց աւելի գովութեան և զարմանաց արժանաւորք երևեցան այնոքիկ, որ մեծութեամբ ընչից, ազնուա-կանութեամբ տոհմին և փառաք, բանիւ և փիլիսո-փայութեամբ Հոխացեալք, սակայն առաւել քան զա-մենայն զՀնչմարիտ աստուածպաշտութիւն յարգէին և զՀաւատս Քրիստոսի, Որպէս սիռաք Փիլոթոմոն էր, զի ոչ եթէ գոյզն ինչ իշխանու-թիւն էր սորա, այլ արքունի Համարակալութեամբ պատուեալ յԱղեքսանդրիա, և ըստ իշխանութեան աստիճանին, և ըստ հռովմէական պատուոյն տիգա-ւորս և ասպարակիրս յառաջոյ տանէլով Հանապազօր 'ի գատ յատեան ելանէր: Ի սոյն սակի և Փիլէաս Ե-պիսկոպոս Թմոյացւոց, որ 'ի վարչութեան և 'ի պաշ-տամունս Հայրենի աշխարհին, պայծառացեալ և յի-մաստասիրական մակացութիւնս երևելի էր, Եւ զի բազումք յազգակից տոհմակցաց նոցա և բարեկամաց, յիշխանաց անգամ և 'ի պատուաւորս մարդկանէ ազա-չէին զնոսա, և ինքն իսկ գատաւորն գլխովին յորդոր լինէր նոցին զի ողորմեացին 'ի վերայ անձանց իւրեանց, և խնայեացեն յորդիս և 'ի կանայս, և ոչ կարէին բնաւ ամենևին խոնարհել զնոսա ընտրել և սիրել զկեանս ժամանակեան, և անարգել զօրինս խոստո-վանութեան և ուրանալ 'ի Քրիստէն մերմէ, այլ արիա-

էին և առաւել աքանչանային այնոքիկ որ մեծութեամբ և ազգատոհ-մաւ և գովութեամբ և բանիւ փիլիսոփայութեան պարծելիք էին, և առաւել քան զամենայն ինչ զաստուածպաշտութիւնն յարգէին և զՀաւատսն Քրիստոսի մերոյ Յիսուսի Քրիստոսի, որպէս զնարդ էրն Փիլոթոմոն, զի ոչ եթէ գոյզն ինչ իշխանութիւն ունէր նա, այլ զտեսչութիւն աղէքսանդրացոց: Զի մինչդեռ անդէն յատեանն նստէր էր, և 'ի պատուի զոր առեալ էր նմա 'ի Հռոմայեցւոց' խրոխ 'ի զինուորաց անտի փառաւորեալ լինէր: Այլն իսկ սա Հանապա-զօր գատեալ լինէր: Եւ Փիլեաս եպիսկոպոս Թմոյացիս քաղաքի, այր որ փառաւորեցաւ յատենէն պատուոյ աչխարհիս յերկրի խրոխ, և ուսմամբ փիլիսոփայութեան, զի առքին պատրիկ բա-զում ազգակիցք և տոհմակիցք և բարեկամք, և այնոքիկ որ էին յատենէն իշխանութեան, աղօթիւք խնդրէին 'ի նոցանէ, և ինքն գատաւորն իսկ դլխովին ապաչէր և խնդրէր 'ի նոցանէ զի ողորմա-ցին 'ի վերայ անձանց իւրեանց, և խնայեացեն յորդիս և 'ի կանայս իւրեանց: Իսկ նոքա բնաւ ամենևին ոչ խոնարհէին այսմ ամենայնի, ընտրել և սիրել զկեանս ժամանակեանս, և անարգել զօրինս խոս-

կան և խոհական խնամատարութեամբ, նա մանաւանդ բարեպաշտ և աստուածասէր ոգւով պինդ կացեալ ընդդէմ ամենայն սպառնալեաց և թշնամանաց դատաւորին, գլխատմամբ ընկալան զվախճան մահուն։

ԳԼՈՒԽ Ժ.

Գրով վկայութիւնք երանելոյն Փիլէասայ վասն աւետեաց՝ որ գործեցան յԱղեքսանդրիա քաղաքի։

Եւ զի վասն արտաքնոցն գիտութեան երկարագոյն ձառից արժանի ասացաք զՓիլէաս, ինքն իսկ անձամբ անձին վկայեսցէ նա, թէ զինչ ոք էր նա և ուստի. և ցուցցէ վասն ամենայնի որ ինչ միանգամ անցք անցին յաւուրս նորա յԱղեքսանդրիա քաղաքի, զոր և ձերջ գըրտագոյնս քան զմեզ պատմէ նա բանիւքս այսոքիւք.

Ի թղթոյ անտի Փիլէասայ որ առ Թեմոյիսացիս.

Գիտեալով զայս ամենայն առաւել օրինակաց և ցուցակութիւնս և գեղեցիկ ընծայութիւնս Հ̃մարտու-

տովանութեան, և ուրանալ ՚ի Քրիստէ անտի մերմէ. այլ և խնամոտն և զօրաւոր մասք՝ այսպիսեաց աստուածապաշտութեանն և հնգով որ սիրէ զԱստուած, ամենայն սպառնալեաց և թշնամանաց դատաւորին համբերեցին, և յետոյ հատան գլուխք երկոցունց նոցա։

Տասներորդ. ուստի՞ւ վարդապետութիւնն զոր գրեաց Փիլէաս վկայ վասն աւետեացն որ միանգամ գործեցան յԱղեքսանդր քաղաքի ՚ի վկայութիւնս բազմաց, զի աւելի քան զմեզ տեղեկագոյն գիտէր պատմել Հ̃մարտութեամբ զնոցանէն այսու բանիւք։ Ի թղթոյ անտի Փիլէասայ որ առ Թեմոյիսացիսն են։ Զի զոյս

Թեան՝ի գիրս սուրբս, ոչինչ գանգաղեցան երանելի վկայքն որ ընդ մեզ, այլ զՀոգւոյն աչս յառեալ սըրբութեամբ ԱՍտուածդ յարարիչն ամենայնի, պինդ կացին՝ի բարւոք ընտրութեան կոչմանն իւրեանց և յօժար մտօք ընկալան զմահ վասն աստուածպաշտութեան, Քանզի խնդրեալ գտին զՔեզ մեր Յիսուս Քրիստոս, որ զգեցաւ զմարդ վասն մեր, զի հատցէ զամենայն մեզս և դիցէ մեզ պաշար Հանապարհի կենացն յաւիտենականաց: Ջի ոչ յափշտակութիւն համարեցաւ լինել հաւասար Աստուծոյ. այլ զանձն իւր ունայնացոյց, զմանուկութիւն ծառայի առեալ, և կերպարանօք գտեալ իբրև զմարդ. և խոնարհեցոյց զանձն իւր մինչև մահ, և այն մահու խաչի: Վասն այսորիկ նախանձաւորեալ մեծի Հնարհայն Քրիստոսա զգեաց վկայքն՝ ամենայն լկտութեամբ և անհնարին հաւատովն տանջանաց՝ ոչ միանգամ միայն, այլ և երկից երբեմն և բազում անգամ ժուժկալեալ համբերին. և զամենայն սպառնալիս դահճացն ոչ բանիւք միայն, այլ և արդեամբք յաՀեսլոյս առ նոսա արհամարեալ՝ի մտացն հաստատութենէ ոչ լքան. Քանզի կատարեալ սէրն՝ի բաց մերժէ զերկիւղ: Ջորոց առաքինութիւնն և զարութիւն սիրոյ Աստուծոյ ի մարդիկ ամենայն ուրեք յայտնի է. որ ոչ միայն զանձն իւր յիւրն ամբիծութեան ծառայի էառ՝ի կերպարանս մարդկան գոսա, և խոնարհեցոյց զանձն իւր՝ի հնազանդութիւն մահու խաչին: Վասն այնորիկ նմանապէս եղեն ևՍտուածդ, այլ զանձն իւր յիւրն ամբիծութեան զնմանութեան ծառայի էառ՝ի կերպարանս մարդկան գոսա, և խոնարհեցոյց զանձն իւր՝ի հնազանդութիւն մահու խաչին: Վասն այնորիկ նմանապէս եղեն ևմիանգամ, այլ և երկից երբեմն և բազում անգամ համբերեցին, և զամենայն սպառնալիս ոչ բանիւք միայն, այլ և զարդեանց կրեցին, զոր յաՀեսլոյն՝ի վերայ նոցա սպառազինեալ, և նոքա՝ի մտաց իւրեանց ոչ լքանէին. քանզի սէր կատարեալ՝ի բաց մերժէ զերկիւղ: Բայց երկրորդ և վասն առաքինութեանց նոցա, և վասն զօրութեանն որ յամենայն առնջանան էր՝ որ-

ամենայն օրինակս և ցուցիչս և ծանուցիչս գեղեցիկս եգեալ էն մեզ՝ի գիրս սուրբս Աստուածդ վկայքն երանելիք որ ընդ մեզ յիմիքեւ ոչ պաշտաւեցան, այլ համբարձին զաչս իւրեանց անձանց պարկեշտութեամբ որ առ Աստուածպաշտութեանն էր ընկալան յանձինս իւրեանց, և ոչ հեռացան՝ի կոչմանէ անտի իւրեանց. քանզի գոին նոքա զսէր մեր Յիսուս Քրիստոս, որ զգեցաւ զմարդ վասն մեր, զի հատցէ զամենայն մեզս և դիցէ մեզ պաշար Հանապարհին կենաց. զի ոչ յափշտակութիւն համարեցաւ զանձն իւր հաւասար լինել Աստուծոյ, այլ զանձն իւր ունայնացոյց զմանուկութիւն ծառայի էառ՝ի կերպարանս մարդկան գոսա, և խոնարհեցոյց զանձն իւր՝ի հնազանդութիւն մահու խաչին: Վասն այնորիկ նմանապէս եղեն ևմիանգամ, այլ և երկից երբեմն և բազում անգամ համբերեցին, և զամենայն սպառնալիս ոչ բանիւք միայն, այլ և զարդեանց կրեցին, զոր յաՀեսլոյն՝ի վերայ նոցա սպառազինեալ, և նոքա՝ի մտաց իւրեանց ոչ լքանէին. քանզի սէր կատարեալ՝ի բաց մերժէ զերկիւղ: Բայց երկրորդ և վասն առաքինութեանց նոցա, և վասն զօրութեանն որ յամենայն առնջանան էր՝ որ-

հրամանն էր հասարակ ամենեցուն՝ որ միանգամ կա-
մէին թշնամանել զնոսա, վասն որոյ էր որ փայտիւ,
էր որ գաւազանաւ, և էր որ քքոյլ հարկանէին. կէսք
դարձեալ փոկովք և կէսք պարանօք ծեծէին զնոսա:
Տեսիլ տանջանաց նոցա այլափոփոխ, և չարիքն բա-
զում էր յոյժ. զի էին որ ձեռօք իւրեանց յետս ի
թիկունս կապեալ և գլխ ի վայր զփայտին կախէին,
և մեքենայիւք ինն պրկեալ լինէին անդամք նոցա. և
ի տալ ապա հրամանին՝ ամենայն մարմին նոցա քե-
րեալ լինէր, ոչ իբրև զսպանօղացն զկողս միայն այլ և
զոտորս և զբարձս և զծնօտս սայրասուր երկաթի գոր-
ծեօք քերէին: Իսկ կէսք փողոցացն ի կամարաց ի
միջէ ձեռանէ իւրեանց կախեալ լինէին ի բար-
ձու, որ խիատ է քան զամենայն ցաւ՝ պրկուին յոգւոյ
անդամոց: Այլք ի սիւնս դէմ ընդդէմ կապեալք,
իբրու զի ոտք նոցա չերեկիր ոչ հասանէին, և ծան-
րութեամբ մարմնոյն ձնշեալ կապանացն սնդագոյնս
պրկէին. և կրկին զայս վիշտս նեղութեան՝ ոչ միայն
յօրժամ առ նոսա դառնայր խօսեր ընդ նոսա դատա-
ւորն, այլ և զօրն ցերեկ: Քանզի իբրև առ այլ դառ-
նայր դատաւորն, ի վերայ առաջնոցն Թողոյր յարբա-
նեկաց իւրոց պաշտօնեայս, զի Թերևս ի սաստիւ-

պիսի բան լինի մեզ բաւական. զի իբր ուշեին իշխանութեան ի մա-
սին ամենեքեան որ միանգամ կամէին Թշնամանել զնոսա, էր որ
փայտիւ տանջեալ լինէին, իսկ կէսք գաւազանօք, և կէսք փոկովք,
կէսք պարանօք, զի տեսիլ տանջանացն նոցա այլ ազգ ինն էր, և
չարիքն նոցա բազում յոյժ: Զի էին որ ձեռք իւրեանց յետս կա-
պեալ լինէին, և գլխովն վայր զփայտին կախեալ, և մեքենայիւք ինն
պրկեալ լինէին անդամք նոցա: Եւ այսպէս ամենայն մարմին նոցա
քերեալ լինէր իբրև ի հրամանէ, ոչ իբրև սպանողք որ ի կողս և-
րեանց միայն քերին, այլ և զոտորս և զբարձս և զծնօտս նոցա քե-
րէին գործովք տանջանաց: Իսկ կէսք ի փողոցս զմիջէ ձեռանէ
իւրեանց կախեալ լինէին ի բարձու, որ խիատ է քան զամենայն
ցաւս պրկուին յոգւոյ անդամոցն: Իսկ կէսք ի սիւնս դէմ ընդ դէմ
կապեալ լինէին, իբրու ոտք ի չերեկիր ոչ հասանէին, և ծանրու-
թիւն մարմնոյն նեղեալ ի պրկել կապանացն. և զայս զոր համբե-
րէին ոչ միայն յօրժամ խօսէր ընդ նոսա և դառնայր առ նոսա դա-
տաւորն, այլ և զօրն ցերեկ. և իբրև ի վերայ այլոցն ոգորեալ լի-
նէր, առաջնոցն Թողոյր մշանջենանալ առ նոսա՝ այնոցիկ որ պաշ-
տելին զիշխանութիւնն. բայց Թերևս յաղթահարեացն մի ի նոցանէ
ի ձեռն տանջանացն և խոնարհեցոյն: Այլ հրամայեաց զի կապես-

թենէ տանջանաց ոք յաղթահարեալ և խոնարհեցեալ
ի մտացն հաստատութենէ. հրամանն խիստ ի վերայ
եդեալ սնդել յանխնայ զկապանսն, և ի յոգեվարս
լինել նոցա ի վայր արկեալ ընդ գետին քարշել զնո-
սա։ Չի ոչ երբէք պարտ է դալ դադարել զմէնջ ա-
սէր, այլ զամենայն փոյթ, զամենայն ջան ի գործ
դնել, մինչև մի ևս այլ ընդ եղեալս համարեացուք։ Եւ
զայս երկրորդ տանջանս չարաչարս յետ հարուածոցն
գանից հնարէին նոցա թշնամիքն։ Էր որ յետ հա-
րուածոցն ի կոճեղս մտանէին, ոլրկեալ յերկոսին
ոտսն զչորիւք ծակովք, որպէս զի ի հարկէ ի վերայ
փայտիցն յորոյս անկեալ դնէին, ոչ կարելով նստել
յերեսաց կեղևին՝ որ ընդ ամենայն մարմինս ի նորոգ
հարուածոց անտի։ Եւ էր որ ի վերայ երկրի ընկե-
ցեալ և անկեալ դնէին առ սաստիկ ցաւոցն, և քան
զգործն անհնարին խոշտանգանացն չարագոյն յոյժ
էր տեսիլ ազգի ազգի և բազմերիւնակ հնարագիւտ
տանջանացն շուրջ զմարմնով նոցա։ Եւ իբրև այս իրք
գործէին, կէսք ի չարչարանս անդ մեռանէին, համ
բերատար ժուժկալութեամբն յամօթ առնելով զա-
խոյեանն. և կէսք ընդ կեանս և ընդ մահ ի բանտս
արգելեալ լինէին, և յետ սակաւ աւուրց ի ցաւոցն
ընկճեալ մեռանէին։ Իսկ այլք դարմանոյ անտի կազ-
դուրեալք, յերկարութենէ ժամանակին և ի հանա-
պազորդութենէ բանտին քաջալերեալ արիագոյնք,

ցեն յանխնայ, որպէս չուներն ի նոսա ելել, և ոչ գոյր սակաւ մի
թեթևացումն նոցա։ Զայս երկրորդ տանջանս չարաչարս գտանէին նո-
ցա թշնամիքն։ Էր որ յետ հարուածոցն ի կոճեղ մտանէին, և ոլոր-
կեալ լինէին զծակովքն յերկոսին ոտսն, որպէս զի թէ ի հարկէ ի
վերայ փայտիցն ոլրկեալ և անկեալ դնէին և ոչ կարէին նստել, զի
նորոգէր կեղև նոցա ի հարուածոց անտի որ էր յամենայն մարմինս
նոցա։ Իսկ կէսք ի վերայ երկրի ընկեցեալ լինէին և անկեալ դնէին
ի տանջանացն զոր կրէին։ Ցեսիլն զոր ապրին այնոցիկ որ հայեին
ի նոսա չար էր քան զգործն անհնարին տանջանացն որ ազգի ազ-
գի ի մարմինս նոցանց բարձեալ ունէին։ Էին ոմանք որ ի չար-
չարանսն մեռանէին, և սակաւով ժուժկալութեամբն յամօթ առ-
նէին զանխնայսն։ Եւ կէս որ ընդ կեանս և ընդ մահ ի բանգի ար-
գելեալ լինէին, և յետ սակաւ աւուրց ի ցաւոն նեղեալ մեռանէ-
ին։ Իսկ մնացորդք այլոցն հանգիստ որ ի բժշկութենէ ի ժամու
գտանէին, և ի հանապազորդութիւն բանգին քաջալերութեամբ

գտանէին, այնպէս զի յորժամ հրամայեալ լինէր նոցա՝ կէտ ՚ի միջի դնելով, կամ մերձենալ ՚ի զոհսն պըղծութեան և անպարտս արձակել՝ ընկալեալ զատելին ազատութիւն. և կամ եթէ ոչ զոհեսցէն ընդունել զդատաստան մահու, ոչինչ դանդաղելով երանելեացն կամակար ՚ի մահ անդր դիմէին. դիտելով յափ զբան գրոցն թէ. Որ զոհէն աստուածոց օտարոտեաց՝ կորիցէ. և թէ Մի եղիցի քեզ այլ Աստուած բայց յինէն։ Այս էին Հնմարիտ խնաստասիրին և մանաւանդ աստուածասէր վկային այնորիկ բանք, որ յառաջ քան զդատակնիքն իւրոյ մահուն մինչդեռ ՚ի կապանսն էր՝ գրեաց առ եղբարս վիճակին իւրոյ, և եցոյց թէ յո՞ր պայման էր ինքն, միանգամայն և յորդորէր զնոսա զի և յետ իւրոյ վախճանին՝ անեղկելւոյ լիցին յաստուածապաշտութեան Քրիստոսի։

էին. այսպէս զի յորժամ հրամայեալ լինէր և կէտ ՚ի միջի եդեալ, կամ թէ մերձեցեալ մարդ ՚ի զոհսն պղծութեան և եղիցի առանց աչխատութեան, և ընկալցի ազատութիւն նզովեալս առ ՚ի նոցանէն. կամ իբրև ոչ զոհեսցէ ընկալցի զդատաստան մահու։ Եւ այսպէս պատրաստեալք ՚ի մահ անդր մատչէին, զի գիտէին նոքա թէ զինչ նշանակեալ է մեզ ՚ի գիրս սուրբս, թէ այն որ զոհէ օտարոտի աստուածոց՝ կորիցէ, և թէ մի եղիցին քեզ այլ աստուած ոք բայց յինէն։ Այս և որ իբրև զայս էին բանք այնորիկ որ Հնմարիտ փիլիսոփայն էր վկայ և սիրելի Աստուծոյ, զայս որ յառաջ քան զվճիռն վերջին զոր ընկալաւ, մինդեռ ցայն վայր ՚ի ներքոյ կարդէր կապանացն առ եղբարսն որ ՚ի ներքոյ ձեռին նորա էին, յղեաց և ցուցանէր նոցա թէ յորպիսի նեղութեանց միջի էր նա, և յորդորէր զնոսա զի անեղկելւոյ լիցին յետ վախճանի նորա յաստուածապաշտութեանն Քրիստոսի։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Վասն այնոցիկ որ 'ի Փռիւգիա վկայեցին։

Եւ զինչ այսուհետեւ պիտոյ է մեզ երկարել զճառս, և զքրիստոսասէրսն վկայիցն որ ընդ ամենայն աշխարհ՝ և նահատակութիւնս նոցա 'ի վերայ նորոցն յաւելուլ, մանաւանդ որ ոչ նորօրինակ լինէր, այլ ըստ հասարակաց օրինի պատերազմեալ նահատակեցան։ Զի ահա քաղաք մի էր քրիստոնէից 'ի Փռիւգիա, զոր պաշարեալ սպայակուտ զօրուն, և հուր հարեալ 'ի նա այրեցին հանդերձ կանանմբք և մանկտւով զողջոյն ըզքաղաքն, ամենեցունն ջնջիբ քրիստոս Աստուած կարգալով։ Զի համօրէն բնակիչք քաղաքին հանդերձ քաղաքապետաւն, զօրագլխաւ և գլխաւորօք խոստովանեալ եթէ քրիստոնեայք են՝ չառնուին յանձն հնազանդել հրամանին և զոհել կռոց։ Եւ էր այր մի Ագաւկտոս անուն նոցա, ծննդեամբ՝ ոչ յանյշանից ոք խոստացօղ, և հռովմէական իշխանութեամբ պատուոյ երեւելի, և ընդ բնաւ իսկ աստիճանս պաշտամանց յինքնակալացն անտի ամբարձեալ, և զհանրական տեսչութիւն՝ որ

Մեկնաբանութիւն. վասն այնոցիկ որ վկայեցին 'ի Փռիւգիա։

Զինչ այսուհետեւ և պիտոյ է մեզ բազում ինչ ասել և յաւելուլ պատմութիւնս նորա 'ի վերայ նորոյ՝ զպատերազմէ մարտից վկայիցն որ ընդ ամենայն աշխարհս, զի օրինօք հասարակաց ըստ օրինակի պատերազմի կոտորեալ լինէին։ զի ահա քաղաք մի ամենայն քրիստոնէից 'ի Փռիւգիա, զոր հանդերձ կանանմբք և մանկտւով որ 'ի նմա՝ պատեցին պաշարեցին սպառազինք զօրացն, և հուր հարին զքաղաքն և այրեցին զնա։ Իրրու ազազակեին և վըկային առաքն Աստուծոյ, զի ամենայն ժողովուրդն որ 'ի քաղաք անդր բնակեալ էին հանդերձ քաղաքապետաւն և գլխաւորօքն եթէ քրիստոնեայք են խոստովան լինէին, և իւիք յանձն չառնուին այնոցիկ որ հրամայէին նոցա պաշտել կռոցս։ Եւ էր այր մի պատուաւոր որ 'ի Հռոմոյ ունէր զայն պատիւ, զի անուն էր նորա Օգոստաս. և ի նա յերեւեալ մարգկանէ յիսաւիոյ, որ վարեցաւ նա ամենայն ասպիտանիս պատուով որ 'ի թագաւորէ տալ լինէին, որպէս զի և զանձնութիւնն հասարակաց որ անուանեալ կոչէին 'ի նոցանէն մագիստրութիւն և կամ պոլիկոսութիւն՝ առանց արատոյ

առ նոսա համաբարակալութիւն կոչի՝ անարատ վարեալ. և՛ի վերայ այսոցիկ ամենայնի ամենայն ուղղութեամբ աստուածպաշտութեան և՛ի Քրիստոս Յիսուս տովանութեամբ փայլեալ, մինչդեռ՝ ի պաշտամանն անդ համաբարակալութեանն էր՝ նահատակեալ՛ի վերայ աստուածպաշտութեան պսակեցաւ վկայութեամբ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Վասն բազմութեան արանց և կանանց՝ որ բազմօրիւնակ հանդիսիւք նահատակեցան։

Եւ զինչ պիտոյ է այսու հետե անուամբ յիշատակել և զայլն ամենայն, կամ թուել զբազմութիւնն արանց, կամ տալ քանիս նկարագիր ազգի ազգի տանջանաց սքանչելի վկայիցն Քրիստոսի. է երբեք զի ոմանք՛ի նոցանէ տապարօք կատարեցան, որպէս որք յԱրաբիա. է զի զբարձան խորտակելով, զոր օրինակ դէպ եղև որոց՛ի Կապադովկիա կատարեցան. և է դարձեալ զի՛ի բարձուէ զոտից նոցա կախելով, և հուր վխխառն՛ի ներքոյ նոցա եդեալ և՛ի ծխոյն

վարեաց. և այլ որ այսու ամենայնիւ փառաւորեցաւ յիւոյ առաքինութեանն աստուածպաշտութեամբ և խոստովանութեամբ որ վասն Քրիստոսի էր մինչդեռ անդէն յասաւիծանի կաթողիկոսութեանն էր, համբեր պատերազմէն որ վասն աստուածպաշտութեանն էր. և զարդարեալ պսակեցաւ վկայութեամբ։

Երկրատասանևերորդ. վասն բազմութեան արանց և կանանց որ արարիչն պատերազմաւն բազումս ընդրանար։

Զինչ պիտոյ է այսու հետե և անուամբ յիշատակել զինացորդսն, կամ թուել զբազմութիւն արանց, կամ նկատել զազգի ազգի տանջանս աքանչելի վկայիցն, զի՛ի նոցանէն տապարօք կատարեցան որպէս զիաղդ եղև յԱրաբիա. և կիսոց բարձք խորտակեցան, որպէս և անդք անդրէն ընդ այնոսիկ որ՛ի Կապադովկիայն էին. և այլք վերասին՛ի բարձուս զտից իւրեանց կախեցան և հուր վխխառն եդեալ՛ի ներքոյ նոցա և՛ի ծխոյն հեղձուցին, որպէս եղև՛ի Միջագետս, և զոմանց զունչս և զականջս գրաշմեցին, և ըզ-

հեղձնուին. որպէս եղև ՚ի Միջագետս. երբեմն և զունջս և զականջս հատանելով մանից, և զմատունսն ծայրաքաղ առնելով, և զայլ մասունս մարմնոյն կոտրելով, որպէս Աղեքսանդրացւոցն եղև: Եւ զինչ պէտք իցեն դարձեալ յուզել զարթուցանել զիւրաքանչիւր այնոցիկ որ յԱնտիոք դէպ եղեն. որ ՚ի տապաստի հրոյ ոչ ՚ի մահ, այլ ՚ի չարալուրջ ընդերկար տանջանս խորտուբեալ լինէին, և որ զձեռս իւրեանց ՚ի հուր անդր ձգէին, զի մի զոհս պղծութեան մատուսցեն. որ մինչչև ըմբռնեալ և ՚ի ձեռս դարանակալաց անկեալ խոյս ՚ի փորձանացն տային ՚ի վերուստ ՚ի բարձոյ տանեացն զանձինս իւրեանց ՚ի խոնարհ արկանելով, զի զմահ յափշտակութեան չահ համարէին առաւել քան զչարութիւն ամբարշտացն: Եւ կին մի սուրբ և արութեամբ ոգւոյն սքանչելի, փարթամ մեծութեամբ և ազգատոհմիւ և քաջափայլ համբաւոյն անուանի յԱնտիոք քաղաքի, էին նորա զաւերքը երկու կուսանք՝ գեղով մարմնոյ և հասակաւ վայելչաչք մնուցեալ յօրէնս աստուածպաշտութեան: Եւ զի բազում նախանձ յուզէր ՚ի վերայ նոցա չէրհանայ անտի, ամենայն հնարիւք չջնջէին և խնդրէին զնոսա՝ զի թաքչէին: Իսկ իբրև լուաւ Թէ յայլում գաւառի են նո-

մատունսն ծայրաքաղ արարին. և առ սակաւ սակաւ ապականեցին զնոսա, և զմատունս մարմնոյ նոցա կոտորեցին, որպէս եղև ազգաւանդրացւոցն: Եւ զինչ պէտք էր յուզել զարթուցանել զիւրաքանչիւր այնոցիկ որ յԱնտիոքայն, զի ՚ի տապակի հրոյ ՚ի պատժս պատուհասից ընդ յերկար ժամս խորտուբել լինէին: Իսկ կէսքն վաղվաղակի զաջս իւրեանց ՚ի հուր անդր գնէին զի մի մատուսցեն զոհս պղծութեան: Իսկ կէսք որ փախչէին ՚ի փորձանաց անտի տայս մինչչև ըմբռնեալ էին նորա և անկեալ ՚ի ձեռս Թշնամեացն ՚ի վերուստ բարձեալ և ՚ի տան՝ այ զանձինս իւրեանց ՚ի խոնարհ արկանէին, զի զմահ յափշտակութեանն չառաւել քան զչարութիւն ամբարշտացն: Բայց էր կին մի սուրբ և սքանչելի ընդ բարեմասն անձին իւրոյ, և անուանի էր այլովք իրօք յԱնտիոք քաղաքի, մեծութեամբ և ազգատոհմիւ և գովութեամբ առ ամենայն մարդիկ, և էին նորա զաւերքը կուսանք՝ զի գեղով մարմնոյ գեղեցիկք էին, և հասակաւ վայելչաչք, և անոյշ զնոսա յօրէնս աստուածպաշտութեան: Եւ քանզի բազում նախանձ յուզէր ՚ի վերայ նոցա չէրհանայ անտի, ամենայն հնարիւք չջնջէին և խնդրէին զնոսա՝ զի թաքչէին: Իսկ իբրև լուաւ Թէ յայլում գաւառի են նո-

յին աճին զնոսա յԱՆտիոք։ Իբրև հասեալ կիւնն եթէ ընդունեցան ՚ի Թակարդս զինուորացն, և չէք նմա և դատերացն ապրել, եդ նա քանիւ առաջի դատերացն Թէ օրպիսի անհնարին չարիք ՚ի վերայ կային նոցա ՚ի մարդկանէ անտի. և քան զամենայն անբերելի էր և դժոխալուր յականջս նոցա սպառնալիք բռնաբար պղծութեան. հանդերձ սովաւ մահուներ և զանձինս իւրեանց ՚ի պաշտօն ծառայութեան գիւաց, զոր դառն, ասէր, քան զամենայն մահ, և չար քան զամենայն կորուստ. և Թէ մի միայն հնարս դնէք ՚ի մոխ Թէ իցէ, այս է ապաստան լինել ՚ի Տէր մեր. և առ նա ինքն փախուցեալ անկանէր։ Եւ իբրև միաբանեցան յայս միտս, պնդեցին ամենեքին զմայրիսա իւրեանց հանդերձիւ և զսպեցին. և իբրև ընդմիջեցին զձանապարհն, խնդրեցին ՚ի զինուորացն հեռանալ սակաւիկ մի, և ՚ի գետ անդր որ անցանէր արկին զինչ քեանս [2]։ Սոքա ինքեանք անձամբ զանձինս իւրեանց արկին ՚ի ջուր, իսկ այլ կուսանք՝ որ յԱՆտիոք քաղաքի էին, ամենք սուրբք աստուածասիրելւոյք և քրիստոսասէրք, քաջափայլ առնմիւն և վարուք զարմանալիք, մանկամարդք տիօք և գեղեցիկ մարմնով և ըզդաստք հոգւով, և աբանելիք ՚ի փոյթ աստուածպաշտութեան. իբրև զի չկարէր երկիցս կրել չինքեան

քա մեծաւ համարձակութեամբ կոչեաց էած յԱՆտիոք քաղաք։ Իբրև ըմբռնեցան նոքա ՚ի Թակարդս զինուորացն, և յորժամ եւս կիւնն Թէ չէք հնար նմա և դատերացն ապրել, համեմատեաց հրամայ ՚ի միում իւր զաւրեան որ ՚ի մարդկանէ, և անհնարին քան զամենայն սպառնալիք պղծութեանն, այն որ և ոչ յականջս իւր լսել և համբերել այսպիսի ինչ կամէր նա, այլ և զի մատնեսցին զանձինս իւրեանց ՚ի պաշտօն գիւաց որ դառն էր քան զամենայն մահ, և չար քան զամենայն կորուստ ասէրնա։ Բայց այս ամենայնի մի հնարս դնէք ՚ի մոխ Թէ իցէ, այս է՝ ապաւինել ՚ի տէր մեր, և զանձն իւր և զդատերացն խրատէր։ Նա իբրև միաբանեցան յայս միտս, ամենեքին պնդեցին զմայրիսա հանդերձիւ և զսպեցին. և իբրև ընդմիջեցին զձանապարհն՝ խնդրեցին ՚ի պահապանէ անտի հեռանալ սակաւիկ մի. և յայնժամ ՚ի գետ անդր որ անցանէր ընդ այն արկին զինքեանս անդ։ Բայց սոքա ինքեանք զանձինս իւրեանց արկին անդր։ Իսկ այլ կուսանք որ յԱՆտիոք քաղաքի էին որ միով միաբանութեամբ էին, և ամենայն իւիք վայելուչ էին Աստուծոյ. և էին նոքա քրիստոսասիրութեան և փառաւորք ազգատոհմիւ և զարմանալի վարուք, և մանկամարդք էին տիք, և գե-

զայսպիսի գանձ ցանկալի, հրամայեցին պահպանեալք դիւանին ընկենուլ զնոսա ի ծով։ Ս. յորիկ Հայեսիոք, Բայց որ ահագին է լսելեաց ի կողմանս Պանտատոց չարչարեին այլք. զի եղեգունս սրեալս ի ծայրս մատանցն ի ներքոյ եղունգաց նոցա ցցեալ վարեին. և կիսոցն կապար հալեալ ի կրակի, և ի հրածորան լեռանդան անդ ի վերայ Թիկանց և քամակի նոցա հեղուին, և անդամք որ առաւել կարևորք էին ի մարմնի անդ՝ խորովէին։ Իսկ կէսք գարձեալ յանդամս ծածուկս և յկնդերսն ներքինս տանջանս չարաչարս, անպատմելիս և անողորմս կրեցին՝ յոր ինչ դառաւորքն առաքինիք և օրհնապահանջք զհարատարութիւն Հանճարոյ ցուցանել կարծէին, և որպէս ի գործ ինչ ազնիւական իմաստութեան փառասիրեալ Հարատարէին, և Հանապազորդ նորս հնարելով տանջանս, իբրու ի մարտ պատերազմի՝ յորում մրցանակ և պսակ յաղթութեան առաջի կայցէ, զմիմեանս զել և ելառնել։ Եւ վախճան կատարած ի ներքինեանս ոչ լինէր, բայց յորժամ յանկնար մահն ի նորադոյն ևս առաւելութիւն չարեաց, և լքան վաստակեցին ձեռք սպանողացն, և յագեցան և յափրացան ի յորդութենէ անաւր արեանն հեղլոյ, դարձան ապա ի կարզ-

զնցիկք մաքսիով, և զգաստք էին չնչով, և սիրուք առատաձեռնք առաքեամբ։ Եւ իբրև այնպէս Թէ ոչ համբերէր երկիրն կրել զրպես զայսպիսի ծաղիկս ցանկալիս, հրամայեցին պահպանիչքն դեւաց ընկենուլ զնոսա ի ծով։ Բայց որ ահագին է և լսելեաց անդամ, համբերէին այլք ի կողմանէն պանդագաց. զի եղեգունս սրբեալս ի ծայրս մատանցն ի ներքոյ եղունգս նոցա ցրցեալ վարէին. և կիսացն կապար հալեալ ի կրակի, և յորժամ եռայր ի հրատի անդ ի վերայ Թիկանց և քամակի նոցա արկանէին, և անդամք որ կարի առաւել պատուական էին ի մարմնի անդ՝ խորովէին։ Իսկ կէսք գարձեալ յանդամս ծածուկս և յաւուրն իբրեանց տանջանս չարաչարս և անողորմս պատուհաս կրեցին. զոր ինչ դառաւորքն առաքինիք, և օրհնապահանջքն զհարատարութիւն կիզծաւորութեան իբրեանց ի նոսա ցուցանէին. և իբրև իմաստութիւն պարծելի հնարէին, և յորդիին գանձոյնան զոր նորագ հանապազորդ գտանէին. և իբրև ի մէջ մարտի պատերազմի անցանել զմիմեանցք ի ձեռն յաղթութեան նախանձէին։ Իսկ վախճան կատարած ի ներքինեանն իբրու ի ձեռն առաւելութեան չարեացն լցան և վաստակեցին ի սպանանելոյ անաւր, և յագեցան յորդութենէ անաւր արեանն, գարձան և չքնեցան նոքա յայնմանէ պատս և հա-

ծեցեալն իբրեանց ի քաղցրութիւն և ի մարդասիրութիւն, որպէս զի մի՛ ևս այլ այնուհետև խաոտութեամբ ընդ մեզ գնայցեն։ Ցի չէ օրէն չէ արժան, ասէին, արեամբ տոհմայնոց մերոց պղծել զքաղաքս. և ոչ տմարդի անգթութեամբ թշնամանել զվեհմամփառ իշխանութիւն ինքնակալաց մերոց, որ բարեհամբոյրն է և հեզ առ ամենայն մարդիկ. այլ պարտ է մանաւանդ զբարերարութիւն մարդասէր և ազգունի իշխանութեան սփռել առ ամենեսին, և մի՛ այսուհետև պարտաւորել զոք ի մահ, այլ ի մարդասիրութենէ ինքնակալաց բարձցին և լուծցին այս պատիժք։ Եւ հրաման լինէր անդէն փորել զաչս մեր, և խեղել զմեզ ի միոյ ի սրունկին։ Այս օրինակ էր ողորմութիւն նոցա առ մեզ, այս և պատիժք թեթևք յայսմ հետէ ի վերայ մեր մարդասիրութեամբ ամբարշտացն. զի դժուարին է ի համար բերել զազգութիւն նոցա, որոց աչ ակին փորեալ լինէր, և սրով և հրով ապա խարեալ. այլոց ի բարձան յահեկիս խարանադրոշմն հարեալ և ի մետաղս գնոսա դատապարտէին ի մարզս անդ պետութեան, ոչ իբրու ի գործ ինչ պիտանութեան, այլ ի ցաւս և ի թշուառութիւն գնոսա պահելով։ Հանդերձ ասացելովքս, մէն մի ի նոցանէ պէսպէս նահատակութեամբ առաքինանային,

մարեցան ի միտս իբրեանց ի քաղցրութիւն և յողորմութիւն, որպէս զի յայսմհետէ քան մեայ իբրեանց ոգեղ ինչ առ մեզ ոչ գործեսցեն, յասել իբրեանց թէ ոչ արժան է թէ արեամբ որգւոց իշխանութեան մերոյ պղծեսցուք զքաղաքս մեր, և ոչ խաոութեամբ թշնամանեսցուք զվերացեալ իշխանութիւն թագաւորացս, այն որ առ ամենայն մարդկին քաղցր և դիւրին է. զի արժան է, ասեն, սփռել զողորմութիւն իշխանութեան թագաւորացն առ ամենայն մարդկի օգտութեամբ. զի մի յայսմ հետէ եղիցին նոքա պատասխրեալ ի մահ, այլ լուծցին այս պատիժք որ ի վերայ մեր են վասն ողորմութեան թագաւորաց. բայց զի եղիցին փորեալ աչք նոցա, և ապականեալ մի մի յոտից նոցա, հրամայեցաւ զի ողորմութիւնն նոցա այս ինչ էր. և պատիժք թեթևք որ ի վերայ մեր, այսմհետէ վասն այսր ողորմութեան ամբարշտացն։ Ոչ կարէ ոք ասել զբազմութիւն զոյնր իրի որ համբերեին, զի էին որոց աչք իբրեանց փորեալ լինէին սրով. և յետ այնր հրով խարեալ, և կիսոյն ձախ ոտք իբրեանց ի ջիղս խարեալ լինէին և ապականեալ. և յետ այսորիկ պղծի՛ր էր ի տեղիս տեղիս պատաւորեալ լինէին զի ընկեսցին, ոչ եթէ վասն պաշտամանն զի պետոյ ինչ էր, այլ վասն ցաւոց նե-

զորս չկարեմ երկրորդել ստանօթ , զի արուեստիւք քաջուեստեան նոցա գլեխ անցանէին զամենայն բանիւք։ Քայսոսիկ ահա փառաւորեցան ընդ ամենայն աշխարհ երանելի վկայքն Քրիստոսի. և զամենեսեան զտեսողսն արիական սիդուեստեան նոցա յիրաւի զարմացուցանէին. զօրինակ և զՀաւատոյս աստուածպչին անպատմելի զօրուեստեան Փրկչին մերոյ յայտ յանդիման յանձինս իւրեանց ընծայեցուցանելով։ Իսկ յիշատակել զամենեսին զնոսա յանուանէ երկայնի պատմեսցի։ Թէպետև չիցէ յանկարելեաց սակի։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Վասն առաչնորդաց եկեղեցեացն՝ որք զձգուարտուրիւն աստուածպաշտուրեան՝ քարոզեցին բանիւ, և հեղմամբ արեան իւրեանց կնքեցին յայտնապէս։

Իսկ յառաջնորդաց եկեղեցեաց՝ որք ի նշանաւոր յերեսելի քաղաքս կատարեցան վկայուեստեամբ, առաջինն և գլուխ նահատակացն առաքինեաց արքայու-

զուեստեան այնոցիկ որ պարտաւորեալն լինէին։ Եւ հանգերձ այսու ամենայնիւ այլք այլովք պատեհութեամբք առաքինանային այնոքիկ որ ոչ կարելիք մեք երկրորդել գնասս, զի յայտնեն և անցանեն առաքինուեստիւնք նոցա զբանիւք. զի ի ձեռն այսոցիկ փառաւորեցան վկայքն Քրիստոսի առաքինիք ընդ ամենայն աշխարհ։ Զի որք տեսանէին զզօրուեստիւն քաջուեստեան նոցա ընդ ամենայն տեղիս զարմացուցանէին. և զօրինակ ծաղուկ զօրուեստեանն Աստուծոյ ցուցանել ի հնմանէսիս մերկ յայտ յանդիմանուեստեամբ առաքի ամենայնի ընծայեցուցանէին։

Երկրորդաւանկարդող. ի վերայ այնոցիկ որ կային ի գլուխ եկեղեցեաց, որք ցուցին զաստուածպաշտուրիւնն զոր քարոզեցին հեղմամբ արեամբն իւրեանց։

Իսկ յիշատակել զամենեսին կարելի և յանուանէ երկայնի պատմուեստիւնս, և թերևս և ոչ լինել մարթիցէ. բայց զայնոցիկ գլխաւորացն որ վկայեցին զեկեղեցեաց նշանաւորաց յիշատակեցոյք։ Եւ առաջին գլուխ յիշատակի հաւատացելոցն նշանակեսցի

Թէան Քրիստոսի եղև Աղեքսիոս վկայ՝ եպիսկոպոս Եկեղեցւոյն Նիկոմիդացւոց քաղաքի . որ հատաւ գլուխ նորա ի նմին քաղաքի։ Եւ ի վկայից անտի Աղեքսիոսէ Լուկիանոս երեց եկեղեցւոյն նոցա , այր ընտիր և անսարատ յամենայն կեանս իւր ի Նիկոմիդիա՝ մինչդեռ անդ ի քաղաքին էր Թագաւորն , քարոզեաց նախ բանիւ պատասխանատուութեան զերկնաւոր Թագաւորութիւնն Քրիստոսի , ապա և արդեամբք զնոյն հաստատեաց։ Եւ որք ի փիւնիկէ վկայեցին՝ էին արք ականաւորք և սիրելիք Աստուծոյ , բանաւոր խաչին Քրիստոսի հաւիւք , Տիւրաննիոս և Եպիսկոպոս եկեղեցւոյն Տիւրացւոց , և Զենոբիոս երէց ի Սիդոն , և Սիլուիանոս Եմեսացւոց եկեղեցւոյն առաջնորդ . որ ի նմին յԵմեսիա քաղաքի հանդերձ այլովք ընկերօքն գեղ արկեալ գազանաց և վերացաւ ի Ժողովս վկայից։ Իսկ երկոքին վկայքն՝ որ յԱստիրոք վանն բանին Աստուծոյ մնային չափ պատերազմեալ փառաւորեցան , եպիսկոպոսն անկաւ ի խորս ծովու , իսկ Զենոբիոս ընտիրն քան զամենայն բժիշկս՝ ի քերանն անդ ի կողս իւր ի չարաչար տանջանաւն արիւն ոգւով կատարեցաւ ի Քրիստոս։ Եւ ի վկայն

վկայ արքայութեանն Քրիստոսի , Աղեքսիոս եպիսկոպոս եկեղեցւոյն Նիկոմիդեայ քաղաքի որ հատաւ գլուխ նորա ի միում ամենաուրեքեանն։ Եւ ի վկայից անտի անաղարացւոց , այն որ յամենայն կեանս իւր քաջասիրեաց , Լուկիանոս երէց եկեղեցւոյն նոցա որ վկայեացն Նիկոմիդեայ . և նա մինչդեռ Թագաւորն անդ էր՝ քարոզեաց նախ զերկնաւոր արքայութիւնն Քրիստոսի բանիւք ի միում պատասխանատուին , և յետ այսր և արդեամբք։ Իսկ յայնցանէ որ վկայեցին ի փիւնիկէ էին մարդք երևելիք , և ամենայնիւ սիրելիք Աստուծոյ , հովիւք խաչին Քրիստոսի , Տիրեանոս եպիսկոպոս եկեղեցւոյն Տիւրացւոց , և Զենոբէս երէց եկեղեցւոյն Գադեացւոց , և գրաբեալ Սիդոնեանոս եպիսկոպոս եկեղեցւոյն Մեծացւոց . զի այն սա հանգերձ այլովք գեղ գազանաց եղև անգէն յերբեսաղէմ մեծ քաղաքի , և վերացաւ ի ժողով վկայից։ Իսկ այնոքին որ անգէն յԱստիրոք քաղաքի փառաւորեցին զանուն Աստուծոյ երկոքին համբերութեամբ որ մինչև ի մահ փառաւորեցան։ Բայց եպիսկոպոսն ընկեցաւ ի խորս ծովու . իսկ Զենոբէս որ էր նա բժիշկ խնամառուն կարողի , ի քերանի որ քրեալ լինէր ի կողս իւր այնու կատարեցաւ։ Իսկ յայնցանէ որ վկայեցին ի Պաղեստինէ , Սիլուանոս եպիսկոպոս եկեղեցւոյն Գազացւոց ի սկզբանէ հասան որ էր ի Գինա , հանգերձ այլովք որ լինին երեսունեւհինն Թուով . հասան գլուխք նոցա։ Եւ յԵգիպտացւոց անտի գաղեալ

Պաղեստինացւոց էր Միլտիանոս եպիսկոպոս եկեղեցեացն Պաղատացւոց՝ որ ի պղնձահատսն ի փենկ ընդ քառասունն և մի ընկերացն Հատան գնաց նոցա։ Եւ յԵգիպտացւոց անտի Պեղուս և Նեղոս եպիսկոպոսք ընդ այլ ոմանս հրով կատարեցան։ Բայց ի մեծ պարծանս կեսարացւոց եկեղեցւոյն էր Պամփիլիոս երէց, սքանչելի այր յաւուրս մեր, զորմէ չէ մնացեր երբեք լեալ՝ զորոյ և ի դէպ ժամանակի տացուք գրով ըզպատմութիւն գործոցն առաքինեացս։ Իսկ որ յԱղեքսանդրիա և ի բովանդակ Եգիպտոս և ի Թեբէ նահատակեցան, նախ Պետրոս եպիսկոպոս Աղեքսանդրացւոց, պատգամաց բանին Աստուծոյ, և աստուածպաշտութեան ի Քրիստոս վարդապետ և ուսուցիչ։ Ընդ նմա և երիցունք Փաւստոս, Դիոն և Այմինիոս կատարեալ վկայք Քրիստոսի. և Փիլէոս և Հիւսիքիոս, Պախումէոս և Թէոդորոս եպիսկոպոսք եկեղեցեացն որ յԵգիպտոս. և այլք բազումք որ ընդ ամենայն տեղիս և յայլ և այլ եկեղեցիս գովանեացն յիշատակին։ Այլ որոց ընդ ամենայն սիեզերս ի վերայ աստուածպաշտութեան պատերազմեալ երկին զանձինս իւրեանց գրով ջնահատակութիւնս աւանդել և ձգիւ գտակաւ մի ըստ միոջէ զդէպսն կարգել չէ մեր գործ, այլ որոց ի մեծոյ ականատես նոցին գտանք։ Իսկ որոց միանգամ ես ինքնին ի տեղւոջն դիպեցայ ի յիշատակ և ի գիտութիւն յաջորդաց մեր-

Պեղոս և Նեղոս եպիսկոպոսք հանգերձ այլովք համբերելոցն մնացեալ ի հաւր հրաւէ ի մեծ պարծանս եկեղեցւոյս Կեսարացւոց։ Ցիշելոցդ ընդ սոսա և զՊամֆիլիոս երէց որ պարծելի էր քան զայնոսիկ որ երկնեն առ մեզ, այն որ զգովեստ առաքինութեան նոցա ի դէպ ժամանակի գրեսցուք։ Իսկ յայնցանէ որ յԱղեքսանդրիայն էին, Պետրոս եպիսկոպոսն այր Աստուծոյ, ընդ ուսուցիչս եկեղեցւոյն Քրիստոսի գրեացի, և երիցունք որ ընդ նմա, Փաստոս և Դիոս, և Այմինիոս կատարեալ վկայք Քրիստոսի, և Փիլէոս և Հիւսիքէոս, և Թէոդորոս եպիսկոպոսք եկեղեցեացն որ յԵգիպտոս։ Եւ այլ բազումք ընդ երեսելի մարդիկ այնոքիկ որ յեկեղեցեացն որ յաշխարհս աշխարհս և ի տեղիս տեղիս էն ուրեքն նոցա յիշատակ։ Իսկ որ ինչ գիպեցան ամենեցուն, որ միանգամ էին ընդ ամենայն աշխարհ պատերազմիչք՝ որ վասն աստուածպաշտութեան, ևեթ գրով տացուք զառաքինութիւնս միոյ միոյ ի նոցանէն, չգրեսուելոցն չէ մեր պատճառ, այլ այնոցիկ որ աչօք իւրեանց տեսին զարգիւնն։ Իսկ զայնոցիկ որ ես գիպեցայ՝ յիշատակ գիտից ծանոյ-

ըոց առնեմ՝ ի միւս այլ ևս գիրս զպատմութիւն. յորում և զիմոխոսութենէ կարծեաց և զխօսից զմէնջ և որ ինչ միանգամ՝ ի սկիզբն հալածանացն եղեն յարեւսցուք՝ ի պատմութիւնս՝ ի կարևոր տեղեկութիւն ընթերցանելեացն։

Այդ յառաջ քան զոխերիմ պատերազմին ընդդէմ մեր, ցորչափ ինքնակալք հռոմէական պետութեան սիրով և քաղցրութեամբ էին ընդ մեզ, քանի՛ առատութիւն բարեաց էր առ նոսա և շինութիւն՝ ո՞ քան կարէ պատմել։ Զի որք յայնժամ իշխան կային մեծազօր պետութեանս՝ ի լուծին տանտամեան և քսանամեան յաջողակի թագաւորութեանն տնօրն կարգէին ամենաժողովս, խաղս տեւասրանաց և խնջոյս կոչնոց ցնծութեան և ուրախութեան, զի յարամուր անխախուտ էր նոցա խաղաղութիւն։ Այսպէս իբրև անխափան աձէր և զօրանայր հանապազօր իշխանութիւն տէրութեան նոցա, և ահա յանկարծակի փոխեցան նոքա՝ ի խաղաղութենէ անտի որ առ մեզ էր, և պատերազմ անդուլ յուզեցին անհաշտելի։ Եւ իբրև չև էր լցեալ նոցա զերկրորդ ամ պատերազմին, և ահա նոր ինչ և անակնկալ վէր՝ ի վայր չքէաց զա-

Թիւ մերոց որ զինի մեր էն՝ առնեմք յայլ միւս ևս գիրս։ Բայց յայս պատմութիւնս նորոգումն փոփոխման որ ինչ գործեցան՝ ի մեզ յարեացուք ընդ այնոսիկ որ ասացանս, և որ ինչ միանգամ եղեն՝ ի սկիզբն հալածանացն, զի պիտոյ են այնոցիկ որ ընթեռնուն զայս պատմութիւն։

Ձորիրատաւանիորդ. բէ ոիպեա եիմ բշևամիք
աատռուածպաշտուրեանն։

Վասն առաքինորդութեանն Հռոմոց որ յառաջ քան զպատերազմ նոցա որ ընդ մեզ էր, որչափ ժամանակս առաքինորդք նոցա սիրով և խաղաղութեամբ առ մեզ էին, թէ քանի՛ տրմուաց բարեաց և շինութեան արժանի եղև, որպիսի՞ բան կարէ պատմել։ Զի իբրև այնոքիկ որ ունէին զիշխանութիւն առաքինորդութեան լցին զաման ամ տունիւք տաբեկանօք և ժողովք ժողովրդոց, և ուրախութեամբ ցնծութեան յամենայն խաղաղութիւն շինեցեալ կատարէին. և այսպէս առանց պատահելոյ աձէր և զօրանայր հանապազօր իշխանութիւն տէրութեան նոցա։ Եւ իբրև փոխեցան նոքա յանկարծակի՝ ի խաղաղութենէ անտի որ առ մեզ էր և խիստ պատերազմ յուզեցին, իբրև չև էր լցեալ նոցա երկուս ամ յայնմ պատերազմի, և այլ իմն գործեալ նորոգ եղև անդէն՝ ի նմին թագա-

մենայն յաջողութիւնս նոցա. զի որ զառաջինն պատիւ ունէր յինքնակալս նոցա՝ ի չարաչար ախտ մահու ջնջեանէր. յորմէ և ցնորեալ յապշութիւն անկանէր. իսկ որ զերկրորդն ունէր յետ նորա պատիւ՝ հրաժարեալ ի ծիրանեացն ի սոսկական գարշաւ կեանս՝ եւ իբրև այս այսպէս լինէր, ընդ երկուս բաժանեցաւ պետութիւն նոցա՝ զոր ոչ երբեք եղեալ յիշեմք[3]։ Եւ յետ ոչ բազմից թագաւորն Կոստանդ, որ Համբոյրն էր և խաղաղասէր, և քաղցրութեամբ գնայր ընդ հնազանդեալսն, և սիրելութեամբ էր մանաւանդ առ կրօնս աստուածպաշտութեան. Թողեալ զորդին իւր Կոստանդիանոս փոխանակ ընդ իւր ինքնակալ Աւգոստոս, ըստ հասարակաց օրինաց բնութեան կատարեաց զկեանս իւր։ Առաջին սա յիւրոց անտի ընդ դիս կարգեցաւ, և յետ մահուն իւրոյ աներևոյթ արքայավայել պատուով մեծարեցաւ քան զամենայն իշխանս քաղցր երևեալ և հեզ. զի սա միայն քան զամենայն ինքնակալս ժամանակին ըստ արժանի իշխանութեանն կատարեաց զընթացս վարչութեան իւրոյ՝ զամենեքումբք գերազանցեալ ի մարդասէր բարերարութեան, և պատերազմին որ ընդդէմ մեր՝ ոչ երբեք հաղորդ գտաւ, այլ և զերկիւղածս Աստուծոյ՝ որ ի հեռուստ ձեռին նորա էին, առանց վհատութեան և զրկանաց

ուրութեան նոցա, և գարձոյց զամենայն իր նոցա։ Չի հիւանդութիւնք չարաչարք յուղեցան ի վերայ գլխաւորին ամենայն արքայութեան նոցա, զի ի նոցունց հիւանդութեանց անտի և խորհրդոցն գաղթական յապշութիւն. և հանդերձ միասնիլ որ յերկրորդ պատուին էր զինի նոցա վարս տխմարութեան իւրեն. զայլ մարդիկ ընկալաւ նա. և իբրև յարդ եւս այս այսպէս գարձեալ լինէին, ընդ երկուս բաժանեցաւ թագաւորութիւն նոցա ամենայն իւիք. իբրև որ ոչ երբեք խնդրանք եղեալ լինէին։ Եւ յետ սակաւ ժամանակի որ եղև ի միջի, Կոստանդիանոս այն որ հանգաւատ էր ամենայն վարուք իւրովք և առ այնմանիկ որ ի ներքոյ իշխանութեան նորա էին՝ քաղցրութեամբ էր, և առ Աստուած սիրով. եմոյ զինի իւր փոխանակ ընդ իւր սիրելի Կոստանդիանոս ինքնակալ Աւգոստոս, և յօրինս բնութեան հասարակաց կատարեաց զկեանս իւր. և նա նախ յԱստուած անուանեալ էր. և յետ մահուն իւրոյ ամենայն պատիւ և փառք որ պարտ էր թագաւորի էր՝ նորա, հանգաւատ և քաղցր ի թագաւորս, այն որ նա միայն յաւուրս մեր ըստ արժանի առաջնորդութեանն թագաւորաց կատարեաց զժամանակ իշխանութեան իւրոյ. և այլով պատուով, և առ ամենայն մարդ ի

պահեաց։ Եւ ոչ զչինուածս եկեղեցեաց մերոց քա-
կեաց նա, և ոչ ինչ մի ընդդէմ մեր հնարեաց. վասն
այսորիկ և վախճան բարիոք և բարեբաղդ ընկալաւ.
և սա միայն յիշխանութեան իւրում խաղաղութեամբ
և փառաւք ցուցանելով ժառանգ զօրդի իւր, զգօնն և
զբարեպաշտ քան զնուաւս, եղ 'ի կենաց աստի։

Սորա արդ որդին Կոստանդիանոս իսկ և իսկ 'ի սկզբ
բան անդ իշխանութեանն ինքնակալ Աւգոստոս՝ 'ի
զինուորաց իւրոց, և նախ քան զնոսա 'ի Թագաւորէն
ամենեցուն յԱստուծոյ՝ անուանեալ լինէր. և նախան-
ձաւոր հայրենական բարեպաշտութեան առ մերս
կրօն զանձն իւր ցուցանէր։ Եւ այսոքիկ այսպէս։

Իսկ Լիկինիոս հասարակաց հաւանութեամբ ինք-
նակալաց՝ ինքնակալ Աւգոստոս ծանուցաւ. ընդ որ
գԺդմնեաւ Մաքսիմինոս՝ զի ցայն վայր կեսաւր միայն
յամենեցուն անուանէր, և սեպհական իւր յանդգ-
նութեամբն շրջթեաց անձին իւրում զպատիւն, եղև
և սա յանձնէ իւրմէ Աւգոստոս ինքնակալ։ Ի ժամա-
նակին՝ որ միանգամ մերկացեալ 'ի Ծիրանեացն և
կրկին զանձամբ առեալ էր, որպէս վերագոյն ասա-

չահ օգտութեան զանձն իւր ասէր. և պատերազմաւ առ մեզ և ոչ
սակաւ հաղորդեցաւ. այլ և վերկիւազած Աստուծոյ որ 'ի ներքոյ
ձեռն նորա էին առանց պակասութեան և առանց զլանալոյ պա-
հէր։ Բայց և ոչ զամաւթս եկեղեցւոյ քակեաց նա, և ոչ նորոգեաց
նա 'ի վերոյ մեր ինչ մի. վասն այսորիկ վախճան բարիոք կատա-
րեալ երանութեամբ ընկալաւ նա, զի յաչխարհէ ասաի յայսմանէ
նա միայն եղ 'ի Թագաւորութեան իւրում միաբանութեամբ և փա-
ռաւք։ Իբրև ընկալաւ 'ի նմանէ որդի իւր սիրելի հեղ և հանգարտ և
երկիւղած յԱստուծոյ որ նա ինքն է Կոստանդիանոս. զի իսկ և իսկ
եկեղեցան անդ իւրում Թագաւոր կատարեալ Աւգոստոս 'ի վերուս
բոյս անտի իւրոյ անուանեալ լինէր. և նախ առաջին քան զնոսա
յԱստուծոյ 'ի Թագաւորէն ամենայնի անուանեալ լինէր. և նա յա-
ջոյց զանձն իւր նմանող լինել հօր իւրոյ 'ի բանն աստուածպաշ-
տութեան։ Եւ այս այսպէս էր։

Հիցիատասաներորդ. վասն ամենայնի որ ինչ եղև յայոց յայսցանէ։

Հանդերձ այսոքիմբք իսկ Լիկինէս, ըստ խորհրդոց գաստա-
ռանաց այնոցիկ որ առնէին զԹագաւորութիւնն անուանեցաւ
ինքնակալ Աւգոստոս։ Իսկ Մաքսիմինոսի տրամադիւն չարաչար
եղև նմա յայսմիկ, զի նա միայն առանձինն կայսր յամենայն մեր-
ձակ անուանեալ լինէր։ Բայց քանզի առաւելապէս յանդգնու-

ցաք գնանել [1], գարձեալ կենդաց Կոստանդիանու, ի յայտնել նենգութեան մահ չարաչար ի նմանէ ընկալաւ։ Նախ սորա պատկերքն և անդրիքն և որ ինչ ի պատիւ կանգնեալ էին, իբրև առն ամբարշտի և պղծոյ քակեալ կործանեցան։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Վասն քարուց և կենաց բշնամեացն աստուածապաշտութեան։

Իսկ որդի սորին Մաքսենտիոս՝ որ բռնակալեացն ի Հռոմ՝ ի սկզբան անգ իբրև ի սուտակատաստութիւն և ի պատրանս ժողովրդեան Հռոմոյ՝ խնամբ հէր ի մեր հաւատս. և որոյ ընդ իշխանութեամբ նորա էին հրամայեալ չհալածել զքրիստոնեայս, իբրև կերպարանօք զաւրեպաշտութիւն զգեցեալ՝ որպէս զի մարդասիրագոյն հեզ և բարերար երևեսցի առաւել քան զառաջինսն։ Բայց ոչ որպէս և կործեցաւն նա և գործով գտաւ, զի յամենայն գործս պղծութեան անկաւ նա, և ոչ եթող գործ ինչ պիղծ և ապտակղի՝ զոր ոչ գործեաց։ Զի ի շնութիւնս և ի բռնաբարու-

թեամբ գնայր նա, յափշտակեաց անձին իւրում պատիւ, և ելոյ ինքն յանձնէ իւրմէ Աթենասաւ։ Յոգեացն նա ի վերայ Կոստանդիանոսի խորհուրդ մահու. լինկեանէս, այն որ առաջագոյն գնանէ վերայգոյն. զի իբրև բարձաւ ի նմանէ թագաւորութիւն նորա իբրև այլ տիմար գնայր նա։ Իսկ իբրև յայտնեցաւ նենգութիւն նորա, մահ չարաչար եհան նմա. և նախ ինքն և պատկերքն որ ի պատիւ եգեալ էին նմա՝ քակեալ կործանեալ լինէին իբրև առն ամբարշտի պղծոյ։ Իսկ որդի սորին որ էր Մաքսենտիոս, այն որ յարոյցն յանգղծութիւն ի Հռոմ քաղաքի, սկսաւ նախ ի հաւատս մեր. զի ևս նաբռնեցաւ նա իբրև ի սուտակատաստութիւն և ի պատրանս ժողովրդեան Հռոմոյ։ այնոցիկ որ ընդ իշխանութեամբ նորա էին հրամայեաց առնել հալածանս քրիստոնէութեան, իբրև ինքն կերպարանօք զաւրեպաշտութիւն զգեցեալ էր. որպէս զի ևս բնակացի ինքն հանդարտ և բարերար առաւել քան զառաջինսն։ Բայց ոչ որպէս և կործեցաւն նա այն գործովք գտաւ. զի յամենայն գործս պղծութեան անկաւ նա. զի ոչ եթող գոգործս պիղծս և ապտակղիս զոր ոչ գործեաց, զինութիւնս և զամենայն պռոնկա-

Թիւնս հանապազորդեր նա միշտ. որոշէր և քակէր զկանայս յօրինաւոր լծակցաց իւրեանց, և յետ անաբ գանացն առեալ վերստին ՚ի նոսա դարձուցանէր. և զայս ոչ ընդ դուշաբեայ մարդիկն միայն առնէր, այլ և ընդ այնոսիկ որք զնահապետութիւն սինկղիտոսին Հռովմայեցւոց ունէին, և զփառաւորագոյնսն մանաւանդ ՚ի նոցանէ անարգէր և թշնամանէր. և ամենայն մարդ զայն հարեալ ՚ի նմանէ՝ ժողովուրդն, իշխանք, աւագք և անաւագք հեծէր ընդ անագորոյն բռնակալութեամբ նորա: Թէպէտ և լսիկ ինջիկ տանէին ժուժկալութեամբ դառն ծառայութեանս, սակայն և այնպէս չկարէին ապրել ՚ի խիստ և յանողորմ սպանութեանց անօրէն իշխանին. մինչ զի յոչ ինչ պատճառս մատնէր զժողովուրդն ՚ի սատակումն վաղեալոց զնորաց իւրոց. և անթիւ բազմութիւն ՚ի ժողովրդենէ Հռովմայեցւոց կոտորեալ լինէր՝ ոչ ՚ի խժից անտի և ՚ի Ակիւթացւոց, այլ նոցունց իսկ ընտանեացն զինու և գեղարդեամբ ՚ի քաղաքամիջին անդ: Իսկ զծերակուտին նեղեցուս սպանութիւնս ՚ի յափշտակութիւն ստացուածոց նոցա, և ոչ թուել անգամ ոք կարէ. զի երբեք երբեք ազգի ազգի ստացօք պատճառս նիւթելով և դյուրելս ՚ի նոցանէ պահս առնէր: Եւ վախճան և կնիք չարեաց բռնակալին

Թիւնս սպանանութեան գործեաց նա, զի որոշէր և քակէր զկանայս յօրանց իւրեանց, և յետ անաբգանացն գարձեալ ՚ի նոսա գարձուցանէր: Եւ զայս ոչ եթէ ընդ դուշաբեայ մարդիկ անցուցանէր խորհրդովք իւրովք, այլ և ընդ այնոսիկ որք առաւելապէս զնահապետութիւն սինկղիտոսին Հռովմայեցւոց ունէին, և զփառաւորս նոցա անարգէր և թշնամանէր. բայց ամենայն մարդ զայն հարեալ ՚ի նմանէ և զոյգս ամենայն ժողովուրդն հանգերձ փառաւորեալ և պատուական գառաւորքն ՚ի չարաչար յանդգնութենէն յայնմհարեալ լինէին: Նա և ոչ յորժամ խաղազէին և համբերէին գառն ծառայութեանն՝ ապրեալ լինէին ՚ի խիստ սպանողութենէ անտի անօրէն իշխանին. այսպէս զի տակաւ պատճառանաբ երբեմն զժողովուրդն Հռովմայեցւոց ՚ի սպանութեան մատնեաց, վառելոց զինուորաց իւրոց: Եւ սպանեալ լինէին բիւրք ՚ի ժողովրդենէ անտի Հռովմայեցւոց ընդ ամենայն քաղաք, ոչ ՚ի բարերարութաց, այլ ՚ի նոցունց ընտանեաց, նովին զինու և տիպաք իւրեանց սպանեալ լինէին: Բայց սպառնութեն սինկղիտոսին որ եղև խաբեութեամբ վասն ստացուածոցն նոցա և ոչ թուել անգամ կարէր նա, զի ամենայն պատճառաք յամենայն ժամանակի նիւթեալ լինէին

'ի դիւթութիւնս կախարդութեաց յեցեալ լինէր, զի երբեմն զկանայս յղիս հեղձոյր, և զմատաղածին սրբոյ զյոց զընդերսն պատառէր, և երբեմն զաւիծս իսկ փողոտէր, և զոչս պղծութեան գաղտնախորհուրդս 'ի հրաւէր դիւաց, և 'ի բաց յանձնէին Թոթափելոյ զվերահաս սպառնալիս պատերազմին՝ առնէր. և կարծեալ ամէն ունէր այսորիւք անառարակոյս 'ի ձեռս բերել զյաղթութիւն։ Նէ իբրև բռնակալէր սա այսպէս 'ի Հռոմ, ասել որ չէ բաւական Թէ որպիսի Տիրողատարութեամբ նեղէր նա զՔրիստոնեաւսն 'ի տիրել կութիւն ծառայութեան, զի և կերակուր անգամ պակասէր 'ի քաղաքին, որպէս զի ոչ երբէք 'ի Հռոմ այնպիսի ինչ տաղնապ կարօտութեան յիշատակեալ ուրեք երևի։

Իսկ որ յարևելս իշխանն էր Մաքսիմինոս, 'ի սկզբան գաղտ սէր բարեկամութեան ընդ բռնակալին Հռոմայ առնէր՝ իբրև ընդ նմանոյ իւրում 'ի չարիս և ընդ եղբօր Հարազատի, և հնարս խնդրէր Թագուցանել բազում ժամանակս, բայց 'ի յայտնելն ապա՝ ելոյծ զվրէժն որպէս և արժան իսկ էր։ Բայց զարմանալին այն է Թէ որպէս և սա ազգակից տհմային, նա մանաւանդ առաջին նախնական չարութեամբն առաւելեալ քան զբռնաւորն Հռոմայ և 'ի քնէ իսկ

և բաղուկք սպանեալ լինէին։ Բայց վախման կառաբան չարեաց իշխանին այս էր զի խորհրդովք արուեստագիտութեամբ կախարդութեամբ ընձանայր նա. զի երբեմն զկանայս յղիս հեղձնոյր և զմանկունս փոքրկունս պատառէր և տեսանէր զներքին անգամս նոցա, առիծու սպանանէր զնոսա և զկոր անպատուսին գործէր։ զի յորդորեալ և կոչեցեալ զդևս զի կարկեցին գործս չարչարանաց 'ի նմանէ զմարտ պատերազմի և այսուիկ կարծեալ ակնուներ առաքինանալ յաղթութեամբ։ Արդ սա 'ի Հռոմ քաղաքի յանդգնութեամբ գերնոյր և ասել որ չէ բաւական զոր ինչ միանգամ գործէր և հնազանդէր զայնս որ ընդ ձեռամբ նորա էին. բայց այսպիսի անուանէր, և պակասէր կերակուր քաղաքին որպէս զի ոչ երբէք 'ի քաղաքի լեալ իցէ այնպէս։ Իսկ Մաքսիմինոս իշխանն որ էր յարևելս, զանչարեացն զոր ունէր նա ընդ եղբայր իւր ընդ իշխանին որ էր 'ի Հռոմ քաղաքի սէր բարեկամութեան գաղտուկ առնէր և հնարս խնդրէր Թագուցանէր բազում ժամանակս։ Բայց իբրև յայտնեցաւ ելոյծ վրէժ խնդրելոյս իւրում որպէս և արժան իսկ էր։ Բայց զարմանալի է Թէ որպէս զի և առ սմա գործեալ լինի գործոյն չարեաց սորա որ հարազատեալ համեմատեաց և կախեաց և յաղ-

անօրէնութեամբն անցանէր զանցանէր զնովաւ։ Զի գլուխք կախարդասարացն և մոգուց բարձրագոյն և մեծի պատուոյ առ նմա հանդիսէին, որ խղճամիտն էր, էր ի բնէ և մնապաշտ և ի մոլորութիւն անդ կառապաշտութեան անձնատուր յոյժ. յոչ մի ինչ լինէր ձեռնամուխ, և ոչ ծայրիւ իսկ մատանց անգամ, որպէս ասէին, մերձենալ կամէր, առանց յառաջագոյն բանից գուշակացն և պատգամաց դից։ Վասն այսորիկ իսկ և զՀալածանս սաստկապէս և գառնագոյն քան զայնոսիկ՝ որ յառաջ քան զնա էին յարոյց ընդդէմ մեր. տաճարս և մեհեանս յամենայն քաղաքս շինել, և որ ի հնութենէ ժամանակին խախտեալք էին նորոգել և վերստին կանգնել հրամայեր. և յամենայն տեղիս և ի քաղաքս քուրմս կարգեր. և ի գաւառս գաւառս՝ յերևելեացդ անտի յատենակալաց և ի գլխաւորաց քաղաքին, որոց բարւոք գկարգ աստիճանի իւրեանց պաշտեալ էր, քրմապետս կացուցանէր՝ հանդերձ գնդիւ ասպարակիր վառելոց։ Իսկ կիւսից և գիւթից՝ իբրև պաշտօնասէր մարդկան և սիրելեաց աստուածոց, գործ ի ձեռս տայր, կուսակալութեամբ գաւառաց և իշխանութեամբ պատուէր զնոսա։ Իւր ամենայն գաւառս և զքաղաքս՝ որ ընդ իշխանութեամբ նորա էին, հարկիւ ոսկւոյ և արծա-

թեաց չար իշխանին այնորիկ որ ի Հռոմ քաղաքին էր զի գլխաւորքն կախարդաց և մոգուց մեծ և վերագոյն պատուի արժանի էին առնմա, մշանչենացաւ իսկ երկինէլ մանաւանդ յարձագանգաց և գեւոց և ի մոլորութիւն անդ կառապաշտութեանն յոյժ զօրացեալ էր. բայց ի գիւթից և ի մարգարէութենէն գիւաց և ոչ մինչև յեզանէն անգամ չարժել կամէր նա. և վասն այսորիկ և զՀալածանս սաստկապէս և ոտիպ ոտիպ առաւել քան զայնոսիկ որ յառաջ քան զնայն էին յարել, որպէս զի յամենայն քաղաքս խառնեալ չինէր, և մեհեանք որ բազում ժամանակաք քակեալ լինէին նորոգել վերստին կանգնել փութով պիգութեամբ հրամայէր. և քուրմս կոչ կացուցանէր յամենայն տեղեաց և քաղաքաց։ Եւ հանդերձ այսուիկ գաւառաւ գաւառաւ մի քուրմ յերկնէլի մարդկանէ անուն ի գլխաւորաց քաղաքին որ փառաւորեալ էր ի պաշտն առաջնոյն պատուոյ կալ հրամայեաց հանդերձ բանակաւ զինուորաց և վառելոց զինու։ Իսկ զիշխարքս ամենայն իբրև զմարդոց արգարոց և աստուածասիրաց գառաւորութիւնս և իշխանութիւնս մեծամեծս չնորհէր նոցա և պատուէր զնոսա։ Եւ իբրև յայսոսիկ էր նա, զամենայն գաւառս և քաղաքս որ ընդ իշխանու-

Թոյ և անբաւ տրտմով լինլոյ և ծանր ծանր բեռամբ տուժից նեղլը և կափեր։ Եւ ի մեծատանց անտի զա բարս և ստացուածս՝ զոր ի հարց և ի հաւուց անտի ունէին, Հաներ առնոյր ի նոցանէ. և զմեծ զայն գանձս և զշէղջակոյտս ստացուածոց չհնծող իւրոց մարդելոյն բաշխեր։ Այնմհատուր ի գիներբուա՝ յարբեցութեան անդ իւրում այնպէս մոլեգնեալ լիներ, զի և ի խելաց անգամ իւրոց ելանէր, և զոր ի գիներոջ անդ իւրում հրամայեր՝ յորժամ սեմափեր անտի ի վաղիւ անդր, ի զեղջ և յատպաշաւ գառնայր։ Իսկ ի շուայտութեան և ի պակշտեալ անառակութեան ոչ ումեք տայր զառաջին տեղին, և ուստերիչ չարեաց իշխանաց իւրոց և իշխեցելոցն լինէր. մեղկէր և զզօրականն սանձարձակ զրգռէր և խառնագնաց գատարկութեամբ։ Եւ զդատաւորս և զզօրաւարս յափշտակութեամբ և զօշաբաղութեամբ զբացուցանէր ընդդէմ գատաւորականացն, իբրև արդարև աբաբանեակս և զոլոզս իւրոյ բռնակալութեան։ Եւ զինչ զամենայն գնայից և զգաւիր գործոց առնս ասացից. զինչ զանհամար չնութեանցն. զի ոչ անցաներ նա ընդ քաղաքս, առանց ապականելոյ զառնականսն և յափշտակելոյ զաղջկունս։ Եւ յաջողէր

Թեամբ նորա ելին՝ հարկիւ ոսկւոյ և արծաթոյ և անչամարիտ ստացուածովք և ծանր բեռամբ տուժից նեղէր և կափեր զնոսա, և ի մեծատանց անտի ստացուածս նախնեաց իւրեանց զոր ունէին՝ հանէր առնոյր ի նոցանէն։ Եւ զմեծութիւն որ յանկարծակիին և շէղջակոյտս ստացուածոց պատրաստ իւրոյ տայր։ Այլ արբեցութեամբ այնպէս մոլեգնեալ լինէր որպէս զի ի խրախութեան անդ գինւոյն և ի խելաց իւրոց ելանէր։ և զոր ինչ հրամայէր նա յարբեցութեան իւրում, զի յորժամ սեմափէր նա ի գինւոյ անտի իւրմէ ի վաղիւ անդր ի զեղջ և յատպաշաւ գառնայր նա։ Իսկ որկորբուծութեամբ կէր շատ և ագահութեամբ զամենեքումբեք անցանէր. և ուստերիչ չարեաց դէմառաջի և հնազանդելոյ իւրոց լինէր նա։ Եւ զզինուսորսն լուծանել ի ձեռն փափկութեան և գինեթեան պատճառութեան խորտիկք զնոսա։ Եւ զդատաւորս և զզօրավարս յափշտակութեամբ և զրկանօք զօրացուցանէր ի վերայ այնոցիկ որ ի նէրքոյ ձեռին նորա էին գրգռեր զնոսա, զի ընդ նմա և իբրև զնա յանդգնութեամբ գնացնէն։ Խայտ զինչ պիտոյ և մեզ զազատ զի գործս սորա չիշատակել և կամ թուել զբազմութիւն կանանց ընդ սրա ընայր, զի ոչ անցանէր նա ընդ քաղաքս սր ոչ գործէր ի նմա զապականութիւն կանանց և զյափշտակութիւն կուսից, և

Նման այս առ ամենայն մարդ, բայց ՚ի քրիստոնէից անտի այնոցիկ՝ որոց արհամարհել էր առաջի նոցա մահ, յորմէ գրեալ զանգթութիւն բռնաւորին. զի արք որ զՏուր, զսուր, զրևեռս երկաթիս, զգազանս, զծովու անդունդս, զկատորումն անդամոց, զխարանս, զաչաց բրել և զմարմնոց առ հասարակ զանպականու-թիւն, և զսով, զպղձահատս և զկապանս, զայս ամենայն յանս դնէին վասն կրօնից աստուածպաշտու-թեան, և քան եթէ զերկրպագութիւն Չնմարտին Աստուծոյ փոխել ՚ի պաշտօն կռոց: Իսկ կանայք ոչ ինչ պակաս քան զարս ՚ի վարդապետութիւն բանին Աստուծոյ հաստատեալք, էին ՚ի նոցանէ որ ըստ նմա նութեան արանց անհնարին պատերազմաց ժուժկա-լեալ, ըստ նմին օրինակի առաքինութեանն և զպակաս ընկալան: Եւ որ միանգամ ՚ի պղծութիւն ձգեալ լի-նէին, փութային վաղվաղակի ՚ի մահ կամակաւ, քան մատնել զնարմինս իւրեանց յապականութիւն: Ի բուռ-նաբարելոց անտի բռնաւորին մի միայն քրիստոնեայ որ կին Աղէքսանդրացւոց քաղաքին քաջատոհմիկ և մեծափայլեամ մեծաւ արիական ոգւով յաղթեաց մեղկ և պագչոտեալ մտաց Մաքսիմինոսի. զի որ քա-ջատոհմութեամբ, ընտրութեամբ և գեղեցիկ գաս-տիարակութեամբ երևելին էր, զայս ամենայն եր-

այսուիկ աջողեալ լինէր նմա առ ամենայն մարդ: Բայց ՚ի քրիստո-նէից անտի այնոցիկ որոց արհամարհեալ էր յայս նոցա մահ իբրև զոչինչ համարեալ էր նոցա այս ամենայն յանդգնութիւն նորա. զի որք կրեցին ՚ի նմանէ հուր և սուր և բևեռս ուժգին բևեռացս և զի անկցին գազանաց, և զի ընկեցեալ լինէին ՚ի խորս ծովու և կոտո-րումն անդամոց ՚ի խարանս, և զի փորեսցին աչք նոցա և զի առ առակս առակս ապականեսցին ամենայն մարմինք նոցա, և նահգերձ այսուիկ և սով և պղձահատք և կապանք և յամենայնի ցուցին համ բերութիւն, որ վասն աստուածպաշտութեանն էր. համ զի փոխե-ցին զերկրպագութիւնն ամենայն ՚ի կռոս: Իսկ կանայք ոչ սակաւ ինչ կրեցին զի հաստատեցան ՚ի վարդապետութենէ անտի բանին Աստուծոյ, և էին որ ըստ նմանութեան արանց համբերէին պատե-րազմաց և առին պակ ըստ նմին առաքինութեան և որ միանգամ յապականութիւն ձգեալ լինէին՝ վազվազակի զանձինս իւրեանց ՚ի մահ մատնէին քան զնարմինս իւրեանց յապականութիւն: Իսկ կին մի առաւել քան զամենեսին ընդ որս միանգամ շնար անօրէն իշ-խանն, զի էր նա քրիստոնեայ Աղէքսանդր քաղաքէ, և երևելի և ազնուական յաղթեաց քաջութեան անձին ցանկութեան Մաքսիմ-

կրօրդ դնէր յետ զգաստութեան։ Յոր բազում ան-
դամ ընդ վայր հրապուրեալ բռնաւորին, և պատ-
բաստ զնա գտեալ 'ի մահ քան 'ի խոնարհել 'ի կամ
նորա, սակայն և սպանանել ոչ կարէր, զի ցանկու-
թիւն առաւել քան զցաւսն զօրացեալ բռնանայր
'ի նմա, վասն որոյ կողոպտեալ զնա 'ի ստացուածոց
անտի իւրոց տարագիր արար յաքսոր օտարութեան։
Եւ այլ կանայք բազումք, որք և 'ի լուր անգամ չհան-
դուրժէին սպառնալեաց պոռնկութեան յերեսաց
կուսակալաց և դատաւորաց, զամենայն ազգս տան-
ջանաց, և մահաբեր կտտանաց և խոշտանգանաց համ
բերեցին։ Արդարև ամենեքեան սոքա զարմանալիք,
այլ քան զընաւսն զարմանահրաշ կին ոմն 'ի Հռոմ
քաղաքի, բարեւսհմութեամբն և համեստութեամբ
գերազանցեալ քան զազգսն՝ զորս Մաքսենտիոս
բռնաւոր ըստ նմանութեան Մաքսիմինոսի հրապու-
բեր 'ի կամս ցանկութեան իւրոյ. քանզի յորժամ
լուաւ սա, եթէ եկին կացին առ դուրս նորա սպասա-
ւորք բռնաւորին՝ որ առ այս հրաւիրակքն էին. և զի
այր նորա ոստիկան քաղաքին Հռոմայ ահաբեկեալ
թողեալ զնա, ածել ուր և կամէին, յայնժամ քա-
ջալես այս տիկին, զի քրիստոնեայ էր, խնդրեաց 'ի
նոցանէ սակաւ մի ժամ՝ զի զարդարեսցէ զանձն իւր.
եմուտ 'ի սենեակ իւր ներքին, և մենացեալ էառ սու-

նոսի պատրաստութեամբ զօրութեան իւրոյ, պարծելի էր և պլով-
մութեամբ և ազգատոհմիւ և ուսմամբ խնամութեան, բայց ա-
մենայն ինչ էրկրորդ զգաստութեան համարեալ էր նմա, այն զի
յորժամ կարի պարտէր զնա. բայց սպանանելով ոչ կարէր սպա-
նանել. քանզի ցանկութիւնն առաւել քան զցաւսն բռնագատէր
զնա. իբրև ինքն կինն 'ի մեռանիլ պատրաստեալ էր, այլ փախու-
ցանելով փախոյց զկինն և զինչս և զոսպացուածս նորա։ Եւ այլ կա-
նայք բազումք էին որ ոչ կարէին համբերել և լսել զպատառութիւն
պոռնկութեան, զամենայն ազգս տանջանաց և զնեղութիւնս չարա-
չար մահու համբերէին 'ի գաւառս անտի որ յամենայն ազգս
հեթանոսաց պարծելի էին սոքա։ Բայց առաւել զարմանալի կին մի
հեղ և հանդարտ և պարծելի ազգատոհմիւ՝ 'ի Հռոմ քաղաքէ, այն
որ կամէր թշնամանել զնա անօրէն իշխանն Մաքսենտիոս, այն որ
ըստ նմանութեան Մաքսիմինոսի գործել չկարացաւ նա. զի յորժամ
լուաւ նա թէ եկին կացին առ դուրս նորա սպասաւորքն նորա որ
այսպիսեաց գործոց ածողք լեալ էին. իբրև եառն զնա զի եկեալ
էին բռնի քարշել և տանել առ հիւպատոսն, ժամ առեալ մի իբրեզ-

սեր և մխեաց ՚ի կողս իւր, և արդէն դիակնացեալ է-
թող զմեռեալ մարմին իւր խնդրողաց անձին իւրոյ[5]:
Եւ արդարև գործով այսու՝ որ քան զամենայն համ-
բաւ քաջահռչակն է, ծանոյց ամենայն մարդկան ժա-
մանակին և որ միանգամ առ յապա լինելոց են, զի
քան զամենայն ինչ աննկուն և անպարտելի է առա-
քինութիւն քրիստոնէից։ Ա՛յսչափ և այսպիսի չա-
րեաց յաձախութիւն ՚ի միում գրեթէ ժամանակի
գործէր յերկոցունց բռնաւորաց անտի, որք զաբեղա
և զարեմուտս ունէին յայնժամ։ Բայց եթէ քննեսցէ
որ զպատճառս այսոցիկ թէ ուստի էն, չերկմտիցէ
արդեօք ասել թէ ՚ի հալածանաց անտի էր. զի ոչ
դադարեաց այս ամենայն չհոթութիւն՝ մինչև ընկա
լան քրիստոնեայք զհամարձակութիւն։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Վասն արտաքնոց ուրոյն դիպուց։

Ընդ բռնադակ տասնամեայ ժամանակ հալածա-
նացն ոչ դադարեցան երբեք նենգք և դարանակալու-
թիւնք առ միմեանս և պատերազմ նոցա քաղաքա-
կան. և ոչ ոք կարէր համարձակ նաւարկել ընդ ծով.
և եթէ ուրեք ծովագնաց եղեալ ոք ելանէր ՚ի ցա-

լեաց նա ՚ի նոցանէն որպէս զի զարգարեացն. և իբրև եմուտ ՚ի սե-
նեակ իւր առանձին կառ առաւեր և չոգաւ վիրովին և զմեռեալ
մարմին իւր եթող այնոցիկ որ խնդրէին զնա. արդ եթէ ոք զոր
քարոզէին առաւել քան զանիւր եղոյց զի աւելի քան զամենայն
առացուածս ընարութիւն քրիստոնէից որ յաղթէ և ոչ ապականի
առ ամենայն մարդկան որ այժմ իցեն, և որ միանգամ առ յապա
լինելոց իցեն։ Եւ իբրև զայս ամենայն բազմութիւն չարեաց որ
գործեցաւ ՚ի միում ժամանակի յերկոցունց իշխանաց անտի որ
զաբեղա և զաբեմուտս ունէին։ Բայց յորժամ ոք քննեսցէ զպատ-
ճառս այսոցիկ թէ ուստի են՝ ոչ կարէ երկմտել յասել իւրաքանչիւր թէ
՚ի հալածանաց անտի եղև. զի ոչ դադարեաց այս ամենայն չհոթու-
թիւնս մինչև ընկալան քրիստոնեայք համարձակութիւն հանա-
պազ։ Իսկ ՚ի տասն ամ հալածանացն ոչ գադարեաց ՚ի նենգել և
՚ի պատերազմել ընդ միմեանս. զի ոչ կարէր ոք գնալ ՚ի ծովս զի
յամենայն աւուրց ուր և գնայր թուէր թէ ըմբռնեալ լինէր և յա-

մաք, ըմբռնեալ և ընդ ամենայն վիշտս նեղութեանց անցանելոյ, մինչև զկողս անգամ քերել, և հարցումն և քննութիւն լինելոյ նոցա թէ գուցէ ՚ի թշնամեաց անտի եկեալ իցէն, և ա՛ւ ՚ի խաչ իսկ հասանելոյ նոցա ելանել, և կամ ՚ի հուր դատապարտել։ Եւ զինուց և պատերազմի պատրաստութիւնք լինէին, վահանք, և զրահք, նետք և նիզակք և այլ ևս զօրաբիք մահու կազմէին. դարձեալ և եռաթիք և զէնք ՚ի ծովամարտ հանդերձէին, և ոչ գոյր այլ ինչ սպասել ակն ունել, բայց եթէ աբչաւանաց թշնամւոյն և պատերազմի։ Հանդերձ սոքիւքը և սով և մարդամահ ՚ի վերայ հասանէր, զորոց և ՚ի դէպ ժամուն կարգեացոյք ըստ արժանւոյն զպատմութիւնս։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Վասն փոփոխելոյ իրացն ՚ի բարեաց պայման։

Այսոքիկ են որ ընդ բովանդակ ժամանակս հալածանաց եղեն դէպք, որ և յութ երորդում ամին սկսեալ ցածնուլ ՚ի տասներորդին Հոգւոյն Աստուծոյ ՚ի սպառ դադարեցան. քանզի յակնարկել աստուածային և երկնաւոր Հոգւոյն քաղցրութեամբ առ մեզ,

մինչև չարչարանս նեղութեանն անկանիլ և առնջեալ և քերեալ լինելն կողք նոցա. և հարցեալ լինելն թէ գուցէ ՚ի թշնամեաց անտի առաքեցան և յեալ ՚ի խաչ հանեալ լինելն կամ ՚ի հուր տանջանաց երթալն և վահանս և պատանս պատրաստելն և նետս և սլաքս զօրանելն և նիզակս հանդերձելն և զայլ ևս զէն մարդկեա պատերազմի զինուս, զի նոքօք յամենայն անգիս կարգեալ լիցին. և ոչ գոյր այլ ինչ սպասել և ակն ունել ամենայն մարգոյ հանապազ, բայց եթէ պատերազմի։ Եւ հանդերձ սոքիւքը, տապ սով և մարգամահ եհաս ժամանակաց, զի ՚ի ժամանակի իւրում պատմեցաք զնոսին որ ինչ արժան էր։ Զայս և որ երբեմն զայս էին որ միանգամ յամենայն հալածանսն կարգեցան։

Վ նէչտասանեւերորդ. վասն փոփոխմանն բարեբաստ իրացն որ եղեն։

Իսկ երբեմն գադարեցին այս ամն ամ, զի կատարեալ չորհաւքն Աստուծոյ սկսան ցածնուլ յետ ութ ամի ՚ի ցուցանել երկնաւոր չորհացն Աստուծոյ առ մեզ զգործս իւր խաղաղութեամբ։

Նոքին ինքեան իշխանքն որ երբեմն ընդդէմ մեր պա-
տերազմ յուզէին, յանկարծակի յանահնկալս շըր-
ջեալ զմիտս իւրեանց և հակառակ առաջնոցն փախե-
ցին զբանս իւրեանց, և մարդասիրագոյն առ մեզ հրո-
վարտակօք և հեզագոյն օրինօք զՀրդեհ հալածանացն
շիջուցին։ Եւ զայս ոչ մարդկայնոց ինչ մարթիմք տալ
պատճառաց և ոչ գթութեան և մարդասիրութեան
ինքնակալաց, յորոց չէր մեծ ինչ ակնկալութիւն, որ
'ի սկզբանէ անտի մինչեւ ցայս վայր հանապ-
պազօր չարաչար հնարիմացութեամբ զմեզ խորհէին
'ի բազմադիմի արուեստագիտութիւնս մեքենայից, և
'ի պէսպէս գիւտս կտտանաց և լկանաց 'ի վերայ մեր։
Այլ գործ էր սա յայտնի ինամակալութեանն Աս-
տուծոյ, յորժամ այցելութեամբ այց արար նա ժո-
ղովրդեան իւրում 'ի բարութիւն, և զիշխանն, զա-
ռաջնորդ չարեացս և զնախապատճառ հալածանացս,
և զամբարշտութեանն ախոյեան՝ եհար չարաչար։ Եւ
այս այսպէս պարտ էր լինել ըստ անքնին դատաստա-
նացն Աստուծոյ, սակայն որպէս ասէ բանն Աստուծոյ.
Վայ այնոցիկ 'ի ձեռն որոց գայէ գայթակղութիւն։
Եւ այսպէս ահա ըմբռնեցաւ նա յաստուածատաստ
պատուհասէն, հարուածեալ 'ի մարմնոյ անտի իւրմէ
մինչեւ 'ի ջունչ նորա. զի յանկարծակի յանդամս նո-

Ի օրինաւանիլորդ. վասն նորոգման բազաւորաց։

Ցայնմ ժամանակի գլխաւորքն այն որ եղեն հակառակ ընդդէմ
մեր որ յառաջագոյն 'ի ձեռն նոցա պատերազմ գործեցաւ առ մեզ։
Աքանչելապէս նորոգեցան միտք նոցա և չզիջին զբանս իւրեանց,
և 'ի ձեռն քաջագոյ և անոյշ հրովարտակացն որ առ մեզ, և գիւրին
հրամանօք զՀրդեհն մեծ որ վառեցաւ 'ի հալածանսն՝ շիջուցին։ Բայց
ոչ 'ի մարդկանէ եղեն պատճառքս այս, և ոչ գթութիւնք կամ ո-
գւոյ մարթութիւն թագաւորաց, զի յոյժ փոքր և նուազ էին նոքա յայս-
մանէ. մանաւանդ զի հանապազօր խնդրանէ մինչեւ ցայն ժամանակ
չարեաքն որ 'ի վերայ մեր խորհրդեալ էին. զի արուեստագիտութեան
մեքենայիցն պէսպէս փոփոխմամբ չարչարանօք որ 'ի վերայ մեր յա-
ճախեալ ժամանակի ջանային։ Այլ գործ էր յայտնի տեսութեանն
Աստուծոյ որ խորհեցաւ ժողովրդեան իւրում և գխնամս-
նութեան չարեաց. էած հասոյց 'ի վերայ նոցա նեղութիւնն ան-
ջանօք որ սկսաւ 'ի մարթիոյ անտի նորա և եհաս մինչեւ 'ի ջունչ նո-
րա, զի յանկարծակի յանդամս ծածուկ որովայնի նորա եղեն նմա
արգել և չկա այսր ցաւ խորութեամբ զի էր նա կեղտոյ, և եղե
Յարակ կեղտոյ առանց բժշկութեան յայնս նորա զի խաղացեալ է-

բա ծածուկս արգելլ, և յետ այսորիկ պալատը և կեղք երևէին, և առանց բժշկութեան Ճարակ կեղցին ի նեբքս յաղիս նորա ընդ ացեալ և որդունք բազումք՝ որոց ոչ հատանէր տուղան նոցա՝ ի նմանէ խաղացեալ ելանէին. և Գոտ մահու գայր ի մարմնոյ նորա։ Նյ որ յառաջ քան զայս հիւանդութիւն շատերութեանն ի բազում խորտակաց անտի տարապայման գիրութեամբ մարմնոյ առնէր իւր զանգուած անհեթեթ, արդ հալեալ և մաշեալ սոսկալի և քստմնելի տեսիլ առաջի առնէր՝ որոց միանգամ մերձենային առ նա։ Իսկ ի բժշկաց կէսք՝ զի ոչ կարէին համբերել ժահահոտին նորա, անխնայ կոտորէին, և կէսք զի ոչ կարէին օգնել նմա, որոյ աղջոյն մարմինն ուռուցեալ և առանց յուսոյ կենաց անկեալ դնէր, անողորմ հրաժամառաւ սպանեալ լինէին։

ԳԼՈՒԽ ԺԷ.

Թէ ո՛րպէս փոխեցին ինքնակալք զևսխևական հրամանսն։

Եւ իբրև յայս ամենայն չարիս անկեալ դնէր ինքնակալն, գիտաց որ ինչ միանգամ ընդ երկիւղածան Աստուծոյ գործեաց, և ի միտս եկեալ նախ Աստուծոյ արարչին ամենեցուն խոստովան լինէր. ապա կո-

---

լանէին ի նմանէ որդունքն բազումք որ ոչ հատանէր տուղան նոցա, և Գոտ մահու գայր ի մարմնոյ նորա զի ի բազում խորտակաց անտի և յառաջ քան զհիւանդութիւն նորա յառաւելութիւն գիրութեան փոխեցաւ. և ապա իբրև ապականեցաւ՝ ահ և երկիւղ արկաւ ամենայնի որ միանգամ մերձենային առ նա ելս տեսիլ նորա։ Իսկ բժիշկք որ միանգամ չկարէին համբերել ժահահոտին նորա սպանեալ լինէին։ Իսկ մարմին նորա իբրև քաշէր, և առանց յուսոյ կենաց էր. քանզի ոչ կարէին այլ բժիշկք օգնել նմա՝ անողորմ հրամանաւ սպանեալ լինէին։ Եւ իբրև յայս ամենայն չարիս անկեալ գնէր, գիտաց որ ինչ միանգամ ընդ երկիւղածան Աստուծոյ գործեաց, ամենևին այլ կարէին օգնել նմա՝ անողորմ հրամանաւ սպանեալ լինէին։ Եւ իբրև յայս ամենայն չարիս անկեալ գնէր, գիտաց որ ինչ միանգամ ընդ երկիւղածան Աստուծոյ արարչին ամենեցուն խոստովան լինէր. ապա կոչեաց զարքեպիսկոպոսսն զՀալածանդն քրիստոնէից առանց յապաղելոյ. և իբրև յօրինաց և ի հրամանէ Թագաւորին ձեռնեցան զնոսա չինել զեկեղեցիսն խրխնջ և քան սուր-

չեաց զմերձաւորս իւր՝ և պատուէր տայր նոցա զի առ գէն անյապաղ դադարեցուսցեն զՀալածանս քրիս տոնէից, և իբրև յօրինաց և՛ ի հրամանէ Թագաւորին Ձեպեսցէն զնոսա շինել զեկեղեցիս իւրեանց, և ըստ սովորութեան իւրեանց առնել աղօթս վասն կենաց ինքնակալին։ Եւ անդէն գործն զինի բանին խաղայր, և հրաման Թագաւորին ընդ ամենայն քաղաքս սփռեալ լինէր, և փոխոխուին բանիւ նորա որ զինջ էր օրինակ զայս.

Ինքնակալ կայսր Գաղերիոս Վաղերիոս Մաքսիմիանոս մշտայաղթ, Աւգոստոս, Բրմապետ մեծ, Գերմանիկոս, Եգիպտիակոս, Թէբայիկոս, Սարմատիկոս Մաքսիմոս, Հնգից յաղթութեամբ՝ ի վերայ Պարսից Պերսիկոս Մաքսիմոս, երկից կարպիկոս Մաքսիմոս, Վեցից Սարմատիկոս Մաքսիմոս, Մեդիկոս և Ադիաբենիկոս Մաքսիմոս, քսանից Տրիբունութեամբ, ութանասնից Իմիեռադոր զօրավարութեամբ, և ութնից դեսպանութեամբ պատուեալ, Հայր Հայրենեաց և փոխանակ դեղեխի. և

Ինքնակալ կայսր Փլաւիոս Վաղերիոս Կոստանդ, Պիոս, Փելիքս մշտայաղթ, Աւգոստոս, Բրմապետ մեծ, Տրիբունական իշխանութեամբ հնգից և Իմ փեռադոր անուամբ՝ ի զուգաչափ նուագս պատուեալ դեղեչխ և Հայր Հայրենեաց և փոխանակ դեղեչխի. և

Ինքնակալ Կեսար, Վաղերիոս Լիկինիանոս, Պիոս, Փելիքս, մշտայաղթ Աւգոստոս, Տրիբունութեամբ չորից պատուեալ և երից Իմիեռադոր անուամբ, դեղեչխ Հայր Հայրենեաց և փոխանակ դեղեչխի.

բնակաց մարզից պետութեանն ողջոյն շատ.

Ասլլվքն հանդերձ, որ ինչ միանգամ՝ ի շահ օգտի

թութեան իւրեանց գնացեն և աղօթս առնել՝ ի վերայ Թագաւորութեան հրամայէր. և ապա գործն զինի բանին խաղայր և հրամանք Թագաւորին ընդ ամենայն քաղաքն սփռեալ էր զի Նորոգումն բանիցն նոցա որ զինջս էր, զի էր՝ ի նոսա այսպէս։ Ինքնակալ կայսր Մաքսենտիոս Աւթուստոս, ինքնակալ կայսր Կոստանդինոս աւսէրքոս և աւթուստոս Հանդերձ սլլովք իրօք Թագաւորութեանն որ ինչ միանգամ վասն արժանաւոր շահի հասարակաց իցէ, և մեք*

* Յոր. աւտիրս և աւրիգոս. Թերևս՝ եւսեբէս և սեբաստոս։

Հասարակաց իցէ և՛ի փրկութիւն՝ հոգ անձին կալեալ խորհեաք. նախ զի ըստ օրինացն նախնեաց և ըստ կարգաց պետութեանս Հառնունց զամենայն ուղղեսցուք. վասն որոյ և իսկամ կալաք զի քրիստոնեաքդ՝ որ Թագին զպաշտօն Հարց իւրեանց, անգրէն ի նոյն ի բարւոք միտս դարձցին։ Եւ զի այսպիսի կալաւ զմիտս նոցա չկացութիւն անհնազանդութեան, զի զոր նախնիք նոցա ցուցին, յոր և Հարքն իւրեանց ի սկզբանէ անսի հաստատեալ կային, զարտուղեալ նոցա չկայց՝ ոչ եա՛ի նոյն գնային, այլ ըստ խորհրդոց իւրեանց և ըստ աղէկամի հաճութեան կարգեալ իւրեանց օրէնս՝ և նոցին զգուշանային, և՛ի բազում աղանդս և՛ի կարծիս զատուցեալ, ուրոյն առանձին և ժողովս կազմէին։ Այդ իբրև արքունի հրովարտակաւս հրամանս տուաք նոցա, զի յօրէնս և՛ի սովորութիւնս նախնեաց իւրեանց դարձցին, բազումք՛ի նոցանէ՛ի վիշտս վտանգաց զանձինս մատնեալ, և բազումք տագնապեալ խռովեցան, և պէսպէս մահուամբ կրեցին։ Եւ քանզի զբազումս տեսաք՛ի սոյն միտս մոլորութեան չտանեալս, զի ոչ աստուածոյն երկնայնոց պաշտօն արժանի մատուցանէին, և ոչ՛ի պաշտօն քրիստոնէից պիտի կան, վասն որոյ՛ի մէջս մարգասիրութիւն և՛ի համբոյր ընդելութիւնս հայեցեալ, որով սովոր եմք ներող լինել հասարակաց ամենեցուն մարդկան, և

կամեաք նախ զառաջինն, եթէ ըստ օրինացն առաջնոց և ըստ կարգաց Թագաւորութեանն Հառնունց զամենայն ինչ ուղղեսցուք. զի և վասն այսր եւս արացուք հոգատարձութիւն, զի քրիստոնեայքն՝ որ Թագին զպաշտօն հայրենի նախնեացն իւրեանց անգրէն ի նոյն դարձցին նոքա։ և Թէ ոչ որով խորհրդովք. և իբրև զի այսպիսի զացուցութիւն հնոյս նոցա եթէ ոչ կրնի այնր իրիք զոր ցուցին նախնիքն, մի գնացին որպէս և հարքն իւրեանց նախնիքն իսկզբանէ նոքիմբք հաստատեալ կային, այլ զի ըստ խորհրդոց իւրեանց, և որպէս մի մի ոք՛ի նոցանէն կամիցի՝ այնպէս արասցէք, զի զօրէնս իւրեանց պահեսցին, և զամենայն օրէնսդիր ժողովուրդս ժողովեսցին։ Այդ որ իբրև զայս հրամանս եգաք Թէ զոր ինչ յառաջնոց անտի ուղղեցաւ գաբձուսցին զնոսա, և բազումք՛ի նոցանէ՛ի վիշտս մատնեցան, և բազումք խռովեցան և պէսպէս մահ կրեցին։ Եւ քանզի բազումս տեսաք մեք որ՛ի նմին նմանութեան կային մեացին, զի ոչ աստուածոյն որ յերկինս են պաշտօն արժանի նոցա մատուցանեն, և ոչ՛ի պաշտօն քրիստոնէից պիտի կան, մեք յողորմութեան մեծում և՛ի մշանջենաւոր ժողովրդեան զի սովոր եմք զանցանս Թո-

յայսմիկ իակ կամակար յօժարութեամբ խորհեցաք առնել նոցա Թողութիւն. զի դարձեալ եղիցին քրիստոնեայք, և զտաճարս՝ յորս ժողովեցին յառաջագոյն՝ կանգնեսցեն, և զայն ինչ որ հակառակ իցէ օրէնս նոց նոցա և հրահանգաց՝ մի գործեսցեն։ Ձուցաք և առանձին նամականուով և դատաւորաց, թէ զինչ պարտ և պատշաճ իցէ նոցա պահել։ Վասն այսորիկ ըստ այսմ նէրսողական գԹութեանս մերոյ պարտին դոքա ազատել զԱստուածն իւրեանց վասն կենաց մերոց, և վասն հասարակաց պետութեանս և իւրեանց իակ անձանց. զի՛ի փրկութեան հասարակաց, և նոքա յանքոյթ վարեսցեն իւրաքանչիւր առ ընտանիս իւրեանց զկեանս։ Ա՛յս ՚ի լեզուէ անտի Հոռոմ առաւ ՚ի յոյն, ոյպէս և մարթ էր։ Եւ որ ինչ այսոցիկ հետ եկին, ժամ է արդ միտ եդեալ հայել։

զուլ ամենայն մարդկան. և յայսմիկ ՚ի լի կատարեալ կամաց մերոց խորհեցաք տալ նոցա Թողութիւն, զի դարձեալ միաւանգամ եղիցին քրիստոնեայք, և զտաճարսն յորս յառաջագոյն ժողովեալ էին ՚ի նոսա՝ կանգնեսցեն, և զայն ինչ որ հակառակ իցէ կամաց՝ մի պարտ ծեսցին։ Եւ ՚ի միւսում հրովարտակի յուցանեմք գատաւորացն Թէ զինչ պարտ և պատշաճ իցէ նոցա պահել վասն այսորիկ ըստ այսմ Թողութեան մերոյ պարտին դոքա ազատել զԱստուածն իւրեանց վասն կենաց մերոց և վասն իրաց Թագաւորութեան, և վասն անձանց յամենայն հնարից, և իրաց Թագաւորութեան առաջութիւն տայք. և նոքա անվնաս արասցեն ելանել ՚ի կենաս իւրեանց։ Ա՛յս ՚ի լեզուէ անտի Հոռոմ առաւ ՚ի յոյն այսր, որպէս և մարթ էրն, զի էր ՚ի նմա այսպէս՝ զի հանգերձ այսոքիմբք իակ զինչ եզև ՚ի ժամանակի մեզ ՚ի միտ առնուլ։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

—

Գլուխ Զ. [1] — « Զինքնակալութեան Թեկն ածէին ». Քանզի Եւփինոս ոմն Տրիբուն ՚ի գլուխ գնդին կարգելոյ ՚ի բանակ զանցս Նաւահանգստին ՚ի Սեւկիա, և ՚ի տապտակալ զօրականին յանգուլ աշխատութենէն, խառնով սպառնալեաց նոցա բռնագործ յինքնակալութիւն, որոց և յաւելուածակալ ՚ի գրոշելոյն զծիրանին արկանէն զնովաւ տղջուհելով զնա ինքնակալ Աւգոստոս, որոց և յանկարծակի ՚ի բուռն առեալ զգազաքն Աւտիբ՝ ՚ի գինեբերս և յանառակութիւնս խրեանց ՚ի միւմ գիշերի զօթավարսն խրեանց սատակին ՚ի քաղաքացւոց անտի : Այս է ահա զոր ակնարկէ բանս :

Գլուխ ԺԲ. [2] — « Ի գէտ անգր արկին զինքեանս ». Վասն անձնանուէրն մահու վկայուհեացս այսոցիկ տես ՚ի տուրքն Աւգոստինոս. Յաղագս քաղաքին Աստուծոյ :

Գլուխ ԺԳ. [3] — « Զոր ոչ երբէք յիշեմք եղեալ ». Եղեն արգարև և յառաջագոյն ինքնակալք երկու և երեք միանգամայն, սակայն երբէք իշխանակիցք և գահակիցք, ուր արդ որպէս հայրենի ժառանգութիւն բաժանեցին յիրեարանս զպետութիւնն զօրքն և գանձուք հանգերձ :

... [4] — « Որպէս վերագոյն ասացաք զնմանէ ». Սա է Մաքսիմիանոս երկոյն՝ անէր Կոստանդիանոս, որ հրաժարեալ միանգամ ՚ի ծիրանեացն և ՚ի կամէն վերստին գառնալ ՚ի նոյն՝ փոխուսական երթալ յերեսաց որդւոյն առ փեսայ իւր, և գառագիր կենաց նորա լինելով՝ ընդունի ՚ի նմանէ զարժանահաս պատուհաս մահուն :

Գլուխ ԺԴ. [5] — « Թեգդրոգաց անձին նորա ». Թէպէտ այլոք ՚ի նմանօրինակ դէպս առաքեցաք զընթերցողն ՚ի տուրքն Աւգոստինոս. այլ Թերևս ոչինչ անձնոյ գնել առատօրէն զկորչելոցս Ծուխիանդ՝ զոր գառնեմք ՚ի լուսանցս հին յօրնական ձեռագրացս այսպէս « Եւ որպէս զարմանալի համարեսցին կանայքս, որք անձնամահ լինել ժպրհեցան. զի որք անձամբ անձանց գահիճք եղեն երկնեցուց առեան չընդունի զնոսա ՚ի չարս վկայից երեց : Վատուհեան իցէ առաւել՝ ահաբեկ ՚ի ստնջանաց ՚ի մահ մատրեալ քան երեխ քաջութեան գործ » : ... Թէպէտ չէն սորա ստնելիք և գովելիք, սակայն ներելի գտնել և ոչ այսպէս խստիւ պարսաւելի, զի ոչ այնչափ ՚ի ստնջանացն և ՚ի սպառնալեաց երկեան սորա որպէս երևի, որքան ՚ի կորսանել կուսութեան գանձուն և մարդուհեան :

ՅԱՆԿ ԻՆՆԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԵԱՆ

Ա. — Վասն կեզծ առ երեսս ներողութեան։
Բ. — Վասն չարաչար յեղաչրջելոյ պայմանի մերոյ յարեւելս։
Գ. — Վասն նորոգ կանգնելոյ պատկերին յԱխտիք քաղաքի։
Դ. — Վասն խորհրդոց և վճռոյ քաղաքացւոցն ընդդէմ մեր։
Ե. — Վասն սուտ յիշատակարանացն արձանագրութեանց։
Զ. — Վասն այնոցիկ որ վկայեցին ի ժամանակին։
Է. — Վասն գաւառակիցն արձանագրելոյ, որ գրոչմեալ ի տախտակս եգաւ ի տեսիլ ժողովրդեան հրապարակաւ։
Ը. — Վասն անցելոյն որ անցին ընդ նուա յետ այնորիկ ի սուտ, ի սրածութեան և ի պատերազմի։
Թ. — Վասն կործանման և կորստեան բռնաւորաց, և թէ զինչ վերջին բանք նոցա յառաջ քան զվախճան մահուան։
Ժ. — Վասն յաղթութեան աստուածասէր թագաւորաց։
ԺԱ. — Վասն վերջնոյ կորստեան թշնամեաց քրիստոնէութեան։

ԴՊՐՈՒԹԻՒՆ ԻՆՆԵՐՈՐԴ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ։

Ա. — Առաջին ճառք, վասն Հայեցեալ Հանգստեան որ եղև։
Բ. — Երկրորդ, վասն փոփոխման այնորիկ որ եղև յետոյ։
Գ. — Երրորդ, վասն պատկերին այնմ որ կանգնեցաւ նորոգ յԱխտիք քաղաքի։
Դ. — Չորրորդ, վասն խորհրդոցն՝ որ ի վերայ մեր յուզեցան։
Ե. — Հինգերորդ, վասն դաւանիչացն, զոր յօգնեցին գտեառնէ մերմէ։
Զ. — Վեցերորդ, վասն ամենայնի որ ինչ միանգամ վկայեցին յայնմ ժամանակի։
Է. — Իօթներորդ, վասն գրոյն որ եգաւ զմէնջ յարձանս։
Ը. — Ութերորդ, վասն ամենայնի որ ինչ միանգամ եղև յետոյ, ասվ և մարգամէ ի պատերազմի։
Թ. — Իններորդ, վասն չարաչար կործանման կենացն իշխանաց, և թէ որպէս բանիւք պաշտեցան նոքա յառաջ քան զգահն իւրեանց։
Ժ. — Տասներորդ, վասն յաղթութեան թագաւորաց սիրելեացն Աստուծոյ։
ԺԱ. — Մետասաներորդ, վասն առաջին կորստեան թշնամեացն աստուածպաշտութեանն։

ԴՊՐՈՒԹԻՒՆ ԻՆՆԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Վասն կեղծ առ երևս ևերդուբեան։

Փոփոխուխիս այս կատաց և հրամանս ակնարկու-
Թեան ինքնակալին սուռեցաւ 'ի կողմանս Աբիացւոց և
շուրջ ընդ ամենայն գաւառսն։ Եւ իբրև այս այսպէս
'ի գլուխ եղ և կատարեցաւ, Մաքսիմինոս՝ որ բանա-
կալէրն յարևելս, ամբարշտագոյն քան զամենայն իշ-
խանակից իւր և սիրելիմ հալածիչ աստուածպաշ-
տուԹեան, Թէպետ ոչ հաւանեցաւ 'ի սրտին ընդ հրո-
վարտակն, սակայն գրեաց բանիւ առ իշխանս իւր և
հրամայեաց դադարեցուցանել զպատերազմն՝ որ ընդ-
դէմ մեր։ Եւ զի չէր իսկ իշխան հակառակ կալ հրա-
մանին հզօրագունից քան զինքն, վասն որոյ ծածկեալ
զհրովարտակն և հոգայր զի յայտ մի եկեսցէ այն ընդ-
գաւառսն՝ որ ընդ ձեռամբ Նորա էին։ և ինքն բանիւ
միայն առաքեաց և պատուիրեաց իշխանաց՝ գաւա-
ռաց տէրուԹեան իւրոյ դադարեցուցանել զՀալա-

Ա. տալին ձառք. վասն հայկեցեալ հանգստեանն որ եղև։

Բայց փոփոխումն կամաց Թագաւորին որ գրեցաւ սփռեալ էր 'ի կողմանս ասացւոց ընդ ամենայն գաւառս։ Եւ իբրև այս այսպէս գործեցաւ, Մաքսիմինոս իշխանն այն որ էր յարևելս որ-սմաբիչս անօրէն էր քան զամենեսին, և հալածիչ էր աստուածպաշտու-Թեան, ոչ հաճոյ եղև նմա որ ինչ գրեցաւն, և փոխանակ գրոյն որ գրեցաւն, բանիւ հրամայեաց իշխանացն որ ընդ ձեռամբ նորա էին՝ դադարեցուցանել զպատերազմ որ 'ի վերայ մեր։ քանզի չէր իշ-խան կալ հակառակ այլազգ ինչ ընդդէմ հրամանի այնոցիկ որ մեծ և մեծամեծք էին քան զնա։ Ընկերակից զօրէնն զայնս որ ե-գան, և հոգայր զի յայտ մի եկեսցէ յայն աշխարհն որ ընդ ձեռամբ նորա էին և առանց հրովարտակաց հրամայեաց իշխանացն որ ընդ տէրուԹեամբ նորա էին դադարեցուցանել զՀալածանան մեր։ Իսկ

ծանս մեր. որք և ի ձեռն Թղթոյ ապդեկին միմեանց
ջհրատանն. Իսկ Սաբինոս ոմն որ ի ժամանակին յայն-
միկ մեծի իշխանութեամբ զօրավարութեան արքու-
նի Թիկնապահ գնդին պատուեալ էր, գրեաց ընդ ա-
մենայն գաւառակալ իշխանս կողմանց կողմանց և
յայտ արար զխորհուրդս կամաց ինքնակալին Հռոմա-
բէն. որոյ Թղթոյն Թարգմանութիւն ի մեր լեզու
ունի օրինակ զայս.

Քանզի արանցն դիւցազանց տեառըդ մերոյ ինքնակա-
լաց մեծախնամ մարդասէր փոյթ ածելոյ հաւանե-
ցուցանելոյ զամենեցուն զիաս յուղիղն և ի հնմարիտ
Աստուածարշ կենաց՝ կանուխ իսկ յայտ է. զի և որք
օտարոտի Հռովմայեցւոցս սովորութեան զհետ ե-
թեալ օրինաց երևէին, ի վայելչական պաշտօն աս-
տուածոյն անմահիկ դարձուցանելոյ զնոսա մեծապէս
ձգտեցան: Այլ ոմանց ոմանց ի նոցանէ յամառ պըն-
դութիւն, և անողոք կամաց խստութիւն յայնպիսի
մղէր զնոսա պայման, զի և ոչ ինքնակալացդ մերոյ ի-
մաստուն և արդար հրամանն խախտել զնոսա յառաջ-
արկեալ մտաց նոցա ինչ կարաց. և ոչ իսկ մեծա-
սաստ պատուհասիցն երեսս ինչ արարին նոքա: Եւ
այսպէս դէպ լինէր ոչ սակաւուց ի նոցանէ ի մեծ
վիշտս վտանգաց զանձինս խարդաւանել. վասն որոյ և
ազատական քաջութեան բարեպաշտ չարատեաց սըր-

նոքա զհրամանն նորա ի ձեռն Թղթոյ ծանուցին միմեանց: Իսկ Սաբի-
նոս այն որ առաւել իշխանութեամբ հնգապետութեան պատուեալ
էր ի Թագաւորութենէն առաքինորդաց յամենայն ազգս յայս-
նեաց և եցոյց զխորհուրդս Թագաւորին ի Թղթի հռոմարէն: Իսկ
նոքա միայն որ գրեցան նոցա համաբերցան Թէ հնմարիտ էին հան-
գերձապետին և քաղաքապետիցն և որ միանգամ հրամայեալ էին
դիւղից զնոսա Թագաւորին ի ձեռն Թղթոյ յայտնելոյն և ցուցին:
Բայց ոչ Թղթովք միայն այս, այլ և արդեամբք յառաջ քան
զիաւզիս Թէ այդպէս է զի կատարեցին զհրամանն Թագաւորին
և զամենեսին զոր միանգամ արդելեալ էր նոցա ի բանդս վան
խստաժանութեան աստուածապարտութեան, հանին արձակեցին
յայտնապէս և Թողին զնոսա ազատս: Եւ զայնոսիկ որք էին ի պը-
ղծահաճոս ուր ի պատիժս ընկեցեալ էին անդ զի համարեցան
նոքա Թէ հնմարիտ Թագաւորին կամիցէ այդպէս: Եւ իբրև այս
այսպէս գործեցաւ յանկարծակի իրքն ի մեծին գիչերոյ լոյս ծա-
գեաց յամենայն քաղաքս. Եկեղեցի որ ժողովեալ լինէին անասնէր
մարդ և զբաղմութիւն ժողովրդոց և զվաղս որ գործեալ լինէին

բուԹեան տեարց մերոց միտաղօր ինքնակալացս օտար ամենևին ի բարեսէր աստուածախնամ խորհրդոց զի յայսպիսի պատճառս այդպէս բազումք ի կորուստ մատնեսցին, հրաման ետ ինձ անձնամատոյց առ նա ծառայիս գրով տալ քումդ փոյթ հպատակուԹեանդ. զի եԹէ ոք ի քրիստոնէից ի պաշտօն աղանդոյ ժողովրդեանն իւրոյ ըմբռնեսցի, ազատ զնա արասցես յամենայն տարապարտ նեղուԹենէ և ի վտանգաց. և մի յայս պատճառս պատուհասի արժանաւոր զնա դատեսցես. զի որ միանգամ երկար ամօք ի նոյն հաստատագործեաց, զնոսա և ոչ իսկ հաւանեցուցանել ոք մարԹասցէ հեռանալ տեղւոյ տալ ի յամառուԹենէդ յայդմանէ։ Գրել արդ և առաքել առ համաբառաւս, առ իշխանս ժողովրդեան, առ վերակացուս աւանաց և գիւղից քոյին փուԹոյ գործ լինիցի, զի գիտասցեն Թէ չէ նոցա անկ անդր քան զՀրամանս արքունի հոգալ զիւրացս քրիստոնէից։

Եւ անդէն կողմնապահէ և կուսակալք գաւառաց քաջիկ խելամուտ խորհրդոց և կամաց ինքնակալին, և ծանուցին գրով Հոգաբարձուաց և իշխանաց և վերակացուաց գիւղօրէից և աւանաց զկամս նորա։ Եւ ոչ գրով միայն, այլ և արդեամբք իսկ ի կատարումն ակնարկուԹեան Հրամանաց ինքնակալին փուԹային. և զամենեսին զօրս միանգամ արգելեալ էր նոցա ի բանտս վասն խոստովանուԹեան աստուածպաշտուԹեան՝ Հանին արձակեցին յայտնապէս. և զայնոսիկ օրք էին ի պղնձահատս առ ի պատիժ ընկեցեալ Թուղին և զնոսա ազատս, զի ՀմայրտուԹեամբ զայս Հաստատեցան զկամս իւրեանց իշխանին։ Եւ իբրև այս այսպէս գործեցաւ, յանկարծակի իբրև ի մԹին գիշե-

ըստ առաջին սովորուԹեանն իւրեանց։ Բայց զարմացեալ էր մեծապէս և պանդխտեալ յայսմիկ ամենայն որ ի ՀեԹանոսաց անտի էր, վասն այսր փոփոխման պանդխտէլոյ որ եղև, և աղաղակէին ԹԷ Աստուածն քրիստոնէից նա միայն է Աստուած Հմայիչ։ Եւ որ միանգամ մերքն էին որ առաքինացան պատերազմաւն Հալածանաց Հաւատարապէս, և զՀամարձակուԹիւնն զոր ուշեին առ ամենայն մարդիկ վերստին ընկալան։ Իսկ որ միանգամ Հետանգացան անձինք նոցա ի Հաւատոց անտի ի մէջ զթօսանաց կային Հոգւոյն սերով վասն բժշկուԹեան անձանց իւրեանց և ինդրելին յոգւոյ անտի, և

լոյ լոյս ծագեաց. և յամենայն քաղաքս ժողովել եկեղեցիք հաւատացելոց, և ամբոխ բազմութեան նոցա ըստ առաջին սովորութեան առնելին զիւրեանց ժողովս : Եւ մեծապէս աբանչացեալ ընդ այսպիսի անակնկալ փոփոխումնս ամենեքեան որ 'ի հեթանոսաց անտի էին և աղաղակէին թէ. Մեծ է Աստուածն քրիստոնէից, և նա միայն Աշխարհիս Աստուած : Եւ որք միանգամ 'ի մերոցն 'ի մկրտութիւնս հաւաճանաց հաւատարիմն և արիագոյնս նահատակեցան՝ մեծապէս համարձակութիւն առ ամենայն մարդիկ ունէին : Իսկ որոց տկարացան հաւատք և 'ի ծուխս անդ և 'ի ձմերոնան նաւակոծութիւն հոգւոցն եղև, սիրով յօժարութեամբ վասն բժշկութեան անձանց իւրեանց հոգւոյին, և զաջ օգնականութեան յողջոց անտի խնդրէին, աղաչել զԱստուած զի հաշտեսցի ընդ նոսա : Դարձեալ և նահատակքն առաքինիք աստուածպաշտութեան իբրև արձակեցան 'ի կապանաց անտի վշտաց պղնձահատիցն՝ իւրաքանչիւր 'ի տեղիս իւրեանց դառնային. և զառաքինի ցնծութեամբ ընդ ամենայն քաղաքս անցեալ գնային, և անպատում էր նոցա խնդութիւն և քան զբան առաւել հաստատութիւն վստահութեան : Եւ բազմամբոխ դունդ նոցա ընդ արքունի ձանապարհս և ընդ հրապարակս երգս օրհնութեան և սաղմոս նուագելով 'ի գոհութիւն և 'ի փառաբանութիւն Աստուծոյ՝ չքէին երթային : Եւ որք յառաջ քան զսակաւ մի պատուհասակոծք խիստ կապանօք 'ի տեղեաց իւրեանց հալածէին, տեսանէիր արդ զնոսա զառաքեր երեսօք և լուրջ դիմօք հաստատել 'ի բնակութիւնս իւրեանց.

աջ օգնականութեան խնդրէին 'ի նոցանէն, և աղաչէին զԱստուած զի հաշտեսցի ընդ նոսա : Դարձեալ և նահատակքն առաքինիք աստուածպաշտութեանն իբրև ազատեցան 'ի կապանաց վշտաց պղնձահատին՝ 'ի տեղիս իւրեանց դառնային և ցնծութեամբ և ուրախութեամբ և մեծաւ մխիթարութեամբ անցանէին ընդ ամենայն քաղաքս գովէին և օրհնէին և փառաւոր առնէին զԱստուած համարձակ 'ի հրապարակս առաջի ամենայն մարդկան : Եւ այնքան որ խիստ չարաչար պատժոք յառաջ քան զսակաւ մի կապանօք 'ի տեղեաց իւրեանց հալածէին՝ տեսանէիր զնոսա զառաքեր երեսօք և լուրջ դիմօք զի ընդունէին զբնակութիւնս իւրեանց. որպէս և զայ-

միևչ զի և որք յառաջագոյն կոտորածս մեզ և՛ի սպառ սպուռ ջախջախանս սպառնային, տեսեալ զանակընկալ սքանչելիսն ընդ եղեալքս խնդակից ընդ մեզ լինէին։

ԳԼՈՒԽ Բ.

Վասն չարաչար յեղաշրջելոյ պայմանի մերոցս յարևելս։

Իսկ բարիատեացն և ամենայն լաւութեանց հա- կառակ անօրէնն իշխանն, զոր որպէս կանխեցաք ա- սացաք, բռնակալեալ ունէր զկողմանս արևելից, չը- կարաց տանել փոփոխութեան իրացս, և ոչ զամիսս վեց ՝ եթող համբերը զայս այսպէս։ Զի առ՛ի շրջել խափանել զխաղաղութիւն հնարէր նա մեքենայիւք զամենայն. և նախ զառաջինն արգել զմեզ պատա- ռանօք առնելոյ ժողովս ՛ի հանգստարանս վկայից մե- ծոց. ապա ՛ի ձեռն մարդոց ոմանց չարաց ինքն անձին իւրում հրեշտակութիւնս առնէր հակառակ մեր՝ իբ- րև յերեսաց Աստիոքացւոց, աղաչել զնա որպէս ՛ի մեծ չնորհս նոցա, թէ բնաւ ամենևին ոք ՛ի քրիստո- նէից մի բնակեսցէ ՛ի քաղաքի անդ նոցա։ Զկոյս առ- նել և այլոց սադրեաց, որոց ամենեցուն գլուխ և ա-

նօսիկ որ յառաջագոյն սպանողք էին իբրև տեսին զքանչելիսն որ եղեն, զի ոչ ակն ունէին թէ լինելոց էին՝ ուրախ լինէին ընդ մեզ յայս ինչ որ եղեն։

երկրորդ. վասն փոփոխմանն այնորիկ որ եղև չնոյ։

Զայն իսկ զայս զոր ասացաքս ոչ կարաց համբերել անօրէն իշխանն, զի առեալ նա զբարիս և էր հակառակ ամենայն բարւոյ. այլ որպէս ասացաք զնմանէ՝ թէ էր նա իշխան ՛ի գաւառս արևելից, զի և ոչ զվեց ամիս թէ գործեացի այս՝ համբերեր նա, չոյժ հնարե- ցաւ նա խափանել զխաղաղութիւն։ Եւ նախ զառաջինն արգելուլ զմեզ պատճառանօք ՛ի ժողովրդենէ անտի վկայից քաջաց։ Բայց գործեալ ՛ի ձեռն մարդոց չարախոսաց ինքն եղև անձին իւրում հրեշտակ ընդդէմ մեր, զի գրգռեաց զանհոգացեան աղաչել զնա զի հրամայեսցէ թէ բնաւ ամենևին ոք ՛ի քրիստոնէից մի բնակեսցէ յաշխարհն անդ իշխանութեան նոցա, իբրև վարկանէր նոցա չը-

առաջնորդ եկաց յԱնտիոք քաղաքի Թէոտեկտոս ոմն այր չարահաւ և կախարդ, օտար ամենևին անուան իւրոյ, բայց որպէս Թուխն համարակալ էր նա ՚ի քաղաքին։

ԳԼՈՒԽ Գ.

Վասն նորոգ կանգնելոյ պատկերին յԱնտիոք քաղաքի։

Բազմօրինակ արդ սա ընդդէմ մեր պատերազմեալ, և ամենայն խորամանկութեամբ զմեզ իբրև զգողս ոմանս անօրէնս ՚ի Թագաւորացդ իւրեանց որսալ ջանայ ցեալ, և զամենայն չարախօսութիւն զրպարտութեան հակառակ մեր մեքենայեալ, և բազմաց պատճառք մահու եղեալ, յետոյ ուրեմն և զՔրիստեան Դիսոյ ըզպատկեր կախարդութեամբ արուեստագիտութեան իւրոյ ՚ի քաղաքին կանգնէր, և նուէրս և կատարողութիւնս անսուրբս և խորհրդատնս պիղծս, և քաւութիւնս գարշելիս հնարեալ ստեղծանէր, մինչ զի և Թագաւորին անգամ զարուեստ դիւթից քան զպատգամն դից զարմանալի ցուցանէր։ Եւ սոյն իսկ սա

նորհս մեծ։ Բայց և զայլս գործեալ համարձակեաց առնել զայս ինչ։ զի առաջին և գլխաւոր այսր իրի յԱնտիոք քաղաքի էրևեցաւ Թէոտեկտոս այր չարահաւ և կախարդ, որ օտար էր յորջորջմանն իւրոյ։ Բայց էր նա հանդիպատիպ քաղաքին։

Երրորդ. վասն պատկերին որ կանգնեցաւ նորոգ յԱնտիոք քաղաքի։

Վարեցաւ յայժ նոյն այր վասն որոյ ասացաքն զնմանէն պատերազմիլ ընդ մեզ ամենայն հնարիւք զգուշական որ մերքն էին, իբրև զնորգս պիղծս և զաղտեղիս որ Թաքչէին ՚ի խաւարի, որսալ ջանայր չարախօսութեամբ և ամբարտաւանութեամբ որ զմինչ ամենայն իւրք խորամանկեր։ և պատճառ մահու էղև բազմաց։ Բայց յետոյ պատկերք բնդմեան Փիղոսի կանգնեաց կայսրն արուեստագիտութեան կախարդութեամբ և ազատէի պաշտամամբ և խորհրդոց անպիտանս և սրբութիւնս պիղծս խորամանկեցաւ և եգիտ, մինչ զի և Թագաւորին անգամ արուեստ զարմանալի զդիւթից ցուցանէր։ Եւ սոյն իսկ սա իբրև ՚ի սուտահայտապատութիւն պիտի իմիք

սուտակասպասուԹեամբ ընԹել իշխանին կամելով, յարոյց ՚ի վերայ քրիստոնէից զգևն՝ ասել ԵԹԷ. Հրաժայէ Աստուած ԹԷ արտաքոյ սահմանաց քաղաքիս և ագարակաց անգամ՝ որ շուրջ իցեն զնովաւ, Հալածեսցին քրիստոնեայք, զի Թշնամիք են նորա։

ԳԼՈՒԽ Դ.

Վասն խորհրդոց և վձռոյ քաղաքացւոց ընդդէմ մեր։

Եւ իբրև սա նախ զառաջինն ըստ կամաց բռնաւորին գործեր, և այլքն ապա մի ըստ միոջէ և առնակալք և գլխաւորք բնակիչք քաղաքիս՝ որ ընդ իշխանութեամբ բռնակալին էին, ՚ի նոյն խորհուրդս խորհրդեցան տեսեալ և կողմնակալացն ԵԹԷ այս է Հայոյ ինքնակալին, գրգռեցին և նոքա զամենեսին՝ որ ընդ ձեռամբ նոցա էին, զնոյն գործել։ Որոց վճռոյն կամակար ՀաձումԹեամբ ՀաստատուԹիւն տուեալ բռնաւորին, վերստին բորբոքեցաւ հրդեհ հալածանացն ընդդէմ մեր։ Եւ քուրմք կռոց յամենայն քաղաքս և քրմապետք ՚ի Մաբսիմինոսէ կարգեալք ՚ի

զոր ցանկայրն, այն որ ունէր զիշխանութիւնն, յարոյց ՚ի վերայ քրիստոնէից զգևն՝ յասել իւրում ԹԷ Աստուած հրամայեաց ԹԷ արտաքոյ սահմանաց քաղաքիս և ագարակաց որ շուրջ իցեն զնովաւ՝ հալածեսցին քրիստոնեայք, զի Թշնամիք են ասէ, նոքա Աստուծոյ։

Ցորրորդ. վասն խորհրդոցն որ գմեզ խորհեցան։

Իսկ իբրև գործեաց սա նախ զառաջինն ըստ կամաց նորա, և այլքն և սմենայն գլխաւորքն որ բնակեալ էին ՚ի քաղաքս որ էին ընդ իշխանութեամբ Թագաւորին այնորիկ, զոյս խորհուրդս խորհեցան առնել. զի սէսին գառաւորք որ յաշխարհն էին, ԹԷ ընդ այս ուրախ է Թագաւորն, գրգռեցին զամենայն որ միանգամ ընդ ձեռամբ նոցա էին՝ զոյն գործել։ Ելոյց և զխորհուրդս զայնոցիկ խնդութեամբ հրամայեաց անդրէն իշխանն ՚ի ձեռն հրովարտակաց իւրոց զի գործեսցեն և յայնժամ հալածանքն մեր վերստին բորբոքեցան։ Ապրիմք և քրմապետք կռոց յամենայն քաղաքս ՚ի ներին Մաքսիմինոսէ կացեալ լինէին որ առաւել պատուով պատուէին

վարձ հաւատարիմ ծառայութեան իւրեանց ՚ի պաշտամունս քաղաքականս և մեծապէս փառաւորեալք, յուզեցան շարժեցան և նորա ՚ի նախանձ մեծ ընդդիմին պաշտօն։ Եւ այսպէս ահա անհեթեթ մնոտիապաշտութիւն բռնաւորին զարթուցանէր գրգռել՝ հակիրճ ասել, զիշխանս նորա և զիշխեցեալսն ՚ի հնոր հուիս նորին գործել զամենայն ընդդէմ մեր. և զայս մեծ հնորհս փոխանակ բարեացն՝ զոր ընդունէլ ՚ի նմանէ կարծէին փութացին կանուխ հատուցանել նմին պարգև ընդ պարգևին, զկոտորածս, զնորանոր չարաբարոյ նենգութիւնս ընդդէմ մեր։

ԳԼՈՒԽ Ե.

Վասն սուտ յիշատակարանացն արձանագրութեանց։

Յօդեցին ապա և յիշատակարան ինչ Պիղատոսի դատաւորին Փրկչին մերոյ՝ լի հայհոյութեամբ ընդ Քրիստոսէ. և իբրև ՚ի կամաց անտի թագաւորին առաքեցին ընդ ամենայն գաւառս իշխանութեան նորա. հրամայեալ գրով եթէ յամենայն տեղիս ՚ի քաղաքս, ՚ի շէնս և յագարակս դիցեն զայն հրապարակաւ յայտնի, և զի ՚ի դպրոցս ուր ուսանին մանկունք

առաջնորդք որ կարի յոյժ փոյթ յանձին ունէին վասն պաշտամանն կռոցն որ պաշտէին զնոսա. բայց անչափ անթարշտութիւն առնորէն իշխանին՝ զամենայն իշխանս գլխաւորս, և զորս միանգամ ընդ ձեռամբ նոցա էին՝ յայս գրգռէր զնոսա, զի զամենայն ինչ գործեսցեն ընդդէմ մեր. օրպէս զի վասն գերբի նորա զայս հնորհս մեծ առնէին նմա փոխանակ բարեաց զոր կամին ընդունել ՚ի նմանէն, զի պարգևն փոխանակ պարգևի զապառնացին մեր տային և զարթութիւն մեաց զոր առ մեզ ունէին՝ նորոգէին։

Հինգերորդ. վասն դատակնքոց, զոր յօգեցին գտեսանել մերմէ։

Յօդեցին իսկ դատակնիք զփրկչին մերոյ և զՊիղատոսի որ լինէին հայհոյութիւնք չքրիստոսէ. և իբրև ՚ի կամաց անտի թագաւորին առաքեցան ընդ ամենայն տան իշխանութեան նորա։ Եւ հրամայեաց գրով ՚ի հրովարտակս իւր եթէ յամենայն տեղիս քաղաքս ՚ի շէնս և յագարակս ամենայն ուստիք յայտնի լսելի և տայն զնո-

զգալութիւն, փոխանակ ուսման յայն Թևակոխեցեն, և յուշի կալեալ զայն արտասանեացեն։ Եւ իբրև այս իրք գործէին, զօրագլուխ ոմն, զոր Հոռոմք դուքս կոչեն՝ յափշտակեաց ՚ի Դամասկոս Փիւնիկեցւոց զկնայս ոմանս լկտիս ՚ի հրապարակէն, և սպառնայր նոցա տանջանս և բռնադատէր ասել գրով Թէ յառաջ քրիստոնեայք էին, և Թէ գիտակ են անօրէնն պաշտամանն քրիստոնէիցն, և Թէ ՚ի նոսին իսկ ՚ի տունս աղօթից իւրեանց գործեն պղծութեան, և զայլ ինչ՝ զոր ինքն կամէր դուքսն զի ասասցեն կանայք զպաշտօնեայսն զկիրճից սրբութեան մերոյ։ Եւ արձանագրեալ դքսին զբանս կանանցն առաքեաց անդէն առ Թագաւորն. որ և հրամայեաց զի ընդ ամենայն տեղիս և ՚ի քաղաքս քարոզեսցին բանքս այս։ Այլ յետ ոչ բազմաց սոյն այս զօրագլուխ ընդ իւր ձեռն զիւրովին գնալով, զամբարշտութեան իւրոյ եղյծ զվրէժ։

սա ՚ի գալոյ որ ուսուցանէն զգպրութիւն. զի փոխանակ ուսմանն յայն Թևակոխեացին և կալցին զպիշտատկնոցա։ Եւ իբրև այս այսպէս գործեալ լինէին, այլ միւս ևս զօրագլուխ Հռոմոց գուքս կոչէին նմա ՚ի Դամասկոս փիւնիկեցւոց յափշտակեաց և էած ՚ի հրապարակ կանայս պիղծս և աղտեղիս, և հրամայեաց մատուցանել նոցա տանջանս մեզմով և ասկսէր ՚ի նոցանէ Թէ ասասցեն գրով, զի յառաջ քրիստոնեայք էին. և նոքա ասէանէին ՚ի նոսա գործս անօրէնս. Թէ ՚ի նոսին ասին ՚ի տունս աղօթից իւրեանց գործէին գործս պղծութեան և այլ ինչ զոր ինքն կամէր զի ասասցեն կանայքն վասն Թշնամանաց ուխտի տեառն մերոյ։ Եւ այն իսկ սա ՚ի գատաւորէսքս եղոյց Թագաւորին և հրամայեաց զի ընդ ամենայն տեղիս և ՚ի քաղաքս քարոզեսցին բանքս այս գրով։ Այլն իսկ այս զօրագլուխ յետ սակաւ ժամանակի ինքն ձեռաք իւրովք եսպան զանձն իւր և հատուցաւ զիրէժ գատաստանի զչարեաց իւրոց։

ԳԼՈՒԽ Զ.

Վասն այնոցիկ որ վկայեցին ՚ի ժամանակին։

Ի յուզել զարձեալ տարագիր փախստի և չարաչար հալածանաց ընդդէմ մեր, և ՚ի յառնել դատաւորաց՝ որ յամենայն գաւառս էին, խոստովեամբ ՚ի նեղել զմեզ, բազումք յայնցանէ որ երևելիքն էին ՚ի քարոզս աստուածային բանին՝ ըմբռնեալք ընկալան անհրաժեշտ զդատաստան մնոյս։ Զորոց երեքն յինմեսիայ քաղաքէն փիւնիկեցւոց իբրև խոստովան եղեն Թէ քրիստոնեայք են, գաղմանաց ընկենցան ՚ի գէշ. յորս էր Սիլուանոս եպիսկոպոս ծերունի անցեալ զաւուրբք, զքառասուն ամ վարեալ զպաշտօն եպիսկոպոսութեան։ Ի սոյն յայսմ ժամանակի և Պետրոս եպիսկոպոս եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց՝ որ բազում գոլութեամբ աքանչելապէս առաքինորեալ էր վիճակին, վասն հրաշալի վարուցն առաքինութեանց և հանապազորդ վաստակոցն և կրթութեան բանին Աստուծոյ անօթ էր ընտիր ՚ի կարգս եպիսկոպոսաց, յանկարծակի առանց պատճառաց, իբրու կարծիք ինչ յառաջագոյն չէին՝ յափշտակեցաւ, և իբրև ՚ի հրամանէ Մաքսիմինոսի հատաւ գլուխ նորա։

Վկայութիւն · վասն այնոցիկ՝ որ վկայեցին յայնմ ժամանակի։

Բայց զարձեալ փախուստն մեր յուզեցաւ և հալածանքն չարաչար. և գաւառաւքն որ յամենայն գաւառս էին զարձեալ խոստովեամբ կային ՚ի վերայ մեր. բազումք ըմբռնեցան յայնցանէ որ երևելիքն էին բանիւ աստուածպաշտութեան և ընկալան զդատաստանս մնոյս. պատրաստութեամբ իսկ երեք ՚ի նոցանէն յինմէ քաղաքէն փիւնիկեցւոց որ խոստովան եղեն Թէ քրիստոնեայ եղեն՝ գաղմանաց ընկենցան. զի մի ՚ի նոցանէն Սիլուանոս եպիսկոպոս էր և զքառասուն ամ վարեաց զպաշտօնն։ Որպէս ՚ի սոյն յայս ժամանակի Պետրոս եպիսկոպոս որ եկեղեցւոյն աղեքսանդրացւոց աքանչելապէս, այն որ անօթ էր Աստուծոյ վասն աքանչելի վարուց նորա, և հանապազորդ վաստակոցն որ ՚ի բանին Աստուծոյ էր. զի առանց պատճառանաց իսկ յափշտակեցաւ իբրու կարծիք ինչ յառաջագոյն չէին. յանկարծակի առանց իրաւանց իբրև ՚ի հրամանէ Մաքսիմինոսի հատաւ գլուխ նորա։ Ընդ նմին իսկ և

ընդ նմին և այլ բազում եպիսկոպոսք Յեգիպտոսէ զնոյն կրեցին։ Եւ Լուկիանոս երեց եկեղեցւոյն Անտիոքացւոց[2]. այր ընտիր առաքինի վարուքն և զգաստութեամբ, և ի վարդապետութեան սուրբ Գրոց կիրթ և հմուտ, ածաւ ի քաղաքն Նիկոմիդիա, զի անդ էր յայնժամ ինքնակալն, և ի խօսելն զպատասխանատուութիւն խոստովանութեան հաւատոց իւրոց առաջի դատաւորին, մանաւանդ ի բանտ և սպանեալ։ Եւ այսպէս ի սակաւ ժամանակի զօրացան խորհուրդք նենգութեան Մաքսիմինոսի առեցողին բարեաց, և զայս հալածանս չար քան զառաջինսն յարոյց ի վերայ մեր։

ԳԼՈՒԽ Է.

Վասն դատակնքոյն արձանագրելոյ, որ դրոշմեալ ի տախտակս եղաւ ի տեսիլ ժողովրդական հրապարակաւ։

Այս ի մէջ քաղաքաց՝ որ բնաւ երբեք չէր լեալ, զվճիռս քաղաքացւոց ընդդէմ մեր և զարքունի հրովարտակս ի տախտակս պղնձիս դրոշմեալ և հրապարակաւ դնէին։ Եւ մանկտին ի դպրոցս զՅիսուս և

այլ բազում եպիսկոպոսք Յեգիպտոսէ, զի երբէք զայս ինչ կրեցին նոքա։ Եւ Լուկիանոս գործեալ այր օր ամենայն իւիք առաքինի էր վարուք զգաստութեամբ և սուրբ վարդապետութեամբ կիրթ և հմուտ էր, զի էր նա երեց եկեղեցւոյն անտիոքացւոց, ածին զնա ի Նիկոմիդեայ քաղաք՝ զի անդ չէրէր յայնմ ժամանակի Թագաւորն, և նա զպատասխանին առաջի դատաւորին վասն վարդապետութեանն զոր աւետարանէր. մասնեցաւ ի բանդ և սպանաւ։ Եւ այսպէս ի սակաւ ժամանակի զօրացան խորհուրդք նենգութեան Մաքսիմինոսի առեցողին բարեաց. և զՀալածանսն զոր յարոյց ի վերայ մեր՝ չար էր քան զառաջինն։

Յորինորդ. վասն գրոյն որ գրեցաւ գմեզ յարձանս։

Խորհուրդքն իսկ խորհրդոց քաղաքացն որ զմեզ էր, և ընդ նոսին հրաման Թագաւորին ի մէջ քաղաքացն ի վերայ պղնձի արձանացն գրեալ լինէին՝ ինչ որ բնաւ երբեք չէր լեալ. և մանկտի որ ի դպրոցս ուսանէին, ի գաւազխոս զոր յօդեցին զիրիկին մե-

զՊիղատոս և զգատաւճիռն՝ զոր յօդեցին ՚ի Թշնամանս անարգանաց, ուսեալ և հանապազօր Թևակոխէին բերանօք իւրեանց։ Որ և ոչինչ անդէպ Թուի ինձ աստանօր դնել զգիր Մաքսիմինոսի՝ զոր ետ նա դրոշմել զինչ ՚ի տախտակս պղնձիս, զի միանգամայն յայտնապէս երևեսցի աստուածատեաց ժպրհուԹիւն ամբարտաւանուԹեան առնն. և արդար դատաստանքն՝ որ անբուռնն հսկէ ՚ի վրէժ ամբարշտաց՝ իսկ և իսկ ժամանեցին նմա. յորմէ տանջեալ և ոչ յետ բազմաց ՚ի խորհուրդս հակառակս ընդդէմ մեր լեալ և գրով օրէնս ետ. որոյ պատճէնն է օրինակ գայս.

Պատճէն ԹարգմանուԹեան ԹղԹոյն Մաքսիմինոսի որ ՚ի պատասխանի վճռոյ քաղաքաց ընդդէմ քրիստոնէից, ՚ի պղնձի տախտակաց անտի Տիւրոս քաղաքի փոխագրեալ։

Եւ ահա յառաջ քան զայս մարդկեղէն տկար խորհրդոյ համարձակուԹիւն ՚ի բաց յիւրքէնէ մերկացեալ զամենայն մոլորուԹեան զխաւար, և փարատեալ զաղջամուղջ մԹուԹեան, որ ոչ այնչափ ամբարշտացն, որչափ Թշուառ մարդկան զգայուԹիւնն կորստական խաւարաւ անգիտուԹեան պատեալ պաշարէր, և նկատեալ տեսին զի ՚ի բարեբար խնամակալուԹենէ դիցն անմահից ամենայն ինչ ուղղեալ և

բոյ, և զՊիղատոսի իբրև ՚ի Թշնամանս անարգանաց հանապազօր Թևակոխելին բերանօք իւրեանց։ Աստ երևի ինձ Թէ արժան է գնել զգիրն Մաքսիմինոսի զայն որ եդ նա զինչ ՚ի վերայ արձանացն, զի միանգամայն յայտնապէս երևեսցի ժպրհուԹիւնն և ամբարտաւանուԹիւնն և հպարտուԹիւնն և տանջուԹիւնն որ ընդ Աստուծոյ ունէր այրս այս։ Եւ արդար դատաստանքն որ ժամանեցին նմա, իսկ և իսկ այն որ ոչ ինչ էր ՚ի վերայ վրիժուց ամբարշտաց. զի իբրև տանջեաւ ՚ի նմանէն յետ սակաւ ժամանակի հակառակ այսոցիկ խորհեաւ նա և գրով օրէնս այլազգիս հրամայեաց ՚ի վերայ մեր։

Պատճէն մեկնուԹեան Մաքսիմինոսի, զոր հրամայեաց ընդդէմ խորհրդոյ, զոր խորհեցան զինչ, որ գրեցան զնմանէ, որ առաւ յարձանաց անտի՝ որ էին ՚ի Տուր քաղաքի։

Ահա և յառաջ քան այս ժպրհուԹիւն հիւանդացեալ խորհրդոյ մարդկուԹեան զօրացեալ և մերժեաց և խափանեաց յիւրքենէ զամենայն խաւար, զի մուտ մոլորուԹեանն այն որ յառաջ քան զսակաւ մի կորստեամբ խաւարին մոլորուԹեանն չբլեցաւ և գնաց զահաբրիչսն, և մանաւանդ զայնոսիկ որ առանց Աստուծոյ են. զի

Հաստատի։ Եւ այս գործ անհնարին է բանիւ պատմել եթէ քանի՛ խնդութեան առիթ մեզ եղեալ և հաճոյական և ընդունելի գտաւ, զի զմեծ հաւաստիս աստուածասէրը յառաջադէմ խորհրդոյդ ետուք ՚ի փորձոյ։ Եւ որ յառաջ քան զայս յայտնի էր ամենայն մարդոյ, թէ որպիսի պահպանութեամբ և երկիւղիւ առ դիս անմահս էիք դուք, որոց և ոչ դոյզն և ընդունայն բանիւք էին հաւատքն, այլ երևելի և հանապազորդ արդեամբք ծանուցեալ։ Վասն որոյ որպէս և արժան է և վայելուչ դիցի անմահից կայան և տեղի բնակութեան կոչել քաղաքիդ ձերոյ, զի և բազում օրինակօք յայտնապէս երևի թէ երկնաւորացն վերհից գալստեամբ և պանդխտելոյն առ ձեզ մեծապէս զարգանալ էր քաղաքիդ։ Արդ քաղաքդ այդ ձեր անփոյթ ամենևին որ ՚ի շահն ինքեան էր, և զոր երբեմն վասն գործառնութեանց իւրոց հասարակաց աղերսիւք առ մեզ դիմէք մոռացեալ ՚ի սպառ, իբրև լուաւ եթէ ունայնամիտ անիծապարտքն սկսանին խլրտեալ զեռալ վերստին, և իբրու խարոյկ անխնամ և խափուցեալ՝ կրկին արծարծելով հրդեհս մեծամեծս յարուցանել, իսկ և իսկ ՚ի մերս բարեպաշտութիւն՝

՚ի ձեռն հոգաբարձութեան բարերարութեան գիշն այնոցիկ որ ոչ մեռանին՝ ամենայն ինչ կերակրի և հաստատի։ Այս իսկ իբր չէն հաւատալի յորժամ ասիցեն. եթէ զնծրդ կալաք մեք շնորհ ուրախութեամբ և սիրով, թէ որպէս ետուք օրինակ ցուցանելի զնորհդոյդ ձերոյ դրից սրբութեանն. իբրու և յառաջ քան զայս յայտնի էր ամենայն մարդոյ, թէ որպիսի պահպանութեամբ և երկիւղիւ էիք դուք առ դիսն որ ոչ մեռանին այնոքիկ. որ ոչ եթէ դոյզն և ընդունայն բանիւք գիտեն զհաւատսս մարդկան, այլ երևելի և աքանչելի և հանապազորդ արգեամբք։ Վասն այսորիկ որպէս արժանի է վայելուչ գեղեցիկ քաղաքդ ձեր՝ պատրաստութիւն և տեղի բնակութեան գիշն որ ոչ մեռանին՝ կոչեցաք. յայտնի է այսուհետև բազում օրինակօք՝ թէ հանգստեամբ երկնաւոր գիշն ծավկեալ է դա։ Եայց անփոյթ արար քաղաքդ ձեր զնիս որ դիմի պահոյ էին, և ոչ փոյթ եղև դմա վասն խնդրուածոց իւրացն որ ՚ի բանէ գործին իսկ էին, այլ իբրև գիտայ թէ գործեալ միանգամայն սկսան անիծեալքն և տարապարտքն կչռամբել։ ամաչէ հուր, որ արհամարհեցաւ և չիջաւ։ մանաւանդ վերստին բոց նորա արծարծել և գործել հրդեհս մեծամեծս յայնմ ժամանակի, իսկ և իսկ յուսացեալ ապաւինեցաւ յարգարութիւն մեր՝ իբրև ՚ի մոյր առ մինայն քաղաքաց գիւցազնաւորութեանն պատրաստութեամբ ՚ի խընդրել իւրաքանչիւր բժշկութիւն և օգնութիւն. և զի նոյն այս խորհուրդք

իբրև 'ի մայր քաղաքաց պաշտամանց դից դիմեաց, 'ի ձեռնտու օգնականութիւն. զի և զայս խորհուրդս կենաբարս յայտ է եթէ վասն պաշտօնասէր հաւատոյ ձերոց աստուածդն ինքնին արկին 'ի ձեզ։ Արդ մեծն այն և բարձրեալն Յեսո՝ որ վերակացուն է մեծապայծառ քաղաքիդ ձերոյ, որ զՀայրենին զաստուածդ զկանայս և զորդիս ձեր և զընակութիւնս և զընտանիսդ փրկէ յամենայն կոտստէնէ՝ զարթոյց 'ի ձեզ զայս կամն կենաբարս, իբրու յայտնապես ցուցանելով թէ քանի մեծ է և փրկաւէտ օրինաւոր երկրպագութեամբ մերձենալ 'ի պաշտօն և 'ի նուէր աստուածոցն անմահից։ Եւ ո՞այն իցէ որ այնպէս աւանդ մտաց իցէ, որ ոչ զգայցէ թէ 'ի ձեռն բարեսէր կամաց բարերարութեան դիցն լինի, զի մի երկիր զաւանդեալ յինքեան զսերմանիսն զլասցէ, և զոյս մշակին վայրապար ակնկալութեամբ զրկեսցէ. զի մի անօրէնն պատերազմի տեսիլ ժամանեալ անարգել կառչիցի 'ի վերայ երկրի. զի մի ապականեալ խառնուածք երկնից՝ երաշտութեամբ աւերեալ եղծցին մարմինք 'ի մահ և յապականութիւն. և զի մի 'ի շնչել ուժգին հողմոց վերասցի ծով 'ի ձեռն ծփանաց ալեաց իւրոց, և ոչ 'ի յարձակել յանկարծակի մրրկի՝ գայցէ 'ի վերայ ձմեռն ապականիչ. և ոչ դարձեալ երբ

կենաբերք յայտնի է թէ դիցն արկին 'ի ձեզ վասն հաւատոց ձերոց։ Արդ այն Աստուածն մեծն և բարձրեալն Բէլշմին, այն որ բնակեալ է 'ի լուսաւոր քաղաքիդ ձերում, այն որ զՀայրենի դիցն նախնեաց ձերոց և զկանայս և զորդիս ձեր և զընակութիւնս և ընդ ամենայն ձեր փրկէ յամենայն կոտստէնէն ապականութեան՝ յանձինս ձեր զարթոյց զայս կամն կենաբարս իբրու յայտնէ և ցուցանէ, թէ որպէս աստուածէ այս և պարտչելի և հանդաստաբար, զի օրինաւոր երկրպագութեամբ մերձենացուք 'ի պաշտօն զոհից դիցն որ ոչ մեռանին։ Իսկ ո՞այն իցէ որ այսպէս առանց մտաց իցէ որ կարէ լինել առաք ամենայն արուս, զի ոչ գիտէ և ոչ զգայ Թէ 'ի ձեռն փութոյ պիղծութեան բարերարութեան դիցն լինէր, զի մի երկիր ուրացցի զսերմանիսն որ ստեակ լինին նմա, և զայս մշակաց զրկեսցէ և զլասցի և ոսեակ լինիցի այնուհետև ապաստուին անկնկալութեան նոցա, և ոչ զի պատերազմ ամբարշտաց 'ի հեռաստանէ առաքեսցի 'ի վերայ երկրի անարգել, և ապականեսցին խառնուածք երկնից, և հեղեղեսցին մարմինք 'ի մահ ապականութեամբ. և ոչ զի ծովն վերասցի 'ի ձեռն ծփանաց ալեաց իւրոց 'ի շնչել ուժգին հողմոց, և ոչ մրրիկք որ յանկարծակի յարձակեսցին և ածցին

կիր մայր և դայեակ ամենայնի ահագին դողմամբ. ի բարձանց անտի ի ծագաց իւրոց ընկղմեսցի. և ոչ լե-
րինք բարձունք խոթասոյզ ընկլուզցին ի վիհս։ Այս ամենայն չարիք և որ չար քան զայս յաւելուած քան զայս զսակաւ մի ոչ ոք անգիտանայ թէ ստեպ լինելիս, և ամենայն վասն ապականիչ կոծտական մոլորու-
թեան ունայնամիտ անօրէնն մարդկանն այնորիկ, որ ի ժամանակին յանձինս նոցա ի վեր երևեալ մոլորու-
թեանս, և իբրև այն թէ զամենայն տիեզերս ամե-
թով նախատանաց գրաւեալ կալաւ։ Եւ յետ սակա-
ւուս միոյ չարէ դարձեալ ի բանս իւր։

Դէտահն կալեալ Հայեացին, ասէ, ընդ լայնածա-
ւալ արտորայն զուարճացեալը ի հունձան, յորդ և
զեղուն ալեաց հասկացն ծածանելովք. և ընդ մարգս
և ընդ խաղս ծաղկուստս և մնկաբերս առատութեամբ
անձրևաց զուարթացեալս, և ընդ օդոց խաղաղական
հեղգիկ բարեխառնութիւնս, և խնդասէր ամենայն
մարդ զի ի ձեռն բարեպաշտութեան ձերոյ, պաշտա-
մանն և զոհից և պատուոյ հաշտեալ նուաձեցաւ ի
ձեզ աստուածութիւն հզօրին և ուժգնագունին Ա-
րեայ, վասն որոյ ի վայելս անդ լրիկ խաղաղութեան
ցնծացեալ բերկրեսցին։ Եւ ամենեքին որ միանգամ
ի կոյր և ի մոլորաշաւիղ ձանապարհէ անտի հեռա-

զձեռն ապականութեան. և ոչ դաբձեալ երկիր մայր և դայեակ ամենայնի՝ երկիւղիւ չարժմանց իւրոց ի ծագաց իւրոց ընկղմեսցի, և ոչ լերինք բարձունք լուծցին ի վիհ որ լինին։ Զայս ամենայն չարիք և որ չար քան զայս յաւելուած մի՝ ամենայն ոք գիտէր թէ լինելին. և ամենայն այս ի միասին վասն մոլորութեանն կոթսաեանն ընդունայնութեան անօրէն մարդկան լինելին. իբրու ի վերոյ քան զանձինս նոցա սիրեալ էր և իբրև այն թէ զամենայն տիեզերս ամէն տարածեալ ունէր։ Եւ յետ սակաւ մերմ ասաց դարձեալ։

Հայեացին, ասէ, ընդ դաշտս մեծամեծս որ զուարճացեալ ցնծան սիրաք նոցա ի ձեռն յորդ և զեղուն ալեաց հասկաց, և մարգք և խաղք ծաղկուաք՝ որ ինդան և ցնծան ի ձեռն բուսոց ծաղկանց վասն յորդութեան անձրևաց և ուղղութեան օդոց որ առեալ է խաղնուած հանգստեան՝ ինդասէր ամենայն մարդ. զի ի ձեռն բարիոք երկիւղիս մերոյ, և ի ձեռն պաշտման և զոհից և պատուոյ նուաձեցաւ աստուածութիւնն և զօրութիւն հաստատութիւնն օդոյն. վասն այսորիկ ուրախ լիցին ի հանգչել իւրեանց՝ լռութեամբ և խաղաղութեամբ ձնմարիտ հանգստեան, և ամենեքին

ցեալ՝ դարձցին յուղիղն և յառաջ խորհուրդս, մեծապէս յոյժ խնդասցին, քան որ յանահնկալ ձմեռանց և յուժգին հիւանդութենէ ապրեալք ի հեշտական արդիւնս պարգևելոյ կենացն վայելեցեն։ Ապա եթէ կացցեն մնասցեն յանխծեալ ունայնութեան անդ իւրեանց, մեկնեսցին նոքա և հալածեսցին ի քաղաքէ անտի ձերմէ և ի սահմանաց նորա որպէս աղաչեցէք՝ ի մեծ հեռաստան. զի այսպէս ըստ փութոյ պնդութեան ձերոյ, որ ամենայն գովութեան է արժանաւոր, ազատեալ քաղաքդ յամենայն պղծութենէ և յամբարշտութենէ, ըստ մնկակից ի դմա բարեսէր կամացն օրինաւոր երկրպագութեան աստուածոյն անմահից ի պաշտօն և ի զոհս հպատակեսցէ։ Գիտասջիք դարձեալ, թէ քանի՞ հաճոյական է մեզ աղերս խնդրուածոյն, զի և առանց վճռոյդ և խնդրոյ՝ ի լի կատարեալ կամաց յօժարեր բարեսէր իշխանութիւնս մեր ընդհակել ձեզ՝ որչափ ինչ խնդրիցէք, և մեծագոյն ևս յաւելուլ պարգևս ի դոյն չափ ձեր դիցասէր կամաց պատրաստականութիւն։ Եւ զսոյն իսկ զայս առնել և ընդունել ջանացարուք, զի անարգել և անյապաղ ի գլուխ տարեալ շնորհգ բարերարութեան քաղաքիդ ձերում ի յաւերժական վկայութիւն եղիցի կրօնասէր բարեպաշտութեան ձե-

որ միանգամ ի կուրութենէ անտի գարձան՝ օգտեցան՝ լի կատարեալ և եկին ի խորհուրդս ուղիղս և առաւելս. մեծապէս խնդասցին զի կորեցան նոքա յայնց կամ իրրև յուժգին ախտէ հիւանդութենց, և արդ պատրաստ թոյլատութեան կենաց հանգչին։ Ապա եթէ կացցեն մնասցեն յանխծեալ ունայնութեան անդ իւրեանց՝ ի հեռաստան բաղուածք ի քաղաքէ անտի ձերմէ և յիշխանութենէ դորա՝ որպէս աղաչեցէք, մեկնեսցին և հալածեսցին. զի այսպէս ըստ դորին փութոյ պնդութեան ձերոյ այսմիկ, այն որ արժան է գովութենան՝ հեռասցի քաղաքդ ձեր յամենայն պղծութենէ և ամբարշտութենէ. ըստ կամացդ որ անկեալ են ի դմա. և օրինաւոր երկրպագութեամբ դիցն որ ոչ մեռանին զբաղեսցին ի պաշտան զոհից։ Բայց եղիջիք դուք գիտել թէ արդարև սիրով ընկալաք մեք զայս աղօթս ձեր զի և առանց աղօթից և խնդրուածոց ի լի կատարեալ կամաց իրրև խնդալ և ցնծալ բարեսէր անձն մեր։ Համարձակիմք մեք պատուականութենդ ձերում զոր պարգև և մեծ կամեցիք՝ ընդ ուրիշ փոխանակ այսր դիցասէր կամաց ձերոց. զսոյն իսկ զայս գոյծել և առնուլ հրամայեցիք. զի ընդունելիք դուք զսոյն անարգել. զի յօրժամ ասցէ քաղաքաւ ձերում սոյն

ըոյ առ Աստուածս անմահս, զի փոխանակ այդոքիկ պատրաստական յաժարութեանդ յայս ի վայելչական կեանս ի բարեսէր կամսդ մերոց արժանաւոր վարձուց հանդիպեցայք դուք ի միջի, և ծանուսջիք ըզդմն որդւոց ձերոց, և որդւոց որդւոց ձերոց։

ԳԼՈՒԽ Ը.

Վասն անցիցն որ անցին ընդ նոսա յետ այնորիկ՝ ի սուրբ ի սրահոգիսն և ի պատերազմի։

Այդ այսոքիկ այնուհետեւ յամենայն գաւառս պետութեան ընդդէմ մեր հրապարակաւ ի տեսիլ ժողովրդեան դնէին, զի որչափ ի մարդկանէ էր՝ յամենայն յուսոյ բարւոյ մերժէին զմեզ. զի ըստ աստուածային բանին. նէթէ հնար իցէ դայթակղեցուցանել և զընտրեալս։ Քանզի իբրև առ բազումս դրեթէ ցամաքեալ հովանայր երկնաւոր այցելութեանն ակնկալութիւն, յանկարծակի որք դեռ ևս ի ձանապարհի էին պաշտօնեայքն թղթատարք՝ այն ինչ մտեալ ի գաւառս ուրեք, ահա Աստուած՝ որ վերամարտիկ օգնական է եկեղեցւոյ իւրոյ, ոչ միայն զխրոխտութեն

այս մատոյ ի ձեզ վկայութիւն բանիւ ոք յաւետարանից, և երկրպագութեանդ ձերոյ որ առ դիպոգ ունիք որ ոչ մեռանի, և ընկալեալ դուք պարգև ի բարեսիրութենէ անտի մերմէ, ըստ արժանի առաքինութեան ձերոյ փոխանակ այսր խորհրդոյ կենաց ձերոյ ձանապհեացի որդւոց ձերոց և որդւոց որդւոց ձերոց։

Որերորդ. վասն որոյ միանգամ եղև սուխ և մարդամահն ի պատերազմի։

Այդ այսոքիկ այնուհետեւ յամենայն գաւառս ի վերայ մեր եղեալ լինէին և քարոզեալ. զի իբրև ի մարդկանէ յամենայն յուսոյ բարւոյ մերժէին զմեզ. զի ըստ բանին Աստուածոյ որ ասէ, զի թէ մարթի իցէ՝ այսոքիմբք և ընտրեալքն գայթակղեսցին։ Իսկ իբրև լքան յուսոյ անտի, բազումք իբրու յայնժամ՝ ի նոյն ձանապարհի գնացին շրջէին ի գաւառս գաւառս որ պաշտէին զդիրս զոյս որ էգաւ ի վերայ մեր յանկարծակի, Աստուած այն որ նա ինքն է օգնական եկեղեցւոյ իւրոյ՝ ոչ միայն զպարծանս իշխանին որ ի վերայ մեր պարծէր՝ խափանեաց, այլ և զերկնաւոր օգնութիւնն իւր

բանաւորին որ ընդդէմ մեր կարկեալ ափիբերանեաց, այլ և զիւր երկնաւոր օգնականութիւն 'ի վերայ մեր եցոյց և յայտ արար։ Զի արտաքոյ սովորութեան Թո. նըլնկէզք տարափք ձմերայնոյ 'ի բաց տարան զերանա. կին զարմից, և սով անակնկալ 'ի վեր երևեցաւ, ընդ նմին և ախտ սրածութեան մահու. և միւս ևս այլ ախտ հիւանդութեան, որ էր կեղ ինչ՝ որ և վասն հրատեսակ երևմանն դերանուանապէս կայծակին ա. նուանէր. որ ընդ ողջոյն մարմնին զեռալով վիշտս մա. հու գործէը յայնոսիկ՝ որ ախտակրէին նովաս, զա. կամբք մանաւանդ բազմաց եկեալ, զբիւս արանց՝ Թող զկանայս և զմանկտի, 'ի տեսութենէն զրկեալ կուբացուցանէը։ Հանդերձ սոքիմբք յարեաւ և պա. տերազմ 'ի բռնաւորին ընդդէմ Հայոց, որք 'ի սկզբա. նէ անտի բարեկամք և մարտակիցք էին Հոռոմոց. զբրս քրիստոնեայս և յերկրպագութիւն Ճշմարտին Աստուծոյ փոյթս, նեղելով բռնաւորին առելոյն Աս. տուծոյ՝ զի կաց և դիւաց զոհեսցեն, փոխանակ բա. րեկամաց Թշնամիս, և փոխանակ նիզակակցաց պա. տերազմող ընդդէմ իւր յարոյց զնոսա։ Ել այս ամե. նայն յանկարծակի 'ի միում ժամանակի յորդեալ դիմեցին 'ի վերայ, և զաստուածամարտ ժպրհութիւն իշխանին զնրօխստուին ամբարտաւանութեան նորա՝

եցոյց, և յայտնի արար։ Անձրևն այնուհետև որ բան սովորութեան ձմերայնի, իջանէր յերկինք՝ արգելու. իսկ ամէն սաստկացեալ զո. բացաւ ուժգին, և ընդ նմին և ախտ հիւանդութեան մահու. և միւս ևս այլ ախտ հիւանդութեան որ էր նա կեղ զի բան նմանութեան նորին վասն արձրչյն իւրոյ անուանէր կայծակն, յարձակեալ գի. մէր 'ի վերայ նոցա և իբրև յամենայն մարմին վիշտս մահու գործէը յայնոսիկ որ վնասային նովաս. սակայն յայս բազմաց աւելագոյն լինէր, և զրկութս զարանց հանգերձ կամաքբ և մանկտով կորա. սանէր։ Հանդերձ այսոքիմբք յարեաւ 'ի վերայ նոցա անօրէն իշխա. նին պատերազմն այն որ ասացաք ևղև, որք որք խոկդրանէ բարե. կամք և օգնականք Հռոմոց էին, նոքա քրիստոնեայք էին և զերկրը. պագութիւն Աստուծոյ փութապես ստնդութեամբ կատարէին։ Իսկ ոյն այս առելի Աստուծոյ կամէր նեղել զնոսա զի զոհեսցեն կաց և գիւաց Թշնամեաց, և փոխանակ բարեկամաց 'ի մարտ պատե. բազմի յարոյց զնոսա ընդդէմ իւր։ Ել յանկարծակի այս ամենայն 'ի միում ժամանակի խառնային գային, և ժպրհութիւն իշխանին և ամբարտաւանութիւն նորուն որ ընդդէմ Աստուծոյ էր՝ յանդիմա. նեալ կըտամբեցին։ պարծանաք հպարտանայր եթէ վասն հոգաբար.

յանդիմանեալ կշտամբեցին. որ պանծանօք Հպարտանայր եթէ վասն պաշտօնասէր փութոյն իւր առ Աիս և վասն հալածանացն որ ՚ի վերայ մեր՝ ոչ սով և ոչ մարդամահ և ոչ պատերազմ յաւուրս նորա հանդիպեաց. և ահա այս ամենայն ՚ի միում ժամանակի միանգամայն եկին հասին ՚ի վերայ նորա, իբրև կապարտ անհրաժեշտ, անփախուստ կորստեան նորա: Աւրդ նա հանդերձ զօրօք իւրովք ՚ի պատերազմի անդ ընդդէմ Հայոց ՚ի բազում ուրեք հարեալ վատթարեր առաջի նոցա: Իսկ որ միանգամ ընդ իշխանութեամբ նորա բնակեալ էին ՚ի քաղաքս, սով և մահ սաստկեր զնոսա. որպէս զի մի գրիւ ցորեան երկուց հազարաց և հինգ հարիւր ատտիկեցի լուծայից փոխանակեր. զի թէպէտ բազումք յոյժ յամենայն քաղաքս, սակայն բազմագոյնք ՚ի շէնս և յագարակս մեռանէին. զի որ յառաջագոյն յաշխարհագրի անդ բազմամարդութիւն գիւղօրէից երևէր, յանկարծակի ՚ի նուազութենէ կերակրոյ և ի մահուն Ձարաւկեալ՝ քայ քայ ջնջեալ սաստկեցան: Ոմանք և ըզկարևոր սիրելիս իւրեանց ընդ սակաւ կերակրոյ վաճառել մեծատանց ոչ դանդաղեին: Իսկ այլք զտաւցուածս իւրեանց առ սակաւ սակաւ փոխանակէին ընդ կերակրոյ, մինչև եկին հասին ՚ի յետին կարօտութիւն չքաւորութեան: Իսկ և որ զչիւղս զապահան

ձուութեան իւրոց կուոցն, և վասն հալածանացն որ ՚ի վերայ մեր ոչ սով և ոչ մարդամահ, և ոչ պատերազմ յաւուրս նորա լինէին. այս իսկ միանգամայն և միւսմ ժամանակի յաճախեցին և կալան սկիզբն կորստեան նորա: Աւրդ նա հանդերձ զօրօք իւրովք ՚ի պատերազմի անդ որ ընդ Հայսն էր կռփեալ լինէր. իսկ զայնն որ միանգամ ընդ իշխանութեամբ նորա եկին որ բնակեալ էին յամենայն քաղաքս՝ սով և մահ սաստկէր: Որպէս զի մի գրիւ ցորեան և երկուց հազարաց և հինգ հարիւր լուծայի սուակաւ լինէր: Բիւրք իսկ էին որ յամենայն քաղաքսն մեռանէին, և բազումք ՚ի նոցանէ այնքիկ որ ՚ի շէնսն և յագարակսն էին. որպէս զի որ յառաջագոյն յաշխարհագրի անդ գրեալ էին բազումք էին քայք քայք, և ջնջեալ ջնջեցան. զի յանկարծակի ՚ի նուազութենէն կերակրոյն և հիւանդութենէն մահաւոր ապականեցան: Իսկ ոմանք և զօրից իւրեանց սիրելիս ընդ սակաւս կերակրոյ մեծատանց վաճառէին: Իսկ կէսք զտաւցուածս իւրեանց առ սակաւ սակաւ վաճառէին, մինչև եկին հասին ՚ի կատարած ապականութեանն պակասութեան: Նոյ այլք խոտ ուտէին, և բանջար խառնոյանքիւր որ ապականու-

խոտոյ ծաղկելով և զբանչքար խառնաբանչքար ուտելով՝ զզօրութիւն առողջութեան մարմնոյ իւրեանց ապահանեալ եղծանէին։ Եւ ունէք իսկ յաղագս կանուխն առ յետին կարօտութեան առանց ամենայ էկեալ՝ ի հրապարակս մեւրանայինս, որոց երեսացն ամենի խածութիւն և ցածութիւն հանդերձից՝ շատ իսկ յայտ առնէին զազատական իւրեանց երեւիմն մնուդ և զդաստիարակութիւն։ Իսկ և որ միանգամ ցամաքեալ՝ ի սովոյ՝ ի հոգեվարս անդ իւրեանց իբրև զբուսականս մեռեալս այսր անդր դանդաչէին, և չընդհարկանէր ընդ ումեք զթեալ անյարիր կօրճան յերկիր անկանէին՝ ի հրապարակս. և՝ ի սոդալն՝ ի գետին աղաչէին կարկառել նոցա պատառիկ մի հացի. և յետս անդ չնչոյն՝ աղաղակէին եթէ՝ նրբողեալ են, այնմ ձայնի դառնութեան միայն զօրելով։ Իսկ որ մեծատունքն էին ընդ բազմութիւն աղաչաւոր կարօտեալոյն զարմացեալ, յետ բիւրաւորաց՝ ի նոցանէ սատակելոց, յանդողոմ միտս խոտութեան գային, զի խղճէին թէ գուցէ և ինքեանց ևս ընդ հնոպ որպէս մուրացկացն այնոցիկ լինիցի։ Եւ եր այնու հետև տեսանել ողորմ տեսիլ՝ ի հրապարակս և՝ ի փողոցս մարմինս մեռեալս մերկս և անթաղս զաւուրս բազումս, յորոց ումանք և շանց եղէն կերակուր։ Եւ վասն այսորիկ՝ որք

Թիւն գործէր ուտելն, և զչամաշաւութիւն մարմնոց իւրեանց ապականէին և կորուսանէին։ Նա և կանայք երեւելիք իբրև քաջ յետն՝ ի հարկէ կարօտութեանն՝ առանց ամենայ ելանէին՝ ի հրապարակս և մուրանային իբրու զօրինակ կերակրոյն որ ազատութեանն յառաջուստ՝ ի ձեռն պատճառանաց երեսաց իւրեանց և ցածութեան հանդերձից իւրեանց ցուցանէին։ Իսկ և որ միանգամ ցամաքեցանն՝ ի սովոյ անտի՝ իբրև պատկերք մեռելոյք այսր և անդր շարժէին. և յորժամ հարկանէին ընդ նոսա անձինք իւրեանց և գայթակղէին. և որ ոչ կարէին յառնել կօրճանէին և անկանէին՝ ի հրապարակս. Իբրև անթիւ գնէին ազաչէին զի կարեւորեացեն նոցա հաց պատառ մի, իբրև չուշչք իւրեանց մերձ էին յեւլանել։ Որք նրբողեալ էին ազաղակէին. և այնմ ձայնի գառնութեան միայն զօրէին։ Իսկ որ միանգամ մեծատունքն էին՝ զարմացեալ էին ընդ բազմութիւն այնոցիկ որ ինդրէին, յետ տալոյն նոցա յոյժ յանողոմ ընդ միտս խոտութեան էին, զի խղճէին նոքա թէ գուցէ լինիցէ և նոցա ևս որպէս նոցայն. և յայնմհետէ՝ ի մէջ փողոցաց և հրապարակաց մարմինք մեռեալք մերկք ընկենկեալ կային, իբրու չէին թաղալ զաւուրս բազումս. և տեսիլ անթղթութեան տեսո-

կենդանիքն էին ձեռն արկին կոտորել զշունս, երկու- ցեալ զի մի կատաղեալ նոցա ՚ի մարդակերութիւն յողջ մարդիկ անդր համարձակեսցին։ Եւ ձարակէր մարդամարտն յամենայն տունս, մանաւանդ յայնս՝ ո- րոց ոչ կարէր ստանանել սուին, զի ընդարձակագոյն էր նոցա դարման կերակրոցն. իշխանք, դատաւորք և բազ- մութիւն մեծամեծ մարդկան որք ապրեցան ՚ի սովոյ անտի՝ յախտէ մահաբեր երագ և վաղվաղակի սպա- ռեալ լինէին։ Ամենայն լի էր ողբով, ամենայն ուս- ումք ՚ի հրապարակս և ՚ի փողոցս լսելի լինէին լալիւն և հեծութիւնք, և չէր այլ ինչ տեսանել, բայց կոծ և աշխար ըստ սովորութեան նոցա ՚ի սրինգ և ՚ի ձայ- նատուր ազազակս։ Եւ այսպէս կրկնակի գինուքն սո- վու և սրածութեամբ պատերազմեալ մահ, ՚ի սակաւ ժամանակի լիզաջինդ արար զողջոյն իսկ ընտանիս, որ- պէս զի երկու և երեք մեռեալս միանգամայն ՚ի միում ժամու տեսանէր մարդ հանել ՚ի միոյ տանէ։ Եւ այս եղև հատուցումն մեծապատիւ Մաքսիմինո- սի և խորհրդոց քաղաքաց ընդդէմ մեր. և յայտնի եղև յայնժամ յամենայն ազգս հեթանոսաց փոյթ մարդասիրութեան քրիստոնէից և բարեպաշտութիւն. զի նոքա միայն յայս ամենայն նեղութիւնս չարեաց՝

զայն ասային, զի և բազումք էին որ չանց կերակուր եղեն։ Եւ վասն այսր պատճառանաց որք միանգամ կենդանին էին կոտորել զշունսն դարձան յերկիւղ, զի մի կատաղեսցին և համարձակեսցին ուտել զմարդիկ։ Բայց և մարդամարտն յամենայն տունս տարածէր և մա- նաւանդ զայնոսիկ որ ոչ կարէր սուին ապահանել. քանզի ընդարձ- ակագոյն էր նոցա դարման կերակրոցն։ Արդ գլխաւորքն այնու- հետև, և մեծատունք և դատաւորք, և բազմութիւն մեծամեծ մարդկանն որ մնացին ՚ի սովոյ անտի, նոքա յայնմապէս ախտիւ մահաբեր երագ և վաղվաղակի սպառեալ լինէին յամենայն տեղեաց. իսկ լալիւնն և ողբումն լինէին հրապարակք և փողոցք և չէր ինչ- տանէլոյ բայց հանգերձ երդոցն և կոծոցն։ Այսպէս իսկ, որպէս զի կանխեցաք յառաջագոյն ասացաք, պատերազմեցաւ մահ այս երկու զինուքս այսինքն՝ սովիւն և ախտիւն տարածեցաւ ՚ի սակաւ ժամանակի, և լիզաջինդ արար զամենայն ազգս մարդկան որպէս զի երկուս և երիս մեռեալս միանգամայն ՚ի միում ժամու տեսանէր մարդ զի յոչնչանայր։ Որ իբրև զայս եղև հատուցումն պարծա- նոց Մաքսիմինոսի Թագաւորի և խորհրդոց քաղաքաց որ ՚ի վերայ մեր խորհէին. իբրու այնգութիւնն և տառապութիւնն քրիստոնէից որ ամենայն իւրք յամենայն ազգս հեթանոսաց յայսմ եղև օրի-

գործոյք ողորմութեան փայլէին. քանզի էր որ զմեռեալսն՝ ի բիւրաւորք էին անխնամ լքեալքն, զոր հանապազ խնամով յուշարկէին՝ ի Թաղումն, և էր որ զսովեալսն՝ ի մի վայր ժողովեալ և ամենեցուն նոցա հաց բաշխէին, որպէս զի համբաւ իրացս առ ամենայն մարդիկն քարոզեալ լինէր. և զաստուածն քրիստոնէից փառաւոր առնէին, ՚ի խոստովանելն իւրեանց Թէ սոքա միայն են ստոյգ աստուածապաշտքն և պաշտօնասէրքն յարդեանց անտի իրացն երևեալ: Եւ իբրև այսոքիկ այսպէս ՚ի գլուխ եղեալ կատարէին, Այսուհետև այն մեծ յերկնից վերամարտիկ Քրիստոնէից, իբրև եցոյց զաստ բարիութեան իւրոյ առ ամենայն մարդիկ, փոխանակ զի չարաչար ընդ մեզ գնացին, զմարդասէրն խնամոյ իւրոյ դարձոյց առ մեզ միսանդամ զզուարթագին լոյս, և իբրև ՚ի մուխ խաւարի ծագեաց մեզ սքանչելապէս քան զամենայն ակնկալութիւն զլոյս խաղաղութեան, և յայտ արար ամենայն մարդոյ Թէ նա ինքն է Աստուած այցելուլ հանապազօր իրաց մերոց, որ ընդ ժամանակս ժամանակս տանջէ և պէսպէս նեղութեամբ խրատէ զժողովուրդ

նաին նոքա: Արդ նոքա միայն իբրև յայս ամենայն նեղութիւն չարեաց վիշտ և ողորմութիւն գործոց հանապազօր յուսացանէին, էր՚ որ յուշարկելով յուշարկին և Թաղէին զմեռեալսն, բայց բիւրք էին որոց ոչ որ փոյթ առնէր զնոցանէն և էր՚ որ զայնոսիկ, որ առնջեալ և մաշեալ էին ՚ի սովոս յամենայն քաղաքս, ՚ի մի վայր ժողովէին զնոսա և հաց բաշխէին ամենեցուն նոցա և այն այս իբրև առ ամենայն մարգիկ քարոզեալ երևեալ լինէին և զԱստուածն քրիստոնէից փառաւոր առնէին ՚ի խոստովանելն իւրեանց Թէ սոքա միայն են ստոյգ աստուածապաշտ Աշխարհիս որք միանգամ ՚ի նոցանէ իրաց անտի երևեցան Թէ են նոքա:

Իննևերորդ · վասն չարաչար կործանման կենացն իշխանաց:

Եւ իբրև այս այսպէս գործեալ լինէին, Աստուած մեծ և երկնաւոր և օգնական քրիստոնէից իբրև եցոյց զսքանչելութիւն այսոքիկ որ ասացաքն առ ամենայն մարդիկ, փոխանակ այսոցիկ որ ասացինս առ մեզ խաւարեմամբ, յայնժամ ՚ի ձեռն հոգւոյսրձանեան որ ՚ի վերայ մեր սերով և ուրախութեամբ, գարձեալ միւսանգամ դարձոյց զմեզ և իբրև ՚ի մուխ խաւարի լոյս խաղաղութեան ծագեաց մեզ նորոգապէս, և եցոյց և յայտնի արար ամենայն մարդոյ Թէ նա ինքն է Աստուած և նա ինքն է այցելուլ մեր հանապազօր ամենայն իրօք որ ասացինք ամենայն նեղութեամբ և խրատէ զժողո-

իւր. և զարձեալ յետ բաւական խրատուն՝ հաձի և հաշտի ընդ այնոսիկ որ յուսան 'ի նա։

ԳԼՈՒԽ Թ.

Վասն կործանմանն և կոյստեան քռնաւորաց, և թէ զի՛նչ վերչին բանք նոցա՝ յառաջ քան զվախձան մահուն։

Սրդ իբրև եհաս Կոստանդիանոս յինքնակալու-Թիւն, զոր ինքնակալի բարեպաշտի զգօնագունին յիշ-խանս արժանաւոր որդի և պայազատ ասացաք, և երկրորդ Նորա յիշխանութեան Լիկինոս խոհակա-նութեամբ և քաջութեամբ ոչինչ նուազ պատուեալ յայնժամ։ շարժեցան երկոքին Թագաւորքս այսոքիկ աստուածասերք յամենաթագաւորէն Աստուծոյ և 'ի փրկչէն ամենեցուն ընդդէմ երկուց աստուածատեաց քռնաւորացն. և ըստ օրինաց պատերազմ տուեալ, և մարտակից օգնականութեամբն Աստուծոյ սքանչելա-պէս վանեալ. Մաքսենտիոս առաջի Կոստանդիանու փախստեայ անկանէր 'ի Հռոմ, և քռնաւորն արևե-լից Մաքսիմինոս ոչ յետ բազմաց ամաց վատթարեալ առաջի Լիկինեայ՝ որ չև ևս էր մոլեգնեալ յայնժամ, և մեռաւ չարաչար։

վուրդ իւր յամենայն ժամանակի, և զարձեալ յետ խրատուն շա-հեղոյ հաձի և հաշտի ընդ այնոսիկ որ յուսան 'ի նա։ Իբրև եկաց Կոստանդինոս այն որ ասացաքն զնմանէ. եթէ եղև Թագաւոր որ-գի Թագաւորի, և տոհմ որգի տոհմի և ամենայն իւիք զգաստ այն որ 'ի նմին յԱստուծոյ Թագաւորել ամենայնի և փրկչէն մերմէ Ցիսուսէ Քրիստոսէ, ընդդէմ անօրէնն և ամբարիշտ իշխանացն եկաց պատերազմաւ և ըստ օրինաց պատերազմի պատերազմեցաւ ընդ նոսա. և իբրև Աստուած օգնական էր նմա սքանչելապէս և անկաւ 'ի Հռոմ քաղաք փախստեայ Մաքսենտիոս իշխան չարեսացն Կոս-տանդիանոսի։ Իսկ այն իշխանն որ յաբեկեալ էր, իբրև տակաւ ժամա-նակ եկաց զնոսա և նա անարգութեամբ մեռաւ 'ի Լիկինոսէ յայնմանէ որ յայնմ ժամանակի, որ յայնժամ չէր մոլեգնեալ։

Ա.Դր Նախ ի սկզբան Կոստանդիանոս՝ որ պատուով և կարգաւ իշխանութեան առաջին էր, խնայեալ յայնոսիկ որ կռփեալն լինէին ի բռնաւորէ անտի ի Հռոմ քաղաքի, զԱստուածն երկնից և զՅիսուս Քրիստոս կարդաց աղօթիւք օգնական նմա լինել, և խաղաց զօրաց գալ դարձուցանել Հռոմայեցւոց զհայրենի ազատութիւն նախնեաց իւրեանց։ Իսկ Մաքսենտիոս յարուեստգիտութիւն կախարդաց յուսացեալ առաւել քան ի սէր այնոցիկ՝ որ լսէին նմա. և ոչ սակաւ մի համարձակէր ելանել ի քաղաքէն, այլ անթիւ բազմութեամբ քաղաքացւոց, և բիւրաւորաց վառելովք զինու և հեծելոց սպառազինեաց յաստիճանաց քաղաքաց և գաւառաց՝ որ շուրջ էին զՀռոմ քաղաքաւ, և յողջոյն Իտալիոյ՝ որ հնազանդէին նմա, գումարեալ ամփոփայր. իսկ օգնականութեամբն Աստուծոյ զօրացեալ Կոստանդիանոս գայր և մերձենայր. յառաջին յերկրորդ և յերրորդ բանակս զօրաց բռնաւորին, և խորտակեալ զնոսա միանգամայն ի փախուստ դարձուցանէր, և անարգել Ճանապարհ

Տասնեւերրորդ. վասն յաղթութեան բագաւորաց սիրելեաց Աստուծոյ։

Ա.Դր Նախ զառաջինն Կոստանդիանոս այն որ պատուով և կարգաւ արքայութեան առաջին էր, խնայեաց յայնոսիկ որ կռփեալն լինէին յիշխանէ անտի ի Հռոմ քաղաքի և կարգաց աղօթիւք զԱստուածն երկնից և զԱն նորա, զի նա ինքն է փրկիչ ամենայնի սէր մեր Յիսուս Քրիստոս, լինել նմա օգնական. և եղ տալ պատերազմ հանդերձ ամենայն զօրաւք. զի փոյթ եղև նմա դարձուցանել Հռոմայեցւոց զհայրենի ազատութիւն նախնեաց իւրեանց։ Իսկ Մաքսենտիոս յարուեստգիտութիւն կախարդաց յուսացեալ ապաստաներ առաւել քան ի սէր այնոցիկ որ լսէին նմա, այլ ելանէր ի քաղաքէն և ոչ սակաւ մի համարձակէր նմա, բայց վառելովք զինու անթիւ բազմութիւնն զբիւրս զօրաց հեծելոց սպառազինեաց յամենայն գաւառաց և քաղաքաց որ շուրջ էին զՀռոմ քաղաքաւ, և զիստացուցն որ հնազանդեալ էին ընդ ձեռամբ նոցա գումարեաց։ Իսկ Կոստանդիանոս արքայ այն որ օգնականութեամբն Աստուծոյ վարեցաւ, մերձեցաւ առ մի և առ երկուս և առ երիս բանակս իշխանին, և հնազանդեցոյց զնոսա զօրեզօպս, և մերձենայր ասկաւ և մնաներ յաշխարհն խաղաղաց։

արարեալ յԻտալիա գայր հասանէր մեծ ի Հռոմ քաղաք։ Եւ զի մի ի պատճառս բռնաւորին նեղեսցի նա ի հարկէ տալ պատերազմ ընդ Հռոմն, ինքնին Աստուած իբրև կապանօք ձգեաց ետես զիշխանն արտաքս քան զդուռն քաղաքին, և որ ինչ միանգամ հրաշագործեալքն երբեմն ի սուրբ գիրս ի վերայ ամբարշտաց՝ յառասպելս համարեալ լինէր ի բազմաց և հաւատացելոց միայն էին հաւատալի, նոյն արդ հաւատացելոց և անհաւատից արժանահաւատ գտաւ իբրև հայեցան և տեսին աչօք իւրեանց զսքանչելին։ Եւ զոր օրինակ յաւուրսն Մովսիսի, և աստուածապաշտ առաջնոյ տոհմին երբեմն հայեցեալ՝ զկառս և զերիվարս փարաւոնի ընկղմեալ ի ծով, և ընտիր ընտիր սպառազէնք նորա ընկղմեցան ի ծովն կարմիր և անգունդք ծածկեցին զնոսա, նոյնպէս և Մաքսենտիոս և սպառազէնք որ ընդ նմա՝ ընկղմեցան ի խորս իբրև զվէմն, ի ժամանակին իբրև գարձուցին Թիկունս աւազի զօրութեան Աստուծոյ՝ որ էր ընդ Կոստանդիանոս։ Եւ մինչդեռ անցանէր նա ընդ գետն այն՝ յորում ինքնին կցելովք նաւուք նաւակամբքն էր գործեալ, հնարս կորստեան անձին իւրում նիւթ ելով. յորոյ վերայ իրաւամբ ոք ունիցի ասել. Գուբն զոր փորեաց և

Մեկնաբանություն. վասն առաջին կորստեան բշնամեացն աստուածպաշտութեան։

Իսկ իբրև եկն ետես ի Հռոմ քաղաք զի մի առանց պատճառանաց իշխանին նեղեսցի նա ի հարկէ տալ պատերազմ ընդ Հռոմն, ինքնին Աստուած իբրև կապանօք ձգեաց ետես զիշխանն արտաքս քան զդուռն քաղաքին և որ ինչ միանգամ յառասպելս ասացեալ էին ի վերայ ամբարշտաց, և իբրև պատմութիւն համարեալ լինէին բազմաց որ ինչ գրեալ են ի գիրս սուրբս և չէին հաւատալի բայց միայն հաւատացելոցն։ Յայնմ ժամանակի նովին գործոցք հաւատացելոց և անհաւատից հաւատալի եղև, իբրև հայեցան և տեսին աչօք իւրեանց զսքանչելին։ Եւ զոր օրինակ յաւուրսն Մովսիսի և առաջնոյ հերբայեցւոց, զի զկառս և զերիվարս փարաւոնի ընկէց ի ծով, և ընտիր ընտիր սպառազէնքն նորա ընկղմեցան ի ծովն կարմիր, և անգունդք ծածկեցին զնոսա, այնպէս և Մաքսենտիոս և սպառազէնքն որ ընդ նմա՝ ընկղմեցան ի խորս իբրև զվէմն, ի ժամանակի իբրև գարձուցին Թիկունս զօրուն Աստուծոյ՝ որ էր ընդ Կոստանդիանոսի։ Եւ մինչդեռ անցանէր նա ընդ գետն այն որ ինքնին շարժեաց ի նա զնաւն և գործեաց կամուրջ ի վերայ գան նորա, և նիւթեաց արուեստագիտութիւն կորստեան անձին

պեղեաց, 'ի նոյն անկայի 'ի խորխորատ զոր և գոր-
ծեաց։ Դարձեալ ցաւք 'ի գլուխ նորա և 'ի վերայ գա-
գաթանն նորա անօրէնութիւնք իւր ինքեան։ Զի 'ի խըզ-
նել մարգկութեամբ նաւակամբջին, քակեալ կը-
ցուածք նաւացն, և լի լեալ նոցին նաւայն բազմու-
թեամբ զօրուն՝ ընկղմեցան 'ի խորս, և նախ ինքն իսկ՝
անօրէնն և ամբարիշտն և ամենայն բարեկամք իւր
ընդ նմա, որպէս զի ասէ բան գրոյն Թէ. Ընկղմեցան
իբրև զկապար 'ի ջուրս սաստիկս։ Որպէս զի յիրաւի՝
Թէպէտ ոչ բանիւք, սակայն արդեամբք նոցին հման
որ զմեծ պաշտօնեիւն Աստուծոյ զՄովսիսաս զառ ԱՒս-
տուծոյ գլաղթութիւնն երգեալ որ երբեմն 'ի վերայ
ամբարիշտ իշխանին Ժամանակին այնորիկ՝ օրհնես-
ցուք և ասասցուք. Օրհնեսցուք զՏէր, զի փառօք է
փառաւորեալ, զերիվարս և զհեծեալս նոցա ընկէց 'ի
ծով։ Օգնական և ընդունելի իմ Տէր, և եղև ինձ 'ի
փրկութիւն։ Ո՞ նման է քեզ ԱՒստուածս Տէր, և ո՞
նմանիցի քեզ փառաւորեալդ 'ի սուրբս, սքանչելի
փառօք որ առնես զնշանս և զարուեստս։ Զայս և որ
իբրև զոսոս և տատել քան զոսոնկս Կոստանդիանոս
օրհնելով զԱստուած զառաջնորդ և զտուիչ յաղթու-
թեան մնանէր 'ի Հռոմ։ և ամենեքեան քաղաքօրէն

*իւրոյ· զի 'ի վերայ նորա ասասցուք Թէ գուբ փորեաց և պեղեաց
զնա, և անկայն 'ի խորխորատ զոր գործեաց, գարձցին մեզք նորա 'ի
գլուխ նորա և 'ի վերայ գագաթան անօրէնութիւնն։ Զի այն այս
յօգուտս, որ չարժեցաւ 'ի վերայ գեաղն՝ իբրև լցաւ կամուրջն
մարգկամբ՝ յանկարծակի քակեցան, և ընկղմեցան նաւքն 'ի խորս
իբրու լին էին մարգկամբ. և նախ ինքն իսկ անօրէնն և ամբարիշտն
և ամենայն բարեկամք իւր ընդ նմա, որպէս զի ասէ բան գրոյն Թէ
ընկղմեցան իբրև զկապար 'ի ջուրս յորդիս։ Եւ յայնմ հետէ Թէպէտ
ոչ բանիւք սակայն նոյնմբեր արդեամբք իբրև զայնոսիկ զՄովսե-
սեան ասեն զնաւապիղն Աստուծոյ որ առն յԱստուծոյ զաղթու-
թիւն, և զայն զայս որ 'ի վերայ ամբարիշտ իշխանին առաջնոյ ա-
սացաւ, օրհնեսցուք և ասասցուք և ասա. Օրհնեսցուք զտէր զի
փառօք է փառաւորեալ, զերիվարս և զհեծեալս նոցա ընկէց, օգ-
նական և պաշտպան իմ տէր և եղև ինձ փրկութիւն։ Որ է իբրև
զքէզ տէր, որ է նման քեզ յԱստուածս, որ է իբրև զքեզ փառա-
ւորեալ 'ի սրբութեան իւրում յահաւոր և սքանչելի, և գործէ
զնշանս և զարուեստս զայս. որ իբրև զոսոս և տատել քան զոս-
սին։ Կոստանդիանոս նովին գործովք յօրհնելն իւրում զԱստուած,
առաջնորդ ամենայնի և տուիչ յաղթութեան Հռոմայեցւոց մնա-
նէր փառօք յաղթութեան. և ամենեքեան յանկարծակի հանգերձ*

կանամբք և մանկտով, և ծերակուտիւն հանդերձ և ազատորերովն և ժողովրդեամբ Հռոմայեցւոց լուրջ երեսօք և զուարթ անձամբ իբրև ազատարար և փրկիչ և բարերար փառաւք մեծաւ և բազում ուրախութեամբ ընկալան զնա։ Իսկ նա՝ որում տնկակիցն էր աստուածպաշտութիւն, ոչ ի ձայնից անտի ցնծութեան ամբոխին փոփոխեր ինչ ի մտացն կամ խոովեր, և ոչ ի ծափահար գովութեանց բարձրամտեր, այլ քաջիկ հասու լեալ աստուածայնոյն օգնականութեան՝ հրամայեր անդէն զչարչարանաց և զպաղծութեան նշան փրկչին տալ ի ձեռս պատկերին իւրոյ պատրաստելոյ։ Քանզի կանգնեցին կացուցին Հռովմայեցիք ի նշանաւոր տեղւոջ ի հրապարակի ուրեք Հռովմայ զանձնապատկեր ինքնակալին, տալով յաջ ձեռն նորա զնշան փրկչական խաչին, դրոշմելով ի նմա ի բարբառ հռովմէական

> *Նշանաւս փրկական, որ Աշմարիտ զօրութեան է նշանակ, ազատեալ զքաղաքդ ձեր ի լծոյ բռնակալին ապրեցուցի. և զծերակոյտն և զՀռովմէական ժողովուրդն յառաջին պայծառ փառաւորութիւն անդր դարձուցի։*

Եւ յետ այնորիկ Կոստանդիանոս և գահակից նորա Լիկիանոս, որ ի ժամանակին չև ևս էր անկեալ ի մե-

կանամբք և մանկտով սինգղիտոսին և պատուական մարգիին հանդերձ ամենայն ժողովրդեամբն հռոմայեցւոցըզ երեսօք և զուարթ անձամբ իբրև զիփրկիչ և զնիճգանձարար և զբարերար խրճանդ փառաք և բազում ուրախութեամբ ընկալան զնա։ Իսկ այն որ ըստացեալ ունէր զաստուածպաշտութիւն, իբրև այն թէ անկելով անկեալ էր ի նմա, ոչ խռովէր ի ձայնից, և ոչ բարձրանայր ի գովեստից. քանզի յոյժ հասու լինէր օգնականութեանն Աստուծոյ։ Եւ յայնմ ժամանակի հրամայեաց եհեծ յաղթութեան նշանի փրկչին մերոյ ի կապերաս նորա գրոշմեացին, իբրև ուռնիցի յաջ ձեռն իւր զնշան փրկութեան մերոյ, այսինքն զխաչ։ Եւ կանգնեցին կացուցին ի նշանաւոր տեղւոջ ի հրապարակի ի Հռոմ քաղաքի. և գրեցին ի վերայ նորա ի լեզու հռոմկարէն այսպէս. ի ձեռն այսր նշանի փրկութեան որ է սա յանդիմանիչ զօրութեան, զքաջագոյն ձեր ի լծոյ անախ անօրէն իշխանին փրկեցե և ազատեցե զսինգղիտոսն և զամենայն ժողովուրդն հռոմայեցւոց, յառաջին փառաւորութիւնն և ի լուսաւորութիւնն գարձուցե։ Եւ հանգերձ այնու-

լեգնութիւն՝ յոր չքնեցաւն յետոյ մնոք, երկոքին սո-
քա զԱստուած՝ որ եղև պատճառ ամենայն բարեաց,
օրհնեցին և փառաւորը արարին, և միով խորհրդով և
կամօք օրհնս կատարեալը անթերիս ապատութեամբ
եդին վասն քրիստոնէից։ Եւ զբանչելիս յառ Աստու-
ծոյ և գյաղթութիւնն՝ի վերայ բռնաւորին, և զսոյն
զայս օրհնս գրեալ ետուն տանել առ Մաքսիմինոս՝ որ
իշխէրն յայնժամ կողմանցն Արևելից, և ցայնավայր
սէր բարեկամութեան առ նոսա ցուցանէր նենգու-
թեամբ։ Իսկ նա քանզի բռնաւոր էր՝ զչարեցաւ և
յաւելաց նմա յոյժ ընդ եղեալսն, և զի մի հնազանդել
պղծոց երևեսցի, և ոչ դարձեալ անարգել ինչ կարէր
զայն որ հրամայեցաւ նմա՝ առ երկիւղի միաբանու-
թեան իշխանակացացն, յայնժամ ապա իբրև՝ի կամս
կար մնաց իւրոց շարժեալ գրէր՝ի հարկէ զվիրս զայս
առ դատաւորս վասն քրիստոնէից. և զոր ոչ երբեք էր
արարեալ, յինքեանէ կցկցեալ ստութեամբ կերպա-
բանէր։

Պատճէն Թարգմանութեան հրովարտակին Մաք-
սիմինոսի բռնակալին.

Յովիոս Մաքսիմինոս Աւգոստոս Սաբինոս.

իկ Կոստանդինոս և Լիկինէս, այն որ յայմ ժամանակի ցայն վայր
չև ևս էր անկեալ՝ի մոլորութենէն յայն որ յետոյ եկն՝ի նա՝ի
ժամանակի իբրև դարձան խորհուրդք նորա, երկոքին զԱստուած,
այն որ նա եղև պատճառ ամենայն բարեաց՝ օրհնեցին և փառաւորը
արարին, և միով խորհրդով և կամօք օրհնս կատարեալը եդին վասն
քրիստոնէից հանդերձ այսոքիվքէ որ գործեցան Աստուծոյ՝ի ձեռն
սքանչելի յաղթութենէն. որ եղև նոցա յիշխանէ անտի։ Եւ զսոյն
զայս օրհնս առ Մաքսիմինոս այն որ նա ցայնժամ իշխէր կողմանցն
արևելից՝ ետուն տարեալ. զի ցայն վայր սէր և բարեկամութիւն
առ նոսա ցուցանէր նենգութեամբ։ Իսկ նա քանզի անօրէն և ամ-
բարիշտ էր ղշաթացաւ և յաւելաց նմա յոյժ վասն ամենայնի որ ինչ
եղեն, այն՝ զի ոչ իակ կամէր նա երբեկ թէ պղծոց հնազանդեցաւ.
բայց և ոչ անարգել զայն ինչ զոր հրամայեցաւ կամէր նա՝ յերկիւ-
ղէ անտի այնոցիկ որ հրամայեցին։ Յայնժամ իբրև յիշխանութե-
նէ կամաց իւրոց առ դատաւորս գրեաց զայս գիրս առաջին իբրև
՝ի հարկէ վասն քրիստոնէից. և ինչ որ երբէք՝ի նմանէն ոչ գոր-
ծեցաւ առաւել կերպարանօք յանձն իւր առեաց։

Պատճէն մեծութենանց հրովարտակաց իշխանին Յովիոս,
Մաքսիմինոս, Աւգոստոս, Սաբինոս։

Այլ պատուականութիւնդ քո և առ ամենայն մարդիկ յայտնի լինել կարծեմք, զի յորժամ տեսցէ մեր և հարք Դիոկղետիանոս և Մաքսիմինոս տեսին Թէ յամենայն մարդկանէ Թողաւ պաշտօն աստուածոցն, և խառնեցին զանձինս իւրեանց բազումք ի ժողովուրդն քրիստոնէից, հրաման արարին յայտնապէս Թէ ամենայն մարդիկ որ փոխեցան ի պաշտամանէ դիցն անմահից, երևելի չարչարանօք և պատժօք պատուհասից դաւաճնին անդրէն ի նոյն պաշտօն։ Այլ իբրև եկի ես նախ զառաջինն յերկիրս արևելից և ուսայ և ի վերայ հասի Թէ են ի տեղիս տեղիս բազմութիւն մարդկան՝ որ կարեն օգուտ լինել հասարակաց պետութեանն, և վասն պատճառացս՝ զոր ասացաք վերագոյն, հալածեալ լինէին ի գատաւորաց, պատուէր հրամանի եւտու միւմ միւմ ի դատաւորաց, Թէ մի մերձենացին խաստութեամբ առ քննակիչս գաւառացն, այլ մանաւանդ ողջոյով և յորդորմամբ ի պաշտօն դից դարձուցանել զնոսա ջանասցեն։ Եւ ցոյչասի պահեալ լինէր հրամանս այս ի գատաւորաց անտի, ոչ ոք ի գաւառաց արևելից հալածեալ լինէր կամ Թշնամանեալ. այլ մանաւանդ ի չխստանալն մեր առ նոսա, առաւել ևս ի պաշտօն դից դառնային։ Ցետ այսորիկ երբև յամս ևս մնի ի Նիկոմիդիա և

Եւ առ պատուականութիւնդ քո, և առ ամենայն մարդիկ զի եղիցի յայտնի զոր արարաքս. զի տեսցէ մեր և հարք Դիոկղետիանոս և Մաքսիմիանոս երբև տեսին Թէ յամենայն մարդկանէ Թողաւ պաշտօն աստուածոցն, և խառնեցին զանձինս իւրեանց ի ժողովուրդ քրիստոնէից, հրամայեցին ուղղակի Թէ ամենայն մարդիկ որ փոխեցան ի պաշտամանէ դիցն որ ոչ մեռանէին, երևելի չարչարանօք և պատժօք պատուհասից գտանցին անդրէն ի պաշտօն դիցն։ Այլ իբրև եկի ես նախ զառաջինն յերկիրս արևելից և ուսայ ես և ի վերայ հասի Թէ են տեղիս տեղիս բազմութիւն մարդկան որ կարեն օգուտ լինել իրաց Թագաւորութեան, որ հալածեալ լինէին ի գատաւորաց. վասն այսր պատճառանաց զոր ասացան վերագոյն, ամենեցուն միով մի՛ ի գատաւորացն եւտու հրամանն Թէ մի մերձենայ առ ոք ի նոցանէն խաստութեամբ առ որդիս աշխարհի, այլ պատրանօք և հրապուրանօք ի պաշտօն դիցն գարձուցանէն զնոսա։ Յայնմ ժամանակի որպէս զի հրամայեցի ես՝ պահեալ լինէր ի գատաւորաց անտի, և ոք ի գաւառաց անտի արևելից չլինէր հալածեալ կամ Թշնամանեալ. այլ յայտնի զի ոչ գործեցաւ առ նոսա որ ինչ խիստ առաւել ի պաշտօն դիցն դառնային։ Ցետ այսորիկ յամս

անդ շրջէի, եկին առ իս բնակիչք քաղաքին Հանդերձ պատկերօք կռոց իւրեանց և խնդրէին յինէն մեծա- պէս և ազաչէին զիս եթէ. Մի եղիցի քեզ առաւ ամենևին Համարձակութիւն այսպիսւոյ ժողովրդեան բնակել յաշխարհի իշխանութեան նոցա: Իսկ ես իբրև ծա- նեայ զբազում յաղանդս այսորիկ բնակեալս ի կող- մանս յայնոսիկ. այսպէս ետու նոցա պատասխանի թէ. Ա յսպիսի խնդրուածոց նոցա կամելոր չեղէր կալցայ, բայց ոչ տեսանեմ յամենայն ումեքէ զսոյն խնդրուածս առնելով, այլ իցէն ոմանք որ անդրէն ի դմին պաշտամանն կայցեն մնասցեն, այսպէս իւրաքան- չիւր ըստ մտաց իւրոց եղիցի իշխան ի վերայ կամաց իւրոց, և եթէ կամիցին և զպաշտօն դիցի ծանիցեն: Բայց սակայն և նոցունն բնակչաց քաղաքին Նիկոմի- դացւոց, և այլոց քաղաքաց՝ որ նովին փութով սկզբ- ԹԵամբ զնոյն խնդրուածս առ իս մատուցին Թէ. Մի՛ զբ ի քրիստոնէից բնակեսցէ ի քաղաքս իւրեանց. Հարկ եղև ինձ տալ պատասխանի նոցա սիրով, քան- զի զսոյն զայս և ինքնակալքն ամենայն առաքինք պա- հեցին. Նա և նոցին իսկ դիցն այնոցիկ՝ որով կեանն մարդիկ և վարչութիւն պետութեանս յատին կայ, Հաճոյ եղև զի որ զայսպիսի խնդրուածս վասն պաշ- տամանն աստուածոՒԹեան նոցա առ իս մատուցանեն՝

և մանի ի Նիկոմիդեայ և անդ շրջէի ես՝ եկին առ իս բնակիչք քա- ղաքին Հանդերձ պատկերօք կռոցն իւրեանց, և մեծապէս խնդրէին յինէն և ազաչէին զիս. Եթէ յամենայն Հնարից այնպիսւոյ ժողովը- դեան մի եղիցի Համարձակութիւն բնակել յաշխարհի իշխանու- Թեանց նոցա: Իսկ ես այսպէս ետու նոցա պատասխանի, Թէ այս- պիսի խնդրուածոց նոցա շնորհ ընկալայ. այլ տեսի զի ոչ Թէ յա- մենայն ումեքէ եղեն այս խնդրուածք: Այլ եթէ իցեն նոքա որ կայցեն մնայցեն այդրէն ի դմին պաշտամանն՝ այսպէս ամենեցուն իւրաքանչիւր ի նոցանէ ըստ մտաց իւրոց եղիցի իշխան ի վերայ կամաց իւրոց. և Թէ կամիցին՝ և զպաշտօն դիցն ծանիցեն: Բայց սա- կայն և նոցունց բնակչաց քաղաքին Նիկոմիդացւոց և այլոց քաղա- քաց որ էին նոքա յայս փոյթ սկզբնաԹեան խնդրուածոց որ եղև առ իս, զի մի ոք ի քրիստոնէից բնակեսցէ ի քաղաքս իւրեանց, հարկ եղև ինձ տալ նոցա պատասխանի սիրով. քանզի զսոյն զայս և Թագաւորքն ամենայն առաքինքն պահեցին, նա և ի նոցունց իսկ դիցն այնոցիկ որ ի ձեռն նոցա կեան ամենայն մարդկի, և կերպակեր- չութիւն իրաց Թագաւորութեան Հաճոյ եղև նոցա. Թէ իբրև զայս խնդրուածս պաշտաման որ աստուածոՒԹեան նոցա մատուցանեն,

Հաստատեցից։ Աբդ Թէպէտ և յառաջ քան զայս ժամանակ և պատուականութեանդ քումմ՝ի ձեռն հրովարտակաց, և կամ պատուիրանաւ միայն, զի մի ընդդէմ որդւոց գաւառաց աշխարհիդ ձերոյ, որոց փոյթ իցէ զգուշանալ օրինաց ժողովրդեան իւրեանց՝ խաղաղութեամբ գնալ, այլ ներողամիտ գթութեամբ դիւր առնել նոցա, սակայն զի մի դարձեալ ոտնձգաւ պատուեալ յազատ զօրականէն[5] խուսեցի ոք, և կամ չայլոց ոմանց անարգանս կամ տոյժս կրեսցէ, կարևոր համարեցայ՝ի ձեռն հրովարտակիս պատուականութեանդ քումմ յիշատակել՝ եթէ ողջախոհ մանաւանդ և հրաւիրողական յորդորմամբ ձգել ջանասցես զգաւառականսն մեր՝ի հաւատս խնամակալութեան աստուածոց, վասն այսորիկ եթէ ոք մտագիւր կամաք զպաշտօն դից ձանաչել կամիցի, արժան է մեզ զայս սիրելն շքով ընդունել։ Ապա եթէ իցէ որ կամիցէն գնալ ըստ պաշտաման իւրեանց, յիշխանութիւն աստուածեան իւրեանց ժողովս գնոսա։ Վասն որոյ հարկ է քոյին պատուականութեանդ որ ինչ հրամայեցաւ՝ի դմա պահել. և մի տացես ումեք իշխանութիւն անարգանօք և տուժիւք աշխատեցուցանել ըզգաւառականս մեր. և որպէս կանխեցի և ասացի յառաջագոյն քաղցրութեամբ մանաւանդ և ողջոյն՝ի

Հաստատեցից արդ այնուհետև. Թէպէտ և յառաջ քան զայս ժամանակ և պատուականութեանդ քումմ առաքեցաւ՝ի ձեռն հրովարտակաց, և համարձակութեամբ հրամայեցաւ զի մի պահեցցի այս սովորութիւն՝ի վերայ որդւոց գաւառաց աշխարհիդ։ զի եղելի փոյթ հոգաբարձութեան վասն նոցա, զի մի խաղաղութեամբ այլ գիւրաբեր հանգստութեամբ մերձեցցին առ նոսա։ Բայց սակայն զի մի՝ի զինուորաց և մի չայլոց անարգանս կամ տոյժս կրեսցեն՝ խորհուրդ այսպէս. զի և՝ի ձեռն հրովարտակաց պատուականութեանդ քումմ յիշատակեցից եթէ առանձինսպէս պատրաստ և հրաժարութեամբ տրասցես զորդիս աշխարհացդ մերոց ձանձնել զպաշտօն դիցն։ Վասն այսորիկ եթէ իցէ ոք որ մտագիւր կամաք իւրովք կամիցի զպաշտօն գիցն, զայնպիսին արժան է մեզ շքով ընդունել։ ապա եթէ իցէ ոք որ կամիցի գնալ ըստ պաշտաման երկիւղի իւրեանց, յիշխանութիւն ազատութեան իւրեանց ժողովս գնոսա։ Վասն այսորիկ պատուականութեանդ ըս որ ինչ հրամայեցաւ զմա պարտի պահել, և մի տացէ ումեք իշխանութիւն թէ զորդիս իշխանութեան մերոյ անարգանօք և տուժիւք աշխատեցուցանել որպէս կանխեցի յառաջագոյն և ասացի, թէ պատրաստ մանաւանդ՝ի

պաշտօն դից զնոսա հրաւիրել։ Եւ զի հրամանս մեր յայտնեալ ծանուսցի ընդ ամենայն գաւառս տէրու-թեան մերոյ, ըստ պատուիրելոյ քեզ հրովարտակիս խնամ կալցես գրով տալ դիտել ամենեցուն։

Բայց զայս ի հարկէ բռնադատեալ ես ոչ ի կամաց իւրոց հրամայեցաք. և ոչ ևս որ այնուհետև ձշմարիտ կամ արժանահաւատ զնա գիտէք, վասն առաջնին թո-ղութեանն զոր արար ըստ այսմ նմանութեան, և գալ ձաւ փոխեաց նենգութեամբ զմիտս իւր և ստեաց, Որով ոչ ոք ի մերոց աստի համաբձակեր առնել ժո-ղովս և ոչ յայտնի ցուցաներ զինքն. զի և ոչ գիրն զայդպիսի ինչ մեզ ընդհակ, այլ զայն միայն՝ զի ի հարստահարութենէ և ի բռնութենէ ազատ իցեմք։ Եւ ոչ թէ ազատ ժողովս առնել, և ոչ զեկեղեցիս շի-նել, և ոչ այլ ինչ զսովորութեան մերոյ գործել. և սակայն ախոյեանքն խաղաղութեան և աստուածպաշ-տութեան Կոստանդիանոս և Լիկիանոս գրովքն տուե-լով առ նա հրամայեցին՝ որպէս որ միանգամ ի ներ-քոյ իշխանութեան նոցա էին ի ձեռն հրովարտակաց և օրինաց զնորին նոքա ամենեցուն։ Իսկ ամբա-րիշտն ոչ կամեցաւ և ոչ սակաւ մի խոնարհել և զի-ջանել, մինչև յարդար գատաստանաց Աստուծոյ հա-րուածեալ, ապա ուրեմն յակամայ կամն եղին յայն։

պաշտօն գիցն զնոսա գործակատարել, այլ զի հրամանն մեր ծանաչիցի ամենայն մարդոյ ի ձեռն հրամանին որ եղեալ լինի ի քէն. ըստ այսմ ընդի որ հրամայեցաք՝ արժան է քեզ հաստատուել և ստուգել։ Բայց զայս ի հարկէ բռնադատեցաք և ոչ ի կամաց իւրոց. և այնուհետև ոչ ոք հաւատասցի նմա վասն առաջնի թողու-թեանն զոր արար ըստ այսմ նմանութեան. և գործաց փոխեաց և ստեաց զկամս իւր։ Թէ այսպէս է, ոչ ոք ի մերոց աստի համարձա-կեր առնել ժողովուրդ, և ոչ յայտնի ցուցաներ զինքն, նա և ոչ դիրն նորա որ զայս հրամայեաց. այլ զայս միայն զի անխոչեալ լի-ցին ի բռնութենէն անտի. և ոչ եթէ ի տաճարս եկեղեցաց լիներ, և ոչ այլ ինչ զսովորութեան մերոյ գործել իրրև թագաւորք, դխաւորք խաղաղութեան և աստուածպաշտութեան՝ և նմա չղե-ցին և հրամայեցին որ իրրև զայս, և ամենեցուն որ միանգամ ի ներքոյ իշխանութեան նոցա էին ի ձեռն հրամանաց և օրինաց ա-ռաւել զհոգևոր զայս։ Իսկ այն ամբարիշտն չէր կամեցեալ խոնար-հել իջանել յայս իրս մինչև հալածեցաւ յարդար գատաստանաց անտի Աստուծոյ։ Իսկ յետոյ իրրև յակամայ կամս իւր էին նա յայս իրս, զի ելենումս իրրև այսպիսի պատճառաք. քանզի ոչ կա-

ԳԼՈՒԽ Ժ.

Վասն յաղթութեան աստուածասէր թագաւորացն։

Եւ իբրև այսպիսի պատճառք պարուրէին զնա ամենատես, և մեծութեան իշխանութեանն՝ յոր առանց ինչ իւրոյ արժանաւորութեանն հասեալ էր, չկարէր հանդարտել, և զի խոհական և իշխանավայել խորհրդոց չէր տեղեակ ամենևին և հմուտ, և չմարթուն և տմարդի օրինակաւ վարէր զիւր տէրութիւն. և հանդերձ տոքոք խօլամիտ ամբարտաւանութեամբ սեւ քացեալ բարձրանայր ՚ի վերոյ իշխանակցաց իւրոց՝ որ առաւել էին քան զնա, ազգատոհմաւ և խրատու կրթութեամբ. և պատուոյ իշխանութեամբ և հանճարով խնամատութեան, և ՚ի գլուխս ամենայնի՝ խոհական ցածութեամբ, և որ առ Աչխարհիան Աստուած էր չարատեաց երկիւղածութեամբ. գոռոզ ժպրհութեամբ համարձակէր նա ՚ի պատուի անդ գահակցաց իւրոց առաջին կարգել զանձն իւր։ Այս ՚ի վերջին անմտութեան անդ իւրում ստեաց և զուխան՝ զոր եդեալ էր Նորա ընդ Վիկիանոս, և պատերազմ և թշնամութիւն ընդդէմ Նորա կազմեաց. և ՚ի սակաւ ժամանակի զամենայն ինչ վեր ՚ի վայր յուզեալ և աղմկեալ խառնեցոյց զաշխարհն համօրէն. և

բէր հանդարտել մեծութեան առաքինութեան որ առաւ նմա, այն զի չէր իսկ արժանի նմա. այլ քանզի ոչ առեղեակ հմուտ էր նա ցածուն խորհրդոց թագաւորութեանն. զի անարժանութեամբ մերձենայր նա յիւրս իրս հանգերձ ամենայնիւ, և հպարտութեամբ և ամբարտաւանութեամբ բարձրացաւ և ՚ի վերոյ այնոցիկ որ կը-յորդ են Նորա ՚ի թագաւորութեան անդ և ամենայն իւրք առաւել էին քան զնա ազգատոհմաւ և անդգամբ և խրատու և պատուոյ իշխանութեամբ և հանճարով խնամատութեան, և ցածութեամբ գլխաւոր ամենայնի, և աստուածապաշտութեամբ Աչխարհութեանն. համարձակէր նա ամբարտաւանել և անուանել զանձն իւր ՚ի պատուի անդ առաջին. վերացաւ իսկ ամբարտաւանութեամբ մտքոյս-թեանն իւրոյ և սուեաց զուխան զոր եդեալ էր Նորա ընդ Վիկիանոս, և պատերազմ և թշնամութիւն ընդդէմ Նորա կազմեաց, և ՚ի սակաւ ժամանակի ընդ ամենայն գաւառն շրջեցաւ և խռովեաց զա-

Ժողովեալ զօրս բազումս անթիւ և անհամար, և եկ կազմեցաւ տալ պատերազմ ընդդէմ Նորա։ Յուսացեալ ապաւիներ նա ի դևսն, զօրս և աստուածս հաստիրեր, և ի բիւրաւոր զօրս իւր Տէարտացեալ ամբարտաւաներ յանձն իւր։ Եւ յառաջնում անդ Ձախատամարտի Թողեալ նա լբեալ ի ձեռանէ Աստուծոյ առանց այցելութեան, և տուաւ ի միջն և յամենեցունն Աստուծոյ յաղթութիւն Հիսիանու՝ որ իշխանն էր Թագաւորութեան յայժամ։ Կորոյս նախ զզօրս սպառազինաց, յորս յեցեալ ապաւիներ ի նոսա, և որ շուրջ պատեալ պահէին զնա ասպարակիրքն ընտիրք՝ Թողին զնա, և ձեռս ետուն ի յաղթողն, յայժամ մերկացեալ նորա վաղվաղակի ի զարդուէ և ի ծիբանեաց ինքնակալութեանն, որ և ոչ իսկ վայել էր նմա, ամենալից կորանօք և անարի վատութեամբ Թաքեաւ ի մէջ բազմութեան զօրացն, և փախչէր նա ի շէնս և յագարակս և հազիւ ձողպրեալ ապրէր ի ձեռաց պատերազմողացն։ Եւ արդեամբք իսկ յայսմ առնէր զձշմարտութիւն Հաւատարմութեան պատգամաց Աստուծոյ՝ որ ասէ, Թէ՝ Ոչ Թէ ի բազում զօրս իւր ապրեսցի Թագաւորն, և ոչ սակայ ի բազում զօրութեան իւրում Սուտ է ձի ի փրկութեան իւրում, և ի բազում զօրութեան իւրում ոչ ապրեցուցանէ զը-

մնոյն գաւառս և քաղաքս, և Ժողովեաց զօրս բիւրաւորս անթիւ և անհամար և եկ և կազմեցաւ ընդդէմ Նորա տալ պատերազմ, յուսացեալ ապաւինեալ ի դևսն որք աստուածք համարեալ էին նմա։ և բիւրաւոր ապառազինեցն հպարտացեալ ամբարտաւանէր յանձն իւր։ Իրրև պատերազմեցաւն, Թագաւ. ի ձեռանէ Աստուծոյ առանց այցելութեան և աւուր յաղթութիւն ի միջէ Աստուծոյ այնմ որ ցայն ժամանակի Նորա էր իշխանութիւն Թագաւորութեանն, և եհար աստակեաց նախ զզօրսն ապառազինսց յորս յուսացեալ ապաւինէր ի նոսա և Թողին զնա ապառազինքն մեր որ շուրջ պատեալ պահէին զնա, և ձեռս ետուն յայն որ ունէր զինքեանութիւնն։ և մերկացաւ երկիւղածն վատաւորեալ ի զարգուէ անարի Թագաւորութեանն երագ երագ վաղվաղակի, այն որ ոչ իսկ վայել էր նմա և վատութեամբ վատթարեալ ապառկուսեալ ակռաւքն ամենալից կորանօք Թաքեաւ ի մէջ բազմութեան զօրացն և փախչէր և Թաքչէր ի շէնս և յագարակս և հազիւ ձողպրեցաւ ի ձեռանէ պատերազմողացն և ապրեցաւ։ Եւ արդեամբք եղծաւ նա վասն բանիցն Աստուծոյ Թէ ՝Չմնաքիա են և հաւատացուք, զի ասաց Թէ Թագաւոր ոչ ապրի ի բազում զօրս իւր և ոչ

հեծեալն։ Այլ Տեառն՝ի վերայ երկիւղածաց իւրոց, և յոյս յուսան յողորմութիւն նորա. փրկել՝ի մահուա նէ զանձինս նոցա։

Այսպէս ուրեմն ամենայնիւ դարձ արար բռնաւորն յաշխարհ իւր, և նախ զառաջինն սրամտութեամբ մտիւգնութեան իւրոյ զբռնութիւն բազումն և զմարգարէս գիշն՝ որ սպանեալք էին յաչս նորա յառաջագոյն, յորոց և՝ի ձեռն պատգամացն խաբեցաւ և յարոյց պատերազմ՝ իբրև զխաբեբայս և զկախարդս և զմատնիչս կենաց նորա կատորեր զնոսա։ Եւ յետ այնորիկ թէպէտ փառս և օրհնութիւնս տայր Աստուծոյն քրիստոնէից, և օրէնս կատարեալս և բռնութիւն վասն ազատութեան նոցա կարգէր, սակայն անկաւ յանհնարինն ախտ մահու, և իբրև ոչ շնորհեցաւ նմա ժամանակ կենաց՝ եղ յաշխարհէ աստի. և օրէնք տուեալք՝ի նմանէ ունէին օրինակ զոյս.

Պատձէն թարգմանութեան օրինաց տուեալոյ՝ի Մաքսիմինոս բռնաւորէն վասն քրիստոնէից՝ի հռովմ. ականձէն յերեսաւ՝ի հելլենական բարբառ։

Ինքնակալ կայսր Գայիոս Վալերիոս Մաքսիմինոս, Գերմանիկոս, Սարմատիկոս, Պիոս, Փելիքս, Յաղթող, Աւգոստոս.

ակաց՝ի բազում զբռւ սուտ է ձի՝ի փրկութեան որ՝ի բազում զբռւ ոչ ապրեցաւ։ Այլ տեառն՝ի վերայ երկիւղածաց, և յոյս յուսան յողոր.... ապրեցուցանել՝ի մահու զանձինս։ Այսպէս իսկ ամենայնիւ եգև իշխանն աշխարհի, և նախ զառաջինն սրամտութեամբ բարկութեամբ մտիւգնութեան իւրոյ զբռւթիւն բազումն և զմարգարէս գիշն որ սպանելիք էին յաչս նորա յառաջագոյն զի՝ի ձեռն մարգարէութեան նոցա խաբեցաւ և յարոյց զպատերազմ, իբրև զխաբեբայս և զկախարդս և զմատնիչս կենաց նորա կատորեր զնոսա։ Եւ յետոյ փառս և օրհնութիւնս տայր Աստուծոյն քրիստոնէից և բռնութիւն ազատութեան նոցա օրէնս կատարեալս և բռնաւորեալս։ Բայց անկաւ յանհնարին մահու. և իբրև ոչ շնորհեցաւ նմա ժամանակ կենաց եղ յաշխարհէ աստի, այլ օրէնք որ առաքեցան՝ի նմանէն այսպէս էին։

Ինքնակալ կայսր Գայիոս, Վալերիոս, Մաքսիմինոս, Գերմանիկոս, Սարմատիկոս, Եւսեբէս, Աշխարհս, Յաղթող, Աւգոստոս,

Ամենայն իւիք փոխանակ օգտի շահու աշխարհաց մերոց պարտք են մեզ հանապազորդ հոգ յանձին ունել, և որ հասարակաց ամենեցուն ուղղութեան, լուսաւորութեան և դիւրութեան շահաւէտն է և պիտանացու՝ կամակար նոցին լինել ձեռնտու. և որ ինչ դարձեալ ընդ օգտի ընկերահաշտ պետութեանս միաբան գտանիցի, և իւրաքանչիւր խորհրդոյ մարդկան հաճոյական և ընդունելի, ոչ անգէտ իցեմք, այլ ամենայն ումեք ընդ միտ ածել զայս ամենայն և խելամուտ նոցին լինել հաւատամք։ Իբրև յառաջ քան զայս յայտնի իսկ էր գիտութեան մերոյ, զի յայս պատճառս եղ հրաման 'ի քաջ արանցն 'ի Պիսկոպոսաց և 'ի Մաքսիմիանոսէ՝ 'ի Կարգ անտի մերոց եթէ ընկերացին ժողովրդք քրիստոնէից, և բազում հարստահարութիւնք և յափշտակութիւնք եղեն նոցա 'ի պաշտօնէից և 'ի սպասից անտի, և ընդ երկար ժամանակս սոյն այս գործեցաւ ընդդէմ որդւոց աշխարհիս մերոյ, զորոց կամ է մեզ ըստ արժանւոյն փոյթ անձին ունել, որոց ստացուածք 'ի պատճառս յայս վատնեալ գրուեցան, յառաջ քան զայս ամ'ի վարտակք տուան 'ի մէնջ առ գատաւորս՝ որ յամենայն աշխարհս իցեն, օրէնս կարգելով, զի թէ իցէ ոք որ կամիցի գնեմ գնալ ժողովրդեանս այսորիկ կամ զգուշանալ պաշտաման նոցա, անարգել համարձակ լինի

Ամենայն իւիք առաւելապէս հոգւոյն մեր փոխանակ օգտի շահու աշխարհաց մերոց. և զայս կամիմք մեք առնել նոցա որ ինչ մինչդեռ գիւրաւ ամենայն իւիք կատարին. այն ինչ որ հաւատաւոր միաբանին ուղղութեան իրաց թագաւորութեան և խորհրդոց ամենայն մարդկան պիրկի են՝ յայն ինչ որ գործեալ լինին նոցա. և զի եղիցին գիտել ամենայն մարդիկ և ուղղակալել նոքօք հաւատամբ մեք իբրև յառաջ քան զայս յայտնի իսկ էր գիտութեանս մերոյ, զի յայսմ պատճառանաց զոր հրամայեցին Կարգն մեր արան չելիք Պիսկոպոսիանոս և Մաքսիմիանոս եթէ ընկերացին ժողովուրդք քրիստոնէից զի կարի յոյժ պակասութիւն և յափշտակութիւն էզն նոցա 'ի գեաղանից, և մինչև ցայսօր ժամանակի սոյն այս գործեցաւ որդւոց աշխարհս մերոյ այնոցիկ որ փոյթ յանձին ունիմք հոգալ զնոցանէն, որպէս զնարդ արժան է փոխանակ զի աշխատին ստացուածք նոցա, տուան հրովարտակք առ գատաւորս որ յամենայն աշխարհս են յառաջ քան զայս ամենայն՝ որ եղաք զրկենս, զի թէ իցէ ոք որ կամիցի որ յայսմ ազօրութեան կամ որ իբրև յայսմ պահպանութեան պաշտաման մերձենալ. այնպիսին անարգել հա-

այնպիսին իշխան՝ ի վերայ կամաց իւրոց, և յոժարէ մի արգելցի կամ խափանեսցի, և զի գիւրին իցէ առնել և անկասկած առնել ամենեցուն իւրաքանչիւր՝ ի նոցանէ՝ որ ինչ հաճոյ իցէ նմա: Բայց սակայն և ոչ այդ մարթ էր ծածկել՝ ի մէնջ, զի ոմանք՝ ի դառնութենէ անտի ոչ բարւոք իմացեալ զիիտս հրամանատացդ մերոց, որով և հպատակք մեր երկմտեալ ընդ այնս հեղգագոյնս մերձենան՝ ի պաշտօնն՝ որ հաճոյ է նոցա: Եւ զի յայսմ հետէ բարձցի խիզճն, խէթն և երկմտութիւն երկիւղին, զայս պատուէր հրամանի օրինաց կարգեցաք. և յայտ լիցի ամենեցուն, զի իշխանութիւն է իւրաքանչիւր ըստ մտաց ընտրութեան և ըստ կամի գնալ զայս ճանապարհ, և պաշտել զոր պաշտեն, և այս՝ ի ներողամիտ մարդասիրութենէ մերմէ շնորհեալ ամենայն ումեք որպէս և զիարդ կամի, կամ պարտ անձին վարկանի մերձենալ յայն պաշտօն, որ իբրև՝ ի սովորութենէն ընտրեաց իւր պաշտել, և զտեղւոյնի իւրեանց տունս յօրինել և կազմել: Եւ զի մեծ ևս եղիցի պարգևս մեր, և զայս ևս յաւելեալ դնել յօրէնս, զի թէ իցեն տունք կամ տեղիք ինչ՝ որ իբրև՝ ի բաժնէ քրիստոնէից յառաջագոյն էին, և որպէս՝ ի հրամանէ հարցն մերոց յայլ օրէնս փոխեցան կամ՝ ի միոյ քաղաքաց ուստեք

մարթակ լիցի իշխան՝ ի վերայ կամաց իւրոց. և յոժարէք մի արգելցի կամ յապաղեսցի և զի եղիցի գիւրին աներկիւղ և անխիղճ ամենեցուն իւրաքանչիւր՝ ի նոցանէն որ ինչ հաճոյ է նմա. բայց սակայն և ոչ այժմ մարթէր ծածկել՝ ի մէնջ այս, զի ոմանք՝ ի դառնութենէ անտի բաժանեալ երկմտին՝ ի հրամանացդ մերոց և զի երկմտեցան մարթիկ՝ ի հրամանացդ մերոց առնելին զնոսա, և հեղգութեամբ ծուլանաք մերձենալին՝ ի պաշտօն երկիւղին, որոց հաճոյ էր առնել նոցա բայց եթէ որպէս յայսմ հետէ բարձցի խիզճն և խէթն և երկմտութիւն երկիւղին: Եգաք օրէնս թէ այս հրամանս յաւելցի լինել նոցա իշխանութիւն ամենայնի որ միանգամ կամիցին վարել ըստ այսմ մտաց և ըստ այսմ երկիւղի յայսմ պարգևաց մերոց, որպէս զիարդ և կամի իւրաքանչիւր՝ ի նոցանէն և գիւրին է նոցա մերձենալ յայս պաշտօն որ իբրև՝ ի սովորութենէն ընտրեաց իւր պաշտել՝ ի նմա և տաճարս զեկեղեցացն իւրոց չինել հրամայեցաւ նոցա: Բայց զի եղիցի մեծ այս պարգև մեր և զայս ևս կատարեալ հրամայել զի թէ իցեն տունք կամ տեղիք ինչ որ իբրև՝ ի բաժնէ քրիստոնէից յառաջագոյն էին և որպէս՝ ի հրամանէ հարցն մերոց յայլ օրէնս փոխեցան կամ՝ ի միոյ քաղաքաց ուստեք

Առաքելով վաճառեցան կամ՝ ի պարգևի տալին ումեք տուան, ամենեքին սոքա յառաջին բաժին և յիրա- ւունս քրիստոնէից հրամայեցաք դարձուցանել. որով՝ ի վերայ հասեալ գիտասցէ ամենայն մարդ զմեր բա- րեսէր հոգաբարձութիւնն։

Ա՛յս ինչ են բանք բռնաւորին. որ յորմէ հետէ դնէր նա յարձանս պղնձիս զխիստ հրամանս իւր ընդ- դէմ քրիստոնէից՝ և ոչ մի տարի լցաւ. և որ յառաջ քան զսակաւ մի իրրև ամբարիշտք համարեալ էաք նմա և անաստուածք և վնասակարք հասարակաց կե- նաց, զի ոչ՝ ի քաղաքս և ոչ՝ ի շէնս և ոչ յանապատս բնակել համարձակէր մեզ. ՝ի սմին յայսմանէ օրինք և սահմանք յարդարութիւն քրիստոնէից եգեալ լի- նէին. և որք յառաջ քան զսակաւ մի ՝ի հուր և ՝ի սուր և ՝ի գէշ գազանաց և ՝ի կերակուր թռչնոց ա- ռաջի աչաց նորին իսկ բռնաւորին ընկենուլ լինէին, և պէսպէս տանջանօք և պատժօք պատուհասիչ իրրև ամբարիշտք և անաստուածք յաշխարհէ աստի անար- գութեամբ ելանէին. սոցուն արդ այսոցիկ ինքնին գլխովին խոստովան լինէր, զի պաշտեսցեն զնուրբանց պաշտօն օրինաց, և զի շինեսցեն զտունս Ցեառն և զի առցեն զպաժին իրաւանց իւրեանց՝ որ նոցուն անկա- նի. զայս ամենայն խոստովանեալ վկայէր բռնաւորն։ Ի վերայ այսր խոստովանութեան իրրու բարերարու-

առան կամ՝ վաճառելով վաճառեցան կամ պարգևի ումեք տուան, ամենեքին սոքա յառաջին բաժինն քրիստոնէից հրամայեցաք դարձուցանել, զի և ՝ի ձեռն այսորիկ ամենայն մարդ զգայցէ և գիտասցէ զնոգաբարձութիւնն ազգութեանն մերոյ։ Ա՛յս ինչ են բանք իշխանին։ Զի և ոչ մի տարի լցաւ ժամանակ անտի զոր եդ զհրամանն վասն քրիստոնէից յարձանս պղնձիս, և յայնմանէ որ յառաջ քան զսակաւ մի իրրև ամբարիշտք համարեալ էաք նմա և առանց Աստուծոյ և էաք մեք յամենայն աշխարհի պատճառ կորըս- տեան. զի ոչ ՝ի քաղաքս և ոչ ՝ի շէնս և ոչ յանապատս բնակել համարձակէր մեզ ՝ի սմին յայսմանէ օրինք և հրամանք փոխանակ քրիստոնէից եգեալ լինէին, և զայնոսիկ որ յառաջ քան զսակաւ մի ՝ի հուր և ՝ի սուր և ՝ի գէշ գազանաց առաջի աչաց նորա ընկե- ցեալ լինէին, և պէսպէս տանջանօք և պատժոյք պատուհասից յաշխարհէ սասի անարգութեամբ էլանէին. և իրրև ամբարիշտք որ առանց Աստուծոյ էին, և համբերէին այսմ ամենայնի։ Սոցուն այսոցիկ ինքնին գլխովին խոստովան լինէր սոցա՝ զի պաշտեսցեն զպաշտօն երկիւղի իւրեանց, և զի շինեսցեն եկեղեցիս և զի առցեն

*Թեան իմն հանդիպեալ տակաւադոյն քան որչափ ար-
ժանին էր յարչարել յարչարեցաւ, զի յանկարծակի
՚ի հարուածս Աստուծոյ հարեալ, և յերկրորդ նուա-
զի անդ պատերազմին անկաւ։ Եւ այս եղև նորա կա-
տարած կենացն ոչ եթէ իբրև զօրավարաց անուա-
նեաց՝ որք ՚ի վերայ արուեստեան քաջութեան, ՚ի վե-
րայ փառաց և անուան բազում անգամ նահատա-
կեալ ՚ի պատերազմունս, և վախճան փառաւոր ըն-
կալան քաջութեամբ, այլ իբրև ամբարիշտ և աս-
տուածամարտ. զի յորժամ զօրք նորա բանակ հարեալ
՚ի դաշտի և առագ և ձակատ յարդարեալ կային, նա
՚ի ներքս ՚ի տան և ՚ի թաքստի զարժանաւոր պատիժ
պատուհասին յառ Աստուծոյ ընդունէր միանգամայն
հարուածեալ ընդ ողջոյն մարմին իւր։ Որ անչնարին
ցաւովք և չարաչար տանջանօք տագնապեալ, և ՚ի բե-
րանս հարեալ յերկիր տանջէր սուալղուկ, և ամենայն
մարմին նորա աներևոյթ և երկնառաք հրով հալեալ
մաշէր։ Եւ իբրև սպառեալ ծախէր ողջոյն իսկ մար-
միին. առաջին ձև կերպարանացն ապականեալ այլա-
փոխէր, կմախք միայն և ոսկերոտի ցամաքեալ իբրև
ուրուական իմն մեռելոյ մնայր ընդ երկար, զի որք մի-
անգամ պատահէին տեսանել զնա ՚ի մօտոյ, ոչ այլ*

*զբաժինս խրճանց զոր ինչ յառաջագոյն էին։ իսկ իբրև խոտո-
վան եղև նա որ իբրև զայս էր, օգնութիւն իմն եղև նմա վասն այսր-
և ապականացն քան որչափն էր՝ չարչարել չարչարեցաւ ՚ի հա-
րուածոյն Աստուծոյ, որ յանկարծակին եղև։ Բայց յերկրորդ
նուազի անդ պատերազմի կործանեցաւ։ Ապա եկ եղև վախճան
նորա յաշխարհէ ասի, զի ոչ եթէ որպէս զօրագլուխք պատերազ-
մի որ վասն երևելի առաքինութեանց առաքինանան ՚ի պատերազմի
վախճան աբաւնչէլի զօրքագլուխ եղև նմա կրէլ՝ այլ իբրև ամբարիշտ
և թշնամի Աստուծոյ, իբրև բանակն ՚ի դաշտին բանակեալ էր և
ինքն ՚ի ներքս ՚ի տան թաքչէր, և պատիժ պատուհասի ըստ ար-
ժանեաց իւրում ընկալաւ ՚ի հարուածոյն Աստուծոյ. որ յանկար-
ծակի ամենայն մարմին նորա տանջեալ լինէին և հալածեալ լինէր
անչնարին ցաւովք և չարաչար տանջանօք. և կործանեալ ընկե-
ցեալ գնէր և կորուսեալ ՚ի տոլոյ, և ամենայն մարմին նորա ան-
երևոյթ հրով որ յԱստուծոյ առաքեցաւ ՚ի վերայ նորա՝ մաշեալ լի-
նէր. և իբրև հալեցաւ սպառեցաւ ամենայն մարմինն առաջին կեր-
պարանքն ապականեցաւ, բայց միայն զի կենդանի էր շունչն և ՚ի
յերկար ժամանակ անտի պատկեր հաչեալ մաշեալ մնաց նա։ Զի
որ միանգամ պատահէին, և տեսանէին զնա ոչինչ համարեին զնա,*

ինչ Համարեին զնա, բայց եթէ գերեզման ընդուն ի մեռեալ և ի հիւծեալ ծոցեալ մարմնի։ Եւ իբրև ուժգինն ի խորոց անտի ուղղէն տապ ջերմին բորբոքեր, բիբը նորա ցցուեալ ոստեան, և ելին յականջաց անտի իւրեանց, և Թողին զնա կուրացեալ։ Եւ մինչդեռ շունչն ի նմա խաղայր, խոստովան լինէր յայտնապէս Յեսուն Աստուծոյ մերոյ և խնդրէր մահ։ և Թէ վասն Թշնամանաց Քրիստոսի իրաւամբ կրէ զայս ամենայն, յայսմ անագան խոստովանութեան եթող զնա շունչ իւր։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Վասն վերջնոյ կորստեան բնութեանց քրիստոնէութեան։

Եւ այսպէս էլ՝ի կենաց Մաքսիմինոս, այն որ միայն էր մնացեալ՝ի Թշնամեաց անտի աստուածպաշտութեան, և չար էր քան զամենեսին։ Բայց եկեղեցացն շինութիւն ընդհակ ողջմտութեան ամենակալին Աստուծոյ՝ի հիմանց իւրեանց նորոգեալ լինէին. և քան վարդապետութեան Քրիստոսի՝ի փառս արարչին ամենեցուն պայծառագոյնս ծագեալ, և աւելի քան զառաջինն ունէր համարձակութիւն ազատութեան. իսկ ամբարշտութիւն Թշնամեաց աստուածպաշտու-

բայց եթէ գերեզման ընդուն էր մարմն նորա որ Թողեալ էր իբրև զմեռեալ որ ցամաքեցաւ լի կատարեալ զբնակապէս ուժգին ջերմ իբրև՝ի խոր ուղղոյ նորա պրկէր զնա. և աչք նորա ոստեան և էլին՝ի գլուխս՝ի անդունդ իւրեանց. և անկաւ կարծանեցաւ և լքաւ կատարեալ։ Բայց նա մինչդեռ շունչ՝ի նմա խաղայր՝ խոստովան լինէր տեառն Աստուծոյ մերոյ և խնդրէր մահ։ և յետոյ խոստովան լինէր եթէ վասն Թշնամանացն Քրիստոսի, արդար գտաստանաւք զայս լինէր կրեալ։ եթող զնա շունչ իւր և այսպէս եղ յաշխարհէ աստի Մաքսիմինոս, այն որ նա միայն էր մնացեալ՝ի Թշնամեաց անտի աստուածպաշտութեանն և չար էր քան զամենեսին։ Բայց եկեղեցիքն շինորհաբն Աստուծոյ ամենակալի՝ի հիմանց իւրեանց նորոգեալ լինէին և բանն Քրիստոսի ծագեալ լինէր՝ի փառս Աստուծոյ և աւելի քան զառաջին համարձակութիւնն զոր ունէր նա առ նա։ Իսկ ամբարշտութիւն Թշնամեացն աստուածպաշտութեան ան-

Թեան ամենայն և անարգանօք լցաւ։ Զի նախ Մաքսիմինոս չինեցնակալաց անտի Թէնեմի հասարակաց մարգկութեան անուանեալ, և հրովարտակաւ նոցա ամբարշտագոյն և ատելի Աստուծոյ բռնաւոր ծանուցաւ. և զպատկերն՝ որ ի պատիւ որդւոց նորա յամենայն քաղաքս եդեալ էին, զկէսս ի բարձուէ կերկիր ընկեցեալ մանրէին, և զայլոց զերեսս մրով մրբեալ անպիտանս գործէին. նոյնպէս և զանդրիս ի պատիւ նորա կանգնեալս ընկեցեալ մանրէին, և ի ծաղր և յայտն կատականաց դնէին, որոց միանգամ Թէնեմանել և կատակել զայնս կամէին։ Այսպէս և այլոց Թէնեմեաց աստուածպաշտութեան պատիւ ջնջել ջնջեալ լինէր, և որ միանգամ զկռոնին Մաքսիմինոսի անէնին, և կամ առ ի նմանէ յատուկեանս իշխանութեան պատուեալք էին առաւել, և առ մարգելոյզ սուտակասպասութեան և առ հաձելոյ զնա ամբարհաւաձ անարգանօք այսպէս կատակ զուսումն մեր առնէին, ամենեքեան սոքա մեհեան սատակեցան։ Որպիսի որ էր պատուաւորագոյնն քան զամենեսին և աքանչելին և սիրելին յաչս բռնաւորին Պիկենտիոս՝ որ երկեցաւ և երիցս բդեշխութեամբ էր պատուեալ, և հաւմարակալ և գանձապետ կացեալ ի նմանէ. դարձեալ և Կուլկիանոս՝ որ ընդ ամենայն աստիճանս վարչու-

Թով և անարգանօք լցաւ։ Եւ նախ Մաքսիմինոս այն որ հակառակն էր ամենայն մարգկան, երբեմն յայնցանէ որ ունէին զնագաւորութիւն ամբարիշտ և Թշնամանեալ և ատելի Աստուծոյ իշխանն ի ձեռն հրովարտակաց խայտառակեցաւ և անուանեցաւ։ Եւ պատկերքն որ վասն նորա և որդւոց խորոց յամենայն ի քաղաքս եդեալ էին, էին՝ որ ի բարձուէ ի վերինէ ընկեցեալ լինէին և մանրեալ, և էին՝ որոց զերեսս խրտնանց մրով մրեալ լինէին։ Եւ անդրիք որ ի պատիւ նորա կանգնեալ էին, այնպէս ընկեցեալ լինէին և մանրեալ և ի ծաղր և յայտն կատականաց. որ միանգամ կամէին Թշնամանել և կատակել եդեալ էին։ Բայց գաձեալ և պատիւ այնոցիկ որոց Թշնամեաց աստուածպաշտութեանն ջնջեալ լինէր. սպանեալ եկն լինէին ամենեքեան որ միանգամ առաւելագոյն յաստիճանս իշխանութեան ի նմանէն պատուեցան վասն աստուածպաշտութեան նորա, հպարտութեան և ամբարտաւանութեան. այսքն կատականաց առնէին զուսումն մեր, այսինքն այն որ պատուաւորն էր քան զամենեսին և աքանչելի և սիրելի էր առաւել քան զայլսն, Պիկենտիոս՝ որ երկեցաւ և երիցս անգամ եղև հիւպատոս, և ի վերոյ քան զամենայն ինչ հնպարքոս ի նմանէն կա-

*Թէան գաւառաց անցեալ, որ և բիւրաւորաց քրիս-
տոնէից արեամբք՝ զոր եհեղ յԵգիպտոս, հպարտա-
ցեալ պարծէր. Հանդերձ սոքօք և այլք ոչ սակաւք,
յորոց ի ձեռս բռնակալութիւն Մաքսիմինոսի զօրա-
ցեալ աճէր; ի պատուհաս ապա կոչեաց արդարու-
թիւնն Աստուծոյ զՔԿոտիկնոս, ոչինչ մնացեալ
որ ինչ գործեաց նա ընդ քրիստոնեայս, զի ի ձեռն
պատկերին զոր կանգնեաց յԱնտիոք քաղաքի՝ յաջո-
ղեալ նմա, և գաւառութեամբ և պատուեցաւ նա
ի Մաքսիմինոսէ։ Իսկ իբրև եկն Լիկիանոս յԱնտիոք
և խնդիր առնէր նա կախարդաց, զնարգարէս և ըզ-
քուբմս նորոյ պատկերին կանգնելոյ չարչարեր և հար-
ցուփորձիւ քննէր թէ առ ինչ խորամանկեցին զայն.
որք յահէ տանջանացն ոչ կարելով ծածկել զձշմար-
տութիւն, յայտնեալ զամենայն խորհուրդս նենգու-
թեան ի Թէոտեկնեայ մեքենայեալ, և ամենեքին
յայնժամ ըստ արժանեաց իւրեանց ընկալան զդա-
տաստանս. Նախ ինքն Թէոտեկնոս, և զկին այնոքիկ
որ Հաղորդ և կցորդ էին կախարդութեանն սորա, յետ
բազում չարչարանաց ի մահ մատնեցան։ Յաւելան ի
սոսա և որդիք Մաքսիմինոսի այնոքիկ որ յառաջ քան
զայժմ ի պատիւ Թագաւորութեան և ի պատկերն զոր կանգ-
նեալ էր նորա հաղորդ և կցորդ նորա էին սոքա։ Եւ գործեալ այնս-*

*ցեալ լինէր։ Եւ Կալիկանէս գործեալ որ զամենայն պետութիւնս
իշխանութեան վարեաց, այն որ և նա բազում արեամբք քրիստո-
նէից՝ զոր եհեղ յԵգիպտոս՝ հպարտացեալ պարծէր, և այլ հան-
դերձ սոքօք որ ի ձեռն նորա յանգգնութիւնն Մաքսիմինոսի առա-
ւել աճէր և զօրանայր. բայց կոչեաց արդար գաւառն այն որ
ոչն ծածկի ի նմանէ ինչ. և զՔԿոտեկնոս վասն ամենայնի որ ինչ
գործեաց ընդ քրիստոնեայս, զի ի ձեռն պատկերին զոր կանգնեաց
յԱնտիոք քաղաքի, զի նոքա կարծէր թէ առաքինանայ. զի և
գաւառս օգուտ ի Մաքսիմինոսէ պատուեսցէ. նա վասն նորա։
Իսկ Լիկիանոս իբրև եմուտ յԱնտիոք քաղաք, և խնդիր առնէր նա
կախարդաց զմօրգարէս և զքուբմն զնորոյ պատկերին զոր կանգ-
նեալ էր չարչարէր և հարցանէր զնոսա, եթէ որով բանիւ ցուցա-
նէին զայնպիսի մեքենութիւն՝ յայտնեցին. և ցուցին թէ ամենայն
մեքենութեան խորհուրդ արուեստագիտութեամբ զոր խորամանկե-
ցաւ Թէոտեկնոս։ Եւ յայնժամ ամենեքին ըստ արժանեաց իւր-
եանց ընկալան զդատաստանս։ Եւ նախ ինքն Թէոտեկնոս և զկին
այնոքիկ որ Հաղորդ և կցորդ էին կախարդութեան նորա յետ բա-
զում չարչարանաց ի մահ մատնեցան։ Եւ հանդերձ այսու ամե-
նայնիւ յաւելան և որդիքն Մաքսիմինոսի այնոքիկ որ յառաջ քան
զայժմ ի պատիւ Թագաւորութեան և ի պատկերն զոր կանգ-
նեալ էր նորա Հաղորդ և կցորդ նորա էին սոքա։ Եւ գործեալ այնս-*

զայժմ՝ ի պատիւ Թագաւորութեան և՝ ի պատկերս և յանդրիս կանգնեալը գահակիցս և փառակիցս ինքեան առնէր։ Պաթձեալ և այնոքիկ որ յազգատոհմէ բըռնաւորին էին և սակաւացեալը հարստահարէին զամենայն մարդիկ, ըստ նմանութեան առաջնոցն և առաս անարգանս և չարչարանս կրէին, փոխանակ զի ոչ ընկալան զերատ, և ոչ գիտացին և ոչ՝ ի միտ առին զբանն, որ հրամայէր՝ ի գիրս սուրբս Թէ. Մի յուսայք յիշխանս և մի յորդիս մարդկան, զի ոչ գոյ փրկութիւն՝ ի նոսա։ Ելցէ հոգի՝ ի նմանել և դարձցի անդրէն՝ ի հող, և յայնմ աւուր կորիցեն ամենայն խորհուրդք նոցա։ Ա.յսպէս ուրեմն՝ ի բաց սրբեալ ամբարշտացն զածած, կոստանդիանու միայն և Լիկիանեայ Թագաւորութիւն հաստատուն և աննախանձ մնաց. որք բարեբարութեանց Աստուծոյ վերահասուք՝ յառաջ քան զամենայն բարձին՝ ի միջոյ զհակառակամարտ Թշնամութիւնն ընդ Աստուծոյ, և զբարեսէր, զպաշտօնասէր զաստուածասէր և զհնորհակալու միտս առ Աստուած ցուցին օրինադրութեամբն իւրեանց յազատութիւն քրիստոնէից։

*քիկ որ յազգատոհմէ իշխանին էին պաթձէին յառաջագոյն և հրաւիրանոյին և բռնադրօսկին զամենայն մարդիկ. և նոքա ըստ նմանութեան առաջնոցն անարգանս չարաչարս ընդունէին. փոխանակ զի ոչ ընկալան զերատ և ոչ գիտացին և ոչ՝ ի միտ առին զբանն որ հրամայէր՝ ի գիրս սուրբս Թէ մի յուսայք յիշխանս և մի յորդիս մարդկան, զի չիք՝ ի ձեռս նոցա փրկութիւն. զի ելանէ հոգի նոցա և դառնայ՝ ի հող իւր և յայնմ աւուր կորնչի ամենայն խորհուրդ։ Այլ շնորհք լիցի Աստուծոյ՝ ի վերայ ամենեցին, զի նա ինքն է ամենակալ. և Թագաւոր ամենայնի և փրկիչն մերոյ և ապրեցուցչի անձանց մերոց Յիսուսի Քրիստոսի միածնին Աստուծոյ և բանին նորա, զի պահեցի մեզ խաղաղութիւն հանապազօր ազօթս առնեմք իրրու հաստատուն է և ոչ չարժի յարատեցն աշխատեցուցչաց կամ՝ ի նմին մնաց *։*

* Այսպես յորինակին այս բան, որ գոյ՝ ի սկիզբն յօրէրդ գլխոյն։

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

—

Գլուխ Բ. [1] — « Եւ ոչ զամբան վեց ». Քանզի յետ հրովարտակին առաջոյ ոչինչ երկարակեաց լեալ Գազէրիոսի՝ չարաչար մահուամբ եղ ի կենաց, և ընդ լուր մահու նորա աճապարեալ Մաքսիմինոս Կեսար՝ էառ զանձամբ զինքնակալի անուն և գործեալ վերսին յարոյց զհալածանս։

Գլուխ Զ. [2] — « Լուկիանոս երկց եկեղեցւոյն Ալեքսանդրացւոց ». Յառաջագոյն եգեալ զպատմութիւն վկայութեան առաքս, յաւելու մատենագիրս դնել առաւել և սոյգ ժամանակն, որ առ Մաքսիմինոսի եղև օրակս և զԹեոդոտոս հայրապետին Ալեքսանդրացւոց զվախճանն առ սովին բռնաւորաւ, և ոչ առ Գազէրիոսէ եղեալ։

Գլուխ Թ. [3] — « Յազատ զօրականէն ». Որ զօրքունքն ընդունէին զառնիկ զօրականքս և յամենայն պարտուց ծառայութեան ազատք՝ ըմբռնանային բազում անգամ խուսել զքրիստոնեայս՝ սպառնալեօք քարշելոյ զնոսա յատեան դատաստանաց։

ՅԱՆԿ ՏԱՄՆԵՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԵԱՆ

Ա. — Վասն խաղաղութեան որ տուաւ մեզ ՅԱստուծոյ։
Բ. — Վասն Նորոգ Ընծայութեան եկեղեցեաց։
Գ. — Վասն ածխոյ նաւակատեացն եկեղեցեաց որ ընդ ամենայն տեղիս։
Դ. — Բան կացրդական՝ի հանգէս ամենաժողով ածխին։
Ե. — Պատճէն թագաւորական օրինաց։
Զ. — Վասն իրացն որ անկն էր քրիստոնէից։
Է. — Վասն Ժառանգաւորացն ապահարկ ազատութեան։
Ը. — Վասն յետոյ ուրումն չարաչնենգ գնացիցն Լեհիանոս, և չարաչար նորոգն կաստրածն։
Թ. — Վասն յաղթութեան Կոստանգիանոս, և առ՝ի նմանէ եղելոցն ընդ ամենայն իշխանութիւն հռոմկական պետութեան։

ԴՊՐՈՒԹԻՒՆ ՏԱՄՆԵՐՈՐԴ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ։

Ա. — Առաջին ճառք, վասն խաղաղութեանն որ ՅԱստուծոյ տուաւ մեզ։
Բ. — Երկրորդ, վասն Նորոգման եկեղեցւոյ։
Գ. — Երրորդ, վասն ածխոյ նաւակատեաց եկեղեցեաց որ լինէին ընդ ամենայն տեղիս։
Դ. — Չորրորդ, խօսք վասն լուսաւորութեանն իրաց։
Ե. — Հինգերորդ, պատճէնք օրինաց թագաւորացն։ Վասն ամենայնի որ ինչ արժան էր քրիստոնէից, և պատմութիւն վասն Լեհիանոսի։

ԴՊՐՈՒԹԻՒՆ ՏԱՄՆԵՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ա.

Վասն խաղաղութեան որ տուաւ մեզ յԱստուծոյ։

Ա.ՐԼ Հնորհ՝ի վերայ ամենայնի՝ Աստուծոյ Հօր ա-
մենակալի և ամենաթագաւորին. և գոհութիւն լիա-
բերան Փրկչին մերոյ և տպրեցուչի Հոգւոց մերոց
Յիսուսի Քրիստոսի. որով խնդրեմք զի զխաղաղու-
թիւնս այս մեր Հաստատուն և անշարժ պահեսցէ
միշտ յարտաքնոց անտի լկանանց, և՝ի ներքինն յու-
զից խռովութեանց Հոգւոց։ Մանգամ և աղօթիւք
քովք, ո երանելիդ Պաւղոս՝ [1], զամենեցուրդ գիրս՝ի
վերայ այլոց գրոցս պատուիրեան եկեղեցւոյ յաւել-
ցուք դնել, ՝ի քո անուն ընծայելով՝ իբրև կինք ող-
ջոյն գործոյս զքեզ հռչակեցուք։ Նմանագոյնս ար-
դեօք և ամենայն իրօք Ձահողագոյս ՝ի Հանդէս Նա-
ւակատեաց եկեղեցեաց դիցուք զքանս՝ Հաւանեալ
Հոգւոյն Աստուծոյ, որ Հրաւիրեալ յորդորէն զմեզ

Վասն ձառ. վասն խաղաղութեանն որ յԱստուծոյ տուաւ մեզ։

Ա.ՐԼ Հնորհ լիցի Աստուծոյ՝ի վերայ ամենայնի Հօր և Թագա-
ւորին ամենայնի և փրկչին մերոյ տպրեցուչին անձանց մերոց Յի-
սուսի Քրիստոսի միածնին Աստուծոյ և բանին Նորա, այն որ՝ի ձեռն
Նորա է, զի պահեսցի մեզ խաղաղութիւն Հանապազորդ, աղօթս առ-
նեմք իբրու Հաւատաւոր է ոչ չարժի յարտաքին աշխատեցուչացդ
կամ՝ի նմին մտաց։ Չանգեալ այսոքիմբք աղօթս արասցուք, զի և
զայս գպրութիւն տաճկերդոյ գիցուք զսա ընդ այլ գպրութիւնս
պատուիրանաց եկեղեցւոյն, որ կանխեցան ելգան. յառաջ քո իսկ
գիցուք զսա, Պօղնէ առաք, և իբրև կինք ամենայն պատուիրանաց
զքեզ անուանեցուք արժանի իսկ զնոսս կատարել Թուոց ՝ի նո-
բոգոստն կատարեալ եկեղեցւոյ գիցուք ասա։ Իբրև Հաւանեալ
յանձն առնումք մեք ՝ի Հոգւոյ անտի Աստուծոյ որ Հրամայէ այս-
պէս։ Օրհնեցէք զմեր յօրհնութիւն նոր զի պարծելիս արար,

այսպէս. Օրհնեցէք զՏէր յօրհնութիւն նոր, զի աբան չելիս արար։ Փրկեաց զնա աջ իւր և բազուկ սուրբ իւր։ Եցոյց զփրկութիւն իւր առաջի ազգաց, յայտնեաց զարդարութիւն իւր։ Եւ զկնի բանին որ ՀրամայիՏէ՝ Օրհնել զօրհնութիւն նոր, յիրաւի արդեօք և մեք գուշացուք եթէ յետ ահագին և խաւարային անցիցն զորս տեսեալ և պատմեցաք, արժանի եղաք որ իբրև այսպիսի է տեսանել և առնել տնօս, զոր յառաջ քան զմեզ բազումք արդարև 'ի սրբոց և 'ի վերկայից Աստուծոյ ցանկացան տեսանել 'ի վերայ երկրի, և ոչ տեսին, և լսել՝ և ոչ լուան։ Ա՛լ նոքա արագ արագ աձապաղեալ և լաւագունին քան զայս Հանդիպեցան Հնօրհի, զի յափշտակեցան յերկինս և 'ի դրախտն աստուածային փափկութեան։ Իսկ մեք զայսոսիկ մեծ և քան զմեր արժանաւորութիւն խոստովանեալ՝ զարմանալիք ընդ մեծութիւն Հնօրհի պարգեւացն, և յիրաւի յամենայն անձնէ մերմէ և 'ի զբոսութենէ աբանչացեալ ընդ պարգեւատուն՝ երկիր պագանեմք նմին, և ընդ Ձէմարտութիւն կանխաձայնեալ բանից նորա վկայեմք, որ ասէն. Եկայք և տեսէք զգործս Աստուծոյ, որ արար զնշանս և զարուեստս 'ի վերայ երկրի։ ԵՀար զպատերազմ 'ի ծագաց մինչև 'ի ծագս երկրի, զաղեղունս փշրեաց, զզէնս խորտակեաց, և զասպարս այրեաց Հրով։ Եւ ընդ այս ամե-

փրկեաց նմա աջ և բազուկ սուրբ, եցոյց զփրկութիւն և առաջի ազգի յայտնեաց զարդարութիւն։ Եւ զկնի բանին որ ՀրամայիՏէ օրհնել զօրհնութիւն նոր։ Պատասխանի տացուք և մեք և ասասցուք. որ յետ պատմութենից և խաւարեալ և ապականեալ երեսաց արժանի եղաք, որ իբրև զայսպիսիս է տեսանել և առնել տնօս զրաւեալ արդարոց և վկայից Աստուծոյ, որ յառաջ քան զմեզ ցանկացան տեսանել 'ի վերայ երկրի և ոչ տեսին, և լսել՝ և ոչ լուան։ Ա՛լ նոքա արագ արագ աձապաղեցին և արժանի եղեն քան զայս, յափշտակեցան յերկինս և 'ի դրախտն ուրախ լինել առ Աստուած։ Իսկ մեք խոստովան լինիմք· զի և այսոքիկ առաւել են քան զմեզ և զարմանալիք ընդ Հնօրհս պարգեաց տուչին և զբաւնացեալ իսկ եմք որպէս և արժան է և յամենայն անձնէ և 'ի զբոսութենէ մերմէ երկիր պագանեմք և վկայեմք 'ի վերայ Ձէմարտութեանն որ ինչ ասացաւ մարգարէութեամբ 'ի գիրս· զի ասէ այսպէս. Թէ եկայք և տեսէք զգործս Աստուծոյ որ առնէ զբաւնչելիս 'ի վերայ երկրի, և Հարկանէ զպատերազմ 'ի ծագաց մինչև 'ի ծագս երկրի· զաղեղունս փշրեաց, զզէնս խորտակէ, և զասպարս այրէ։ Եւ իբրև

Նայն՝ որ ՚ի մեր աւուրս արդեամբք կատարեցան, ուրախ լինել գոհութեամբ, զարձցուք անդրէն ՚ի կարգ պատմութեանս։

ԳԼՈՒԽ Բ.

Վասն նորոգ շինուրեան եկեղեցեացս։

Եւ ընդ ելանել, որպէս ՚ի վեր անդր իսկ ասացաք, ամենայն ազգ ատելեացն Աստուծոյ, և յանկարծակի պակասեցան ՚ի միջոյ մարդկան, որպէս զի կատարեսցի զարձեալ բանն Աստուծոյ որ ասէ, Ցեսի զամբարիշտն վերացեալ բարձրացեալ որպէս զմայրսն լիբանանու. անցի և ահա ոչ էր, խնդրեցի և ոչ գտաւ տեղի նորա։ Եւ արդ այսուհետև օր զուարթ է և լուսապայծառ, չէք ՚ի նմա և ոչ ստուեր մի ամպոյ, զի Հառագայթք լուսոյն երկնաւորի լուսաւորեցին ընդ ամենայն տիեզերս զեկեղեցին Քրիստոսի։ Եւ որոց միանգամ արտաքոյ Հաւատոց մերոց էին՝ չէր և նոցա նախանձ հաղորդել ընդ մեզ ՚ի բարիսն՝ որ տուան մեզ Աստուծոյ, զի թէպէտ և ոչ Հաւասարութեամբ, սակայն գոնեա սակաւիկ մի որչափ իցէ։ Քանզի Հա-

ուրախ լինիմք մեք այսոքիմբք. զի արդեամբք կատարեաց ՚ի մեզ։ Ձեռ այսորիկ խաղացուք երթալ ՚ի պատմութիւն անդր։

Երկրորդ. վասն Նարոզման եկեղեցեաց։

Ջնջեցաւ իսկ և ազգն ամենայն ատելեացն Աստուծոյ, որպէս զի վերագոյն ասացաք, և տեսչն մարդկան այնոցիկ յանկարծակի ջնջեցաւ որպէս. զի կատարեսցի գարձեալ բանն Աստուծոյ որ ասէ այսպէս։ Թէ տեսի զամբարիշտն վերացեալ բարձրացեալ որպէս զմայրսն լիբանանու. անցի և ահա ոչ էր, և ոչ գտաւ։ Եւ արդ այսուհետև օր է ուրախութեան և լուսաւորութեան, զի չէք ՚ի նոսա և ոչ մի տուէր ամպոյ. զի Հառագայթք լուսոյն երկնաւորի լուսաւորեցին զամենայն արարած ՚ի ձեռն եկեղեցւոյն Քրիստոսի, և չէք նախանձ հաղորդել ընդ մեզ ՚ի բարիսն որ Աստուծոյ տուան մեզ. և որ միանգամ արտաքոյ Հաւատոց մերոց իցէն. զի թէպէտ և ոչ հաւասարութեամբ, սակայն գոնեա սակաւիկ մի որչափ և իցէ։ Բայց ամենեցուն իսկ մարդկան տուան ազատութիւն ՚ի հնազանդութենէ անտի իշխանացն, և բուժեցան յառաջին չա-

սարակաց ամենայն մարդկան եղև ազատութիւն ի հարստահարութենէ անտի բռնաւորաց, և ի չարեաց անտի առաջնոց զերծեալք՝ էին և որ խոստովան լինէին եթէ նա միայն է Աչխարհիս Աստուած, որ օգնական է պաշտօնէից իւրոց երկրպագուաց։ Եւ մեզ մնաւանդ՝ որք միանգամ ի Քրիստոս յօծեալ Աստուծոյ եղաք զոյս մեր խրախութիւն էր անպատում, և ամենեցուն աստուածապզեցիկ զուարճացեալ ծաղկէին գէմք. և ամենայն տեղի որ յառաջ քան զայս մի աւերակ ամայի էր յամբարշտութենէ անտի բռնաւորաց, որպէս յերկար և ի մնացեալսն հիւանդութենէ ի կրկին կենդանութիւն վերածեալ տեսանէին. և տաճարք վերստին ի հիմանց բարձրակազոյգք կանգնէին, պայծառագոյն փայլելով քան որ երբեմն քակտեալ կործանեցան։ Ա.յլ և Թագաւորք վերստեայք ստէպ ստէպ օրինօքն որ վասն քրիստոնէից էր՝ զհեծութիւն պարգևացն Աստուծոյ և ևս ընդարձակեալ հաստատէին ի մեզ։ Նամակաւն ի Թագաւորէն առ եպիսկոպոսունս առաքէին, և պատիւք և պարգևք ելանէին նոցա։ Ջորոց զպատձէն ի գէպ ժամանակի ի լատին բարբառոյ ի յոյն լեզուալ՝ և իբրև ի սբբազան տախտակս ի գիրս յայս գրոշմել ոչինչ օտար Համարիմք, զի եղիցի ի յիշատակ որոց միանգամ գալոց իցեն զնոսին մեր ազգ։

բնացն անտի. և ոմանք ոմանք խոստովան լինէին, եթէ մի միայն է Աստուած Աչխարհիս, այն որ նա ինքն է օգնական պաշտօնէից իւրոց, և մանաւանդ մեր որ միանգամ կանխեցաք գոյս մեր յօծեալն Աստուծոյ. և խրախութիւն էր անպատում և ուրախութիւն յԱստուծոյ յամենայն մարդ զուարճացեալ ծաղկէր. և ամենայն գաւառք որ յառաջ քան զայս մի աւերակ Թափուր էր յամերջ տաճեան իշխանացն իբրև ի դառն հիւանդութենէ ապաչա տեսանէին զնորոգեալ լինելր. և տաճարք գարձեալ վերստին ի հիմանց իւրեանց շինեալ լինէին և կատարեալ. և առաւելապէս փառս ընդունէին որ միանգամ յատաջագոյն պատկանեցան։ Ա.յլ և Թագաւորքն վերստեայք ստէպ ստէպ օրինօքն որ քրիստոնէիցն էր զպարգևն Աստուծոյ հաստատէին մեզ զօրութեամբ և մեծութեամբ գային. խակ և հրովարտակք Թագաւորացն յանուանէ եպիսկոպոսացն, և պատիւք և պարգևք աստղատեղոյ որ տան ի գէպ ժամանակի բանի. իբրև ի պատմութեանս սրբոյ Եւսեբեայ նշանակեցաք զբանս նոցա յոյս գիրս. զի եղիցին յայտնի. վասն յիշատակի որոց միանգամ գալոց իցեն զնոսին մեր։

ԳԼՈՒԽ Գ.

Վասն տօնից նաւակատեաց եկեղեցեաց որ ընդ ամենայն տեղիս։

Հանդերձ սոքիմբք յաջողէր մեզ զըղձալին զայն և զսիրելի տեսանել հանդէս, զի տօնք նաւակատեաց յամենայն քաղաքս լինէին, և օծումն սրբութեան նորոց տաճարաց աղօթից։ Դարձեալ և եպիսկոպոսաց ժողով՝ի միասին, և՝ի հեռաւոր աշխարհաց խուռնըլ-թաց եկաւորք, և ժողովրդոց ընդ ժողովրդեան սիրա-կամութեամբ գալ՝ի մի միաբանութիւն հաւատոյ-թեան անդամոց մարմնոյն Քրիստոսի։ Եւ դէպ լինէր ըստ կանխաձայն մարգարէութեանն, որ խորհրդա-կան օրինակաւ զլինելոցն առ յապայ նշանակէր։ Մեր-ձենայր ոսկր առ ոսկր, և յօդք առ իւրաքանչիւր յօ-դըս. և զոր այլ ևս կանխեաց ծանոյց աստուածազ-դեաց բանն յառակ օրինակին անսուտ ճշմարտու-թեամբ։ Մի էր Հոգւոյն Աստուծոյ զօրութիւն ընդ ամենայն անդամս մարմնոյն խաղալով, մի հոգի, մի շունչ ամենեցուն, մի խորհուրդ և յօժարութիւն հա-

երրորդ . վասն տօնից նաւակատեաց եկեղեցեաց , որ յիւրիւր ընդ ամենայն տեղիս ։

Հանդերձ այսոքիմբք , եղև տեսիլն այն որ մեք ամենեքին սի-րեմբ և ազօթս առնեմբ վասն նորա , զի յամենայն քաղաքս ժողո-վեալ լինէին՝ի տօնս նաւակատեաց , և տաճարքն որ վասն աղօթից չլինեալ լինէին և եպիսկոպոսք ժողովեալ էին՝ի միասին և ժողով ժողովրդոց՝ի հեռաւոր աշխարհաց և ժողովուրդք որ զժողովուրդ ոչ ճանաչէր՝ի սէր անգամ՝ց մարմնոյն Քրիստոսի՝ի միաբանութիւն և՝ի հաւատարմութիւն գային , և ժողովէին որպէս ասացեալ է՝ի մարգարէութենէն , որ իբրև խորհրդիւ եցոյց վասն այնր իրիք որ ինչ լինելոց էր առ յապայ , մերձենայր ոսկր առ ոսկր և յօդ առ յօդ , և այլն ևս զոր ինչ միանգամ կանխեաց յառաջագոյն ասաց բանն Աստուծոյ . ակնարկելով՝ի ձեռն մարգարէութեան , առանց աստուածեան կատարեալ լինէին . և մի զօրութիւն որ Հոգւոյն Աս-տուծոյ յամենայն անգամս հաստատեալ էր , և մի շունչ ամենե-ցուն և մի խորհուրդ հաւատոց , և յամենեցունց մի օրհնութիւն

ւատոց, և մի օրհնութիւն ամենեցուն աստուածաբա-
նելով։ Ցնծոյն պաշտօն կատարելով առաջնորդաց եկե-
ղեցւոյ, և մտադիր նուիրապործելով քահանայից, և
աստուածավայելուչ 'ի գլուխ տանելով զօրինս եկե-
ղեցւոյ։ Այս սաղմոսք և յառ Աստուծոյ աւանդեալ
մեզ պատգամք հնչէին, անդ աստուածայինն և խոր-
հրդական օրէնք գոհութեան. որ փրկական չարչա-
րանաց խաչելոյն էր մեզ նշանակ գաղտնախորհուրդ
և անձառ։ Ւ՛ւ առ հասարակ ամենայն ազգ մարդկան
'ի միասին արանց և կանանց, և ամենայն հասակ յա-
մենայն զօրութենէ մտաց աղօթիւք և գոհութեամբ
զտուիչն բարեաց զԱստուած 'ի հոգի և 'ի շունչ ըղն-
ծութեամբ և ուրախութեամբ փառաւորէին։ Եւ ա-
ռաջնորդք հաւատացելոց իսոս առնէին առ ժողո-
վուրդն և ամենայն ուրեք ըստ կարի իւրեանց և ըստ
հանձարոյ, և զամենաժողով տօնս մեծապէս զարդա-
բէին։

ԳԼՈՒԽ Դ.

Բանի կացդրական 'ի հանդէս առնեսւոյ ժողովոյն տօնիսն։

Արդ ոմն 'ի չափաւոր հանձարոց՝ զայս օրինակ յօ-
րինեալ Ճառս առ ժողովական հովիւսն, որ իբրև 'ի

որոտայր և պաշտօնն կատարեալ առաջնորդացն եկեղեցւոյ որ վայե-
լէին Աստուծոյ և պատարագ քահանայից. և օրէնք եկեղեցւոյ որ
վայելուչ էին Աստուծոյ. էր սեղն զի սաղմոսք և բանք որ յայտ-
նեալ էին և լսելի լինէին 'ի նմանէ, և էր սեղն որ պաշտօնք խոր-
հրդոյն Աստուծոյ կատարեալ լինէին 'ի նմա, որ էին նոքա օրի-
նակք ծածկեալ չարչարանաց փրկչին մերոյ, և 'ի միասին ամենայն
ազգ առհասարակ արանց և կանանց ամենայն զօրութեամբ խոր-
հրդոյ աղօթիւք և գոհութեամբ, չնչով և մտաք, ցնծութեամբ և ու-
րախութեամբ զտուիչն բարեաց զԱստուած փառաւորէին։ Եւ ա-
մենեքեան որ միանգամ կամէին առնէին իսոս նահապետաց առնիկ
ըստ կարգի, որպէս և էր մի 'ի նոցանէ. և յարգէին և ուրախ
առնէին զժողովուրդն առնիկ. և մի յայնցանէ իակ 'ի կրսերացն նոցա
էկաց 'ի միջի և իսօսեցաւ իսոս իբրև 'ի ժողովուրդ եկեղեցւոյ. իբ-
րև զի ժողովեալ էին հովիւք բազումք և խաչազուարթեամբ և հան-

Ժողով եկեղեցւոյ գումարեալ էին և բազում խաղաղութեամբ և վայելչական հանդարտութեամբ յունկընդրութեան ինային, ի դէմս միոյ ուրուն ի Ժողովելոց անտի եպիսկոպոսաց որ ընտիրն էր և աստուածասէր, որ փութով պնդութեամբ իւրով զՅոյակապն և զվայելչական ընդ ամենայն Փիւնիկիկ, զտաճարն Աստուծոյ ի Տիւրոս կառուցեալ էր, և խօսեցաւ օրինակ զայս՝

Խօսք ի հանդէս տօնի նաւակատեաց եկեղեցեաց՝ ասացեալ ի դէմս Պաւլինեայ եպիսկոպոսի եկեղեցւոյն Տիւրոյ՝

Ո՛ բարեկամք և քահանայքդ Աստուծոյ, որ զգեցեալ էք ի հանդերձ սրբութեան, և զսպակ երկնաւոր փառաց և զծոումն Աստուծոյ և զքահանայական սրբոյ հոգւոյն զպնդնաւորն արիեալ զանձամբ։ Եւ դու, նորոյ սրբոյ տաճարին Աստուծոյ փառդ և պարծանք, որ ալևոյթ հանճարով յառ Աստուծոյ պատուեալ, երիտասարդական առոյգ արութեան գործ կատարեալ արդեամբք ցուցեր։ Ջոր Աստուած ինքնին՝ որ զերկինս և զերկիր լնու, գերագոյն պարգևօք պատուեաց, զի յերկրի՝ Քրիստոսի նորա միածնի և անդրանկի նորա բանին և սրբոյ Հարսին նորա ընտրելոց

դարուն Թեամբ պատրաստակաւ լինէր ունկնդրութիւն նորա։ Իբրև ի դէմս միոյ եպիսկոպոսի այն, ամենայն իւիք առաքինի էր և վայելուչ Աստուծոյ։ այն որ պնդութեամբ իւրով զբանելի էր առաւելապէս ի Տէր փիւնիկեցւոց, և տաճար առաւել զբանելապէս չինեաց անդ։ բայց խօսեցաւ նա իբրև զայս խօսս։

Զարյորդ։ խօսք վասն յառաւօտրեանն իրաց եկեղեցեաց։

Խօսք որ ի վերայ Ժողովդեան տանէն և վասն չինուածոյ եկեղեցւոյն, որ սաղմոսալն է ի դէմս Պողինէի եպիսկոպոսի եկեղեցւոյ Տիւրոյ։

Ո՛ քահանայք սիրելիք Աստուծոյ, որք զգեցեալ էք ի հանդերձ սրբութեան և սպակ երկնաւոր փառաց և զծոումն Աստուծոյ և զպատմուճանն քահանայութեան և զՀոգի սուրբ, և դու ով գովեալ նոր տաճարի Աստուծոյ սրբոյ, որ արդեամբք և առաւել գործովք, և առաքինի բնաւորութեամբ պնդեալ ես, զի ինչ Աստուած որ ունի զամենայն տիեզերս, առաւել պարգևօք պատուեաց զքեզ։ զի ի վերայ երկրի չինեացես տաճար Քրիստոսի բանին

տուն և տաճար շինեսցես: Եթէ ոք զքեզ նոր Բեսաղիել Հարտարապետ խորանին Աստուծոյ կոչել սխորժիցէ. կամ Սողոմոն նորոյ և բազմօք ընտրելագունին Երուսաղէմի Թագաւոր, կամ Ջօրաբաբէլ նոր, որ մեծացոյց զփառս վերջնոյ տաճարին քան զառաջնոյն: Եւ դու, փարախ և գաւիթ սրբութեան Հօտին Քրիստոսի, բնակութիւն բանից բարեաց, և տեղի խրատու զգաստութեան. և նազելի աստուածպաշտութեան լսարան: Եւ որ երբեմն մեք զսքանչելարուեստ նշանս բարեբարութեան Աստուծոյ մերոյ առ մարդիկ ի յինքն երեցուածոց աստուածերէնն գրոց սրբոց լսելով զօրհնութիւնս առ Աստուած և երգս գոհութեան հընչեցուցանել խրատեալ էաք, եթէ Աստուած ականջօք մերովք լուաք, և հարքն մեր պատմեցին մեզ գործս զոր գործեցեր յաւուրս յառաջինս: Բայց արդ ոչ թէ ի լսելոյ, և ոչ իբրև ի համբաւոյ բանից զբազուկ բարձր և զերկնաւոր աջ բարեբարին մերոյ և ամենաթագաւորին Աստուծոյ գիտեմք, այլ արդեամբք, և որպէս բանիս կարդ է ասել, և այսօր մերովք տեսաք զՀաւատս և զՀնազանդութիւն երբեմն ասանգելոց նոցա. որով և զերկրորդն հանցեալ զօրհնութիւն յաղթական, և յայտնապէս ձայն բարձեալ և գոչեսցեալ. Որպէս լուաք՝ այնպէս և տեսաք ի քաղաք Տեառն զօրութեանց, ի քաղաք Աստուծոյ մերոյ: Յորմէ

և միածինն Նորա և զկենդանին Նորա սուրբ փառաւորիչ Աստուծոյ: Եթէ ոք կամիցի կոչել զքեզ Բեսաղիել նոր Հարտարապետ խորանին Աստուծոյ, կամ Սողոմոն Թագաւոր նոր և առաւել երեւելի, կամ Ջօրաբաբէլ նոր, այն որ մեծացոյց զփառս վերջին տաճարին առաւել քան զառաջինն: Նա և դուք գառինք Հօտին Քրիստոսի բնակութիւն բանից բարեաց, և տեղի խրատու զգաստութեան: Լսեր սրբելի աստուածպաշտութեան այնքանիկ որ յառաջագոյն ի լսելիս ձեր արկանէին ի ձեզ աստուածեղէն ըմբռնեցուածոց զօրհնութիւնս աստուածպաշտութեան և զբանչելիս տեսանն մերոյ և օգնութիւնն՝ որ առ մարգկան, և օրհնութիւնս Աստուծոյ Հանէին համաբանակ է ասել և յորժամ խրատեմք, եթէ Աստուած ականջօք մերովք լուաք, և հարքն մեր պատմեցին գործ զոր գործեցար յաւուրս առաջինս: Ահա և արդ ոչ թէ իբրև ի լսելոյ և ոչ իբրև ի համբաւոյ բանից բազուկն բարձր և ձեռն երկնաւոր Թագաւորին մերոյ և Աստուծոյն ընդունիմք մեք: Բայց արդեամբք առ վին այսօր մերովք տեսաք Թէ Հնազանդիս եղեն, և Հաւատամք մեք որ յառաջագոյն առան վասն յիշատակի: Բայց օրհնութիւն երկրոր-

քաղաքի, եթէ ոչ յաստուածաշնչէնս յայս և ի նորա-
կերտ տաճարս, որ է եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ,
սիւն և հաստատութիւն ճշմարտութեան։ Որոյ վասն
և այլ միւս ևս բանն Աստուծոյ աւետարանէ այսպէս
թէ. Փառաւորութիւնք պատմեցան զքէն աւագիկ
քաղաքդ Աստուծոյ, յորում և Ժողովեաց զմեզ Աս-
տուած բարերար՝ ընորհօք Միածնին իւրոյ. և իրա-
քանչիւր որ կուգեցանն երգեսցեն մի առ մի և գուես-
ցեն ասելով. Ուրախ եղէ ես ընդ այնոսիկ՝ որք ասէին
ցիս ի տուն Տեառն երթիցուք մեք։ Եւ դարձեալ. Տէր
սիրեցի զվայելչութիւն տանդ քո, և զտեղի յարկի փա-
ռացդ քոյ։ Եւ ոչ եթէ առանձին իւրաքանչիւր ի մէնք
միայն, այլ և ամենեքեան միահաղոյն միանգամայն ի մի
հոգի և ի մի շունչ փառաւորելով աղաղակեսցուք.
Մեծ է տէր և օրհնեալ է յոյժ ի քաղաք Աստուծոյ
միոյ ի լեառն սուրբ նորա։ Քանզի մեծ է արդարև,
և մեծ է տաճար նորա, բարձր և հոյակապ, և գեղե-
ցիկ տեսանելով քան զամենայն որդւոց մարդկան։
Մեծ է Տէր, որ արար սքանչելիս միայն. մեծ է որ ա-
բար մեծամեծս, անբնինս, փառաւորս և սքանչելիս՝
որոց ոչ գոյ թիւ։ Մեծ է այն որ փոփոխէ զժամս և
զժամանակս. որ կործանէ զաթոռս բռնաւորաց, և
նատուցանէ զիշխանս, որ յարուցանէ զաղքատս յեր-

գումն յաղթութեանն հանցուք. և իբրև ի նմին գործոյ անտի ա-
զաղակեսցուք և ասասցուք որպէս լուաք, այսպէս և տեսաք ի
քաղաք տեառն զօրութեանց ի քաղաք Աստուծոյ մերոյ։ Բայց յո-
բուժ քաղաքի, այլ յայս որ չինեցաւ նորոգապէս և ընդունելի ե-
զե Աստուծոյ, որ է սա եկեղեցի Աստուծոյ կենդանւոյ, սիւն հաս-
տատուն ճշմարտութեանն. վասն այնր զի և այլ միւս ևս բանն Աս-
տուծոյ աւետարանէ այսպէսթէ. փառաւորութիւնք պատմեցան ի
քէզ աւագիկ քաղաքդ Աստուծոյ, այն որ ի նա Ժողովեաց զմեզ
Աստուած բարերար. ընորհօք միածնին իւրոյ ամենեքեան մի մի
յայնցանէ որ կուգեցան աղաղակեցէք և ասացէք. ուրախ
եղէ ես յորժամ ասէին ցիս եթէ ի տունն տեառն երթիցուք, և
թէ. տէր սիրեցի զվայելչութիւն և զտեղի յարկի փառացդ։ Եւ ոչ
եթէ միայն առանձինն իւրաքանչիւր ի մէնք, այլ և ամենեքեան
յանկարծակի ի մի չունչ և ի մի շունչ պատմեցուք և փառաւո-
րեսցուք և ասացուք, մեծ է տէր և օրհնեալ է յոյժ ի քաղաք
Աստուծոյ մերոյ ի լեառն սուրբ նորա և սքանչելի զի և մեծ իսկ է
չիշխարհս, և մեծ է տաճար նորա և բարձր և սքանչելի և գեղեցիկ
տեսիլ նորա քան զբոլոր մարդկան, մեծ է տէր որ արար զսքանչե-

կրէ և բարձր առնէ զտառապեալս յաղբևաց՝ Քա-
կեաց զՀզօրս յաթոռոց, և բարձրացոյց զխոնարհս։
Զքաղցեալսն լցոյց բարութեամբ, և զպաղուկս ամբար-
տաւանից խոտանեաց։ Որ ոչ եթէ առ հասատա-
ցեալս միայն, այլ և առ անհաւատս զիշատակ պատ-
մութեանցն առաքեաց հաւատարիմ գործեաց։ Մե-
ծագործ և զարմանագործ, բոլորից Տէր և արարիչ
ամենայն տիեզերաց, ամենակալ և բարերար՝ մի և
միայն Աստուած. որում և Հանեմք օրհնութիւն նոր,
փոխանակ զի արար զպրանելիս մեծամեծս, և զի յա-
ւիտեան է ողորմութիւն նորա։ Որ եհար զՁագաւորս
մեծամեծս, և սպան զՁագաւորս հզօրս, զի յաւի-
տեան է ողորմ նորա։ Զի յիշեաց զմեզ Տէր՝ ի խոնար-
հութեան մերում, և փրկեաց զմեզ՝ ի ձեռաց թշնա-
մեաց մերոց։ Եւ՝ ի փառաւորելոյ արդ օրհնութեամբս
զՀայրն բոլորից մի՛ գադարեսցուք. և զբարեացս այսո-
ցիկ զերկրորդ պատճառ [2], զառաջնորդն մեր յաս-
տուածգիտութիւն, և զվարդապետն՝ ի Հշմարիտ աս-
տուածպաշտութիւն, զստահակին ամբարշտաց և զջա-
խիչ բռնաւորաց, զաղդրէն կենաց և զփրկիչն կորու-
սելոց զՏէրն մեր Յիսուս Քրիստոս միաբերան պա-

լիս միայն. մեծ է որ արար զպրանելիս անբաւ, և զօրութիւն և ա-
բուեստս անթիւս. մեծ է այն որ փոխէ զժամանակս և զտարիս,
անցուցանէ զթագաւորս, որ բարձր առնէ զաւրկէն յերկրէ և
յաղբևաց յարուցանէ զանանկին։ Քակեաց զՀզօրս յաթոռոց և բար-
ձր արար զՀեզս յերկրէ, և լից զքաղցեալս բարութեամբ, և
զբազուկս ամբարտաւանից խոտանեաց. որ ոչ եթէ հաւատացե-
լոց միայն այլ և անհաւատից յիշատակ պատմութեանց առաքեաց
հաւատառեաց. այն որ արար զպրանելիս մեծամեծս. առաւել ամե-
նայնի և արարիչն ամենայն տիեզերաց ամենակալ և բարերար՝ ի
վերայ ամենայնի այն որ մի է Աստուած միայն, այն՝ որ նմա հանեմք
մեք օրհնութիւն նոր՝ ի պատասխանի տալ մերում և յասել. որ ա-
րար զպրանելիս մեծամեծս միայն, զի յաւիտեան է ողորմութիւն։
Նման

տուէցուք։ Զի նա միայն բարեբարին Հօր՝ որդի բա-
րեբար, որ կամաւք Հայրական մարդասիրութեանն միսդ
դեռ՝ի կորուստ ապականութեան անկեալ էաք կոր-
ծան, եւ՛ն նա կամաւ զգեցաւ զմերս բնութիւն. և
իբրև բժիշկ Ճարտար՝ի փրկութիւն խոթացելոցն ե-
տես զանհնարինն, և մերձեցաւ՝ի դժնդակ ժահա-
հոտութիւնս և՛ի վէրս մեր, և ախտակցութեամբ՝ի
վշտաց օտարին պատրաստեաց անձին իւրոյ ցաւս սրբոյ
մարմնոյն։ Եւ ոչ միայն յորժամ հիւանդ էաք և՛ի
կեղտ չարաչարս և՛ի վէրս նեխեալս, այլ և մինչդեռ
՝ի մեռեալս և՛ի օտութեսն մնայր էաք բնակ, ՛ի նմին
՝ի կորստենէ անտի մահու ապրեցոյց զմեզ։ Զի ոչ ու-
մեք չհոգեցաւ Յատուածոյ զօրութիւն այնպիսի, զի
այնքանեաց անասելաբար մօտակարարիցէ զիրկու-
թիւն, բայց սմա միայնոյ, որ՛ի ծանր չարչարանս ա-
պականութեան մերոյ մերձեցաւ, և զցաւս մեր ե-
բարձ, և զպատիժ պատուհասի ամբարշտութեան մե-
րոյ յանձն իւր էառ, ոչ միայն կիսամահս, այլ՛ի դամ
բանս և՛ի գերեզմանի ժահահոտով թաթաւեալս՛ի
վեր առեալ, որպէս երբեմն և արդ այժմ՛ի ձեռն ա-
ւետարանիդ ողջմունեան իւրոյ՛ի վեր քան զամենայն
ահեկալութիւնս մեր կեցոյց զմեզ, և հաղորդս և կը-
ցորդս արար բարեաց Հօրն իւրոյ, որ կենարարն է և
լուսատու, բժիշկ մեր մեծ և թագաւոր և Տէր՝ Քրիս-
տոս Աստուածոյ։ Յորժամ երբեմն՝ի մասյլ գիշերի և

Քրիստոս. բայցուք զբերանս մեր և օրհնեացուք, զի նա միայն է
որդի բարեբարին և բարեբար Հօրն, և որ միով հաղորդութեամբ
կամաց ողջմունեանն Հօր իբրև մեք՝ի խոնարհ՝ի կորստեանն
բնակեալ էաք լի կատարեալ կամաք զգեցաւ զբնութիւնս մեր. իբ-
րև բժիշկ առաքինի որ վասն կենաց հիւանդաց եաւս զպատարիսն
և մերձեցաւ՝ի գարշելիս և այլով վշոք կիճեաց զպատուղ սրտմու-
թեան անձին մերոյ. բայց ոչ եղեւ միայն մինչդեռ էաք և՛ի
կեղտ չարաչարս և՛ի վէրս նեխեալս բմբռնեալ էաք, այլ մինչև՛ի
մեռեալսն բնակեալ էաք՝ի նմին՝ի կորստենէ անտի ապրեցոյց
զմեզ։ և նա միայն մերձեցաւ՝ի խոթս ապականութիւն չարչարա-
նաց մերոց. և երթարձ զպատիժս պատուհասի ամբարշտութեան մե-
րոյ և էառ զմեզ իբրև՝ի գերեզմանէ, մինչդեռ նովին ժահահոտ
թաթաւեալ էաք։ Բայց յատաղագին և արդ՝ի ձեռն փափագ
պնդութեան ողջմունեան իւրոյ կեցոյց զմեզ յատաւ, և հաղոր-
դս և կցորդս արար զմեզ բարեաց Հօր իւրոյ, այն որ նա ինքն է
կենարարն և լուսատու բժիշկ մեր և թագաւոր մեծ տէր մեր Յի-

յաղջամուղջ խաւարին ՚ի մեղսութիւն խոհերական դիւաց, և յապերեցութիւն առեալեաց Աստուծոյ այսոցն չարութեան անկեալ գնեը ազգ մարդկան, ՚ի ծագել նորա միայն, բազմադիմի կապանաց ամբարշտութեան մերոյ՝ որպէս մամ զի հալի ՚ի ձառագայթից լուսոյ, այնպէս լուծեալ քակտեցան և այժմ արդ ՚ի վերայ այսր ամենայնի հնորհայ և մեծի բարեբարութեան հեղձեալ նախանձու բարեաստեաց չարասէր բանսարկուն, զամենայն զնահաբեր զօրութիւնս իւր շարժեաց յարոյց ընդդէմ մեր, որ և զառաջինն ըստ նմանութեան կատարի չան՝ որ խածատէ զքարինս ձգեալս ՚ի նա, զորտմութիւն բարկութեան իւրոյ ընդդէմ անշունչ գինուն՝ թափէր ՚ի քարինս տաճարացն, և յանզգայնի թ չինուածոց զգազանաց չին մոլեգնութիւնն իւր գինելով, զաւերածս առ յութեան՝ որ սիրէլին էր ինքեան, ՚ի վերայ եկեղեցեացն ածէր. ապա և զահագին շչիւն և զօձանման ձայն իւր, է զի ՚ի ձեռն մեծաստաստ սպառնալեաց առնօրէն բռնաւորացդ, և է զի ՚ի հայհոյիչ հրամանս ամբարիշտ իշխանացն՝ արձակէր, և զմահ ժայթքեալ ժանտ և ապականիչ ոգւոց թունովք մահաբերին զրմբռնեալս չինքեան գնոգիս դեղէր, և մահացու զոհիւք կռոցն մեռելոտուց գնուիրսըն մահացուցանէր. և զամենայն մարդակերպ գազանս և գսողնեաս-

---

սուս Փրկուսոս որգէ Աստուծոյ կանգնուսդ որ է սրինեալ յաւիտեանս ամէն։

Այլ յայմ ժամանակի միանգամ իրրև ՚ի խաւար մթին և ՚ի մեղսութիւն դիւաց գերլցաց. և ՚ի զօրութիւն այսոց որ առեալ էին Աստուծոյ, ամենայն ազգ մարդկան մինչդեռ հեղեալ կային ՚ի մէջ կորուստան, նոյնժամայն իրրև ծագեաց և երևեցաւ գնհնա-րինս ամբարշտութեան մերոյ՝ որպէս մամ զի հալի ՚ի ձառագայթից արեգական, այնպէս յանդգնան և կորստան թշնամիք Աշխարհաւթեանն։ Իսկ այժմ վասն այսր ամենայն չնորհաց և օգնութեան՝ սատակեալ որ հեղձեալ լինէր նախանձու առեջողն բարեաց և սիրոյն չարեաց զամենայն զօրս կորստեան իւրոյ յարոյց ՚ի վերայ մեր ՚ի մարտ պատերազմին։ Եւ զառաջինն ըստ նմանութեան չան կատաղի որ խածատէ զքարինս որ ՚ի նա ձգեալ լինէին, զորտմութիւն բարկութեան գվրիժուն հատուցման *։

* Յայս վայր օրինակն նախնեաց թարգմանութեան։

միտ օրեաւրն ընդդէմ մեր չարժէր, Դարձեալ վերըս-
սին յայնժամ Հրեշտակ մեծի խորհրդոյն, և նախ
իշխան զօրուն Աստուծոյ[5], իբրև շատ իսկ մրցմամբ
նահատակութեան, և համբերատար պնդութեամբ
զօրականը արիք արքայութեան նորա ի հանդիսի ան-
ցանէին, յանկարծակի ուրեմն երևեալ նորա, և զա-
մենայն ոխերիմ հակառակորդն և զպատերազմողս
ընաջինջ խորտակեալ յոչինչ դնէր, որպէս եթէ և ոչ
անուն անգամ նոցա լուեալ երբեք կարծիցի։ Եւ ըզ-
բարեկամս իւր զընտանիս, ոչ ի վեր քան զամենայն
մարդիկ միայն փառաւք, այլ և քան զերկնաւոր զօրու-
թիւնս, քան զարեգակն և զլուսին և զաստեղս, և
քան զամենայն երկինս և զսիեզերս համայն՝ ած
բարձրացոյց։ Մինչ զի որ ոչն ուրեք երբեք էր եղեալ,
զի ինքնակալք մեծ՝ ի նմանել վիճակեալ ի պատիւ և
ի փառս հաւատալով, թքանեն յերեսս դրօշելոցն
մեռելոտեաց, և առ ոտն կոխելով զպիղծ պաշտօն դի-
ւաց, ծաղր ծանակ առնեն զնախնեացն հայրենա-
տուր մոլորութեան խաբէութիւնս, և զմի միայն Ա-
ստուած, որպէս Հանուրց մարդկութեան նոյն և ին-
քեանց բարերար հաւատան. և զՔրիստոս Աստուծոյ
որդի և բոլորից Թագաւոր խոստովանին, և ի հրո-
վարտակս իւրեանց և յարձանս կանգնեալս՝ Փրկիչ
զնա անուանեն. և զբանչելիս նորա, զյաղթութիւնս
ընդդէմ ամբարշտաց ի քաղաքին՝ որ դշխոյն է տիե-
զերաց, արքունական գրով դրոշմեն։ Որպէս զի Յի-
սուս Քրիստոս Փրկիչ մեր միայն ի յաւիտենից անտի
Ժամանակաց, յաւագպետաց աստի աշխարհիս, ոչ ո-
պէս ի հասարակաց մարդկանէ կարգեալ Թագաւոր
խոստովանի, այլ Հանուրց բոլորից Աստուծոյ որդի
հարազատ, և ինքնին իսկ Աստուած Ճշմարիտ[6]. և
կարի յիրաւունս։ Քանզի ո՞ր երբեք ի Թագաւորաց
աշխարհիս յայն առաքինութիւն եհաս և ի զօրու-
թիւն, մինչև զամենայն մարդկան՝ որ ի վերայ երկրի,
զլսելիս և զլեզուս ընել կոչմամբ անուան իւրոյ։ Ո՞
երբեք յիշխանաց օրէնս այնպէս բարեպարիշտս և ի-
մաստունս կարաց կարգել, որ ի ծագաց մինչև ի ծա-
գըս տիեզերաց ի լուր հասարակաց մարդկութեան
հանապազորդ ընթերցեալ և անդեղլի հաստատու-

թիւն առնուցու։ Ո՞ զվայրագ ժողովրդոց զխուժ և զդժնդակ սովորութիւնս, հեզ և մարդասէր օրինաւք իւրով ՚ի Համբոյր էած։ Ո՞ ընդ դարս ողջոյն թշնամութիւն և պատերազմ յամենեցունց կրեալ և գերմարդկային ինն եղոյց զօրութիւն, մինչ զի զօրհնաւպաղ ՚ի ծաղկի և ՚ի զարգացման և յաստոջ երիտասարդութեան երևել։ Ո՞ր ազգ, որ և ոչ ՚ի լուր ականջաց ՚ի յաւիտենից բնաւ ծանուցեալ, և յանկարծ ուրեմն ողջ բովանդակ միանգամայն ոչ յանկեան ուրեք երկրի թագուն, այլ համայն ընդ սիեզերս՝ որ ընդ արեգականբ, ելեալ եկաց ՚ի միջի։ Ո՞ զզօրական իւր զինուք բարեպաշտութեան այնպէս փակեալ ամբացոյց, մինչև անդամանդեայս զանձինս նոցա ընդդէմ ախոյենիցն թշնամեաց յարդարել։ Եւ ո՞ ՚ի թագաւորաց այնպէս երբեք զօրացաւ, զի և յետ մահուն բանակս կազմել, նշանս յաղթութեան ընդդէմ թըշնամեաց կանգնել, զամենայն տեղիս առ հասարակ, զքաղաքս, զգաւառս, զհելլէնս և զբարբարոսս արքունեօք իւրովք և նուիրական աստուածային տաճարովքն լի առնել։ որպիսիք են տաճարիս այսորիկ գեղեցիկ զարդք և նուէրքդ պարգևաց՝ որք մեծարեալք են արդարև և մեծաշուք, և զարմացման և պանծանալոյ արժանիք, զի փրկչին մերոյ Թագաւորութեան նշանակք են գերապայծառք։ Արդէս զի և արդ իսկ. Նա ասաց՝ և եղեն. ինքն հրամայեաց՝ և հաստատեցան։ Քանզի և ո՞ կարէր ընդդէմ կալ աւետարանութեան հրամանին ամենիշխան Թագաւորին բոլորից և Աստուծոյ բանին։ Ի Հնգերիս տեսութիւն ասացելոցս մնագիր պարապոյ և լուսաբանելոյ պէտք են. Թէ որպիսի և ՚ի բան յառաջամտութեան և փութոյ ջանից եղև նոցա՝ որ յայս վաստակեցան, մարթիմք կշռել գիտել յայնմանէ. որ աստուածաբանելով զընչաւորն ՚ի մէջ նկատեն զտաճար ՚ի կենդանի վիմից չինեալ և ամբարտաւանեալ անշարժ ՚ի վերայ հիման առաքելոյց և մարգարէից, ունելով զգլուխ անկեան զՅիսուս Քրիստոս. զոր անարգեցին՝ ոչ որ ՚ի նախնեաց անտի էին միայն, որ և չէն արդ ՚ի միջի, այլ և այժմ բազումք ՚ի մարդկանէ շինողք, չարք չարեաց գոլով Հնարտարապետք. այլ Հաձեցաւ Հայր յայնժամ և այժմ արդ, և ըզ-

գլուխ անկեան հասարակաց եկեղեցւոյս հաստատեաց։ Ըսա արդ ուրեմն առեալ ՚ի մէնջ կազմեաց կենդանւոյն Աստուծոյ տաճար կենդանի, զմեծն և աստուգիւ զաստուածավայելուչ սրբարանն ասեմ, որոյ անմատոյց մուտն ներքին բազմաց անտեսանելի, և արդարև սրբութիւն, և սրբութիւն սրբոց. զի ո՛ հայեցեալ և համարձակիցի ասել ինչ յայտնապէս, և ո՛ ի ներքոյ ՚ի շրջափակ սրբարանիս յառել զաչս կարիցէ, բայց եթէ ամենից վեհագոյն քահանայապետն մեծ, որոյ միայն է օրէնն զծածկեալն ՚ի բանաւորացս առ հասարակ քննել և նկատել։ Եւ թերևս յետ նորա այլում երկրորդի միոյն միայնոյ է հասանել։ Նոյնպէս և որում, ՚ի ձեռանէ նորա առաջնորդ բանակի զօրուն նորա կարգեալ, զոր ինքն առաջին և մեծ քահանայապետն երկրորդ իւր քահանայութեամբ պատուեալ յայտ՚ի սրբում տեղւոջ, և ՚ի վալիս աստուածայնոյն ձերոյ հօտին, և ՚ի կամաց հրամանէ Հօր ամենակալիւ ժողովրդեանս վիճակեալ իւրեանց բժիշկ, և դէտ և ազդարար աստուածային պատգամաց, նոր Ահարոն և Մելքիսեդեկ, պատկեր և օրինակ Որդւոյն Աստուծոյ՝ որ ՚ի մեզանէնաւորս կայ, և հասարակաց աղօթիւք ձեզ ամենեցուն ջնորհէ զնա ընդ երկայն աւուրս։ Սմա արդ միայնում՝ յետ առաջնոյ և մեծի քահանայապետին, եթէ ոչ նախնաբար՝ երկրորդ գոնեա անկ է նկատել զնորս ներքինս հոգւոց ձերոց և հոգւաբարձու խնամակալ նոցին լինել, քանզի և երկար ամաք և ՀՀգրիտ քննութեամբ փորձ, ՚ի փութոյ ջանից իւրոց և ՚ի խնամոյ զամենեսեան զձեզ ՚ի զգաստութիւն և ՚ի վարդապետութիւն բարեպաշտութեան դաստիարակեաց։ Եւ զոր միանգամ աստուածայնին զօրութեամբն ՚ի գլուխ տարեալ կատարեաց, բաւական է և զնացուն ըստ մեծութեան գործոյն տալ անվրէպ զՀամար։ Եւ առաջին մեր և մեծ քահանայապետ, զոր միանգամ տեսանէ՝ զի Հայրն առնէ՝ զնոյն ասէ, նմին նման և Որդին գործէ։ Եւ սա ինքն որպիսի ինչ ՚ի վարդապետն իւր մեծ մաքուր մտաց աչօք յառեալ տեսանէ, զոր նայն գործէ, զնոյն և ինքն իբրու օրինակ և պատկեր նախատիպ առաջի իւր եդեալ, ՚ի նոյնն նմանութիւն՝ ըստ իւրում կարի գործեալ կատա-

բեաց։ Այնչ խոնարհ քան զԻեսեւլիեղ զոր ինքնին Աստուած եկից հոգւով խնամատուեաւն, և հանգարտ և արուեստիկ խելամտեաւթ. և յօրինակ եկիցաւորին՝ ընտրեաց զնա Նարտապատ խորանին վկայութեան։ Այնպէս և սա, զոլխն իսկ զԵրիստոս զանձն, զհնամատուեիւն և զլոյս իբրև ի պատկերի հոգւոջ իւրում կրելով, չէ դիւրին ասել թէ քանի մեծաքաղցուդ մտաք, քանի հոխուեաւմբ, քանի առատաբաշխ մտաց ձեռամբ, և թէ քանի ձերով իսկ հասարակաց պատուասէր ազատականուեաւմբ, որ իբրու մրցելով իւին մեծանձնուեաւդ ձերով ընդ նմա ի ծախսն, զի մի խոնարհ քան զառաքարկուեիւնս խորհրդոց Նորա երևիցիք, զմեծն և զբարձրելին զայն Աստուծոյ բարձրելոյ զառաջս, զերևելիս զայս ի տիպ լաւագունին և աներևութի՝ որչափ ինչ ներելք բնաւեաւնս, կառուցեալ կանգնեաց։ Եւ զաեղիս զայս, զորմէ նախ քան զամենայն արժան է ասել, զյեաւն ամենայն անմաքուր պղծութեամբ ի ներգութենէ անտի թշնամեաց մերոց՝ ոչինչ զանց արարեալ և ոչ պատճառաց չարեացս տեղի տուեալ ի խնդիր այլում տեղւոյս, բազմագունիկ այլոց դիւրագիւտ գոլով ի քաղաքիս. և թեթևացուցեալ համառօտել զաշխատութիւն իւր, և ի բազում հոգոց և ի ներգութենէ ազատել զանձն. այլ նախ ինքն ձեռնամուխ ի գործդ այդ, ապա և զհամբերն ժողովրդեան արծարծեալ զեռանդն, և պնդեալ գյաժարական կամն. և ի բոլորից գումարեալ ձեռն մեծ, յառաջին ագոնն նախ ինքն առաքինացաւ. որ զառ ի թշնամեաց անտի ըզյափշտակեալն, զմեծամաստանն և զբազմակոչնոյ վանն մեր, որ յառաջ քան զմեզ և ընդ մեզ իսկ չարչարակից և ներգութենակից եղեալ էր, և որպէս մայր որբացեալ ի զաւակաց իւրոց՝ զկղեցին, արժան և յիրաւի համարեր բաժանորդ մեզ առնուլ վայելից մեծի պարգեւաց ողորմութեան ամենաբարեգութեն Աստուծոյ։ Զի որպէս երբեմն մեծն այն Հովիւ՝ զարջ և զառիւծ և զամենայն ահագին և զվայրենին ազգ գազանաց վանեալ, և զծնօտս առիւծուց, որպէս պատմեն գիրք, ջախջախեալ՝ խնդրեաց ժողովել վերսին ի մի զոդիս իւր, և իրաւամբ կազմեալ նորո-

գեաց զփարախս հօտին, յամենի երեսաց թշնամւոյն և 'ի վրէժ արդարադատ ընդդէմ աստուածամարտ ամբարշտաց. Ոչ եղծցի թշնամին և հակառակորդն, նէ արդ ոչ ևս երևիցի 'ի միջի ատելիքն Աստուծոյ, զի և չէին իսկ։ Որք 'ի կարճ համառօտ ժամանակի խուռնամբոխ յարուցեալ՝ 'ի նոյն և զինքեանս գրաւեալ, և զարդարադատ պատիժ պատուհասին լուծեալ, զանձինս և զսաբեկեալսն և զընտանիս խարդաւանեալ կորնծանեցին։ Որպէս զի գառաջապատում բանս դրօշմեալ 'ի վաղեմի յարձանագիրս նուիրականս, արդեամբք սրբ հաւատարիմ լինել խոստովանեսցուք, յորս և ընդ այլ չէմարտախօս աստուածային բանսն, և զայս յայտ նագոյնս վնօցանէ տեսանելիք ասացեալ. Սուր հանին մեզուորք, լարեցին զաղեղունս իւրեանց՝ հարկանել զաղքատն և զանանկին, սպանանել զայն որ ուղիղ է սրտիւ։ Սուրք նոցա մտցեն 'ի սիրտս նոցա, և աղեղունք նոցա փշրեսցին։ Նէ դարձեալ եթէ կորեաւ յիշատակ նոցա աղաղակաւ, և զանուանս նոցա ջնջեսցես յաւիտեանս յաւիտենից։ Ոչ որք 'ի նեղութեան էին աղաղակեցին՝ և ոչ որ էր որ փրկէր վնասս. առՏէր՝ և ոչ լուաւ նոցա։ Նոքա գլորեցան և անկան, իսկ մեք կանգնեցաք և ուղիղ եղաք։ Նէ որ բանիւս կանխաձայնեալ եղէն, եթէ՝ Տէր, 'ի քաղաքի քումմ զպատկերս նոցա անարգեսցես. տեսաւ ստուգիւ ա ռաջի աչաց մերոց։ Ոչ որք ըստ օրինակի սկսայիցն ամբարտաւանից աստուածամարտք գտան, այսպիսի ընկալան կատարած կորստեան. իսկ որ ամայացեալք էր և անապատ և 'ի մարդկանէ լքեալ, զայսպիսի վասն Համբերութեան նորա առ Աստուած տեսանելիք զնոքա վախճան, զոր կանխաձայնէ Եսայիաս եթէ. Ուրախ լեր անապատ ծարաւի, ցնծացեալ անապատն և ծաղկեսցէ իբրև զշուշան։ Ծաղկեսցէ և ցնծացեալ անապատն։ Ջօրացարուք ձեռք լքեալք և ծունկք կէտուցեալք, միխիթարեցարուք կարձամիտք սրտիւք, զօրացարուք և մի երկնչիք։ Ահաւասիկ Աստուած մեր հատուցանէ զատաստան և հատուսցէ, ինքնին եկեսցէ և փրկեսցէ զմեզ։ Ոչ ջուր բխեաց, ասէ, յանապատի, և գետ 'ի ծարաւուտ երկրի, և եղիցի անջուրն յաղտիւրս և աղբիւր ջուրց 'ի ծարաւուտ երկրի։ Նէ

որք երբեմն բանիւ աստուածաձայնութիւնք էին, ի դիւրս սուրբս յեռեալ կան. իսկ արդ նորին ոչ ի լուր միայն ականջաց, այլ արդեամբք և իրօք մեզ աւանդին, Ձի անապատն այն անջուր և ծարաւուտ, այրին այն լքեալ և տառապեալ. զորոյ որպէս յամառաւի փայտատոք կոտորեցին զդրուներն, ի միասին փայտատոք և մրճովք կործանեցին զնա, Ձորոյ զդիւրս ապականեցին, և ի հուր այրեցին զորբութիւնն Աստուծոյ. և պղծեցին յերկրի զխորան անուան նորա, Ձոր կիթեցին զնա ամենայն անցաւորք Հանապարհի քալեալ զգանկ նորա. յորում և խոզ անտառի և երէ վայրի արածեցաւ, որ և արդ աքանչելի զօրութեամբն Ք֊ի֊ստոսի, յորժամ կամեցաւ նա՝ ծաղկեցաւ որպէս զշուշան։ Ձի և յայնժամ ի կամս ակնարկութենէ նորա, որպէս ի դիւոյ խնամոյ Հոր իրատեալ լինէր. Ձի զոր սիրէ Տէր իրատէ, տանջէ զամենայն որդի՛ զոր ընդունի։ Եւ իբրև չափով, և որպէս ինչ պարտ էր տարաւ պատուհասին, գարձեալ ի վերուստ հրամայէ նմա միխիթարութիւն ուրախութեան, եթէ ծաղկեսցի իբրև զշուշան, և բուրեսցէ զՀոգի քաղցրութեան իւրոյ առ ամենայն մարդիկ։ Ձի ջուր բխեաց, ասէ, յանապատի և վտակ՝ յաւազան միանգամ ծննդեան աստուածային փրկութեան։ Եւ որ յառաջ քան սակաւ մի անապատ էր անջուր, այժմ յաղտիւբս և ի ծարաւուտ երկրի բխեաց աղբիւր ջրոյ կենդանութեան։ Ձօրացան արդարև ձեռք յառաջագոյն լքեալք, և յայնապէս վկայք են զօրութեան ձեռացս գործք մեծամեծք և երևելիք։ Եւ որ երբեմն տիարք էին ծունկք և կիթուցեալք, Հաստատեալ արդ ընթանան ու զղութեամբ ընդ Հանապարհ աստուածգիտութեան, և ի փառաս ամենագութ Հովուին դիմեալ փութան։ Եւ եթէ որոց ի սպառնալեացս բռնաւորացն զարՀուրեալ ընդարմացան ոգիքն, և ոչ զօրաս անգամ ի փրկական բժշկութենէն զրկել ինչ բանս, այլ մարդասիրաբար քաղցրութեամբ և զօրաս խնամելով ի միխիթարութիւն Հրաւիրէ. եթէ՝ Միխիթարեցարուք կարձամիտք սրտիւք, զօրացարուք և մի երկնչիք։ Եւ զի նուրբ լսելեօք մտացն զկանխաձայն մարգարէութիւնս լուեալ մեզս այս նորս Ձօրաբաբել, և ի

միտ առեալ Թէ որ վասն Աստուծոյ ամայացեալն էր և անապատացեալ՝ի սոսին պարտ էր վայելել՝ի միխ-
Թարութիւնս. որով և յետ դառն գերութեան և պղծութեան աւերածոյն՝ ոչ զանց արար եթող զկոր-
ծան անկեալ դիակինացեալ շինուածս, այլ յառաջ քան զամենայն պաղատանօք և խնդրուածովք զԱս-
տուած Հայր ողորմութեանց՝ի գթութիւն շարժէր, և զձեր հասարակաց համամուրհակ՝ի նոյն յորդո-
րէր, և զոր կենսատուն է միայն մեռելոց՝ օգնական և գործակից ինքեան առեալ, յարոյց զանկեալն, սրբ-
բեալ նախ զնա՝ի չարեացն և խնամարկեալ։ Եւ հան-
դերձ՝ ոչ որ՝ի վաղուց էր հնոտի արկեալ զնուաւ-
այլ որ դարձեալ յաստուածային պատգամաց խրա-
տեալ ուսանէր յայտնապէս Թէ. Մեծ եղիցի փառք տանդ այդորիկ վերջինդ քան զառաջինն։ Առաւել յոյժ արդ ընդարձակագոյն չափեալ տեղի, արտաքոյ շուրջ որմով պարսպեաց, և ընդդէմ արկածից ամե-
նայնի ցանկապատ զգուշաւոր կազմեաց։ Այնդաստակ մեծ և բարձր յարևելս կոյս ընդդէմ Ճառագայթից արևու ձգեաց, զի և նոցին որ արտաքոյ՝ի սրբավայր
շրջապատէն հեռի կայցեն՝ տեսիլն ներքին պայծառ
փայլեսցի, և զօտարաց հաւատոցս մերոց՝ի մուտան ձգելով զայս, որպէս զի մի զանց ոք արարեալ զնուաւ-
անցանիցէ առանց ընդ միտ ածելոյ գնիշատակ առաջ-
նոյ ամայի աւերածոյն և զայժմեան զսքանչելիս զար-
մանագործութիւն։ Ընդ որ հարեալ Թևրևս և զմիա-
սին, ձգել զնա՝ի ներքս՝ի տեսութիւն այցելու-
Թեան՝ ակն ունէր։ Եւ՝ի մտանել ուրուք՝ի ներքս,
ոչ եթող անդէն անմաքուր և անլուայ ոտիւք՝ի սրբ-
բութիւնս մերձենալ, այլ ընդ տաճարն և ընդ նախա-
դրունն եթող տեղի ընդարձակ, զոր՝ի ձև քառան-
կիւնի փակեալ՝ չորիւք առ՝ի չեղ կամարակապ ամե-
նուստ՝ի վերայ սեանց ամբարձեալ սրահիւք զարդա-
բեաց իսկ՝ի մէջ սեանց վանդակապատս գործեալ՝ի
չափաւոր և՝ի պատշաճ բարձրութիւն հանեալ կա-
տարէր։ Եւ զմիջնաւայրն բաց եթող ընդ երկինս՝ի
Ճառագայթից արևու օդ լուսաւոր պայծառ փայլե-
լով՝ի նմա։ Աստանօր զնշանակն կանգնեաց սրբաբար
մարգութեան. և աղբիւրս՝ի յետուստ կազմանէ տա-

Ձարին չհնեաւ ի յորդել վտակին ջուր առատ այգեստաց տաճարին ի լուացումն մատակարարացն. Նախ զի ի սփոփանս էր այն եկաւորացն, միանգամայն և ի զարդ և ի վայելչութիւն ամենայնի. իսկ որդ դեռևս նախնական հրահանգաց պէտս ունելին՝ վայելչաչ և յարմարագոյն բնակութիւն ընտրէր. եւ ընդ այս ամենայն տեսարանս անցեալ և ընդ բազում այլ ներքին անդաստանս և ընդ գաւիթս՝ ի մուտս տաճարին ածեալ կացուցանէր. և դարձեալ ի մի ի նոյն կողմն յարևելս կոյս երիս կազմէր դրունս. զորոց զմիջինն՝ բարձրութեամբ և լայնութեամբ բազմօք քան զընկերսն գերազանցել կամելով, պղնձապատ երկաթեաւ սիդեր, և բազմադիմի պէսպէս քանդակօք զարդարեր, որպէս դշխոյ ի միջի նաժշտաց իւրոց նազելով. եւ իբրև այսպէս յամենայն կողմանց կամարակապ գաւթին անդաստակս յօրինէր տաճարին, բազում լուսամուտս ի վերայ կամարակապին, զի լոյս առատ ի վերուստ ի շէնն հեղուցանէ՝ կազմէր, և զպատուհանսն պէսպէս փայտեայ Ձարտարապետի մանր զարդու զարդարէր. եւ զբոլն իսկ տաճարն Ձոխ և մեծագին նիւթովք ամրապինդ գործէր, անժլատաբար առատութեամբ վարելով ի ծախս. Այնուհետև աւելորդ թուի ինձ արդ զերկայնութիւն և զլայնութիւն շինուածոյն նկարագրել, զպայծառ գեղեցկութիւնն և զանպատմելին մեծութիւն և լուսացայտ տեսիլ շինուածոյն, զերկնաբերձ բարձրութիւնն, յեցեալ ի բազմութիւն մեծագին մայրեաց լիբանանու, զորոց և ոչ աստուածային տաճարն լուել ախորժէն. Ցնծասցեն, ասէ, ծառքն Ցեաւնի, և մայրքն լիբանանու զորս դու անկեցեր. եւ զի պիտոյ իցէ ինձ արդ զՁանձարեղ և զՁարտարարուեստ կարգաւորութենէ բովանդակ շինուածոյն, և զգեղոյ ուրոյն ուրոյն մասանցն մանրապատում առնել. ուր զի լաւ է աչաց վկայութիւն քան զլուր ականջաց. Եւ իբրև այսպէս կատարեաց զշինուած տաճարին, և ամենայն բարձրագահս ի պատիւ դահերիցանցն, և բագրնակս ընդ բովանդակ տաճարն յօրինեաւ կարգէր. ապա զորբութիւն սրբոց, զիսորան պատարագին ի միջի դնէր. և զի անմատոյց և անկոխ իցէ այս բազմոց, փայտեայ վանդակաւ ցան-

կէր. Ձարտարարուեստ մանր զարդու կերտեալ, մինչ ի զարմացումն ածել զեհեռոյն։ Ա.ՀԼ և ոչ գյատակս անգամ տաճարին անխոյթ առնել երևեցաւ, զոր և մարմարեայ վիմօք պազպազօն զարդարեաց, և ի ներքինոյն կազմութենէ անտի տաճարին դարձուցեալ զաչս և զերեսս, պատշգամս և գիւանս ընդարձակս և քաջարուեստս կառոյց, կցեալ յարեալ զայնոսիկ ի կողս տաճարին. յաւելեալ յայնս և գրունս որ հա. նէին ի մէջ տաճարին։ Իւր որոց պէտս ունէին սրսկալ բանի և մաքրութեան ջուրցն սրբութեան և սրբոյ Հոգւոյն, և վասն նոցին Սողոմոնս այս մեր խաղաղասէր և տաճարիս Աստուծոյ չինող՝ զադարս և յարկս կազմեաց։ Ոի ոչ ևս բանք այնուհետև, այլ արդիւնք լինէին ի վերուստ տապցեալ կանխամայնութիւնքն. զի եղև արդ Ձմարտութեան փառք տանս այսորիկ վերջնոյս առաւել քան զառաջնոյն։ Եւ կարի իսկ յիբաւունս, զի յորժամ Հալիւ նորա և տէր ի վերայ նոր զանձն իւր եդեալ, և յետ չարչարանացն և մահուն, զաղքատին և զգձուձ մարմնին, զոր ի հնորհս նորա զգեցեալ էր՝ ի պայծառս և ի փառաւոր փոխեաց կերպ, զվիրալեցն և զչարակոչո՞ յապականութենէ յանապականութիւն էած, նմանագոյնս արդեօք ի նորին իսկ յարդիւնս անտեսութեան Փըրկչին և ինքն վայելէր։ Քանզի յետ ընդունելոյ բազմօք լուացդն քան զայս ի նմանէ զաւետիս, և մեծապէս փառս վերստին միւսանգամ ծնունդեան, և յարութեան մարմնոց անապական, ընդ լուսաւոր պարս հրեշտակաց և յարքունիս իսկ Աստուծոյ ի վեր քան զկայանս երկնից՝ ընդ նմին իսկ ամենաբարերարին մերոյ Քիստոսի Բրիստոսի և փրկչին յաւիտեանս վայելել եղեալ յանկայր։ Ա.ՀԼ սակայն յառաջիկայ յաւիտենիս՝ որ երբեմն այրին էր և անապատ, արդ հնորհօք Տեառն պճնեալ ծաղկամբք, և եղև Ձմարտապէս որպէս չուշան, զոր օրինակ ասէ մարգարէն. Որ զՏարմնաւկանն արկեալ զպատմուձան, և զպսակն վայելեալ. թեան եդեալ զգլխոյն, խրատի յԱյսպիսեայ անցանել ի պար, և հրձուալից գոհացողական ձայնիւ լսելիք երգել. Ցնծասցէ անձն իմ ի Տէր, զի զգեցոյց ինձ հանդերձ փրկութեան և պատմուձան ուրախու.

Թեան, իբրև փեսայի եղ ինձ պսակ, և իբրև Հարսն զարդու զարդարեաց զիս, նոյնպէս իբրև երկիր որ առնէցուցանէ զծաղիկս իւր, և իբրև պարտէզ որ բուսուցանէ զսերմանիս իւր, այսպէս ծագեսցէ Տէր զարդարութիւն իւր և զյաղթութիւն առաջի ամենայն ազգաց։ Ցայսօրիկ երդեալ պարէ նա ցնծութեամբ։ Իսկ երկրաւոր փեսայն նորա Յիսուս Քրիստոս բանն Աստուծոյ, զոյս առնէ նման պատասխանի, ըստ նմին իսկ. Մի երկնչիցիս զի յամօթ արարին զքեզ, մի պատկառեսցիս զի նախատեցին զքեզ. զի զամօթն յաւիտենից նից մոռասցիս, և նախատինք այրութեան քո ոչ ևս յուշ լիցին քեզ։ Ոչ եթէ իբրև զկին մի լքեալ տապաստեալ կոչեաց զքեզ տէր, և ոչ իբրև զկին միաստեցեալ ի մանկութենէ, այլ ասաց Աստուած, առ ժամանակ մի թողի զքեզ, և ողորմութեամբ մեծաւ ողորմեցայց քեզ։ Սակ փոքր մի սրտմտութեան դարձուցի զերեսս իմ ի քէն. և ողորմութեամբ յաւիտենից ողորմեցայց քեզ. ասաց որ փրկեացն զքեզ Տէր։ Ցարթիր, զարթիր, արի կաց, որ արբեր ի ձեռանէ տեառն զբաժակն բարկութեան նորա, զբաժակն կործանման, զբաժակն սրտմտութեան, զոր արբեր և թափեցեր։ Եւ ոչ որ էր որ միխիթարէր զքեզ յամենայն որդւոցն քոց զոր ծնար, և ոչ որ էր որ ձեռնտու լինէր քեզ յամենայն որդւոցն քոց զորս բարձրացուցեր։ Այժմ արդիկ ի բաց արարի ի ձեռանէ քումմէ զբաժակն կործանման, զբաժակն սրտմտութեան իմոյ և ոչ ևս յաւելցես ընդել զնա. Եւ տաց զնա ի ձեռս ջնասակարացն քոց, և ի ձեռս այնոցիկ որ տարապետ ցուցինն զքեզ, որք ասէին ցանձն քո՝ խոնարհեաց թող անց։ Ցարթիր զարթիր, զգեցիր զզօրութիւն քո, և զգեցիր զփառս քո։ Թօթափեա զփոշիդ, յանս կաց և նիստ. լոյծ զկապանս պարանոցի քո։ Ամբարձ շո՛ր զքե զաւյս քո և տէս Ժողովեալ զորդիս քո, զի ահաւադիկ Ժողովեցան և եկին առ քեզ։ Կենդանի եմ ես, ասէ Տէր, զի զամենեսին զնոսա իբրև զպատմուճան զգեցցիս, և արկցես զնոսա զքե իբրև զզարդ հարսին։ Զի աւերակքն և ապականեալքն կործանեալքն քո՝ արդ նեղեսցին ի բնակչացն իւրեանց, և հեռասցին ի քէն՝ որ կլանէինն զքեզ։ Զի ասասցեն

յականջս քո որդիքն քո ղերս կորուսեր, նեղ է մեզ տեղիս, ընդարձակեա մեզ զի բնակեսցուք։ Եւ ասաս ցես ի սրտի քումմ. ո՞ծնաւ ինձ զսոսա, զի ես անզաւակ և այրի էի, պանդուխտ և արգելական, և զսոսա ինձ ո՞ մնոյց, զի ես միայն մնացեալ էի, և սոքա ուր էին։ Ցայս կայսիաս կանուխ գուշակեաց. և այսօրիկ յաստուածեղէն տաճն ի վաղուց անտի ժամանակաց զմեզ է աւանդեալ, զորոց պարտ էր ուր ուրեմն զստուգութիւնն յարդեանց անտի իրաց ընդունել։ Ա՛լ զի զայսօրինակ փեսային՝ բանին Աստուծոյ առ Հարսն իւր մաքուր առ սուրբ եկեղեցին առձայնեալ, նմանագոյնս նոյն Հարենատուն, զամուսնացեալն և կործանանս կեալ և զանոյսն ի մարդկանէ՝ հասարակաց մեր աղօթիւք, զձեռս սատարութեան ձերոյ ի նա կարկառելով՝ հրամանաւ ակնարկութեան Աստուծոյ ամենահաւատարիմն, և յայտնութեամբ զօրութեան Ցիսուսի Քրիստոսի՝ յարուցեալ կանգնեաց զնա։ Եւ այսպէս ապա գայարուցեալն, յօրինեալ կազմեաց, զոր օրինակ ի սուրբ պատգամն իւր տուեալ էր զնկարագիր։ Եւ այս զարմանք մեծ, և ի վեր քան զամենայն աքանչելիս, մանաւանդ որ առ այսօր միայն զերևոյթն նկատիցեն։ Եւ սակայն աքանչելիք աքանչելեաց, եթէ զսկզբնատիպն և զնոցին նախագաղափար պատկերն ոգևոր և զաստուածավայելուչ օրինակ՝ զաստուածային սահմ և զբանաւոր նորոգութիւն հոգւոց մերոց նկատիցեմք։ Զոր նոյն ինքն Արդին Աստուծոյ ի պատկեր իւր արարեալ, և յամենայնի յաստուածանմանութիւն անդ պարգևօքն Հոգւոյն վերառեալ, զանապականն զբնութիւն, զանմարմինն, զբանաւոր, յամենայն երկրաւորից աստի և ի նիւթականաց աշխարհս և զիմացական և զմտաւոր էութիւնն, միանգամայն և զառաքինին զնա ի չգոյէ ի գոյութիւն ածելով՝ Հարսն մաքուր և տաճար սուրբ ինքեան և Հօր իւրում պատրաստեաց, զոր և ինքնին յայտնապէս քարոզէ ասելով. Ինակեցայց ի նոսա և շրջեցայց, և եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին իմ ժողովուրդ։ Եւ այսպիսի իսկ էր կատարեալ և մաքուր Հոգին, որ ի սկզբանէ այնպէս հաստեցաւ, զի երկնաւոր բանին պատկերակից լցէ և կերպարանակից Ա՛լ իբրև մա-

խանօք և նախանձու չարասէր բանասարկուին ինքնօրէն
ընտրեաց զՀետ գնալ չար ցանկութեանցն և սիրեաց
զանօրէնութիւն. Հեռացեալ նորա յԱստուծոյ և ան-
տերունչ ամայացեալ, դիւրագաւ այնու հետեւև դիւ-
որալի գտաւ նենգապատիր գարանաց այնորիկ՝ որ
՚ի բազմաց հետէ խեղայր ընդ նա։ Ա. յսպէս ուրեմն
որոգայթագիր մեքենայիւք անելեւոյն և խմնալի
պատերազմողաց Հարեալ նորա և անկաւ ՚ի կործա-
նումն անհնարին, ոչ միայնակ քար ՚ի քարի վերայ, այլ
՚ի սպառ դիմ թաւալ յերկիր կործանեալ, և ՚ի բնաւ
իսկ յաստուածեղէն Հանձարոյ իմաստութենէ զըր-
կեալ։ Եւ զանկեալն զայն՝ որ ՚ի պատկեր Աստուծոյ
արարաւ, ապականեաց՝ ոչ խոզ անտառի որ մեզն ե-
լեւի երբեմն, այլ կորուսիչն այն և ապականարարն
չարագէ, և գազանք վայրենիք մտաւորք, որք չարա-
չար ցանկութեամբ իրրև այրեցեալով գործեալ Հրա-
ձիգ նետիւք չարութեան իւրեանց, և ՚ի նոսր այրե-
ցին զորբութիւն Ցեառն, և պղծեցին յերկրի զիմ-
բան անուան նորա։ Եւ այսպէս ընդ փլատակաւ հո-
ղակուտիցն Թաղեալ զեղկելին, անյոյս զինս գոր-
ծէին յամենայն փրկութենէ։ Ա. յլ խնամատար նմին
փրկականն բան և Ճառագայթ Հօր յետ լուծանելոյ
նորա զարժանաւորսն պատուհասի, յանցանացն՝
մնդրագաստ ողորմութեան Հօրն գթութեան անսասլով՝
դարձեալ վերստին ընկալեալ զնա և յանձանձէր։ Եւ
զբարձագահ պետացս աշխարհի, զինքնակալսց Հաւա-
նեցուցեալ զմիտս, ՚ի ձեռն նոցին աստուածասիրացն
մաքրեալ սրբեալ զսիեզերս համօրէն յամբարշտացն
այնոցիկ յեղեռնաւորս մարդկանէ, և յատելեաց ան-
տի Աստուծոյ ՚ի մարգահաշոյ բռնաւորաց։ Ապա ըզ-
բարեկամս իւր զարս առաքինիս, ՚ի բազմաց անտի
մխոնջելնաւորս նուիրեալս նմա քահանայութեամբ, և
՚ի ձմերունս անդ չարեացն ընդ Հովանեաւ նորա ծած-
կեալս՝ յերևան և ՚ի լոյս Հանէր, և Հոգւոյն մեծա-
շնորհ պարգևօք արժանապէս պատուեալ զնոսա, ՚ի
նոցունն իսկ ձեռս սակաւ մի յառաջ զաղտեղեալ Հո-
գիս յամենայն նիւթոց խոհերից և ՚ի շեղջակոյս ա-
ւերակաց՝ ՚ի հրամանաց անտի ամբարշտաց կուտելոց
՚ի վերայ, իբրև բրչաւ և բահիւ կշտամբիչ և կծանո-

զկան բանիւ վարդապետութեան Հաւատոց սրբեալ մաքրեաց։ Եւ յորժամ պայծառ և լուսաւորս յարդարեաց զկայան և զտեղի մնաց ձերոց ամենեցուն, յայն ժամուպա իմաստնագունին և աստուածասիրի առաջնորդին յանձն արար զայն, որ որպէս յայլս ամենայն հանճարեղ և մեծախոհ[1] դարդ հանդիպեալ նոյն և բարւոք 'ի Հանապազումն ոգւոց վիճակեալ և յօղեղ դատումն մնաց, որ յառաջնմէ անտի օրէն, որպէս կարգ բանիս է ասել, մինչև ցայսօր ժամանակի ոչ գտ դարեաց երբեք 'ի շինելոյ, է զի ոսկի պայծառ, է զի արծաթ ընտիր և մաքուր, ազգի ազգի ականս պատուականս, յամենեսին 'ի ձեզ յարմարեալ, որպէս զի արդեամբք 'ի գլուխ հանեալ ցոյլ գործեալ 'ի ձեզ զսքաղան և զխորհրդական մարգարէութիւն որ ունի օրինակ զայս. Ա.Հաւասիկ պատրաստեալ եմ կարկեհան զքարինս քո, և զհիմունս քո շափիղայ. և կանգնեցից զաշտարակս քո յասպիս, և զդրունս քո յականց վանեայց. և ածից շուրջ զքև պարիսպ յընտիր ականց պատուականաց, և զամենայն որպիս քո խրատեալը Աստուծոյ. և 'ի բազում խաղաղութեան մանկունք քո, և արդարութեամբ շինեսջիր։ Արդարութեամբ արդ շինելով յիրաւի զատուցանէ ուրոյն զգօրութիւնս հաստարակաց ժողովրդեան. զկնոս արտաքուստ միայն պարսպելով՝ անխոտոր հաւատովք ամրացուցանէ. և այսպիսեաց մեծ է բազմութիւն, որոց լաւագունի շինութեան չկարելով տանել՝ թոյլ տայ նոցա զմուտն 'ի տաճարն, պատուիրելով պաշտօնեիցն կալ արտաքոյ առ դրունսն, և առաջնորդել մտանելեացն՝ զի մի խառն 'ի խուռն ընդ նախադրունսն ընկալեալ լինիցին։ Եւ զայլս առ առաջնովք սեամբք, որ արտաքոյ շուրջ զգաւթին են կանգնեալ՝ զետեղել, 'ի նախկին պատուարս և 'ի փակ յորից աւետարանչացն զնոսա դասելով։ Եւ զմնոսս շուրջ զտաճարսն երկուստեք 'ի կողս նոցա շարէ, զի դեռևս անկնոյնք են և երախայք՝ յաճումն և յառաջատումն կարգեալք. սակայն ոչ ամենեքին 'ի բացեայ և հեռի 'ի խորհրդական աստուածատեսութենէ հաւատացելոցն անջատեալք [5]։ Եւ 'ի սոցանէ աստուածային միրուութեամբն մաքրեալս և զտեալս որպէս զոսկի՝ ընկա-

լեալ, զոմանս իբրև զսիւնս ընտիրս ի տեառնէ՛ի նեբբին խորհրդական վարդապետութենէն անտի սուրբ գրոց ամրասնդեալ հաստատէ, և զկնիս իբրև զլուսամուտս առնու՛ի պայծառութիւն տաճարին. և զբովանդակ տունն տէրունի միով ընդարձակ անդաստակաւ միայն, այն է միոյն Աստուծոյ փառաբանութեամբ զարդարէ. Քրիստոսի և Հոգւոյն սրբոյ երկուսեքեան Հայրականաւն իշխանութեամբ զերկիրորդականն Ձառագայթն լուսոյ ցոլացուցանելով[6], Պարձեալ ընդ ոգջոյն տաճարն լի Տաճ և ազգի ազգի լուսաւոր և յայտնի նշանակս հաւատոցս Ճշմարտութեան հաւատեաւ ցուցանէ, Յամենայնի և ամենայն ուրեք կենդանիս, հաստատուն և ամրապինդ վէմս Հոգւոյ ընտրելով, զընդարձակ տունն տաճարին, յամենեցունց յայսցանէ կազմեաց պայծառ և լի լուսով համակ՛ի ներքոյ և արտաքոյ. զի ոչ միայն ոգիք նոցա և միտք, այլ և մարմինք նոցին անարատ սրբութեամբ և զգօն ցածութեամբ բազմածաղիկ զարդու պճնեալ փայլեցին։ Կն են՛ի տաճարիս և գահոյք և աթոռք և բազմոցք՝ որոց ոչ գոյ թիւ, յամենեսեան՛ի նոսա պարգեւք Հոգւոյն սրբոյ Տանգուցեալ, որպէս երբեմն երևեցաւ՛ի սուրբ առաքեալսն, յորս լեզուք իբրև՛ի հրոյ բաժանեալ և Տանգեան՛ի վերայ միոյ միոյ՛ի նոցանէ. այլ յամենեսին՛ի նոսա՛ի գլխաւորն և յիշխանականն բազմի ինքնին Քրիստոս. իսկ որ երկրորդական ունին կարգս, ըստ Տամեմատութեան որպիսի ինչ որ կարէ զօրութեամբն Քրիստոսի զպարգեւս Հոգւոյն ընդունել։ Կն և աթոռք հրեշտակաց և Հոգիք ոմանց, որոց դասալիարակութիւն և պահպանութիւն իբրև քանիւբ նոցա են աւանդեալ։ Իսկ և մեծն և չքեղ և միակ խորանն սրբութեան զինչ այլ իցէ, եթէ ոչ Տաստարակաց մեծի քահանային յատակութիւն Հոգւոյն, սրբութիւն սրբոց. որում առնելեր կացեալ յաջակողմն մեծին և Տանուրց ամենից քահանայապետ՝ ինքն Յիսուս Քրիստոս Միածինն Հօր, որ զանուշահոտ բուրմունս իւնկոց և զանարիւն և զանիւթ ականն զոհ աղօթից՝ զուարթաՏայեաց և բազկատարած յամենեցուն ընդունելով՝ և երկնատոր Հօրն և բոլորից Աստուծոյ վերառաքէ. Նախ ինքն արժանաւոր երկրպա-

գութեամբ, և վայելչական հայրենի մեծութեամբ
տանելով նմին պաշտօն, ապա զերեսս նորա աղաչե-
լով՝ զի քաւիչ լիցի ամենեցուն մեզ, և հաշտ հանա-
պազորդ ընդ մեզ։ Ա. յսպիսի է հրաշակերտն այն տա-
ճար, զոր ընդ ամենայն տիեզերս՝ որ ի ներքոյ արե-
գականս, մեծ արարչագործն ամենայնի՝ բանն կառու-
ցեալ կանգնեաց, և զայն խորանացն գերակայիչ քան
զերկնայինն կամար՝ ի պատկեր լմանալի և ի նմանու-
թիւն յօրինեալով։ Որպէս զի յամենայն արարածական
բնութենէն և բանաւորացս ասի երկրաւորաց վա-
ռաւորեալ պաշտեսցի Հայրն նորա։ Եւ զերկնայինն
գաւառ և գնմանութիւն որոց անդ, զվերինն երուսա-
ղէմ և զՍիոն լեառն, զերկնաւորն և զգերաշխարհիկ
քաղաքն Աստուծոյ կենդանեաց, ուր բիւրաւորաց
հրեշտակաց են բանակք և եկեղեցին անդրանկաց
գրեալց յերկինս՝ անձառելի և քան զմիտս ի վեր աս-
տուածաբանութեամբ զարարողն նորա և զամենից-
խանն պատուելով, զոր ոչ ոք ի մահկանացուաց ըստ
արժանւոյն յիշատակել կարող է. Ջի ակն ոչ ետես
և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր
պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց։ Որոց ար-
ժանաւոր գտեալ մարդիկս հանդերձ օրդուովք և կա-
նամբք, մեծամեծք և փոքունք ամենեքեան միահա-
մուռ ի մի շունչ և մի հոգի ոչ դանդաղեսցուք խոս-
տովան լինել զպատճառս և զաղբիւրս ամենայն բա-
րեացս այսոցիկ, և վերադարձեալ օրհնել զնա. Ո քաւեց
զմեղս և բժշկէ զամենայն հիւանդութիւնս մեր։ Ո
փրկէ յապականութենէ զկեանս մեր, և պահէ զմեզ
ողորմութեամբ և գթութեամբ։ Ո ընդ ի բարութեա-
նէ զգայնկութիւն մեր։ Որ ոչ ըստ մեզոյ մերոց արար
մեզ, և ոչ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ։
Ա. յր ջաւ հեռի են արևելք յարևմտից, այսպէս
հեռի արար ի մէնջ զանօրէնութիւնս մեր։ Որպէս
գթած հայր ի վերայ որդւոց իւրոց, այսպէս գթացաւ
Տէր յերկիւղածս իւր։ Ջայսոսիկ արդ այժմ և յաւի-
տեանս ժամանակաց զմտաւ ածելով՝ զառաջիկայ աշ-
խարհախոստմն տանիս և զզուարթ և զպայծառ աւուրս
զպատճառն և զհանդիսագիր, զտիւ և զգիշեր և զա-
մենայն ժամանակս, զի այսպէս ասացից, յորում շընո-

չեմքս զշունչ կենդանի՝ կալցուք առաջի մտաց մերոց, և յամենայն անձնէ, յամենայն մտաց և յամենայն զօրութենէ մերմէ վնաս սիրեսցուք և վնաս պաշտեսցուք։ Եւ արդ յարուցեալ կամակար յօժարութեամբ և մեծաձայն կարդասցուք պաշտամունք, զի՛ ի փառս այս իւր մինչև՛ ի վախճան ժողովեալ զմեզ և փրկեսցէ, և նովաւ հաստատեսցէ յանէատ և յանկատարած յաւիտեանս պնդաղաղութիւն՛ ի Քրիստոս Յիսուս՛ ի փրկիչն մեր, որով փառք նմին Հօր յամենայն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԳԼՈՒԽ Ե.

Պատճէն թագաւորական օրինաց։

Ազէ այժմարդ զարքունի օրինադրութեանցն Կոստանդիանու և Լիկիանոսի զձարգմանութիւնն՝ ՚ի հռովմէականէն լեզուէ՛ ի Յոյն բարբառ դիցուք ասէն։

Պատճէն թագաւորական օրինադրութեանցն ՚ի հռովմէական բարբառոյն թարգմանելոյ ՚ի մերս։

Ի կանուխ ժամանակաց հետէ այսպիսի ինչ խորհուրդ ՚ի մտի ունելով մեր՝ եթէ չէ արժան զանազան զկրօնից զազատութիւն, այլ ընտրել մանաւանդ իւրաքանչիւր իշխանութիւն ՚ի վերայ կամաց իւրոց և խորհրդոց, ընտրել իւր զոր և կամիցի պաշտել, հրամանն տուաք՝ որպէս այլոց ամենեցուն, նոյն և քրիստոնէից պահել զօրէնս դէնին իւրեանց և պաշտամանն։ Այլ զի ՚ի հրաւարտակիս բազում և ազգի ազգի անդանդ էին խառն ՚ի խուռն՝ որոց ընտրեցաւ իշխանութիւն ազատութեան անխտիր, որով և ոչ կէտ բազմոց դէպ եղև կիսոց յայնցանէ վրէպ ՚ի պահպանութենէ հնոցդ աստի գտանելոյ, վասն որոյ իբրև յաջողեաց մեզ և եկաք մեք՝ Կոստանդիանոս Աւգոստոս և Լիկիանոս Աւգոստոս՝ ՚ի Մեդիոլան, և զոր մի-

